Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

U-
925
1916

20 MAY 2010

9078

ԵՐԿՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ


ԵՒ ՆՇԱՆԱՒՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ՎԵՆԵՏԿՈՑ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԳՐԵՑ

Հ. ԲԱՐՄԵՂ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒՍՏԻՆ



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1905

491.990
U-25

ԵՐԿՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԿՈՅ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Պետական գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
ս. անվ. Ա. Մյասնիկյանի անվ.

1990
-25

ԵՐԿՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ԵՒ ՆՇԱՆԱՒՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐ


3.

ՎԵՆԵՏԿՈՅ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԳՐԵՑ

Հ· ԲԱՐՍԵՂ Վ· ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ



9078

ՎԵՆԵՏԻԿ — Ս· ՂԱԶԱՐ

1905

'2 6 JUL 2013

11.780

ЗООЛОГИЧЕСКИЙ ИНСТИТУТ
Гос. Библиотека
ZUUП-Арм.ССР
им. А. Мясникяна

18040-58

ЗАО "ГОС. БИБЛИОТЕКА"
ZUUП-Арм. ССР
Ц. Ч. А. МЯСНИКЯНА



LIT. F.lli TENSI - MILANO - 1901

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Փոքրաթիւ Միաբանութեան մը — այն է՝ Մխիթարեան — երկու հարիւր տարիներու եւ դժուարին ժամանակաց մէջ՝ այնքան անձնուիրութեամբ եւ անդուլ վաստակօք կատարած գործը՝ չուրացուիր թէ համեմատութեամբ եւ ըստ բազում գլխոց մեծ եղած է, վասն զի պատմական է։ Սակայն եւրոպացւոց հետ՝ ազգայնոց մեծամասնութիւնն իսկ — կրնանք ըսել — թէպէտեւ ազնուաբար եւ գուցէ լիովին իսկ յարգեցին եւ հոչակեցին զայն, բայց այդու հանդերձ՝ Ուխտիս եռատեսակ գործունէութեան մասին դեռ որոշ եւ կատարեալ գաղափարն ունեցած չէ մինչեւ այսօր։ Գրականականը միայն ծանօթ է թէ՛ սոսկ եւ թէ՛ անոնց, եւ այս իսկ՝ Ս. Ղազարու պարբերական հրատարակութեանց ձեռքով եւեթ. քննական այնպիսի ուսումնասիրութիւն մը դեռ եղած չէր, որ ընդարձակօրէն խօսէր նոյն իսկ Մխիթարեան գրականութեան ամէն ճիւղաւորութեան վրայ առանձին, եւ վերայայտնէր անոնց իւրաքանչիւրին սկզբնաւորութիւնն ու զարգացումը, եւ տար պատճառքն ու պատմութիւնն, այլովք հանդերձ։

Իսկ մենք Մխիթարայ տան երկդարեան գործունէութիւնն՝ իր ամբողջութեամբը ներկայացնելու եւ անոր մասին կատարեալ գաղափար մը տալու համար ամենուն, երեքի բաժնած էինք զայն – յամին 1900 նախագծուած մեր ծրագրին համաձայն, — այսինքն՝ Ա. Մխիթարեան Միաբանութեան՝ երկհարիւրամեայ քարոզչական գործունէութիւնն ու նշանաւոր գործիչները. — Բ. Գպրոցական կամ դաստիարակչական գործունէութիւնը. — Գ. Գրականական գործունէութիւնն եւ նշանաւոր գործիչներն։

Ձեռնարկած աշխատասիրութեանս շարժառիթն եղաւ՝ Միաբանութեանս երկհարիւրամեայ յոբէլեանը, որ կատարուեցաւ յ'8 Սեպտ. 1901 ամին՝ իրեն արժանաւոր հանդիսիւ. բայց գործս դանդաղելով՝ չհասաւ այդ նպատակին։ Այս պարագայս՝ փոխանակ ձեռնթափ ընելու զիս՝ առիթ եւ ժամանակ տուաւ ինձ աւելի մանրամասնօրէն պարապել անով եւ ընդարձակել զայն, ուստի եւ հնգամեայ թափած քրտանցս եւ ուսումնասիրութեանս՝ իբր արգասիք՝ ձեւացան երեք հատորներ։

Ներկայս — մեր դրած ծրագրին համաձայն — թէպէտ եւ վերջինն էր՝ երեք հարազատաց մէջ, սակայն իր այժմէութիւնն եւ առիթը չկորուսանելու համար՝ յարմար դատուեցաւ յառաջագոյն ի լոյս ընծայել, ի վայելս ազգային բանասիրաց ու յարգողաց գեղեցիկ դպրութեանց, թողլով միւսներն ուրիշ ժամանակի եւ պատեհի։ Այս այսպէս ըրած ժամանակ՝ կը յուսանք՝ թէ գործին ամբողջութեանն ուղղակի վնասած չեղանք, խորհելով մանաւանդ՝ որ հրատարակած այս հատորս իսկ՝ ինքնուրոյն ամբողջութիւն մը կը կազմէ — ըստ նիւթոյն, — եւ հետեւաբար՝ կարէ ոչ միայն միւսներէն անկախ ըմբռնուիլ, այլ եւ պահել իր գոյութիւնը։

Անտարակոյս մեզ հետ՝ որ եւ է Մխիթարեանի մ'եւս աւելի ախորժելի պիտ'ըլլար օտարի մը ձեռքով գրուած եւ գծուած տեսնել այն, որ ինչ միանգամ գրուելու եւ հրատարակուելու արժանի էր բան ինքեան, եւ ազգին համար վաստակաւէր մշակներու, արդիւնքն եւ արժանիքն երախտագիտօրէն վերայայտնելու եւ եւ ազգային վերածնութեան պատմութեան եւ վերաբերութեանց առուերակողմանքը լուսաւորելու համար։ Բայց որովհետեւ օտարներուն՝ մինչեւ այդ ժամանակ՝ Մխիթարեանց վրայ գրածներէն շատերն անճիշտ են եւ թերի, — կամ միջոցաց անբաւականութեան եւ կամ գիչաց անձեռնհասութեան պատճառաւ, — հաւանօրէն այսպէս պիտ'ըլլար նաեւ այս պարագային մէջ անոնց գրելիքն, եթէ բարեացակամութեամբ իսկ ուզէին խօսիլ եւ դատել, առանց նախապարներէն ոմանց մոլեռանդութեամբ գծուած հոսանքին հետեւելու։

Ասոր մէկ կողմէն ի նկատի առնելով այս բաները, եւ միւս կողմէն ալ յոռետեսներէն ոմանց կանխաւ գործուած եւ հրատարակուած խեղաթիւրումներն ուղղելու համար — ի մասին Մխիթարեան գործիչներուն եւ անոնց գործերուն — ինքնայօժար մենք փորձեցինք ձեռք զարնել այսպիսի գործի մը, որ ծանր եւ տաժանելի աշխատութենէն զատ՝ իրաց ճմտութիւն եւ ընտրութիւն իսկ կը պահանջէր՝ թերեւս մեր ունեցածէն վեր։

Գիտեն անշուշտ բանիբուն ընթերցողք, թէ ինչպէս ասկէ կէս դար յառաջ՝ այսպէս եւ այսօր որպիսի կարեւոր եւ կենսական խնդիրներ յուզուած են եւ կը յուզուին ազգային նոր գրականութեան եւ անոր հետ սերտիւ կապուած մտաւճիւղերու մասին, — որպիսիք են մամուլի սկզբնաւորութիւնն ու գործած աքանչելի ազդեցութիւնը, — գրաբար եւ աշխարհաբար լեզուներու վերակազմութիւնն եւ զարգացումը՝ իրարմէ տարբեր ուղղութեամբ եւ պարագաներու մէջ, — թատերական ներկայացումներն ու անոնց ծագումը, բարգաւաճիլն եւ յառաջ բերած գեղեցկագիտական արդիւնքները ազգիս մէջ, — ակադեմական կամ ճեմարանական դասընթացքի հաստատութիւնն ու անոնց ձեռքով դրական ուսմանց եւ քննադատութեան յարմարումն, ինչպէս եւ ասոր տուած պէսպէս երախտագիտքը։ — Այս այս ամենայն եւ ասոնց յարակից դեռ ուրիշ շատ խնդիրներ իսկ՝ ոչ միայն նիւթ եղած են մեր այս հատորիս, այլ եւ բուռ կարելոյն մանրամասնօրէն ուսումնասիրուած՝ յանուն Մխիթարեան երկհարիւրամեայ գրական գործունէութեան։

Սակայն Մխիթարեան ըսելով՝ սեղմ առմամբ՝ մենք վենետկեանը միայն առած ենք, հետեւաբար Վիեննայի Մեծարգոյ Մխիթարեանց գրական գործերուն եւ գործիչներու մասին լուռ ենք ընդհանրապէս, եւ կամ դուն ուրեք խօսած, երբ պատեհը կը բերէր։

Մխիթարեան գրական գործունէութիւնն որչափ որ — մասնական տեսակէտով եւ բուռ իմիք — ազգայինէն զատ նկատած ենք, սակայն ընդհանրապէս ալ ջանացեր ենք անոր հետ սերտիւ կապել, իբրեւ կարեւոր եւ կազմիչ մասն՝ բոլորին։ Այս պատճառաւ իսկ մասնաւորապէս փոյթ տարած ենք՝ մէկ կողմէն դնել Մխիթարեան գրական գործի կեդրոնը՝ քաղաքակրթեալ Եւրոպայում, իսկ անոր բազմապիսի ազդեցութիւնքն ալ հետզհետէ ազգային անդաստաններուն մէջ. եւ միւս կողմէն ալ ցոյց տալ ընթերցողին՝ ազգային գրական գործոց եւ գործիչներուն՝ անընդհատ վերերեւումն եւ դէպ առ Մխիթարեանս գործած հակազդեցութիւնը։ Եւ կը յուսանք՝ թէ երկուստեք ցոյց տրուած այսպիսի համերաշխ յարաբերութիւններ՝ թէ աւելի հետաքրքրական եւ թէ ախորժելի ընեն ազգայնոց՝ գրքիս ընթերցանութիւնը։ Թերեւս ըլլան ոմանք, որ աւելին ալ պահանջեն մեզմէ ազգայինը. սակայն այս բանս իրաւացի չէ, վասն զի մենք եթէ ամէն մի նիւթի մէջ՝ ուզէինք ճոխանալ ազգային ամէն գրաւոր գործի եւ գործիչի մասին, այն ժամանակ մեր գրածն այլ եւս չպիտի

լինէր Մխիթարեան, այլ ընդհանուր ազգային նոր գրականութեան ուսումնասիրութիւն մը, որ մեր նպատակէն դուրս էր։

Գիտեն ամէնք՝ որ շատեր շատ բան պարբերաբար գրած ու խօսած են մեր նոր գրականութեան վերաբերող եւ վերը թուարկած նիւթերու մասին. հետեւաբար ամենադժուար էր մեզ համար — այսպիսի պարագայից մէջ — անոնցմէ բոլորովին տարբեր կամ միշտ նոր բան գտնել եւ գրել։ Սակայն ասով հանդերձ՝ կը յուսանք՝ որ ընթերցողք հանդիպին հոս զանազան նորութեանց, նաեւ այնպիսեաց՝ որ ուրիշներէն դեռ լսուած կամ ներկայացուած չըլլան։ Եւ այս նորութիւններս՝ որ կարող են լոյս ածել ժէ–ժթ դարու գրական եւ լուսաբանական շարժման եւ անոր պատճառաց վրայ, հանած ենք մայրամատեանց դիւանատան անտիպ ձեռակրութիւններէն՝ հաւատարմութեամբ։ Եթէ գտնեն երբէք քննադէրք անոնց մէջ անճշդութիւններ՝ մենք յայտ անպարտ ենք. քանզի զանոնք փոփոխելու իրաւունք չունէինք, այլ խնամով քննելու եւ գնահատելու պարտքը միայն, յորում քանզի կարելոյն ջանացեր ենք չվերանալ։

Որոնք լաւ տեղեակ են Մխիթարեան գործիչներուն եւ անոնց գործունէութեան, գուցէ մեր — իբր համակրօն եղբօր — դէպ անոնք ցոյց տուած խանդավառութիւնն ու դրուատիքը չափազանց գտնեն. սակայն մենք՝ որ անոնց հազարաւոր նամակներն ու անտիպ գրութիւնները մէկ կողմէն, եւ միւս կողմէն ալ ժամանակակից ազգային երեւելիներուն անոնց հետ ունեցած նիւթակցութիւններն աչքէ անցուցինք, եւ լսեցինք անոնց տրուած գովեստներն ու գոհունիւնը, չէինք կրնար այլ ազգ ներշնչուիլ կամ խօսիլ, քանի որ մանաւանդ անոնց յոբելեանը դեռ նոր կը կատարուէր, եւ անոնց հետաւոր յիշատակաց հետ՝ արդիւնական գործերն եւս կարճէք կենդանի դիմագծերով մտաց հանդէպ կը հանդիսանային եւ օտարներէն կը հրճակուէին։ Խանդավառութիւնն այն ատեն միայն եպերելի է գրութեան մը մէջ, երբ կամ սոսկապէս զգացման ծնունդ է, եւ կամ նեղ կուսակցական հոգիէ կը յառաջագայի, եւ զուրկ է պատմական հիմնէ. բայց մենք ըստ կարի չափելի ապացոյցներով ջանացեր ենք արծարծել զայն։ Դարձեալ գրողն երբ գաւ հարկանէ մը բորբոքուած չէ, նա չկարէ նաեւ լաւ կենդանագրել իրերն, ու վառել բորբոքել իր ընթերցողները։ Ի վերայ այսր ամենայնի պիտի տեսանեն բարեացակամ ընթերցողք, որ Մխիթարեան գործիչներուն եւ անոնց գործերուն լաւ կողմերը գովաճ չենք միայն, այլ նաեւ անոնց յարակից թերութիւններն իսկ անկեղծօրէն եւ անաչառապէս քննադատած եւ յայտնած։ Իսկ խստապահանջք՝ թող յիշեն, որ ինչպէս իրենք՝ իրենց ծնողաց եւ եղբարց վրայ դիւրաւ գէշ չեն խօսիր, այսպէս ալ մեզ նեղելի չէր մերիններուն հետ այնպէս վարուիլ, քանի որ մանաւանդ ասոնց անձնուիրութիւնն ու վաստակքն՝ աւելի երախտագիտութեան արժանի են։ Եթէ մեր այս ինչ կամ այն գործիչն աւելի մեծ, աւելի բարձր դիրք մը տուած ենք, այս իսկ բացարձակապէս եւ ամէն ժամանակի համար չէ, այլ հանգամանութեամբ իրենց ժամանակակիցներուն եւ միջավայրին, յորում գրեցին եւ գործեցին՝ հանգամանալի է։

Գալով մեր այս գրութեան մէջ բռնած ոճին՝ կը կանխենք ըսել, որ չոր ու ցամաք քննադատականէն աւելի՝ մատենագրականը կամ ճարկաւէտ ոճն ընտրած ենք, դիտելով՝ որ դեռ քիչեր կը գտնուին ազգիս մէջ՝ զուտ քննադատական եւ ցամաք ոճով գրուած երկասիրութեանց ընթերցողք. հետեւաբար՝ ասոնցմէ աւելի մեծամասնութեան պահանջին ուզեցինք գոհացումն տալ։ Պէտք է դիտել եւ այս՝ որ ինչպէս ամէն նիւթ մի եւ նոյն կերպով չի քննադատուիր, այսպէս մանաւանդ գրականութեան մէջ՝ կայ ճարտասանական քննադատութիւն մ'ալ՝ աւելի ազդու եւ աւելի ախորժելի, երբ սուբ դիտողութեանց եւ իրական փաստերու վրայ հաս-

տատուած է՝ քան լոկ բանական ենթադրութեանց. իսկ արդ՝ որովհետեւ մեր գրելիքն ըստ մեծի մասին գրականական եւ բանաստեղծական էր, ուստի ըստ այսմ՝ վերջի տեսակին աւելի հետեւեցանք, առանց միւսը զանց ընելու, ուր մանաւանդ նիւթն եւ պատեհն՝ այդպէս կը պահանջէին։

Ինչպէս ամէն մարդ՝ այսպէս ալ ամէն գրիչ սխալական է, մանաւանդ երբ բազմապատիկ են անոր գրած նիւթերն եւ բազմահոծ տուած ծանօթութիւնները ու դատաստանները. եւ ընդարձակ է գրութիւնն, եւ գրած անձինքն ու գործերը կամ չեն գրողին ժամանակակից, եւ կամ իրենց ժամանակակիցներէն ըստ բաւականին դեռ ուսումնասիրուած չեն եւ պարզուած։ Ուստի մեր այն աշխատասիրութիւնն իսկ՝ այսպիսի պարագաներու մէջ եղած ըլլալով, յաւակնութիւն չունինք կարծելու՝ որ բոլորովին զերծ լինի սխալներէ. որոնց համար կը խնդրենք անուշադիր ընթերցողաց ներողամտութիւնն ու արգահատանքը։

Յամենայն դէպս՝ մեր աշխատութիւնը լիովին վարձատրուած եւ նպատակին հասած պիտ'ըլլայ, եթէ Ովսաիս ներկայ սերունդն — ինչպէս եւ անոր երախտագէտ սաներն եւ համակրող ազգայինք առհասարակ — կարդալով մեր վաստակաւէր մշակաց եւ նախանձելի Հարց գործերն, իրենք եւս բարի նախանձով զգենուն անոնց հոգին եւ եռանդը, կրկնապատկելով իրենց աշխատասիրութիւններն՝ Մայր Հասարակութեանս պարծանաց եւ ազգիս մեծագոյն զարգացման եւ երջանկութեան համար։

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԵՐԿՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆ

ՈՒ

ՆՇԱՆԱԻՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա

Մխիթարեան գրական հաստատութեան նպատակը. — Նախամխիթարեան գրականութիւնն ու նախկին գրականութեան մուխի հանգամանքը. — Գրոց բարբառն ու անոր կանոնական կազմութեան գաղանիքը. — Ինքնականութեան անհրաժեշտ պէտքն և Դիոնեսիոս Թրակացու հին թարգմանութիւնը. — Յոյն գրականութեան և լեզուի մեծ ազդեցութիւնը Ե. դարու հայկ. դպրութեան վրայ, և աւոր վտիմ դասականութեան պատճառքը. — Միջնադարեան գրականութիւնն և անոր բերած լաւ և վատ նորութիւնքը. — Հայկ. դպրութեան անկումը և անոր ոդրալի կացութիւնը ԺԶ. դարավերջին։

Ենծն Մխիթար իր փոքրիկ միաբանութիւնը հաստատած ժամանակ՝ երեք նպատակ ունէր. այսինքն են՝ հոգեւոր, կրթական և գրականական։ Եւ երեքն ալ այնպիսի հաստատուն հիման վրայ խարխափած որոնք ապագայ ար և է գժուարութեան և գժնդակ արկածից ժէզ իսկ պիտի չդադրէին բնաւ վնաս իրենեներուն իրրեւ ամենազօրիկ ապահովներ, կրթովք գործելու և վաստակելու. իրրեւ ասկեղէն, մանաւանդ թէ լուսեղէն անուրջներ՝ հրաւիրելու զանոնք միշտ յառաջ յառաջ։ Յիրաւի՝ թէ Մխիթ. Միաբանութիւնն երկհարիւր տարիներու ժէզ ինչպէս և ինչ չափով յառաջ վարեց և արդիւնաւորեց իր հիմնադրին այնքան սիրելի և փափկի այդ անուրջներէն վերջինը, պիտի տեսնենք ներկայ հատորիս ժէզ։

Կան ազգեր, որ իրենց գրականութեան անցեալ փառքովը կը պարծին, կան ալ՝ որք իրենց ներկայիւը։ Այն աչքը՝ որ յառած կը դիտէ ժիայն հայկական գրականութեան հեռաւոր ապագային, կ՚երկնչի անշուշտ, որ ժի գուցէ անոր չափազանց բորբոքուած լուսովը բլլակնիւ։ Ուրիշ աչք մ՚ընդ հակառակն, որ կը ձգուի ընդնշմարել ժիայն անցեալը, կրնայ խիթալ՝ որ չըլլայ թէ խորասուզուած անոր խորհրդաւոր աւերակաց և մթութեանը ժէջ՝ մոլորի և ոտնակոխ։ Այլ ուշիմ և գրական աճով գործող և գրողներուն յառաջ է ըլլալ միեւնոյն ժամանակ և՛ յարգարիր և ակնածոյ իրենց նախնեաց, և՛ կաթոդին սիրող և խրախուսող նորասեռ արդւոց և թոռանց։ Եւ այս այնպիսի զսպմանալի կարգով և միաձոյլ ներդաշնակութեամբ, զոր արտաքին խոչք և խութք անգամ չեն կրնար խզել և խանգարել, թող թէ կասեցնել և ոչնչ։ Ահա այս կերպով — կարելի է ըսել — պրեց և գործեց Մխիթարայ տունը։ Մէկ կողմէն չա-

նալով — արիական տոկունութեամբ — հեռու բռնել իրմէ արտաքին արգելքները, և միւս կողմէն ալ անանձնելով լուսաւոր աչխարհի գիտութեամբք և ճաշակով: Մերթ իր հպատակամութեան ճիգերովը և միջավայրին ընձեռած նպաստիւք գեղազարդելով բնութեան տուրքերը, և մերթ նախաձեռնելով յամենայնի՝ ոչ միայն գիտցաւ քարել անոնցմէ թարմ պտուղներ, այլ և սիրեց ամէն կողմ նորանոր սերմեր: Մէկ խօսքով՝ գործածէր մեղուի նման ծծեց նա եւրոպական գիտութենէն այն ամենայն, զոր կարէր. և տուաւ ազգին և Եւրոպիոյ այն ամէնը, , իր կարողութեան չափով: Որ ինչ միանգամ ձեռքերեցան և կատարեցին Մխիթարեանք՝ գիտեն քալ և Արեւելք և Արեւմուտք: Բազումք՝ բազմից խօսած և գրած են անցողաբար. և մենք իսկ վկայ ենք հաւատարիմ՝ ոչ միայն այդ գրուածներուն, այլ և անոնց նիւթ եղող բոլոր այն փառապանծ վախճաններուն, այսպէս և կենդանի եղողներու ազնիւ գործերուն: Եւ կա՛յ արդեօք սիրահար մէկը նուրբ հանճարոյ, տոկուն վաստակոց, գեղեցիկ մշակութեան և արուարութեան յաղթանակին, որ կամաւոր մոռացութեան տայ այն ամենայն, որոնք կը կազմեն երկդարեան սերնդոց՝ գրական, քերականական, գեղեցկագիտական և բանաստեղծական, խմաստասիրական, աստուածաբանական, պատմական և աչխարհագրական; կրօնական և բարոյական հարստութիւնն և գոհարեղէնքը: Ահա առնք խմաին պիտի կազմեն նաեւ մեր գրելիքներուն իրրեւ համառօտ՝ բայց և համապարփակ ուրուագիծ մի:

Ինչպէս մարդկային ընդհանուր մտքին՝ այսպէս եւս լեզուի և գրականութեան զարգացման, կամ անկման իսկական օրէնքները գրեթէ նոյն են ամէն ժամանակ, թէպետեւ նոցա միջավայրերն և պարագայքը իրարմէ մեծապէս կը տարբերին, աւելի կամ պակաս ազդելու այդ զարգացման կամ անկման վրայ: Հետեւաբար Հայոց գրականն գրականութեան և գրոց հիմնադիր ու հեղինակ Թարգմանիչք իսկ — Ե. դարուն սկիզբը — փոքր ի շատէ նման ազէտի մի ականատես կ'ըլլային, զոր Շնորհալիք ապա ՅԺԲ. դարում, և Մխիթար ԺԷ-ին սկիզբը իր գագաթնակէտին հասած կը տեսնէին: Տարբերութիւնն յայտ կը կայանար, որ ինչպէս ԺԲ. դարուն, այսպէս և ՅԺԷ-ին նախնեաց գրականութիւնն ու գիրը կար, բայց բոլորովին մոռացութեան դատապարտուած էր. որով և հայ լեզուն աղաւաղուած և այլանդակուած: Իսկ Ե. դարուն սկիզբը ընդհանրական լեզուն կենդանի էր, բայց յատուկ գիր և գրականութիւն կը պակսէին, զոր բաւականին ազգային մտաւոր կեանքն և արտադրութիւնքը յաւերժացնելու և ապագայ սերնդոց օգտակար ընելու համար: Մեր նոր գրականութիւնն եթէ երբորդ չըրջան անուանել հարկ ըլլայ, և եթէ վերածնութիւն առաջնոյն և երկրորդին միանգամայն, այս յայտնի է՝ որ այդ գրականութեան սկզբնաւորող՝ եղան Մխիթարեանք:

* * *

Սակայն Մխիթարեանց գրական գործունէութեան, կամ լաւ եւս վերածնութեան մեծութիւնը լաւ որակելու և ակներեւ ընելու համար, հարկաւոր է համառօտ ակնարկ մի ձգել հին և միջին չրջաններու գրականութեանց վրայ. որպէս զի իմանանք, թէ ինչե՞ր և ինչ չափով առեղծեցին անոնք և աւանդեցին յետնոց. և թէ ինչ վիճակի մէջ կը գտնուէին այդ մտաւոր առեղծագործութիւնները՝ Մխիթարայ ժամանակ:

Տարակոյս չի վերցներ, թէ Ե. դարու առաջին քառորդին՝ երբ մեծ Տարօնեցին և Սահակ հայկական գրոց գիւտով ապարէզ եկան — իրրեւ նորագործ Կազմոններ — մեր աչխարհի այլ և այլ կողմերում կային իրարմէ տարբեր կենդանի և բաւական հարուստ գաւառաբարբառներ, որոնցմով կարելի էր ոչ միայն թարգմանել և մարմնացնել իրենց դրացի և իրենցմէ աւելի զարգացած ազգերու եկեղեցական, պատմական, աստուածաբանական, իմաստասիրական, բանաստեղծական, և այլն, մատենագրութիւնքը. այլ և յաջողիլ ինքնուրոյն ինչ ինչ երկասիրութիւններ:

Թէ ո՞րն էր արդեօք ամենէն աւելի յարմար, զարգացած և կանոնաւոր գաւառաբարբառն, որ նախընտրուելու էր ընդհանուր գրականութեան բարբառ: Այս բարբառեաւն արդեօք — ինչպէս ընդունուած էր ցարդ — թէ ընդհակառակն Տարօնեանը, ինչպէս կը ջանան ապացուցանել արդի ազգային բանասէրներէն ոմանք: Դիտելով մէկ կողմէն՝ որ Ե. դարու մատենագրութեան լեզուն աւելի պարթեւական բառամթերք կը

պարունակէ իր մէջ, քան թէ հին հայկական կամ տոպեան գրս կ'ընծայեն մեզ արձանագիրք. և միւս կողմէն ալ որ Տարօն Աշրարատէն յառաջ Բիանայ կամ Վանայ թագաւորութեան մասն էր. ուստի աւելի հաւանական է կարծել որ այրարատեան արքայիկ գաւառաբարբառն աւելի ընտրուած ըլլայ՝ լինելու ընդհանուրին համար գրականութեան բարբառ, ուր գօրաւոր էր նոյն իսկ պարթեւական ազդեցութիւնը, քան թէ Տարօնինը։

Սակայն այս մասնական կէտէս աւելի, որ տակաւին խնդրական է և մեր նիւթէն դուրս, հետեւեալ տեսակէտերը պէտք են ուղղակի գրաւել մեր ուշադրութիւնը։ Այսինքն, թէ Ս. Գրոց Թարգմանութենէն յառաջ այրարատեան կամ տարօնեան այդ կենդանի բարբառն էր տուգիս քերականական կանոնաւ և բառամթերօք այնպէս կատարեալ, ինչպէս որ են մեզի հասած այն գարու թարգմանածոյ և ինքնագիր մատենագրութիւնները. թէ ընդհակառակն քան մեծի մասին գուրկ էր այն՝ այդ և ուրիշ կատարելութենէ, և միայն մեր բազմարդիւն Թարգմանչաց չնորհիւ ստացան բոլոր այն կատարելութիւնները։ Ե. մեր ոսկեդարու գրականութիւնն՝ իր գրացի ազգերէն որո՞ւն ազդեցութեան տակ աւելի գարգացաւ, և յորմէ էր այդ զարգացումը։

Այս հարցերուս վերջնոյն լուծմամբը՝ հարկաւ պիտի լուծուի և՛ առաջինը. տեսնենք փաստերը։ Արդ՝ ինչպէս յառաջ՝ այսպէս և Ե. դարուն մեր գերակշիռ դրացիներն էին Պարթեւները, Ասորիները և Յոյները. հետեւաբար մեր կրեփք ազդեցութիւններն եւս առանց ունեցած քաղաքական կամ մտաւորական գործութեան և գործունէութեանը համաձայն ըլլալու էին։ Պարսկի մեր աշխարհին հետ ունեցած քաղաքական յարաբերութիւններն, իրաւ է, որ այդ ժամանակ աւելի գօրեղ էին և ընդարձակ՝ քան միւսներուն, բայց որովհետեւ սոքա կրօնիս հեթանոս էին և գիտութեամբ և գրականութեամբ աղքատ, հետեւաբար այդ մասին մեր գրագէտները ոչ կ'ուզէին և ոչ այլ կարէին ազդուիլ կամ օգուտ քաղել անկէ։ Այս բանիս յայտնի ապացոյց է և՛ այս, որ Ե. դարէն պարսիկ հեղինակութիւն մի հայացած և հասած չէ մեզ. իսկ յիշատակուածները մէկ կամ երկուքէն աւելի չեն։ Ուրեմն մեր աշխարհի գիտական և գրական ասպարիզին վրայ կը մնային Ասորիք և Յոյները։

Իրաւ է՝ որ Ագաթանգեղոսէն և Բուզանդէն սկսեալ՝ մինչեւ Ղազար և Ջենոբ Գլակացի մեզ կը հաւատան, թէ Լուսաւորչի և մեծին Ներսիսի օրերէն սկսած մինչեւ գրոց երջանիկ գիւտը՝ հայ մանկտին յունարէն և ասորերէն դպրութիւն կ'ուսանէր դպրոցներուս։ Սակայն և այնպէս պէտք է ըսել, թէ ասորերէնով ոչ ոք այնպէս կը հետաքրքրուէր, ինչպէս յունարէնով։ Վասն զի սա ոչ միայն իւր բազմապիսի ճիւղաւորութեամբ և անհամեմատ գեղեցկութեամբը հրապուրիչ էր, այլ և մեծաւոր և նոտանի հայկականին. վասն զի Քրիստոսէ երկու դար յառաջ մտած էր Հայոց մէջ, և յունասէր Պարթեւ Արշակունիներու ջանքովը շարունակուած, և ընտելացած։ Մէկ խօսքով՝ վասն զի Լուսաւորիչներու, Ներսէսներու, Սահակ Մեսրոպներու և նմանեաց դաստիարակութեան և մշակութեան մայր և դայեակ եղած էր այն։ Այսպէս ուրեմն — այս և ուրիշ պատեհութիւններով — ասորականէն աւելի՝ յունական դպրութիւն է, զոր կը հայացնէին մեր ճարտասաւոր Թարգմանիչները, իւր արբագան և արտաքին գիտելեօք, իւր կրթական և կենցաղօգուտ գործերով, զորս յայնժամ հարկաւոր դատեցան։ Գործեր՝ որոնցմէ կարելի է ըսել, թէ հարիւրին մէկը հազիւ հասած է մեզի՝ համեմատութեամբ։

Սակայն հելլենական գիտելիքներէն աւելի թանկագին գանձը՝ զոր Ս. Գրոց և այլ Թարգմանութեանց առթիւ Թողուցին առաջին Թարգմանիչք, և որ մինչեւ ցայսօր ամենուն աքանչացման նիւթ եղած է յաւէտ՝ իւր գեռ անլուծանելի առեղծուածովը, է հայկական կոկիկ, կանոնաւոր և Սովփերայ ոսկիէն աւելի գուտ և շլացուցիչ լեզուն։ Արդ, քերականական ամէն կանոններով և ձեւերով կոկուած ու կարգաւորուած գրական այսպիսի մի լեզու բացարձակապէս չէր կրնար ընծայել Թարգմանչաց՝ ոչ Աշրարատեանն և ոչ իսկ Տարօնականն գաւառաբարբառը — որչափ ալ ճոխ, որչափ ալ գարգացած ենթադրուի ասոնցմէ մին կամ միւսը։ Մանաւանդ եթէ խորհուի, որ այդ գաւառաբարբառը մինչեւ այն ժամանակ դեռ գրի և գրականութեան վերածուած չէր՝ որ և է ասար նշանագրով մի։ Յիրաւի՝ եթէ կը յարգենք — և պէտք է յարգել որ և է կամայական տեսութենէ աւելի՝ համեմատական լեզուաբանութեան լուրջ ուսումնասիրութիւնքն և օրէնքը — պէտք է ընդունել, որ ինչպէս այժմեան՝ այսպէս այլ Ե. դարու գաւառաբարբառներու էութիւնն և ինքնուրոյնութիւնը — իրրեւ կենդանի ժողովրդա-

կան արտայայտութեան — կը կայանար ոչ միայն հնչական, այլ և քերականական կանոնաց և ձեւերու զարտուղութեանց, կրճատումնց, և տարրեր առմանց և առութեանց մէջ, այնպէս՝ ինչպէս որ անպրագէտ և անուս ժողովրդեան առօրեայ կեանքն և կենաց դիւրութիւնները կը պահանջէին։ Ուրիշ կերպ խորհելը՝ գաւառական բարբառի գրականէն ունեցած տարրերութեանց հետ՝ նաեւ ինքնուրոյնութիւնը վերցնել ըսել է։

Դարձեալ եթէ Թարգմանիչներէն յառաջ ունենար այդ գաւառաբարբառներէն մին կամ միւսը այն երեւակայեալ յատկութիւնը, ապա ուրեմն ինչո՞ւ չի պահուեցաւ այն՝ նոյն իսկ երկրորդ Թարգմանչաց ժամանակ, նոյն իսկ վեցերորդ դարուամ, երբ պակասեցան հետ գհետէ գրագէտք և գրականութիւն։ Ո՞չ ապաքէն այն գաւառի ժողովրդեան հետ բարբառն ևս կը տկարար և կը տեւէր միշտ կենդանի։ Այդ՝ այս պատճառով, ուրեմն պէտք է ըսել, թէ Ե. դարու մեր նախընծայ գրականութիւնը թէեւ իր լեզուական առաղձը ընդհանուր կերպով ժամանակակից կենդանի բարբառի բովերէն առաւ, սակայն մնացածը — այսինքն՝ քերականական ձեւերն և կանոնները, շատ մի նորակերտ բառեր և բարդութիւններ, այլովք հանդերձ — յունական դպրութեան փոխադրութեամբը ժառանգեց. գրա այնքան գեղեցիկ կերպով գիտցան արուեստակել և կերտել յունարէն բնագրոց վրայ, հայերէնի և յունարէնի քաջալարժ մեր նախկին Թարգմանիչք։ Այս ճշմարտութեանս կարելի է հաստ լինել բաղդատելով մանաւանդ իր քրիստոնէական ճոխ գրականութեամբ յունարէն բնագրին հետ այն գարուամ կատարուած հայերէն ար և է Թարգմանութիւնը։ Սակայն այս բանիս իրրեւ ակնյայտնի օրինակ՝ ցոյց կու տանք մենք Իմաստասիրեան գրոց վրայ Թարգմանութիւնը. ուր յունարէնի վրայ ձեւուած բարդութիւնք բառից և կանոնաւոր ձեւոց աւելի գգալի են. և Եուզանեզացւոյ պատմութիւնը, ուր ոսկեգարու գրական լեզուին քով՝ գաւառաբարբառի արտաղութիւնք իսկ զգալի են։ Այդ՝ առաջինը իրրեւ յայտարար յունաբէնէ յեղեալ կանոնաւոր Թարգմանութեան կը համարիմ. և միւսը՝ նոյն ժամանակի հայերէն ինքնագրութեան, և կամ աստրական ազդեցութեան։

* * *

Սակայն այս ճշմարտութիւնը պարզած ժամանակ, դժուարութեան լեռ մ'ևս կը մնայ մեզ հարթել. այսինքն, թէ յունական — այսպէս և աստրական — գրականութիւնը կանոնաւոր կերպով և կատարելութեամբը հայացընելու համար հարկաւոր էր ունենալ նախ հայացած քերականութիւն մի։ Որովհետև Ս. Մեսրոպէն սկսեալ, կային ուրիշ աշակերտակիցներ ևս՝ որոնք յունարէն լեզուին և կանոնաց լաւ հմուտ չէին։ Ե.րդ դարէն յառաջ — ինչպէս և յետոյ — ամենուն ծանօթ և գործածական Քերականութիւնն էր Դիոնեսիոս Թրակացւոյն։ Գրոց գիւտէն յառաջ իսկ անկարելի չէ, որ մեր նախնիք յունարէն գրով՝ հայերէնի Թարգմանած ըլլային գայն. բայց ևս աւելի հաւանական կը համարիմ, որ վերջը Թարգմանած ըլլայ գայն Ս. Սահակ՝ առաջ Գրոց Բ. Թարգմանութեանը դեռ ձեռք չի զարկած։ Իրաւ է՝ որ նշանագրոց գիւտի պատմութեան մէջ այսպիսի մի նախընծայ Թարգմանութիւն որոշակի յիշուած չէ. բայց լռութիւնն ալ միշտ բացասական փաստ չէ այնպիսի եղելութեան մը։ Մանաւանդ եթէ դիտենք որ՝ նախ այնտեղ Ս. Գրքէն դուրս ուրիշ Թարգմանութեանց մասին իսկ խօսք չկայ. երկրորդ, որ Մեսրոպայ կենսագիրը՝ Սահակայ գործունէութեան մասին քիչ բան կամ ոչ ինչ խօսելու առիթ ունեցած է։ Իսկ Ղազար՝ որ Մեսրոպէն աւելի ընդարձակ դեր առած է Սահակայ, Ս. Գրոց Թարգմանութենէն յառաջ՝ հայերէն և յունաբէն գրոց, աթուիայից, սիւղոբայից և հեգեմոյից ուղղաձայնութեան և կարգաւորութեան համար բանասիրական այնպիսի գժուարին գործ մը կատարուած կ'ուզէր; որուն Մաշթոց ինքնին, Յոհան, Յովսէփ, Տէր և Մուշէ անբաւական էին։ Սուրբ հայրապետը յառաջ կ'անցնէր՝ «դիւրահնար ճանապարհ ցուցանելու կարգադրութեան գրենոյն և հեգեմոյից ուղղաձայնութեան», այլովք հանդերձ։ Եւ այդ գժուարին և ամենակարեւոր գործը, այսինքն՝ «Զգիր գրենոյն հայերէնի, և հնդեմոցիւն ուղիղ յօրինուածս» ի գլուխ հանելէն վերջ, կը ցանկային — ըստ Ղազարայ — «կարգել գպրոցս և ուսուցանել բազմութիւն մանկտոյ»։

Այս աւետեան պատմելէն վերջ Փարպեցին, ապա կու գայ պատմել — Մաշթոցի և սուգ քահանայից ազաչանօք — սուրբ Գրոց Թարգմանութիւնը՝ Սահակայ ձեռքով։ Ծաղրական և աւետաւետական մտածութիւն մի պիտի ըլլար, եթէ Ղազարէն յիշուած այդ տաժանելի գործողութիւնը՝ պարզապէս յուներէն 22 տառերու մեքենական փոխադրութեան, և կամ հայերէնինը անոնց հանդէպ դասաւորելուն համար կատարուած համարինք, ինչպէս որ կարծեցին ոմանք։ Հետեւաբար՝ անով կ'իմացուին թէ ձայնադրական դասաւորութիւն տառից, թէ արտաբայք, թէ հնչերէն և թէ ուղղագրութիւն, որոնք քերականութեան մէջ կը բովանդակին. և թէ «հելլենացին ուղղեալ յօրինուածս» բացատրութիւնն իսկ այդ կը նշանակէ, այսինքն՝ քերականութիւն։

Թրակացւոյ քերականութեան նախընծայ Թարգմանութեան անուղղակի ապացոյց մի կը գտնուի նաեւ Կորեան քով. վասն զի նոյն իսկ նշանագրոց կարգաւորութիւնը թէեւ Հռափանոսի և Մեսրոպայ արուած են, սակայն նրբագոյնները, կարճերու, երկայններու, առանձնակներու և երկնակներու բաժանմունքն և յանկաւորութիւնը՝ հանդերձ արտաբայք եւ հնչեմայիւ՝ Թրակացւոյ քերականութեան համաձայն եղած են, — ինչպէս կ'ատանդեն Մագիստրոս, Մ. Սիւնեցին և այլ հին քերականագէտք —։ Թրակացւոյ քերականութեան նախընծայ Թարգմանութիւնը, պէտք է ըսել, որ ի վաղուց անյայտացած էր արդէն։ Իսկ այն հին քերականութիւնը, որ հասած է մեզ — Մովսէսի Խորենացւոյ, Դաւթի Անյաղթի, Ստ. Սիւնեցւոյ և այլոց անուամբ — կամ բոլորովին ուրիշ է, և կամ հազիւ ինչ ինչ պարունակէ հինէն։ Յամենայն դէպս՝ Ե. դարու հայկական գրականութեան ոչ միայն կանոնաւորութիւնն ու կոկութիւնը, այլ և հարուստ ձեւերու և բարդութեանց մի մասը պարտական եմք յուներէնին և անոր ճարտար փոխադրողներուն տալ, կամ լաւ եւս ըսելով՝ դոքա կը պակսէին մեր կենդանի բարբառներուն մէջ, և յուներէնի վրայ ձեւուեցան ապա, և գործածութեամբ ընդհանրացան։

Փոքր Թարգմանիչները չարունակեցին առաջնոց գործը, և ժամանակեան գիտութեան և գաղափարաց համեմատ աճեցուցին անոնց թիւը. մանաւանդ թէ ամենք չափն իսկ անդին անցնելով, գրեթէ հայերէնն իսկ յուներէնէ չափ այլանդակեցին։ Սակայն այս բացառիկ երեւոյթ մ'էր. անոր համար իսկ չկարաց արմատ ձգել Ե. դարու գրականութեան հողին վրայ։ Հանդերձ այսու՝ տոքա ինքնագիր, պատմական և իմաստասիրական երկերով կրկնակի հարստացուցին մեր դասական գրականութիւնը։ Նառադոյզ բանասէրներէն ոմանք այս եղելութեանն ուշ չի դնելով, և Ե. դարէն մեզ հասած մի քանի երկասիրութեանց ոճերուն կամ տուութեանց նմանութեան կամ անմանութեան վրայ միայն հատատուած, ուզեցին չորսէն հինգ դպրոցներու բաժնել զանոնք։ Այդ՝ այսպիսի մակամատածական մեթոտով տան, քան, երեսուն և հարիւր դպրոցներ եւս կարելի պիտի լինէր հնարել, եթէ նոյնչափ երկասիրութիւններ մեզ հասած լինէին Ե. դարէն։ Այս մեթոտիս անտեղութիւնն անով դեռ աւելի աչքերու կ'ըլլայ, որ Եղիշէ, Դաւիթ Անյաղթ, Ղազար և Խորենացի, որոնք փոքր Թարգմանչաց դպրոցը կը կազմեն, իրենց այլ և այլ երկասիրութեանց — այսինքն է ինքնագիր գրուածոց մէջ — ուրիշ լեզու և տուութիւններ ի գործ ածած են, և Թարգմանութեանց կամ Թարգմանարար յօրինուածոց մէջ ալ ուրիշ։ Օրինակ ըլլայ բաւ Դաւթի Ներսոյ ի Սուրբ Խաչն, և Ներսիսեան Պոլսիւրի և Աբիստոտէլի Մատրոգուբեանց Թարգմանութիւնքը. Եղիշէի Դատաւորաց, եւ այլն, Մեկնութիւններն և Վարդանանց Պատմութիւնը, Մովսէսի՝ Հայոց Պատմութիւնն և Պիտոյից Գիրքը։ Ինչէ՞ն այդքան տարբերութիւն՝ նոյն իսկ մի և նոյն մտքէն և գրչէն եւած գործոց մէջ։ Վասն զի իմաստասիրական և հռետորական լեզուն և անոր յատուկ բառերն և բացատրութիւնները դեռ մուտ գտած չէին, և կամ ընդհանրացած չէին մինչեւ այն ժամանակ՝ ոչ ժողովրդեան կենդանի բարբառին և ոչ այլ երիցագոյն Թարգմանչաց գրականութեանը մէջ։ Հետեւաբար՝ իրենք ստիպուած էին յուներէն նոյնատեսակ գործերու վրայ կազմել և կազապարել զանոնք, եւ գրեթէ նոր ստեղծել։ Ասոր յայտ մասին, ինչպէս և ընդհանուր արտաքին գիտութեանց տեսակէտով — որպիսիք են փիլիսոփայութիւն, ձարտասանութիւն, Քերթողութիւն, Պատմութիւն և Աշխարհագրութիւն — պարտիմք մեք յոյժ յոյժ փոքր Թարգմանիչներուն և անոնց յաջորդաց։ Սոքա հարիւրաւոր գործերէն մեզի հասած սակաւքն իսկ այնքան մեծայարգ են և պանծալի, որչափ երիցագոյն Թարգմանչաց նախընծայ գրականութիւնը։ Կատարեալ գրականութիւնն այն է միայն, որ կը ներկայացընէ մեզ բոլոր գիտելիքը (scibile), իրենց յատուկ բարբա-

ռով։ Ամենամեծ պատրանք մ'է վերջնոց միայն փարիզն, ու առաջնոց լեզուն անտես առնելը։ Սակայն ինչ որ էին փոքր Թարգմանչաց գործերը՝ նկատմամբ երիցապոյննեբուն, նոյն համեմատութիւնը ունին նաեւ վեցերորդ գարու հեղինակութիւնքը՝ նկատմամբ առաջնոց, իրենց նիւթոց պարունակութեամբն ու նորութիւններով։

Իսկ Միջին գարը՝ որչափ որ ալ ազնաալի եղած է մեզ քաղաքականապէս, սակայն մեր ազգային գրականութիւնն և գիտութիւնը խափան չկարաց խափանել։ Վրացական և մենգրելական տիրապետութիւնը, իրաւ է, որ աւերից ատրկացուց հայ ժողովուրդը, այրեց ոչնչացոյց՝ ըստ մեծի մասին՝ մեր հինաւուրց մագաղաթները, արտաքսուց մեծապէս տոհմային անուանակոչութիւնքը. սակայն հարաւային և հիւսիսային կործանիչ այդ հովերու և հրոսակներու բաղխմանէն վերջ իսկ կը սկսէր կանգնիլ Հայկ Իսկիկի մէջ նոր հայրենիքին հետ՝ նոյնպէս և նոր գրականութիւն մի, Ներսիսեանց ձեռքով։

Մեր գրականութեան այդ երկրորդ շրջանը՝ կրկին ուղղութեամբ է որ կը սկսէր գարգանալ՝ բնիկ տերանց ներքեւ, և գարգացաւ իսկ. այսինքն է՝ մէկ կողմէն մաքրելով միջնադարեան կապարն և երկաթը, ինչպէս և Նարեկացիներու վրայ ազդած արաբական ծանրաբեռնութիւնքը — որոնք անակնառօրէն ժանգոտած էին մեր սակեղինիկ գրականութիւնը՝ այլաւարր կուտակութիւններով — և միւս կողմէն ալ անոր հիման վրայ վերականգնել և բարձրացնել — ընդարձակ ճիզուտորութեամբ — գրականական մի ուրիշ հրաշակերտ, Ազամանաց արիական ազգի և Փառանգաց աստեղեական ներշնչութեամբը պատարուն։

* * *

Շնորհալին՝ — որ եղաւ գլխաւոր գարգացուցիչ երկրորդ շրջանի գրականութեան — օժտուած ի բնէ ոչ միայն բազմագիտի գիտութեամբ, այլ և բանաստեղծական նուրբ հանճարով և ճաշակով՝ իր վիպասանութիւն հայկազանց չքնաղ քերթուածովը կը վերածնանէր մոռցուած Ագաթանգեղոսները, Խորենացիներն ու Եղիշէները. և այս այնքան և այնպիսի արուեստով որ հիներուն անծանօթ էր։ Նոյնը գարձեալ արտաքսն և ատրական տաղաչափութեան բոլոր տեսակները կը հայացնէր, ճշմարիտ առեղծագործողի մի գեղեցկացուցիչ և յափշտակիչ վրձինով մը։ Հինաւուրց Վրուրի առակներուն հետ՝ — պէտք է գիտել — որ առակախօսութեան հրահանգիչ ճիւղն եւս ցամքեր գոտացել էր. սակայն Ներսէս, Մխիթար Գոշ և Վարդան Այգեկցի գայդ եւս կենդանացնելով կը վերընձիւղէին։ Ճարտասանական առնեախօսութեան մանաճիւղը, յորմէ մեր հին գրականութեան մէջ հատուկտիր հատուածներ հասուցած էր մեզ Գազար, տարօնեան փողին՝ Ն. Լամբրոնացւոյ գրչով իր գագաթնակէտին կը հասնէր։ Իսկ անոր Պատարագի Մեկնութեամբ ցոյց տուած Տրամախօսութիւնը (Dialogue) մեր հին գրականութեան վրայ զարմացուցիչ նորութիւն մի կը յաւելցնէր։ Մխիթար Հերացին՝ Ջերմանց գրքովը հին արար, պարսիկ և յոյն բժշկականութիւնը կ'ընծայէր ամենահետաքրքրական նորութիւններով։ Գոշ՝ իր Դատաստանագրքովն և Ամբաս՝ Անտիոքայ Ակնիզով առաջին անգամ կու տային ոչ միայն Հայոց, այլ և Վրաց և Թաթարաց՝ գրաւոր և կատարեալ հատաքածոյ մի — Մովսէսականէն սկսեալ՝ բոլոր արեւելեան օրինաց —։ Հեթում, Կիրակոս և Վարդան կ'արձանացնէին բիւզանդական ժամանակագրութիւնը, հայկական վէպերով ճոխացուցած։ Վանական վարդապետը կ'ընծայէր — Լաստիվերտցւոյ պէս, թէ այլ կերպ՝ յայտնի չէ — Նեռոդոս ազգի արշաւանքի և աշխարհակալութեան պատմութիւնը, իր ազգին և աշխարհի սկսեալ հետ լծորդած։ Բայց անողոք ժամանակը կապեց գայն մեզմէ։ Հապա հին և նոր Կտակարանաց մեկնութիւնները և Հարց սակեղինիկ շղթաները, կամ խմբագրութիւնները, գոր Հայակիւիկիոյ վանորայքը մէկ կողմէն, և միւս կողմէն ալ Մեծ Հայքի վանքերը աենգով մի կ'արտադրէին՝ այսպիսի գրական շարժման ներքեւ։ Զի ժ. գարու գրականութիւնը պղպեղաստիկ շղթայով մը՝ իրրեւ հատատուն կամուրջով՝ կապուած և խարխուած էր ԺԲ. գարու գրականութեան հետ. հետեւաբար՝ օրեւ է տարբերութիւն և գարգացումն ալ ըստ այնմ աւելի հեշտ։ Նիւթս չի ներեր ամէն բան յիշատակել. սակայն կրնամ ըսել, թէ յիշատակուած և անյիշատակ թողած գրաւոր գործերն առ հասարակ՝ նոր կեանք, նոր լեզու և գիտութիւն տալու և յարատեւելու ամէնատուած էին ըստ ինքեան, իրենց լեզուական թերութիւններով հանդերձ։

Սակայն ոչ. այդ յառաջախաղաց շրջանին եւս պիտի յաջորդէր ազգային և գրական անկման մի ուրիշ շրջան. որը մոռցնել պիտի տար ոչ միայն Ներսիսեանց, այլ և Թարգմանչաց գործերը. որ ի դերեւ պիտի Հանէր ամենայն ինչ: Եւ յաջորդեց այն օրէն ի վեր, երբ Հայակիսիկիան եւս կորանցնելով իր բնիկ ազերութիւնը, կ'ենթարկուէր բարբարոսաց վանդալականութեանը, և կը լինէր ցիր և ցան յօտարութեան, ինչպէս յառաջ ալ իր մայր Հայրենիքը: Վերստաւաներորդ դարուն վերջերը, և կամ ԺԷ.ին սկիզբը, երբ Մխիթար Սերաստացին ծագելով Արեւելքէն՝ երեւեցաւ մեր գրական դաշտին վրայ իբրեւ մի նոր արեւելք, բոլորովին տարբեր էին մեր ազգի և աշխարհի պայմանները, քան որ ինչ էին Ե. դարուն սկիզբը և ԺՍ.ին վերջը: Այժմ միայն գիր և գրականութիւն չէ որ կը պակսէին ազգիս, այլ ազգն ինքնին՝ որ ստրկացած էր և կորուսած իր ընդունակութիւնները՝ դէպ ի գիտութիւններն և գրականութիւնը: Կրկին շրջաններուն աշխատասիրուած գրքեր և մագաղաթներ կային, այո, բայց մեռած և թաղուած կը մնային վանքերու եւ եկեղեցեաց փոշիներու տակ. վասն զի կարդալ և գրել գիտցող չկար: Ազգուստի և թափառական լինելու անողոք հարկը մէկ կողմէն, միւս կողմէն ալ հարստահարութիւնք ու թանձր տգիտութիւնը կապուած էին հայութեան գանգուածէն — ի հարկէ յարգելի բացառութիւններով — կամք, կարողութիւն և յոյս՝ դէպ ի լուսաւորութիւն: Երկայն դարուց դժբաղդ հարուածոց տակ կորուսած էր նա իր բարոյական բարեմասնութեանց հետ՝ նաեւ մտաւորականը: Մէկ խօսքով՝ նիւթապէս միայն կ'ապրէր նա՝ յուշակորոյս մարդու մը պէս: Անդին մոռացութեան կափարչի ներքեւ փակուած կը մնային կըրկին ժամանակաց գրականութիւնքը՝ հայի անցեալով ի միասին: Հետեւաբար՝ ինչպէս հայ լեզուն, այսպէս և վարպետուած ու շինծուած ժողովուրդը կատարեալ քաոս մի կը ներկայացնէր: Իրաւ է, որ Մխիթարէն իսկ յառաջ եղան ազնիւ արտեր, որոնք արթնցած Գաւառէմբէրգեան ջահի լուսէն՝ փորձ փորձեցին գրութիւններով և տպագրութիւններով մտաւորական կենաց կաթիլներ ներհոսել անոր երակացը մէջ. բայց որովհետեւ առանց կատարեալ ձեռնհասութեան, առանց հաւաքական ուժի և բաւական միջոցներու. միով բանիւ՝ որովհետեւ առանց մեթոտի և անոր պէտքերը ճանչնալով էին, անոր համար ալ կը մնային իբրեւ ծովի մէջ ընկղմած կաթիլներ, առանց կարենալու զգալի կերպով ներազդել և յուշարերել զանի:

Իսկ Մխիթար այս կիսամեռ մարմնոյն հանդէպ է ահա որ կանգնած կը կենար մտայոյզ, իբրեւ նոր ամն Թեզբացի: Այդ վիճակին, կամ լաւ եւս ընդարմացած հայութեան ամբողջ գանգուածին է՝ որ կ'ուզէր մտաւորական կենդանութիւն տալ, գիտութիւն ներշնչել, անդամալուծութեան և անկման մահճէն վեր կանգնեցնել, յառաջեցընել զինքը քաղաքակրթութեան ճանապարհին վրայ, և ընել զինքը ոչ միայն ազգ — որպէս էր երբեմն — այլ և գրականութեամբ և կենցաղօգուտ գիտութեամբ առաջին ազգ, Ասիոյ խաժամուժ ազգերուն մէջ:

Այլ այսպիսի ամենամեծ գործի մը յաջողութեան համար՝ ոչ թարգմանչաց պէս Վռամշապհոյ թագաւորական բազուկն ու գանձը ունէր նա իրեն աստարող, և ոչ այլ Շնորհալւոյ պէս՝ կաթողիկոսական բարձրագոյն հեղինակութիւնը. այլ իրեն պէս մի քանի աղքատին աշակերտներ, որոնց դէմ էին ամայն բաց ի ենիչէրիական բռնակալութեանց, նոյն իսկ մոլեռնախանձ տգիտութիւնը և ժամանակին չար ունակութիւնները. որոնք ամայն բոլորովին մահարեր չինելէն զատ՝ հիւանդ բազկերակին կեանդանութեան զարկին եւս առհասարակ էին:

ԳԼՈՒԽ Բ

Մխիթարեան գրական գործունէութեան սկզբնաւորութիւնն ու դժուարին պարագաները. — Հայկական տպարաններու զարմանալի փորձերն ու անբաւականութիւնը. — Վենետկեան միջավայրն ու անոր հակայագործ տպագրութիւններու ազդեցութիւնը. — Մխիթարեան տպագրութեան նախափորձերն ու գրական յաղաջխակաղութեան եղանակը՝ հայութեան յայնժամու պէտքերու և պայմանաց համաձայն. — Քերականական, բառագրական, աստուածաշնչական, պատմական, աշխարհագրական, և այլն, հնականերն և անոնց պատճառած կենդանութիւնն ու զարմանքը. — Հ. Մխ. Զամչեանի և անոր ձեռքով կատարուած ազգային համերաշխութեան դարագլուխը. — Գրական վերածնութեան նոր շարժումն, և զանի պարարող ամենակերպ հրատարակութիւնքը. — Ինճիճեանի գրաւոր գործունէութիւնն և յոյն Քաբիմանաքի եղբարց թղթակցութիւնը. — «Եղանակ» ու «Դիտակ Բիւզանդեացներու» գործած ահագին ազդեցութիւնը. — «Արշարունեաց» ընկերութիւնն և իր գործունէութեան հոգին՝ Ինճիճեան. — Ազգային քաղաքական, կրթական և կենցաղօգուտ գիտութեանց մեծ շարժումը. — Վաթինամեայ «Բազմավէպ» հանդիսարանի բնորոշ գաղափարքն ու անոր ընձեռած մտաւորական պաշարը. — Հին և նոր աշխարհի վիպական ու քերթողական հրաշակերտներու հայացումը և անոնց՝ մեր ազգին պատճառած ընդհանուր ոգեւորութիւնը։

ԱՅԿԱԿԱՆ մտածութիւնը՝ որ ի վաղուց կենդանի խօսքէն անցած էր գրի, պէտք էր որ մնռնալ գրէն և մատաղաթներէն ետս անցնէր մի որիշ ամենազօրեղ միջնորդի՝ Տպագրութեան։ Այս գիտես՝ որ պատմութեան մէջ ամենէն մեծագոյնն է և հարկաւորը, եղած էր արդէն երկու դար յառաջ Եւրոպայի համար մայր յեղափոխութեան. եղած էր մանաւանդ մարդկութիւնը բռնադակապէս վերանորոգող արտայայտութեան միակ և դիւրագոյն եղանակը։ Սա էր նոյն ինքն մարդկային միտքը, որ ժամանակին հետ հոլովելով՝ կը թողլր մտածութեան նախկին կերպը, և ուրիշ մը կը գտնոյր։ Միով բանիւ՝ սա ինքն էր գոգցես ամբողջական և վերջնական փոփոխումը այն խորհրդական ոճի մէջին, որ Աղամէն ի վեր՝ կը ներկայացնէր մարդկային իմացականութիւնը։ Տպագրութեան ձեւի ներքեւն է՝ որ մտածութիւնը կը դառնար — միանգամ ընդ միշտ — անկորստական, թռչող և անբռնաբարելի։ Տպագրութենէն յառաջ՝ ինքզինքը պաշտպանելու և մէկ դարէն միւսին հաղորդելու համար ստիպուած էր նա մատաղաթի կոյտերուն և կրանիտեայ ժայռերու յետին ամրանալ։ Իսկ յետ այնորիկ — այն է՝ Գուտէմբերգի չահը վառելէն վերջ — թռչներամի մը պէս թեւատարած կը սկսէր սլանալ ու ափով երկրագնդիս չորս կողմը։ Կը հասնէր չուտով ամէն տեղ, մատչելի կը դառնայր ամենուն, և կ'ոգեւորէր զանոնք, որոնք իրեն առաջ ձեւի խորհրդանշանները կարդալ գիտէին։ Արդ, մտքոյ և մտածութեան այդ նորատաքանչ չարժմամբ է՝ որ կը փչրուէին կը խորտակուէին հին դարուց ճնշող և կաշկանդող չղթաները. և մեռած ու միակերպ աւանդականութիւնը, որ իրր կապարեայ կափարիչ՝ կը ծանրանար մարդկային մտաց և սրտի վրայ, կը վերցուէր։ Կը չարժէր գիտութեան և արուեստից մեռեալ լիճն ու կը փոխուէր մշտաչարժ ովկիանոսի, որուն վրայ յաղթական կերպով ընթանալով մարդկային գիտութիւնն — իրրեւ հսկայն Պոսիդոն — կը բանար ԺԱ. — ԺԲ. դարուց լուսաւոր դրօշը։

Այս միջոցին է ահա, որ կը գիմէին վերանորոգիչն Մխիթար և իրենները. սոսր մէջն է որ կը կեդրոնացնէին իրենց գործունէութեան ուժերը։ Եւ այդ ճիգն ու գործունէութիւնը պէտք էին այնքան աւելի զօրաւոր և արդիւնական ըլլալ, որքան իրենց

նախորդներուն անգօր և դրեթէ անպատուական եղած էին[1]։ Մխիթար և իրենները՝ որք նախորդներէն աւելի մեր դասական մատագրեալ մասնէն վէմ թարթախելով, համեմատութեամբ լաւ հմուտներն առացեր էին հայերէն լեզուին և պրակտոսութեան. այլ կեանքերնին ժողովրդեան մէջ անցուցած լինելով՝ խորապէս զգացեր էին անոր հոգեւոր և մտաւոր ցաւերը և պահանջները լաւ համկըցած, գործնական կերպով եւս աւելի ուժեղին չհասկրնելով տպագրութեան արուեստը։ Մէկզի թողուցին Միսրարներու և անմիսրարներու վիճարանական նիւթերը, որոնք հակասակութիւններ և կիրքեր միայն կարող էին առաջ երկուառնք։ Թողուցին Յունգայի, Վանանդեցի և Ագուլեցի վարդապետներու և վանասականներու խակ և խամ հրատարակութիւնքը. որոնք աւելի լաւ բաղդին և առանց ընտրութեան եղած էին, և կը միայն անհամեմատ և անմատչելի ժողովրդեան։ Վանանդ թէ տպագրութեան արուեստը ազգիս մէջ մտցնելու համար, մեր դասական լեզուին հետ ազգային հեղինակութիւններն խակ լաւին լեզուի կանոններով տակին ու վրայ բրած էին և կատարեալապէս քաւոս մի գործուցած։ Ասոնի մէկ կողմէն ազգային լեզուն և մանաւանդ ութիւնը այդ քաւոսէն հանելու, և միւս կողմէն ալ ազգը վերակենդանացնելու համար՝ կը սոխպատէին Մխիթար և իրենները նոքին սկսիլ, և այդ նոր ուղղութեամբը նախորդներու գործած սերմունքն եւս վերաչինել։

Հինգերրին և միսրանից անցուցած առաջին 17 տարիները՝ պատրաստութիւններ միայն եղան՝ մտաւոր լուսաւորութեան մեծ գործին. վասն զի ոչ միայն հետի կը գրանուէին անոր կեդրոնին, այլ և բոլորովին զուրկ հարկաւոր միջոցներէն։ Հետեւաբար՝ այդ միջոցին ի Կ. Պոլիս և յԱմստերդամ սկսել տուած Մխիթարայ գործերն եւս աննշան բաներ էին։ Սակայն Վենետիկ հաստատուելէն քիչ վերջ հայկական տպագրութեանց ընդհատուած մտմտուքն եւս կը վերսկսէր ճանչել։ Տպարանը, կամ լաւ եւս տպագրութիւնք գեռ իրրեւ խանձարրուպատ երեխայ՝ Ամստերդամի հայրենիքի առհասներէն զուրս կը վազէր երագուն քայլերով. և առաջին երկիրը՝ որ կը փութար հիւրընկալել զինքը, էր գեղանին Խոտին. ուր այդ ժամանակ արդէն սկսած էր Վերածնութեան գարունը՝ անդադար գործունէութեամբ։ Սակայն խոտինան գաղափան ոսոանները ոչ միայն այնպէս հոչակաւոր տպագրական գործերով, ինչպէս հարուստ և լուսաւոր Վենետիկը։ Եթէ Գերմանիա առաջին պատիւն ունեցաւ ծնանիլ մարդկութեան համար նոր ակնդարձը բերող այդ արուեստը, Վենետիկ համար ալ կարելի է ըսել իրաւամբ, թէ առաջինը եղած ըլլայ գանիկայ — գործնական կերպով — ներթացնելու, չքեղապարզելու և վերջին ծայր կատարելութեան հասցնելուն մէջ։ Բան իսկ այնքան գործնական չէ 1469 թուականին տպագրութեան մտնելն ի Վենետիկ, որքան անոր հակայաքայլ գործունէութիւնը։ Ընչիսկ թուականէն 25–30 տարի վերջ, այդ քաղաքին մէջ կը բանէին 150ի մօտ տպարաններ. որոնց տպագրած գրանց թիւը —նոյնքան տարիներու մէջ—կը հասնէր երկու միլիոնի։ Բայց մենք նպատակ չունինք կանգ առնուլ այս տեղ թուելու և որակելու Վենետիկի տպարաններու դասական և հակայական հրատարակութիւններու ընտրութիւնը, կարեւորութիւնն ու գեղարուեստական կողմերը. այլ այսչափ կ'ըսենք, որ այդ քաղաքը միայն Իտալիոյ և Արեւմուտքի համար չէ՝ որ մտաւորական անուն և լոյս կը տարածէր, այլ և՛ Հետաւոր Արեւելքին, որուն հետ սերտիւ կապուած էր, իր սիրասիրող գործունէութեամբն ու վաճառաշահութեամբը։ Այս տեղ սկսան երթեւեկ և գործացան արեւմտեան, յոյն, հայ, հրեայ և արաբական տպագրութիւնները։ Հոս, Եւրոպայի լուսաւորութեան այս կենդրոնիս

---

1. Ցաւօք է չատերուն՝ որ Մխիթարեաններէն յառաջ եղած էին ոչ միայն եւրոպացի հայագէտ քաղիչներ, այլ նոյն իսկ հայազգի եկեղեցականներ և լուսամիտ վաճառականներ. որոնք ոչ միայն Եւրոպիոյ, այլ և Արեւելքի հայ կեդրոնատեղեաց մէջ տպագրական հայ մամուլներ հաստատեցին և վաստակեցան, նոյն իսկ իրենց կարողութիւնէն վեր։ Օրինակի համար, յամին 1513 ի Վենետիկ, յամին 1616 ի Լէմբէրգ, 1640ին Ջուղայի և Լիվոռնոյի մէջ. 1660 թուականին Ամստերդամ, 1672ին ի Մարսիլիա, և յամին 1677 ի Կ. Պոլիս։

Ամբողջ երկու հարիւր չորս տարուայ մէջ, այսինքն է՝ 1513–1717 թուականը — այս տպարաններու մէջ տպուած են 65 հայերէն գրուածներ, որոնց 18ը նոյնատեսակ կամ կրկնուած տպագրութիւններ են։ Այդ հրատարակութիւններն ամփոփ աչքի առաջ ունենալու համար՝ տես տանք ընթերցողաց Հ. Գ. Զարբհանալեանի Մատենագիտութիւնը։

մէջն է, որ 1719ին կը սկսէր Մխիթարեան տպագրութիւնն և գպրութիւնքը, որուն սկիզբը որքան անշուք էր և ապքաոին, մէջն և վերջն նոյնքան հարուստ աշխատասիրուած էր լինել և փառաւոր։

[Ինչպէս Գուստէմբէրգ ընդհանուր աշխարհի, և Վինեաիկը՝ Իտալիոյ, այսպէս և Մխիթարայ տունը ասոի համօրէն հայութեան պիտի լինէր լուսատու։ Յերաւի, բաղդատելով մէկ կողմէն Ս. Ղազար կղզեկին մէջ տառանձնացած բուռ մը անուսուցած այդ Հայերու գործունէութիւնը՝ ծովուց և միջերկրական կղզեաց իշխեցող վինեակեան Հասարակապետութեան աշագին զօրութեան և հարստութեան հետ, եւ միւս կողմէն ալ 1719էն մինչեւ այսօր Մխթ. Ուխտին ի լոյս ընծայած բազմակողմեան ապագրութիւնները և տպարանական գործացութիւնները՝ ասոյս հետ, կարելի է գալ այն եզրակացութեան, թէ հայն իր արտադրութիւններով — ի հարկէ համեմատութեամբ — Վինեաիկէն ոչ ինչ ընդհատ գործունեայ եղած է։ Եւ թէ ինչպէս գիտցաւ երբեմն դչխոյն Ադրիականի՝ Հասարակապետութեան առիւծի զօրութեամբը ձեռք բերել Հայակիլիկիոյ հարստութիւնն և շահավաճառը, այսպէս գիտցաւ և Մխիթարայ տունը իր բազմալեզուեան տպարանի գործունէութեամբը — Վինեաիոյ մէջ — ձեռք բերել անոր տպագրական հարստութիւններն և հինօրեայ բացառիկ դիրքը։ Սակայն այս մասին՝ ուրիշ տեղ կը խօսինք. այժմ անանենք Սերաստացւոյ և իր հաստատութեան տպագրական յառաջխաղացութեան եզանակը՝ դէպ ի այս գերակշիռ կէտը։

Մխիթարեան գրական գործունէութեան և տպագրութեան առաջին շրջանը բաղդատելով միջին և վերջին — այն է՝ ԺԹ. դարու գրականութեան հետ — այնպէս կը տեսնուի այն՝ ինչպէս նորաստեղծ մանկութիւնը՝ առնապարտացեալ և համայնագէտ մատենագրի մը քով։ Սակայն պէտք է գիտնալ՝ որ տպագրական այդ մանկական վիճակին ուրիշ բան չէր, բայց եթէ այն մանուկ ժողովուրդը, զոր մեծ վարդապետները յանձն առին կրթել և ուսուցանել։ Ով լաւ ուսումնասիրած է մեր ազգի այդ կատարեալ ժամանակը, պէտք է որ համոզուի, թէ հայ ժողովուրդն երկու ընդհանուր և առնաձ պիտոյքներ ունէր. այսինքն են՝ ծարաւ հոգեւորի և գրագիտութեան։ Մխիթար և իր ընկերքը — Թէպետեւ 1695 Թուականէն ի վեր — մեր մշակներուն պէս կրկին և կրկին երթեւեկութեամբ շրջած էին ամէն տեղ և սերմանած էին — հայութեան անդաստաններուն — աւետարանական վարդապետութեան և բարոյականի հոգեկեցոյց սերմերը. սակայն զինադադ ժամանակի անդադար կրկնուող հարուածներն ու հարատեւ հարութիւնք ամենայն ինչ սերած և ցամաքեցուցած էին գրեթէ։ Այնպէս՝ որ ԺԹ. դարու առաջին քառորդին իսկ ապրող հայ ժողովուրդն այնքան պէտք կը զգար հոգեւոր սննդեան և մխիթարութեան, ինչպէս բարկ արեգակէն և խորշակէն թառամած ու թորշոմած նորատունկերը պէտք ունին զովարար անձրեւոց։ Կենդանի խօսքը միայն բաւական չէր զալարացնելու երաչտացեալ սրտերն և ոգիները, թող թէ պըտղաւէտ գործելու զանոնք. վասն զի անոնց տարաժամ և ցանցառ երեւումն իսկ ճիշտ այն արդիւնքը կ'ունենար յաճախ պապակեալ հոգիներուն վրայ, ինչ արդիւնք որ կ'ունենան մի քանի կաթիլներ՝ ցամաքեալ տունկերուն վրայ. այսինքն է՝ ծարաւն աւելացնելու։ Այո՛, ժողովրդեան հոգեառնչ ծարաւն անով աւելի կը սաստկանար, զի կամ տպագրուած հոգեւոր գրեանք չունէին, և կամ եղածները կարդալու կարողութիւն։

Այդ, այս երկու դառն ճշմարտութիւններս այնքան սաստիկ շեշտուած են ժամանակակիցներու արտաճմլիկ ապացոյցներովն և հաստատուած հարիւրաւոր պատմական փաստերով, որ վերստին ընդարձակ փաստեր մէջ բերելու այլ եւս պէտք չկայ։ Ուստի Մխիթար և ընկերքն իսկ քալ տեղեակ լինելով այս բանիս, չի հրապուրուեցան անդէն և անդ Վինեակեան տպարաններու մեծդի և փառապանծ տպագրութիւններու շլացնող փայլէն, և ոչ այլ նմանատիպ բարձր հրատարակութեանց ձեռք զարնել փորձեցին — նախորդ հայ տպագրապետներու պէս։ Այլ տպել և տարածել նախ մեծ քանակութեամբ՝ մէկ կողմէն կարդալ և գրել սովրեցնելու համար դիւրատար և դիւրիմաց Քրիստոնէականներ, և միւս կողմէն այլ հոգեշահ և հեշտընկալ գրքեր. որոնց այնքան պէտք ունէին և կը սպասէին, ոչ միայն չուարած հօտը, այլ և հովիւները, այք անոնցմէ խիստ քիչ կը տարբերէին, և անբաւական էին ուսուցանելու և սթափելու զանոնք։

Մխիթարայ հին աշակերտներէն բանիերուն մէկը [1], նախ — յամին 1719 տպագրեալ գրեանքն յիշելէն վերջ — կը նկարագրէ նաեւ տպիս, ինչպէս և անոր անուս կրներակատար այդ խղճալի վիճակին ու ուսման պէտքը, ըսելով: « Եւ ոդորմութեան գործոց կարծեաք՝ զոհասար գահանայս յառաջ ածին, յորս և բազումք յաշխարհական իմաստակաց յաւելեալ՝ զպարզամիտ ժողովուրդն պէսպէս խելագար վարդապետութեամբ յիմարեցուցեալ խանգարեցին, և գլուխս նոցա և գրաւս բազում անկարգութեամբ ապականեցին.... Ոմանք ի նոցանէ ի տուն, և ոմանք ի յայլ անպատշաճ տեղիս ձեռնադրեալ լինէին: Եւ ոչ միայն ի գիտութեանց իմաստից զուրկք էին այնպիսիքն, այլ և գժամակարգութեան պաշտօնան բան կարգի կատարել ոչ գիտէին. և այնպէս չէին կարողք յեկեղեցիան երանել և քարոզել. և ամէն իրի ի անաչրջիկ լինէին՝ ամբաստան լինէին: Ոմանք յայնցանէ առ ի մելամաղձութեան ատակութենէ յապուշութիւն անկան: Ոմանք ուրացողք եղեն, և կէսք յայլ տղոյն խայտառակ կերպ կործանեցան: Եւ ոմանք ի յանաւոյգ եպիսկոպոսէ զձեռնադրութիւն ընկալեալ, և յետ այնորիկ ի յայլ եկեալ, և ի կարգին գործածութենէ արգելեալ՝ նշաւակք եղեն: « Զորոց ամենեցուն բարւոք է լռել՝ քան խօսել »: Ահա այսպիսեաց համար է, որ Մխիթար և իրենները կը տապանային կը տագնապէին: Զոմանք հոգեպէս և մտաւորապէս լուսաւորելու համար է, որ իրենց տպրատուի կարեւոր միջոցները դեռ չտապահովացուցած, մէկէն ձեռք կը գարնէին կրկին ուսումնական տպագրութեանց. այսինքն է՝ կարգալ գրել գիտցողներուն կու տային հոգեւոր, աստուածաբանական և եկեղեցական գիրքեր. իսկ հայերէն լեզու և գիր չիմացողներուն ալ պատրաստել շուտ քերականական և լեզուական դասագրքեր:

Յերեսի, թերթերով վինչեւ հիմա եղած Մխիթարեան հրատարակութեանց վերջին և առաւար Յուցակը, մենք կը տեսնենք ակներեւ, որ Վենետիկ օտար տպարաններէն եղած Մխիթարեան բոլոր նախընծայ գործերն ուղղուած են այս կրկին նպատակին: 1715–1719 թուականներուն կրկին տպագրութիւններ դուրս կու գային Ալեսոի Բորտոլի տպագրատանէն՝ Մեծին Ալբերտի Աստուածաբանութեան: Եւ այդ տպագրութիւնքը ահագին առաւելութիւն ունէին առաջինէն ոչ միայն այն լեզուական ուղղագրութեամբը, զոր մեծ Ներսէսեանցին կատարած էր անոր վրայ, այլ հայերէն հին թարգմանութիւնը լատին բնագրին հետ խնամքով բաղդատելն և ճշդելուն, և որ մեծն է՝ գրքին վերջը Մխիթարայ ձեռքով եղած այն նշանակութեան համար, ուր կը մեկնուին Ալբերտի բոլոր գժուարիմաց տեղերը, համառօտին Թոմմաս Ագուինացւոյն և ուրիշ աշխարհահռչակ վարդապետաց: Պարտեզ հոգեւոր, տպ. 1719. — Խոհեմ քրիստոնեական, տպ. 1719 մեծեղոյն տպարանաւ: Գիրք Աստիճանութեանց, տպ. 1721ին Թէոդոսեանց Դեմեարի տպարանաւ, և Գիրք Մոյսիսեանց, 1722 թուականին: Աղբիւր բարի, տպ. 1722ին, աշխատասիրութիւն Պետրոս Վ. ի Տվինացւոյ. — Գրաքար հոգեւոր, տպ. 1724ին թարգմանեալ Մխիթարայ և Հ. Յովհաննէսի աշխատասիրութեամբ. — Խրատ զղջման, տպ. 1727 ի տպարանի Բառոլի, թարգմանութեամբ Առհուպեանի: Քրիստոնեական աշխարհաբառ Մխիթարայ, տպ. 1727ին նոյն տպարանին մէջ, Տաղարանաւ: Յարագոյց ձրշմարիտ ապաշխարութեան, տպ. նախ 1719ին Պետրոս Վ. թարգմանութեամբ, ապա 1731ին Մխիթարայ սրբագրութեանց և յարմարագրութեանց համաձայն, — Հանգիստ ձեռակ կենաց գիրք, տպ. նախ 1721ին Պօլիս, ապա 1731ին ի Վենետիկ, առ Անտոնի Բառոլի:

Իսկ 1726 թուականին Մխիթարայ հրատարակելիք Քերականութեանց և անոնց նպատակին մասին՝ այսպէս կը գրէ Հ. Մատթէոս Ենգոկիացին. « Յամի յայսմիկ Աբբայհայր մեր՝ զաշխարհսքարս Քերականութիւն ինչ հայկական բարբառոյս մերոյ, զոր արար, ի հոգարարացւոց բարբառն յեղեալ, և զգուշմար բառից բարբառոյն մերոյ՝ և բանից նոցա թարգմանաբար հանդէպ միմեանց կարգեալ՝ ի տպագրութիւն եհան, յաղագս Գաղատացւոց, որք ի կանուխ ժամանակաց գիտօսէն ի հայ բարբառ ի բաց թողեալ մոռացեալ էին. և միայն ի հոգարարացւոց բարբառն խօսէին. որպէս զի վար-

---

1. Հ. Մատթէոս Եդոկիացի՝ ժամանակագիր վանացս:

ժուքեամբ մանկանց նոցա ի գիրս յայս՝ վերատին նորոգեցի և հատատեցի առ նոսա ի հայ բարբառ խօսելն։ Ընդ որոյ այսմիկ որոյ գՔրիստոնէական վարդապետութիւն ինչ՝ ի սամկական բարբառ, յորոգս աշխարհականաց. և զայն եւս ևս տպագրել. որպէս զի յարեւելս՝ ի յԱնկլիբիա, և յայլ անգիս առաքեալ ուրախացի ի յուսումն մանկանց սգոյս մերոյ՝ ի փառս Աստուծոյ »։

Մխիթարայ աշխարհաբար այդ Քերականութիւնը, որ լոյս տեսաւ 1727 թուականին՝ Գուռեմ Քերականութեան աշխարհաբառ լեզուին Հայոց սխոլասով, միակն էր իր — գրական ոճովը — հայերէն աշխարհիկ բարբառը ուսուցանելու ճիշտ այնպէս՝ ինչպէս որ էր կենդանի և խօսուն՝ փոքր Ասիոյ հայ ժողովրդոց բերանը։ Զնայելով՝ որ բառերու հոլովմունքն և բայերու խոնարհումը այն կանոնաւորութիւնը և բաժանումը չունին, որոնք յատուկ են արդի Քերականութեանց, և չէին կարող ունենալ, քանի որ ժողովրդեան բարբառին մէջ իսկ այդպէս էր. սակայն և այնպէս կարելի է կոչել զայն Հայոց Օլէնդօրֆը։ Վասն զի հոս մի քանի հոլովմունք և բայեր դնելէն վերջ, ապա մէջ ընդ մէջ հայ և տաճիկ բառեր կարգելով, անոնցմէ կրկին լեզուով նախադասութիւններ կը կազմէ — երկայն օրինակներով — դիւրութեամբ խօսելու և չարտգրելու համար։ Եւ այս բանս ուսանողին դիւրացնելու համար՝ Քերականութեան վերջը բառերու և բայերու բառարան մի եւս դրած է, 58 էջերէ բաղկացած։ Գուռեմ Քերականութեան՝ անոր համար կոչած է Մխիթար, վասն զի անոր միակ նպատակն էր — ինչպէս ինքն յայտարարած է Յառաջաբանին մէջ — Թրքախօսներուն՝ ժամանակակից հայերէն կենդանի բարբառը միայն կարդալ, գրել և խօսիլ սովրեցնել։ Չպարտաւոր օրինակներ ատրաժուեցան այդ գրքուկէն փոքր Ասիոյ հայ ազգարնակութեանց մէջ. որոնք ի հարկէ մեծ ընդունելութիւն և արդիւնք ունեցան — և պէտք է որ ունենային — անկէց իսկ յայտնի է, զի Մխիթարայ համբաւն իսկ մեծապէս հռչակուած էր այդ գաւառներուն մէջ. որոնցմէ բազմաթիւ խնդրուածներ նաև կանխաւ ուղղուած էին այդ բանի համար առ Մխիթար։

Մխիթար, որ միշտ ոճով յառաջ կը խոպար իր ձեռնարկած գործի մէջ. և փոքրէն դէպ ի մեծն ընթանալ սովոր էր, տեսնելով նախընթաց հրատարակութեանց զարմանալի արգասիքը, 1730ին կը հրատարակէր գրաբար լեզուի ընդարձակ Քերականութիւնը. որուն վրայ երկայն տարիներ աշխատած էր, թարթմռելով գաւառական մատենագրաց իրեն ծանօթ լեզուական բոլերուն մէջ։ Այս Քերականութիւնը — որ այսօր կորուսած է իր նշանակութիւնը — այն ժամանակ միակն էր իր տեսակին մէջ. և որ իրմէ վերջ եկողներուն նոյնպիսի ծառայէր իրրեւ հիմնաքար։ Նա սահմանուած էր, կարծէք, լինել առաջնորդ՝ ոչ միայն հաննելու իր ժամանակակիցները՝ նախորդ քերականագէտներու տնել բուղէն, այլ և ուղղելու անոնց ընթացքը դէպ ի գրաբարի բարձր սահմանները։ Մէկ խօսքով՝ պիտի ծառայէր — իրրեւ նախկին բանալի մը — գաւառական լեզուի գանձերը բանալու ամենուն առջեւ։ Վասն զի անով կու տար — խորհրդանշական ոճով մատանոյ բանի և ձեռաւոր չարտգրութեան վերաբերեալ բոլոր վարդապետութիւնքն և կանոնները, զոր աշխարհաբար Քերականութեան «բան առ ընթերցող» նախաշաւղին մէջ արդէն խոստացած էր կատարել առաձինն։ Այդ, եթէ ի նկատի առնուինք հոլովմանց և խոնարհութեանց վրայ գնացող բառերու և բայերու լուծման օրինակաց ճոխութիւնը, որոնք իսկապես կատարեալ գաղափար մը կուտան գրաբարի և աշխարհաբարի կազմութեան բացորոշ կանոններն ու գործնական օրինակները, այլոլք հանդերձ, կարելի է կոչել զայն նաեւ իր ժամանակի ձարտասանութիւնը։ Այս Քերականութիւնս, որ տպագրութեան մաքրութեամբ և գեղեցկութեամբն ալ կը գերազանցէր Սիմոն Ջուղայեցոյ քերականութիւնը, մինչեւ 1779 թուականը ընդհանուր կերպով ի գործածութեան էր. զի յամին 1770 երկրորդ տպագրութիւն մ՚ալ եղած է, ինչպէս աշխարհաբար քերականութիւնն ալ 1771 ին վերատին կը տպագրուէր։ Վերջապէս՝ յայտ իսկ ապին նախկին պիտոյքը հոգացուած էր։

Յամին 1732 Ոսկանի Աստուածաշունչը գրեթէ պատռուած էր, փոքրաթիւ օրինակներն իսկ՝ որոնք կը գտնուէին տպիս անդին, հարուստները իրարու ձեռքէն կը յափշտակէին. իսկ աղքատ ժողովուրդը գրկուած կը մնային անկէց։ Սուրբ Գրքի տալը կը տիրէր շատ կողմեր, այնու մանաւանդ՝ որ Պօղոս պատգրութիւնը մէջի հոգ և այլանդակ սխալներուն համար կորուսած էր շատով իր վարկը հաստատելոց մէջ, քիչերը կը վտահէին իրենց հոգւոյ փրկին և ծարաւը անով լեցնել։ Այս պէտը

դարմանելու և վիանդամոյն Ազգին տպագրութեան թերի կողմերը ուղիղ համար, ձեռք կը գարնէին Մխիթար և աշակերտք իւր այն յաւէտ յիշատակի արժանի աշխատութիւնքը, որ հատարակօրէն կոչուած է Մխիթար Աբրահօր Աստուածաշունչ: Աստ վրայ եղած աշխատութեան համաձայն՝ յարդն ու վարկը եւս մեծ եղաւ. այսինքն է բազդատելով Աստուածաշունչի հայկական թարգմանութիւնը՝ տպագրուած եօթնկերտեան Աստուածաշունչին հետ, որ կը ներկայացնէր երրայական բնագիրը՝ Սամարացի, Աղբի, Բազդեացի, Արաբացի, Յոյն և Լատին թարգմանութեանց [1] հետ՝ բառ առ բառ և կէտ առ կէտ: Զեռնհաս պետութեան և տպագրական արուեստի այս հրաշակիքը [2], որուն համար ոչ աշխատութեան և ոչ մեծամեծ ծախքերու խնայուած էր, և որ սկսած 1733 Յունուարին՝ 1735ին լոյս կը տեսնէր, իր ներքաշող փորագրութիւններով, մինչատեսնան ձեւուր տառերով, գեղեցիկ լուսանցազարդերով, գլխատառքը, ամենը թղթին և վեհ և վայելուչ ձեւովը վերնակետն մինչեւ այն առեն եղած հայ տպագրութեանց գլուխ գործոցը կը կազմէր, ինչպէս յամին 1695 Յունիսի և Զուլիս Վենետիկեցւոց հրատարակած մեծ Հանճարած Աշխարհացոյցն ալ եղած էր գլուխ գործոց Ամստերդամի հայ տպագրութեան: Սա՝ Մխիթարեան տպագրութեան առաջին շրջանն էր, որ բաղմօք կը գերազանցէր Ամստերդամի վերջին շրջանն եւս: Աստ ասելի բազդատուր էր Մխիթարայ առնը՝ քան զնաւրիճանեանցը, զի կենաց, մանաւանդ թէ Աստուծոյ բանն էր, որ մարմնացուցած մարդկային ամենակատարեալ արուեստով՝ կը սփռէր ի սիրտս Հայութեան՝ կեանք և հետացումն նեղչքնչելու ամենուն: Ամենքը հետաքրքրութեամբ կը խնդրէին զայն և անյապ սենեակ կը կարդային՝ իրրեւ Բարգմանչաց վաճառ լեզուի և գրչի հարազատ ներկայացուցիչ: Այսօր իսկ այն ժամանակի բնաւորիչները ինած տպագրոց առներուն մէջ գեռ կը պահուին փառակալ օրինակներ, իրրեւ պապենական ժառանգութիւն մի եւ գանձ անկորուստ: Ակնյ իսկ կարելի է գուշակել, թէ որչափ մեծ եղած է ժամանակաւ տպգին վրայ գործած անոր հոգեկան և գրականական ազդեցութիւնը: Հարիւր չիտուն և եօթ տարի վերջ, այն է 1892ին, Պատուական տպարանին մէջ եւս տպգային բանակերոց ոմանց աշխատակիցներուն նոր տպագրութիւն մ'եղաւ (Ընդամուռնին). սակայն այդ հրատարակութիւնն իր գծած ձեւովն և անկատար ու անճաշակ տպագրութեամբը ոչ միայն անվայելուչ էր այն նուիրական Գրքին, այլ և տպագրական արուեստի կողմէն՝ գոնաց մ'եր Վենետիկի յիշեալ հանդուրժ տպագրութեան քով: Նոյն իսկ մինչեւ հիմա լոյս տեսնող հայերէն տպագրութիւններէն ոչ մին չափութեան կողմէն կրցաւ հասնիլ անոր, թող թէ գերազանցել: — Միաբանութեան և հայ տպգին պատիւ բերող այդ բազմազանձ հրատարակութիւնն է՝ զոր ընդունելով և գնահատելով նոյն իսկ իմաստուն և մեծ քահանայապետ՝ Բենեդիկտոս ԺԴ., 22 Սեպտ 1742 գրած կոնդակովը իր բարձրագոյն հաճութեան հետ՝ նաեւ յատուկ շնորհակալութիւնը կը յայտնէր Հիմնադրին, գրուատելով միանգամայն Աբեղբին գիտութիւն և լոյս տարածող միաբանից գործունէութիւնը:

Յամին 1736 ուրիշ երկու հոգեշահ գրուածներ եւս լոյս կը տեսնէին ի Վենետիկ. այսինքն են «Մեկնութիւն Մատթէի» և «Ժողովոյ», և կը սիրուէին յԱրեւելս: Երկուքն իսկ Մխիթարայ հոգւոյն և մտքի համով և հիւթաւէտ արուագրութիւններ ըլլալով, հարկ էր՝ որ անոր քաղցրախօսիկ և պարզ լեզուովը խօսէին և ազդէին ոչ միայն եկեղեցականաց, այլ և աշխարհականաց սրտերուն խորը՝ Աւետարանի ամենամաքուր և հոգեկեցոյց ճշմարտութիւնները և խրատները, զորս ինքը երկայն տարիներով և աշխատութեամբ ամբարեր էր կամ որճացեր իր սրտին մէջ, ճոխանալով յատկապէս այն կէտերուն և խնդիրներու վրայ, որոնք մեր ազգին մէջ ոչ ու ձախ կերպով խօսուած և խեղաթիւրուած էին ամենանշան անձինքներէ: Յամին 1741 կը հրատարակուէին խորհրդատետրը մեծագիրը, որով կը սրբագրուէին 1642ին ի Հռոմ և յամին 1685 ի Վենետիկ եղած տպագրութեանց սխալներն և անհարթութիւնքը,

---

1. Ըստ յատիներէնին, զոր բազդ կ'ունենար անակնկալ կերպով ձեռք բերել, 6 հատորի մէջ ամփոփուած և ինքը 12 ոսկեայ կը վերածէր:

2. Որուն կատարեալ նկարագիրը ինքն իսկ մեծանուն հրատարակիչն ըրած է իւր Յիշատակարանին մէջ անկեղծ լեզուով. ուստի և կրկնելն աւելորդ կը համարինք:

որոնց առէպ՝ իրրեւ ձանապարհին վրայ գտրուած քարերու՝ կը գարնուէին պատառ-պատիչք. — Ձ'ասաք Համակերպութեան Պատրիկուեցի, որ թարգմանուած էր Տիպ-սեցի Պետրոս վարդապետէն, և նորա խնդրանօքը արտագրուած էր Մխիթարայ գրչով և մեծ աշխատութեամբ. — Բուբատոան աղօթիցը՝ որ լատիներէնէ թարգմանուած էր Սա. Լեհացիէն և երեք անգամ տպագրուած: Դ. տպագրութիւնն էր այս՝ որ կ'ըլլուէր Ժողովրդական գրքիս, բարւոքելով և արտաքսելով այն տպագրական վրի-պակները, որոնք մուտ գտած էին խամ գրաչարներու ձեռքով և չարունակուած Ջու-զայեցի ՊՊ. Սահրատի և Գասպարի անձեռնհասութեան պատճառաւ: Ներաժողիւն ի տեսնեալ կեանս, տպ. 1748:

Մենք միտք չունինք Թուարկել մի առ մի բոլոր այն գեղեցիկ և գիւտաւոր ախա-դաններով Թեւածիկ և հոգեշահ գրուածներն ու քերականականներն և բառարանները, որոնք անընդհատ յաջորդութեամբ լոյս տեսան մինչեւ ցայսօր, և տպին հոգեւոր մշակութեան հետ գրականութեան ալ գործօպուին: Այլ այսչափ կ'ըսենք, թէ 84 տարիներու մէջ, այսինքն է 1717էն 1801 Մխիթարայ տան այդ կարգի տպագրած և անախտ գրեանքը ոչ միայն համեմատաբար կը գերազանցեն տպագրին միւս տպարան-ներէն 204 տարիներու մէջ լոյս տեսած գործերը, այլ և տպին վրայ ունեցած ահա-գին տպեցութեամբը Թերեւս գերակշիռ: Եւ այս բանս՝ անով իսկ աւելի հաստատուն կ'ըլլայ, զի Մխիթարեան տպագրական առաքելութեանը միացած էր քարոզչականը, և առ ալ գաւառխրատչականը, կամ լաւ եւս գպրոցը: Այո՛, այդ երեք տպեցիկ գործութեանց չնչովը, այլ մէկ մեծ և լայնատարած արտ կը յորդէին, ժէ. դարու առաջին կիսուն իսկ կը սկսէր արթննալ ազգը իր թմրութենէն, կը բանար իր մտաց աչերը, կ'ուզէր անյապաղապար լափել իրեն հասած գրեանքը: Այդ գրութիւններով է՝ որ կը ճանչնար ոչ միայն իր եղկելի կացութիւնը, այլ և Արեւմուտքի մէջ բացուած իր անչքնաղի լուսոյ ազբիւրը՝ Ս. Գպատ. վասն զի հոն եւս առաւել կ'ընդնըշ-մարէր Հեռուէն ազգային բարեկարգ վիճակութիւն մի եւ ապագան: Վասն զի ա-մէնքը իրենց արտին հետ աչքերն եւս դէպ ի հոն կ'ուղղէին, և ազերասական նամակ-ներով առէպ առէպ կը թախանձէին Մխիթարէն, որ անպակաս ընէ այդ լոյսը, այդ հոգեւոր մնուդը: Եւ իրօք այդ իմացական լուսովը, այդ բարոյական մնուդներով է՝ որ կը մխիթարէին և կը զօրանային նոքա՝ առնել ժամանակեան Թշուառութեանց. ապնցմով է որ վառ կը պահէին առաւելապաշտութիւնը: Քանիներ արդեօք գան հազարեանց երկայն օրերուն անդարձ կերպով կորուսած պիտի լինէին անբարոյական Թշուառութեան և անհաւատութեան գիրկը, եթէ այդ հոգեշունչ մատեանները կար-դացած չունենային: Քանիներ մանաւանդ անկէց վերջ իսկ անոնցմով կարողացան այս կենացս գառնութիւնները քաղցրացընել և քրիստոնէավայել կերպով կենցաղավարիլ: Ժամանակակից հազար և մի բերաններ արդէն վկայած էին այս բանիս. իսկ անոնց անցած ձայնի արձագանգը վերջերս նորէն կը շնչաէր հիացմամբ լուսաւորչական հա-ւատոյութեան գիտնական եկեղեցականաց մին, Մխիթ. Միսթարեանութեան երկհարիւրա-մեայ տօնի համախմբուած ակըմբին մէջ. այսինքն՝ երբ ուրիշներ Մխիթ. Աբեղի գրականութեան այս ինչ կամ այն ծառայութիւնը կը պանծացնէին, սա յանկարծ ոտք ելած՝ յուզուած սրտով կը գրուատէր Միսթարեանն այնքան և այնչափ հո-գեշահ գրքերու հրատարակութեան մասին ունեցած մեծ ու եզական արդիւնքը, որոնց մէջ ինքն եւս այնքան մխիթարութիւն գտած էր:

Այս այսպէս լինելով, գարմանք կ'ազդէ մեզ տպագին արդի գրողներէն ոմանց քննադատութեան այն եղանակը, որով կը մեղադրեն զՄխիթար և իրենները, թէ մինչեւ համար փոխանակ այդպիսի անպէտ գրուածոց՝ Վոլտերի, Լոքի, Մոնտեսքիէօ, Դիդրոյի, Ռուսոյի Թարգմանութիւններ չի առին չուտով տպին, «Որոնք ամէն տեղ (Եւրոպայում ի հարկէ) գարնան թարմ շունչն էին զգացնում, ամէն տեղ ծաւալում էին նոր նպատակներ և նոր յոյսեր»: Եւ մեր այդ գարմանքն անով աւելի կ'աճի, քանի որ կը մտածենք, թէ այդպէս խօսող ազատ գարուս արդիքը՝ ծանօթութիւն ու-նէին ԺԷ. գարու — այսպէս և ԺԸ-ին առաջին կիսուն — ապրող հայ ժողովրդեան խա-ւարեալ եւ մեռած վիճակին: Եւ սակայն կը պահանջեն, որ Մխիթարեանք այդ մեռե-լութեան վրայէն գարու իմաստասիրութեան Թեւերը ազատցանէին իսկոյն, և բակին. Թող դէպ ի եւրոպական բարձրութիւնը, դէպ ի մտաց ազատութիւնը. մինչդեռ նա դեռ պետութեան և քրիստոնէականի նախնական ծանօթութիւններէն իսկ զուրկ էր, Թռչելու բոլորովին անկարող:

Սակայն ամենակարեւոր բան մը, որուն հատատարագէս մեծ պէտք կը դպար ազգը, և որ 1718էն ի վեր արդէն երկնած էր ի մտի լուսաւորչին Մխիթար՝ էր Հայկազեան լեզուի բառարանը։ Իր և Մխիթարայ անուանը սիրապէս արժանաւոր այս հսկայ երկասիրութեան Ա. հատորը՝ որ սկսած էր յօրինուիլ 1727ին և ապա-պրուիլ 1742ին, հապա կ'ուզեր յամին 1749, այսինքն է՝ Մխիթարայ մնհշտանէն քիչ օր վերջ։ Այս գործս՝ որով երկին կ'անմահանայինն Հիմնադրին հետ՝ նաեւ անոր երկու գործակիցներու, այն է Պետրոս Ա. Սկրտչի և Տայիսեմնեան Հ. Սիմոնի անուանքը, եթէ ոչ բոլո երկրագործութեան, այլ սրտիամբ էր անդրանիկ և առաջին բա-ռարանը։ Վասն զի յամին 1695 Պատրիարքական սպարանը սպասած Աստուածատուր Ներսէսովիչն, և յամին 1698 Մեղրեցի Երեմիայ վարդապետի բառարաններըը միայն Աստուածաշնչի և Ճամպրքի բառերը կը պարունակէին, չոր ու ցամաք և սպասե-լեալ կերպով. հետեւաբար թերի էին և միւս գոհարեն մասնաւորութիւնքը հաւինա-լու չէին ծառայեր։ Երկրորդ՝ 49–51 տարի անցած լինելով՝ այդ բառարայ օրինակ-ներն իսկ պատռուած էին, և ճրագով պտնելի։ Այս բանս յայտնի կը տեսնուի նոյն իսկ Մխիթարայ Բառարանի յառաջաբանէն, ուր ըսուած է յօրինողի կողմէն այսպէս. «Թէ դիւրին է կազմել զԲառգիրք՝ ոչ ոք զիտէ, բայց միայն նա՝ որ յօրինեալ իցէ եր-բեք գնոյն։ Եւ այս՝ ենս քան զեւս ծանրանայ մարդոյ, եթէ ոչ ուխտի առնիցի զԲառարանս ինչ, կամ ոչ ոք իցէ յառաչեալ քան զիս՝ ի յօրինել գնոյն քան կարգի-այլ ինքինի ի բնուռս նորոյ կազմիցէ»։ Իսկ ասոր վրչ — որ կը բազկանար 1251 մեծագիր էջերէ — զեռեզուած էին միայն ժամանակ ճանչցուած ուրիշ երեւելի մատեաններու և լեզուագէտ զպրապետաց քով գործածուած բառերն ևս, որք ուրոյն յաւելուածով երրորդ հատոր մի կը կազմեն՝ կից առաջնոյն։ Իսկ կեն-դանեաց, անկոց, ականց, չափուց, դրամց, գործեաց և ուրիշ կոհուց և կարասեաց անուանքը մանրակրկիտ բազատութեամբ մեկնուած են և գիւրահաս եղած։ Այս հատորիս ընդունելութիւնը այնչափ մեծ եղաւ, որչափ երկայն եղած էր անոր ապա-սելն անձկանօք. հետեւաբար ըստ այմ պիտի լինէր անոր ապին վրայ ընդլիք ապ-դեցութիւնը։

Յետոյ՝ բազդատելով այդ հրատարակութենէն վերջ գրուած նամակներն [1] և դրութիւնները՝ անկէց յառաջ եղած ազատող գրութեանց հետ, ակներեւ կը տեսնուի անոր բերած մեծ յեղափոխութիւնը, ոչ միայն ի մասին ուղղագրութեան, այլ և շա-բադրութիւնը գործարուն ընելու ճիգին մէջ։ Այդ մեկ բառարանը՝ հազարաւոր վար-ժապետներու գեր կը կատարէր, բանալով հայկազնեայց գիտցը՝ Հայկին պատրուակը, կամ լաւ եւս հայկական լեզուն՝ իր գաղտնի հրապոյրներովը։ Ուրախ ժամանա-կագիրն եւս Մելգոնեանի Ա.բրայրնորութեան առթիւ այլ և այլ կողմերէն եկած շնոր-հաւորական նամակներու և Մխիթարայ մասին խորհրդածելով՝ կը գրէ. «Զորրորդ՝ վիճակ և ձեւ գրութեան նամակաց գոյնու ժամանակաւ կիսագրաբառ՝ հանդերձ յոր-դորոյն ըղձմամբ լաւ եւ շարադրութեան, առ առեալ առեալ բառնալով զսխալանս և զնոր խոտորմունս. որ է պատճառ Ա. հատորոյ Բառարանիս, զորոյ գործակից այլ ինչ ա-ռեալ՝ վճռայր ազգի ծարաւագարար ևւ Բ. հատորոյն, որպես առիթ ժամուռգանիս յաշակ հետէ վերայիւք և բարեկարգ յաւելուածոյ կողմանց ամ բան առէ, գանգատելով ընդ յամենայն»։

Իսկ Բ. հատորն, որուն գլխաւոր յօրինիչն և առաջնորդն էր բազմահմուտ Հ. Մկրտիչ Ալանեան, իրեն ձեռնհաս գործակիցներովը, լոյս կը տեսնէր 20 տարի վերջ, այսինքն է՝ յամին 1769։ Սա թէպէտ և նոյն իսկ ապպոներէն նկատուած է իրրեւ լրացուցիչ առաջնոյն, անոր համար ալ նոյն տիպագրով մակագրուած է՝ իրրեւ եր-կրորդ հատոր, սակայն նկատելով յինքեան և բան նոյնին և եղանակին, կարելի է կոչել եռատատարան։ Վասն զի բաց ի այն միացորդ գրաբար բառերէն, որոնք ընդ-

---

1. Այս նամակներէն նշանաւոր են իրենց հեղինակին ձեւին համար Պօլսեցի Պապիր Մահտեսի Գրի-գորին և Յովհաննէս Ալանեանի գրածները. բայց մեզ համար աւելի նորութիւն կը կազմեն Գազատացի Փիլիքճի Գէորգայ եղբօր՝ Տէր Աստուածատուր Յակոբեանի, Մուրատ օղլու Սոփճի Սարգսի, նորա Էնգիւրցի փեսային Թաչատրոյ, և Մուրատեան Տէր Աստուն Պետրոսեանի գրածները, զորս աշակերտած էր հատանո-րէն Մխիթար իր Քերականութիւններովը։

արձակ մաս մը կը կազմեն, է նախ բառարան յատուկ անուանց. Բ. բառգիրք պրարար լեզուէ յաշխարհաբար. Գ. յաշխարհաբարէ ի պրարար: Իր տեսակին մէջ նմանը չունեցող այդ բառարանը, որուն անձկութեամբ կը սպասէր հայ ազգը երբեք Մեսրոպեան, բնական էր՝ որ նոյնպիսի ցնծութեամբ եւս ընդունուէր ամենէն. վասն զի այն ոչ թէ մի, այլ քառատեսակ ծառայութիւններ մատուցանելու կոչուած էր անոնց: Գրաբարագիտաց հետ՝ աշխարհաբարեանները եւս մասնչելի էր, և ակնակաց հետ՝ վարժապետաց և վարդապետաց իսկ հատատարմագոյն ուսուցիչ: Ամենուն ծարաւը լեցուած էր առ ժամն:

Ես չեմ ուզեր կանգ առնուլ այս տեղ խօսելու ամէնց հոգը սպասած անմահ Ալիշանեանին մասին, որ իր տեսակին մէջ եզական է, և որ մինչեւ յայսօր միակ առաջնորդն եղած է առնչային և օտար բանասիրաց՝ ու քննադատից՝ մեր նախնեաց մատենագրութիւնքը ուսումնասիրելուն մէջ, և ոչ ալ Զահջահեանի և Հիւրմիւզեանի եղբարց և նմանեաց վրայ, որոնց մատուցած ծառայութիւնքը դեռ տեւելի են: Այլ հայ ժողովրդեան ՃԾ. դարում զգացած մեծաւոր պետրժանին և անասելոր անյագութեան դադարար մի ասլու համար՝ օրինակ մը միայն բաւական կը համարիմ մէջ բերել այն հարիւրաւոր դէպքերէն, զորս Թողած է մեզ ժամանակը: Հ. Սուքիաս Ալամալեան, ի 28 Յունիսի 1770, Պադրասէն առ Մելգոնեան Աբրահայրը ուղղած նամակով կը գրէր. «Հայք ամենայն իրրեւ քաղցեալ և ծարաւի՝ փափագեալ ճոխին պրեանց: Վասն որոյ... բացեալ գարկղն առաջի ամենեցուն՝ էառ իւրաքանչիւր գիրն պրեան իւր, որ ոք եղեւ ձեռնհաս, և ի միում վայրկենի ապառեցին պրեթէ ողջոյն: Վասն որոյ խնդրեմք, զի փութով յղեսջիք պրեանս յոլով, այսինքն՝ զԱստուածաչունչ, զՔառգիրք, զԲերականութիւն, զՆարեկացի, և զայլ պրեանս յոլով, մանաւանդ եթէ ապագրեալ իցէ նոր գիրք պատմութեանց, կամ այլ ինչ նոր, յորոց եթէ տասն արկղք եւս լինիցին, առնուն ասա: Ես եթէ հնար է՝ առաքեսջիք մեծաւոր արկղքիւ... Առաքեսջիք և զԱշխարհացոյցն մեծ, և եթէ թարգմանեալ ապագրեցին աշխարհագրութեանց գիրք, կարծեմ թէ առնուն ասա ազգին »:...

Արդ՝ եթէ հեռաւոր հնդկահային այսքան գործացած էր և գրաէր և ընթերցաէր եղած, հնչա է զուշակել, թէ որքան մեծի էին Մխիթարեան լուսաւորութեան կեդրոնատեղիքը՝ Վենետիկ, Զմիւռնիա, և այլն: Անաւասիկ Մխիթարեանց արդիւնքը, ահա առաջին չունչն, զոր ներաշնչեցին, և որուն ազգայինք եւս կը գործակցէին:

Ասասի ազգին իւր մայրենի լեզուն և գրութիւնը այսպէս երագ ճանչցնելէն յետոյ, կարգը կը բերէր ծանօթացնել անոր իւր պատմութիւնը, եկեղեցին, աշխարհագրութիւնն և կենցաղօգուտ գիտութիւնները. և ահա այս նպատակիս ուղղուած են կարգաւ ԺԸ. դարու վերջին կիսուն և անկէց ետքը եղած Մխիթարեանց պատմական, աշխարհագրական և եկեղեցական բազմահատոր երկասիրութիւններն և անոնց հրատարակութիւնքը, որոնց արժան է ուշի ուշով հետեւիլ:

* * *

Նոր վերածնանող ազգի մը՝ հարկաւոր էր նոյնպէս նոր պատմութիւն կամ պատմագիրք. և այս՝ բազմագիմի բանասոր պատճառներով: Նախ որ այդ ժամանակ Մխիթարեան Մխարանութիւնը զրաղած լինելով նախքին բարեկարգութիւններով և արտաքին քարոզութեանց՝ միջոց չունէր շատով ապագրելու և ծաւալելու բոլոր մեր հին և միջին դարու պատմագրութիւնքը: Բ. եթէ կարենար ապագրել իսկ՝ անոնք ազգին ընդհանրութեան այնքան մատչելի և օգտակար պիտի չլինէին. վասն զի դեռ քիչերը կը հասկնային մեր դասական բայց բարձր լեզուն. և այդ հասկցողներն իսկ՝ մատնաւոր տեղեկութիւններ միայն պիտի առնային այդ պատմագիրներէն, զի անոնցմէ իւրաքանչիւրն որոշ ժամանակի կամ քաղաքական և կամ կրօնական վիճակ չուրջը կը դառնայր: Գ. Այդ ժամանակին ապրող գրչի մը պէտք եւս էր, որպէս զի ժամանակակցաց ընդել և պարզ լեզուով և ոգւով ներկայացնէր ազգին՝ ոչ միայն իր անցեալ, այլ և ժամանակակից բոլոր քաղաքական և եկեղեցական պատմութիւնը: Արդ, ժամանակին ամենէն հմուտ, կրթուի, հաստատուն և հայրենասէր այդ գրիչն,

զոր ասուածային նախախնամութիւնը պատրաստած էր այսպիսի մի մեծ գործ կատարելու յօգուտ համօրէն հայութեան՝ էր Հ. Միքայէլ Չամչեան։ Գրչով և գործակցութեամբ իր դարուն այդ եզական մարդը, զոր Սրբաքննութեան գերագոյն կաճառը կոչած էր teologo terribile, *կը լինէր նաեւ Հայր ևոր պատմաբանից։ Ի.Ը. դարը՝ որ Եւրոպայի համար եղաւ ասուպիս զրական հսկայից դար, Հ. Չամչեան իր երկու հսկայ երկասիրութիւններով կը ճշմարտէր զայն նաեւ Մխիթարայ ասն և հայութեան համար։ Այդ երկասիրութեանց առաջինը, զոր գրեց նա 1773–1775 թուականներուն՝ — Բաղրայի քարոզութեան մէջ — էր վաճառ ուղղափառուրեան մակագրուածը, չորս ասուար հատորներ, որոց ամենք 700 և ամենք ալ 942 քառածալ մեծագիր էջերէ կը բաղկանան. իսկ վերջինն՝ էր Մելգոնեանի Արքայութեան ժամանակ լոյս տեսած ցանցառ հրատարակութեանց ամենէն վիթխարին և ազգիս համար գարագլուխ կազմող Հայոց եաահատոր Պատմուբիւնը, որ տպագրուած է յամին 1781–1786, և ամենուն ծանօթ։ Չամչեան՝ այս վերջին գործովս այնքան ուելի մօտեցաւ հայութեան սրտին — որ դեռ նոր կը զարթնոյր իր գարաւոր քնափութենէն՝ իրեն կենակից և կենցաղակից մեծ վիպագրողի հոգեչունչ ձայնովը — որչափ ուելի խօսուն է ազգրութեան կենդանի խօսքը՝ անտիպ մագաղաթի կամ քարտիսի մեռած տառէն։ Եւ զարմանքին հետ՝ ոգեւորութիւնն եւս աննկարագրելի կը լինէր ամէն հայազգւոյ, վասն զի գրեթէ կանգնած կը տեսնէր վիսհամուռ իր առջեւ՝ Հայկէն սկսեալ բոլոր հայկական շրջաններու և քաղաքական և կրօնական տիպարները, իրենց մասնաւոր և հասարակային դէպքերովն ու դէմքերովը կենդանացած։ Կը տեսնէր ազգիս 3800 ամաց յեղափոխիս պատմութիւնը՝ իր անկումներովն և վերականգնումներովը։ Կը տեսնէր զայն՝ մէկ խօսքով՝ ոչ այնպէս ինչպէս եղած էր, այլ այնպէս՝ ինչպէս որ ինքը կ'ախորժէր, թէ եղած լինէր, կամ կ'երազէր. մանաւանդ թէ այնպէս՝ ինչպէս Չամչեանի մեծ հանճարն ուրուագծած, մարմնացուցած և ոգեւորած էր՝ ճարտասանութեան և հայրենասիրութեան հրաշագործող ազիւնովն և վեհութեամբը։ Չամչեանէն յառաջ գրիչ չարժած էին նաեւ Չաքարիա Սարկաւագ՝ իբր չարունակող Թոմ. Մեծոփեցւոյ, Երեմիա Չէլէպի, և Մաղաքիա Չաքարեան՝ իբր չարայարող Երեմիայի ժամանակակից պատմութեան. սակայն ոչ ոք կրցած էր կատարել այն ճարտար և փըրկուէտ գերը՝ որ այդ ժամանակ հարկաւոր էր։ Վասն զի ասոնք առհասարակ իրենց անձ անարուեստ գրչովն հաւաքած տխուր արարուածոց և ուերուածոց յառաջբերութեամբը՝ ճնշող բնաւորութիւն միայն ունեցեր էին հայ ժողովրդեան վրայ, զանիկայ սարկացուցեր։ Չամչեանի այս հրատարակութիւնն էր՝ որ վեր կը կանգնէր սարկացած հայը, և հիացումով կը լեցնէր։ Յիրաւի, ցուցէք յերկայն սարինեակ ի վեր մեծագրութենէ՝ սարկութեան մէջ ինկող, հաչող և մռչող զաւակի մը՝ իր մեծազգի պապերն ու մամերը, ցուցէք անոր ընտանեկան նախկին հարստութիւնները և ծիրանիները՝ ամենակերպ վայելչութիւններով. և կարէք գուշակել, թէ ինչ պիտի զգայ։ Ահա նոյնը զգայ Ի.Ը. դարավերջի բոլոր հայ սերունդը, որ վաղեմի ազատականութենէն թէեւ կապուտ կողապուտ եղած՝ սակայն և այնպէս կ'իմանար ասով, թէ ինքն եւս արիւնական մտահարուստ ու ազնիւ ազգի մը զարմ և սերունդ է. և թէ կարող է միշտ ոչ միայն պահպանել իր գոյութիւնը, այլ և ուելցնել իր գործելու եղանակը՝ գինքը շրջապատող ազգերու գոյութեան և գործի անհատասար մրցութեանը մէջ։ Երբէք այնպէս խիզախ, այնպէս ինքնավստահ զգացած չէր ինքզինքը հայ ազգն, ինչպէս զգաց այդ պատմագրութիւնը հրատարակուելէն և կարդալէն վերջ։ Այնպէս լաւ ճանչցած չէր իր անցեալ երկպառակութեանց և ազէտներու պատճառները, այսպէս և ներկայ կացութիւնը, ինչպէս ճանչցաւ այդ գործին մէջ։ Գարձեալ Ի.Ե. դարէն ի վեր հայ ազգը այնպիսի ընկերահաշտ միութեան փորձը չէր ըրած. չնորհիւ Չամչեանի Հայոց Պատմութեան և կրկին վաճառներուն է, որ 1795–1797ին բոլոր Հալէպ և Կիլիկիա կանգնած ազգասիրութեան և կրօնից դրօշի ներքեւ՝ միութեան գարմանալի փորձեր կ'ընէին, որուն յայտնի ապացոյց են Սուր Թէոդորոս Կաթողիկոսի, սուրբ փոխանորդ Սիմէոն եպիսկոպոսի, Խոճա Իւսուֆի և այլոց թղթակցութիւնները։ Չնորհիւ այդ գործերուն է՝ որ կ'ելնէին Գէորգ Պալասեցիներ, Գէորգ Մխալիճներ, Մանասէ և Տէր Յովհաննէսեան Գէորգ Դպիրներ, Աւետիս Պէրպէրեաններ, Հաճի Սիմոն, Հաճի Տատիներ և Չնորհք Ամիրաններ և այլ բանիբուն գրիչներ և գործիչներ։ Մէկ խօսքով՝ այդ կրկին գրութեանց ազդեցութեամբ է՝ որ ոչ միայն յամին 1797 մեծ եռացումով հասարակաց դպրոցներ կը բացուէին Գօլոյ մէջ, և ուսմունք կը սկսէին գարգանալ,*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ—Арм. ССР
Ա. ԻՄ, А. Мясникяна

այլ և 1819–1820ին կ'եփէր երկու հայ հասարակութեանց մէջ ընդհանուր վիճակն գաղափարը, տալով իրրեւ ամենագեղեցիկ պտուղ՝ Հրաւէր սիրոյ, և Մեր նպատակ եմք հանրածանօթ և պաշտօնական Երջանկարանը. որուն վրայ դեռ դարեր պիտի նային ակնակիզ և հիանան. բայց դժուար թէ կարենան նորոգել։

Զամչեանի պատմագրութեան արդի քննադատները ուրիշ բան եւս կը պահանջեն անտի. այսինքն է պատմական և քննադատական անխտրութիւն. բան մի որ ոչ մի պատմագրի վրայ կարէ ճշմարտիլ։ Իսկ ես այդ հրատարակութեան պատմական, գրականական և գեղեցկագիտական արժէքը հեղինակի առանձին կենսագրութեանը վերապահելով, այժմ այսքանը կարող եմ ըսել, թէ կրկին վաճառներու ներկուստ և տրամարան հեղինակը՝ եթէ ապրած լինէր այսօր, պիտի կարենար գրել նաեւ աւելի քննադատական պատմութիւնը։ Սակայն պէտք է դիտել և այս, թէ մեր օրերու պահանջուած այսպիսի մի պատմագրութիւն, ծ.Ը. դարուամ ոչ երբէք պիտի կարենար ունենալ այն ազդեցութիւնը հայ ժողովրդի վրայ, ինչ որ ունեցաւ յայնժամ Զամչեանի Հայոց ընդհանուր պատմութիւնը։ Հետեւաբար ինչպէս ուրիշ վերածնիչներու, այսպէս և Զամչեանի գարագլուխ կազմող այդ գործը՝ որչափ ալ հնանայ պիտի չկորանցնէ իր յարգը։ Գարձեալ, ամենէն լաւագոյն գործն այն է, ըստ իս, որ ամենալաւ և փրկարար արդիւնքներ բերած է իր ազգին համար, և լիովին հասած իր նպատակին։ Եւ վերը ըսածներս ի նկատի առած՝ ոչ ոք պիտի կրնայ զայս Զամչեանին։ Ուրիշներ ինչպէս կ'ուզեն՝ թող գտնեն. սակայն մեզ հետ հայոց Հերոդոտոսն եւս՝ որ գիտակ էր այս նպատակիս, իրաւամբ ըսած այնմ եւս յարմարցուց ամէն բան, իր ձեռքը ունեցած սակաւ միջոցներով։ Միով բանիւ՝ նա եղաւ հայր նոր պատմագրաց, և յաջորդք առհասարակ իրմէ օգտուեցան ու պիտի օգտուին սակաւին։ Եւ չափազանցութիւն պիտի չըլլայ՝ ըսել, թէ ոչ յառաջ և ոչ այլ վերջ եղաւ ազգիս մէջ քննադատական պատմագրութիւն մի կամ վիպասանութիւն, որ ունեցած ըլլայ Զամչեանի մեծ ազդեցութիւնը ժամանակակիցաց վրայ, որոց հարիւրաւոր նամակներն իսկ ամէն կողմէն կը հաստատեն ըսածներս. զորս սակայն համառօտութեան համար առիթ ունեցանք գանց ընել մէջ բերելու։

Զամչեան իր այդ գրականական և պատմական հսկայն՝ ամենուն առհասարակ մատչելի և հանրօգուտ ընելու համար՝ գեղեցիկ ոճով կը համառօտէր զայն՝ (արձագրելով) 494 էջերէ բաղկացած հատորի մը մէջ, որ յամին 1811 լոյս կը տեսնէր գեղեցիկ մակագրութեամբ՝ Խրախճան պատուհրեան (Հայոց)։ Ստուգիւ խրախճան մ'էր այս մանաւանդ բոլոր հայասեր դպրոցներու համար. վասն զի երկու տարի վերջ օտաններէնի թարգմանուելով՝ երկրորդ անգամ կը տպագրուէր Թրքախօս Դպրոցաց համար։ Անգլիարէն թարգմանութիւնն ալ յետոյ Յովհ. Աւդալեանի ձեռքով կատարուելով՝[1] Հ. Միքայէլի մեծ գործի ազդեցութիւնը Հնդկաստանի և Եւրոպիոյ մէջ եւս քան գեւս կը տարածէր։

Զամչեանի այս ընդարձակ եւ համառօտ գործերով նախնեաց պատմագիրներն և մատենագրութիւնքը ազգին ճանչցնելէն յետոյ, ըստ ինքեան բնական էր, որ Մխիթ. Միսթանութիւնը մի գլխի միւսին անոնց հրատարակութեանն անդէն ձեռնարկէր։ Սակայն Ս. Ղազար տպագրուած գրոց ցուցակը՝ այլ ինչ կը ներկայացընէ մեզ. այսինքն են աշխարհագրութեան և կենցաղօգուտ գիտութեանց վերաբերեալ գործերը, զորս ազգային գրական վերածնութեան կոչուած հեղինակներն և հրատարակիչք՝ իրենց բանած ոճովը ազգին պահանջին աւելի համաձայն կը տեսնէին։ Մենք ալ կ'ուզենք այժմ այս կէտերուս վրայ ընթերցողաց ուշադրութիւնը գարձընել։

Նախ և յառաջ յամին 1746, 1751 և 1778 արդէն տպուած Միսթանութեանց Հ. Իգնատիոս Վ. Խաչատուրեանի խմբագրութեամբ Հայաստանեայց մեծ և փոքր, և Պաղեստինու փոքր Հաւատարմածեւերուն վրայ կը յաւելնային Զորից մասանց աշխարհի Հաւատարմածեւերը, տպուած 1786ին, և օսմաներէն տէրութեան քարտէսը՝ տպուած

---

1. Չի այսպէս կը հաղորդէր նա ինքն ի 20 Դեկտ. 1825 կալկադայէն առ Գերպ. Սուքիաս Սօմալեան գրած շահագրգիռ նամակին մէջ։ Դժբաղդաբար Եւրոպացւոց շատերը իրրեւ Աւդալեանի հեղինակութիւն ճանչցած և կոչած են իրենց գրուածոց մէջ, սակայն բաղդատողք պիտի տեսանեն հոն Զամչեանի Խրախճանը՝ անդրիացած, Հայկեան և Մարգասիրական Ճեմարանի տիրոջն համար։

1787ին. Միւ ժողովն և շրջակայիցը՝ տպուած 1791ին, Պօլսոյ նեղուցին՝ տպ. նոյն թուականին. Մարմարա ժողովն և շրջակայից քարտէզ՝ տպ. 1805ին, ամէնքն ալ փորագրուած ի Վենետիկ՝ Հ. Եղիա Ինճուճեանի ճաշակովն և ճարտար մատուռը [1]։

Այսպէս ահա երկրագնդոյս նիւթական երեսը ներկայացնելէն վերջ՝ քան չորից մատանց և քան մանր բաժանման ազգաց և աշխարհաց, ի դէպ էր այնուհետեւ ծանօթացնել ազգը անոնց բնակչաց, տարածութեան, քաղաքական և բնական կացութեան հետ։ Այս բանիս համար կ'երևէին երկու ձեռնհաս և գործունեայ հանճարներ, որոնք ճիշդ այն մեծ գերը պիտի կատարէին իրենց հակայ և ազգօգուտ երկասիրութիւններովը՝ աշխարհագրական և ազգագրական տապարիզին մէջ, ինչպէս Մխիթար և Հ. Մկրտիչ Անանեան կատարած էին ազգային նախկին լեզուական կազմակերպութիւնը, Յամչեանը՝ պատմագրութեան, Ակէրեան և Աւետիքեան և նմանիք եկեղեցական տապարիզին մէջ։

Այս նպատակաւ ահա կը հրատարակուէր նախ յամին 1791, Ինճիճեանի Տետրիւն աշխարհագրութեան համառօտ՝ բայց հիւթաւէտ գրութիւնը, որ համերջ աշխարհագրութեամբ կը ստորագրէր նաեւ ամենայն աշխարհաց, թագաւորութեանց և գաւառաց իւրաքանչիւր բերքերը։ Դա գեղեցիկ ներածութիւն մ'էր և նախապատրաստութիւն այն կենցաղօգուտ գիտութեանց և հոյակապ գրութիւններուն, որ իրարու պիտի յաջորդէին, ցիրուցան և անաչխարհիկ եղած ժողովրդեան ցոյց տալու՝ ոչ միայն իր մայր հայրենիքը, այլ և օտար ազգաց և աշխարհաց անոր հետ ունեցած և ունենալիք յարաբերութիւնները, և այսպէս ընդարձակել անոր առօրեայ անցուկ կեանքն և կենցաղը՝ դէպ ի քաղաքակրթութիւն, ի տուրեւառութիւն և դէպ ի ճարտարարուեստները։

Ցիրաւի յամին 1802 կը սկսէր և 1805ին բովանդակապէս լոյս կը տեսնէր Ս. Ղազարու տպարանէն այս երկու աշխարհահռչակ մարքերու այն տիտանական մեծ գործը, որ Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի տիտղոսին հետ՝ կը կրէ իւր վրայ նոյնպէս Նոր Հայաստանը, տպ. 1806ին։ Դա կը ներկայացնէ 7742 էջերէ և 12 ուռթածալ հատորներէ բաղկացած բոլոր քաղաքական և ուսումնական [2] աշխարհագրութիւնը, ընդարձակօրէն։ Եւրոպայի Ե. և Զ. հատորները, և Ասիոյ ալ Ա. հատորը՝ Նոր Հայաստան միայն Հ. Ղուկ. Ինճիճեան աշխատասիրած էր. իսկ Ցեցասիոյը բովանդակապէս ծնունդ է Գերպ. Ատ. Ագոնց Աբրահօր հանճարին և համբաւեանը։

Հայ ազգը չէ միայն որ հիացումով կ'ընդունէր իր և բոլոր աշխարհի պատկերաղարդ այդ համագրութիւնը, այլ և իր մրցակից ու խիղախ ձոյնը. այն որ եղած

---

1. Իսկ 1846–1849 թուականներուն կը հրատարակուէին Ցովհ. Տատեանի ձեռնհասութեամբ և ամենայնիւրի փորագրութեամբ 10 մեծադիր Ատլասներ, որք կը ներկայացնեն Տիեզերագրութիւն, Հնամատոյց, Ասիա, Եւրոպա, Ափրիկէ, Ամերիկա հիւսիսային, Ամերիկա հար., Ովկիանիա, Հայաստան աշխարհ, ըստ նախնի աշխարհագրաց, և Օսմանեան պետութիւնը։ Իսկ յամին 1862 կը հրատարակուէին 12 փոքրադիր Ատլասներ որք են Հնամատոյց, Աշխարհ մանկավարժական, Աշխարհ ժամեօք առ նախնիսն, Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, Ամերիկա (կրկին), Ովկիանիա, Գազդիա՝ (բաժանեալ ի նահանգս, Հայաստան (ըստ նախնի աշխարհագրաց), Ասիոյ մասն (ըստ Ս. Գրոց և նախնի աշխարհագրաց)։

Տատեան Ցովհ. Ամիրայն, ի 20 Հոկտ. 1849 առ Աբրահայրը գրած նամակով մեծ գրուատեօք կը ցուցընէր իր ազգին գոհունակութիւնը այդ չնաչխարհիկ գործին համար։... Ամէն կողմ կը հռչակուէր այն, մինչեւ յարբունիս եւրոպական վեհապետաց և Սուլթան Մէճիտի։ Յամին 1850 օրինակ մ'ալ կը յուղարկուէր — կոմս Լազարէֆի միջոցով — Նիկողոս Ա. Օգոստափառ Ցարին. որ մեծ հաճութեամբ ընդունելով՝ կը դնէր կայսերական Գրատան գանձուց մէջ։ Եւ ի 22 Դեկտեմբերի Բառօն Մօլեստ Դը Փօրֆի ձեռքով գրած նամակով կը յայտներ Մխիթարեանս իր բարեհաճ շնորհակալութիւնը։ Իսկ ի 17 Յունվ. 1852 արքունի Գրատան անդամ Բառօն Փօռֆը կայսեր կողմէն գրած մի ուրիշ նամակով կը ղրկէր ի փոխարէն՝ արքունի Գրատան նորատիպ Յուցակը, որ 300 օրինակ միայն տպուած էր, տէրութեանց արքունի գրատուներուն ընծայելու համար։

Մի և նոյն տարին, այն է Յունվ. 1, կոմս Լազարէֆ ինքնին առանձին նամակով յայտնելով Մխիթ. Միաբան. կայսեր և իր գոհութիւնը, ապա կը յարէր ազգասէր պարծանօք. Je me plais une fois de plus, Très Vénérables Pères, a vous réitérer toutes mes sympaties de compatriote pour le bien-être et prospérité de votre établissement, և այլն.

2. Որ պարունակուած է ԺԲ. հատորին մէջ և կը կրէ Հատարակախօսութիւն կամ Ներածութիւն մակագրութիւնը։ Դա գերմանական ոճով եղած ուսումնական ընդհանուր տեսութիւն մ'է նաեւ բնական և քաղաքական — աշխարհագրական գիտութեան վրայ, տպ. 1817։

էր երբեմն գայեակ և մատակարար գիտութեան Հայոց, այժմ ինքն էր, որ հայէն կը խնդրէր աչխարհագրական օժանդակութիւն։ Ցերաւի՝ Զմիւռնիացի ուսումնասէրն Քա-
բիպանաքի Եղբարք՝ յամին 1817, զեռ այն ինչ հրատարակուած էր ԺԲ. հատորը,
կ'ուղղէին Վիեննայէն — յ12 Յուլիսի — հետեւեալ գեղեցիկ նամակը՝[1] առ Գերպ.
Ագոնց, զոր մերանք գրաբարի թարգմանած են, նոյն տարին։ Կը դնենք այս տեղ
նոյնութեամբ այդ նամակի պատճէնը, որ Մխիթարեան Միաբանութեան հետ՝ ապին
եւս յարգարէր վկայութիւն մ'է, ոչ միայն աչխարհագրական, այլ և ընդհանուր գրա-
կան ձեռներիցութեան նկատմամբ եւս։

Ամենապատիւ Միաբանութիւն Ձեր Սրբոյն Ղազարու !

« Թէպէտ և յայլոց բազմաց Ուսումնասիրաց տեղեկացեալ զձեր որ յաղագս այնր
առատաձայնն և զլերմ նախանձ, և զոր հարկանէիք կուռ և անօրինակ մրցանս՝ ի
ծաւալումն մատենագրական լուսոյ, գուարճանայաք յոյժ հոգւով. բայց որ այն ինչ բա-
բեկամ մեզ եղեւ ազնուագոյն և գիտնասէր պատանին Սահակ ազրիանուպօլսեցի,
ձերոյինդ Ձեմարանի գեղեցիկ չքնաւեղ, ճշդրտագոյնս արարեալ մեզ՝ որ ինչ յա-
ղագս ձեր, լցոյց զմեզ ուրախութեամբ հոգեկանաւ. որ հեչտացուցիչն է բոլորից առ-
հասարակ անկեղծ բարեկամաց մարդկութեան։ Վա՛յ ձերոյինդ ամենապատիւ Միաբա-
նութեան ! վայ արբանեակը ձերում գիտաւորութեան ! Ուղիղ արասցէ տէր գճանա-
պարհս ձեր ! զի և մեք երբեմն տեսցուք ցոլացեալ յամենասիրելի հայրենիսն ձեր
գկենդանարար իմաստասիրութեանն ջահ։ — Մեր յառաջնեմէ հետէ, ո՛ արժանապա-
տիւ Հարք ! պարապեալ յարտադրութիւն ընդհանուր Աչխարհագրութեան, և
գտեալ անարգս ամենեւին և անպիտանս զարդի աչխարհագրականս՝ տաճկականն Ա-
սիոյ, երբեմն ամենապայծառ մերոյ հայրենեաց, արգելաք ոչ սակաւ արտարեկու-
թեամբ։ Սակայն արտաքոյ ակնկալութեան գարձոյց զայն յանպատում ուրախութիւն
բարեբարոյ և ազնիւ բարեկամն մեր՝ Սահակ ազրիանուպօլսեցի, առացեալ մեզ առ
այլովք, եթէ ի տիպ տուեալ էք ի ձեր բարբառ և ճշդրիւ գտեղագրութիւն և գտախ-
տակս համօրէն Օսմանեան ինքնակալութեան։ Արդ ազաչեմք գարժանապատիւ Միա-
բանութիւնդ ձեր՝ առաքել մեզ ի ձեռն որ ի Թրեստ հելլէն վաճառականին՝ Պարոն
Յոաննուլեայ Գլիկոֆիդեայ՝ զՏեղագրութիւնն գայն Տաճկաստանու, և գտախտակն,
մանաւանդ զձերոյ հայրենեացդ՝ զՀայաստան աչխարհն։ Ընդ որոց քակ գիտասջիք՝ զի
և՛ զմեզ ունիցիք երախտագէտս գամենայն աւուրս. և՛ այլոց Հելլենացւոց առնիցէք
բարեբարոյութիւն չեզ նմա եղեալ։ Իսկ զգինս գրոցն և գտախտակացն վճարեացուք ի
Վիեննա ուր և հաճոյ թուեսցի ձեզ։ Այլ և քաջազարմ մերս բարեկամ Պարոն Յա-
կոբ Աւետիսեան պատուեալ մեզ զձէնջ՝ յորդորեաց գիմել առ ձեր մուզայատէր Միա-
բանութիւնդ, և հանդիպել՝ որոց կարօտիմքս » ։

Անկեղծ բարեկամք արժանապատիւ Միաբանութեան ձերում,
Եղբարք Քաբիդանաքի Զմիւռնիացիք։

Ի Վիեննայ յ12 Յուլիսի 1817 ։

Իսկ մերայոց կողմէն անթիւ են գոհութիւնք և գովեստք։ Հ. Մկր. Ալգերեան
ի 25 Հոկտ. 1803, երբ դեռ հատորք ինչ հազիւ տպուած էին, Պօլսէն գրած նամա-
կին մէջ կ'ըսէ՝ ի դէմս ազգին. « Սպասեմք ճեացեալ հատորոց Աչխարհագրութեան,
զի բազմաց առեալ զճաշակ եկելոցն, յետ բազմապատիկ գովութեանց և օրհնութեանց,
սկսեալ ի Պայծառաց ցաչխարհականս, ճնան ծարաւեալ ճեացելոցն » ։ Այսպէս կը
գրէ և՛ Հ. Միք. Զամչեան. այսպէս և ուրիշ շատեր։

---

1. Ասոր յոյն բնագրէն դուրս մի ուրիշ նամակ եւս կը պահուի վանաց գիւանին մէջ։

1822 թուականին հրատարակուած Ինճիճեանի Հին Հայաստանով կը մարմնաւորէին և կը խօսէին հայութեան սրտին հետ՝ յամին 1751 և 1778 ի Վենետիկ հրատարակուած Հայաստանի մեծ և փոքրագիր Աշխարհացոյցերու անուանց կմախքը, հին և միջին դարերու աշխարհագրական տեղեկութիւններով, զոր հեղինակն անսովոր համառութեամբ կը հաւաքէր մեր նախնեաց և օտարաց գրուածներէն։ Նուիրական այս հողն, բազմաբեղուն այս մարմինն էր, որ յետոյ մի աւելի գօրեղ և կշռադատ և մանրախոյզ գիտնականի գրչի և երկար աշխատութեանց շնորհիւ կը ծնանէր նոր ժամանակաց և սերնդեան արժանաւոր, և իրենց տեսակին մէջ դեռ չի տեսնուած երեք հարազատ հսկաները. այսինքն են՝ Միտռան, Աշրարատ և Միտականի։ Եւ Հայկական նոր գրականութեան մուտքը այդ հսկաները կոչուած էին հայ սերնդոց հետ՝ Եւրոպացւոց իսկ աւելի զարմանաց և գարթուններու առարկայ լինել։

* * *

Հին և նոր աշխարհագրութիւնը ծանօթացընելէն վերջ ապդին, ձեռք կը գարնէր Միաբանութիւնը ճանչցնել անոր նաեւ իր և օտար ապգաց կեանքն և կենցաղը։ Եւ ահա այս նպատակաւ է՝ որ լոյս կը տեսնէին յամին 1799–1802 Ինճիճեանի Տարեգրուբիքը, աշխարհիկ լեզուաւ։ Առանք պարբերական փոքրիկ տետրակներ էին, որոնք ժամանակ ժամանակ երեւնալով — լրագրութեան ոճով — չահագրգիռ տեղեկութիւններ կը հաղորդէին ապգիս՝ ժամանակի քաղաքական երեւելի դիպաց, պատերազմներու, բանաստիրական նորութեանց և կենցաղօգուտ պէսպէս գիտութեանց վրայ։ Նա համաշխարհական բովանդակութիւն ունէր. գի ամէն տէրութեանց գիւտից և գիտութեանց ծաղիկը կ'առնոյր և կը բաշխէր ամենուն։ Այս գրուածոյս է, որ հիմը կը դրուէր ապգային աշխարհաբար լրագրութեան, ժողովրդեան իւր իսկ խօսած ընտանի լեզուովն ու եղանակաւը։ Եւ այդ տեսակ գրութեան հիմնադիրն էր Հ. Գաւկաս Վ. Ինճիճեան, որուն Թարմ գաղափարներու և նորասիրութեան պէս՝ գործունէութիւնն եւս արտաքոյ կարգի էր և անխոնջելի ցխոր ծերութիւն։ Նա այդ գործունէութեամբ է՝ որ միաժամանակ, այն է՝ 1800ին, կը սկսէր հրատարակել նաեւ ժողովրդական մի ուրիշ պարբերական տետրակ, Եղանակ բիւզանդեան՝ խորագրով, որ իրր զարգացած շրջան՝ պիտի չուտով յաջորդէր առաջնոյն և քանի տարի կը շարունակուէր՝ չահագրգռելու զամէնքը՝ մեծէն մինչեւ փոքրը։ Այս իսկ այնպիսի գիտական մի նորութիւն էր, որուն ոչ միայն Հայք, այլ և Յոյնք և պօլսաբնակ ուրիշ ժողովուրդներ առաջին անգամ ականատես կը լինէին. վասն զի նա ոչ միայն երկնից և երկրի այն ծածուկները կը յայտնէր հայ ժողովրդեան, որոնք անմիջապէս իւր կենաց և գործառնութեանց կը վերաբերէին. այլ և երկրագնդոյս այլ և այլ կողմերը կատարուած բժշկական, քաղաքական, և այլն, գիտելիքները։

Հ. Միքայէլ Չամչեան որ նոյնօրինակ սիրահար մ'էր գրական և գիտական նորութեանց, ի 10 Փետր. 1804 «Եղանակի» համար հետեւեալ զուարճարան նամակը կը գրէր Ինճիճեանին.

---

1. Ասոր բովանդակութիւնն էր տովորաբար նախ Նոր տարի՝ նոր դիտելիք, որով բարոյական խրատուսիչ տեսութիւններ կ'ընէր ապգին։ Բ. Օդերեւոյթներու փոփոխութեանց — որք կը կատարուին քառորդէ քառորդ — գուշակութիւններ՝ որոնցմով կը տեղեկացնէր ժողովուրդը եղանակներու, աստեղաց դրից, օդախաղաց մէտէօրականներուն, և անցեալ երեք շրջանակներուն և ամաց իւրաքանչիւր օրուան և օդին հետ։ Կու տար նոյնպէս բժշկական և բնական իրաց վրայ զանազան տեղեկութիւններ, պատմական ոճով։ Գ. Իբրեւ Չրօսարան ուսմանց՝ կ'ընծայէր գիտական հատուածներ. և երբեմն երբեմն ալ քաղաքական անցքեր կը պատմէր՝ ժողովրդական լեզուով ու ժամանակագրական ոճով։ Եղանակ բիւզանդեան ոչ միայն լեզուով, այլ և արտաքին ձեւովն իսկ չար և նման էր Տարեգրուբեան։

Վերադառնալի Հ. Գուկաս վարդապետի ի Տէր խնդրել։

*« Զգիր ձեր գրեալ ի վերայ 67 առաքակաց՝ [1] որք կոչին Եղանակ բիւզանդեանց՝ ընկալայ ի Փետր. 2։ Եւ ուրախացայ յոյժ. զի զոր երկնէաք ցայս վայր՝ ծնաւ, և արու ծնաւ. մանչ է մանչ է։ Ապէրիմ, ապէրիմ յօրինողին, և գարձեալ ապէրիմ. պիտիհատաւ օրուն. պղտի աքլորը, քահանիի գայրերի հրսին։ Հոգայի և վարանէի ի քառորդ լուսնիս. ուր գրի * վերջի օրերը աս քառորդիս անձրեւէ. նաեւ ձիւն պիտոր ըլլայ *։ Եւ յաւելուլ վարանմանս՝ ահա ի 26 լուսնի եկն անձրեւ, և ապա ի 27 այնր ձիւն՝ ամենեւին անակնկալ, զորպիսի ոչ էաք տեսեալ յայսմ ամի։ Ող, փառաւորեցաւ սիրտ իմ, փառաւորեսցին և սիրտք ձեր։ Հոչակեցաւ Աստուածոլ, և արձանգանգ Նորին զուարճացոյց զսիրտս մեր։ Եթէ հետ գՀետէ լրասցին քանի մի գուշակութիւնք, արեւելեան տէրութիւնք բերկրեսցին ի վերայ մեր, թարգմանեսցեն և հրատարակեսցեն զգործս մեր։ Յառաջ քան զգալ ձեան վաճառեցի ես ինքն զչորեսին՝ մի մի զուռուշ. յետ այսորիկ հինգ հինգ զուռուշ կարծեմ թէ վաճառեսցի։...*

Ողջ լեր՝ համայն Միաբանութեամբ մերով »։

Վեր. Գում

Ն. Ծ. Հ. Միքայէլ վարդապետ Զամչեան։

Ինճիճեանի, ի 10 Յունիսի 1805, առ Աբրահայրն Ուխտիս գրուած նամակէն կ'իմանանք նախ, որ Եղանակ բիւզանդեանը իր գուշակութեանց ճիշդ կատարելուն համար՝ այնքան մեծ ընդունելութիւն և յարգանք գտած էր նաեւ բարձրագոյն շրջանակներում, « մինչեւ Թարգմանեալ ունին յարքունիս անդ. և խափանել եւս (Սալթանը) « զԳուշակութիւն » Հրէից, զոր ի Սելանիկ տպագրեալ՝ ամի ամի առաքէին այր », կ'ըսէ Հ. Գուկաս։ Ուրեմն մէկ տարի վերջ կատարուած էր Զամչեանի յայտնած փափաքը, որուն համար անմեղ տղու մը պէս կը պարծէր նաեւ ժամանակին մեծ վարդապետը։ Այս ալ ըսենք, որ այսօր մեզ համար սովորական դարձած այդ Գուշակը՝ առաջ մէկ դար յառաջ խիստ մեծ ազդեցութիւն կ'ունենար ոչ միայն Պօլսի, այլ և՛ Թրանսիլվանիոյ ժողովրդեան վրայ. զի Հ. Զամչեան ի 25 Ապրիլի 1808 գրած մի ուրիշ նամակի մէջ կը հաղորդէր, թէ « Եղանակ բիւզանդեան » իր այդ արտակարգ գուշակութեանց համար՝ մեծ յուզումն պատճառած էր այդ թուականին Հայոց մէջ՝ ուրիշներու կողմէն հնարուած լուրերովը. մինչեւ կը տիպուէր Պատրիարքն եկեղեցւոյ մէջ նզով կարդալ խռովայոյզներուն, ըսելով՝ թէ « ես ինքն կարդայի զայն, և չգտայ հոն չար գուշակութիւններ »։

Իսկ Ինճիճեան, ի 11 Ապրիլի 1808, Պօլսէն առ Աբրահայրը գրած նամակով այսպէս կը պարզէ ժողովրդեան սխալ հասկացողութիւնն և չիմացութեան պատճառը։ Յետ ըսելու, թէ « բան օրացուցին և մանաւանդ « Եղանակի բիւզանդեան » հռչակեցաւ յոյժ յոյժ ի լսելիս ամենեցուն, թէ ոտքս գոր ինչ և ասեն՝ լինի. քանզի առ օրին գուշակութեան երկուց տետրակացս սկսաւ ձիւնել, յորում աւուր ոչ ոք յուսայր՝ առ աստուիկ պարզութեանն ». ապա կը յաւելցնէ հետեւեալը. « Բայց յայտնանէ ոմանք ի ռամկաց սկսան անճառնիս գուշակել՝ ըստ քմաց իւրեանց, և ի վկայութիւն կոչել զտետրակն, յորում կամ ոչ գոյր բնաւ այնպիսի ինչ, և կամ ամենեւին տարբեր յառացելոց նոցա. զոր օրինակ. (ասէին) թէ ի Դեկտեմբերի լինելոց է կոտորած մեծ. վասն զի գրէ՝ (Եղանակն) « Թէ

---

1 Զամչեանի այս բացատրութեան համեմատ կամ « Եղանակ բիւզանդեանի » հրատարակութիւնը կարծուած ժամանակէն յառաջ եղած ըլլալու է, և կամ ոչ Տարեթերթ, ինչպէս կարծեն ոմանք, այլ ամառկան կամ կիսամեայ։ Երկրորդ՝ 1800ին հրատարակութիւն աւելի հաւանական կ'ընէ, քան թէ 1803ին։

ունի վինել որոտումն », զոր ասաւ ի գործ ածէն վասն քաղաքական խառնուրեանց : Պէտի լինել շարժ. զի ասէ՝ « Թէ յայն ինչ ըմբռնին եղեւ շարժ » : Երկիցս ոչնի լինել ցրուիղող վիճչեր ի տանիս. զի ասէ թէ « Երիցս անձրեւ ասատիկ գալոց է » : Հնգիցս ոչնի լինել կայծակ. զի ասէ թէ « Հնգիցս ունի լինել խառնարումն արեւու » : Երիցս երկինքն ոչնի պատառել, և գաբրիէլեան փողոյն ձնչել. վասն զի ասէ, թէ « Երբեակ երաժիշտք ունին երգել », և այլ այսպիսի գուշակութիւնք զարհուրելիք : Ի յամանոց ասաի սկսեալ այս բան առհասարակ ի ժողովուրդս. և զի գիրն էր սակաւագիւտ առ Թանգուեանն, հաւատային թէ ճշմարտիւ գրեալ են. մինչեւ Պատրիարգին ասել ցՁէլէպին. իսկ Ձէլէպի յետ ծանուցանելոյ՝ առաքեաց առ նա « գեղանակն » : Յետ ընթեռնլոյ՝ պատուիրեաց յերկուս եկեղեցիս պղտ առնել առ ժողովուրդն՝ չխօսել անճառնիս ըստ քմոց, զի չիք այնպիսի ինչ ի գիրն » :

Ինճիճեանի այս նամակս անով իսկ հետաքրքրական է, որ ցոյց կու տայ մեզ, թէ ժողովրդական բարբառի որոտումն, խառնարումն և այլ բառերն որքան տարբեր նշանակութիւն ունէին գրոց բարբառէն. — Բ. մեր ժողովրդեան յայնժամու մանկական վիճակը՝ բնականան, և այլն, գիտութեանց մէջ :

Այսպիսի ժողովրդականութիւն վայելելուն համար է անշուշտ, որ « Եղանակը » դարձեալ շատ տարիներ վերջ իսկ, այսինքն է՝ 1837 թուականին, կը վերատպուէր Զմիւռնիա, Աւերիկացւոց գործարանին մէջ [1] : 1808 թուականին Եղանակ բիւզանդեանը գտալ բարեփոխութիւն մի կը կրէր Ինճիճեանի աշխարհահայեցողութեան համաձայն, զոր այսպէս կը ներկայացընէ նա նոյն տարին (ի 9 Յուլիսի) առ Գերպ. Աբրահայրն Ագոնց ի Ս. Ղազար գրած նամակին մէջ :

« Այժմ պարտ է մեզանգամ տպագրել, բայց առ ի հաճոյ կացուցանել ժողովրդեան՝ տպեցի առնիւրին քան ձեռոյ կազեդայի երկիցդեան, ի քառասակ տողս : Ճարտարութիւն յօրինողին յայտ պարտի լինել, զի որչափ և կարէ համառօտ խօսիւք՝ գրագմութիւն լրոյ ժողովեցէ, որոշ որոշ առացուածով, որպէս սովորութիւն է ի նամակագրութեան. պարտ է ի բաց բառնալ գյառաջաբանական գրոյցս, չյարուցանել տարակուսութիւնս, և ոչ կոչել ի վկայութիւն. այսպիսի ոճ տարեգրութեան կամ պատմութեան է սեփական : Քան փոփոխելոյ ձեռոյն՝ փոխեցաք և զանուշնի, զոր յուրոյն Թղթի գրեալ՝ եդի ի նամակիս [2]. նուազ եղար բան ինչ իբր ձակատ գործոյն, զոր յամենայն նուագս տպագրուբեան պարտ է դնել : Այս գործ ոչնի լինել հնոյ ժողովրդեան առաւել քան « գեղանակն [3] ». զի ի ժամ եղեալ են, թէ այս է հաւաքումն ամենայն կազեդայից, մինչեւ առն Գալիմեարի պէյի գնեալ գմին : Մեր զգուշացի՝ չդնել ինչ որ հայի ի տահման տէրութեան, և ոչ որ հայի ի նուաղութիւն եկեղեցւոյ, զի տայ գայթակղութիւն » :

Իսկ յամին 1811 Մարտ 16 թուով առ Աբրահայրն ուղղած նամակումն Իւակիմ տարի մեծ գպրոցի բացումը աւետելէն վերջ՝ կը նկարագրէ ապա Եղանակ բիւզանդեանի այդ և ազգիս ուսումնական զարգացման մասին գործած ազդեցութիւնը այսպէս : « Առ եհաս այս եղանակ, անդ եհաս իմ Եղանակ. թէպէտ զոր ի հարկէ

---

1. Տես Հայկ. Մատենագ. վէնետիկ 1883, էջ. 166: Սակայն մեզ այնպէս կ'երեւի, թէ վերջին հրատարակութիւնս « Եղանակ » միայն խորագրուած էր՝ առանց բիւզանդեան յաւելուածին :

2. Դժբախտաբար, սակայն, մինք չի գտանք Ինճիճեանի այդ նոր ուրուագիծը, յիշեալ նամակին մէջ :

3. Ինճիճեանի այս բացատրութիւնէն այնպէս կը տեսնուի՝ թէ իր խօսքը Եղանակ բիւզանդեանին տարբեր մի թերթի վրայ է: Հաւանօրէն Յիշատակարանն ըլլալու էր Ինճիճեանէն գծագրուած այդ թերթը, որուն յիշատակութիւն կ'ընէ նոյն իսկ Տարեգրութեան ճակատին վրայ, յորմէ և Հայերէն Դպրութեան պատմութեան հեղինակն եւս մի քանի տող հատուած մէջ բերած է (տես էջ 470). և կամ խօսքը « Դիտակ բիւզանդեանի » մասին է, որուն ճակատը 1808 էն ի վեր յղած էր Ինճիճեան ի Վենետիկ, բայց հրատարակութիւնը կը յապաղէր :

Ուստի այժմ կարելի է ըսել, թէ առաջին տեսակէտով այդ բացատիկ թերթն լոյս տեսած ըլլալու էր յամին 1807. բայց ինչ ինչ բաներով այնքան հաճելի չըլլալով Աբշարունեաց ընկերութեան, յամին 1808 վերատին կը տպուէր՝ Ինճիճեանի գծած ճակատին և ծրագրի համաձայն: Իսկ որովհետեւ այսպիսի մի հրատարակութիւն և ոչ իսկ Ս. Ղազարու գրատան մէջ կը գտնուի, ապա ուրեմն կը ձեռք առնի այդ վերջին կէտը, այսինքն է՝ ծրագրուած թերթը զոր Ինճիճեան « Եղանակէն » վեր կը դասէ է « Դիտակը », յար և նման որուած նկարագրին, որ Աբշարունեաց ընկերութեան նախկին անհամաձայնութեան պատճառաւ՝ այդ թուականին չի կրցաւ տպուիլ, և յետաձգուեցաւ մինչեւ 1812ը :

ապագրեալ, ի բազմաց հետէ եղեալ էի ի ձանձրարէն. տեսեալ՝ թէ բանքն որ ի նմա ունին ճեալ. և է իրր խթան և գրգռիչ տարեկան՝ առ ուսումն և առ բարեձեռութիւն, զոր և ակն ունիմ սովին բօսասիրս առնուլ սատ։ Մեք արասցուք՝ զոր կարեմքն առնել ի կոզմանէ մերմէ, առ ի կոփել զքաջձրութիւն բարուց, և առ ի յորդորել առ սէր ուսման, զորոյ զպաուղն տեսանելիք ի մօտոյ. քանզի բաց ի յայլոց դպրատանց, ի նորուրս բացաւ դպրատուն նման յիւսկիւտար, ուր ժողովեցան փոքրանակի 130 մանկունք »։

Ի 10 Ապրիլի գրած նամակովը կը յաւելու. « Քանզի մի մի Եղբանակ գնայ յաժենայն գպրատունս, ուր ընդհանրովի՝ գրգռին առ զանազան տեսակս ուսմանց, զորոց ձաշակ առեալ լինին ի նմա (այսինքն Եղբանակն)։ Գրգռմամբ նորա բազմացուցանեն դպրատունս, որպէս և ի նորումս յիւսկիւտար։ Թնդիր անկաւ գրեանց, յաձախեաց սէր՝ գրատուն յօրինելոյ ի տունս, և այլն. բայց բողեալ զանձնական, զոր չէ մարթ բոլոր ցանկ ի նամակաւոտ թղթի, այս գրքոյկ՝ սէր եւ յօժարութիւն հարկ առ մանուկս ազգային, զորմէ գրեալ ենք յառաջագոյն »։

Մեզ աւելորդ է ուրիշ բան յաւելցնել, զի նամակագրի այս հակիրճ տողերը շատ և շատ բարեփոխութիւններ եւս գուշակել կու տան, իրրեւ չքնաղ պատուղ Տաբեգրութեան, Բիւզանդեան դիտակին և Եղբանակին. զորոնք — ինչպէս և Աշխարհաբնեաց ընկերութիւնը — մարմնացնողն և ոգեւորողը էր նա ինքն Հ. Գուկաս Ինճիճեան, ինչպէս ուրիշ պարագայով իսկ ակներեւ պիտի տեսնենք։ Սակայն Ինճիճեան չէր զադրեր բնաւ հնարք հնարքի և ճիգն ճգանց վրայ յաւելացնել՝ ազգային կենցաղօգուտ զարգացումը աւելի և աւելի ընդարձակելու։ Նա իր ամէն եռթնեակ, ամէն օր ի վենետիկ ուղղած հոգեշունչ նամակներով, կրակոտ վայելուչներով և սիրայորդոր թելադրութիւններով կը յաջողէր յարուցանել այն տեղ արժանաւոր գործակիցներ, որոնք են Հ. Գրիգոր Վ. Խապարաճեան, Հ. Մատաթիա Վ. Փիւսկիւլճեան Հ. Մանուէլ Վ. Ջախջախեան և Հ. Խաչ. Վ. Սիւմէլեան։ Եւ վերջապէս 1812 թուականին լոյս կը տեսնէր ի Ս. Ղազար — Հ. Գրիգորի խմբագրապետութեամբ — կիսամսեայ և կենցաղօգուտ մի այլ թերթ, այսինքն է՝ Դիտակ բիւզանդեան։ Թերթիս նիւթը կը կազմէին մասնաւորապէս ժամանակի նշանաւոր դէպքերը, այսինքն են Նապոլէոն Բոնապարտի գործերն և անոնց՝ իրրեւ անմիջական հետեւանք՝ Եւրոպայի մէջ յառաջ բերուած քաղաքական և այլ յեղափոխութիւնները։ Ռազմական, բանաստեղծական և բարոյական ճիւղերն եւս երթալով կը մշակուէին այդ աշխարհաբար գործիքով. յորում յաճախ գրաբարն եւս կ'ընկերանար, գնելով առ ընթեր և ջամբելով ուսումնասիրաց նաեւ աշխարհաբար թարգմանութիւններ՝ բարոյական ոտանաւորներու։ Միով բանիւ՝ թերթիս նպատակն էր՝ ամէն բանով նպաստել ազգային զարգացմանը։ Ասոր ինչպէս Տաբեգրութեան՝ աշխարհաբարի, այսպէս այլ Դիտակ բիւզանդեան ալ կրնանք ըսել, թէ եղաւ անդրանիկ քաղաքական լրագիր Տաճկահայոց։

Դիտակ բիւզանդեան իր գոյութեան առաջին տարին իսկ — համաձայն Ինճիճեանի Յուլիս 25 գրած նամակին — 1500–3000 բաժանորդներ ունեցած է. զի 12 դեղեցիկ պատկերներէն զուրս, որոնք կը զարդարէին զայն, խնամքով պատրաստուած ճոխ պարունակութիւն իսկ հետ զհետէ չահագրգիռ կը դարձնէր զայն։ Տիւրեան և այլ Ձէլէպիներէն սկսեալ՝ բոլոր Չարչհանացիք, և գպրոցականք և արհեստաւորք և վաճառականք կը կարդային զայն անյագաբար։

Թերթիս գործած առաջին ազատութեան հետ՝ կարեւորութիւնն եւս ակներեւ ընելու համար՝ ի դէպ կը համարինք մէջ բերել Հ. Գուկաս Ինճիճեանի — ի 25 Հոկտ. 1812 — Կ. Պոլսէն առ Հ. Խաչատուր ուղղած նամակէն հետեւեալ կտորը. « Ոչ կարեմ պատմել զուարթութիւն իմ և ժողովրդեան՝ ի հասանել առ « Դիտակի բիւզանդեան ». պարտ էր առ լինել Հ. Գրիգորն և տեսանել գառն Տիւրեանց դարձեալ իրր Եւրոպա, յորժամ յառաւօտս կիւրակէի տարի ի տուն նոցա Ենիքիւղիւր ժողովեալ էին և՛ առն Փեղրաքեանց և այլք, ժողով բազում ի տեսանել զպատարագ. իւրաքանչիւրոց առեալ մի մի թերթ՝ փոխանակ պատարագ տեսանելոյ՝ եղեն մի մի ընթերցողք, որոյ պատճառաւ յապուշեաց յոյժ պատարագն։ Այնչափ եղեւ հաճութիւն ամենեցուն, զի և այն որ ոչ գրեցաւ ի յընկերութիւն, այլ մանաւանդ հակառակէր, որչափ և ատիպէին ի գրել, խակ և խակ գրեցաւ. քան այժմ ամենեքեան որք ընթերցան՝ հաճեցան, և զմեզ գովեցին յոյժ, իրրեւ արդիւնաւորս ազգին։ Ա՛ր ձեացին մեր բազմահասոր գրեանք խնամով աշխատասիրեալք, մի կամ երկու անձն

հոգիս գոռանի սիրով ընթերցող և գովող՝ յորժամ Հառաներն ասա. իսկ այս բերդիկ՝ մարթ է ասել՝ դղրդեաց զՊօլիս. տեսին և՛ գօրեձեաձք, և յոյժ զարմացան. նաեւ ի Յուլեաց՝ և յոյժ գովեցին։ Զայս ամենայն ընթերցիք յականջս Հ. Գրիգորի Խոտարեաձեան՝ առ ի քաջալերել. նաեւ յականջս այլոց՝ առ ի յընթեռնուլ նմա. քանզի ինձ յոյժ պատչաճ թուի ընկերել և՛ գՀ. Յարութիւնն, առ ի հանել բազմազգի և նորագոյն լուրս ի գաղղիական կապէդից »։

Յ՝2 Դեկտեմբերի գրած նամակով կը ծանուցանէ, թէ ինչպէս այդ թերթով բարձրացաւ Արշարունեաց ընկերութեան վարկը, և թէ քանիք յաւելցան ի նոյն, ազապէս. « Նոր ընկերութիւնն բանսարկաց՝ որ իբր ի ծածկեալ էր ի քաղաքիս, յետ գաղտնեան Դիտակաւ բիւզանդեաւ՝ կարի լաւ հաչակեալ եղեւ, և գովեալ ի բազմաց. մինչեւ նաեւ ի գօլէճեանց սկսան մատչել բարեկամանալ ընդ Տիւզեանս և ընդ Զարբհանացիս՝ որք են հիմնադիր ընկերութեան. յորս մանաւանդ Քաղխանդէն անձնամատոյց գինքն կացուցանելով՝ վասն ազգին՝ զրով աշխատել խոտանալով, և այլն։ Յայտնեալ եւ զրոյց ի մէջ Զարբհանացւոց և Քաղխանդէին՝ տպագրել տալ նաեւ գՇտրակինոցն, խոտանալով ինքնին գրել և չատագովել [1] զչատագովելիան, միայն թէ մեք ցուցցուք նմա գրբագրութիւնն Բարզի, և այլն. յայտնեալ եղեւ հետեւութիւն՝ բերել տալ ի վանաց զչատագովութիւնն, որպէս զի զայն ունելով առաջնորդ՝ գրեսցէ »։

Իսկ Հ. Ներսէս Այտընեան՝ Պաշպալովէն գրած նամակի մը մէջ կ՝ըսէ, թէ « Ցուցի ամենեցուն « գԴիտակ բիւզանդեան », յորոց միջի ազգասէր Ա. վարդապետն Էնկէլեան էառ զմի թերթ, զի տարցէ ընդ իւր ի մեծ Մահմուք, եւ ցուցցէ Թագաւորաց, եթէ որպիսի գործ Միաբանութիւնն մեր առնէ »։

« Դիտակը » հետ զհետէ կը բազմապատկէր իր ծաւալը — 1813էն սկսեալ, — և չնայելով գնոյն ազութեան, 40 զուռուշ (!), կը տարածուէր ի Դրանսիլվանիա, ի Մօլտովալաքիա, և Հայոց նոյն իսկ հեռաւոր գաղթականութեանց մէջ, իբրեւ վէնետկէն եկած թեւաւոր մի, որ մերթ խաղաղաւէտ գիտութեանց ճիւղեր կը բերէր իրենց, և մերթ եւրոպական պատերազմաց և գինուց արձագանգները կը հնչեցնէր։ Ինչպէս « Դիտակ բիւզանդեան » Հայոց, այսպէս այլ Գէլիդրաֆոս Էլլենիկոսն ալ Յունաց միակ լրաբերն էր։ երկուքն ալ մի և նոյն ժամանակ կը հրատարակուէին, հետեւաբար իրարու հետ մրցման մէջ էին։ Սակայն Ինճիճեանի տեղեկութեանց համաձայն՝ ինչպէս « Եղանակով » Հրէից « Գուշակութիւնը », այսպէս և « Դիտակի » հազորդած թարմ և ճիշդ տեղեկութիւններով հեղեռնական « Դէլիդրաֆոսի » փայլն և փառքը կ՝անչքանային յոռետես։ Եւ այս ազգասիրական պարծանօք է՝ որ Արշարունեաց ընկերութիւնը 15ական եւրոյով ամէն արձաններով կը խրախուսէր « Դիտակի » ազգանուէր և անխոնջ խմբագիրները, Տիւզեան Յակոբ և Մկրտիչ չէլէպիներու՝ առ Մխիթարեան վարդապետս գրած կրկին նամակներով։ Հաւատոյութեան համար բաւական կը համարինք մեք՝ միայն դնել այս տեղ, ի խթան և ի խրախոյս նոր Մեկենասներու։

Գերիւսատ և Մեծապ. Տէառն Վեր. Հ. Խաչատուր վարդապետի
ողջոյն յարգական և հարքոյր աջոյն.

« Զյարգ և զպատուականութիւն մեծարեալ անձինդ անսուտս ուրեմն եւս քաջա-
« ծանօթ լեալ տեսանէաք, այլ այժմ գերագոյ ոգւոյդ փոյթեռանդն արթնութիւն, և
« հայրենասիրութեանն ի ձեզ գեղեցիկն բորբոք, լաւ եւս եառն մեզ խմսատասիրել,
« յառաջ քան զմարմնոյդ՝ հոգւոյդ ընկալեալ զտեղեկութիւն [2]. զի ընդ առաջնոցն
« հայրենասիրաց ընթացեալ ընդ անսատերիւր հետս, ընդ սխրալի անուանն, և զգերա-

---

1. ի հարկէ ինչպէս Դանայեցիք՝ զՏրոյացիս։

2. Այս խօսքերովս երբեմն խորնոյ Ներսունին էր, որ կը դրուատէր իր Մեկենասը՝ Սահակ Բագրատունի. իսկ այժմ նոր ժամանակաց գոյգ Մեկենասներն են, որ իրենց իշխանականին հատատար նաեւ ուսմամբ պերճացեալ, նման Բագրատունւոյն, կը գովեն և գգուեն իրենց և ազգին վաստակաւորները։ Նագարեանները ունեցան արդեօք այսպիսի Մեկենասներ, նոյն իսկ 1848 թուականին։...

« փայլ նոցուն բարուց բարձեալ բերէք յանձին տիպ. քանզ գիտելով եթէ զինչ այլ
« քաղցր քան զհայրենիս, և զինչ այլ քաղցրագոյն՝ քան զջանասաստակն տքնութիւն
« ի սէր հայրենեաց, որոյ հրաբորբոք սիրոյ գեղանշոյլն բոց՝ ակներես ի ձեզ արտա-
« փայլէ: Ոչառի և մեք պարտս վարկուցեալ՝ աւձկատիք, գնայրենասիրացն ի ձեզ կատա-
« րել զգեղափայլ յաղթանակ, ոսկի արձանիւս յարգեալ զանձն արժանապատիւ, որոյ չանիք
« և փոյթ ևն յօգուտ եւ ի սէր հայրենեաց. ահա ի ձերդ արդեանց բեղմնաբեր արգա-
« սուրեանց բողոքեալ պատակ անթարշամ կապեմք ձեզ ի գլուխ. զի անձանձիր փուբով
« ձգնեալ ի բարեպաշտութեան ազգիս, և զմերոյսն սրտի անձնատուչդ անձկութեան բաշա-
« կանացուցեալ, յաւետեանի գոնս և խնդասէտս գրնզ կացուցէք:

« Եւ քանզի աչխատասիրութեան ձերոյ նախընծայ բերք՝ եռուն մեզ իմաստասի-
« բել գյետագայիցն յառաջադիմութիւն, ուստի և մեզ ոչ այլ ինչ միայ ձեզ առնել
« առաջի խնդիր, բայց եթէ փութալ հանապազօր զսկսեալս գործ ի լաւ անդր ձկտե-
« ցուցանել. և ըստ կարի առաւելուլ օր քան զօր գրիւ բերրից Գիտակիս, զի այդ իսկ
« է մեր բազմատարփ բաղձանք:

« Ընդ վերջաբան ասակաւատող գրութիւն թղթոյս՝ ընծայեմք ձեզ զայս մեր չնչին
« նուէր ընկերութեան. ոչ իբր զուգահաւասար ձերոցդ բազմարդիւն վաստակոց, այլ
« միայն ի յայտնել ձեզ զմերս մտերմական սէր առ Յարգութիւնդ: Ողջ լերուք,
« Յարգելի Սրբութեանդ ըղձանամբ լինել

Խոնարհ ծառայքս

Ն. Ծ. ՅԱԿՈԲ տիգ.
Ն. Ծ. ՄԿՐՏԻՉ տիգ:

1813 Մարտի 25 ի Պոլիս:

Այս համակիչ հրատարակութեանցս գործած գիտական ազդեցութեան արդիւնք է « Աբշարունեաց » գրասէր ընկերութեան և մամլոյ հաստատութիւնը, զոր յամին 1810 յաջողեցաւ կազմել Հ. Պօղ. Վ. Ինճիճեան [1] հետեւեալ զեղեցիկ ծրագրով: Այսինքն է՝ հայիհայել դրամագլուխ մը, և այդ գլխու չահով ընկերութիւնը իրաւունք պիտի ունենար նոյն իսկ իւր անդամներէն յօրինուած կամ թարգմանուած կենցաղօգուտ նոր գրուածներ եւս հրատարակել, եթէ պատչաճ դատուին:

Իսկ կազմութեան եղանակի և արդիւնքի մասին՝ կը թողում Հ. Ինճիճեանին [2], որ նկարագրէ իւր վառ գրչով:

« Բազում անգամ գրոյցք լինէին, բաղձանք ելանէին ի սրտէ՝ կարգել որոչ եկամուտ ինչ տարեկան վասն միոյ դօքթօրի (մամլոյ), ասելով յայնժամ զինչ և իցէ մատեան ի լոյս ելանէ յազգի մերում, և ոչ լինիմք կարօտ ապաւելոյ ազգին, արդեօք առնու՞, թէ ոչ: Հաչիւ այսր եկամտի որոշեցաք մեք 15 քսակ յամին՝ հանդերձ ծախիւք թղթոցն: Այս իղձս բորբոքեցաւ (թելադրութեամբ Մխիթարեանց) ապա ի տուն Տիւզեանց, և ի տպարելոյ երկուց մանկապրդիս չէլէպեանց, որ է Յակոբն և Մկրտիչ, որք նախ յիւրեանց տանց գրել եռուն մեծ ինչ գումար գրամոց: Յանձնեցաւ ապա այս օգտակար գործ ի Գրիգոր չէլէպիէն առ պր. Աքանեան, որ խոստացաւ և հաւատաց արար ի մուհարրեմի՝ կարել ժողովել ատաի և անտի այնչափ գումար, որոյ եկամուտն բերցէ 15 քսակ. և այսպէս երկու տեսակք մարդկան եղեն վերատացուք գործոյս՝ ծեր և մանուկ, բարեխառնիչ միմեանց: Յայսմ միջոցի բազում բանք գրգռիչք առ ի մէնչ՝ ի ցուցանել զպտուղս օգտակարս, զորս կարէ բերել այն օրհնեալ անխոնջ մշանջենաւոր գօքթօրն՝ պարարեալն 15 քսակօք: Մինչդեռ այսպէս օր ըստ օրէ բորբոքէր եռանդն, բազմանային ընկերք գրօղք՝ ի տալ գրամս, և ոչ միայն,

---

1. Յիրաւի, Հ. Պօղոսս ի 25 Մարտի 1813 առ Հ. Խաչատուր Սիւրմէլեան գրած նամակին մէջ, կ'ըսէ որոշակի, թէ « Ամենքին գիտեն, թէ այս ընկերութիւն, որ է նոր ինչ, ի հնարելոյ եւ ի սպրելոյ մեր է. մինչեւ երկուք ի տիրացուաց ի տեսանելն զայս նոր կազէդային, գլուխ բացեալ՝ այնպէս օրհնէին զմեզ, իբրեւ զհնարող ընկերութեան. բայց մեք առ այժմ դիտմամբ հետի ցուցանեմք զմեզ »:

2. Նամակ ի 10 Օգոստոսի 1810:

բայց եթէ ժողովել դրամս. ահա խոխանիչն առաւն՝ հակառակութեան յարոյց գնաւ վաստակ դրամն հեղեղ մխաբանութեան, որ չիջոյց զայս բորբոք, նաեւ զխօսս, յետ ի գերեւ ելանելոյ մխաբանութեանն, սակ և հուր, յետ ամենայնի համաչխարհական փոփոխութիւնն զհետ եկեալ ի լոյս ճանապարհորդութեան վեհին՝ ի սպառ չիջուցին զբերա ծերոյն Ա֊թանասի, ասելով. Այժմ այսպիսի բաներու ժամանակ չէ: Բայց մեք և մանկապոյն չէլէպիքն գրգռելով, թէ արագութ գոնէ որչափ կարելի է այժմ, սկըսան ժողովել զդրամս, յոր իբր 12 հազարք են ի տանէ Տիւզեանց, ընդ ամենայն առ այժմ իբր 20 հազարիւ չափ ի ձեռին են. որոյ չահն ունի առաքել այդր, և օր ըստ օրէ ունի առաւելուլ գլուխն:

Իդէան վասն այսր գործոյ է այսպէս. Այս գործս պարտ է համարել իբր մյլ. այսինքն՝ զոր ինչ մատեան կամի տպել Հասարակութիւնն՝ տպեցէ այլով իւր ծախիւք, որպէս մինչեւ ցայժմ առնէր, իբր յայլում գործոյ, հանելով զհոգեւոր գրեանս, զմեկնութիւնս, և այլն. իսկ տովին եկամտիւ տպեցէ, զոր ինչ կամի ազգն, և որում կարօտի առաւել, որք են ուսմունք, գիտութիւնք յամենայն կարգի: Եւ գտուս գրգռեցի առաւել, առաջարկելով՝ ի լոյս հանել իբր Գրատուն (Biblioteca) ինչ ամենայն տեսակաց գիտուրեանց՝ ի պետս առանձինս ոչուռք՝ միակերպ տպովք և դրիւք տպագրեալ, բոմանդակեալ յ200 հատորս, հաշեւով աշխատասիրեալս, որով ոք զամենայն գոցէ ի նուազ հատորս. որով յոյժ գրգռեցան մանկարիւն չէլէպիքն: Յետ լրանալոյ այսր՝ միակերպ տպիւք տպագրել գգործս հեղինակաց մերոց որչափ ինչ գտանին ի ձեռին, թէ տոցէ ազգն, թէ ոչ: Բայց առ այժմ սկսանելով ի փոքունց, և որոշ ինչ կամելով ի լոյս հանել, փափաքին զայնչափ բաղձացեալ կազէդան Գիտակ բիւզանդեան, յորում խառնելով և գերասս ինչ, մինի վասն ամկին մեծ առիթ ընթեռնելոյ և տաչվելոյ ի խոպայութենէ իւրմէ », և այլն և այլն:

Մի ուրիչ նամակի մէջ, այն է 10 Յունիսի 1812 գրուած, Հ. Ղուկաս ընդարձագոյն կերպով կը նկարագրէ ընկերութեանս հաստատութեան և սկզբնաւորութեան, անոր դէմ ելնող արգելքներուն, իրեն թափած ճիգերուն և վերակացուին պատմութիւնը:

Իսկ Տիւզեան երիտասարդ Մեկենասներն՝ Յակոբ և Մկրտիչ չէլէպիք, ի 10 Ապրիլի 1812, Ագոնց Աբրահօր գրած բարձրաթռիչ նամակով [1] այդ գործին հաստատութիւնը տեղեկագրելով՝ երկու բան կը խնդրեն. Ա. որ իւր բարձր հեղինակութեամբ հաճի հաստատել Հ. Ղուկասու ընտրութիւնը, իբրեւ հոգաբարձու և իւնւարակալ այդ ընկերութեան. Բ. ընտրել ի Ս. Ղազար և ի Պօլիս դաս մի ներհուն և բանիբուն վարդապետներու, որոց իւրաքանչիւրը մշակէ և պատրաստէ իւր մասնագիտութեան վերաբերեալ գրութիւններ կամ թարգմանութիւններ:

---

1. Կ'արտագրենք այս տեղ այդ նամակը, խնդրոյն նոր լոյս տալու և հետաքրքրութեան համար:

Արիւապատիւ եւ երկնահանգետ Արիւեպիսկոպոսի՝ Ստեփաննոս բաբուենապետի բազմահնար յարգանաւոք ողջոյն սիրալիր ի հարիւրոյր արբասանեալ աչոյ.

« Թէպէտեւ անտուստ ի վերուստ անձախական իմն լոցով գեղեցիկ մոլութեան վառեալ արծարծեաք յանձինս, զհայրենասիրութեան ի գլուխ տանել շքեղաշուք պատկ, և զբարեփառ նշան, և յաւերժայիշատակ արդեանց ի հանդէս բերել առաքինական ինչ գործ, որով և աստար իսկ լինել և սկզբնապատճառ յոգնանշոյլ պայծառութիւն՝ խաւարաբնակ ազգիս, զբազմադիմի ումանց և մակացութենանց հորդեալ նոցին զանմոլար շաւիղ, և զբանասիրութենանց բացեալ նոցին մշտահոս աղբիւր, յորմէ գլխովին պատքեալ կան և ծարաւահոյծ. այլ քանզի տարագէպ արկածք բազմավրդով քաղաքական ելից մի ըստ միոջէ փոխանորդեալք խոչընդոտն եղեն ի լրումն յաջողման յառաջադիր նպատակիս, յայն սակս և մեզ յանհնարին եղեւ, մանաւանդ թէ և անհամարձակելի յայնժամ գլխալիր մերոյ տենչանաց զթերակատար խորհուրդ մատնանշան ծաղկեցուցանել:

« Գերատիճանեալ վեհիդ, այլ այժմ գիպօղ ի ձեռս բերեալ և ժամանեալ ի կէտ լրման տարփանաց սրտի, ախորժական բերմամբ զանձն ի ներքս արկաք՝ սակաւագիծ գրութեամբ քարտիս յայտ յանդիման մերկանալ Աստուածապատիս. Չօրդ զառ ի բազմաց հետէ ցանկացեալ մեր խնդիր և փափաք, որում ցարդ թերեւս ի վերայ հասեալ է Ձեր: Իրրեւ զի՝ մեր աստանօր համամիտ խորհրդով (ազգասիրութեան առեմ և ուսումնասիրութեան) ի մի հաւաքեալ զոմանց մերազնէից, և վառել զնոսին եւս հայրենասէր նախանձու, կազմեցաք ընկերութիւն ինչ սակաւամբիւ, և ինքնակամ նոցին հաճոյիւք գումարեցաք գլուխ ինչ դրամոց, այսու պայմանաւ և դաշամբ, զի ըստ չահու այնր դրամոց տպեացին անդ ամ ըստ ամէ միայն գիտնական եւ բանասիրական գրեանք. և այս նախ ի պետս ուսումնասիրաց ազգիս, և ապա յօգուտ միաբանութեանն վանացս: Եւ այսր գործոյ հոգաբարձու եւ խնամակալ պատշաճ դատեցաք մեք աստանօր կարդել զՎ. Հ. Ղուկաս ինճիճեան վարդապետն, որ ըստ մերումս ճանաչման հմուտ է յոյժ և վարժ այնչափ յիմաստասիրականս, որչափ ի բանասիրականս: Զօրոյ ընտրութիւնն ի բարեսէր կամս ձեր ունիմք ապաստան, գիտելով

Հ. Ղուկաս ընկերութեան Հոգաբարձութիւնն սոսկանձնելէն վերջ՝ կը կրկնապատկէ իր գործունէութիւնը. նա ամէն օր նամակ կ'ուղղէ դէպ ի Վենետիկ, միշտ նոր խորհուրդ և ճանապարհ ցոյց կու տայ զարգացման։ Նա է իսկապէս հոգի և կեանք, և անով է որ Աշխարհնաց ընկերութիւնը կը չարժի և կը գործէ։

Նորա առաջին երկու տարիներու գործն է «Բիւզանդեան դիտակը», որ ձեռք ձեռք կը յափշտակեն Չարիհանացիք։ Հ. Ղուկաս ի 10 Յունուարի 1813 գրած նամակին մէջ կը ծանուցանէ, թէ ընկերութիւնն և ընթերցողաց թիւն օր ըստ օրէ կը տուարանայ, և թէ չահու գրուած գրամագլուխն հասած էր 70 քսակի։ Նոյն նամակով յղած ընկերութեան Յայտարարութիւնը կը փութացնէ որ 3000 օրինակ տպուի, և պատով չուտ իրեն յուղարկուի։

Յայտարարութեանս տպագրութեան ժամանակ որովհետեւ Տպագրապետը փոփոխութիւններ ներմուծած էր, առանց Ինճիճեանի գիտութեան, և հակառակ նորա դիտաւորութեան, ուստի այդ իսկ պատճառաւ չկրմ ընդհարումն տեղի կ'ունենար սորա և Հ. Խաչատուրի միջեւ։ Հ. Ղուկաս կը համոզէ Տպագրապետը որ վերստին տպագրէ նոյնչափ օրինակ (tale quale l'originale) և յղել, վասն զի առաջինը չկարէ ինք ներկայացնել ընկերութեան։

Այս մասին ծերունի գործիչին, վիշտը փարատելու համար, վանքին կողմէն իրաւունք կը տրուէր, և Հ. Գրիգոր Խապարաճեանին եւս կը պատուիրուէր, նորա տպագրութեան յուղարկուած գրութիւններն ըստ կամս չաղաւաղելու։ Ուրիշ առթով մը Հ. Ղուկաս կը գրէ, որ բոլոր աշխարհ Վենետկեան վանքը կը ճանչէ այն գրուածոց իրրեւ բուն հրատարակիչ, և կը գովէ զանոնք. ընկերութիւնը միայն նպաստող է գրամով։ Յիշեալ նամակով կը փարատէ մանաւանդ ամենայն թիւր կարծիք, հակառակող որոնցոյնեներուն վերագրելով այն քաութիւնները՝ իրրու այն, թէ Աշխարհնաց ընկերութիւնը կ'ուզէ ոչնչացնել կամ փոքրկացնել Աբրահամեց արդիւնքը։ Միւս կողմէն այլ չերմագին կը յորդորէ Վենետկեցիները, որ փուճ ու մուճ խրճիթներով չի խրտչեցնեն ընկերութեան անդամներն և անդամ գրուիլ ուզողները. այլ մանաւանդ իրեն պէս խրախուսեն եւս զանոնք, որպէս զի հետ գհետէ աճին և բազմանան. և թէ այդ կերպով մեծ օգուտ պիտի քաղեն թէ ազգն և թէ Միաբանութիւնը։

Տարակոյս չկայ, որ Միաբանութիւնն ինչպէս Հ. Ղուկասի հրատարակութեան և հաւատարմութեան, այսպէս այլ Տիւգեան չէլէպիներու վրայ ամենամեծ վստահութիւն ունէր. բայց որովհետեւ այդ ընկերութեան մէջ կարող էին գտնուիլ նաեւ հակառակորդներ, և ապագայում վիշտ պատճառող ապաշնորհներ, ուստի իրաւամբ նախազգուշութիւններ ձեռք կ'առնոյր։ Իրաւացի էր ըստ իմիք նոյն իսկ ընկերութեան

չափ՝ զի և մերս յոժարակամ ընտրութիւն չունի անտես լինել ի գերապատիւ Հարձրութենէ Ձերմէ, յոյր սակս իսկ և զլխակատար ծանօթութիւն հանգամանաց յառաջադիր գործոյս յանձն արարաք նմին յարգելով՝ գրով ծանուցանել Ձեզ մի ըստ միոջէ, ըստ որում կամք են մեզ։

« Կարեւոր համարիմք գրել առ Գահագլուխ Հայրդ հաւատարկաց և՝ զայս ինչ. զի եթէ հնարաւոր ինչ իցէ զուգակշիռ մերումս տարփանաց և ընկերութեան, ընտրեսցի ի բարեհամբոյր ակնարկութենէ Ձերմէ սակաւաթիւ ինչ դաս առաւել ներհուն և բանիբուն անձանց, որոց իւրաքանչիւր պարապեսցի միշտ ի գրութիւն կամ ի թարգմանութիւն այնց գիտութեանց, զորս ուսեալ իցէ անդաւոն ի մանկութենէ, կամ յորս հակամիտեալ ի բնէ, որպէս զի գրեանք ի լոյս ընծայելոք՝ յո՛ր նիւթ և իցէ, ըստ կարի կատարելագոյն լինիցին, որով և առ սակաւ սակաւ լուսաւորեսցի ազգ մեր իւրեւ զերծոպեանս, որ գխաւխին խարխափեալ կայ ի խաւար մշտագիշեր մթութեան։

« Ունեալ մեր եւս և, եթէ յետ սակաւուց ունի տպագրել և փրոնիկոնն Եւսեբիոսին երրեակի լեզուաւ, ուրախ եղաք յոյժ. քանզի այս ո՛չ միայն պարծանք նախնի թարգմանչաց ազգիս, այլ և առաւել եւս պիտ մուս ի լոյս ընծայողաց բազմաքիրտն վաստակասիրութեամբ. այլ առաւել եւս ուրախալի լիներ մեզ, և օգտակարագոյն վանաց. և որ միանգն է առաւել հռչակաւոր ի թանկագին գործ առ եւրոպեանս, եթէ յաւելեալ լիներ ի նոյն և թարգմանութիւն գաղղիական լեզուին, որ այժմ առաւել սովորեալ և պատուաւոր լեզու համարեալ է քան զամենայն լեզուս որք միանգամայն ի գործ ածին Եւրոպա, եթէ ի դիւանագիրս արքունեաց, և եթէ ի հաղորդակցութիւնս վաճառականաց, որում և ձերդ Արբութիւն քաջածանօթ է։

« Ի կնիք վախճանի բանիս հայցեմք զարդիւնաշատ օրհնութիւն շնորհաձիր ձեռացդ ամենայն տամբք ողջ լերուք յամս ձիգս խաղաղաւէտ կենդանութեամբ »։

Գերապատիւ բարձրութեան ձերում

Ն. Ծ. ՄԿՐՏԻՉ տպ.

Ն. Ծ. ՅԱԿՈԲ տպ.

1812 Ապրիլ 10 քան յատ.

պահանջը՝ հրատարակելիք գրուածոց որակի և տեսակի մասին, քանի որ ինքն էր տպագրութեան ծախքը հայթհայթողը։ Յաւելնայն դէպս՝ վերջապէս երկու կողմերը վերայ պիտի հաւկանայինն՝ բարերար գործը շարունակելու համար, քանի որ եռանդուն և լուսամիտ Հ. Ինճիճեանը երկու կողմէն հաւատարիմ թարգման և մղիչ հանդիսացած էր, և՛ քաջածանօթ թէ՛ վանքիս և թէ ազգին հասկացող դասին։ Ուստի Աբշարունեաց կամ հրատարակութեանց նպաստող ընկերութեան և հրատարակուած գրուածոց բոլորական պատմութիւնը թողով ուրիշներուն, մենք այսքանս կ'եզրակացնենք, թէ 70–80 տարի վերջ Տփղիսում կամ այլուր վերսկսող գործը, նոյնչափ տարի յառաջ արդէն Մխիթարեանց, բայց ի մասնաւորի՝ Հ. Ղուկաս Ինճիճեանի նախաձեռնութեամբ հաստատուած էր, և ահագին օգուտներ տուած. և այն իսկ բիւրապատիկ դժուարութեանց և աննպաստ ժամանակի և պարագայից մէջ։ Հաւատիկ մի անմոռանալի յուշարձան Հ. Ղուկաս Ինճիճեանի գործունէութեան։

* * *

Այս պարբերական թերթերէն զատ՝ ուրիշ կենցաղօգուտ գրուածներ եւս — գրեթէ միաժամանակ — ամէն տարի հրատարակուելով՝ գիտութեան և գրականութեան նորանոր աղբիւրներ կը բղխէին ազգին։ Ես գոնց կ'ընեմ խօսել այս տեղ «Շարականաց բացատրութեան» և «Նարեկացւոյ» հետ՝ նաեւ Ս. Գրոց աշխարհաբար պատմութիւնը, «Պօղոսի Թղթոց Մեկնութիւնը», որ Հ. Գաբր. Ալեպիքեանի գլուխ գործոցն է, Զամչեանի «Նուագարան օրհնութեանց», և բոլոր այն հոգեւոր և բարոյական հրատարակութեանց վրայ, որոնք մեր ներկայ նիւթին չեն վերաբերիր։ Յամին 1801 և 1814 կրկին տպուած Ինճիճեանի Պատմութիւն չորքոտանեաց և Հ. Սամուէլ Սամսարեանի 1815 տպ. Պատմութիւն թռչնոց պատկերազարդ և աշխարհիկ գրքերով կ'ուսուցուէր կենդանաբանութիւնը՝ ժամանակին աւելնաթափառ նորութիւններով։ Հ. Եղիա Թոմանճանեանի Դպրութիւն նահապետ, տպ. 1805 կ'ուսուցանէր գրաբար և աշխարհաբար նահապետութեան աւելնակարեւոր հրահանգները, բազմապիսի օրինակներով։ Նորութեան հետ՝ չատերուն մոռացած ձեռնաւորութիւնն իսկ զգալի կ'ըլլար անակնկալ կերպով։ Եւ իրաւամբ որու մասին կը գրէր վանուց ժամանակագիրը, թէ «Որով յայնմ հետէ և առ յապա ուսաւ ազգս գնահատութիւն՝ իբր ի վարժապետէ»։ Յամին 1810 տպագրուած Հ. Յակոբ Սահիանեանի Տետրակ աշխարհի գեղեցիկ երկասիրութեամբը — զոր Հ. Միք. Զամչեան «գլուխ գործոց» կը կոչէ — կարեւորութեանը համար — ամէն օգտակար ծանօթութիւններ կը մատակարարուէր՝ ժողովրդեան՝ բնական իրաց, կենդանեաց և իմացական բնութեան, այսինքն՝ մարդկան և հրեշտակաց վրայ։ Յամին 1814 տպագրուած Ինճիճեանի ութ հատոր աշխարհաբար Դարապատում կը դնէր ազգին առջեւ ոչ միայն եւրոպական աէրութեանց 50 տարուայ քաղաքական և անտեսական կեանքը, բոլոր նշանաւոր դէպքերով, այլ և նոյն ժամանակի գիտութիւններն և արուեստքը, և անոնց մէջ նշանաւոր հանդիսացող անձնաւորութեանց նախանձելի պատմութիւնը։ Իսկ նորա 1815 թուականին լոյս տեսած Ազգաւէր բարոյական երկասիրութիւնը՝ նորահրաշ աւիւնով և ներշնչութեամբ կը բորբոքէր ճշմարիտ ազգասիրութեան հուրը նոյն իսկ հեռաւոր հայ գաղթականութեանց սրտի ատրուշաններուն մէջ, օրինակաւ անձնուէր ժեծանուն հայրենասիրաց։ Դա ոչ միայն գործնական հետեւանք էր Դարապատումի, այլ և տիրապէս Հայրենապատում. վասն զի կը պարունակէը անոր ամենէն նուիրական բանը՝ Սիրտ։

1809 թուականին Հ. Ղուկ. Օղուլուխեանի ժեծահատոր մատեանը՝ Նաւոդորութիւն[1] — տպ. ի Վենետիկ — կ'ուսուցանէր ոչ միայն ուսումնական, այլ և գործնա-

---

1. Կ'երեւի, թէ 1808ին երբ Օղուլուխեան կը պատրաստուէր տպագրութեան տալ այս գործս, որուն վրայ 18 ամիս աշխատած էր հեղինակը, Հ. Միք Զամչեան կատակով կծած էր գինքը, որ կեանքը այնքան տարի առաքելութեան գործնական ասպարէզին մէջ անցուցեր էր և արդիւնաւորեր վերջ, Ս. Ղազար դառնալէն յետոյ այնպիսի մի երկասիրութեամբ կը զբաղէր, որը դեռ ապաժաման և անտեղի կը թուէր իրեն։ Ուստի Հ. Ղուկաս յղի Հոկտեմբերի այդ առթիւ գրուածախառն բանիւք պատասխանելով հետաքրքրական տեղեկութիւններ կը հաղորդէ իր երկասիրութեան մասին։ «Երկասիրութիւնն իմ — կը գրէ

կան նաւարկութեան և նաւաստիութեան արուեստը, գծելով նշանակաց, ծովերու և հառանողաց գեղեցկատիպ պատկանները։

Հ. Իգնատիոս Փափազեանի Աղուեստ գծագրի քնդօրինակութեան — տպ. 1815 — և Աղուեստ վանդակարի — տպ. 1813 — կու տային ազգին ուսումն գծանկ նկատ բագրութեան, լուսատուներ արհեստի, և մանրանկարչութեան այլ և այլ առարկայից։ Յամին 1810 տպուած Հ. Սահակ Պռոնեանի երկամասն, այսինքն է՝ մակարդակ և գնդական Եռանկիւնաչափութիւնք՝ տեսական և գործնական կերպով կը սորվեցընէր՝ չափել լերանց, աշտարակաց և ամեղաց հեռաւորութիւնն և բարձրութիւնը։ Այսպէս եւս անոր յամին 1794 տպ. եռամասն մեծ Երկրաչափութիւնը — որուն տպա 1817ին կը յաջորդէր Հ. Իգն. Փափազեանինը — կը մատակարարէին երկրաչափութեան, մակարդակչափութեան և հառատաչափութեան ուսումը, տեսական և գործնական ոճով։ Հ. Մինաս Բժշկեան՝ յամին 1815 հրատարակած աչխարհատար պատկերազարդ գրքովը կը ներկայացընէր հայ պատանիներուն Գիտութեանց ձեռնարանը, որը չուտով ապառելով, 1818ին կրկին կը տպագրուէր ի Վենետիկ։ Իսկ Հ. Իգն. Փափազեան 1826ին հրատարակած Պատմութիւնք նահանգաց, և 1824ին լոյս տեսած Երկրաչափութեան գործերովը — որ կը պարունակէին 351 նամանդներ և փոխանակագրոց, խոստովանագրոց և անդորրագրոց վերաբերեալ հրահանգները — կ'ուսուցանէին կանոնաւոր տետրակ բռնելու կերպը և վաճառականութիւնը։ Յամին 1806 ի Վենետիկ տպագրուած Օգուտ ուխտի Յովակիմ բժշկի Բժշկական ձիւթերով, և յամին 1822 տպուած Միքայէլ Բէսաէնի Բժշկաձեւութեան երկհատոր պատուական հրատարակութեամբը կը զեղուին ժողովրդեան մէջ գործնական բժշկականութեան և առողջապահութեան ամենակարեւոր գիտելիքներ, և բժշկական բառարան մը։ Յամին 1817 Հ. Խաչատուր Սիւրմէլեանի մեծ Թուաբանութիւնն, որ երկրորդ անգամ կը տպագրուէր, ինչպէս ասկէց յառաջ Հ. Սուքիաս Ամասիացւոյն ճոխ հրատարակութեամբ ալ կ'ընծայէր Միխիթ. Միաբանութիւնը նոյն նիւթին ընտիր դասագրքերը։ Յամին 1821 տպուած Հ. Յարութիւն Ազգերեանի Հին չափուց և կշռոց բացատրութեամբը, և Հ. Մեսրոպ Ամաչրագեանի աչխարհիկ լեզուով գրուած Աղուեստաբանութեամբը կը ծանօթացնէր հայ ժողովուրդը հին և նոր ազգաց չափերու և կշիռներու, այսպէս և զանազան արուեստական բաղադրութեանց և պատրաստութիւններու հետ։ Վարժութիւն մանկանց՝ Հ. Մինաս Բժշկեանի, տպուած յամին 1826, կենդանագիր առաքինի և զգօն աղջկան, տպ. 1816։

Ահա այս և ասոնց նման հրատարակութիւններով է՝ որ Միխիթ. Միաբանութիւնն հիմը կը գնէր — ԺԹ դարու 25 ամեակին մէջ — ազգային գործնական գիտու-

---

նա — յոր ձեռնամուխ եղէ զառաջինն դիւրին թուեցաւ, այլ յընթացս գործոյն մտեալ՝ գամ առ գամ դժուարացաւ, մինչեւ ի տկարանալ մեր անձամբ վհարել. կարօտացայ առաջնորդի, որով ընդելացաւ ինձ այս գործ. և օժանդակութեամբ աղօթից ձերոց ոչ միայն յառաջացաւ, այլ և աւարտեցաւ ի միջոցի գրեթէ ութեւտասան ամաց։ Յուսամ, թէ ոչ ասէք զի պիտէին քեզ ի ծերութեանդ հասակի մխել ի գործ՝ զորոյ անունն եւեթ լուելի էր ազգ մեր, և գինչէն նորա անծանօթ։ Ահա սոյն սա եղեւ ինձ յորդոր, առնել գործ մի ըստ անուանն անյարգ, այլ ըստ իրին » յարգոյ. նորաւուր նախընծայ, միանգամայն զուարճալի, համարձակիմ ասել կարեւոր հասարակաց և պիտեւան։ Ո՞չ ապաքէն յարգոյ է այս գիտութիւն առաջի ամենայն ազգաց օտարաց. և ծաղկեալ ի նոսա, և ընդէ՞ր ունի պակասիլ յազգի մերում. ո՛չ ապաքէն մեծաստան մեր է բուրաստան ազգին մերոյ, յորմէ միայն քաղին բիւրազգի հոտաւէտ ծաղիկք. և պարտէզ՝ յորում ծառք պտղաբերք ոտն զարդիւնաւոր պտուղս. ապա և այս ազգ գիտութեան մի՛ պակասեցի ի դրախտ անտի։ Ահա ի պիտակ անուանէ խաթեցան բազումք, և ոչ գիտեմ եղեն գիտել, թէ զոր մեք աշխարհօրէն կոչեմք կեմիհանութիւն, նոյն իցէ ըստ անուանն՝ որ յոտաւարացւոց կոչի Ալքիմիա. և սակայն գլխովին տարբեր է առարկայ նաւթիդային յառարկայէ մարինարի. որոյ առաջնոյն է՝ չափել զընթացս զարարեալս և զառնելիս. որոշել զհողմանցս, և գիտել զորշ տեղին յանդունդս ծովուն՝ ի ձեռն գիտութեան արեգական և աստեղաց, առ ի անվրէպ ժամանել ի դէմ եղեալ տեղին. զոր առ ի գտանել կարօտի գիտութեան, թուաբանութեան, երկրաչափութեան, եռանկիւնաչափութեան, և որ մեծն է՝ աստեղագիտութեան։ Իսկ սմին հակառակ երկրորդին առարկայն և գործ է ձգել զառագանս, պարզել զառագաստս, և առնել զայլ նուաստ և նիւթական գործս։ Ահա այսպիսի քնչ է աշխատասիրութիւն իմ. որում գիտեմ եղէ ստանալ, և հաղորդել ազգի մերում — ակնարկութեամբ Աբր. Հօրս հասարակաց, որոյ կամօք յուսամ թէ ի լոյս ածցի տպագրութեամբ՝ ի վայելուչն յարգելեացդ »։

Իրաւունք ունէր Հ. Ղուկաս, զի այդ շահեկան գործով հետ գիտեաւ ունելի շահագրգռութեան ազգայինք. և այսօր իսկ տպառուած օրինակները կը վնտռուին։ Եթէ նա այն ժամանակ չերկասիրէր այդ արուեստագիտութիւնը, յետոյ պիտի չգտնուին ձեռնհաս անձինք առ այն։

թեանց և արուեստներուն. ուրիշ կարգի գրուածներն համեմատութեամբ ասոնց խիստ սակաւ են, այդ ժամանակամիջոցին, և գրեթէ բացառութիւններ[1] կը կազմեն: Այդ աշխարհիկ լեզուով եղած կենցաղօգուտ հրատարակութեանց պղտեցութեամբ է, որ հայ ազգի մտաւորական հորիզոնին հետ՝ կ'ընդարձակուէին նաեւ անոր ընտանեկան և հասարակական յարաբերութիւնները Եւրոպայի հետ, որ կը փոխուէին գալի կերպով անոր կենաց գծուած պայմանները, և կը հասունանային ԺԸ. դարու վերջին քառորդին մէջ վերթեցուցած ծագիկները: Այդ ժամանակին է՝ որ կը կազմուէին Մուրատեան վարժարանին, Լազարեան ձեմարանին, Մխոպական վարժարանին, Իւակիւտարի և Մարդասիրական ձեմարաններուն, Գալբիկի և ուրիշ ազգային դպրոցներու բացման համար մեծ գումարներ: Այդ ժամանակ է, որ կը սկսէին հրատարակուիլ Ռոմբայի և Կալկաթայի մէջ Օձանեսիանեան, Շահէրեան, Հայկի, և Պօլսի մէջ Թագմիճի վազայի տպագիրները, Վիեննայի մէջ ալ Մուսիօրուիճի վանասականեան տիպագրով շաբաթաթերթը: Այդ ժամանակ է՝ որ կը կազմուէին — յամին 1808–1811 — Աղուանուենց ընկերութիւնն ի Պօլիս, յամին 1829 Ասուանեական ընկերութիւնն Էջմիածին՝ Հ. Մանուէլ Վ. Շահինեանի ձեռքով, և 1835–1840ին Աստրատեան ընկերութիւնն ի Հընդկաստան. ապա Սալմանեան ընկերակցութիւնն ի Ռուսիա, տաճկահայ գրականութենէն անկախ լինելու և գործելու հոգւով: Այդ ժամանակն է՝ որ հինեռուն վրայ կը յաւելնային ամէն կողմ նոր տպարաններ. այսինքն են՝ յամին 1810 ի Վիեննա, յամին 1825 ի Տփղիս, ուր նոյն տարին կը տպագրէր Գէորգ Աբծրունի՝ իր Երախայրիք Նկարագրական դպրոցի կազուած երկասիրութիւնը, Մոսկուայի տպարանը՝ յամին 1821՝ Կարնեցի Սերոբէ վարդապետի ձեռքով, և Մադրասի և Կալկաթայի մէջ Մարդասիրական ձեմարանի, և Թաղիադեանցի և Վիէննեանի տպարանները, ինչպէս և 1830ին Էջմիածնայ տպարանը: Այդ ժամանակն է՝ որ կ'ելլէին ոչ միայն Կ. Պօլսի և Տաճկահայոց, այլ և Ռուսահայոց և Հնդկահայերու մէջ և գալի կերպով կը բազմանային քաղաքագէտներ, գիտուններ, բժիշկներ, արուեստագէտներ, վաճառականներ, գրամագէտներ և մատենագիրներ. որոց անուանքը մի առ մի աւելորդ կը համարինք յիշել հոս, զի ԺԹ դարու Մատենագրութեան և պատմութեան մէջ յաճախ յիշուած են արդէն, և շատերուն ծանօթ: Գալուստ Շէրմազանեան՝ Նիւթեր ազգային պատմութեան համար գրուածով տպ. ի Ռուսով 1890, բազմաթիւ հայ երեւելիներ կը ներկայացընէ մեզ նոյն իսկ Պարսից տէրութեան մէջ:

Այդ, վերոյիշեալ եղելութիւնքն առ հասարակ արդիւնք էին հայ ժողովրդեան այն ընդհանուր չարժման դէպ ի կենցաղօգուտ գիտութիւնները, դէպ ի ազգային և եւրոպական կրթութիւնը. և թէ այդպիսի չարժման և հակայաքայլ մրցութեան եթէ ոչ միակ, այլ անշուշտ գլխաւոր ազդակն իսկ էր Մխիթարեան մասուլը: Եւ այս բանիս ապացոյցն այն իսկ է, զի Պարսկահայք և Ռուսահայք, որ Մխիթարեան ազդեցութեան գլխաւոր կեդրոնէն, այն է՝ Պօլսէն հեռի էին, թէ ուշ և թէ նուազ զարգացման օրինակներ կը ներկայացնէին: Յիրաւի, «Դիտակ բիւզանդեանի» առաջին տարուայ խմբագրութեան և այլոց ակն յայտնի վկայութեան նայելով, 1812 թուականին իսկ արդէն Պօլսոյ մէջ բոլոր այր մարդիկ՝ գրաբարը աշխարհաբարի հաւասար կը հասկնային և կը գրէին, ինչպէս կանայք և աղջիկներն այլ աշխարհաբարը կարդալ և գրել. մինչդեռ Ռուսահայոց մէջ երկուքին եւս ծամ էին. զի ինչպէս յամին 1819 Լազարեան ձեմարանը՝ Մխիթարեանց և Սալմանեանցներու կը կարօտէր, այսպէս ալ Տփղիսի Ներսիսեան գպրոցն և Ներսիսեանի գպրոցները Շահան Ջրպետեանին: 1825 թուականէն վերջն է, որ ասոնց և Նազարեաններու, Նալբանդեաններու և նմանեանց ջանքով կը սկսէր հայագիտութիւնն այդ կողմերում տարածուիլ: Սակայն ոտքա գլխաւոր գործին՝ Հիւսիսափայլը երբ սկսաւ երեւալ, Մխիթարեան և

---

1. Ախտիսի, են օրինակ իմն, Հ. Ղուկ. Օղուլուխեանի կրթուբիւն կամ գործնական հրահանգ խոստովանահարց մեծայարգ գրութիւնը, տպուած 1812. — Դիմառնուբիւն յորից վերջնոց. Հ. Մկր. Ագերեանի, տպ. 1810, — Հ. Մխ. Զամչեանի Հրահանգ եօթնեկին, տպ. 1802, — Ծաղիկ վարուց տպ. 1803, — Պատմուբիւն Աստուածաշունչի աշխարհաբար, տպ. 1803, — Պատկեր ոսկից Զամչեանի, տպ. 1807. — Բնական օրէնք Հ. Մնար. Ագաշրագեանի, տպ. 1819. — Բառգիրք իտալ. հայ. Զաքէզաքեանի, տպ. 1804. — Յովհ. Օձնեցւոյ Ընդդէմ Երէսուբականաց, տպեալ 1807. — Ոսկէհեր Պատմ. Հռովմայեցւոց, տպ. 1817. — Եւսեբիոսի Քրոնիկոնը, տպ. 1818:

ամենահայ մամուլն արդէն նշանաւոր դեր կատարած էին հան։ Սոցա հայերենի մասին ունեցած նախկին տեղեկութիւնն, ինչպէս և ապագայ յոյզութիւնքը Մխիթարեանց և անոնց հրատարակութեանց հետ ունեցած ծանօթութեանց արդիւնք են պիտուրապէս, թէպէտ և բռնած ուղղութիւնը գաղղիական և գերմանական մատենագրութեանց ազդեցութեանը վերագրուած է չատերէն։

Յամենայն դէպս՝ կենցաղօգուտ գիտութեանց և գրականութեան մէջ ընելիք հայ ազգի ընդհանուր չարժումը՝ եղածէն չատ աւելի պիտի լիներ, գլխաւորապէս Վենետկեան մամլոյն անդուլ գործակցութեամբը, եթէ չըլլային նախ Նապոլէոնեան եւրոպական պատերազմներն, ապա Ռուսիոյ՝ յամին 1807 Պարսից և յամին 1827 Տաճկաց հետ մղած պատերազմները, ինչպէս և յամին 1828 ազգային մեծ հալածանքը։ Սակայն զարմանքն այն է, որ բոլոր այս և ուրիչ արգելքներով հանդերձ՝ ազգը չէր կասեցներ իր հակայական քայլը, իր մեծամեծ ձիգերը դէպ ի յառաջ, դէպ ի լուսաւորութիւն։ Աչքը կառուցած յարեւմուտս՝ Ս. Ղազարու և Վիեննայում ճանչող մամլոյն վրայ, զորս կը նկատէր իրրեւ իրեն մտաւորական արեւելքը, և ասկից կը ծագէին անոպատ յաջորդութեամբ միշտ նորանոր լուսարփիք։ Թող չափազանցութիւն չերեւի ըսածս կամ գգուանք մի տա Մխիթարեան մամուլը. զի ինձմէ յառաջ պատմականօրէն հաստատած է ազգն ինքնին և արձանագրած է ժամանակը։ Ինչքս այն եզական դէպքին վրայ է, որուն նմանը ես հանդիպած չեմ հայ տպագրութեան պատմութեան մէջ։ Ստուգիւ 1513 թուականէն սկսեալ մինչեւ 1810 բազմաթիւ հայկական տպարաններ բացուած են յաջորդաբար և փակուած, Վենետկոյ, Հռոմայ, Իւլովի, Միլանի, Պարիզու, Ջուգայի, Լիմառնոյի, Պօլսոյ, Ամստերդամի, Մարսիլիոյ, Լիմպիայի, Պատավայի, Ջմիւռնիոյ, Կալկադայի, Թրեստի և ուրիշ քաղաքներու մէջ. սակայն և այնպէս ոչ ազգն զգաց երբէք կամ յուզեցաւ, և ոչ այլ Աբգարներ, Ոսկաններ, Թովմաս և Ղուկաս Վանանդեցիներ, և այլն, ունեցան այնպիսի համազգային ցասկցութեան կամ համակրութեան ընդհանուր ցոյցեր։ Իսկ յամին 1815–1817, երբ հակառակորդաց անիրաւ ամբաստանութիւններով [1] կը փակուէր Մխիթարեան Տպարանը, ճիշտ այն ընդհանուր յուզմունքը և չփոթութիւնը կը զգար հայ ազգն, ինչ որ կը զգայ բնութիւնը գինքը լուսաւորող, ջերմացնող և կենդանացնող արեգական խաւարման ժամանակ։ Մանաւանդ թէ հայութեան այդ յուզումն և գայրոյթն այնքան աւելի սաստիկ էր, որքան մտաւորական խաւարումը նիւթականէն աւելի ազիտաբեր է։ Նա զրկուած կը տեսնէր գինքը բերկրեցնող լուսաւորութենէն, վասն զի ժամանակէ մ'ի վեր չէին երեւնար լուսաբեր հրատարակութիւններ։ Վհատուած կը զգար իր սիրտը, վասն զի չէր չարժեր և գործեր գինքը չահագրգռող և յառաջ մղող այդ մամուլը։ Չնդկաստանէն մինչեւ եւրոպական վերջին հայ գաղթականութիւնը, Հալէպէն մինչեւ Վոսփոր՝ ցնցուած կը զգար ինքզինքը այդ անակնկալ արկածէն։ Չարիւրաւոր բողոքագրեր կ'ուղղուէին դէպ ի Հռոմ խնդրելու և փութացնելու Տպարանին վերաբացումը. հարիւր և մի ցասկցութեան նամակներ կը հասնէին նոյնպէս ի Վենետիկ։ Իսկ Հ. Մինաս Բժշկեանի, 25 Յունվ. 1816 գրած նամակին համաձայն — ուր կը նկարագրուին Պօլսոյ մէջ եղած իրարանցումներն և տագնապը — 60,000 ազգայինք պատրաստուած էին առորագրութիւն տալու՝ ի նպաստ բացման տպարանին։ Իսկ Միաբանութիւնը կ'երեւի, թէ այդ յուզումը խաղաղելու կամ չաճեցնելու համար է, որ նոյն իսկ այդ ժամանակ միջոցներ ի գործ դնելով յաջողած է չարունակել ժողովրդեան մատաչարը հայթհայթող երկու թերթերը, այսինքն են՝ «Եղանակ» և «Վիտակ բիւզանդեանը». վասն զի — ինչպէս տեսանք — առաջինը առանց ընդհատման կը հասնի մինչեւ 1817 Թուականը. իսկ վերջինն մինչեւ 1820։

Այդ, մենք մէկդի թողած այս դէպքիս վերաբերեալ բազմաթիւ նամակները, այս միայն կը հարցնենք. ինչ է պատճառն ազգին միւս ազգային տպարաններու փակման

---

1. Ինչպէս ամբաստանութեան՝ այսպէս ալ տպարանիս փակման պատճառքն եղած են նախ Յովհան Իմաստասէրի հառերու հրատարակութիւնը, որուն գտնուեցան Պարիսու Ազգուենական Քննադրատան հայ գրչագրաց մէջ, և Չամչեանի հակառակորդները՝ Յովհան Օձնեցւոյն կ'ուզէին վերագրել. իբր թէ Իմաստասիրէն տարբեր և անուղղափառ մէկն եղած լիներ։ Ք. Հ. Մխ. Չամչեանի վասն հառատոյ խորագրուած անտիպ ինքնագրութիւնը, զոր գողնալով ոմանք՝ Արբաքնութեան առեղծը կը հատցնէին։

համար ցոյց տուած անտարբերութիւնը, և այդ ժամանակ ընդ հակառակն Մխիթարեան տպարանին փակման առթիւ արտայայտած անասելի յուզումն և շփոթութիւնը։ Դա կը նշանակէ, թէ մեզ տպարաններէն ոչ մին ունեցած չէր երբէք ազգին վրայ այն յառաջադիմական ընդհանուր ազդեցութիւնը, և թէ այդ ազդեցութիւնն արդիւնք էր Մխիթարեան մտքոյ յարատեւ շարժմանն և անդադրում գործունէութեան, մինչդեռ ազգային մեզ տպարաններու գործունէութիւնը ժամանակաւոր էր և յեղյեղուկ։ Այսչէ աւելի խօսուն փաստ չի կրնար ըլլալ, քանի որ մանաւանդ տպագրութեան պատմութիւնն իսկ այդպէս արձանագրուած է, և մենք ալ ուրիշ կերպ չենք կարող մեկնել։

Սակայն մէկ կողմէն ամբառնանուած գրոց և հրատարակչաց նոյն իսկ Սրբազնութեան առեղծն անարատ և յաղթական ելեւմէջ, և մեզ կողմէն ալ տպարանի վերաբացմամբը՝ ոչ միայն Մխիթարեան մտքուլի վարկը կը բարձրանար մի անգամ ընդ միշտ, այլ անոլ աւելի առիթ և միջոց կ'ունենար առ՝ իր գրական և տպագրական գործունէութիւնն աւելի աճեցնելու. վասն զի չորս տարիէ ի վեր էր՝ որ ազգը սովալլուկ՝ նոր հրատարակութեանց կը սպասէր։ Օձնեցին առաջինը կ'ըլլար, որ հարթելով ամէն դժուարութիւնները, և Սրբազնութեան առեղծն իսկ ուղղափառական յայտարարութեամբ, յաղթանակաւ ճամբայ կը բանար նախնեաց մեզ ինքնագիր մատենից տպագրութեան, ինչպէս Եւսեբիոսի Քրոնիկոնն ալ իր գտած անասելի ընդունելութեամբն և հանած մեծ հռչակովը՝ պիտի փութացնէր ոչ միայն նախնեացմէ թարգմանուած, այլ և նոր ժամանակաց գլուխ գործոցներուն թարգմանութիւնն և հրատարակութիւնը։

* * *

Մխիթարեան մուտքէն քնարը թէպէտեւ ի վաղուց լարուած և լսեցուցած էր իր երգերը, խաղաղական կապուտակ երկնից և ներշնչութեան ներքեւ, Պայրընի սիրած կղզեկուժ, սակայն և այնպէս անոր արձագանգը դեռ տպագրութեամբ հասած չէր մայր հայրենիքը, դեռ չարժած չէր ազգակցաց սրտի թելերը։

Թերեւս զարմանալի թուի այս բանս սրտիս, դիտելով մանաւանդ, որ ամէն մանուկ ազգի առաջին զարթման և զարգացման քայլն եղած է բանաստեղծական քնարի կամ բանաստեղծութեան ազդեցութեամբը։ Իսկ Մխիթարեանք այդ բանը դիտնալով հանդերձ, նոյն իսկ մինչեւ ԺԹ. դարու առաջին կէսը լռած են այդ մասին, կամ իրենք իրենց մէջ միայն զուարճացած են այդու։ Վասն զի 1830 թուականէն յառաջ երկու վիպասանութիւններ միայն տուած են ի լոյս, և այն իսկ արձակ թարգմանութեամբ. այսինքն են Ֆենելոնի Տելեմաքը՝ տպ. ի Վենետիկ յամին 1826 Հ. Մ. Ջախջախեանի թարգմանութեամբ, և Միլտոնի Դրախտ կորուսեալը՝ յամին 1824, Հ. Յարութիւն Ալգերեանի թարգմանութեամբ։ Իսկ իրրեւ ինքնագիր բանաստեղծութեան՝ մի միայն օրինակ ունինք առջեւնիս, այն է՝ Ինճիճեանի Բիւզանդեան աւերակը։

Սակայն ուշի ուշով նոյնպէս դիտելով մեր ազգի և ժամանակի պարագաները, կը տեսնենք՝ որ դիտմամբ և ոչ եթէ դիպուածով, բանաւոր ուղղութեամբ՝ և ոչ թէ զանցառութեամբ յետաձգած են այդ կարգի հրատարակութիւնները։ Յիրաւի, բանաստեղծութիւնը ազատ կեանքի և ուրախ սրտի արտայայտութիւն է՝ քան թէ թշուառութեան ծնունդ. և ժողովուրդ մը որքան երջանիկ է և ազատ, այնքան աւելի կը շահագրգռուի գրականութեան այդ մասնաճիւղով։ Թշուառ և անաչխարհիկ ժողովուրդները չեն կարող անով զբաղիլ, վասն զի բոլոր իրենց զգացման և երեւակայութեան թռիչները, զոր մենք բանաստեղծութիւն կը կոչենք, տխուր և ընկճող լացի ու արտասուաց մէջ խորասուզուած են, և անով կը սնանին։ Ահա այս դիրքի մէջ կը գտնուէր նաեւ մեր ժողովուրդը, նոյն իսկ 1828–1840 թուականին, թէ իր ներքին երկպառակութիւններու և թէ արտաքին կամ քաղաքական տխուր հանգամանքներովը. նա դեռ իր անդորր ու երջանիկ օրերը գտած չէր, գուցէ թէ և ոչ երազել կարող էր, թող թէ ձկտիլ դէպ ի սա այն։ Ուստի այսպիսի կացութեան մէջ ուղել զինքը պատնառոտ կամ գողթան մուսայից թեւերուն վրայ բարձրացնել ուրիշ բան չէր, բայց եթէ ապաժաման ճիգն։ Հետեւաբար քնարերգութիւններ կամ դիւցազներգութիւն անոր առաջարկելն ուրիշ արդիւնք պիտի չունենար, բայց եթէ իր վրայ խնդալ. իսկ

եղերերգութիւնք կամ ուելի պիտի ընկճէին անոր արիւնաման և վիրաւոր սիրտը, և կամ իրրեւ նորութիւն բնաւ պիտի չհետաքրքրէին զինքը. վասն զի բոլոր անոր այդ ժամանակի ընտանեկան և քաղաքական կենաց պատմութիւնն ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ եղերերգութիւն: Ահա այդ, և ուրիշ պատճառաւ է, որ Խաչ. Աբովեան անգամ իր վէրք Հայաստանի կոչուած ժամանակակից սքանչելի վիպասանութեամբը Ձեզ ձայն բարբառոյ յանապատի՝ մինչեւ քառասնական թուականը. այսպէս և ուրիշները, որոնք փորձեցին չուառով Մագիստրոսի երգերը ի լոյս ընծայել, կամ Շնորհալւոյ և կամ ուրիշ երկեր: Այս իսկ է նաեւ Մխիթարեան մուսաններու ուրախ կամ տխուր քնարի ակամայ լռութեան՝ գլխաւոր պատճառը:

Սակայն ոչքա այսպիսի խոհական և խորհրդաւոր լռութիւնը պահած ժամանակ՝ անդադար գործունէութեամբ կը պատրաստէին մէկ կողմէն իրենց ի մօտոյ հնչեցնելիք բանաստեղծութեանց քնարի ոսկեղինիկ և արծաթեայ թելերը, այսինքն են նախնեաց ինքնագիր և թարգմանական գործերը. իսկ միւս կողմէն ալ հայ ժողովրդեան սիրտն ու միտքը արծարծող ազատ Եւրոպայի՝ վանք և սիրուն ներշնչութիւնները[1]:

---

1. *Առուգիս Տպարանիս յիշեալ ցուցակին համաձայն՝ նախ 1826–1844 թուականը, այսինքն է՝ 18 տարուան մէջ, տպագրութեամբ ընծայուած են ի վայելս ազգին Խորենացւոյ Պատմութիւնը պատկերազարդ, տպուած ի Վենետիկ 1826. — Եզնիկ կողբացի, տպ. 1826, — Սկզբնքերան՝ Յաւետարանագիրն Մատթէոս, 2 հա. և Հատուածք Պօղոսի Թղթոց Մեկնութենէն, տպ. 1826. — Նարեկացի, տպ. 1827. — Սերբիանոսի Ճառերը, տպ. 1827. — Եղիշէ պատկերազարդ, տպ. 1828. — Շնորհալւոյ Ընդհանրականքը, Բանք յափտւ, Նամականի, տպ. 1830–1838. — Ճառք վեցօրէից Ս. Բարսղի, տպ. 1830. — Ջևեռ գլակ, տպ. 1832. — Բուզանդ, տպ 1832: — Կորիւն, Մամբրէ, Պատիր Աղբայր, տպ. 1833. — Մխիթար Հերացի, տպ. 1832. — Ագաթանգեղոս, տպ. 1835. — Ս. Եփրեմի Մատենագրութիւնք, տպ. 1836. — Յովհ. Մանդակունւոյ, տպ. 1836. — Յաճախապատում, տպ. 1838: — Արիգոր Տղայ, տպ. 1838. — Նարեկացւոյ Մատենագրութիւնք, տպ. 1840. — Փիլոն Եբրայ. Ճառերք, տպ. 1826. — Լաստիվերտցւոյ Պատմութիւնը, տպ. 1844: Պազար Փարպեցին արդէն տպուած էր 1798 էն ի վեր: Ահաւասիկ հայերէն դասական լեզուի և բանաստեղծութեան ամենափայլուն աստղերը, որոնք իրենց պայծառ լուսովը ծագեցան երագ երագ հայութեան դեռ միգապատ հորիզոնին վրայ: Ահա հին կեանքի և մտքի երկունքը, նորոց ծնունդ տալու սահմանուած: Ցիրաւի՝ նոյն իսկ ինճիճեանի եռահատոր գլուխ գործոցը՝ Հնախօսութիւն Հայաստանի, կարելի է ըսել, թէ եղաւ նախնեաց այդ հրատարակութեան՝ եթէ ոչ լեզուական, այլ հնագիտական յղացմունքը: Այս բանիս ապացոյց է նոյն իսկ հրատարակութեանն թուականը, 1835ին: Ռոլէնի Հնախօսութիւնն, որու տպագրութիւնն 1825ին սկսած էր, անտարակոյս ներշնչած էր Հ. Գուկասին Հայոց Հնախօսութեան դաղափարը. սակայն նախնեաց պատմական հրատարակութիւններն էին, որ նիւթ մատակարարելով հեղինակին՝ կը հատուցանէին այն մեծ և աղտօտուած երկասիրութիւնը, որ ոչ միայն իր արժանաւոր տեղին պիտի գտնէր Ռոլէնի «Հնախօսութեան», «Անտքարանայ Ուղեւորութեան» եւ կենցաղ Իսրայէլացւոց եւ Փրխատոնեիցի մէջ, այլ եւ իրրեւ հիմունք պիտի ծառայէր պէս պէս գրուածոց և դիւցազներգութեանց: Այդ գործով բնաշխարհի նուիրագործուած նահանգներն ու դաշտերը, սարերն ու ձորերը, գետերն ու լիճերը, գիւղերն ու քաղաքները չէ միայն, որ կը ներկայանային տարաշխարհիկ նոր աներեւոյթ, այլ և մեհեաններն ու խաչատրոշ եկեղեցիները, կառավարութիւնն ու կաթողիկոսութիւնը, գինուորութիւնն ու գէնքերը, լեզուն ու գպրութիւնը, արուեստներն ու կրօնքը, վարք ու բարքը, ճեմերն ու արարողութիւնքը. այլ և բազմադարեան հայ կեանքն ու մահկանացուները, գործերն և գործաւարներ, որք իրենց մամռապատ գերեզմաններէն և հնութեան մոռացութիւնէն կարծէք վեր կանգնած, կը թօթվէին իրենց հերապանծ գլուխները, կը լսեցնէին իրենց գրահից շկայիւնը, ցոյց կու տային իրենց քաջալանջ վիրալից կուրծքերը, և կ'աղաղակէին. Դուք ողջ կեցէք, մեր սիրուն զաւակունք. ծն յառաջ: Մէկ խօսքով՝ ինճիճեան ինչպէս իր Բիւզանդեան ամպրսնոցով հրապուրած էր եւրոպացիները և ձգած գունդագունդ դէպ ի Կ. Պոլիս և իր կապուտակ վսեմերն, այսպէս այլ իր Հնախօսութեամբը կը յուշչուակեր և կը ձգեր բոլոր պօլսեբնակ Հայոց և հետաւոր հայութեան միտքն ու սիրտը դէպ ի մոռցուած մայր հայրենիքը: Նա՝ իր նպատակին հասած էր, և ան՝ երջանիկ: Յամին 1830 թէոփրասեի Նկարագիրքին ընկերացած՝ լոյս կը տեսնէին ի Վենետիկ Հոչիոսի եղերերգութիւնքը, Հ. Մ. Ջախջախեանի ոտանաւոր թարգմանութեամբ. — Յամին 1833 Վիրգիլի Քրիստոսականը, թարգմ. Հ. եղ. Թովմաճանեանի: — Յամին 1835 Մայ Աբելի, Մ. թարգմանութիւն Հ. Ջախջախեանի. — Յամին 1839–1846 լոյս կը տեսնէին Մատենադարան մանկանցի առաջին չորս հատորներն, այսինքն է Որոն կամ կորուած ոչան, Յուլիոս կամ Հռոդեզաւկը, Թանգոյի բագրատին, և Իտալուոյի տունակը, աշխարհաբար: Յամին 1841 Պօսիւէի խօսք ի վեպս ազգաց, Հ. Քերովբէ Ագնաւուրեանի գեղեցիկ թարգմանութեամբը. — ապա կանուխ կարդոս բարոյական վիպասանութիւնը, թարգմ. Հ. Սամ. Իակէնտէրեանի, տպ. յամին 1843. — Հոմերոսի Եղիականը յատգաւոր թրգմ. Հ. Թոմաճանեանի. տպ. 1843, — Բարթելէմի՝ Ուղեւորութիւն Անաքարսեայ, թրգմ. Հ. եղ. Հիւրմիւզեան, տպ 1843–1846. — Օգոստինոսի Յաղագս չաղաքին Աստուծոյ 2հա. թարգմ. Հ. Գաբր. Աւետիքեանի, տպ. 1841. — Կիկերոնի՝ Յաղագս պատուհասից, թարգմ. Հ. Մկ Աւգերեանի, տպ. 1845. — Թասսոնի Ապացոյց կրօնից, տպ. 1844ին. — Վիրգիլիոսի՝ Եկեականը՝ յանգաւոր թրգմ. Հ. եղ. Հիւրմիւզեանի, տպ. 1845, — Պօղ և Վիրգինիա, թրգմ. Մանուկ Պէյի Աստուածատրեան, տպ. 1846. — Վիրգիլիոսի Մշակականն և Որսատիրոք, թրգմ. Հ. Աբս. Բագրատունւոյ, տպ. 1847ին. — Ալեկսա, թրգմ. Հ. Մկր. Աւգերեանի, տպ. 1849ին. — Գևեովաբի, աշխարհաբար և յանգաւոր թրգմ. Հ. Վրթանէս Պատմութեանի, տպ. 1849: Մեր նպատակէն դուրս է յիշել նաեւ ուրիշ լացատիկ հրատարակութիւնները, որոնք թէեւ միաժամանակ, բայց տարբեր պարագայից բերմամբ լոյս տեսած են:*

Այս հրատարակութիւններէս — որոնց 11 հատը գուա վիպական և բանաստեղծական — ակներեւ կը տեսնուի, թէ մխիթարեան գրականութիւնն ինչպիսի մեծ անցք մի պատրաստած էր ընելու. այսինքն է՝ կենցաղօգուտ և գործնական գիտելիքներէն փոխադրուիլ, և փոխադրիլ իրենց հետ ի միասին նաեւ ազգը, գրականութեան բարձրագոյն գաւառներուն, այն է՝ բանաստեղծութեան և վիպասանութեան մէջ, յորում վեհագոյն պիտի հանդիսանար մեր նախնեաց և եւրոպական հանճարներուն հետ մատչին չփուելովին, և հնոյն հետ՝ նորն եւս իւրացնելով: Այդպիսի մի գրական չարժման գերազանց ձգանց արդիւնք են, չքեմ նախաթարգմներ, նախ յամին 1831 տպուած Հ. Եփրեմ Ակթեանի ձարտասանուհրիւնի և յամին 1839 տպուած Հ. Եղուարդ Վ. Հիւրմիւզեանի Առձեռն բանասանեղծուհրիւնի եւ արուեստ չափական ոտից մատկագրուած սիրուն գրքոյկը. ապա Հ. Մանուէլ Ջախջախեանի, Թումմաճանեանի, Բագրատունեաց և Հիւրմիւզեանի յիշեալ Թարգմանութիւնքը: Իրաւ է՝ որ այսպիսի մի ժամանակ և այնպիսի բարձր գրաթարով Համերգներ և Վէրգիլիոսներ ներկայացնելն ազգին, էր որպէս թէ հրաւիրել զայն յանկարծ՝ մէկ շնչով բարձրանալ ի կատար Ալեմպոսին: Սակայն գիտելու ենք՝ որ այդ վերջին գործերը ամենուն համար չէ՝ որ կը հայացընէին, այլ մտաւոյս կամ մտաւոնեաց յարուցանելու դիտմամբ. այք թէեւ որպէս կաղ Տիրաէոններ, սակայն կ'ախորժէին այդ թեւերուն վրայ ելնել և բնակիլ Աքսամադոյ կայանը: Դանտէի Աստուածային տեսլարանին (La Divina Commedia) եւս երբ կը յղացուէր երեսին Իտալիա, թէեւ իր ազգին մեծագոյն մասը պիտի չհասկրնար զայն, և սակայն գրուեցաւ. ու այդ գրուածով է, որ իրեւ փառագոչ շեփորի ձայնով, ելան Աբիսաոններ, Բակկաչիոններ, Պետրարկաններ, Թասոններ և այլք: Իսկ Մխիթարայ տունը՝ որ կը գտնուէր բանաստեղծիս հայրենիքը, որ ի վաղուց կը սնանէր և կը ներշնչուէր անոնց ուխտով, որ ժառանգած էր հայկական լեզուի գանձերը, և հարիւրաւոր թաւերախտակներ և ստանուարներ գրած էր և գանձած, բազմաբեռնաւորուելով և չափով, ալ ժամնակը հասած կը կարծէր՝ բանալ բանաստեղծութեան և բանասիրութեան նոր շրջանը նաեւ ատ արուեստ: Եւ այդ շրջանն՝ որ կը սկսէր 1843 թուականէն, պիտի լինէր ամենէն հարուստն և փառաւորը: Այդ շրջանն է, որուն մէջ պիտի կեդրոնանային գաւական յոյն, լատին, և եւրոպական նոր մտաւնագրութիւնքն և հայանալին. իսկ հայկականն ալ եւրոպականանար:

Ատոնքին հանգամանքներն իսկ յարմար էին առ այս: Եւ յիրաւի, Մուրատեան և Ոսկեյէլեան վարժարանաց ուսանողներն, որ Եւրոպայէն երամ երամ կը թեւածէին դէպ ի հայրենիքը, և իրենց հետ՝ ուրիշ չատերու եռանդն ու գրականութեան ձաչակն եւս կ'արթնցնէին. Ապահել Մէճիա և Ապահել Ազիզ բարեմոյն Սուլթաններու խառազատեր քաղաքականութիւնը, որուն չնորհիւ Հայերը լուռի ապատութիւն և անդորրութիւն կը վայելէին, և օր քան օր վարժարաններով և գիտութեամբք կը զարգանային. Ոսկահայ երիտասարդութիւնն, որ Նազարեաններու, Նալբանդեաններու և նմանեաց ջանքերով զարթած էին, և ակնկառոյց կային դէպ ի Եւրոպա, և այլք ասոնցիսիք՝ զայն կը պահանջէին: Եւ ահա անոր զօրեղ գործին:

* * *

Բազմավէպը — որ «Բիւզանդեան Եղանակէն» 23 տարի վերջ, այն է յամին 1843 կը սկսէր հրատարակուիլ, և ազգն սիրալիր ընդունելութիւն գտնել [1], թէպէտ և անուանք, այսինքն է՝ (Բազմավէպ) Օրագիր բնական, տնտեսական և բանասիրական գիտելեաց տիտղոսով նոյնը լինել կ'երեւէր «Եղանակի» երկրորդ շրջանին հետ, և անոր իրեւ շարունակութիւն թուելու ատեն. սակայն իրօք կամ պարունակութեամբ

---

1. Թերթիս՝ հրատարակութեան առաջին տարիէն սկսեալ՝ ամէն կողմէն գոած ընդունելութիւնն և ազգին վրայ գործած ահագին ազդեցութիւնը կը չեշտուն իրենց գրած նամակներուն թէ՝ Գնթ. Ստեփան Սոմալեան և թէ Պօղոս գործակատարն՝ Հ. Գէորգ Հիւրմիւզեան: Առաջինն ի 25 Նոյ. 1844 առ Հ. Արտին և առ Հ. Յովհաննէս գրած նամակներուն մէջ կ'ըսէ, թէ «Թիւ ընկերագրացն ի Պօլիս, է յայս ամ 150, ի Զմիւռնիա 50. ուստի սիոնն Բազմավէպ մինչ ի Կալկաթա, ի Պաղտատ, ի Պարսպաղ, ի Կարին, ի Կովկաս, Յեգիպտոս և Յերուսաղ»: Այս տեղեաց յիշատակութիւնէն ակներեւ կը տեսնուի անոր տարածութիւնը: Իսկ ազգայնոց կողմէն եկած ուրախակցութեան բազմաթիւ նամակները կը ցուցնեն անոնց զգացած մեծ հաճութիւնը: Ատոնց մէջ նշանաւոր է Աբգըման Աբգըմանեան Ամիրայի 19 Սեպտ. 1844 անոր առիթիւ Մխիթարեանց գրած չքնաղ նամակն և ուսած գրուատիքը:

նոյնը չէր։ Երկշաբաթաթերթ այս գործին, որ իրրեւ ակնեցոյ փիւնիկ մը յարութիւն կ'առնոյր բիւզանդեան Եղանակի և Գիտակի աճիւններէն, տարբեր կեանքի և գործունէութեան արդիւնք էր. հետեւաբար՝ ինչպէս անոր նպատակն այլպէս և ձկտումները աւելի բարձր և աւելի ընդարձակ լինելու բնաւորութիւն ունէին։ Առաջին երկուքը զխաւոր նպատակ ունէին՝ ազգին քաղաքական և կենցաղօգուտ գիտութիւնները միայն մատակարարել. իսկ Բազմավէպն՝ ընդհակառակն՝ ազգայինն և բանասիրականը, ընդարձակ առմամբ, ըստ որում ցոյց կու տայ ձակատի արձանագրութեան յաւելուածը՝ և բանասիրական գիտնկեաց։ Հետեւաբար՝ նա ժողովրդեան «ոգէտ» դառաւն միայն ուղղուած չէր, ինչպէս կարծել կու տան անոր 1845 Թուականի Յառաջաբանն և Հայ լրագրութեան պատմութեան հեղինակը։ Մեր նպատակը չէ այս տեղ Բազմավէպի առանձին կենագրութիւնն ընել քննադատօրէն. այլ տալ նկատել զայն իրրեւ գործի մի՝ այդ ժամանակի Մխիթարեան գրական շարժման և բանած ուղղութեանը։

Եւ առաջին վերը տեսանք՝ որ Մխիթ. Միաբանութիւնը կենցաղօգուտ գրեանքն և գիտութիւնները հրատարակած ժամանակ, ԺԹ. դարու առաջին քառնամեկին՝ հանեց և՛ բիւզանդեան Եղանակն ու Գիտակը, որոնք իրրեւ լրագրական գործիք և թռչող թերթեր՝ կը հնչեցնէին ամէն տեղ այլ և այլ տեղեկութեանց հետ՝ նաեւ այն գործերու վերաբերեալ նորալուրերը։ Այսպէս եւս անոնց զազարմանէն տարիներ վերջ, այսինքն է՝ երկրորդ քառնամեկին մէջ, երբ Միաբանութիւնը դարձուց իր մտադիր գործունէութիւնը մէկ կողմէն նախնեաց մատենագրութեանց, և միւս կողմէն ալ եւրոպական վիպասանութեանց և լատին և յոյն կլասիկական բանաստեղծութիւններու հրատարակութեանցը վրայ, ճիշդ նոյն այդ ժամանակն է՝ որ պատշաճ կը գտաէր իր բանասիրական և մատենագրական Բազմավիպովը դարձեալ ասպարէզ իջնել։ Աւելին բնական էր, որ այդ իր անուան արժանաւոր գործին՝ կոչմանն եւս նպատակայարմար և համապատասխանող գեր կատարէր. այսինքն՝ աշակցիլ նոյնատեսակ հրատարակութիւններուն, անոնց արձագանգը տալու, և հանրացնելու գանոնք ազգին մէջ։

Յիրաւի, խոր հայեացք մը տալով անոր վրայ՝ կը տեսնենք ակներեւ, որ նա իր երկայն կենաց ընթացքին մէջ՝ տասնեւհինգամեակէ տասնեւհինգամեակ չորիցս ծերանալով և մանկանալով, փոխոխելով իր երեւման ժամանակներն և պարունակութիւնը, միշտ գերագոյն ճիգեր ըրած է՝ հետ գհետէ աճեցնել և զարգացնել, գանազան նիւթերու համեմատ՝ նոյնպէս բանասիրական, վիպասանական և բանաստեղծական ճիւղերը։ Նման մայր երկրին կը ծնայր նա միշտ անծերանալի, միշտ բեղմնաւոր։ Արդկային ամենազան գիտելիօք պատարուն և մատուցական անունդ առած անոր ազգեցութեամբը՝ նորանոր ազգային թերթեր կը ծնանէին, կը ծաղկէին, և ցամաքելով՝ կը մեռնէին. իսկ ինքը կը ծնար միշտ իր ուժին, իր կոչման բարձրութեանը մէջ նման յաւիտենական հսկայի մը։ Ըսածս ներբող չէ, այլ իրականութիւն, եթէ ի նկատի առնունք անոր անցեալ կենաց 60 տարիները, որոնց մէջ այնքան լրագիրներու ծնունդն և յուղարկաւորութիւնը տեսաւ. և ներկայ կենսալիր վիճակին՝ որ անվերջ տարիներ կը խոստանայ։ Բազմավէպն՝ իր մշտանորոգ այդ կեանքին թէ գարնան և թէ աշնան մէջ հնչեցուցած է՝ իր գալարուն ելեւէջներովը՝ և՛ ազգային աշուղներու հին երգերը և տաղերը, և՛ Դանտէներու, Պետրարկաներու և եւրոպական շատ նշանաւոր քերթողներու կտորները. այսպէս նաեւ Մխիթարեան պուեսիկոններու և անոնց առներու ազգային խանդակաթ բանահիւսութիւններն ու նոր երգերը։ Իրաւ է՝ որ բիւզանդեան Գիտակն եւս 1813 Թուականէն վերջ սկսած էր բանասիրական բաժնին մէջ տասնեւորներ մշակել. սակայն դոքա բարոյական միայն էին, և գրաբարը՝ աշխարհաբարի թարգմանած։ Իսկ Բազմավէպն՝ իր խիպտ ընթացքովը ժամանակն հասած կը կարծէր՝ աշխարհիկ քնարը գրաբարին հետ յարմարցուցած հնչեցնել բանաստեղծութեան բազմատեսակ գեղեցկութիւններն և գաշնակաւորութիւնքը, ազգային գրականութեան հետ գրագէտներն եւս վեր բարձրացնելու վսեմ գաղափարովը։ Հետեւաբար, ինչպէս Մխիթարեան գրականութիւնն, այսպէս և այդ գործին՝ թէեւ մէկ ակնոցիւրէ կը բղխէին, սակայն երկու յառաջնեաց բաժնուած, այն է՝ գաւառական և աշխարհիկ բարբառոց, կու գային ոգողել նոր գրականութեան անդաստաններըն։

Բազմավէպն՝ իր գոյութեան առաջին տարուան մէջ, իրրեւ մանուկ՝ երագ և աստուաք միայն երկնած է և երգած. իսկ յաջորդ տարիներուամ, կարծէք թէ հասակն առած երիտասարդի մը պէս, հետ գհետէ եռապատկած, քառապատկած և տասնապատիկ աճեցուցած է բանաստեղծութեան և վիպասանութեանց քանակը։ Ի նկատի առ-

նելով անոր նիւթոյ բովանդակութիւնը 1843–1902, դուք կը տեսնէք, որ ոչ մի հին կամ նոր բանաստեղծի քնար կարող եղած չէ այնքան բազմաթիւ և բազմատեսակ երգեր, ողբերգութիւններ, դիւցազներգութիւններ, թատերգութիւններ, վիպասանութիւններ և գրականական մանրամասէպեր արտադրել, ինչպէս նա։ Հարկ գոնէ կամ ոչ ուրեք թերթ մի կամ Հանդէս մը որ Բազմավիպի բազմատեսակ դերը կատարած ըլլայ՝ երկայն տեւողութեամբ. վասն զի Լրագիրը՝ լրագիր է միայն կամ լրատու, Հանդէսը՝ կամ գիտական է լոկ, կամ գրականական, և կամ մի այլ մասնագիտութեան նուիրուած. Պատկերազարդը՝ կամ գեղարուեստական է կամ կենսագրական, և ոչ թէ տնտեսական, աշխարհագրական, իմաստասիրական, բնագէտական, և այլն։ Իսկ Վենետկոյ Մխիթարեանց այդ հաստատութեան վրայ մենք կը տեսնենք՝ ի նմին ժամու՝ մարդկային գիտելեաց այն ամենայն ներշնչութիւնքն և հաստատութիւնքը, ինչ որ կը տեսնեն ճարտարապետի մը աչքերը վենետկեան՝ բայց ի մասնաւորի Դքսական այն եզական պալատին և անոր հակադրած մատրան՝ Ս. Մարկոսի վրայ։ Այս տեղ արեւելեան ճաշակի և ճոխութեանց սիրահար վենետկեցին է, որ անչարժ մարմարիոնի վրայ կեդրոնացուցեր է բոլոր հին, միջին և նոր ժամանակաց ճարտարապետութեան, քանդակագործութեան մանրանկար մոզայիքի և այլ արուեստից և գիտութեանց հրաշալիքը, իր պերճապայծառ Հատարակապետութեան գործութիւնն և հանճարը բոլոր աշխարհի ցուցնելու համար։ Իսկ այն տեղ, այսինքն է «Բազմավիպում» վենետկարնակ ու վենետասէր հայ Մխիթարութիւնն է՝ որ ընդհակառակն թռչող թղթի վրայ աստղաբաշխականին հետ՝ գուգել ուզած է երկրաբանականը, բանաստեղծութեան հետ՝ բնագիտականը, քաղաքականին հետ՝ տնտեսականն ու կրօնականը. բանասիրականին հետ՝ բարոյականը, պատմականին հետ, աշխարհագրականն և ժամանակագրականը, դաստիարակութեան հետ՝ վիպասանութիւնն և մանրավէպերը, կենսագրականին հետ՝ կենդանաբանականն և առողջապահականը, կենցաղագուտ գիտութեանց հետ՝ նոր գիւտերն և գեղարուեստները։ Մէկ խօսքով՝ լրագիրը՝ զուգած է գրական և բանասիրական Հանդիսի հետ, և սա ալ Պատկերազարդի, որպէս զի կարենայ հաղորդել իր բազմակարօտ ազգին ոչ միայն իր և նախնեաց, այլ և Եւրոպիոյ գրականութիւնն և գիտելիքը։

Իրաւ որ գարմանալի է զուգադիպութիւնս. սակայն կամաւ թէ ակամայ՝ Մխիթարեանք կրած են վենետկեան ազդեցութիւնը, տոգորուած են Իտալիոյ գեղեցկագիտական ներշնչութիւններով։ Այլազուակին սակէց ալ աւելի գեղեցիկ և ազգօգուտ գործի չէր կրնար ակիզբն տալ։ Սակայն ճշմարտութեան համար պէտք է բսել, որ «Բազմավէպը» յաջորդաբար չունեցաւ միշտ իր հիմնադրին արժանաւոր խմբագրապետները. որուն համար ալ երբեմն խաւարած է իր լուսափայլութենէն և խոնարհած իր բարձրութենէն և մեղադրուած իսկ։ Սակայն ճշմարիտ է և՛ այս, որ շատ անգամ ալ ձեռնհաս գրիչներու ձեռքով ժամակին հետ հակայ քայլեր առած է և նորութիւններ յառաջացուցած։

Դիտող կամ նախանձոտ աչք մը կարելի է որ անոր վրայ նկատէ նաեւ ուրիշ պակասութիւններ. սակայն կրնանք բսել, թէ այդ պակասութիւններն այնպէս են անոր կատարելութիւններուն քով, ինչպէս բիծերը արեգական լուսապայծառ ական վրայ։ Ոչ մի լրագրական թերթի վրայ գուցէ այնքան խնամք տարուած չէ, ինչպէս Բազմավիպին։ Թուղթն ընտիր է, տպագրութիւնը մաքուր, և գերծ սխալներէ։ Պատկերներն ընդհանրապէս գեղեցկագիտական նրբութիւն և ճաշակ կը ներշնչեն։ Յօդուածները թէպէտ և ամենքն ալ քննադատական բովէն անցած չեն, սակայն համեմատելով Օրագրաց մէջ օրուան լրոց ու տպաւորութեանց ներքեւ գրուած և մէջտեղ նետուած յօդուածներուն հետ, ոչ միայն տպաս են ասոնց յաճախ հիմնագուրկ վարկածներէն, այլ և մշակուած և տպագուցուած ճշմարտութիւններ կը ներկայացնեն։

Բազմավիպն իր 60 ամեայ կենաց ընթացիքը մէջ տուած է տպիս 5708 համարօտ և ընդարձակ գրուածներ. որոնք բաժնուած են — համաձայն անոր ընդհանուր ձանկին — 25–30 մատենաճիւղերու [1] կամ գիտութեանց։ Արդ, այս թուոյս մէջ գերակշիռ կը

---

1. Այսինքն են՝ բարոյականքն 229. — Դաստիարակչականք 243. — Բարոյավէպք և մանրավէպք 285. — Առածք և Առակք 301. — Հնաբ. – դիւցաբանականք 158. — Աստղագիտք և Հանդէսք 112. — Պատմականք 300 — Կենսագրականք 250. — Քաղաքականք 132. — Աշխարհագրական և Հնախօս. 486. — Գիտականք 238. — Աստեղաբաշխականք 70. — Բնաբ. և բնագուժականք 290. — Բնագատմ. և կեն-

հանդիսանան քերթուածոյն — վիպասանականքն, և մասնաւորապէս — քննադատականքը. զի առաջին տեսակին կը վերաբերին 672 գրուածներ, և երկրորդին՝ 732. ընդ ամէնն՝ 1404 ատ 5708: Մենք եթէ ուզէինք 60 ամեայ Բազմավիպի յօդուածներուն վրայ յաւելացնել միւս երեք լրագիրներուն, այսինքն՝ Տարեգրութեան Եղանակի և Գիտակի անկէց 40 տարի յառաջ հրատարակած բոլոր յօդուածներն ևս, այն ժամանակ Մխիթարեանց այդ չորս թերթերու 100 տարուայ մէջ ապրին ընծայած յօդուածոց թիւը 9,000էն պակաս չպիտի լինի: Արդ, համայնագիտական այդ Մատենադարանն իսկ բաւական պատուարիր պիտի ըլլար Մխիթարեանց և իրենց մասնաւոր գործունէութեանն, եթէ նոքա ուրիշ գրքեր և պարզ գործոցներ ևս հրատարակած չունենային: Յիրաւի, այդ չրջող Մատենադարանը՝ կը պարունակէ գրեթէ ամբողջ ԺԹ. դարը, իր գրական, քաղաքական, պետական և գեղարուեստական արտադրութիւններովն և յառաջխաղաց չարժմանիքը: Եւ այն ազգայիններն, որոնք եթէ միջոց և առիթ ունեցան չարունակաբար կարդալ զայն, կարող էին զուգընթանալ այդ դարու գիտութեանց և արուեստից հոսանքին: Իսկ բան մի, որ աւելի հետաքրքրական է ազգային տեսակէտով, ընթերցողք պիտի ծանօթանային «Բազմավիպով» ԺԹ. դարու ոչ միայն ազգային, այլ և հինաւուրց և նորախոյժ Մխիթարեան գրողներուն, որոնք այդ միակ գործիքովը՝ հարիւրաւոր ձայներ կը հնչեցնէին, իրենց բնորոշ տիպարներովն և տարազովը: Սակայն այս ուսումնասիրութիւնս մասնաւորապէս մատենագիտութեամբ պարապողներուն կը Թողունք մինչ:

Իսկ թէ այս գերիս մէջ որքան յաջողեցաւ Բազմավէպը, չօշափելի ապացոյց են նախ այն բազմաթիւ թերթերն[1], որ անկէց քիչ տարի վերջ սկսան հրատարակուիլ, և գրեթէ անոր ազդեցութեան տակ: Ր. Գրականական, գեղեցկագիտական, գիտական և լրագրական այն չարժմունքը, որոնք այս գործիքիս ձայնով արթնցան և աննուրբ գգալի կը լինէին. և որ չուռաով Պէշիկթաշլեաններու, Հէքիմեաններու, Դուրեաններու, Թերզեաններու և Ազամեաններու նման բանաստեղծներ և արուեստագէտներ պիտի հանէին ազգին: Սակայն մինչ «Բազմավէպի» այս ազդեցութեամբն յետոյ տարի պիտի ունենանք ընդարձակօրէն խօսելու:

Այսպէս ահա, Բազմավիպով ազգն ընդելացնելէն վերջ բազմատեսակ գրականութեան և իր բռնած ուղղութեան հետ, այնուհետեւ տարակ մ'է ամէն տեսակ հրատարակութեանց՝ զորս կը տեղացընէր վիեննական հայ մամուլն՝ ազգային նոր գրականութեան այգւոյն մէջ: Այնպէս որ՝ տակէց վերջ գժուարին է այլ եւս որոչ սահման մի դնել կամ զանազանել այս ինչ ժամանակամիջոցը՝ իբրեւ յատուկ այն ինչ մասնաճիւղին: Ինչպէս Ս. Պատարագ կզղեկին, ուսկից գրական լուսաւորութեան արիւն կը ճառագայթէր, այսպէս և ազգային բանաւոր անդամոցն համար այլ եւս մեռելութեան ձմեռն չէր նշմարուէր. այլ միայն կենսականութեան գարունն ու ամառը:

Բուբրատունք վրացւոյ Արմզդաւոյ ոսկեայ ընտիր քերթուածով ոչ միայն բանաստեղծութեան այդ գուարթ և գուարճալի գարուները կ'երգէր Հիւրմիւզեան, այլ և հայ գրական պատանեկութիւնը կը պատրաստէր յընդունելութիւն նոր մուսայից: Յամին 1852, 1853, 1854 մի առ մի լոյս կը տեսնէին երեք մեծադիր հատորներ,

---

դանագանակնք 351. — Տնտեսականք (քաղաքական և առանձին) 288. — Գեղարուեստք և գիտք 154. — Երկրագործականք 104. — Դամբանականք 61. — Խառատասիրականք 71. — Առողջապահականք 78. — Զափաբ. տոմարականք 19. — Այլ և այլք 272–300:

Այս տեղ գիտել կու տանք, որ մանր գիտելիքներըը, գուարճալիք, նամականիք, և այլն, յիշեալ թուէն դուրս կը նմանն: Այսպէս նաեւ չափաւ հաշուի առնուած չեն այն շարունակուած ընդարձակ յօդուածները, որոնք ամբողջական գիրքեր կը կազմեն. այլ մի անգամ միայն թուուած են: Պարզեալ չմոռնամ ըսել, որ 1902–1905 «Բազմավէպ»ներում հրատարակուած բոլոր յօդուածներն այս տեղ հաշուուած չեն, որոնք բաւական առուար թիւ մը պիտի կազմէին:

1. Օրինակի համար՝ Հայրենասէրն ի Զմիւռնիա, խմբագրութեամբ Յ. Մելիքսեթեանցի, Ազգասէրն ի Կալկաթա, 1845–1852, Արարատեան ընկերութեան նպաստով և Մ. Թագիադեանցի խմբագրութեամբը, Ուսումնասիրաց առաջին շաբաթաթերթիքը Կովկաս, որ լոյս կը տեսնէր ի Տփղիս, 1846–1848ին, կարենեանց Յակոբ Վարժապետի և Մ. Պատկանեանի նախաձեռնութեամբ, Հայասաան շաբաթաթերթին ի Կ. Պոլիս 1846–1852 և Սուրհանդակ բիւզանդեանը 1847ին, Եւրոպա շաբաթաթերթին ի Վիեննա յամին 1847, Բանասէրն ի Մադրաս՝ 1848ին, և Ուսումնասէրն ի Սինգափոր, 1849ին:

Տաղը Մխիթարեան վարդապետաց, ոչ այնքան յարմար մակդրութեամբ, զոր սակայն ազնիւ ճշդիւ արակել՝ լաւագոյն եւս էր կոչել նոր մուսայն հայոց։ Եւ առաւել՝ Հ. Գաբրիէլ Ալեմպեան, Հ. Մանուէլ Ջախջախեան, Հ. Եղիա Թոմճեանեան, Հ. Արսէն Բագրատունի, և Հ. Եղուարդ Հիւրմիւզեան, որոնք կը ներկայացնէին ազգին այդ հատորները՝ բաւին բուն նշանակութեամբ էին ճշմարիտ մուսաներ. վասն զի ոչ միայն առաջին անգամն է, որ յետ Թարգմանչաց՝ այնքան գեղեցիկ ճաշակով ու կենսալիր աւիւնով կը հնչեցնէին, մանաւանդ թէ կ'անմահացնէին հայութեան անցեալ յիշատակց հետ՝ նաեւ նոր կեանքը։ Այլ և չափական արուեստի ամենահնար տեսակներովին և միեւնոյն այդ ժամանակ չտեսնուած դիպուածով կը մարմնացնէին քնարերգակ, պերճերգակ և դիւցազներգական բանաստեղծութիւնը։ Այդ քերթուածներն — որոնց հնագոյնքը 1789 թուականին կ'ելնեն — կարդալով՝ մարդ կը հիանայ կը հրճուի նորատեղծ գաղափարն լեզուի ճոխութեան, ճկունութեան և նորագունդ գեղեցկութեան վրայ։ Նոյնը ստիպուած է խորհիլ, թէ այդ վիճակին հասցնելու համար՝ նոքա որչափ աշխատած են, և որպիսի հանճարներու հետ չփուած և մանաւանդ թէ չփած են հին հայերէնը, այնքան փայլ և կատարելութիւն տալու համար։

Տարակոյս չկայ, որ հելլէն և լատին քերթողութիւնք մեծ դեր խաղացեր են ասոնց մէջ, բոլոր իրենց դիցաբանական, վիպական, տեղական և այլաբանական արտաքուածներով. սակայն զարմանքն այն է՝ որ մեր հայ մուսաներն այնքան որոճացեր և իւրացուցեր են այն ամենայն, իրենց բնածին մտքի և խանդի հետ, որ եթէ նկարելի է ըսել՝ այն երկուքէն ու երկունքէն խակաւիպ մի հայ ծնունդ արտադրած են, արժանի նոր ժամանակաց։ Փոխանակ Հելիկոնի, Պինդոսի և Պառնասոսի՝ Մասիք և Գողթան և Ս. Գազար եղած կը տեսնէք դուք բնակավայր անմահ մուսայից։ Զառն Միասանի, Վահրամ Ռուբինեան, Վրոյր Արծրունւոյ, և այլն, — զոր իրրեւ կենդ անուն առած են իրենց վրայ մեր քերթողները — փոխանակած են հելլէն մուսաներու։ Հայաստանը բռնած է Եւտոպէի, Հայկը՝ Հերակղէսի տեղը, Տրդատ՝ Աքիլլէսի, Վարդանը՝ Լեռնիդեայ, այսպէս նաեւ ամենայն բան։

Մեր հնգաթիւ մուսաներն այդ հրաշագործութեամբ՝ անով ուրեմն հետաքրքրական են, որ նախ կը ներկայացնեն Ս. Գազարու ակադեմական կեանքը՝ իր բանասիրական և բանաստեղծական մրցութիւններովը, այնքան բնաւորեալ, պինդ և օգտակար կերպով։ Այդ մրցութեան շնորհիւ է, որ Վահրամ Ռուբինեան (այն է՝ Հ. Մանուէլ Ջախջախեան) Առան Սիամանթի (այսինքն՝ Հ. Արս. Բագրատունւոյ) մի քանի բանաստեղծութիւնքով իրարմէ բոլորովին տարբեր երեք քերթուածներ յօրինած է, այսինքն են՝ Գուիտո Յուզաց, Պարսաւ Յուզաց, և Ջիղ բիդ պաբատաւի Յուզաց։ Իսկ Վրոյրի Արծրունւոյ՝ «մեհեանից» և այլն, 14 բանաստեղծութեամբ՝ տասնեւվեց այլ և այլ պինդարեան քերթուածներ, որոնց վրայ Պինդար ինքնին պիտի զարմանար, եթէ լինէր ականատես։ Այսպէս ըրած են և՛ Սիամանթ և Վրոյր՝ իրենց տաղերը Վահրամ ուղղած բանաստեղծութեան խակաւիպ բոլորին։ Սակայն մենք այդ և Մխիթարեան ընդհանուր բանաստեղծութեան խակաւիպ պատկերը մտադիր եմք առանձին շրջանակներով և քննադատօրէն ներկայացընել բանասէր ընթերցողաց։

Երկրորդ, այդ հրաշագործութեամբ է, որ Մխիթարեան մուսայք Հելիկոնի և Պառնասոսի բարձունքէն՝ իջած հայաբնակ քաղաքաց և խոնարհ հովիտներուն մէջ, իրենց նոր անն Արփէաններ և Պինդարներ, նախ կը քաղցրացնէին ցուրտ Կովկասի վայրենագոյն բարքերը, որոնք չէին առած բնաւ Պեգասի ընծայած խանդը, այն է՝ դասական լեզուի և քնարական բանաստեղծութեան ճաշակը. և հարուածելով Թրակեան Վոսփորի կապուտակ ալեաց և հեշտօրօր գեղիւռն գիրկը խորասուզուած մեզ բարքերը, և յորդորել, որ իրենց քաղցրանջ և գրաւէր նախնեաց օրինակին հետեւին։ Կը բանային նոր աւիւնով՝ հայկական հին լեզուի գեղեցկութիւնները. կ'ըմբերանէին նախնեաց պարտաւորիչները. կը հարուածէին արամեան քերթողութեան խեղճ ականակները, որոնք կը կարծէին, թէ Մասիսի չափ բարձրացնելով իրենց տաղերը, և Նիւթաւի պէս անհասկնալի ծանրաբութիւններ գործելով՝ յորդի պիտի ընծայեն զանոնք։ Կը լսեցընէին անոնց՝ Պառնասոսի գանգանները, և ապողոնեան դասատուով կը քննադատէին անոնց խժռական և իմաստակական թերութիւնները։ Մէկ խօսքով կ'ուսուցանէին անոնց խժռական և իմաստակական թերութիւնները։ Մէկ խօսքով կ'ուսուցանէին անոնց խժռական և իմաստակական թերութիւնները։ Մէկ խօսքով կ'ուսուցանէին անոնց առհասարակ՝ վսեմի, գեղեցկի, պինդի և օգտակարի խակութիւնն և բուն գաղանիքը։

Յետոյ, արամեան քերթողաց և Մխիթարեան մուսայից մէջ եղած բանաստեղծական յարաբերութիւններուն, ինչպէս և վերջնոցս ձեռքով կատարուած օգտակար

դերին վրայ գաղափար կազմելու համար՝ բաւական է կարդալ Հայոց Պատմութեան այն է՝ Վահրամ Պատրիարքի (տես հտ. Բ.) 24–26 երգիծապատում անունս էջերն, և Առանց՝ տո Գանգատու Պառնասեայ (տես հտ. Ա. էջ 97) և Հայաստան աս խուժ ժառտան (էջ 136–149) մակագրուած երկու քերթուածները[1]։

Մինչդեռ Հայք՝ կասկից ափաւնքէն մինչեւ Վոսպոր, և Կովկասէն մինչեւ Հնդկաստան այդ նոր երգերով կ'օրօրուէին, անդիէն նորագոյն երկեր եւս ի լոյս կը պրուէին, մերթ արձակ և չափով, մերթ գրաբար և աշխարհիկ բարբառով։ Յամին 1850 առկնծդի թեւերով և Թարգմանութեամբ Հիւրմիւզեանի՝ վերատին սպարէզ կու գար Տիւրմանք։ 1853ին Կ. Պոլսոյ Պոնտիֆիկոս վիպասանութիւնն և Հայոց երգք առնկակաւոր Հանդերձ անդր. Թարգմանութեամբ։ 1854ին 2 հատոր Աղբար Թոմճեան՝ պատկերազարդ պճնութեամբ։ Յամին 1855 փեդրոսի առակները՝ հայկական չափով։ Յամին 1857 Փիդոպէյի Յոմանի Գեղեցիկը, Ասլզմանի փաթիղան, և Հ. Ալիշանի Մանկուհիին, Բնուհիին և Տէրունիին։ Իսկ 1858ին Կոմնէյլի Պոլիկոտս ողբերգուհիւնը, Գերպ. Գէորգ Հիւրմիւզեանի Թարգմանութեամբն և գաղղիարէն բնագրաւ ի վիմոն. Դիւցազներգութիւն ի Ռուսոյ Հաւրենդոյն, և Հ. Գ. Հեանդ Ալիշանի Նուագներու նուիրական հատորներն, այսինքն են Տիրուհիին և Հայրուհիին։

Այս Նուագներով է, որ կը յայտնուէր Հ. Ալիշան որպէս գերազանց մուսայ, որ իրրև ինքնածին և իսկատիպ բանաստեղծ՝ ոչ միայն պիտի անչքացընէր բոլոր իր նախորդներու փառքն և փայլը, ինչպէս արեւն՝ աստղերը, այլ միատ անգերազանցելի։ Այդ՝ հոգեշունչ Նուագներով է՝ որ նա, իրրեւ կրկին քնարներով, կը լսեցնէր նոր Բանաստեղծին հետ՝ նաեւ Հայոց ծեր Նահապետի յաւիտենական ձայնը՝ ծագոց ի ծագս բոլոր Հայութեան, և զամէնքը կը զմայլեցնէր, ծերունիներէն և պատանիներէն սկսեալ՝ մինչեւ վերջին ընթերցող պատանին և կոյսը։ Նա որպէս Մխիթարեան մուսայ՝ նոր դասական վեմ լեզուին է՝ որ կը հնչեցնէր Հայոց փառապոչ Համբիռը, որ լռած էր երկար դարերէ ի վեր. և ժամանակի մոռացութեան անդունդներէն դուրս կը կոչէր Հայոց մեծաց նախնի փառքն և հայրենասիրութիւնը, 43 մէկ մէկէ գեղեցիկ երգերով կամ դրուագներով։ Իսկ իրրեւ Նահապետ՝ նման մեր երջանիկ ժամանակաց և աշխարհի անհաւան գաւառաբարբառին, և իր տեսակին մէջ աննման և գողտրիկ աշխարհաբարով է՝ որ կ'երգէր Հայոց աշխարհիկը՝ իր գեղագուարճ գարունովն ու բեղմնաւոր կենօքը, մոռցուած Հայ հաւրենիքն՝ իր անմոռաց տեղերով, կ'ողբայ անոր ապատ և անապատները՝ սէր մխիթին բերելով։ Կ'երգէ Մասիսու ապերը՝ իր հնաւանդ աբարուածներովն և երկնանման բարձրութիւններով. Շաւարշանի Շուչանը՝ Հայոց արքունական դարպասներով և չուչանափայլ կոյսերով. կ'երգէ Աւարայրի Պղպոջը՝ իր կարմիր Վարդանովն և նորա պատկակից քաջ նահատակներով. կ'երգէ Աղտ Երկարը՝ Սեւանայ շուրջը տարած անլուր յաղթանակովն, և Հայոց գերեզմանաց լուսնկային՝ իր երկհազարամեայ տանուտէրերովն և անոնց խորհրդաւոր առասպելներով։ Վիշապաղունքը՝ իրենց մութ քարայրներով, և խորտնաչ Տիգրաններն, Վահագներն և Տըրդատները՝ իրենց երկնահանգէտ փառքերով։

---

1. Որոց առաջնոյն մէջ կը նկարագրուին հայ պարմանեաց կոկոզանքը՝ բոլոր իրենց չափական անյաղող արուեստովը, զոր կը յղէին 1824էն ի վեր ի Վենետիկ Հայոց մեծաց պուէտ մեծագործ առաջագրութեամբ։ Իսկ երկրորդին մէջ կ'աւետուին անոնց մէջ յառաջ բերուած արդիւնքն, այսպէս.

« Ղողբոջք բարեացս ահա բուսան,
Զայն նըւագաց առ հայ գուսան,
Պարել՝ ոտիւք ի ճեմ ու ի քայլ
Յափանց կապից մինչ ի գետ Գայլ։
Ոչ ևւըս քեզ սեաւ ոսպնաթեան,
Այլ մեղր և իւղ գինիք Գողթան։
Փոխան ահեղ սըրոյդ ի անար
Յայսըմ հետէ կախեա քընար։
Սիրտ քո ի տրոփ, մխիթ ի սասան
Տեառըն մատին կալ վիպասան։
Զայնեա զմանկունըդ առ երի
Չերդ հովիւ գհօտն ի Մարերի,
Լուացեալ փայլուն աւրբ յաւազան,
Չովուեալ ի մի պերճ դաւազան.
Ի ձայն փողոյ քաղցըր լարի
Ձարակեցո՛ ի դալարի »։

Ահա այս երգերն են որք մեռաք կը գանէին բոլոր Հայ գպրոցներու և հիւղերու մէջ, որք կը թնդացնէին ամենուն սրտի խորերը։ Եւ ով է այն Հայը, որ կարդացած և ներշնչուած չըլլայ։ Սակայն այս տեղ յիշատակութեամբ միայն կը բաւականանանք, վասն զի յեռոյ առանձինն պիտի խօսիմք այդ կոյս մեռապից և անոնց բանաստեղծական արժանեաց մասին։ Իսկ բանաստեղծական և բանասիրական գործոց այդ շրջանը բոլորելու համար, մենք կարող ենք յիշել ոչ միայն Մխիթարեանց ձեռքով Հայացուած եւրոպական հարիւրաւոր գլուխ գործոցները, այլ և՛ ինքնագիր մեծդի գործերը, մանաւանդ ժամանակին ամենէն մեծ և գամէնքը հետաքրքրող գրական նորութիւնը «Հայկ դիւցազնը»։ բայց այդպիսի մի ծառայութիւն ի վարուց արդէն մատուցած է ազատ բանիս կատարեալ գրացուցակը։ Ուստի մի ուրիշ աւելի կարեւոր կէտի վրայ կը դարձնենք ընթերցողին ուշադրութիւնը։

Մխիթարեան քնարը նաեւ այս մեծ և անհամեմատ գերն եւս կը կատարէր. վասն զի ճիշտ այդ ժամանակ լոյս կը տեսնէր Բազրատունեաց կորովի գրչով յօրինած Հայկ դիւցազնը, տպուած ի Վենետիկ 1858ին։ Պատկերազարդ այդ Դիւցազներգութիւնն, որ քան զրուագներու բաժնուած է, արժանի է — եթէ ոչ իրրեւ ինքնաձին գերթուխիւն, այլ անշուշտ որպէս վեհ գաղափար և հայկաբանական ընտիր ուսումնասիրութիւն — գասուելու ի թիւս Իլիականին, Ենէականին, Դրախտ կորուսեալ և Երուսաղէմ ազատեալ դիւցազներգութեանց։ Իրաւ է՝ որ Հայկ դիւցազն ունի գանազան թերութիւններ, և այնու մանաւանդ՝ դի է հետեւողութիւն. սակայն ասով հանդերձ՝ կարելի է դէթ հայկական դիւցազներգութեան անդրանիկը և գլուխ գործոցը կոչել գայն։ Բազրատունին — այսպէս և իր այդ երկասիրութիւնը — անով աւելի յօդուած և բազդաւոր պիտի լինէր, եթէ գերթող իր դիւցազին Հայկայ՝ Բելայ դէմ մղած պատերազմին փոխանակ Աստուածպաշտութեան անաստուածութեան հետ ունեցած հակառակութեանը, ծագումով իրարմէ տարբեր այդ երկու ազգերու կամ ժողովրդոց՝ իրարու դէմ ի վարուց ունեցած տեսութեան բնաւորութիւն կամ նկարագիր տուած ըլլար. որով թէ՛ աւելի նպատակայարմար և թէ հաճոյական պիտի ըլլար գարուց ի գարս։ Կ'երեւի, թէ Բազրատունին կամ քաղաքական նկատմանց համար, և կամ լաւ եւս Անանուն պատմագրին և Ջուանշիրի հետեւելով է՝ որ այդ պատմական անտեղութիւնը գործած է, դի խորենացին քաղաքական պատճառներ կամ տիրապետութիւնը միայն կը յիշէ։ Յամենայն դէպս՝ ինչպէս և։ գարուժ Գերթողահայրն Մովսէս առաջին եղաւ՝ որ երկնաբնակ Հայկ համառաեղութիւնը յերկիր իջեցնելով, որոշ կերպով Հայոց նախահայր ներկայացուց, այսպէս այլ Հ։ Բազրատունին առաջինը եղաւ և պիտի ճնայ, որ այնպիսի հակայատգործ Դիւցազներգութեամբ մը սիրելի բրաւ զնա ազգին և անմահացոյց։ Սակայն բան մի, որ աւելի աւագ նշանակութիւն ունի՝ քան թէ գերթուխ

ԳԼՈՒԽ Գ

Մխիթարեան հրատարակութեանց գրական, լեզուական ու գեղեցկագիտական առանձնայատկութիւնները, և անոնց նշանակութիւնը. — Մխիթարեան մամուլի ձեռնհաս ներկայացուցչութիւնն Եւրոպիոյ առջեւ, և անոր Արեւելքի և Արեւմուտքի միջեւ գրական սուրհանդակութեան համար հաստատութիւնի միջնորդի կատարած մեծ գերը։

ՆԶՊԱՒՈ *բնութեան մէջ ուռճացած ու պտղաւէտ ծառը գլխովին կը տարբերի իր նախատուն սերմէն, որուն մէջ պարունակուած էր երբեմն, իրրեւ խակ ու տիպ և գրեթէ աննշմարելի մանրանկար մի. այսպէս ալ խնացական կարգին մէջ՝ այրական արթուն հասակը մեծագոյն կը տարբերի — իր չքնաղ գործունէութիւն և արտադրութեամբը — սպիկար մանկութեան խորհրդաւոր՝ բայց անպարզացած ծրարէն։ Արդ, ճիշդ մի և նոյն հանգամանութիւնը կայ ազգակ և զարգացած գրականութեանց մէջ, որ ինչ է պտղալից ծառին և սերման, մանկան և չափահաս մարդուն մէջ։*

Մեր նախընթաց գլխոյն մէջ, Մխիթարեան գրականութեան ինչ ինչ հրատարակութեանց յիշատակութիւններով տեսանք — անուղղակի կերպով — որ զա բազմամեայ սկիզբն մինչեւ 1860 ական թուականին եղած ազգային գրականութեան կատարելագոյն զարգացած հասակը կը ներկայացնէ. իսկ եթէ վիճակական ճիւղն եւս ի միասին առնուի՝ այնուհետեւ կատարեալ հակայ մի կը գտնուի այն, ամէն տեսակէտով։ Բայց զարմանալի մէկ կողմէն 60 թուականէն վերջ արեւմտեան և արեւելեան ազգային գրականութիւնները եւս զարմանալի և նորադարձ կերպով սկսան զարգանալ, և սկզբնական քայլերով կը յառաջեն մինչեւ ցայսօր, կարծէք թէ մրցմտական շարժումէ և գերք մ'առնելով իրենց գրական գործակիցներու և կրթող դաստիարակներուն հետ, ի լոյս ընծայելով վիպասանական բազմաթիւ թարգմանութիւններ, յօրինելով ինքնագիր ուսումնասիրութիւններ, բառարաններ և դասագրքեր, և աճեցնելով օր քան օր լրագիրներու և պարբերական թերթերու թիւը։ Իսկ մեր կողմէն այլ եղան աշխարհաբարեան խանդավառ հրապարակախօսներէն և յօդուածագիրներէն ոմանք, զգալով կիսադարեան այդ դեռ անկոպար գրականութեանը վրայ, և քամահելով գրաբարը՝ իրրեւ փողով յայտարարեցին, թէ այլ եւս Մխիթարեանց պէտք չունին. և թէ իրենց այդ գրականութիւնն արդէն գերազանցած է քան զՄխիթարեանը։ Ասոր այս և նման եղելութիւններ առիթ կու տան մեզ ուղղակի և բազմատեսակ տեսութիւն մ'եւս ընել երկուստեք եղած գրականութեան տատանձնայատկութեանց վրայ։

Մենք իսկ համամիտ ենք, որ ազգային թէ՛ արեւելեան և թէ արեւմտեան նոր գրականութիւնն այսօր այնքան զարգացած է, չնորհիւ գերազանցեալ աշխարհատարին, որով ոչ միայն ձեռնհաս և լուրջ մատենագիրներ, այլ և սկսնակներ և սերտացուներ կը գրեն բառական հասկանալի և կոկիկ կերպով։ Այդ իսկ էր անշուշտ և է անոնց բակոյս Մխիթարեան գայեակներու, ինչպէս նաեւ նոր սերնդեան և բոլոր Մխիթարեան ջերմ փափաքն և նպատակը։ Գեռ ատկէ ճշմարիտ ըսելով, այդ կէտին հասցնելու համար առնէն ատկէ Մխիթարեանք վատասկեցան, և առէն կերպով նպատակին, ինչպէս որ մինչեւ ցարդ բառածներէն տեսնուեցաւ։ Հետեւաբար՝ ոչ թէ այն մեծ գոհութեամբ և անկեղծ հրճուանօք կը նային ազգային նշանաւոր գրողներու և գրական ուր և է յառաջախաղաց շարժման վրայ, ինչ հրճուանքով որ առոր

են նայել ծնողք՝ իրենց ծննդոց, և զոյեակներն՝ իրենց առներու յուսալարմա-
թեանը վրայ։ Այդ բարեբախտ և երջանկաւէտ օրը սիրով ակնուած և ակնապուրած
ժամուակ՝ համամիտ ենք զարձեալ, որ նոյն առուգիս, կան և պիտի լինին ազգային
հանճարեղ վիպասաններ, մատենագէտներ և հրապարակախոսներ, որք այնպիսի գրական
գործեր արտադրած են և կ'արտադրեն, որք իրենց տեսակին մէջ գերազանցիկ են
Մխիթարեանց նոյն ճիւղին վերաբերեալ առանձնական գործերէն, քանի որ հանճարն
և գրիչը ոչցա մէյն վերապահուած չէ։ Բայց թէ այդպիսիներէն քանիներ նոյն
արդեօք, մնծասանդ թէ կայ մէկը՝ որ առանց մօտէն շփուելու Մխիթարեանց հրա-
տարակութիւններուն հետ, կամ ներշնչուելու անոնցմէ՝ այդ փայլին և փառքին հա-
սած ըլլայ, այս տակաւին խնդրական կէտ մ'է, որը տակաւ յաջորդ առթիւ կրնայ
արծարծիլ։ Սակայն ընդհանուր բան մը, որ խնդրոյս էական մասը կը կազմէ, և որուն
մէջ հետ՝ նոյնպէս և իրին տեղեակ եղող ամէն ոք կրնայ համոզուիլ՝ այն է, որ ազ-
գային ոչ մի ժամանակի գրականութիւն այնքան ճոխ և բազմակողմանի եղած չէ
երբէք, ինչպէս Վենետկեանն և Վիեննականն իւրաքանչիւրն առանձին. և թէ առանց
ընծայած անընդհատ նորութիւններուն և յաջող հրատարակութիւններուն՝ միւսը նոյն
իսկ այսօր գոհացուցիչ ըլլալէն շատ հեռի պիտի մնայր։ Ահա այս բաներս են, զորս
կ'ուզենք տեղեակ չեզոքներուն եւս ակնարկ ընել։

Հին ժամանակները գրականութեան ներկայացուցիչներն էին միայն այն անախտ
մագաղաթները կամ գրատար յիշատակարաններն, որոնք կամ հեղինակներուն միայն
և կամ քիչերուն ծանօթ էին։ Տպագրութեան արուեստէն վերջ՝ ընդհակառակն՝ զոր-
ցեա իմն տպագրուած մատեանները միայն կը հանդիսանան անոր իրրեւ ներկայացու-
ցիչք. այլ գեռ տպուած չեն՝ նման են այն տակերքի և ազամանդարեր հանքերուն,
որոնք կը մնան անծանօթ հասարակութեան։ Արդ, այս տեսակէտով աչքէ անցնելով
Հայկական մատենագիտութիւնը, այսինքն է՝ ակիզբէն մինչեւ այսօր տպագրուած մեզ
ծանօթ գրոց ցուցակը, մենք կը տեսնենք, որ նոցա ընդհանուր թիւը 3000–3,300ի
հասիւ կը հասնի, ի նկատի առած երբեմն փոքրիկ տետրակները կամ Յայտարարու-
թիւնները եւս։ Այս թուոյս 1180ը են Մխիթարեանց ձեռքով ի Վենետիկ տպուած
այն գործերը, որոնք կրնան տետրակս գրուածք կոչուիլ, առանց ուզելու ի նկատի
առնուլ այն փոքրիկ՝ բայց բազմաթիւ Յայտարարութիւնները և առանին հանդէսնե-
րու առթիւ տպուած տետրակները։ Իսկ եթէ ուզուի առանց վրայ յաւելցնել նոյն
իսկ այն գործերէն շատերու կրկին, երեքկին, և այլ, հրատարակութիւնները՝ այն
ժամանակ ի Վենետիկ տպագրուած գրոց թիւն 1500ի [1] կը հասնի։ Վիեննական
Հարց ձեռքով ի Թրիեստ և Վիեննա տպուած գրուածոց վերջին և ընդհանուր ցուցակ
մի չունենալով, ես չեմ կարող նոցա թիւը ճշդիւ որոշել։ Բայց կարելի է մերձաւորա-
պէս նշանակել իրենց իսկական աշխատասիրութիւնները միայն 500–600, որով Մխի-
թարեան երկու առներու հրատարակութիւնները իրարան առած — առանց հաշուե-
լու ex Մխիթարեաններու գործերը — կ'ունենանք հետեւեալ թուական համեմատու-
թիւնը, այսինքն է՝ 2,000–2,100՝ ու 3500. կամ լաւ եւս՝ ընդհանուր հայկական
հրատարակուած 3500 գործերէն՝ 2000էն 2,100ը Մխիթարեանց կը պարտիմք։ Ուրեմն
Մխիթարեանցմէ միայն ի լոյս ընծայուած գործերը, թուով իսկ մեծամասնութիւն
կը կազմեն ազգային բոլոր միւս մասիւններու հրատարակութեանց հանդէպ։

Մենք դիտել կու տանք, իրր առյդ եղելութիւն՝ որ Մխիթարեան Հարց գեռ
հարիւրաւոր անտիպ գործեր եւս կան, որոնք թէեւ արտաքնոց ծանօթ չեն, տակաւին
և այնպէս ինչպէս Միսրանութեան՝ այսպէս և ազգին համար մատենագրական առյդ
գանձեր են, միայն թէ երկայն տարիներու աշխատասիրութիւններ են, և ուշ կամ շուտ
հրատարակութեամբ՝ կարող են օգտակար լինել ամենուն, և ճոխացնել ազգային գրակա-
նութիւնը՝ նման նախնեաց հինաւուրց ձեռագիրներուն։

Մխիթարեան գրականութեան երկրորդ առաւելութիւնն է անոր բազմակողմա-
նութիւնը, որուն հետ համեմատելով ազգայինը՝ խոտո ոտքոտ և միօրինակ կը գտնենք
գրեթէ։ Յերուսի, եթէ ուզուի վենետկեան վերոյիշեալ 1500 հրատարակութիւնները մա-
նաճիւղերու բաժնել, մենք կ'ունենանք 20 Աստր Գիրք, 11 Մեկնութիւններ, 32 Նիւ-

---

1. Այս հրատարակութիւններէն 327ը աչխարհաբար են, առանց կրկին տպագրութիւններն հաշուելու, 33ը տաճկերէն, եւ 150ը եւրոպական այլեւայլ լեզուներով թարգմանուած։

դեցական մատեաններ, 40 *Աստուածաբ. և կրօնական*, 23 *խնամս. և իրաւագ. ինքնագրութիւններ*, 33 *Աղօթագրքեր*, 94 *բարոյ. գրուածք*, 57 *Վիպասս. և բարոյախրատք*, 15 *Առակներ*, 109 *Մատենագրութիւք նոր ազգ.*, 86 *Նոր բարգաւաճութիւնք և բանաստեղծականք*, 95 *Պատմ. և կենսագ. գործք*, 86 *Աշխարհագ. և հնագիտական գրուածք*, 172 *Աստեղաբ. և գիտական*, 12 *Առողջապահականք*, 26 *գրախօսական կամ քննադատական երկասիրութիւններ*, 70 *Պարբերականք*, 11 *Քննութեցաւորութիւք մանկանց*, և 13 *Բնագիտ. և բնագրատուական*. 18 *Զանազանագիտականք*, 10 *Ձարտարապետութիւք*, 20 *Բառարաններ*, և 30 *Վերակացութիւններ*. *իսկ մեծագոյն ու զանազան նիւթեր պարունակող և անորակելի գրքեր*։

Այս փոքրիկ պատկերիս մէջ արդէն ակներև կը տեսնուին բոլոր այն լայնատարած նիւթերն, որոնք կը կազմեն քան և չորս դարուց գրական երկունքը, Պղատոնէն սկսեալ մինչեւ Թէն, Հոմերոսէն մինչեւ Ֆրանսուա Կոպէ, այնինքն է՝ հելլէն լատին, ասորի, հայ և եւրոպական նոր գրականութիւնը՝ իրենց ամենագեղեցիկ ծաղիկներովն և համեղ պտուղներովը, զոր Մխիթարեանք իրենց ճաշակովը ծաղքեր, իւրացուցեր և ապա հայացուցեր են։ Ուստի զայս ի նկատի առնելով՝ կրնանք ըսել, թէ Մխիթարեան և գուցէ միայն Մխիթարեան գրականութիւնը — նկատմամբ եւրոպացւոց — կարենայ ունել համաչխարհական նշանակութիւն. վասն զի գրաբարին հետ՝ աշխարհաբարը, հնոյն հետ նորը, և հայկականին հետ եւրոպական լեզուներն եւս կը զուգընթանան հոն։ Որով հայկականը համերաշխաբար ժառանգութիւն դարձած է եւրոպացւոյն, և եւրոպականը՝ հայութեան։ Այս յատկութիւններս ի գուր է որոնել ոչ Մխիթարեան գրականութեան վրայ, ժԹ. դարու վերջին յիսնամեակէն յառաջ. իսկ անկէց վերջ ալ՝ մանկական և խիստ անկատար կերպով ի հարկէ։

Սակայն Թուական և տեսական այդ կրկին առաւելութենէն դուրս՝ Մխիթարեան գրականութիւնն ուրիշ առաւելութիւններ ևս ունի, յորս կը փայլին մեծագործութիւն, գեղեցկագիտութիւն կամ արուեստի կատարելութիւն, ձեռնհասութիւն և գիտական ոճ։

Նախ և առաջ դիտելու ենք, որ Մխիթարեան Միաբանութենէն հրատարակութիւններն մեծաւ մասամբ բազմահատոր հսկայ գործեր են, և կամ միահատոր մեծագիրք։ Այս ալ ըսենք, որ ազգայնոց մինչեւ ժԹ. դարը եղած հրատարակութիւնքն ընդհանրապէս մեծնոյն նիւթերու ծիրած, անարուեստ և ապուշ կրկնութիւններ են — ինչպէս և անկէց ետքը եղած հրատարակութենէն մի մեծ մասն — այդ անուան ուելի արժանի են, քան թէ հայկական մատենագրութեան պատիւ բերող և գիտնոց յագեցուցիչ բաներ։ Եւ ատոր պիտի, մեր այդ համեմատութիւնն ակներեւ ընելու համար, բաւական է յիշել Հայկազեան նոր Բառարանին [1], Մխիթարայ հին Հայկզ., և Բաֆֆունեաց Գիտարբեանց և արուեստից բառգիրքը։ Զամչեանի Հայոց Պատմութեան, Եւսեբիոսի Քրոնիկոնը՝ որ հայերէն

---

1. *Ի դէպ՝ կարեւոր կը համարինք երկու խօսք ըսել այս տեղ — անցելոյն մոռացութենէն — բառարանիս մասին։ Ինչպէս ամէն մեծ գործ՝ այսպէս և «Հայկազեան բառարանը» երկայն ժամանակի և մեծ դժուարութեանց մէջ կը յաղցուէր ու ծնանէր։ 1824 թուականէն յառաջ արդէն այդ հսկայ երկասիրութեան յօրինման պատրաստութիւնները տեսնուած էին և հռչակն ալ մինչեւ ի Հնդիկս հասած և ուսումնասէր սրտերը թրթռացուցած։ Չի Մխէսի Կարապ. Խաչիկ Նազիկեան (Աւագ Արկաւագ Երուսաղէմի) եւս ի Յունվ. 1824 Աէյոտպատէն՝ առ Գերպ. Աբրահայրն Ուխտիս գրած նամակին մէջ այսպէս կը յայտնէր իր տենչանքն և հիացումը — հսկայ գործիս ծնանիլը դեռ չի տեսած —. «Մեք առ հասարակ անչափ բաղձանօք ապասեմք տեսանել ի լոյս ընծայեալ զառ ի ձէնջ խոստացեալն զամենաճոխ նոր բառարանն Հայոց, որ է յաւուրկ և առանձին պարծանք ազգիս մերոյ, և անջնջելի յաւերժական յիշատակ միաբանութեան ձերում։ Գիտեմք զգործոյն դժուարութիւնն, այլ յանխոնջ ջանք և տքնութիւն ձեր վստահ լինելով, ոչ կասկածեմք, զի փութով ընծայելոց էք ի լոյս, ի յուրախութիւն և ի ցնծութիւն համօրէն հայկազնեայցս։ Երանի՛ թէ կենդանի լինէի համբուրել զայս մատեան խնկելի»։*

Եւ սակայն հրատարակութիւնը կը յապաղէր մինչեւ 1838. ըստ ուրում իր տեսակին մէջ եղական այդ գործն շատ աւելի կատարեալ պիտի ըլլար, եթէ տարաձայնութիւնք գաղափարաց և ծրագրի տեղի չունենային բարերարաց և յօրինողաց միջեւ, մանաւանդ եթէ վերջնոցս լիուլի ազատութեանը թողուած ըլլար ամենայն ինչ։ Ցոյժ հետաքրքրական են յետնոցս համար և շատերուն անծանօթ բառարանիս կազմութեան վերաբերեալ այն ծրագիրները, որով կը մեկնուին անոր օրպիսութեան պատճառները, և մենք իբրեւ նորութիւն կ'ուզենք մէջ բերել հոս համառօտիւ։

Գերպ. Սուքիաս Սոմալեան — 28 Նոյ 1828 առ Հ. Իգն. Փափազեան գրած նամակին մէջ — կը գրէր Բառարանիս Մեկենասին՝ տիւզեան Յակոբ չէլէպւոյ համար, թէ «Զկամի ոչ Աւետիքեան բառարանն,

Թարգմանութեան հետ կը պարունակէ եւ յատկն Թարգմանութիւնն և յոյն բնագրի համակատարքը՝ հազարաւոր ճոխ ծանօթութիւններով, Ընճիճեանի եռահատոր Հնախօսութեան, Ոսկեի Հնախօսութեան և Հռովմայեցւոց Պատմութեան բազմահատորք, Աւգերեանի 12 հատոր Լիակատար վարք սրբոց, որով մեծ վաստակաւորը կը մրցի Բոլանդեանց հետ, 8 հատոր Դարապատումը, Ագռնցի 6 հատոր Աշխարհագրութեան, Ակներեանի, Եփրեմի, Փիլոնի և նախնեաց Մատենագրութիւնքը. Սարմոսի 10 հատ. Պօղոսի ըղոց 3 հատոր Մեկնութեանց և Տարակալի բացատրութեան. վեց հատոր Պռոտաբրոսի, Կեսարացւոյ Եւսեբեայ և այլն Յէսօրեայ, և Յոհեռոյութեան կրսերի Վնասրսեանց, Մեծ և փոքր Ատամները, Մխիթարայ, Զամչեանի, Աւետիքեանի, Բագրատունեաց և Այտընեանի — պարտացելոց համար յօրինած — հոյակապ Քերականութեանց, Առաջադաշնեանց ու երկհատոր մեծադիր Ճաշոցը, Սիսուանի, Այտարատի, և Սիսակեանը:

Արդ հարիւրաւոր այսպիսի հոյակապ գործերու նման՝ Հրատարակութեանց քով՝ ազգին մէջ մինչեւ այդ ժամանակ տպագրուածները չէ կարելի համեմատութեան առարկայ կացուցանել: Այն փոքրիկ և անձեւ Հրատարակութիւններն՝ այլ տմերտական եղած են պրեթէ միշտ ազգային մեւս Հրատարակիչներուն, Մխիթարեան մատենագիտութեան մէջ բացառութիւններ կը կազմեն: Ուրեմն Վենետիկեան Հրատարակութեանց անհամեմատ քանակը կամ ծաւալն ի նկատի առած, կարելի է ըսել առանց չափազանցութեան, թէ ազգային մեւս բոլոր Հրատարակութեանց կրկինը կը կազմեն:

Իրաւ է՝ որ ամէն անգամ գրուածքի մը գրական կամ գիտական և կամ լեզուական արժէքը՝ նիւթական քանակէն կամ ծաւալէն չի չափուիր. և թէ վերջին յիսնամեակին մէջ — այսպէս և յառաջ — եղան ազգային նշանաւոր գրիչներ, որոնք փոք-

---

ոչ Աւգերեան, ոչ Անթիմեանեան, և ոչ այլոց ուրուք, այլ յամենեցունց մի. զի Մխիթարեան էին, և ոչ իւրաքանչիւր ուրուք »: Գեղեցիկ է գաղափարս. այս մասին բնաւ խորհրդածութեան տեղի չկայ:

Բայց Մեկենասս — թէ ի 28 Սեպտ. 1825 իր հիւանդութեան անկողնոյն մէջէն առ Հ. Կարապետ Եսայեան գրած նամակով, և թէ Հ. Եփրեմ Վ. Աճեմեանին բերանացի յանձնարարութեամբը — դեռ ուրիշ պայմաններ եւս կը խնդրէր հաղորդել Աբբահօր, որոնցմով կը ձանրանար Բառարանիս յօրինողաց, կամ լաւ եւս անոր հեղինակին Հ. Մկր. Աւգերեանի վրայ: Իսկ ի 10 Հոկտ. գրած թղթին մէջ կը գրէր որոշակի հետեւեալները Ա. Ազգին տպիւռութեան և աղքատութեան վիճակը տեսնելով, ամենայն ընդարձակ գործք անօգուտ կ'ըլլան. զի քիչ են ընթերցողք... վասն որոյ հարկաւոր է, որ յիշեալ բառարանը կիսով չափ համառօտուի. այսինքն 2 հատոր ըլլայ, Ակադեմիային կամ Laveaux'ի բառգիրքներուն չափ: Բ. Այնչափ համառօտուի, որ 1,000 ոսկիէն աւելի չըլլայ անոր տպագրութեան ծախքը: Գ. Ոճն և եղանակ կազմութեան ըլլան որպէս Եւրոպացւոց երեւելի բառարաններուն — որպիսիք են Ակադեմեանը, Ֆռէդէրիկեանն ու Կռուսկեանը, և այլն: Բառերու Սինոնիմները (համանիշք) գրուին, և ոչ առուգաբանութիւնք, կամ սիստեմատիք վարդապետութիւնք չըլլան, և ոչ առուգաբանութիւնք — բաց ի օտարամուտ բառից. վերջապէս՝ ամենայն կերպով կատարեալ ըլլայ, ոչ ազգին վիճակին նայելով, այլ որչափ վանքին այժմեան գիտութեան վիճակին հնարաւոր է. որով այս բառարանն ըլլայ մեր ազգին այնպէս, որպէս վերոյիշեալ բառարաններն՝ Եւրոպացւոց: Գ. կը յանձնարարուի՝ որ Վ.Վ. ՀՀ. Գաբրիէլ, Մկրտիչ, Մանուէլ, Եղիա, Յարութիւն և Աբէն վարդապետք ընտրուին ի միասին այդ երկասիրութիւնն աչքէ անցնելու. և հուսկ ուրեմն յիշեալ վարդապետաց առանձին առանձին առտրագրութեամբ վկայութիւն տրուի — գործը աչքէ անցնելուն և կատարելութեան հասցնելուն —. և թէ ճակատին վրայ ալ տոյն վարդապետներու անուանքն արձանագրուին:

Դիտելու է, որ Մեկենասէն առաջարկուած Ա. պայմանը՝ չհամաձայնիր Գ. պայմանին մէջ նօտրագրով գրուած տողերուն. իսկ բանելիք ոճին և եղանակի որոշողութեամբը մեծապէս պիտի չվոխէր յօրինողներն և բառարանի կատարելութեանը վրայ: Ուստի Հ. Մկր. Աւգերեան — որուն վրայ կը ձանրանար աշխատութիւնը, զի միւսներն ուրիշ երկասիրութիւններով զբաղած էին — իր մէկ անթիւ տկար նամակովը պատասխանելով Տիւզեանի առաջարկութեանցը, իրաւամբ ոչ միայն զանոնք անկարելի և գործին խանգարիչ կը համարէր, այլ և իր յատուկ ծրագիրն եւս կը ներկայացնէր, որ աւելի բանաւոր և նպատակաւոր պատճառներու վրայ հիմնուած է:

Անհատական այդ ծրագիրը. « Ա. մեզ եւս փափաքելի է — կը գրէ նա — յերկուս հատորս բովանդակել զինդրելին. բայց այս դժուարին է, մի՝ վասն զի այժմ այնչափ բազմացեալ են բառք մեր, զի թէ լոկ նոքա գնիցին՝ հանդերձ մեկնութեամբ և վկայութեամբ, իրաքանչիւրն ի նոցանէ ունի գրաւել զերիս տողս. որով երկու հատորն չափաւոր լինի: Դարձեալ մեր գիրն մարմնեղ լինելով՝ մի հատորն գաղղիարէնի գրաւնացէ զտեղիս երից հատորոց մերոց »: Ապա կը յարէ, եթէ Ռուսկայի կամ Ակադեմիայի ոճն եւս բռնենք, աւելի եւս անկարելի պիտի լինի 2 հատորի մէջ աւարտել զայն: Բ. կ'ըսէ նա. « Երբ կապի բանն՝ ի չափ փողոյն, նովին չափ և՝ գործն ելանէ. և կատարելութեան կամ անկատարութեան երաշխաւոր լինի նոյն իսկ չափ ծախուցն »: Ուստի այս և ուրիշ երկու դիտողութիւններէն վերջ, կրկին կէտեր կ'առաջարկէ Աւգերեան՝ Յ. չէլէպոյն. Ա. « զի մի' կապեսցի չափ փողոյն, այլ տացի յոյս, թէ պակասն լցեալ լինի, երբ չբաւէ: Բ. Մի' արտաքսեսցին ի Բառարանէս յն. լտ. պրակ. ընդ հնուրք (բառք), այլ

բիկ հատորներու խակ գրական ուժգարժէք նորութիւններ ընծայելին, սակայն գոքա այնպիսի յարգելի բացառութիւններ են, որք չեն կրնար ազգային մատենագիտութեան ընդհանուր պայմանները փոխել, որուն վրայ է մեր խօսքը։ Այո՛, որչափ որ ալ մատենագիտութիւնը, կամ տպուած մատեաններուը, արտաքին ներկայացուցիչներ կը համարուին գրականութեան, սակայն այդ ներկայացուցիչներն խակ՝ թատերարեմին վրայ ելած դերասաններու նման՝ այնչափ աւելի ազդեցիկ և հրապուրիչ կարող են բնել գրականութիւնը ընթերցողաց, որչափ առքա իրենց առանձնաձ դերը՝ հանդիսատեսաց, եթէ տիրապէս գիտցած են ոչ միայն անոր արտաքին արդուպարդը և պահանջուած տարազը, այլ և ոգին և ժամանակը։ Մէկ խօսքով՝ մատեաններն երբ լոյս կը տեսնեն մատենագիտութեան ձեռնհաս հեղինակաց ձօխ պաշարով, տպագրական արուեստի վերջին կատարելագործութեամբ, լեզուի և ուղղագրութեան մասին ստանելիք իմաստքովը, և ատանդապահի յստակ հաւատարմութեամբ, այն ժամանակ միայն կրնայ գոըցուիլ, թէ են ճշմարտապէս և արժանաւոր ներկայացուցիչք գրականութեան, բոլոր իր մասնաճիւղերովը. թէ են նոյն ինքն գրականութիւնը՝ մարմնացեալ և պերճացեալ ամենայն վայելչութիւններով։

Խակ գալով Մխիթարեան հրատարակութեանց, դուք կը տեսնէք, որ — ի բաց առեալ մի քանիսը — մեծամասնութիւնը յիշեալ հանգամանքներովը ճոխացած են։ Ականալ Մխիթարայ Աստուածաշունչին և գրաբար վերադարձուցիչներն ամէնքն ալ իրարմէ աւելի կամ պակաս նախ տպագրական արուեստի կատարելութիւն և գեղեցկութիւնը կը ցոլացնեն։ Եւ այդ արուեստն և գեղեցկութիւնը ժամանակին յառաջելովը թէեւ ոչ անընդհատ, այլ միշտ զարգացման դիմած են։ Եւ առաջիւ այդ զարգացման և եւրոպական երեւելի տպագրութեանց հետ ունեցած մրցութեան արդիւնք

մանաւանդ յաւելցին և՛ խառն. և պաղխաբէն. զի թէպէտ առքա երկարել կարծեն գործն, այլ այլով մատամբ կարճագոյն, անբատգոյն և խմաստնագոյն գործեն։ Զի թէ այսպիսեօք ոչ ամբաստի գործս, բազում մեկնութեանց կարօտին բառք գլխաւորք, որպէս և՛ խրթինքն և նորք, որք ծուացան ի պրոց Դիոնիսիոսի, Փիլոնի, Ոսկեբերանի, և այլն, զորս անհնար է առաւգապէս մեկնել՝ առանց երկարաբանութեան և բազում վկայութեանց, եթէ ոչ դիցին բառք բնագրիս։ Եւ որ մեծն է, ի մէջ համօրէն գիտնականաց մերոց կարեն լինել և լինին օր ըստ օրէ այլ և այլ կարծիք՝ ի վերայ մտաց իւրաքանչիւր բառից, զորոց զվէճն բառնայ հաւատարիմ վկայ և բնագիր։ Դարձեալ անուն բառարանիս հնչեալ է Յերուսա, և ենթադրին ամենեքեան, թէ ինքեանք եւս ունին վայելել, այսինքն՝ տեսանել զբառս իւրականս՝ յայտնաբանիչս հայկականին »։... « Եթէ այս ամենայն պատճառք — կը յարէ Հ. Աւգերեան — թուիցին անբաւական, յայնժամ վերջին խնդիր իմ այս է. զի կրկին լիցի փողն ազգադրութեան, որպէս զի յետ ազելոյ զիւրաքանչիւր տեսր՝ առանց այլոց լեզուաց, նախ քան զափեզ շարողաց զտառան. յաւելից եւս տալ շարել և՛ զյաւելուած բազմալեզու բառից. և այնպէս նոյն գործ ելցէ միանգամայն երկատեսակ »։

Աւգերեանի այս ծրագիրն եթէ ամբողջապէս գործադրուած ըլլար, տարակոյս չկայ՝ որ մենք այսօր պիտի ունենայինք Հայկազեան մը յոյժ այլազգ հրատարակուածէն. այսինքն է՝ և՛ հային և օտարաց համար առ հասարակ պաշտելի։ Եւ եթէ չգործադրուեցաւ՝ սակայն և այնպէս պիտի մնայ ազգային տպագրողաց համար իրրև խմաստուն առաջնորդ մը եւ յիշեցուցիչ։ « Հայկազեանի » ներկայ կացութենէն դատելով, կ'երեւի, թէ խմաստուն Աբրահայրը Տիգեան Մեկենասին հետ՝ յօրինողին եւս մատամբ մը գոհացուցած տալու միջոցը գտած է և երկու ծրագրերն իւրք իրարու հետ միաբանած. վասն զի յն. լտ. և մատամբ պրս. և այլն, բառերը դեռ վերցուած չեն բնագրէն. բայց Աւգերեանի ընդարձակագոյն աշխատասիրութիւնն ալ համառօտուած է գգալի կերպով, ի յարգանս Ջէլէպոյին։

Յամենայն դէպս՝ յամին 1838ին լոյս տեսնող « Հայկազեանը » ամենուն ուշադրութիւնն առ ինքն կը գրաւէր, բանասիրաց իդոլը կը դառնար։ Հ. Աբր. Բագրատունի — 15 Օգոստ. գրած նամակով — կը ծանուցանէր, թէ « Այժմ մեծաւ հետաքրքրութեամբ թարթափեալ թատալին աստ ուսումնասէրք ընդ նորատիպ մեծ բառագիրդ. երանի՛ որոց ներբէ ժամանակին »։ Բառարանիս տպագրութեան ատաղորդներէն մին, այն է՝ Գազէկեան Յար. Ա. մերան դժբախտաբար վախճանած էր արդէն, առանց զանի տեսնելու։ Իսկ Յակոբ Չէլէպին ընդունելով անկէ օրինակ մի — Աբրահօր ինքնագիր ընծայականովն — վերջին ատիճան գոհ կը մնար, և ի 29 Յունիսի կը գրէր հիացումով լի հետեւեալ նամակը. « Զոր օրինակ բեւեռական ազինք հիւսիսոյ յետ տխրութեան երկայն գիշերոյն՝ ողջունեն խնդամիտ զդուարթաբար ծագումն արեգական. ոչինչ ընդհատ ցնծալից գոհութեամբ ընկալաք և մեք զնուէր սիրոյ և մեծարանաց Արբութեանդ՝ Հայկազեան նոր բառագրքովդ, որում յետ բազմամեայ ի ծննդենէ մերմէ ակնկալութեանն՝ արժանի եղաք տեսանելոյ զլուսածագողդ ատուերանատաց՝ առ ոտս Պատնասեայ՝ հայատառն ժողովրդոց։ Ոչ ունիմ զհաճութիւն և զկայտառել սրտիս ի դէմս ածել ընդ այս շնորհ վեհագոյն աղոյ Բարձրելոյն՝ ի ձեռանէ Ձերմէ մատակարարեալ, բայց եթէ ի նմանութիւն տանելով զայն հեշտալի կրից բերկրապատար սրտին Վռամշապհոյ մերոյ Թագաւորին, ըստ այնմ ժամու պատահիցն՝ զի ընկալաւ ի ձեռաց երանելոյն Սահակայ զտախտական հայերէն նշանագրոց և զաստուածաշունչ ատենին հայրենասիրաց մատենից։

Եւ առանձինն ընդ Արբագնութեանն ձերում խնդամ, զի երկնեալն ի վաղ ժամանակաց բարեյիշատակ նախորդացն ձերոց՝ առ Ձեօք և ի ձեռն Ձեր եկն ի ծնունդ և յաճումն վայելուչ հասակի և զեղոյ՝ հնարաւոր մերոյս երկրորդութեանն կարգի կատարման... »։

Յամենայն դէպս՝ յամին 1838ին լոյս տեսնող « Հայկազեանը » ամենուն ուշադրութիւնն առ ինքն կը գրաւէր, բանասիրաց իդոլը կը դառնար։ Հ. Աբր. Բագրատունի — 15 Օգոստ. գրած նամակով — կը ծանուցանէր, թէ « Այժմ մեծաւ հետաքրքրութեամբ թարթափեալ թատալին աստ ուսումնասէրք ընդ նորատիպ մեծ բառագիրդ. երանի՛ որոց ներբէ ժամանակին »։ Բառարանիս տպագրութեան ատաղորդներէն մին, այն է՝ Գազէկեան Յար. Ա. մերան դժբախտաբար վախճանած էր արդէն, առանց զանի տեսնելու։ Իսկ Յակոբ Չէլէպին ընդունելով անկէ օրինակ մի — Աբրահօր ինքնագիր ընծայականովն — վերջին ատիճան գոհ կը մնար, և ի 29 Յունիսի կը գրէր հիացումով լի հետեւեալ նամակը. « Զոր օրինակ բեւեռական ազինք հիւսիսոյ յետ տխրութեան երկայն գիշերոյն՝ ողջունեն խնդամիտ զդուարթաբար ծագումն արեգական. ոչինչ ընդհատ ցնծալից գոհութեամբ ընկալաք և մեք զնուէր սիրոյ և մեծարանաց Արբութեանդ՝ Հայկազեան նոր բառագրքովդ, որում յետ բազմամեայ ի ծննդենէ մերմէ ակնկալութեանն՝ արժանի եղաք տեսանելոյ զլուսածագողդ ատուերանատաց՝ առ ոտս Պատնասեայ՝ հայատառն ժողովրդոց։ Ոչ ունիմ զհաճութիւն և զկայտառել սրտիս ի դէմս ածել ընդ այս շնորհ վեհագոյն աղոյ Բարձրելոյն՝ ի ձեռանէ Ձերմէ մատակարարեալ, բայց եթէ ի նմանութիւն տանելով զայն հեշտալի կրից բերկրապատար սրտին Վռամշապհոյ մերոյ Թագաւորին, ըստ այնմ ժամու պատահիցն՝ զի ընկալաւ ի ձեռաց երանելոյն Սահակայ զտախտական հայերէն նշանագրոց և զաստուածաշունչ ատենին հայրենասիրաց մատենից։

Եւ առանձինն ընդ Արբագնութեանն ձերում խնդամ, զի երկնեալն ի վաղ ժամանակաց բարեյիշատակ նախորդացն ձերոց՝ առ Ձեօք և ի ձեռն Ձեր եկն ի ծնունդ և յաճումն վայելուչ հասակի և զեղոյ՝ հնարաւոր մերոյս երկրորդութեանն կարգի կատարման... »։

են այն բազմաթիւ դիպուածներն և ակն — արծաթի մեդալիոնները, զոր կորզած են Մխիթարեանք՝ Եւրոպիոյ մերթ միջազգային և մերթ համաշխարհային ցուցահանդէսներէն։ Այս մասին երկար խօսելն աւելորդ է, քանի որ հին գործոց քով կեցած են նոյն իսկ վերջին քառամեակին մէջ հրատարակուած պատկերազարդ գործերը կամ գեղունիք, և կը խօսին մեծաձայն ապագրութեան վերջին խօսքը։ Չեմ գիտեր, թէ Մխիթարեաններէն զատ՝ կա՞յ ազգային ուրիշ հրատարակիչ մը՝ որ համաշխարհային այդ մրցանակներուն արժանացած ըլլայ։

Մատենագրութեան կամ գրականութեան երկրորդ և աւելի կարեւոր յատկութեանց մին է, և՛ գիտական և կանոնաւոր ոճը կամ մեթոտ. և ասով է՝ որ ոչ միայն կը պահպանի ամբողջ բնագրոյց ինքնուրոյնութիւնը — հայացուած ժամանակ — և հայ լեզուն անաղարտ, այլ և բրիչի պէս գրչի անընդհատ գործելովն իսկ կը մշակուի կորթ հողը, և յառաջ կը բերուին մոռացուած արդիւնքը։ Այս նպատակաւ է՝ որ մեր նախնիք հնուց ի վեր այնքան պէտք կը զգային երթալ Ալեքսանդրիա, շփուիլ ներքացած յոյն մտքին և ճաշակին հետ, և իրենց անկոպար միտքն և ճաշակը կը ջանային ներքացնել։ Բայց հայ ժողովուրդը բաց ի մի քանի թարգմանիչներէ, ուրիշ մշտական կեդրոն մի չունեցաւ Ալեքսանդրի մէջ, որ տեւական միութեան անխզելի կապով մի միացեալ պահէր գինքը անոր հետ. որ կարենար կանոնաւոր կերպով և չարունակաբար փոխադրել իրեն մէջ գիտութեան, գեղեցկին և նուերին բոլոր արտայայտութիւնքը։ Հետեւաբար գիտութեան, միթոտի և ճաշակի այս պակասն՝ ինչպէս գինի թարգմանչաց, նաև առաւել անկէց վերջ մինչեւ ԺԲ. դարը, եղաւ հայկական գրականութեան ամենամեծ թերութիւնը, որը մեծապէս ազիտարեր եղաւ նաեւ ի քաղաքականին։ Եւ վերջին ազատունդը, զոր վերածնելու ձեռք կը զարնէր Մեծ Աներաատացին, իր կեանքին և նոր կենցաղին յարմար և ձեռնաու գրեանցմէ աւելի՝ ասիական խառնափնդոր քաւոսէն անկանոնութիւնը, տարտամութիւնն և թանձրութիւնը ժառանգած էր։ Ժամանակակից հրատարակութիւններն իսկ, որոնցմէ գիտութիւն, յոյս և յոյս կը ապասաւէր, պարզապէս բաղդի բերմամբ և առանց միթոտի և գիտութեան լինելով, կայծոռիկներու պէս փայլփլին և մարիլը մէկ կ'ընէին։

Մխիթարեան տունով ինչպէս առաջին անգամ կը հաստատուէր միացեալ և գործօն կեդրոն մի Ալեքսանդրի և Աթենքի մէջ, այսպէս այլ անոր յաջորդներուն յարատեւ չափանիշ եւրոպական մտքին հետ և կանոնաւոր և նպատակայարմար գործունէութեան չնորհիւ է, որ արեւմտեան գրականութեան կանոնաւոր յատկութիւնը կը փոխանակէր արեւելեան քմահաճոյքին, և կը տարրանար հայոց մէջ։ Մենք մեր գրութեան նախընթաց գլխոյն մէջ ցոյց տուինք արդէն Մխիթարեանց միթոտով ընդհանուր գործունէութեան գոյութիւնը. այժմ կրնանք եզրակացնել, թէ արդարեւ այդ բնագրոշմը կը կրեն իրենց վրայ անոնց թէ ինքնագիր և թէ թարգմանութեամբ լոյս տուած գործերը. այսինքն են՝ լեզուական, կրօնական և պատմական գրեանքը, հնախօսական և աշխարհագրական ուսումնասիրութիւնները, հելլէն լատին և եւրոպական հրաչակերտներու յաջող թարգմանութիւններն և նախնեաց հինաւուրց գործերը։ Այո, արեւմտեան միտքը հայկական լեզուին հետ զուգելով է՝ որ հիանալի և անվերջ բեղմնաւորութեամբ մատնացուցին Հոմերոսը, Եւրիպիդեան և Սոփոկլեսը, Դիմոսթենը, Եւքլիդեսը և Կիկերոն. Թուկիդիտեսը, Պլուտարքոսը, Կիկերոնը, Կեսարը, Վերգիլն և Օրատիոսը, Սենեկան, Սալուստիոսը, Եվրիմը, Բարթեղը, Ալֆոնսը, Ռակինեանը, Փլոնը, Եւսեբիոսն և Օգոստինոսը, ինչպէս և՛ Լուսաւորչին սկսեալ բոլոր մեր նախնիքը։ Դանտէ, Պետրարկա, Տասսոյ, Միլտոնը, Շէքսպիրը և Շիլլերը, Բոսիւէ, Բուրդալու, Մասիլոն, Ռակէն, Ֆենելոն, Ռասինեանը և Կոռնէյլը, Լամարթինը, Լը Կոնտ Դելիլը, Կոպշտոկը, Ալֆիերին, Ուգոյ Փոսկոլոն, Ֆրէնհնուսը, Պայրն, Մանձոնին, Վայզմանը, Լէոպարտին, Կարմէն Սիլվան, Ֆր. Կոպէն, Դէ Ամիչիսը, և ուրիշ հարիւր և մի հին ու նոր հեղինակները, որոնց անուանքը միայն առաւար ցանկ մի կը կազմեն։ Սոքա էին՝ որոնք գիտութեան և հանճարոյ նեկտարովը կ'արբեցնէին հայութիւնը, որ կը ներքացնէին անոր ճաշակը, և միտքը վեր կը բարձրացնէին դէպ ի ազնիւը և վեհը, դէպ ի վանձն ու գեղեցիկը։

Սակայն Մխիթարեանք մեր համաշխարհի նշանակութիւն ունեցող գրականութեան այս վեհ յօրինուածութիւնը կատարած ժամանակ, ոչ արդեօք չատերուն պէս գծուծ կերպով գրական գոյութիւններու կը դիմէին, գործարուելու համար, և ոչ այլ իսկ ու իսկ թարգմանութեամբ օտար բնագիրները կամ հայկական լեզուն կը խանգարէին. վասն զի նոքա այս ինչ կամ այն գրուածքին գեռ ձեռք չի զարկած՝ գիտութեանց

հարուստ պաշարներով կը պատրաստուէին երկայն տարիներ. և ինչ որ ժուռարութեամբ կ'ընէին հինները՝ նոյնը ուելի դիւրութեամբ ըրած են և կ'ընեն գրական այդ բարեխիղճ մշակները: Մխիթար, Հ. Մաթէոսներ, Իգնատիոսներ, Ջախջախեաններ, Թոմաճեաններ, Միւրմէլեաններ, Սոմալեաններ, Բագրատունիներ, Հիւրմիւզեաններ, Ալիշաններ և անոնց յաջորդները, վերոյիշեալ գրեանքը՝ այսինքն թէ քերականութիւնն և բառարանները յօրինած ժամանակ՝ էին արդէն տիրապէս քերականներ և բանասէրներ. և մինչեւ ցայսօր ոչ ոք գերազանցեց անոնց քերականութիւնները և բառարանները: Պատմութիւններն, Աշխարհագրութիւններն և Հնախօսութիւնները յօրինած ժամանակ՝ էին առուգիւ պատմագէտներ, աշխարհագէտներ և հնախօսներ. և սոր համոզուելու համար՝ բաւական է կարդալ անոց այդ մասին արտաքնոց հետ ունեցած յարաբերութիւնքը: Աստուածաբանութիւններն և աստուածաբանական Մեկնութիւնները երկասիրած առնն՝ էին արդէն ներկուս աստուածաբաններ, և մեկնիչներ. Վենետիկի Ս. Ղազարու Հայկական ճեմարանին և Պարիսի կաճառներու և Հռոմայ Սափիենցայի, մէջ՝ ըրած աքանչելի առենաբանութիւններով իսկ Հ. Գաբրիէլ, Հ. Մկրտիչ, Հ. Եղ, Հիւրմիւզեան և Հ. Քեր. Ազնաւորեան զարմացուցեր էին այդ Ակադեմիոյ աստուածաբանական կաճառը: Ճարտասանութիւններն և Քերթուածքը ապին ընծայելէն յառաջ՝ էին նոքա Ս. Ղազարու ճեմարանի ընտրեալ հռետորներ և պուեաններ, ինչպէս ցոյց կու տան Հ. Ռաֆ. Թրեանի և Ա. Հեռիքեանի ճառերն, և Տաղք միաբանեաց Հարց խորագրուած և այլ հատորները: Հելլէն, լատին և եւրոպական գրականութեան ամենաընտիր գործերը հայացնելէն յառաջ՝ կրկին և կրկին անցած էին անոնց թարգմանողներն ոչ միայն հայկաբանութեան, այլ և յիշեալ լեզուաց և գրականութեան լաւերէն. և ահա այդ իսկ հասկացողութեամբ է, որ թարգմանութիւնքն ալ կատարեալապէս հայերէն են, և ոչ թէ յոյն կամ լատին կամ ֆրանսերէն: Նախնեաց եկեղեցական, իմաստասիրական և այլ մատենագրութիւնքը ի լոյս ընծայած ժամանակ՝ նոքա ոչ միայն այդ գիտութեանց մէջ հմտացած էին արդէն, այլ և ձեռագրաց պատեան օրինակները բազդատած և ճշդրտած ըստ կարելոյն. ահա այդ ձեռնհասութեամբ է՝ որ կ'ընտրէին հարազատը՝ խանգարուածէն: Իսկ իրրև պահող և պահպանող այդ նուիրական աւանդից՝ ամենայն հաւատարմութեամբ հրատարակած են պատնէնք, առանց բառ մը փոխելու կամ յապաւելու անոնցմէ, ի բաց առեալ ընդօրինակողաց վրիպակները, զորս ամկայն նշանակած են ծանօթութեամբք ի տորեւ: Այնպէս որ առանց առուտր մատեաններն իսկ ազատ են այն բազմաթիւ վրիպակներէն, որոնցմով լի են ուրիշներու փոքրիկ տետրակներն անգամ գժբաղդօրէն: Այսպէս ուրեմն կատարեալ ձեռնհասութիւն, գիտական և կանոնաւոր ոճ, գեղեցկի ճաշակն և լեզուական հմտութիւնը են Մխիթարեան գրոց և ընդհանուր գրականութեան տեսչական ներքին յատկութիւնները. որք ի վաղուց որակած են զայն, և յարգի և պատկառելի ըրած և՛ ազգայնոց և օտարաց առհասարակ: Եւ ինչ որ ի վաղուց ազգային և օտարերկրեայ մտաւոր իրրև արդէն առածի տեղ անցած ճշմարտութիւն բազմիցս ներբողեաններով միայն հռչակած էր, մենք ուզեցինք գրական փաստերով եւս ակնեբեւ ընել:

Բայց թէ որքան հիմնաւոր է այդ որակումը, և թէ Մխիթարեան գրականութեան միայն յատուկ. համեստութիւնը թոյլ չի տար մեզ այս հարցիս վրայ ուելի ծանրանալ: Մխիթարեան Միաբանութեան Երիւանդեան առթիւ գեղման և հայ ձեռնհաս հրապարակախօսներու[1] և բանասիրաց կողմէն գրուած կամ խօսուած ճառերն իսկ՝ զարմանալի միաձայնութեամբ պատասխանած են այդ հարցին, տալով Մխիթարեան գրականութեան այն մեծատիկ, գիտական, բանասիրական, լեզուական, տպաւորական, գեղարուեստական և կրթիչ բնաւորութիւնը, այն եւրոպական, ոգեկոչ և նուրբ ձեւերը յորմէ զուրկ էին Հայերը մինչեւ ԺԹ. դարը:

---

1. Տես « Über Land und Mer » պատկերազարդ թերթը:
L' Arménie, Sept. 1, 1901, N. 155 Մխոան Զերազի յօդուածը. — Ն. Եփ. Պերպերեանի Առենախօսութիւնը (տպուած « Հանդ. Ամս. 9 թիւին մէջ, և Լէօ Բարախանեանց « Հայ տպագր. Պատմութիւնը » և Մխիթարեան միաբանութեան Յոբելինի առթիւ « Մշակի » և Մուրճի մէջ վերջերս հրատարակած յօդուածները, և Աբշ. Զօպանեանի « Անահիտ » 1901 տարուայ 8րդ թիւին մէջ գրած ընդարձակ յօդուածը:

Ուրիշ նշանակալից և ամենակարեւոր կէտ մ՚ալ, զոր արժան էր առանձին գլխով և աւելի ընդարձակօրէն ճառել, բայց ես կ՚ախորժիմ համառօտ անցնել, այս է՝ Մխիթ. գրականութիւնը՝ լուսաւոր Եւրոպային չէ միայն, որ իր գիտութիւններովին ու գեղեցիկ դպրութեամբը հայացնելով՝ իր ազգին կը փոխանցէր. այլ նոյն իսկ իր ազգի անցեալին հետ՝ յունական, աստրական, եբրայական ու արաբական գիտութիւններու և կորսուած մատենագրութեան հազուագիւտ գանձերն եւս, որոնք ծածկուած էին մեր նախնեաց գրականութեանը մէջ, լատիներէնի և ուրիշ եւրոպական լեզուներու թարգմանած և հմտալից ծանօթութիւններովը ճոխացուցած՝ կը ճանչցնէին Մխիթարեանք Եւրոպիոյ: Այո՛, Մխիթարեաններէն յառաջ ոչ ոք գրականօրէն կատարած էր այսպիսի մի գրական և գիտնական մեծ գործ, այլ չափով մը և անոնցմէ եաքը: Այնպէս որ կարող ենք ըսել, թէ այդ գործի ինչպէս ակզբնաւորութիւնը (initiative) այսպէս ալ շարունակութիւնն ու զարգացումը Մխիթարեաններուն կը պարտի Եւրոպա: Այս բանս անոնք իսկ ի վաղուց յայտարարած են երախտագիտութեամբ, և յարդ իսկ կը յայտարարեն մէջտ: Եւ իրաւցնէ, եւրոպացի որ գիտնականին ծանօթ չեն Եւսեբիոսի Քրոնիկոնի և Փիլոն եբրայեցւոյ և այլ հարց անյայտացած ճառերու հոյակապ հրատարակութիւնները, հայերէն և լատին թարգմանութեամբք: Թէպէտեւ այդ գործերու նախնեաց հին թարգմանութիւնքը արդէն ի վաղուց ծանօթ էին — ի հարկէ գրչագրաց մէջ — սակայն և այնպէս ոչ մի հայ տպագրող գիտցած էր անոնց հանրապետային կարեւորութիւնը իմանալ, մոզ թէ հրատարակելու փորձն ընել: Մխիթարեանք առաջին անգամ ճանչցան անոնց բուն յարգը՝ ամէն տեսակէտով. մանաւանդ թէ կրկնակի յարգի ընծայեցին մինը և միւսը, Հ. Մկրտիչ Ալպերեանի, Աւետիքեանի ու Զօհրապեանի զարմանալի աշխատասիրութեամբք ու գիտնական հրատարակութեամբքը:

Գործերէս առաջինը հրատարակելու խորհուրդը 1804 թուականէն ի վեր յղացած էր Մխիթ. Միսրանութիւնը, թէպէտեւ հրատարակութիւնը 1818ին հպիւ կը սկսէր: Հ. Յովհ. Զօհրապեան, ի 13 Յունիսի 1804, Միլանէն առ Հ. Գաբր. Աւետիքեան գրած նամակին մէջ հետեւեալ տողերով լոյս կը սփռէ մեր ըսածներուն վրայ. «Որչափ ի խորս Եւրոպիոյ մտանեմ՝ այնչափ օտարս գտանեմ զինոս ի ճանաչելոյ զազգս մեր, մանաւանդ ի գրականութեան մասին, որ անհնարին տառապեցուցանէ զիս, և բարբոքէ յիս առաւել նախանձ՝ միջամուխ լինելոյ, և գլխովին նուիրելոյ զանձն իմ յայս գործ ծառայութեան ազգի մերոյ: Ծանօթացայ ընդ գրապետից Ամրոսեան մատենադարանի և Համբարանի, առ որս յաճախեմ առնուլ մանաւանդ՝ թէ ի տալ ծանօթութիւնս, ուր մինչեւ ցարդ գտի քանի մի հայերէն ձեռագիրս... Զեւսեբեան Քրոնիկոնն մեր հռչակեմ՝ հանդերձ Փիլոնիւ, ի վառել զսիրտս ուսումնասիրաց՝ ի յարդ և յուսումն հայկական գրականութեան, որով և օր ըստ օրէ բազմանան խընդրողք նորա:

Իսկ Գերպ. Ագոնց, ի 5 Յունիսի 1807, Հ. Մխ. Զամչեանին գրած նամակին մէջ, այսպէս կը տեղեկացրէր անոր մասին, խօսելով վենետիկեան ուրիշ հրատարակութեանց վրայ. «Այլ՝ գործ ամենայնի լինէր Քրոնիկոնն Եւսեբեայ, որում բերանացոյց ազգսն ի Միլան և յայլ տեղիս, զոր միանգամ առեալ են զլուր նորա. և այժմէն իսկ բազումք յօժարեալ են յընկերակցութեան (իմն՝ բաժանորդագրութեան), ունելք չորս, ունելք 6, իսկ գրածախք ֆ100 և աւելի օրինակս խնդրեալ. եթէ 2,000 ապեցուք, ի միում ամի ազատի: Բայց սիպ ոչ վեր ի վերոյ, այլ ամենայն իրօք կատարեալ, առանց Հ. Մկրտչին չէ և չէ մարթ ի գլուխ հանել»:... Իսկ Ալպերեան՝ հրատարակութեանս բնագիրն ու լատիներէն թարգմանութիւնը յամին 1815 պատրաստած էր արդէն, երբ յանկարծ հակառակորդներուն ամբաստանութեամբը՝ Ս. Ղազարու տպարանը կը փակուէր: Ասոր հարկ կ՚ըլլար Քրոնիկոնի հրատարակութիւնը յետաձգել, մի անոր բանիերուն հրատարակիչն Հռոմ կը զրկուէր, ուր կը մնար երեք տարի, և գիտնականը՝ գերազանց ջանագովի դեր կը կատարէր, ամենայն յաջողութեամբ:

Ահա այս ժամանակամիջոցին է՝ որ Զօհրապեան և Միլանի համբաւաւոր գրապետն Անճէլոյ Մայ կը կատարէին այն գրական խաչագողութիւնը, այսինքն է լատիներէնի թարգմանելով Քրոնիկոնի վենետիկեան վանաց հայերէն բնագիրը, զոր Զօհրապետը ծածկարար հետը առած Միլան հասուցեր էր — ի հարկէ նախապէս մէջտեղ մտնելով Ս. Ղազարու տպարանի հետ մը: Եւ մէկ կողմէն այդ գողութիւնը ծածկելու, և չերեւին եղած հանգամանքներ մը: Եւ մէկ կողմէն այդ գողութիւնը ծածկելու, և չերեւին եղած հանգամանքներ մը: Եւ մէկ կողմէն այդ գողութիւնը ծածկելու, և

և Հռոմի օրագրաց մէջ այլ ընդ այլոյ յայտարարութիւններ կ'ընէին. որոց մին էր և այս, իբրու այն՝ թէ Զիսուեանի մը ձեռքով գտնուած էր Եւսեբիոսի Քրոնիկոնի հայ թարգմանութիւնը, և թէ շուտով լաոին լեզուով լոյս պիտի տեսնէր։ Զօհրապեան այդ ապօրինի գործովը, մանաւանդ թէ այդ յանցանքը չխոստովանելով՝ ինք զինքը կը հատաներ Միսրանութենէն, բայց չէր կրնար կապել անոր անկապելի փառքը։ Այդ թուականին Աւգերեան իր առանձնած գաւին մէջ յաղթանակելով՝ շուտ վէննեփիկ կը դառնար, ուր իր հասնելէն յառաջ տպարանի գործերը բացուած էին։ Սա վերահին մտնելով իր նախապէս ուսումնասիրած գործի՝ հայկական բնագրի խորը, այնպիսի ծանօթութիւններով ու բաղդատութիւններով կը լուսաբանէր, կ'ամբողջացնէր և կը կատարելագործէր զայն, որով ոչ միայն Զօհրապեանի և Մայի հրատարակութիւնը միանգամ ընդ միշտ պիտի կորանցնէր իր նշանակութիւնը, այլ գիտնական Եւրոպայի իսկ յաւէտ զարմանալի և նախանձելի պիտի լինէր՝ [1] իր տեսակին մէջ։ Չի Սինկելոսի և ուրիշ յոյն և լաոին հեղինակաց քով ինչպէս և հայ և աստրի մատենագրութեան մէջ պահուած բոլոր հատակոտորներն եւս խնամքով և անսովոր համութեամբ մէջ բերուած, պատշաճ կերպով դասաւորուած էին և հրաշալի ամբողջ մը կը կազմէին։ Լաոիներէն թարգմանութիւնն ու ինքնագիր ծանօթութիւններն ալ Պադուայի հանրածանօթ լաոինագէտի մը Nicolò Borrieroի խղճամիտ և ճշդող գրչովը վերահին կոկուած ու ճշդուած, որուն համար տարի մ'ամբողջ գլուխ գլխու տուած կ'աշխատէր Աւգերեան։ Աւով իսկ կատարեալ յաղթութիւն մ'էր՝ զոր կը տանէր իր ախոյեաններու վրայ գրական անխոնջ մշակը։ Գիւտին համբաւը բուն գտնողին հետ կը հռչակուէր ամէն կողմ, եւրոպական մամուլը կու տար անոր արձագանգը, և Իտալիայէն, Գերմանիայէն և Անգղիայէն կը յաճախէր բաժանորդներու թիւը. այնպէս, որ դեռ չի ծնած՝ արդէն անոր ազդեցութիւնը կը տարածուէր գիտնական շրջանակներու մէջ։ Ակէ կրնան գուշակել ընթերցողք, թէ որքան մեծ եղաւ անոնց իրար անցումն՝ երբ այդ հսկայ հրատարակութեամբը՝ բոլոր հին ազգաց պատմութիւնն եւս՝ իրենց հազար և մի աւանդութիւններովին՝ իրրեւ անյայտացած ծանօթութիւններու տիեզերք մը՝ պատռելով դարերու լռութեան խաւարը, եղաւ կանգնեցաւ իրենց առջեւ՝ Մխիթարեանց ձեռքով։ Ես աւելորդ կը համարիմ յիշել այն ամէն գրուածները, զոր արեւմտեան մամուլը շռայլեց այդ հրատարակութեան և հրատարակոզաց մասին այն օրէն ի վեր։

Ակէց նուազ չէր նաեւ փիլոնի ճառերու հրատարակութեամբ ընծայուած նորութիւնը, որուն յարգոյից մէջ առաջինն եղաւ — եթէ ոչ ժամանակագրական կարգաւ՝ այլ բարձրագոյն հեղինակութեամբն ու ազնուախոհ գործովը — մեծ քահանայապետն Լեւոն ԺԲ. որ 1827ին չնորհած իր կոնդակովը կը բարեհաճէր պատուել անոր գիտնական հրատարակիչը՝ Հ. Մկրտիչ Աւգերեան, բարեմտութեան և օրհնութեան ջերմ արտայայտութիւններով՝ յանուն գիտութեան։ Իսկ Ֆրանսայի Հնագիտաց Ակադեմիան կը պատուէր [2] զինքը՝ նամակով։

Իսկ անդիէն Գերպ. Սուքիաս Սոմալեանը *Quadro della Storia letteraria d'Armenia* և *Catalogo delle opere classiche dei SS. Padri e di altri scrittori tradotte anticamente in armeno* յամին 1820 և 1825 խառներէն լեզուով հրատարակած կրկին գործերովը կու տար — առաջին անգամ — Եւրոպացւոց հայկա-

---

1. Այս բանս Անհէլոյ Մայ իսկ կը գուշակէր, երբ, ի 26 Սեպտ. 1818, Ս. Ղազարու վանաց բժշկին Gaetano Ruggeriին ուղղած նամակին մէջ կը գրէր հետեւեալ տողերը... « Ora una parola in proposito dell'Eusebio. Crederebbe per avventura la S. V. che i RR. PP. Armeni, ai quali io professo ogni più sincera devozione, non vedrebbero con dispiacere che qui si attribuisce loro, con ogni ampia espressione, la gloria ed il merito dell'Eusebio?... In ogni modo io non tacerò mai la protesta, che la gloria dell'opera è della Congregazione Armena, posto che essa si è incaricata della edizione » :

2. Իսկ Շ. Զրպետեան, ի 24 Սեպտ. 1823, Պարիսէն առ Հ. Յարութիւն գրած նամակին մէջ սոյն տեղեկութիւնը կը հաղորդէր. « Գտի առաւ առ Jombert գրաճախին զօրինակ հրաշալի հատից Փիլոնի, զոր ի լոյս էած հարազատն Ձեր և անդամակիցն մեր՝ Հ. Մկրտիչն. և ի վերայ այսր արժանագով աշխատասացդ նորա յօրինեցի նաեւ զծանօթութիւնս ինչ, և յանձնեցի ամսագրական Journalին քաղաքիս՝ որ կոչի Revue Encyclopédique, առ ի տպագրել ի մեսոյ » :

կան Վարդանեան պատմութիւնը, և հին Թարգմանութիւններու Յաւելուածները, համիրճ բայց հիմնով տեղեկութիւններով ի վիճակի։ Այդ երկու հրատարակութիւնքն իսկ մինչեւ այն ժամանակ չտեսնուած նորութիւններ էին, և հետեւաբար՝ համակրութեան ամենաջերմ ցոյցերով կ'ողջունուէին և կ'ընդունուէին ամենէն։ Գրիգոր Ժ.Զ քահանայապետէն սկսեալ ամէն եկեղեցական և աշխարհական պետականներ կը սկսէին ամէն կողմէն գոհունակութիւն և գովութիւն յայտնել բարձրատեաճան հեղինակին ու հրատարակչին, զի անով կը ճանչնային հայ ազգի անցեալ գրականութիւն ու գրական ստացուածները. ասանկէ յառաջ եղած եւրոպական հեղինակաց ցանցառ հրատարակութիւններով մասնական հեղինակութիւններ միայն ծանօթացուցած էին, և այն իսկ անկատար կերպով։

Poligrafo կոչուած ընկերութեան Տեսուչը՝ Conte Ortis, յամին 1831, Վերանայէն ու Գերպ. Սմպատեան ուղղած կրկին նամակներուն իր և ընկերութեան երախտագիտութիւնը արտայայտելէն վերջ՝ անդրադարձ տեղեկութիւններ եւս կը խնդրէր անոնց մասին, որպէս զի քննադատական գրախօսութեամբ ճանչցնէ Իտալացւոց այն գործերու մեծ արժէքը, և իրենց մատուցած ծառայութիւնները։ Իսկ Սարգիսեան Թագաւորին քարտուղարը Պ. Աստուածատուր Փափազեան, ի 25 Յուլիսի 1832 Տրինէն գրած նամակին մէջ, կ'ըսէ. «Չէի գիտեր որ մեր ազգին Գրականութեան պատմութիւնը տպուած ըլլայ. շատ ուրախացայ ձեռքս հասնելէն, և շնորհակալ եմ Գերապայծառութեանդ յիշողութենէն։ Դեռ ես չի կարդացած՝ տրմի ատենի երեւելի անձանց մէկուն, որուն հետ մտերմաւոր բարեկամութիւն ունիմ. և ատոր եմ, որ Թագաւորն ալ անոնայ։ Այս անձն է Գաբրիէլ Տր Սպիւա՝ Թագաւորին շատ սիրելի և իր որդւոյ Օվէռնաթօր»։ Փափազեանի այդ նամակին համաձայն յիշեալ հրատարակութիւնն այնչափ շարժած էր նոյն իսկ Թագաւորի համակրութիւնը՝ հայ ազգին վրայ, որ անոր հետ ըրած խօսակցութեան ժամանակ՝ կրկին և կրկին ըսած էր, որ Հայոց ազգի պատմութիւնն եւս իր աշխատասիրութեամբը «գաղիսարէն և հայերէն տպվի, ծախքը ես ըրութեան կողմանէ ըլլալով»։ Իսկ Baron de Chapuys՝ Ֆր. դեսպան ընդհանուր պատմութեան ծանօթ հեղինակը, 7 Յուլ. 1832 Լոնդէն ու Սմպատեան գրած ընդարձակ նամակովը, անոր Quadro della Letteratura dell'Armenia, և Ալեքսեանի աշխատասիրութեամբը հրատարակուած նախնեաց գործերը դրուատելէն եաքը, կը յաւելլնէր, թէ անոնցմով վաստկեցաք Եւրոպայի «brillante réputation» դէպի ու Միսթանութիւնդ, և սէր ու հայ ազգը։ Ապա կը խնդրէր՝ հաղորդել իրեն պէտք եղած տեղեկութիւնները Հայոց պատմութեան մասին, որպէս զի հրատարակէ ընդարձակօրէն իր պատմագրութեան էջերուն մէջ։

Մենք աւելորդ կը համարինք ուրիշ վկայութիւններ մէջ բերելը. այլ այսչափ կ'ըսենք, որ այսպիսի ձեռնհաս և կարեւոր հրատարակութեամբ է՝ որ հիմը կը դնէին Մխիթարեանք նախնեաց գործերու լսողներէն, իտալերէն և ֆրանսերէն թարգմանութիւններուն, Ֆր. դարու առաջին քառորդէն սկսեալ։ Որոնց ապա կը յաջորդէին՝ նոյն սկզբունքով՝ ոչ միայն այս իսկ մասին, այլ եկեղեցական, պատմական[1] աշխարհագրական ու լեզուական հարիւրաւոր գործեր. մանաւանդ որ կրնանք ըսել, թէ հայկական հին գրականութեան և մատենագրութեանց գրեթէ մեծագոյն մասը։ Իրաւ է, որ եւրոպական լեզուներով եղած հրատարակութիւններն ամենքն ալ Եւսեբիոսի Քրոնիկոնի պէս խնամքով և գիտնական ոճով աշխատասիրուած ու պատրաստուած չեն. սակայն և այնպէս մեծ նորութիւններ կը ներկայացնեն։ Իսկ այս երեւութիս գլխաւոր պատճառն այն է՝ որ Մխիթ. Միսթանութիւնն իրեն նպատակ դրած է, որ այդ կերպով հրատարակելով մեր նախնեաց գրական գործերը, աւելի հեռի նիւթ տայ եւրոպացւոց՝ զանոնք ուսումնասիրելու, քան թէ ինքը ծանօթ և անոնց բերանը դրած լսար։ Չի այս կերպով նախ թէ՛ հրատարակութիւնները նուազ առուտր կ'ըլլան և թէ տպագրական ծախքը. երկրորդ՝ եւրոպացիք աւելի առիթ կ'ունենան անոնց վրայ կեր-

---

1. Ի դէպ՝ պէտք է գիտնալ որ Վ.իկ. Լանգլուայի Collection des historiens Armeniens ծանօթ հրատարակութեան մէջ եւս գործակցած են Մխիթարեանք. և այս պատճառաւ իսկ Venise գրուած է ճակատին վրայ. այսպէս նաեւ Ղեւիկ. Թոմագէեանի և այլոց իտալ. ֆրանս. և այլ թարգմանութեանց գործակցեր են։

գրանացնել իրենց ուշադրութիւնն ու հակազդեցութիւնը (réaction), *և նորանոր ուսումնասիրութիւններ ի լոյս ընծայել։ Յամենայն դէպս՝ այն օրէն ի վեր մինչեւ այսօր Մխիթարեաններն — իրենց այս կարգի հրատարակութիւններովը — ճանչցուած են Եւրոպային իրրեւ ներկայացուցիչ նախնեաց և հայկական գրականութեան, և միշտ կոչուած ի վկայութիւն։ Գրպետեաններ, Աւգուստիններ, Լմինեաններ, Միանասարեաններ, Եղեանները, և մի քանի ուրիշ գրողներն իրր բացառութիւններ կը կազմեն, ան ալ շատ վերջ. այս ինքն է՝ երբ Մխիթարեանք արդէն յաջողապէս խաղացեր էին գրականական ու թարգմանական այդ դերը, և եւրոպացւոց հետ՝ այսպիսիներուն եւս տուած էին նախատգաղափարներ։ Դարձեալ այդ չքնաղ դերի ազդեցութեան արդիւնք է Հայոց մատենագրութիւնը, պատմութիւնը, լեզուն, աշխարհագրութիւնը, եկեղեցին ու ազգագրութիւնը ուսանելու և ուսումնասիրելու այն մեծ և ընդարձակ չարժումը, որ Մխիթարեան հրատարակութիւններու գրգռութեամբը երթալով հակայաքայլ յառաջեց, և անվերջանալի կերպով ալ պիտի չարունակուի։ Իսկ թէ այդ չարժումով ի՛րքան և որպիսի՛ լուրջ և օգտակար ինքնագրութիւններ, և նոյն իսկ թարգմանութիւններ լոյս տեսան Եւրոպա և պիտի տեսնեն տակաւին, նեւթա չի ներեր մի առ մի յիշել այս տեղ. ասկայն ծառայ և ազգային Մատենագիտութեանց տեղեակ եղողները քալ պիտեն արդէն։ Մէկ խօսքով, գրական այս ազնիւ տուրեւառութիւնը Եւրոպացիք ալ մերայինք ալ Մխիթարեաններուն կը պարտին մեծապէս։*

Այս տեսութիւններովը, կը յուսամ, թէ պարզած եղանք Մխիթարեան մասնաւոր բնաւած ուղղութիւնն և մատենագրութեանց նշանակութիւնը մեր ընթերցողին։ Տեսնենք այսուհետեւ լեզուի գործացման մասին անոր կատարած դերը։

ԳԼՈՒԽ Դ

Գրաբար լեզուն և զանի մաքրելու և յղկելու նախաձեռնը. — Հ. Մաամեան և Հ. Վրթ. Ակներեան վարդապետներն և անոնց խաղացած նախկին դերը. — Մխիթարեան քերականագէտներն և նշանաւոր քերականները. — Հ. Գաբր. Ալեռխեան իբրեւ գերապանծ քերականագէտ և վարդապետ. — Մխիթարեան քերականներու գործած ազդեցութիւնն և գրաբար լեզուի կանոնաւոր զարգացման անհրաժեշտ շարժումը. — Գր. փէշտիմալճեանի, Մինաթիւղի Մեսրոպ երիցու, Շահան Ջրպետեանի և Մկը. Սալլանեմեանցի քերականութիւնները ու գրական բանաքաղութիւնքը. — Մխիթ. գրաբարի երեք շրջաններն և անոնց հակայ գործերը. — Գիտութիւն, նմոյշներ, նկարագիր և արժանիք իւրաքանչիւրին. — Բագրատունին որպէս առաջին հայկաբան և տաղաչափ. — Մխիթարեան հայկաբաններու ուղղութիւնն ու գրաբարին տուած նոր կենդանութիւնը. — Տեսութիւն մը Ալեռխեանի և Բագրատունեայ քերականութեանց վրայ. — Մխիթարեան գրաբարի վերջնական զարգացումն ու անոր առանձնայատկութիւնները. — Մխիթարեան գրաբարի ազդեցութիւնն և հանրացումը. — Ոակեզարեաններու բռնած ուղղութեան ու պահանջի անհեղութիւնն, և անոր հետեւանք՝ լեզուական յառաջխաղացութեան արձանացումը:

Նախընթաց գլուխներուն մէջ տեսանք, որ Մխիթարեանց մատեանները գրուած են թէ հայերէն դասական կամ գրաբար լեզուով, և թէ աշխարհիկ բարբառով. հետեւաբար, ուրեմն, անընդհատ գործածութեամբ ինչպէս աւրերն և այլ նիւթական գործարաններ, այսպէս այլ լեզուն — որ է յօդաւոր գործի — ներքին մտածութեան, բնական էր՝ որ հետ զհետէ մաքրուէր և կատարելագործուէր մտայոյզ և մատենագրութեան միջոցով: Ուստի մենք այս տեղ պիտի խօսինք միայն գրաբարի կրած զարգացման և կատարելագործութեանը վրայ, աշխարհաբարը թողով յաջորդ գլխոյն:

Լեզուն — թէ իր ակեղինիկ փայլին և թէ թուխ կապարի շագմանը մէջ նկատուած — ոչ միայն կը յառաջագայի, այլ և կը գտնուի յաճախ կենդանի ժողովրդեան գանազան դասակարգութեանց մէջ այնպէս, ինչպէս ակին, արծաթն ու ադամանդը երկրին խառ ի խառ հանքերուն: Այլ ճշմարիտ է և այս, որ ինչպէս հանուած և բանուած ակին և արծաթն որչափ որ ալ իրենց փայլուննութեամբ և գոյութեամբը կը տարբերին աւազի և հողակոչտերու մէջ գտնուող խառն գանգուածէն, ասկայն և այնպէս՝ մերթ անգործածելի մնալով, և մերթ օտար տարերաց ազդեցութեամբը կը ժանգոտին և կը թխանան. այսպէս եւս յղկուած լեզուները՝ ազիտագործ ժամանակաց հոսանքին մէջ թաղուելով: Այդ՝ ինչպէս Պերիկլեան դարու հելլէն և Օգոստեան դարու լատին լեզուներն՝ այսպէս և Ե. դարու մեր ակեղինիկ բարբառը, որ յունարէն մտքի և գրականութեան հնոցներէն անցնելով՝ Սովփերայ ակիէն աւելի փայլունութեան և կատարելութեան հասած էր, միջին դարու անկածութեան և անգործութեան ենթարկուելովը՝ ոչ միայն ատուգիւ կը կորանցնէր իր գեղեցկութիւնը, այլ և չարաչար մոռացութեան կ'ենթարկուէր: Ութեասաներորդ դարու դեռ առաջին քառնեւհինգամեակին մէջ իսկ հայերէն գրութեան միակ և գրեթէ բացարձակ գործին՝ գրաբար լեզուն՝ բաց ի աշխարհիկ գոհկարանութենէ նաեւ քերականական այնպիսի աղխաղուր և անհետեթ ձեւեր առած էր — նոյն իսկ ժամանակին ամենէն գիտուն և բանիբուն գրողներու գրչի ներքեւ և գրուածոց մէջ — և այնքան ընդհանրական դարձած, որ մինչեւ անգամ անոր հակառակ մտքուր հայերէն գրելը՝ քրէական յանցանք կը համարուէր և կը

դասախեօսէր։ Մենք աւելորդ կը համարինք խօսել այս տեղ այդ եղծիչ հանգամանացը և պատճառներու մասին, զի Մխիթար և իրենները այդպէս գոան։ Հայկական դրականութեան վերանորոգութեանը կոչուած գործիչներուն կը մնար ուրեմն՝ սրբել նախ դասական լեզուի այդ ժանգը, նորոգել անոր խանդարմունքը, տալ անոր, ըստ կարելոյն, նախկին ակեղենիկ փայլը, և հուսկ ապա որ մնծն է՝ պճնազարդել զայն այնպիսի գեղեցկայարմար բանահիւսութիւններով, բարդութիւններով, ածանցներով և ճարտասանական և բանաստեղծական նորութիւններով, որոնք մերս թարգմանչաց օրեր իսկ չկային։

Ի հարկէ այսպիսի մի գործ կատարելը չատ աւելի դժուար էր, այդ դարուն, և չատ աւելի երկար աշխատութիւն և ժամանակ կը պահանջուէր այժմ՝ քան ԺԵ. դարուն, երբ դեռ նոր հիմն կը դրուէր դասական գրականութեան։ Անով մանաւանդ աւելի բախտաւոր էին թարգմանիչք, զի հայերէն մաքուր և ճոխ բարբառն առձեռն պատրաստ էր ժողովրդեան բերանը, ինչպէս ձոյլ ոսկին՝ ոսկերչի քուրային մէջ. որով ուրիշ բան չէր մնայր՝ բայց եթէ կանոնաւոր ձեւերով փոխադրել զայն մագաղաթի վերայ։ Իսկ անկեալ և խանգարուած լեզուի վերանորոգիչներուն ժամանակ՝ ընդհակառակն՝ թէ ժողովուրդն առհասարակ և թէ տպագրեալ փոքրաթիւ մատեանքն իսկ այլասեռ սարերայց և խառնաչփոթ ձայնից թոխրոխ մ'էին։ Ուրեմն ինչ պէտք էր ընել այսպիսի դժուարին պարագայից մէջ՝ ոսկեղինիկ լեզուն չափով մը վերանորոգելու և մատենագրելու համար։ Հաւաքել մեր ազամանդեայ գրիչներու հին փշրանքները, մերձեցնել զանոնք ժամանակակից ժանգոտած և այլասերուած լեզուին, և այդ չփոտմով մաքրել և փայլեցնել զայն, ինչպէս ակնագործք՝ ազամանդը կը փայլեցնեն և ճառագայթարձակ կ'ընեն։

Ահա այդ միջոցին է՝ որ ձեռք գարկին դասական լեզուի մեր առաջին նորոգիչները՝ Մխիթար և իրենները։ Սակայն այս միջոցս իրենց անգամ լեզուն ուսանելու բաւականութիւն չէր տար, թող թէ կանոնաւոր կերպով ազգին ուսուցանել։ Վասն զի Աստուածաշունչն և նախնեաց մի քանի գրեանք՝ դասական լեզուն միայն կը ներկայացնէին, մասամբ ընդօրինակոցաց ձեռքով և մասամբ ալ պատահարներէն խանգարուած և աղաւաղ, և ոչ թէ լեզուին բանալին կամ կանոնները։ Դաւթի, Մովսէսի, Սահակ. Սիւնեցւոյ, Երզնկացւոյ և այլոց հին Քերականութիւն կոչուածներն իսկ, կամ լաւ եւս Քերականութեանց խեչերանքները, տառերու արտասանութիւնէն, յօդնի վրայ ձեւուած արուեստական մի քանի բառերէն, հոլովումներէն և բայից խոնարհումներէն զուրս ուրիշ բան չէին ընծայեր։ Թրակացւոյ քերականութիւնն՝ յուսարէն ուսանելու միայն կը ծառայեր։ Իսկ Բիւզանդեայ, Կատանոսի և այլոց յօրինուածներն այլ լատիներէն լեզուի կանոններուն վրայ ձուլուած էին ընդհանրապէս, որոնց դէմ բողոքելու արդիւնքն ունեցած էր նոյն իսկ Սիմէոն Ջուղայեցի — հին քերականի մեկնիչներէն մէկը — իր համառօտած և քանի մի յաւելուածական մեկնաբանութիւններով երկասիրած Քերականութեամբը։

Լեզուի մի այլ կարեւոր գործին է բառարանը. և սակայն ըսինք, թէ Մխիթարէն յառաջ դոքա եւս ձրագով կը փնտռէին. այլ սակայն ոչ այլ ինչ եղած էին՝ բայց եթէ Ս. Գրքէն ազգատ ու անոճ կերպով եղած բառերու հաւաքում մի, յաճախ առանց բացատրութեան, և կամ սխալ բացատրուած գլխովին։ Աստի Մխիթար առաջինն եղաւ՝ որ սկզբին աշխատութեամբ յաջողեցաւ տալ ազգին գրաբար լեզուի մինչեւ այն ժամանակ եղած քերականութեանց համեմատաբար ամենէն կանոնաւորն ու կատարեալը. այսպէս և՝ Հայկազեան բառգիրքը, որ 88 տարի հայերէն լեզուի միակ և ճոխ գինարանն եղաւ։

Այս Քերականութիւնն և բառգիրքը՝ ինչպէս Ս. Գրքերու՝ այսպէս և բոլոր ազգային բանասիրաց լուսագոյն ուսուցիչներն և առաջնորդներն եղան, երկայն ժամանակ։ Քերականութեանս կատարելութեանց և անոր մատուցած մեծ ծառայութեան մասին արդէն խօսեցանք Ր. գլխուն մէջ. ուստի այժմ կը բաւականանանք երկու խօսք եւս ըսել անոր թերութեանց մասին. Ա. Մասին մէջ հոլովառու բառից կամ գոյական անուանց հետ՝ հոլովուած են նոյն իսկ շատ և շատ սեռականներ [1], որոնք

---

1. Օրինակի աղագաւ Աճառերիւր–ի, Խեղաթիւր–ի, Բերկրալից–լցի, երկիւղալից–լցի, անգաստիր–տրի, արգասալիր–լրի. Թափուռ–ի, Խաբշաթուռն–ի վարուռն–ի, անշուշտ–չըշտի, անվրէպ–վրիպի, մարմարտնեայ–նեի, եղեւնեայ–նեի, երկայնօր–երկայնաւուրց, կարճօր–կարճաւուր, կիսօր–կիսաւուր, և այլն և այլն։

թէպէտեւ ներքնապէս պոյակների նշանակութիւն եւս ունին և արտաբանօրէն ոչ սխալ, սակայն գոնակոն բնաիր լեզուի մէջ գործածուած չեն և անոր ոգեղութիւն կը բերեն մեծապէս։ Գաւառական, պարապական, ներքոյական և կոչական հոլովներն եւս, իրաւ որ իրրեւ աւելորդ ձանրաբեռնութիւնք միշտ պահուած են, բայց նեղելի են. վասն զի առաջին անգամ ուսուցանելով քերականութիւնը հարկ էր անոնց հետ եւս ծանօթացնել ուսանողները։ Երկրորդ՝ բայերու լծորդութեանց մէջ առհասարակ առաքաւոգական եղանակի ներկային, անկատարի, յարակատարի և գերակատարի մէջ ըղձականին «երանի» նախադասական պահպանութիւնը, որով յատուկ եկած են, օրինակ իմն, բանամ բայէն՝ «Երանի թէ բանայցէի», և «Երանի թէ բացեալ իցէի» ոգեղ ձեւերը. որոնք կրաւորականներուն մէջ գեռ աւելի ոգեղ և օտար ձեւեր առած են, ամէն խառնարհմանց[1] մէջ։ Սակայն պէտք եմ անդէն աւելցնել նաեւ այս, որ այսպիսի անսխալ ձեւերը այն ժամանակի գրողաց՝ ընդհանուրի ժառանգութիւնն էին, ուրկից Մխիթար չէր կարող հրաժարիլ։

Իսկ Գ. Մասին մէջ, զոր խորագրած է Քաղաք գաւազան կերպիւ շարադրութեան ճախնեաց, Մխիթար շարադրութեան երեք տեսակներ կ'առանձէ՝ ճոխ օրինակներով. Ա. պարզ և հասարակ, որուն յարացոյց կը բերէ Քաշտեաւորքը. Բ. միջին՝ թէ լեզուի ընտրութեան և թէ դիւրիմացութեան համար. և ասոր իրրեւ օրինակ կը ներկայացնէ Հնգամատենին և Նոր կտակարանի շարադրութիւնը. Գ. բարձրագոյն կամ ձեռաւոր, լեզուի ճոխարանութեան և ճարտար ձեւերուն համար. և ասոր օրինակ կ'ընծայէ Մատաբաշեցւոց գիրքը, Մ. Խորենացւոյ (Պետոյից գիրքը), Ղազարիկացւոյ և նմանեանց շարադրութիւնը։

Մխիթարայ Քերականութեան այս և նման թերութիւնքը, դիտելու ենք, որ էին իր ժամանակակցաց ընդհանուր և սիրելի ժառանգութիւնքը[2], որոնցմէ ինքը կարող էր հրաժարիլ, բայց չուզեց։ Պատճառքն յայտնի են, նախ որ թէ՛ իր հրատարակութիւնը շուտով հակառակութիւն պիտի կրէր շաւերէն, և թէ ինքը հոգածուէր իրրեւ նորաձեր[3]։ Բ. Նա ինքն աւելի կ'ընտրէր այդ լեզուով մատչելի և օգտակար ըլլալ ընդհանրութեան, քան թէ բարձր լեզու գործածել և ճիւալ որպէս ձայն բարբառոյ յանապատի։

Ձեւաւոր շարադրութեան մասին վարդապետած Գ. օրինակը — որուն սակայն մեծ վարդապետը դրով և գործադրութեամբ հակառակ ընթացաւ — ամենամեծ ազգեցութիւն ունեցաւ ոչ միայն ի Ս. Ղազար՝ իր աշակերտաց վրայ, այլ և ազգային բանասիրաց, որոնք ոչ միայն բուռ արեւելեան խրթնաձեր բառուց, այլ այնու մանաւանդ որ կը լսէին նոյն իսկ Քերականութեան հեղինակէն (տես պ. Ժ. էջ 453), թէ «Ոչ աշխարհականաց և ոամկաց, այլ առ իմաստուն և առ ուսեալս միայն պատկանի կիրառումն նորին». հետեւաբար՝ ամէնքը կ'ուզէին այդու իմաստուն երեւնալ։ Եւ այդ անորոշ գործածութեան վատ հետեւանքն այն եղաւ, որ առանց լաւ ուշ դնելու յիշեալ գլխաւոր երեք տեսակ շարադրութեանց մասին տրուած լրջամիտ հրահանգին, այսինքն թէ անոնցմէ իւրաքանչիւրն երբ և ինչ պարագայից մէջ գործածելու է, սկսան ամէնքն եւս — ուսանողք և ուսուցիչք, Դպիրներ և Վարդապետներ, մասնաւ-

---

1. Ընկճուած բայը եղած է՝ ի Սահմ. ընկճանիմ, Անկ. ընկճանեի, Ապ. ընկճանիցիր, Ստոր. երանի թէ ընկճանիցիմ, Անկ. երանի թէ ընկճանիցեի, Գեր. «երանի թէ» ընկճցեալ իցեի։

2. Ցիրաւի, ասոր ապացոյց են — բաց ի այն ժամանակի հրատարակութիւններէն և նամականիներէն — նոյն իսկ Մխիթարայ «Ըստ առ բարեմիտ ընթերցողս» խորագրուած յառաջաբանի հետեւեալ խօսքերը. «Արդ՝ խնդրեմ, զի եթէ ի գիրս ումանս այլապէս քան ի սմին տեսանիցի հոլովումն ուրուք անուան, կամ բայի, անբասիրս առնիցէք զմեզ. վասն զի յայլոցս այնպիսս գտանին հոլովեցեալք՝ որպիսիք են ի սմին. եւ մեզ պարտ էր միոյն, եւ կամ միւսոյն հետեւիլ»։ Ի հարկէ յայլոցս բառով կարելի չէ հասկնալ ոչ Ս. Գիրքը և ոչ այլ նախնեաց դասական ընտիր մատենագրութիւնքը, վասն զի առանց մէջ բառից այնպիսի օտար հոլովումներ և բայից լծորդութիւններ չկան. ուրեմն ժամանակակից հրատարակութիւնները կ'ակնարկէ անով Մխիթար։

3. Առաջիւ՝ այս բանիս համոզուելու համար՝ բաւական է կարդալ յամին 1799 հրատարակուած Հ. Մխիթարեան Քաշտեանի Քերականութեան Յառաջաբանը, որուն հեղինակը Մխիթարէն ընդունած այլ և այլ օրինակներով ցոյց տուած է Հիմնադրիս բուն նպատակն, այն է ոսկեղինիկ լեզուի նորոգութիւնը. և թէ ինքն ինչ պատճառաւ ստիպուած էր առ ժամանակ մի անոր հակառակ վարուիլ իր Քերականութեան մէջ։

պիրներ և նամակագիրք առ հասարակ — խրթին, մութ և շատ չարաշրութիւնը իրր բարձրագոյն չարտարանութիւն գործածել, թէև Մխիթար չարաշրութեան գ. տեսակով ոչ թէ ընտիրը կը հասկնար, այլ ձեւաւորը, խրթինն ու մութը։ Եւ այս անկէ իսկ յայտնի է, պի ինքը միշտ պարզին հետեւած է։

Սակայն անթիւ են այս խրթին չարաշրութեանց օրինակները Զմիւռնիա ի գ. Պօլիս և ի Վենետիկ մինչեւ տարին 1779 եղած թղթակցութեանց[1] մէջ։ Ս. Գ. ազգաբու նորընծայք և վարժարանցիք իսկ իրենց ծնողաց այդ ոճով բարձր և անհասկնալի նամակներ կը գրէին յաճախ, որուն համար Հ. Միքայէլ Վարդերեանն և Հ. Զաքարիա Սէթքանեան Պօլսէն ազգականաց կողմէն գանգատանաց նամակներ գրելով Վենետիկ, կ'ազդարարէին՝ որ պարզ և հասկնալի չարաշրութեամբ գրուին նամակները։

Այսպէս ուրեմն կրնայ ըսուիլ — ի հարկէ յարգելի բացառութիւններով — թէ ինչպէս ազգային գրողներու, այսպէս և Մխիթարայ աշակերտաց (մինչեւ գ. դասը) գրաբար լեզուն և նախկին գրականութիւնն ընդհանրապէս ձեւուած էր Մխիթարայ Բերականութեանը վրայ, և թէ պարզէն ընդօստումով մի անցած էր խրթին չարտարանութեան, և այնպէս չարունակուած մինչեւ 1779 թուականը։ Հետեւաբար Ս. Գ. ազգաբու ոսկեդարը այս կողմանէ դեռ շատ հեռի կ'երեւէր. և դեռ աւելի պիտի ուշանար, եթէ Մխիթար կտակած չձգեր յաջորդներուն, որ իր ժառանգէն վերջ մեծապէս հոգ տանին գրաբար լեզուի մաքրութեան և կոկութեանը, ինչպէս որ ինքը մտադրած էր։

Եւդոկիացի Հ. Մատթէոս Գաբրագաշեան՝ որ Հիմնադրիս Ը. գասու աշակերտաց խմբէն էր, և գրով ու գործով անոր արժանաժառանգ որդի, կարծէք թէ վանաց ժամանակագրութեան հետ՝ նախնեաց գասական լեզուն եւս իրեն արժանի յատակութեամբ և վեհութեամբը արձանագրելու, և Ս. Գ. ազգաբու մէջ առաջին անգամ տարածելու հետամուտ եղած է։ Եւ այս նոյն իսկ մեծ Աբբատայր կենդանութեան ժամանակ[2], այսինքն է՝ յամին 1741։ Հ. Մատթէոս եզականութիւն կը կազմէ ատուքիր այս և ուրիշ գրուածներով՝ — որոնցմէ ոմանք հրատարակութեամբ ի վաղուց լոյս տեսած են արդէն — ոչ միայն իր դասակից, այլ և յաջորդ դասուց Մխիթարեան վարդապետներու մէջ։ Եւ այդ եզականութիւնը կայացած է ոչ միայն բազմաթիւ ինքնագիր երկասիրութիւններուն, այլ և իր ժամանակի հորիզոնէն վեր գործածած յատակ և ոճաւոր չարտրութեանը մէջ։

Աւոր լեզուն և ոճը ժամանակի խրթնութեան չդայլութենէն՝ իրաւ է՝ որ բոլորովին զերծ չեն. սակայն վսեմութեամբ առաքինոյ, կիրառութեամբ կանոնաւոր ձեւոյ և

---

1. Բաւական կը համարինք առնցմէ մին միայն արտագրել այս տեղ, ճիշդ դաղափար մի տալու համար։ Գրիգոր Դպիրը, 30 Յուլիսի 1750, Մելգոնեան Աբբահօր ընտրութեան առթիւ այսպէս կը գրէր.

« Աստուածարեալ և արքազարդ, գերապատուդ և բարեհամ ի գահս Հայրութեան բարձրացեալ, հայելի առաքինութեան և զարդ կրօնաստանիդ. հրեշտակակրօն վարուք հուպ առ ամենատուրը երրորդութեան՝ անձանձիր խոստկութեամբ ի զէն գլխաւորութեան բազկի հզօրին բարձրացեալ, և նովին գօրութեամբ պահեալ, բարի յաջողուածով նախընտիր քան զյոքունս ի նախադասիցն երեւեալ, ով հայրդ իմ ըստ հոգւոյ, զգերաշխալ և զօդաշրջիկ ներբանդ ի հեռաբնակ վայրէս՝ իբր ի մօտոյ մեծաւ կարօտիս և ջերմաջերմ փափաքանօք համբոյր, ողջ լեր։ Արդ՝ եթէ ոչ յետս ընդհարցի նուազուք ձայն տատապեցեալ խոհերիս, և արժանի գտայց բերանաբաց լինել վեհանձնութեանդ առաջի, կամ է անարգիս գոյի կորագլուխ նայեցմամբ զայս բան առասել, որպէս և է իսկ, շնորհաւոր լիցի, և յոդնաժամանակեայ, և ակնարկութեամբ վերին շնորհացն անդրդուելի, զոր գժուարիցն գրունք ոչ կարիցեն առնանել։ Աստանօր չեմ իսկ Փիրամ, և ոչ տիկինն Սարայ, զի ի թագաւորել Սողոմոնիդ արժանի իսկ քումդ մեծարելութեան տուրս առնուիր իցէի. վասն որոյ ըստ ճշմարտին Սողոմոնի ընկալ գանկաւամանեակ յօդուած բանիս ի նուաստանձն ազարդիւնէս իբր գլօմային յայրատ կնոջէն », և այլն, և այլն։

Այս ոճով գրած է նաեւ Յովհաննէս Աւետեան Աղգուսոս, այսպէս և Զմիւռնիացի Պր. Մարգար Ապրոյեան յամին 1803, բայց աւելի ընտիր շարաբանութեամբ։ Նոյն իսկ Հայկազեան բառգրքի արդիւնաշատ աշխատակիցն իսկ՝ Հ. Մկրտիչ Ագանեան, որ իր նամակաց մէջ այնքան պարզ է և հասկնալի, հռետորական և բանաստեղծական գրուածոց մէջ, ընդհակառակն, խրթին է և խորամուխ նման Եարեկացւոյն։ Այսպէս է յամին 1749 Մխիթարայ դամբանին վրայ ձօնած չափական Արձանագրութիւնը, որ կը սկսի. «Բնաւ Քերով Հոգեառուիլ » բառերով, (տպագրութիւնը տես Վարք Մխիթարայ, Վենետիկ 1901, էջ 477)։

2. Ատուքիր՝ նա իր անտիպ ժամանակագրութեան՝ վերջը յայտնապէս կը յայտարարէ, թէ յամին 1741 իր Հիմնադրի յատուկ յանձնարարութեամբ ձեռք զարկած էր այդ գրութեան, և յամին 1752 աւարտած։ Կը բազկանայ 480 մեծադիր երկսիւն էջերնէրէ, նօտագիր մանր, և կը պարունակէ Մխիթարայ և երանելւոյն Կոմիտասայ պատմութիւնները եւս՝ առանձին գլխով։

ընտրութեամբ բանից նախնեաց՝ իբրեւ ամենամեծ վկայ մի կը գտնագանին Մխիթարայ և ժամանակակից ուրիշ պատուոց և գրոցայ շարադրութենէն։ Հ. Մատթէոսի գործերու ընթերցողն յայտնապէս պիտի տեսանէ, որ սա Մխիթարայ Գերադասութենէն ուսեալ՝ նախնեաց ընտիր երկասիրութեամբը մտրդուած է գոնակատն լեզուի գեղեցկութիւններուն. վասն զի ոչ միայն բոլորովին ազատ է այդ Գերադասութեան, կամ լաւ եւս, ժամանակին յատուկ բայերու ապեղ լծորդութիւններէն և ածականաց և մակբայից անսովոր հոլովումներէն, զոր ի վեր անդր նշանակեցինք, այլ և ինքն իրեն հաստ է գործնական գերադասութիւն։ Գրեթէ բոլորովին ինկդի գրած է վերը յիշեալ Մխիթարայ ներկայացուցած շարադրութեանց առաջին տեսակը, այն է հաստատակ կամ յայտնաւորեանց։ Երկրորդ տեսակը՝ չանեցած է բան կարելոյն պահել պատմական իրաց յատուկ բերութեանց մէջ. իսկ երրորդը՝ ճառական բարձր ներթոց մէջ մշակած է միայն, առաջնորդ առնելով իրեն — ամենէն աւելի — Թորնեցւոյ Պիտոյից գիրքը։ Այսպէս է յիշեալ Ժամանակագրութեան 17 էջերէ բազկացած պատճէնի նախերգութիւնը։

Ընթերցողաց ճաշակ մի տալու համար, աւելորդ չենք համարիր արտագրել անկէց հետեւեալ տողերը. «Իսկ արդ՝ արշաւի ինչ վասն առ ի Փրկչէն մարդասիրեալ բարութեանց՝ յորդիս աւրբ եկեղեցւոյ, կամ սոցա առ նա առաքեալութենէն, կամ նորա առ սոցա ուղղութիւն զգաւազան խրատուն ի վերայ ածելոյ բանք ցայս վայր կարգեալ եղեն, այն ամենայն առ մեր հայկազուն ազգս առանձին իմն օրինակաւ եղելոցն իբրեւ առ հաստատակ տարացոյց նմանաստիպ յատուկ բերաք՝ յայտ առնել, իբր ոչ եթէ առ այլոց ազգաց՝ մեզս միայն, այլ թէ՝ և նոցա առ հաստատակ եղեւ առաքեալն, և Փրկչին զանս խրատուցն ընդել. բայց որպէս օրէն է իւրաքանչիւր ամէն զանձին իւրոյ գալ՝ քան զօտարացն ազգ, զմեզս միայն յանուանէ գրեմք ազգեալ։ Զանգի նոյն ամենայն իրօք բարեգործութեան գեղմունք, զոր ի սկզբան անդ Նախերգութեանն ի ձեռն առաքեալացն մերոյ պարթեւապետին Գրիգորի, և որոց գինի նորա հոգեկիր հարց արբոց, առ Թորգոմեան ազգս հայկազու, ի նոյն Փրկչէն մարդասիրեալ պայծառացան. որպէս և հարց մերոց նախնեաց ժամանակագրութեան մատեանք, և գործք երեւելիք՝ իբրեւ կանգնեալ արձանք՝ յայտ յանդիման առուգեն մեզ հաստատեալ։ Այլ որպէս բազում ազգաց դէպ եղեւ առ Փրկչին մարդասիրութեամբքն առանդանել յուղղութեանց անտի կարգաց վարուց, նոյն եւ ազգիս Հայոց։ Զի յետ մեծի այն արդոյ հօրս մերոյ և հոգեկիր լուսաւորչիս առաքելոցն նորին, գերբանի Աստուծոյ և գիմաստութեան պարգեւաւն առանդանելոյ յետագայից, բարկացեալ արդարութեամբ անչեզական քաղցրն բնութեամբ, Թոյլ եւ հաստատաց փորձողին՝ գնիւթեալ մթերեալ իւր գնեցգութիւնն ի մեր ազգս՝ առ բազումս, որպէս և յայլ ազգս՝ ի գլուխ հանել, բան մարդարէահրաչ առեալն արդոյ Լուսաւորչին առ ի վերուստ կանխաւ գուշակելոյ։ Ասկոյն զանեաւ զանճառ արդոյ ինամս իւր, որպէս և յայլ բազում ազգաց, նոյնպէս ի մէնջ չհանդուրժեաց աւիրեալ մարդասէրն յամենայնի Յիսուս։ Այլ ցանգ փոյթ յանձին եցոյց՝ երբեմն պատուհասիւ խրատու գործով, և երբեմն պաշտօնէից իւրոց յորդոր բանիւք յինքն ձգել զիւրան՝ յուղղութիւն ածեալ»։

Այսպէս ուրեմն Հ. Մատթէոսի ձեռքով կը լինէր ի Ս. Ղազար հայկաբանութեան նախաձեռնը։

* * *

Հ. Մատթէոսի սկսած գործը յաւալ տարեցին Հ. Եղիսաբեթ Յակոբեան, Հ. Մկրտիչ Ագանեան՝ յորջորջեալն Մեծ, և Հ. Վրթանէս Ակներեան, իրեւ կոթողի պրիշներ։ Սակայն վերջնոյն միայն վերապահուած էր կատարել լեզուական երկրորդ տեսակները, զոր սրտի հրճուանքով պիտի փայփայէր և Մխիթար, իբր ի վարուց երկնած իր գաղափարի չափով մը մարմնացումը, եթէ ոչ ճոխացած բարձր. այլ որ պիտի ծառայէր նաեւ իրեւ հիմնաքար ապագայ ուրիշ լեզուախօսութեանց։

Ակներեւ, որ թէ տարիքով և թէ մարմնով փոքրագոյնն էր, պրիսվը ամենէն մեծը և բեղմնաւորը հանդիսացաւ։ Ժամանակակիցք հիացած անոր յամին 1750 հրա-

ապրակած չորս հատոր կովկի փիլիսոփայութեան վրայ, ախան ամէն կողմէն Փեժա-
դրուի վարդապետ կոչել զինքը. ես չեմ կարծեր, որ — Ս. Ղազարէն զատ — այդ մեծ
պատուոյին անոր տուղք առհասարակ ճանչցած ըլլային, թէ ինչ բանի մէջ կատա-
րած էր անոր մեծութիւնը: Նոքա թերևս խնամասիրութեան միայն հայեցի թարգ-
մանութիւնն ունէին այդ ժամանակ ի նկատի: Սակայն մեզ համար այնքան մեծ է
Հ. Վրթանէս այդ թարգմանութեամբ ի գործ դրած փիլիսոփայական բնաւոր լեզուին
և հայկաբանութեան համար, որչափ Կովկն իր երկասիրած խնամասիրութեամբը:
Ան առաջինն եղաւ, որ ազատեց ոչ միայն Հայ լեզուն, այլ և միտքը մեկ կողմէն
ոեմիտորական ոսխակ, ծանրաբարոյ օտարախորհութիւններէն, և մեզ կողմէն ալ
մինչեւ այն ժամանակ սիրով կատակել, մինչեն ու ճառամ չարտրանութիւնէն, և
առեղծել փիլիսոփայութեան արժանավայել բարբառ մի՝ իր գանազան ճիւղաւորու-
թեամբը, որուն Ցզնիկ, Ան. Ճերակացի և Յովհ. Խնամասէր մանկական նմոյշներ
միայն առած էին մեզ:

Սակայն Ակերեան — իր բազմաթիւ ինքնագիր գործերովն և ուրիշ անոր վերաբե-
րեալ թարգմանութիւններով — լեզուական դեռ ուսելի ընդարձակ գեր խոստաց, թէ Ս.
Ղազարու և թէ ազգին մէջ: Երեք հատոր Եօթնկարգեան քարոզգրքի թարգմանու-
թեամբ — որուն մէկ հատորը միայն տպուած է 1782ին — արդարև պերճախօսութեան
լեզուն հրաշակերտած է, Լամբրոնացիէն շատ ուսելի յստակութեամբ և ներդաշնա-
կութեամբ: Յամին 1786 լոյս տեսած Թոմ. Վեմերացւոյ Քաղաքս ներսինոյ փիլիսո-
փիոսի ոսկեղինիկ գրքի հայերէն թարգմանութիւնը — թէ իր լեզուի քաղցրութեամբ
և առոյնութեամբը և թէ ուրիշ առանձնայատկութիւններով — կրնայ կոչուիլ քաղուհի
այն գրքի հարիւրաւոր թարգմանութիւններուն: Ես նոյն իսկ հայագէտ Ասս. Եմ.
Տէպա, որ եւրոպական լեզուներով եղած միւս թարգմանութիւնքն իսկ, ինչպէս հայե-
րէնը՝ բազդատած էր շատին բնագրին հետ, օր մի կ'ըսէր ինձ, թէ վերջինս
ուսելի ճիշտը գտած էր, և գերազանցապէս վայելչահիւս: Այս գրքով Ակերեան այն-
քան ուսելի լեզուական ազդեցութիւն ունեցաւ վանքին մէջ, որքան բազմաթիւ էին
անոր ընթերցողները: Ես ուզակի այս մեծ ազդեցութեանը վերագրելի է նաև այն
երեւոյթը, որ տեղի ունեցաւ յամին 1853. այսինքն է՝ երկրորդ տպագրութեան ան-
միջ երբ Գերպ. Եղ. Հիւրմիւզեան չեզոք բայերու իւ վերջաւորութիւնը՝ եղի փոխած,
և դեռ մի քանի փոքրիկ փոփոխութիւններ ներմուծած էր, մերայոններէն ոմանք
սխալած և խորհրդածած էին, թէ պէտք էր անձեռնմխելի թողուլ իր տեսակին մէջ
աններեւոյթ այն թարգմանութիւնը: 1793 թուականին Սարաւոյ սէրութեան մեծա-
նուն կոմսին՝ Ես. Թեսաւրոսի Բարոյական խնամասիրութեան թարգմանութեամբը՝
Հ. Վրթանէս բարոյական գեղեցկագիտութեան հետ՝ լեզուական ուրիշ անգին գոհար-
ներ եւս կը տեսար գասական նոր գրականութեան մէջ, հնոց ոսկեղինիկ բարբառին
հետ յեռած և նորագանչ կերպով չքեզացուցած: Մի ուրիշ թարգմանութեամբ
— որուն վրայ ինքը սարի յոգնեցուցած էր Հ. Ակերեան իր գլուխն և գրիչը — այն
է՝ 1816ին հրատարակուած Աղէքի Հռոմէացւոյ Պատմութիւնը, 6 հատուածոր հատոր-
ներէ բազկացած, պատմական լեզուն եւս կը նուիրագործէր՝ իր անխառնութեամբը.
այսինքն է՝ գեռած յունական, պարսկական և արաբական բառերէն և առածներէն
ըլլան, և բոլորովին նոր գաղափարաց վրայ ձեռուած և կենդանացած: Ինչ է՝ որ
Ակերեան այդ հսկայ թարգմանութիւնը կատարելու համար ունեցած էր իր ձեռքի տակ
նոյնպէս ուրիշ գործակիցներ եւս, սակայն առնցը՝ այնպէս ձեռուած են ի մի, որ
ընթերցողը կը կարծէ, թէ մէկ կողմանէ թարգմած են և հայացուած մեկ հատորքն
եւս: Ինչ բանս ուրիշ կերպ կարելի չէ մեկնել, բայց եթէ Ակերեանի լեզուական
մեծ ազդեցութեան վերագրել, որ ունեցած էր իր կրօնակից գրիչներու վրայ:

Նոյն իսկ անոնք, որք այնքան գեղեցիկ ձեռքով — չեմ ձայրայե-
ցութեամբ — օրինակել և նմանել ուզած են Ս. գրոց առաջնակարգ շարադրութեան,
50 տարի վերջ իսկ Ակերեանէն ոչ շատ ինչ յառաջացած կ'երեւին: Բառերնիս
սիրելու բնելու համար՝ կը գրենք այս տեղ ամենանշանաւոր գրողաց գրքերն, այն է
Հ. Յովսէփ Վանքցիեանի սիրելեալան Պատմութիւնէն, օրինակ ինն, Վրդիենայ
վերաբերեալ մի քանի տողերը՝ Ակերեանի Թարգմանութեան հետ. գեռել առով
սակայն, որ նա ազատ շարադրելով, պատմական գիտցը հետ՝ լեզուական ձոպիկներ
եւս քաղած է նախնեաց հին գրուածներէն. իսկ վերջինը մի միայն բնագիրն ունեցած
է իր աչքեւ, զոր կը հայացնէ նոյնութեամբ:

Տիեզ. պատմ.

« Սա (Ագաթա Կզոփա) ցանկացաւ բարեկամանն Վէրգինեայ՝ զաստիր Վէրգինեան առն հազարապետի, որ ի խոտան կայր Խիղիսա, որ ի ժամանակին յայնմիկ էր հազարապետ ժողովրդեան, եւ օրէնք եւս երկաստան տախտակացն զոր ինքն իսկ Ագաթա հաստատեալ էր՝ արգելին զամուսնութիւն առ միմեանց՝ բնակ պատկաց։ Նմին իրի գործ ներդրեան յանձն առնէր Ագաթա՝ միւսոյ ի պաշտօնատարաց իւրոց Կղաւդիոս անուն, երթալ առնուլ բանի ի հաստարակաց գպրոցացն զՎէրգինեա և հանել առաջի իւր յատենն, իրրեւ թէ գաւառ լեալ իցէ նա միոյ արուք ի գերեացն Կղաւդեայ։ Հաստ Ագաթա վճռեաց՝ տալ զաղջիկն Կղաւդեայ. ընդդէմ գարձաւ վճռոյն ժողովուրդն, մանաւանդ Խիղիսա հազարապետն, և յատկացաւ քաղաքն ամենայն։

Յայնմհամ յանձն առ Ագաթա չկամարել զվճիռն միշեւ եկեալ հայրն նորա որ ի գործս էր, և գաղտ առաքէր բազմա առ գօրավարսն որ յընկերաց նորա էին՝ արգելուլ գայրն. գձառնագարշելին խոստացեալ նեցան բազմքն. բայց եհաս գոյժն առ Վէրգինեա։

Զահի հարաւ Ագաթա յորժամ եառնոյր յանկարծ առաջի առնելն զՎէրգինեա՝ հանդերձ Վէրգինեաւ՝ որ լայրն առէպ և գողայր։

Պատկ.

« Վէրգինեա՝ ի ժողովրդական ասմէ՝ առնէր գաւառ մի Վէրգինեա անուն, որմէր իրրա հեղեռնամեամբ՝ որ խոստացեալ էր Խիղիսա, որ լեալն էր Տրեբատեա Տեսեալ զնա Ագաթա, և հարեալ ի սրտին զնա, զաղջեկն հնարս հնարեցաւ արկանել զնա ի հրապոյրս՝ բան առաքելոյ բանն կրկնելով. բայց եղեալ միշտ յանդարտանալի ագահութեան Վէրգինեայ՝ միշտ մանկածուխ ի հառաբակաց ուսումնարանն, որ ի միջի հրապարակին, կառեցոյց զնա. և որպէս թէ իւր առաւել իցէ՝ հրամայեաց նմա՝ գալ զկնի իւր. ապա թէ ոչ՝ ասէ, ընդ քարշ առնիմ զքեզ բանի։ Իրրև հասին յատեան Ագաթա, որ էածն՝ առաջի արար զիւր առաքեալ բանն, որոյ քաջ իրագէտ էր գառաւարն՝ համախոհութեամբն ընդ նմա, ասէ... Իրրեւ հառաւ վճռոյ Ագաթա, բազում լսին և աշխարհին եղեւ Վէրգինեայ և կառնանցն որ ընդ նմա... Անհրաւութեան այսպիսի բորբոքեր արդիօք ի սրտմտութիւն բարկանայն զամենայն ոք՝ եւս և հեգարարոյ. արչաւ եւս Խիղիսա՝ բերնութեամբ ցասմնոյ՝ եղեւ անառանելի։

« Աննայն բազմութիւնն կայր ապիխարով, և զառաջառական ի ցեղին ձիոցն։ Իրրեւ զայն եառնս Ագաթա, որ ոչն կարծէր զիւրն գիպել այսչափ գիմակալութեան և հակառակութեան, առեղեցաւ գիշանել...

Իրրեւ գաւառ յիւր օթևան, գրեաց զողջոյնակն ի բանակն՝ առ իւր պաշտօնակիցս՝ չարձակել զՎէրգինեա, այլ արգելուլ ի գիպահուղ։ Անդէն զողջոյնակն յուղի անկաւ Քղթառացն. բայց քան զնա քանի մի ժամու յառաջեցին այլք։ Վէրգինեան գիւր հրամանն առեալ, եւ ի բանակէն՝ յառաջ քան գհառանել Քղթառացն։

Լուր հառանելոյ Վէրգինեան ի Հռոմ՝ չգոհեաց յոյժ գառանապետն, բայց ոչ չկոյց գրոց կրից։ Ի զաղիս անդր ընդ առաւօտն չորս Վէրգինեա ի յայտնի հրապարակ՝ գառերբն իւրով. չէր որ որ հայէր ի Վէրգինեա՝ և ոչ գոլարէին աղէկ նորա։ Հանդերձաւորութիւնն ազատ և անյարդար՝ յոր կայր, երեսք նորա ի-

զափռեալ և վառեալ, այլ նորա նուա-
ղեալ և արուսարալից, նշոյլ ինչ գեղոյ
փղփղեալ ընդ այն քող Թաղծապին, զա-
ւեներն ձմիեին գնիրս։...

Յայնմ վայրի եհաս Պպղիոս, և ա-
հեղասաստ հանդերձատուրութեամբ ել նըս-
տաւ յիւր գահոյս. և յաւաչագէտ լեալ՝
գուցէ դիմագարձութիւն առանք լինիցի,
իջոյց ի Կապիտոլիոն գունդս զօրաց, որք
ընդ ձեռամբ էին նորա՝ ի հրապարակ
անդր։ Քաղաքն ամենայն կայր ակնկա-
ռոյց, տեսանել զինչ գառնասան առնի-
ցէ։... Գաղուրն՝ որ կուբացեալ յիւրոց
կրից՝ չէր անձին տէր, ոչինչ անսացեալ
պաշտպանողաց՝ եհաս վճիռ. կղզիոսի է
Վիրգինիա։

Յայնժամ հայր նորա իւրում յաւա-
հատութեան խորհրդոյ անսացեալ՝ եզ ի
մոր անդէն վարվարակի ձեռնարկել յան-
գիտական ածիր... և ի ձեռն առեալ կըտ-
րոց մի՝ ասէ. Դուստր իմ սիրելի, առ-
մի միայն ճնար պահպանուրեան պատուոյ
քոյ և ազատուրեան. և մինոց զայն ի
զոգ նորա։ Եւ ապա հանեալ զսուրն գըլ-
խովին արիւնաշաղախ՝ զարձաւ Պպղիոս,
և գոչեաց մեծաձայն. Այսուիկ անմեղ ա-
բեամբ ձօնեացին կեանք քո դիցն առ-
դարամեռականաց։

Խափանեաց Պպղիոս զգօրեղ բանս
Վիրգինիոսի զոռձն եւս վկայ յաւուրց մա-
տուցեալ, թէ այնպէս են իրքն որպէս
Կղաւդիոս պատմէ, և ամէն եւս գիրաւուն-
արն. Հեռացուցին դահիճք զամբոխ ժո-
ղովրդեան որ եկեալ կուտեալ էր, առին
զՎիրգինիա և եւսուն ի ձեռս կղա-
դեալ։

Բայց անդէն հայր աղջկանն յոտիս
աղջոյնն կամէր տալ զաւերն և հրաժարել՝
մատացեալ զգուխ աղեաց իւրոց՝ վիեաց
դանակ ի սիրտ աղջկանն և ասէ զնա
տապատ»։

Ինչպէս կը տեսնեն հայկաբանք՝ Դաթըրճեանի լեզուն և ոճը աւելի սեղմ է և բնաիր, իսկ Ակերեանին ճապաղ. բայց այս Թերութիւնս Թարգմանութենէն աւելի՝ բնագրին յատուկ է։ Ակերեանի չարտադրութեան մեծագոյն յատկութիւններէն մին եւս է՝ պարզութիւն և յատկութիւն արտայայտութեան. և այս հիանալի կերպով կ'արտա-փայլի գլխաւորապէս Ղեւոնդեանի գրքի Թարգմանութեան մէջ, զոր գրարարին փոքր ինչ տեղեակ եղողն իսկ գիւրաւ կարէ հասկնալ, ինչպէս Աւետարանը։

Ակերեանի ձեռքով գրարարի կրած անկարծելի փոփոխութիւնն այնպիսի մի ժամանակի մէջ՝ երբ ամէնքը իրթիներ միայն կը սիրէին և կը մշակէին, մի անդուռնելի առեղծուած կը կարծուի բոլ ինքեան. սակայն քննելով անոր պատճառները, այնուհետեւ շատ բնական կը գառնայ, եթէ ոչ այնքան գիւրին։ Նախ և յառաջ պէտք է դիտել, որ ասոր առաջ այդ քայլն՝ էր արդիւնք այն սկզբունքին, զոր գրաւ իրրեւ նշանաբան իր գրչին և գրաւոր երկասիրութեանցը. այսինքն է՝ Մխիթարին նշանա-կուած չարտադրութեանց միջին տեսակը կամ Ս. Գիրքը, իր բնագրութեան և պար-զութեան համար։ Երկրորդ՝ որովհետեւ իսաք կար ոչ միայն մեր եկեղեցական մա-տեաններն և աւելի հարց Վարդապետութիւնքը, այլ նոյն իսկ Ս. Գրքի հայկական թարգմանութիւնը փոխել յաւիտենից, և այդ բանն Ակերեանի յանձնուած էր։ Աւասիկ այդ ասիթը նա ոչ միայն երկայն տարիներ, այլ և կենաց ժեծագոյն մասը ան-ցուց Ս. Գրքի և հայրապետական եկեղեցւոյ նուիրական մատեաններու մատղիք բազ-մութիւններով։ Այո, նա համաձայն Մագաքիան Հ. Վարդէս վ.[1], այլ և իր

---

1. Տես կենսագրութիւն երէցի արուեց, հա. Բ. էջ 921։

անտես ձեռամբ բարեմասնաբեն պիտանին՝ կրկին և կրկին անցած էր այդ ակնաձոյ հնոցներէն, անոնց խրոխտաշէն բաներն և առաքինութիւնները երգուընդացեր և իւր մտաց կաղապարին մէջ ձուլած էր։ Եւ ահա այդ ձուլարանէն է՝ որ կը թափէր նա բառին և հայ առաւար բառարանը։ Իրաւ է՝ որ նա չժամանեց թարգմանել և բառին բարբառ նաեւ Աստուածաշունչը. ասկայն կրնանք ըսել՝ թէ Ակիլեան իւրացուցած էր այդ գործողութեամբը ոչ միայն Աստուածաշնչի, այլեւ Մաշտոցի, Եղիսաբանի, Խաւտպէի, Տօնացոյցի և Պատարագամատոյցի ամէն բառ և բան. և թէ նորա ախանջներն այդ բարեմասնի երգիհանի հնչումներուն ընդելացած՝ բառ այնմ եւս բնականաբար կը ներգաչնակէր և կը շարժէր նա իր լեզուն և գրիչը — իրեն յատուկ արտրութեամբ և դիրութեամբ — երբ և ինչ նիւթի մէջ ալ որ ըլլար։ Ահա Ակիլեանի գրաբար չարադրութեան կամ գպրոցի գազանիքը, որ այնքան ուելի բնական եղաւ, որքան ուելի խոր և կատարեալ էին անոր բուռն ուսումնասիրութիւնքը։ Արեւմի Ակիլեանով կը նորոգուէր մեռամբ ակնեղէն գպրութիւնը Մխիթարեան գպրոցին մէջ, վսեմելով իրմնորանութեանց պաճուճապատանքը։

* * *

Շնորհիւ Ակիլեանի իր այդ կեղեւանքներէն գուռած ու մաքրուած լեզուն Ս. Պատարէն և Մխիթարեաններէն գուրս՝ ազգին մէջ եւս տարածելու և ընդհանրացնելու համար, բաւական չէին վերը յիշուած մատեաններն. վասն զի քիչեր բանս կ'ունենային գանոնք կարդալու։ Իսկ որովհետեւ կարգացողներն եւս ամէնքն ալ Ակիլեաններ չէին, հետեւաբար անկարելի էր, որ առանց կանոնաւոր քերականութեան կարենային բանալ անոնց լեզուական գանձերը և իրենց սեփհականել։ Ահա այս գերս ալ կը կատարէր Հ. Միքայէլ Զամչեան՝ իր 1779 թուականին Վենետիկ հրատարակած հայկազեան լեզուի քերականութեամբը։ Զամչեանի ինչպէս գրած սկզբունքը, այնպէս և նպատակը՝ նոյն է Ակիլեանին հետ. այսինքն է՝ Մխիթարեայ գիտաւորութեան համաձայն, գաւակեան լեզուի գառումը իր գեղեցութիւններէն, և կանոնաւոր գարգացումը [1]։ Ասկայն ճշմարիտը խոսելով՝ Զամչեան առաջին անսակէտով աւելի արդիւնք ունեցաւ՝ քան թէ վերջինով։ Նա նախնեաց մատենագրութեանց վրայ ունեցած անսասլոր հմտութեամբը՝ ոչ միայն առաջինը եղաւ, որ հայկական լեզուն իրեն յատուկ և ուղիղ կանոններու ենթարկելով՝ ճոխ և յարմար օրինակներով բացատրեց և պարզեց անոր կազմութեան գազանիքը, այլ և յաջողեցաւ արտաքսել և մոռացութեան գատապարտել իրմէ յառաջ եղած բոլոր քերականներու ատենած օտարախորթ և անճաշակ ձեւերը։ Զամչեանի քերականութեան արդիւնքն այնքան ուելի մեծ եղաւ, որքան անոր համեմատիւս տարածութիւնն և գործածութիւնը ազգային գպրոցաց մէջ։ Թէ Աստուածոյ և թէ Ընդհանոյ մէջ միակ գործածականն էր մինչեւ 1828–1840 թուականներուն։ Յամին 1801 ապատած անոր համառօտութիւնն ուելի հանրամատչելի եղաւ ամենուն։ 1831 թուականին Ընդհանոյ համար վերատին տպագրուեցաւ այն, Յովհ. Աւգալեանի[2] յառաջ խնդրանօք։ Ուրիշ երկու տպագրութիւններ ալ Տփղիսի և Շուշոյ մէջ եղած են։ Թէպէտ և 50 տարիէն Զամչեանի քերականութիւնն եւս կը հնանար

---

1. Առ այն՝ քերականութեանն հեղինակին ուզելով արդարացնել իր նոր ձեռնարկութիւնը, այսպէս կը գրէ անոր Յառաջաբանութեան մէջ. «Յայս դիտուին հօր մերոյ հայեցեալ՝ կամեցաք զայս քերականութիւն ի լոյս ընծայել, յօրինեալ ամենեւին ըստ հանգամանաց ազոյ լեզուիս մերոյ. յուզեալ աշակրտութեամբ ի գրութիւնս նախնեաց մերոց՝ զուղղութիւն խօսից, թէ՛ ըստ հոլովման անուանց, և թէ՛ ըստ յօրդութեան բայից, թէ՛ ըստ համաձայնութեան ածականաց, և թէ՛ ըստ խնդրառութեան մասանց բանի. յամենայնի ջանալով ի նոցունց բերել զօրինակ կանոնաց առանդելոց ի սմին»։

2. Որ յամին 1825 Դեկտ. 20 առ Սամաւեան ուղղած նամակին մէջ կ'ըսէ. «Մանկունք մեր ուսանին գուղղախօսութիւն քերականութեամբ Հ. Միքայէլի Զամչեան, որ յոյժ հաղուագիւտ է առանձնօր և գրեթէ անգիւտ։ Թէպէտեւ Գաբրիէլեանն քերականութիւն է ընտրելագոյն և ընդարձակ յոյժ, ասկայն աշխարհաբար լինել նորա՝ ըստ կխոսին՝ անընդունակ առնէ զայն համբակաց մերոց։ Յաղագս որոյ բարւոք եղեալ վերատին զՀամչեան քերականութիւնն ի տիպ արձանագրացանել, և զ200 օրինակս կանուխ առաքել առ ի ձեռս իմ»։

և տեղի կու տար ուխտի դիրուագից բերանբերու, ասկոյն ասով խոկ կը բնի է ըսել իրաւամբ, թէ Զամչեանը միայ իրեն իր ժամանակի համար բերանբերու հայկական լեզուի նոր բերանոց, ինչպէս իր պատմագրութեամբն ալ եղաւ հայր նոր պատմութեան։

2. Միքայէլ Զամչեան իրեն ժամանակիր խոկ մեծապէս նպաստեց գրաբարի գարգացման. վասն զի նա առաջինն եղաւ նոր պատմագրոց մէջ, որ իր եռահատոր Հայոց Պատմութեամբը առեղծեց և հնչեցուց՝ ծագոց ի ծագս ընդհանուր հայութեան՝ վիպասանական և դիւցազներգական արձակ լեզուն, բոլոր իր առնական կորովին ու ամենուն հասկնալի կերպով։ Իրեն պարտական են ժամանակակից բոլոր այն ճարտասանական ձեւերն, և դիւցազնական վիպոց այնքան կենդանի և կեանք ներչնչող նկարագիրը. զի իրմէ յառաջ մեր նոր պատմագրութիւնն ուրիշ բան չէր ներկայացներ, բայց եթէ տղայական լացի և ծծի խառնակ ու անոճ թոթովանքներ։ Միով բանիւ նա այն լեզուական վիհերն և վանդակները բերաւ մեզ այդ երկասիրութեամբ, ինչ որ բերած էին Հերոդոտոս Յունաց և Տիտոս Լիվիոս՝ Հռոմայեցւոց։

Սակայն բան մի, զոր պէտք ենք յայտարարել ի սէր ճշմարտութեան՝ այն է, թէ Զամչեան ոչ միայն չպահեց դասական հին Թուկիդիդեան լեզուի, այլ և ոչ Ակերեանի յատկութիւնն և ընթերութիւնը։ Նա իր ճարտասանական կորովի թափովն — ինչպէս և առ նախնիս առ հասարակ ունեցած պաշտումովն ու մեծ հմտութեամբը — իրեն բարձր լեռնէ մի հոսող հեղեղ՝ կ'ածէ կը բերէ և՛ ոսկի և՛ աւազ և՛ արծաթ միանգամայն։ Հետեւաբար, գէթ իր հրատարակութեանց մէջ հետեւող չէ՝ ոսկեղէն գարուդ դպրոցին և ոչ ալ Ակերեանին։ Յաճախ ինքն եւս կը առեղծարանէ նոր բառեր և բարդութիւններ՝ իրր բոցեղէն շնչառներ իր կրակոտ հանճարին ու ինքնատիպ բանաստեղծութեանը։

Սակայն գարմանքն այն է, որ Զամչեան ինչ որ ինքը գործադրած է շարադրութեամբ կամ մտառնութեամբ, նոյնը վարդապետած է նաեւ իր Քերականութեամբը։ Յերաւի, բանալով այդ գործի (Մաս Գ. գլ. ԼԲ.) 524 էջը, ուր կը խօսի Յազագս կազմուբեան բանի, և պերպիտուբեան շարադրուբեանց, կը տեսնենք, որ Ե. գարու ընտիր թարգմանութիւններն այնպէս խառնուած են միջնադարեան մտառնագրութեանց

---

1. Զամչեանը իր պատմագրութեան լեզուէն միայն դասելով՝ մենք եւս նման արդեպից ամանց աննպատակ եզրակացութեանը պիտի յանդէինք. այսինքն թէ զուրկ ըլլայ Ակերեանի ընտիր հայկաբանութենէն։ Սակայն դիտելու ենք, որ նա իր նամակներուն և ճառերու մէջ ոչ միայն ձեւաւոր, այլ և Ակերեանի նման վսեմ և վայելուչ շարադրութիւն եւս գործադած է։ Գաղափար մը տալու համար, կը գնենք այս տեղ ի 10 Նոյ. 1789. Գլմըշվարէն իր հոգենուէնդ եօթն աշակերտ վարդապետներուն գրած նամակէն հետեւեալ տողերը. «Խորհուրդ արտիս փոխանակ պինես յանձելոյ զձեզ պարապածի. պիս՝ յիս տեսանեմ, այլ ի ձեզ գտանեմ՝ որ յիսն զոգիս. ոչ իրր ի չտեմարան յիշատակի ունիմ զձեզ, այլ իրր ի թատրոն տեսարանի մտացս առաջի. ոչ ի տունջեան եւեթ, այլ և ի գիշերի. ոչ միայն ի գտանել իմում անդորր հանգստեան, այլ և ընդ անցանել ընդ վիշտս տառապանաց, ի ճանապարհի գնացս, և ի քաղաքի բնակութիւնս։ Այո, ունիմ զձեզ հանապազ յիս, և պիս ի ձեզ, ոչ ըստ այնմ՝ թէ պի էք. այլ ըստ այնմ թէ պիարդ էք. քանզի այն ի կարօտանացս հայի անձուկ, զոր չհամարիմ մեծ ինչ. իսկ այս՝ յառաւելութիւն հայի սիրոյ, զոր անապատ գանձուց վարկանիմ մեծութիւն. նա զլուանի ունի զտիպ յարատուցի, և սա՝ զարիւնն կրէ զնմանութիւն։ Ո՛վ թէ իրացս անհնարաւոր վիճակ յիս հնարաւորէր, և ես ինքն արեգակնանայի, և ազդուութեամբ երկնառաք բանից զերանաւորն կենաց գոյաւորէի ի ձեզ գտանականն ոսկի։ Ընդէ՞ք՝ որում եմն փափաքիմ՝ յանեզականէն. ունայն համարիմ և յեղականէն ունել ձեզ, որ փոփոխական է և դիւրապատ։ Հայց ոչ խաբիմ, եթէ խմաստնոյ ուրուն աստղուած՝ միջնորդ իմոցս կարգեցի բանից. այն՝ թէ փոփոխականէք՝ յանփոփոխն վերածին յոգաստան, և դիւրապատք՝ յանապատն մնայուրեան։ Ի սոյն իմ ակնարկելով վաստհացայ և վաստհանամ՝ փոքր ուռութեամբ՝ իրր մեծաւ՝ նպաստակադէտ ի ձեզն լինելով, ոչ թէ արժիանալ, այլ որպէս թէ ապակիանալ։ Եւ դուք մի գարմանայք ընդ ապակուցս պայման գոյութեան, թէ գիարդ ցուրտ յինքն ձնալով, յայլ ջերմութիւն արեգականն լուսոյ հասուցանել զօրեացէ. և թէ գիարդ յինքն ամփոփելով գառաւելութիւն հասանելի ջեռուցիչ զօրութեան՝ անջերմ կացցէ, և զայլս ջեռուցանել մարթասցի։ Ընդէ՞ք եթէ վառելի իցէ, ոչ զապակուցն գինէ գհանգամանս, այլ գջերմութեանն ունի յինքն գներգործութիւն, որով և բորբոքի։ Ձեզ յայտիսում առնանելով համակեալ օրպիսութեան՝ ըստ նախագոյնդ գեկուցանելոյ՝ վաստհացայ գառաջինն յաշխարհէ և յանձանօթ քաղաքէ գրել առ ձեզ. և այժմ եւս գարձեալ ի հեռաւորնակ վայրէ վաստհանամ գնոյն երկրորդել. քանզի ըղձանամ՝ ոչ ըղձակերտս եւեթ առնել զձեզ, որում փափաքիմ, այլ և գործունեայ այնք՝ զոր ձեզն հարկաւոր տեսանեմ», և այլն, և այլն։

Ո՛վ չի տեսներ այս տողերուս մէջ Պատմագրութիւնէն գեր ի վերոյ ձեւաւոր ոճ, լի փոխադրութեան և համաձայնութեանց շարամանութեամբ, վսեմ և բարձր գաղափարներու հրահոսան գետեր, նուրբ դիպուած, կարուկ և կորովի առացուածներ։

հետ, ինչպէս ասկին՝ արծաթի հետ։ Օրինակի ապագաւ, միչակ չարադրութիւնը հինգ տեսակի բաժնելով, երկրորդին մէջ, զոր ինքը պատկառաւոր անուանած է, «բան որում յայլոց ապագայ երեսի պատկանեալ լեզուի մերում», դրած է կոչուելի ընծայութեան Կիւրղի, Ասկերեան, Կիւրեղ Աղեքսանդրացւոյ Պարապմանց գիրքը, Գրիգոր Աստուածաբան, Բարսեղ, Եփրեմ, Սերբիանոս և Յակոբ Մծբնացւոյ գիրքը՝ առ ընթեր Նոնոսի ասորւոյ, և Իսահակի՝ Յոբայ մեկնութեան։ Իսկ երրորդ տեսակին մէջ, զոր ինքը ագիւռ և ընտիր կոչած է, դասած են մեծին Խոսրովու, Թոմա. Արծրունւոյ — զոր ինքը սխալմամբ Եղիշէի աշակերտ կը համարէր — Եղնիկ կողբացւոյ, Մաշտոցի, Աբիսամիկս վարդապետի, Աղանեաց Եիրակացւոյ, Պետրոս Սիւնեցւոյ, Աբրահամ Մամիկոնենի, Միքայէլ Ասորւոյ, Գր. Վկայասիրի, Երզնկացւոյ և Յովհաննու Մանդակունւոյ չարադրութիւնքը։ Չորրորդ տեսակին մէջ — զոր կոչած է չքեղ և պանծալի — ասքնեայ Եղիշէի, Իգնատիոսի, Սարգսի, և Յովհ. Կաթողիկոսի գեղեցած են Ս. Գրքէն Յուդիթի պատմութիւնը, Գործք Առաքելոց, Իմաստութեան և Առակաց գիրքերը, Եսայի, Յէ կամ փոքր Մարգարէք, Կաթողիկեայք Պետրոսի, և առ Եբրայեցիս Թուղթը։ Իսկ հինգերորդ տեսակին մէջ — զոր ինքը կը կոչէ վսեմ և գերապանծ — դասած են Լամբրոնացւոյ, Շնորհալւոյ և Գր. Տգայի չարադրութիւնները։ Իսկ Յովհ. Իմաստասիրի, Նարեկացւոյ, Մահտեսւոյ, Խորենացւոյ, Ագաթանգեղոսի, Մամբրէի, Դաւիթ Անյաղթի (ի խաչն), Սահակ Կաթողիկոսի և Գր. Մագիստրոսի չարադրութիւնքը խրթին և մթին անուանած է։

Այդ՝ Զամչեանի գրած այս դասաւորութիւնս քան ինքեան ոգիտակաւն պիտի համարուէր և մեզադրուէր բոլորովին, որպէս ուրիշներուն համար ալ խառնակութեանց պիրենապատճառ, եթէ նա՝ անմիջապէս երեք դիտողութեամբ չբացատրէր իր այդ վարդապետութեան տեսակաւն հիմունքը կամ սկզբունքը, քան զոր առաջ ալ այդպէս պիտի դասաւորուէին հեղինակք։ Ասոնի նա Ս. դիտողութեամբը կը յայտարարէ, թէ «Չի յանել մեր առ՝ չարադրութիւն պարզ, միչակ և խրթին, նկատեմք քան զբովետի վերակացուբեան, և ոչ քան ոճոյ ճարտասանութեան. զի ճարտասանք հայելով ի ձեւս և ի փոխակերպութիւնս բանից զրոչին զերիս տեսակս ոճոյ չարադրութեանց, զոր կոչեն պարզ, միջակաւն և վսեմականս։ Իսկ քերականք հային ի կարգաւորութիւնս բանից, և կամ ի պարզութիւն և ի խրթնութիւն նոցա, և քան այնմ զրոչին։ Ասասի երեքին չարադրութիւն ինչ քան քերականաց պարզ կամ միջակ՝ ի ճարտասանից համարի վսեմ կամ խրթին, որպիսի է այս բան. «Նետք հինից և ահագ ծառն տեզացին ի մեզ (Յովհ. կիզ.)։ Եւ ներհակ այսմ՝ երեքին չարադրութիւն ինչ քան քերականաց խրթին՝ ի ճարտասանից համարի պարզ. որպիսի է այս բան. «Քանզի դեղման ի վերայ մեր Փրկչին շնորհաց՝ առան նշանակք՝ գոհութիւնն առեր և միւռոնն օրօրատ» (Լամբր. Աւետ.)։

Երկրորդ դիտողութեամբ ցոյց կու տայ, թէ ասկեպարեան և միջնադարեան այլ և այլ մատենագիրներն — օրինակ ինն, Եղիշէն՝ Սարգսի հետ դասած ժամանակ՝ ինքն ևս չընդունիր, որ ասոնց չարադրութիւնքը իրարու չատ և նման ըլլան. վասն զի իրարու հետ բազդատելով զանոնք՝ միոյն լեզուն կամ լեզուական կազմութիւնը միւսէն չատ կը տարբերի. այսպէս իմն նաեւ այլոց համար։ Իսկ երրորդ դիտողութեամբ նկատել կու տայ, թէ վերոյիշեալ գրասէրներէն իւրաքանչիւրն — ըլլայ հին Բարգմանչաց, ըլլայ միջին գարուց — կարող է պարունակել իր մէջ չարադրութեան երեք տեսակներն իսկ. այսինքն է՝ այս ինչ բանի մէջ պարզ, այն ինչ տեղ՝ միջակ և կամ խրթին. և թէ նոյն իսկ Ս. Գրոց կամ Հայց հին Բարգմանութիւնքն միօրինակ և միշտ վսեմ չեն և չեն կարող լինել, քան քերականական արուեստի և քան ճարտասանութեան, այլ երեքին վսեմ և խրթին, և երեքին պարզ կամ միջակ չարադրութեամբ։

Ահա այս սկզբունքով և համոզմամբ է, որ Զամչեան կը յարգէր և առաջ կը քաշէր միջնադարեան մատենագրութիւնքը. վասն զի անոնց մէջ իսկ կը գտնէր յոռետ քերականական այնպիսի կազմութիւններ և կառնատարութիւն, ճարտասանական ձեւեր և վսեմ առարտածներ, և այնպիսի նշանակալից և կրթուի բանահիւսութիւններ, որոնք իրենց տեսակին մէջ ճշմարիտ գոհարներ են, և ամէն ուշադրութեան արժանի։ Այս համոզմամբ, մանաւանդ թէ գործադրութեամբ է՝ որ հիմն կը դնէր մեծ յեղափոխութեան մը՝ նոր գասական լեզուին կամ գրաբարին մէջ, որ իրեն ետքէ այլ իրեւ ազգի և ազգութեան պիտի ծառայէր յաջորդաց, և որով դեռ ուրիշ տեսակ գործադրութիւններ նաև պիտի ունենար Մխիթարեան գրաբարը։

Այս ալ ըսենք որ Հ. Զամչեանի այդ նոր գործուն ու գործածական բարբառի չնորհիւ է, որ նախնեաց դասական լեզուն մատչելի կը դառնար Աւետարեաց, և օր մը անկէ պիտի կազմուէր Արեւելեան նոր գրականութեան լեզուն՝ աշխարհաբարը։ Զամչեանի աշակերտի [1] մը ձեռքով է, որ կը հիմնուէր կամ լաւ եւս կը սկսբնաւորէր դասական լեզուի ուսումը նաեւ Ղրիմեան Ազատնեան վանքի մէջ, և անոնք կը տարածուէր ի Զրիմիա և շրջակայ գաւառներուն։

Ինչպէս ծանր՝ այնպէս և լեզուն խորտրմատ հասասասուելէն վերջ՝ կարող է փոխել — ժամանակի և պարագայից պահանջմանց համաձայն — ոչ միայն իր տերմինները, այլ և կեցուածքը, այսինքն են՝ բառերն ու բացատրութիւնքը։ Այս տրտաքին և ժամանակեայ կերպարանափոխութեան մէջ կայացեր է լեզուի ներքին կեանքն և միտասեակ զարգացումը. և այդ կերպարանափոխութիւնն այնքան աւելի անհրաժեշտ է և երագ կը կատարուի, որքան որ լեզու մը գործածութեան մէջ է, և ճարտար գրիչներ կ'ունենայ։ Արդ՝ ԺԹ. դարու առաջին քառորդին գրաբարը դեռ միակ և ընդհանուր կերպով գործածական լեզուն ըլլալով, հետեւաբար գիտունք և գրագէտք առհասարակ բոլոր իրենց ջանքերը զանի մշակելուն և բարձրացնելուն մէջ կը կեդրոնացնէին։

* * *

Զամչեանի Վերականութեան առաջին հրատարակութեան օրէն վերջ 34 տարիներ անցեր էին, և տակաւին նոր վերականութիւն մը լոյս տեսած չէր։ Այդ միջոցին նախնեաց այնպիսի բնաիր գրչագիրներ եւս յայտնուած էին, որոնք Զամչեանին դեռ անծանօթ էին։ Միւս կողմէն ալ Ս. Ղազար այնպիսի նշանաւոր հայկարաններ կը ծաղկէին, որոնք դասական լեզուին վրայ ունեցած նոր հմտութեամբ և լեզուական միաձեռակերպ վարչութեամբք գերազանց կը հանդիսանային։ Արդ՝ այս պարագաներս մէկ կողմէն, և միւս կողմէն ալ Զամչեանի Վերականութեան ծանրարեռնութիւններէն ազատուելու համար՝ ազգին կողմէն անհրաժեշտ պէտք կը զգացուէր դիւրագոյն, ճաւտար և կատարելագոյն քերականութեան մի, որ տար իրենց հայկարանութեան ուղեւծուժը։ Այս բանիս համար նախ Աշխարհունեաց ընկերութիւնն, և ապա յատուկ կերպով հայերէն լեզուի սիրահար և հայագիտութեան Մեկենաս — ինչպէս և Մխիթ. Միսրանութեան մտերիմ բարեկամը — Պօղոս Սերաստեան՝ ազերսական նամակով [2] մը կը դիմէին Հ. Գաբրիել Ասեմքեանին, որ այդ գործը կատարէ։

---

1. Այն է հալեպցի Գրիգոր Շաշատան, որ յամին 1775 վանքը եկած էր։ Նա Զամչեանի յառաջադէմ աշակերտներէն մին էր, մասնաւորապէս լատին և հայ լեզուաց մէջ։ Ուխտէն վերջ վրան լուսնոտութեան հիւանդութիւն գալուն պատճառաւ՝ յամին 1784 յետ յուզարկուած էր և արտօնուած յաշխարհ մնալու։ Սակայն նա առողջանալէն վերջ իսկ խիղճ կ'ընէր կարգուելու. ուստի նամակով վճռեսիկ խնդրելէն վերջ իր միտքը՝ օրուան մէկը հոն կը հասնէր. այլ սիրտ չընելով ուղղակի Ս. Ղազար երթալ, Աբրահօր ուղղած արտաշարժ նամակով մի՝ կը թախանձէր պինքը վերստին ընդունել։ Բայց խնդիրքը չկատարուելով, կը դառնար ի Վարագն՝ Մխիթարեան վանաւորները, և քիչ յետոյ ի Լիբանան, ուր Աստուածածնայ վերին վանքի կամ կաթողիկոսարանին մէջ քահանայ ձեռնադրուելով, յետոյ Փարաւղարութեան հետ՝ կը վարէր 20 տարի նաեւ ուսուցչութեան պաշտօնը, մոցնելով այն տեղ հայերէնի և լատիներէնի ուսումը։ Շաւանօրէն Շաշատեանէն ուսած էր հայերէն գրաբարը նաեւ Հ. Յովակիմ Սալլանթեանց։ Թէոդ. Խատտամեան՝ (Պատմախանիք տպ. Մոսկուա 1828, էջ 53) Սալլանթեանցի ջատագովութեան մէջ կ'ըսէ ընդհակառակն՝ թէ նա տիրացու Թագուր վարժապետին քով ուսած ըլլայ հայերէնը ի Կ. Պոլիս։ Սակայն այս՝ նորա մանկութեան առաջին տարիներուն և նախակրթութեանը միայն կը յարմարի, այսինքն է՝ Յովակիմի Լիբանան երթալէն յառաջ. հետեւաբար հայերէնի կատարեալ ուսումը Լիբանան առած ըլլալու էր։

2. Այդ նամակը, որ ի 15–27 Փետր. 1813 ուղղուած է Պերպ. Աղոնց Աբրահօր, կարեւոր կը համարինք արտագրել այս տեղ. «Շարժեալ հետաքրութեան հոգւով տախտիմ դիմել առ ոտս հայրենասէր Հօրդ իմոյ և Տէառնդ Հոգեւորի և առաջնորդի ազգիս լուսաւորութեան. և ո՞ կարող էր ցոյն կատեցուցանել ընկրկիլ գիս, ուր թախանձանք իմ ի կաթեւորագունէից յառաջ եկեալ ճանապհին պատճառաց... գրուն և գիտական գիտութիւն առնմ հայրենի լեզուի մերոյ, միշտ բարգաւաճել ծաղկեցուցանել ի ձերում ձեռնարանի նոր մեթոտոսիչք, նորակերտ և ամփոփ կանոնօք. յոյր առկս մտպիտզական նամակաւ ազաչեցի մանաւանդ զիս» Հ. Գաբրիել՝ Ամոռակալ, Աստուածմատուռ վարդապետն իմ, զնախաշաւիղ նորոգութեան հին և

Ո՞վ էր Աբեսալոմեան, որուն ըլլայ մէկը որ հարցնէ։ Նա իր ժամանակի հայոց եկեղեցականաց ամենէն խոր և ամենէն ընդարձակ ու բարձր հանճարն էր։ Ժամանակակիցներէն ամենք հիացած անոր իմաստասիրական և աստուածաբանական հմտութեան ու մտաց բարձրութեան վրայ, կոչած են զինքը փոխոխակի Հայոց Յակոբ Վերծարմիրոսը, իմաստասիրական նոր դրութիւն մը յօրինելու չափ կարող և ինքնատիպ. և ամենք ալ նոր անի Թովմաս Ակուինացի։ Կարելի է չափազանց համարման արդիւնք համարել ժամանակակից այս բաղդատութիւնը, բայց նա յամենայն դէպս եզականութիւն կը կազմէր իր գրչովն ու գիտութեամբը։ Մխիթարեան միաբանք թէ իրենց նամակներուն և թէ խօսակցութեան մէջ վարպետաբար բանելով՝ Աբեսալոմեանը կը հանկնային, բառին բուն նշանակութեամբ, կամ լաւ եւս իրեն միայն իրրեւ սեփհական տիտղոս կը վարէին այդ բառը՝ գիմորոշ յօդով։ Եւ առաջին՝ նա որ վաղուց Հռոմայ Պապիենցայի կառավարութեամբը, և անոր մէջ Մովսէսի՝ Փարաւոնի առջեւ գործած հրաշից, այսպէս և բնութեան ցուցանիշներու վրայ, խօսելէն լեզուով լրած երկու առենախօսութեամբքն ոչ միայն այդ տիտղոսին արժանացած էր, այլ և իմաստնոց կառաւը զարմացուցած։ Նա յամին 1801 հրատարակած աննման Դարնկրոժովը, յամին 1806, 1811, 1812 Պօղոսի Թղթոց եռահատոր մեծագիր Մեկնութեամբը, և յամին 1814 Շարականաց բացատրութեամբը գերազանց վարդապետ հռչակուած էր ազգիս մէջ, ոչ միայն Աստուածաբանութեան, այլ և նմանը չտեսնուած դասական լեզուին վրայ ունեցած հմտութեան և հայկաբանութեան համար։ Քունարէն, լատիներէն և իտալերէն լեզուներուն եւս չատ յոյներէ և իտալացիներէ աւելի անգետ էր. մանաւանդ թէ 1792էն ի վեր իտալերէն տօսկանեան լեզուի Գերազանցութեան հրատարակութեամբը վարժապետ եւս հանդիսացած էր։ Ազգային նշանաւոր գիտուններն և գրագէտք իսկ իրեն հետ թղթակցութիւն ունէին, և ամէն տեսակ գիտելեաց վերաբերեալ գժուարութեանց մէջ իրմէ լուծումն կը խնդրէին. իրեն գրչովը կը արբագրուէին և կը յղկուէին։ Մէկ խօսքով, Ս. Ղազարու մէջ իսկ նա եղած էր և կը գայլէր մինչեւ ցմահ՝ իրրեւ իմաստութեան աթոռ, իրրեւ գեղեցան եռոտանի մը. և իր գրեթէ ամէն քննագատած նիւթը, գրածն և գործածը իրրեւ պատգամ կ'ընդունէին, բանի մէջ ունեցած անսովոր ձեռնհասութեան և լուրջ քննագատութեանը համար։ Գրածներէս ոչ մէկը ձրի չէ, այլ անոր հարիւրաւոր թղթակցութեանց ուսումնասիրութիւնը վրայ հասատատուած։ Ահա այսպիսի մէկն էր Աբեսալոմեան, որուն կը գիմէր յատուկ նամակագրութեամբ ազգին բանիերուն մեծը ամէն կողմէն, և որ կը ատանձնէր սիրայօժար իրեն յանձնուած ամէն առաջարկ։ Ահա այս նոր Մաշտոցն էր, որ յանձնառու կ'ըլլար տալ հայ բանասիրաց և դպրոցներուն առհասարակ դասական լեզուի և ընտիր հայկաբանութեան ատոյգ և իսկական օրէնքները, և բանել վերջին խօսքը. հանել զանոնք նախորդ քերականաց գծած շաւիղներէն և բաւիղներէն. չիտակ և դիւրին ճանապարհով առաջնորդել անոնց դէպ ի Ե. դարը, և կատարել լեզուական այնպիսի մի մեծ յառաջադիմութիւն, որուն նախորդներէն ոչ մէկը հասած չէր, և յաջորդք ալ ոչ դիւրաւ պիտի կարենային գերազանցել զինքը ըստ ամենայնի։

Յամին 1815 լոյս կը տեսնէր Վենետկոյ Մխիթարեանց տպարանէն՝ այնքան սպասուած այդ Գերազանութիւնը, բաղկացած 580 քառածալ էջերէ, երկու գրքի մէջ։

բնիկ հայկաբանութեան, զնոյն ինքն փոյթ կալեալ պարտաւորել յերկասիրութիւն առաջարկեալ խընդրուածոյս։

Իւանդն հայրենասիրութեան ոչ թողու զիս լռել... Զնե ինձ սոգտանք՝ համարձակ բանիւք բողոքել առ Զեզ, և յորդորել զձեզ առ սյս. զի գերապանծ գործք գրուածոց ձերոց՝ յորդորագոյնս արարին զիս՝ իշխել ձեռնարկել յայսպիսիս։ Զձեզ ունիմք կեդրոն լուսոյ՝ յորմէ ցոլանան փայլատակքն առ մեզ ճառագայթք հանաչողութեան լուսոյ բանին. այլ զինչ օգուտ, յորժամ աչք խոզտեալք և տկարացեալք ի զօրութենէ՝ ոչ կարեն զօրել հայել, և ի տեսութիւն հրաշագիծ հնդինակութեանց նախնեաց և արդեաց աներեւնէ՝ ոչ կարեն զօրել հայել, և ի տեսութիւն հրաշագիծ հնդինակութեանց նախնեաց և արդեաց աներեւնէ՝ կիւղ մատչել. ոչ երբէք հնար է մեզ աչօք բացօք նկատել ի նոյնս, ուր պակասէ մեզ բժիշկ քաջարուեստ՝ կապդուրիչ մտաց տեսութեան, և վարդապետ քաջահմուտ քերականն բնիկ կրթականութեան. այլ ո՞ւր բժիշկ, ո՞ւր վարդապետ. ո՞ կարէ վարդապետել զհշդրիտ վարդապետութիւն՝ զոր խնդրեմք, բայց ի ձերում Համալսարանի...։

Զայս շնորհ մեծ և բարերարութիւն խնդրեմ ի ձէնջ փութով պարգեւել՝ յաւէտ ի լուսաւորութիւն ազգիս արամեան, յոր ուխտեալն էք. և ոչ միայն ի պարծանս Մեքսուեան ազգատոհմիս, այլ և »։

Առաջին գիրքը, որ երկու մասի բաժնած է հեղինակն, աշխարհիկ լեզուով գրուած է, գրաբարը գեռ չի հասկացողաց կամ թերամարժներու համար. ուր գիւրընդկալ ոճով և ճոխագոյն օրինակօք աւանդելով քերականութեան հօմն մասունք բանին առանձինն, չատ մը յեղափոխութիւններ ըրած է անոնց վրչ, ազատելով ուսանողները ոչ միայն իր նախորդ քերականին աւելորդ ծանրաբեռնութիւններէն [1], այլ և ուղղելով անոր մի քանի անճշդութիւնքը։

Իսկ երկրորդ գիրքը՝ որ գրաբար լեզուով գրուած է և զարգացելոց համար, նուիրուած է մասանց բանի միաւորութեան կամ պատչառ կապակցութեան, որ ինքը համաձայն յունարէն սինտաքսիս անուան՝ վայելչապէս բազդատութիւն կոչած է, խոսրգելով այսպէս. Բաղագս Բազդատութեան մասանց բանի. այսինքն թէ Ա. մասունք բանի ինչ կախումն ունին իրարմէ. Բ. թէ ինչ հարկաւոր կը համեմատութին և կը համաձայնին իրարու հետ, և Գ. թէ որպիսի յարմար դասաւորութիւն հարկաւոր է մասանց՝ ընդհանուր, վայելուչ և ընտիր շարադրութիւն մի կազմելու և պայծառ կերպով իմաստներն արտայայտելու համար։

Այս գրքոյս — զոր աւելոյն իրաւամբ կարելի կոչել պատճառաբանեալ Քերականութիւն կամ իմաստասիրութիւն քերականութեան — Հ. Գաբրիել Ալեպիքեան յետ դնելու, համաձայն Կուինտիլիանոսի (Գիրք Ա. գլ. Չ), գնահատիս իրրեւ հեղինակ և օրէնսդիր դասական լեզուին, կ'անցնի ապա ուշի ուշով և ընտրողաբար քննել ազգիս առաջին լեզուագէտներէն մեզի աւանդուածները, և հաւատարմութեամբ գոյց տալ մի առ մի անոնց քերականական և ճարտասանական գաղտնիքն ու գիտցկութիւնները, նախ ուրը մասանց բանի գործածութեան, և ապա ընդհանուր շարադրածոց մէջ։ Այս գրքոյս՝ իրրեւ դիւթական բանալիս առուգիս բացած և պարզած է այնչափ և այնպիսի լեզուական գանձեր, որոնք մինչեւ այն ժամանակ ծածկուած կը

---

1. Որոնց վրայ արժան է ըստ իս կանգ առնուլ այս տեղ՝ գէթ էական մասերը համեմատելու։ Օրինակի աղագաւ, Զամչեան (յէջ 5–17) քսան օրինակներ գրած էր հոլովմանց անուանց. իսկ Ալեպիքեան տասնի կը վերածէ զանոնք։ Զամչեան տասն հոլովներ գրած էր անուանց. Ալեպիքեան վեցի կը վերածէ անոնց թիւը, բառնալով Պատմականը, Պարառականը, Ներգոյականն և Կոչականը։ Զամչեան (46, 198) միմեանց և իրերաց բառերը էական դերանուն կը համարէր. իսկ ըստ Ալեպիքեանի (37) մասնական միջակ անուններ են։ Զամչեան (230) թէ Սահմ. եղանակի և թէ Ստորադ. մէջ յարակատար և գերակատարներ գրած էր, զորս և յատուկ ժամանակներ կ'անուանէր. իսկ Ալեպիքեան (286, 287) իրրեւ անճիշդ ի բաց կը վտարէ։ Զամչեան բայերու խոնարհմանց 26 օրինակներ գրած էր. Ալեպիքեան եօթնի միայն վերածած է զանոնք։ Զամչեան (120–121) մերժ, մատ, հուպ, հեռի, կից, գոյգ, նման, հակառակ, գաղտն և այլն, հոլովառու բառերն իրրեւ նախադրութիւններ նշանակած էր. Ալեպիքեան (109) ուղղադատօրէն նախադրութեանց խմբէն դուրս կը հանէ զանոնք։ Զամ. (124, 259) 33 տեսակ Մակրայներ բաժնած էր. Ալեպիքեան (120) ուղղակս 12ի կը վերածէ զանոնք։ Այսպէս նաեւ Զամչեանէն նշանակուած Շաղկապներու 16 տեսակները՝ Ալեպիքեանի քով 12ի վերածուած են։ Զամ. (149) ւ և յ տառերը մերթ ձայնաւոր և մերթ բաղաձայն կը վարդապետէր. իսկ ըստ Ալեպիքեանի՝ առաջինը միշտ ձայնաւոր է, և երկրորդը միշտ բաղաձայն։ Ըստ Քերակ. Զամչեանի (168) առ, այտ, ատր, հակ, համ, հուն, բաղ, ներ և այլն, բաղադրական անշնան մասնիկներ համարուած էին. իսկ Ալեպիքեան (208) ցոյց կու տայ, թէ դոքա նշանակական բառեր են ընդհակառակն։ Այսպէս նաեւ Զամչ. (169) իրր անշնան ածանցիչ մասնիկներ յիշուած արդ, զան, գար, բայ, ուն, և այլն, ըստ Քերակ. Ալեպիքեանի (222) են հատատուկ նշանակիչ բառեր։ Զամչ. (170) ածանցական մասնիկները 30 տեսակի բաժնած էր. իսկ Ալեպիքեան (223) 13ի կ'իջեցնէ անոնց թիւը։ Զամչ. 203) կ'ուսուցանէր, թէ ասյն, դոյն, նոյն դերանունները չունին իրենց յատուկ հոլովներ, այլ նախադրեալ միայն կը հոլովին, իսկ ըստ Ալեպիքեանի (270) ունին յատուկ հոլովումներ։ Զամչ. (209) բաց ի էական բայէն՝ միւսները բոլոր առթական անուանած էր, բաժնելով զանոնք ի կանոնաւոր և յանկանոն. իսկ Ալեպիքեան (276 կը պարզէ ինքնահնար բառիս պատրուակը, ցուցնելով թէ առքր՝ առնեմ բային արմատ չէ՝ ըստ նախնեաց, այլ առնուիմ բային. հետեւաբար գործ չի նշանակեր։ Զամչ. (262, 569) օրեն, բար, պես, ուստ և այլն, Մակրայից անշնան մասնիկներ ուսուցած էր. իսկ ըստ Ալեպիքեանի (119) գոքա նշանակիչ բառեր են, որոնցմով կը կազմուին բարդ անուանք, և ոչ թէ մակրայք։ Զամչ. (343) կ'ուսուցանէր անպայման կերպով, թէ գոյական անուններէն ոմանք՝ երբեմն ածական կ'ըլլան ուրիշ անուանց. իսկ Ալեպիքեան (194, 363) կ'ապացուցանէ թէ կարելի չէ, որ անուն մ'ըլլայ թէ՝ գոյական և թէ ածական, պահմամբ նոյն նշանակութեան, այլ փոխելով միայն նշանակութիւնը։ Զամչ. (397) կ'ուսուցանէր, թէ որ յար. դերանունը երբեմն կը դրուի իրրեւ ածական՝ համաձայնելով գոյականին. Ալեպիքեան (433) կը մերժէ իրրեւ անճիշդ, ցուցնելով թէ յարաբերականը միշտ գոյական է. և թէ իր նախորդէն ջէջ բուած օրինակը յարաբերական չէ, այլ վերաբերական. այսինքն է՝ կամ հարցական մասնական և կամ որպիսութեան մտաւոր գոյականին։ Զամչ. (406) կ'ուսուցանէր, թէ երբ անեղեւոյթը կը յարի դիմազուրկ բային, տեղն անեղեւութին կը դրուի միշտ ի տրական հոլով. իսկ Ալեպիքեան անճիշդ կը համարի զայս, ցուցնելով՝ որ այն տրական բառը ոչ է տեր անեղեւութին, այլ խնդիր դիմազուրկին։

Հային դասական մատենագրութեանց ոգւոյն վէմ։ Ինձ ծանօթ հին կամ նոր քերականներէն ոչ մին այնքան կրօնով և սրամտութեամբ խորը թափանցած չէր մեր դասական մատենագրութեան, և այնպէս գոհացուցիչ կերպով պատճառաբանած և լուծած չէր անոնց շարադրութեան օրէնքներն և կազմակերպութիւնը՝ ինչպէս Աբեղեան։ Ընդհանուր և յայտնի կանոն է, թէ յարաբերականը — որ ունի իր յայտնի յարաբերեալը — բաս կարգի այն հոլովով կը դրուի՝ զոր կը պահանջէ բայը, կամ բառը՝ որուն է խնդիր, կամ ածր, կամ յատկացուցիչ։ Սակայն սովորական քերական մի, որ կանգ պիտի առնէր հետեւեալ օրինակին դիմաց, գլուխը պիտի քւրէր և մէջէն բնաւ պիտի չելնէր. «Պատմեաց Մովսէս Ահարոնի զամենայն պատգամն՝ զոր առաքեաց զնա Տէր»։ Եւ սակայն Աբեղեան բակառուրեան համաձայն կրկին խոստովանիլ կը դնէ հոն, և կը մերկացնէ այսպէս առաջինը. «Չի յարաբերականն առնու զհոլով յարաբերելոյն այնպէս՝ որպէս յորժամ զօրութեամբ կայ. ուր փոխանակ դնելոյ առ որ՝ դնի զոր, վասն յարաբերելոյն զպատգամն»։ Իսկ երկրորդին համար կ'ըսէ, թէ յարաբերեալը դրուած է ի հոլով յարաբերականին, և երբեմն առ եւս՝ ի հոլով յարաբերելոյն, ուր սովորութիւն է յաւելուլ զերանունը կամ ուրիշ բառ մինչ ի հոլով յարաբերելոյն։ Եւ այլ և այլ օրինակներ կը կոչէ Ս. Գրքէն, նշանակելով անոնց տեղերը կամ թուահամարը։ Այսպէս կը սրամտանէ որ և է քերականական մասն բանի վրայ։ Աբեղեան առաջինն է, օրինակ իմն, որ ամէէ 85 տարի յառաջ հիանալի լեզուաքննութեամբ պարզեց Քեր. (Գիրք Բ. էջ 449–262) ա, դ, ե, դիմաբոյ յօդերուն՝ հայերէն լեզուին միայն յատուկ ըլլալը կամ եզականութիւնը, և իրրեւ սրամտա-գուշական, տասգական դերանուանց՝ անոր մէջ խազացած անսահման գերը. մինչդեռ դասղիացի հայագէտ լեզուաբանը՝ Մէյէ՝ դեռ վերջերս նոր կը ներկայացնէր բանասիրաց իրրեւ չքնաղ նորութիւն մի։

Դարձեալ ինչպէս ամէն լեզուաց՝ այսպէս ալ հայերէնի մէջ ընդհանուր կանոն է, որ հայցական հոլովը իրաւունք չունի ըլլալու տէր բայի. սակայն նախնեաց մատենագրութեանց մէջ այլ և այլ տեղեր հայցական հոլովին եւս կը ձեւանայ տէր բայի, և այն այնպիսի եղանակաւ, որ կը շուարեցնէ հայկաբաններն անգամ, այնու մանաւանդ, որ քերականք առհասարակ նշանակած են միայն, բայց խուսափած զայն բացատրելու դժուարութենէն։ Իսկ Աբեղեան չորս պարագայից [1] մէջ իսկ այդ քերականական գաղտնիքին դիմակը վար առած է իր սրամտաբանական վերլուծումովը։ Առաջին պարագայն կը նկատէ Աբեղեան — և իրաւացի կերպով — թէ «բայց լինի այս զօրութեամբ ներգործական բայի մինչ, որ կայ յայտնի կամ լռելեայն, որում տեսի խնդիր համարի հայցականն, և ոչ տէր այլում բայի. զի ըստ սովորական ոճոյ ասելի էր «ի հրէից անտի վերստին առնել». բայց դնի զայրն, զի ասելն՝ կարծիս տացցէ, իբր ներգործական իմանի. այսինքն՝ գուցէ կարծեացէ բազաւորն՝ զայրն վերստին դառնալ Հրէից»։ Բ. պարագայի մէջ կը յայտարարէ, թէ «բայց ոչ է (բայն) ըստ նշանակութեան կրաւորական, այլ ներգործական. որում խնդիր լինի հայցականն և ոչ տէր, զի յորս բողեալ լիցի՝ յոճ արքունական հրովարտակաց նշանակէ բողումբ»։ Գ. պարագային մէջ, կ'ըսէ թէ «իսկ տէր բային զօրութեամբ կայ. զի զայս առնեացն ոչ է տէր, այլ խնդիր բային գրեալ, իսկ տէրն իմանի գրեալ է այլոց»։ Գ. պարագային մէջ հայցականը խնդիր է հետեւար բային, զի զոր՝ ոչ հայի առ բայն ակն, այլ առ առնելն»։ Իսկ հինգերորդ պարագայն, ուր հայցական հոլովը կը ներկայանայ իրրեւ տէր կրաւորական կամ էական բայի, օրի. «Յայնմ ամենայնի յայտնի էր տեսանելեացն՝ զարտին տաղտուկ» (Բ. Մակ. գ. 17), Աբեղեան իսկ կը խոստովանի, թէ

1. Առաջին պարագայն է, յաճախ կրաւորական ընդունելութիւնն և անորիշ դերբայն — մանաւանդ էական բային — այն անունն՝ որ ըլլալու էր ուղղ. կամ սեռական տէր բայի, փոխի ի հայցական այսպէս. «Գուցէ կարծիս ինչ տացէ թագաւորին՝ իրրեւ դառնալ ինչ ի նմանէ կամ ի Հրէից անտի զայրն վերստին դառնալ» (Բ. Մակ. գ. 32)։ Բ. Երբ կ'երեւի հայցական անունը դրուած իբր տէր կրաւորական բայի. «Եւ զբաղաքն Պատղոմայեցւոց տուեալ լիցին նոցա պարգեւ» (Ա. Մակ. ժ. 31)։ Գ. կ'երեւի երբեմն հայցական անուն՝ որ չէ տէր բայի, այլ խնդիր. օրի. «Զայս ամենայն վասն նորա և վասն պղծութեանց նորա և անօրէնութեանց գրեալ է ի գիրս ժամանակաց թագաւորացն» (Ա. Եզր. Ա. 41)։ Դ. Երբեմն կայ նորա և անօրէնութեանց գրեալ է ի գիրս ժամանակաց թագաւորացն» (Ա. Եզր. Ա. 41)։ Դ. Երբեմն կայ հայցական անուն՝ բայց ոչ տէր մերձաւոր բային. «Զոր իրրեւ եկն՝ հանին ի վերնատունն» (Մատթ. ԺԴ. 47)։

տաղտուկ է տէր բայի, և պարզի ըստ յոնին. «տաղտուկ սրտի քահանայապետին յայտնի էր տեսանողաց», բայց անբացատրելի է. և թէ աւելի մատենագրաց ազատութեանն ընծայելի է այդ կիրառութիւնը, քան թէ լեզուի [օրինաց. հետեւաբար՝ չէ բնաւ հետեւելի:

Սակայն ամենէն մեծ յեղափոխութիւնը կը բերէր Աւետիքեան՝ Բաղդասութենէն Շարագրութեան ձեռնարկած մեթոտովը, որ — իր ըսածին համաձայն — այնքան կարեւոր և ախորժելի պիտի լիներ աշակերտաց, որքան կարեւոր է բանաւոր և զարգացած մարդոց. այսինքն՝ գիտնալ ուղիղ և պարտաւորական արտայայտութիւնը կամ խօսից տուրեւառը, որով իւրաքանչիւր գրիչ կարող է լինել արժանաւոր և գովելի անդամ մարդկային ընկերութեան, և նպաստող անոր զարգացմանը: Աւետի ինքն աքանչելապէս ցոյց տալէն վերջ (յէջ 495), թէ ինչ է բանը, և քանի ինչ կը մտածուի անոր մասին, կը դառնայ (յէջ 547) խօսիլ ընդհանուր Շարագրութեան կամ չափաբանութեան վրայ, զոր կը նկատէ հարազատ [1] կամ ընտանի, և օտար կամ խորթ: Բաղդասութեան մէջ երած լուրջ քննութեան համաձայն, մէկդի կը թողու հեղինակս արդարեւ օտար կոչուած չարագրութիւնը, իր օտարաձայն ոճին, ռամկաբանութեան և անտաղտուկ ըլլալուն համար:

Հարազատը միայն ի նկատի առած ընտրող վարդապետը, երեք տեսակ կամ աստիճան կ'որոշէ անոր. այսինքն են՝ պարզ, միջակ և խրթին: Ահա այս տեղ է՝ որ Աւետիքեանը Զամչեանէն մեծապէս կը զանազանի, և այդ երջանիկ զանազանութիւնն է, որով պիտի գործուէր այն ամենամեծ յեղափոխութիւնը, ըլլայ մատենագրաց ընտրութեան, ըլլայ չարաբանութեան կազմութեան նկատմամբ: Զամչեան (526) հինն կը դնէր իր վարդապետութեան, թէ խրթին չարադրութեան համար կը պահանջուին, մանուածոյ շարայարութիւն՝ բնութիւ կամ մրիւն բառից, որոնց աւելի կամ պակաս բազկացութենէն իբր թէ յառաջ կու գային հոյակապ (օր. Նարեկացւոյ, Իմաստասիրի, Մակարայեցւոց, Յովհ. Կաթողիկոսի չարադրութիւնքը). գեղարիւն (օր. Խորենացւոյ Ագթ., Մամբրէի, Դաւթի, և այլն, չարադրութիւնքը) և մրիւն և այլ չարադրութիւնքը: Իսկ Աւետիքեանը կը վարդապետէ — բանիւ և օրինակօք — թէ «Զայսոցիկ (այսինքն պարզ, միջակ և խրթին չարադրութեանց) որոշումն ոչ այնչափ ի (խրթին) բառից կամ չիմաստից բանիւն

աո վիմեանս՝ եղանակ կամ ժամանակ բային, նախադրութիւնն, գերանուն, նախադիրքն։ Գերագանց է՝ մանաւանդ վիճակ շարադրութիւնն, յորում ընդ անաւոր դասաւորութեան և չրջուն ոճոյ՝ կան բառք ընտիրք, պէսպէս նախդրօք և մանկամբք զարդարեալք »։ Չհաւասար՝ իր կարծիքով այդ տեսակի շարադրութիւններն երբ չունին վերոյիշեալ հանգամանքը, կ'ըլլան կամ ռամկական, անվայելուչ, անախորժ, և կամ խառնաբան, խիտ, դժուարալուր։

Ըստ Աւետիքեանի՝ քերականական շարադրութիւնը սովորաբար իրեն կից ունի ճարտասանականը և հռետորականը. յորում կիրառութիւն գանագան ձեւոց, բառից և իմաստից կը պերճացնէ աւելի կամ նուազ խօսքը։ Բայց այս աւելի ճոխաբանութեան կամ պերճախօսութեան կը պատշաճի, որով այլ և այլ ուրիչ հանգամանքներ և անուանակոչութիւններ [1] եւս կ'ընդունի։ Այս դիտողութենէս վերջ իրաւամբ կ'եզրակացնէ հիմնակս՝ ասյն մեծ և կարեւոր ճշմարտութիւնը. « Յասացելոցս ի վեր առնու հետաքննին առանձին, թէ յատկութիւն ոձոյ իւրաքանչիւր մատենագրի՝ յառաջ գայ տիրապես և գիտաւորապար ի տարբեր շարադասութենէ մասանց բանիւ, զոր սովոր է յաճախ վարել իւրաքանչիւր հեղինակ [2]։ Այլ ոճ ունի ասեմք Խորենացին, և այլ Եղիշէ, այլ Յովհաննու Մանդակունի, և այլ Ագաթանգեղոս. այլ Եզնիկ, այլ մեծն Խոսրով, այլ Նարեկացին, այլ Շնորհալին, այլ Սարգիս, այլ Իգնատիոս, այլ Լամբրոնացին. այնպէս իւրաքանչիւր մատենագիր [3]։ Սկա ամենեցուն սոցա տարբերութիւն ոճոյ բաց ի ճարտասանականէն՝ ունի և զորիչ եղանակ դասաւորութեան բառիցն, և այլոց քերականական կանոնաց, որով գանագանին յիրերաց, և կամ իւիք իւիք նմանին »։

Մենք աւելորդ կը համարինք հոս անդրագոյնս խօսիլ Աւետիքեանի Քերականութեան վրայ, կամ անոր մանրամասնութեան վրայ ծանրանալ. վասն զի մինչեւ ցարդ բառածներնէս իսկ ակներեւ կը տեսնուին անոր մեծ արժանիքը։ Այդ, այդ արժանեաց պարտիմք լեզուական այն նշանաւոր արգասիքը, որոնք յառաջ եկան ընդհանուր կերպով ազգային, բայց ի մանաւանդ Մխիթարեան հասատատութենանց մէջ, անոր ազդե-

---

1. Այսինքն են Զարդարուն՝ որ հեղինակս կարծիքով՝ « պահուհեալ է պէսպէս բառիւք, ածականօք, յատկացուցչօք, համանշանակ ձայնիւք »։ Զիւիւ՝ որ « յարմար ձեւովք և ընտիր եղանակաւ բառից և իմաստից »։ Շքեղ՝ « ուր յաճախեն վսեմաձայն բառք և ձեւակերպութիւնք »։ Ազդուական՝ « յորում լուսիւն կամ կախումն բառից, դրութիւն շաղկապի և միջարկութեան, յետ և յառաջ դասուին հասուածոյ բանին՝ ուժգնութիւն տան իմաստից ».

2. Աւետիքեանի այս նախադասութեամբ իրրեւ մուրճի հարուածով կը խորտակուին արդի բանասիրաց ոմանց այն վարկածները, որոնք Ե. դարէն հասած մի քանի գրուածոց իրարու հետ ունեցած լեզուի և ոճոյ աւելի կամ պակաս նմանութենէն կամ անմանութենէն դասելով չորսէն հինգ տարբեր դպրոցներ կ'ենթադրեն։

3. Թէպէտեւ հեղինակս Զամչեանէն տարբեր դասաւորութիւն մ'ըրած է մատենագրաց և մատենից, յէջ 553–554, բաժնելով զանոնք վերը յիշուած շարագրութեանց տեսակներու համաձայն, սակայն այդպիսի դասաւորութիւն մի հետի է բացարձակ և անպայման լինելէ։ Վասն զի ինչպէս ինքն իսկ դիտած է, յէջ 552, նախ որ՝ ամէն գրուած միօրինակ ոճով չընթանար ամէն բանի մէջ. այլ գանագան նիւթոց առաջարկութեան համաձայն՝ մի և նոյն հատի մէջ իսկ կը տեսնուին այլեւայլութիւնք շարագրութեան. այսինքն մերթ պարզ, մերթ միջակ և մերթ խրթին, կամ այլ տեսակ։ Բ. այն հեղինակը կամ շարագրութիւնը, զոր քերական մի՝ ըստ կանոնաց քերականութեան կը գտնէ կամ վայելուչ կամ գերագանց, նոյնը կրնայ ուրիշ կերպ դասել հռետոր մի, կամ հայկարան բանասէրն։ Հետեւաբար՝ սոյնքն եւս համաձայն Զամչեանի իրաւամբ կ'ըսէ. « Ապա զորոշումն նոցա մնայ ընտրել ըստ շարագրութեանն՝ զոր յաճախ և իբր ընտանեբար ի կիր առնու իւրաքանչիւր մատենագիր։ Նայց ընտրելի են մատենագիրք, յորս առաւել երեւի յատակ հայկաբանութիւն. և ի նոսին իսկ զսովորական ոճ նոցա առնուլ օրինակ, քան թէ զոր երբեմն և ըստ բերելոյ բանին ի կիր առնուն »։

Իսկ, յէջ 555–557, ընտիր շարագրութիւն ընելու համար տուած Աւետիքեանի հինգ նախազգուշացուցիչ հրահանգները ամէն ժամանակ յարգի պիտի մնան և ամենուն ակնածելի. Ա. մի և նոյն գրուածի մէջ չգործածել մի և նոյն շարամանութիւն բառից, մի և նոյն նախադրութիւնը, կամ նախդիր կամ մանրիկ կամ մակբայ, թէ և սոքա իրենք իրենցմէ վայելուչ ըլլան. ապա թէ ոչ նմանած կ'ըլլուի անոր՝ որ քնարի մէկ թելը միայն կը հարկանէ միշտ։ Բ. խորշելի է գործածել հուպ միմեանց նմանաձայն կամ նոյնայանգ բառեր։ Եւս առաւել խորախոս բառիւք և պատ ի պատ ոճով խրթնացնել բոլոր ասացուածը։ Գ. Հակառակ անցելոյն նորաձեւութիւն չմուծնել շարագրութեան մէջ՝ օտարաձայն կամ տգեղ ածանցներով և բարդութիւններով։ Դ. յաճախութեամբ բառից շատ չերկնցնել պարբերութիւնները, բազմացնելով ածականները, յատկացուցիչները, խնդիրներ և մակբայներ։ Ե. Զարգացեալներու համար յոյժ պարսաւելի է՝ գողանալ կամ գաղափարել զշարամանութիւն հեղինակին, փոփոխմամբ սակաւ բառից. պի ուշ կամ շուտ կը յայտնուի և կը յանդիմանուի գողութիւնը։

յութեան ներքեւ։ Ջմռռնամ ըսել, որ նոյնին վրայ եղած համառօտուած երկրորդ ապագրութիւն մ՚այլ ուրը տարի վերջ, այն է 1823 թուականին, լոյս կը տեսնէր դպրութեանց համար, որը յայտնի նչան է ազգին կազմէն գոած մեծ ընդունելութեանը ։

Այդ՝ Աւետիքեանի Քերականութիւններով դասական լեզուի քերականական և ճարտասանական գաղտնիքը յայտնուելէն վերջ, ուրիշներ եւս կը խիզախէին հակայաբար այդ դժուարին և փշուտ ասպարիզին մէջ, ուր յառաջագոյն կային անչարժ, չուարեալ և կարծէք թէ պապանձած։ Եւ այդ խիզախումն իսկ ուելի անոր փառքը կորզելու համար էր, կարծես, քան թէ կարեւոր պէտք մը լեցնելու։ Սակայն քանի որ նա դեռ կենդանի էր, ոչ ոք կը համարձակէր անոր յառուկ գործովը՝ իրրեւ օտարին փեսաւրներովը՝ պերճանալ։ Եւ յիրաւի յամին 1827, այսինքն է՝ Աւետիքեանի գերեզման իջած և արեգակնակերպ լուսոյն չիջած տարին՝ մէջ տեղ կ՚ելնէին իրենց յառուկ երգը երգելու մինչեւ այն ժամանակ ծածուկ մնացած ազգային լեզուաբերները։ Լիրանանցի Հ. Յովակիմ Վ. Սալանթեանցը, որ աշակերտած էր Զամչեանի աշակերտին՝ Անդրէաս Եաչառանին. Սալանթեանց, որ ինչպէս տարիներ յառաջ Միքայէլ անունը առանձնելով՝ անոր հետ յափշտակել ուզած էր Հ. Մկ. Զամչեանի Վահան Հաւատոյ Հոյակապ գրութեան որպէս հեղինակ երեւնալու փառքը, այսպէս ալ յամին 1827 հրատարակած Հայկազեան լեզուի նոր Քերականութեամբը կը յափշտակէր անոր Քերականութեան պարծանքը, զարդարելով զայն Աւետիքեանի Քերականութենէն կորզած նորութիւններովը, որպէս իրեն անհրաժեշտ։ Եւ իր գողութիւնը չմատնելու համար՝ բաւական յաչող կերպով և տարբերութեամբ գասաւորած է նախորդ քերականներու իրեն ընծայած ճոխ առատձն ու վարպետութիւնքը։ Մկ. Սալանթեանց, որպէս թէ արեւելեան գրականութիւնը արեւմտեանի ազգեցութենէն անկախ ընելու նպատակով, ներմուծած էր նաեւ ինչ ինչ կարեւոր փոփոխութիւններ եւս։ Սակայն տուա Քերականութիւնը Մոսկուայի Լազարեան ճեմարանի ուսանողաց համար գրուած լինելով, հետեւաբար աւելի անոնց մէջ ընդունելութիւն գտաւ, քան թէ բոլոր Հայաստանց մէջ։ Այս բանիս ապացոյց է անանուն մեղն ձեռքով՝ Թէոդորայ Մոսկուայ՝ ուսանողէն հրատարակած գրքուկով եղած ընդդիմախօսութիւնը, որուն ապա կծու կերպով պատասխանեց Սալանթեանի համակրող աշակերտներէն մին՝ Թէոդորոս Խատամեան։

Նոյն տարին ուրիշ Քերականութիւն մ՚ալ կը հրատարակէր, Վիեննայի Մխիթարեան Աբեան՝ Զալըխեան Հ. Վրթանէս վարդապետը, որուն ինչպէս ընդունելութիւնն այսպէս և՛ կերտուութիւնն երկայն տեւեց վարժարանաց մէջ։ Իսկ երկու տարի վերջ ալ լոյս կը տեսնէին, ի Կ. Պոլիս՝ Գրիգոր Փէշտիմալճեանի և Միջագիւղի Մեսրոպ երիցու Քերականութիւնները։ Առաջինը՝ մուտքի, իսկ վերջինը վերէն ի վայր քաղուածոյ[1] մ՚է Զամչեան և Աւետիքեան Քերականութեանց։ Իսկ Յ. Շ. Չրպեանան — ի 23 Յուլ. 1817 — Պարիսէն առ Հ. Գաբրիէլ գրած նամակով՝ յետ ծանուցանելու իրեն ղրկուած Քեր. օրինակին և Նարեկացւոյ ընդունիլը, այսպէս կը յայտնէ իր շնորհակալութեան հետ՝ նաեւ դոհութիւնը. « Որով միամ միշտ շնորհապարտ առ ձեզ՝ վասն աշխատանաց ձերոց, և միանգամայն երախտագնակալ և շնորհակալս յոյժ յոյժ առ Հայրութիւն ձեր՝ յաղագս նոր Քերականութեան հայկազեանս լեզուի, յորինելոյ բառ բուն յառակութեանց մերոց՝ գերիմաստ բանիւք և հայկաբառ վանականութեամբ. խրատանչիւրքն պատուք արդիւնաւոր ոչնութեանց ձերոց, և յաւերժական յիշատակք շնորհալի մատանց Հօրդ իմոյ, կարգեալք յառաւելութիւն հայասունդ գրեան՝ ի պարծանս Հայասգասրանին մերոյ, և ի յառաջադիմութիւն ազգին ի գրաւորն երկասիրութիւն, հրճուեցուցանեն զանձինս յոյժ յոյժ, յամենայն գարձս ի յընթերցանութիւն նոցունց։ Ի բազում իրս, ի կարգ, յոճ և յըակզբունս քերականական՝ յար և նման ընթանալ

---

1. Մեր Հարց Պօլսէն եկած թղթակցութեանց մէջ կ՚գտուի մինչեւ անգամ, թէ այդ քաղուածոյ Քերականութիւնն յօրինած էր Մխիթարեան Հ. Մեսրոպ Վ. Ազաչրաքեան, և անոր վրայէն կը դասախօսէր իր աշակերտաց հայերէնը, որոց մին էր և Միջագիւղի Մեսրոպը. որը յետոյ իր վարժապետի Քերականութիւնը՝ իբրեւ իւր երկասիրութիւն՝ կը հրատարակէր, ինչ ինչ փոփոխութիւններով։ Բայց թէ ինչպէս, լռած են։

ձևին քերթողութեան մասանցն՝ (այսինքն Քերականութիւնը) իմոյն — դեռ ձեռագիր — Քերականութեան, պարզաբանելով ի դպղիսական բարբառ, ի 14 ամաց հետէ, զոր ակնարկեցին սերնդոցն Աղգամատիցք մեր », և այլն։

Սակայն մենք կրնանք ըսել, թէ աւելի անկեղծ, համեստ և ճիշդ կ'ըլլար, եթէ Չրպեանեանը փոխանակ 14ի՝ յիսիսուց ամաց ետեւ բռած ըլլար, որով ուրիշներն ալ աւելի դիւրաւ պիտի հասկնային, թէ նա այդ միջոցին և ճիշդ Աւետիքեանի 1815ին հրատարակած Քերականութեան վրայ ձեւեց կամ յարմարցուց իր յիշեալ գործը, քան թէ Աւետիքեան՝ որա յար և նմանը, և այն խակ՝ 14 տարի յառաջ — երբ Մխիթարեան վարդապետի դեռ մանչն խակ անցած չէր յօրինել գիրը — և յօրինել առանց տեսնելու Չրպեանեանի Քերականութիւնը։ Յամենայն դէպս՝ պէտք է նկատել, թէ Աւետիքեանի Քերականութիւնն եղաւ և առաջին և ապրիւր բոլոր այդ քերականութեանց. և թէ դուցա ձեռքով աւելի և աւելի արդատաւոր եղաւ այն՝ զարգացման դասական լեզուին։

Ահաւասիկ Հ. Գաբրիել վարդապետին՝ իրեւ քերականի՝ խոստացած գերը. տեսնենք այսուհետեւ անոր գրաբար շարադրած մատենագրութիւնքն, ու անով յառաջ բերած ամենամեծ չարժումը։

Կան արուեստագէտներ և գիտնականներ, որոնք աւելի ընդունակ են գիտնալ կամ արուեստակերտել՝ քան թէ իրենց գիտութիւնը կամ արուեստն ուրիշներուն ուսուցանել կամ հաղորդել. կան ուրիշ դաս մ'ալ, այք ընդհակառակն հաղորդելու աւելի դիւրութիւն ունին, քան թէ իրենց գիտցածը ոճով գործադրել կամ ի գրի առնուլ։ Խակ Աւետիքեանն էր այն եզակի տաղանդներէն, որոնք ի բնէ օժտուած են հաւասարապէս և՛ գիտնալ և՛ ուսուցանել և՛ շարադրել։ Եւ առաջիւ՝ ուշի ուշով քննելով անոր նախայիշեալ չորս հսկայ մատենագրութիւնքը, ինչպէս նաեւ դեռ ուրիշ չատերը և նոյն խակ բազմաթիւ նամակները, մենք կը տեսնենք՝ որ բոլոր այն քերականական, ճարտասանական, և այլն, կանոնները, ձեւերը և ոճերը, զորոնք աւանդած է նա այլոց իր Քերականութեամբը, դասական լեզուն յառաջ և վայելուչ ընելու համար, նա ինքն զարմանալի ճշդութեամբ ի գործ դրած է իր մատենագրութեանց մէջ խակ. և անով իր շարադրութիւնը ոչ միայն ձեռաւոր ու վայելուչ, այլ և առաւել գիտական դրած է։ Նա իր Քերականութեան 554–555 ուսուցած հրահանգաց համաձայն՝ արուեստի ներքաշուկ ընտրութեամբ և ամէն բան իրեն իւրացնող գործող կարողութեամբը առաջարկեալ նիւթին կամ դրութեան համեմատ չարժած է իր լեզուն, գրիչն և գիտութիւնը։ Բանաստեղծականին մէջ գեղուն է, երագուն, թռչուն և բարձր. առաւօտարանականին մէջ լուրջ է, ծանր և սիրտ. իմաստասիրականին մէջ խոր է և խիզախ. պատմականին մէջ հմուտ, հակիրճ, ճշդող և կորովի, վիպականին մէջ հոգեմուղ, ազդու և նկարագեղ. ճարտասանականին մէջ ալ կենդանի և կրակոտ։ Եւ ինչպէս ինքը կը խօսի՝ այնպէս ալ գիտէ լաւ պատշաճի խօսեցնել տալ այն հեղինակներուն, զորս ինքը յարմար կը դատի կոչել ի նպաստ այս ինչ կամ այն նիւթին։ Սակայն բան մի՝ որ աւելիւքը կը փայլի անոր գրչի ներքեւ՝ է յառակութիւն լեզուի, ընտրութիւն վսեմ և վայելուչ ձեւոց, կատարեալ կանոնաւորութիւն և համաձայնութիւն մասանց. դանազանութիւն սաղացուածոց, աղեղագիտուն նախադասութեանց, ճկունութիւն դարձուածոց, պարզութիւն և ուժգնութիւն բացատրութեանց և հիանալի ներդաշնակութիւն։ Նոյն խակ աննշանութիւն խորոց և խորհրդոց արտայայտութեան մէջ, դուք չէք հանդիպիր մթութեանց, որ ծնան ձեզ անմատչելի. վասն զի գրչէն եղած որ և է խօսք կամ խորհրդածութիւն նախ գրողի սրեզակնափայլ մտաց լուսով լուսաւորուած է։ Թերեւս թերութիւն համարուին ինչպէս Նարեկեան տատրակին համար՝ այսպէս ալ Մխիթարեան խօսնակին երբեմն երբեմն սգաց երկայն բառերը կամ բարդութիւնքը. սակայն պէտք է ըսել, որ յայսմ խակ վերջնոյս մթնի ներքեւ ձուլուած և ձեւաւորուած բոլոր բարդութիւնքն եւս մասամբ Պիտոյից գրոց և մասամբ ալ ոսկեղինիկ դարու գինարանէն հանուած են՝ բնաւրութեամբ, և կամ անոնցմէ կերարկուած պարզ բառերուն քաղարուեստ կերպով յեռեալ են։ Այնպէս՝ որ Նարեկացւոյ բարդութիւններու երկայնութիւնն ու տգեղութիւնը չունին բնաւ, այլ միայն հեղինակի բարդ գաղափարները՝ ուժգնապէս զգալի ընելու այլոց կը ծառայեն աւելի, քան թէ մթութիւն կամ տգեղութիւն պատճառելու։ Դիտելու ենք գարձեալ՝ որ վայելուչ բարդութիւններ Խմաստութեան գրոց, Կորնթ. և Գաղատ. խակ յառուկ են։ Խակ հասարակ խօսք կամ տափակութիւն բոլորովին հեռի են Աւետիքեանի գրչէն. վասն զի նա հռետորութեան արժիւ է, տղայ չի գիտեր և ոչ ալ կտղայ։

Ահա այս և ուրիշ բազմապատիկ ձիրքերու և ընտիր հայկաբանութեան համար է որ Աւետիքեան իրրեւ վեհագոյն տիպար և նմանութեան օրինակ կը հանդիսանար Մխիթարեան նոյն իսկ նշանաւոր գրիչներուն՝ Հ. Եփրեմ Սեթեան, Հ. Մանուէլ Ջախջախեան, Հ. Ղեւոնդ Թոմաճանեան, Հ. Արսէն Բագրատունի, և Հիւրմիւզեանք, Հ. Կարապետ Եսայեան, Հ. Գերոբէ Ագնեւորեան և այլք առհասարակ կը յարգէին գինքն, և իրաւմէ աւելի կամ նուազ կրած էին անոր մեծ ազդեցութիւնը։ Խմացականութեան, յատակութեան և կորովութեան այդ վսեմ տիպարը, լուսաւորած և պայծառացուցած էր նաեւ գինքը չրջապատող այդ և ուրիշ մեծագի մտաւիններուն, որոնց իւրաքանչիւրն իր բնութեան և առանձնայատկութեան համեմատ տարբեր կերպ կը ցոլացնէ իր մէջ ի նախնեաց առած ճառագայթները։ Սակայն եթէ կարելի լինէր նմանեցնել իւիք Աւետիքեանը պարթեւականին Սահակայ — որ իր արքանեակներուն մէջ կը փայլէր որպէս արեգակն՝ յատեղս — պիտի համարձակիմ ըսելու, որ ինչպէս սա Թարգմանչաց առաջին գասակը բերաւ երբեմն հայ գրականութեան ասկեդարը, Աւետիքեանն ալ նօթձեց անոր նորոգումը՝ նոր գրչով ու նորագանչ հանգամանօք Ս. Պատարագի։

Աւետիքեանի չարագրութեան — որ կոչուած էր այնուհետեւ ըլլալու Մխիթարեան վանաց չարագրութիւն — գաղափար մը տալու համար ընթերցողաց, կը դնենք այս տեղ՝ հատուած մ'անոր նախընծայ հրատարակութենէն, այսինքն է՝ Նարեկայ մեկնութեան այն ճառէն՝ զոր խորագրած է հեղինակը Ընագանաւորիւն ի բան՝ խրատ խոսքիր յաւետ հրճուանօք բերկրելոյ ի կանայս։ Որ գժուարընդել գաստիարակաւն խաչի վարժեալ կրթեցար, որդւոյ քո կցորդակցութեամբ, միաբեւռակն ժուժկալութեամբ, կրելով զերաշխէպ վըշտաց ծնեցելոյդ ի քէն Տեառն, մշտաչարչարն մեռելութեամբ, անձնատուչոր սոթով խարուկեալ։ Իրրեւ զորոյ անարատ՝ քահանայական նուիրմամբ ի վերայ սիրոյ սեղանոյդ մատեար, ասրտրոյս և առեւգիսակ՝ գեղձնարարձ մաքուր պատարագ։ ի ճգնաւորական վարս ողջակիզեալ, քան թէ ի սրոյ հանդէս խողխողեալ։ Վասն այսորիկ ի նուէր քո գենման՝ հրեշտակացն պարք պաշտպանեալ, ընդ առաքելոցն գումար դասակցեալ, զիսյն արժանիդ պատուեալ գովէին՝ սուրբ Աստուածածին »։

Նարեկացի — Աւետիքեան

« Խրախացիր յաւէտ հրճուանօք բերկրեալդ ի կանայս։ Որ գժուարընդել գաստիարակաւն խաչի վարժեալ կրթեցար, որդւոյ քո կցորդակցութեամբ, միաբեւռակն ժուժկալութեամբ, կրելով զերաշխէպ վըշտաց ծնեցելոյդ ի քէն Տեառն, մշտաչարչարն մեռելութեամբ, անձնատուչոր սոթով խարուկեալ։ Իրրեւ զորոյ անարատ՝ քահանայական նուիրմամբ ի վերայ սիրոյ սեղանոյդ մատեար, ասրտրոյս և առեւգիսակ՝ գեղձնարարձ մաքուր պատարագ։ ի ճգնաւորական վարս ողջակիզեալ, քան թէ ի սրոյ հանդէս խողխողեալ։ Վասն այսորիկ ի նուէր քո գենման՝ հրեշտակացն պարք պաշտպանեալ, ընդ առաքելոցն գումար դասակցեալ, զիսյն արժանիդ պատուեալ գովէին՝ սուրբ Աստուածածին »։

Ս. « Ըստ բազմապէմ չնորհաց հոգւոյն՝ խոստացելոյ յանձին գուարթանուն մերս Հռետորի, յերեսի և կոչմանցն գաղանութեան անուանակիր գոլ՝ ամենայն ոք զնա խոստովանեցաք։ Վասն զի եթէ զմարդապետականն ասես, թէ գհովուականն, եթէ գյաջողութեանցն, կամ գթարգմանութեանն, և որ այլ եւս թուեցեալքն յԱստուածոյ (Ա. Կորնթ. ժԲ. 8, 9, 10, 28, 29) յոլովապատիկ յայնցանէ արժանացեալ և անուամբ և իրօք, պատկ գերազոյնն անցեալ հանդչի ի գլուխ հայոստանեայց եկեղեցւոյ։

Ամէն ինձ ի յայժմու առաջադրեալ բանիս անուութիւն ոչինչ տարապէպ թուի՝ երաժիշտ հոգենուագ գնա անուանել, և կամ նկարիչ հոգենկար, մանաւանդ թէ երկոքումբք եւս պատուեալ տիրապէս. վասն զի երգէ նկարելով, և նկարէ երգելով։ Ուր այ գզոզինացի երգիչս է՝ տեսանել՝ ի հոչակ Արտաշիսի քաղաքաւորեանցն. և այ գԲրակացին Արիեա՝ քնարահար երգովքն գառաջնորդեալ առաքեալս առեղծանելով. և այ գԱպեղէն Կոլացի՝ ի խառնուրդն երանգոյ անհատականն պատկերի՝ ի մեռոս տաժանեալ։ Ամէն գինչ հրեշտակ ի մարմնի՝ քնար գերանին առեալ տաճնաղել, երգել, քաղ հնչեցուցանել ի լսելիս ազգաց՝ գերկնից Խոսուհւոյն՝ գանհամեմատ փառացն գովեստս ձայնից, և գառ ի սրովբէից պատկառելին տեսակ

պատկերի՝ անզուգական ևեծութեան ա-
րուծին Կուսին, զոր սանելոյ բանելին
գեղոց, ի սես նկատման նուագահայեաց
մերոցս աչաց՝ չքնաղ կերպագրել ։ Եւ
ահա ի հրաշատիպ նորայն հիւսուածոյ՝
մի և այս նուագ ճանաչի » ։

Այս մի քանի տողերը, զոր գրինք Նարեկացւոյ արբազան քնարին առընթեր, կը կազմեն հակիրճ ներածութիւնը Աւետիքեանի այն հոյակապ բացատրութեանը, որով՝ իրրեւ ակնդէն բանալիով՝ կը բանայ և կը մտնէ Մխիթարեան վարդապետը՝ Ա. զարու Նարեկեան վարդապետին և բանաստեղծի մտաց խորը, մանաւանդ թէ Յիսուածին Կուսամօր սրտի ցաւոց անսահման ծովը։ Հիանալի է արդարեւ միջնադարեան վարդապետի միտքը, որ գիտցած է ինքնուրոյն ոեզուով ամփոփել փակել այդ մի քանի տողի մէջ՝ անծայրածիր զաղափարներու տիեզերք մը. բայց անկէ աւելի զարմանալի է նոր ժամանակաց վարդապետի գրիչը, որ գիտցեր է իրեն յատուկ գիտութեամբ և կորովով լուծել այդ խորհրդաւոր անլուծանելի կնիքը, և պարզել անոր մէջ պարունակուած անհուն գանձերը։

Անրելի է մեզ և յաւէտ սիրալի Նարեկայ վանից ողբերգուն՝ նոյն իսկ իրեն մըթին և գոց մանրաչխարհով, որով աւելի կը հրապուրէ՝ քան թէ յագեցնէ. նոյն իսկ իրեն միջնադարեան նորակերտ ոեզուովն և ոճովը, որով եկեղեցական բանաստեղծութեան չքնաղ գոհարները կը տեղայ, ինչպէս ծովաբնակ զազանակուրը՝ մարգարիտներ։ Սակայն ոչինչ ընդհատ, եւ եթէ կը ներուի ինձ ըսել, աւելի հիացման արժանի է հոգեխոս Աւետիքեանը, որ այդ խրթնախոր ծովէն առասածաբանական, իմաստասիրական, հոգեբանական և հոգեբանական այնքան և այնպիսի գանձեր հաներ է՝ և այնպիսի մաքուր ոեզուով, զորս հաւանօրէն արթուն և զուարթուն անգամ Գրիգոր Թերեան մաքէն անցուցած չէր, իր ժամանակի և միջավայրի սահմանափակ գիտութեամբը։ Եւ ըսածս անոնք միայն իրաւացի պիտի համարին, որք ուշի ուշով կարդացած են Աւետիքեանի Նարեկացին՝ և մասնաւորապէս 34 երեսներէ բաղկացած այս ճառս։ Հանգուցեալ մեծ բանաստէրն՝ Մկր. Խրիմեան՝ անգամ մի խօսելով Աւետիքեանի մասին, կը յիշեցնէր ինձ այդ ճառը, շեշտելով, թէ «Դա գրական մի հրաշալիք է՝ ամենայն տեսակէտով, և նրա հեղինակն է իսկապէս վարդապետ»։ Այսպէս պիտի դասեն անչուշտ նաեւ ապա ոեզուի յատկութեան և հայկաբանութեան առաւելութիւնը — նկատմամբ Նարեկացւոյն — այն ամէնքը, որք տեղեակ են դասական ոեզուի արպիսութեանց։

Իսկ Օգոստինոսի Յաղագս քաղաքին Աստուծոյ գերապանծ թարգմանութեամբն՝ Աւետիքեան դեռ աւելի զարմանալի քայլեր առած է. նա ոչ միայն կարէ մրցիլ այդու Եւզարու վոքր թարգմանչաց հետ, որոնք յունարէնն կը հասին յաճախ. այլ անհամեմատելի ընդհակառակն իսկ կարծէք թէ գացեր մօտեցեր է — չըսեմ թէ հաւասարեր — պատեհով առանուչդս զարերու մեծ անջրպետը։ Իսկ թէ ինչ առաքինաւոր և չափով՝ հետաքրքրութեան համար կը դնենք երկուքէն եւս առաուածային նախագիտութեան և մարդկային անձնիշխանութեան վերաբերեալ հատուածները, և ընթերցողն թող արդարը դատէ ։

Յաղ. քաղ. Աստուծոյ,
հա. Ա. գ. թ–ժ. էջ 247–250

« Չի որպէս համօրէն բնութեանց ա-
րարիչ է (Աստուած), նոյնպէս և կարողու-
թեանց ամենայնի տուիչ, այլ ոչ կամաց
թիւրելոց. քանզի կամք չարք ոչ ի նմանէ
են, իրր զի հակառակք են բնութեան՝ որ
ի նմանէ է։ Արդ՝ մարմինք ներքոյ ան-

Եզնիկ ԺԱ. էջ 41–43

« Չի եթէ իրրեւ զմի ինչ յայլոցն
բնութեանց լեալ էր (մարդ) զոր ի հար-
կէն ծառայեն Աստուծոյ, ապա և վարձս
ընդ կամակատարութեանն առնոյց չէր ար-
ժանի, այլ իրր զործի մի էր արարչին, զոր
թէպէտ ի չարն վարէր, թէպէտ ի բարի,

ոչ պարտաւանք ինչ էին նմա և ոչ գովութիւնք, այլ պատճառ այն էր՝ որ գնա այնպէսն վարէր...։ Այլ Աստուած այնպէս պատուել զմարդն կամեցաւ, զի առ լաւութեանցն խելամուտ լինելոյ՝ զանձնիշխանութիւնն պարգեւեաց նմա, որով կարող իցէ առնել զինչ և կամեսցի, և զանձնիշխանութիւն նորա ի լաւն խոտէ՞ դարձուցանել։

Որպէս հայր որ յորժամ զորդի իւր խրատիցէ՝ որ կարող իցէ ուսուցն ինչ ուսանել, չծուլալ յուսմանէն՝ այլ յառաջադէմ լինել ի լաւն ատիպէ. վասն զի գիտէ, եթէ կարող է յառաջադէմ լինել, պահանջէ զուսուցն յոր աւանդեցաւ։ Նոյնպէս զԱստուծոյ պարտ է իմանալ, եթէ յօժարեցուցանէ անսալ հրամանաց նորա. բայց զկամակար իշխանութիւնն ոչ հանէ ի նմանէ, որով կարողն է անսալ և չանսալ հրամանացն... քանզի ոչ եթէ վայրապար ինչ կամէր Աստուած զայնպիսի պարգեւս տալ, որ յաւիտենական անեղծութիւնն է. զի վայրապար էր այնպիսոյն տալ՝ որ ոչ ունէր իշխանութիւն երկոցունցն, անսալոյ այնմ՝ զոր Աստուածն կամէր, և չանսալոյ այնմ, զոր նայն չախորժէր։... Եւ արդ յայտ է թէ անձնիշխան եղեւ մարդն՝ առնել զբարի և ժտել ի չար. իբր ոչ եթէ չար ինչ առաջի կայր՝ յոր ժտիցի, այլ այն եւեթ առաջի կայր՝ կամ անսալ Աստուծոյ, կամ չանսալ, և զնոյն եւեթ պատճառ չարին իմանալ։ Քանզի լեալ մարդն առաջին՝ առնոյր պատուէր յԱստուծոյ, և չհնազանդեալ հրամանին՝ մտաբերէր ի չարիս, և անտի լինէր սկիզբն չարեաց »։

կեալ են կամաց, ոմանք ներոցս կամաց, այս է՝ համայն մահկանացու կենդանեաց, և առաւել մարդկան՝ քան անասնոց... բայց ամենայնքն յաւէտ Աստուծոյ կամացն ի ներքոյ կան, ուրուք և ներքոյ անկեալ են կամք ամենայն...։ Ապա ուրեմն պատճառ իրաց արարողական և ինքն անսայր՝ Աստուած է. իսկ այլ պատճառք՝ առնեն և արարածք են կամ եղական...։

Քանզի որ ոչն է նախագէտ ամենայն ապագայից, նա արդարեւ Աստուած ոչ է։ Նմին իրի և կամքս մեր այնչափ կարողանան, որչափ Աստուծոյ յառաջ գիտացեալ՝ կամեցաւ կարել նոցա. ուստի զոր ինչ կարեն, հաւասարաբար կարեն, և զոր առնելոցն են՝ առնիցեն համայն. վասն զի նա՝ որում անվրիպելի է յառաջգիտութիւն, գիտաց յառաջնմէ՝ թէ ունէին կարել և առնել։

Զի եթէ մեր հարկ զայն է ասելի՝ որ ի մերում իշխանութեան ոչ է, այլ թէ և չկամիցիմք՝ առնէ զոր կարէն, որպիսի է հարկ մահու, յայտ է թէ այն կամք՝ որով լինի կեալ ուղիղ կամ թիւր, ոչ է ընդ այնպիսի հարկաւ. քանզի բարւոյն ինչ առնեմք, զոր եթէ չկամէաք, առնէաք իսկ ոչ. զի եթէ կամիմք, գոյ. եթէ չկամիմք, ոչ գոյ. քանզի ոչ իսկ կամէաք, եթէ չկամէաք... Քանզի և ոչ զԱստուծոյ կեանս և գյառաջգիտութիւն ընդ հարկաւ արկանեմք՝ յասել մեր թէ հարկ է Աստուծոյ կեալ մեզ, և զամենայն գիտել կանխաւ։... Զի ասի ամենակարող՝ առնելոյն զոր կամի, և չկարելոյ՝ զոր ոչն կամի. որ եթէ լինէր նմա, ոչ եւս ամենակարող էր. նմին իրի յայն ասէս ասի չկարէ ինչ ինչ, վասն զի ամենակարող է...։

Ապա ուրեմն ոչ եթէ չիցէ ինչ ի կամս մեր՝ այնու զի յառաջ գիտաց Աստուած որ զինչ լինելին էր ի կամս մեր. զի որ յառաջ գիտաց զայն, ոչ եթէ զոչէն գիտաց։ Արդ եթէ նախագիտողն զնելոցն ի կամս մեր՝ ոչ եթէ զոչէն, այլ զէն նախագիտաց, անշուշտ նախ գիտելովն իսկ նորա կայ ինչ ի մեր անձնիշխան կամս։ Նմին իրի ոչ իւիք բռնադատիմք՝ եթէ ի պահելն գյառաջգիտութիւն Աստուծոյ՝ բառնալ զկամաց անձնիշխանութիւն, և եթէ ի պահելն զանձնիշխանութիւն կամաց՝ ուրանալ, որ է անտեղի, զԱստուծոյ կանխագէտն լինել ապատնեաց. այլ պինդ ունիմք զերկաքանչիւրն, զերկուսեան եւս հաստատութեամբ և ճշմարտութեամբ խոստովանիմք, զայն՝ զի

բարիոք հաւատասցուք, և զայս՝ զի բարիոք կեցցուք. զի չարաչար լինի կեալ, եթէ ոչ բարւոք հաւատասցեմք զԱստուծոյ: Վասն զի ոչ եթէ յայն ասկս անպարտ լինի մարդ, վասն զի յառաջնմէ գիտաց Աստուած, թէ մեզանչելոց է նա. այլ ընդհակառակն չէք երկրայել, թէ մեղապարտ գտանի մարդս ի մեղանչելն... »:

Դիտել կու տանք, որ Եղնիկ՝ իր, մանաւանդ թէ Ե. դարուն, այս գլուխ գործոցը յօրինած ժամանակ՝ ունէր յունարէն ընտիր լեզուով գրուած մատենագրութիւն մի, որով կը ներշնչուէր, և որուն վրայ հիւշ էր յօդել նաեւ իւր վեմ բարբառը. իսկ Ագաթիքեան՝ ընդհակառակն՝ ունէր իր դիմաց Օգոստինոսի ինկած և ապաւաղ լատիներէնը, զոր ասկայն իր վեմ լեզուովը այնքան գերազանց հանդիսացուցեր է, զոր Օգոստինոս ինքնին, եթէ տեսնելու բաղդն ունեցած ըլլար երբէք, հիացմամբ և երախտագիտութեամբ պիտի գրուատէր: Սակայն փոխանակ մերոյն Օգոստինոսի՝ բազումք ի կրօնակից եղբարց Թարգմանչին և՛ հիացան և բազմօք հոչակեցին զայն մինչեւ այսօր: Հայկաբանութեան վեհագոյն վարժապետներէն մին՝ Հ. Ալպէն Հագրատունի, որուն ինչպէս ձեռնհասութիւնն՝ այնպէս և դատաստանը յոյժ ծանրակշիռ է, աննախանձօրէն կը յայտարարէ եղեր — կ'ուանդուի — որ « Եթէ բոլոր նախնեաց գրքերը կորսուած ըլլային, ես Ագաթիքեանի սոյն Թարգմանութենէն հայերէնը կը սորվէի »:

Հայկին նուիրուած հայագիտութեան և հայկաբանութեան Պարթենոնը արդէն կանգնուած էր գոգցես իմն — ի Ս. Ղազար — Ագաթիքեանի ձեռքով, ուր 1802 Թուականէն ի վեր կը հնչէին քաղափառ պուէտներու արձակ և չափով երգերն և բանասիրութիւնները: Սակայն գրչութեան գեղեցկաճաշակ Ապելէսներ — որպիսիք են Ջախջախեան, Թոմասեանեան, Հագրատունի և Հիւրմիւզեանք — կը չարունակէին՝ վրձինի գերվարժապետի նման՝ զարդարել հայկական լեզուի կամ հայկաբանութեան վեհ տաճարը, իրենց ինքնուրոյն գրիչներու և գունոց հիանալի արտադրութիւններովն եւ բնածին նրբութիւններովը, լինելով յաջորդաբար իրարու եւ աչակերտ եւ վարդապետ, և կատարելագործելով իրարու գործը: Մէկ խօսքով՝ ասոնց ձեռքով մեր դասական լեզուն այնպիսի ճկունութիւն, սահունութիւն, ներդաշնակութիւն, քաղցրութիւն և կենդանութիւն կ'առնոյր, որ իւիք, այսինքն՝ քերթողական բանաստեղծութեամբք, մեր լեզուակերտ Թարգմանիչներէն և քերթողներէն իսկ անպրագոյնս պիտի վարգէին: Ահաւասիկ զարգացման վերջին առնդհամատը, ուր հասցնել կը ձգտէին Մխիթարեանք, այսինքն է՝ չափով չարագրութիւնը:

Սակայն մենք ոճով յառաջ խոպալու համար, վերջին կէտի քննադատութիւնն և որակումը կը թողունք յաջորդ գլխոց, և այս տեղ արձակին վրայ միայն կը չարունակենք մեր խօսքը, ցոյց տալու համար՝ թէ ինչպէս և ինչով ըրին զայն և՛ քերթութեան կամ ոտանաւորի ամենաբաւական և ամենայարմար գործի մը, գեղեցկագիտական, քերականական, և ճարտասանական բոլոր քնքոյշ և միանգամայն վեհ ձեւակերպութեամբք, որոնք հնոց կամ անձանօթ էին, և կամ դեռ առղիական գրութեան մէջ ճոպած:

Նախ և յառաջ հարկ կը համարիմ բացայայտ կերպով և ուղղակի արտայայտել այս տեղ կարեւոր ճշմարտութիւն մը, որ անուղղակի կերպով կը գուշակուէր նոյն իսկ մինչեւ հիմայ բանասէրներէս. այսինքն թէ դասական լեզուի կանոնաւոր զարգացման մէջ, վենետկոյ Մխիթարեանց ճեմարանին մէջ տիրապէս ակնդարեան և միջին դարերու ուղղութեան գանազանութիւն եղած չէ երբէք, եթէ գանազանութիւն բառով հարկ ըլլայ հասկնալ ընդհանուր կերպով՝ իրարու հակառակ կամ եղծիչ գրութիւններ: Եւ եթէ իրօք այդպիսի գրութիւններ տեղի ունենային, այնուհետեւ ոչ յառաջ եղած պիտի լինէր լեզուական զարգացումը և ոչ ալ չարունակ: Ինչպէս Մխիթարայ հայկազեան լեզուի քերականութենէն և Բառարանէն սկսեալ՝ մինչեւ Հագրատունեայ Զարգացելոց քերականութիւնն և Հայկազեան նոր բառգիրքն, այսպէս

այլ Մխիթարէն սկսեալ մինչեւ Այիշանը՝ գրականական նշանաւոր բոլոր երկոց հեղինակներն մի միայն նպատակ և ուղղութիւն ունեցած են. այսինքն է՝ իրարմէ ժառանգած լեզուական գանձերը՝ իրենց բնաւոր յարմարութեանց, ճաշակի և ժամանակի պարագայից պահանջածին համաձայն հարստացնել, կոկել և յղկել։ Ահա այսպիսի ժառանգական ուղղութեան ու համերաչխ և մշտատեւ գործունէութեան շնորհիւ է՝ որ հսկայաքայլ կը յառաջէր դասական լեզուի և գրականութեան զարգացումը այդ ճեմարանի մէջ, կրելով այն կերպարանափոխութիւնները, զորս ցոյց տուինք։ Ասոի ինչպէս Աւետիքեան և Բագրատունի հանգանակեցին հայկաբանութեան գանձարանին մէջ այնպիսի առանձնայատկութիւններ՝ զորս ի զուր է որոնել՝ ընդհանուր տեսակէտով՝ իրենց նախորդներուն քով, այսպէս այլ յետինք հանգանակած են — մանաւանդ տեսակէտով — այնքան և այնպիսի չնորհք, բնականութիւն և ինքնափայլ գեղեցկութիւններ, զորս պէտք ենք իրենց միայն սեփական համարել։ Այսպէս խորհելու է նոյն իսկ երկուստեք եղած մարդկօրէն թերութեանց համար, որոնք մանանական են, և ընդհանուրին վրայ առուերած չեն բերեր։

Ասոի Մխիթարեան գրաբարի և գեղեցկագիտական գրականութեան զարգացումը այս տեսակէտով նկատուած, ինչպէս անճիղղ և աներակ դասած կ'ըլլայինք, եթէ ըսելու ըլլայինք, թէ Աւետիքեան մէն միայնակ հասոյց նոր գրաբարը՝ ոսկեղէն գարու մաքրութեանն՝ իր կորովի գրչին և կարողութեան չնորհիւը. այսպէս ալ աւելի առանձնական համակրութեան և անպայման հիացման արդիւնք պիտի համարուէին, եթէ ըսէինք, թէ Բագրատունեաց գրականութեան հորիզոնին վրայ արեգակնակերպ երեւնալովը՝ Զամչեաններ, Աւետիքեաններ, Թամամեաններ, և այլք՝ առագերու և լուսնի պէս՝ չլացած ըլլան անոր նորածագ ճառագայթներէն, և այլն, և այլն։

Ցերաւի, յետ ուշի ուշով քննելու Ակերեանի, Զամչեանի և Աւետիքեանի քերականութիւնները մէկ կողմէն, և միւս կողմէն այլ մատենագրութիւնքը, կրնանք ըսել, թէ դասական լեզուին վրայ անոնց գրուած կնիքը այնքան բնորոշ էր, խորաքանդակ ու արտայայտիչ, որ Բագրատունեաց նորածագ փայլովը — որչափ այլ զօրաւոր լիներ այս — ոչ միայն չէր հինանար և նուազեր, այլ անոր վրայ իսկ պիտի չարունակէր ազդել, ինչպէս և անոր նախորդներուն և յաջորդաց վրայ։ Ասոի վերը փակագծած նախագասութեան անպայման սահմանը ամփոփելու և Աւետիքեանի յաջորդներու իրաքանչիւրին խաղացած դերը ճշտիւ որակելու համար՝ հարկաւոր կը համարինք ըսել նախապէս, թէ անոնց իրաքանչիւրն ունեցած է իր ինքնուրոյնութիւնն և արժանիքը. և թէ այդ տեսակէտով է, որ պիտի ուսումնասիրուին նաեւ Աւետիքեանի յաջորդներն և անոնց մատուցած ծառայութիւնները։

* * *

Հ. Մանուէլ Զախլախեան, որ իրրեւ արժանաժառանգ աշակերտ Աւետիքեանի՝ օժտուած էր իր վարդապետի կուռ և կշռադատ մտքովն և ճաշակովը, կու գար աւելի ընդարձակ կերպով յառաջ վարել դասական լեզուի զարգացումը։ Յոյն, լատին, իտալ. գաղղ. գերմ. և անգղիերէն լեզուաց ունեցած լաւ հմտութեամբը նա դիւրաւ մուտք կը գտնէր այդ հին և նոր աշխարհի զարգացած գրականութեանց խորը. այսպէս այլ իտալ. հայ. և հայ իտալ. երկհատոր և կոճղ Բառարանները յօրինման առթիւ առիթ ստացած էր երկայն տարիներ թարթափելու նախնեաց գրական բուրաստաններուն վրայ — ունելով իրեն առաջնորդ վարժապետին Քերականութիւնը։ Շնորհիւ իր լեզուագիտութեան՝ կը չփուէր նա յիշեալ ազգաց վեհ հանճարներուն հետ որով կը ներշնչուէր բանաստեղծական խանդերով, և կը ճոխանար գիտնական և քերթողական ամէն ծանօթութիւններով։ Իսկ շնորհիւ նախնեաց հետազօտութեան՝ կ'ամբարէր հայկաբանութեան համապարփակ ծոպիկները։ Առաջին ներշնչութեան իրրեւ արդիւնք՝ կ'ընծայեր նա ոչ միայն Կէսարիոյ՝ Մահ Այելի, և Ֆենելոնի՝ Տելեմաքի աքանչելի թարգմանութիւնները, այլ և իր ինքնատիպ և աննման քերթուածները. որոնց արպիսութեան մասին յետոյ պիտի խօսինք։ Իսկ երկրորդով՝ որ կը կազմէ անոր գլուխ

գործոցը, յայտած է նա՝ ասլ մեզ — իբրեւ կշռադատ բանաստէր և բանագէտ — այնպիսի մի քննական Բառարան — որուն վերջին մասը՝ Մ գրէն՝ լոյս ուտցած է Հ. Թէոփիլէ Մատոքեան — ուր կարելի է գտնել ամէն իմաստ նոր Հայկազեանէն ասելի ընտիր բառեր և սահմանումներ. ամենքն ալ իրեն ճշդող և առուգող մտաց նեղութիւնը կսփռած և սահմանուած. և որուն Բազդատութիւններ անդամ վաստհութեամբ կը դիմէին, իրենց վարանքն և գրչի կապանքը լուծելու համար:

Արդ՝ եթէ գրական այս յաղթ կոթողի ապագրութիւնը մեզի երեք տարի (1834 – 1837) տեւեց, կարելի է դուշակել, թէ ուրքան տարիներ աշխատած էր հեղինակը գոյն յօրինելու և կանգնելու համար, իրեւ լուսաւոր փորձ մի ապագայ գրասիրաց: Ուրքան քարեր շարժած էր նա նախնեաց մատենագրութենէն, ուրչան ժայռեր հարթած, և ուրչան բովեր բացած՝ հայկաբանութեան Բանդարանը ճոխացնելու համար: Աւետիքեան՝ իր Բառերախաղերով և մի քանի գերազանց քերթուածներովն արդէն ըմպել տուած էր իր աշակերտին Մարանդայ հրաման նեկտարը. սակայն աշակերտն առաջինը կ'ըլլար Բիւրակնեան սոխակաց մէջ, որ բազմատեսակ գրականութեան՝ վիպասանական և գեղեցկագիտական մատնամիւղը կ'արգասաւորէր, իր յատուկ մտաց անսեթեւեթ պարզութեամբը: Իրմով էր որ վարդապետական գրիչը՝ որիէնտեան քնարի կը փոխուէր. կուսական ու կորովի արտերը կ'ուռնուին պինդարեան աւիւնով, և կը բացուէր Մխիթարեան կռճատին համար նոր գրականութեան վարդաբոյր արշալոյսը: Զախջախեան ինչպէս իր Բարգմանութեանց՝ այսպէս և ինքնագիր քերթուածոց մէջ է հաւասարապէս և՛ հայկարան և ճշդաբան: Բառաջութեան վիճակերպութիւն և տափակութիւն հեռի են իրմէ, վասն զի գիտուար և մշտաշարժ միտք մ'է. վասն զի ոսկեմատեան Բառարանն իր ամենազան բովերով և ծաղկուէտ բուրաստաններովը կը կրէ իր գլխոյն մէջ, մանաւանդ թէ իր լեզուին վրայ: Միտքը կամ պատճառը՝ չուտով գիտէ ընտրել, և ընտրածը ձեւուար կերպով կը կոչէ իր ճարտար գրչի ներքեւ, զոր ձկուն և ճապուկ նժոյգի մը պէս կ'արշաւեցնէ թէ ի դաբեւանդս և թէ արձակ դաշտին վրայ: ճշդութիւնն և պայծառութիւն են Հ. Մանուէլի անկապտելի յատկութիւնները: Աւոր արձակը — մանաւորապէս Բարգմանութեանց մէջ — եթէ փափաքել կու տայ Բազդատուելոյ վսեմական ցայտումին կամ Հիւբիւզեանի մեղրածորան սահունութեանը, պատճառն այն է, որ նա այդ արտքնայարդար հրապոյրներէն ասելի՝ կ'ընտրէ հաւատարիմ մնալ հայերէն լեզուին ճշդութեան և պայծառութեան հետ՝ նոյնպէս և՛ իր Բարգմանած բնագրին: Հետեւաբար, նա այս երեք խիստիպ չնորհքներէն չզրկելու համար իր Բարգմանութիւնն, ինչպէս և ընթերցողն՝ հասկնալէն, կամաւ կը զգուշանայ տարանջատող փոխադրութեանց չափազանց գործածութենէն, ապաւարտեալ ածականներէ և ածանցներէ. որոնցմով՝ իրրեւ խիտ առ խիտ տերեւներով՝ ծածկուած կը մնան յաճախ իր ժամանակակից քով գաղափարներն և դանոնք արտայայտող գոյականները: Ահա այս պատճառաւ է որ ամէն հայկաբանք, թէ՛ ռուսահայն և թէ տաճկահայն կարող են դիւրաւ հասկանալ գինքը և օգտուիլ: Եւ յիրաւի, ով համանիշ բառերու և բարդեալ մտանելանց չառաչէն և ականջի ներդաշնակութենէն ասելի՝ կը սիրէ խնացութեան պայծառ արփին, նա ինքն անչուշտ պիտի բերկրի ասոր պարզ և պայծառ լուսովը, ինչպէս անանց կուռ ու կորովի ցայտէն: Իսկ ինքնագիր գրութեանց — և մանաւորապէս քերթուածոցը մէջ — Զախջախեան իր յաջորդներէն ասելի կտրուկ է և ասոք: Ուշագիր ընթերցողն եթէ լեզուէն ասելի գաղափարի սիրահար մ'է, անոր մէն մի ասոց վրայ պիտի գտնէ հասուն և հոծ պատուհներ ասելի՝ քան սին ասղարթներ: Այնպէս որ մարդ կը չուարի որոշել, արդեօք խանդավառ Պինդար մ'է, որ կ'երգէ գանոնք, թէ ասելի բնականին սիրահար Ապեղէան՝ որ կը նկարէ բնական ճշդութեամբ: Ահա այսպիսի ձրիւք է՝ որ ապարէզ կ'ելնէր Զախջախեան, հայկական լեզուի և գրականութեան Պարթեւանը չքեզացնելու: Եւ այս է ահա անոր գրչի հակիրճ նկարագիրը:

Բառնիս օրինակով հաւատալու համար՝ դնենք այս տեղ Տելեմաքի Բարգմանութենէն Կալիփսոյ նկարագիրն՝ իր բնագրին և Հիւբիւզեանի Բարգմանութեան ատրնքեր:

Ջախչախեան

Տելեմաք գհետ երթայր առաւաւածուհւոյն, զորով պար առեալ էր ակումբ ինչ դեռահասակ յաւերժահասանց, յորոց միջի բարձր ի գլուխ ամբառնայր առաւաւածուհին, որպէս կաղնի երկնաւղէչ՝ ամբարձեալ ի մայրիս զառդարթախիտ առեղունս գեր ի վերոյ ծառոցն ամենայն գիւրեւ բոլորելոց։

Աքանչանայր Տելեմաք ընդ փաղփիւն գեղեցկութեան նորա, ընդ ճոխ ծիրանիս երկայնաքղանց արկանելեացն ծածանելոց, և ընդ վարս գիսակացն կապեալս ի թիկանց անաւրուեսա՝ բայց չնորհաչուք, ընդ նչոյլ բոցոյն՝ որ յաչացն ցայտէր, և ընդ քաղցրութիւնն՝ որ չափաւորէր զայն արծարծ. իսկ Մենտոր երկրապիչ և համեստ լռութեամբ գհետ երթայր գՏելեմաքայ։

Telémaque Liv. I.

Télémaque suivait la Déesse, environnée d'une foule de jeunes Nymphes, au-dessus desquelles elle s'élevait de toute la tête, comme un grand chêne dans une forêt élève ses branches épaisses au-dessus de tous les arbres qui l'environnent. Il admirait l'éclat de sa beauté, la riche pourpre de sa robe longue et flottante, ses cheveux noués par derrière négligemment mais avec grâce, le feu qui sortait de ses yeux, et la douceur qui tempérait cette vivacité. Mentor, les yeux baissés, gardant en silence modeste, suivait Télémaque.

Հիւրմիւզեանի

Եւ գնայր Տելեմաք ընդհետ դիցուհւոյն, որ յերիտասարդուհւոց պար առեալ ի բազմահոյլ յաւերժահասանց՝ բարձր ի գլուխ ի միջի նոցա ամբառնայր, որպէս կաղնի բարձրաբերձ յանտառի սաղարթախիտ ամբառնայ մայրիս։

Հիանայր Տելեմաք ընդ գեղանչոյղ դէմս նորա, ընդ պերճ ծիրանիսն երկայնատարածուն գեղազփնայ, ընդ հիւսակս վարսից վայելուչս յետկուսէ չքնայ, ընդ աչքունն հրացայտս, և ընդ քաղցրութիւն՝ որ զասաստ նոցին ամոքէր։ Իսկ Մենտոր ցածուրնաւք լուռ ևեթ, գաչս ի վայր արկեալ, զհետ ընթանայր պատանւոյն։

Անտարակոյս ուելի տահուն է և ախորժելի լսելեաց Հիւրմիւզեանի չարաբանութիւնը, զոր փոխադրութեամբ մատանց բանից և բայից թէ ներդաշնակ գործած է և թէ ծաղկաւէտ. բայց ներուի ինձ ըսել, թէ նոյնչափ եւս չի դաշնակաւորիր սորա թարգմանութիւնը բնագրին հետ։ Յիրաւի՝ «գեղանչոյղ դէմք»ը չի համաձայնիր éclat և beauté բառերուն։ Հոխխմխմեանց Շարականի ճարտար քերթողն իսկ եթէ թարգմանելու ըլլար այս բառերս՝ Ջախջախեանի պէս կամ փաղփիւն պիտի դնէր, և կամ պայծառուրիւն գեղեցկութեան, բայց ոչ երբէք գեղանչոյղ՝ որ և ոչ իսկ Ե դարու բարբառին մէջ կը գտնուի։ Riche բառին իրր համանիշ պերճ ածականը որուած է ծիրանւոյն, սակայն բաց ի Մագխտոցոյ ոչ ոք ի հնոց ի գործ ածեր է այդ բառը՝ հանդերձի կամ զգեստի վերաբերմամբ։ Robe = արկանելի գոյականը՝ ածական եղած է ծիրանւոյն, բարդութիւն մի կազմելով իրեն վերաբերեալ ածականին հետ՝ այսպէս երկայնատարած։ Հիւսակ և լքնայ բառերը՝ որք գրուած են բնագրի cheveux noués négligemment բառերուն տեղ, չեն տար միեւնոյն նչանակութիւնը. վասն զի Ֆենելոն այդ բացատրութեամբ՝ անհնամ կերպով հանդրիճնայ մտքերը կը հասկնայ. իսկ հիւսակ բառը մեր դասական լեզուի մէջ հիւսուածի (հերաց) տեղ գործածուած է։ Vivacité թարգմանուած է սաստ, սակայն մեր հին թարգմանիչք այդ բառը իր բուն նչանակութեամբ աչքի կամ նայուածքի համար բնաւ գործածած չեն. այսպէս նաեւ silenceին վերաբերեալ ածականը modeste ցածուրեամբ, այսինքն՝ գոյականի փոխուած է՝ որպէս մակբայ, սակայն առանց ամենեւին յառջեւաւ հետ վերաբերութիւն մ'ունենալու կամ որակելու զայն։ Ես միտք չունիմ բնաւ Հիւրմիւզեանի թարգմանութեան արժանիքը նուազեցնելու, վի մեր լեզուի և քերականութեան համաձայն գոյականները կրնան ածականի տեղ դրուիլ և ածականը գոյականի, բացայայտիչը՝ բացայայտելոյն, և յատկացուցիչը՝ յատկացեալի։ Այլ առանց այդ միջոցին դիմելու Ջախջախեան, մանաւանդ թէ կէտ առ կէտ և բառ առ բառ հաւատարիմ մնալով իր բնագրին՝ թէ և նուազ ներդաշնակ՝ բայց ուելի ճիշդ կերպով հայացուցեր է գանոնք. այնպէս որ

կարծէք թէ նախ հայութեան կաղապարէ թափուած են ամէն բառք և բացատրութիւնք, քան թէ գաղիարէնէ։ Ես համոզուած եմ, որ Եղնիկ իսկ և հին թարգմանիչք անգամ աւելի Չախչախեանի՝ քան Հիւրմիւզեանի ոճով կը թարգմանէին յոյն բնագրերը, եթէ ուզուի բաղդատել զանոնք։ Ր. Չախչախեանի բառերն և բացատրութիւնքն այնքան ընտիր են, որ Հիւրմիւզեան իսկ յաճախ ի գործածած է։ Երկնուղէչ բառը՝ Հիւրմիւզեան բարձրաբերձի փոխած է, զոր միայն Նարեկացին գործածած է. սակայն վերջին ածականս իսկ Պիտոյից գրքին մէջ միայն և միանգամ կը գըտնենք՝ ծառի վերաբերմամբ. սովորաբար չէնքի, կոթողի և այլ առարկայից յատկացուած է։ Գ. այս այլ դիտելու է՝ որ Չախչախեանի ճիշդ թարգմանութիւնն աչաց առջեւ ունենալէն վերջ՝ դիւրին էր Հիւրմիւզեանին՝ դեռ աւելի կոկել և գեղեցկացնել զայն՝ իր մեղրաբուխ լեզուովը. սակայն ասով հանդերձ Չախչախեանի նախընծայ թարգմանութիւնն իր հիանալի ճշդութեան համար պիտի ունենայ միշտ իւր յատուկ արժէքն և մեր յարգանքը դէպ ի առ ինքն, քանիցս անգամ որ հետաքրքրուինք բաղդատել զայն բնագրին հետ։ Տարակոյս չկայ՝ որ Հիւրմիւզեանի հմայիչ թարգմանութիւնն առձեռնպատրաստ ունենալէն վերջ՝ մարդս բոնի կը ձգուի ասոր քան առաջնոյն ընթերցմանը. սակայն եթէ չլիներ վերջինս, նոյն ախորժով և յաւէտ հիացմամբ պիտի ընթեռնուինք նաեւ Չախչախեանինը, առանց երկբայելու որ ճիշդ Ֆեներոնը կ'ընթեռնունք։

Դնենք օրինակ մ'ալ ոտանաւորի՝ Մուսայն առ Աբամեան քերթողս՝ խորագրուած բանալանգէն, որ առուգիւ հրաշակերտ մ'է քերթողիս խանդալից հանճարոյն։

Հանդիսացեալք ի բլոնայանգ վեցեակ յիսուն,
Ամ արդ լըսել գիՆչ տարփողեն Մուսայքն ասուն։
Խնդաց Պինդոս, հրաւէր կարդայք մեզ յԱլբարատ,
Զանհագներգակն ի յԱբամեանց ընդել գարատ։
Բայց թէ յաչխոյժս ապաւինիք՝ անգէտք ի Ցոյն,
Կամ աւտնեան լեզուին խոտիչք իբրեւ սին հոյն,
Երգնումբ ահա ի վեհ Փեբոս և յիւր քընար,
Ի զուր կախէք զայն ինքնահաճք ի ձեր սընար։
Թէ ձեր ոգի չէ ինչ վառեալ, սիրտք անաստան,
Զէք զուք քերթողք, այլ Կովկասեան ցուրտ վիպասան։
Զի՞ զՊառնասեայ աչխատ առնէք անպարտ գուսան.
Սերմն ի յակօս թէ չետ Դեմետր՝ ե՞րբ այնք բուսան։
Իսկ թէ ժըտիք ի Պեգասեան ոտնուլ գաւակ,
Որոց լաւ եւս ի հետիոտ խաոնիլ վոհմակ,
Ցո՛ւշ եղիցի ձեզ Իկարեան ծովուն պարոյր,
Ընդ որ սըգայ ցարդ Իկարիս, այլ յանցանքն ո՞յր։...

Մեր կողմէն աւելորդ կը համարինք այս տեղ ուրիշ դիտողութիւններ ընել, զի այս մի քանի տողերս իսկ շատ և շատ բաներ կը խօսին. և եթէ սկիզբն այսքան ցայտուտ է, կարէք գուշակել՝ թէ ո՛րքան և ինչպիսի՛ հրաշունչք գաղափարաց դեռ կարող էին հոսիլ այդ վաւելուն մտքէն, երբ հոլովելով կը բարձրանայ հետ զհետէ իր ասպարիզին վրայ։ Սակայն որչափ որ մենք ատիպուած ենք այս տեղ կտրել մեր խօսքին թելը Չախչախեանի վրայ, անդիէն չեն դադրիր Մխիթարեան ուրիշ պուէտներ, այլ հանգոյն համբաւեալ Աթենասայ կը շարունակեն մանել և բանիլ անդադար պատասխան լեզուի չքեղ անկուածը։

* * *

Խմաստասիրութեան տաճարի դրան մի նոր բախտաւոր է՝ որ կը լսուի յանկարծ. կը բացուի, և ահա դիմացնիս կանգնած է հայկական տարազով ու ոգւով նշանաւոր տիպար մը, մի այլ ճարտար բանաստեղծ. այսինքն է՝ Հ. Եղիա[1] Թումանեան: Սա եւս իսկապէս հայկապն, սակայն կարծէք թէ Պատնաստի անմահներէն յօրինած իր սրտի քնարով կու գար Հոմերի Իլիականին և Ոդիսականի երգերը հնչեցնել, դաշնակաւորելով զանոնք անմահանուն Վիտայի Քրիստոսականին հետ, մանաւանդ թէ հիւսել դասականաց ոճով հայկական լեզուի նոր անկուածներ: Կարծէք թէ հելլէն լեզուի և գրականութեան աշակերտողներուն սրտում էր լինել և՛ վարժապետ իւանոց՝ մեր նախնեաց ակեղէն լեզուին և՛ բանաստեղծ: Ահա այսպիսի կրկնակի ձիրքերով օժտուած, մանաւանդ թէ գործերով կը ներկայանար նա, նոր շունչ մ'եւս աւելցնելու Մխիթարեան կաճառի դասական լեզուին և գրականութեանը վրայ:

Սակայն հեղինակն՝ իր հեղինակածներէն դատելով՝ կրնանք ըսել, թէ ինքնատիպ երկասիրութիւններ յօրինելէ աւելի՝ թարգմանիչ ըլլալու համար ծնած էր Հ. Թումանեան, թէպէտեւ ինքնատիպ և ինքնաստեղծ ներշնչութիւններ և քերթողական բանդեր իսկ ոչինչ նուազ ունեցած է: Աւսոի հինաւուրց թարգմանչաց հոգւոյն հետ՝ անանց ակեղինիկ լեզուն եւս նորոգելու բաղդը կ'ունենար՝ իր սիրասնչիկ և սիրեցուցիչ աշխատասիրութիւններով:

Թումանեան իր երիտասարդութեան ժամանակ, այն է 1802, 1804, 1805, երեք մէկմէկէ սիրուն Թատերական խաղեր յօրինած է, արձակ և չափով, որք են Հայր դիւցազն, Մինուսաթուհիւն Արատեանց և Կոչտատեանց, և Աբդլմանի նահատակութիւնն. երեքն եւս արչափ որ գիւտաւոր են և լի բանաստեղծական խանդերով, սակայն լեզուն անհարթ է տակաւին և անկոպար: Կ'երեւի թէ Ալեքսիքեանի Քերականութեան հրատարակութիւնը մէկ կողմէն, և միւս կողմէն ալ աւուր յիշողութիւնն և նախնեաց ընտիր ոճերու պատկերողութիւնը մեծապէս նպաստած էին իրեն՝ չուտով զարգանալու իր սիրած մանաճիւղին մէջ, որով և՛ պիտի գրաղէր կենաց չափ: Նա մեղուի տենդոտ գործունէութեամբ թեւածելով հելլենականէն՝ նախնեաց գրական բուրաստաններէը, և հայկականէն՝ հելլենականը, կը յաջողէր հաւաքել այդ կրկին քոյր լեզուաց ամենագեղեցիկ ծաղիկները — ըլլայ բանից, ըլլայ ճարտարաշիւս ոճերու, առացուածոց և ընդհանուր գրութեան կերպարանաց:

Կրկին դասական լեզուաց այս ծաղկաւէտ դաշտին մէջ ընդ երկար թարթափելով և դուարճանալով, կ'ունենար երջանիկ գաղափարին հետ՝ նաեւ այն յատուկ ճաշակը, այսինքն է՝ ակեղինիկ թարգմանչաց պարուճակին մէջ ծալ, ու իրենց այն անխառն և անպհական հայերէնով միայն գրել, երգել և թարգմանել, որով որ և դարու թարգմանիչները գրեցին և թարգմանեցին հելլէն պերճաբանից գործերը, վասն զի նորը կամ ասմանդիկ ոճը իր ճաշակին չէր գար: Իրաւ որ գժուարին էր այսպիսի մի ձեռնարկ, որպէս թէ ասմիկա բարբառոյն վարժող արդի յոյն մը՝ փորձէր Պերիկլեան դարու կամ Թուկիդիդեսի և Քսենոփոնի ձեղքեւարիով գրել: Եւ ինչ որ ուրիշներուն համար Իկարոսի պէս գեսպեան թեւեր առած՝ արծուօրէն դէպ ի արեգակը Թռչիլ պիտի համարուէր, Թումանեանին բնական կ'երեւէր: Եւ առաջիւ մինչեւ այն ժամանակ այլոց չըրածը՝ նա ի գլուխ կը հանէր, գործնական նմանողութեամբ:

Հատասիկ օրինակը. Ալեքսանդրի Ալէքսիական ձառերն և Ներսոդեանները[2] — որոնց նախնեացմէ եղած հին թարգմանութիւնները դեռ գոնուած չէին — նա կը թարգ-

---

1. Ը՛ր էր Թոռն Վենետկոյ Մխիթ. վանքէն յետ գարձող արկածալից Տէր Յովհ. Թումաճանի, և յամին 1787 կու գար ի Վան՝ ոչ միայն իր պապուն տեղը փոխանակելու, այլ և պարծանք լինելու իր ազգատոհմին:

2. Որոնք տպագրուած են ի Վենետիկ 1818ին, 2 հատորի մէջ, Հատընտիր գիրք եւ ճառք եւ ներբողեանք մակագրութեամբ:

մանէր ձիշդ այն լեզուով՝ որով որ Թարգմանած էին նախնիք: Բառական մի-զարդանաց և երգիծանաց նեաներ նա արդէն անգործ էին անոր վրայ: Սակայն Թո-մաճանեանի Թարգմանութիւնն հրատարակուելէն ետքը՝ երբ յանկարծակի կը յայտնուէր հին Թարգմանութիւնը՝ նորին հետ անկեալ գործմանալի նմանութեամբը, այն առեն Հ. Ղեմոյի հետ՝ կը գործմանային նաեւ անոր ընդդիմախօսներ: Այսպէս ահա յանդգնութեան գործը՝ յաւէրժական պարծանքի նիւթ կը դառնար, ոչ միայն հեղհեղամբոյր Թարգմանչին, այլ և Մխիթարեան կառամին՝ որ այժմ Թարգմանչաց հետ խակ կը մրցէր:

Թոմաճանեանի առաջը բարձր էր. նա ամէց խրախուսուած՝ արբանեան մատեանները կ'անցնէր վիպականին, և նոյն լեզուով կը հայացնէր Պլուտարքոսի գլուխ գործոցը [1], որ այնքան հրապուրիչ եղաւ առնուն: Այս արձակէն և վիպականէն կը Թուէր չէր՝ Պեզասոսի թեւերով՝ դէպ ի Տրոյեայ քաղքերը, դէպ ի Հոմերոսի Դիւցազներգութիւնները, գորս ի վեր անդր յիշեցինք. և կու տար՝ յանգուցեր չափով՝ հելլենական բանաստեղծութեան, մանաւանդ Թէ բոլոր հեթանոսութեան պաշտելի և պանծալի այդ հրաշակերտները, գորս մեր Թարգմանիչները չէին կրցած տալ, և եթէ տուած խակ հասմարինք՝ յոյժ տարբեր ըլլալու էին — դէթ տաղաչափութեան կառուցելութեան ու ներդաշնակութեան կողմանէ — Թոմաճանեանի Թարգմանութենէն, ինչպէս եղաւ ապա ատոյա՝ իր աշակերտի նոր Թարգմանութենէն: Խօսքս Իլիականի երկրորդ Թարգմանութեան մասին է, գոր ինչպէս յետոյ պիտի տեսանենք, Բագրատունին իր նորագիւտ առաքաւոնի անգերազանցելի գործով: Խակ Ոդիսականովը միայն Թոմաճանեան — ինչպէս և երբեմն իր արկածալից Դիւցաղն Ոդիսակաց — տիպար Թագաւոր Թարգմանութեանց և Թանգարան գաղափար լեզուի:

Թոմաճանեանն իրրեւ քաղուչիմ նմանող և նմանահան Ե. գարու լեզուին — մանաւանդ այսպէս յաւնարինէն Թարգմանած ժամանակ — միակն է իր տեսակին մէջ. այնպէս որ ոչ Ջախջախեան և ոչ խակ Ալեմխեան անոնն իրեն չափ նմանացնելու ընդունակութիւն: Մէկ խօսքով անոր շարադրութիւնը Թէպէտեւ միակերպ, Թէպէտ և ոչ ինքնաստեղծ, բայց կրնանք ըսել, Թէ ամենէն ազնիւ նախնեաց լեզուին կը նմանի: Անոր միակ մի էջը՝ մի մի տրցակ կը ներկայացնէ նախնեաց ոճերու և բառից: Միջնադարեան մատենագրաց հետ գործ չունի բնաւ:

Բայց ինչպէս իւրաքանչիւր ծաղիկ ազդիւ վայելչութիւն, գեղեցկութիւն և բուրմունք կ'ընծայէ տեղատոյ, երբ իւր բնոյն ու բնութեան յարմար հողին, կլիմային և բարոյականին մէջ կը գտնուի, քան երբ հաստատած է իր բունէն, փոխադրուած իր բնավայրէն և խճաղուտած է անօթի մը մէջ. այսպէս ահա, կարելի է ըսել, եղած են կամ կ'երեւին, ըստ իս, նախնեաց լեզուի ու բնաիր մատենագրութեանց տակնուդի ծաղիկները՝ Հ. Թոմաճանեանի շարադրածոյ ու մատեաններու մէջ: Սա որչափ որ ալ ճարտար նմանող է նախնեաց ոճին, սակայն այդ ծաղիկներուն ու ձեւերուն ի ժամու և ի տարաժամու եղած խճաղումն ու տարբեր առումներն եւ կրկնութիւններն՝ այն երեւոյթը, այն ամբողջական արդիւնքը կորնչէ Թէ յառաջ կը բերեն անոր շարադրութեան մէջ, ինչ երեւոյթ, ինչ արդիւնք որ կը ներկայացնեն կապերտի մը վրայ նոյնակերպ ձեւերու, գարդերու և գոյներու խառնումն ու խառացումը, և կամ գաչնակին վրայ մի և նոյն առեղներու բախումը, այսինքն՝ միակերպութիւն և վտանգաւորութիւն: Պլուտարքոսի Թարգմանութեան մէջ մանաւանդ խիստ գգալի է այս երեւոյթս: Ասոնք այս բաներս ի նկատի առնելով՝ սխալ կամ յանդուգն գատած պիտի չլինինք, եթէ ըսենք՝ որ Թոմաճանեան Թէեւ ազդի հայկաբան, սակայն չունի Ալեմխեանի և Ջախջախեանի նախնեաց լեզուն իւրացնող բնաւորութիւնը, ոչ բազմազան բառերու եւ քերականական ձեւոց մեծամասնութիւնը, ոչ ձեւաւոր և գեղապանծ շարադրութիւնը, և ոչ ալ այն ինքնաբուխ ծննդականութիւնը. և նկատի ըսել, Թէ և ոչ ալ իւրաքանչիւր նիւթին համեմատ՝ եղանակաւորելու յատուկ լեզուն և գրիչը:

Սոքա նախնեաց գասական լեզուի հիւթերը ինչպէս որ ծծած են՝ այնպէս ալ մեզուի պէս իրենց հետ իւրացուցած: Եւ գրած պահուն՝ իրենց հոգւոյ և մտաց ու-

---

1. Այսինքն են Ջուգակցեալ երեւելի արանց, ապ. Վենետիկ 1835, վեց հատոր:

դեղէն է կարծէք՝ որ կը բղխեն և կ՚արտադրեն զայն, քան թէ յիշողականի նմանահանութեամբը: Վերջապէս ինչ տարբերութիւն որ կայ սկզբնականութեան և նմանութեան մէջ, նոյնը գոգցես կը նկատանք մենք վերջնոցս և Թոմասեանների գրչին ու գրուածոց մէջ: Այսինքն թէ՝ նմանողները արդարև ալ ճարտար ըլլայ և հմուտ արուեստին, սակայն և այնպէս՝ կը մնան գործնականութեան մէջ միշտ ետեւ ընթանալու բնութիւններ, որոնք ճշդիւ չեն ընդօրինակուիր:

Յամենայն դէպս՝ մեր մատանեցած թերութեամբ հանդերձ՝ Հ. Եղիա Վ. Թոմասեան եղաւ և պիտի մնայ միշտ սակայն գործու մեր լեզուի նորոգիչն ու նմանողների նկարիչը: Ուզել զինքը կապտել այս արժանիքէն և կամ ուրիշներուն բնծայել զայն, գրական ճշմարտութիւն մը առնկախ ընել է: Սակայն ես կը խոստովանիմ, որ ինքը իսկ ի նպաստ իր արդար իրաւանցը, վերոյիշեալ սակերեսեան թարգմանութեամբն, զոր կը դնենք յոյն բնագրին և անոր սակեզարեան հին թարգմանութեան հետ:

Թոմասեանական	Աւետարան, ձառ Ե.	Հին թարգմ. Նահանգաց
Ջինչ ասացից և զինչ խօսեցայց. արտասուաց է ժամանակ՝ և ոչ գրուցոց. պոյ՝ և ոչ բանից. խընդրուածոց՝ և ոչ հրապարակախօսութեան: Երբեմն զի մեծ է յոյժ յանդգնութիւնս, կարի անբուժելի է վէրն, անհնարին է հարուածն, և յամենայն բժշկութենէ ապառաժ, և վերին օգնականութեանն կարօտ:	Τί ἔιπω καὶ τί λαλήσω; δακρύων ὁ παρὼν καιρὸς, οὐχὶ ῥημάτων· θρήνων, οὐχὶ λόγων· εὐχῆς, οὐ δημηγορίας· τοῦτον τῶν τετολμημένων τὸ μέγεθος, ὅυτως ἀνίατον τὸ ἕλκος, ὅυτω μέγα τὸ τραῦμα, καὶ πάσης ἰατρείας μεῖζον, καὶ τῆς ἄνωθεν δεόμενον βοηθείας. οὕτω ὁ Ἰὼβ ἅποντα ἀποβαλὼν, ἐπὶ τῆς κοπρείας ἐκάθητο, καὶ ακούσαντες οἱ φίλοι παρεγένοντο, καὶ ἰδόντες αὐτὸν πόρρωθεν, τὰ ἱμάτια διέῤῥηξαν, καὶ σποδὸν κατεπάσαντο, καὶ μέγα ἀνώμωξαν. νῦν τοῦτο τὰς πόλεις ἁπάσας τὰς κύκλῳ ποιῆσαι ἐχρῆν, καὶ πρὸς τὴν πόλιν τὴν ἡμετέραν ελθῆν, καὶ θρηνῆσαι τὰ γεγενημένα μετὰ συμπαθείας ἁπάσης. Ἐκεῖνος ἐπὶ τῆς κοπρίας ἐκάθητο τότε, αὕτη ἐν μεγάλῃ παγίδι κάθηται νῦν. καθάπερ γὰρ τότε ὁ διάβολος εἰς τὰ πσίμνια καὶ βουκόλια, καὶ πᾶσαν ὤρχησατο τοῦ δικαίου τὴν ουσίαν· οὕτο νῦν εἰς τὴν πόλιν ἅπασαν ἐβάκχευσεν. ἀλλ' ὁ Θεὸς καὶ τότε καὶ νῦν συνεχώρησε· τότε μὲν, ἵνα τὸν δίκαιον λαμπρότερον ποιήσῃ τῷ μεγέθει τῶν πειρασμῶν νῦν δὲ, ἵνα ἡμᾶς σωφρονεστέρους εργάσηται	Ջինչ ասացից կամ զինչ խօսեցայց. արտասուել զհասեալ ժամանակս՝ ոչ բանիւք, պերճախօսելոյ՝ ոչ խօսիւք, պօրից՝ յայս ամենայնիւ մեծութիւն:
Այսպիսի անբժշկելի է վէրս. այսպէս մեծ է հարուածս, ամենայն բժշկութեան բարձրագոյն է և կարօտ վերին օգնականութեան: Որ յայժմ զամենայն կորոյս, մնայ նստեալ ի վերոյ պղպէ. լսեալ զայս բարեկամաց իւրոց՝ մերձ ելիլն առ նա, և տեսեալ զնա ի բացեայ՝ պատառեցին զմանիկսըն իւրեանց, և ի մեծի ամիսի սկսեալ մեծապէս հառաչեցին:	Այժմ զնոյն պարտ է առնել ամենայն քաղաքացւոց և որ շուրջ կան, զոյ այլ և զեղեալս պղտոյ բարեկամութեամբ:	
Նա ինքն Որ յայժմ զամենայնի կորոյս. խոկ քաղաքս մեր անկեալ կայ ի մեծ պոռնկութիւն:		
Պղպէս յայնժամ առաւել ի հոս և ի հաշխոն և ի տունս արդարոյն խոյացեալ, այնպէս և ի քաղաքս յայս յանդգնեալ:		
Այլ Աստուած ինչ կա՛ և յայնժամ և այժմ. յայն-		

τῇ τῆς θλίψεως τούτης ὑπερβολῇ. δότε μοὶ θρηνῆσαι τὰ παρόντα. ἐσιγήσαμεν ἡμέρας ἑπτὰ καθάπερ οἱ φίλοι τοῦ Ἰώβ. δότε μοὶ στόμα διάραι σήμερον, καὶ τὴν κοινὴν ταύτην δδύρασθαι συμφοράν. τίς ἡμῖν ἐβάσκηνεν, ἀγαπητοί. τίς ἡμῖν ἐφθόνησε; πόθεν ἡ τοσαύτη γέγονε μεταβολή; οὐδὲν τῆς πόλεως τῆς ημετέρας σεμνότερον ἦν· οὐδὲν γέγονεν ἐλεεινότερον νῦν. ὁ δῆμος εὔτακτος οὕτω καὶ ἥμερος, καὶ καθάπερ ἵππου χειροήθης καὶ τιθασσὸς, ἀεὶ ταῖς των ἀρχόντων εἴκων χερσὶν, ἐξαίφνης τοσαῦτον ἡμῖν ἀπεσκίρτησε νῦν, ὡς τοσαῦτα εργάσασθαι κακὰ ἃ μηδὲ ειπεῖν θέμις.

ժամ՝ մի պայծառացնէր նա յարդարեալ, զարդարն ա-ռաւելութեամբ փոքանչեալ, իսկ այժմ մի պարկեշտացեալ նա զգենեալ մին՝ առաւելութեամբ վշտացեալ։

Տուք ինձ աշխարել՝ որք առակի կանս. յուս կացեալ ուստր հօրն՝ իբրու բարեկամին Յովբայ. առ ինձ այսօր բանալ զբերան ի գհատարակաց գայս ոսկս արար։ Ո՞վ նախանձեցաւ ընդ մեզ, ով սիրելիք, ընդ մեզ ո խանդացաւ. ուստի այդչափ փոխեալ ի մեր լեալ. չէր ինչ բան մեր քան զայս քաղաք պատուականագոյն. չէր ինչ բան գնա այժմ հեգնագոյն։ Ամենայնի յարգարեալ և հեգնամբարձ, և իբրու երեսաց ձեռնթոգել և խաղաղական, մեզ կռանամարտս ձեռաց հրաւ, յանկարծակի այնչափ ինձ հարձակեալ սարսուռս մեզ այժմ, մինչև զայդչափ չտեսեալ զարծել, զոր և ոչ ա-ռակ սրժան է։

լեալ. ասի՝ մի զարդարն պայծառացնէս սրտացեալ. այժմ՝ մի զմեզ խնամառնագոյնս յօրինեալ։

Տուք ինձ սգալ գհատակեալ իրս. յանգաւք զաւուրս հօրն պակս և սիրելիքն Յոբայ. առ ինձ այսօր բանալ զբերան և գհատարակաց սուգս գայս կանել։

Ո՞վ գչարիցաւ ընդ մեզ, սիրելիք. ով նախանձեցաւ. ուստի՞ եղեւ այդչափ հայհոյութիւն։ Ոչ էր տեսանել զարիկս՝ որպես քաղաքս մեր, և ոչ լինել այնպիսի սուգս այժմ։ Ամբոխ բնաւորելի և բարեկեաց այնպէս, զոր չի խնդացեալ ի մեզ հրեշտակաց ձեռքով խաղացեալ, այնպիսի խայտառակեալ յանկարծակի՝ մինչև այսպիսի զարձել չար, զոր ոչ կարելի ասել։

Երկուասիք ընդգծուածներն՝ են այն բառերը, որոնք բնագրէն կը հետևանան իրենց նշանակութեամբ, և կամ թերակատար են. և այս բանս՝ ինչպէս կը տեսնեն ընթերցողք՝ հին Թարգմանութեան մէջ չատ սեպի զգալի է, որ զարմանք կ'ազդէ մեզ։ Այլ՝ եթէ այդ Թարգմանութիւնը խանգարուած բնագրի մի վրայ կատարուած չհամարինք երբեմն, և կամ նոյն ինքն յետ ժամանակաց ընդօրինակողաց ձեռքով խանգարուած, քան թե Թոմսճանեանի նոր Թարգմանութենէն չատ վար կը մնայ, թէ իր պէտքն անձկդութեանց և թէ հետեւակ և անզարդ ոճին համար։ Տեղ տեղ ոչ բառեր և բացատրութիւններ և նոյն իսկ պարբերութիւններ զուտ Թողուած են, զոր Հ. Եղիա լրացուցած է։ Ասկերեանի մեծ գործերու — այն է Պօղոսի Թղթոց և Առաքէլի մեկնութեանց — Թարգմանչէն տարբեր մէկն եղած կ'երեւի այս հատերուս Թարգմանիչն. ոչ միայն չափազանց սիրդ է բանից և ձեւերու գործածութեան մէջ, այլ և բնագրի առմանցը և մտաց անտեսիակ։ Իսկ Թոմսճանեան ընդհակառակն թէ անանց խոր հասկացողութեամբն և հատատարիմ փոխադրութեամբ և թէ հարուստ և հոխ գործածներով կը թուի հանդիսանալ։ Անվիճելի բառին Թարգմանութիւն հետ իսկ մէջ բերուած կարգ բազդատելով՝ զուտ աստիճանի հասնող գտանք Թոմսճանեանի Թարգմանութեան, և յաճախ անհամեմատ նախընտրելի Թարգմանութիւնը։ Եթէ Հ. Եղիա, զոր ես և կարծեմ, բառիներն գիտելու ակտ չունէր, այս իսկ մի նոր առհատատչեայ է վեր բարձրացնելու նոր Թարգմանութեան վարկը։

Իսկ կրկնութեանց կամ մի և նոյն բառերու և բայերու յաճախ գործածութեան մասին, զոր կանխուս քննադատեցինք, գիտ՛ լ կու տանք զի՝ առաջիս նոյն իսկ յիշեալ մի քանի տպերու մէջ այժմ մակբայն 6 անգամ գործածուած է, 3 անգամ յայնժամ, 3 իբրու, 2 զոր օրինակ, 2 անգամ այդչափ, 4 անգամ քաղաք անուանն, 2 անգամ աչխարել, 2 յարդարել և 2 ալ գործել բայերն, 2 անգամ ձեռնթոգել և ձեռաց հրու

ածականները, և այլն: Ակնց կարելի է դուշակել, թէ ամբողջ ճառին մէջ արշաւ ունելի պիտի լինին այս և ասոնց կրկնութիւնները:

Սակայն ասով միտք չունինք մենք նուազեցնել արդիւնաչատ հայկաբանիս յարգը, այլ ճշդիւ որակել զայն: Կրկնութիւնն արշաւի ար. ինքն չինքեան նկատուած թերութիւն մ'է, սակայն վիպասանութեան մէջ յաճախ կը ծառայէ նաեւ ուժգնութիւն և բացայայտութիւն ապա պատմուած վիպին. ինչպէս մեր փոխոխ բանիս չափազանց կիրառութիւնն ալ չիմաստութիւն և մթութիւն կրնայ պատճառել և՛ անոր և՛ ընթերցողին: Մեծ արուեստագէտ Մատեանն ու Հոմերոս ինքնին, որոնք մեզի դրութեան չքնաղագիտական սխալներ կը ներկայանան նաեւ այսօր, ասելի հոծ չի՛ն տեսակ տեսակ կրկնաբանութիւններով: Վերջնոյն մեզի օրինակը տուած է Հոմերոս՝ Աքիլլեսի վահանի ճարտարուեստ նկարագրին մէջ, զոր Թոմասեանեան ոչինչ նուազ ճարտարութեամբ թարգմանած է: Անոնք մեզի հետեւեալ տողերն իբրեւ նմոյշ, Բագրատունեայն տպագրեալ:

Թոմասեանեան

Վահան հսկայ կուռ անարի, բնաւին գործած հրաչագործ.
Եռապատիկ արկ բզնոփաւ ճամանչագիղ շրջանակ,
Եւ արուեստով սեկ արծաթի գլխէր նոցուն պահպանակ:
Գօտիք ի յաղի ի վահանին անշրջակաւոն հինգ թրծով,
Եւ յանշրջակաւոն հրաշակերտեալ գործ հանճարոյ եղ յորով:
Գործեաց ի նմա գերկիր, երկինք, գծով, գարեխառնէմբն գերկինն,
Եղ և գարեւն անխոնջելի և լուսալիրն շրջուսին.
Զաստեղսն ամէնոյն եցոյց ի նմա, նոքա երկինից են պրսակ,
Գործեաց շրջոյլս և պատմուճանեալս, եղ և գաւազն անոց շրջոյկ:
Եցոյց և գԱրշրն՝ գոր Աստ կոչեն, որ ի Հայկն է հայեցուած՝
Անդ մեռն առնու, և ինք վիպոյն Ահիլեանն է անթոյց:

Բագրատունեայ

Եւ առեալ արար նախ ասպար մի մեծ հաստահարուստ,
Գործ ճարտար՝ կարակնագիրա, աժեալ գնովս ծրնօտ պայծառ
Երեքկուռ, լուսաճաճանչ, և զրաւնալեան իւր արծաթի:
Հինգ հին վահանի պատուհաժք, իսկ ևս՝ ի բրնի անդ
Բազում ինչ հրաշակերտս խնամուռքեամբ արարեալ գործէր:
Յօրինեաց անդէն ի նմա գերկին, գերկիր և ըզծով,
Զարեգակն անուշիատս և ըզլուսին լուսապատառ,
Անդ գարեխան ամենայն՝ որովք երկինք են պրսակեալ,
Ըզթոյլսն և գՊատմուճանեալս և զդօրութիւնն Արեհնի,
Եւ զԱրջն՝ զոր ևս Աստ կոչեն սնուցանելն յորչորչանօք,
Որ ցանգ անդրդր շուրջ նկնայ՝ դէմ յԱրեհոն ակն ուղի պիշ,
Եւ միայն է անհատորդ ըզպատանացն Աքիլեանու:

Արիշներ ինչպէս կ'ուզեն թող դատին. բան իս գէթ վահանին նկարագրի մէջ Թոմասեանի թարգմանութիւնը Բագրատունիէն աչինչ նուազ կարուկ է, կենդանի, և բնորոշ, թէեւ տեղ տեղ ոչ այնքան դիպաւոր բնագրին. սակայն վերջին թերութիւնս ոչ այնչափ Հ. Եղիայի նուազ հասկացողութեան՝ որչափ նորա գործածած չափին ընծայելու է: Սակայն զարմանալին այն է, որ առ՝ վերջին դարուց 15սանեայ նոյնավանիկ և նմանապատիւ ասպարէզութեան կրկին գժուարութիւններովը կապկպուած ըլլալով հանդերձ՝ կարող եղած է գործել այնքան հաստատուն ճիւղ յոյն բնագրին, և ի նմին ժամու լինել նոյնքան հրապուրիչ: Կապուած արծիւը թէպէտ և ազատին ընդարձակ ասպարէզն և ճախրանքը չունի, սակայն և այնպէս կազդէ և աննկարագնական լինելէ գերծ է: Այս իսկ հմայիչ է՝ որ իր տողերուն մէջ կը պահպին

արդարև Բագրատունոց գործ չէին և գնալիցուցիչ դաշնակցութիւնը, բայց ոչ երբէք պարտքերն։

Այս ամենուն անկարելի անհնարով ընթերցողը՝ թերևս հարցնէ. ապա ուրեմն ինչ հարկ կար աշակերտին՝ զոր տան իր Թանկագին ժամանակն և վերամին Թարգմանել գայն. միթէ հնարաւոր կարող էր մի ուրիշ ևս գործ կատարել։ Թերևս կարծուի անոնց նայն խակ, որ աշակերտն իր վարժապետէն աւելի գերազանց հայկաբան և քաջ Թարգմանիչ երեւնալու սին փառքէն մղուած ըլլայ գէպ ի այդ Թարգմանութիւնը։ Սակայն ոչ. գի Բագրատունին իւր յառաջաբանի մէջ — անշուշտ այդպիսի մի կարծիք փարատելու համար — բոլորովին ուրիշ շարժառիթներ կը յիշէ իւր նոր ձեռնարկութեանը, անկարելով նայն խակ հնոյն յառակ յորդը՝ «ի բիւս ձաշակելոց»։ Ահա ուրս խօսքերը. «Սակայն ես ի վերսկսանել յառջեմէ գիտս մեր և գյուղեց բանաւորաց ազգացից, յանձն առաք գիմել ի հայցուածս նոցին, և նորոգ յեղել ի հայ գԱստուածն՝ զոր Հայնէք և Աղթենց առաջնոցն՝ մերով այժմ ծանօթ գիշցագիտական չափով նախնեացս, որպես և խնդրեին, և նոքին հնոյն պարտաւորեամբ և բնական ձշդութեամբ բնագրին՝ զոր կարի լեզուաց և չափոց, կամ թերես ասելի եցէ՝ զոր մերում կարի, որ իցիւ թէ առաջի լիներ »։

Տղերքս հեղինակն արշաւ որ ալ «բնական ճշդութեամբ բնագրին» խօսքերովը վաղուց կ'երեցնէ ինքզինքը իր Թարգմանութեան ունեցած ճշդութեան և բնագրին հին պարզութեան համառօտ մնալուն վրայ, սակայն մերկին խօսքերով, զոր բնագրացեցինք, կարծէք թէ ինքն խակ կը կասկածի իր խոստացածը գերազանց և յաջողութեամբ կատարելուն վրայ. եւ իրաւացի պատճառներ կային տարակուսելու։ Թէպէտեւ Թոմաճանեանին վերջ յիշեալ և ուրիշ քաջ բանասէրաց ձեռքով նոր առաջնորդներ եղած էին Հայերուն վրայ, որով և շատ ու շատ բաներ մեկնուած էին և պարզուած, սակայն և այնպէս՝ ես համարձակ եմ, թէ Բագրատունիին գործը ուրիշ որ և է մէկն եթէ առանց Թոմաճանեանի Թարգմանութիւնն ալ ամբողջ առնելու ուղէր նորեն Թարգմանել Աստուածն, գիտեր յաջողելէն զատ՝ անհնարին նշանակ եւս պիտի լիներ, ինչպէս ուրիշներ ալ փորձեցին Բագրատունիին չափ վերջ։ Իսկ եթէ ի ձեռին ունենար գայն, այնուհանդերձ իր նախորդի Թարգմանութեան գործակից փայլէն բոլորովին զուրկ ու չուրկած՝ գրիչը ձեքէն վար պիտի ձգէր։ Իսկ Բագրատունին՝ որ հեղինէն լեզուին հետ՝ հայկաբանութեան գեղ ամբոխ գանձեր եւս հաւաքած էր իր յայնասարը ձեռներին՝ ուղեղի մէջ, այնքան չէր վարանիր ի սկզբան, ուստի և յաժարակամ ձեռք կը գարնէր մեծ գործին. վասն զի նա նպատակ ունէր այդ Թարգմանութեամբ եւս յաւերժացնել նախնեաց մեծագործը, այլ և գրաւոգել Հայոց գասական լեզուն այն բազմաթիւ, բնաւոր և անծանօթ մնացած բառերովն և բացատրութիւններով, ինչպէս գրաւոգեց Հեթումեայ Կարգակրիչները կամ ճարտարարուեստ գործերին՝ Աբիլէսի հրաշակերտ վահանը՝ ամենազան տեսարանօք։ Զի ինչպէս սա կը ներկայացնէր Յունաց գիւցազնական ժամանակը՝ իր առանձին և կրօնական կենցաղովը, նա ալ պիտի ներկայացնէր հին հայ լեզուն՝ իր կրած նպատակ գործոցութիւններովը։ Երկրորդ՝ թէև Բագրատունեաց ընդհանրապէս ծանօթ էին իւր վարժապետին ի վաղուց այնքան սիրելի եղած և առեղ գործածած բառերն և ոճերը, բայց որովհետև սա չէր կարող գուշակել, թէ Թոմաճանեան ուր, ուր տալի մէջ և ինչ բան և բացատրութիւն ի վար արկած էր, եթէ ոչ նոքա Թարգմանութիւնը միշտ աչքի առաջ ունենալով[1] իր Թարգմանելի բնագրին առընթեր։ Ուստի այս պատճառաւ անհրաժեշտ էր նոր Թարգմանիչն յաճախ բնդհատումն ունենալ հնոյն հետ, և բանագրաւած էր միշտ նոր բառ, նոր ոճ և նոր կերպ

---

1. Բագրատունին մօտէն ճանչցող մէկուն կարծիքն ուզելով այս մասին, յայտնեց ինձ ընդհակառակն, թէ Իլիականի նոր Թարգմանիչն չէր ուզեր — Թարգմանութեան ժամանակ — նայիլ հինին վրայ, որպէս պի չկապուի անոր։ Այս բանս ըստ իմիք ճշմարիտ է. բայց եթէ խորհինք, որ առանց Թոմաճանեանին վրայ նայելու Բագրատունին գժուարաւ պիտի խուսէր նոյնանման բացատրութիւններէ և բառերէ, ինչպէս նա ալ երբեմն Ոսկեբերանի ճառերը Թարգմանած ժամանակ չէր կրցած խուսել հինէն։ Հետևաբար յիշեալ տեղեկատուի խօսքերն — եթէ ի լրոյ են — զայս միայն ցոյց կու տան, թէ նոր Թարգմանիչն ամէն ջանք կ'ընէր, որ հինէն անկախ Թարգմանէ. այսինքն թէ իր և ոչ Թոմաճանեանի բառերով և ոճերով։

գանել ոչ միայն Յունաց ամենէն փոխ և ամենէն պարզ բանաստեղծութիւնը փոխել չապէս հայոցինեաս, այլ և նախընթացարար հայացուածէն տարբեր ընելու համար։ Ահա այս երկու բաներն՝ որոնց կրկին առաւելն Բարբառուեաց արձակաց պրիչն ու ճախարան լեզուն, և կը բանադատէին դիները լսել ձիչա և միանգամայն սիչա ի բան՝ գան իր միւս Բարգմանութեանց մէջ։ Այս տեղ է, որ կը դպար նա Հոմերական պարզութեան հետ՝ նաեւ իւր վարպետին՝ Թեոճնանեանի Բարգմանութեան իր միոյ ծանրացու գաղանի գործիքները։ Եւ առաջիւ, բազպատելով գանոնք իրարու հետ՝ չատ բառեր և բացատրութիւններ նոյն կը գանենք, մերթ նոյն կարգով և մերթ ալ յետեւառաջութեամբ պահուած մերթընդմէջ։ Մերթ ալ բառած առիթին իսկ բառնիս յայտնի կը տեսնուի. ուստի ուրիշ է նոր օրինակներ տալը։ Այս իսկ առհասարակ մ'է Թեոճնանեանի ընտիր Բարգմանութեան։

Յամենայն դէպս՝ մեր անգնահատելի Բարբառուեին այդ կրկին հարկերէն մրուած՝ և լոյս կը բերէր հայերէն լեզուի անապատելի մթերքը։ Սա իր գործ չափումի՝ որպես լինելով իր նախորդի կրկին կապերէն, կարող էր առանց զժուարութեան ուղած բառերը չարժել՝ նոյն իսկ իր յատուկ բառարանէն։ Զարմանալի է տեսնել յաճախ Հոմերական մի և նոյն բառերու և բացատրութեանց տեղ՝ երբեմն տարբեր հայերէն հոմանիշներ՝ երկու Բարգմանութեանց մէջ. ամէնքն ևս ընտիր, պարկ և ոսկեղէն։ Բայց ոսկէց ուրիշ բաղդատար է հետեւեալը. զի երբեմն միայն պատա կամ բան մտաց Բարգմանածը և կամ բառած բանը՝ միւսը բառական ճշդութեամբ կամ զիտակցաբար լրացուցած է։ Այնպէս որ երկուքն իրարմէն առած, կարելի է՝ ըսել, թէ Հոմերոսի Բարգմանութեանց մէջ հայերէնն ամենակատարեալ է։ Առաջի անօր. գալէն ուրիշ բաղդատար էր Ա-Թ. գարու հայ գրականութիւնը, զի նա Բարգմանութիւն մ'անգամ չունեցաւ քերթողաց քերթողին, իսկ ան կրկինը, որով բանաստեղծութեան բարբառն այնպէս ուրիշ կը բարգաւաճէր, որքան բարգաւաճեցաւ երբեմն ոսկեգարու արձակ գրութեան լեզուն։

* * *

Քերթողական կամ տաղաչափական լեզուի յատուկ կազմութեան և գարդացման գործն — գիտական օրինօք և վարպետութեամբ — եղաւ արդարեւ անհասկնալի գործ Մխիթարեանց։ Դժուարացեալ ինչպէս տաղաչափել քերթուածոց՝ եւս առաւել տաղաչափութեան վարպետութեան վերաբերեալ խիստ քիչ բան հասած է մեզ. և ասոնք իսկ՝ արձակ լեզուի պարզունակ բառերով և գարձուածներով, որով այնքան չէր գիտցուէր տաղաչափութեան վիճաբանութիւնն և գաղնակատարութիւնը։ Աբեղեանն, Թումանեանն և մանաւանդ Չամչեանն — ինչպէս տեսանք — կատարելութեան հասուցին յանգաւոր տաղաչափութիւնը. այնպէս որ մեր մէջ տաղաչափութեան ամենէն մեծ և ինքնատիպ քերթողն՝ նոյն իսկ Շնորհալոյ նոյնպէսները կը կրճատցնէին անոնց քով իրենց հրապոյրը։

---

1. Օրինակի աղագաւ, մէջ բերինք Աբիլլեսի վհատութեան նկարագրութեան առաջին տողերէն հետեւեալ բառերը, ուր կը տեսնուին նոյնպէս առմանց զանազանութիւնք։ Ինագրի ἐργάσεσθαι անեղերակը, զոր Թումանեան գործել թարգմանած է, Բագրատունին անկանելի փոխած է, որ աւելի ամփոփ նշանակութիւն ունի. այսինքն՝ հետեւիլ, նեղիլ։ Εφῦσαν բայը Թոմ. փորուեն թարգմանած է. իսկ Բագր. փչեն։ Αὖτε բուլակի սիգ փոխած է առաջինը. իսկ երկրորդը մերթ այլ մի՛ բրած է, նկատելով գայն իրրեւ ընդհատութիւն փչման։ Պղձին որուած ածականը ἀτειρέα Թոմ. անվհատելի փոխած է, այսինքն պինդ, անտեղծատելի. իսկ Բագրատունեաց գրչին տակ անպարտելի եղած է, այնու զի Պետրէից գրոց հեղինակն և Յոհաննէս. տարերայ եւս տուած են գայն։ Ἔπειτα ϑῆκεν Թոմ. բանաստեղծաց եղ. Բագր. կանգնեցոյց։ Առաջինը բառական է։ Μέγαν ἄκμονα Թոմ. թարգմանած է՝ գետնի առուցար. իսկ ան Բագրատունեաց գիտութիւն գործածելով՝ յետեւեալ։ Γέντο բան Թոմ. կալաւ. բան Բագր. բռնեն նորեւս ա՛ռ։ Ποίει Թոմ. հանդիպեցաւ կռել կոխել թարգմանուած է՝ սաստկութեամբ. իսկ Բագ. եւ առնել արար, որ սովորական է. Πάντοσε ϑαιϑάλλων բան Թոմ. բնաբխի գործած հրաշալի, ամենաճիշդ. իսկ բան Բագր. գործ հարատար կարագիտակեալ։ Վերջին բառը πάντοσε ին չհամապատասխաններ, որ ամենուստ կը նշանակէ, և ոչ թէ կամարաձեւ կամ բոլորշի՝ որ ածական է։ Ἄντυγα φαεινὴν բան Թոմ. ճոճանի լացեղ շրջանակ. բան Բագր. ծրնօտ պատ, շրջանակի կամ պատուածի նշանակութեամբ։ Τελαμῶνα Թոմ. պատգամակ թարգմանած է. իսկ Բագր. բռանելիք։ Ἀκάντον բան Թոմ. անխռնչելի թարգմանուած է. իսկ Բագր. անուշիատ, իրրեւ բացատական արեգական։ Πόλεις μερόπων ἀντρώπων καλάς Թոմ. քաղաքս բազմամարդով գեղեցիկ թարգմանած է, գուրս Թողլով մարդկան բառը, զո յանկուն կ'իմացուի. իսկ Բագրատունեին բառական կերպով գրած է՝ յօդուածոյ ի մարդկան քաղաքըս չինս։ Գիտելու է, որ μέροψ Հոմերոսէն

Իբր թէ յանգաւորը բառական չըլլար ի հանդէս բերելու իրենց կազմակերպած ձեւ և ճապուկ լեզուն, նոր ժամանակի վիճակագրական Տրամադրութեան իրարու հետ միցելու, մանաւանդ թէ հանճարին հետ՝ բանաստեղծական լեզուն նոր արեւու համար՝ կը հնարէին նաեւ բանալոյս և բանալարդ բառեր, որով կը չանային մէկզմէկ կապել։ Սակայն այդ բանալարդ կապանքներն ալ մահ կու տային քաղելուն՝ Պրոմէթեսի պէս՝ կերպ ի կերպ լինել, և զարմանալի կը յօրինէին անոնց քնարը. այսինքն է՝ մի և նոյն թելերու Քրիստոսին՝ իրարմէ բոլորովին տարբեր այնպան քերթուածներ յօրինել, մէկը միւսէն գերազանց և հանճարեղ։ Չախչախանքն այս ճիւղիս մէջ առանձնաբար է և անգերազանցելին։ Ասոնք կարգացեր են Մխիթարեան Հայց վերը յիշուած երեքհատոր Տարերը, կարեն գուշակել՝ թէ ինչ բանի մէջ կոչուած էր այդ անուն ազգաշահութեան գալանիքը. և թէ ԺԹ. դարու առաջին քառորդէն իսկ յառաջ սրչափ տանջող էր և տագնապալի յանգաւորը, նոյն իսկ Շնորհալւոյ հոգեզմայլ քնարի[1] ձայնովը. հուսկ ապա՝ թէ սրբոյն գարգացուցին և հրապուրիչ գործեցին զայն Մխիթարեան մեռածները։ Այնուամենայնիւ կը տարբերին ասոնց տաղերը Նարեկացւոյ, Պատմիչին և Շնորհալւոյ տաղերէն, որչափ ԺԹ. դարը՝ Միջնէդարէն։ Սակայն Հ. Ալբէն Բագրատունեան պահած էր՝ յառաջ բերել ամենամեծ յեղափոխութիւնը նոյն իսկ հայկական ազգաշահութեան մէջ, նոյն իսկ հայ Պատմութեան մեռածոյ վրայ առհասարակ։ Այս միջոցով ահա պիտի գրաւէր նա հայկաբանութեան բարձրագոյն տեղին — չըսեմ մենաշնորհն — ազգային գրական գրականութեան մէջ։ Մենք մինչեւ այժմ անյղպարար և անուղղակի կերպով խօսք բրինք այս նպատակին մասին վրայ, այսուհետեւ պէտք է առանձին խօսիլ անոր կատարած գործի մասին, և մանրամասնելէն[2] ջատագովել բերելու իւր ձեռքով գործուած այդ գրականական յեղափոխութեան մեծութիւնը. այսինքն է՝ լեզուական գարգացման վերջին կէտը, հայկական մեծամեծ տաղաչափութեան երջանիկ վերադարձութիւնն, և գրաբարի մասին անոր գործած հիանալի յառաջադիմութիւնը։ Բայց նախ քան քննութեան առնելու համար միանգամ եւս կանխած լսած ըլլանք, որ այս գլխուս մենք պիտի խօսինք Բագրատունեաց վրայ՝ որպէս հայկաբանի և անգերազանցելի տաղաչափի և քարտիճանչի վրայ։

Ինչպէս բնութիւնն՝ այնպէս և մարդկի յանկարծակի ընդարտումով չեն գործեր,

---

իրեւ վերագիր արուած է մարդոյ, բայց մարդկան բազմութիւն եւս կը նշանակէ. և Յոյնք μέροπες ըսելով՝ կուտ կղզւոյն բնակիչքը կը հասկնային. ահա այս առմամբ բազմաժողով գրած է Թոմասճանեան, լռելեայն հասկնալով մարդկան։ Ἐλαπίνα: խնչոյք (մեծ) թարգմաներ է Թոմասճանեան. իսկ Բագրատունին՝ մեծատուր խրախուճք կոչնոյն փոխած է զայն։ Այսպէս են նաեւ ամբողջապէս երկու թարգմանութիւններն։ Յամենայն դէպս՝ երկուքն եւս մէկմէկէ ճարտար են և իրարու բացայայտիչք, երկուքն եւս յաւակ լեզուով. թէպետեւ Բագրատունին ոչ ոսկեգարեան բառեր եւս իր նախորդէն աւելի կը գործածէ, բայց յոյժ յարմարութեամբ։ Թոմասճանեանի գործածած բառերը մէկ իմաստ ունին, և ամէն ընթերցող իսկոյն կ'իմանայ անոնց նշանակութիւնը. իսկ Բագրատունեան բազմիմաստ են, և բառարանով հարկ կ'ըլլայ որոշել անոնց առմունքը։ Թոմասճանեան միշտ գրաբարի հին լեզուի ոճերով կը գործածէ զանոնք, որով ականջի այնչափ նոր չեն գար. իսկ Բագրատունին՝ իրեն յատկացուցած փոխադրութեան ձեւերով։

---

1. Կարեւոր կը համարինք սակայն ըսել, որ այդ քնարը միշտ և մի օրինակ արաբական տաղաչափութիւնը չէ որ հնչած է, այլ և հայաստանեայց եկեղեցւոյ մէջ մինչեւ ցայսօր երգուած երգերը. այսինքն են՝ նախնեաց անցանգ տաղաչափութեան հրաշակերտքը, մերթ մեծաչափ և մերթ 8 կամ 5 ոտեան։ Սակայն ասոնք փոքրամասնութիւն կը կազմեն միւսանգ քերթուածոց քով։

2. Բայց և կանխենք ըսել՝ որ անոր կենսագրութիւնն ընելու դիտաւորութիւն չունինք այս տեղ։

դաբեննէ ասելի իրաց խորաթափանց և դիտող մտքով մ'օժտուած էր. հետեւաբար նա իր հետազօտութեանց մէջ վարժապետին պէս նախնեաց նմանող չէր, այլ իւրացնող: Այս հակայ գօրութեան և բարեմասնութեան շնորհիւ է՝ որ պիտ'ըլլար նա այնքան բազմաւար և մեծանպատում ծննդական՝ նոյն իսկ իր երեսատարդ հասակին մէջ: Հինաւուրց բազմաչեայեն նման՝ այդ ընդարձակ դաշտին վրայ տեսնելու բնաւորեալ ամէն բան, որոնք վրիպած էին այլոց աչքերէն. և կը հաւհաւէր իրեն հանդիպած ապրայեն մարգարէներէն, մեծն անոնց մէջ եղած նորութիւնները արագ հասնար: Վենետկոյ, Պարիսու և ուրիշ մասնաւորարուններու մէջ — ան որ մեզ գործէն յաճելու նա և պրպտեց երկայն տարիներ, մանաւանդ թէ բոլոր իր կեանքը մէջ — պրիթէ Եւրոպա հայերէն գրչագիր չմնաց որ նա աչքէ չանցնէր և անոնցմէ ոճեր ու բառեր չի քաղէր: Բաց ի Զարգանցեցիներ՝ նախնեաց մասնաւորութիւններէն քարուած 4 հատոր անտիպ Ոձերն և Բառարանն իսկ արդիւնք են այդ հետազօտութեան: Սակայն կ'ըսուի թէ առքս մեռն ինչ եղած ըլլան այն բազմահատոր երկասիրութեանց, և Արուեստ քերականի խորագրածին, զոր գրած էր նա Պինդարոսի և ընդհանուր կերպով յունական և հայկական մասնաւորութեանց և քերթուածոց վրայ, որոնք դժբաղդաբար Գօթոց լափլիզող հրդեհին զոհ եղած են ապա: Թէպէտեւ ինք հին դասական դպրոցին հետեւող և յարգող էր սկզբունքով, սակայն բնութեամբ նաև նորութեանց գերապանց սիրահար մ'էր: Ինչպէս կրկին գրականութեանց՝ այսպէս և անոնց վերաբերեալ սր և է գրականն կամ բանասիրական նոր շարժում մը կամ քննադատութիւն միշտ անյապօրէն կարդալու և օրճռալու հետ էր: Բազդատաւետն համար հինն առանց նորութեան յառաջ բերելն ուրիշ բան չէր, բայց նիթ ծնանիլ գեղեցիկ Փերթա մի՝ առանց հոգւոյ կամ կենդանութեան: Այսպէս այլ փոխադարձաբար ուզել բոլորովին նոր բան յօրել առանց դասական հնութեան՝ ոչ այլ ինչ էր՝ բայց նիթ ռամանաիկ Վիվերայ մի հանել պրանութեան բեմին վրայ, լի գծուծ ու գռեհիկ այլանդակութիւններով: Հետեւաբար ինչպէս գերմանացի մեծ բանասանդծն [1] ցուցելով յոյն դասական լեզուի գեղանին և բոլորական նոր գրականութեան կամ մաքի հետ — իրրեւ Հելլենաց ծոյլն ծնած չբնաց պատանի մի — կը փորձեր Ադամնի չիկաներ ակնգիտակ բանասանդը՝ Պայրն, գէպ ի վերածնութիւն, գէպ ի նոր կեանքը. այսպէս և՝ Մելիարեան քերթող կ'ուզէր հին լեզուի և նոր մաքի սերտաճիկ զուգութեամբը ծնանիլ «Հայկ գիւցազն» և ուրիշ հակայ գործեր: Ամառակի համառօտ Բազրատունեաց և փորձ ընդգրկած և փայլուն քնքոյշ գաղափարականը, որ [illegible] և երջանիկ իրականութեան պիտի փոխուէր նոր ազանդեալ կամքի, կարողութեան և գրչի ներքեւ:

Ինչպէս Մելիարեան նախկին պատանին՝ ասելի եւս Բազրատունի գրիթէ 45 տարեկան անընդհատ տարիով Պինդոսի և Լատինի մատոյց հետ՝ ամբոյն ամրացած էր ասոնց գործնական հակագրութեամբ մը իր նախորդաց համակերպիլ, այլ նորամոյծ յանգուցութեամբ ընդհանրապէս հնչեցուցած էին իրենց խանդաղատ արտերու ոսկեթել թելերը, իրենց ամենէն հանճարեղ և նոյն իսկ հնգեամասն և վերամանուածեալ երգերն ու տողերը, որոնք երբեմն նախնեաց գիւցազնական կը յիշեցնէին, սակայն գիտնացեալ վճռակի մէջ: Վերջին մեծն, 1810–1841ին ոճառնուածեցին ասելի երգեր երգած էր — գանազան տեսակօք — որոնք յետոյ տարիով կը կազմէին 260 մեծագիր էջեր, առանց հաշուելու անտիպ մնացածներն ասա և անդ: Այրեակներն սրոնց մասնաներն ոչ միայն յանգանք չունէին այս բանիս մէջ, այլ և մեծագոյն արդիւնաւոր խոկ եղած էին այնու՝ զի կարգած էին միջնադարեան մեր քերթողներու նկատմամբ, մանաւանդ թէ անվերջանալի վանդիններն և յանգերը, որոնցմով բանաստեղծութեան սրտակից երգերն խոկ շաղակրատած և սկանջաց տարտակ պատճառող ձայներգեր կը թուէին յաճախ: Կարծէք թէ յօդուած էին ամէնքը, բայց նա միանամայն ամենէն ասելի աշխոյժն և կրակոտը՝ Բազրատունեան, որ առհասարակ էր լայնատ պատկ և պարծանք ամենուն: Յամառնակն խոկ հասած էր գոյգեա մեծագոյն նորաձեւութեան և վերջնական նորակերտութեան գասական լեզուին և տաղաչափութեան: Անցած էին մի գիրեի մեծեն՝ խորհրդաւոր լռութեամբ՝ հայկական

---

1. Կեթէ. Faust, Մաս Բ:

Պարթևնաձի չնարհ և վայելչութիւն բերող երեք մեծ ճեւաձևերը՝ Ձևտիքեան, Ջախջախեան և Թոմաճանեան, երգելով ու կախելով սիրելապար իրենց քնարը Աման Միաբանեան անարէն. որը Դպրոցի ամբարձուղէշ կաղնեայն պէս վեհ և վսեմ կը կանգնէր՝ Ալեմպոսին իշխեցող արմիզական տաճարին քով, լեզուական և քերթողական նոր պատգամներ տալու։ Գարձեալ մէկ կողմէն անոր շուրջը հաւաքուած Ս. Պատարաւ նոր գրողներն և Մուրատ — Ռափայէլեան վարժարաններէն ելած նորատեր պուէտներն, և միւս կողմէն ալ Տիգրան Յակոբ Զէյթպի պէս ժամանակին ամենէն կիրթ և ճաշակաւոր Մեկենասի յորդորներն և ձեռնտուութիւնքը կը կոչէին գինքը այն մեծագոյն գործին։ Այսպէս ուրեմն տապարէզն ամէն կողմէն բաց էր Միսակեանի առջեւ։ Իրաւ է որ հանդերձ այսու կային պէսպէս դժուարութիւններ, կային հնոյն սիրահարք և նորութեանց ընդդիմամարտներ. կային պարզութեան պաշտպան և խրթնութենէ խրտչողներ նոյն իսկ Վենետկում, նոյն իսկ իր ձեռնտուն աշակերտաց մէջ. բայց այդ ամենայն ուշ կամ շուտ հարկ էր որ տեղի տային մեծ նորոգողի անդիմադրելի զօրութեանը. այնու մանաւանդ՝ որ ժամանակն և այլ պարագայք իսկ այդպէս կը պահանջէին։

Ինչպէս երբեմն Խաալիոյ ամենէն երեւակայուտ և կորովի նկարիչը՝ Լէոնարդոյ դա Վինչի՝ գեռ ուսանող, կը սրբագրէր իր վարժապետին Անդրէաս Վեռոքիոսի նկարի թերութիւնները՝ ի մեծ զարմանս ուսուցչին, այսպէս եւ Բագրատունին՝ գեռ աշակերտ, սուր դիտողութիւններ կ'ընէր երբեմն երբեմն իր վարդապետին՝ հայկաբանութեան և գրականութեան լրջագոյն անգամ խնդիրներու նկատմամբ։ Իսկ այժմ նա ինքն համարուած էր գերապանծ վարժապետ և վարդապետ այդ մանուածիւղին, որ ընդունելով վեհութեան և վսեմութեան Ազարչապետէն կրկին և գերազանց պարգեւները, կ'իջնէր կարծէք Ալեմպոսի ամպածրար բարձունքէն կայծակնացայտ դիմօք և առնական շարժումով։ Եւ գեղեցկագիտութեան բերոզի մը՝ քան թէ սովորական մահկանացուի պէս կը մտնէր հայկաբանութեան տաճարի մինչեւ անմատոյց գաբիրը, ուր գեռ եւս հայկեան նոր մուսայից ոտքերը կոխած չէին, իսկ հիներու ալ չքնաղ արուեստին ազօտ ուրուագծերը միայն կ'ընդնշմարուէին։ Եւ կը մտնէր՝ ոչ միայն գտնելու ինչ որ կորսուած էր, և վերաստեղծելու՝ ինչ որ վեհ էր և վսեմ, այլ և անսովոր արուեստով դրուագելու անցելոյն մեծութիւնը և նորին կենդանութիւնը. այլ և երգելու այնպէս՝ ինչպէս որ Ապոլոնի ճաշակն և լսելիքը կը պահանջէին. մանաւանդ թէ հասցնելու հայերէն արձակն և ոտանաւորը այն բարձրութեան, ուր Թերեւս Գողթան մուսայք ժամանած չէին, որով վերջապէս հայկական Պառնասոսը նոխանձընդդէմ պիտի հանդիսանայր եղբայրականին։

Աբարական բանաստեղծութեան հետ՝ այդ լեզուին ու տաղաչափութեան յատուկ տարր մի ժ. դարէն ի վեր եկած յարած էր նաեւ [1] հայկական բանաստեղծութեան. այսինքն են՝ ոչ միայն մինչեւ Է. դար մեր նախնեաց գեռ անծանօթ չափը, այլ և հոգեւոր յանգը, կամ միաձայն վերջաւորութիւնն։ Այս արեւելեան մաղձոտ և միակերպութեան սիրահար լսելեաց համար անչուշտ հեշտ օրօրող և հեշտացուցիչ դայլայլիկ մի համարուած էր. իրաւ այն թէ հնագոյն մագաղաթներու առանց կիտադրութեան և վերջակիտի եղած ընթերցուածն և չունչհատնումը բաւական չըլլային առ այն։ Մեզ յայտնի չէ գեռ՝ թէ արդեօք այդ պատճառաւ, եթէ ընդհակառակն հարթ և անընդհատ ընթերցանութեան ընդհատութիւն մի ընելու և տող տողէ զանազանելու համար [2] պարզա-

---

1. Ինչպէս և եւրոպական նոր լեզուներուն։

2. Այս պատճառս ինձ անձնականն չերեւիր։ Իսկ Բագրատունին համաձայն Մագիստրոսի հեռաւոր պատճառը կու տայ (Քերակ. էջ 545) յանգի ներմուծութեան առ ամենայն ազգս. «Ի չափականն՝ քանզի վասն սաստկութեան առոգանութեանն եղանակ ինչ զգային ականջք յաւարտել տողիցն ի առեղ և ի համրոյր միանգամայն, այսինքն ի մի երկար ձայն՝ յերկու սուղ և գարձեալ յերկու երկայն, որ կարի զգալի է ի լատինն վաս. չեշտիցն սովորաբար միապէս պատահելոյ ի սկիզբն առեղանն և համբուրի, սահմանեցին՝ զի այս եղանակ լինիցի նոցա յանգ տողից դիւցազնական տաղից. ըստ այսմ և յայլս զմի ինչ ոտից՝ որոց կից է միշտ եղանակ ինչ. ուստի առ սոսա նմանութիւն քանակի ոտից՝ էր նմանութիւն յանգի. և այսպիսի է յունացն և լատինացն (յորոց էանց և առ արաբացիս)։ Իսկ որ չունէին գայդ հանդամանս ձայնից ի բարբառս նոցա գյանգուածն տողիցն կանոնեցին կազմել նմանաձայն բառիւք, որպիսի է մեր և գաղղիացոց, և այլն»։

պէս մնաս անոր, այսինքն՝ նոյնայանգի գործածութիւնը նաեւ հայ ոտանի և երգոց մէջ, և կամ որպէս ոտանաչափական և քերթողական կառուցուածքին մի։ Այլ այս չոյանի է՝ որ սեմական այդ ձիւազը՝ չարունակեց ամրողջ լինն ու կէս դար՝ ըլլալ ոմանց իբրեւ երջանիկ Աբրահամէն եկած անուշարոյր խունկ, և ոմանց ալ իբրեւ բանաստեղծական սիւնը զարթուցանելու նեկտար մի, թէպետեւ ինքն չինքեան ուրիշ բան չէր՝ բայց եթէ թմբրեցուցիչ ափիոն։ Անդին թագուած կեցեր էր Հայոց ամենայն եկեղեցւոյ գանձարանին՝ Շարակնոցի մէջ՝ նախնեաց մեծաչափը, բոլոր իր վեհութեամբը. ոսկոյն ոչ ոք կը տեսնէր զայն՝ թող թէ չհասկնալ։ Հ. Գաբրիէլ Ալեպիքեան [1], Շնորհալւոյ հօթնօրեայ արարչութեան երգը, Նորատեղեակ, մեկնած ժամանակ՝ զգալով ա- նոր արձակ ձեւով տպագրութեան մէջ մի և նոյն չանգի բախտը, խոկդն վրայ կը բերէր. « Չհօթնեակ խորհրդական և զոտանաւոր երգս », և այլն։ Նոյնը ոսկոյն ի մեկնութեան Հախիսիանց Աճեմին նուիրելու շարականին — որը չափով է բայց ոտանց չանգի — հետեւեալ տարտամ դիտողութիւնը կ'ընէր միայն. « Եւ ի յիշատակ հոգեւոր ժեժպտրժութեան իւրոյ (Կոմիտաս Կաթողիկոս) արձանացոյց գայրուբեան- կան օրհնութիւնս... սքանչելի արուեստիւ և փափուռեամբ պատչաճեալ »։ Իսկ Շնոր- հալւոյ աւուրը Վարդանանց վրայ յօրինած Նորաձայն պրոսակաւորի, Վեռնդեանց Տէր երկնից՝ և այլ երգոց մասին՝ և ոչ իսկ յիշեալ դիտողութիւնը կ'ընէ։ Անտարակոյս՝ երկրորդ դիտողութեամբ եւս, այսինքն է՝ « սքանչելի արուեստիւ » և այլն, անսովոր բան մի կ'ուզէր արտայայտել Ալեպիքեան, զոր ինքը խորապէս զգացած էր՝ այդ ար- ձակ կարծուած օրհնութեան մէջ, այնու մանաւանդ որ հայկարան մեկնչիս խօսքը չարականին իմաստից վրայ չէ այդ տեղ, և ոչ իսկ լոկ բառից ընտրութեան, որոց համար կը յարէ անմիջապէս. « յորում թէպետեւ չիք այնչափ վրուերեւ բանից, բայց վայելչութիւն իմաստից յամենայն տուն զտրմացուցանէ զքննող »։ Հաւանօրէն երաժըշ- տական արուեստ կամ չափ, և նոյն իսկ ոտանաւոր քերթուածի գոյութիւնը կը նկա- տէր չարականիս մէջ։ Բայց քանի որ նա իր այդ անդրադարձութիւնը կամ նկատո- ղութիւնն որոշակի բացատրած չէ, չենք կրնար ասկէց վերն ոեւէ եզրակացնել, թէ ինքը իմացած՝ թող թէ տուեալ հատ եղած ըլլայ նախնեաց ժեժպտրժութեան [2]։

1. Տես Բացատր. Շարակ. տպ. Վենետկոյ, էջ 621։

2. Այս այսպէս լինելով հանդերձ՝ ոսկայն դիտողութեան արժանի է և հետեւեալն. այսինքն է՝ Ա- տրքեան այն ժամանակէն ի վեր երբ դեռ նախնեաց չափին կամ անյանգ ոտանաւորի վրայ գաղափար չու- նին, նա այդ ոտանաչափութեամբ սքանչելի երգ մի յօրինած է ի վենետկեան Տրդոտոյ եւ Հայկի տես Տաղք Մխիթ. Վարդապետաց 2 հտ. էջ 7), որուն թէ՛ առաջին տողն և թէ՛ երկրորդը՝ հօթնոտանեան են, բայց միացուելով կը կազմեն տեսակ մը մեծաչափ, այսպէս.

« Տեսէք գՀոչէ խրոխտապանծ՝ տանձահարեալ իբր անբան.
Երգով ձայն՝ ուրախութեան հնչեցէք ընդհանուր » և այլն։

Իսկ արձակ չափով երգեր նուագած են յամին 1805 Հ. Կարապետ Իւսկեան և Հ. Յարութիւն Ա- դերեան՝ իբր վերջաբան Հայկ Թատերախաղին։ Որոց առաջինն այսպէս կը սկսի.

« Ըզվիմաց կարծրութիւն՝ և հոսանք հեղեղաց,
Ամէ ըզսիրտ անյողդողդ՝ հերապոյրք ցոփութեան »։

Իսկ երկրորդին սկիզբն է.

« Կեցցեն հանդիսադիրք՝ խնդասցե Հայաստան,
Հանճարեղ խելամուտք՝ բացեալ ըզպատրուակ,
Ահա նսեմացաւ՝ և պատնասեան հանդէս,
Ընդ նորաբաքանչ տեսիլ՝ հրաշակեալ ի նախնեաց »։

Հ. Մանուէլ Ջախջախեան եւս յամին 1804 այսպիսի յաղթական երգով մի կ'ընէ Արատեանց ժեժպ- մարտութեան ներկայացման վերջաբանը, որ կը սկսի.

« Պանծացիր Հռոմ՝ ընդ յաղթողականն,
Հընչեսցէ Լիվիոս՝ բայց ոչ հատուսցին », և այլն։

Այսպէս և Հ. Թոմաս Մաքսէթեան՝ որ բանաստեղծի համբաւ հանած էր, կ'երգէր (յամին 1802) Աբգարեան վկայի ներկայացման վերջաբանը, որուն սկիզբն է.

« Գուշեան դու ընտիր՝ նորաժխեխի ծաղիկ,
Ի դրախտ յադինալ՝ ի ծագել բարձանց,
Նուրբ գեղեցիս օդոց՝ ի բաց թօթափեալ,
Այլեր բարձրացար՝ յաստեղեալ կամար », և այլն։

Ոսկայն կէսէն վերջ չորս տունը յանգով կը փերձէ, բայց վերջին երեք տուները առաջնոց պէս նորէն առանց յանգի են։

Արդ՝ ծանօթութեամբ մէջ բերուած օրինակներն — վէթ առաջինը — թէպէտ և ցոյց կուտան մեզ, թէ գէթ Թարգմանչաց մէջ Բագրատունեան նախորդները կանուխէն իսկ սկսած էին գործածել ապառօրէն նախնեացին մօտ առաջադէպութիւն մը, բայց կարծէք անպիտակցարար. վասն զի ինձ ծանօթ բերթողներէն ոչ մէկը գրաւոր վարդապետութիւն մը, կամ բացատրութիւն և կամ անոր սոսկ յիշատակութիւն մ՚ըրած է ուրեք և սրչափէ: Հետեւաբար՝ կրնայ ըսուիլ, թէ գերագոյնին նոր ատաջադիմից՝ Բագրատունեան պահած էր նախնեաց հին ատաջադիմութեան գիւտ բանին ու բացայայտ վարդապետութիւնը:

Յիրաւի՝ մեր նոր թրակացին՝ « Զոր Տաչիր և Թրակ յղեն ի մեծ Ալխաին մայրաքաղաք [1] », բան իւր վկայութեան, 1821 Թուականէն ի վեր գտած էր հնոյն՝ այսինքն է Արիւոսի քնարին՝ նոյնպէս և մեր նախնեաց քնարական, անյանգ ու հրաշալեաս քերթողութեանց գաղտնիքը: Զի այդ տարին հրատարակած Գաղղիարէն բերականութեան մէջ (էջ 554, 555 և այլն) նախ բացատրէ կերպով կը յայտարարէ նոցա գոյութիւնը՝ բանալով. «Այլ թէ առատութիւն ինչ և դիպեցկութիւն համարիցի անյանգ առանուանցն, ոչ պակասէ մեզ և այդ, որպէս Յունարէնից և Գաղղիացւոց. նա մանաւանդ առ կարի հնագոյնան ի նախնեաց մերոց ոչինչ նշմարանք երեւին յանգից. զի առաւ բազումք ի շարականաց մերոց և ի տաղից՝ ևս կատարեալ առանուանց բուռովք՝ առանց յանգի: Եւ այս եթէ նորաձեւութիւն գրեցի, և եթէ բան վաղնջուց և նախնական տարակ, այնքան յաժարութեամբ ընդունելի եղիցի կամ պահեցաւ, որքան զի մեծ եւս ապառութիւն չնորհէր քերթողին, զերծ ի հոգոց յանգիցն՝ փութմութեան խնդառիցն եւթի և ոճոյն պատկառ կալ »: Երկրորդ՝ Բագրատունին կ՚օրակէ զանոնք այսպէս. « Ի սոյն պէտս երբեմն և զանգառաց և գչափոցն չառաւելուելս ի բաց խոտորելոցին ի քերթուածոց՝ հանգոյն ակզբնաւորին տաղերգուելոցն, և այնպէս չարադրածոյ ոտիւ և բուռվ եւթի քերթողաբանեցին, մանաւանդ քնարերգակքն... և այսպիսի անհատներ կան առ մեզ չարականք և տաղք և մեղեդիք, զոր և ոչ իսկ մարթի է ընդ չարականին կանոնաւ առնուլ »: Գ. կը բերէ մեր եկեղեցւոյ խօսնակ Ներսէսեցւոյ և Շնորհալւոյ գանձերէն և չարականներէն այլ և այլ օրինակներ նախնեաց հին կամ անյանգ տաղաչափութեան կամ քերթածոց: Գ. կը վարդապետէ [2] հակառակ Գր, Մագիստրոսի [3], թէ հայերէն տաղաչափութիւնն ընդհանուր առմամբ — այսինքն՝ թէ

---

1. Տես Հայկ պիւզանդ տպ. Վենետկոյ, 1858, էջ. 473: Բագրատունւոյ այս տեղէն կը հետեւի իրրու այն թէ անոր ազգատոհմը ժամանակաւ Տաչրաց գաւառէն ի Թրակիա տեղափոխուած ըլլայ, և ասկէց ուղղակի ի Վենետիկ գրկուած մեր քերթողը: Սակայն որովհետեւ նա կ. Պոլսեցի էր ծննդեամբ և Անթիմոսեան ժառանգ, հետեւաբար նորա յիշեալ վկայութիւնն իսկ այլաբանօրէն Բագրատունի նոր վերադրին վրայ առնելու է բան իս, գոր ինքը յետոյ ստանձնեց, և Թրակն ալ Արիւոսի, որուն քնարը կը հնչեցընէր մեր նոր պուետն: Բագրատունին — անանուն Պարսաւագրին դէմ հրատարակած Գրքոյկին մէջ — կը թուի ապացուցանել իր ազգատոհմին Բագրատունեաց ըլլալն:

2. Անդ, էջ 556:

3 Մխիթարեան պուէտս՝ որ յունարէնին հաւասար արաբական տաղաչափութեան եւս քաջ հմուտ էր, թէ Պետրոս Կաթողիկոսին ընծայած քերթուածին վերջը դրած մեկնութեան մէջ (տես Տաղ. տպ. Վենետկոյ 1868, եր. 91) և թէ քերականութեան մէջ կը պարծէր՝ թէ հայերէնն եւս նման հելլենացւոյն ունի երկայնութիւն և աղութիւն, բանակ և ամանակ, կամ լաւ եւս չափ և կշիռ. այսինքն թէ ունի վեց ոտն, երկոտասան չափ, և բան և չորս ամանակ, որով կը կազմուի վեցոտանի դիւցազնական տաղն հելլենացւոց: Ահաւասիկ Մագիստրոսի խօսքերը՝ իր յիշեալ տաղին համար. « Տաղ է հոմերական քաջոլորեալ և սա տաղ դիւցազնական չափաբերեալ ըստ հելլենացւոցն: Իսկ ըստ Արաբացւոյն՝ կշռեալ և բաղկացեալ է եռատասնեակ և երից քառից միով քուէի, և չարամանեալ ամանակօք երկարացեալ քան և չորից, ամբողջ բերելով անդուստ և գոտքն պարզ երկոտասան »:

Մեր նոր տաղաչափը՝ Բագրատունի ուղելով քննել հին պուէտին այս յայտարարութիւնը, հետեւեալ հարցումը կ՚ընէ նախ ինքն իրեն. « Մարթի՞ արդեօք լինել և՝ ի լեզուի մերում չափական տոհմաւոր. այսինքն թէ գո՞յ ի նմին մեր չափ և քանակ վանգից »: Եւ անմիջապէս կը յարէ, թէ « Ցայտ է թէ գոյ — որպէս և ի գաղղիացին և յամենայն լեզուս. — սակայն չէ յոյժ զգալի և ոչ մի օրինակ հատուածն յապային տովորութենէ, ուստի և անյարմար ի չափական ոտս, և հարկաւ միայն ընդունակ բուռականիւ »:

Բագրատունին՝ իր այս համոզումը հաստատելու և Մագիստրոսինը ջրելու համար՝ ոչ միայն քննութեան կ՚առնու մեր հին տոհմաւորներն և քերականները՝ Երզնկացւոյն հետ, այլ և Գր. Մագիստրոսն՝ իր երեք տող հոմերական թարգմանութեամբը, զոր առընթեր դնելով քնագրին և անոր համաձայն անդամ հատուած մէջ կը բերէ: Ապա ցոյց կու տայ մանրախուզիչ, թէ նոյն իսկ Մագիստրոսի յիշեալ տոհմաւորին մէջ կը բերէ: Ապա ցոյց կու տայ մանրախուզիչ, թէ նոյն իսկ Մագիստրոսի յիշեալ տոհմաւորին մէջ բաց ի հայկական տոից, վանկերէ և յանգերէ և ազգութենէ առաջինն անդամին — որ առ

անյանգը — գաղղիարէնի և իտալերէնի պէս միայն բուռւեր է, այսինքն՝ յանգ և վանգերէ բազկացած, և ոչ թէ չափական՝ նման յատիներէնի և յունարէնի։ Եւ թէ ձէն մի տողը՝ կարող է ըլլալ հինգէն մինչեւ ցվեչտասան վանգ, բայց ոչ աւելի քան զվեչտասան և ոչ այլ նուազ քան չհինգ։ Թէ հինգ վանգերէ բազկացած տողը՝ սովորաբար առանց անդամի է, իսկ միւաներն ամէնքն ալ անդամաւոր են։ Թէ այդ անդամներէն բերաքանչիւրը կրնայ հասուիլ կամ գասուիլ՝ բերթողին ճարտարութեան համաձայն՝ «յապգ ապգ գեղայարմար ներդաշնակութեանց»։ Եւ սովորաբար հասարապ անդամներու կը բաժնուին տողերը, բայց նախնիք անհաւասար անդամներու ալ բաժնած են յաճախ. և թէ այդու աւելի բազմազան և ախորժելի կը լինի տողն՝ եթէ անդամներէն առաջինը կամ վերջինն անհաւասար, այս ինքն է՝ մէկ վանկով պակաս ըլլայ։

Առաջին երեք դիտողութիւններէն ակներեւ կը տեսնուի, թէ Բագրատունին հզած ըլլայ գոնէ նախնեաց Հնազոյն և մոգուած տաղաչափութեան։

Սակայն զարմանալի է՝ որ այդ գիւտն ընելէն վերջ իսկ՝ մեր բազդաւոր պուէտը՝ կը չարունակէր տակաւին — մինչեւ 1841ը և գուցէ թէ այդ թուականէն վերջ իսկ — ջատագով լինել աւելի յանգաւոր քերթութեան, և աւելի եռանդով մշակել գայն, քան նախնեաց անյանգին։

Եւ առուգիւ կրկին փաստեր կան այս բանիս։ Նախ որ իր յիշեալ Քերականութեան վերջը դրած ընդարձակ ճառին մէջ զարմանալի համարութեամբ յոյն և լատին

տեւաբար՝ Մագիստրոսի այդ չափն և կշիռը գործ չունի ամենեւին հետքն և լատին չափական տոտանաւորներուն հետ։

Բագրատունիքն վերջ երկու հմուտ հայագէտներ եւս նորագոյն քննութիւններով գրեցին մի և նոյն նիւթին վրայ. այսինքն է՝ Գերպ. Եդուարդ Հիւրմիւզեան յամին 1873 (տես Բազմավէպ հտ. ԼԱ. էջ 97) Հայկական տաղաչափութիւն խորագրած յօդուածով, և Հ. Արս. Սուքրեան յամին 1877 (Բազմ. հտ. ԼԵ էջ 15) Չոմերական բառգիրք եւ հոմերական տողք մակագրած։ Առաջինը նշանաւոր է հայերէն լեզուի շեշտաւորութեան վրայ ըրած սուր դիտողութիւններով, զորս իտալական շեշտաւորութեանց հետ բազդատելով՝ աւելի զօրեղ և կարեւոր կը գտնէ. վասն զի վերջնոյս շեշտերը նիւթապէս բառերուն յարեալ են, ուստի ինչպէս առանձինն՝ այսպէս և նախադասութեանց մէջ իմաստ չունին. իսկ հայերէնն ընդհակառակն միշտ նորանոր իմաստ և սաստկութիւն կու տան ոչ միայն այն բառերուն՝ որոնց վրայ կը դրուին, այլ և նախորդ և յաջորդ բառերուն, որոնցմով կը լրանան նախադասութիւնք։

Իսկ վերջինն յոյժ հետաքրքրական է, խնամքով հաւաքած և յոյն բնագրով ի միասին մէջ բերած բոլոր այն հոմերական տողերու ժողովածոյին, զորս մեր նախնիք թարգմանած և իրենց գրուածոց մէջ իբր ակունք ագուցած են, Աղեքսանդրի Պատմութեան թարգմանչէն սկսեալ՝ մինչեւ Գր. Մագիստրոս։ Այսպիսի մանրակրկիտ հետազօտութենէ վերջ երկու բանասէրք եւս միաբան կը հաստատեն Բագրատունւոյ կարծիքը՝ հակառակ Մագիստրոսի, որ մեր նախնեաց գործածած դիւցազնական անյանգ տոտանաւորը Հելլենաց վեցոտնէին պէս ամանակաւոր կամ ամանակօք չափուած չէր և չէր ալ կարող լինել։ Այս երեք ուսումնասիրութիւններով կը փարատի նաեւ այն կարծիքը, իբրու այն թէ մեր նախնիք թարգմանած ըլլան նոյնպէս և Հոմերոսը, որը սակայն մեզ հասած չէ։

Բայց այս բանէս աւելի զարմանալի կը թուի ինձ հետեւեալն. այսինքն է, եթէ Բագրատունին կրցաւ մեր նախնեաց դիւցազնական չափով և ամենայն ճշդութեամբ թարգմանել Հոմերոսի ամբողջ Իլիականը, Դաւիթ և Յոհաննացի և Մագրիտորոս ինչո՞ւ պիտի չկարենային նոյն չափով՝ որով շարականներ աւանդեցին մեզ՝ թարգմանել և՛ Հոմերոսէն և Եսիոդոսէն և Պինդարէն մէջ բերուած տողերը, զորս կը նշանակէ Սուքրեան։ Իսկ եթէ կարէին, ապա ուրեմն ինչո՞ւ անկէ բոլորովին տարբեր կերպով թարգմանած են այդ տողերը։ Արդ՝ ինչպէս այս տողերուս, այսպէս և նախնեաց ուրիշ դիւցազնական տողերու մէջ բազմավանկ բառերու միջակտրոնթիւնն, և նախընթաց անդամոց երկարելովը միայն՝ յաջորդ անդամոց նուազութիւնը լեցընելն — այլովք հանդերձ — անլուծելի գաղտնիք պիտի մնան տակաւին, առանց իրական շեշտ և սուղ և երկայն վանկերու։ Ոչ միայն շարականներու այլ և ուրիշ հին գրչագրաց մէջ իսկ նշանագրուած առոգանութեան այս և ուրիշ նշաններն, այլ և հին քերականներէն սկսեալ մինչեւ Բագրատունի և Հիւրմիւզեան՝ ամէնքն եւս կ'ընդունին, թէ մեր լեզուն եւս ունի երեք տեսակ շեշտ, և երկայն և սուղ տառեր և վանկեր. և թէ երկրարբառներն և նոյ բաղաձայները ինչպիսի մեծ դեր կը կատարեն վանկերու սղման մէջ, ինչպէս ը տառն ալ՝ անոնց երկարացմանը։ Բաւական է առ այս՝ կարդալ Հիւրմիւզեանի յիշեալ յօդուածը։ Աւասիկ ըստ այսմ անկարելի չէր ըստ ինքեան, որ մեր դիւցազնականն եւս հելլենականին պէս համբոյր և առեղն կոչուած տոքերն ունենար։ Եւ եթէ իրօք գործածուած չեն, ասոր պատճառն այն է՝ որ մեր լեզուի մէջ ինչպէս շեշտն՝ այսպէս և երկայնն և սուղը նիւթապէս բառերու և տառերու վրայ նշանագրուած չըլլալով, դժուար էր՝ որ ականջներն ամէն անգամ զգային անոնց տարբերութիւնը։ Հետեւաբար այդ մեծ դժուարութեան համար է՝ որ մեր նախնիք յունականէն տարբեր կերպով կազմեցին դիւցազնականին անդամները։ Եւ յիրաւի՝ թէ Հայերէնի մէջ շեշտը՝ ձայնաւոր տառերու և երկրարբառներուն հետ այնպէս կապուած չէր նաեւ Ե. դարուն, որ առանց՝ երկարացման կամ սղման համեմատ՝ շեշտն եւս փոխուի, ինչպէս է յունարէնի մէջ, և ոչ ալ փոխադարձաբար վանկերը շեշտի տեսակին համաձայն կրնային երկարիլ կամ սղիլ, զի յունարէն լեզուի պէս ի բնէ չունէին գայն՝ իբր մասն նշանագրութեան, կը վկայեն հին մագաղաթները։

ատաչափութեան էութիւնը կազմող ատրերքը բացատրելէն վերջ, որոց մին է և նմանանձայն բառերով կազմուած ատկերաւ յանգոյնը, այսպէս կը մեզադրէ Հակոբեանց նոր պոէտներն և ատաչափ քննադատները, ըսելով. « Աւտի յայտ լինի, թէ անձամբ մոռացութեամբ՝ անհնարին մոդրին, որք միանգամ գյանգս ատտից բիւր բշնաւանօք եղելին, իբր խաղալի ինչ կամ մանկական և նորաձոռ յաշխարհ, կարծելով, թէ հեղինն և բառին անյանգ բերթողաբանեն. որ ընդհակառակն, որպէս ցուցաք, ոչ միայն յանգիւ կամ նմանահնչութեամբ եղանակի ատղեն, այլ և գերթուածն ազգայն արշաւի երկարագոյն էցէ՝ պրեթէ ի մի յանգ ատարեալ բերեն, ի առնել և ի ճառերդս: Բովանդակ քառատուն և ութ գիրք կամ հագներգութիւնք Եղիսաբանի և Ագիսաբանին Հռիփսիմեայ, և երկատասանեակն Ենէականին Վիրգիլեայ, և հնգետասանեակն Աղրահեր-պոէթեանցն Ովիդիոսի պրեթէ ատ հատարակ ի գոյն ատն կամ յանգ ատարեալ ունին զատան անթիւս, ատկաւ ուրեք միայն միտատանգ ի լատինս անանք յանգին յիրկու հատրոյր »:

Իսկ երկրորդ փատան այն է՝ որ Բագրատունեաց մինչեւ 1841 Թուականը յօրինած 86 բերթուածներէն 80ը յանգատար են, իսկ 5 միայն անյանգ. այսինքն են Ա. ի ծնունդ ազնիւ Յովհաննիսեայ Տիգեցւոյ (յօրինեալ յամին 1839). Բ. Յերանելի վկայի Թեոդորոս (յամին 1829). Գ. Աւ մեծանուն Սեպուհ Յակոբ Տիգ (յամին 1847). Դ. Հոմերի Իլիականին ձայնակ մ՝ալ ի սկիզբն առաջին Հանդներգութեան (յամին 1847). Ե. Էջ և Աւրիժ որսորդք Թարգմանուած Վեռոլդոսէ (յամին 1814). Ե. Հպատոն ձայ և Միրամարդ՝ նոյնպէս:

Արդ՝ այս երկու չօշափելի փատաներէն վերջ՝ բնականապատ մարդ առիպուած է հարցնել, թէ ինչ պատճառաւ արդեօք դանդաղեցաւ Բագրատունեաց ի գործ դնել և մշակել իր բրած գիւտը, այսինքն է՝ նախնեաց անյանգ ոճաչափը: Բատ իս երկու եղած կարող են լինել հատանօրէն այդ պատճառներն. Ա. կամ այն է՝ թէ նա այն ժամանակ — իբրեւ երեսատարդ պոէտ — այդ նորութիւնը մոգնելու ատգին մէջ գինքն անբատական կը գտար, առանց աշխատութեան պատճառելու իր ուխտի երիցագոյն պոէտներուն, և անոնցմէ գատատիտուելու. Բ. կամ թէ նա ինքն իսկ դեռ բոլորովին հատու եղած չէր իր վերայայտնած գիւտի գատանեացը, և պէտք կը գտար հիմնովին ուսումնատիրելու, հետատոտելու և մարգուելու անոր մէջ:

Եւ ատուգիւ՝ այս բաներուս կը նպատանն հետեւեալ եղերութիւնքը: Նախ որ վերոյիշեալ վեց անյանգ բերթուածներն, գոր իրր ատ ի փորձ բրած է, բատղատեալ յետ ժամանակաց յօրինուած և կամ Թարգմանուած անոր վերջին բերթուածներուն հետ, կը տեսնուի՝ որ այնքան յաջողուած չեն: Բ. Զնայելով որ նա գատղիտարէն Գերատանութեան մէջ արդէն յայտնած էր նախնեաց այդ տեսակ ատատնաւորաց գոյութիւնն և իր բրած գիւտը — գէթ կարեւոր Հանգամանօք. — ատկայն և այնպէս՝ յամին 1847 Հրատարակած Վիրգիլեայի Աչակերտին Թարգմանութեան Ներածութեամբը կու գայ գարձեալ նոյնները երկրորդելու. բայց այս անգամ այնպիսի մանրամասն գատողութիւններով և Հանգամանօք, որոնք յայտնապէս մեկ կողմէն վերոյիշեալ բնդդիմութիւնները գիտնելու, և միւս կողմէն ալ իրեն ատացած կատարեալ ծանօթութիւնները և անոնց վրայ ունեցած Հատատատուն Համոզմունքը Հրատարակելու կը ծառայեն: Իսկ թէ ինչպէս, տեսնենք բատ կարելոյն Համառօտ:

Մեզ յայտնի չէ, թէ արդեօք Բագրատունին այդ պատնէշի ներատութիւնը Աչակերտին Թարգմանութենէն յառաջ, թէ ընդհակառակն վերջը յօրինած ըլլայ: Վերջին կէտն անտարակուսելի է, բատ իս, այնու մանաւանդ՝ որ բերթողն ինքնին 11 ինամ, ակնհայտ կ'ընէ [1]:

---

1. Աւտուգիւ՝ յետ յիշելու նախընթացաբար ազգային երկու տեսակ ատանաւորներն — այսինքն են՝ թէ՛ բառատար կամ յանգատար չափովը, թէ հնագոյն և անյանգ ատաչափութեամբ — հետեւեալ հարցը կ'ընէ ատ ընթերցողս, յորում է և՛ պատատխանը. « Եւ արդ՝ գո՞ր ի հայկական չափոց ընտրել արժան էր ի Թարգմանութիւն բերթուածիս: Ընագիրն (Վիրգիլեայ) յօրինեալ է վեցատանի մեծագոյն չափովք դիւցազնականօք՝ չափական ատգէց: Իսկ գատնել ատանաւոր հատատար ամենեւին նատագատար դաշնակութեան և բազմապիսի փոփոխմանց չափական վեցատանոյն Ձոնաց և Հռովմայեցւոց՝ յանհնարինն է, մանատանդ յարդեացս նոյնաձայն ատգոյակ ատանաւորաց: Խնդրելի էր ապա բատ կարի համեմատն, որ և զմիւս պահանջեալ յատկութիւնն առատել ունիցի՝ նատագագոյն հարկ առնելոյ յատելատածոց կամ զեղչմանց: Ապա ուրեմն ընտրելի էր այնպիսի իմն ատանաւոր, որ մեծագոյն և պերճագոյն իցէ ի չափս հայկականս, որ ոչ հարկ առնիցէ հշդիւ յամենայն ատգս գնոյն թիւս վանկից պահել », և այլն:

Յամենայն դէպս՝ այս խնդրէս առնչի նշանակութիւն մնին ինձ համար հետևեալներն, այսինքն թէ՝ ժամանակը, պարագայք և նախնեաց հին չափին վրայ բրած նորանոր և խորամուխ ուսումնասիրութիւնքն յառաջ բերած էին այնպիսի մեծ և հատարմա փոփոխութիւն Բազրատունեաց վրայ — 1841 թուականէն վերջ — որպէս իբր այդ թուականէն յառաջ գրածներուն բոլորովին հակառակը և գրել և գործել կու տային ազատ համարձակ։

Այժ, նախ դիտել կու տանք՝ որ նա այժմ գտղիական Վերակառուցութեան վրչ յանգուցերին ի գովեստ գրածին հակառակ՝ առիթուած էր պարսու գրել։ Տարակոյս չկայ, որ առաջ անուղղակի՝ իրրեւ ապացոյնեան վճռով՝ դինքն ևս յայնժամու յանգուցոր առանուցերի պարսատպրոյ վրչ գտած կ'ըլլար. այնու մանաւանդ՝ որ իր այն վիճային վրչ յօրինած յանգուցոր քերթուածներէն մի քանիսի վրչ ամբողջական տուներ իսկ մի և նոյն յանգով վերջացնելու հաճոյքն ունեցած էր. թէպետ ևս ուրիշ չատերու վրչ այլ յանգերու պէս՝ վանդեր և տողեր իսկ ամէն կերպ փոփոխելու և ուրիշներէն թե բերս ուելի հնչառնուտ գործելու արդիւնքն ունեցած։

Սակայն և այս ուելի պատիւ էր Բազրատունեան՝ քան պակասութիւն։ Եւ յիրաւի, եթէ յառաջ կարդայն իսկ՝ իբր և արդարչին նպատակի պերճանքը ցոյց տալու համար ցամաքին կը հոսէ գինքը հայելանման լճին վրչ, և հոն կը ցուցնէ իր պերճանքն և կը գոնէ իր գթոտնքը. եթէ բնութեան սիրահար ոտիանն՝ իր թեւոց հետ՝ երգահան հազագն ևս վարժեցնելէն վերջ, կը ձգտի խոնարհագոյն վայրէն դէպ ի երկնատիչ մայրիքը, և անտի կը հնչեցնէ իր երաժշտութեան հիանալի դայլայլիկները, արշալոյս ևս ապա ուրեմն մեր երգարան քերթողն, որ լեզուի յառաջադիմագոյ չարժման հետ՝ նախնեաց հին բանաստեղծութեան գաղտնիքն ևս գրեթէ բոլորովին խմացած էր։ Հարկ էր՝ որ այս պարագայիս վրչ այդ անցքն ընէր, այսինքն սահմանափակէն և առանձնագոնէն դէպ ի անսահմանն և բարձրագոյնը թեւակոխելով, և փոքրէն և յանգուցորէն՝ դէպ ի նախնեաց անյանգ մեծաչափը։ Եւ կ'ընէր նա արդի ամենամեծ գոհութեամբ, նկատելով մանաւանդ՝ մեկ կողմէն յաճին 1815 յանգուցոր չափով Իլիականի Ք. Հանգներգութենէն և յաճին 1814 Մշակականի Ա. Կրկէն բրած անյաչող նախաձեռնութիւնը[1]. իսկ միւս կողմէն ալ նախնեաց անյանգ չափով ի գլուխ հանած կը տեսնէր ամենայն յաչողութեամբ Վիրգիլեան Մշակականոց հիանալի Բարգմանութիւնը։ Հետևաբար՝ իրաւունք ունէր նա այժմ թէ այդ Բարգմանութեամբն և թէ անոր կից գրած նիւթաբանութեամբը — զոր կը ներկայացնէր ազգային բաներուն պաշտանեցուն — չափազանց հնչեցնելու իր պատգամներն ու վարդապետութիւնքը՝ իրրեւ ամենատոյգ եղելութիւններ։ Տանելիք յաղթանակը թէև դժուար, թէև ուշ, սակայն ապահով էր։

Ք. Նա այդ Ներածութեան վրչ այնպիսի կէտեր կը չօշափէր նախնեաց հին տաղաչափութեան, այն է դիւցազներգականին, որոնցմէ գանուն հազիւ թէ ակնարկած էր յիշեալ Վերակառուցութեան վրչ. իսկ միացածները կարող ենք բոլորովին նորութիւն համարիլ։ Այն տեղ Շնորհալիէն և Նարեկացիէն մի քանի օրինակներ, իսկ այս տեղ Ա. Սահակէն կամ Ե. դարէն ակնարկ՝ 33 Շարականներ և 9 տողեր ցոյց կու տայ մեզ, իրրեւ չքնաղագիտ միացորդներ մեր նախնեաց այդ տաղաչափութեան կամ անյանգ տառնուտին, որոնք մեր տաղաչափի կարծիքով՝ «է պի պարզ վարիալ, և է պի խառն ընդ այլոյս գնարական մանր տողի»։ Նորինոցոյ Զափաւ բանք յիներին և ի Սահակ Բազրատունիին իսկ — եթէ երբէք գտնուի — բան Բազրատունեան այս տեսակ տողերէն մին ըլլալու է անշուշտ։ Այս տեսակ տառնուտը է՝ զոր Վրիպոր Մագիստրոս գործածած է Մեծ ևս գործի և ուրիշ տողերու վրչ, ձայնաւոր յանգը միայն ուելցնելով բուն կամ՝ և ի շնորհակ Աստուածոց, կամ անոնցմէ մեր չնորհ համար[2]։

Որովհետև իր ընդդիմախոս յանգատէրներէն չէին կարող այլ ևս աչք գոցել այսքան և այսպիսի պայծառ ցուցակութենէն դէմ, կը սկսէին խոսիլ անոր վերջին

---

1. Տես Տաղք Մխիթ. Հարց, էջ 247–249։

2. Աստուած այս բանս յայտնի կը տեսնուի նոյն իսկ Մագիստրոսի առ Պետրոս կաթողիկոսն ուղղած խոսքերէն, ուր պահանջոր տեղեկութիւն կու տայ անոր նուիրեալ Հաղներգութեան մասին, զոր վերջը յիշեցինք։

փաստերու հետ մնանուանդ, թէ այդքան երկայն տոմով առանուար չի կրնար ըլլալ. պէտք է երկուքի բաժնել զայն։ Ասոր մեր տազաչափն անոնց կարծեաց հետ՝ այդպիսի բաժանման կամ հատման անհեթեթութիւնն ևս ցոյց կու տայ կրկին փաստերով. «Ոչ ներին զայն նմա նախ՝ բազումք առաջին կիսատողից անհամեմատ և անընդունելի կարճութիւնք, որպէս է անհանել բազում ուրեք։ Եւ երկրորդ՝ ի թիւ վանից յաճախեալք ի վերջ երկրորդ անդամոց, և ի յաջորդն անցեալք. որպէս օրինակ իմն «Ի յաւէժ կենդանութեանն-մահատիպ պրատով մեռեալ»։

Այս և Մագիստրոսի վերը յիշուած քերթուծով կը հերքէ Բագրատունին իր ընդդիմախօսաց ուրիշ երկու առարկութիւններն ևս, այսինքն թէ՝ այդ տեսակ տազաչափութիւնը նախնիք միայն կցկտուր տողերու և եղանակաւոր երգերու մէջ գործածած ըլլան, և թէ անյարմար է այն՝ դիւցազնական շարամանութեան և իւր ընթերցուածոյ։ Սակայն նա կը յաւելու, եթէ առաջիւ միայն եղանակելի և ոչ — կարգալի տաղից դանազանութիւնն երբէք գոյութիւն ունեցած չէ նախնեաց քով, և ոչ ալ մինչեւ այսօր յայտնուած. և եթէ մէկը դեռ կը տարակուսի և կ'ըսէ, թէ գոքա բնաւ իսկ առանուար չեն, թող բազդատէ նախնեաց չափով յօրինած այդ երգերն և իր թարգմանութիւնը՝ նախնեաց յիշեալ առանուար շարականաց հետ։ Իսկ եթէ առ հանդերձ չզգայ գոցա դանազանութիւնը կամ դաշնակաւորութիւնը, «մեք ոչ կարեմք ականջս առեղծանել, ոչ երբեւ Աբրահամ և ոչ իբրեւ Աբգար»։ Իսկ եթէ կը զգայ, այնուհետեւ աւելորդ է վիճել. թող նախնեաց հետ վիճէ այնպիսին, զոր մեզմէ աւելի հմուտ զոյն ըլլալով բնաւորութեան և արուեստակաց և դաշնակաւորութեան մեր լեզուին, այս տեսակ տազաչափութիւն ընտրած են, և զոյն բաւական համարած՝ առանուարն արձակէն զանազանելու համար։ Ասոր մինչեւ հիմայ բաժնելէս կը տեսնուի, որ Բագրատունի յոյժ եռանդով և անաչառ կերպով յաջողած չէ իր տազաչափական գիւտին և անոր գործածութեան մէջ, այլ միայն[1] — գրեթէ միայնակ — բազմոց դէմ։

Տեսանենք այժմ արեւելեան քերթուղիս գիտական հանդէսը, որով ապատպինուած՝ կու գար բանալ Հայկական տազաչափութեան կազմութեանն ու դաշնակաւորութեան բոլոր գաղտնիքը։

Ըստ Բագրատունեայ վարդապետութեան՝ այդ գաղտնիքը կամ չափակցութիւնը կայացած է՝ ոչ եթէ հանգոյն հելլենականին՝ վանկերու, այլ անդամոց թուի հաւասարութեան պահպանութեան մէջ. իսկ բոլոր Յունական բաներուն գաղտ է քերթողը, բայց օրինօք[1]։ Ասոր այս վարդապետութեան համաձայն՝ նախնեաց մեծագործ կամ դիւցազնական տաղը իւրաքանչիւր տողի մէջ քառեակ անդամովք կ'ոլորուի։ Առաջին անդամն գգտա է լինել 1–4 վանկ. երկրորդը՝ քառավանկ կամ եռավանկ, երբ առաջինը միաւոր վանկ չէ. ապա թէ ոչ՝ մին յաջորդին եռավանկին հետ միանալով՝ ոչ միայն քառավանկ անդամ պիտի կարծուի, այլ և կ'եղծանի քառանդամութիւնն, որով և՝ տաղին չափերը։ Երրորդ և չորրորդ անդամները՝ ամենագլուխ քառավանկ կը լինին, յունաց և լատինաց չափականին համբոյրի պէս, տողերու յանգումը և ձոներ և՝ մեծամասնելուչ ընելու համար. բայց չորրորդն գգտա է եռավանկ լինելու, միայն թէ երկրորդ անդամն եւս այնպէս գրուած չըլլայ, և կամ երբ առաջինը միավանկ չէ. ապա թէ ոչ՝ այնպիսի տողեր կամ ուրիշ տողերուն հետ դաշնակաւոր չեն գոր ընելեաց, կամ երկու հատուածներու բաժնուած կ'ըլլան, և կամ չեն կրնար լրացնել երկտողեան վանկերու չափը։ Հետեւաբար՝ իբրեւ բնորոշ յատկութիւն տաղիս և պայմանաւոր որոյ ոչ՝ կը պահանջուի, որ մէկ տողի վանկերը 13էն նուազ չըլլան, և ոչ ալ աւելի քան 16։

Այս պարզ օրէնքէս՝ իբրեւ մայր գաղտնիքէ՝ կը ծնանին լատ Բագրատունեայ տուն տեսակ փոփոխութիւններ նոյնաչափ համարուած կամ դիւցազնական տաղից, զորոնք

---

1. Ի տպագրոյդ այս բանիս կը գրէ մեր պուէտը. «Զի եթէ զնոյնավանկ տողս — գոր օրինակ գՀնգետասան — յոլովիւր անդամս հատանիցես (այսինքն) յերիս, ի չորս, ի հինգ, այն տողդ ոչ երբէք միաբանին ի մի յարմարութիւն ընդ միմեանս։ Իսկ եթէ ընդհակառակն գանիոյնավանկ տողս իսկ — որպէս գՀնգետասան, գչորեքտասան, գերեքտասան — հատցես ի եոյնաիւր ոչ կարի անհամեմատ անդամս, օրինակ իմն՝ ի քառանդամ, տողդն այն՝ ուղիղ առոգանութեանն օրինօք յարդարեալ յարմարեալ՝ գան ի մի միաբանութիւն դաշնակութեան ընդ իրեարս, և վանկի ինչ պակասութիւն յանգամն ուրեք՝ առ ոչինչ դրի»։

յաճախ գործածած են նախնիք, իրարու հետ խառնելով։ Իսկ մեր պաէտան ուշի ուշով ջանացեր է զատորոշել եւս զանոնք ապիւռակի մի մէջ — յէջ 18 — հանդերձ իւրաքանչիւր տոլի վանկերու պարբեան և երկայնութեան կշռոյթին. որոնք յարմար կերպով կու գան և կը գուգին չափերու մէկ միասնութեան մէջ [1], բան որում երկու տոլ միայն մի երկայն վանկ կը համարուին։ Եւ տոլ վանկ բանելով չհմանար Բագրատունին բան հեղէն և բառին հատուածուն չափոյ տարբերութեան, այլ «բան երաժշտութեան և ձայնաբանութեան իսկի բնական տարբերութեան», բան խնամոյ, բան կրկին, և երբեմն նոյն իսկ բան տարութեան։ Հետևեալ այն ապիւռակը։

4–4–4–4	*յորում թէ եղեն տոլ վանկք*					8,	*լինի*	12	*վանկ երկայն կամ չափ*		
3–4–4–4	»	»	»	»	»	6,	—	12	»	»	»	»
2–4–4–4	»	»	»	»	»	4,	—	12	»	»	»	»
1–4–4–4	»	»	»	»	»	2,	—	12	»	»	»	»
4–3–4–4	»	»	»	»	»	6,	—	12	»	»	»	»
3–3–4–4	»	»	»	»	»	4,	—	12	»	»	»	»
2–3–4–4	»	»	»	»	»	2,	—	12	»	»	»	»
4–4–4–3	»	»	»	»	»	6,	—	12	»	»	»	»
3–4–4–3	»	»	»	»	»	4,	—	12	»	»	»	»
2–4–4–3	»	»	»	»	»	2,	—	12	»	»	»	»

Նախնաց դիւցազնական տոգերուն՝ հեղինական և բառինական վեցտանեակին ուենցած այսքան զանազանութեան՝ ի հարկէ՝ պէտք էր որ սիրոյ օրէնքներ ըլլային, ապա թէ ոչ քերթողական արուեստին հակառակ տակ քմահաճոյքներ պիտի համարեէին անոնք ուելի՝ քան թէ ազգային քերթութեան բնիկ, բնորոշ և հիմնաւոր արուեստ։

Յիրաւի՝ կարելի բան չէ — և անդէն խոկցան այս հարցը կ'ընէ մարդ ինքն ինքեան — որ չափական տողի մը մէջ, որուն անդամները թուով անփոփոխ են և հաստատուն, վանկերն ընդհակառակն ինչպէս կրնան բան քմոյ քերթողին կամ առանց օրինաց աճիլ և նուազիլ։ Մոքի այդ օրինաւոր երկրայութիւնը դեռ կ'ուելնայ դիտելով, որ այդ աճելութիւն ու նուազելով իսկ՝ ներդաշնակութիւն յառաջ գայ, փոխանակ աննիրդաշնակութեան։ Հետևաբար, ինչպէս այդ ներդաշնակութիւնն՝ այսպէս նաեւ արամարանութիւնը կը պահանջէն, որ հեղինական դիւցազներգութեան կամ վեցտանեանին փոքր ի շատէ նման [2] օրէնքներ ըլլան նաեւ հայկական մեծաչափ տողին և տողից մէջ, թէպէտ և երկուքին իշխող այդպիսի օրէնքներ՝ խառը համեմատութիւն ունենան իրարու հետ, տողից նիւթական կազմութեան մէջ։ Ասոր ոմանք կը կարծէին՝ թէ այդպիսի մի զարմանի օրէնք կայացած ըլլայ այն եղելութեան մէջ, այսինքն թէ՝ յաջորդ անդամներու նուազութիւնը լեցուի և բովանդակուի իրենց վերջին վանկերու երկայնացմամբ։ Սակայն այս չէր կրնար լինել ոչ ուղիղ և ոչ այլ համոզիչ։

Իսկ Բագրատունին — որուն յոյժ պարտական եմք — այս մեծ կնճիռս եւս կը լուծէ՝ իր խորաթափանց դիտողութեամբն, այսինքն թէ յաջորդ անդամոց նուազու-

---

1. *Այսինքն է՝ միշտ 12 երկայն վանկի կամ չափի մէջ. գի ըստ նախնի տաղաչափից չափական տաղերու մէջ երկու երկայն վանկեր կամ երկու չափեր՝ մի միայն ոտն կը համարուին։*

2. *Այս բանս կը հաստատուի նոյն իսկ Բագրատունւոյ այն ձեռնհաս վկայութեամբը. «Եթէ ներբեր անգիս՝ ակն յայտնի ցուցանէաք և՝ գկատարեալ գդալի նմանութիւն. [illegible] մանաւանդ թէ նոյնութիւն այսոցիկ բնիկ ազգային տաղից՝ ընդ բազում տողս չափական վեցտանեանցն Յունաց և Հռոմոց. ոչ ըստ չափոյ տոհից նկատեալ գնասա, այլ ըստ չէշտից և ըստ երկայն հատածից՝ կամ թէ ասել՝ հանգատից ընդհ, որ համեմատին չէշտից կամ հանգատից մերոց անդամոց, և որովք իբր ի բառեակ անդամս հատանին ըստ մեզ»։*

Մեծապէս երախտապարտ պիտի կացուցաներ Բագրատունին զմեզ, եթէ այդ կէտերու մասին — որոնք ոչինչ նուազ հետաքրքրական են — մանրախուզիւ հառած ըլլար. որով ոչ միայն ընդարձակ տեղեկութիւն պիտի ունենայինք հայ և հելլէն դիւցազնականի խնամութեան վրայ, այլ թերեւս այնու պարզուէին խորհուրդք, Գաւթի և Մաշտոցի թարգմանած հոմերական տողերու գաղտնիքը։

թիւնս կը լրացուի նախադասս անդամոց վերչին վանիկերուս ամանակի երկարութեամբը. որոնք հարկաւ որչափ աւելի կ'երկարին, այնչափ եւս աւելի հանգիստ կ'ունենան տողերու յանգից մէջ։ Եւ սոսր համար է որ նախ՝ առաջին անդամին աւելի ազատութիւն չնորհուած է՝ մխանելէն աւելի կարճ կամ նուազ լինելու։ Բ. Տողին մէջ կարճագոյն անդամը կը լրացուի՝ նախադասս վերչի անդամին երկարելովը. վասն զի ամանակի այս երկարութիւնն ոչ նթէ վերչին անդամին համար է, որ արդէն լրացեալ է յինքեան կամ լրանալու պէտք չունի, այլ յաջորդ անդամին կամ անդամոց ի մխաին։ Այսպէս ալ յաջորդ եռամանկ անդամը՝ կը համարուի քառամանկ, և առաջին մխամանկ անդամը կը համարուի մինչեւ եռամանկ և նոյն իսկ քառամանկ. և այս կը հանդիպի նախադասս առի վերչին երկարայանգին կամ հանգամին յաջորդելոյն պատճառաւ [1]։

Այս վերչին կէսս արչափ որ նոր և զարմանալի կը թուի, սակայն և այնպէս ունի իր հաստատութիւնը՝ բաց ի բնական առոգանութենէն՝ նոյնպէս չարականի երաժշտական խազերու մէջ. վասն զի — ինչպէս դիտել կու տայ իրաւամբ մեր հանճարեղ ազգասէրն — հոս, այսինքն է՝ դիւցազնական կամ մեծաչափով յօրինուած չարականներուն՝ երկար խազը դրուած կը գտնենք ի վերջս անդամոց՝ նոյն իսկ քառամանկին [2] վրայ, որուն կը յաջորդէ կարճագոյն անդամը. բայց ոչ երբէք նուազագոյն անդամին վերջը, որուն անմիջապէս կը յաջորդէ լիամանկ անդամը։ Բացառութիւնք այն ժամանակ միայն տեղի կ'ունենան, երբ կը մնանէ խազ ինչ եղանակաւոր՝ պայմանեալ տեղոյն վրայ ձայնը ազատելու և նուագը գեղեցկացնելու համար։ Իսկ երկվանկեան անդամի մէջ նոյն իսկ առաջին բառի վերչին երկարութիւնը՝ կարէ լրացնել չափը [3], առանց կարօտ լինելու նախադասս անդամէն առնուլ զայն։

Առանձին դարձ մի ուրիշ նորութիւն եւս կը յայտնէ Բագրատունեաց նախնեաց այդ դիւցազնական առանձնաւորին մէջ, որուն կիրառութիւնը թէեւ խիստ ցանցառ՝ բայց գիտութեան արժանի է. վասն զի կը յիշեցնէ մեզ հելլէն չափի նման օրէնք մը. այսինքն է՝ բազմավանկ բառից գործածութիւնն ընդհէջ համեմատ, որով մի մնալ կը տրուի մէկ անդամին, և միւսն ալ՝ միւս անդամին։ Եւ այդ հատուածը կատարուած է ոչ միայն չորսէն աւելի բազմավանկ բառերու, այլ նոյն իսկ քառամանկերու վրայ — թէ ըլլան ածական բառք և թէ ածանցեալ բառեր։ Հատուածն [4] ալ տեղի կ'ունենայ անմիջապէս բարդի կամ ածանցի յօդուածոր տեղէն յառաջ, և կամ նոյն իսկ յօղին վրայ։ Այս բանս Բագրատունին պարզապէս ազգասիրական հարկի արդիւնք կը համարի և յոյժ գգուշալի. հետեւարար՝ այլ ուրիշ պատճառ չորոներ անոր։ Ահա Բագրատունեաց վարդապետութիւնը մեր նախնեաց դիւցազնական ոտանաւորի տեսակ տողերու մասին, զոր և ինքն ընտրեց և գործածեց միշտ, հրաժեշտ առով յանդգնութեան։

Բագրատունին ինչ որ վարդապետեց նախնեաց դիւցազնական չափի նկատմամբ, նոյնը նաեւ գործադրել յաջողած է։ Այո՛, ինչպէս ոչ ոք յառաջ և յետոյ իրեն չափ հաստատ եղած էր կամ եղաւ այդ չափի քերթողական, քերականա-

---

1. Վասն զի բաս այսմ օրինաց ֆէպէասեան տողին վերչի վանիկը ընտրեցաւ տուղ ըլլայ, սակայն երկարի տեղ կ'երթայ։ Վերչիդը իսկ հնագոյնք՝ ի վերչ ամենայն տողից որ և է տուղ վանիկ՝ երկարի տեղ կ'առնուն։ Եւ այս լոկ ցնորք մի չէր, այլ պայման առոգանութեան. և եթէ ցնորք իսկ համարուի, կը գոչէ Բագրատունի, լաւ է ցնորիլ Հելլենաց, Հռոմոց և մեր նախնեաց հետ, որք միշտ այդպէս վարուեցան։

2. Բազմաթիւ օրինակներ արուած են ասոր. երկու միայն բաւական կը համարինք մենք դնել հոս։

Յիմարեցոյց ըղձագաւօրն և պակեաձն հնեթանոսք.
Եւ գարձեալ ե՞դեմ ասուածատուն գարդարի... — (տես Շար. Հոխփ.)։

3. «Զանեցան պնեամ՛մր սրոյ ի բանաւո՛ր ոդիակիսում». Շար. Հոխփ.։

4. Այս տեսակ գործածութեան 16 օրինակներ միայն կը տուին չարականներէն և տաղերէն։ Դնենք այս տեղ երկու օրինակ իրաքանչիւր տեսակէն, շեշտելով հատման տեղին և ենթաձեայով բաժնելով.

«Արձաթախրուխեամ՛ըդն մոլեալ Յուդա».
«Խոհըդրդոց ոչ խոտորուին և ոչ փոխա՛դրուխեն բարուց»։

նական, թատրոնական և երաժշտական յատկութեանցը, այսպէս ևս կրնանք ըսել՝ թէ մէկ ոք գիտցաւ — իրեն պէս վայելչութեամբ — յիշեալ չափին հետ՝ այդ և նման յատկութիւնները ցոլացնել իր հակայ թարգմանութեանց[1] մէջ։ Վիրգիլիոս, Հոմերոս, Միլտոն և թատերգական այնքան նշանաւոր գլուխ գործոցներն այսպիսի բազմազան վայելչութեամբք և վեհութեամբ է՝ որ կը հոյացուէին և գլուխ գործոց կը դառնային նաեւ Բագրատունեաց։ Եթէ արձակին ըստ պատշաճի թարգմանելու համար՝ մէկ քանի դժուարութիւններ կան, չափականին համար կրնայ ըսուիլ թէ հարիւր և մի։ Յաջողի թարգմանիչ մը պարտի ըստ աւելնոյնի հաւատ ընծայել՝ ոչ միայն բնագրի աւելնոյն ներքուստից և վեհութեանցը, այլ նոյն իսկ ատաչափական ամէն օրինաց, այսպէս մանաւանդ քերթողական բառերու ընտրութեան, իր բնիկ լեզուի չեշտարմանց, երկբարբառներուն երկայնացման և սղման, տառերու բախման և անոյշ կամ խժական ձայնահանութեանցը։ Հարկ է գիտնալ իրաց բնութեան և պարագայից համեմատ յարմարցնել բառերն ու տողերը, այնպէս՝ որ գանգք արտասանած ժամանակ՝ կարծուի թէ իրեն կատարումն է՝ որ կը տեսնուի կամ կը լսուի։ Այսինքն՝ ծանր և գանգատաշարժ իր մը ներկայացնելու համար՝ երկարութիւն տալ, ուրախալուն՝ զուարթ ձայներ, և սխրանքներն՝ սխուր բառեր յարմարցնել։ Արիոյ և կատարութեանը՝ առատիկ, մեղմին և սիրայնոյն՝ փոխիկիկ անուշիկ բառեր. այսպէս իմա նաեւ ամէն բան։

Արդ՝ Բագրատունեաց համար կրնանք ըսել լիարերան, թէ յայտ աւելնոյնի վիճակոյն հանդիսացած է. զի այս աւելնոյն իրենց բնորոշ գունով և առանձնայատկութեամբը մարմնացուած և կենդանացած կը տեսնուին անոր գրչի ներքեւ, անոր անմահ տողերուն մէջ։ Չեն կը տեսնենք՝ որ աւելնոյն ինչ իր յատուկ բարբառովը կը խօսի, կը գոթէ և կը ներգործէ ընթերցողին վրայ։ Բագրատունեաց թարգմանութեանց մէն մի տողն այնչափ աւելի կենդանի է և ցոյտուտ, այնչափ աւելի նկարէն և նոր՝ որչափ որ կուտ թարգմանիչն է միանգամայն գերազանց տաղաչափ և քերթող։

Ընտծնուտ գաղափար կազմելու համար՝ բաւական է կարդալ Աշակերտին սիր և էջը, բայց կարդալ Բագրատունեաց չեշտարմ արուեստովը. իսկ Իլիականի թարգմանութեան վրայ կանխաւ խօսեցանք։ Յիրաւի եթէ կ'ուզէք իմանալ թէ՝ որդեօք կարկառուն աւելի երագ է, թէ անոր նկարագիրը, լսեցէք հետեւեալ տողը. « Այնչափ ընդատ զոյթ ընդ առնոյ այլ կուտ կարկառ գոռ բարկոճայթ »։ Եթէ կ'ուզէք տեսնել աթոռական եղան ծանրագանդաղ քայլը, միտ դիք այս տողիս. « Ընկրացի ձնժճի ինձ անդ ընդ խորամուխս արօրով ցուլ »։ Եթէ կ'ուզէք իմանալ մարուկ երիվարի մը վիճակը՝ գարնանագուարճ գաշտին վրայ, կարդացէք 69րդ էջի 13 տողերը, կամ լսեցէք այս երկու տողերը միայն.

« Ոչղարերձ ոտս ընթանայ, զաքսին թևթեւս առնու գրնէ...
Եւ թմբուլ տատասմբակ զոհիլով թընդոյ գաշտ հատանէ »։

Եթէ կ'ուզէք ձարտարաւար երընջու մը քով երկու գոռոզ և տափուտ ցուլերու կռիւը դիտել՝ լսեցէք այն երեք տողերը.

« Նոքա գազանարար ձակատս արկանել իսանդին ի կռիւ
Կուռ կռնամբ խնթիկելով, մարմինք ներկեալ յարիւն ի թուխ,
Եւ վրիժակք յատեխ հանդէպ մըրկեալ վարսին լայն թառամչմամբ »։

Տեսէք գործեալ թէ յօշեալ անդամոմարմն մէջէն ինչ բառերով կը նկարագրէ մեզ դուներու ծնանիլն և օդու մէջ թեւատելը.

« Բղղիլ սըղղալ պարս մեղուաց, ի հերձ կողից եռալ ի գուրս,
Ամբաւից սըփռել ամպոց, երթալ պընդել ի ծայր ծառոյն
Եւ ի ճօճան բառնզանցն ոլորտօրէն կախել ի վայր »։

---

1. Չի — ինչպէս տեսանք — Գաւիթ Անյաղթ, Փիլիմոզահայրն Մովսէս և Մագիստրոս՝ հոմերական մի քանի տողերու թարգմանութեան մէջ իսկ անյաջող եղած են։

Վերջապէս եթէ կ'ուզէք լսել թատերգուի ընթացող Հերրոսի ախտերէն՝ Արիւսի տխուր ձայնի կենդանի արձագանքն, ահաւասիկ այն՝ երկու տող մէջ.

« Ի պարզել ոգւոյն, ասա՛, պնւրիկիկ կարգայր ըզհէք,
Պնւրիկիկ գեամպերք բոլոր ընդդէմ կըրինէին վանդ »։

Ամէն՝ ինչ որ է Բագրատունեաց այս տոհմէն, նոյն է և՛ բոլոր Թարգմանութեանը մէջ։ Եւ ինչպէս Մանուսյի անմահ բերթողին միայն արուած էր այսպիսի տողեր յօրինել, այսպէս ալ Մխիթարեան մեծ ատաչամին վերապահուած էր՝ այսպիսի անանման լեզուով և արուեստիւ գանգնք հայացնել։ Թարգմանութիւն մի՝ որուն ոչ ոք կարող հաւասարիլ՝ զէթ ի գիւցազնականին, թող թէ գերազանցել, թէպէտեւ բազում չանոցին։

Ըստծնիս ակնարկ ընելու համար՝ համեմատենք Աշակարանի Ա. գրքէն Բագրատունեաց թարգմանութեան տողերը՝ անոր ժամանակակից տոտաչամիներէն Հարատապունին՝ Գերոպ. Եղ. Հիերմիպեանի եռանդամ մեսսանոնեայ չափով մի ուրիչ թարգմանութիւնը, որուն համար կ'ըսէ Բագրատունի՝ թէ իր թարգմանութենէն վերջ և «առ ի պէտս բազդատութեան» բրած էր։

Բագրատունի

Ի՛ր գըւարթ առնիցին՝ բոյսք արմրտեաց, ո՛վ Մեկենաս,
Ցի՞մ արփի վարել գերկիր, զայգիս զուգել ընդ նըշդարիս,
Չի՛ փոյթ ի գէպ անդէոյ, գինչ հօտի պէտ ի հեթեթանս,
Տընօրէն մեղուին քանի՛ հրմուտ հանճար, առիւ երգել։
Ո՛վ լուսապայծառ վեհ գերարփիք սեկղերաց,
Դուք՝ որ բնդ երկին սահուն գոլորս վարէք աստուին,
Դեմեարէ կենդանաստու, Անդորրաւետ ուրախարար,
Զերով եթէ շնորհիւ ըզքաւոնեան վայրի կաղինս
Ընդ ատոք ոսկեփունջ հասկ երբեմն երկիր փոխանակեալ,
Ի բաժակս աքելոյեան բղնորագիւտ պարգեաց ոլկոյզ.
Եւ դուք, վարուեար մայրեաց շինից հուպ Շահապետք,
Հովտաւուն Պայք և Պարիկք և կուսապեզ Յաւերժհարսունք,
Օն նկայք երամելին, ըզձեր պարգեաւն նըւագեմ։
Դու նա՛ւ ոլ, որում՝ ի մեծ երեքարձէն կոփեալ նախկին
Ցամհէին բրեթաց երկիր ձի փոքնչելով բնդոստոստեալ,
Պխիդոն, և անասունաց պետ պահապան դու բնակաւար՝
Ոմ բիւր դուարակ ձիւնաթոյր բղդեզ գալար լիզեն կէայ։

Բնագիր

Quid faciat laetas segetes, quo sidere terram
Vertere, Maecenas, ulmisque adjungere vites
Conveniat, quae cura boum, qui cultus habendo
Sit pecori, apibus quanta experientia parcis,
Hinc canere incipiam. Vos, o clarissima mundi
Lumina, labentem cœlo quæ ducitis annum;
Liber et alma Ceres, vestro si munere tellus
Chaoniam pingui glandem mutavit arista,
Poculaque inventis Acheloïa miscuit uvis;
Et vos, agrestum praesentia numina, Fauni,
Ferte simul Faunique pedem Dryadesque puellae:
Munera vestra cano. Tuque o, cui prima frementem
Fudit equum magno tellus percussa tridenti,
Neptune; et cultor nemorum, cui pinguia Ceæ,
Ter centum nivei tondent dumeta juvenci.

Ի՛ւ հաւնձք զըւարթք առնիցին, ով Մեկենաս,
Եւ ընդ արմ առաեղք հերկել զարտարուց
Եւ զուգել զորթ ընդ նըչդարի իցէ անկ,
Առից երգել. զինչ արջառոց հեթեթանք,
Եւ զինչ խաչին հոգ, և քանի իսկ հըմուտ
Ակաւառպետ մեզուին ի բոյծ խրնդրի վոյթ։
Որք բզաահաւն ով զուք վարէք ընդ երկին,
Ջահք աչխարհի լուսապայծառք, բզաարին.
Անդաբատեա և Դեմետրէ կենաձիր,
Եթէ չնորհիւ ձերով երբեմըն երկիր
Ընգաւոնեան գիտաց ատոք ընդ հասկին
Ընվայրենի փոխանակել ըզկապին,
Եւ ողկուզացն այն լինչ գտելոց ի կայլակ
Ջաքելովեանն ուսաւ խառնել ըզրաժակ.
Եւ զուք խնամոզք զեղջկին չինից Շահապետաք,
Պայք և Պարիկք, Յաւերժհարսանց զուգահեռք,
Ան իս մատիք, ի նուագ զընծայս ձեր առնում.
Եւ զու եւս ով Պխեդոնէ, որ ի քում
Կոփեալ երկիր յերեքարձէնդ ի յրատուր,
Չան նորատեղծըն զամեհին երիվար.
Անտառաբնակդ, ում ըզյուռթիս երինջք բիւրք
Ընդալարիս Կէայ լիսեն ձիւնաթոյրք։

Այս համեմատութենէս յայտնի կը տեսնուի նախ՝ թէ հայկական դիւցազնական ժեժաչափն աւելի համապատասխան է լատին վեցոտանւոյն, քան թէ Հիւբիսեանի պաշտպանած փոքրն կամ ժեռատանոտնեայն։ զի չնայելով՝ որ Բագրատունին տեղ տեղ ըստ իմաստին ածականներ կամ հոմանիշ բառեր յաւելցուցեր է, սակայն և այնպէս կը զուգընթանայ բնագրին, և աւելի ժեժավայելուչ է։ Իսկ Հիւբիսեանն՝ երազոտն նժոյգի նման կրկին քայլեր կ՚առնէ, բայց և այնպէս չի կրնար համընթանալ իր բնագրին։ Ր. դիտելով որ Հիւբիսեան իր նախորդին բառերն յաճախ գործածած է, սակայն և այնպէս այդ բառերն և բացատրութիւնք՝ Բագրատունեայ տողերուն մէջ աւելի մէկզմէկ գրկած [1] և իրարմով դաշնակաւորուած են, որով տողերն եւս վեհագոյն և վեհագոյն կերպարանք առած։ Գ. Հիւբիսեանի թարգմանութիւնը պարզ է և ամենուն հասկնալի, զի սովորական է. իսկ Բագրատունեայն գուցէ ոչ ամենուն դիւրահաս՝ բառից և բանից հոծ փոխադրութիւններու և նորակերպ ստացուածոց համար, զոր սովոր է ընել՝ չարամանութիւնը թէ դաշնակաւոր և թէ վեհ կամ անսովոր գործելու նպատակաւ։ Յամենայն դէպս՝ Բագրատունին ոչ միայն իր բրած գիւտին՝ այլ և անոր զարմանալի գործադրութեամբը կը վնէր նախնեաց ժեժաչափ դիւցազներգութեան, այլ և օրուան անգերազանցելի դիւցազներ։ Վերջնական յաղթութիւնը տարած էր արդէն. զի ոչ միայն իր ժեժաչափ Մեկենասէն, այլ ամէն կողմէն տարեգնիներով կը պահէին զինքը, և կը հնչեցնէին իր անմահ երգերը. ուստի ուշ կամ շուտ ընդհմտահասներն եւս իրեն պիտի հետեւէին՝ դէպ ի հայկական Ովմպոսը, դէպ ի բարձրն և վեհը։

---

1. *Այս նկատմամբ դիտենք որ Հիւբիսեանի 4րդ տողին սկիզբը Առից երգել յարմար տեղը դրուած չէ, զի հետեւեալ տողերում թուարկած բաներն, որոնք ըստ բնագրին և ըստ Բագրատունեայ այդ բային տակը կ՚երթան, հետի ինկած են կամ դուրսը ձգացած։ Այսպէս նաեւ 8րդ տողի ըզտարին շատ հետի ինկեր է իրեն ըզտանուն ածականէն և յատկացուցիչէն, ինչպէս 7րդ տողի Ո՛վ դուք կոչականն՝ իրեն անուներէն յառաջ։ Սակայն այս արդիւնք է յանգաւորին։ Իսկ Բագրատունեայ 2րդ տողի Յի՛մ արփի գործածութիւնն եզական բան է, և առանց լատին բնագրին՝ բնաւ պիտի չհասկցուէր, թէ եղանակ ըսել կ՚ուզէ թարգմանիչը։*

Ցերեւի, նոր մեռոյից ալ առաջինը կ'ըլլար Հ. Գ. Ալիշան — որը սահմանուած էր լինել նաեւ ապագային ամենէն գերազանց բանաստեղծն, ինչպէս Բազրատունին եղաւ անզերազանցելի ստացուածին և Հայկազեանը — որ նախ յամին 1847, այսինքն է Մշակականոց հրատարակութեան տարին, դիւցազնական այդ հաւժկու չափով կ'անմահացնէր [1] Յակոբ Զէլէպւոյ մահը, որը կարելի է նկատել իբրեւ հրաշազան նախերգան մի Բազրատունեայ էրգաբան լեզու յորդոր, և այլն, արտառոյ եղերերգութեան [2]: Նոյնը յաջորդ տարին կ'ազէր [3] Հայոց աշխարհօր արքայի մահը, իջեցնելով Դարանաղեաց լեռներէն հայկազուններու արտառուց գետերը: Այն տարին Արտպետն Չէլեմեանը նոյն առնական չափով կը հնչեցնէր [4] Գնունի Դաւիթ և Գաւրգէն հազարաններու նահատակութիւնը: Յաջին 1849 տաճկահայոց ամենէն կորովի և ինքնաշնորհ բանաստեղծը՝ Մկրտիչ Պէշիկթաշլեան՝ Բազրատունեայ մատուցած դիւցազնական քնարը արիի ընելով իրեն գիշերամաքերուն, կը յօրինէր իր երկու անդրանիկ տաղերը [5], որոց միկով կ'երգէր — Վասիորանի կապուտ ափունքէն — Հայոց դիւցազուիքը, իսկ միւսովն Արտաշիսի առագնոյ գրօսանքը, որ կը սկսի.

« Եկէք ի դաշտ իմ քաջազունք, դողի տուք խաղմից յատպարէզ »...

Նոյն տարին Հայոց Հայրիկն ևս զմայլած Բազրատունեայ բրած գիւտին և քնարի վրայ, իր նամակին հետ ուսանողաց գովեստ մ'ևս [6] կը յօրինէր այդ չափով և Վասպուրական արծուի թեւերով կը հասցնէր իրեն, ըսելով ի միջի այլոց.

« Քաղցրալուր քնար քոյին գրաւեաց զոգի իմ մրատիւր...
Յանկեզար նոր փոխհամուն յայտնեալ Մեսրոպ հրաշագրաւեաց,
Ըզարարքս այլում ձայնի յիւրըն փոխեալ հերքաշապէս:
Ահա քեզ աչակերտիլ ես յօժարիմ յառաջագոյն
Հետեւեալ սիրազապէս քոյդ ընթացից նախաշաւիղ »...:

Նոյն տարուայ Ապրիլ 27ին Մխիթարեան Ակադեմեայն մնհատան հարիւրամեակի առթիւ՝ Հ. Գ. Ալիշան մի և նոյն չափով դեղեցիկ գրուած մ'յօրինած է [7], նուիրագործելու համար հիմնադրիս այդ դէպքով արուած կամ յատկացուած վերադիրը՝ Լուսալուորդ: Երկու անանուն քերդուածներ ալ նոյն տարւոյն Ա. Թուի մէջ (էջ 1 և 29) հրատարակուած են, որոց վերջինը Թարգմանութիւն է Վիրգիլիոսի Աղեկորդաւանի Գ. գրուագէն, այն է՝ Պոլիոն: Հաւանօրէն Հ. Ալեքսեոս Գաւրգենեանին ըլլալու է, զոր ըրած է իրեւ նախափորձ մը Թարգմանութեան: Այո, Հիւրմիւզեանն ևս, որ ի սկզբան ամենէն զժուարահաւանն էր դիւցազնական չափին, վերջապէս ինքն ևս յաղթահարած Մշակականոց Թարգմանութեան սկնսխոիր վայրէն և գեղեցկութենէն, երեք տարի վերջ անձնատուր կ'ըլլար անոր: Մնանաւանդ թէ այդպիսի պատուարեր պարտութեան մի վրէժը՝ նորագանչ քերթուածով մի, այն է՝ Բուբրատաւիր Արկղրաւոյ, կը լուծէր: Ինքնագիր երկ մը՝ որ ինչպէս նիւթի նմանութեամբ՝ այսպէս և բանաստեղծական խանդով, չափական արուեստի կատարելութեամբն ու ընտիր հայկաբանութեամբը Մշակականոց Թարգմանութենէն չատ վար չէր մնար: Բազրատունին իսկ անշուշտ ուելի խնդացած լլլալու էր՝ քան թէ խանդացած այս ազնիւ մրցութեան վրայ: Ես ուելորդ կը համարիմ ուրիշ օրինակներ ժէջ բերել, վասն զի սոնք իսկ բաւական ապացոյց են նախնեաց դիւցազնական սանաուարին սուղ ժամանակի մէջ ընդհանուր կերպով տարածմանն և ընդունելութիւն գտնելուն: Ահաւասիկ Բազրատունին իրեւ տաղաչափ, և իր տաղաչափական գործի մեծ արժանիքը: Տեսնենք գինքը այժմ իրեւ քերականագէտ:

Ինչպէս մարդիկ մարդեր կը ծնանին, այսպէս ևս գործք՝ գործս: Սակայն ժամանգականին հետ՝ բարեշրջութեան օրէնք մ'ալ կայ, որով ծննդոց հանգոյն՝ ծը-

---

1. Տես Բազմ. Ե. տարի, էջ 230
2. Անդ Օգոստ. 30. էջ 305:
3. Տես Բազմ. Զ. տարի, էջ 36:
4. Անդ. Զ. տարի, էջ 122:
5. Անդ Ի. տարի, էջ 102 և 362:
6. Տես Բազմ. Ի. տարի, էջ 309:
7. Բազմ. Ի. էջ 146:

նուաճ գործերու մէջ եւս կ'արտասխսլի երկատեսակ վերաձնութիւն. այսինքն է՝ նոյն, որ կը յառաջագոյն հնոյն արմատէն՝ ինչպէս պատուղը ծառէն, և հինը՝ որ կը վերակենդանանայ նորին մէջ՝ պահանջուած այն կատարելութեամբը, զոր կու տան հանճար, ժամանակն և պարագայք։ Մենք տեսանք, թէ ինչպէս Մխիթարայ Գերապանութիւնը ձնաւ երթեմն Ջամչեանի քերականութիւնը, և փոխադարձարար կենդանացաւ և կատարելագործեցաւ ապա մեզմով։ Այսպէս վերջինս ալ ձնաւ Աւետիքեանները, և Աւետիքեանով վերկենդանացաւ և կրնց զգալի գարգացում մը։ Իսկ այժմ Բազրատունեաց Զարգացիոց կոչուած քերականութիւնն է՝ որ կը ձնանէր Աւետիքեանէն, և կը բարգաւաճէր անկէց տարբեր ուղղութեամբ։

Բազրատունեաց այս գրականական և լեզուարանական հնոյն, այսինքն է՝ քերականութեանց Գերականութիւնը, որը երկնելու և ձնանելու համար՝ գրեթէ 40 տարի աշխատած էր, 1852 թուականէն ի վեր նիթ եղած էր արդէն չտեսբերքութեան։ Իսկ եթէ վրիպակաւ համարուեցաւ այն երբէք իբրեւ գպրոցական գասագիրք, հարկ էր որ լինէր նոյն իսկ ննթակայ ձախող քննադատութեանց։ Սակայն «ի պէտս գարգացելոց» յաւելուածն իսկ բաւական է — բաս խս — պարզելու, թէ որո՞նց համար և ինչ նպատակաւ գրուած էր այն։ Հեղինակն առաջ իսկ չգոհանալով՝ նախ 1847ին կ'ընծայէր ազգային գպրոցներուն որս բնաիր համառօտութիւնը, զոր և ժեծին քով Տարերք ² կ'անուանէր։ Այս «Զարգացելոցն» առաջին մասն իսկ՝ այն նպատակաւ դիւրընթեռ և պարզ լեզուով գրած է, աւանդելով նոր ձեով քերականական ութ մասանց բանի վրայ բոլոր պէտք եղածները ամենայն։

Այսպիսի հմուտ հայկաբանի մ'եւ այնքան տարիներ անխոնջ աշխատութեամբ պրպտողի ձեռքով յօրինուած Գերականութիւնը պէտք է՝ որ ունենար իր նախորդներէն այնպիսի առաւելութիւններ, որոնք իրենց տեսակին մէջ առյդ եզակնութիւն կազմէին հայ գրականութեան մէջ։ Այլ սա խնդրոյս համար պԲազրատունին իբրեւ քերական, և իր այդ անսովոր Գերականութեամբը հայերէն լեզուին և հայկաբանիս մասուցած վերջին ծառայութիւնը, հարկաւոր էր բաղդատել գոյն մնդրամատնօրէն նախորդ քերականութեանց, բայց մասնաւոր կերպով Աւետիքեանի Գերականութեան հետ։ Մեր գրութիւնը չի ներեր այդպիսի մի մանրամասն բաղդատութիւն, հետեւաբար այդ ընդարձակ ուսումնասիրութիւնը Թողով հմուտներէս, մենք մտադիր ենք հս բնդհանուր և համառօտ տեսութեամբ միայն գծել անոր պատկերը։

Առաջին և բնդհանուր բաղդատութեամբ մի ակնթարթ կը տեսնուի, թէ Աւետիքեանի Գերականութիւնն ոչ միայն եղած է ակրնառիթ «Զարգացելոց»ին, այլ և ինչ ինչ բաներու մէջ նոյն իսկ առաջնորդ։ Այո՛, Բազրատունին թէպէտ հայերէնի գերվարժապետ, թէպէտ և որպէս մանապետ Աւետիքեանէն աւելի ձեռագրեր պրպտած, սակայն և այնպէս չէր կարող բոլորովին մէկդի Թողուլ այնպիսի մի մեծ հեղինակութիւն՝ որ դեռ հինցած չէր, և կամ անտառնչորդ ընթանալ՝ առանց մեծամեծ գժուարութեանց հանդիպելու։ Բայց որովհետեւ Բազրատունին եւս ունէր իրեն յատուկ սկզբունքներն և համոզումները, ուստի երեք նորութիւններով կը բարձրացնէր — նախորդի ձգած ընդարձակ հիման վրայ — իր այդ հոյակապ շէնքը. որ ապա լեզուական յօրինուածոյութեանց ամենէն բարձրագոյն բարերն ըլլալու էր։ Այսինքն են Ա. յատուկ սրբել հնոյ գործածած ուսումնական՝ բայց անհարատար և մեր բառերը, ընդհանուր քերականութեան և բնական արուեստին վրայ եղած մեկնութիւնները, յայտնի իրաց կամ գործածութեանց մասին արուած պարզաբանութիւններն և անոյշ վրայ եղած նուրբ դիտողութիւնները, զոր ինքն իր աչերով կը համարէր. այսպէս նաեւ բազմախուզան բաժանումներն և բացատրութեանց երկարութիւնները։ Բ. Գերականական նկատելու տարբեր գասաւորութիւն և ուսուցման նոր ձեւ կամ մեթոտ։ Գ. Անդրադարձներ քերականական ութը մասանց բանի գանազան առմանց և եղանակաւորմանց, այլ նոյն իսկ նախնեացմէ պատչառապէս գործածուած և մինչեւ իր ժամանակ անծանօթ մնացած հրաշալի հայկաբանութիւններն և վերծանութիւնքը, այլոլք հանդերձ։

---

1. Այսպես կը վկայէ հեղինակն՝ Յառաջաբանութեան մէջ։
2. Որ իր գրած ընդհանուր ընդունելութեան համար՝ ութ անգամ տպագրուած և այժմ վերջին տպագրութիւնն իսկ սպառած է։

Բագրատունեաց դպծած քերականական նորութեանց առաջին կէսն, այսինքն է հնացեալ եւած մը անհետից բառերու բարձման կամ սրբագրութեան նկատմամբ՝ ունի կարեւորութիւն. իսկ ասոր յարակից մեւս կէսերուն բարձմամբը, ինչպէս և ասոնց գառաւորութեան և վարդապետականին նկատմամբ բռնած ուղղութեամբն որչափ որ մէկ կողմէն մեծ օգուտ բերած է, մեւս կողմէն ալ կարծէք թէ քան իւ մեք նուազ պատճառ տանելով կամ տրամաբանական բրած է «Չարդացելոցը», քան ինչ որ կը սպասէր իրմէն։

Միտքս պարզեմ։ Աւետիքեան — զէթ կանոնաց ուսանողութեան կամ վարդապետութեանց մէջ — ուելի բանաւոր (logique) է և՛ համակարգելի և՛ հրահանգիչ։ Բագրատունին կանոնները մեւոյն, կամ այլ և այլ ձեւերով ութ մասանց բանի նեւթական գործածութիւնները ուսանելու օտորութիւնն ունի ընդհանրապէս, առանց անոնց գաղտնի պատճառները որոնելու և յայտնելու։ Եւ այսպէս կ'ընէ ոչ միայն անձեռնհասութեամբ, այլ հասասաուած իւր այս սկզբան վրայ, թէ այս «ուսուցչաց անկ է մանաւանդ՝ քան քերականին», այսինքն է՝ որոնելն և պարզելը գանոնք։ Սակայն գիտելով որ ամէն ուսուցիչ՝ Բագրատունի չէ, և չկրնար ալ գիտնալ ամէն բանի պատճառը, մանաւանդ խնդրականներուանը. հետեւաբար քերականին անկ էր վերայայտնել կանխաւ գանոնք՝ զէթ ուսուցիչները անոնց հասու ընելու համար։ Եւ թէ ոչ Ա. և Բ. պրոց, այլ զէթ Գ.ին և Դ.ին մէջ պէտք էր բան իս այդպէս ընել, գի տանք պարզապէս պարզացելոց համար գրուած են։ Ասոնք ինչպէս որ և է կարգի ծանօթութիւնք եւ ուսումն, այսպէս և քերականական տանց իրենց պատճառին՝ սերտապէս գիտական չեն կրնար բլլալ. քանի որ կը պակսին գիտնալու ամենէն հարկաւոր բաները՝ պատճառը։ Հետեւաբար՝ այս տեսակէտով Բագրատունին քերական ուելի ուզած է հայերէնագէտ և հայերէնասոյց լինել[1]։

Երկրորդ նորութեամբը Բագրատունին չատ դիւրութիւններ ընծայից աշակերտաց հայերէնը դիւրաւ ուսանելու մէջ։ Այս դիւրութիւններէն գլխաւորքը կը համարուին՝ բան իս՝ նախ Ա. մասին մէջ ևօթն պարզ հոլովմանց հանճարեալ և մեթոտիք դասաւորութիւնն, ա, և, ի, ո, ու ձայնաւորաց համաձայն, որոց ապիւռակն ևս գրուած է յէջ 8, այսպէս և խառն հոլովմանց ապիւռակն ի հանգիպոյ, ի և Ա, Ո և Ա, ձայնաւորաց համաձայն դասաւորուած։ Բագրատունիին յառաջ եկող քերականները՝ ամանք բան քանց և առանց որոշ կանոնի մը, ամանք ալ ուղղականին այ, կամ ի, կամ ոյ

---

1. Ահա իր իսկ խօսքերը. «Ամենայն լեզուաց են օրէնք ինչ ընդհանուրք, հասարակք և անխախուտք՝ բան հասարակաց մտաց. են և օրէնք սեպհականք միոյ միոյ առանձինն, և բան իբաքանչիւր պատշաճի ընդ փոփոխութեամբ անկեալ։ Առաջինքն են նիւթ ընդհանուր քերականութեան, որ է գիտութիւն — եւ երբեմն փոփոխութեամբ անկեալ։ Առաջինքն են նիւթ ընդհանուր քերականութեան, որ է գիտութիւն, որ եւ ուսուցանել առեալս է։ Բայց քանզի կրտրդքն նիւթ մասնաւոր քերականութեան, որ է պատեհատ, զոր և

վերջաւորող ձայնաւորաց համաձայն առաջին հոլովումն, երկրորդ և այլն, կ'անուանէին. որով մէկուն առաջին կոչածն՝ ուրիշի մը քով երկրորդ էր կամ երրորդ, և այլն. հետեւաբար յոյժ չփոթ: Բագրատունին առաջինն եղաւ, որ հատատուն հիման վրայ դրաւ զանոնք. այսինքն՝ առաջին հոլովմունք կոչելով բոլոր այն անուանքը կամ բառերն՝ որոնց եղակի սեռականն այ ձայնաւորով կը վերջանայ. երկրորդ՝ որոնց սեռականն և ով կը վերջանայ, բաս այամ և մուանները ի ով, այ ով, և որ ի կարգին: Այս դրութեամբս բաւական է՝ որ աշակերտը բառարանէն գիտնայ, թէ այս ինչ բառախմբի սեռականի վերջաւորութիւնն է ա կամ այ, նա կարող է իսկոյն առանց չփոթուելու և վարանելու առաջին օրինակին պէս հոլովել հարիւրաւոր և հազարաւոր անուններ, թէպէտ և առնցմէ ոմանց ուղղականն առ վերջանայ, ոմանց ակ, և այլն:

Բ. Հանճարեղ է նմանապէս կանոնաւոր բայերու լծորդութեանց չորս խոնարհմանց պատկերը, զոր դրած է նա յէջ 134, դասաւորելով այս կարգի բոլոր ներգործական և կրաւորական բայերը — սահմանական եղանակի ներկայ առաջին դէմքին վերջաւորող ձայնաւորին համաձայն — ամ, եմ, իմ, ում: Այսինքն է՝ առաջին խոնարհման ենթարկել բոլոր այն կանոնաւոր բայերը, որոնց սահմ. եղ. ներկայն կ'աւարտի ամ ձայնաւորով. երկրորդին՝ ենթարկել եմով վերջացողները. այսպէս կարգաւ: Այժմ էր, որ նոյն իսկ աշխարհաբարեան քերականներ յարգէին միշտ Բագրատունեայ այդ երկու դասաւորութիւնները. որոնք ուսանողաց համար այնքան դիւրացուցիչ են և դիւրըմբռնելի, որքան պարզ և կանոնաւոր. և իրենց քմահաճոյ և բազմախառն օրինակներով չփորձէին նորէն ու նորէն չփոթել անոնց ըղձալը:

Ես համառօտութեան համար զանց կ'ընեմ խօսիլ Քերականութեանս մաս նորութեանց և դիւրութեանց մասին, զոր ի գործ ածած է Ա. Գլոյ մէջ, ուր մասնաւոր բաներին յատակ կերպով ուսանդելով, և Բ. Գրքոյն ալ պարզ և ընտիր չարադրութիւնն ուսուցանելու համար: Իրաւ է որ այդ երկու գրքերն — զոր Բագրատունեայ նոր բաժանման — կը համապատասխանեն Աւետիքեանի Ա. Գրքի առաջին և երկրորդ մասերուն. բայց նիւթերու յաճախ տարբեր դասաւորութեանց հետ՝ անթիւ բազմութիւնք իսկ նախնեաց ընտիր գործածութեանց և նոր ի նորոյ հաստատած օրինակներու՝ կրկնակի ածած են, կարգօք և կանոններով: Իսկ Գ. և Դ. Գրքերն և անոնցմէ վերջ դրուած 60 էջերէ բազկացած Յաւելուածն, որոնք գրուած են գործակցելոց կամ վար-

---

ածանցական են: Բագրատունին (յէջ 670) դրած ծանօթութեամբն՝ իբրեւ անհիշդ կը մերժէ իր նախորդին կարծիքը՝ ըսելով. «Զոր և է անուն՝ որ ի վերջէ չէ ածանցեալ՝ նախատիպ կոչել, և գոյակ ածանցեալն պարզ ասել, ոչ է ուղիղ տեսութիւն. զի ահա ըստ այդմ անգործ, գործաւէր՝ նախատիպ համարին, և գործօն, գործաւէր՝ պարզ, որ յայտնապէս իսկ չեն. զի նախագաղափար նոցա և պարզ՝ է անփոփոխ արմատն գործ, նախնական տիպ կամ կերպարանք բարդից և ածանցից յառաջոյ և զկին»: Ըստ իս Բագրատունեայ այդ ծանօթութեամբ հանդերձ՝ քերականական սահմանքը չեն փոխուիր, այլ կը խրթնին. վասն զի վերջի բառերուն ոչ միայն բաղադրեալ և բարդ բառերը՝ ածանցականներուն հետ կը շփոթուին, այլ և ան ժխտական մասնիկաւ կազմուած բառերն իսկ, օր. իմն, անապատ, անաստուն, և այլն, բարդ կամ ածանցական կը համարուին: Մինչդեռ Աւետիքեան (611, և 613 պարբերութեանց մէջ) զայս ամենայն այնպիսի որոշ կերպով սահմանած է, որուն վրայ տարակուսիլն իսկ աւելորդ է: Բ. գործ՝ ըստ լեզուաքննական օրինաց՝ է արդարեւ արմատ անգործ և գործաւէր բարդութեանց. բայց որովհետեւ խնդիրն ածանցականաց վրայ է, հետեւաբար ըստ քերականական գիտութեան թէ՝ բաղադրեալն անգործ և թէ բարդն գործաւէր՝ իբր նախագաղափար և պարզ կը նկատուին անգործական և գործաւորական կամ գործակատար ածանցականաց վերաբերութեամբ. ինչպէս օր իմն, սիրամարգ անունը՝ թէպէտեւ լեզուագիտական օրինօք բաղադրեալ է, սակայն քերականօրէն պարզ է՝ և ոչ թէ բարդ:

Այսպէս նաեւ ուրիշ զանազան նիւթերու մէջ դիտուած է՝ զի ուր որ Բագրատունին Աւետիքեանէն կը շեղի և քերականական մեկնութեանց մէջ կը մտնէ, կամ երկու սահմաններէն կը շփոթէ, և կամ կը դիէ: Օրի. աղագաւ, թիւ 1224 անորիշ և անցեալ դերբայից հայցական դրութեան մեկնութեան մէջ, թիւ 1233, բայիւ՝ երրորդէն յառաջին դէմքի յանկարծ փոխուելուն պատճառը, զոր ինքը հայացի ոճին սեպհականն կը համարի. սինչդեռ յուն. և լատին Մակաբայեցին և Գործ. Առ. նոյնպէս ունին. — թիւ 1128, զ և առ նախդիրներու մասին, որոց ի միասին գործածութիւնը բոլորովին աւելորդ և անպատճառ կը համարի. — թիւ 1127, որ յարաբերականին՝ իբր յարաբերեալ՝ նախադաս գործածութեանը: Այսպէս ՚ տառի նկատմամբ, զոր Բագրատունին երբեմն բաղաձայն կը համարի, և յ տառին՝ զոր երբեմն բաղաձայն և երբեմն ձայնաւոր լինել կ'ուսուցանէ, հետեւելով Զամչեանի (տես. Քեր. եր. 476): Մինչդեռ Աւետիքեան իրաւամբ գիտել կու տայ, թէ ՚ միշտ ձայնաւոր է, և թէ նախնիք երկու կամ աւելի ձայնաւորաց տեղ և տափակ հնչումը մեղմելու համար հնարած են յ: Ուստի, ըստ այմ, աւելի անձայն ըսուելու է երբեմն — օր. իմն, բառամիջում եւ բառին վերջը և երկու ձայնաւորաց մէջ դրուած ժամանակ — քան թէ ձայնաւոր:

ժապեռազ և վարդապետաց համար, ստարազդի լեզուագիտաց իսկ նորանոր տիեզերք մի կը բանան առաջի: Հաս է որ տիրապէս կ'արտահայտէ Բազրատունեաց հայերէն լեզուամքերից վրայ իշխող հոգւոյն հետ՝ նաեւ անոր ամենամեծ արդիւնքը, կամ լաւ եւս՝ գործի մեծութիւնը: Հաս ամփոփուած են ոչ միայն Ս. Գիրք, այլ և հին քերականութիւնքը, բառարաններն և ինքնագիր և թարգմանուածոց մատենագրութիւնքը բոլոր բոլանդակ, իրենց ամենընտիր ձեւերովն և ամենակերպ վայելչութիւններով: Իսկ Բագրատունին ոչ միայն իրրեւ քերական, իրրեւ կարգադրիչ միտք՝ պիտոյած է, չըմեմ ասելծել՝ այդ լեզուական տիեզերքը, այլ քերականական նիւթոց և բաղդատութեան օրինաց համաձայն և պատշաճ կերպով դասաւորել ու կարգաւորել. մանաւանդ թէ համաձայող արհեստական նման անոնց առաւերակոգմանքն իսկ լուսաւորել: Ո՛չ ոք յառաջագոյն կատարած էր դասական լեզուի այդպիսի մի բազմաթեւանդակ գործ: Այո՛, «Զարգացելոց»ին համար միայն կրնանք ըսել թէ է հայկաբանութեան ամենահարուստ գիւտարանը, թէ է մեր նախնեաց բազմադարեան մտաւոր և լեզուական գանձուց ամենէն ճոխ թանգարանը, որոց իւրաքանչիւրին անունն ևս առյնթեր արձանագրուած է յաճախ, և երանի թէ ըլար միշտ: Սակայն համառօտութեան համար չատ անգամ ալ նշանակուած չեն մէջ բերուած օրինակաց քով՝ անոնց հեղինակաց կամ մատենից անուանքը:

Որչափ որ ալ Քերականութեանս այդ մասին ամէն մի էջը գեղեցիկ գոհարներ կ'ընծայէ գործածողին, սակայն յիշեալ Յառաջաբանէն Յաղագս առաքից, Բարդութեանց և Ածանցմանց ամենէն մեծագոյն եւ գեղեցկագոյն նորութիւնը կը կազմէ, ըստ իս: Քերաւի՝ գարուն իր վարդամատն ձեռօք այնքան համառատամ ծաղիկներով գեղազարդած չէ երբէք դաշտերն և բուրաստաններն, ինչպէս Բագրատունին ծաղկաւէտ գործած է ու զարդարած այդ բիւրաւոր բարդութիւններով և ածանցականներով մեր գրաբարը, մանաւանդ իր գրական գործերը: Անոնց պատշաճ գործածութեան և նորոց վայելուչ կազմութեան շնորհիւ — զոր ուսոյց Բագրատունի — ոչ միայն իր, այլ և՛ իրմէ յետոյ տաղերը՝ նախնեացմէ անգամ գերազանց հանդիսացան և գեղեցիկ. վասն զի Ն. գարու սակաւաթիւ ու պարզ բառերէն աւելի դոքա են, որ կը կարեն և կազմեն բանաստեղծութեան գեղանկար պատմուճանը կամ յատուկ բարբառն. եւ դոքա են, որ պաշտօն որ և է տալին կու տան հիանալի ներդաշնակութիւն, բարդ գաղափարներ և կենդանութիւն:

Յաշխոյժ 1479 թուականէն սկսեալ ց1500՝ ածանցական մասնկանց վերաբերեալ բանասիրական մասը, զոր ինքն Ս.Ա. հատածներու [1] բաժնած է, ըստ մեծի մասին նոր են և ուրիշ քերականաց քով չեն գտնուիր: Դոքա քերականէն աւելի լեզուագիտական նուրբ ուսումնասիրութիւնք են, և գրաբար լեզուի հիանալի մանուածոյքն [2] և իմաստասիրութիւնը կ'արտաբերեն: Գարձեալ կրնանք ըսել՝ որ ատոնք մեր բառեր բանասիրաց հետ՝ օտարաց եւս նոր նոր ուսումնասիրութեան գեղեցիկ նիւթեր կը մատակարարեն: Իսկ Լ և Զ տառերու հնչման վարդապետութիւնը Մխիթար Աբբահօր Քերականութենէն[3] վոխ առած է Բագրատունին. սակայն ազգային հին գրչագիրներէն և հեղինակներէն բերուած փաստերը, զոր 18 էջերու մէջ կը բարդաւաճէ,

---

1. Ա.յսինքն են՝ Հայրանուն մասնիկք, Ստացականք, Գործականք Եղբակցականք Պատուհականք, Ոչնականք, Յատկանականք, Փոդոքչականք, Բայանուանք, և Նոյնական մասնիկք կամ ածանցներ մակագրուած:

2. Այս նկատմամբ գիտելու է սակայն, որ Բագրատունի հայերէն լեզուի չքնաղ գուցահանդէսը կատարեալ ընելու համար, ոչ միայն իր Յառաջաբանին մէջ բրած յայտարարութեան հակառակ՝ յաւելորդութեանց խուսափած չէ, այլ և ամէն ազգ զարուզութեանց և անտուոր բարդութիւններով եւս քան զեւս խտացուցեր է «Զարգացելոցը»: Դնենք վերջիններէն մի քանիսը, որոցմէ ինքն եւս անչուշտ ստակացած է. Յատկանձնական, երկանիրնական, ամենայատուկացադիտութիւն, հետադաձառնական, վերագոգաբնական-տարաբերք, և այլն:

Անչուշտ այսպիսիներէն զգուշացնելու աւելի՝ քան թէ զանոնք գործածելու համար հաւաքած է Բագրատունի. բայց ճիշդն ըսելով վայելուչ զարուզութիւններու ինքն եւս պիտակար է այնչափ՝ որչափ Քերականութենէն վոխ առած է Բագրատունին. սակայն ազգային հին գրչագիրներէն և հեղինակներէն բերուած փաստերը, զոր 18 էջերու մէջ կը բարդաւաճէ,

3. Տես Քերակ. եր. 475, Յաղագս յարմարագրութեան: Տես և Զամչեան, էջ 148:

իրեն խոր հմտութեան և սրամիտ դիտողութեանց են սեպհական արգասիք։ Արդ Հ. Աբահէն եթէ ուրիշ գրուածներ եւս թողած չըլլար՝ այս իսկ բաւական էր զինզ յաւէտ երախտապարտ ընել իրեն։ Սակայն ինչ որ ամբարած է Բագրատունի Վերականութեանը մէջ՝ նոյնը մարմնացուցած է մանաւանդ ի Հայկ դիւցազն։ Երկուքն եւս իրենց տեսակի մէջ անեմուն հայկարաններ են, և կը ներկայացնեն մեզ գարերու հայկական լեզուաւթերքն ու մատենագրութիւնը։ Միակ տարբերութիւնն յայտնի է, որ այն ամենայն՝ որք «Զարգացելոցի» մէջ իրարու վրայ կուտակուած դիզուած են, նոյնները գրեթէ առհասարակ Հայկին վրայ դիւցազնական ոտանաւորի և մարգարտաշար տողերու վերածուած և հիասքանչ գրուածներ յօրինած են ընդհակառակն։ Այս այլ կարեւոր կը համարինք ըսել՝ որ եթէ Զարգացելոցն յօրինելու համար 40 տարի մեջտեղ վատնելով նոխենաց մատենագրութեանց բուրաստաններու և մատենադարաններու մէջ թարթափեցաւ Խորենացւոյն, իսկ Հայկ դիւցազն յօրինելէն շատ յառաջ ալ, այսինքն է՝ 1832էն ի վեր Կ. Պոլսոյ գաւառացիներէն հայկական հնաւանդ բառեր հաւաքելու և ուսումնասիրելու զբաղած կ'աւանդուի [1]։ Հետեւաբար այս վերջիններս իսկ առաւելութիւն մի կը կազմեն Հայկին համար։ Անհատիկ քերականողէն՝ իր արժանեօքն ու թերութիւններով։ Ուսումնասիրենք համառօտիւ Թարգմանիչը։

Թարգմանութիւնք այնչափ աւելի ընտիր և յաջող, այնչափ աւելի ճիշդ և ինքնատիպ կը լինին, որչափ որ Թարգմանիչը տիրապէս տէր է այն լեզուին՝ զոր կը փոխադրէ, և մայրենի բարբառին՝ որով փոխադրածը կը հայացնէ։ Տարակոյս չկայ թէ ուրիշ անձնական բարեմասնութիւնք իսկ հարկաւոր են — օրինակի ազդաւ՝ հմտութիւն, կիրթ լսելիք, ճաշակ, հոգեբանական կիրք և կորով։ Առաջին երկու ընդհանուր պայմաններն այնքան հարկաւոր են Թարգմանութեանց մէջ՝ օտարն և տարաւեռն՝ ընտանւոյն հետ սերտիւ միացնելու, ինչպէս հարկաւոր է բուսական կամ կենդանական պատուաստի մէջ՝ այն գաղտնի զօրութիւնը, զոր բնաբանք գութ կամ խնամութիւն (affinité) կը կոչեն, քնոյն արիւնն և որակութիւնքը պատուաստին մէջ խաղացնելու։ Սակայն վերջին պայմաններով է՝ որ տիրապէս ինչպէս ծր և է պատուաստի՝ այսպէս եւս Թարգմանութեան մէջ բնագրի նախնական յատկութիւնները Թարգմանչի ազգային կորութեան համաձայն կ'որակուին և գեղաճաշակ պտուղներ յառաջ կը բերեն։ Եւ մեր հոյակապ Թարգմանիչն անձամբ տեսնելու և մօտէն ճանչնալու բաղդն ունեցած չեմ, սակայն անոր անգուգական Թարգմանութեանց մէն մի իջի վրայ խոր կերպով դրոշմուած կը տեսնուին արդէն իր բնական ու հոգեբանական դիմագծութիւնքը. որոյմէ կարելի է չափել նոյն իսկ իր Թարգմանութեանց էական յատկութիւններն, այսինքն են՝ ճշդութիւն, կուռ և կորովի հայկաբանութիւն, հրացայտ կենդանութիւն, և ինքնատիպ նորութիւն։ Բայց բան մ'որ ամենէն աւելի և ամենուրեք դուրս կը ցատկէ, է՝ անգուգական վեհմութիւնն և գաշնակաւորութիւնը։ Վերջին երկու յատկութիւններով — զորոնք կրնանք պարառութիւն կամ լաւ եւս իրր յառաջածագ (résultant) համարել բոլորին — կը գերազանցէ նա զամէնքը, մանաւորապէս դիւցազնական ոտանաւորաց Թարգմանութիւններու մէջ։ Բագրատունին — ինչպէս պիտի տեսնենք — ամէն ճիգ ու ամէն արուեստ ի գործ դրած է բոլոր իր շարագրածը թէ՛ շեշտաւոր և թէ՛ գաշնակաւոր ընելու։ Այնպէս՝ որ եւրոպական մեծ ազգեր իսկ խիստ քիչ Թարգմանիչներ ունեցած են, որ Բագրատունւոյ չափ խոր հասկացող և հաւատարիմ հանդիսացած ըլլան թէ՛ Թարգմանած բնագրին և թէ՛ իրենց մայրենի լեզուին։ Իսկ Թարգմանութիւնը բնագրին հաւատարիմացնելը, մանաւանդ երբեմն աւելի վեհմացնելը՝ Բագրատունւոյն միայն տրուած է կարծէք։

Սակայն այս ընդհանուր տեսութենէն անոր մասնական ապացուցութեանց ձեռք զարկած պահուն, դիս չատ փոքր կը գտամ այդ ամենամեծ Թարգմանչին և անոր Թարգմանած մէն մի գործի հանդէպ։ Կը վարանիմ մանաւանդ՝ որ մի գուցէ բան մը աւելի ըսած և կամ անճիշդ դատած ըլլամ։

---

1. Տես. G. Vapereau, Dict. univers. des contemp. Paris, 1858, ուր երես 68 կ'ըսուի Բագրատունւոյ համար. « En 1832 il revint à Constantinople pour y réunir le matériaux d'une grande épopée nationale, Haïg, à laquelle il travaille depuis cette époque »....

Բագրատունւոյ բոլոր գրուած գործոց մասին անխտիր և անպայման հիացումներ և գովեստներ միայն արտայայտելն ի հարկէ ոչ ճիշդ և ոչ ալ օրակիր կարէ լինել։ Ես ես կարծեմ թէ Բագրատունին իսկ, եթէ հարցուէր, ապահովապէս նոյն կարծիքն և համարումը պիտի չյայտներ իր գրական երկանց մասին, ինչպէս բազմաթիւ օրգուց հայր մ'ալ չի կրնար ըսել, թէ ամէնքն ես հաւասարապէս բարի են և գեղեցիկ, և այլն։

Մենք ուզելով, ուրեմն, ըստ կարելւոյն ճշդիւ որակել մեծ թարգմանչիս գործերը, երկու խմբի կը դասենք զանոնք։ Առաջինն՝ Ա. անունք՝ որք թարգմանութեան «Ջարգացելոցը» յօրինելէն կամ հրատարակելէն յառաջ. Բ. անունք՝ որոնք անկէց վերջը թարգմանուած են։ Արդ՝ առաջին խմբին վերաբերեալ թարգմանութիւններուն մէջ կը փայլի ընդհանրապէս տեսակ մը եղնկային ոսկեղինիկ բառերու և ձեւաւոր շարադրութեան հետ՝ նոյնպէս հիանալի գեղեցկութիւն մի, իր անսեթեւեթ պարզութեանը մէջ։ Ու այդ պարզութիւնն և վայելչութիւնն առուգիւ շատ աւելի կը գտանք Թուրփրատեայ Նկարագիրքին մէջ, զոր կարծեք թէ ոչ յամին 1830, այլ ես. դարու առաջին կիսուամ ապրող մէկու մը գրչէն ելած ըլլայ, և Յոհաննէի Տրամաբանութիւնն, որով գերազանցած կ'երեւի ոչ միայն Կովդնի հայերէն չքնաղ թարգմանութիւնն, այլ և ես. դարավերջին կատարուած իմաստասիրական և աստուածաբանական շարք մը թարգմանութիւնները։ Ուստի այս պարագային մէջ իրաւամբ գոհ կ'ըլլար Բագրատունի եթէ ոչ իմաստասիրական քարին, այլ անշուշտ գայն արտաբերող հայերէն լեզուին, նոր ձուլելով և դարբնելով թարգմանչաց կուռ կռանովը։

Իսկ այդ թուականէն որչափ որ վար իջնենք դէպ ի այսր, այնքան ես կը խտանան և կը խրթնին Բագրատունւոյ թարգմանութիւններն։ Իրաւ է, որ Վիրգիլիոսի և Հոմերոսի թարգմանութեանց մէջ — որոց՝ առաջագրած էր պարզութեանն ու ճըշդութեանն ըստ կարի հաւատարիմ մնալ — այնքան գգալի չեն այդ խտացմունքն և խրթնութիւնքը. սակայն և այնպէս առաջիններէն ունեցած առնց տարբերութիւնն իսկ բաղդատողք ակներեւ պիտի տեսնեն անշուշտ։ Երկու տող միայն մէջ բերենք վերջինէն, ուր Իլիականի երգիչը՝ Պրիամեան Պարիսի արքունի ապարանքէն գինեվառ ոտանին մէջ ընթանալը՝ կը նմանցնէ ձիու մը ասպատանէն՝ դէպ ի իր ծանօթ արօտավայրը դիմելուն.

« Ձեպ ի ճապուկ ծունկքն ի ծանօթ վարէ դնա վայրս յարօտ ճայկաց...
Կայտռելով և խաղալով, և ճիմքն ի ճիպաքն ճախրէին [1] »։
Ὑμφα ἓ γοῦνα φέρει μετά τ' ἤθεα καὶ νομὸν ἵππων·
Καγχαλόων, ταλέες δὲ πόδες φέρον·...

Բագրատունւոյ այս երկու տողին մէջ կը տեսնուին արդարեւ նախ խտացումն հոմանձայն բառից. Բ. փոխադրութիւն բանից առաջին տողին մէջ, որով ծանօթ ածականը՝ վայրին հետացած է, և յարօտը՝ վարիմ բայէն, ձեզի ալ ճապուկի վրայ բարդուած է՝ իբրեւ մակբայական առացուած վարէ բային, որով իմաստն խրթնացած է։ Ցարակոյս չկայ, թէ թարգմանիչն իր տողերուն ներդաշնակութիւն և կենդանութիւն տալու համար այդպէս վարուած է իր ամենապարզ բնագրին հետ. բայց շատ և շատ տեղեր ալ հայերէն լեզուի մթերքն յայտնել է իր դիտաւորութիւնը [2]։

---

1. Թոմաճանեան ունի կիսով նախընթաց տողին.

« Ակդ ըզգըլուխն առեալ ի վեր, և ծունկքն անարգել
Թուրցեալք ըզնա յարօտ ձիոց՝ ածեն հովիտն իւր ընդել...
Խաղայր խընդայր, և ընդ օտտանն ի հեպ ոտին խոյանայր »։

2. Ես այս բանս յայտնի կը տեսնուի նոյն իսկ փոքրիկ բաներու մէջ։ Օրինակի աղագաւ, արդարեւ բառը — օրուն համար նա կը վարդապետէ «Ջարգացելոց»ին մէջ (յէջ 466 ծան. 2, և յէջ 619, ծան. 1), թէ արդար բառին գործիականն է, և թէ հետեւաբար չեշտը վերջին վանկին վրայ կ'առնու, յիշեալ թարգմանութեան մէջ, եր. 111 տող 31, յորժ բառին յետադաս դնելով հանդերձ՝ դիտմամբ չեշտած է, այսպէս.

« Ո՛վ արգոյդ, յորժ արդարե՛ խափան լինիմ հապճեպ փուԹոյդ »։

Միլտոնի Թարգմանութեանն, որ 1860ին աւարտած էր՝ դեռ աւելի ճոխատաճիկ զգեստներ հագուցեր է Բագրատունին. ուր տող չկայ գրելէ՝ յորում ինն ու գոյական՝ չունենայ հռոմէական Դիկտատորներու պէս՝ իրեն կարապետող եւ հետեւորդ արբանեակները, այսինքն՝ ու կամ երկու ածականներ։ Ինչու է՝ որ այսպիսի և ուրիշ առատութեան տեղալու պատճառ մ'ալ թերեւս կարելի բլլար անգղիական բնագիրն համարել. սակայն և այս ոչ այնքան — ինչպէս ցոյց կու տան մէկ կողմէն Ադեմեանի արձակն և Մաֆֆէեայ իտալական ընտիր Թարգմանութիւնը, զոր Բագրատունի աչքի առջեւ ունեցեր է և գաղղիարէնին հետ գործածած։ Այս մասին ընդ երկար խօսելն աւելորդ է. դնենք երկու օրինակ միայն՝ իտալերէնով ի միասին.

Ogni dì mirabil cosa
Poichè assalto non temono le forti — Soglie e le ferree sbarre . . .
Յարգաւանդ երկրէն բուսոյց զազգ ազգ ընտիր ընտիր արմտից,
Ըզտեսիլիկս ազնուագոյնս ի տես, ի հոտ և ի ճաշակ։
. . . . . Gli arbori tutti
Più vaghi, più fragranti e più soavi
Crescevanvi rigogliosi . . .

Իմաստասիրական Թարգմանութիւններէն անցնելով ճարտասանականին, և չափականէն՝ արձակ շարադրութեանց, որոնք 1863էն և այսր լոյս տեսած են — որպիսիք են Ճաշակք ձեղին և յատիլ ճարտասանէ, Մասիլիոնի փոքր քառասնորդականքն, և Պոսիւէի դամբանականն ճառերն՝ այլով հանդերձ — Բագրատունեաց լեզուն դեռ աւելի ճոխ և ճապուկ գործած կը տեսնենք. սակայն և այս ոչ ամենուն մէջ հաւասարաչափ։ Թէպէտ և գրուածոցս առաջինը կանուխ Թարգմանուած է՝ քան վերջին երկուքը, սակայն և այնպէս անոր մէջ — բայց մանաւանդ Դեմոսթենեայ ճառերում — կըրկնին և երեք անգամ աւելի Թափած է Թարգմանիչն իր լեզուական ամբառ գանձուց մէջերքը։ Ինչպէս անապատ են և անհատասարելի հեղձն ճարտասանէ գերապուճին ճարտասանութիւնն և անով յայտնած իրքն ու կիրքը, այսպէս եւս են նոր հայ Թարգմանիչներէն անզուգականին գանձք հայացնող լեզուն և գրիչն։ Այդ ճառերու որ և է իմաստ՝ կարծէք Թէ առուգիւ մենք հանդիսատես կ'ըլլանք երկու գարմանալի մրցութեանց, այսինքն են՝ Դեմոսթենէս, որ անհատասար զօրութեամբ կը մրցի իր ախոյեանին հետ՝ ականպատակը ձեռք բերելու համար, և Բագրատունի՝ որ կը մրցի Դեմոսթենի հետ գոգցես նման զօրութեամբ մը՝ գինքը արժանապէս հայացնելու, կամ լաւ եւս հայկական մտահարուստ բարբառը՝ հելլենականին նախանձընդդէմ կանգնեցնելու։

*Բագրատունիէն դուրս ոչ ոք համարձակած էր այդպիսի մի պայքար մղել Թող Թէ յաղթել։ Իսկ սա ոչ միայն յաղթած է, այլ և կրնանք ըսել պանծանօք, Թէ գուցէ հայացուած Դեմոսթենն աւելի կրակոտ, աւելի զօրաւոր և հուժկու և յափշտակիչ եղած է, չնորհիւ Թարգմանչին այն ինքնատիպ ու ամենազան լեզուին, որուն վրայ աւելի կը զմայլինք՝ քան Թէ կրնանք բատ բաւականին բացատրել։ Աչէն մարդ գիտէ, որ ճարտասանը մի է, բայց անոր ճարտասանութեան կրից պէս բարբառն եւս բազմապատիկ։ Բայց գուցէ ըլլան շատեր՝ որ մեզ հետ հարցնեն, Թէ ինչպէս կամ ինչով աւելի գարմանալի բրաւ գայն Բագրատունի։ Ա՛ս այս պէտք է գիտել՝ որ Թարգմանիչը ներշնչուած և յուզուած մեծ ճարտասանի կրից յորդութենէն, մանաւանդ Թէ փոխադրուած Դեմոսթենի անձին և ժամանակի մէջ, յորդապոյն հեղեղ մ'եւս ինքը կը հոսէ իր անապատ չռեմարանէն՝ ճահաւոր և ատատկապոյն բանից և բայից, որոց առջեւ մենք իսկ ելեքտրացած կը մնանք։ Յիրաւի՝ նա համոզուած ըլլալով՝ որ բնագրէն բան մը պակսեցնելն աններելի է, բայց ոչ նոյնպէս աւելցնել ինչ ինչ պատշաճապէս առանց իմաստը Թիւրելու և ատ ի յուժգնութիւն. ուստի գտած է այնպիսի նորաձեւ բառեր և բացատրութիւններ, որոնք բուն Դեմոսթենի ոգին և կիրքերը կը շնչեն։ Եւ այդ բառերուն և շեշտին կրկին այժ տալու նպատակաւ՝ մերթ գեղեցիկ կուռակութեամբ և մերթ աւելադրութեամբ — որք հայերէնին միայն յատուկ են, և բնագրի մտքին ալ բնաւ չեն հակառակիր — գործածած է այդ Թարգմանութեան մէջ բոլոր երգմանց և հեգնութեան, հերքման և հաստատութեան, գովեստի և պարսաւի,

ծաղու և զարմացման, մերթ ատելութիւն զրգռելու և մերթ համակրութիւն, մերթ ոգեքանաց և մերթ գայթութի, այսպէս և աւազանաց, երգիծաբանութեան, բնութեան և արուեստի ամենահնար զարձուածներն ու ձեւերը[1]: Եւ այդ ամենայն այնքան վայելուչ, այնքան գեղեցիկ և ազդու կը գործեն իր թարգմանութիւնն, որքան գիտէ ինք ճարտար կերպով բերել և ազուցանել զանոնք, որքան կը պահանջեն հայ լեզուն և յոյն ճարտասանը: Եւ յամենայնի կը փայլի ընտիր հայկարանութիւն, կարծէք թէ Բազրատունը կը կարդանք՝ գերծ ամենեւին ասոր արուեստութիւններէն: Եւ այդ հայկաբանութեան կորովն և վեհութիւնն այնքան աւելի է, որքան որ խնամի է թարգմանած հեղինակը՝ մեր դասական լեզուին: Այնքան հնութիւն կը բուրէ այդ թարգմանութիւնն՝ որքան Ոսկեբերանի թարգմանութիւնքը. այնքան թարմ է նոր թարգմանիչն և ազատ հնոց յաճախակի կրկնաբանութենէն, որչափ նոր է և նուրբ իր ճաշակը, և լեզուն յարաճուն և յարափոփոխ: Եղնիկն իսկ եթէ ուգած ըլլար թարգմանել գԵմոսթէն և այն թարգմանութիւնն յանկարծ՝ յայտնուէր, ես կարծեմ՝ թէ Բագրատունին պիտի չկորանցնէր երբէք իր ինքնուրոյնութիւնն, և զղջալու ուրիշ պատճառ պիտի չունենար, բայց եթէ՝ զի իր նախորդէն աւելի ճոխաբան և հարուստ ուգած է երեւիլ. ասկայն և այս ի դէպ էր Դեմոսթենի: Վերջապէս ինչպէս երբեմն Դեմոսթէն ցոյց տալով այդ ճառին ընկճող փաստերն իր հակառակորդին՝ կը գոչէր. «Ա՛ռ կարդա, և ափիբերան լեր», մենք եւս այսօր կրնանք ցոյց տալ Բագրատունեայ թարգմանութիւնը Յունաց և Հայոց՝ ըսելով. Կարդացէք և զարմացէք, ով ազգեր:

Մշտավառ հրաբուխներն անգամ իրենց յորձնեռանդն կուրծքէն հալոցներ ժայթքելէն վերջ՝ ժամանակ մի կը դադրին և կը հանգչին, ապառած տեսնելով իրենց ներքին զօրութիւնները: Իսկ Բագրատունին այսքան և այսպիսի լեզուական գանձեր դուրս բերելէն վերջ իսկ՝ ամենեւին չէր ապառեր, չէր դադրեր: Ջերաւի՝ նա յիշեալ գործով ճարտասանութեան վերաբերեալ լեզուական ամէն գանձերն աւանդելէն յետոյ՝ յաջորդաբար կ'աւանդէր մեզ նաեւ արքային պերճախօսութեան, ողբերգութեան և պատմութեան հրաշազան գանձերն եւս: Եւ այս այն չքնաղ թարգմանութիւններով՝ որոնք իրեն միայն յատուկ են և հասարակութեան ծանօթ: Դժուար է գտնել թարգմանիչ մը, որ փորձած ըլլայ թարգմանել իրարմէ բոլորովին տարբեր մտածողութեանց վերաբերեալ այնքան գլուխ գործոցներ, մանաւանդ որոնք իր մշակած յատուկ մտածողութեան սահմանէն դուրս են: Իսկ Բագրատունին յաջողութեամբ ի գլուխ հանած է այս ամենայն: Արդ կամ այն է թէ սա այդքան մտածողութեանց ձեռնհաս մէկն էր, և կամ հմուտ էր անոնց վերաբերեալ ամէն բաներուն ու լեզուին: Վերջին կէտն, ըստ իս, առանց երկբայութեան է: Հետեւաբար՝ ահա այս է՝ որ կը զանազանէ տիրապէս ճշմարիտ հայկաբանն ու թարգմանիչը՝ սովորականէն:

Սակայն կայ և՛ ուրիշ կէտ մը՝ որուն վրայ պէտք չէ լռութեամբ անցնիլ, իր թարգմանչական գործը անթողջապէս դատած ըլլալու համար: Այսինքն՝ յունարէնէ և զաղղիարէնէ կատարուած այդ թարգմանութեանց մէջ՝ կը տեսնուի ակներեւ նաեւ ոճոյ զանազանութիւն[2], թէպէտ և բանաստեր ու բանահիւս թարգմանիչն թէ մին և թէ միւսը լաւ հայացնելու հսկայական ջանքեր խնայած չէ իր կողմէն:

---

1. Դնենք այդ ձեւերէն և ասացուածներէն մի քանիսը, որոնցմով լի են թարգմանութեանս ամէն էջերը:

«Ազատք և ինքնօրէն ազիկամիք, — վազվազակի եւ ընդ եւս, — համբուն նման, — արդար և հարթ, — Տէր օն անդր բացէ ի բաց, — անդ ուրեմն երբեմն, — առանց սրթալոյ և հինանալոյ և ոգի կլանելոյ, — յայնժամ ապա յայնժամ և առեալ և չաւառալ և գռեհ ածէ, — կարեւոր պիտոյս և հարկաւորս կացուցանէ ի փութրիչ. — առհմականօք բուսան բղխեցին, — խեղ և հաշմ ձեռն և ազդր, — պրկեաց զլացաւ դրժեաց դաշացն. — բան ի բան կարկառել, — յուռմարեալ նախամարդակ ածել ի մէջ դասատուն, — անցեալ ժամանակաւ ժամադիր ժամուք, — Ով երկիր և Արեգակն և Առաքինութիւն.— այլ ով ջնջանդ խոհերական — զգեղեցիկ առնապատկերդ և զծայրագոյն երրորդաթիւ հոպիտ խեղկատակդ անոյշ (մայր քո). — յորդորակ հրաւիրանաւն ակմբեալ բազմեալ կային. — Ե՛հէ եհէ, վա՛շ վաշ Անդամեան», և այլն և այլն:

2. Այսինքն է՝ գաղղիաբանութիւն, որ Մասիլիոնի փոքր քառասնորդաց մէջ աւելի զգալի է: Ոչ ոք այս բանիս համար իրաւունք ունի մեղադրել զԲագրատունի, որ թերեւս ամենէն աւելի գիտէր և կը զգայր հայկաբանութեան և գաղղիաբանութեան միջեւ եղած զանազանութիւնը. ասկայն և այնպէս տիրացեալ էր իրեւ հաւատարիմ թարգման՝ պահել նոյնպէս նոր լեզուի կամ բնագրի յատկութիւնները, որոնք պուած

Անշուշտ Բագրատունեաց ուրիշ բառ կամ բան չէր պակասեր. օր իմն, Թարգմանելու Ռաֆինի outrage բառը, սակայն նա նոր ժամանակաց բնագրի և բանաստեղծի միտքը լաւ արտայայտելու համար, Յեզարելի առուների նկարագիրն ըրած ժամանակն՝ այսպէս կը դարձնէ այդ տողը.

« Ի դարման ինչ անկարկատ բշնւառանաց Հասակին »։ Անշուշտ գիտէր դարձեալ՝ որ այդ բառը նախնեացմէ ուրիշ իմաստներով գործածուած է, բայց ոչ տգիտութեան կամ կարկատուքեամբ, ինչպէս որ Թարգմանած է Հիւրմիւզեան. բայց նա բնագրի այդ բառի այլաբանական իմաստն — յորում է բանաստեղծութիւնը — չհանգարելու համար՝ բշնւառանքի ճիշդ փոխած է զայն։ Այս օրինակս բառական ըլլայ այն բազմաթիւ նոր առմանց, որոնցմով Թարգմանիչը ճոխացուցած է հայերէն հին լեզուն՝ չնորհիւ նորերուն։

Մինչեւ հիմայ բաժներնէս կը տեսնուի միանգամայն, թէ Բագրատունի ինչպէս և ինչ բաներով ճոխացուցեր է յաջորդաբար իր շարադրութիւնն՝, որով և դժբաղդաբար խրթին ու մթին ըրած թէ ինքնագիր շարագրութիւնքը և թէ Թարգմանութիւնները։

Հետեւաբար՝ այժմ բնական կու գայ հարցնել նախ, թէ ի՞նչ էր պատճառն այդ բանին։ Արդեօք Թարգմանած բնագրե՞րն այդպէս կը պահանջէին, թէ ընդ հակառակն նա ինքն մտադրած էր վերագոյն պահանջ մ՚եւս լեցնելու, այսինքն է՝ նախ իր շարագրութիւնը ըստ ամենայնի վեհ և վսեմ ընել, և ապա Մխիթարեան գրաբարն ամենայն նորութիւններով գարգացնել։

Հարցմանցս առաջինը լռելեայն իսկ կը հասկցուի [1], սակայն բնագիրներն չարժիչ պատճառէ աւելի՝ նպաստամատոյց պարագաներ միայն կարող էին ընծայել առ այսապա ուրեմն բուն պատճառքն եղած են վերջինքս։ Եւ ստուգիւ, բայց ի Թարգմանութիւններէն — որոնց մէն մի էջ, մէն մի նորութիւն՝ զայս կը քարոզէ — Բագրատունին ինքնին միշտ կը գանգատի եղեր իր ժամանակակիցներէն ոմանց դէմ, թէ միակերպ որոշեալ թիւ մը բառերու և բացատրութեանց կը գործածեն. հետեւաբար ինքը տարբեր ուղղութեան կը հետեւէր։

Ընդելով որ իրեն համար ալ կային առանձնաշնորհեալ ու սիրելագոյն բառեր և սացուածներ, սակայն և այնպէս ինքը մեծ փոյթ կը տանէր՝ ոչ միայն անծանօթ Ջացած հազարաւոր բառերն, այլ և բոլոր զարտուղութիւնները վերացյայտնել և գործածական դարձնել՝ ըստ տեղւոյն և ըստ պատշաճի։ Իրաւ է՝ որ այս և փոխադրութեան ձեւոց յառաջելուն պատճառաւ Բագրատունեաց շարագրութիւնն երթալով վսեմութեան հետ՝ խրթին և անմատչելի եւս կը դառնար հետեւակ գրողաց, սակայն նա ինչպէս 1847 Թուականին նախնեաց դիւցազնական տաղաչափութեան, այսպէս այլ 1863–1865 Թուականներուն իր արձակ շարադրութեան յաղթանակը կանգնած էր արդէն։ Շատ հեքացողներ, և կրնանք ըսել — ինչ ինչ բացառութեամբ — ամբողջ տաճկահայոց գրագէտ դասն իր շուրջը բոլորած՝ Բագրատունեան դպրոցը կը պանծացնէին։ Այսպէս ահա իր երիցագոյն կրօնակից հայկաբաններէն ժառանգած և իր անսովոր տաղանդովը գերագոյն գագաթնակէտին հասուցած արձակ և չափական գրաբարն էր — զոր իրաւամբ կրնանք անուանել Մխիթարեան ճեմարանի ամենագան և ամէն բանի յարմար գրաբար [2] — զոր կը Թողոյր Բագրատունի իւրայոց, իբր անկապուտ ժառանգութիւն։

---

1. Բայց կ՚աւելցնենք և զայս, Թէ նոյն իսկ Բագրատունեաց վերջին Թարգմանութիւնն, այն է կեսարու Յիշատակարանքը — որուն 153 խզում անգութ մահն անմահ Թարգմանչի կենաց հետ գրիչն եւս ձեռքէն կը կորզեր — ասոր նպաստաւոր կ՚երեւի։ Վասն զի առաջնոյն, այն է Թեոփրաստի Նկարագրաց նման պարզ լեզու և ոչ գործածած է, այնու զի բնագիրն իսկ այնպէս գրուած է։

2. Ո՛վ կարծէր, որ տակաւին ըլլային ոմանք — և այն իսկ՝ քսաներորդ դարու նախադրանէն ներս մըտած ժամանակ — որ այսպիսի մի գրաբար գրականութիւն Բարբարիկ անուանէին։ Եւ որ աւելի զարմանալին է՝ Ե. դարու ոսկեղինիկ լեզուի վերակազմութիւնն իսկ այլոց ընծայել ուզեցին։ Մենք իսկ կը յարգենք Զալէխեանի, Գաթըրճեանի, Այտընեանի, Մ. Գարագաշեանի և այլոց արդիւնքը. որոնք փեբականութիւններով, բառարաններով, ինքնագրութեամբք և Թարգմանութիւններով մեծապէս նպաստեցին գրաբար լեզուի մաքրութեանը։ Սակայն պէտք չէ մոռնալ բնաւ, որ սոքա առհասարակ մեռատաներթդ

Այդ ժառանգութիւնն է՝ զոր պահեցին և չահեցուցին բազմապատիկ տոկոսեօք զոյգ հարապատ և զուգափառ Հիւրմիւզեանք, այսինքն է՝ Գ.երպ. Եդուարդ և Գ.երպ. Գէորգ։ Առաջինն իրրեւ մարմնացումն շնորհաց և քաղցրութեան՝ այնքան քաղցր և շնորհալից կ'ընէր չափականին հետ նաեւ արձակն, որուն մէն մի գրուածը, մանաւանդ Տելեմաքի թարգմանութիւնը կրնանք դնել առաքեան ժեղուի և Ա.արայրի խօսնակին՝ Եղիշէի քով։ Իսկ վերջինն՝ իրրեւ մարմնացումն զօրութեան և կորովի՝ տիրապէս ժառանգ կը հանդիսանար Բագրատունեաց, գրեթէ անոր նման չեչտով և վեհութեամբ շարունակելով ընդհատուած գործը։ Այո՛, Գ.երպ. Գէորգ Հիւրմիւզեանի համար միայն ի դէպ կրնանք ըսել, որ Բագրատունեաց լեզուի և գրչի կորովութիւնը ժառանգած էր, գերծ մնալով անոր թերութիւններէն։ Եթէ Աբրայութեան պաշտօնն և բազմավիշտ արկածներն ասոր ժամանակին և կորովին հետ՝ գրիչն եւս միջաբեկ ըրած չըլլային, ոչ միայն պիտի կարենար բազմաթիւ թարգմանութիւններով հաւասարիլ իր վարժապետին, այլ և՛ բնորոշ և անսեթեւեթ պարզութեամբը գերազանցել իսկ։ Նշանաւոր են գրաբարի մշակութեան մէջ դարձեալ Հ. Եփրեմ Սէթեան, Հ. Յարութիւն Ալգերեան, Հ. Ղեւոնդ Ալիշան, Հ. Գաբ. Այվազովսկի, Հ. Ալեքսենտիոս Գաւրգէնեան և ուրիշներ, ծանօթ իրենց տպագրած և անտիպ գործերով։ Գրութիւնս չի ներեր քննաբանօրէն որակել ասոնց իւրաքանչիւր գրչի և լեզուի բնորոշ յատկութիւնները. հետեւաբար՝ անոնց կենսագրողաց կը թողունք խօսել այդ մասին։ Իսկ մենք այս գլուխը դեռ չկնքած՝ կը յանձնենք ազգային լեզուաւէրներուն, որ ձեռքէ չթողուն և լքանեն երկու հարիւր տարիներու անդուլ քրտինքով և երկամբք յղկուած և ադամանդէն աւելի փայլ և գեղեցկութիւն առած մեր նախնեաց այդ անգին գոհարը, որն այնչափ ազգային է՝ որչափ Մխիթարեան։ Եթէ արդի սերունդն անձեռնհաս է, և կամ այլ եւս անյարմար կը դատի գործածել զայն, գէթ չանանք կենդանացնել աշխարհաբարին մէջ, ինչպէս Յոյները իմաստութեամբ որոշեցին կենդանացնել և մշա-

---

ժամու մշակներն եղան դասական գրականութեան մեր այգւոյն մէջ. այսինքն թէ երբ արդէն Ակերեաններէն Աւետիքեաններէն, Զախլախեաններէն, Թոմաճանեաններէն ու Բագրատունիներէն մշակուած, ուռճացած ու առաքացած էր այն։ Ինչո՞վ ուրեմն յետինք՝ առաջինք եղած կը համարուին և առաջին մշակներն իրր ապարդիւն կը հրապարակուին։ Անշուշտ անոր համար, որ ուր ոսկեդարեան բառ ու բան առձեռնպատրաստ կայ՝ միջնադարեանը չեն գործածեր. սակայն քանի՞ր յաջողեցան այս բանիս մէջ։ Ինչո՞ւ նոյնը չըրին ուրեմն Ե. դարու երիցագոյն թարգմանիչներէն վերջ եկող դարերն, հանճարներ, գիտութիւններ, գեղարուեստներ, կենաց նորանոր պայմաններ և ժողովրդական պահանջներ. որպէս զի գրաբարը կամ գրոց բարբառը չլինի միակերպ և մեռած լեզու. վասն զի ամէն դար ունի իր յատուկ հասկացողութիւնն ու լեզուն։ Հարկ մը կա՞ր արդեօք այսպիսի բանի մը վրայ դառնալու այժմ, քանի որ թարգմանչաց գրականութիւնն ալ բարբառն ալ բառերն ալ առձեռնպատրաստ կան, և կրկին Հայկազեան հառաչանքներով ազգին արդէն ծանօթացած են։ Դարձեալ ազգիս ամբողջ գրագէտ մարմինէն քանի՞ր արդեօք ունեցաւ հետեւող և մշակող այդ ոսկեղէն գրաբարին. և կամ ոսկեդարեր ունեցող եւրոպական ազգերէն ո՞րը պահեց զայն։ Մենք չենք ուզեր ծանրանալ դեռ ուրիշ կէտերու վրայ. սակայն կը զարմանանք միայն, որ ներկայիս այնպիսի բանի մը նշանակութիւն կը տրուի, որն արդէն կորուսած է իր նշանակութիւնը. այնպիսի խնդրով մը կ'ուզեն զբաղեցնել ազգային մտմտուքը, որուն արդէն իրենք ի վաղուց հրաժեշտ տուած են։ Չակատութիւն չէ՞ արդեօք, ոսկեղէն գրաբարը բարձրացնելու համար՝ մէկ կողմէն արտաքսել գրաբարէն յաջորդ դարուց բառերն ու բարբառը, և միւս կողմէն ջերմ պաշտպան հանդիսանալ աշխարհաբարին, իբր յարմար բարբառ արդի գրականութեան։ Այո՛, վասն զի ինչպէս միջին դարուց գրաբարը տարբեր է ոսկեդարեան գրաբարէն, այսպէս եւս աւելի այժմեան աշխարհաբարն աննման է նախնեաց ոսկեօրէնին։ Ուրեմն ինչպէս ժամանակն ու գիտութիւնք այսօր իրր անհրաժեշտ կը համարին նոր աշխարհաբարի գործածութիւնն, այսպէս ալ վիճակեան դպրոցն և իր հետ ժամանակն իրաւամբ կարեւոր կը դատէր նոյն իսկ Ե. դարէն վերջ ստեղծուած բառերու և բացատրութեանց գործածութիւնը։ Մեր երիցագոյն թարգմանիչներն եւս այսպիսի պահանջներէ մղուած՝ գործածած են յաջորդաբար սեմական, պարսկական և յունական բառեր ու բացատրութիւններ։ Բառերը կ'ըսենք, և ոչ թէ բարբառ. վասն զի Մխիթարեան դասականներու լեզուն այնչափ կը տարբերի միջնադարեանէն, ինչպէս երկինք յերկրէ։ Հետեւաբար արտաքսողական ուղղութիւնն աւելի վնասակար կրնայ ըսուիլ գրականութեանը՝ քան թէ օգտակար, զի կը կապէ գրիչները։ Եւ այդ վնասը կրկնակի եղած է ըստ իս, այսինքն նախ միշտ մի և նոյն բառերու և ոճերու գործածութեամբ՝ միօրինակութեան և արձնացման դատապարտած կ'ըլլան հայկական լեզուն և մատենագրութիւնը։ Երկրորդ՝ ԺԹ. դարու սերընդեան՝ Ե. դարու լեզուովը միայն ուզել մատենագրել, է ըսել, թէ թարգմանիչք ամէն բառ ու բան ի գրի առած ըլլան և կամ յաջորդ դարերու աւանդածներն հարազատ հայերէն չըլլան, որ հիմարիտ չէ. վասն զի ժողովրդեան խաւերուն մէջ մնացին դեռ անբաւ հին բառեր և ասացուածներ, զորս վերջինքս առիթ ունեցան գործածել։

կել հելլենականը՝ այժմու առիւծա կոչուած կենդանի բարբառին մէջ։ Ես համոզուած եմ արդէն, Թող ուրիշներ եւս համոզուին, որ դժուար չէ հասնիլ այդ բանին. և թէ՝ չնորհիւ այդ գոհարին, որ իսկապէս հայկական է, աւելի պիտի կատարելագործուի և փայլի աշխարհաբարին հետ՝ նոյնպէս և արդի գրականութիւնն, եթէ գրականապէս հոգ տարուի։ Նոր գրագէտք իսկ այս վախճանիս պէտք են ձկտիլ, ինչպէս ձկտեցան երբեմն մեր Թարգմանիչներն, անշուշտ նորը՝ հնոյն վրայ ձեւելով և գարգացնելով ։

ԳԼՈՒԽ Ե

Աչխարհաբար նոր գրականութիւնն և անոր պահանջը. — Գաւառաբարբառներն և անոնց հնութեան և որպիսութեան պատճառը. — Նախնեաց ամկօրէնի կազմութեան պատճառքն ու կրած յեղափոխութիւնքն. — «Քննական քերականութեան» անոր մասին ունեցած արդիւնքն և պէս-պէս կարծիք. — Նախամխիթարեան ամկօրէնն և անոր անկանոն, անգիր և խառնակ կացութիւնը։

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԸ լինելով այսօր մեր նոր գրականութեան ընդհանուր և տիրող ներկայացուցիչը, հետեւաբար կ'արժէր՝ որ շատ բան գրուէր նաեւ անոր ծագման, կազմութեան, գործածութեան և այլ և այլ ժամանակաց մէջ կրած փոփոխութեանց մասին։ Սակայն մեր նիւթէն խոտորած պիտի ըլլայինք՝ եթէ ուզէինք այդ բաներուն վրայ ծոխանալ։ Աւասի ստիպուած ենք հակիրճ տեսութիւն մը միայն ընել այդ կէտերուն վրայ, ըստ որում վերաբերութիւն ունին մեր խօսելիք նիւթին հետ և անոր սահմաններն որոշելու բնաւորութիւն։

Աշխարհաբարը կամ արդի հայերէն լեզուն, որչափ որ այլ ըստ ինքեան նախնեաց ամկօրէն լեզուի կամ գաւառաբարբառի ծնունդ է՝ ինչպէս երբեմնի գրաբարը, սակայն ըստ որում գրական գործի՝ ոչ միայն իր քերականական կազմութիւններովն և կանոնաւորութեամբն, այլ նոյն իսկ ժամանակի հարուստ միջոցաւ կը տարբերի ամկօրէնէն։ Սա ամբողջ ամիկ ժողովրդեան կենդանի խօսքն է, կամ լաւ եւս անկոպար մտացը՝ բնական բայց ազատ արտայայտութիւնն։ Իսկ աշխարհաբարն անոր կիրթ և գարգացեալ մասին միայն սեպհական բարբառը կը համարուի՝ գրի առած և տարածեալ։ Աւուգիւ՝ այսպիսի զանազանութիւն մը՝ որուն վրայ ոչ ոք կը տարակուսի այսօր՝ գոյութիւն ունէր անտարակոյս նաեւ միջին և նոյն իսկ հին ժամանակներուն։ Տարակոյս չկայ, որ թէ կենդանի և թէ գրաւոր բարբառի հնարողն է ազգը կամ ժողովուրդն։ Բայց որովհետեւ ան է ազգի մը նախկին և նոյն իսկ լրութեան վիճակին համաձայն՝ կենդանի բարբառն եւս դարերով յառաջ է քան անոր գարգացեալ վիճակն և գրականութիւնը, հետեւաբար այլ է ազգի մը կենդանի բարբառին կամ ընդհանուր լեզուի ծագումը, և այլ անոր գրաւոր լեզուի ծագումը։ Այնպէս որ կարելի է ըսել, թէ առաջինն այնքան հին է՝ ըստ էական տարերաց՝ որքան այն ազգի կամ ժողովուրդեան գոյութիւնն՝ այս ինչ կամ այն հողի վրայ։ Իսկ վերջինը կարող է՝ ժողովրդեան մտաւոր վիճակին ուշ կամ շուտ գարգացման համեմատ՝ շատ կամ քիչ դարեր վերջ ակսած լինել. բայց միշտ կրտսեր է ժամանակաւ քան իր համասեռ՝ բայց անկոպար ամկօրէնն։ Աւասի հայ ազգի ինչպէս նախկին գոյութիւնն՝ այսպէս և կենդանի և խօսուն լեզուի ծագումն՝ անյայտ և անորոշ ժամանակաց մթութեան մէջ թաղուած է. և կարծեմ թէ այնպէս այլ պիտի մնայ, քանի որ անոր քարեղէն յիշատակարանները պարզուած չէ։

Իրաւ է՝ որ վերջերս այդ արձանագրութեանց վրայ կատարուած ուսումնասիրութեանց՝ ինչպէս և հնդեւրոպական լեզուներուն վրայ եղած համեմատական լեզուագիտութեան անխոնջ ուսումնասիրութեանց շնորհիւ շատ նոր լոյսեր ծագեցան և մթ

որ մեր աշխարհի սեպագիր արձանագրութեանց հայերէնի հետ նոյնացուած [1] բառերը թէպէտեւ 43 % կը կազմեն ամբողջովին, բան ունենց, սակայն այդ բառերն ու բայեր իսկ զէթ քերականական կազմութեամբ՝ այնքան կը տարբերին մեր ծանօթ դասական լեզուէն, ինչպէս երկինքն յերկրէ։

Այդ՝ եթէ Քրիստոսէ 835–600 տարի յառաջ մեր աշխարհի բնիկ ժողովրդեան կամ Նայիր–Ասորեստանի նախահայոց գրաւոր լեզուն այսքան տարբեր էր՝ Քրիստոսէ վերջը մի և նոյն հողին վրայ բնակող հայ ժողովրդեան գրական լեզուէն, ապա ուրեմն մեր հին տարբեր ըլլալու էր Ասորեստանց կամ Նայիրի ժողովրդեան դասական կամ առմիկ բարբառն՝ և դարու այրարատեան կամ տարօնեան կենդանի բարբառէն։ Յամենայն դէպս՝ ընդհանուր ճշմարտութիւն մ'է, որ տոպեան սեպագիր արձանագրութեանց ընթերցման և արդի համեմատական լեզուագիտաց երած ուսումնասիրութեանց հետ՝ պատմական վկայութիւնք իսկ արտաքնոց միաձայն կը հաստատեն, թէ հայկական լեզուն, ըլլայ անկիր ըլլայ գրաւոր, ծագմամբ է հնդեւրոպական. և թէ այն — չնայելով Ասորեստանեայց անընդհատ արշաւանքներուն յերկիրն Նայիրի — միշտ նոյնարուն և նոյնատիպ քոյր լեզուներու հետ սերտ առընչութիւն ունեցած է 835 թուականէն ի վեր մինչեւ նոր թուականին և զորը, և անոնց միոյն կամ միւսին փոխադարձ ազգեցութեան համեմատ [2] զարգացած է և ունի կամ պակաս փոփոխութիւններ կրած։

Սեպաձեւ արձանագրութեանց յիշեալ ուսումնասիրութեան հեղինակը թէպէտեւ հին պարակներէն փոխառեալ կարծուած բառերէն զանոնս կը գտնէ նոյն իսկ պարսկական սիրապետութենէն յառաջ գրուած Նայիր–Ասորեստան արձանագրութեանց մէջ, որով և կը հետեւցնէ, թէ զոքա իսկապէս հին հայերէն են, և առնչակից անցած գրակից Պարսից. սակայն և այնպէս՝ պէտք է ընդունել և այս պատմական անժխտելի ճշմարտութիւնս, որ յամին 486 պարսից աքեմենեան սիրապետութեամբը՝ լեզուական ազգեցութիւնն եւս կը սկսէր հետ գնետ սիրոյ հանդիսանալ հայ ազգաբնակութեանց վրայ։ Եւ սուգիս՝ յամին 401 երբ Քսենոփոն յունական բիւրուն հետ նահանջելով՝ Հայոց մէջէն կը կտրէր կ'անցնէր, կարնոյ նահանգի գիւղացի կռնապ անգամ պարակերէն կը խօսէին։ Այդ՝ եթէ վերին Հայոց գիւղերու մէջ եւս տարածուած էր հին պարակերէնն յայնժամ, կարելի է դուշակել, թէ որչափ աւելի ըլլալու էր Պարսից սահմանակից գաւառներու և քաղաքաց մէջ։

Պարսկականէն եթէ ոչ հաւասար՝ այլ նման ազգեցութիւն մ'ալ յամին 331–188 կը կրէր հայ լեզուն յունարենէն՝ Մակեդոնական սիրապետութեան և իր անմիջընչութեան պատճառաւ։ Իրենք զիրենք յունասէր անուանող Պարթեւ–Արշակունի հարստութեան ժամանակ իսկ, այն է 190–34, այդ լեզուական ազգեցութիւնն ոչ միայն չնուազեցաւ, այլ խառն պարթեւականին հետ այնքան աւելի յորդած և ողողած կը տեսնուի թագաւորական և նախարարական ոտանաւորներն և բարձր շրջաններն, որք մինչեւ անգամ այն լեզուներով ոչ միայն կը խօսէին, այլ և կը գրէին [3]։ Հիւբշման [4] իսկ իր լեզուաբանական հետազօտութիւններով ամենէն աւելի հին պարակերէն և յունարէն բառեր գտած է հայերէն դասական լեզուի մէջ. այսինքն է՝ 686 հին պարսկերէն, և 512 յունարէն։ Հայց, բան խս, ինչպէս մեր գրաւոր լեզուն՝ այնչափ գաւառականներէն մին եւնթ է, այսպէս ալ մեզի ընծայած այս և ուրիշ օտար բառերը

---

1. Տես Գեր. Յոհ. Սանուալեանի, Les inscriptions cunéiformes transcrites, Venise, 1900, p. IX.

2. Եւ սուգիս, Գերպ. Սանուալեանի յօդուածն եթէ սոդպ են, յիշեալ արձանագրութեանց լեզուի բառերն գրեթէ հնդաբիական են. վասն զի 424 բառերէն՝ 19 բառ միայն անմատչան են. իսկ միւսներք 179 հայերէն, 152 հին յունարէն, 22 առնակրիտերէն, 21 երանեան, 16 լատին, և 1/4 բառեր ալ գերման, սլաւ լիթուանեական, և այլն։

3. Սարաբոն, Գիրք XII. 38. կ'առանդէ Մեծին Տիգրանայ որդւոյն Աբտաւազդայ համար, թէ յունարէն լեզուով ընտիր ոգեբղութիւններ շարադրած էր։ Ի հարկէ արքայորդին պարթեւ՝ Յունաց համար չէ, որ կը շարադրէր իւր այդ չքնաղ գործերն, այլ Հայոց, որոնք այդ լեզուն ոչ միայն կը հասկնային, այլ և կը գրէին իսկ։

4. *Armenische Grammatik*, Leipzig. 1897. ուր գուտ կամ յաւուկ հայերէն հատիկ 438 բառեր ցոյց կու տայ մեզ բանասէրն՝ ի մեծ զարմանս։

ման մի միայն ըլլալու են այն ազգին բարեբեխան, որոնք կ՚ազդին ի հնուեն բոլոր մեր գաւառաբարբառներն, և որոնցմէ քիչերը ծանօթ են այսօր լեզուագիտաց։ Շնորհիւ այդ երկու լեզուներու անընդհատ ազդեցութեան և համատեղութեան է՝ որ հայերէնն այնքան ճոխ և ճկուն եղաւ։ Ձի պարսկերէնը կու տար անոր արեւելեան հարստութիւն, ծանրութիւն և պաճուճանք. իսկ յունարէնը՝ կանոնաւորութիւն, յստակութիւն և կարով։ Առաջնոյն ազդեցութեամբը թերևս Նայիր-Ասորեստանք մեր հնարած ըլլան իրենց յստակ պրութիւն մ՚ալ, իսկ երկրորդին ձեռքով կը պատրաստուէր մեր կենդանի լեզուն՝ ըլլալու յետ ժամանակաց՝ նաեւ գրութեան և մատենագրութեան յարմար և կանոնաւոր լեզու։ Պարթեւներն — որոց ծագումն եթէ Սկիւթիայէն եղած համարուի, և կամ Բակտրիայէն — այս յայտնի է որ Ցունական գրոց թարգմանութեամբ իրենց անկախանալ են այն լեզուն, որով կազմուեցաւ պարթեւական լեզուն, որպէս մի նոր ձեւակերպութիւն դանդիերէնի։ Այսպէս ալ պարթեւական կամ Պահլաւիկ լեզուն յետոյ գերակշիռ հանդիսանալով նախահայոց լեզուին վրայ, կազմած է — նոր ձեւակերպութիւններով — Վռամշապուհեան դարու հայոցպարթեւ լեզուն։ Եւ այս բանս ակներեւ կը տեսանուի նոյն իսկ Հիւբշմանի յիշեալ գրութեամբ մէջ բերած պահլաւիկ բառերու համեմատութենէն, որոնք հայերէնին հետ նոյնանձեւ են։

Արդ պարսերէնն եւս — որ Սասանեանց հարստութեամբը կը սկսէր Քրիստոսի 226–300 թուականէն վերջը — կը յաջորդէր պարթեւականին։ Նոյնն անշուշտ երթալով պիտի ազդէր մեծապէս նաեւ հայ լեզուին վրայ։ Սակայն ինչպէս այդ՝ այսպէս ալ յունական ուսմունք և եկեղեցական դպրութիւնք, որոնք Դ և Ե դարէն ի վեր ալ բնդհանուր ժառանգութիւն կը դառնային Հայոց, չէին կարող վեռսել հայերէն լեզուին կամ այլասեռել զայն, նախ վերը յիշուած պատճառներուն համար, և երկրորդ՝ գրական լեզուն արդէն կազմուած լինելով և յուժէ՝ ազգային ճարտար մատենագրաց ձեռքով, գիտէր քաջ բան չափու և բան պատչաճի վարել դանոնք և իրեն հետ իւրացնել։ Ասորերէնը միայն անդարձիր էր և այլասեռիչ հայ լեզուին. սակայն այս իսկ պատճառ գրականութեան հետ միայն մերձաւոր չափուն մէնէր, հետեւաբար չափով մը թողուց իր հետքն անոր վրայ, այնինքն է՝ ներմուծելով անոր մէջ ինչ ինչ եկեղեցական բառեր, գոր վերջերս համեմատական լեզուաքննութիւն [1] յաջողութեամբ գտաւ և ցանկից։ Իսկ ժողովրդական կենդանի բարբառն առնչէ իսկ ոչնա միաց, նախ սերտ կցորդութիւն մի չունենալով այդ ազգի հետ, և երկրորդ՝ քաղաքակրթութեան իսկ աւելի ազդելու՝ քան ազդեցութիւն կրելու վիճակի մէջ էր։ Արդ՝ այս ամենայն պարագայիւք հանդերձ՝ կրնանք ըսել, որ Հայոց թէ գրաւոր և թէ կենդանի բարբառն իրենց ազգային և սեփական ծագրութեան և յատկութեան մէջ էին մնացեր։ Ջ դարը, թէպետեւ ինչպէս մատենագիր մատենագրի՝ այսպէս ալ այս ինչ կամ այն գաւառաբարբառը վերէն գարգացած էր, իր գաւառին կեդրոնական դրից և ժողովրդեան մտաւոր և բնաւոր բարեմասնութեանց համեմատ։

Թէ և գարէն ի վեր, ինչպէս և յառաջ, կային մեր աշխարհի զանազան գաւառներուն գաւառաբարբառներ — ինչպէս այսօր — այս մասին չկայ բնաւ տարակոյս և ոչ ալ տարակուսելու գրական պատճառ. մի՝ ինչ որ գոյութիւն ունէր և գարուն, նոյնն անտարակոյս ըլլալու էր և չորրորդին մէջ [2]։ Բայց թէ այդ գաւառական կենդանի բարբառներուն իրարմէ ունեցած զանազանութիւններն ինչ էին արդեօք և ինչ պատճառներէ յառաջացած, նշանաւորզ գիտութեան և մարդաբանութեան պատմիչները՝ Աստուած հետ՝ ուրիշ բան չեն տար գուշակելու և մարդաբանութեան

---

1. Տես Հիւբշմանի յիշեալ գործը, էջ 299, 2 Abschnitt: Syrische Wörter. *որուն հեղինակը թէպետեւ առորերէնէ եզած 133 բառերու փոխառութիւն մի ցոյց կուտայ մեզ, բայց գոցա մի մասն իսկ պետեւ առորերէնէ եզած 133 բառերու փոխառութիւն մի ցոյց կուտայ մեզ, բայց գոցա մի մասն իսկ դեռ երկբայական է, և մաս մ՚ալ Ս. Գրոց թարգմանութեամբն և գիտմամբ առառաջարձուած են։*

2. Այս նկատմամբ նշանաւոր է հին Քրիստոնէութեան մեկնութեան հետեւեալ տեղին, գոր ԺԳ. դարուն սկիզբը գրող՝ Յովհաննէս Երզնկացի՝ հաւաքելով մէջ կը բերէ, յառնուն Աստիճանաւոր Մեկնեցւոյ, այսպէս. «Եւ գԳրոյ լեզուիդ գիտէն բովանդակ գրաոն (այսինքն է՝ բարբառն) գեզերականս, որպէս գԿորճայիս և գՏայեցին, գԹուխմայիսն և գԶորրորդ հայեցին, և գԱպերացին և գԱխունին և գԱրցախայինն. այլ մի՝ միայն գԱիրարատեան գաւառներուն) և գԱասանկան։ Վասն զի պիտանէիր այսպէս ազդեցութեան մէջ էին մնացեր։ Ջ դարը, նոյնն անտարակոյս ըլլալու էր և չորրորդին մէջ [2]։ Բայց թէ այդ գաւառական կենդանի բարբառներուն իրարմէ ունեցած զանազանութիւններն ինչ էին արդեօք և ինչ պատճառներէ յառաջացած, նշանաւոր գիտութեան և մարդաբանութեան պատմիչները՝ Աստուած հետ՝ ուրիշ բան չեն տար գուշակելու և մարդաբանութեան*

կել, բայց եթէ լեռնական և գաչառային գաւառացիներու իրարմէ տարբեր բնական կազմակերպութիւնքը և մտաւորական զարգացումը. որով մեծապէս կը տարբերէին — օրինակի ազագաւ — Այրարատայ և Գողթնեաց լեզուն և արուեստներ՝ Կոգաւացիներուն և Սիւնեաց և Փայտակարանի լեզուէն [1] և արուեստներէն, ինչպէս այժմեան Պոլսի կամ Կարնոյ բարբառը՝ Սասունական գաւառացւոյ խօսուածէն: Սակայ ըստ իս ամենակարեւոր է, որ ի նկատի առնուին — բայ ի նախապարտոյ հինաւուրց ցեղական և լեզուական ժառանգութիւններէն — նոյնպէս և անոնց հարեւան ազգարնակութեանց կամ լաւ եւս սահմանակից օտար ժողովրդոց հետ ունեցած աներես յարաբերութիւնները և անոնցմէ կրած ազդեցութիւնքը: Այ՛, ինչպէս Այրարատից եւ Վրաց, Մարաց, Հառեանց, Կապադովկացւոց ու Պոնտացւոց հին լեզուներն ունեցած են մեզ և ազդեցութիւն իրենց սահմանակից Հայոց գաւառականներուն վրայ, զորս Ստեփանոս և Երզնկացի եզերական կ'անուանեն. այսպէս ալ Արծրունեաց, Մամիկոնենաց, Բագրատունեաց և Արեւորդեաց և այլ գաղութները բերած էին անշուշտ նոսա իրենց լեզուական ինչ ինչ ժառանգութիւններն, և աներունդ աներունդ կ'աւանդէին մինանց՝ Վասպուրականի, Տարօնի և Արագածոտն գաւառաց մէջ: Այս և նման տարբերք գրաւորէն աւելի՝ ժողովրդական կենդանի բարբառին մէջ մեծ քանակութեամբ խոր թափանցած և արմատացած ըլլալու էին անառարակոյս: Ուտիացւոց և Աղուանից [2], և Վրահայոց [3], Աղանըէկի [4] և Կեսարացւոց գաւառաբարբառներու վրայ վերջերս եղած վեր ի վերոյ ուսումնասիրութիւններն իսկ առաջիւ այսպիսի հինաւուրց առագներ կ'ընծայեն մեզ փոքր ի շատէ: Անշուշտ այնպիսեաց թիւը գեռ աւելի պիտի բազմանայր, եթէ այս և բոլոր միւս գաւառներու բարբառներն՝ համեմատական լեզուագիտութեան մեթոտով և լրջօրէն հաւաքուէին և ուսումնասիրուէին. զի ցարդ եղածները՝ նախափորձեր են, քան թէ կատարեալ ուսումնասիրութիւնք:

Ոմանք — քննական բերականութեան հիմնակին հետ — նախնեաց առակօրէնի կամ գաւառական բարբառի գոյութիւնն ե. գարուն ապացուցանելու համար՝ բաւական համարեցան իրրեւ փաստ բերել Զգօնի, Փաւստոսի և Ղ. ապարայ պատմութեան մէջ գործածուած ինչ ինչ ժողովրդական բառեր և բացատրութիւնները, որոնք նոյն գարու միւս գաղական հեղինակներու ընդհանուր ոճէն և ոսկիներէն կը զանազանին: Ըստ իս ինչպէս քերականական կանոնաց դէմ եղած այսպիսի բացառութիւններն՝ ընտիր գրական լեզուի ուղղութենէն դուրս և բոլորովին նոր բաներ չեն [5], այսպէս եւս առաւել չեն կրնար բնաւ գաղափար տալ մեզի յայնժամու գաւառականի մը գրական լեզուէն ունեցած կատարեալ տարբերութեանը, թող թէ իրարմէ այլազան այնքան գաւառաբարբառներուն: Երկրորդ՝ եթէ ոչ բոլորովին անհիմն, սակայն յոյժ անճիշդ է՝ միջնադարեան — եւս առաւել նոր կամ ժէ գարու — գաւառականներու որպիսութենէն գատել ե և Զ գարերուն գործածուածներու որպիսութիւնը: Գան դի ժամանակաց հետ՝ առանց և անոնց վրայ ներգործող պատճառներն իսկ՝ գլխովին տարբեր էին: Սակայն միակ որոշ բան մը՝ որուն համար կրնանք պնդել, այն է՝ որ յիշեալ երկու դարերուն մեր ժողովրդական կենդանի բարբառքն ոչ միայն ազատ էին — բացառութեամբ մի քանի եկեղեցական բառերու — սեմական ազդեցութենէն, այլ նոյն իսկ գրաւոր լեզուին ամենամօտ վիճակ մ'ունէին համեմատաբար, թէպէտեւ անձեւ և անկանոն:

Իսկ Զ և Է դարերուն, երբ մէկ կողմէն կը նուազէր իր գերիշխանութենէն գրաւոր լեզուն և անկման մեծագոյն նշաններ կու տար, գրագիտաց և գիտութեան նուազե-

---

1. Զոր կորիւն «խեցբեկագոյն և խոշորագոյն» կ'անուանէ:

2. Տես Ս. Պարգսեան «Ագուլեցւոց կամ Ջոկերուց՝ բարբառը», տպ. Մոսկուայի 1883:

3. Տես Գ. Հախվէրտեանի Թիֆլիսուց (հին հայ գաղթականութեան) բարբառի մի քանի յատկութիւնների վրայ, զոր գրած է 1852ին՝ Պայսի Ընկերի հրատարակութեան առթիւ:

4. Տես Բազմ. 1898:

5. Օրինակ իմն, եր վերջացած յոգնակի ուղղական ձեւը, ինչպէս բուժկնեաբ, և այլն, առաջին թարգմանչաց ձեռքով իսկ գործածուած են Ս. Գրոց թարգմանութեան մէջ:

լան պատճառաւ. և մինչ կսկսէն ալ հարուածին նոր ապդ մի և լեզու կը սկսէին ներանալ հայ ազգարնակութեան վրայ, այն օրէն ի վեր սոսկ քաղաքական պայմաններուն հետ՝ կը սկսէին նորանոր փոփոխութիւններ կրել ոչ միայն գրաւոր լեզուն՝ իր նորիմաստ առումներովն, այլ նաեւ հայ գաւառաց խօսուն բարբառը։ Թէպէտեւ այդ ինչպէս և յաջորդ երեք դարերուն եղան քաջակիրթ և բարձրասահման եկեղեցականներ[1] — այսպէս եւ Սերխոս, Մ. Կաղանկատուացի, Յովհ. Կաթ. Ոսկանեան և ուրիշներ — որոնք գերազոյն ճիգն կը թափէին գրաբար մատեաններով՝ յոսին պահել նախնեաց ազնուական գաղափարը, և եթէ կարելի էր՝ նոյն իսկ առկօրինին չսալ թոյլ՝ որ սանձակոտոր և խառներախ երիվարի մը պէս գրական գաշտերն արշաւէ և ոտակոխէ, սակայն ի զուր. զի այդպիսի գրուածներ իրր անմատչելի ախոյաններ, իրրեւ ձայն բարբառոյ յանապատի կը մնային բազմավրդով ժողովրդեան համար։ Ամէնն հետ ազնուականը, և ոչխաց հետ գրագէտ իսկ կը սկսէին այնուհետեւ ակն յայտնի առկաքանել, թէ՛ իրենց արձանագրութեանց թէ՛ դաշնագրոց և թէ՛ ուրիշ տուրեւառիկ գործոց և գրուածոց մէջ։ Թէեւ առնցմէ մնան մի միայն հատած են մեզ դժբախտաբար, սակայն և այնպէս բաւական են ցոյց տալ՝ թէ ինչ ատիճան խանգարուած և մոռացուած էր գրաբարը։ Յովհ. Մամիկոնեան՝ Տարօնի պատմութիւնն իսկ այդ ժամանակի առկօրինով գանգած և ի գրի առած է։ Պատմագրութեանս համար չենք կրնար ըսել, թէ ճիշդ Տարօնի գաւառաբարբառը մեզ կը ներկայացնէ. վասն զի անոր հիմնական դիտմամբ կամ ինչ ինչ նկատումներով չանցաւ է գրաբարի մերձեցնել։ Սակայն և այնպէս՝ գէթ ուրուագիծ մի կարելի է համարիլ այն գաւառականին և Մամիկոնեանց տանուտէրութեան կենդանի լեզուին, որոց համար կը գրէր։ Ապա՝ Ա. գարուն Շապուհ Բագրատունին ալ տակաւնոյ պատմութիւնը նման ոճով մի կը գրէր, այսպէս և Նարեկացին իր Գանձերն անուշիկ ու գողարիկ առկօրինով կ'ոգէր, և անով կը թովէր և կը հմայէր ժողովրդեան մտքին հետ՝ նոյնպէս կրօնական զգացումները։ Սակայն այս ամենայն առկօրինի կամ աշխարհաբարի պատրաստութիւններ միայն էին, զոր յառաջ կը բերէին արտաքին պզտիկութիւնք, անդադար պատերազմունք, տառնին բաժանմունք և անկումն գիտութեանց և գրականութեան։ Իսկ բուն առկօրէնը կամ աշխարհաբարն — որ խօսքէն գրի պիտի անցնէր և ընդհանրանար — կը կատարուէր Բագրատունեաց թագաւորութեան կործանմամբը, այսինքն է՝ Անոյ առմանէն և ժողովրդեան յօտար աշխարհներ ցիր ու ցան ըլլալէն վերջ։

Կիլիկիայում համախմբուած հայութիւնը, թէպէտեւ նոր հայրենեաց և ինքնավարութեան հետ՝ կենաց և գործակցման նոր պայմաններ եւս ձեռք կը բերէր, թէպէտեւ Դրիզորներ, Ներսէսներ և նմանիք գ. գարու անկեալ գրաբարը նորաձեւ կերպով կը կենդանացնէին, սակայն այդ ամենայն պաշտօնագրոց և մագաղաթներու մէջ միայն զգացեալ ձեալու կը գտանգարտուէին։ Իսկ ժողովուրդը կը չարունակէր իր ընտանի և դիւրաթեք առկօրէնին մէջ. մանաւանդ թէ այժմ այնքան աւելի և անդիմադրելի կերպով, որքան եւրոպական նոր ազգաց հոսանքը, լատինաբերն ապատամբ և նորակազմ լեզուներն, վաճառականական և ապրեստական ընթացքը մեզ կողմէն, և միւս կողմէն ալ Ալեւելքի խուժանին հետ ունեցած պէսպէս կցորդութիւնքը կը մղէին դիրենք դէպ ի օտարը, դէպ ի լեզուական յեղափոխութիւնը։ Հայակիլիկիան ԺԲ և ԺԳ դարերուն ոչ միայն մեր գրական բարձր մատենագրութիւնքը չէր հասկնար, այլ նոյն իսկ Մխիթ. Գոշի այնքան պարզ լեզուով գրած Դատաստանագիրքը։ Եւ ահա այդ անհրաժեշտ հարկին հանդէպ է, որ Կատանդին արքեպիսկոպոս որդին Ամբատայն ժողովրդեան հասկանալի ընելու համար կը ստիպուէր առկօրէն կամ աշխարհիկ բարբառով վերատին խմբագրել գայն։ Ն. Շնորհալին իր վանական բարձրութենէն վայր իջած ժողովրդեան սիրոյն համար՝ այդ լեզուով կը գրէր իր գեղեցիկ Աւակներն ու Շաւիղուղիները։ Առկօրէնով կ'արձանագրէին Մխիթ. Հերացի՝ Ջերմանց Միխթարուղիին նշանաւոր գիրքը, և Յովհ. Երզնկացի — ԺԳ. գարուն — իր վասն երկնային շարժմանց գրուածը։ Աւելորդ կը համարիմ մի առ մի թուել այս տեղ բոլոր հին և նոր բժշկարաններն և ուրիշ կարգի առկական գրուածները[2], որով կիլիկեան աշխարհաբարը միանգամ ընդ միշտ իր յաղթանակը տարած կ'ըլլար։

---

1. Գր. Աբշարունի, Ան. Շիրակացի, Դ. Անդդ Երէց։

2. Տես Հ. Դ. Անդդ Վ. Յովհաննեան, Հետազօտութիւնք նախնեաց առկօրինի վրայ, տպ. Վիեննա, 1897. ուր այդ ամենայն հաւաքուած են ժամանակագրական կարգով։

Ակէց վերջ գրաբառնակ գրուածներ հապիւ թէ գիտուորներու պէս ատո անոր երեւան կու գան՝ ամիսօրէնի գիմակի ներքեւ, և կրնցուցած են գաւառական լեզուի բնորոշ գրակութիւնները։ Իսկ ԺԹ և Ի. դարերն՝ առած այս նոր չարժման և ուղղութեան ներքեւ՝ կը ձգնին եւս քան գեւս անկախ և ինքնատիպ գործել աչխարհաբարը՝ գրաբարէն, կրճատելով վերջնոյս բառերն ու բայերը, փոխոխելով հոլովներն և խոնարհումները, թօթափելով նախդիրներն և նախադրութիւնները, պարզելով համաձայնութիւնները, փոխանակելով հնոյն տեղ նոր ածացուածներ և ուղղագրութիւններ, չեզչելով — ամիսկ արտասանութեան համաձայն — նաեւ ատոգրութեան հին օրէնքը, կամ լաւ եւս չգոթելով իրարու հետ նաբը, վիջին և վաւ ձայնները, մէկ խօսքով բառնալով գոյն ամենայն՝ որ ալ իրենց անհատականալի գարձած էր, և ներմուծելով՝ գոր ինչ միանգամ հնարած էին և գիւրացուցած ժամանակեան կենցաղը, կամ ընտանեկան և արտաքին ազգակներն [1]։ Ձկայր այլ եւս կամ խիստ քիչ գրականութիւնը ժողովրդական կենդանի բարբառէն գոտող աշտղին խաիրն և խրամատ. մնանալով թէ ամիսկ բուած կենդանի գիրքը՝ կը նոյնանար գրուած և կենցաղական մտաենին հետ։

Այո, նախկին դարուց գրաբարն է՝ որ իյնալով և ատրրալուծուելով հետզհետէ՝ կը վերածուէր վերջապէս ամիսօրէնի կամ աչխարհիկ բարբառին։ Այս ամենատյգ եղելութենէս իսկ կը տեսնուի՝ թէ գրաբար ամիսօրէնը կամ աչխարհաբարը վերակազմող հայութեան միջին շրջանը՝ գիտութեան և գարգացման կոզմէն որքան ատոր ըլլալու էր քան Դ և Ե դարերը։ Թէպէտ և ճչմարիտ է և այս, որ լեզուական փոխանցումը կամ այլասերումը ոչ միշտ և ոչ այլ բացարձակօրէն իմացական յետամնացութեան արդիւնք համարելի է, այլ մերթ օտարի գերեզգոյն ազդեցութեան, և մերթ ներքին կենաց և պահանջներու հետեւանք։ Բարեշրջութեան այս վերջին օրինաց համեմատ այժմեան վիճակն ատոնց գէթ Եւրոպայի քաղաքակրթեալ ազգաց լեզուներն։

Ատկայն բան մի՝ որ ամէն բանէ աւելի գիտողութեան արժանի է, հետեւեալն է. այսինքն՝ ԺԲ–ԺԴ դարուց թէ խօսուած և թէ գրուած աչխարհաբարը կամ ամիսօրէնը՝ նկատմամբ ԺՋ–ԺԸ դարերու խօսուածին կամ գրուածին՝ այնքան աւելի մաքուր է, կանոնաւոր և գրաբարին մերձաւոր, որքան Ե. դարու նախնեաց ամիսօրէնը՝ բաղդատմամբ Ե. դարում խօսուածին։ Ի՞նչ է պատճառ այս աչտղին փոխոխութեանս, այս բարելաւական խառնակութեանս, գիտելով քաչ մնանուանը՝ որ բան բնական օրինաց լեզու մի այնպէս կոզմակերպուելէն վերջ՝ ժամանակին յառաջիմէ աւելի եւս պիտի մաքրուէր և գարգանայր իր բնոյն վրայ, քան թէ խառնարուէր և այլասերէր։

Այդ պատճառքն են՝ բան խ և բան պատմական ուսանողութեանց՝ գլխովին արտաքին և բնական, են ամենեւին այլասեռ և եղծիչ հայկական տարերաց. այսինքն են՝ թաթարական և թրքական լեզուաց տարաչատիս հեղեղներն, որք ԺԳ. դարէն սկսեալ կ'ողողէին ոչ միայն Հայաստանն, այլ և Փոքր Ասիոյ բոլոր այն երկիրներն՝ ուր կը գտնուէին Հայեր։ Եւ այդ ազդեցութիւնն այնչափ աւելի ծանր էր և ազեաւոլի, որչափ երկայն և խիստ եղաւ անոնց քաղաքական տիրապետութիւնն և լուծը բռնարձակ։

Իրաւ է որ Պարսիկք և Արաբացիք իսկ դարեր տարողջ տիրեցին և տգդեցին Հայոց վրայ, բայց այդ դարերուն այնքան մեծ և բոլորական չ'գաւ անոնց տգդեցութիւնն հայ լեզուին վրայ [2]. վասն զի սոքա ունեցան նախ օտարի գերիշխանութեան

---

1. Տես. Յոփս. Փարսար *Historische Grammatik des Kilikisch-Armenischen*, Strassburg, 1902. սքանչելի գրութիւնը, ուր գերմանական ոճով և լրջութեամբ ամենայն ինչ մանրամասնօրէն ուսումնասիրուած են։

2. Ի դէպ՝ դիտել կու տանք, որ Հիւբշման իւր յիշեալ գործին մէջ (3. Abschnitt: Neupersische und Arabische Vörter. S. 259–279) 171ի կը հասցնէ նոր պարսկերէնէ և արաբերէնէ փոխառեալ բառերու թիւը։ Սակայն՝ ինչպէս ինքը կը ծանուցանէ՝ դոքա մասն մի են այն բազմաթիւ փոխառութենանց, որք կը գտնուին բժշկարաններու և գաւառաւոանագրոց մէջ. զորս դիտմամբ զանց ըրած է քննել, վասն զի իր ուսումնասիրութենան նիւթն էր դասականը, և ոչ թէ միջին դարու կամ նոր ամիսօրէնը։

Սակայն աւելի զարմանալին այն է՝ որ գերմանացի բանասէրս՝ մեր դասական լեզուին մէջ իսկ հապիւ 438 գուտ հայկական (Echtarmenische Wörter) բառեր գտած է, որոնք ուրիչ հնդեւրոպական լեզուներէն փոխ առնուած չեն. և 11 բառեր այլ, որոնց ինչ լեզուէ յառաջ գալը դեռ յայտնի չէ։

ներքեւ՝ նայնպէս և իրենց մտանական կամ ընդհանուր, ընդհատուած կամ անընդհատ տանուտէրութիւնը. երկրորդ՝ յատուկ պրականութիւնն և մայրենի լեզուի ազատ զորաժամութիւնը։ Իսկ ԺԱ. դարէն վերջ նոքա ոչ միայն կը պրուէին այդ երկու պահպանականներէն, այլ և կը պրուէին այնպիսի օտար հասանքներէ և կ'ընկղմէին անոնց ծավացեալ բազմութեան մէջ, ինչպէս անոյշ գետերը ազատական ծովուն մէջ։ Վասն զի անոնց հետ ատենաւոր էին միշտ կենակցիլ, անոնց լեզուն խօսիլ և անոնց ծառայել, իրենք ատուկներնէ՝ իշխող տէրանց. մէկ խօսքով՝ անոնցմէ մուրալ այն ամենայն, որոյմէ իրենք զուրկ էին և կարօտաւոր։ Հետեւաբար ԺԶ–ԺԱ. դարերում կարելի էր դանել այս ինչ կամ այն երկրի մէջ մտանաւոր հայ գաղթականութիւն մի, որ աւելի կամ պակաս ազգուած լիներ վրացի կամ ռուս, լեհացի կամ հունգարացի լեզուէն, և կամ համեմատաբար աւելի պահած լիներ նոյն իսկ իր մայրենի լեզուի անմեղականութիւնն և նախնական ուանդը. ատկայն և այնպէս կարելի չէր դանել Հնդկաստանէն մինչեւ Կ. Պոլիս, Կովկասէն մինչեւ Տաւրոս, և Կասպից ծովէն մինչեւ Լեհաստան, Պոդդանայէն և Թրանսիլվանիա հայ գաւառաբարբառ մի, յորում անկնեւս չտեսանէին աւելի քան թէ բառական և թրքական լեզուներու ազդեցութիւնք։

Յիրաւի՝ առաք ձեռքերնիս Սայար–Նովայի երգերն[1], առաք Ս. Պռոխանի վերք Հայաստանի դիւցազներգութիւնն, Ագդաբար լուգրի թերթերն, Ատարեհանցւոց ձեռագիր նամականիներն, Աստ Սերաստացւոյ և Աշմոխայի Գալուստ բժիշկներու բժշկարաններն և Գրանեվմանեայ Հայոց վերջերս հրատարակուած յիշատակարանները[2]. մանաւանդ թէ բազդատեցէք զատնք Շնորհալւոյ Հանելուիներուն, Ամբատայ Պատմութեան, Մխիթար Գօշի Գատաստանագրոց աշխարհաբար Թարգմանութեան և Մխիթ. Հերացւոյ Ջերմանց Մխիթարեանի հետ, և շուտով պիտի տեսնէք իրարմէ ունեցած լեզուական մեծ տարբերութիւնքը։ Այո՛, պիտի տեսնէք և զգայք, որ վերջիններս — ի բաց առեալ արաբական ինչ ինչ արուեստական բառերը — հային յատուկ, մանաւանդ թէ գողտրիկ ոամկօրէն են նոյն իսկ գրաբարի ի, ց, յ կանոնաւոր նախադրութիւններով։ Իսկ առաջիններդ — չնայելով հեղինակաց ըրած ջանքին՝ ոամկին խօսակցութենէն աւելի մաքուր և կոկիկ գրելու — քառս մի կը ներկայացնեն այլասերուած բարբառներու[3], ուր հայերէն բառեր և բայեր հազիւ կը լսուին. և այն

---

1. Տես հրատ. Գէորգ Հաղվերտեանի, Մոսկուա, 1852։

2. Տես Հ. Գր. Գոլդիկեանի Հայր Յեղիսաբեթ Գրանսիլուանեցւոյ, Վիեննա 1893։

3. Հայկական գաւառաբարբառները դասակարգելու նախափորձը կարելի է տալ ԺԴ. դարու մատենագիր և քերական Յովհ. Երզնկացւոյն, որը սակայն կը յիշատակէ միայն եօթն գաւառաբարբառներ, և իրեւ ուղիղորդ և գլխաւոր մ'ալ Այրարատեանը։

Հայագէտ հոլանդացին Յ. Շրէօդէր (Գրամեան լեզուին գանձ, տպ. յԱմստերդամ 1711) իւր գրաբար հայերենի Քերականութեան վերջը գրուած յաւելուածին մէջ՝ խօսելով նոր աշխարհաբարի վրայ, չորս մասերու կը բաժնէ գանոնք, որք են Ա. Փոքր Ասիոյ, Բ. Սիւնեաց, Գ. Գողթնացւոց, և Դ. Ջուղայեցւոց։ Աւելորդ է կանգ առնուլ այս տեղ՝ ցոյց տալու համար՝ որ հայագիտիս սոյն բաժանումն ոչ միայն անկատար է, այլ և անճիշդ։ Սակայն և այնպէս նշանաւոր է գիտնականիս հետեւեալ խօսքը. «Եթէ ուզուի գլխաւոր գաւառականներն իրարու հետ բազդատել, և ամենուն քերականական կանոնները վերայայտնել՝ հարկ պիտի ըլլայ ահագին մեծութեամբ հատոր մի լեցնել»։

Գերպ. Հ. Ալբէն Վ. Այտընեան (Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, տպ. Վիեննա, 1866, էջ 166) նոր լեզուի բազմաթիւ ճիւղաւորութիւնները՝ գաւառաց համաձայն՝ հետեւեալներուն կը վերածէ. Ա. Մինչի գաւառ՝ Հայաստան (Վան, Մինջագետք, և այլն). — Բ. Կ. Պոլիս և Փոքր Ասիա. — Գ. Ալեւմտեան Լեհաստան — Ալտեալ. — Դ. Արեւելեան, այսինքն՝ Ազուերբեան և Պարսկաստան (որ կը ձգուի Թուսաստանէն մինչեւ Հնդկաստան)։

Իսկ ներկայ գրողներէն ոմանք (տես Գ. Խատիսեանի Հայոց լեզուն եւ իր բարբառները խորագրուած յօդուածը), յամին 1901 Տփղիսում հրատարակուած Գրական–Բանասիրական ժողովածուի մէջ, էջ 306–321 սովորաբար երկու մեծ խմբերու կը բաժնեն, այսինքն՝ Արեւելեան և Արեւմտեան։ Առնց կարծիքով «Առաջին խումբը տարածուում է Թուսաստանում և Պարսկաստանում, երկրորդը՝ Տաճկաստանում։ Արեւելեան խմբից են Շաշտարխանէ, Թիֆլիսի, Երեւանի, Ղարաբաղի և Ագուլիսի բարբառները. Արեւմտեան խմբից են Մշինը, Վանինը, Խոյինը, Ջուղա–Հնդկականը և Կովկասի գրական լեզուն։ Արեւմտեան խմբից նաեւ Մշինը, Վանինը, Խոյինը, Ջուղա–Հնդկականը և Կովկասի գրական լեզուն։ Արեւմտեան խմբից են՝ նախ արեւմտեան գրական լեզուն, և ապա Կ. Պոլսի, Ալանբէկի, Եդոկիոյ, Էրզրումի, Երզնկայի, Մոկսի, Խարբերդի, Տիգրանակերտի, Ամասիոյ, Բէյլանի, Ախալցխայի, Նոր–Նախջեւանի, Ղրիմի, Լեհաստանի, և այլ բարբառները»։

Անկարմար կ'երեւի ինձ Արեւելեան խմբին մէջ դասել Մշոյ և Վանի ներկայ գաւառաբարբառները, որոնք իսկապէս Արեւմտեանին կը վերաբերին, գէթ ըստ արդի հանգամանաց։ Այս՝ Գ. Հախ-

իսկ օտար և հրէշաւոր զուգութեամբ։ Իսկ ամբողջական նախադասութիւնքն և չարա-
պրաժքն, ընդհակառակն, օտար տարերօք խմորուած և խեղաթիւրուած են և լի տա-
ռախաներով։ Այնպէս որ մինչեւ ժամանակի նախնեաց ռամկօրէնը՝ նոր ժամանակի
աչխարհաբարին քով այնպէս է, ինչպէս բնիկ հայրենեաց մէջ զարգացած ազատանի
մը՝ Թրքաց մէջ գերի տարուած և խորթացած մանկան մի քով։ Եւ նոր աչխարհաբար
ըսելով այս պարագային մէջ՝ մենք չենք հասկնար առանձինն արեւելեան կամ արեւ-
մտեան արդի գրականութեան նոր գործին, այլ անխտիր բոլոր գաւառականներն
իմիասին. Թէպէտ և անոնց իրարմէ ունեցած խտիրն իսկ զգալի է՝ ուրիչ առտակէ-
տերով։ Չի անոնք՝ որ գաղթականութեան ձեռքով կանուխէն իսկ — այն է՝ ԺԱ.
դարէն — անջատուեցան հայրենի հողէն, բայց պինդ պահեցին իրենց գոյութիւնն,
ուելի ազատ միտքին մնողական այդ ուերիչ ազդեցութենէն։

Ահաւասիկ Մխիթար Աբբահօրէն առաջ ժողովրդական կենդանի լեզուին կամ
ռամկօրէնի ընդհանուր վիճակը. զի Քուչակներ և Գր. Աղթամարցիներ հազուագէպ
բացառութիւններ միայն կը կազմեն՝ իրենց գրաբառնակ երգերով։

վերածանի կարծիքն է, զոր վերջերս ուզեց լեզուական քննութեամբ բարգաւաճել Լ. Մաերեան, մի այլ
առտութեամբ, այսինքն է՝ նկատելով Տարօնի հին բարբառն իբրեւ հինն ե. դարու գաւառական կամ գրաւոր
լեզուին։

Գերազ. Այտընեան միջինդարեան հին աչխարհաբար մի՝ հինն եղած համարելով ամենուն, յետոյ կը
յարէ, թէ «չորսին մէջէն՝ երեքը քիչ շատ կը միաբանին իրարու, մի քան զմի հնագոյն ձեւերով. միայն
չորրորդը (Արեւելեան գաւառականը) անկախ մըն է միւսներէն, այնպէս որ կարծել կու տայ թէ երեք ա-
ռաջիններըը մի և նոյն աղբերէ յառաջ եկած ըլլան. եւ այս վերջինն՝ հին գաւառականէ մը առած ըլլայ իր
ծագումը»։

Շիտակն ըսելով այս վերջին դիտողութիւնը մենք չենք կարող առաջնոյն հետ միաբանել, թէպէտ և
յինքեան առած՝ միտքն ուելի ճիշդ է։

ԳԼՈՒԽ Զ

Մխիթարեան աշխարհաբարն և անոր հիմնադիրը. — Մխիթարեան աշխարհաբարի առաջին և անտիպ Քերականութիւնն, ու անոր վրայ ընդարձակ տեսութիւն մը. — Մխիթարայ աշխարհաբարի հիմունքը՝ Փոքր Ասիոյ կենդանի բարբառին վրայ, անոր ուղղութիւնն ու գրաւոր նըմոյշները։

ՐՈՆՔ առիթ ունեցան խօսել և գրել գաւառաբարբառներու մասին, իրարմէ աւելի կամ պակաս խումբերու բաժնեցին զայն, առանց սակայն անոնցմէ իւրաքանչիւրն առանձին և կատարեալ կերպով ուսումնասիրելու. ինչպէս գեղեցիկ օրինակով ուսումնասիրեց գերմանացի հանճարեղ հայագէտը՝ Դոկտոր Քարստ՝ կիլիկեանը։ Որչափ որ բնական է կենդանի գաւառականներուն իրարմէ տարբերիլն և ըստ այնմ՝ ուրոյն բաժիններ կազմելն, այնքան եւս անբնական է այս՝ գրաւոր աշխարհաբարի համար։ Եւ պարմանք այն է՝ որ հայ ազգն է միայն բոլոր արեւելեան և արեւմտեան ազգաց մէջ, որ մատով և գրականութիւն ունենալէն վերջ իսկ, կը չարունակէ տակաւին մատենագրել իրարմէ տարբեր երկու աշխարհաբարով, այն է՝ արեւելեան և արեւմտեան։ Աւելորդ է ըսել, թէ այս անբաւոր բնաթացքս — թէպէտեւ բուռ իմիք իրաւացի — ոչ միայն արգելք է միօրինակ և միաձոյլ զարգացման, այլ և կերպով մը անջատիչ է ազգային միութեան։ Սակայն մեր նպատակէն դուրս է առ այժմ այս կէտիս վրայ ծանրանալ, այլ տեսնել՝ թէ այդ երկու ճիւղերէն ո՞րը վիճակեցաւ Մխիթարեանց մշակել, և ո՞ր ժամանակէն սկսեալ՝ և ի՞նչ դեր կատարեցին ոգբա այդ մշակութեան մէջ։

Ե՛ւ գլխաւոր դրուած ծանօթութենէն ակներեւ կը տեսնուի, թէ ո՛րքան ընդարձակ է Արեւմտեան կոչուած գաւառականի տարածութիւնն, և ըստ այնմ ալ անոր նշանակութիւնն։ Արդ՝ այդ գաւառականի մշակութիւնն է՝ որ գրաբարէն քիչ հոգը կամ գրեթէ միաժամանակ Մխիթարայ և իրեններուն հոգածութեան նիւթ կը դառնար։ Մխիթար առաջինն [1] եղաւ՝ որ ձանչցաւ արեւմտեան կամ Փոքր Ասիոյ գաւառականի կոչման բարձրութիւնն և ապագային մէջ անոր խաղալիք մեծ դերը։ Իրմէ յառաջ կային արդարեւ այդ գաւառականով անտիպ գրուածներ իսկ կամ մեռած տառեր. սակայն ոչ ոք կարող եղած էր քերականութիւն մի չինել անոր, և ըստ այնմ կանոնաւոր կերպով ուսուցանել զայն, թող թէ մատոյց ձեռքով տարածել և ընդհանրացնել։ Յիրաւի՝ մինչդեռ ազգային մատուռը մինչեւ ԺԹ. դարու առաջին քառորդը դեռ խանգարուած գրաբարով կը պապաշէր. Մխիթար ընդհակառակն անկէց գրեթէ դար մ'առաջ կը սկսէր նաեւ արեւմտեան աշխարհաբարի հիմունքը ձգել՝ իր յօրինած ընդարձակ Քերականութեամբը, զոր համառօտելով՝ ի լոյս կ'ընծայէր յամին 1727, տաճկերէնով ի միտին, և կը կոչէր զայն Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին Հայոց։

---

2. Թէպէտեւ յամին 1711 հրատարակած էր հոլանտացին Շրէօդէր Synopsis linguæ civilis Armenorum, այսինքն է Համառօտ քերականութիւն արեւելեան գաւառականին, բայց դա Պարսկահայոց Ամբոյտերդամի գաղթականներու գաւառականը միայն կը ներկայացնէր, և Արեւմտեանին կամ Փոքր Ասիոյ գաւառականին հետ գործ չունէր։

Մենք նախընթացարար առիթ ունեցանք արդէն յիշելու այդ փոքրիկ գրքոյկը — նկատելով զայն իբրեւ ուսուցիչ հայերէն լեզուի՝ Թրքահաւս Գաղատացւոց։ Իսկ այժմ նկատելով Մխիթարայ անտիպ ճեպած աշխարհաբար լեզուի ընդարձակ ֆերականութիւնն — իբրեւ նախընծայ գործի արեւմտեան գրաւոր աշխարհաբարին — կարեւոր կը համարինք համառօտել նաեւ ասոր վարդապետութիւնը, զի է իբրեւ մարմնացումն և ասրբացումն ժԹ և ժԸ. դարուց [1] արեւմտեան աշխարհաբարին, որուն համար ալ յոյժ չահագրգիռ ներկայից։ Ֆերականութեանս յառաջաբանէն կ'իմանանք նախ՝ որ Մեծ Աբեղատացին իր յառուկ կամ Գաղատացւոց գաւառականով չէ՝ որ կը գրէր այդ ֆերականութիւնն, ինչպէս որ անոնք միայն չեն եղած խնդրողք և ստէպ թախանձողք. այնու մանաւանդ որ Գաղատացիք — բաց ի սակաւուց ոմանց՝ — հայերէն իսկ չէին գիտեր խօսել, այլ Թրքերէն։ Հետեւաբար՝ նա կը գրէր բոլոր Փոքր Ասիոյ հայ ազգաբնակութեան համար, և անոնց միջոց և կենդանի աշխարհաբարով, ինչպէս ինքը կը յայտարարէ որոշակի։ Ահաւասիկ Մխիթարայ խօսքերը. « Բազմիցս մեծաւ ազաչանօք խնդրեցաւ յոմանց բարեպաշտից (իմս այլ և այլ կողմերէ), զի չարադրիցեմ զհոլովից անուանց, և զծորդութեանց բայից, և զորպիսութեանց այլոց մասանց քերականութեան, այնպիսեաւ աշխարհաբարիւ ոձով, ըստ որում խօսին Հայք, որք բնակեալք են ի փոքրն Ասիա, այսինքն՝ ի բոլոր Հռոմայեց տուն և ի փոքր Հայաստան... և վերջապէս ձեռն արկի ըստ կարի իմոյ վերադառնել գրեւսորենգեան կանոնաւորութիւնս՝ զհոլովմանց անուանց, և զծորդութեանց բայից՝ աշխարհաբարի լեզուին մերոյ։ Եւ բովանդակեցի զայս յերկուս գրքուկս, որոց մինն է այս՝ որ անուանի Գաւառն քերականութեան, և ապագրի. և միւսն է զվարդապետութենէն մասանց բանի, և զբարբառոյն ներկայից, որ այժմոյս ոչ ապագրի։ Արդ՝ այնս որ ապագրի՝ պիտոյանայ նոցին, որք ոչ գիտեն զհայկական լեզու, և կամին ուսանել. իսկ միւսն հանդերձ առքօք պիտոյանայ այնոցիկ, որք արդէն գիտեն զհայկական լեզու, և կամին վարժիլ այնու առ այս, զի կարիցեն աշխարհաբարիւ լեզուաւ զբարբառոյնս... »։

Մխիթար ասիաս որ որոշակի բան չէ՝ թէ ուսո՞ւ վերագտած է ինքն աշխարհաբարի բնորոշ կանոնաւորմունքը։ Արդեօք նախնեաց միջինդարեան ուսմիօրէն պրուածներէ՞ն, թէ ընդհակառակն իւր իսկ ժամանակակից Փոքր Ասիոյ Հայերու բերնեաւ եղող կենդանի բարբառէն։ Վերջին կէտն ինձ համար անտարակուսելի է, ան-

---

1. Այդ դարերու ուսմիօրէնի վիճակը նախ ակներեւ ընելու համար, դիմենք այս տեղ՝ Գերպ. Այսօրինակ բաժանման համաձայն՝ մի մի համառօտ օրինակներ գլխաւոր չորս գաւառականներէն, որոնք ըստ արդի ընդհանուր բաժանման կը կազմեն Արեւմտեան և Արեւելեան գաւառականները։

Ա. Գաւառ. « Իմ քիմի բուշիսի մասալնիր կ'եղնայ իսա՝ հիմայ նախ արէ, հէչ չիմ պիզարի՝ մոխկ անիմ անար անար. զբատ ես իսկի կարդալ չիմ գինա. չիմ գինա քի նասլ վախտիսի անդընիմ »։

Բ. Գաւառ. « Չալխին հախին սա խրտար իֆտիրա, իլլէ սա խազալը քէրթէին. հանի իրաւ պիլէ ըլլայ, կենէ ես անանկ պէլլէմիչ եմ ըրեր չի՛ հախ չախըրտըչին ալ սրան կայ. հէմ պաչիս վախտ ըլլայ՝ կայ ես, սոր ա՛նգա վիւսաատ չըլլուիր »։

Գ. Գաւառ. « Ա՛ւ իժով պի սիրէի ըլլալու հետ մանչին յեճնէքութիւնը՝ քան տօլվըրաւոր պէրկող պազրկինաէն մօտը, որ անխարը նացա հախին կի քաշին. խորդն որ շատ տարտաւը կի մաշվին սարը չունին էքմեա յախլուխին օգկայի խօնուխինայ վրայէ, զի կ'ասին Թէ Աստուած պաչիչի է գամէն մարդ իր փայովը՝ իր հալին գօրա, ու դրել է աշխրքի մէջը սօյ սօյ մարդիկը՝ ընարը սօյ սօյ չիլականեր պազլանուն մէջը »։

Դ. Գաւառ. « Ախա էն անարին օքմին չէր մալի բօլվարի բաման անուի. չունքի տնայ էն օր իրանց քօրփայ օղուշպը եարալուշ փարալուշ եսիր ըլլել. որին քօրկուի ապանուի էին էն հարամզադէքը, որին ապղ ապղ քարին տալիս. ձին չալփարնով լեզուն էին բողազիցը դուս ճոխտուի, ժէկէլին սուրտուիչ տանուի, ջուրն ածուի ու էնդեղ բողմիչ անուի. որ ապղ վիլեարումը խալխին չանը սասանմիչ ըլուի էր »։

Նօտրագրուածներն են պարսիկ, թաթար և Թրքական բառերն և բացատրութիւնքն, որոնց համար ըսինք վերը, Թէ ամէն գաւառականի վրայ սիրող հանդիսացած են դժբաղդաբար։ Ականջն այժմ կարող ենք աւելցնել, Թէ յիշեալ լեզուաց սճն, եղանակն ու աստիճան կերպն, ինչպէս և լեզուական կանոններ, ապրած են գաւառականներուն մէջ աւելի կամ պակաս, որոնք ճանչնալն և որոշելը շատ աւելի դժուար է, դարերով անոնց ընտելանալէն վերջ։ Այդ պատճառաւ է անշուշտ՝ որ այսօր իսկ ընդհանուր հայ ազգին այդ լեզուով կը պարպաչէ տակաւին։

միջակէս «վերագտանել»էն երկու տող յառաջ բրած բացատրութեամբը։ Եւ այս պատճառաւ է որ անդրանիկ Գերակատութիւնս, որ և է գերակատութենէ ասելի համաձայն կրնայ համարուիլ նաեւ այսօրուան արեւմտեայ գաւառականին, և ասելի գործնական է և պարզ. մինչդեռ միւսներէն ոմանք հին կամ միջինգարեան ոսկրօրէնի գանազանութիւններով խճողուած են, և ոմանք ալ միայն Կ. Պոլսի նոր կամ գրական աշխարհաբարի առմանց համեմատ յերիւրեալ են, որոնք ոչ միայն գաւառականներուն չեն համաձայներ, այլ և գաւառացիներուն անհասկնալի կը մնան՝ լեզուական նորաձեւութիւններով։

Մխիթար որչափ որ իր գրաբարի Գերակատութեան մէջ հոլովներու թիւը բազմացուցեր է, այնչափ այլ աշխարհաբարին մէջ նուազեցուցեր եւ վեցի ամփոփած է զանոնք. այիներն են ուղ. սեռ. տր. հյց. բցա. գործ։ Պատճառն յայտնի է. վասն զի ինչպէս իր ժամանակի անկեալ գրաբարին մէջ տասն՝ այսպէս այլ աշխարհաբարին մէջ վեց միայն գործածական կը գտնէր։ Երեք միայն կանոնաւոր կամ պարզ հոլովմունք կը դնէ հիմնադիրս. առաջնոյն սեռականը կը վերջանայ ի, (օր. իմն, հաց–հացի), երկրորդին ու[1], (զոր օր. հաւ-հաւու). երրորդին աւ (զոր օր. դուռն, դռան)։ Բոլոր միւսներուն յոգն. ուղղականը եր կը վերջանայ իսկ մնացածներուն ներ (օր. մանկաւ, մանկաւներ)։ Հինգ հատ ալ անկանոն կամ խառն հոլովումներ կը դնէ, ինչպէս՝ ոեր — սիրոջ, եղբայր — եղբօր, օր — աւուր, բաղնիք — բաղնեց։ Երկու օրինակ ալ անյոգնակի յառուկ անուանց կու տայ (զոր օրինակ՝ Տիրուհի, սեռ. Տիրուհէ, Ադամ — Ադամայ)։ Այն հոլովմանց մէջ — ի բաց առեալ վերջին երկու օրինակները — որոնք՝ թէ՛ յեզականն և թէ՛ յոգնականին՝ իր վերջի ձով միայն կը տարբերի սեռականէն։ Հայցականն ալ իր վերջը յաւելեալ երով կը տարբերի ուղղականէն։

Բայց ամենէն ասելի հետաքրքրական և եզական երեւոյթ մի կ'ընծայէ յոգնակի բացառականը, որ փոխանակ ըստ այժմեան սովորութեան երէն և ներէն վերջաւորութեանց՝ երուն[2] և ներուն կը վերջացնէ միշտ։ Բայց այս ալ ըսենք՝ որ այդպէս վարուած է Մխիթար — կամ լաւ եւս ժողովուրդն — այն բառերուն հետ՝ որոնց յոգնակի ուղղականն եր կամ ներ կը վերջանայ. իսկ ուրիշ բառերու՝ (օր. իմն ոեր) որուն յոգն. ուղղ. է սիրբտիք, սեռականն ալ ընդհակառակն կը հոլովի սիրբտոցմէն, ձիշդ նախընթացներու եզ. բացառականին պէս, ասելցնելով ասկ մասնիկը յոգն. սեռականին վրայ։ Յոգնակի ուղղականներն առհասարակ՝ եզակի սեռականէն կը ձեւացնէ, ասելցնելով անոր արմատին վրայ եր, ներ, բներ, շրտիք մասնիկները, փոխանակ դասական լեզուի ք տառին, և կամ համաձայն նախնեաց նահապետաց, որեաք, բարձրքեաք, և այլն, յոգնական գործածութեան, և կրճատելով ա ձայնաւորը։

Միջակ անուններուս՝ ով(որ), ակից, ասէն՝ հայցականներն՝ ուղղականին հարթ հաւասար կը գրուի ով–որովք, ակից–ակիրանիս, ասէնս, առանց պայ նախադրութեան կամ ք վերջաւորի։ Իսկ միջակ անուան սեռականն՝ ըլլալ կը գրէ փոխանակ ըլլոյի, հայց. ալ կը գնէ ըլլը։

Նախ ևս գրանուան եզակի հայցականը՝ գրաբարի և Տաթեւի գաւառականի պէս՝ գիս կը գրէ. իսկ բացառ. յիսէ, ինչպէս յոգն. հայց. ալ գէզ, և բացառ. սէնէ. տրականն ալ ըլձի կը գրէ, և ոչ թէ ինձի։ Այս կերպով հոլովուած են նաեւ դուռ և դուք գեր-

---

1. Մխիթարայ այս պարզ և հանճարեղ վարդապետութեան հակառակ՝ այսօր շատերը անընտրողաբար նոյն իսկ երկրորդ և երրորդ հոլովմանց սեռականն ի կը վերջացնեն (օր. հաւ — հաւի կ'ընեն, եկեղեցի — եկեղեցիի, խաղաղութիւն — խաղաղութիւնի, դուռ–դուռի, և այլն, որ այնքան անտրամաբան է՝ որքան հակառակ գաւառական գործածական օրինաց և սովորութեան։

2. Որն կամ նուն վերջացող անձնախդիր բացառականս, եթէ տրականէ ձեւացած համարինք և եթէ սեռականէ, անտարակոյս յունարէնէ ներմուծուած է մեր նախնեաց ոսկրօրէնին մէջ։ Բայց թէ ո՛րը արդեօք, յայտնի չէ։ Գ. գաւառականիս, այն է՝ Լեհաստան–Ասորեայ արեւմտեայ աշխարհաբարին մէջ՝ օր. կայ՝ «Ձինք քաշվե ետ՝ դիժուարանքնուն», — «Թաղուիլ են փրփուրնուն», և այլն։ Գերազ. Այտընեան (Քեր. էջ 176–177) նոր գործածուած օրինակներ եւս կու տայ, ինչպէս օր. «Անպիսի նենգութիւն մտքերնուս ալ չէր անցեր», — «Եթէ ձեռվրնուդ բան չի գար, մի՛ յանդգնիք», և այլն, բայց առանց նշանակելու, թէ ո՞ր գաւառականէն է. սակայն կազմութեան համաձայնութենէն իսկ կը տեսնուի, թէ փոքր Ասիոյ գաւառաբարբառէ մ'է։

անուանց հայցականներն և բացառականները։ Երկրորդ՝ դերանուան թէ եզակին և թէ յոգնակի սրականները՝ կրկին ձեւով կ'ասանդէ, այսինքն են՝ քեզ և քեզի, ձեզ և ձեզի։ Երրորդ դերանուան ալ եզակի հայցականը՝ զսի, և բացառականն ալ անկից կը գրէ. իսկ յոգնակի հայց. զանունք և բացառականն ալ անունցուն։

Սա, դա, նա դերանուններն՝ այս, այդ, այն ցուցականներէն զանազանելու համար՝ աշխարհաբարի մէջ իրարմէ խիստ տարբեր կերպով հոլովուած են — մանաւանդ առոջինները — քան ինչ որ են գրաբարի մէջ։ Առոջինը՝ սա՝ հայցականի հետ նոյն է թէ յեզականն և թէ յոգնականին մէջ։ Եզակի սրակ. ու սեռ. եղած են սրմէ, բացառականը՝ սրկից, և գործ. սրմով։ Իսկ յոգն. ուղղ. ու հայց. սրմունք, սեռականն ու սրակ. սրմանց. բացառականը սրմունցուն, և գործ. սրմունցունով։ Երկրորդ դէմքը փոխանակ դա ի՝ սրմի [1] կը գրուի յուղղական, իսկ հայցականը՝ սրմի. սրականն ու սեռ. սրմէ, բացառականը՝ սրմից, և գործ. սրմով։ Այսպէս հոլովուած է և երրորդ դէմքը նա կամ նմի։ Ցուցականներն՝ սա, սա և ինքն՝ ի հայցականն զ մի առած են, այսինքն են՝ զսա — զսանք, զսա — զսանք, զինքն — զիրենք։ Երրորդ դէմքին սեռականը միայն՝ իր՝ տարբեր է սրականէն, որ կը գրուի իրեն։

Գալով բայերուն՝ դիտել կու տանք նախ՝ որ Մխիթար արշափ որ ալ տպագրեալ Քերականութեան մէջ էական բայը դերանունով ի միասին կը լծորդէ. « Ես եմ, դու ես, նա է », և այլն, գրեթէ ամէն ժամանակաց մէջ. սակայն ձեռագրին մէջ առանց դերանուան են։ Յարակատարն ու Գերակատարն ալ կը դնէ միշտ սր և է բայի լծորդութեանց մէջ։ Վերջնոյն յոգնակի առոջին դէմքը միշտ հանք կը գրէ (օր. մենք եղեր էանք [2]). այսպէս կը գրէ նաեւ սահմ. եղան. անկատ. յոգն. առոջին դէմքը։ Միւս ներգ. և կրաւ. բայերը լծորդած ժամանակ՝ սահ. ներկայի և անկատարի դիմաց միշտ կու դնէ՝ երբ բաղաձայնով կը սկսին, և կ՝ ու ձայնաւոր երկրաբարբառով (օր. կու վառեմ, կու վառէի, կ'ուտեմ, կ'ուտէի). իսկ ի, ե, ա, ո ձայնաւորով սկսողներուն դիմաց կ միայն (օր. կասեմ, կերթամ, կիջնեմ)։ Ապառնին՝ միշտ սահմ. եղ. ներկայի պէս կը գրէ, օր. « Ես ըլլամ, դու ըլլաս, ան ըլլայ [3], — վառեմ, վառես, վառէ », առանց որդեայց պիտի [4] օժանդակին, զոր դի կու մանկան բոցակայութենէն իսկ ապառնի ըլլալը կը հասկցուի։ Մխիթար կարեւոր դիտողութիւն մի կ'ընէ չատ մը բայերու սահմանական ներկայի Գ. դէմքի և հրամայականի եզ. Բ. դէմքի վերջին ձայնաւորի մասին, ըսելով՝ թէ աշխարհաբար լեզուին մէջ այնպիսի ձայնով մի կ'եզերի է տառը, որ ոչ հի հնչում ունի, և ոչ այլ երի, այլ երկուքին միջնակն։ Բայց որովհետեւ ուրիշ կերպով կարելի չէր այդ հնչումը ճշդիւ նշանակել, ուստի ստիպուեցանք է դնել նաև այդ տեղերում։ Սակայն պէտք է գիտնալ՝ որ այդ են երկար ձայնիւ չի արտաբերուիր՝ ինչպէս գրաբարի մէջ, այլ « գոյածուցեալ կերպիւ, և իբր առ հնչումն երի (ը) հակեցեալ »։

Թէպետեւ ինքն այդ ձայնաւորին աշխարհաբարի մէջ գրաբարէն տարբեր հնչուելն պատճառը չի տար, սակայն Թրքերենի ազդեցութեան հետեւանք է անշուշտ, ըստ որում հֆէնտի, հվէտ, և այլ բառերու նախադաս էյերն այսօր իսկ ա և ը տառերու

---

1. Դիտելու է՝ որ ս տառը դային փոխանակած է այն պատճառաւ, որ գաւառացին այժմեան կ. Պոլսեցի գրողներէն տարբեր կերպով կը հնչէր դան, այսինքն է՝ յուն. ζ կամ լատին d տառին պէս. ինչպէս կ'արտասանէին մեր Թարգմանիչք և այժմ ռուսահայք։ Հետեւաբար, գրուելու է տուի, ինչպէս նա՝ նուի, և սա՝ սուի։ Շատեր յարդեաց կը գործածեն նաեւ ասի, աս, անի, և ասիկա, աստիկա, անիկա. այսպէս նաեւ սուիկա, դուիկա, նուիկա ձեւերը։ Բայց Մխիթար իր Քերականութեան մէջ գանց ըրած է՝ աւանդել զսանք՝ անշուշտ շփոթութիւն չպատճառելու ուսանողաց, ինչպէս և աշխարհաբարի միակերպութեան համար։

2. Ն տառը դիտմամբ կամ բնական կերպով ներմուծուած է աշխարհաբարի մէջ գրաբարէն գանազանելու, և կամ հնչական օրինաց համար։ Արեւելեան գաւառաբարբառներէն ոմանց մէջ ալ անոր հետքը նկատելի է։

3. Էական բայի լծորդութեան մէջ միայն ըլլալ, ըլլայ, ըլլալոյ, ըլլալով, իսկ գրութեանց մէջ միշտ լինել բայը կը գործածէ։

4. Որը սակայն աշխարհաբար շարադրած ուրիշ գրուածներուն մէջ գործածած է։

մօտ ձայնով կ'արտասանուին, ինչպէս անգղ. but բառը՝ բէթ, բըր, և բաթ անորիչ ձայնները ժէջ կը տատանի: Այ՛, այսպիսի ապացոյցներով է՝ որ ոչ միայն է տառը արեւելեան գաւառականներուն ժէջ բոլորովին այբի փոխուած է (օր. «առէմ ա» = է) այլ նոյն իսկ արեւմտեան գաւառականաց ժէջ ա տառը եթի փոխուած է (օր. կ'ըսեմ, կ'ընեմ, փոխանակ կ'ասեմ, կ'անեմ գրելու:

Թուական անուններ մը, ինչ՝ երբէք առանձին գործածած չէ իր Քերականութեան ժէջ, այլ միշտ ժէկ և ժի ի միասին. ասկայն գնելով ժէկ յատակ և ժի յետ անուան, (օր. ժէկ հարցմունք ժի անեմ): Այսպէս նաեւ ժխտական մասնիկս չը, չի հապաւած է Մխիթարայ քով, և կամ ոչ երբէք գործածուած: Սա թէ բաղաձայնով և թէ ձայնաւորով սկսող բայերու դիմաց միշտ չ կը գործածէ (օր. «չունէի, թէ չէ, չգիտցի, չմեռայրէք): Ն-ի մասնիկը ըստ Մխիթարայ՝ թէ, երբ չորկապով սկսող նախադասութեան ժէջ՝ բային վերջը յօրուելով՝ պայմանական եղանակը կը շինէ (օր. եթէ տեսնեմ նէ, կը խօսիմ):

Հիմա, հիմակ այժմ սովորական գործած մակբային տեղ՝ հիմի և հիմիկ կը գործածէ ընդհանրապէս, որ գրաբար այժմիկին մօտ է: Բանի տեղ՝ միշտ ատեմ և կ'ընեմի տեղ կ'անեմ բայերը կը գործածէ: Թէ բառերու և թէ կրաւորական բայերու ուղղագրութեանց ժէջ յաճախ կը գործած է փոխանակ ռ երկբարբառին՝ ուրթ ւ և ուրթ վ տառը, երբ ունի իրեն յետադաս ի ձայնաւորը (օր. «տվի = տուի, կերած = կերուած». այսպէս և ուտող, փոխի, ճաշակի, ապնի, արժի): Ուրեմն Գ. Աղայեանցի, Աբեղեանի և այլոց վերջին ժամանակներս այս մասին հանած շառաչը նոր բան չէ, վասն զի ասկից գրեթէ երկու դար յառաջ գործածեր է Մխիթար, և ապագրութեամբ իսկ տարածեր է աշխարհասար գրութեան՝ գրաբարէն ունեցած այս և ուրիշ ազգագրական տարբերութիւնները, համաձայն ժողովրդեան արտասանութեան:

Դ. գլխու ժէջ արտիւս դիտողութիւններ կ'ընէ աշխարհաբարի ժէջ կանոնաւոր լծորդութեանց տակ ինկող ինչ ինչ չեզոք և այլ բայերուն կատարեալին՝ փոխանակ ևցի վերջաւորութեան՝ երբեմն ի և երբեմն այ վերջաւորելուն վրայ, ինչպէս հրամայականին ալ փոխանակ է եկերելուն՝ ուրթ իր (օր. գոր) եկերելն, և ուրթ ալ փոխանակ իրի՝ է և ա վերջաւորելուն (օր. կանեմ բայի կատ. Ա.բի, հրամայ. արէ. և խնգամ բայի կատ. խնդացի, հրամ. խնդա:

Ջեմ, չես, չէ, և այլն, էական բայատակաւն բային համար կը վարդապետէ, թէ աշխարհաբարի ժէջ երբ կը միանայ եմ, ամ, ուս, իմ լծորդուող բայերուն հետ՝ այդ բայերու վերջի ժէնը (մ) ինքը կ'առնու, և այն՝ իր դէմքովն և թուով կը լծորդէ ինչ, (օր. սիրեմ, խմանամ, թողում, նստիմ, կը լինին չեմ սիրեր, չեմ խմանար, չեմ թողուր, չեմ նստիր. այսպէս և միւս ժամանակները:

Ե. գլխուժ խօսելով ընդունելութեան վրայ, կը յայտարարէ, թէ չորս կերպ կը վերջաւորին. այսինքն՝ օղ, աժ, ուս, իր (օր. ուտօղ, կերած, ուտելու, ուտելիք): Օղ վերջաւորողները՝ ներկայ ժամանակ կը նշանակեն, աժ եղերողները՝ անցեալ ժամանակ, ուս եղերողները՝ ապառնի ժամանակ. այս երեքս՝ ներգործական բայերուն կը վերաբերին, որոնց կրաւորականներու ընդունելութիւնքը կը լինին սիրուող, սիրուած, և յօրնակին՝ սիրելիր: Առաջին երկուքը՝ ներգործական ընդունելութեանց պէս կը հոլովին, իսկ վերջինս ոչ. վասն զի կրաւորական ըլլալէն զատ՝ ապառնի ժամանակ եւս կը նշանակէ:

Բ. մասի Բ. գլխուժ, խօսելով տառերու մասին՝ ընդհանրապէս՝ դիտել կու տայ նախ՝ թէ ամէն ազգի լեզուի ժէջ քանի՛ «հնչուղ» ձայն կայ, այնչափ ալ դիր հնարուած է՝ զանոնք նշանակելու համար. իսկ որովհետեւ մեր ազգային լեզուի ժէջ 38 կերպ հնչուղ ձայն կայ, անոր համար այնչափ այլ դիր հնարուած է, զանոնք ազգ արտասանելու: Իսկ խօսելով առանձինն մեր ձայնաւորաց և բաղաձայն տառերու վրայ, վերջիններս այսպէս կը սահմանէ. «Բաղաձայն առանձին՝ ուրիշի (այսինքն ձայնաւորի) հետ միասին չիներովին՝ ձայն հանիլ չէ. ինչպէս փորձելով յայտնի է որ բաղաձայն գրերը չենք կարեր մեր բերնէն ձայնով դուրս բերել՝ մինչեւ որ ժէկ ձայնաւոր գիր ժի անոնց հետ չդնենք. զոր օր. երբ առնենք բեն՝ աս տեղս ևչ կու մանէ»: Սակայն ըստ Մխիթարայ՝ ձայնաւոր գրերն ալ իրենց հետ ուրիշ (բաղաձայն) գիր ունել կ'երեւին, (ինչպէս «այրն՝ չի և բեն ունի, եղն՝ չայ ունի». բայց անոր համար չեն գրուիր այս գրերս՝ որ ձայն հանեն, այլ միայն ուտանողաց դիւրութեան համար, զի ձայնաւորք՝ իրենք իրենցմէ առանձին եւս ձայն կը հանեն:

Ակնյ աւելի կարեւորութիւն ունի աշխարհաբարի ուղղագրութեան համար Գ. դիտուն մէջ վանեցիս մասին խօսած ժամանակ՝ բրած հետեւեալ դիտողութիւնը. «Գիտնալ՝ որ այս չորս վանից՝ այ, ոյ, իւ, եա այնքան չեն բաներ աշխարհաբար լեզուին մէջ, ինչպէս միշտ կու բանին գրաբար լեզուին մէջ... ասոնք ի աշխարհաբար լեզուին մէջ այլ վանից ալ կը փոխուին, այլ՝ աւելի, յայն՝ յաւելի, ձայլ՝ ձաւելի, սայլ՝ սալի, գայլ՝ գալի, միայն՝ միանի. այսպէս ուրեմն գրաբարի ոյ վանից փոխուելով հնուն՝ գոյն լինի գոյն, յոյսը՝ յոյս, բոյսը՝ բոյս, քոյրը՝ քոյր, և այլն։ Այսպէս նաեւ գրաբարի իւ երկբարբառով կազմուած վանից՝ ուի և երթալն ալ իր և ի կը փոխուի աշխարհաբարի մէջ (օր. ձիւն՝ ձուն, սիւն՝ սուն, հիւր՝ հուր, իւր՝ իր, արդուիւն՝ արդուին, և այլն։ Իսկ երկբարբառն՝ աշխարհաբարի մէջ ան կը վերածուի յաճախ, և այ՝ ի (օր. քրիստոնեայ՝ քրիստոնի, այգի՝ հգի։ Դարձեալ գրաբար բայերու ետք, իրք եզերմունքն՝ աշխարհաբարի մէջ այնչափ չգործածուելուն համար՝ այսպիսի վանկերու մէն գիրը նուի կը փոխուի (օր. եմք, լինիմք և մեք՝ գրելու է ենք, լինինք, ասեմք, ասենք)։

Ե. դիտեմ դիտել կու տայ նախ, թէ շատ բառեր կան աշխարհաբար լեզուին մէջ, որք գրաբարին մէջ բնաւ չեն բաներ. (օր. «Ձեռք կու տայ, ընդմէր անեմ, յապով = ապահովութեամբ, գար = փորձութիւն, անօթի, փնտռել, մշտել, հրմշտիկել, յոգնել», և այլն)։ Բ. Կան շատ բառեր ալ որք թէպէտ և գրաբար լեզուի բառեր են, բայց կամ գրեր պակսեցնելով և կամ գրեր փոխելով՝ աշխարհաբարին յատուկ դարձած են (օր. աւնել = առնելի, աղչիկ = ազատչելի, պաղտել = պազատելի, ժարտիլ = ժարտաւիլի, լինել = լնուլի, ձամբայ = ճանապարհի, առլիկ = առլորելի, մօռնալ = մոռանալու, և այլն). և թէ «մեծ բաժինն աշխարհաբար լեզուի բառերուն՝ այս կերպով եղեր են։ Գ. Կան աշխարհաբարի մէջ շատ և շատ բառեր ալ, որոնք թէեւ գրաբար լեզուի բառերու հետ նոյն են, ինչպէս օր. ազգաւ, հաց, ջուր, հող, թշնամի, սիրել, առնել, գնել, տալ, և այլն. բայց որովհետեւ իրենց հոլովուելն և լծորդուելն ուրիշ կերպ կ'ըլլայ, անոր համար ալ գրաբար լեզուի բառերէն կը զատուին։

Զ. դիտեմ խօսելով անուան վրայ կ'ըսէ. «Կան որ նախագադափար կամ հին կ'ասուին, և կան որ ածանցական կ'ասուին։ Նախագադափարն այն է՝ որ թէ պարզ անուն լինի թէ բարդ, թէ ածական, թէ գոյական, իր վերջաւորութեան վերայ ուրիշ վանկ մի չէ դրեր, և ինքն իր առաջին ունեցած նշանակութիւնն կու պահէ. ինչպէս՝ արքայ, մարդ, լոյս, և այլն։ Ածանցական անունն այն է՝ որ իր վերայ մէկ ուրիշ վանկ մի դրեր է, և ինքն իր առաջին նշանակութենէն հաներ է, և ածանցեր՝ ուրիշ կերպով նշանակել տերն (օր. մարգկային, արքայական, լուսաւոր, և այլն)։ Մխիթար 19 ածանցներու տեսակներ կը նշանակէ աշխարհաբարի մէջ, այսպէս. ական, օր. աշխարհական, այիւ = ձմեռնային, եղեւ = քարեղեւ, եւր = ձիաւոր, ենի = նռնենի, ցի = խելացի, ցուռ = սերացուռ, ուռան = աճամուռան, ոց = ծագկոց, ուռ = քարուռ, ուռի = մեղուռի, լուսուռի, ուկ = քուրուկ, մարդուկ, իկ = հացիկ, ջրիկ. = ակ = մանակ. ուռ = ձիթուռ, եղուռ. որդ = փոխանորդ. իչ = գրիչ, բրիչ. պան = դռնապան, պարտիզպան, ջրեպան. ուրիւն = մարդուրիւն, և այլն, որք յոքնակի եւս կը գրուին, և եօթն կերպ կը հոլովուին։

Է. դիտեմ խօսելով բայերուն վրայ ուռ հասարակ՝ աշխարհաբարին մէջ, կ'ըսէ թէ չորս կերպ վերջաւորութիւն ունին, այսինքն՝ եմ, ամ, ուս, իմ։ Լսական, ներգործական, կրաւորական և չեզոք բայերէն զատ՝ երկու ուրիշ բայեր եւս կը դնէ աշխարհաբարին մէջ, այսինքն են՝ ձայնակրական, զոր այսպէս կը սահմանէ. «Որ իրին արարքն այնպէս ցոյց կու տայ, որ նոյն արարքն ոչ ուրիշէն՝ նոյն իրին վրայ եկած, և ոչ նոյն իրէն՝ ուրիշին վրայ գնացած. ինչպէս՝ կ'ապրիմ, կու նստիմ, կու գալչիմ, կու բերիմ». և անցողական բայ՝ «որ իր նշանակած արարքն՝ որու վերայ որ կու լինի, մէկ ուրիշի մի ձեռօք լինելն ցոյց կու տայ»։ Իսկ թէ աշխարհաբարի մէջ ինչպէս կը ձեռնադայ այդ բայն, և ո՞րն է անոր արտաքին ձեւը, հետեւեալ նուրբ դիտողութիւնը կ'ընէ Մխիթար. «Գիտնալ պէտք է՝ որ այս մեր աշխարհաբար լեզուին մէջ եմ կամ ում վերջաւորօք բայերն՝ անցողական ժամանակ կու լինին. բայց ամ վերջաւորողներուն մէջէն և իմ վերջաւորող ձայնակրականներուն մէջէն խիստ շատ կու լինին։ Նաեւ պէտք է գիտնալ, որ ամ վերջաւորող բայերուն մէջ կան՝ որ ամ վանկէն յառաջ ի դիր ունին, ինչպէս բարկանամ, և կամ որ չունին, ինչպէս փոքրանամ։ Անոնք որ ի դիր ունին՝ ամ վանկէն յառաջ, պէտք է՝ որ այն ևս դիրն և ամ վանկն միասին վերնան, և ցնիմ

ձայնս դրւի անանց տեղն, որ անցողական լինի. զոր օրինակ, կու բարկանամէն՝ կու բարկացնեմ, և այլն: Եւ անունք որ չունին ամ վանկէն յառաջ նու գիր, անանց միայն ուն գիրն պիտի վերնայ, և ցնեմ ձայնս դրւի, որ անցողական լինին. զոր օրինակ, կու փոքքառամ, կու փոքքառացնեմ: Բայց իմ վերջաւորօղ ձայնակրական բայերն երբ անցողական լինին, միշտ իմ վանկն կու վերնայ, և ի ցնեմ, կամ ցնեմ ձայնս կու դրւի. օր. կու մխիմ, կու մսխեցնեմ, և այլն: Այս ալ գիտնալու է որ մեր աշխարհաբար լեզուին մէջ անցողական բայն, կրաւորական չունի »:

Թ. գլխուն մէջ խնամքով կը նշանակէ՝ թէ աշխարհաբարի մէջ որ բայերն ազգական հոլովով անուն կ'ուզեն, որոնք սրտական հոլով, որոնք դարձեալ հայցական կ'ուզեն, և որոնք բացառական: Գործիական հոլովով անուն կ'ուզեն հարբիլ, զօրանալ, յղուիլ, վհծնալ, ամիլ, հարստանալ, առողջանալ, գարդարուիլ, աղքտնալ, գիրնալ, և այլն: Կան բայեր՝ որ հայցական հոլով առնելէն ետքը՝ սրտական ալ կ'ուզեն, ինչպէս, գիտցնել տալ, ցրցրնել, հրամայել, երեւցնել, յայտնել, ուսանիլ, և այլն: Կան նաեւ մի բայեր, որ հայցական հոլով առնելէն ետեւ՝ բացառական կ'ուզեն. ինչպէս՝ ազատել, սրձիլ, խնդրել, հեռացնել, հանիլ, զատել, և այլն: Կան ուրիշներ ալ որ հայցական առնելէն յետոյ՝ գործիական ալ կ'ուզեն (օր. զինքը հարբեցոյց գինով, գլուխը զարդարեց ծաղկըներով):

Ապա գիտել կու տայ՝ որ աշխարհաբարին մէջ բայերուն խնդիրները շատ անգամ բայէն յառաջ կը դրուին. ուստի նայելու է՝ որ տէր բայի չկարծուին: Երկրորդ՝ թէ տէր բային շատ տեղ զօրութեամբ է, և մտքով պիտի խմացուի. զի աշխարհաբարի մէջ քիչ տեղ կը հանդիպի, կ'ըսէ, որ ներգործութեամբ և յայտնապէս դրուի:

Ժ. գլխուն մէջ նախադրութեանց վրայ մանրամասն կը խօսի, և գիտել կու տայ, որ աշխարհաբարին մէջ ներքեւ, մէջ, վրայ, առջեւ, ետեւ, առջեւէն, ետեւէն, համար, տեղի, դիմաց, քան, քան սեռական հոլով կ'առնուն: Հետ, մօտ, առանց, դէմ նախադրութիւններն՝ սրտական կ'ուզեն: Հինչօր, դէպ նախադրութիւնները՝ նախդր. տր. կ'ուզեն: Քանի նախադրութիւնը միշտ հայցական հոլով կ'ուզէ. և այդ հայցականը միշտ զ նախդիրը պիտի ունենայ բաղդատական նախադասութեան մէջ. (օր. Պետրոսն լաւ է քան զԿիրակոսն): Եւ գիտել կու տայ, թէ «Եւ ոչ է պարտ ասել՝ հայը լաւ է քան միսը»: Դուրս, ետքը, հետու, ի զատ նախադրութիւնները բացառական հոլով կ'առնուն (օր. անէն դուրս, հայէն ետքը): Ցետ, պատաքոյ նախադրութիւններն, որոնք գրաբար լեզուին մէջ սեռական հոլով կ'առնուն, աշխարհաբարին մէջ ընդհակառակն կը լինին յետք, դուրս, և բացառական հոլով կ'առնուն. իսկ քան՝ որ գրաբարի մէջ սրտական հոլով կ'առնու, աշխարհաբարի մէջ սեռական կ'ուզէ: Զ, ի, յ, ց գրերն՝ իրրեւ նախադրութիւն՝ խնդիր չեն առնուր, այլ միայն անուններուն հոլով կը չինեն. բայց աշխարհաբարին մէջ քիչ անգամ պէտք կ'ըլլայ որ անուններուն հոլով չինեն:

ԺԱ. գլխուամ համաձայնութեան կամ չարադրութեան վրայ կը խօսի, վարդապետելով համառօտիւ անոր կարեւոր մասունքը և կազմութեան եղանակն, և աշխարհաբարի առանձնայատկութիւնքը: Ընդարձակ կերպով կը խօսի որ դերանուան և անոր այլ և այլ առմանց վրայ, և ուշադիր կ'ընէ մանաւանդ կերպով՝ թէ որ յարաբերականը՝ գրաբար լեզուին մէջ կը հոլովի, և յոքնական է, և անցած անունն յառաջ կը բերէ. բայց այս աշխարհաբար լեզուիս մէջ միշտ ուղղական, և եզակի ձեւով՝ անցած անուններ յառաջ կը բերէ. իսկ հարկաւոր տեղն երբ հոլովել պէտք ըլլայ, իր հետ կ'առնու այս դերանունն՝ ան, կամ իր. որքա կը հոլովին և յոքնական կ'ըլլան, իսկ ինքը կը ձեայ անխախտ: Այս բանս ցոյց տալու համար կը դնէ աշխարհաբար և գրաբար շատ նախադասութիւններ դիմացէ դիմաց. ուր վերջնոյն մէջ որ յարաբերականն՝ յարաբերուած անուան պէս կը լինի ուղղական, սեռական, սրտական, հայցական բացառական, գործիական՝ թէ եզակին և թէ յոքնակին. իսկ աշխարհաբարին մէջ կը ձեայ միշտ անհոլով և անխոխոխ:

ԺԲ. գլխու մէջ խօսելով բայերու խնդրառութեանց մասին՝ կարեւոր կէտեր գիտել կու տայ, նախ թէ բայերուն բնական է, որ իրենց բնութեանն յարմար խնդիր առնուն. սակայն աշխարհաբարի մէջ « երբ անեռեւոյթ բայն առջեւնին կ'ընկնի, կ'ըսէ, և չեն առնուր գիրենց խնդիրն, և այնպէս անեռեւոյթ բայն ինչ խնդիր որ կ'ուզէ, նոյնն կու գրւի ». Բ. գիտել կու տայ՝ որ «երբեմն բայն առջև մէկ բոլոր բան մի կու գայ, և բային խնդիրը կու խառնուի. (օր. Պետրոսն ասաց. եկո՛, մէկ տեղ նստինք համարենիս կարգանք). և այն բոլոր բանն (այսինքն է՝ եկո՛ մէկ տեղ նստինք համարենիս

կարգանք) է երբեւ խնդիր այն բային»։ Գ. թէ համարնիս՝ է հայց. խնդիր, որուն վերջին վանկը ևիս՝ գօրութեամբ մեր կը նշանակէ, կամ լաւ եւս փոխանակ մերի կը դրուի՝ ոչ միայն հոս, այլ և ուր որ հանդիպի աշխարհաբարին մէջ։

Ա. Գ. գլուխը նուիրած է Մխիթար՝ յառաջ կերպով ուղղականն և աննախդիր տրականն ինչ ինչ բառերու — որոնք անորոշ են — հայցական հոլովէն զանազանելու խնդրոյն։ Ասոր այլ և այլ օրինակներով զայն պարզելէն զուրս, հետեւեալ յառաջ կանոնն եւս գծած է առ այն, զոր կարեւոր կը համարինք մէջ բերել՝ իւր խակ աշխարհաբարով. «Պէտք է գիտնալ, որ եր գիրն անուններուն վերջը միշտ բացորոշելու համար կու դրուի այս մեր աշխարհաբար լեզուին մէջ. նորա համար շարադրութեան և խօսից մէջ՝ անունն թէ՛ ուղղական լինի, թէ գօրութեամբ նախդրեա տրական և թէ՛ հայցական, եթէ բացորոշելու պիտանաւորութիւն՝ ունի, եր գիրը կ'առնու, և եթէ չունի՝ առանց եր գրի կու ձգայ, և ինչ բայի որ խնդիր եղեր է, այն բային ազած խնդիրն հայելով՝ պիտի իմացուի նոյն անունն՝ ուղղական լինել, նախդրեա տրական և կամ հայցական»։

Այս փոքրիկ Քերականութեամբ՝ մի ուրիշ մեծ և կարեւոր ծառայութիւն եւս մատուցած է Մխիթար՝ աշխարհաբարը ուսանողաց և գրողներուն, անոր վերջը դրուած բառարանովը, ուր գրեթէ 1800ի չափ բառեր և բայեր գաւառացուց յառաջ կերպով հոլովուած և խոնարհուած են. այսինքն առաջիններն՝ իրենց եզակի սեռականովը և յոգնակի ուղղականովը. իսկ վերջիններս՝ կատարեալի Ա. և Գ. դէմքերովը նշանակուած։ Մեր նոր աշխարհաբարեան հրատարակիչներն և գրողները՝ այք յանուն գաւառական լեզուին՝ նոր նոր սեռականներ կը շինեն նոյն խակ գրաբարէն փոխառեալ բառերու, հակառակ անոնց ազգային գործած սեռականին և տրականին, եթէ աչք անցնելու լլան այդ փոքրիկ աշխարհաբար բառարանն, ինչպէս և Քերականութեան մէջ իւրաքանչիւր հոլովման իրեւ օրինակներ մէջ բերուած բառերը, ակներեւ պիտի տեսնեն, որ իրենց գրաբար կարծած սեռականներն — որոնց գործածութենէն կը խորշին — են բուն գաւառական. և թէ իրենց գործածածներն ընդհակառակն օտար են յաճախ գաւառականներէն, մանաւանդ թէ գաւառացիներուն բերնովն անընտել, խորթ և անհասկնալի։ Եթէ Մխիթար՝ իր ամբողջութեամբը տպած լլար աշխարհաբար ընդարձակ Քերականութիւնն՝ ինչպէս է հայերէն բնագիրն, որ կը գտնուի մեր Մայր վանքի դիւանին մէջ, կրկին և եռապատիկ մեծ պիտի լինէր անոր ոչ միայն արեւմտեան, այլ և արեւելեան կոչուած աշխարհաբարին մատուցանելի ծառայութիւնը։

Մխիթար երբ առաջին անգամ սկսաւ աշխարհաբար գրել՝ այն ատեհան անտեղեակ էր այն, որուն համար ստիպուած էր նա հազար ու մէկ գժուարութիւններ ընել[1]։ Եւ արդէօք դի գրապէտ գաւառ մեզմէ գրանքին հետ՝ ատելութիւնն եւս չգրգռէ իրեն դէմ և յաջողի, այնպիսի կուռ և կանոնաւոր հիմունք վրայ կը հաստատէր զայն, և այնպիսի նուիրական գործով մի, որ ամենուն առհասարակ էր պատուելի և պաշտելի, և որուն

---

1. Այս կանոնով գեղեցիկ դաս մը կու տայ Մխիթար ամենուս, եւս առաւել երամներուն, որոնք ի դէպս և յանդէպս երթերով կը ծանրաբեռնեն շարադրութիւնը, կը տափակեցնեն և տաղտկալի կ'ընեն ականջաց, առանց քիչ մ'ալ ներդաշնակութեան և լեզուի կտրուին ուշ դնելու։ Արեւելեան աշխարհաբարով գրողներն՝ անկէց վերջ ալ քան զչափն կը գեղծանին այս օգտակար և յոյժ կարեւոր կանոնիս դէմ, յորդէն գաս ե վերջաւորող որ և է ածական և գոյական բառի և բայի վերջը կցելով անընտրողաբար ըստառը, որ յառաջ բերած է այսպիսի երախտալական թոթովանքներ. օր. «Այսպէս մէկ եղբ ու մէկ ձի, — մէկ բուռը հող, — կաթը, բուռը, ձարսը, կուռը, մուրբ ժամանակ, — դառը խառը օրեր, — ծաղկներիս հետ խառը. — Հինգ հատ ձուկը, սառը ջուր, — սառը խօսք, — մինը անուրբ՝ ինչ որ մարդը կլայ հարկիմար անելուս»։ Ի դէպ՝ Կ. Պոլսի գրողներէն ունինք ալ ատոր հակառակ՝ յաճախ նոյն խակ բացորոշեալ բառերն՝ առանց երի և նուի կը գրեն, այնպէս որ՝ կարծէք թէ բառեր կը քաղեն։ Երկուքն եւս ծայրայեղութիւն են, Մխիթարէն ատանդուած իմաստուն կանոնին։

2. Ատուգիս, նա Քերականութիւնն հրատարակելէն վերջ՝ իրաւունք ունէր ըսելու, թէ ահա այսուհետեւ մէկդի դնելով եպերելի լինելու երկիւղը՝ կը ձեռնարկեմ շարադրել աշխարհաբար լեզուով համառօտ քերականական վարդապետութիւնս, որով եթէ մի միայն գռեհիկ օգտուի և ուսանի իր հաւատքին հարկաւոր մասունքը, դիս լիուլի վարձատրուած պիտի համարիմ։ Բայց նա գրաբարեաններըը շահելու համար՝ խոհեմութիւն կը համարէր նախ այդ գրքի ցառաջաբանը՝ ժամանակակից գրաբարով գրել, որ աշխարհաբարէն աւելի այլասեռուած և այլանդակ գարձած էր։ Բ. այդ լեզուով է՝ որ կը գոչէ առ ընդդիմաբանս աշխարհաբարին, թէ «Վասն որոյ որք ոչ ախորժին առ այս (գայս), ունին և զգրաբարն՝ որ ապեցաւ յամէ*

ամէն հոգի այնչափ պէտք ունէր, որչափ մարմինն՝ օրուան հացին. այսինքն է՝ գիրք քրիստոնէական վարդապետութեան[1]։

Մխիթարայ գրած աշխարհաբարին գաղափար մի տալու համար՝ թող աւելորդ չհամարուի երկու հատուած մէջ բերել այն գրուածէն, որ 175 տարիներ անցնելէն վերջ՝ անտարակոյս ծանօթ պիտի չլինի նոր սերնդոց.

« *Հց. Աստ ընձի թէ ինչ կերպով խաչ կու հանես երեսդ, և ինչ կասես խաչ հանած ատենդդ։*

Պխ. Երբ որ խաչ կու հանեմ[2] *յերես՝ յառաջ գոլիկ ձեռքս ճակտիս վերայ կու դնեմ, և կասեմ Յանուն Հօր, և անկից վար բերելով՝ ձեռքս գօտուս վերայ կու դնեմ, և կասեմ որդւոյ, և անկից ձեռքս դէպ ի ձախիկ կուշտս կու տանիմ, և կու բերեմ դէպ ի յոլիկ կուշտս, և կասեմ սրբոյն սրբոյ։*

Հց. Այդ խօսքդ որ կասես, յանուն Հօր և որդւոյն, և սրբոյն սրբոյ՝ կու հասկնաս ինչ ասել է։

Պխ. Այոչափ կու հասկնամ, որ ասել է թէ Հայր և որդի և սուրբ հոգին՝ են երեք անձինք, և մէկ Աստուած, ի յոր մէնք քրիստոնեայքս կու հաւատանք։ Չի երբ որ կասենք յանուն՝ անով աստուծոյ մէկ լինելն կու խոստանանք, և երբ կասենք Հօր և որդւոյ և սրբոյն սրբոյ՝ երեք անձինք լլալն կու հասկնանք. և այսպէս զմեր հաւատոյ դաւանութիւնն կու տանք՝ երբ որ այն խօսքն ասելով՝ կու խաչակնքենք զմեզ։

Հց. Այլ ուրիշ խորհուրդ ալ ունի՞ խաչակնքելն զմեզ։

Պխ. Այս բանս այլ կայ, որ յանուն Հօր ասելնին՝ երբ ձեռքերնիս ճակատնուս վերայ կու դնենք, անով կու հաւատանք և կխոստանանք, թէ Հայր և որդի և սուրբ հոգին ի յերկինս են. և որդւոյ ասելնին՝ երբ ձեռքերնիս դէպ ի վար կու բերենք, անով կու հաւատանք և կխոստանանք, թէ որդին աստուծոյ յերկինից ի յերկիր իջեր է, և մեր փրկութեան համար մարմին առեր ի կուսէն. և հոգւոյն սրբոյ ասելնին՝ երբ ձեռքերնիս ի

Տեառն 1725, *սակս վերոյասացեալ կասկածանաց, վարժեցին ի նմին. և որոց դժուարին է այն՝ վարժեցին սովիմբ* »։ Գ. Այնպիսի կանոնաւոր, ընտել, և անուշիկ աշխարհաբարով մի կը գրէր այդ գրքոյկը, որ ա-նոնց գործածած գրաբարէն շատ աւելի գեղեցիկ է և հաճոյական։ Դ. Այդ նոր լեզուի որպիսութեան հետ՝ օգտակարութիւնն եւս ակներեւ ընելու համար, կու տայ հետեւեալ հրահանգները. « Բայց ընթերցողն պարտի ջանալ զի կէտ առ կէտ և բառ օրինի ընթեռնուցու. այսինքն՝ այնպես և այնու եղանակաւ, բառ որում կերպի խօսի ընդ ընկերին՝ ի զրուցատրութեան։ Քանզի վասն անտեղուն գոլոյն ազգին մերոյ՝ ոչ է այնքան ի գործ ածեցեալ աշխարհաբար լեզուն մեր ի գրուածս, և այսու եղեալ է որպէս զանսովոր իր ինչ։ Վասն որոյ՝ որք անհոգաբար ընթեռնուն և առանց զգուշութեան, և կամ յամր գրավարժութեամբ, կորուսանեն զհամեղութիւն շարադրութեանց, և զնաեն դիւրմատցութեանց բանից։

Այդ՝ մեծագունեզ օգտակարութիւն աշխարհաբարի լեզուի մերոյ յոյժ դիւրաւ երեւիլ կարէ ի գրուածըս, եթէ ընթերցողքն բարեպէս ջանասցին վարժել զինքեանս ի յընթեռնուլ. և ի կրելն ի սկզբան զդժուարութիւն ընթեռնոյ՝ ոչ բարկանասցեն. և այնու ի կսկծանաց սրտին՝ ի յեպերել ժպրհեացին։ Վասն զի աժենից իրաց բարեաց՝ սկիզբն դժուարին է, բայց վախճանն չի պտղովք քաղցր եւ անուշիւք »։

1. Տպ. Վենետկոյ 1727։

2. Նախդիրներըդիտամբ ընդգծեցինք՝ ամենուն զգալի ընելու համար՝ որոնք սակայն այնպէս անզգալի և յարմար կերպով գործածուած են, որ աշխարհաբարին ամենեւին չվնասեն զատ՝ կանոնաւոր, սահուն և բացայայտ եւս ըրած են շարադրութիւնը։

ձախ կողմէն յաջիկ կողմն կու բերենք, անով կու հաւատանք, և կխմանանք, թէ ոչուն արդոյ չնորհօքն ի ձախ կողմէն մեզայ՝ ի յաջիկ կողմն չնորհաց եկեր ենք[1] »։

Արդ՝ Թողով Մխիթարայ գեղեցիկ վարդապետութիւնը, որ այնքան պայծառ է՝ որքան խորհուրդ, կը հարցնենք. Արդեօք ասկէց ալ գեղեցիկ, յստակ և կանոնաւոր աշխարհաբար կրնար մի գրուիլ 1727 Թուականին։ Նախդիրներու յարմար գործածութիւնը չի միտեր աշխարհաբարին, այլ գրաբարի կապմութիւնը՝ զոր տեսանք Նալեանի օրինակին մէջ։ Ասկէց աւելի պարզ և քնքուշ լեզուով կրնար խօսիլ արդեօք տարօնեցի կամ ուրիշ գաւառացի մայր մ'իր մատաղ մանկան հետ։ Այո, գուցէ շատ գաւառացիներ այսօր չհասկնան ինչպէս Նալեանի՝ այսպէս և ազգային արդի օրագիրներու և պարբերական թերթերու լեզուն. ասկայն ես համոզուած եմ՝ որ թէ՛ այն ժամանակ և թէ՛ այսօր խիստ քիչ, և մանաւանդ ոչ մի գաւառացի գանուի՝ որ չհասնայ Մեծ Ներսիսեանցին այդ աշխարհաբարը։

Մխիթար գործի և փորձառութեան մարդ էր, և ոչ լոկ գաղափարի կամ հայեցողութեան։ Նա՝ այլ և այլ անգամ երթեւեկութեամբ՝ ծանօթացած էր բոլոր Փոքր Ասիոյ և մեր բնաշխարհի գաւառացիներուն և անոնց բարբառներուն հետ։ Ուստի՝ եթէ նա գիտնար կամ կասկածէր, թէ ասոնք իր գրածէն բոլորովին տարբեր կը խօսին, և կամ պիտի չհասկնան իր գրած աշխարհաբարը, անտարակոյս պիտի չգրէր զայն. կամ ընդհակառակն՝ եթէ գիտնար, թէ կայ հանրածանօթ գաւառական մը, անշուշտ նա այն գաւառականով կը գրէր իր այդ գործը։ Հետեւաբար՝ իր գրած աշխարհաբարն ըլլալու էր ուրեմն ամենէն աւելի հանրածանօթն և փոքր ի շատէ ամենուն դիւրամատչելին։

Իրաւ է, որ բաղդատելով այդ աշխարհաբարը՝ վերը ծանօթութեամբ գրուած Արեւմտեան և Արեւելեան չորս գլխաւոր գաւառականներուն հետ՝ շատ մեծ տարբերութիւն կը գտնենք, զի ասքա բատ մեծի մասին Թրքական բառերէ կազմուած են, իսկ Մխիթարայն՝ գուտ հայերէն. ասկայն և այնպէս ասկէ չհետեւիր, թէ այդ թրքախառն գաւառականները խօսող հայ ժողովուրդները՝ Մխիթարայ գործածած հայերէն բառերը մոռցած էին. զի ոչ միայն այդ, այլ և անբաւ ուրիշ գուտ հայկական բառեր և ասութիւններ և առածներ դեռ կենդանի կը մնային անոնց մէջ, իբրեւ գուտ հօրենական և պապենական ժառանգութիւններ, և բերանացի պատմութեամբ կը շարունակուէին։ Ո՞չ ապաքէն և՛ բազումք յարգելոց գիտեն նոյնպէս գրաբարը, բայց աշխարհաբար կը խօսին և կը գրեն։ Ո՞չ ապաքէն ահագին տարբերութիւն կայ նոյն իսկ գրութեան և ընտանի խօսակցութեան մէջ։ Մէկմէկ ոք կարող է ըսել, թէ ինքն ընտանեկան խօսակցութեանց մէջ յաճախ ասմկօրէն, Թրքերէն, Ֆրանսերէն, իտալերէն և ուրիշ օտար բառեր գործածած չէ։ Ի՛նչ կ'ըսեմ խօսակցութեան, այլ նոյն իսկ օրագրութեանց մէջ՝ օր ըստ օրէ խումբ մի օտար բառերու և բացատրութիւններու կը հանդիպին. և այս այն պատճառաւ միայն՝ որ յաճախ կը լսուին և կը կրկնուին։ Ահա

---

1. *Այս առթիւ յիշենք՝ որ Յակոբ վարդապետ Նալեան եւս Մխիթարայ այս հրատարակութենէն 10 տարի վերջ, այն է 1737ին, ապեց ի Կ. Պոլիս ուրիշ Քրիստոնէական մը, « Շարադրեալ աշխարհաբառ ոճիւ »։ սակայն աշխարհաբար կարծուած լեզուն՝ ուրիշ բան չէ, բայց եթէ ժամանակին ինկած և աղճատեալ գրաբարը՝ այլանդակուած տաճկերէն բառերով և բացատրութեամբք, առանց աշխարհաբարին յատուկ և որոշ կանոններուն, սխալագրութեամբ լի, և ամենեւին անհաման խօսուած լեզուին։ Մխիթարայ լեզուին հետ բաղդատել ուզողաց համար՝ կը դնենք անկէց հետեւեալ տողերը։*

Հց. Յաղագս թէ զխաչն ո՞ւր պիտի նկարեմք, և ինչպէս։

Պխ. Դիտացիր որ ազգն հրէից զնշանն Թըլփատութեան՝ կառնէին (փոխանակ կ'առնուին) ի վերայ ծածուկ մարմնոյն. և մեզ պէտք է որ զնշանն քրիստոսի տանիմք ի վերայ հակառուց և արտից մերոց։ Ջկրկ կռապաշտ Թագաւորներն որ զմեզ յաղթող զօրական և հնձկչի մի կուզէին խափչել, ի խոշտանգ և յոտից զկյթուռնի պատկ կու շինէին, և ի գլուխ այն հէնկչուն կու դնէին. և ի վերայ հակառուն կու գրէին, Թէ, ահա այր. Կնօյն չի իշուն քաջ մարդ մի։ Այսպէս և մեր Թագաւորն Թագաւորաց Քրիստոս մեզի պատկ մի շինեց գուրբ խաչն իւր, և հրամայեաց դրոշմել զնա ի վերայ հակառուց մերոց »։

այն և նման ուրիշ պատճառներով նաեւ հայ գաւառացիք թէպէտեւ Թրքախառն կը խօսէին ճակատագրական ունակութեամբ, բայց յստակ և կանոնաւոր աշխարհաբարն — որպիսին էր Մխիթարայն — կը հասկնային, վասն զի իրենք իսկ կենդանի պահած էին իրենց մէջ այնպիսի աշխարհաբարի նախատարերքը։

Իսկ մեզ համար այդ բանէն աւելի զարմանալի է Սերաստացւոյն հիմնած աշխարհաբարը։ Արդ՝ մէկ կողմէն ի նկատի առած չորս գաւառականներու օտարախորթութիւնները և ազաւաղութիւնքը, իսկ միւս կողմէն ալ որոա յստակութիւնը, կանոնաւորութիւնն և կոկութիւնը, կրնանք ըսել, թէ ԺԷ դարէն մինչեւ այդ ժամանակ ոսմկօրէնն այնքան գեղի կազմակերպութիւն կրած չէր, որքան որ կրեց անակնկալ կերպով ԺԸ դարու երկրորդ քառորդին Մխիթարայ ձեռքով։ Նկատմամբ վերոյիշեալ գաւառականներուն՝ ըսուած է ընդհանրապէս, թէ ժողովուրդն է՝ որ կը ստեղծէ և կը կազմակերպէ լեզուն, և այս՝ յամրընթաց և երկայն դարերու մրճի հարուածոցը ներքեւ կռանելով։ Սակայն ճշմարիտ է նաեւ այս, որ երբեմն առանձին գրիչ մ'իսկ կարճ ժամանակի մէջ կարող եղած է յառաջ բերել այնպիսի մի ստեղծագործութիւն, զոր ժողովուրդը դարերով ամրողջ լճացեալ վիճակի մէջ պահած էր։ Ահա Մխիթար մին է այդ գրիչներէն և գործիչներէն, ինչպէս իր գրով Թողած աշխարհաբարն եւս է իրեւ յուշարձան մը՝ չըսեմ այդպիսի ստեղծագործութեան, այլ անոր մարմնացմանն և ձեւաւորմանը։

Դիտելով՝ որ Մխիթարայ յօրինած աշխարհաբարն գրեթէ այնքան կը տարբերի — ըստ համաձայնութեան կամ չարաբանութեան նորութեամբը — ԺԹ և ԺԹ դարերու նախնեաց ոսմկօրէնէն, որքան կը տարբերի իր ժամանակակից Թրքախօս գաւառականներէն, բնականապէս մարդս կը հետաքրքրուի հարցնել, թէ ինչ ըրաւ արդեօք Սերաստացին, ու ինչ կերպով կազմակերպեց այդպիսի մի աշխարհաբար, որ հնութեան հետ՝ իսկապէս նորութեան բնագրոշմն եւս կը կրէ իր վրայ։

Արդ՝ թէ յիշեալ Վերականութեան և թէ Քրիստոնէականի վերլուծութենէն այնպէս կը տեսնուի մեզ, որ այդ բանն իրագործելու համար՝ Թօխատած կամ արտաքսած ըլլայ նախ Թրքերէնն և ուրիշ օտար բառերն, այսպէս և՛ ինչ ինչ յայտնի ասացուածները՝ ժամանակակից արեւմտեան գաւառականէն, զոր և պինդ բռնած է՝ իրեւ մօրենական խօսուն և տարածուն բարբառ։ Բ. Ներմուծած է կամ յաւ եւս՝ չափով մը պահած է հին ոսմկօրէնի ի, յ, գ նախդիրներն՝ իրենց յստակ և գրաբարեան մակրայներով, հոլովներովն ու լծորդութիւններովը, համաձայն կամ ժխլին և ստորին դարու ոսմկօրէնին, և կամ Տարօնի գաւառաբարբառին։ Գ. Ջանալով ըստ կարելւոյն տալ անոր այն իսկական և գլխաւոր յատկութիւնները, զորս հասարակաց կրնանք համարել չորս գաւառականներուն իսկ, որոնց ինքը քաղաքացի էր. այսինքն են՝ ընդհանուր պարզութիւն, համաձայնութեան հաստատ կարգ ու շարք, հին ոսմկօրէնի համապօր նշանակութիւն բանից և բացատրութեանց, հին ապառնւոյ բացբարձումն, կոչ մանրական անհրաժեշտ գործածութիւնը, պահելով ընդհանրապէս բայերու՝ նա մանաւանդ կրաւորականի չէնքը, ոլմունք և ամիսփմունք, և յրի գրով գրուիլն, այլովք հանդերձ։ Այսպէս ահա ԺԸ. դարու երկրորդ քառորդին Մխիթար կ'ըլլար առաջին կարգաւորողն, հիմնողն ու տարածողը արեւմտեայ աշխարհաբարին՝ մանոյ ձեռքով։

ԳԼՈՒԽ Է

Մխիթարայ աշակերտաց աշխարհիկ լեզուով բրած գրուածներն ու արեւմտեան աշխարհաբարի կազմակերպութեան նախկին շրջանը. — Կ. Պոլսի ժողովրդական բարբառի մշակումն՝ Ինճիճեանի, Աւգերեանի և Թապարաճեանի ձեռքով, և անոր գաւառականին վրայ տիրելն ու առած նոր ուղղութիւնը. — Մխիթարեան աշխարհաբար գրուածոց և լեզուի գերակշռութիւնը ժամանակակից՝ և նոյն իսկ շատ տարիներ ետքը լոյս տեսնող ազգային ուրիշ հրատարակութեանց հանդէպ. — Նմոյշներ. — Արեւմտեան աշխարհիկ գրականութեան շուտափոյթ զարգացումը՝ Մխիթարեան գործիչներու և պարբերական թերթերու ազդեցութեան և մղման ներքեւ. — Աշխարհաբար թերթերու նախկին վերերեւումն ու աշխարհաբարի կանոնաւորման և կազմակերպութեան մասին եղած վէճերն և կրկին կուսակցութիւնները:

ՈՐ, իրենց երջանկայիշատակ հիմնադրէն ձգուած այդ հիման և մտքոյ լուսաւոու և համաստարած թեւերուն վրայ յեցած Մխիթարեանք՝ կը գրէին և կը տարածէին գրաբար հին լեզուին հետ՝ նաեւ աշխարհաբար նոր լեզուն[1] և գրականութիւնը: Այդ հիման վրայ կ'ըսեմ, վասն զի Մխիթարայ աշխարհաբար ընդարձակ գրականութիւնը թէպէտ և մեծ անտիպ, բայց իր աշակերտները գաղափարելով այլ և այլ օրինակներ կը հանէին անկից և կը գործածէին թէ առանձին և թէ դպրոցներու մէջ: Գարձեալ՝ նախընթաց գլուխներուն մէջ խօսելով Մխիթարեան մտքոյն վրայ — ազգային կրթութեան տեսակէտով — ցոյց տուինք, թէ ատոնց հրատարակած գործերէն 327–330 հատորները աշխարհաբար լեզուով գրուած են. և թէ այդ հատորներու հրատարակութիւնը կը սկսէր Գրիգոսի 1727 թուականէն, և հետ գհետէ կ'աճէր և կը բազմանար:

Ես չեմ ուզեր կանգ առնուլ այս տեղ՝ քննելու թէ արդեօք Մխիթար և իրենները ինչ պատճառներէ մղուած՝ աշխարհաբար գրութեան ձեռք զարկին: Արդեօք այն տխուր նախազգածութեամբը, թէ օր պիտի գայ՝ որ գրաբարն երեսէ ձգուի և մեռնի, և հարկ ըլլայ այդ նոր լեզուով յառաջ վարել ազգային գրականութիւնն և գիտական և կրթական գործը, թէ ընդհակառակն՝ առիկին հոգեկան և մտաւոր զարգացմանն աւելի նպաստելու երջանիկ նպատակով: Այս երկու բաներս իսկ լռելեայն կամ յայտնի — մի և նոյն է մեզ համար — կը պարունակուին Մխիթարեան գաղափարին

---

1. Այս բանիս ծառայեց իրրեւ առաջնակարգ գործիք Մխիթարայ և իր աշակերտներուն ձեռքով յօրինուած գրաբարէ յաշխարհաբար, և յաշխ.–գրաբար Բառգիրքն, որ լոյս տեսաւ 1749–1769 թուականներուն: Այս Բառարանիս Ա. հատորին վրայ յառաջադրյն խօսեցանք. իսկ Բ. հատորն աշխարհաբարի համար գարագլուխ կը կազմէր: Այնքան երկայն տարիներ՝ հաւաքական դժուրով և ձեռնհասութեամբ աշխատասիրուած և կատարեալ գործ մինչեւ այն ժամանակ տեսած չէր ազգը. նա կու գար ամենուն բաւականութիւն տալ: Այդ հսկայ գործով հին կը դրուէր նաեւ աշխարհիկ լեզուին և անոր հարազատ ուղղագրութեանը: Առանց այդպիսի մի Բառարանի աշխարհաբարը գրի առնելն՝ այնքան դժուար և տաժանելի պիտի լինէր առանձին անհատից, որքան դժուար եղաւ Աահակայ և Մեսրոպի համար՝ ի սկիզբն նշանագրաց՝ քարտիսի վրայ տարրացնել կենդանի լեզուի բառերն և արտասանութիւնները: Երկու խօսքով նկարագրել այդպիսի գործի արժանիքն ու մատուցած ծառայութիւնն՝ անկարելի է: Կը բաւականանանք ըսել, թէ ինչ երկամբք որ ծնաւ, նոյնպիսի անձկանօք եւս ընդունուեցաւ ամբողջ ազգէն: Կ. Պոլիս, Զմիւռնիա և Տփղիս որ իրարու ձեռքէ կը յափշտակէին զայն, այսպէս նաեւ հետաւոր գաղթականութիւնք. վասն զի ազբիւր մ'էր այն կրկնավտակ՝ հայերէն լեզուին, անսպառ գանձ մը կենդանի բարբառներուն:

և գործին մէջ այնպէս՝ ինչպէս ներգործող կեանքն և գօրութիւնը՝ արուին մէջ։ Բան ի ոչ միայն չեչտելու, այլ և գործնական բանն այս է, որ յիշեալ Թուականէն մինչեւ ԺԹ դարու երկրորդ քառորդը՝ մինչ ազգին աշխարհիկ և գրագէտ դասն անգամ կը շարունակէր գրաբարով միայն ի լոյս ընծայել իրենց և օտարաց գործերը, և անփոյթ էին աշխարհաբարի մշակութեան, անդին աշխարհէ քաշուած Մխիթարեան վարդապետները՝ մեծ փութով այդ լեզուն կը ջանային գործնել, կոկել և գործածել անխտիր, թէպէտ և իրենք ամենէն աւելի տէր էին գրաբարին, մանաւանդ որ այլք առհասարակ՝ իրենցմէ աւելի պէտք ունէին աշխարհաբարի։ Եւ շնորհիւ մտմտալին և այսպիսի փութաջան մշակութեան՝ նոյն իսկ ԺԸ դարավերջին, նոյն իսկ անկէց տարիներ յառաջ այնքան կազմակերպուած էր այդ աշխարհաբարն, որ կարելի էր անով այր և է նիւթի վերաբերեալ գրուած թարգմանել կամ գրել։

Սուգիս, այդ ժամանակամիջոցին աշխարհաբար լեզուով երկասիրուած Մխիթարեան վարդապետաց՝ հոգեւոր, պատմական, լրագրական, ուսումնական, կրթական, և տառուածաբանական և այլ գրուածներն [1] — որոնց մի մասը այդ դարավերջին տպագրուեցան, և միւսն ԺԹ. դարուն առաջին քառորդին — յայտնի ապացոյց են բաժնուս։

Ա՛յ, Զամչեան, Հ. Խաչատուր Սիւրմէլեան, Աւետիքեան, Չօհրապեան, Ինճիճեան, Հ. Մեսրոպ Աղաչրագեան, Հ. Գրիգոր Գապարաճեան, Հ. Ղեւոնդեան Փափազեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, Հ. Մինաս Բժշկեան, Հ. Ղեւոս Թոմասեանեան և Հ. Վրթ. Պատուրեան եղան Մխիթարէն վերջ առաջին գրողքն և տարածողք աշխարհաբարին։ Սակայն պէտք է ըսել, որ սոցա մէջ իսկ կային — և գուցէ ամենէն աւելի աշխարհաբար գրողները — Ինճիճեան և Աւգերեան, որոնք լեզուին մաքրութենէն աւելի ժողովրդեան մատչելի և օգտակար լինելու համար՝ չէին գուշանար բրքական բառերէ և առձկօրէն բացատրութիւններ ընելէն։ Իսկ միւսներու առաջին ջանքն եղած էր ընդհանրապէս ոչ միայն թօթափել բրքերէնն և ուրիշ օտար բառերն՝ աշխարհաբար լեզուէն — իրրեւ միտակար պատասխաններ — այլ և ըստ կարելւոյն յղկել և փայլեցընել զայն գրչով ու գործածութեամբ։ Անոնք գիտէին քանի՛ որ ժողովրդեան լեզուն՝ առանց գրչի և գրութեան՝ զատապարտուած է մնալու միշտ առձկօրէն, միշտ խառնակ և անճոռնի. և թէ գրչին է՝ որ իրր բրիչ կը քրքրէ զայն, կը մշակէ, և կատարեալ՝ ոսկի ադամանդ կը հանէ։

Թէ առուգիս այս գաղափարով առգործուած էին ԺԸ. դարավերջին աշխարհաբարի մշակները, և այդ գաղափարով կը շարժէին իրենց գրաբարի մէջ թափուած գրիչները, յայտնապէս ցոյց կու տան մեզ թէ՛ իրենց աշխարհաբար գրուածոց յառաջաբանութիւններն [2] և թէ՛ յառաջախաղաց հրատարակութիւններն, որոց մի քանին արդէն յիշեցինք։

Իսկ թէ ի՞նչ ուրիշ բնական և բանաւոր պատճառներ կային այդպէս վարուելու, ինչպիսի՞ գժուարութիւններ կը գինուէին իրենց դէմ, և թէ ի՞նչ միջոցներ հարկ էր ի գործ դնել՝ աշխարհաբարի մաքրութեան հետ՝ առմական ինքնուրոյնութիւնն ևս

---

1. Զանց կ՚ընենք յիշել հոս ուրիշ հնագոյն անտիպ գործերը, ինչպէս ԺԹ դարու երկրորդ քառորդին մէջ հրատարակուած աշխարհաբար գրքերն ի Վենետիկ։

2. Յիրաւի՝ 1803 Թուականին հրատարակուած Աստուածաշունչ գրոց աշխարհաբար Պատմութեան յառաջաբանին մէջ՝ այդ լեզուով գրելուն նպատակը յայտնելէն վերջ, այսպէս կը գրէ ասոր հեղինակն. « Իսկ աշխարհաբար շարադրութիւնն որ ըսինք, հայեցանք՝ որ գուռս հայերեն ըլլայ, առանց այլազգի բառեր մէջը խառնելոյ՝ առձկերէն, կամ պարսկերէն, կամ ֆրէնկերէն (ինչպէս որ հիմակու ժամանակս մեր ցիրուցան եղած ազգը ինչ ազգի հետ որ բնակեր է նէ՝ կամաց կամաց անոր լեզուէն առեր խառներ է իր հայերէնին մէջը), որ ասով շատ աւրուելը է աշխարհաբար լեզունիս, ու անանկ փոխուելը է՝ որ մէկ տեղացին մէկալին բաժը դժուար կը հասկնայ։ Անոր համար մենք չանացինք որ այսպէս չըլլայ, հապա որչափ կարելի է ամմէնքը հասկնան. ոչտո ոձն ալ բառարտզոլցիի հայերենի կերպով բռնեցինք, որ բուռն հայաստանցոց ալ աւելի մօտ է, ոչ պարսկահայք ալ կը հասկնան. միայն թէ՝ ուր տեղ որ խօսքը այսպիսի աշխարհաբարէն կը պակսէր՝ անտեղ գրաբարէն առած բանեցուցինք, ու տեղ տեղ ալ այսինքնով մեկնելով՝ գաւ տառկերէնը դրինք »։

Սոյնը կը յայտարարեն Հ. Ղեւոս Թոմասեանեան յամին 1805 հրատարակած Դպրոցական համակաց երկասիրութեան յառաջաբանին մէջ, Ինճիճեան՝ իր Դարձպատառմի, Հ. Գրիգոր Գապարաճեան Դիտակ բիւրգանդեան, Աւետիքեան՝ 1819ին հրատարակած աշխարհաբար Քերականութիւնն յառաջաբանութիւններուն և Հ. Մկր. Անանեան 1769ին հրատարակած աշխարհաբարէ գրաբար Բառգրքի հմտալից և չքնաղ նեբաժութեանը մէջ։

պահպանելու համար, կը թողում որ Հ. Մկրտիչ Անանեան և Ա. Տէտէքեանը խօսին և պարզեն այդ ամենայն։

Ադալբեն՝ իր յիշեալ Բառգրքի ներածութեան մէջ — զոր վերամբք գրաբարով գրած է՝— նախ հետեւեալ համառօտ տողերուն մէջ կը ներկայացնէ 1769 թուականին աշխարհաբարի վիճակը և ասոնցին գժուարութիւնը. « Եւ արդ՝ ընդդիմութիւնն յիւրելոյ գաշխարհաբառ բառգիրքն՝ է այնչափ, մինչեւ ոչինչ գօրութեան մարդոյ բաւական է՝ ի գլուխ հանել գնոյն անթերի. վասն զի յաղագս ցան և ցիր լինելոյ ազգին մերոյ համպատաքած ընդ ամենայն աշխարհ, աչիւրափ բիւրաստաբուզ ապրագաւնալ և աշխարհաբառ լեզուն՝ գիւտովք անհատնում նորատունկ բառից, խառնվարաք անհնոյն ապրագաւոյ անուանց, բիւրուրեակք անկոյր և անձռնոյն արտաբերութեանց, կրձատմամբք և վնակապրութեամբք անսպառնալի վանկից և փոպառութեանց և առից, և այլ ազգի ազգի խառնափնդորութեամբք, մինչեւ ոչ մի, այլ անհամար տարակերպութեան երեսիւ տարաստրոհեալ տարազ. և վասն այսորիկ ոչ ոք ի կանանցածնաց կարող է զամենայն բառան այսր լեզուի քաղեալ ի բառարանի պարուրել, մինչ զի ամենայն հոգւք իւրաքանչիւր քան բարբառոյ գաւառին կամ քաղաքին իւրեանց մարդագրին գոյանալ ի նմա՝ զոր կամիցին »։ Բ. գժուարութիւն այն է, կ'ըսէ. « Չի բազում այլագաւառ աշխարհաց բնակիչք՝ նոյն բառիս՝ զգանազան, կամ զներքակ ինչ իմանան [1] »։ Գ. գաւառականներու կամ ամէկորենի արտասանութեանց անորոշութեանը պատճառաւ՝ շատ բառերու նշանակութիւնն եւս անորոշ կը մնայ՝ կ'ըսէ. և եթէ այսպէս տառագրես կամ այնպէս, իրենցինին համաձայն չգտնելով՝ կը նեզանան և գրողը կ'եպերեն։ Դ. կ'ըսէ նա, ոմանք տեղեակ լինելով գրաբար և տաճիկ լեզուին և նմանեաց, որոնցմէ շատ բառեր խառնուած են աշխարհաբարին մէջ, կը պահանջեն՝ որ աշխարհաբարը գրուի ըստ գրոց, և ոչ թէ ըստ առմկական լեզուին. իսկ ուրիշներն անտեղեակ լինելով՝ հակառակը կը պնդեն. ուստի անհնարին կ'ըլլայ գոհ ընել զառնք կամ զանոնք, եւս առաւել երկու կողմն իսկ։

Այս և ուրիշ գժուարութիւններ թուելէն վերջ՝ կը յարէ Բառգրքին հեղինակը. « Զբառարանն յաշխարհաբառ լեզուէ ի գրաբառն ոչ միայն արարաք վասն գիտնականաց, այլ եւս առաւել յաղագս միամտաց և համբակաց. իբր զի ըստ կարի տայցուք ի նոցա ձեռս՝ ցուպ օգնականութեան։ Նմին իրի ի տեղիս տեղիս հաճելագաք բառս և որոշմունս պատկանեալ առ գպրութիւն... իսկ յայլ բազումս, և մանաւանդ ի գրութիւն բառից, վարելագաք ըստ առմկական առմորութեան. և յայս միտս ի դնելն գառաճկական բառս՝ գրելագաք առյան և ոչ արտյան, իգամ և ոչ իգդամ, և այլն։... Զանգի անհնարին էր զամենատեսակ աշխարհաբառս յայսմ Բառարանիս հաւաքել, և որին առդաւ ամենեւին ի բաց թողուլն էր անտեղի. վասն զայսորիկ ի տեղ եղոյ բառս առմկականս, որովք վարին առհասարակ բնակիչք միջերկրեայց, այսինքն Անատոլուի, և մանաւանդ մեծի քաղաքին Կ. Պոլսի, և առհասնուց նորա։ Նա զի բազումք ի հայոց ի սիւրուա տիեզերածաւալ ազգաց բնակելոց, ըստ մեծի մասին յայսց կողմանց են վտարանդիք. յորս հանապազ գտանին ոմանք՝ որք զատ գրեալն իմանան, և այլոց իմացուցանեն »։

Մխիթարայ գրած սկզբունքին վրայ, զոր Անանեան աշխարհաբար Բառգիրքն յօրինելու ժամանակ ի գործ գրած էր, կը յօրինէր նաեւ Ա. Տէտէքեան իր աշխարհաբար Քերականութիւնն [2], և վերը յիշուած Մխիթարեններն՝ իրենց աշ-

---

1. Օրինակի աղագաւ, մէկ գաւառի մէջ կնոջասը, բալ կ'անուանեն, ուրիշի մի մէջ ֆիշնէն. մէկ գաւառացին՝ արտաքնոցը հնալի կը կոչէ և բերդը՝ խալէ, ուրիշ մը ընդհակառակն կ'իմանայ։ Այս ինչ գաւառի մէջ կարճունչը պռռանագ կը կոչեն, և այն ինչ գաւառում՝ հեգնօրէն մեծունչը։ Մէկ տեղ մը բարբարիսմի ըսելով՝ կշտեն ընդերաց մէջ թափանցող խիթը կը հասկնան, ուրիշ տեղ ընդհակառակն կամ թիկանց կամ ձեռաց մատզումը, այսպէս և այլ անբաւ զանազանութիւններ։

2. Որուն գրոց լեզուով գրած յառաջաբանին մէջ այսպէս կը պարզէ զայն. « Ա՛ն դիւրընկալ գործելոյ համբակաց զայս ուսուցմն՝ պատշաճ համարեցաք աշխարհիկ լեզուաւ և ոճով բացատրել զբովանդակ համառօտութիւնս։ Զայն լեզու ասեմ, որ չիցէ օտար գլխովին ի բարբառոյ գրոց. ուստի եւ դիւրաւ իմանալի ի զանազան գաւառս Հայաստանեաց, առ ի հատանիլոյ զպատճառանս ոմանց, որք ասել կարեն, թէ զանազան ճոյով աշխարհիկ խօսից չիւրաքանչիւր գաւառս Հայոց, ոչ աւելենցուզն է հասկանալ զաշխարհօրէն բացատրութիւնս։ Եթէ արդարեւ ըստ մերոյ եւեթ գաւառական սովորութեան աւանդիցի բանն, որպէս եթէ ըստ Պարսկա-

խարհարար գրքերը, իբրեւ միակ և լաւագոյն միջոց բոլոր գաւառացիներուն հանրամատչելի և օգտակար ընելու և աշխարհաբարն այլ զարգացնելու և վեր բարձրացնելու համար։

Իսկ ցոյց տալու համար թէ չնորհիւ գրաբարի օգնութեան՝ յանկարծ ինչպիսի կերպարանք առաւ Փոքր Ասիոյ աշխարհաբարը՝ Մխիթարեաններու գրչի ներքեւ, նոյն իսկ ԺԸ դարու վերջերը, կարեւոր կը համարինք դնել այս տեղ այդ ժամանակամիջոցին գրուած աշխարհաբարի գանազան նմոյշներ, վերը յիշուած աշխարհաբար գրուածներէն, առանց դիտաւորութիւն ունենալու բաղդատել այժմեան աշխարհաբարի հետ։ Հետեւաբար՝ ընթերցողք ալ այս տեսակէտով պիտի գտնեն զանոնք։

Զաքէեան (1789ին գրած անտիպ գործէ մը)

« Իսկ հռոմեները աւելս ինչ ըրին. իսկոյն յազկերտ թագաւորին տեսան, այսինքն հոյի՝ իրկեցին, և ըսին՝ թէ մենք քեզի հետ բարեկամութիւննիս հաստատուն կպահենք, և կուզենք որ հաստատուն մնայ. ասոր համար հայոց ազգին չուզեցինք օգնութիւն ընել քեզի դէմ։ Չէ թէ միայն այսչափ, այլ և իրենք ալ սկսան որոգայթ լարել հայոց, արգելք դնել անոնց դէմ, և այլն և այլն։ Ա՛ս որ տեսան հայերը, ամենեւին չհաւատացան, այլ մանաւանդ գրեցին հռոմեներուն, թէ որովհետեւ մանաւորապէս մեզի օգնութիւն չըրիք նէ, կաղաչենք որ գոնէ աղօթք ընէք, որ մեր քրիստոնէութիւնը կրակապաշտութեամբ կայրի, և այլն. և իրենք սկսան միանակ պաշտպանել զեկեղեցին հայոց, և իրաւ որ պաշտպանեցին։

Ա՛յն օրերը գումարուեցաւ չորրորդ ժողովը. և ժողովէն վերջը՝ որովհետեւ այն հռոմեներուն ըրած անողորմութեան պատմութիւնը միացեր էր հայոց մէջ, եաքի եկող հայերը զայն կարդալով՝ աւանդութեամբ յայտնի գիտելով, չէ թէ միայն զարմացան, այլ և քիչ մը պաղեցան հռոմեներէն. և կըսէին՝ թէ անոնք աւելի կրակապաշտից պաշտպան են, քան թէ քրիստոնէից։ Եւ ինչպէս որ կը պատմեն յովհաննէս կաթողիկոս և ստեփանոս ասողիկն, և այլն, հռոմեները անկէ պէրի սկսան չարաչար չարչարել զհայերը՝ առաւել քան զպարսիկները. և անանկ բաներ ըրին որ՝ ալ հայոց սիրտը իսպառ խըչխըչացուցին։

Արդ՝ հիմա գաւաստան ընեն ուրիշները. եթէ այն պզտիկ առիթը՝ զոր ունէին ֆրանսըզները աշխարհական և մարմնաւոր բանի համար, անանկ գրգռիչ եղաւ իրենց՝ որ ելան չարաչար կերպով զեօթներորդ ժողովը նզովեցին, հապա որչափ առաւել այն մէկալ մեծ առիթը՝ զոր ունէին հայերը ի նիւթ քրիստոնէութեան՝ գրգռիչ կարէր ըլլալ իրենց չորրորդ ժողովը նզովելու », և այլն։

հայոց միայն, կամ քան Ագուլեցւոց, ոչ դիւրին էր այլում գաւառականի համարձակ իմանալ զառացեալն. սակայն յորժամ յատակ հայեցի ոճով իցէ առանդնալ, բազումք յիշատչանչիւր գտուսոռ իմանան անաչխատ՝ իբր ի հասարակաց լեզուս ընթեռնլով գրանն »։

Գրաբարի՝ որով և այդ սկզբունքով աշխարհաբարը զարգացնելու ընդդիմախօսներն ըմբերանելու համար շատ գօրաւոր է Ագաթէնգեղոսի առ այն մէջ բերած այս փաստս, միայն թէ անոր խորը թափանցելու ըլլան կ'ըսէ նա. « Այլ և միաբանեալքն յիտալական լեզու՝ ունելով յինքեանս այլատարազութիւն բազում՝ ըստ իւրաքանչիւր գաւառաց, մինչ զի միոյ գաւառականի չիմանալ զիօսս միւսոյն, սակայն յուսմունս քերականականս (ևս և ի գրութեան) ի կիր առնուն զրուսքանական բարբառ, որ է յատակ իտալական՝ ի լատինէն աճանգեալ, դիւրիմաց ամենայն գաւառականաց »։...

Սակայն աս ալ ըսելու է, որ տոսկանեան գաւառաբարբառն իսկ Դանտէ Ալիգիէռի մեծ բանաստեղծի գրչովն է՝ որ կը լիներ իտալացի գրողներուն համար համաշխարհիկ բարբառ, և ոչ թէ Պիեմոնտէի կամ մի ուրիշ կեդրոնական գաւառի ազդեցութեամբը։

1. Դիտել կու տանք՝ որ այս տողերս 1789 թուականին գրուած են, այսինքն է՝ ասկից 114 տարի յառաջ. և սակայն անկէց 50 տարի վերջ իսկ՝ քիչեր այսպէս կանոնաւոր, յատակ և դիւրահասկնալի աշխարհաբար կրցան գրել։ Կա՛յ գաւառացի մի՝ որ այդ տողերը չհասկնայ։ Յամենայն դէպս՝ իրաւամբ կրնայ ըսուիլ, թէ Զաքէեան դար մի յառաջ այնպէս կը գրէր աշխարհաբարը՝ ինչպէս ուրիշներ կը գրեն այսօր, բայց անկանոն կերպով։ Ի՞նչպէս հասոյց նա ամկօրէնն այդ բարձրութեան. յայտնի է թէ գրոց լեզուի օգնութեամբ։

Ինճիճեան, (Տարեգրութիւն, տպ. 1800ին)

« Ժամանակագիրք ամէն մէկ հարիւր տարին՝ դար կը կոչեն. զոր օրինակ, սկսեալ 1701 տարիէն մինչեւ 1800՝ մէկ դար: Այս դարս սկսեալ ի Քրիստոսէ՝ է ԺԸ երորդ դար, ուստի զի ի Քրիստոսէ մինչեւ հիմա ԺԸ անգամ հարիւր տարի անցաւ. եւեւի դարը՝ որ 1801ին կը մտնանք, կըսուի ԺԹ երորդ դար: Շատ բաներ դիպուածներ եղան այս դարուս մէջ, բայց ընդհանրապէս երեք կերպ փոխուած կը տեսնանք. սկիզբները պատերազմով, մէջը հանդստեամբ, եւ թը աստիկ խռովութեամբ: Հանգստեան տեղը՝ դարուս մէջ տեղերը՝ երկու բան յառաջացան, մէկմը գիտութիւններ շատ ծաղկեցան, արուեստները պայծառացան. մէկ քանին գրեթէ վերջին կատարելութեանը հասան. վաճառականութիւնը խիստ շատցաւ և խիստ զարգացաւ. աշխարհիս մէկ ծայրը մէկալ ծայրին հետ վաճառականութիւն կընէր [1] »:

Մարտի 29. « Վիքտոր զօրապետը Ֆրանսային՝ խնդրեց Բռայէն 24 սահաթ պատերազմէն դադրիլ, որպէս զի թաղեն իրենց մեռելները՝ որ պատերազմին մէջ մեռեր էին, և տահա անթաղ ձեալով կը հոտեցնէին: Բռայը ընդունեց՝ իսկ կապեց՝ որ դադարումն ըլլայ պատերազմի ինչվան վաղը կէս օրը. բայց Ֆրանսայը կէսօրէն երկու սահաթ առաջ սկսաւ պատերազմիլ, և նա հրել Նէմցիները ինչ ղբտար առաջ գացեր էին Ասիճէ գետին ձախ կողմը. ան տեղն զօրք խաւրեց լեռներուն վրայ մտնիկ տերը Ամբրոսիոս բռած տեղը, որ չուտ մը պաշարէ զՎեռնա. սա լսելով Բռայը՝ ամէն զօրապետներուն հրամեց մէկէն վրանին յարձրկիլ. ան տահարը երեք բաժնուեցաւ Նէմցին զօրքը. մէկը Ասիճէ գետին քովերովը, երկրորդը Դիրօլօ երթալու ճամբան, երրորդը լեռներուն վրայ. անանկ սրտով պատերազմեցան զօրքը, որ շատը իրենց բանները ձգեցին մռացան՝ թեթեւ ըլլան շուտ հասնին տեղ. Բռայն ալ ամէն սահաթ ամէն դի կը վազէր կերեւնար՝ սիրտ տայ տեղ. Ֆրանսը չի դիմացաւ, հալածուեցաւ ամէն դիացէն ինչվան կամուրջը »:

Երանի թէ այսպէս երած չըլլար Ինճիճեան, այլ օտար բառերը՝ միայն փակագծով մեջտեղ բառերուն տակները նշանակած, ինչպէս երած են ուրիշներ:

Չօհրապեան (Պատմ. Աստուածաշունչի, տպ. 1803)

« Աստուածաշունչի պատմութիւնը՝ ինչպէս իր անունը կը ցուցունէ, ամէն պատմութիւններէն աւելի պիտական ըլլալով մարդուս, ու հաւատացելոց՝ նաեւ խիստ հարկաւոր ըլլալով, որովհետեւ քրիստոնէական հաւատքին հիմը (կամ թէմէլն [2]) է Աստուածաշունչ սուրբ գիրքը. շատոնցմէ տեսնալով, որ այսպիսի չահաւոր բանը մեր ազգին մէջը կը պակսի, պատրաստուեր էինք, որ տեղն ի տեղը ընդարձակ սա սուրբ պատմութիւնները մեր աշխարհական գրքի լեզուով շարադրած տպենք՝ ի լուսաւորութիւն ազգիս: Բայց եռքը սա մըտմտալով, որ այնպիսի գրարան շարադրած մեծ գիրք մը՝ այնչափ օգտակար չի կրնար ըլլար մեր ազգին՝ հիմակու որպիսութիւնը նայելով, որ համարձակ գրարանը հասկըցողը քիչ է... անոր համար գործնուցինք համառօտ կեր-

---

1. Այս՝ Ինճիճեանի աշխարհագրարն է, որ ինչպէս ինքը կը յայտարարէ — Գրաբարառումի նեղածուխթեան մէջ — դեռ աւելի մաքուր և կոկիկ կրնար գրել, բայց ամկին կացութենէն հարկադրուած՝ կը տիպուէը գարուդիլ «ի ծեքծեքուն ամկակերպ ոճոյն կամ կրկնութեան խօսից: Ըա՛, առաւելագունին ինն գիջանելով՝ ոչ հրաժարելցաք — կ՚ըսէ — զամենայն կարգել ըստ տանելոյ այժմեան վիճակի ազգին »: Ասոր՝ ըստ այմ գրուած են հետեւեալ տողերը, զորս կ՚արտագրենք Տարեգրութեան 33 էջէն:

2. Այս թուականէս սկսեալ Չօհրապեանի հետ, Թոմաճանեան, Ինճիճեան և ուրիշներ իսկ՝ տահկերէն բառերը փակագծի մէջ կը դնեն՝ ամկին համար, իսկ իրենք անոնց առընթեր աւելի հայերէն բառեր կը գործածեն, ինչպէս պիտի տեսնենք:

պով աչխարհաբառ ըրինք »։ Այս շարադրութեամբ կը գրուի նաեւ բոլոր պատմութիւնը, ասկից բաւական ըլլան հետեւեալ երկու տողերը. «Այս Ինեաիվա քաղքիս մէջը մէկ ունեւոր որբեւարի կնիկ մը կար՝ Շմաւոնի ցեղէն՝ Յուդիթ բսած, և անոնկ զարմանալի պարկեշտ, ատտուածավախ ու առաքինի, որ իր Մանասէ բսած էրկանը մեռնելէն ետքը ալ չուզեց կարգըվիլ, հապա առանձնացած իր տունը կը նստէր, ու պաքով ազօթքով այնպէս սրբութեամբ կապրէր »։

Թոմաճանեան (*Դպրութիւն եամակաց գր.—աչխարհաբար, տպ.* 1805, էջ 179)

Յաւակցութեան նամակ. « Ատտիկ կը ցաւիմ մտերիմ բարեկամս, ինչու որ՝ այսօր ալ անչափ թուղթ մը պատրաստուեր եմ գրել հրամանոցդ, որչափ ցաւոդ համար պատրաստուեր եմ լալ, սրտիդ կակիծը ինձի յիչեցնելով։ Աչափ հեռաւորութենէս հիմա հառաչանացդ ձանը կը լսեմկոր. և իրր թէ աչացս առջեւը արցունքով լեցված աչվըներդ կը տեսնեմկոր։ Սիրտս լեցված է անտանելի ցաւով մը, լսելով ատ ցաւալից լուրը ցաւալից գրէդ. կը հարկաւորիմ հիմա ես ալ՝ որ իմ հառաչանացս և լալոյ ձանս՝ սիրելւոյդ լսել տամ ատ իմ թղթովս, որ ավելի արցունքովս գրուեցաւ, քան թէ թանաքով. որ գիտնաս՝ թէ ինչպէս մինչեւ հիմա ալ քու ուրախութեանցդ ես ալ բաժին ունէի, նոյնպէս ալ քու ցաւոդ. սակայն ինչպէս ուրախակցութեամբս ուրախութիւնդ կեվկեցընէի, նմանապէս հիմա ալ ցաւակցութեամբս ցաւդ պակսեցնեմ։ Թէ որ կարելի ըլլար, բոլոր սրտմութիւնդ ալ ցաւդ ալ ինձի կառնէի, որ հրամանքդ անոնցմէ բոլորովին թեթեւնալով, կորուսած ուրախութիւնդ գտնէիր։ Ի վերայ այսր ամենայնի՝ բարեկամական սիրովս կը համարձակիմ գրել հրամանոցդ ատ բանս՝ թէ ատ վիշտդ, ատ նեղութիւնդ որչափ ակամայ, որչափ դժարդ գալով կը քաշեանէ, այնչափ ծանր բեռը կըլլայ քեզի. և որչափ սիրով տանեանէ՝ այնչափ կը թեթեւնայ քեզմէ. ուրեմն ան բանը՝ որ հարկաւոր է, քեզի կամաւոր բան մը երէ. ան բանը՝ ուսկից որ խալսաւմ չունիս՝ քեզի սիրելի երէ »։

Եղանուկ բիւզանդեան (*տպ.* 1805, էջ 3)

« Աղէկ տարի պիտոր ըլլայ. ընդհանրապէս գեանին բարիքը առատ, տեղ տեղ երերուածն, նաեւ չարժ կըլլայ, ու փոխադրական հիւանդութիւն։ Ձմեռը առաչները թաց, եաքերը ձիւն ու ցուրտ. յոտոս ու ուրիչ հարաւային հովեր կըփչեն։ Գարունքը առաչները ցուրտ։ Ամառը փոթորիկ մը ու յանկարծ ցուրտ մը կու գայ՝ որ հազ ու երկարատեւ հարբուխ (գիւքեամ) կը պատճառէ։ Աշունքը առաչները ցուրտ կընէ. Եբեւակը Փայլածուին հետ գուգընթանալով՝ հովեր պիտոր փչեն »։

Աւգերեան (*Ջորս եոքերևուս վրայ, տպ,* 1810, էջ 7)

Ոչինչը, Մեղքն, ու Մահը հակաճառութիւն կ'ընեն.

Ոչինչը. — « Ով դուք եղբարք, խորթ ախպարներ,
Իրար կապուած մեղք, մահ, չարեր.
Ես ձեզ ոչինչս ի՞նչ եմ արեր,
Ազգատ չեղած հին ծեր։
Իմ ի՞նչ բանիս էք նախանձեր,
Որ դէմս ելաք՝ վչտա ծառեր.
Ատուած կըրնար, ուզեց ըներ,
Իս ոչինչը ազէկ բաներ։

Հապա ինչո՞ւ իս, գուք գէշեր,
Ոչնչացնել աչք էք անկեր.
Մեղք կուլ կու տայ շատ հոգիներ,
Մահ միա կուտէ, հերիք չըսեր։

Մարդ. — Փուճ կը չեխես ինձ՝ալըշտըկիս,
Թէ՝գող՝ գողին ես գողակից.
Զարագլուխ մեծ ախպարիս,
Մեղքին ըսէ, ինչ որ ունիս։
Թէ ան որոմ ցանած չըլար,
Ինծի բուսնիլ ուսկի՞ց կըլար.
Նայէ, ինչ եմ ես, ով հալուար,
Մեզաց ծառին պտուղ բոլոր։

Մեղք. — Ես անիրաւ եմ իրաւի,
Բայց պատճառ չեմ անիրաւի.
Ո՛վ է մեռեր, ով կը մեռնի,
Առաջ ինք՝ իս կը ծնանի։
Ես ծնօղ չեմ սատանայի,
Իս երկինքը ծնաւ անի.
Ու Ադամայ և Եւայի,
Շուտ մը ըրաւ իս ընտանի [1]։...

Ազաչրապեանց (*Բնական օրենք*, տպ. 1819)

«Հց. Ինչպէս ուտելու է գկերակուրը։

Պ. Շատ ուտելով՝ մարդս ազէկ անուշդ չառներ. աւսկ է՝ որ շատ ուտողը՝ քիչ կուտէ, քիչ ուտողը՝ շատ կուտէ, այսինքն՝ քիչ ուտողին ծերութեան տարիները ախորժակը տեղն է։ Այնչափ ուտելու է, որ սեղանէն ելած տեղը խիստ կշտացած չըլայ։ Դարձեալ՝ ժուժով ուտել պէտք է, որը երկու անգամը կօգտէ առողջութեան համար, և ան երկուքն ալ միակերպ շատ չըլայ, մէկը՝ մեծ, և մէկալը՝ փոքր»։

Փափազեան (*Բաղաքավարուհի*, տպ. 1806, էջ 155)

Կենցաղավարուհեան վրայ. — «Աչուած գմարդը բանական է առեղծեր, որ անխելք անասնոյ պէս չը վարվի աշխարհիս մէջը. ուսոի պէտք է որ մարդս իւր կենցաղավարութեան մէջը՝ միշտ զգաստ և արթուն կենայ, որպէս զի չըզբրուցէ և չընէ անսնկ բան մը, որով նմանի անբան անասնոց. այլ պիտի մտածէ, նայի ու կշռէ, որ խօսածը և կամ ըրածը՝ յարմար ու պատշաճ ըլայ տեղւոյն, տեղիին և անձանը, որոնց առջեւը կընէ կամ կը խօսի։

Պէտք է՝ որ մարդ իւր վարմունքը անսնկ չըտակէ ու կարգաւորէ, որ ախորժելի ըլայ Աստուծոյ և մարդկանց, ուսոի պիտի զգուշանայ այնպիսի բաներէն, որ կրնայ

---

1. Մի և նոյն տարին հրատարակուած է Ազգերեանի մի ուրիշ աշխարհաբար և հանրածանօթ գրուածն, այն է Պետ կենաց, զուտ Կ. Պոլսի ռամկօրէնով շարադրուած. որը թէև առկէց աւելի տաճկերէն բառերով խառն է — և երանի թէ չըլլար — սակայն այլեւայլ անգամ տպագրուելով և հազարաւոր օրինակներով տարածուելով՝ քան զայս աւելի նպաստեց աշխարհաբարի տարածմանը, և դարձաւ՝ մինչեւ այսօր՝ ժողովրդեան ամենէն սիրելի և հոգւոյն անուշդ տուող կիրքը։

ըլլալ պատճառ մեզաց, կամ ուրիշին խաբբին կը գըպչի ու գէն կու տայ, կամ կըզգուշացընէ զուրիշը, կամ կարգի և կանոնի դէմ կ'ելլէ։ Այլ մանաւանդ՝ պիտի չանայ մարդ, որ գինքը աւելի ուրիշի յարմարցընէ, քան թէ զուրիշը իրեն։ Մարդու հետ վարուելու առենը՝ պէտք է մեծարանք ընել առենան՝ իբ առաքինին յարմար։ Թէ որ մենծի հետ կը վարուիս, խոնարհութիւնը ձեռք մի ձգեր։ Թէ հաւասարիդ հետ, նայէ որ զքեզ անոր յարմարցընես։ Իսկ եթէ նուաստի կամ պզտիկի հետ, չանաւ որ սիրով ու անուշութեամբ վարուիս։

Գասպարաճեան (*Գիտակ բիւզանդեան, տպ.* 1812)

«*Դեկտեմբերի 20.— Կէս օրուան առենը՝ Նարօլէոն կայսրը Մոսկովացուն դառնալէն առեւ, իր աթոռը նստած էր նէ, չորս գին բոլորուած իշխաններով, Կարտինալներով, զօրապետներով, և այլն, ընդունից պատուով զծերակոյտը՝ որ գինքը բարեւելու եկած էր՝ ամէն կերպ կարգով կանոնով. ան տեղը ակաւ սինեօտ քօնդէ Լասէրմէ գահերէցը՝ առանկ խօսիլ. Ով Թագաւոր, աս ծերակոյտս հրամանոցդ աթոռին առջին առջեւ՝ կը փափաքի ցըցնել իր ուրախակցութեան նշանը՝ ողջառողջ գալուդ համար ժողովրդեանդ մէջը։ Հրամանոցը մենծութեան հետու ըլլալը, ով Թագաւոր, միշտ աս ազգիս Թշուառութիւն մըն է, իսկ ներկայութիւնդ բարերարութիւն մըն է, որ խնդութիւն ու ապահովութենով կըլեցնէ բոլոր Ֆրանսըզի ազգին սիրտը։ Հրամանոցդ բարձրութիւնը հիմ մը ձգեց ամենայն կարգաւորութեան՝ ընդարձակ աէրութեանդ մէջ. բայց դեռ շատ բան ալ կը մնայ ամրցընելու ու գլուխ հանելու. անանկ որ՝ քիչ մը ուշացնելը մեր բաները լըմնցնելու՝ գժբաղդութիւն մըն է աս ազգիս»։...*

* * *

Գիտողութիւն.— Այս մէջ բերուած նմոյշներէն կը տեսնուի՝ որ Զամչեանը ամենէն աւելի հաւատարիմ հետեւող է Մխիթարայ քերականական կանոնացը՝ որով և ազատ մնացած է իր ժամանակակիցներու լեզուական ծեքծեքումներէն և ուղղագրական սպաւսպուռներէն։ Ինճիճեան և Գասպարաճեան՝ Կ. Պոլսոյ ամկօրենին աւելի հետուած են, թէ՛ տառական բառերու և բացատրութեանց նկատմամբ և թէ՛ եւրոպական օտար բառերն և օ տառը նոյնութեամբ պահելով. ալ, կը և բայավերջ կոր, այսպէս և րի գործածութիւնը յաճախած է սոնց քով. պիտին տեղ՝ պիտոր, ակ...մբի տեղ՝ ակ մը և մըն մտած են։ Թոմասեանեանի և Ալգերեանի քով ևս գերանուան տրականին ձան՝ ծայի փոխուած է՝ Կ. Պոլսի ամկերենի արտասանութեան համաձայն, բառամիջի ու երկբարբառն ընդհանրապէս ամէնքն ևս ի փոխած են, և ուր այնպէս կը թողուն՝ վրան այս ՛ նշանս կը դնեն՝ անոր տեղամբ արտասանուիլը ցուցնելով։ Իսկ Փափազեանը՝ Զամչեանի պէս սեռականներն և գործիականները գրոց լեզուին համաձայնեցուցած է. որով և այժմեան Մխիթարեան աշխարհաբարին կը նմանի, քան թէ յայնժամու Պոլսոյ ամկօրենին։ Մէկ խօսքով կրնանք ըսել, թէ Արեւմտեան աշխարհաբարի այդ առաջին մշակներն երկու բան հաստատ պահեր են, այսինքն են՝ կենդանի բարբառն՝ իր իսկական յատկութիւններով, և գրոց լեզուին՝ անոր հետ ունեցած ինչ ինչ հասարակ կանոնաւորութիւնները։

Հետեւաբար՝ նոքա իրենց կողմանէ ազատ ուղղագրութիւններ չտեղծեցին, ինչպէս առանց քննութեան և ձրի կերպով ոմանք կարծել տուին. այլ պահեցին վերը նշանակած և դեռ ուրիշ մի քանի քերականական մասանց բանի գործածութիւնը, որոնք յատուկ էին նոյնպէս տորին և միջինդարեան ամկօրենին կամ գաւառականներուն։ Մանաւանդ թէ շատ սխալագրութիւններն իսկ ուղեցին սոքա, չնորհիւ գրոց բարբառին և նախնեաց ամկօրենին վրայ ունեցած իրենց հմտութեամբը, զորս ակներեւ սեռանք նոյն իսկ մէջ բերուած նմոյշներէն։ Սակայն ճշմարտութեան համար այս իսկ պէտք ենք ըսել, որ Մխիթարայ յաջորդ այդ գրողները — բայ Ալգերեանէն — ըլլալով Կ. Պոլսեցի, սորված էին այդ քաղաքի ամկօրենին համակերպիլ՝ շատ մանրա-

ճառնութեանց մէջ՝ քան թէ Մխիթարայ գործածած հայկական գաւառաբարբառին, որն աւելի ժողովրդական էր և աւելի հարուստ և բեղնաւոր։

Մեզ ծանօթ չէ ԺԲ դարավերջին աշխարհաբար լեզուով եղած տպագրութիւն մի ի Պոլիս, կամ ի Զմիւռնիա, կամ ի Տփղիս, որպէս զի կարենայինք համեմատել Մխիթարեան Հարց յիշեալ գրութիւններուն հետ։ Յամին 1795-1796 Տէր Յարթ. Եմաւուենեանի խմբագրութեամբ ի Վաորաս գրաբար լեզուով հրատարակուող Ազդարար շաբաթաթերթին մէջ երեւ է՝ որ կան նաեւ աշխարհաբար լեզուով գրուած ինչ ինչ յօդուածներ[1], սակայն Հնդկահայոց գաւառականով գրուած ըլլալով՝ թէպէտեւ ուղղակի և որոշ եպրակացութիւն մի չհասցներ զմեզ, բայց կերպով մը ցոյց կու տայ մեզ, թէ արեւելեան գաւառներուն աշխարհաբար գրութիւնը դեռ որ աստիճան ազատ, անմիջական և այլանդակ վիճակի մէջ էր, համեմատութեամբ Մխիթարեանց գրած աշխարհաբարներուն. դի այդ յօդուածներէն միոյն հեղինակը կը ծանուցանէ, թէ ինքը Ազմուկն դեռ ուրիշ բան կարդացած չէր (տես Պատմ. հայ լրագրութեան, Վիեննա, 1893, երես 211)։ Իսկ ԺԹ դարու առաջին քառորդին ազգային աշխարհաբար տպագրութեան ուրիշ օրինակ ձեռքերնիս չունենալով, կը գնենք այս տեղ Պոլսոյ Ձեռնհաս վարժապետի մը, այն է Տէր Մեսրոպ քահանայի գրաբար Քերականութեան աշխատասիրեալ լեզուով գրուած Յառաջաբանէն նմոյշ մի, որ տպուած է 1808ին՝ Սուրբ Աստուածածնի մայր դպրատան տպարանին մէջ։

Ա. ազնիւ ուսանողս

« Բանականութիւնը գեղեցիկ գարդարօղ արհեստն որ է այս քերականութիւնս, իւրաքանչիւր հոգւոյ ճանապարհաւ հազար առջեւդ ունիս վայելել։ Որ անխուտար պէտք է ամէն մարդու սորվիլ ու գիտնալ, ինչխուտար որ հարկաւոր է ամենուն ունենալ բանականութիւնը։ Ձևրք՝ բանականութիւնն կը գատէ մարդը յանբան հայվանէ. ու մարդուս բանականութիւնն եւելօք կերեւի շիտակ խօսելով՝ շիտակ գրելովն. որ այս կը սորվեցընէ մինակ քերականութիւնն։ Ինչպէս որ հիւան տիւրկերը կը քերէ կը հանէ փայտին աւելցուքը, կը տաշէ կը շրջակէ ձրւոտիւնը, ու անպէտ փայտը՝ պիտանի կընէ։ Ասոր պէս ալ՝ քերականութիւնն կը քերէ կը հանէ գիրին աւելցուքը. կը շինէ կը շրջակէ խօսքին ձոռութիւնը, ու անպէտ մարդը՝ գիտուն բանաւոր կընէ։ Ասոր համար ինչպէս կանոնէ կը ձաղկի մարդուս բանաւորութիւնն, այնպէս ամէն բանէ յառաջ պէտք է սորվիլ ու գիտնալ քերականութիւնը »։

Առնունք այժմ նոյն իսկ Կ. Պոլսոյ և Զմիւռնիոյ երկու անդրանիկ թերթերն, այսինքն են՝ Թապվիմի վագայի[2] (Լրոյ գիրը), և Շտեմարան գիտելեաց[3]։ Առաջինը՝ չնայելով որ Վիեննեի հրատարակուած աշխարհաբար գրուածներէն 27–43 տարի վերջ գրուած է, այնու հանդերձ չունի ոչ աստղ լեզուի մաքրութիւնն և կոկութիւնը, և ոչ ալ աշխարհաբարի իսկատիպ կազմութիւնը՝ իրեն յատուկ կանոններովը, զորս գծած էր Մխիթար՝ իր անդրանիկ Քերականութեամբ։ Լեզուն ընդհանրապէս տակաւին անկանոն ոամկօրէն է։ Տեղ տեղ իրաւ է՝ որ կոկիկ լեզու մի կը նշմարուի, բայց աւելի խմբագրի քմահաճոյից՝ քան թէ ժամանակակից աշխարհաբարի համաձայն։ Տէրութեան պաշտամանց, պաշտօնատարաց անուններն, այսպէս և քաղա-

---

1. Օր. իմն, յէջ 203. « Ծանուցումն լիցի ամենեցուն՝ որ մեք յառաջադրեալք Մադրասէս օրումն ես Որդանան Հէրապետս ծօվով վերկացի առ Մուշխիբադարն և Յովան Մկրտիչս մինչի Շբաթ հինգ վերկկամ յիշեալ Մուշխիբադարն տեղն մինչեւ թիւն 96 ովգան Նիւրհան ամիսն կիճամբ յետ այնու Պերսու գօլի գնացող օբայզիօնէրուն կգնամք Մաշկադն կարելիայ Հուշեռ և մինչեւ Պասրա թէ ժամանակն աջողակ պատահի և բազարն այսինքն առուտուրն բարի լինի որ մերոց բանէրն ծարեղ լինի կրկին կգոմք տեղս. թէ պազարն սառն ելալ և մերոց բանէրիցն ծարեղ չելանք ուրիմն վերն յիշեալք որ մին պօրտքն որ խվել աջողակ համարեմ Թավայի կիճամբ մինչեւ ծարեղանամք յետոյ կգոմք տեղս ». Ադամ ամիս 1795։

2. Հրատարակեալ ի Կ. Պոլիս 1832։

3. Հրատ. ի Զմիւռնիա 1839, խմբագրութեամբ բողոքական Մխիթարեաց։

քական լրոց մեծագոյն մասը գրեթէ տաճկերէն է. պատմական ոճն ալ բոլորովին տաճիկ լրագրոց ոճն է, և պարբերութիւնք իսկ ընդհանրապէս անոր համեմատ եւ ալ կը սկսին, անվերջ և ծանրաստազուկ: Ասոնէ քանի որ տաճկական լրագիրներու թարգմանութիւնն էր և հասարաժոյ մի՝ չէր կրնար ունենալ հայերէն կենդանի լեզուին բնիկ յատկութիւնը, այնու մանաւանդ՝ որ այդ լեզուն գրականապէս դեռ ձեւացած և տիրած չէր, և տաճկերէնն ալ՝ յիշեալ պարագաներով ազդեցիկ դեր կը խաղար անոր մէջ:

Ընտրեմ ակնարկ ընելու և արդեօք գաղափար մը տալու համար՝ մէջ բերենք երկու հատուածներ՝ թէ մէկ և թէ մեւս տեսակէն.

« Ասոնք ամէնն ժամուն քաղաքի մէջ չայի պէս եռացեալ նանէի կամ օղուլ օթիի, և կամ սոնց նման ուրիշ լաւ հասարակ խառներու մարթպուխէն՝ մէկ փոքր քեասէին մէջը կէսը լեցուցած, և ամէնն կէս ժամիւն ընդամէնը մը քիչ մը գամխի չուռուպ խառնելով, մէկմէկ կիւլպէչէքերի լեցուն բրլալով չուրին մէջը՝ անխառնով և քեաֆուրով եղած նշաններ ուղիին՝ 12էն մինչեւ 15 կաթիլը կաթեցընէն »:

« Բարեբնաւ ինքնակալն մեր որ ընդ երկայն աւուրս կեցցէ, իր արքայական մերձաւոր ծառայներէն միւշիրի խառաս վէկիր Ահմէտ Ֆեվզի փաշային՝ և ֆէրիկի խառաս Ահմէտ Ֆէթհի փաշային հետը առնելով, սեպտեմբերի ամսոյն 13ին չորեքշաբթի օրը՝ իր բժշկապետ Մուստաֆա Պէհճէթ էֆէնտիին՝ Պէպէքի մօտը եղած ծովեզերեայ բնակարանը գնաց »:

Իսկ վերջինը ձեռքերնիս չունենալով՝ չկարացինք անկից արտագրել հոս՝ իրրեւ նմոյշ՝ մի քանի տող, որը սակայն համեմատութեամբ առաջնոյն՝ աւելի կոկիկ լեզու մ'ունենալու էր հաւանօրէն, նման իրմէ մէկ տարի վերջ հրատարակուած Արշարոյս պատրաստեալին: Յամենայն դէպս՝ այդ թերթերն իսկ՝ ոչ միայն այն ժամանակէն խիստ հեռի բաներ են, որուն վրայ է մեր խօսքը, այլ մասամբ Վիեննեցիկ տպուած աշխարհաբար գրոց, երկշաբաթաթերթին և տարիթերթերուն, և մասամբ ալ գրաբ–աշխարհաբար և աշխարհ–գրաբար Բառարաններու և Քերականութեանց շնորհիւ է, որ այդ կէտին հասան: Այս քանիս ամէնն ոչ պիտի համոզուի, մէթ կարդայ 1843 Յունուարի, թիւ 7, երես 109 մէջ դրուած՝ կ. Պոլսոյ և Զմիւռնիոյ մէջ խօսուած տարօրինակ աշխարհաբարի օրինակը:

* * *

Մխիթարէն վերջ մինչեւ ԺԹ դարու կէսերը՝ ոչ ոք հոգ տարաւ՝ կատարեալ քերականութիւն մի հրատարակելու աշխարհաբար լեզուի, թէպետեւ շատեր կային անոր կազմակերպներ՝ թէ գրով և թէ խօսքով: Հ. Գաբրիէլ Ալեմիքեան թէպէտ և 1819 թուականին ի լոյս կ'ընծայէր աշխարհաբար լեզուով Քերականութիւնը, սակայն այդ Քերականութիւնը գրաբար լեզուն դիւրաւ ուսանելու կանոնները աւելի ատենդելու նպատակ ունէր, քան թէ աշխարհաբարին յատուկ[1]: Տէր Յարութիւնեան Տէր Մեսրոպ քահանայի յաւին 1826 յՕրթագիւղ վերատպուած գրաբար Քերականութեան վերջը՝ երբ յաւելուած գրուած աշխարհաբար հատուածութիւնն իսկ Ալեմիքեանէն աւելի բան մի չէր ընծայեր գպրոցներուն, ինչպէս անոր « Նորոգ քննութեամբ յո-

---

1. Ի դէպ՝ պէտք է ըսել սակայն, որ անուղղակի կերպով աշխարհաբարին եւս նպաստած է ատով հեղինակը. զի քերականական ուժի մեան բանին գրաբար ատենդած ժամանակ՝ դրած է ընդհանրապէս անոր դիմաց նոյնպէս աշխարհաբարն և տաճկերէնը, որով գրաբար ուսանողները՝ կը սովրին նաեւ անոնց համապատասխանող աշխարհաբար բառերը, բայերը, հոլովումները, խոնարհումները, և այլն, իրենց յատուկ կերպովը: Հոլովմանց մէջ այս փոփոխումը ներմուծած է Ալեմիքեան — և անշուշտ Կ. Պոլսոյ աշխարհաբարին համաձայնելու համար — որ կը տարբերի Մխիթարայ ատենդածէն. այսինքն՝ սեռականները՝ իմ, ուն, ը, ան կը վերջացնէ (օր. Թագաւորիմ, մարդուն, բնութեան), որականէն որոշելու համար. մինչդեռ Մխիթար՝ ընդհակառակն՝ նոյն միայն կը յաւելցնէ, և այն իսկ որականի և ոչ թէ սեռականին վրայ, համաձայն Փոքր Ասիոյ գաւառականաց: Էական դերանունն սեռականը իմին կ'ընէ Ալեմիքեան. որականին, բացառականին և գործիականի մէջ՝ ձայն և ակն ունդն ալ՝ ծայ կը դնէ. իսկ տացական դերանունին, բացառականին և գործիականի մէջ՝ ձայն և ակն ունդն ալ՝ ծայ կը դնէ. իսկ տացական դերանուն

բննեալ » մեծաչառաչ դրաբար Քերականութիւնը։ Իրաւ որ զարմանալի երեւոյթ մ'է այս, այսինքն՝ աշխարհաբար կանոնաւոր Քերականութեան մը պակասութիւնը։ Սակայն ինչպէս ամէն բնական երեւոյթ՝ այս ալ ունենալու էր ի հարկէ իրեն բանաւոր պատճառները։ Արդ՝ այդ արգելիչ պատճառներէն գլխաւորն եղած է այն ջերմ վիճաբանութիւնը կամ բուռն պայքարը, որ երկու հակառակ կուսակցութեանց կը բաժնէր ազգիս ընթերցող և գրագէտ դասը։ Այս կուսակցութիւններէս մին՝ որ ժողովրդեան զաւակներէ կամ աշխարհականներէ կը բազկանար, կ'ուզէր՝ որ կենդանի բարբառն ըլլայ իրրեւ հաստատուն և գիւրին միջոց՝ մտաւոր յառաջադիմութիւնը մղելու և տարածելու ժողովրդեան ամէն խաւերու մէջ։ Իսկ միւսն՝ որ մանաւորապէս եկեղեցականներէ և գրաբարին յարող աւանդապահներէն բազկացած էր, կը խոհար որ ոսկի աշխարհաբարը մշակելով և իրրեւ ընդհանուր գրական լեզու գործածելով՝ մի գուցէ մեր նախնեաց հարուստ և պատուական գանձը, հայութեան այն ազնուագոյն ու վեհագոյն պահպանակը՝ գրաբար լեզուն՝ իսպառ մոռացուի և կորսուի։ Վերջին կուսակցութիւնս՝ ի սկզբան այնքան աւելի զօրաւոր և ազդեցիկ կ'երեւէր, որքան որ ազգային տպարաններն և տպագրութիւնները, աւանդականութիւնը գլխովին և գոցմունք իրեն կողմը կը բռնէին, իր փողը կը հնչեցնէին։ Այս պայքարս — ինչ որ կը տեսնուի Վենետիկէ եղած վերոյիշեալ հրատարակութեանց Յառաջաբաններէն — ֆ֊ֆ դարով սկսած էր արդէն. իսկ 1839–1843 թուականին՝ խիստ լուրջ կերպարանք առած և գրական գործիչներուն հոգածութեան մեծագոյն առարկան դարձած էր։ Մինչդեռ Վենետիկ, Վիեննա, Կ. Պոլիս, Զմիւռնիա, Զուղայ և Մադրաս լեզուական այդ խնդիրներով կը զբաղէին, այսինքն՝ թէ աշխարհաբարն ինչպէս որ կը խօսուի՝ այնպէս ալ գրելո՞ւ է, թէ ընդհակառակն՝ գրաբարով կոկելով և կանոնաւորելով ազնուացնելով անոր ոճականութիւնը. անդին Մոսկուա և Տփղիս դեռ իրենց յատուկ գրաբարով միայն կ'օրօրուէին. աշխարհաբար գրելն՝ իրենց համար հեռաւոր և գրեթէ անսովոր բան մ'էր տակաւին։ Ահա այս տարտամ դրութիւնս է, որ չէր համարձակեցներ ձեռնհաս անձինքը՝ նոր աշխարհաբար քերականութիւն մը յօրինելու, որոշ ուղղութեամբ և կանոններով, որ կը կաշկանդէր աշխարհիկ գրագիտաց լեզուն և բազուկները՝ աշխարհաբար գրելու։ Հետեւաբար՝ այդ լեզուն եւս — նման տիեզերաց նախահայր վիճակին — կէս գրաբարի և կէս աշխարհաբարի խառնուրդ մի կամ ճիշդ թոհրոհը կը ներկայացնէր, մանաւանդ ուր որ Մխիթարեայ յիշեալ Քերականութիւնը դեռ հաստած և նախեղակ լոյսը ծագած չէր։ Սերտաստուգուց հեղինակութեան հետ՝ այս մտքին մատուցանելիք օգնութիւնն եւս մեծագոյն պիտի լինէր, եթէ իրենները գէթ 1819 թուականին անոր անտիպ մնացած աշխարհաբար ընդարձակ Քերականութիւնն ի լոյս ընծայած ըլլային — նոյնութեամբ կամ յաւելուածներով — փոխանակ Ալեմիքեանի յիշեալ Քերականութեանը, որ աշխարհաբար լեզուով՝ ինչպէս բուեցաւ՝ գրոց լեզուն ուսուցանելու կէտ նպատակի ունէր, և այն իսկ՝ Պոլսոյ ռամկօրինէն ազդուած։

Գուցէ ասկէց հետեւի — ինչպէս ուզեցին կամակորութեամբ հետեւցնել վերջին ժամանակի աշխարհաբարի պատմութիւնը գրողներէն և գրաբարի հակառակորդներէն ոմանք — իբր թէ՝ այդ նպատակով Մխիթարեաններն աշխարհաբարի դէմ դուռը գոցած և միայն մեռած և անպէտք գրաբարը մշակելու բոլորովին անձնաւորւած եղած, մանաւանդ թէ ի գուր վատահամած ըլլան։ Մենք հոս՝ իրաց անտեղեակ և անձուկ տեսութեամբ եղած այսպիսի քննադատութեանց դէմ մաքառելու ոչ կամք ունինք և ոչ ալ կարեւորութիւն կու տանք։ Սակայն այսչափս կարեւոր և յոյժ կարեւոր կը համարինք ըսել նախ, որ գրոց լեզուն մեծագոյն խնամքով մշակելն և տարածելն՝ աշխարհաբարը գլխովին երեսէ ձգել և մեռցնել չէ, այլ ընդհակառակն։

սեռականը՝ իմիհի, ձքն. իմիհներուն։ Եմ էական բայն աորիստականը ըլլամ, ըլլաս, ըլլայ կը գրէ. իսկ եղանիմ և լինիմ բայերուն սահմ. եղ. ներկային, անկատարն և ապառնին եւս ըլլամ, ըլլաս, ըլլայ կը դնէ, միայն թէ վերջնոյս աորիստականին վրայ նե մի կը յաւելցնէ, և ապառնիին վրայ պիտի (օր. ըլլամնե, ըլլաս պիտի)։ Ուրիշ նեղգործական բայերու աորիստականն եւս նեով կը լծորդէ Ալեմիքեան փոխանակ բէ, եթէ։

Շարժիլ և մի քանի ուրիշ կրաւորական բայերուն սահմ. եղ. ներկային և ապառնին միայն գրաբարին պէս իմ, ինք կը գրէ (օր. կը շարժիմ, շարժիմ պիտի)։ Իսկ միւս ժամանակները՝ ըվով կը լծորդէ (օր. կը շարժըվիմ, շարժըվեցայ, շարժըվէ, շարժըվիմնէ)։

Ի վերջոյ պէտք եմ ըսել, որ Ալեմիքեանին պէս՝ Զամչեանի և Զալըխեանի Քերականութիւնները եւս անուղղակի կերպով ձեռնաու եղած են աշխարհաբար գրողներուն։

Ոչ յիրաւի, եթէ ասոնք ի սկզբան և չարունակ իրենց Քերականութիւններով [1], Բառարաններով, բանաստեղծութիւններով, նախնեաց հրատարակութիւններով և եւրոպական մատենագրութեանց Թարգմանութիւններով հայկական բարբառը նախ պատրաստած և հարստացուցած չըլլային, աշխարհաբարն եւս ոչ այնպէս երագ գրաւոր լեզու ըլլալու յաջողութիւնը պիտի ունենար, և ոչ իսկ այսօրուան ունեցած զարգացմանը հասած, և ամէն գիտութիւն և արուեստ արտայայտելու ամենընդունակ գործի մի դարձած: Մեզ համար անտարակուսելի է այս բանս. և ոյք կ'ախորժին տակաւին տարակուսիլ այդ ճշմարտութեանը վրայ, թող բաղդատեն արդի աշխարհաբարը կամ նոր մատենագրութիւնն՝ իրենց պապերու և մամերու խօսած կամ գրած խեցրեկ ռամկօրենի հետ, և պիտի տեսնեն անշուշտ՝ որ այդ ահագին յեղափոխութիւնը — գէթ լեզուական տեսակէտով — այդ զարմանալի անցքը կատարուած է գրոց լեզուի օգնութեամբը. այսինքն է՝ բառերով, բացատրութիւններով, և աշխարհաբարին յարմարող ինչ ինչ քերականական կանոններով, և ութ մատանց բանի պատշաճ գործածութեամբք աւելի՝ քան թէ գաւառական լեզուի հին կամ նոր տուած ատաղձով: Այնպէս որ՝ այսօրուան օրս գիտական կամ գրական կամ քաղաքական նիւթի վրայ աշխարհիկ լեզուով եղած բանախօսութիւն մի՝ կարող է գրաբար հնչել անոնց ականջին՝ նոյն իսկ անուանց հոլովումներով, բայերու նոյնակերպ լծորդութիւններով, ածանցներով և առած ուրիշ ձեւերովը: Այս ամենայն այսօր ընտելական դարձեր է մեզ, մինչեւ ասկէ 30 տարի յառաջ գրաբառնակ բառ մի կամ բացատրութիւն գործածելը՝ նոր օրինակ բան և յոյժ նկատելի կը թուէր:

Երկրորդ՝ կ'ուզենք ցոյց տալ, որ Մխիթարեանք գրաբարին հետ միաժամանակ նաեւ աշխարհաբարը մշակելու ատանձնած գործը՝ երբէք ձեռքէ չթողին, այլ չարունակեցին միշտ: Եւ այդ մշակութեան գործն՝ այնքան աւելի արդիւնաւոր և ազդեցիկ եղաւ, որքան ընդարձակ էին անոր գործունէութեան ասպարէզն և ի գործ դրած միջոցները. այսինքն՝ գպրոցական դաստիարակութեամբ և հասարակաց գործիով կամ լաւ եւս ամսական կամ կիսամսեայ թերթերով. և այս՝ ճիշդ այն ժամանակէն ի վեր, երբ ազգն այդ միջոցներէն և ոչ մին ունենալու՝ թող թէ զանոնք գործադրելու վիճակի մէջ էր:

* * *

Աշխարհաբար գրականութեան առաջին շրջանը՝ մամլոյ ձեռքով՝ կարելի է գծել 1727–1832 թուականներուն: Այդ՝ այդ շրջանի գլխաւոր գործիչներն եղած կ'երեւին Մխիթարեան երկու ճիւղերն. այլ իրենց հրատարակած Քերականութիւններովը, Բառարաններովին և բազմաթիւ մատեաններով հիմը կը դնէին աշխարհաբար գրականութեան: Վերեւիկ այդ լեզուով հրատարակուող աշխարհաբար թերթերը՝ Տարեգրութիւն, Դիտակ և Եղանակ բիւզանդեանները, որոնք 1800–1820 իրարու յաջորդելով գրեցին և գործեցին, մենք տեսանք արդէն, թէ ինչպիսի մեծաւոր շարժումն յառաջ բերին Կ. Պոլսի, Զմիւռնիոյ և ուրիշ կողմերու հայութեան ժողովրդական և արհեստաւոր դասերու մէջ: Իսկ այժմ պատմութեան թելը ձեռքերնիս առած՝ կարող ենք ըսել, թէ նոյնչափ մեծ և ուրախաւէտ եղաւ նաեւ այդ թերթերու և ատոնցմէ վերջ հրատարակուած աշխարհաբար գրքերու լեզուական ազդեցութիւնը:

Այդ 1820 թուականին, ինչպէս և անկէ ութը տարի վերջ՝ ազգային միութեան և հայածանաց պատմութիւնը գրի առնող Աստեր Յովհ. Երեմեանը, Հիւրմիւզ աղա Հիւրմիւզեան, Տրապիզոնեցի Գ. Գալիրն, Տիւզեան Յակոբ Զէյէպին և ուրիշ շատեր՝ չնորհիւ այնպիսի հրատարակութեանց և անոնց ընթերցման է՝ որ իրենց ժամանակէն ալ վեր՝ բաւական կոկիկ և յստակ աշխարհաբար կը գրէին: Անոնց որ հրատարա-

---

1. Որոնք գրաբարին հետ՝ կ'աւանդէին նաեւ աշխարհաբարը, գնելով առընթեր:

կուած չեն։ Կ. Պոլսի և Զմիւռնիոյ մամուլներն եւս այդ չարժմանը համակերպելով՝ [1] կը սկսէին քիչ յետոյ աշխարհաբարով իրենել ժողովրդեան ապագային, և ժեռելութիւնը կենդանացնել։ Կ. Պոլսոյ մէջ 1832ին Թագվիսի վազայի կոչուած տառկերէն շարադրութիւնը կը փոխուէր հայերէն աշխարհաբարի՝ առնելով Յայտարար գիր ըրոյ վերնագիրը. և 1840 թուականին ալ Պ. Աբտպեանի ապարանէն լոյս կը տեսնէր Ագգասէր բիւզանդեան շարադրութիւնը, խմբագրութեամբ Իսկ Կ. Պոլսոյ նախանձընդդէմ կեդրոնին՝ Զմիւռնիոյ մէջ կը հրատարակուէին, 1839 թուականին, նախ Հոման Հայոց և Գալ. Կրիֆիթի ապարանէն, Շաբաթաթերթը, տեղեկութիւններն արդէն տրուած են հայ լրագրութեան Պատմութեան մէջ։ Ընտրիւ այդ թերթին՝ Զմիւռնիա գերակշիռ կը հանդիսանար Պոլսոյ վրայ, ըստ ամենայնի։ Այս ալ բանէ, որ անոր լուսամիտ խմբագրապետը՝ Պալդազարեան, ինչպէս և Մնարոպեան վարժապանն — որուն նա ինքն էր վերատեսուչ — Վենետկոյ տպարանին հետ ունեցած վաղեմի սերտ յարաբերութենանց համաձայն, զորս յաջորդ վերատեսուչներն եւս պինդ բռնեցին մինչեւ ցայսօր, մեծապէս օգտուած էին Մխիթարեան հրատարակութիւններէն. այլ և յաւէտ երախտապարտ կը ճանչնային ատոնց իրենք պիրենք՝ Յովհ. Նուպարեանի հետ՝ ի Մայրավանս գրած համակրալից նամակներով։

Այսպիսի կացութեան մէջ է՝ որ Կ. Պոլսոյ և ուրիշ տեղեաց Մխիթարեաններու հետ՝ բազմաթիւ ազգայիններ եւս աչքերնին կը դարձնէին դէպ ի ազատ Վենետիկը, հրաւէր կը կարդային Մխիթարեաններուն, որ թերթով մի փութան բաւականութիւն տալ իրենց լեզուական և մտաւոր պահանջներուն, և Պոլսոյ ազկազկ լրագրութեան պակասը լեցնեն [2] ըստ արժանւոյն։

---

1. Թերեւս ըլլան ոմանք, որ Մագրաս հրատարակուող Ազդարար անդրանիկ թերթին, և կամ բազմաքական Մխիթարեաց ընծայեն այդ շարժումը, սակայն այդ հաւանական չէ. վասն զի նախ որ «Ազդարարը» գրաբար լեզուով կը հրատարակուէր, որ չէր կարող նպատակ լինել Կ. Պոլսոյ կամ Արեւմտեան աշխարհաբարին։ Ե. Այդ թերթը 37 տարիներէ ի վեր դադարած էր։ Իսկ գալով Ամերիկեան կամ Բրիտանական միսիոնարաց՝ դիտել կու տանք, որ դարս իսկ Զմիւռնիոյ մէջ Շոտլանդեան պիտանի գիտելեաց ամսաթերթը հրատարակելէն շատ յառաջ՝ Մխիթարեանց աշխարհաբար հրատարակութիւններովը կը մարզուէին հայերենի մէջ։ Այս բանս անկէց իսկ յայտնի է՝ որ երբ Զօհրապեանի տուրը Գրոց աշխարհաբար պատմութիւնը լոյս կը տեսնէր, Ատուռաժաղլի բնակարանին 1500 օրինակներ կը գնէր և կը տարածէր անոնք։ Եւ Հ. Մկրտ. Զամչեան ի 25 Հոկտ. 1803 Կ. Պոլսէն գրած նամակի մը մէջ կը գրէ, թէ «Պատմութիւն Ատուռաժաղլին աշխարհաբար եհաս, և ընդունելի եղեւ առ ուղղափառս, եւս և առ այլս». և թէ «ուզող ուզողի են»։

2. Այս վերջին կէտս որոշակի շեշտուած է նոյն իսկ «Բազմավէպի» Յառաջաբանին մէջ. զի խմբագիրն՝ յետ յիշելոյ գովեստիւք և համակրութեամբ Զմիւռնիոյ Արշալոյս արեւտեան և Շոտլանդեան պիտանի գիտելեաց ազգօգուտ լրագիրներն՝ իրենց ուրոյն ազգին մատուցած ծառայութիւններովն, անդէն կը յարէ. «Ասոնք ալ ազգին ուսումնասիրութիւնը կը յայտնեն, բայց ոչսովորական հետաքրքրութիւնը չեն կշտացներ»։

ԳԼՈՒԽ Ը

Հ. Գաբ. Ա.յվազովսկին և Մխիթարեան աշխարհաբարի գարգացման երկրորդ շրջանը. — Ա.յդ շրջանին մէջ գրող և գործող Մխիթարեանք և երբեմն Մխիթարեան աշխարհաբար գրողները. — Անոնց իւրաքանչիւրին համառօտ բնագրոշմը. — Ա.ատրկութիւնք և անոնց լուծումը. — Մխիթարեանց հոգատարութիւնն և փոյթը աշխարհաբարը մաքրելու և կոկելու մասին, ու անոր գրաւոր փաստերը. — «Բազմավէպը» որպէս մշտատեւ գործի Մխիթարեան աշխարհաբարին. — «Բազմավէպը» ծագող արեւմտեան և արեւելեան թերթերու վերաբերմանը. — «Բազմավիպի» և «Ազատնիի» ունեցած լեզուական ազդեցութիւնը Ռուսահայոց թերթերու և գաղթական ժողովրդեան վրայ. — Գրական և գրական փաստեր այս բանին. — Մխիթարեանք իրբեւ ահվիրաններ ինչպէս արեւմտեան՝ այնպէս ալ արեւելեան աշխարհաբար գրականութեան. — Սո. Նազարեանի յարաբերութիւնքը Մխիթարեան մամուլին հետ, և «Հիւսիսափայլ»ի լեզուական կազմութեան և ուղղութեան համեմատութիւնը՝ Ա.յվազովսկւոյ և «Բազմավէպի» հետ. — փաստեր։

ԱՄԻՆ 1843 լոյս կը տեսնէր Ս. Ղազարու տպարանէն՝ Ընտիր, Տնտեսական և Բանասիրական պարունակութեամբ կիսամսեայ Բազմավէպ հանդէսը, Հ. Գաբրիէլ Ա.յվազովսկւոյ խմբագրութեամբ, որուն կը գործակցէին Մխիթարեան ուրիշ ձեռնհաս անձինք եւս։ Ա.զգային լրագրութեան պատմութեան տեղեակ եղողներուն յայտնի է, որ ուրիշ թերթեր եւս յառաջ և յետ «Բազմավիպի» եռառեակ բաժանումով եղան տպագրիչ. սակայն ճշմարիտն ըսելով՝ անոնցմէ քիչեր այնքան ձեռնհասութեամբ և տոկունութեամբ մշակեցին վերոյիշեալ երեք նիւթերը, ինչպէս Մխիթարեան գործին՝ իր համառօտ համաձայն։ Գրութեանս երկրորդ գլխոյն մէջ ուղեցինք մանրամասն նկարագրեցինք Բազմավիպի հանրագիտական նշանակութիւնը՝ ազգային մտաւորական զարգացման և լուսաւորութեան նկատմամբ. իսկ այժմ կ'ուզենք ցոյց տալ անոր լեզուական մեծ նշանակութիւնը՝ մասնաւորապէս աշխարհաբարի մշակման և զարգացման նկատմամբ, և մեր կարծիքը՝ մասնաւորապէս աշխարհաբարի մշակման և զարգացման նկատմամբ, և մեր այդ ապացուցութիւնը պիտի լինի եզրակացութիւն նաեւ այն տեղ բաժնուած։

Սակայն՝ մենք տեսանք նախընթացներէն՝ որ Բազմավիպի, իր նախորդ երեք լրագրական թերթերով հանդերձ, համակերպելով ժամանակին՝ ատանդեցին ազգիս ամբողջ մեծ գործ հին և նոր ժամանակաց գիտելիքը՝ իրենց բազմապատիկ ճիգերուն, որքան որ կարող էին և որչափին ազգն ընդունակ էր։ Իսկ որովհետեւ այդ ամենայն գիտելիք ատանդուելուն ընդհանրապէս աշխարհաբար լեզուով. ուրեմն տակէն կարելի է գուշակել, թէ որքան պէտք էր՝ որ գործածուած լեզուն՝ իրարմէ տարբեր այնքան մտածութիւններն ատանդելու և բացատրելու յարմարուն գործոցութեամբ։ Գիտութիւններ և արուեստներ, որոնցմէ շատերը նոր ժամանակի գիւտ և գազափար լինելով՝ բնականապէս կը պահանջէին նոյնպէս իրարմէ տարբեր բառ և բան, ճշգիւ հասկանալի և հանրամատչելի լինելու համար։ Իսկ թէ Բազմավիպի գրիչներն և գործիչներն՝ որքան ձեռնհասութեամբ և խղճամտութեամբ քննեցին, գտան և հնարեցին այդ բառերն և բացատրութիւնները՝ իրենց ժէն մի յոգուածը գրած կամ հին և եւրոպական լեզուներէ գանոնք թարգմանած ժամանակ, կարեւոր է գիտնալ նախ՝ թէ ո՛րք էին այդ գրիչներէն գլխաւորները. երկրորդ՝ թէ որքան գիտութիւն ունէին իրենց և օտար լեզուներուն, այնպէս նաեւ գրած և կամ թարգմանած մտածութիւններուն. երրորդ՝ գիւրութիւնն և միջոցները, որոց հետեւեալ կարէ լինել լեզուական զարգացումը։

Նկատմամբ առաջին կէտին՝ պէտք է յիշել յանուանէ նախ Բազմավիպի բազմարդիւն հիմնադիրն Հ. Գաբրիէլ Ալմազովսկի, որուն յառաջադիմասէր հանճարին և եռանդուն հոգւոյն պէս՝ աշխարհաբար լեզուն եւս իր ժամանակին համար հիանալի է, մտածութեան նորութեամբ, բանից յատակութեամբ և ոճի ընտրութեամբը։ Ասոր Յաղագս մարդկային պարտուց, և Քրիստոսի Առակաց բարգմանութիւնն՝ ըստ ամենայնի՝ մի մի հրաշալիք կրնան համարուիլ արձակ և չափական աշխարհաբարի։ Հ. Մոսէսեան նոյն Եագրձեան՝ որուն լուրջ մտածութեան և կրթուած գրչի ներքեւ՝ աշխարհաբար լեզուն ոչ միայն իր ամբողջութենէն խոպան մերկացած կը տեսնուի, այլ և իրեն յատուկ կոկութեամբ եւ կարգաւորութեամբն ազնուական եւ վսեմ կերպարանք մ'եւս առած է։

Գերպ. Եդուարդ Հիւրմիւզեան՝ բոլոր նախընթացներէն աւելի իր բնականութեանը մէջ կը ներկայացնէ մեզ արեւմտեան աշխարհաբարը, կամ լաւ եւս ժողովրդական կենդանի բարբառն՝ իր գիւտաւոր և գողարիկ առումներովը, բազմամանուած դարձուածներովն ու բառից նորութեամբ, որք պարսկական գորգի մը կամ ասղանկարի մը պէս նկարէն կը գործեն զայն։ Ասոր աշխարհաբար Բարգմանութիւններն՝ իրենց պարզութեամբը՝ մանուկներուն անգամ դիւրամատչելի են. իսկ Առուեաժաւերն ու Հովհ. Հոգեւորը կը գերազանցեն զամէնքը. և այսօր խոկ կարող են ծառայել իրրեւ տիպար արեւմտեան աշխարհիկ գրականութեան։ Հիւրմիւզեանի անկեղծ և անուշ հոգին կ'արտափայլի անոր գրչին և լեզուին վրայ. և ոչ ինչ ընդհատ սահուն է, կոկիկ և ներդաշնակ ասոր աշխարհաբարը գրաբարէն։ Մանցոնիի խօսեցեալքն եթէ չունեցաւ ընթերցողաց ասուար բազմութիւն մը, պատճառն այլ ինչ է, զոր գիտեն ամէնքը։

Հ. Գևոնդ Ալիշան, որ իր հայրենասիրական հնոցին մէջ այնպէս գիտցած է ձուլել իր լեզուն ու գրիչը, որ կարծէք թէ ատուգիւ հայութեան կատարեալ տիպար Նահապետն է՝ որ հայ մտքին ու սրտին բնորոշ և անուշիկ բարբառովը կը խօսի, կը գրէ կը յորիշատակէ և կը կենդանացնէ՝ ոչ միայն ամէն մարդ, այլ և ամէն բան։ Շնորհալի և պարագայք իւր, Նահապետի երգերն, Յուշիկները, Նշանաբք և Ճիշտաբք են ասոր գերազանց օրինակները, զորս անկարելի է այլոց օրինակել։ Սա, Բազմավիպի ծննդեան օրէն, ոչ միայն հիւսած է անոր մանկութեան խանձարուրքը, այլ և գործած է թէ երիտասարդութեան և թէ այրականութեան ամենաչքեղ պատմուճանն ու ծերութեան վերարկուն, բանաստեղծական և վիպական բանահիւսութեան ամենագեղեցիկ մարգարիտներովը, ըլլալով միանգամայն միշտ անոր կաթոգին խնամածուն մինչեւ իր բեղնաւոր կենաց վերջալոյսը։ Իրաւ է՝ որ Բազմավիպի մէջ այնքան տարի հրատարակած ասոր ազգային բազմաթիւ նիւթերու մի մեծ մասը՝ յետոյ առանձին գրքով եւս լոյս տեսած են, սակայն կան դեռ շատեր եւս, որոնք եթէ առանձինն հաւաքուին և տպուին, ուրիշ ասուար հատոր մ'եւս կարող են ձեւացնել։ Իսկ Նահապետը վերջին տարիներուս խիթալով՝ կամ ուղելով բոնի համակերպիլ ժամանակակիցներուն, Թողուց դժբաղդաբար իր նախընտրած գաւառացի Հայկակին ուսուցած սիրուն լեզուն։ Իսկ թէ ինչպէս, այս այլուր պիտի բանք։

Հ. Համազասպ Թերձիմանեան՝ յատուկ բերումն և յարմարութիւն ունեցած է դէպ ի աշխարհիկ բարբառը։ Եւ ասոր սիրոյն, և կամ աւելի մատչելի ըլլալու համար, գրաբարէն աւելի՝ այդ լեզուով մատենագրած է։ Ասոր Հայոց պատմութիւնն՝ իր պարզ և յատակ ոճին համար՝ ցայսօր խոկ ոչ միայն Մխիթարեան, այլ և ազգային դպրոցներուն մէջ եւս հայ պատանեկութեան սիրած գիրքն եղած է։ Գրաստ է ասոր լեզուն ոչ միայն օտարազգի, այլ և արդեսյց օտարախորթ բառակազմութենէն։ Ցկար մանուկն իսկ այդ դասագրքի օգնութեամբ՝ արձակ համարձակ կը պերճախօսի. այս իսկ ամէն փառէ վեր է՝ ըստ իս։

Հ. Տիմոթէոս Թրլեկրեան, որուն աղնիւ մտքէն և սրտէն բղխած աշխարհաբարն ուրիշ կերպով չէ կարելի որակել, բայց եթէ նմանցնելով զայն գաղտակրէն առուղացող՝ յղկեալ, լուսացնցուղ և իր պարզութեանը մէջ միտքերը գրաւող մարգարիտներու, որք իրենց հետ՝ կիրենք կրող դէմքերու գեղն եւս ցոլացնելու կարծէք թէ առմնռւած են։ Հ. Մ. Քաչուհի, Հ. Աբրահամ Գուրգինեան և Հ. Հովհաննէս Պապիկեան, որոնց քիմիական, բնագիտական, մաթեմատիկական և իմաստասիրական գիտութեանց համաձայն՝ լեզուն եւս գիտական է և ստուգաբանական։

Հ. Գարեգին Զարբհանալեան, որ ի վաղուց ծանօթ է իր հայկական հին, միջին և նոր գարուց Մատենագրութեան և Մատենագիտութեան աշխարհաբար պատմութիւններով։ Լեզուն ճկուն է, սահուն և սիրելի։ Թէպէտ և գրութեան ոճն և ասութիւնները հին են և միակերպ, սակայն յոյժ մաքուր և մշակուած՝ բանուկ դիշին յարատեւ հարուածոց ներքեւ և նորանոր հրատարակութեանց անպակաս ընթերցանութեամբը։ Գրաբար նախդիրներու յաճախ գործածութիւնն, որ ըստ ինքեան նեղելի չէ, գրեթէ անզգալի կերպով կը ձուլուին անոր սահուն աշխարհաբարին մէջ, և խորթութենէ աւելի՝ գաշնակաւոր կ'ընեն զայն։

Հ. Գրիգորիս Մերճանեանց իսկ՝ իր գաւակցէն ոչինչ ընդհաս՝ կոկուած գրիչ մ'ունէր։ Աւոր աշխարհիկ լեզուով թարգմանած ու թարգմանաբար յօրինած յօդուածներն ի վաղուց արդէն գարդարած են Բազմավիպի էջերը։ Հ. Սուքիաս Պապոնեան և Հ. Ա՛ղբ. Գալֆայեան, որոնք աշխարհաբարի համար միայն չարժած են իրենց գիտութիւնն ու գրիչը. մանաւանդ թէ իրենց բազմահատոր հրատարակութիւններով գանի մեծապէս զարգացուցած և հարստացուցած են։ Առաջնոյն ցայտուն խանդին հետ՝ թէպէտ եւ գրիչն իսկ սուր է և ներկուռ և ճշդող, բայց գրաբարով կոկելու և կանոնաւորելու համար զայն՝ քիչ մը խորթացուցեր է. իսկ վերջինն՝ ինչպէս իր Բառարաններովն, նաև առաւել Հին և Նոր ազգաց Պատմութեան գասընթացներովը, չատերէն աւելի աշխարհաբարն իր բնիկ նրբութիւններովը սիրցուցած և ընդհանրացուցած է դպրոցներուն մէջ։

Հ. Գրիգոր Ձէլալեան, որ ազգային և եւրոպական մատենագրութեան վրայ ունեցած ընդարձակ տեղեկութիւնէն զատ՝ իր խանդավառ մտօքն և առեղծագործութեանց արտայայտութեամբք իսկ ինքնատիպ է և գրաւիչ։ Ե. 1854–1859ին «Բազմավիպի» էջերուն՝ կը գտնուին իր ինքնագիր և թարգմանածոյ յօդուածներն, որոնք վիպասանութեան և բանաստեղծութեան արձակ նմոյշներ են. իսկ «Մագդալինէն» գլուխ գործոց՝ իր լեզուին։ Հ. Յակոբոս Խաւիերոնից, որուն վիպասանական գրիչը միշտ աշխարհաբար լեզուով արտադրած է, և աշխարհաբարն իսկ՝ մտքին ճարտար գիտեերու նման այնքան բնական է և ախորժալուր, որ եղկիւրաւոր քիմեռաններ իսկ՝ կախարդական ապառնիքի պէս գիւրաւ և դիւթելով կ'անցնէ ընթերցողի մտաց մէջ։ Լ. Ալահիա ձկնորսն ասոր ամենէն գեղեցիկ արտադրութիւնն է՝ առանձին տպուած՝ թէ լեզուի և թէ մտածութեան կողմէն։ Հ. Խորէն Նարպէյ, որուն գրարարին պէս աշխարհաբարն եւս բանաստեղծական ցայտեր ունի և իսկատիպ յատկութիւններ, խնամքով յղկուած և մշակուած։

Հ. Նիկողայոս Զիբի՝ Պաչպալովցի, որուն եւրոպական կիրթ մտաց և գազափարներուն համաձայն՝ լեզուն եւս պայծառ է, կորուկ, և կորովի։ Վիպասանական և բանաստեղծական գանազան թարգմանութիւններ հրատարակած է Բազմավիպի մէջ, որոնց գեղեցկագոյներէն մին է Ալեհէբը, զոր վերջին անգամ հրատարակեց Բազմավիպի մէջ, և չատերէն գովութեամբ ու գոհութեամբ կարդացուեցաւ։

Հ. Գաւիթ Նազարեանց՝ որ ազգային և արտաքին բազմակողմանի գիտութիւնքով և լեզուներով զարգացեալ և ազգին ծանօթ դէմք մ'է, կանուխ՝ Ալբաքիի պատանի, Աչնախնի՝ Բիւզիտոս, և Նաբէի՝ Ալաձնոն բարոյական Քաղ–Ցնուսուորիւն ընտիր գրուածոց թարգմանութեամբք ու «Բազմավիպի» խմբագրականներով արդէն փորձը տուած է կանոնաւոր և մաքուր աշխարհաբարի մը։

Հ. Քերովբէ Քուչներեան՝ որ կարծէք թէ իւղով և մեղրով օծած իր շրթունքն և գրիչը՝ այնպէս կը խօսի և կը գրէ. և որուն աշխարհաբարն այս առանձնայատկութիւնս ունի՝ իր կրօնակից գրողաց մէջ, որ թէ ռուսահայոց և թէ տաճկահայոց աշխարհաբարը կը հիւսէ ի մի, առանց բռնադատութեան և արուեստականութեան։ Ահա այդ պատճառաւ իսկ սոր աշխարհաբարը՝ գրաբար լեզուի կոկութիւնն ու կորովն ունի. որով թէ սառնց և թէ անոնց եղած է հաւասարապէս և՛ ընթեռնլի և ախորժելի։ Շատերուն ծանօթ են արդէն կաղանդչէքի հետ՝ նաեւ անոր բազմաթիւ, արձակ և ոտանաւոր գրութիւնքը «Բազմավիպի» մէջ, որք հաւաքուած ի մի՝ կը տպագրուին այժմ։ Քուչներեան իր ճարտար և միանգամայն կոկ գրչովը ցուցուց, որ կարելի է գրական միութիւն մը գոյացնել Արեւելեան և Արեւմտեան աշխարհաբարներու մէջ, առանց մին կամ միւսը գոհելու կամ կերպարանափոխելու։ Բնական է որ իրեն պէս բնական, և իրմէ աւելի տպաւնդաւոր մէկը՝ հակայագործ վիպասանութեամբ կամ քերթուածով մը հանրացնել փորձէ զայն ապագային։

Այս ալ ըսենք ի վերջոյ, որ ոչխատարակ իրարմէ աւելի կամ պակաս Աշխարհաբար տուած ուղղութեանը հետեւած են։ Մանաւանդ թէ ոմանք լեզուն մաքրելու կանոնաւորելու և գործածելու համար՝ Աշխարհիկին աւելի փորձեցին մօտենալ գրաբարին. բայց չեմ կարծեր, թէ ըլլայ մէկը յիշեալներէն, որ անկէց աւելի ժողովրդականացնել փորձած ըլլայ աշխարհաբարն՝ այդ շրջանին մէջ։

Յիշենք նաև Հ. Արսէն Սուքրեան, որ իբրեւ բառապէտ և բանասէր՝ առաջին անգամ բանեցուց «Բառմավէպի» մէջ քննադատական լեզու, ճշդելով իր բառերն և բացատրութիւնքը, մանաւանդ թէ յետոնելով եւրոպական Բարի գործակցութեան և քննադատութեան շփումովը։ Այդ ոճն և լեզուն այնքան հեշտալուր և ճկուն չէ, որչափ է կոխուկ, կորովի և վճռական։

Ոչխատարակ «Բառմավէպի» առաջին ու միջին գործակիցներն և աշխարհաբարի պետական մշակները, գոնս անոր համար ալ յիշեցինք, վասն զի անոնք բաս հին ազգութեան և համեստութեան շատ անգամ իրենց անուններն առաջադրած չեն՝ բազմաթիւ յօդուածներու տակ։ Եւ երկրորդ՝ զի արդի սերունդը հետաքրքիր է ճանաչել աշխարհաբարին վրայ վաստակող Մխիթարեան հին մշակները։ Նոր ժամանակի գրողներու և գործակիցներու անուանքն յայտնի են ընթերցողաց. ուստի աւելորդ կը համարինք յիշել այս տեղ, այնու մանաւանդ՝ որ 1902 ամի Բազմ. Մայիս ամսոյն մէջ անոնցմէ ոմանք յիշուած են արդէն։

Իսկ գալով վերոյիշեալ երկրորդ և երրորդ կէտերուն՝ կրնանք ըսել՝ թէ առաջ առ հասարակ իրարմէ աւելի կամ պակաս տեղեակ էին ոչ միայն մայրենի լեզուի կրկին տեսակներուն, այսինքն՝ հնին և նորին, այլ և հին և նոր օտար լեզուներուն՝ որոնցմէ կը Թարգմանէին կամ կ'օգտուէին։ Գործեալ իրենց ժամանակն և կեանքը նուիրած ըլլալով ուսման և ուսուցման, գաղափարակցութեան և քարոզութեան, և աւելի միջոցներ ունէին աշխարհաբարը մշակելու։ Թէ վաստակոյ և թէ եւրոպական գրասուններն և գրքերն իսկ նորանոր դիւրութիւններ և ապրիւրներ կու տային առնոյ՝ քննելու, ուսումնասիրելու և համեմատելու մանաւանդ թարգմանութեանց մէջ։ Եւ վաղահասար կարելի է ըսել իսկ թէ ընդհանրապէս այսպիսի հասուն քննութեամբ և ուսումնասիրութիւններով է՝ որ կու տային — թէ՛ «Բառմավէպի» միջոցով թէ՛ առանձինն — ամէն գիտելեաց վերաբերեալ Թարգմանութիւններ և ինքնագիր գրուածներ. մինչդեռ ապագային ուրիշ գործիչներէն շատերը, մանաւանդ յօդուածագիրներ ընդհակառակն՝ կամ անձնական հոգերով զբաղած լինելով, և կամ վերոյիշեալ պատրաստութիւններն և գրական միջոցները չունենալով, յաճախ վեր ի վերոյ կերպով և չմտածելով ստիպուած էին Թարգմանութիւններ և ինքնագիր գրուածներ հրատարակել. որոնք հարկաւ Թերի պետի լինէին յաճախ, չըսեմ միշտ, նաեւ լեզուական ճշդութիւններէ և պահանջուած կատարելութիւններէն, որք անհրաժեշտ են ինչպէս գիտութեան՝ այնպէս և աշխարհաբարի զարգացման համար։

Թէ մինչեւ այս տեղ բաժնիս ուրքան ճշմարիտ է և իրաց համապատասխան, երկուսակ, այսինքն է՝ Մխիթարեաններէն և ազգայիններէն եղած մի և նոյն գործոց Թարգմանութիւններու բաղդատութեամբ միայն կարելի է որոշել։ Մենք չենք ուզեր այս տեղ կանգ առնուլ այս կէտիս վրայ. այլ այսչափ միայն կ'ըսենք առ այժմ, թէ ի սկզբանէ մինչեւ այսօր ոչ երբէք բանաւոր գանգատներ, թող թէ ապացոյցներ եղած են Մխիթարեանց Թարգմանութիւններու դէմ անճշդութեան, և կամ հայերէն օտարախորթ և անճիշդ բառերու և բացատրութեանց գործածութեան մասին. իսկ այլոց մասին՝ անպակաս, մանաւանդ Կոմկատում հրատարակուած Թարգմանութեանց նկատմամբ։ Անցնինք մի նոր կէտի։

«Բառմավէպ» երեւումէ՝ 1843 Յուլիսէն՝ ուրիշ նոր երեւոյթ մ'ևս չարժուած ևս յառաջ բերած է ազգասէր գործիչներու մէջ, գրգռելով անոնց բարի նախանձը։ Նոյն տարին Զմիւռնիոյ Աբգարեանց ընկերութեան տպարանէն կը ծնանէր — Խ. Յ. Միլիքսեթեանցի խմբագրութեամբը — Հայրենասէր շաբաթաթերթն, յոր եւ նման Այլազուսին՝ թէ՛ արուեստին ձեւովը թէ բովանդակութեամբն ու բռնած ուղղութեամբը։ Սակայն երեք տարի միայն ապրելով՝ յամին 1846 վինքը ծնող ընկերութեան հետ՝ ինքն ևս կը դադարէր գործելէ։ Իրաւ որ իր երեք տարուան գոյութեան մէջ գրեց նաեւ ազգային այլ և այլ նիւթերու վրայ, բայց հայոց լեզուին վրայ մի միայն յօդուած կը գտնենք՝ առաջին տարուայ 8 Յուլին մէջ։ Երկու տարի վերջ, այն է՝ 1845ին, կը ծագէր Կալկաթայի Աբգարեան ընկերութեան տպարանէն և Մ.

Դ. Թաղիադեանցի խմբագրութեամբը Ազգասէր աշխարհաբար չորսթաթիերը։ Այս թերթս Ազգարարի ապրելագործեան ձեռնտու չէր կրնար ըլլալ, քանի որ վերջնոյս դադարմանէն վերջ՝ այդ կոզմի հայ գաղութն ևս լրման վիճակի ենթարկուած էր, մինչև 1815 թուականը։ Հետևաբար՝ արդիևնք համարելի էր այն մասամբ մը այդ թուականին հրատարակուող Ինճիճեանի «Ազգասէր» խորագրուած չնաշխարհիկ գրքին, որ աշխարհաբար ըլլալով՝ Հնդկահայք գրաբարի կը թարգմանէին՝ Աւգալեանի ձևոքով, և որ կ'ըլլար օգտակ և ճանապարհ ապագայ աւանդաւորութեան՝ առաւանեակեայ կերպով մարած հայ գաղթականներուն։ Սակայն ապացնգուսար Թաղիադեանցի այդ թերթն իսկ՝ որ կոչուած էր նոր լեզուին հետ՝ գրական նոր շարժումն ևս յառաջ բերել, անարժեքի չեզաւ գրաբարումը Հնդկահայերէն։ Ասոր 1846ին կը փոխուէր գրաբարի, և երկու տարի վերջը՝ ինքն ևս ընկերութեան հետ կը կազմալուծուէր։ Ազգասէրը թէպետև Հնդկահայոց առնէն նշանաւոր թերթն էր, սակայն աշխարհաբար լեզուի նկատմամբ խիստ անբաւական գործ կատարած կ'երեի[1]։

1846 Թուականին Տփղիս լոյս կը տեսնէր — Կարինեանցի[2] և Մ. Պատկանեանի խմբագրութեամբ — կովկաս շաբաթաթերթը՝ գրաբար լեզուով, զի աշխարհաբար գրութիները դեռ գոյութիւն չունէր այդ տեղ։ Այս՝ որովհետև Թարգմանութիւն էր ռուս կիսապաշտօն «Կաւկաս» լրագրին, հետևաբար՝ անկարած էր գործածել եւրոպական և ռուսական լեզուներէն այնպիսի գիտուարական և քաղաքական բառեր և բացատրութիւններ, որոնց համաձայն հայերէն բառեր ինքը Կարինեանց կամ չէր գիտեր, և կամ չկարէր ճշդութեամբ յարմարցնել։ Ասոր այս թերթս լեզուական տեսակէտով ունելի ճեռնակար կարող էր լինել Կովկասու աշխարհաբարին, ինչպես Լրոյ գիրն և Յայտարարն Կ. Պոլսոյ աշխարհաբարին ճեռնտուցին։ Երկու տարին չանարած՝ պարտք և գրաքննական խնդութիւններ՝ կովկասի դիմաց ևս կը փակէին դռները, նա իսկ կը դադրէր հրատարակչական։

Այսպէս ուրեմն մինչդեռ ապագային այս թերթերս ծնանելն և ճեռնիլը մէկ կ'ընէին՝ տաճկահայոց և ընկերութիւններու կազմակերպելն և ուժանալով, անդին «Բազմավէպը» յառաջէր իր ընթացքը, եւրոպական լուսաւորութեան հետ՝ աշխարհաբար լեզուն իսկ ևս քան զեռս յառաջելու և տարածելու[3]։

Իրաւ որ Չմիւռնիոյ Արշալոյս արտարտակելն գուցե՝ երկու տարի նորածին թերթեր ևս կու գային ամսական իրեն, այսինքն են՝ Հայաստան շաբաթաթերթին, որ Յ. Զա-

---

1. Իրաւ՝ թերթիս լեզուն համեմատութեամբ Ազդարարի մէջ եղած աշխարհաբար հատուածներուն՝ անկի վեր է. սակայն խոստովան մը կը տեսնուի կովկասեան և հնդկայինն գատարարելու։ Բառից և բայերու ուղղագրութիւնն իսկ երբեմն սխալական. օրինակ իմն. «Այս տարոյս յորդութիւնն Գանգէսի համարեա թէ երեք մատն բանգալու ծածկել ոյ ջրով. երկրամիջի շատ քաղաք և գիւղօրէք և վաճառականաց շատ նաւեր այ կործանել», այսպէս «մնացել, հասել, վեր ան ընկել, գերեզմանեում թագուել, զատակի խուռը, կկարծվի, խաթուեանին(նեքն), ապրսած», և այլն։

2. Ա՛ս ծննդեամբ Կարինեցի ըլլալով, հետևաբար՝ իր թերթին ևս տաճկահայոց ազդեցութիւնը տարածելուն մէջ ունելի կամ պակաս նշանակութիւն պիտի ունենար։

3. Ոչ միայն այդ լեզուով աւանդելով մարդկային գանազան գիտելիքը, այլ նոյն իսկ անոր ուղղագրութեան, յառակութեան և կոկութեան համար՝ յաճախ լեզուական կարևոր հարցեր յարուցած է և լուծած, քան զայլս։ Արչափ որ գրութիւնս չի նեղեր գնել ունելի այդ տեսակ յօդուածոց պարունակութիւնը, սակայն և այնպէս ուսումնասիրաց համար կարևոր կը համարինք նշանակել գէթ անոնց նիւթերը։

Ազգային լեզուի պահպանութեան, տես Բազմ. 1843, Ա. էջ 76։ — Աշխարհաբար լեզուի վրայ, 1843, Ա. 108։ — Լեզուագիտութեան, 1849. Ը. 258, 292։ — Մեր աշխարհաբարի մէջ մտած քանի մը օտարազգի մասնիկներու վրայ. 1847. Ե. 165։ — Նորահնար բառերու վրայ. 1845. Գ. 267։ — Ի գրիչ հնչմանը վրայ. 1846 Գ. 26։ — Ե գրիչ հնչմանը վրայ. 1846. Գ. 44։ — Շեչտ կամ չեչտուածի մասին. 1862. Ի. 72։ — Տեսութիւն ի գանձ լեզուին Հայոց կամ ի Աստիճանական բառագրութեան. 1852. Ժ. 86։ — Քառվկասեան լեզուին մէջ գործածուած կը կամ կոչ մասնիկին վրայ. 1849. Ը. 104։ — Աշխատաւոր վիճակ հայկազնի դպրութեան. 1873. Լ.Ա. 254։ — Աշխարհիկ կամ խօսուած լեզու. 1878. Լ.Ջ. 213։ — Ընդհանուր նոր տեսութիւն հայ. նոր մատենագրութեան վրայ. 1878. Լ.Ջ. 305։ — Բացատրութիւն մի հայկական տառերի հնչման և գրութեան վրայ. 1878. Լ.Ջ. 305։ — Տեսութիւն տառադարձութեան խնդրոյն եւ հայկազն նշանագրաց. 1889. մասին, և այլն, 1886. ԽԳ. 192։ — Տեսութիւն տառադարձութեան խնդրոյն եւ հայկազն նշանագրաց. 1889. ԽԸ. 21, 97, 129, 161։ — Մեր անորոշ յօդին գործածութեան. 1890. ԽԸ. 15. Հայ լեզուի կիսադարձութիւնք. 1890. ԽԸ 167։ — Ե՞ր թէ Է՞ր. 1890. ԽԸ. 394։ Աշխարհաբարը գրաբարի ձեռքով գերգացնելու եւ կանոնաւորելու, եւ գրաբար լեզուն՝ աշխարհաբարի մէջ կենդանացնելու խնդիրը. 1890. ԽԸ. 81, 129, 161։ — Հայկական բառագաւառութիւն. 1897, Ծե. 288։ — Ազդագրական դիտողութիւններ՝ ցուցնելու և հարցնելու բա-

մուճանոյն խմբագրութեամբ կը հրատարակուէր ի Կ. Պոլիս, 1846 թուականին, և Էջմիածնի տպարանին ի Վիեննա, 1847ին, Մխիթարեան Միաբանից միաբանութեան խմբագրութեամբ. սակայն առանձին առաջինն՝ իրեն ապրանուէր խմբագրի ամենայն ջանքովն հանդերձ՝ կը դժէր և կ'առնակատէր ԺԹ դարու երկրորդ կէսի նախապրան սեմին վրայ։ Եւ 1849 թուականէն վերջ՝ մերթ Մ. Ազաթոն և մերթ Ագգ. Ժողովը քաշելով քաշքշելով՝ հազիւ կ'անցնէին դինքը երկրորդ կէսին, դի 1852ին մեռած էր իսկ երկրորդը՝ թէպէտև յառկապէս եւրոպական քաղաքային առաս լուրեր հաղորդելու համար և Յակ. Զէլէպիի խնդրանօք և խրախուսանօքն առաքուել իջած էր, և հետեւաբար՝ ազգային գրականութեան և լեզուի վրայ վաստակելու ասիթ չունէր. սակայն իր աշխարհաբարն — որով այն նիւթերը կը գրուէին — շատ յառակ և կոկ էր, և մեծապէս կը նպաստէր նաեւ անոր քաղաքական լեզու ըլլալու զարգացմանն։ Յամենայն դէպս՝ մէկ կողմէն նկատելով ազգային լրագրութեան այս մանկական յարախոխ վիճակը, և մեւս կողմէն ալ Մխիթարեանց աշխարհաբար հրատարակութեանց թէեւ ցանցառ՝ բայց անընդհատ շարքը և հաստատուն ընթացքը, մենք կարող ենք՝ առանց սխալելու՝ եզրակացնել հետեւեալ երկու ճշմարտութիւնները. Ա. Թէ արեւմտեան աշխարհաբար գրականութեան ոչ միայն սկզբնաւորութիւնն, այլ և նախնական զարգացումը արեւելեանէն կէս դար յառաջ եղած է. Բ. որ այդ գործի թէ՛ սկզբնաւորութեան և թէ կանոնաւոր զարգացման մէջ՝ իրաւ է որ ազգային լրագրութիւնն ևս շատ նպաստեց — մանաւորապէս Զմիւռնիոյ Արշալոյսը — սակայն առաջինէն աւելի հաստատուն և մեծ գերը խաղացած եղած է Մխիթարեան մամուլը։ ԺԹ դարու սկիզբէն մինչեւ 50ական Թուականն՝ եթէ հարկ ըլլայ այլոց հետ կոչել աշխարհաբարի կամ ազգային նոր գրականութեան առաջին [1] շրջան, սակայն և՛ այդ շրջանին մէջ ոչ միայն բազմաթիւ գրական արգասիներն, այլ և ընդհանուր և գերազանց ազդեցութիւնը պարտ է վերագրել Մխիթարայ եւրոպական լեզուներով օժտուած կրկին դպրոցներուն, որոնց գիտութենէն դեռ զուրկ էին Ռուսահայք [2]։

Մինչդեռ այսպէս Կ. Պոլիս և Զմիւռնիա՝ Վենետկոյ և Վիեննայի հետ ձեռք ձեռքի տուած կը յառաջացնէին աշխարհաբար գրականութիւնն, և օր քան օր կը բազմապատկէին նորանոր շարաթաթերթերն և կենաց եռուզեռի մէջ էին. մինչդեռ Մխիթարեան աշխարհաբարն իր Բ շրջանը կ'ընդարձակէր, անդին Վոլկաոի մեր համարիւն եղբայրները՝ քաղաքական լուրերու անդամ կարօտ էին, լեզուն եւս այն տեղ

չերուն խոնարհման վրայ. 1897. ԺԵ. 589։ — Ողղագրութիւն չ ժխտողականին, վերյ բառին եւ յ գրոյն առ նախնիս. 1897. ԺԵ. 585։ — Ծագումն հայ առանց առ Ն. Տաղաւարեան 1897. ԺԵ. տես Յաւելուած էջ 1։ — Գիմի եւ բաբելաստանի նախնական ծառը. 1897. ԺԵ. 78, 49։ — Հայկականք (քննագ. և բառագիտականք). 1897. ԺԵ. 169, 259, 398։ — Անուանք հայկական ամսոց (երեք այլ և այլ տեսութիւններ). 1897. ԺԵ. 334, 339, 391։ — Աշխարհաբարի եւ գրաբարի խնդիր (վեց այլ և այլ պատասխաններ) 1897. ԺԵ. 45, 80, 82, 185, 396, 552, 605։ — Բառագիտական (յուշ. հանգիտառապատական բառին), 1897. ԺԵ. 228, 271։ — Ե՞րբ ոչ, չբ, չ, և ե՞րբ չի (վեց այլ և այլ պատասխաններ). 1897. ԺԵ. 180, 237, 280, 281, 345, 437, 585։ — Տառադարձութեան խնդիր (երկու պատասխաններ. 1897. ԺԵ. 46, 83, 340, 449, 492, 547։ — Ե և Ո գրելու հնչումը. ԺԵ. 390. — Պրօֆ. Մէյէի մեկ կարծեաց վրայ դիտողութիւն. 1897. ԺԵ. 591–592։ — Քննութիւն Ասլանբէգի բարբառին. 1897. ԺԵ. 31, 83. — Լեզուաբանական (հայ լեզուի է, է, ո, օ գրելոյն արտասանութիւնը). 1898. ԺՋ. 220։ — Քննադատական (հայկական ստուգաբանութիւնք). 1898. ԺՋ. 117։ — Գուշտական բառեր Որմիոյ եւ Սալմաստի Հայոց. 1898. ԺՋ. 96։ — Դիտողութիւն մի հայ աշխարհաբար լեզուի վրայ. 1898. ԺՋ. 373։ — Ստուգաբանութիւն հանդաբանական բառից. 1898. ԺՋ. 434. և այլն, և այլն։ — Տարտարանական բառից կազմութիւն. 1898. ԺՋ. 435։ — Քերականական ակնարկներ. 1898. ԺՋ. 596, 1899. ԺԼ. 84։ — Հայ աշխարհաբար լեզուն Ռուսանաչաստանում. 1898. ԺՋ. 174։ — Հայ լեզուին ուսուցման եղանակը յարեւմուտս. 1898. ԺՋ. 317։ — Կառավարչի ազ վերջաբանութիւնը աշխարհաբարի մէջ. 1898. ԺՋ. 42։ — Ուսումնասիրութիւններ հայկական բարբառաբանութեան. 1899. ԺԼ. 112, 218. 325, 516, 557։ — Քերականութիւն կիլիկեան հայերենի. 1900. ԺԸ. 215. 264, 307, 356, և այլն։

1. Չի Մխիթարեանց համար այս երկրորդ շրջանը կը կազմէր։

2. Թող զարմանալի չերեւի այս բանս՝ գիտնալով մեր ռուսահայ եղբարց, դի Ս. Պետերբուրգ 1858 թուականէն վերջ իսկ ստիպուած էր վշտացած կերպով շեշտել իր «Հիւսիսափայլի» մէջ, բանալով. «Մի ընդհանուր թշուառութիւն է մեր ազգի մէջ, եւրոպական լեզուները գիտող մարդերի աննշանութիւնը. և ինչ կարելի է անել՝ մեր օրերում մի լեզուով միայն գործ կատարել, այսինքն՝ լոկ ռուսերէնով»։ Այնպիսի գանգատներ պակաս չեն նոյնպէս տաճկահայ լրագրաց մէջ, որոնք հայերենին խանգարիչ՝ տաճիկ լեզուն յաճախ կը խօսէին և կը թարգմանէին ընդհանրապէս։

կովկասեան սարերու նման սառնատեսակ արձանագրումն կը ներկայացնէր գեռ. պի մինչեւ այդ թուականը չունէին ժողովրդական բարբառով և ոչ մի թերթ։ Սոքա սահմանած էին ամէն բան իրենց արեւմտեան համապգի լրագիրներէն ապահել. հետեւաբար՝ բոլորովին զուրկ էին աշխարհաբար գրականութենան ինքնավարութենէ։ Գրաբարն ալ շատերը չէին հասկնար, որ և իրրեւ ճնշող անուր մի՝ կը ծանրանար իրենց պարանոցին վրայ։

Վերջապէս 1850 թուականին Գաբ. քահանայ Պատկանեանը կու գար իր Ազգապատ աշխարհաբար շաբաթաթերթովն՝ — իրրեւ բարերար ձեռքով — խորտակել այդ ժանգոտ անուրը, և բանալ նոր կենաց ու աշխարհաբար գրականութենան նախադրուները։ Գեղեցիկ էր Պատկանեանի ձեռնարկած գործն, որուն նեռեր կեցած էին առաջահայոց նոր գրականութենան առաջնորդները՝ Խ. Աբովեան, Ս. Նազարեան և Ղալրանդեանց — իրենց շուրջը խմբուած թարմ ուժերով —. բայց ափսոս, գեռ հեռի և հեռի։ Պատն ալ յաջող կերպով սկսուած գործը՝ մէկ տարիէն արտաքին ձախարդ պատճառներով կը դադրէր, տալով ժողովրդեան 33 թիւեր միայն՝ իրրեւ ճաշակ, որը սակայն Բոմբաթանու կերած մեղրին արդիւնքը կ'ուտենար։ Այ, արեւելեան պատերազմներու պատճառաւ կը խզուէին կովկասայինոց՝ Թիֆլիսոյ հետ ունեցած այդ վերաբերութիւններն ալ, ուսկից կ'ընդունուէին ազգային թերթերը։ Այս պատճառաւ նօթը տարի յետս կը նահանջէին յիշեալ առաջնորդները, սպասելով խաղաղութենան վերադարձին։ Այդ ժամանակ Վենետիկեն և Վիեննայէն միայն կարելի էր ընդունել հրատարակութիւններ՝ յարմար ճանապարհով։ Եւ ինչպէս շատ յառաջ՝ այսպէս և այդ միջոցին սոյն հրատարակութիւններով է՝ որ կ'ազդուէին մեր առաջահայ գործիչներն, և կը յօրինէին իրենց ապագայ ծրագիրները։

* * *

Պատգամի առերեսլ պարիսպները գեռ չվերականգնած խարտ՝ կը ծագէին — 1858–1861 — հետզհետէ առաջահայոց հորիզոնին վրայ շաղշոյն աստղերու նման հինգ թերթեր, այսինքն են՝ Մեղու Հայաստանի՝ Տփղիսեմ, Տէր Մա. Մանդինեանի խմբագրութենամբ, Հիւսիսափայլը՝ Մոսկուայի մէջ, Նազարեան ճեմարանի Ուս. Մա. Նազարեանի խմբագրութենամբ, Ճռաքաղը՝ Տէր Մեսր Մեսրեանի ձեռքով, 1859ին, Կռունկը՝ Մարկոս Ազաբէգեանի խմբագրութենամբ ու Համբ. Ղնֆիանճեանցի գործակցութեամբ, և Պատանց աղաւնին՝ Հ. Գաբրիէլ Ալմազովսկւոյ խմբագրութենամբ։ Վերջինս՝ ոչ թէ բնաշխարհիկ Ազգապատն է որ կ'իջնէր, այլ Պարիսացւոց աշխարհամուտ քաղաքէն Թաչելով և Թեւածելով կը հասնէր ի Թէոդոսիա։

Բաց ի Ճռաքաղէն՝ միւս բոլորն ալ աշխարհաբար էին. ի հարկէ բովանդակութենան պէս տանց ազգութիւնքն ալ տարբեր էին իրարմէ։ «Մեղու»ի, «Կռունկ»ի, և «Ազաւնի»ի խմբագիրները բոլորն ալ տաճկահպատակներ էին. բնականաբար իրենց գրած աշխարհաբարն իսկ արեւմտեան բնաւորութիւն ունենալու էր, մանաւանդ «Ազաւնի»ին, որուն խմբագիրն էր «Բազմավիպի» վաղեմի խմբագրոյն. որուն կրօնական տեսութիւնները թէեւ այժմ տարբեր էին, բայց լեզուն չէր կարող տարբերիլ իր անդրանիկ թերթի լեզուէն, բայց եթէ մանկականէն՝ այրական զարգացման անցած։

Սոյն երեք թերթերը միայն — բոլորովին մէկմէկի գրած «Ճռաքաղը» — նկատելով իրրեւ գրական գործիք աշխարհաբարին՝ կոչուած էին նշանաւոր գեր խաղալու, թէ և ոչ այնքան համաձայն կովկասեան կենդանի բարբառին. հետեւաբար՝ և ոչ իսկ կարէին գոհացնել անոնց պահանջները լիովին։ Սակայն և այնպէս՝ ունեցան իրենց ազդեցութիւնն և օգուտները՝ ոչ միայն Տաւրիոյ, Մոսկուայի, և Կովկասում հաստատուած տաճկահայաստանցի հայ գաղթականներուն, այլ նոյն իսկ ընդհանուր արեւելեան աշխարհաբար գրութեան նախկին կազմութեան և կազմակերպողներուն վրայ։ Ասոնի կը մնար Նազարեանի Հիւսիսափայլն՝ իրրեւ ամենէն յարմար գործի և հանրամատչելի Կովկասու Հայոց։

Արդ՝ չնայելով որ Նազարեանը փոխանակ հայութեան կեդրոն Տփղիսի՝ Մոսկուա կը բնակէր, և ասկէց կը սեպէր իր «Հիւսիսափայլի» հեռաւոր ճառագայթները, սակայն և այնպէս ինչպէս գրողներն՝ այսպէս և իր ընթերցողները չընկղմեցան ընդ

դիմադիրներու հակառակամարտ խառարին մէջ։ Խմբագրոցի առնական ձայնը չմնաց որպէս բարբառ յանապատի, այլ պղնձեայ շեփորի պէս Հառաւ ամէն տեղ, պատեց ամէն խառար. կործանեց ընդդիմացող Նիրիքովի՝ այն է՝ յետամնացութեան պատրիսպները։ մտաւ ժողովրդեան բոլոր խառերի մէջ, խօսեցաւ ազատամտութեան արշաւին հետ. յաղթեց հնացած նախապաշարումներուն, տարածեց եւրոպական թարմ գաղափարները և յառաջ բերաւ մտաւորական, քաղաքական և գրական վերածնութիւնը։ Մէկ խօսքով՝ նա հիմը դրաւ արեւելեան աշխարհաբար լեզուին կամ նոր գրականութեանը։

Այդ՝ ինչպէս «Հիւսիսափայլի», այնպէս և իր ժամանակակից և յաջորդ ուրիշ թերթերուն՝ արեւելեան նոր գրականութեան մէջ կատարած այդ գերն ուրիշներ արդէն մանրամասնօրէն գրած և գնահատած են. հետեւաբար՝ և ամենուն յայտնի է։ Սակայն կան երկու երեք մութ կէտեր, որոնք ասկաւին պարզուած չեն լիովին, և ոյժ կարեւոր է՝ որ պարզուին։ Ա. Թէ 50ական Թուականէն վերջ կատարուած այդ անակնկալ շարժումն, այսինքն է՝ վերը յիշուած աշխարհաբար թերթերու վերելքումն՝ ինչպիսի աղդակներէ յառաջացաւ։ Բ. Թէ այդ թերթերու գրած կամ գործածած լեզուն՝ Տիգիսի կամ արարատեան կենդանի բարբառն էր, թէ ընդհակառակն՝ արեւմտեանէն ազդուած։

Առաւհայ գրողներէն ոմանք՝ լրագրական այս շարժումս կամ չրջանն՝ երկրորդը համարելով, կ'եզրակացնեն՝ թէ առաջնոյն, այսինքն է՝ «Կովկաս» և «Արարատի» ազդեցութեան անմիջական արդիւնք եղած ըլլայ։ Իսկ ոմանք ալ Աբովեանի, Նալբանդեանի և Պալրանդեանցի՝ Տորպատի գերմանական համալսարանին մէջ առած բարձր կրթութեանն ու եւրոպական գաղափարաց կ'ընծայեն։ Չուսկ ապա՝ ոմանք ալ ժամանակի ոգւոյն կամ արտաքին ազդեցութեան կու տան։ Մեր կարծիքով «Կովկաս» և «Արարատ» թերթերը չէին կարող այդպիսի մի շարժում յառաջ բերել. վասն զի նախ՝ որ առաջինը դրարար ըլլալով՝ ոչ մի կերպով կարէր նպաստել աշխարհաբար լեզուին և մատենագրութեան. երկրորդն ալ գիտուրի մը պէս այն ինչ երեւցած՝ կ'անհետանար։ Բ. Այդ երկու թերթերու դարարմանէն այնքան ատրիներ վերջ կատարուած ըլլալով այս բանս, նոյնիսկ գործով չէր կրնար անոնց անմիջական ազդեցութեան արդիւնք լինել։ Իրաւ որ Հնդկաստանն ու եւրոպական լեզուներու իրարաչփումը՝ կարող էին յիշեալ ազգանպատակ գործիչներուն նոր գաղափար և ոգեւորութիւն ներշնչել, բայց ոչ նոյնպէս հառարակական թերթ մը գրելու չափ բառարանապէս կանոնաւոր և ձեւացած աշխարհաբար լեզու։ Հետեւաբար, կը մնայ ընդունել՝ իրրեւ ճշմարիտ՝ արտաքին կամ արեւմտեան նոր գրականութեան ազդեցութիւնը։ Այսմ կարելի է ուրիշ ապացոյցներ եւս տալ. բայց պէտք է գիտել՝ որ այս խնդրոյս հետ սերտիւ կապուած է նոյնպէս վերոյիշեալ հարցերէն երկրորդը. հետեւաբար առ այժմ պիտի պարզուի նաեւ այն, որ առաջինէն աւելի ուժգնագործութիւն ունի ամէնուս համար։

Այդ՝ Մ. Ազարէգեան [1] իր «Կռունկին» և Ալիշանի իւր «Ազունիի» նմանցնելով Հայոց սիրելի երկու խօսուն Թռչուններուն, այսպէս կը յայտնէ առնոյ՝ լեզուի մասին՝ բռնած ուղղութիւնը. «Իրանց կոմնանէ Ցամկահայոց գրաւոր աշխարհիկ լեզուին Առաւհայոց կենդանի բարբառին հետ ձեռք ձեռքի տալու ճանապարհ բաց արին՝ իրանց Թերթերովը»։ Այս՝ չշփոթելի փաստ մ'է, թէ այդ Թերթերը՝ Ցամկահայոց բարբառէն ի վազուց ազդուած էին, զոր և արեւելեանին հետ հաշտեցնել կը ջանային։ Ալիշանի լեզուի մասին խնդիր չի վերցներ. իսկ «Կռունկ»ի լեզուն՝ բառ քերականական կազմութեան (օր. ազգաբ՝ հոլովմանց, համաձայնութեան, և այլն) գրոց լեզուի և արեւմտեան աշխարհաբարի հետքեր կը կրէ իր վրայ ազդակի [2]։ Այդ՝

---

1. Տես Կռունկ, 1862, Սեպտեմբերի Թիւը։

2. Արտագրենք անոր Ա. Թիւէն մի քանի տող։ «Այսպէս Կռունկը» խնդամիտ և գուարթասէրտ յառաջ կը դիմէ. կդարձնէ իր ընթացքը դէպի Արեւմուտք. ճանապարհին կհանդիպի «Եփրատայի» և «Բազմավիպին», բարեւ կուտայ, բարեւ կառնու. նրանց գրաբկամական ձեռք կուտայ, եւ երկայն տեւողութիւն անելով, և նրանց արդարախօսութիւններից խնամասիրութիւնից խելքն ու միտքը շուարելով, կը հրաժարի նրանց Հայոց աշխարհը՝ իրանց հայրենասիրական հոգին քարոզելու՝ իրանց քուն հարազատ եղբարց մէջ»։

դեռևս՝ որ մի և նոյն երեւոյթն հաստատակօրէն կը տեսնուի «Մեղու»ի, «Հիւսիսափայլի» և նոյն իսկ տասնեմէ 8–9 տարի յառաջ հրատարակուող Գ. Պատկանեանի «Արարատի» պրած լեզուին և շարադրութեանը վրայ. և թէ այդ լրագրական լեզուն՝ քերականական մասանց բաւիղ կազմուածեամբ՝ շատ կը տարբերի Տփղիսի և այլտարածեան կենդանի բարբառէն. ուրեմն յայտնի նշան է՝ թէ Տաճկահայոց նոր գրականութիւնը բաւական դեր է խաղացել[1] արեւելեան լրագրութեան նոյն իսկ երկրորդ շրջանին մէջ երեւցող բոլոր այդ լրագիրներու ընչակէս ծագմանն՝ այսպէս ալ աշխարհաբար գրութեան զարգացման մէջ, ընչակէս յառաջ ալ՝ նախորդներուն վրայ: Իսկ որովհետեւ մենք ապացուցինք, թէ տաճկահայ գրաւոր աշխարհաբարի հիմը դնող և նախկին տարածողներն եղան Մխիթարեանք, ուստի ասկէ իսկ կը հետեւի՝ թէ տքնաջան տաճկահայոց՝ այսպէս ալ ռուսահայոց աշխարհաբար գրութեան առաջին տարողներն եղած ըլլան:

Այս բանիս ի նպաստ կան ուրիշ երկու պատմական վկայութիւններ եւս: Նախ Տփղիս հրատարակուող «Արարատ» թերթի խմբագրական յօդուածին կամ յառաջաբանի հեղինակը՝ Տէր Գ. Պատկանեան՝ կը յիշէ պրուառեօք Մխիթարեանց հատարակական գործիները՝ «Վէմատակ» և «Եղանակ բիւզանդեան»ը, «Բազմավէպն» և «Եւրոպա», և կը շեշտէ իրմէ յառաջ տասնց ապգին մատուցած օգուտները. որով ինքն եւս խրախուսուած կու գար գործակից լինել այդպիսի ազգօգուտ գործին և աշխարհիկ լեզուի զարգացմանը:

Երկրորդ՝ ռուսահայոց նոր գրականութեան առաջին շարժիչներն՝ ուղղակի կամ անուղղակի՝ ամէնքն եւս գրական վերաբերութեան մէջ եղած են Մխիթարեաններու հետ, և տասնց ընչակէս գրաբար՝ այսպէս և աշխարհաբար հրատարակութիւններուն ուշադրութեամբ հետեւած: Միքայէլ Պատկանեանի (Պետալէն) հետ՝ իր եղբարքը Սերովբէ և Գեւորկ եւս վենետկում աշակերտած և ուսած էին հայերէնը. Աղաբէկեանը նոյնպէս Մուր. Վարժանում ուսած էր հայերէնը: Գաբ. Պատկանեան, Խաչ. Աբովեան և Ստ. Նազարեանց ամէն կերպով հետամուտ էին Մխիթարեանց գրական շարժումներուն: Վերջինս՝ Թղթակցութեան մէջ էր նաեւ Գ. Զրիմի Մխիթարեանց հետ. գի Հ. Մին. Բժշկեան՝ 1843 թուականին վենետիկ գրած իր մէկ նամակին մէջ կը հաղորդէ, թէ Նազարեանը խոստանէն խնդրած էր իրմէ գրով՝ «Ստացել ինձ զառաձեան պատրաստ գրուցակ հայ մատենից՝ ի վանս տպելոց. աշխատ լերուք հետ գնեսէ իրագեկ առնել, որպես զի հանգստապատրաստ կացցի ի մէջ մեր ուսումնական ինչ յարակցութիւն՝ ինձ բաղձալի բան գտանելոյն, և ձեզ որպէս կարծեմ ոչինչ ընդհատ»:

Ի դէպ կը դնենք այս տեղ՝ այն մասին որպէս հատուածիք՝ Ստ. Նազարեանի 1842 թուականով Հ. Մ. Բժշկեանին գրած նամակներէն մէկը:

Մեծապատիւ Հօր Բժշկեան՝ Ս. Նազարեանց խնդիր,

«Ընտիր ընտիր յիշատակարանք Հայոց գպրութեան՝ գտայօր ժամանակի վրէպ ի ծանօթութենէ և յարգանաց ի Ռուսիա, գրաւեալ արդէն զուշ Տէրութեան՝ մուտ արարին ի չարս արեւելեան լեզուաց՝ որ ի կայսերական Համալսարանի Պետրոպոլ: Քանի գեղեցիկ լինէր արդեօք և ուրախութեան պատճառ տուողական, եթէ Ռուսք և Հայք միաբան զօրութեամբ և ձեռնտու իրերաց՝ գուն գործէին հանդիսացուցանել գպատուական արգասիս հայկական ոգւոյ, զանոխոտ մնացեալս ցարդ ընդ գրուանաւ:

---

1. Իրաւունք է, բաւական է որ ռուսահայն կարդայ «Արարատ» հետեւեալ տողերը, և լոյսի պէս պայծառ պիտի տեսնէ. «Հայաստանը՝ Տիբրան է. Իզմիրն և Պօլիսը՝ Հայաստանի կաթեդրանն են. տակաւին նոցա պարտ է աճիլ և մեզ մեզմանալ. մինչեւ որ մեր սրտի մէջ եւս վառվի այն հուրը՝ ինչ որ նոցա սրտի մէջ վառված է ի հնուց ատեն. մինչեւ որ մենք եւս գտնենք այն հնարները, ինչ որ նոքա ունին ի բազմաց հետէ»:

Կարգեալ իմ հրամանաւ Կայսեր ուսուցիչ Հայոց Գպրութեան՝ ի Համալսարանիս Պատանոյ, գոլով հայազգի՝ որոյ սիրտ և հոգի վառ են միշտ սիրով առ Հայրենիս և առ նորուն իմանալի վաստակս հնոց և նորոց ժամանակաց, մանաւանդ զի ընդ իմում պաշտօնի՝ յանձն է ինձ ի հոգաբարձութենէ Համալսարանիս՝ հիմնել յարակցութիւնս ընդ ուսումնական ընկերութեան Ձերդ Մխիթարեանց. վաստահիմ մատչել ի գրաւոր ծանօթութիւն ընդ գիտնական Հօրդ, և ապաչեմ՝ իրագէկ զիս առնել պգնոց հայ մատենից՝ զոր ի նորումս առաջարկեալ է իմ Տէրութեան՝ առանալ ի շնորհս ուսանողաց զՀայ գպրութիւն: Բարւոք յոյժ լինէր՝ եթէ հաստատէիք ինձ պյուցակ բովանդակ գրեանց՝ աշխատասիրութեամբ Հարց Մխիթարեանց ի Վենետիկ տպելոց՝ գնովքն հանգերձ, զի մարթասցի մեզ տեղեկանալ անտի և՝ մատենից և առ ի ձէնջ առհմանեալ գնոցն իւրաքանչիւր:

Հաւատարմացուցանելով զՁեզ ի մասին ճիշդ վճարման վասն գրեանցն՝ այժմ և առ յապայն առանալեաց վասն Տէրութեան,

Ձեռամ Պատուական Հայրութեանդ
անձնուէր

Ա. Նազարեանց

ի 21 Սեպտ. 1842:

Ապա կը գնէ ցուցակը հայ և իտալական մատենից:

Այսպիսի յարաբերութեան իրը արդիւնք նշանաւոր բան մ'ալ կը յայտնէ Հ. Մ. Բժշկեան, 1844 Սեպտ. 10, Վերպ. Սուքիաս Սամալեանին գրած նամակովն, որը ուսումնասիրողաց գրողներուն թերեւս յայտնի չըլլայ: Կ'ըսէ նա. «Նազարեանց առաքէ առ իս կրկին օրինակս ուսերէն Պատմ. հայկական գրականութեան, իբրու յօրինեալ յիւրմէ. բայց է բարգմանութիւն գործոց վենիպ, հանգերձ ծանօթութեամբք, թուելով զհեղինակս ապրիս՝ մինչեւ ի դարն ԺԹ.»: և թէ Նազարեան «Բազմավէպով» ասելի եւս կը շահագրգռուէր, և 1844 թուականէն ի վեր կ'ուզէր բաժանորդ գրուիլ անոր և օգտուիլ: Այս բանս յայտնի է նոյն տարւոյն Օգոստ. 18ին խոտանէն Հ. Բժշկեանին գրած մի ուրիշ նամակէն, ուր կ'ըսէ. «Յի՞նչ կողմանէ խնդրեմ՝ տալ ինձ ծանօթութիւն զԲազմավիպ տասցեալ օրագրութենէ Մխիթարեան ընկերութեանդ, թէ քանի՞ թերթք ելեալ են արդէն ի լոյս, և քանո՞յ արժէ տարեկան արտադրութիւնն»: Ակէ գատ մենք արդէն ըսինք — գրուածքս Ե գլխուս — թէ «Բազմավիպէն» շատ օրինակներ կը ղրկուէին նաեւ ի Կովկաս, իր ծնած տարիէն սկսեալ:

* * *

Նազարեան ինչպէս մատենագրական՝ այնպէս և լեզուական ինչ ինչ հարցերուս — մանաւանդ աշխարհաբարի նկատմամբ — ոչ միայն կը յարգէր, այլ և կը մշակէր Մխիթարեանց սկզբունքը: Ամենուն յայտնի է՝ որ ԺԹ. դարու երկրորդ քառորդին մէջ գրաբարը՝ թէ աշխարհաբար լեզուն գրական ընելու հարցն ամբան բուռն կերպով կը յուզուէր Տաճկահայոց մէջ, իբր օրական խնդիր. և թէ որպիսի՛ թեր ու դէմ նժարներու մէջ կը տատանէր: Վենետկոյ Բազմավիպն՝ իբր առաջին տարուայ 5 և 6 թիւերով երկու ընդարձակ և խնամքով պատրաստուած յօդուածներ կը նուիրէր այդ մասին: Առաջնոյն մէջ [1] — որուն խորագիրն է՝ Ազգային լեզուի պահելու վրայ — յօդուածագիրն՝ Հ. Գաբր. Ալիշանեան՝ հայերէն լեզուի վրայ պատմական հայեացք

---

1. Տես Բազմ. 1843, էջ 76:

մը ձգելով, դիտել կու տայր՝ որ մեր ազգին գրեթէ կէսն՝ իր բնիկ երկրէն տարագիր լինելով՝ լեզուէն եւս օտարացած է. թէ ինչպէս Տաճկաստանի՝ այսպէս և Չինգհասանի, Պարսկաստանի, Ռուսաստանի, Վրաստանի, Լեհաստանի ու Մոճառստանի Հայերը՝ թէեւ պահել պահած են իրենց նախկին գաւառականներէն ինչ ինչ, սակայն այնքան խառնուած և խորթացած՝ որ ասկէ օտար երկիրներու բնիկ ազգերուն բարբառները կը հնչեցնեն՝ քան թէ հային: Ասոնք առիթ առնելով կը քարոզէր թէ բնաչխարհին և թէ օտարութեան մէջ ի վաղուց հաստատուած ընդհանուր հայութեան՝ իր լեզուի ուսումն և մաքրութիւնը: Նոյնը յոյժ կարեւոր ուրիշ հարցեր եւս կը շօշափէր իր ձեռնհաս գրչովը: Իսկ թէ ո՞րն ըլլալու է այդ լեզուն, նա աշխարհաբարի կողմը կը պարզէ որոշակի իր գրօչը՝ ըսելով. « Մենք ալ ուրեմն՝ թէ՛ որ կ'ուզենք դիւրաւ ծաղկեցընել մեր ազգին մէջ ամէն տեսակ գիտութիւնները, պէտք է որ իրեն (այսինքն է՝ ժողովրդեան) հասկըցած լեզուովը խօսինք հետը »:

Իսկ երկրորդ յօդուածին[1] մէջ՝ կը գրգռի ցուցընել, թէ Տաճկահայոց (մանաւանդ մայրաքաղաքին[2]) այդ խորթացած, անկանոն և ռամիկ լեզուն՝ օտար տարրերնէրէն մաքրելու, կանոնաւորելու և բոլոր գաւառներուն հանրամատչելի և գրական լեզու ընելու լաւագոյն միջոցն էր՝ չխել գայն կատարելագունին և հարազատագունին՝ գրաբար լեզուին հետ. և քան այսմ կազմել՝ լաւ քննութեամբ՝ կարճառօտ, բայց բոլորագատում Քերականութիւն մի, տանկերենէ հայերէն բառգրքով ի միասին: Ասով մեր ազգայինք հաստատակաց լեզու մը պիտի ունենան՝ մաքուր և յարտճուն. և թէ այս եղած էր նոյն իսկ Մխիթարայ Հաստոցին՝ 1726էն ի վեր յօրինած Քերականութեամբը, որ մնաց անտիպ:

Եւ ապեներեւ ընելու համար այս ճշմարտութիւնս և համոզեցուցիչ՝ իր « Բազմավէպը » կը ներկայացնէր իրր օրինակ այդ տեսակ ընտրելի լեզուին, որուն համար կ'ըսէր, թէ « Քան ամենայնի Պոլսեցւոց լեզուն չէ, հապա անոր, մաքրուածն ու կոկուածն է »: Մէջ կը բերէր իրարմէ տարբեր և իրարու անհամեմատելի՝ Պոլսեցւոց, Զուղայեցւոց և Ներսիսեան հայկօրէնով երիք անհիդոտներ, դնելով տարբեր իւրաքանչիւրին՝ Բազմավէպի լեզուով բրած անոնց թարգմանութիւնները:

Անոնց համեմատութենէն մարդ կը համոզուի տառիւ, թէ վերը գրուած սկզբանց համեմատ՝ ռամկօրէն խեցգեակ թոթովանքն՝ ինչ տառիճան կը կոկուին, կ'ապուռանան և գրականութեան հաստատակաց համեմատ լեզու կը դառնան, առանց աշխարհաբար ըլլալէն հեռանալու և կամ գրաբարի մօտենալու:

Ես չեմ ուզեր կանգ առնուլ այս տեղ՝ ցուցնելու թէ Աբվազովսկւոյ այս յօդուածներն հիմնաքար եղած ըլլան ապագայ Քնիկական քերականութեան հայկազեան չէնքին, բայց կարող եմ ըսել, որ արձագանգ գոնէ նա — այդ յօդուածներով — Ն.Թ. դարու երկրորդ կէսին հրատարակուող գրեթէ բոլոր ազգային նշանաւոր գրողներուն և խմբագրապետներու քով: Չմիւռնիոյ « Արշալոյս արտատեանէն[3] » սկսեալ՝ մինչեւ Տփղիսի « Արտասաղ » ընդունեցան այդ սկզբունքը և գործադրեցին. որով և կարծուածէն աւելի աշխարհաբարի գարգացումն յառաջ եկաւ:

* * *

Ա. Նազարեան՝ որ կոչուած էր ըլլալու արդի ռուսահայ աշխարհաբարի հիմնադիրը, նա՝ որ քարոզեց գինուորուած գազափարի արդարութեամբ՝ թէ նոր լեզուով գրելն ու մտածելը՝ լինելու է որպէս վախճանական նպատակ բոլոր մեր գործունէու-

---

1. Տես Բազմ. 1843, էջ 108:

2. Ըստ յօդուածագրին Հ. Գաբ. Աբվազովսկւոյ՝ այս աշխարհաբարին՝ ոչը թէեւ աւելի փոքր Ասիոյ հայերէնի ոճոյն կը նմանի՝ քան արեւելեան Հայոց և Պատմութեանի, բայց որովհետեւ մինչեւ այդ ժամանակ աշխարհաբար լեզուով քան գրող ու տպողներն աւելի փոքր Ասիոյ և Պոլսոյ ազգայիններն եղած էին, անոր համար ալ այս ոճս իրաւունք մը ստացեր է՝ ուրիշ աշխարհաբարներէն աւելի հասարակաց լեզու հանդիսանալու: Եւ նոյն իրաւունքն աւելի հաստատեր է հետզհետէ մաքրուելովն ու Հայաստանեայց մաքուր ոճերուն կամ թէ գրաբարին մօտենալովը:

3. Տես 1852 տարուայ 413 և 414 թիւերուն մէջ հրատարակուած Գր. Օտեանի Աշխարհաբարը գրաբարով կոկելու և հասարակաց լեզու ընելուն վրայ գրած յօդուածները:

թևան. մէկ խօսքով՝ նա որ կ'ուսումնասիրէր և՛ «Բազմավէպ»ը և՛ «Արշալոյս»ը և «Արարատ»ը, յարմար դատեց Հ. Գաբ. Ալիշանեան վանական վաստերով բարգաւաճած այդ վարդապետութիւնը [1] պատշաճեցնել Ռուսահայոց դեռ խանձարուրքի մէջ եղող մանուկ և ապիկար աշխարհաբարին՝ եւրոպական գիտութիւնները ժողովրդեան բացատրելու և գրաւոր գործիք ընելու համար դայն։

Յերաւի, չնայելով՝ որ «Հիւսիսափայլ»էն տարիներ յառաջ արարատեան ժողովրդական բարբառով գրուած Աբովեանի «Վէրք Հայաստանի» աքանչելի գործն՝ իրրեւ առաջին արտատուք ննկած էր արդէն հայի վէրքի վրայ, անոր թմրութեան միջոցին. չնայելով՝ որ Պերճ Պռոշեանցը 1850 թուականին գրած էր մի և նոյն գաւառաբարբառով — Տփղիսի «Արարատ» լրագրի մէջ — Սօս և Վարդիթեր անդրանիկ վիպասանութիւնը, ինչպէս և Վրաց արքունիքի գերագանց երդիչը՝ Սայար Նռոտա իր բանաստեղծութեան հետ՝ Տփղիսի գաւառաբարբառն եւս գրով անմահացուցած էր. մէկ խօսքով՝ չնայելով որ ռուսահայ գրողի մի բառն իսկ հասնէին, «Աբովեան ու Նազարեանց, Նազարեանց ու Աբովեան համասեռ բաներ են», զի երկուքն եւս մէկ իմացական աւազանի մէջ մկրտուած էին, երկուքն եւս իրրեւ նոր կեանքի և լեզուի առաքեալներ՝ մի և նոյն նպատակն ունէին, այսինքն է՝ որ աշխարհաբարը ծաղկի և ուրապետէ, իսկ հին գրաբարը դադարի ներկայացուցիչ լինելէ [2] մտաւորական նոր պահանջներուն, և թէ Կովկասում ուրապետող այդ աշխարհաբարին իրրեւ հիմունք միայն պիտի լինի արարատեան բարբառը. սակայն և այնպէս՝ Նազարեան այդ երեք գրուածոց լեզուն եւս մէկդի կը թողուր, երեքէն եւս տարբեր աշխարհաբարով կը խմբագրէր թէ՛ իր առանձին գործերը՝ 1851 թուականէն ի վեր, և թէ՛ հասարակական գործին՝ «Հիւսիսափայլը» 1858ին։ Նազարեանի կազմակերպած աշխարհաբարին մէջ — զոր կարելի իրաւամբ կոչել ռուսահայոց աշխարհաբար — Արարատի և Տփղիսի կենդանի կամ ռամիկ բարբառէն աւելի՝ դեր խաղացեր են գրաբարը կամ գրաբարով կոկուած արեւմտեան նոր լեզուն։ Թէ ինչ բանի մէջ կայացած է այս կերպով կազմակերպուած Նազարեանի աշխարհաբար լեզուն, և թէ արդեօք կը տարբերի ռուսահայ ներկայ գրողներու լեզուէն՝ Ս. Շահազիզեանն արդէն փոքր ի շատէ ցոյց տուած է [3], և կարելի էր աւելին եւս գուբս ցատկեցնել. ուստի աւելորդ կը համարինք այդ մասին վրայ ծանրանալ։ Այս այսչափ միայն կ'ըսենք, թէ ինչ սկզբունքով և ճանապարհաւ որ Մխիթարեանք և տաճկահայք կազմակերպեցին և կատարելագործեցին Կ. Պոլսի ռամկօրէնը, նոյն սկզբան վրայ և նման ճանապարհով կազմեց նաև Ա. Նազարեանց ռուսահայոց աշխարհաբարը։ Հետեւաբար՝ երկուսանք եղած տարբ՝

---

1. Զոր նորոգած է իր «Վարդապետարան կրօնի» հրատարակութեան Յառաջաբանին մէջ, պինդ բռնելով ժողովրդական բարբառի հարկաւորութիւնը։ Հոս, ի միջի այլոց, կը գրէ հետեւեալ երկու նշանաւոր կէտերը. «Հայոց լեզուն ասելով իմանում ենք միայն աշխարհաբար լեզուն, որ կեանք ունի մեր ժամանակումը, և ոչ թէ ուսումնական գրոց լեզուն, որ այժմ մեռած է, և կարող է միայն պիտանի լինել գիտնական հային լեզուի նորոգութեան համար»։ Ի ցուցնելու համար՝ թէ նոր լեզուն պատռելով հնութեան վարագոյրը՝ անկասկածելապէս պիտի չանցնի դէպ ի նոր կեանքը, այլ նիւթ ու առաջ պիտի առնու լեզուաչինութեան համար, և նորոգէ իր մանկութիւնը՝ կենդանի բազուկներով և կատարելագործէ, կը յարէ. «Գրոց լեզուն թէ՛ շատ թէ՛ փոքր մշակուած մեր հին հեղինակներէն ձեռքով, երեւում է որպէս պերճ թագաւոր, և աշխարհաբարը՝ ինչպէս նա գործ է անվում ռամկի բերանում՝ հապճեպ թէ արժանի նորա ոտքը համբուրելու։ Բայց գործածով վերջանում չէ խնդիրը, կամ թէ հատատամում է հարկաւորութիւնը կրկին գործ առնելու գէպ ի հին օրերի մեռած գրաբառ լեզուն»։

Ռուսահայ գրողներն ուրիշ կերպ կը մեկնեն Նազարեանի վերջին խօսքերը. սակայն բառական կերպով նոյն են Հ. Ալիշանեան և ուրիշ Մխիթարեաններու արտայայտած սկզբունքին հետ։

2. Միայն եզրակացութիւն մ'ըրած պիտի ըլլայինք, եթէ կարծէինք՝ որ Նազարեան հերքելով գրոց լեզուի գործածութիւնը՝ հերքած է նոյնպէս ասոր ուսումնասիրութիւնն առհասարակ։ Զի ինքնին այսպէս կը պաշտպանէ — այդպիսի գրպարտութենէ — իրեն հետ՝ նաեւ նախնեաց դասական հեղինակներն, ըսելով. «Զինք ասում՝ թէ խորենացի պատմական ձեռագրի գրուածքը, Ագաթանգեղոսի, Եղիշէի և միւս հնախօս հեղինակների վաստակքը անպիտան էին. քա՛ւ լիցի այդպիսի յանդգնութիւն և ապերասցութիւն մեր կողմիցը։ Մենք ուսումն առած և կրթուած եւրոպական գպրոցումը՝ քաջ գիտենք, թէ ռուսերէնական հայի համար ի՛նչ գին եւ արժէք ոսկեղի հին լեզուի յիշատակարանքը»։

Դիտելու ենք եւս այս՝ որ նա լաւ գիտէր գրել նաեւ գրաբար լեզուն, և դիտմամբ ալ այդ լեզուով հրատարակեց, 1851 թուականին ի Մոսկուա, Փոյճատուական հոգեբանութեան համար։

3. Տես Հրատարակախօս ժամի, տպ. Մոսկուա, 1881, երես 149–158։ Տես նոյնպէս Յարդ., «Հայոց մամուլը», տպ. Թիֆլիս 1878, եր. 51–53։

բութիւնը կազմակերպելու սկզբան մէջ չկայանար, այլ գաւառապարբառներուն մէջ, որք հիմնաքարի տեղ ծառայած են։

Ջարմանք է սակայն և այս, որ Նազարեան յետ վճռաբար քարոզելու՝ թէ «Մի ազգային մատենագրական լեզուի հիմք և հաստատուն ճամբայ է ժողովրդի լեզուն, կամ նորա բարբառներից մինը, ինչպէս Հայոց մէջ՝ արարատեան բարբառը [1]», բայց ինքն ընդհակառակն՝ ոչ թէ այդարարատեան բարբառով գրած է իր ինքնագիր և թարգմանական գործերն, այլ այնպիսի մի աշխարհաբարով, որ երկուքէն եւս այնքան կը տարբերի՝ ինչպէս երկինք յերկրէ։ Ի՞նչ է պատճառն՝ այսպիսի եղելութեան։

Իր հակառակորդները՝ Աճառեան Արարատեան, Յովս. Չէրքէզեան և Ա. Երիցեան, ինչպէս նաեւ պինքը յարգով ներկայ գրողներէն մէկը, ուզեցին հաստատացնել, թէ նա Մատուռյամբ ապրելով՝ բոլորովին հեռի էր հայ ժողովրդի կենդանի լեզուի հոսանքէն. ժողովուրդը՝ որուն հետ ապրողն և անմիջական յարաբերութիւն ունեցողը միայն կարող է լեզուին կենդանի, ու թարմ ձեւերը սերհանել իրէն։ Սակայն այս ճիշդ չէ, թող թէ բաւական պատճառ։

Եւ յիրաւի, պիտի կու տանք նախ՝ որ Նազարեան մինչեւ իր կենաց 20րդ տարին Տփղիսի Ներսիսեան դպրոցին մէջ անցնելով՝ ծանօթ էր և վարժ տեղական բարբառին, ինչպէս սակէց յառաջ ալ եղած էր Էջմիածնեայ։ Երկրորդ՝ իրէն պէս Արեվանան եւս Գորպատում ուելի անցուցած էր իր ուսման տարիները, և սակայն կը տեսնէք՝ թէ որքան վարժ էր այդարարատեան բարբառին, և այդ բարբառով գրեց «Վէրք Հայաստանին»։ Ուստի այս չքնաղ գործը մէկ կողմէն, և մեւս կողմէն ալ վերը յիշուած երկու գրուածքն, այսինքն են՝ Սայաթ-Նովայ և Սօս և Վարդիթերը օրինակ առնելով, կարող էր Նազարեան ըստ այնմ եւս՝ միւոյն կամ միւսի նմանութեամբ շարադրել, եթէ ուզէր. բայց չուզեց, վասն զի բանաւոր պատճառներ ունէր։ Գ. Վար. քահանայ Պատկանեան իր 1850 Թուականին Տփղիսում հրատարակած «Արարատ» լրագիրը փոխանակ այդարարատեան բարբառին՝ Վրաստանի կամ Աստրախանի բարբառով կը խմբագրէր։ Ահա անոր ասուած պատճառները. «Արարատեան երկիրն՝ իր համար յատուկ լեզու չունի այժմ. նորա յատուկ լեզուն այն է, որն որ Երեւանայ գաւառումն կամ Էջմիածնի չորս կողմն կը խօսին։ Բայց եթէ փոքր ինչ հեռանաս այս միջակէտէն, Վրաստանի Հայոց լեզուն կ'լսես, կամ Քիւրդստանի, կամ Օսմանցւոց [2]...։ Բայց առ ժամանակ հնազանդվեցանք հրատարակց կամեցողութեան, և սկսանք այն լեզուաւ գրել, որն որ սիրձաւոր է Վրաստանի և Աստրախանայ կամ Ղուսաստանի լեզուին [3]»։

Սակէց ասելի հետաքրքրական բան մ'ալ կ'ասանդէ Պատկանեան՝ իր յիշեալ Թուին մէջ, որ կարող է լինել նաեւ իրրեւ գործնական անուրանալի փաստ՝ ոչ միայն Նազարեանի բռնած ուղղութեանն, այլ նաեւ արեւելեան և արեւմտեան աշխարհաբարներու միացման կարելիութեան, ընդդէմ հակառակ խորհրդոց։ Նա կը յանդուգնէ՝ թէ 1850 Թուականէն չատ տարիներ յառաջ՝ Նազարեան ձեմարանն իրրեւ օրէնք է հաստատեր, որ նոյն տեղի ուսանող աշակերտներն — ար կողմէն եւս եկած լինին — խօսին պարզ հայերէն լեզուով. և թէ այդ լեզուն կազմուած էր յատկապէս «Վեհգնեայ Աստ Յովակիմի (որ էր գրոց աշակերտ) լեզուի և արտասանութեան ձեւերով և հանդուցեալ Աստ Մարգարոյ Խոջենցի պարզ հայերէն խոսակցութեամբք՝ այն երկուց մայրաքաղաքաց, և մանաւանդ այժմեան ձեմարանի մէջ հաստատեալ հայերէն լեզուի հիմը դրին. և այն լեզուն կարելի է Արարատեան լեզու անուանել, որ հեռի է կոպիտ աշխարհաբարէն և չատ սիրձաւոր գրոց լեզուին, բայց առանց խրթնութեան՝ իւրաքանչիւր բան իւր առմանաւոր նշանակութիւնն ունենալով։ Եւ արա պատճառն այն էր, որ ամենայն երկիրներէն այն ձեմարանը աշակերտք հաւաքվեցան։ Այժմ-

---

1. Տես «Հիւսիսափայլ», 1861 եր. 392։

2. Այդ կէտերս ասելի ընդարձակ կերպով ուսումնասիրելով գրեց վերջերս Գր. Վանցեան «Անահիտ» մէջ (տես 1899, թիւ 4. եր. 133) հետեւեալ խորագրի ներքեւ. Երկու խօսք մեր գրաբառների մեռելեան մասին։

3. «Արարատ», թիւ 2. եր. 17։

պետքն ուշադրութեամբ ականջ էին դնում աչակերտաց խօսակցութեան, և նոցա լեզուէն հետացնում էին ամենայն խորթ և անճոռնի գաւառական բառերն և արտասանութիւնները. և որն որ լինում էր ախորժ և լսոտ կանանի, այն էին ընդնում. այս պատճառաւ շուտ ժամանակի մէջ աչակերտաց գանազան գաւառական պարզ հայերէն խօսակցութիւնից կազմուեցաւ մի պարզ հայերէն լեզու, որն որ այժմ հասկնալի է թէ Օսմանեցաց (տաճկահայոց) թէ Պարսից (պարսկահայոց), թէ Բրդաստանի (Աշխացոց), և թէ Վրաստանի Հայոց. և իրեան յատկութեամբն՝ ունելի վերձաւոր լինելով Երեւանայ հայերէն պարզ լեզուին, արժանապէս կ'սանի Ագրարատեան լեզու »։

Փաստերը շատ պարզ են և չշտպելի. այսինքն թէ՝ Ղազարեան ճեմարանի կամ Մանկուսյի հայոց աշխարհաբարն եւս՝ Մխիթարեան ճեմարանի աշխարհաբարին պէս ակադեմական դրութեամբ կամ գրաւոր և գեղարուեստական ուղղագրութեան ճանապարհաւ յօրինուած էր. այն է՝ գրոց լեզուին և գաւառական կենդանի և ախորժ բարբառի մի ձուլմամբ։ Միակ տարբերութիւնն՝ յայտ կը կայանայ, որ առաջնոյն իբրեւ հիմն կը դրուէր արարատեան բարբառը — ի հարկէ զտուած օտար լեզուայ տարերքէն —. իսկ երկրորդին՝ Կ. Պոլսի կենդանի բարբառը, որ թէ աշխարհաբար հրատարակութեանց շնորհիւ և թէ Հայաստանի և Փոքր Ասիոյէն եկած գանազան հայ գաղթականութեանց բնակակցութեամբը՝ վերոգոյն վիճակ մը առացած էր և հանրամատչելի դարձած։

Դառնալով ուղղակի մեր նիւթին, կարող ենք ըսել վստահութեամբ, թէ Ա. Ղազարեանց՝ որ 1850 թուականէն ի վեր առաջնորդութեան պաշտօն կը վարէր Ղազարեան ճեմարանում, լաւ ծանօթ էր անոնց բռնած այս լեզուական ուղղութեան։ Նա տեղեակ էր նոյնպէս թէ արարատեան և թէ միւս գաւառականներուն, զորս նորին աշակերտներն իրենց հետ հոն կը բերէին և կը խօսէին։ Դարձեալ՝ նա որ հանդիսաւոր էր մէկ կողմէն արհեստեան նոր լեզուին՝ այս ճոխապարհաւ լրած աշխոյժ զարգացման, և միւս կողմէն ալ եւրոպական ազգայ նոր գրականութեան նոյնակերպ ձեւացման և միօրինակ յառաջդիմման. մէկ խօսքով՝ նա որ ինքնարկուած կը տեսնէր ինքզինքը՝ իր երկրացի կրթարարտեղներու և աշխարհարարը հարուածողներու առջեւ յարձակումներուն, ուրիշ երբեմ չէր կարող իրականացնել իր և իրեն համախոհ Ագրեանի ձեռնարկած մեծ գործը, բայց եթէ՝ արտաքսելով այրարատեան բարբառէն բոլոր այն պարսիկ, թաթար ու Թրքական տարերքն և բառամթերքը, զոր իր նախորդը ներկայացուցեր էր «Վէրք Հայաստանի» քերթուածով, և որուն դէմ պայքած էին արդէն ընդդիմամարտիկ թնդանօթները։

Այս նորոգութիւնս պէտք է՝ որ ընէր Ղազարեան. վասն զի այդ օտարախորթ բառերն և բարբառը՝ հայ անցած վէրքին վրայ ապեղանի չդնելէն զատ, անոր լեզուին հետ սերտ եւս միշտ նորանոր կը վիրաւորէին։ Իսկ արմէհաւս օտար բառերու և բացատրութիւններու արտաքսմամբ — որոնք կենդանի լեզուին մէջ ընդարձակ տեղ կը գրաւեն — ահագին վիհ մը կը բացուէր, մեծ պակաս մի դպալի կ'ըլլար, մանաւանդ թէ աշխարհաբար լեզուն պատրաստեալ ցանց մի պիտի դառնար, որով այլ եւս անկարելի կ'ըլլար եւրոպական յառաջդէմ մտքերու կենցաղօգուտ գիտութիւնները փոխադրել ազգին՝ ամենայն դիւրութեամբ և յարմար կերպով, մի վայրենացած լեզուն, զոր կը խօսի ազէտ ժողովուրդն և անկիրթ դասիկը՝ չկարէ բաւականութիւն տալ գրողին կամ թարգմանողին. հետեւաբար՝ հարկաւոր էր հետեւիլ լեզուի ընդհանուր արտասրանութեան։ Ասոր՝ նա կ'ունենար այս երջանիկ գաղափարս, այսինքն է՝ այդ բացուած անդունդը, այդ մեծ և անկարկատելի պակասը՝ գրոց լեզուի այն բառերով, բացատրութիւններովն և օրինօքը լրացնել, որոնք աշխարհարարի ոգւոյն չհակառակելէն զատ՝ զանի կատարեալ և կորովի եւս կ'ընեն բուն ամենայնին։ Ահաւասիկ Ղազարեանի աշխարհիկ լեզուակազմութեան գաղափարականը։

Թէ առուգիս առաջնորդ լեզուի մեծ վերանորոգիչն՝ այս ուղղութեամբ չարժած և բուն այնմ յօրինած է նոր լեզուն՝ այրարատեան գաւառաբարբառին վրայ, կը թողունք՝ որ ինքն ալ խօսի։ «Մենք խօսելով Հայոց աշխարհաբարի վրայ, կը պրէ Ղազարեան, միշտ հասկացել ենք դորանով մի լեզու, որ մշակուելով՝ գիտութեան բազմաճիւղ հանդէսների մէջ, կարող էր ժամանակով մի դպրութեան լեզու դառնալ՝ այժմեան ազգի համար, մի յարմարաւոր անօթ՝ նորա իմացական կեանքի. և այս մտքով ընծայել ենք նորան ամենամեծ կշիռ... միշտ ձանապարհ, կամուրջ անցած օրերի եւ

ներկայի մէջ [1]» : Իսկ մի և նոյն թերթի 392 երեսին մէջ՝ եւրոպական նոր պրակտեւթեան քաջ տեղեակ և ձեռնհաս անձի մ՝ արժանաւոր կերպով հետեւեալ մեծ ճշմարտութիւնը կը յայտնէ նա, յոյժ կարեւոր՝ ամէն գաւառականին և պրաւոր աշխարհաբարի էութիւնները պահելու համար. զոր սակայն ներկայ պրոֆեսորէն անտեղեակ ոմանք՝ կ՝ուզեն — չգիտեմ ինչ հիման վրայ — իրարու հետ շփոթել յաճախ : « Մատենագիրը — կ՝ըսէ նա — կարող է միայն կանոնել, գեղեցկացնել, ճոխացնել մի արդէն առած նիւթ լեզուի. բայց նա չունի իրաւունք լեզուն փոխել, քող ժողովուրդը չհասկ այնպէս՝ ինչպէս մատենագիրը, որովհետեւ խօսած և գրած լեզուների պայմանները այլ և այլ են [2] » :

Այսպէս ահա ինչ որ վարդապետեց Նազարեան իր հանճարեղ մտքով՝ նոյնը կատարեց և՛ գործուղ գրչով և՛ անտեղիտալի տակնուքեամբը : Որա տարաբաղդ ընկերն՝ Խ. Աբովեան՝ իրաւ առաջինն եղաւ, որ աշխարհաբարով անմահացուց իր Աղասին, սակայն իր հետ մեռաւ նաեւ Քանաքեռի գաւառաբարբառը. վասն զի գուռ հայերէն չէր, որով և անյարմար գտաւեցաւ ուսումնասիրող գրաւոր լեզուն ըլլալու : Իսկ Նազարեան՝ իր կազմակերպած մտքով և կանոնաւոր լեզուով՝ ոչ միայն Ձեռք յաղթականն գրական գաշտին վրայ, այլ և եղաւ հիմնադիր և առհասարակ ուսումնասիրող գրական լեզուին : Եւ այս այնպիսի մի ժամանակ՝ երբ նոքա կարգաւորեալ քերականութիւն մի չունէին, բայց ի Պ. Հախվէրտեանի հարեւանցի գրութենէ մը. այսինքն է՝ Սայաթ–Նովայի Յառաջաբանէն, ուր կու տայ քերականական և լեզուական ուսումնասիրութիւն մի՝ Տփղիսի գաւառաբարբառին վրայ՝ արեւմտեան և գնահատելի դիտողութիւններով :

Նազարեան՝ ոչ միայն Հախվէրտեանին հետեւած չէ, այլ և անոր վարկածն եւս — Տփղիսի և Մշոյ բարբառներու նոյնութեան, և գ, ի, յ նախդիրներու, և իկ, եակ, ակ, ոյկ նուազականներու մասին — հերքած է : Անիրաւ տեղ հակառակորդք՝ մերթ գերմաներէն անուանած են Նազարեանի լեզուն, և մերթ սանսկրիտերէն, և այլն : Սակայն մենք կարող ենք ըսել, թէ Նազարեանի աշխարհաբարն՝ իր յատակութեամբն և կոկութեամբը ոչ միայն կը գերազանցէ իր ժամանակակից գրութիւնները, այլ թէ նա նոյն իսկ ուսումնասիրող արդի գրողներու շատերէն վեր է : Նազարեանցին կը պարտի այսօր ուսումնասիրող գրականութիւնն՝ իր կանոնաւոր գործածումը, ինչպէս նա ալ՝ Մխ. Նալբանդեանցի հզօր աջակցութեանն՝ իր անսակնկալ յաջողութիւնը. որ իր սուր գրչով՝ միւս գործակիցներէն (որպիսիք են Ս. Աւետիքեանց, Կամսար Խաչատուրեանց, Գէորգ Բարխուդարեանց, Մ. Բուդաղեանց, Մկր. Լազեվարեան, Յակ. Մելիք Յակոբեանց, Մխ. Վայեվչեան, և այլք) աւելի նպաստեց « Հիւսիսափայլի »

---

1. Տես « Հիւս. », 1861, եր. 290.

2. Իրաւ՝ այս առթիւ դիտել կու տանք նախ, որ բոլոր եւրոպական քաղաքակրթուած ազգերն եւս ունին մինչեւ ցայսօր և կը խօսին մեզի պէս զանազան գաւառաբարբառներ. սակայն անոնցմէ իւրաքանչիւրն կը գործածէ մի միայն գրական լեզու կամ աշխարհաբար: Ի. իւրաքանչիւր ազգի այն գաւառաբարբառն ունեցաւ պատիւ ըլլալու հասարակաց համար գրաւոր լեզու, որով առաջին անգամ գրուեցաւ մի կամ աւելի գլուխ գործոցներ, և կամ իրրեւ դիւանագիտութեան և կրթութեան գործի՝ ի սկզբան մեծ տարածութիւն ունեցաւ : Գ. այդ գրական լեզուն՝ թէպէտեւ իրրեւ հին իւր շինուածոյն՝ ունի գաւառականէն մի, բայց իր ամբողջական յօրինուածութիւնն՝ ունի և պէտք է որ ունենայ գաւառականէն այնքան և այնպիսի տարբերութիւններ և կատարելութիւններ, ինչ տարբերութիւններ որ ունի հոյակապ ապարանի մը արդուզարդն՝ իր հիմունքէն : Աստղ է՝ թէ ապարան մի չկարէ անհունս վեր բարձրացուիլ, մի պէտք է՝ որ համեմատական ըլլայ հիման. բայց գրական լեզուն՝ կարէ անսահման կերպով կատարելագործուիլ, վասն զի դիտութեան զարգացման հետ՝ նա ինքն եւս ենթակայ է անընդհատ զարգացման :

Վերջին կէտի նկատմամբ չէ կարելի տարակուսիլ, դիտելով ինչպէս եւրոպական ազգերուն՝ այսպէս և մեր նոր գրական լեզուին քիչ մինչեւ մէջ առած հակայ քայլերը : Իսկ իրրեւ ապացոյց Ա. և Բ կէտերուն՝ կարելի էր զանազան ազգերէ՝ օրինակներ մէջ բերել, բայց միւնը միայն բաւական կը համարիմ, այսինքն է՝ Ժդ դարուն Տոսկանայի գաւառականն, որ կը լինէր ամբողջ Իտալիոյ համար գրաւոր և հասարակաց լեզու. բայց գուցէ թէ ոչ այնքան իր յատակութեան՝ որքան Դանտէի և Բոկաչիոյի այդ գաւառականով գրած երկու անմահական Քերթուածներու համար — այսինքն են՝ La Divina Commedia և Decamerone : Ցոյներն եւս մեզի պէս այլ և այլ գաւառականներով կը գրեն, վասն զի ինչպէս մեր՝ այսպէս և նոցա մէջ չելան դեռ՝ չըսեմ Հոմերոսի, այլ և Դանտէի և Բոկաչիոյի պէս մեծ գրողներ, որոց գրած լեզուին՝ ամէնքը կարենային համակերպիլ :

յաղթանակին։ Վերջապէս ինչպէս Նապարեանց՝ առաւաշայ գրողներուն, այսպէս ալ «Հիւսիսափայլը» նոր գրականութեան առիմանագլխին վրայ կանգնած պիտի մնան միշտ իբրեւ ազգային երեւելի յուշարձաններ։ Նապարեանի աշխարհաբարով աւելի դիւրին պիտի ըլլար նաեւ արեւելեան աշխարհաբարին՝ արեւմտեանի հետ վիճաբանը, եթէ արդի գրիչներն՝ ահագին վիհ մի չրանային երկուքին մէջ։ Սակայն ժամանակը գայ եւս պիտի կարկառէ. և ուր էր թէ հասնէինք այն կէտին, որ ուրեք աշխարհաբար գրող՝ հասկնար նաեւ գրաբարը, որպէս բնական հետեւանք աշխարհաբարի կանոնաւոր զարգացման։

ԳԼՈՒԽ Թ

Արեւելեան աշխարհաբարի վերակազմութեան կամ յեղաշրջութեան շրջանը, և առ այն եղած անյաջող փորձերն. — Գերպ. Այտընեան և իր «Իննական քերականութեամբ» բացած ուղին. — «Գրական փորձ»երու հեղինակին հնարած քերականութիւնն ու հայերէն լեզուի վրացացումը. — «Արամազդ» և «Անահիտ» կոչուած կուսակցական պայքարը. — Մ. Զերազի Քերականութիւնը, իր լեզուակազմութեան անյաջողութիւնն և արեւմտեան աշխարհաբարին պատճառած ձեւական խանգարումները. — Գրասէր Ատամը (Տէմիրճիպաշեան) ու իր հնարած անհամաչափ լեզուակազմութիւնը. — Կ. Պոլսի երիտասարդ գրականութեան վրայ թողած անոր վնասակար ազդեցութիւնն ու Մխիթարեան գպրոցաց հակազդեցութիւնը։

ՆՆԵԻՏԱԱՆԵՐՈՒԴ գարու երկրորդ կէսի առաջին քառորդին՝ որչափ որ աշխարհաբար լեզուն տիրող և տիրապետող հանդիսացած էր՝ թէ՛ ի ռուսահայս և թէ՛ տաճկահայոց լրագրութեան ամբողջ գաշտին վրայ, դի նորածին թերթերն առհասարակ այդ լեզուով է՝ որ կ՚ողջունէին հայ ժողովուրդը, և իրենց մուտքին հետ՝ յառաջադիմութեան նոր շրջան մ՚եւս կ՚աւետէին. սակայն մատենագիրներն և գպրոցները կը չարունակէին տակաւին և՛ ոչանիլ և երկասիրել գրաբարը։ Այս կէտերէս առաջինը որչափ բնական է՝ այնչափ եւս բանաւոր. դի յայնժամու աշխարհաբարի ջերմ առաքեալներն և պաշտպաններն իսկ՝ Ստ. Նազարեանցի հետ՝ գրաբար լեզուն ուսանիլ և ուսումնասիրելը ոչ միայն արգելք չէին համարիր, այլ և օժանդակ աշխարհաբարի։ Եւ յիրաւի, եթէ նոյն գարու եւրոպական ազգերն անգամ՝ իրենց փառաւոր նոր գրականութեամբ հանդերձ՝ դեռ պարտաւորիչ կ՚ընէին իրենց գպրոցներուն մէջ լատիներէնը կամ կրասիկը — իրրեւ կերթ լեզու և կրթութեան միջոց — որչափ եւս առաւել Հայք, որ ունեցեր են այնպիսի մի չքեղ և ազնիւ լեզու և մատենագրութիւն, զոր դեռ նոր կարող կ՚ըլլային ուսումնասիրել։ Իսկ գլխաւոր և հարկեցուցիչ պատճառ երկրորդին այն է՝ որ աշխարհաբար լեզուն կատարեալ քերականութեան մի ձեռքով դեռ եւս կանոնաւոր ձեւի մը և միակերպութեան մէջ դրուած չէր, այլ ամենք առանձին կը գրէին և ամենք ալ իւրաքերա աշխարհաբարով, որք ապպային գիտնոց և մատենագրաց համար գոհացուցիչ չէին։

Աշխարհաբարի և գրաբարի հին ձակատամարտը գրեթէ յերկուց կողմանց անպարտելի ձեռքած կ՚երեւէր։ Սակայն դիտելով՝ որ գիտութեան հետ ամէն ինչ, նոյն իսկ դպրոցական կրթութիւնն և գրագիտական լեզուն և մտածութիւնք առհասարակ ժողովրդականացնելն՝ առանց առօրեացնելու՝ գարու ոգին էր. հետեւաբար՝ այդ ոգին ուշ կամ չուտ պէտք է՝ որ յաղթանակէր։ Այս նպատակաւ աշխարհաբարի դրօշի ներքեւ պինդ հաւատացած կուսակցութիւնն՝ 1853 թուականէն ի վեր պատրաստած էր — Ռուսահնեանի, Գ. Օտեանին և նմանեաց նախաձեռնութեամբ — Ռոդոսթօսեւրիւն արդի հայ լեզուի անուանեալ հրատարակութիւնը, որով իբր թէ կանոնաց տակ պիտի դրուէր ռամկական բարբառը՝ նոր ուղղագրութեամբ, և ճոխանար լեզուն՝ բառերու և բացատրութեանց նորութիւններով։ Եւ 1864 թուականին ալ լոյս կը տեսնէր Գիւրճճեանի Հայերէն քերականեւոբիւն աշխարհաբար լեզուի։ Սակայն այդ երկու փորձերն եւս ապարդիւն կ՚անցնէին. վասն զի առաջինը կ՚աւանդէր այն ինչ՝ որ իր ըմբռնմամբ ըլալու էր նոր հայերէնը, քան ինչ որ էր իրօք։ Հետեւաբար՝ փոխանակ ուղղագրու-

թեան՝ սխալագրութիւններ [1] կը նեղմուծէր աշխարհաբարին մէջ, զոր Ռիկիս ամերիկացին իսկ՝ իրաւամբ իր Քերականութեան երկրորդ տպագրութեան (1856) Յառաջաբանին մէջ կը քննադատէր երիծանօք։ Իսկ երկրորդն — ինչպէս ինքնին կը յայտարարէ իր Քերականութեան յառաջաբանին մէջ — Հ. Ամբ. Բագրատունեայ և Մ. Գարագաշեանի գրաբար Քերականութիւններէն կը մուրար աշխարհաբար լեզուին կանոնները. հետեւաբար՝ այդ գործն եւս նախորդին պէս ընդունելութիւն չէր գտներ։

Եւ սակայն հրապարակական թերթերու մէջ գրագիտաց ձայնը կը բարձրանար հետզհետէ, թէ ալ ժամանակն հասած է, որ աշխարհաբարը քերականութիւն մ'ունենայ։ Եւ երբ ոչ ոք կը համարձակէր այսպիսի մի գժուարին գործի ձեռնարկել, ահա յանկարծ հրապարակ կ'ելնէր մի ուրիշ Մխիթարեան։ Սա՝ Վիեննայի մեծարգոյ Միաբանութեան բազմահմուտ Հ. Ամբէն Վ. Այտընեանն էր, որ իր քննական քերականութիւնը կու գար մատուցանել մեզ՝ ոչ միայն աշխարհաբար լեզուի դիրքական բանալին — ինչպէս երբեմն Հ. Ամբ. Բագրատունին ալ գաղափար լեզուին հարբուտութիւնը — այլ և անսովոր համեմատութեամբ և քննադատութեամբ կը բռնար և կը պարզէր նոր աշխարհաբարի ծագումն, և կազմակերպութեան պատմութիւնն և օրէնքը. այսինքն է՝ հին և միջին գարու ռամկօրէնի գոյութիւնն, անոնց գործածութիւնն և աղբիւրները, և նոր գաւառականներու իրարմէ ունեցած տարբերութիւններն և գանոնք իրարու հետ կապող հասարակաց յատկութիւնները։

Այս գործս՝ եթէ ուզենք վերջերս հրատարակուած Հիւպշմանի, Քարստի և վերմանական համեմատ ուրիշ ուսումնասիրութեանց հետ բաղդատել և ըստ այնմ գատել, տարակոյս չկայ՝ որ լաւագունին գեռ եւս փափաքել կու տայ։ Վասն զի լեզուաբանական քննական միտումով (ճամ) եղած համապատկեր մի չի ընծայեր միջնադարեան առանձին գաւառականի մը, և ոչ ալ նոր աշխարհաբարին. այլ է աւելի պատմական կերպով կարգաւորուած ներկայացումն աղբերաց ընդհանուր ռամկօրէնին, որ ի գարէն սկսեալ՝ կը հասնի մինչեւ նոր ժամանակները։ Եւրոպական բանասիրաց և քննարանից քովը թերեւս գտած չըլլայ գեռ պարտաւորուած ուշադրութիւնն և յարգանքը, սակայն և այնպէս՝ ապագոյ առհասարակ հիացումն պատճառեց։ Աշխարհաբարեանք՝ սովոնեալ կ'ընդունէին գինքը, իբրեւ աշխարհաբարի տէրութիւնը տարածող գաղանեաց գիրքը. իսկ գրաբարասէրք՝ կը նկատէին զայն իբրեւ պղպեղատիկ սուսեր մի — նոր սերնդեան ձեռքը — գաւառական լեզուի փառապանծ թագաւորն ի մահ վիրաւորելու և իր գահէն վար գլորելու։ Հեղինակին ինքնին՝ որ իսկապէս գրաբարի վեհութեան վրայ արհնչացողներէն մէկն էր, տիտուր նախապաշարմունքով և գողցեալ ինն ի հարիւր գրած և ի լոյս ընծայած կը համարէր զայն, չհանալով՝ որ գէթ անով աշխարհաբարի մէջ կենդանի մնայ գրաբարը։

Սակայն ա՛խ. գի այս կը ներկայացնէր այն խորհրդաւոր գիրքը, ժողովրդի ընդհանուր խօսքը, որուն համար կրնար ըսել և աշխարհաբարեանն՝ Նօռը-Դաւի դիւցազնին հետ. « Այս՝ պիտի ապաննէ զայն »։ Այո՛, աշխարհաբար լեզուի քննական քերականութիւնը կ'երթայր գրաբարի մահը, և նոր գիրքը՝ պատճառ կը լինէր մոռցնելու հին լեզուի հոյակապ շէնքը, հին հանճարներու աննման ճարտարապետութիւնը, որուն վրայ այնքան աքնեցան և գեղ և չքեղութիւն աւելցուցին Ակներեաններ, Ալեմիքեաններ, Թումանեաններ, Բագրատունիներ և Հիւրմիւզեաններ։

Սակայն կարելի՞ էր այս, քանի որ աշխարհաբարին հետ՝ գրաբարն եւս յարգողներու համար՝ անմահական հանճարի գործերը այսպէս կամ այնպէս անմահ պիտի մնային միշտ. և գաւառական լեզուի հարուստ առատձոլը և ուսումնասիրութեամբ է՝ որ պիտի բարձրանար և չքեղանար աշխարհաբար գրականութեան աշխարհամուտ քաղաքը։ Յերաւի՝ ժողովրդեան կենդանի բարբառն՝ ըստ որում է ամէն և անկա-

---

1. Որք կը տեսնուին հետեւեալ տողերու մէջ, զորս կ'արտագրենք Յառաջաբանէն. « Տաս տաս-հինգ տարիէ ի վեր ուսմնական անձինք՝ մասնաւոր ու պարբերական գրվածներով 'զանի շատ շըտկեցին շըտկըտեցին. և ազգն իր հին կորուած լեզուին տեղ՝ ունի տասը, թէ ո՛չ կատարեալ, գէթ բաւական գործածելի արդի լեզու մը ազգային, զոր շատ մարդիկ իրարմէ քիչ տարբերութեամբ կը գրին, ու հասարակութիւնը քանի կ'երթայ՝ վարժ և անուշ կերպով կը խօսէ։... Այս արդի լեզուն կը տեսնենք որ, ամէն տեղ, օրէ օր փոփոխութիւններ կրելու վրայ է, եւ ատ՝ երկու պատճառով. մէյ մ'որ կատարելութիւն ըսուացած լեզու մը չ'է. երկրորդ որ՝ ուղղախօսութիւն ու բառգոյց չ'ունէ », և այլն։

պար՝ չէ կարող առանց դրամարի օգնութեան՝ լինել դրաւոր լեզու. մի ժողովուրդը խօսել միտէ, բայց ոչ գրել. մի ամբիկ ժողովուրդը գրագիտէն բաժնող վիհ մ՚եղած է և պիտի միայ այն։ Քաղաքակրթութիւնն և յառաջադիմութիւնը չափով մի կարեն լեցնել այդ անհամեմատութեան անդունդը, բայց հաւասարեցնել՝ ոչ երբէք։ Իսկ անկարելին արամաբանօրէն՝ եթէ հարկ ըլլայ կարելի համարել քաղաքականապէս, այն ժամանակ՝ ալ ոչ եւս պիտի համկարանէ նա մանկօրէն, այլ վհեմարանէ արդէս դասական. և վերջ ի վերջոյ՝ գրագիտին հետ երթայ յանգի ի գրարարն։ Սակայն թողունք այդ հետաւոր անուրջը, և միտնք միայն աշխարհարարի պատմութիւնն և ներկայ իրաց բնական ընթացքը։

« Բնական քերականութիւնը » ոչ միայն կը բանար աշխարհարարի ծածկուած դանձերը, այլ և կը լուծէր Բաբելոնեան, մանաւանդ թէ հարկէն համբուցած ներու լեզուի կապանքը։ Կը խորտակէր շատերու բազուկը կապող և կաշկանդող շղթաները, կը արձակ ժանդատած գրիչները։ Ժամանակին գրական մեծ նորութիւնն էր այն, որուն համբաւը կը հասնէր մինչեւ ի Կովկաս և ի Ընդկահայս։ Աշխարհարար լեզուի ամենէն հարուստ արուեստարանն էր այդ, ուր կարելի էր լաւ ուսանիլ անոր անցեալը կամ լաւ եւս ազգային հասակը. և որուն կը պիտէին և՛ ուսանողք և՛ ուսուցիչք և գրագէտք։ Քերականութիւնս՝ միտքը լինելով իր տեսակին մէջ՝ այն հանրական ծանօթութեանց համար, զոր կու տայ միտքն՝ նախնեաց ասացուածքն և առհասարակ արեւելեան և արեւմտեան կենդանի գաւառաբարբառներու մասին, հետեւարար՝ կ՚ունենար նոյնպէս ընդհանուր ազդեցութիւն թէ՛ տաճկահայոց և թէ՛ ռուսահայոց վրայ. որով և անհրաժեշտօրէն յառաջ կու գար նոր շարժում մի՛ ի նպաստ աշխարհարարին։ Սակայն ճշմարիտն ըսելով՝ հոյակապ գործիս պատմական Ներածութիւնը հաւասար չէ անոր քերականական մասի յարդը. միտն մի հոլովմանց և բայերու խոնարհումներու, և այլն, մասին ուսանողաւոր կանոններն՝ իրենց դանազան ձևերովը՝ կարծէք թէ իրարու դէմ կը կռուին, և կը չփոթեն աշխարհարար գրել ուզողներու միտքը՝ որպէս թէ անեզանելի բաղդի մը մէջ։

* * *

Այսու հանդերձ՝ այդ նոր շարժումն որակելու համար՝ պէտք է քննադատի աչօք նկատել 1863–1880 թուականներու միջանկեալ շրջանը, զոր և կարելի է անուանել արեւմտեան նոր գրականութեան երկրորդ շրջանը։ Այդ՝ այդ շրջանին մէջ այնպիսի բուռն զօրութեամբ կ՚եռան ու կը գեռան հայութեան նոր այժերը — Կ. Պոլսի, Զմիւռնիոյ և Տփղիսի մէջ — ինչպէս տեղական (tellurique) եռացեալ տարերքը՝ հրաբխային անձուկ շունչերու մէջ։ « Բնական քերականութիւնը » ոչ միայն ճամբայ բացած էր դէպ ի վեր, դէպ ի ընդարձակ տարածքը, այլ և հնցած ու գեղած աշխարհարարի համար այնքան տաժան նեղքեր։ Այդ հոսանքին կը հետեւէին՝ յորձանուտն ճեղուամբ՝ և՛ ազգային մտածուն և՛ զգրոյք և խանդավառ երիտասարդութիւնը, որ զգալած կը զգար ինքզինքը մինչեւ այդ օր, և այժմ պատրաստ՝ գործ գեղանելու։ Այլն կոչէն կը լսուէին կատաղած կռիւներ. և ամէնքը կը վտտակէին տենդոտ գործունէութեամբ մը՝ զարթնել և կառնել Այրենեաց կանգնած այդ հսկայ կոճղին, մանաւանդ թէ կաղապարի վրայ՝ իրենց լեզուն և գրիչը։ Նորատար Հանդիսներ, շարաթաթերթք և օրագրեր կը սկսէին աճիլ ու ուռճնալ հնոց վրայ։ Նոր մատենագիրներ կը ծնանէին և կը կանգնէին հինեւրան քով՝ իրարմէ տարբեր ուղղութեամբ։ Բազմատեսակ գրուածներ — ըլլայ բանաստեղծական, ըլլայ բանասիրական կամ կենցաղագրական գիտութիւններու — Թարգմանութեամբ կամ ինքնագրութեամբ, պարզ նաեւ վիպասանութիւններ և մանրամասներ, պրեկրութիւններ, բառարաններ և քերականութիւններ նոյնէ նոյնէ հրապարակ կ՚ելնէին և կ՚ողողէին նոր գրականութեան դաշտերը։ Այս և նմանիք՝ եթէ յիշել միտն ուզէի յանուանէ՝ հարկ պիտի լիներ էջեր լեցնել։ Բայց որովհետեւ նոր Մատենագրութեան և Մատենագիտութեան պարապողներն արդէն կատարած են բան իսկ այդ բանը, իրենց ծանօթ գրուածներով[1], ուստի անոնց կ՚ուղարկենք միտքերնին։

---

1. Տես Եղիշ. Դուրեան, Պատմութիւն հայ մատենագրութեան, տպ. Կ. Պոլիս 1885. — Հ. Գ. Զարբհանալեան. Հայկական մատենագիտութիւն, Վիեննա 1883, և այլն։

Սակայն բան մի, մանաւանդ ամենակարեւոր բանը՝ որ ինձ կը պատկանի դիտել տալ, և որ կը կազմէ այդ շրջանի, այդ գրական եռուզեռուն բնորոշ յատկութիւնն՝ է հետեւեալը։ Այսինքն՝ մինչդեռ ռուսահայ գրողները՝ Նազարեանցի, Նալբանդեանցի տուած ուղղութեամբ և համաձայն արեւելեան կամ Դ. գաւառաբարբառի գործնական օրինաց — ինչպէս և՝ քննական քերականութեան 193–222 էջերում գծուած կանոնաց — լրջօրէն և միօրինակ կը յառաջէին, անդին ընդհակառակն տաճկահայոց՝ բայց մանաւանդ Կ. Պոլսոյ երիտասարդութիւնը՝ կարճակատար երիվարներու նման՝ ոչ միայն Այտընեանի Քերականութեամբ գծուած կանոններէն, այլ նոյն իսկ Կ. Պոլսոյ կամ արեւմտեան սովորական գաւառաբարբառի սահմաններէն իսկ դուրս ելած՝ անդր քան զանդր կ'ապարթանէր ու կ'արշաւէր։ Զկար ամենեւին՝ այդ վազայարոյց և վազահաս գրողներուն մէջ՝ ոչ մի ընդհանուր համերաշխութիւն, ոչ միութիւն լեզուի, և ոչ ալ գաղափարի կամ որոշ դպրոցի մ'ուղղութիւն։ Իւրաքանչիւր ոք կամ խումբն իրեն քմահաճ լեզուով կը գրէր և կը գործէր։ Այո՛, այդ շրջանի Կ. Պոլսոյ գրականութիւնն — ուշի ուշով դիտողին և քննողին — իրրեւ կատարեալ քաւոս մի կը ներկայանայ, յորում նախասահեղծ աշխարհի պէս անկարգ և անկերպարան թոհրոհը տիրող կը հանդիսանար, չնայելով՝ որ իր երկրորդ շրջանին է որ կը թեւակոխէր։ Միոյն մէջ նիւթական տարերքն էին՝ որ կը ձգտէին կազմելի լոյծ վիճակէն՝ հաստատուն վիճակ մ'առնուլ և գեղեցիկ տիեզերք մի յօրինել. կեանքի և կենցաղի նոր պահանջն էր՝ որ կ'երկնէր գործօղ սերնդեան ձեռօք՝ խաւարէն դուրս ելնել և եթերական անհունութեան մէջ բարգաւաճիլ ու մշանջենաւորիլ. իսկ միւսին մէջ՝ հայկական լեզուն և միտքն է՝ որ իր անսովոր մթնոլորտին մէջ ուժգին կը յուզուէր և կ'ուզէր էական բան մը գործել, այն է լեզուի կազմակերպութիւնը՝ իր փոփոխութեան երկրորդ երեւութին (phase) մէջ։

«Քննական քերականութեան» հեղինակը զանազան գաւառականներուն հետ՝ անոնց հոլովումներն, և ուրիշ մասունք բանի եւս — բազմապատիկ ձեւերով — ազգին ընծայած ժամանակ, հեռուէն կը գուշակէր արդէն անկէ յառաջ գալիք այդ վատ հետեւանքը, այդ խառնակութիւնը, ըսելով. «Դո՛հ կ'ըլլանք մենք այդ հին և նոր գանձարաններուն խորշերը միայն պարզել բանալ և ցուցընել. գիտնալով՝ որ ասնոնց գործածութենեն միշտ զեղծուն՝ քայլ մը բառական է, այսինքն՝ լեզուն ազնուացնելու կամ ձոխացնելու անուշահոտ ըղլալու նորոգութենեն մը միշտ խնամատարութեան սահմանելի անցնիլը. — և կը բաղձանք, որ շատ նորոգիչներ ալ ասոր համոզուած ըլլան»։ Ակնէց յառաջ բանիւրուն Հ. Գաբրիէլ Այվազովսկի ինքնին, որ՝ Մեր աշխարհաբարի մէջ մտած քանի մը օտարազգի մասնիկները խորագրած համեմատական յօդուածովն[1] և իր կոկիկ գրչով մաքրած էր աշխարհաբարը, յետոյ այսպէս կը գրէր Մասեաց աղաւնոյ[2] բերնով. «Պզտոր չրի մը պէս կը տեսնենք դեռ մեր այս աշխարհաբարը. խոշոր ազատը մէջէն հանելէն ետեւ՝ կ'երեւնայ թէ քիչ մը ատեն ձգելու ենք՝ որ մանր ու բարակ գիրը տակը նստի, յատակուի, պարզուի ու ախորժելի լեզու մ'ըլլայ»։ Եւ սակայն՝ ոչ միայն չմտածեցաւ իր բնական ընթացքին, այլ մանաւանդ թէ եռանդուն երիտասարդաց ձեռքով չարաչար իսկ խառնուեցաւ և խառնակուեցաւ այն. նա մանաւանդ թէ անընտրող գրիչներու՝ կարծեցեալ ընտրողական գրութեամբը՝ այնպիսի Քերականութիւններ և լեզու կազմուեցան, զորս թերեւս իրենց մտքէն իսկ անցուցած չէին Այվազովսկի և Այտընեան։

* * *

Այդ քաւոսային լեզուակազմութեան արարողն էր եօթնեւտասնամեայ պատանին Մինաս–Զերազ, և իր գլուխ գործոցը՝ Գրական փորձերուս[3] Յառաջաբանը։ Ուր՝ երես ի՝ յետ նկարագրելու[4] իր խարխափանքը՝ Այտընեանի մատնանշած գաւառաբարբառ-

---

1. Տես Բազմ. 1847. Ե. եր. 165։ Այս գրուածէս եւս օգտուած է Գերպ. Այտընեան՝ բայերուն յետադաս կոր մասնիկան վրայ բրած դիտողութեանցը մէջ։

2. Տես անդ, 1856. Թիւ Բ։

3. Տպուած ի Կ. Պոլիս 1874ին, Արամեան տպարանին մէջ։

4. Այսպէս. «Մի մեռած լեզու կար իմ առջեւ, և մի կենդանի լեզու՝ իւր գաւառալեզուներովը եւ գաւառաբարբառներովը հանդերձ. Ո՞րը ընտրել. ոչ ոք կ'ուզէ հպատակիլ, իրր բացարձակ տէրի, մի այնպիսի լեզուի՝ որ տարբեր լինի յիւրոյն. նաեւ այս բազմաճիւղ ծառին անձնիւր ոտքը՝ ունի սեփական գեղեցկու-

ներու և դրարար լեզուի անծայր անուսին՝ մանաւանդ թէ բուղին մէջ ուրիշ առաջնորդ չէր կրնար գտնել՝ անկէ դուրս ելնելու, բայց եթէ բնտրողականութիւնը, այսինքն է՝ ամէն գաւառականէ առնուլ ինչ ինչ, և այնպէս կազմել գրական լեզու մի։ Աշտարակ իր խոսքերը. « Ա՛ ըս առաջնորդից խարխափանքիս մէջ։ Ջերծ ամէն նախապաշարումէ, հաւատարմակէս սիրելով ամէն գրութիւն, չը Թողուլով ինձ տածել մի բացառիկ համակրութիւն կամ հակակրութիւն, բազդատեցի մեր լեզուին գանազանութիւնները. ուր կանոնաւոր, գիւրին, պայծառ էր, գրարարը ընդունեցայ. ուր Տփղիս բուղդին է Կառանդնուտոլիսէն, Տփղիսին յարեցայ. ուր Վառգերական իրաւունք ունէր և ոչ Նիհառան, Վառգերականին հետեւեցայ. և այսպէս, չանացի կազմել մի լեզու՝ որ կարենայ ընդունելի լինել ամենին, անձնիւր գաւառ իւր երեսփոխանը ունենալով հոն »։

Եւ իր հնարած այդ լեզուին՝ իրրեւ կառարեալ և բարգաւաճ օրինակ՝ ցոյց կու տար ընթերցողաց վերոյիշեալ Յառաչաբանը. վասն զի միւս ճառերուն — զորս ակըմբոց առջեւ խոսած էր — ինքզինքը ազատ չէր զգար այնպէս նորոգանել։ Արդ՝ այդ յառաջաբանին մէջ գրուած համառօտ Քերականութիւնը աչքէ անցընելով, կը տեսնենք՝ որ ամէն բառ մի միայն կերպով կը հոլովի, այսինքն թէ՝ ամէն անուան թէ՛ եզակի և թէ յոքնակի սեռականը ինիով [1] կը վերջանայ։ Բան մի՝ որ օտար է բոլորովին իրեն յարգած գրարարին և գաւառաբարբառներուն, և աննեղելի ամէն ժամանակի համար։ Բացարձակ Թուականներս 7, 9, 10, 11, 70, 90 կը գրէ եօթ, իւն, տասս, տասմի, եօթսուն, իւնսուն. իսկ դասականները՝ եօթերորդ, իններորդ, տասերորդ, տասմիերորդ, եօթսուներորդ, իւնսուներորդ։ Անցողական բայերու կառարեալի ի, այ, ցի, ցայ յանգերը՝ ցուցնի փոխելով՝ կը կազմէ անանց անեղեւոյթը (օր. Թող՝ թողցուիլ, ուսայ՝ ուսցուիլ, սիրեցի՝ սիրեցուիլ, մաշեցայ՝ մաշեցուիլ։ Աչխարհաբարի մէջ թէ վերջաւորութիւն ունեցող բառերու թ տառը վերցուցեր է. ուսաի օր. ազագաւ, օրէնքը կը գրէ օրէնի, ընթացքը՝ ընբաց, միտքը՝ միտ, և այլն, որով ուղղականէն աւելի միւս հոլովները գան դչուին կ'այլանդակուին (օր. երկինի, երկիրի, միտի, իսոսի, իսոսերի, ընբացի, և այլն։

Սակայն հեղինակ՝ ի գործադրութեան յաճախ ինքն իրեն հակառած է յայտ եւս, զի պետք է, կիրք այլ, ձեռք, տանչանք, կեանք, արգասիք, զենք, հայրենիք և ուրիշ անեզականներ գործածեր է։ Այսպէս նաեւ ևոշ վերջաւորող բառերու և տառը պետք է, կ'ըսէ, վերցնել՝ ուր սովորութիւնը կը ներէ. և կը գրէ ըստ այմ՝ օդ, դաշ, և այլն։ Մակրայ, դնրանուշն, չաղկապ, ձայնարկութիւն և ոձեր՝ օրինաւոր կը համարի միս առնուլ թէ՛ գրարարէն և թէ՛ գաւառականէն։ Տառադարձութեան մէջ՝ հին բառերն՝ անփոփոխ պահելի են, կ'ըսէ. իսկ նորերը՝ իւրաքանչիւր ազգի ճիշդ հնչման համեմատ գրելու է։ Ուղղագրութեան մէջ ալ՝ ընտրողութեան հետեւիլ կը վարդապետէ՝ քան բառերու բնութեան. ուսաի կը գրէ օր. իմն՝ պռոպ, բօրվել, կարօղ, կնո (նիշ), կնո (ձուկ), աւնի (բոլոր), աւնի (եղիցի)։ Իբր, բան նախադրութիւններն՝ ամէն հոլովով իրենցիրենք կու տայ. իսկ համարը՝ փոխառնակ սեռականի՝ տրականով կը գործածէ միշտ (օր. նիւս համար, սուս համար, ոչնիսայի համար, ասիլի համար). որ թէ՛ գրարարին և թէ՛ կենդանի բարբառին դէմ է և խորթ։

Գնենք այս տեղ այսպիսի քերականութեամբ յօրինուած կամ Թարգմանուած սաոր երկու տեղնախոսութիւններէն [2] մի մի փոքրիկ նմոյշներ։

Ա. — « *Ձարտար տեղնարանը ազգու իսոսերի մի անբնդհատ շարով, այն խիտակ նաւատեսին պէս որ կը ճգնի զսպել ովկիանիի կոհակները, Թումր կը դնէ պոռթկալի մօտ ծափերին, մինչեւ այն վերջի կայծակէ իսոսը՝*

թիւններ, զորս ներելի չէ բնաջինջ անել. այս նկատումներէն առջեւ, գգացի՝ թէ մի դրութիւն միայն կայ, որ կարենայ լուծել այս գորդիռնեան հանգոյցը, և որով կարենայ իրանալ լեզուի միութիւնը, որ միշտ ազգասէր սիրտերի ուննչն եղած է։ Այս դրութիւնն է ընտրողականութիւն »։

1. Ահա՝ յէջ խոՎ՝ որուած օրինակները. « Աղբայրի, Աստուածի, մարդի, հայի, առաւօտի, երեկոյի, այժմի, վաղի, վայրկեանի, էջի, արութիւնի. լեռերի, հայրի, մայրի. տէրի. քոյրի, այրի, կայսրի, երկուի, տեսանելի, խոսելի, իրարի », և այլն։

2. Այսինքն են՝ Պերճախոսութիւնք՝ զոր ըրած է ի Հռոգիւղ, 23 Սեպտ. 1869 Թուականին և Մահի պատիժը՝ ի Ռերա, 11 փետր. յաջորդ տարին։

*ար չունէ առնուլի և ծափ ընդունելի համար կը լռէ, և այն բառական ա-
առնէ ի վեր զպուած ծափերը՝ ամէն պատուար խորտակելով՝ կը ակին
դառալ և միջոցը լնուլ »։*

*Բ. — « Թէ միջին դարի վայրի առնջանքներին առջև մարդասպան-
ների թիւը աճեցաւ և նոր դարի թևթեւ առնջանքներին առջև չատ դժալի
կերպով նուազեցաւ, իրերին բնական արամաբանութիւնէն կը հետեւի՝ Թէ
աւելի եաս պիտի նուազի, երբ առպարը վերնոյ բոլորովին։... Մինչեւ երբ
առաիներորդ դարին արեւը մեր վայրագութիւնին կոթողին վրայ պազ ճա-
ճանչներ առհեցուէ և հին բարբարոսութիւնին յիշատակարանը, միջին դա-
րին մի արիւնոտ բեկորը չատագնիլով լուսաւորէ »։*

*Ջնայելով Կ. Պոլոյ աշխարհաբարին դէմ գործուած այս և ուրիշ այլանդա-
կութիւններուն, որոնք կ'որակեն երիտասարդ գրողի ճաներու լեզուն, և մանաւանդ
Թէ սեռականներու չի, րի, ին, ների յաճախ և վիակերպ յանգերովը՝ կարծէք Թէ
հայերենէն աւելի վրացերէն լեզուի նանիներովին և մանիներովը կ'օրօրեն ընթերցողը.
չնայելով՝ որ այդ առենախօսութիւնները Թէ՛ իրենց իսկական գաղափարներովը և
Թէ՛ արտայայտութեան ձեւերովը աւելի գաղղիական՝ քան Թէ հայկական մտքի
յղացմունք [1] են, եղան ոմանք՝ որք հիացած անոնց վրայ՝ հրապարակու կը հռչա-
կէին, Թէ անոնք « լեզուի կատարելութեամբ, բացատրութեանց վեհութեամբ, գգաց-
մանց բարձրութեամբ, իմաստասիրութեան կորովութեամբ և վարդապետութեանց
ողմտութեամբ աւելի ծանր կշռեն բանաքննութեան կշռին մէջ, քան բոլոր քսան և
ութ տարուայ Բազմավէպները [2] »։*

*Անշուշտ այսօր այս տողերը կարդացողն իր զարմանքին հետ՝ քմծիծաղն եաս
պիտի չկարենայ զսպել, յայնժամու նորահաս գրագիտաց՝ լեզուին հետ գրական
ծանր խնդիրներն իսկ այդքան Թեթեւութեամբ գատելուն վրայ. մանաւանդ տեսնելով
Բազմավէպի նժարին մէջ — բաց ի եւրոպական հին և նոր տպագրներէն — նոյն
իսկ Հ. Ղ. Ալիշանի Յուշիկներն և Նուագները գրուած, և Հ. Գար. Ալվազովսկւոյ՝
Բիւրոմի Աբահաց աքանչելի Թարգմանութիւնը։ Եւ տակաւին կատարեալ իրողութիւն է
այդ, ժամանակի մոլորութիւններէն մին. զի Գրական փորձերու առաջին և երկրորդ
գրագատականները՝ հաճութեամբ կը հրատարակէր « Ակր », և « Երկրագունդն » ալ՝
Արդոսի խոհերը։ Օտեան՝ « Մասիոց » մէջ հրատարակած իր մէկ առենաբանութեան
մէջ « որոտման պէս գոռացող լեզու » կ'անուանէր Զերպի Միջագործոցին մակա-
գրուած ճառը։ Լուրջ « Մասիս »ն անգամ ներբողեաններ միայն կը հնչեցնէր անոր
Յառաջադիմոցին ճառին։ « Օրագիրն » ալ ուրիշ ճառ մը կը հիւրընկա-
լէր, այն է՝ Ալճնուիրոցին խորագրուածը, տարփողելով անոր վեհութիւնը, որուն
ունկնդրութենէ նախապէս գրկուած էին չատերը՝ պարագային բերմամբ։ Արդ՝ այս և
նման հիացումներն առանձնական ըլլալէ աւելի՝ յայտնի և բնորոշ ցոյցեր էին Կ.
Պոլոյ այդ ժամանակի գրողներուն ընդհանուր և անսովոր մթնոլորտին, ուր գրաբարի
և աշխարհաբարի յարող կրկին կատակերգութիւնք՝ « Ամսօրյա » և « Անահիտ » հեթանոս
անուանց ներքեւ՝ իրարու հետ կը մրցէին. մին՝ իր հեղինակութեամբ այսպիսի լե-
զուական նոր ճիւղերը կը չանար վիրաւորել, Հայոց հինաւուրց վիշտպաբտղի
նման. իսկ միւսը՝ պաշտպանել կը չանար զայն և տարածել, պահել ուղիով կար-
ծէք՝ եթերային լուսամիւռով մը վերջնոցս կոկորդան կռճատը, և սիրելով անոնց
լեզուին վրայ ամբրոսեան հրապուրիչ բուրում մը։ « Մասիս »ի 1872–1894 տարիներում
և « Արեւելքի » 1880–1890 տարիներում լոյս տեսնող Թիւերը լի են աշխարհաբարեան և
գրաբարեան կուսակիցներու այսօրինակ վիճաբանութիւններով և Թեր ու դէմ յօդուած-
ներով, որոց կը ձայնակցէին նաեւ « Մասնուլ » և Առաւտհայ Թերթերը՝ « Արարատ »,*

---

1. *Դիտելով մանաւանդ՝ որ դոցա մէջ հայկական կեանքէն բան մը չկայ, այլ ամենայն ինչ ֆրան-
սայի շուրջը կը դառնայ. Կ. Պոլոյ մեծագատիս Լիֆենտինեներն իսկ « պարոններ » եղած են։ Հետեւաբար,
ինչպէս այս պարագաներուս՝ այսպէս և յիշեալ ճառերու հեղինակութեան գաղտնիքը Տրոպմանի գաղա-
պարութենէն վերջ եղած իրաւագէտներու և պերճախօսներու քով որոնելի է։ Բայց մենք չենք ուզեր այդ
գաղտնեաց քողը վերցնել։*

2. *Տես Եղիա Տէմիրճիպաշեանի՝ Շահնազարեանի մը իդճին պարզ քննութիւնը մակագրուած տետրը։*

«Կռունկ», «Փարոս», «Հիւսիսափայլ» և «Արձագանք»։ Ասոնք մենք չենք ուզեր մի առ մի յիշել յանուանէ և որակել բոլոր այդ յօդուածներն և անոնց գրիչները, այլ բաս կարելւոյն համառօտ անցնիլ, մեր նիւթին համաձայն։

Իրաւ է՝ որ շնորհիւ բանիերուն և լուրջ գրողներու — որպիսիք էին Ա.Էմինեան, Նարպէյեան, Մ. Մամուրեան, Խրիմեան, Մ. Գաբագաչեան, Կ. Գաբագաչեան, Թամմ. Թերզեան. Յ. Պէրպէռեան, Ռ. Քէշեան և այլք — տեւական յաջողութիւն չէին գտներ մանկական խանդերով հնարուած այսպիսի անհեթեթ գրութիւններ ընդհանրութեան մէջ. սակայն և այնպէս կը թողուին աւելի կամ պակաս հետքեր — մնանաւանդ ի վիանուագ տեսականին — ժամանակակից պատանիներուն վրայ. որոնք միթաւոր ապագայում պիտի յաջորդէին հինելուն և յօրինէին նոր գրականութեան արդի չրջանը։

Մինաս-Ձերազ ինքնին անչուշտ իր հասակին հետ՝ մտաւոր և լեզուական զարգացմանը թեւակոխելէն ետքը, տեսաւ իր նախկին գրութեան անհեթեթութիւնն և անպտղածելիութիւնը, և չվարանեցաւ այնուհետեւ այլեւայլ ոգով փոխել իր պատանեկան լեզուի խորթութիւնքը՝ արեւմտեան աշխարհաբարի յատուկ վայելչութեան դէմ։

* * *

Բայց անդիէն Գրատեր Ասումը (Եղ. Տէմիրճիպաշեան) որ ի սկզբան Պ. Ձերազի հիացողներէն և հետեւողներէն մին էր, անդրադարձաւ ձգելց իր իմաստասիրական զարգացաց և ընկերային պայմանութեան համաձայն՝ նաեւ լեզուն։ Սա՝ փոխանակ իր նախորդին վարպետած կարճ բառերու և բացատրութիւններու կիրառութեան՝ ընտրեց ընդհակառակն — մնանաւանդ թէ ճղդել ուզելով խօսքերնիս — կ'ըսենք հնարեց և գրաւ՝ իրեւ հիմն իր լեզուին՝ այնքան և այնպիսի նորակերտ և մեղրաչափ բառեր, և մանուածապատ բացատրութիւններ, որով կարծէք թէ իր չարագրութեամբը՝ իրեւ անեղանելի բառի մը կամ անծայր անտառի մը մէջ անհետ կը կորսուին ինքն ալ, իր ընթերցողներն ալ։ Ընայելով այս պարագաներուս՝ շատերը հիացումով կը կարդային լաւոր գրուածները, կը գրուատէին, մինչեւ երկինքը կը բարձրացնէին և կը չանային նմանիլ անոր լեզուին։ Նա՝ մինչեւ 1891ական թուականը — երբ գրողս ալ Կ. Պոլիս կը գտնուէի — դեռ այդ տեղի գրական հերոսը համարուած էր։ Ամենքը Գրատեր Ասումը մատով ցոյց կու տային, Գրատեր Ասումի վրայ կը խօսէին՝ իրեւ ազգային առաջին հայկաբանի, իրեւ առաջնակարգ գրչի, իրեւ խոր իմաստասիրի։ Ահա այսպիսի մեծաշուառաչ գովեստներէ չլացած՝ կը չարունակէր նա հիւսել իր նորահնար լեզուն և խճողել և խրթնացնել զայն՝ մինչեւ վերջ։ Իրաւ է որ — եթէ չեմ սխալիր — ասոր վերջին գրուատր խօսքն եղաւ Բիւզանդիոնի կամ Վոսփորի կայսրուհ. բայց այդ եթերական կապուտով իսկ չպարզուեցաւ անոր լեզուի խրթնացած հանգոյցը։ Չանգիտանք այսու՝ ասելով մ'էր նա ներհակակից ցոլացումներու թէ իր լեզուին և թէ գաղափարացը մէջ։

Կ. Պոլսի և արեւմտեան գաւառաց նոր գրողներէն շատերը՝ շատ ուշ ճանչցան իրենց առաջին գրողը, իրենց մեծ իմաստասէրը. և այն ալ՝ առաջահայ մամուլի մէջ հնչեցուցած քննադատական չեփորի ձայնէն ցնցուած։ Սակայն հիւանդ մատենագիրը ճանչցած ժամանակ՝ արդէն անոր գրուածոց լեզուն և ոճը խորապէս ազդած էին իր հիացողներուն վրայ։

Ծանօթ են Տէմիրճիպաշեանի լեզուով և ոճով գրուած ուրիշ յօդուածներ և ազանձին գրուածներ[1] ևս, որոնք մեծապէս պիտի վնասէին արեւմտեան աշխարհաբարին, եթէ չունենայինք ամբաւ առաւելութեամբ անոնցմէ տարբեր, յատուկ և կոկիկ գրողներ և հրատարակութիւններ ևս։ Սակայն բան մի կայ՝ որ նաեւ աւելի տարածուած է, և զէթ ըստ մասին կարելի է Գրատերի գործած ազդեցութեանը արդիւնք համարել, ըսել կ'ուզեմ՝ անյարմար կերպով և ճաշակով շինուած նոր բառերու կոյտերը, որ կը տեսնուին տաճկահայոց արդի հրատարակութիւններու և ճարտար գրողներու քով իսկ։ Բառեր՝ որոնք բաց ի խորթութենէ՝ յաճախ անգամ կամ տարբեր նշանակութեամբ առնուած են և կամ են երկդիմի և օտար հայ լեզուէն ու գաղափարէն։

---

1. Տես Ասող Բերպերեանի խորագրուած իմաստասիրական զառանցանքները։

ԳԼՈՒԽ Ժ

Աշխարհաբար գրականութեան զարգացման շրջանն ընդհանրապէս և անոր ձկտումը. — Ռուսահայ և տաճկահայ գրականութենանց ու լեզուի վրայ ընդհանուր տեսութիւն մը. — Մխիթարեան միջատեմնի գրականութիւնն ու միջնորդի կատարած դերը. — Ռուսահայ գրողներն ու անոնց աշխարհիկ գրականութեան զգալի և դրական յառաջխաղացութիւնը. — Տաճկահայ գրողներն ու իրենց վերացական և անմիօրինակ ընթացքի պատճառքը. — Արեւմտեան գրականութեան կանոնախէն սկսիլը, լեզուական ճոխութիւնն ու գեղեցկապաշտական առաւելութիւնը՝ գրաբարին պարտական է. — Մխիթարեան դպրոցներու գաղափարական գրիչները, և այս մասին անոնց խաղացած մեծ դերը. — Մխիթարեան աշխարհաբար գրականութեան կանոնաւոր ընթացքն ու ներկայ կացութիւնը։

ՏԱՐԱԿՈՅՍ չկայ թէ ինչպէս երբեմն հինն՝ այսպէս ալ նոր լեզուն իր զարգացման և կատարելութեանը դիմելու համար՝ կ'ունենար նաեւ այս շրջանին մէջ ծառի նման այլ և այլ յեղանակաւորումներ և կերպարանափոխութիւններ։ Բայց պէտք չէ՝ որ այդ յեղանակաւորումներն ըլլան անոր բնութեան հակառակ կամ եղծիչ. ապա թէ ոչ՝ լեզուն կամ առաջնեկաց Աբրահնէի պէս սորդի կը փոխակերպուի և չուռով ալ կը խանգարի, և կամ իր բնական և բանաւոր հիւսուածը՝ անբանօրէն կը խրթնի և անբնական կը դառնայ։ Այդ՝ այս վերջին պատճառաւ է՝ որ այդ աշխարհաբարը չուտ և միօրինակ կերպով չէր կրնար ընթանալ և հասնիլ պահանջուած կատարելութեանը։

Սակայն մեր նոր գրականութեան կամ լեզուի չրջափոխութեանն (évolution) ուշի ուշով հետեւելով, կը տեսնենք նախ՝ որ — անոր հիմը դրուելէն վերջ — ինչպէս ռուսահայոց՝ այսպէս և Մխիթարեան երկու ճեմարաններուն մէջ նուազ ազդեցութիւն կրած է խանգարիչ ազդակներէ։ Ե. Մեծագոյն հակազդեցութիւն (réaction) ունեցած անոնց հանդէպ. այնպէս՝ որ եթէ ասոնք իրրեւ ամուր թաւմ և ամրաշաւիղ չի կանգնէին յարատեւ, լեզուի ազատագումն ու յեղաշրջութիւնքը դեռ ուելի վատ հետեւանքներ պիտ'ունենային և ընդարձակ ծաւալ մ'առնէին։ Բայց և չմոռնանք ըսելու՝ որ այս բանս պատճառ տուած է մերթ տաճկահայ և մերթ ռուսահայ գրողներէն ամանոյ՝ ըսելու երբեմն երբեմն, թէ Մխիթարեանք մեզի պէս չեն գրեր աշխարհաբարը, Մխիթարեանք մեզ հետ չեն համընթանար աշխարհաբարի զարգացման մէջ։ Աւասի այս հարցը լուծելու համար՝ ըստ իս՝ պէտք է պարզել նախ մի ուրիշ հարց. այսինքն թէ՝ աստիճանաւոր զարգացման վերելքին վրայ՝ արեւելեան և արեւմտեան աշխարհաբարներն իրարու հետ ինչ համեմատութիւն ունեցան կամ ունին։

Հայկական նոր գրականութեան ծովը՝ զոր կտրեցինք անցանք, տարակոյս չկայ՝ որ շատ ուելի ընդարձակ է և բազմապիսի ծոցեր և խորշեր կը ներկայացնէ՝ քան զոր այցելեցինք և քննեցինք մենք նախընթաց գլուխներուն մէջ։ Այդ՝ եթէ յետահայեաց (rétrospectif) ակնարկ մը տանք անոնց վրայ, բնականօրէն հարկ կը լինի հետեւեալը եզրակացնել, այսինքն՝ թէ՛ ռուսահայոց և թէ՛ տաճկահայոց այդ գրականութիւնը՝ Մխիթարեանց մամուլէն վեռս չկրեց, այլ ուելի օժտուեցաւ, զարգացաւ և հասարակական դարձաւ։ Գրաբարի նկատմամբ՝ իրաց տեղեակ եղողներն արդէն համիտ են, այդ Ա. Աբրիհարեանի հետ գրաբար գործերէն իսկ՝ շատ անգամ և շատ զեղեցիկ բառեր և բացատրութիւններ առած են. իսկ ինչ որ աշխարհաբարին կը վերաբերի նախընթաց ցուցումներէն իսկ վերջը ի շատէ տեսնուեցաւ։ Ճշմարիտ է դարձեալ, որ նոր գրականութեան կորզ և անմշակ դաշտին մէջ այդ ամուլը ձգողն և

կրկնակի ակռաները բացող առաջին մշակներն եղան Մխիթարեանք. ուստի բան այսմ՝ առանց ցանած սերմերն ալ չէին կրնար միայն առնել՝ հայութեան այդ կրկին անդամահատութեան վրայ, այլ պիտի ձլէին ու ծաղկէին, ազգային յառաջադիմութիւն ուրիշ մշակներու տարած անդադրում ջանքերովին. որոց առած ուղղութեան և միջավայրի պայմանաց և պարագայից համաձայն՝ պիտի ըլլար նոյնպէս աճումն և զարգացումը։

Ռուսահայոց կամ արեւելեան բաժինը՝ թէպէտեւ արեւմտեանէն չառ ուշ սկսաւ իր նոր գրական գործունէութիւնը, վասն զի Մխիթարեաններու ազդեցութիւնը՝ հետաւորութեան պատճառաւ՝ սկսր կերպով կը նեղդործէր հոն. ասկից և այնպէս՝ մէկ կողմէն քաղաքական նպաստաւոր պայմաններու պատճառաւ և իրենց նախկին գործիչներու եւրոպական համալսարաններուամ առած բարձր կրթութեան և առած ուղղութեան շնորհիւ, իսկ միւս կողմէն ալ գրական լեզուին օգնութեամբը չուռով գրչի կարգի և կանոնի մտնելով, և ազգաբնակութեան համեմատիկ գործակցութեամբը այնպիսի հսկայական քայլեր կ'առնէր, որ ոչ միայն այսօր՝ այլ և ամէնէ քան տարի յառաջ իսկ կրնար մրցիլ տաճկահայոց գրականութեան հետ. մանաւանդ թէ Ախալ պէս կը սկսէր անդամնել եւս իր քոյր գրականութիւնը։

Սակայն եթէ նոր գրականութիւնն ընդհանուր տեսակէտով ի նկատի առնուինք, այսինքն է՝ գրաբարի և աշխարհաբարի կրկին ճիւղաւորութեամբք, արեւելեան հայոց բաժինն՝ իրրեւ լման մ'է արեւմտեան գրական ոլկիտնոսին քով, ի հարկէ վնասակ և վնասնա ի միասին առնելով։ Բայց խօսքերնիս մանաւորելով անոր մի միայն աշխարհաբար գրականութեանը, կրնանք ըսել՝ որ տաճկահայը — նոյն իսկ գուրս հանելով տաժանս Մխիթարեանները — ռուսահայոցմէ տեսի մտաւորապէս ուսնեցած են ցոյսօր և գրական արտադրութիւններ յառաջ բերած։ Վերջիններս՝ ի. Աբովեանէն սկսեալ մինչեւ այսօր հազիւ թէ 40–50ի չափ մտաւորապէս բառերու արժանաւոր գրողներ հանած չեն. մինչդեռ տաճկահայոց մէջ 90–100ի կը հասնի այսպիսեաց թիւը։ Սոյն այս համեմատութիւնը կը կազմեն նաեւ երկուստեք հրատարակուած գործերը [1]։

Քանակէն և թուէն անցնելով գրական արդիւնաբերութեանց տեսակին՝ ռուսահայ գրականութիւնը չատ ապրատ կը գտնեն ոմանք [2], բազդատմամբ տաճկահայ գրականութեան։ Առանց կարծիքով իրրու այն թէ Աբովեանէն սկսեալ մինչեւ այսօր արեւելեան գրականութեան բոլոր արտադրութիւնները (բացի լրագրութիւն, բացի վիպասանութիւն, բացի բանաստեղծութիւն, և այլն, ուրիշ բան չէին իսկապէս՝ բայց եթէ ծայրէ ծայր «հրապարակագրութիւն». հետեւաբար՝ «գեղեցկագիտական ներքին արժէքէ զուրկ»։ Իսկ արեւելեան կամ տաճկահայ գրականութեան մէջ սիրով և ընդհանուր ձիւռումն եղած է «գեղեցկագիտականը». և թէ գաղափար, բարձր և ազնուական արուեստի սէրն է որ նկատուած է ասանց գրողներուն, և կ'արտասիպէր ընդհանրապէս այդ գրականութեան մէջ։ Այս երկու գաղափարներուն եւս ապրան (տարան) հանելու է։

Հրապարակագրութիւն բառը եթէ առնուինք իրր համարժէք publicisme-ին — բան որում կը գրեն արդի բառարանները — խիստ սրոշ և ամփոփ նշանակութիւն ունի, այն է՝ գիտութիւն հասարակաց կամ ազգութենական իրաւանց. հետեւաբար՝ յոյժ անձնիշդ և անճահ՝ սեպհականել զայն բազմակողմեան ամրողջ գրականութեան մի, որպիսի է ռուսահայոցը։ Այսպէս եւս՝ եթէ առնուինք զայն իրր համանիշ բառիս հրապարակախոսութիւն։ Իսկ եթէ «հրապարակագրութեամբ» կ'ուզուի նշանակել սիրողաբար ազգային կամ ժողովրդական գրականութիւն, սակայն բնաւ չհետեւիր՝ որ այդպիսի մի գրականութիւն — եթէ բացառապէս այդպէս եղած համարինք — ըլլայ գործ որ և է գեղեցկագիտական ներքին արժանիքէ. զի ընդհակառակն՝ ժողովրդեան իրական կենաց և կենցաղի մէջ կան վիպա-

---

1. Տես. Եղիշէ Դուրեան, Պատմ. հայ. մատենագրութեան. եր. 97–118, ուր համառօտիւ յիշուած են մինչեւ 1884 թուականին եղած գրողներն և անոնց գրուածքը միայն։

2. Որպիսիք են Գ. Վանցեան և Արշակ Չօպանեան. տես «Անահիտ» 1898, եր. 133, և 1899 թիւ 11. եր. 317–330։

անական (romantique) *այնչափ և այնպիսի գեղեցիկ արտրուածներ, որոնք դասա-*
կանութեան (classicisme) *վերացական ամէն արուեստէն աւելի ազդու են, գեղեցիկ*
ու հիացուցիչ։ Այս իրողութիւնս առանց երկբայութեան է. ուստի և՛ անոր հակա-
ռակ ամէն պերճախօսութիւն կամ փաստ՝ պիտի չկրնայ տարակուսի տակ ձգել զայն։
Աւելին այս տեսակէտով ռուսահայ գրականութեան աննպաստ քննադատութիւնն
ուղիղ չէ, և ոչ իսկ կարէ նպաստել տաճկահայոց գրականութեանը։ Պէտք է բնական
կամ կուսակցական որ և է զգացումէ աւելի՝ բանիւ առաջնորդուիլ, և երկաքանչիւրին
յաւ և վատ կողմերը արդարապէս և ճշդիւ որոնել ու որակել. վասն զի երկուքն ևս
չահագրգիռ են՝ իրարմէ տարբեր տեսակէտով։

Մեր նոր գրականութեան այդ կրկին ճիւղաւորութեան արժանիքն՝ ուղիղ կերպով
տաճմանելու լաւագոյն միջոցն է՝ քաղ ինքեան՝ երկաքանչիւրին միջավայրի՝ քաղաքա-
կան, ազգային և մտաւոր հանգամանաց և պայմաններու խնամոտ քննութիւնը. նկա-
տելով՝ որ Հայք իրենց ցեղական յատկութիւններովը միայն առած՝ ամէն տեղ նոյն են,
ուր ալ որ գտնուին։ Այս բանս՝ բաւական ձեռնհասութեամբ և գեղեցիկ կերպով կա-
տարած են արդէն երկու ճարտար հրապարակախօսներ, այսինքն՝ Հրայր՝ «Գեղունեայ»
1902 *տարեթուին մէջ տպած Այսպէս հայ գրականութիւնը խորագրած ընդարձակ յօ-*
դուածովը և «Բաներեր» մէջ հրատարակած ուրիշ ուսումնասիրութեամբք, և Այշակ
Զօպանեան՝ իր վերոյիշեալ յօդուածին մէջ. սակայն մենք ալ մեր տեսութեան և ճաշակը
կ՚ուզենք գտնել նոյն բանը, առանց մանրամասնութեանց իջնելու։

Զօպանեան՝ ռուսահայոց միջավայրի պայմաններն և պարագաները — գրական
զարգացման համար — յոյժ առաւել նպաստաւոր ցոյց տալէն վերջը, գան թէ տաճ-
կահայոցը, և սակայն — չգիտցուիր թէ ինչ պատճառաւ — յիշեալ աննպաստ եզրակա-
ցութեան յանգած է. այնպէս՝ որպէս թէ մէկը հասուսական նախադասութիւններէ՝
բացասական հետեւութիւն մը յառաջ բերել ձգնէր։ Դժուարահասկանալի է նոյնպէս
թէ տաճկահայք՝ որ զարգացման այնքան աննպաստ պայմաններու մէջ կ՚ապրին, ինչ
մէկ նորաձանչ գծութեամբ մը կրցան՝ ի սկզբանէ ի վեր՝ իրենց անկախականել գե-
ղեցկագիտական անհամեմատ բարձր գրականութիւնը։ «Համամարդկային, գեղեցիկ ու
բարձր արուեստէ սկսիլն» իսկ՝ որ իբր միակ պատճառ կը բերուի այսպիսի գրակա-
նութեան մի, չէին կարող տաճկահայ գրողներն իրենց աննպաստ պայմաններով և
յատուկ ձկտումովը ձեռք բերել, եթէ չունենային արտաքին ուրիշ առարիչներ.
վասն զի 1834–1836 *թուականէն, այսինքն է՝ Մուրատ և Ոսկեայէլ վարժաններու*
հաստատուելէն յառաջ՝ տաճկահայք չունէին Եւրոպայի հետ կրթական յարաբերու-
թիւններ։ Յամենայն դէպս՝ արեւելեան գրականութիւնը՝ արեւմտեանէն բնորոշ կերպով
զանազանող պատճառներն ըլլալու են ըստ իս երկու, այսինքն՝ առաջ կրօնական և
լեզուին տրուած ուղղութիւնը։

Այդ՝ ռուսահայ գրականութեան վրայ ներգործող այս երկու ազդակներս խա-
կըզբանէ գլխովին տարբեր եղան՝ տաճկահայոց գրականութեան վրայ ներգործողնե-
րէն, որքան կը տարբերին ռուս–գերմանական բարձր քաղաքակրթութիւնքը՝ օսմա-
նեանէն։ Առաջիններն՝ հաստատուած էին մէկ կողմէն եւրոպական յառաջադէմ գա-
ղափարաց և գրական (positif) *գիտութեանց վրայ, և մեւս կողմէն ալ պայծառ և ճաշ-*
ակոր (méthodiquement) *կերպով այդ գաղափարներն և գիտութիւնները ժողովրդակա-*
նացնելուն մէջ։ Իսկ վերջինը՝ սերտիւ կապուած էր իր վրայ տիրող միապետութեան
հետ, ինչպէս առաջինն՝ իր վրայ ծանրացող միջնորդին և կլիմային։ Միապետութեան՝
որուն քաղաքականութեանը պէս՝ մտաւորական վիճակն ևս դուռ արեւելեան էր,
չիմի և մանկական։ Մէկ խօսքով՝ կոլկասեան միջավայրին մէջ կը տիրէր կարգ կանոն,
ազատ մտածութիւն և զարգացած գրականութիւն. իսկ միւսին մէջ՝ ընդհակառակն՝
քմահաճոյք, տարկութիւն, ասիական յետամնացութիւն, տգիտային գրականութիւն
ինչ, և գործէն աւելի՝ սին ձեւակերպութիւնք։ Հետեւաբար՝ այդ տարբեր միջավայ-
րերու համաձայն ըլլալու էին ըստ ինքեան նաեւ անոնց մէջ ծնած ու սնած հայկա-
կան երկվեաւ գրականութիւնները։

Ռուսահայ նոր գրականութեան նախկին հիմնադիրներէն՝ Աբովեան և Նալբանդեան
միայն՝ ինչպէս տեսանք՝ էին Դորպատի ռուս–գերման Համալսարանի աշակերտներ.
իսկ Մինաս Նալբանդեանց, Պերճ Պռօշեանց, Շիրվանզատէ, Ռաֆֆի և ուրիշներ՝ եւրո-
պական Համալսարանի երեսը տեսած չէին, այլ էին պարզապէս հայ ժողովրդի զա-
ւակներ։ Այդ՝ Աբովեան և Նազարեան որչափ որ ալ եւրոպական կրթութիւն և զա-

զոխարներ սատնալու և տարածելու կամ ժողովրդականացնելու մէջ մխրան էին, սակայն իրենց առ այս ի գործ դրած միջոցը՝ լեզուներ՝ իրարմէ գրեթէ բոլորովին տարբեր էին։ Աբովեանի գործածած լեզուն էր բոլորովին ժողովրդական, բայց Ս.բառաթի բուռ մը ժողովրդեան միայն յատուկ և հասկնալի. իսկ Նազարեանին՝ ընդհակառակն՝ ակադեմական էր և գրական։ Հետեւաբար՝ ան ոչ միայն գերազաս ըլլալու բնաւորութիւն ունէր, այլ նոյն իսկ դեղեցկագիտօրէն աւելի ընդարձակ դեր խաղալու արեւելեան գրականութեան մէջ։

Նազարեան՝ թէպէտեւ բառին բուն նշանակութեամբ՝ բանաստեղծ չէր, այլ հրապարակագիր, բայց իր հրապարակագրութեան մէջ այնպիսի ազատ և զարգացող մտածութիւններ կային, այնպիսի բնորոշ և ազդեցիկ լեզու, մէկ խօսքով՝ այնպիսի մի գործիք չէր, զոր կարելի չէ դանել տաճկահայ բոլոր հրապարակագրութեան մէջ։ Պատկանեանի և Պէշիքթաշլեանի տաղնապատութիւնները իսկ՝ խանդով և պերճախօսութեամբ միայն կրնան բաղդատուիլ Նազարեանի ճառերուն հետ։ Եւ ասոր յայտնի պատճառն այն է՝ որ տաճկահայոցմէ ոչ ոք ունեցաւ առանձինն այնպիսի ընդհանուր ազդեցութիւն կամ յեղափոխութիւն, զոր յատուկ բերաւ նա առաւահայոց մէջ։ Այդ ահագին ազդեցութեամբ է՝ որ Պօշիանց միայն մեց Աբովեանի ժողովրդեան լեզուի չարունակող, միչելով իրրեւ տատրակ մը անապատի ամայութեան մէջ։ Ատոր բուն այամ՝ կրնայ ըսուիլ, թէ Նազարեանի ակադեմական լեզուն էր աւելի՝ քան թէ ժողովրդական ազատ և գոհիկ բարբառն՝ որ սիրով կը հանդիսանար արեւելեան գրականութեան վրայ։ Նալբանդեանց, Շիրվանզատէ, Շահազիզեան, Ազ. Երիցեան, Պաֆֆի և յաջորդներն՝ այդ յղկուած լեզուով կը կանային գրել իրենց գեղեցիկ վիպասանութիւնները, բանաստեղծութիւնները և գիտական գործերը, դուրս թողլով միայն՝ Նազարեանցի գրաբարէն փոխառեալ ոճերը, կրկնաձեւ հոլովումները և մի քանի ուրիշ կիրառութիւնները, Պալասանեանի քերականութեան չնորհիւ։ Սակայն պէտք է ըսել և այս՝ որ 1870 թուականէն ի վեր նոր և տարբեր երեւոյթ մը տեղի կ'ունենար առաւահայոց աշխարհաբարին մէջ, որ այնուհետեւ ընդհանուր պիտի դառնար՝ մանաւանդ լրագրութեան մէջ, և պղտորէր հայ լեզուի յատկութիւնը. այսինքն է՝ ռուս-գերմանն և եւրոպական արուեստական բառերու և տարօրինակներու չափազանց և առանց հարկի կիրառութիւնը։ Այս լեզուական նոր ուղղութեան առաջին դարկը տուողն և յատուկ մղողը համարած և մեզադրած են անձնք մեծարգիւն հրապարակախօսը՝ Պր. Գրիգոր Արծրունին՝ իր ազդեցիկ «Մշակ»[1] լրագրովը, որ դարձու ապա ընդհանուր օրինակ՝ նոյնպէս և ուրիշ հրապարակագիրներուն։ Եւ այդ օտարաբանութիւններով կ'ողողուէին անխնայ արեւելեան աշխարհաբարի սահմանները։ Ճշնօթ է արդէն «Մշակին» և նչմարածին հրատարակուող «Արարատ» տեսակցի մէջ այս մասին մղուած բանակռիւը — տակէ չուտ տարիներ յառաջ —, որուն մէջ՝ առաջինը կը ձգտէր կրօնական թերթի յատուկ ուղղութիւնը. իսկ վերջինս՝ ամէն տեսակ հատաքելով առաջնոյն գործածած օտար բառերու ցանկը՝ իրրեւ ապատակ մը կը խթէր անոր երեսին։ Սակայն և այսպէս հրապարակախօսութեան յեղափոխիչ հոսանքն անխոով կը յառաջէր։

Այս ուղղութեան պաշտպաններն՝ այսօր իսկ զանազան արդարացուցիչ փաստեր կը բերեն՝ ի նպաստ ժողովրդականութեան և լեզուն օտարամուտ բառերով հարբուսացնելու, որ կ'ելնէ մինչեւ Թարգմանչաց դարը. սակայն ինձ աւելի համոզեցուցիչ կը թուի ըսել՝ որ այս օտարաբանութեանց եթէ ոչ միակ, այլ անշուշտ գլխաւոր պատճառն է՝ ընդհանուր հայերէն լեզուի մասին ունեցած անբաւականութիւնն։ Եթէ նոքա գիտնային՝ թէ եւրոպական այդպիսի բառերու համազօր բառեր կան նաեւ հայերէն լեզուի մէջ, որոնք ժողովրդեան բերնեւս աւելի հասկնալի են, այնուհետեւ բանաւոր պատճառ չկար, որ բնիկը թողած՝ օտարը գործածէին։ Թարգմանիչք եւս, այլ յայն ժամանակ միայն օտարը կը պահէին՝ երբ համազօր հայերէնը կը պակսէր։

---

1. Դիտելու է՝ որ «Մշակի» առաջին երկու տարիները աւելի մաքուր և կոկ աշխարհաբարով գրուած են, իրրեւ արդիւնք Վենետիկ մի քանի ամիս ուսած հայերէնին. զոր յետոյ կը զոհէր իր եւրոպական գաղափարներուն և յատուկ համոզմանք՝ թէ գիտական և արուեստական բառերու գործածութեան մէջ պէտք է հանրագգային լինել։

Այս անգիտութիւնս անչուշտ դժբախտութիւն մ'էր ազգային հրատարակչի մը համար, բայց բուն ինքնասիրէն՝ լեզուն էր. որուն գեղեցիկ գանձերը մոռացութեան ծովը կը նետուէին, և մակաբոյծները կը բազմանային։ Բարեբաղդաբար բանաստեղծական, վիպասանական և ուրիշ տարի գրուածոց մէջ հազուադէպ են այսպիսի լեզուական մակաբոյծներ (parasite). և ունկի բարեբաղդ պիտի լինէր առաւահայ գրականութիւնն, եթէ մեր բանաստեղծներն և վիպասաններն եւս՝ գերման բանաստեղծից [1] պէս խստաս տասպարահար ընէին զանոնք։ Սակայն այս բանս՝ այն ատեն կարելի կը լինէր, նոյն իսկ հրատարակիչոցից համար, եթէ նոքա ծանօթ ըլլային գոնէական լեզուի ծաղկեալ գանձերուն, և գիտնային ճարտարութեամբ գոհարներ փոխ առնուլ անտի, և իրենց ակն ի մատանւոջ ազուցանել աշխարհաբարին մէջ։

Քննական քերականութեան հիմնական վկայութեան համաձայն՝ կովկասեան գասպրպան անով իսկ իր ցեղակից արեւմտեան միւս գաստականներէն ունի դարդասած և շարժուն ընթացք մ'ասած է, գի բաղադրեալ բայերու և անէրու անհամար յաճախութեամբ հարստանալ գիտցած է երբեմն, որով և հին գրարարի նման այլ և այլ ձկուն և ճոխ դարձուածներ բանեցնելու մեծ յարմարութիւն ունեցած [2]։ Բայց այն ժամանակէն ի վեր, երբ մէկդի Թողուեցաւ գաստական լեզուի ուսումը, իսպառ նաեւ ասկի գոհար տեղացող այդ աղբիւրը։ Իրաւ՝ որ անկէց վերջ իսկ բազմաթիւ հրատարակութիւններով, որոնց մէջ կը փայլին եւրոպական գազափար և մերոտ, ըզգալի կերպով գարդացաւ նոր գրականութիւնը, և մինչեւ անգամ արեւմտեանին վրայ ունեցաւ ոչ աննշան ազդեցութիւններ. սակայն լեզուն միաց միշտ գրեթէ անշարժ և կայուն (stationnaire) վիճակի մէջ, առանց նորանոր գարդացումներ ընդունելու, առանց նոր պերճանքներ առնելուս։

Տարակոյս չկայ՝ որ բնական գեղեցկութեան և մասնաւոր գարդացման վտանգներ եղող Չուխցերիոյ հայ ուսանողներէն անոնք՝ որ գրականութեան մասնաճիւղը միայն մշակելու հետամուտ եղան վերջերս, եւրոպական գեղեցկագիտութիւնն եւս՝ հոգեբանական նկատողին հետ՝ ուզիղ կ'արտահայտեցնեն իրենց գրուածոց մէջ, գան հայ հողին վրայ ծաղկող իրենց ինքնուս եղբայրները. սակայն առանց և անանց ճիի և մտածութեան ձեւին մէջ՝ ուզիղ կը տեսնուին բնորոշ տարբերութիւններ, գան թէ լեզուի և արտայայտութեան։ Իրաւ է գարձեալ, և լսելն անարդար, թէ որչափ որ ալ Եւրոպա ուսած գրողներու գեղեցկագիտական (esthétique) և համադրական (synthétique) գաղափարներով արտադրուած գործերը՝ Լառոմիի խմբագրանին պէս յոյժ կը տարբերին իրենց համագաւառացի գրողներու անարուեստ արտադրութիւններէն, գորոնք ճիշդ եգիպտական անհիթեթ զանգուածներու կարելի է նմանցնել. սակայն երկաքանչիւրին լեզուն եւս գրեթէ նոյն է։ Գրականական գաշտը վերջերս ոգողոգ բազմաթիւ հրատարակութեանց համեմատ չէ լեզուական զարդացումը։ Գարձեալ՝ ազգաստին և միօրինակ են բառերն ու բացատրութիւնքը, այսպէս նաեւ ձեւ կերկնաբանականները. միօրինակ ի վերջացող հոլովներն և ուղղ բայավերջերու տաղտուկքը։ Ա՞ր Թողունք չեմ տայ, չես տայ, չի տայ, չենք տայ, չէք տայ, չեն տայ, և նման ուրիշ շատ անճշդութիւնները, գորս ստիպուած են ամէնքն եւս կրկնել, տալով իրենք գիրենք ժողովրդեան հոտանքին։ Մէկ խօսքով՝ ուսանող ամէն ընտիր գրութեան համար իսկ կրնայ ըսուիլ, թէ ըստ գաղափարին և մտածութեան է ազգային և միանգամայն եւրոպական և յոյժ զարդացեալ. բայց ըստ լեզուին և ըստ արտայայտութեան՝ դեռ մանկական։ Եւ քանի որ ժողովրդական կենդանի բարբառի բովերէն նոր գոհարներ չեն ելներ, ուրիշ կերպով կարելի չէ զարդացնել այդ լեզուն, բայց եթէ՝ կամ լեզուագիտական ձեռնհասութեամբ նոր բառեր և բառարաններ յօրինել, եւրոպական Համեմատական Քերականներու հայելի Թարգմանութեամբ, և կամ չխորշիլ բնաւ չարունակելու իրենց պապերու խմաստուն գործը. այսինքն է՝ հին և նոր ժամանակաց գրաբար լեզուէն — գոր այնքան զարդացուցին Մխիթարեանք — ընտրանօք և յարմար վո-

---

1. Ով ծանօթ է Շիլլերի, Լեսինգի, Կլոպշտոքի և Կէթէի գլուխ գործոցներուն հետ՝ դիտած է անշուշտ, թէ ինչպէս նախանձախնդիր եղած են զուտ գերմաներէն լեզու գործածելու, և ո՛րքան լաւ յաջողած։ Ա՛ւ Թողունք ուրիշն որ հայերէնը՝ գերմաներէնէ նուազ հարուստ չէ։

2. Տես Քննական Քեր. եր. 210։

խառնութիւններ ընել։ Բայց այս երկու գործոնութեանց մէջ իսկ՝ յաջող փորձեր երած չեն ցայսօր առաջադէմ։ Ներեսի ինձ ըսել՝ որ նոյն իսկ եւրոպական համեմատաբար վերապարձող առաջադէմ երիտասարդներէն շատերն՝ որոնք հրապարակագրութեամբ կը ձգտին գրագիտել, դասական գրքերէն շատերը կարդացած չեն, ըլլան անոնք նախնեաց, ըլլան Մխիթարեանց գործեր։ Դարձեալ՝ ո՞վ կրնայ երաշխաւորել, որ այդպիսիները գէթ ժողովրդական բարբառին ունենան կատարեալ. ծանօթութիւն։ Աշխատիկ արեւելեան նոր գրականութեան ակար կողմերը։ Անցնինք արեւմտեանին կիսագնդին վրայ։

* * *

Ինչպէս ճանապարհորդն՝ Եւրոպային Ամերիկա անցած ժամանակ՝ երբ կը հանդիպի 8–12 յարկաւոր հսկայարերձ շինուածոց, երբ կը տեսնէ առուտր էջերէ՝ բազմացած մեքրաչափ մեծութեամբ օրագիրներ, կը ճնոյ պահ մը ապշած ու զարմացած՝ նոր աշխարհի քաղաքական և մտաւոր զարգացմանը վրայ, միտքը բերելով մանաւանդ Կոլոմբոսի ժամանակի վայրենի աշխարհն և անգին տմպուրիները։ Սակայն այդ զարմանքը, այդ առաջին ապշութիւնը շուտով կը փոխուին, և բնական կը դառնան, երբ կը տեսնէ՝ որ հինգ հարիւր տարիներէ ի վեր՝ հանճար, հարստութիւն և թարմ ուժեր ձեռք ձեռքի տուած տենդոտ և յանդուգն ձեռներէցութեամբ կը մրցին և կը գործեն հոն։ Այսպէս ալ երբ կ'անցնինք մտքով մեր հայութեան բնաշխարհէն՝ անոր նոր գաղթավայրը՝ Կ. Պոլիս և Փոքր Ասիա — ուր օտար ազդեցութիւնը՝ Տիւփոնի պէս իր հսանքին մէջ կը կլլէր ամէն բան — կը տեսնենք՝ որ իր միջավայրի բոլոր ճնշող և աննպաստ հանգամանքներով հանդերձ՝ հայ լեզուն հերակլեան քայլեր առած է և հոյակապ գրականութիւն մի բարձրացուցած, 50 եւեթ տարիներու սուղ ընթացքին մէջ, զարմանքնիս աւելի կ'ըլլայ։

Սակայն պիտուած է՝ որ ինչպէս բնութիւնն՝ այնպէս և լեզուն յանկարծ և ընդոստ չի գործեր, այլ յամր և քայլ առ քայլ. և թէ իւրաքանչիւր քայլն՝ ունենալու է իր չարժիչ պատճառը։ Արդ՝ առձկահայոց աշխարհաբար լեզուին և գրականութեան ոչ միայն հարուստ առաջքը, այլ և այդ անակնկալ չարժումը մէկ գար յառաջ սկսած էր արդէն և պատրաստուած Մխիթարեան մամլոյն ձեռքով և դասական լեզուին տրուած նոր գաղափարներովն և ոճերու զարգացմամբը։ Այդ նոր ուղղութեամբն՝ իրաւ է՝ որ չքնաղ կերպով կը վերակենդանանար և կը ծաղկէր դասական լեզուն նոր կեանքի ներշնչումով մը, ինչպէս բուսական աշխարհի հարիւրամեայ մուռասի՝ (ագամանդենին) Հասարակածի ջերմութեան ներքեւ. բայց այդ արտասովոր ծաղկումը՝ արդիւ նպատակ չունէր, եթէ ոչ՝ թողուլ իր յաջորդութիւնը աշխարհաբար լեզուն։ Զախչախեաններ, Աւետիքեաններ, Թոմաճանեաններ, Բագրատունիներ և Հիւրմիւզեաններ — ինչպէս տեսանք — ոչ միայն հասունցուցած և պճնած էին մեր գրականութեան այգեստանը՝ հին և նոր դասականաց, այն է՝ Հոմերոսի, Վիրգիլիոսի, Սոփոկլէսի, Դեմոսթենի, Կիկերոնի, Թասինի, Ալֆիերեանց, Միլտընի, և այլն, հրաշագեղ պտուղներովն, այլ և ձգած էին միջոցային, ազնուացոյն, գեղեցկական և վսեմ գրութեան և գաղափարականի հիմունքը հայ հողին վրայ, մանաւանդ թէ անկէ դուրս ապրող հայ գաղթականութեանց մէջ իսկ։ Իսկ Մխիթարեանց աշակերտներն՝ որ կը մարզուէին և կը դաստիարակուէին՝ երկայն տարիներ՝ եւրոպական գիտութեան և գեղարուեստից վառարաններուն մէջ, լցուած միջազգային մտքերով, գեղեցկագիտական ձկտումով և հայրենասիրութեամբ՝ կ'ըլլային նաեւ իրենց նախորդներու պատրաստած սերմերը արեւելք տանող և տարածող գործունեայ մշակներն։ Իրաւ է՝ որ ատոնց հայրենիքէն դուրս առած կրթութիւնն ալ, գաղափարներն ալ միջազգային էին, բայց ուսած լեզուն աւելի ազգային էր՝ քան իրենց պոլսեցնակ և զմիւռնեցի և պատրիպոնեցի ազգակիցներուններ. հետեւաբար՝ ըստ այմ կ'ըլլար նաեւ իրենց գործած ազդեցութիւնը։

---

1. *Բանաձի տեսակին վերաբերեալ բարձրաբերձ բոյս մ'է, որ միջին անգամ 100 տարի կ'ապրի. բայց պտուղը տալէն մէկ տարի վերջը կը մեռնի և կը գտանայ։*

Մ. Պէշիքթաշլեան, Ար. Չէքիմեան, Ա. Էմինեան, Փորթուգալ փաշայ, Անգուհ և Կամիսաս պէյ Մինասեաններն և ուրիշ շատեր՝ իրր ազգօգնեան քնարով է՝ որ կը հնչեցնէին Հայոց դիւցազնվէներր, Կռուին արտասուքը, Պանդխտին մահը, Գիշերը, Ճիրիվին ու Քնարը, Յետին հառաչն ու Երեկոյթզուարիքը, Վանեմ անձնագոհ մը, և այլն. ասոնցմէ անգամ է՝ որ ազգս ձեռքով աշխարհական քնարը կը սկսէր փոխանակել եկեղեցականին: Եւ սրշամի գեղեցկութիւն, կիրք և խանդ. սրշամի վանեմ պատկերացումներ՝ բնութեան և հանճարոյ՝ իրարու պետի յաջորդէին: Թէպետեւ ատանք արբած Բագրատունիներու և Հրիմիւզեաններու և Այիշաններու առեղծած գրաբարի գեղեցկութեամբը, մանաւանդ թէ արծուօրէն յափշտակուած Մխիթարեան գրականութեան այդ բարձունքը՝ չէին ուզեր դիւրաւ հայ ժողովրդեան ատորին հորիզոնին վրայ վայրաբերիլ, թէպետեւ ի սկզբան գրաբար լեզուով կը ցայտեցնէին իրենց բանաստեղծութեան շանթիքը, ասկայն և այնպէս՝ բարձրէն ալացող մշտամնուկ Սիրոյն (Աժօնին) պէս՝ կապուտակ եթերի նուրբ թևերով կը թափանցէին սրտերու խորը, և կ'արծարծէին զանոնք ի գրասիրութիւն: Այսպիսիք՝ առաջին անգամ կը բանային Թատերաբեմի ճոխապաճոյճ և հրապուրիչ վարագոյրը՝ ազգիս մէջ. և մերթ գրաբառնակ և մերթ Աշխատասէրս աշխարհաբարով մը կը ներկայացնէին միջազգային և ազգային խաղերը: Անոնք կը կարդային զանոնք, կը ներշնչուէին անոնց գեղեցկագիտական աւիւնով, կը իւրացնէին իրենց հետ դասական արուեստի վեհութիւնն ու վսեմութիւնքը: Անշան, բուն սիրտը հայ մտքի և սրտի, իր Հայրենի նուագներով միջազգայինը՝ ազգայինի կը փոխակերպէր, և դրոց լեզուն՝ հայ նահապետի ընտանի բարբառին: Երկուքին մէջ եւս հաւասարապէս քաջարուեստ և գեղեցիկ: Սա՝ հայութեան և հայրենեաց հոգին էր, որ «Կռունկի» բանաձին պէս կը սարսածէր՝ իր ամբրսանան բոյրով օծուած՝ սիրոյ և հանճարի թևերը աւետաբեք, և նոյն իսկ կովկասեան ցրտաշունչ դաշտերուն վրայ: Այդ մեծ ազդ ներշնչութեամբ է՝ որ Խրիմեան, Սրուանձտեան, Տէվկանց և ուրիշներ կը սկսէին ոգել՝ ազգ բարբառով՝ հայ ժողովրդի կեանքն ու հայրենի աւանդութիւնները:

Ահա Մխիթարեան գպրոցի այս ազամանդեայ գրիչներուն է՝ որ անընդհատ կը յաջորդէին ուրիշ գրողներ: Այսպիսոց գեղեցկագիտական ու համամարդկային գրուածոց վրայ՝ իրրեւ ընդարձակ և հաստահիմն հիման՝ կը կառուցուէր արեւմտեայ հայ գրականութեան չէնքը. և Մխիթարեանն ու համամարդկայինը՝ կը ձկտէր ըլլալ ազգայինն: Այդ չէնքին վրայ անտարակոյս — ինչպէս տեսանք — այլ և այլ ժամանակաց և պարագայից համեմատ, և նոյն իսկ երբեմն անհամաչափ կերպով՝ աւելցան օգտապաշտ (utilitaire), իրապաշտ (réaliste), գաղափարապաշտ (idéaliste), և վիպասանական (romantique) գրութիւններով և ձեւերով յօրինուածութիւններ:

Ես չեմ ուզեր այլ և այլ փափկանկատումներու ազատու կանգ առնուլ այս տեղ՝ քննելու և ցուցընելու Թրքահայոց գրականութեան մէջ բուսած ամէն գրողի և մրողի, և նոյն իսկ այդ գրական և լեզուական ստեղծագործութեանց բոլոր առանձնայատկութիւնները և անոնց արուեստական ու գեղեցիկ, կամ անարուեստ և տգեղ կողմերը. այլ ընդհանուրը՝ և այն կրկին տեսակէտով: Միտքս պարզեմ. ինչպէս որ և իցէ գրուած մը՝ այսպէս ալ գրականութիւն մը երկու տեսակէտերով կրնայ նկատուիլ կամ քննութեան ենթարկուիլ, այսինքն՝ մտածութեան ձեւովն և անոր արտայայտութեամբը. և թէ մէկով թերի լինելովն իսկ՝ միւսովը կրնայ կատարեալ դառնալ: Այս կրկին զանազանութիւնները գնեն՝ իրաց իսկ համապատասխան է՝ բան խոս: Առանց այժմ առաջին կէտով ուզելով խօսել՝ կրնանք ըսել, որ մէկ կողմէն ընդհանուր իրականութեան արդար կշիռը ձեռքերնիս ունելով, և միւս կողմէն ալ մտածութեան ձեւի պարզապէս ի նկատի առած՝ արեւմտեան ազգային նոր գրականութեան մէջ վիպասցող այնքան և անչափ գրուածոց մեծ մաս մը դուրկ են այդ յատկութիւններէն, զի գիտութեամբ և մեթոդով դեռ չզարգացած մտքի նախատրամներ կրնան համարուիլ և թափթփուկներ՝ մերթ իմաստակութեամբ և մերթ անակնառօրէն նետուած նոր գրականութեան դաշտին վրայ: Ըսա ինքեան տգեղութիւն միայն կը պատճառեն անոր աւելի, քան չնորհ և շուք. սկսնակ գրչի գրօսանքներ են աւելի՝ քան թէ գրականութեան վարկը բարձրացնող չարագրածներ:

Մի ուրիշ մասն՝ այն է իրապաշտութեամբ արտադրուածը՝ յիրաւի նոր է և նկարագեղ, բայց իր հանճարեղ մանրանկարին մէջ իսկ՝ ունի գաղափարի և արտայայտութեան այնպիսի ռամիկ, բաց ու գազիր կէտեր, որոնք ոչ միայն բոլորովին

անյարիր են և անպատշաճ գոռական գեղեցկագիտութեան, այլ և կարծէք թէ զայն եւս կը խանգարեն ու կ'այլանդակեն. հասարակութեան համեմատութեան խակ կերպով մը վիրաւորիչ եղած են ժամանակին ու գայրոյթը չարժած: Մէկ խօսքով՝ չեն այն՝ ինչ որ անոնց գրողներն և գովողները կ'ուզեն՝ որ ըլլան, մանաւանդ թէ իրարու հետ յարմարցուցած համերաշխ գրուածներով կը ջանան ներկայացնել զանոնք իբրեւ վարդի բոյրով և ոսկի ամպերով պատուած հրաշակերտներ նոր գրականութեան:

Կայ մեծ մաս մ'ալ՝ ուրիշներէն այնքան խանդավառութեամբ ներբողուած՝ իբր գրական գեղանիներ, որոնք սակայն գաղղիական գրականութենէն առնուած են գաղտագողի և բռնադատօրէն հայացուած: Շատերը բարեմտութեամբ՝ նորատեր հայ հանճարներու հայկական ծնունդ համարած են զանոնք ժամանակին և հռչակած խակ, առ ի չգոյէ անաչառ և մերկացնող քննադատութեան: Եւ այս՝ առաջիւ ազէտ մ'է ամենահայ գրականութեան համար, նոյն իսկ այսօր: Ասւսահայ քննադատը շուտով գիտցաւ վար առնուլ իր մէջ երեւցող Լ.վելինեայի և ուրիշ Թարգմանածոյ գործերու կեղծ գիմակը. բայց ամենահայ քննատէրը՝ տակաւին անմեղ և անուշիկ անուրջներով կ'օրօրուի և կը քնանայ այսպիսեայ հանդէպ. իսկ զարթած պահուն՝ ինչ որ հայոտառ և հայաբարբառ կը տեսնէ, իրեն համարիւն եղբայր և քոյր կարծելով՝ կը հիւրընկալէ յաճախ, որով այնպիսեայ թիւը փոխանակ նուազելու՝ կ'աճի օրէ օր:

Կայ մաս մ'ալ, զոր կարելի է ամենէն հինը և ամենանորը անուանել, որ ամենայն կը չարունակէ ներկայացնել այդ — ի հարկէ շատ մը յարգելի բացառութիւններով — գրականութեան մշտամանուկ վիճակը, որ կը սիրէ դեռ՝ արեգական, լուսնի, ծովու և բնութեան չուրջը գառնալ՝ մոլորակաց պէս. որ չի ձանձրանար հազար և մէկ անգամ կրկնուած երգերը՝ նորէն ու նորէն երգել, և սիրային վէպերը վիպասանել. բայց յաւէտ չարժելու համար օդային ովկիանոսը՝ քան թէ կենդանացնելու բնութիւնը կամ կենդանագրել մարդը՝ իր հոգեբանական զարգացումներովն ու ձկտումներովը: Այ՛, մարդկային մանրաչխարհն՝ որ նիւթական ուիեզերքէն աւելի մեծ է և զարմանալի՝ կամ իսկապէս անծանօթ մնացեր է այդպիսի գրողներուն, և կամ իբրեւ միգամած մը՝ աղօտ կերպով ընդհնմարուած է անոնցմէ: Զկան, գրական այդ բաժնին մէջ, եւրոպական մեծ ստեղծագործողներու հոգեբանական կառուցուածքի նկարագիրք, որոնց կը սպասէր ժամանակն, այլ ճոռոմ ճարտար և նոյն իսկ զգայուն՝ բայց յաճախ կրկնուող ասացուածներ և գրուագներ միայն կու տան ընթերցողին. որոնք աւելի նմանողութիւն կը յայտնեն՝ քան ինքնատպութիւն, իրերն առանձինն կը գեղերեանն՝ քան թէ գիւտաւոր հանգոյցներով իրարու կապել զանոնք և մեծ ամբողջ մ'արտադրել:

Հուսկ ուրեմն կայ իրօք նշանաւոր մաս մ'եւս, որուն համար իրաւամբ կրնանք ըսել, որ թէ՛ լեզուի և թէ՛ մտածութեան ձեւի և թէ՛ չէնքի կողմէն են ստուգիւ գեղեցկագիտական և գնահատելի: Այս կարգի ընտիր գործերն՝ որոնք հանրածանօթ են, իրենց շատ կատարելութիւններով հանդերձ՝ եթէ եւրոպականաց հետ բաղդատենք՝ դեռ չեն ինչ ինչ կողմնակի և մասնակի թերութիւններէ. սակայն ատոնք սեպհական են աւելի ընդհանուր արեւելեան մտքին և մտածութեանը՝ քան անհատական գրիչներուն: Հետեւաբար՝ եթէ ուզուի թարգմանել զանոնք եւրոպական լեզուի, աւելի եւս պիտի ստուարանան և զգալի ըլլան այդ թերութիւնները՝ քան որ ինչ են հայ լեզուին, հայկական տարազին ու հայ լսելեաց մէջ:

Այդ՝ այս ընդհանուր և հակիրճ դիտողութեանց ձեռքով՝ չափազանց լաւատեսութեան ապրան հանելէն ետքը — յոգուտ նոր գրողաց — կը տեսնենք՝ որ ամենահայոց նոր գրականութիւնը՝ ոչ իր ամբողջութեամբը, և ոչ ալ աւէն հայեցակէտով ունի անբաղդատելի գերազանցութիւններ, ինչպէս ցուցնել կանացին ոմանք: Սորա՝ ուսումնասիրելի կամ արեւելեան գրականութենէն ունեցած բնորոշ գերազանցութիւնը կը կայանայ՝ ըստ իս՝ գլխաւորապէս լեզուի զգալի զարգացման, ճկունութեան, կանոնաւորութեան և ծաղկաւէտ ոճով գրելուն մէջ. այս՝ անուրանալի է:

Խնդրական է՝ թէ արդեօք այդ յատկութիւնները միայն՝ կարող են ընել գրականութիւն մը ստուգիւ գեղարուեստական, գրական, բարձր և համամարդկային, որուն սակայն՝ կարծէք թէ կը պակսին յաճախ բնականութիւն, մեթոտ, հոգեբանական ճիշդ գննութիւն, չափակցութիւն մասանց (symétrie), միութիւն և ինքնուրոյնութիւն: Սակայն բան մը՝ որ բնաւ տարակոյս չի վերցներ, և մենք կարող ենք ձեռք կերպել այսպէս՝ իբրեւ ամենատոյգ հետեւանք՝ է հետեւեալը. այսինքն թէ տաճկահայոց գրականութեան այդ լեզուական զարգացումը, այդ գեղեցկագիտական կատարելու-

թիւնն՝ անվիճական արդիւնք է մասամբ ֆրանսական հզօր ազդեցութեան, որ տասնեակ տարիներ յառաջ՝ դեռ միակ ներկան էր, և մասամբ ալ՝ դասական վանեմաչուք մատենագրութեան։

Աւելի կէտ մ՚ալ՝ զոր երբէք մոռնալու չենք, այն է՝ որ հին և նոր դասական մատենագրութիւններն ազգին մէջ ներմուծողները, գեղեցկագիտական ճաշակ առաջնորդներն ու լեզուն զարգացնողներն եղան ի սկզբանէ ի վեր Մխիթարեաններն և իրենց դպրոցի աշակերտները։ Անտարակոյս, առանց նախընծայ հրատարակութեանց և անոնց ընթերցանութեանը՝ տաճկահայոց գրականութիւնն և աշխարհաբար լեզուն պիտի չունենար այսօր լեզուի այդ գերազանց դիրքը՝ նկատմամբ իրենց արեւելեան քոյր լեզուին և գրականութեան։ Տաճկահայ գրագէտ մ՚եղած չէ, որ կարգացած չըլլայ Ջամճեանները, Ալեմիքեանները, Թոմաճանեանները, Բագրատունիները, Հիւրմիւզեանները և Այիշաններու դասական հրատարակութիւնը, և անոնցմէ մեզաւորէն հաւաքած չըլլայ գեղեցիկ ծաղիկներ, վանէմ մոքեր և բառամթերք։ Այսօր իսկ կը չարունակեն ոչ միայն կարդալ և ծծել զանոնք, այլ և՝ անոնց գեղեցիկ ոճերովը, գարձուածներովն և ոգով բառերովն է՝ որ յաճախ կը գարդարեն իրենց լեզուն և գրուածները, յարմարցնելով աշխարհաբարի քերականական օրինացը։ Այս ալ պէտք է ըսել՝ թէ նոյն իսկ տաճկահայոց մէջ քիչեր կան, որ Մ. Ասի. դպրոցներու աշակերտաց չափ խորապէս իւրացուցած ըլլան գաղղիական և իտալական գեղեցկին հետ՝ նոյնպէս յիշեալ Մխիթարեանց ճաշակաւոր մատենագրութիւններն և լեզուն։ Իրաւունէ՝ այս նկատմամբ բառական է յիշել Մ. Մաղաքիան, որ 1871 թուականէն ի վեր իր «Արեւելեան մամուլ» կիսամսեայ, ազգային, բանասիրական, քաղաքական հանդիսովն և քառնէն աւելի ինքնագիր և թարգմանածոյ վէպերովն ու զանազան գրուածներովը — որոնք կը կրեն հասուն մտածութեան, կոկ և յստակ լեզուի և նուրբ ոճի բնաշրջմը — գերազանցօրէն կը մշակէր աշխարհաբարը, կը յարուցանէր խումբ մը ընտիր գրողներու, և կ՚ըլլար պարծանք Ժմիւռնացւոց։ Ան՝ աշակերտ էր Մուրատ-Մխիթարեան վարժարանին։ Այդ վարժարանին մէջ և Մխիթարեաններուն աշակերտած էր Մարկոս Պողոսեան, որ եղաւ հրատարակիչ «Կռունկ հայոց աշխարհի» ամսագրին և «Ծիլն Ասպայրի» բանասիրական հանդիսին, այլ և «Գարնգին Արուանձանան» ազգերգութեան, և այնքան նպաստեց կովկասեան աշխարհաբարի ստրուժմանն և զարգացման։ 1850 թուականէն ի վեր Պոլիս հրատարակուող «Բանասէր» օրագրի հրատարակիչ բանասէրն և բանաստեղծը՝ Յ. Մ. Հիսարլեան՝ այդ վարժարանի աշակերտ էր. այսպէս նաեւ Յ. Շիշմանեան (Ծերենց)։ Կը թողում յստակ բերել Մխիթարեան դպրոցներէն ելնող աշակերտաց այն առաւել լեզուները, որոնք Թոմ. Թէրզեանի հետ՝ զանազան ճաշակաւոր, ընտիր և գեղեցիկ հրատարակութիւններով այնքան ճոխացուցին և բարձրացուցին նոր գրականութիւնը։

Սակայն կարեւոր կը համարիմ յիշել մէկը, որ գէթ իրրեւ հրապարակախօս ամենէն աւելի նշանաւոր դեր խաղաց աշխարհաբարի գարգացման մէջ՝ իր «Մասիս» և «Հայրենիք» կրկին և հանրածանօթ օրագրութիւններով և առանց շուրջը հաւաքած ճարտար գրիչներովն, այսինքն է՝ Ա. Աբիխեանի։ Այս կատարած գործն կարեւորութիւնն աչքերնիս բննելու համար՝ տեսնենք նախ՝ որ 1893 թուականէն յառաջ արեւմտեան աշխարհաբարը Կ. Պոլսոյ մէջ երբ՝ հակառակ հոսանքներէն մղուած՝ կայուն վիճակ մը չունէր, այլ կը հոսէր մերթ Ռուբինեանի, Գ. Օտեանի, Մ. Զերտալի և Եղ. Չէմերճիպաշեաններու գրչովը բացուած և գծուած ճամբուն հետիոտաններուն մէջէն, որոնք ոսկոյ հետ՝ աւերածներ եւս կը բերէին գրական անդաստանին. եւ մերթ ալ Պէշիկթաշլեաններու, Նարպէյներու, Ա. Պերպերեաններու, Գաբրիէլներու, Գաբագաշեաններու եւ Իսթիւճեաններու բարձրացուցած գրաբարի բարձրամանդակներու վրայէն, որով միտքն եւս կը մնար մասամբ անմատչելի գաւառացիներուն և նոյն իսկ Պոլսեցւոց շատերուն. մանաւանդ թէ լեզուն ժամանակ մը կը ոտնակոխէր եւս իր գարգացման բնական ընթացքէն։

Աբիխեանն՝ աշխարհաբարն ուղիղ ճամբու վրայ դնելու և յառաջացնելու համար՝ ունեցաւ նախ այս արդիւնքս, այսինքն է՝ յիշեալ թուականէն կը բանար Մասիս-Հայրենիք օրագիրներու էջերը, և կը ջանար ոչ միայն գտնել համախոհներ և հաւաքել իր շուրջը Պոլսի հասկացող երիտասարդութիւնը — որոնք են Յ. Շահնազարեան, Բաշալեան, Հ. Աստուրեան, Ջօհրապ, Ա. Փանոսեան, Կամսարական, Վ. Սվաճեան, Ս. Պարթեւեան, Մ. Կիւրճեան, Յ. Մրմրեան, Ա. Շաքլեան, Ե. Օտեան,

վ. Թէքէեան, և Կեդրոնական վարժարանի աշակերտները, — այլ և կ'առաջնորդէր անոնց դէպ ի նոր ասպարէզ մի, դէպ յառաջ։ Բ. նա՝ «Մասիս–Հայրենիք»ի այդ գրական խմբով՝ ուրիշ օգտաւէտ, ընդարձակ և անձնաւէր գործ մ'եւս կը սոսնձէր, այսինքն է՝ խրախուսել գաւառներու հայութիւնը, և հրաւիրել զայն մասնակցելու գրով և գրչով այդ թերթերուն, այլ և իրենց գաւառաց անհաշիւ ենթակայութիւնը ու պատմութիւնը՝ ուրոյն գրականութիւն մի գոյացնելու, իրենց տեղական կեանքէն և առասպելութեան ու վշոյց հաւխտներէն։ Եւ առաջիւ՝ այդ գրականութեան նմոյշներ են թիֆլիսեցւոյ գծած գաւառական կենցաղի պատկերները, որոնք յոյժ հետաքրքրական են՝ իրենց հաւժկու ձեւին և անպաճոյճ նորութեանը մէջ։ Այսպէս նաեւ հայ հոգին վրայ առնելութեամբ շրջող առասպելները, որոնք Չարպարեանի ուսուցիկ գրչէ ներքեւ՝ ոչ միայն գրական ձեւ առած են, այլ և խոշորցած անոր փնարերդակ սեպ ձայնով։ Մինչեւ այդ ժամանակ՝ Պոլսի լրագրութիւնը միայն իր կեանքով և եւրոպական քաղաքականութեամբ զբաղած էր. Մասիս–Հայրենիքով է՝ որ կը սկսէր հետաքրքրուիլ նաեւ գաւառական կենաց վերաբերեալ կարեւոր նիւթերով. մանաւանդ երբ Հրանդ՝ իր իրապաշտական խանդավառ գրչով կը նկարագրէր բազմավիշտ պանդուխտներու մտերիմութիւնը, և գաւառներէն ալ կը յաճախէին հայոց Կաթողիկներու, խմբագրութիւնը և ուրիշ բնիկ սովորութեանց նկարագիրները։ Գ. Մասիս–Հայրենիքի առած այդ նոր ուղղութեամբ՝ գրական շարժման հետ՝ լեզուն եւս կ'ընդարձակէր իր վրանները։ Չի այն օրէն ի վեր աւելի արագ և վճռական կերպով հիմն կը գրաւէր արեւմտահայ աշխարհաբար քերականութիւն, մի միայն ժողովրդական կենդանի լեզուի վրայ կոթնէք Թափուած. իսկ բառերու և առածներու մասին՝ ապառ կը Թողուէր ասպարէզը գրագիտին, հրապարակախօսին առջեւ։ Օրէն էր, հետեւաբար, այդ կոչնոյց համաձայն և բուռ տեղւոյն և պատշաճի՝ տեղեակ ընդունել և ի գործ ածել գրութեան մէջ թէ հինը և թէ նորը, կամ լաւ եւս՝ գաւառականն ու ժողովրդականը, թէ պոլսականն և թէ գաւառականը. որով կը կազմուէր նախընթաց շրջաններէն աւելի կոկիկ, դիւրահասկնալի և դուռ աշխարհաբար մի, որուն օրինակը առած էին Հ. Գաբ. Ալիշանեան և Հ. Միհ. Բժշկեան՝ Յովհաննուով, ինչպէս և նախկին մղումը։ Արեւմտեան, որ իր հերին մէջ իսկ կը պահպանէ լեզուի և ոճի ճկունութեամբ և պարզութեամբը, կրնայ ճիշդ Ալիշանեայ չարունակողն լսուիլ։

Դեռ աւելի մեծ և աւելի հանրական պիտի լինէր այդ շրջանին ձեռքով բացուած կրթականին հետ՝ նաեւ լեզուական նշանակութիւնը [1], եթէ 1897 Թուականին քաղաքական անողոք պատճառներով «Հայրենիքը» չ'դադրէր յանկարծ իր լուսաւոր ճառագայթին վրայ, և խումբն ալ չլինէր ցիրուցան։ Սակայն թերթը դադրեցաւ, բայց «Նոր կեանքն» և լեզուին արուած ուղղութիւնը դեռ կը շարունակուին ցարդ։

Բայց այս ալ ըսենք՝ որ «Հայրենիք»ով և «Նոր կեանք»ով արուած այս ուղղութիւնն՝ որչափ որ ալ ժողովրդական է, սակայն աւելի Պոլսի ժողովրդական լեզուին և կեանքի վրայ հաստատուած է՝ քան թէ առաւգապէս գաւառականներուն, որ երկար և ինքնուրոյն կեանք մը չունեցաւ դժբախտօրէն։ Այսօր իսկ կարելի է ըսել, թէ Պոլսի և Իզմիրի լուսադոյն գրողները՝ գաւառականներուն այնքան տեղեակ չեն տակաւին, և իրենց գրուածոց մէջ յաճախ անոր գործածած ձեւերուն դէմ կը մեղանչեն։ Այդ գծեղ ազդեցութիւնն է՝ որ կը տիրէ դարձեալ գաւառի գրողներուն վրայ։ Յամենայն դէպս՝ Թրքահայոց ոչ լեզուին և ոչ ալ ընդհանուր գրականութեան վրայ կը տեսնուի չարունակաբար և յառաջխաղաց միօրինակութիւն մը։ Ռամկականն և ակադեմականը՝ դարձադարձ իրարու յաջորդած են, մերթ յեղյեղուկ կերպով և մերթ ալ գծեղ գրիչներու և գործիներու ազդեցութեան ներքեւ։ Ֆրանսական ազդեցութիւնն՝ ազգային փոխանակած էր երբեմն, իսկ այժմ անգլիերէնն ու գերմաներէնը՝ ֆրան-

---

1. Ի դէպ՝ պէտք է ըսել, թէ այդ շրջանին առեղծուած լեզուն՝ որչափ որ ալ գրալի կերպով հոխացած է գաւառական բնաւորի և նոր բառերու հարուստ մթերքով, և իրապաշտ գրչոցին յաւուրց աւուրեն ներքով և կենդանի նկարագրականներովը, սակայն չունի նոյն իսկ 1881 Թուականի «Մասիս» բարձր և մշակուած լեզուն։ «Հայրենիքն» ժողովուրդը կը ներկայացնէր՝ իր առանին կենաց և լեզուի պարզունակ երեւոյթներով. իսկ «Մասիսն» անոր բարձրագոյն դասը՝ իր գրական և քաղաքական յղկեալ արտայայտութիւններով։ Հետեւաբար՝ առաջինն աւելի հանրամատչելի է և համապատասխանող կեանքին. իսկ երկրորդը՝ ամփոփ, բայց բարձրացուցիչ ազգային լրագրութեան։

սերենին կը ապառնան։ Այնպէս՝ որ այդ գրականութեան վրայ գրպէտ գաղու բրած յարատեւ ճիգի և յառաջադիմական հոգեբանութեան պատմութիւնն ունի գաղափար կը ցտակէ, և ունի նշանակելի է՝ քան թէ բուն ազգային և ժողովրդական ոգւոյ արտայայտութիւնն և միօրինակութիւնը։

Իսկ Ռուսահայոց գրականութիւնն՝ ընդհակառակն՝ իր լեզուական և ուղղագրական, իր գաղափարի մտաեղագրութեան մասին ունեցած անկիւռութեամբ հանդերձ՝ համեմատութեամբ ունի միաձոյլ է և միօրինակ. այնպէս՝ որ կրնանք ըսել — ինչ ինչ բացառութիւններով — թէ՛ ընդհանրապէս ազգային է և թէ՛ ժողովրդական։ Այլ և՛ անընդհատ կերպով ազգային ոգւոյ և կեանքի և յառաջադէմ զարգացման ներկայացուցիչ մ'է, թէ՛ իր բնիկ հողին վրայ և թէ՛ անկէ դուրս ապրած միջոցին։ Անտարակոյս պէտք չէ մոռնալ՝ որ ռուսահայ գրողներու և ժողովրդեան լեզուի մէջ գոյ ալ կայ մեծ զանազանութիւն. բայց այդ խորացը գրեթէ ոչինչ է բաղդատմամբ Թրքահայերուն, և գրագէտն և ժողովուրդը գիրար լաւ կը հասկնան։ Ահաւասիկ երկու գրականութեանց տարբերութիւնքը։

* * *

Այդ՝ եթէ տաճկահայոց արդի գրականութեան նշանաւոր գրողներէն և հրատարակիչներէն ոչ ոսկւոք Մխիթարեանց աշակերտներ էին և են, և եթէ Մխիթարեանց ազդեցութեանը կը պարտի իր լեզուական առաւելութիւնն, ասկէ կը հետեւի ուրեմն՝ որ Մխիթարեանք ազգային ժամանակակից այդ աշխարհաբարին գոյգահեռապես համրնթացած ըլլան միշտ։ Իսկ թէ՛ ինչպէս և ինչ չափով. այս բանս պիտի տեսնուի յաջորդ դիտողութիւններէն։

Ռուսահայոց և տաճկահայոց աշխարհաբար գրականութիւնքն՝ քան որում գծեցինք՝ եթէ ներելի է նմանեցնել երկու գետերու, Մխիթարեանն ալ հարկ է նկատել՝ իբրեւ անոնց երրորդ ակընառաջքը։ Վերջինս՝ ինչպէս ակիզբն տուաւ առաջիններուն, այսպէս եւս պէտք է՝ որ զուգահեռաբար համրնթանար երկուքին. վասն զի կարելի չէ երեւակայել երկճիւղ գետեր՝ առանց մշտաբուխ ակնաղբեր մի։ Զուգահեռաբար կ'ըսենք և ոչ թէ միապէս. որովհետեւ արեւմտեան գրականութեան այդ առաջն՝ Այվազովսկիէն մինչեւ այսօր՝ անոր տուած ուղղութեամբը չանցաւ է ընթանալ. մինչդեռ առաւտահայոց աշխարհաբարը չեղեցաւ զժբախտաբար Նալեարեանի գծած ուղղութենէն — որով պիտի զարգանար յոյժ յոյժ նաեւ լեզուական գեղեցկութեամբ, եթէ նոյն ակըզբամբ շարունակուէր. — և տաճկահայոցն ալ իր այլ և այլ շրջաններուն մէջ ընդունեցաւ իր մէջը — ինչպէս տեսանք — ուրիշ օժանդակ պզտոր վտակներ, մանաւանդ թէ օտարոտի ձեւերովին և անտարուեստ կերպով շինուած բառերով ինքն իսկ պղտորեցաւ՝ իր նախկին և բնիկ յատկութենէն։

Իրաւցնէ, աչքէ անցնելով ձեր «Բազմավէպն» և անոր կրսեր քոյրը՝ «Հանդէս ամսօրեայն», մենք կը տեսնենք ակներեւ՝ որ երկուքն եւս — իրենց ըրած լեզուական ահագին յառաջադիմութեամբ հանդերձ — ոչ միայն հաստատ մնացեր են Այվազովսկիէն և Այտընեանէն դրուած հիմնական կանոններուն վրայ, այլ և հետ գհետէ աւելի մաքրուած են և ճոխ ու ճկուն դիրք մ'առած։ Նոյն բանը կրնանք ըսել նաեւ վիենական և վիեննական կրկին հատատութեանց ուր և իսկ աշխարհիկ լեզուով լոյս տեսած առանձին հրատարակութեան համար՝ ընդհանրապէս։

Ստոյգ է դարձեալ՝ որ Մխիթարեան գրողներն և գործիները՝ ինչպէս ազդած են ռուսահայ և տաճկահայ գրողներուն վրայ, այսպէս ալ անոնց օրագիրներու յաճախ ընթերցանութեամբ՝ իրենք եւս փոխադարձաբար կրած են հակազդեցութիւններ. սակայն այդ հակազդեցութիւնը խիստ աննշան է և չափաւոր։ Այսինքն է՝ առած են երկուքէն եւս միայն ընթացիկ կամ առօրեական դարձած ինչ ինչ բառեր ու բացատրութիւններ, որոնք ոչ միայն նոր են, բնորոշ և վայելուչ, այլ և յարմար՝ արեւելեան և արեւմտեան աշխարհաբար գրականութեանց մէջ համերաշխ հասկացողութիւն մը յառաջ բերելու նպատակաւ։ Այս բաներս իսկ աւելի դպալի են Մխիթարեան նոր՝ քան թէ միջին շրջանի գրողներուն գոլ։ Իսկ այն արտասովոր բառերն՝ որոնք ոչ միայն օտար են աշխարհաբարի քերականական կանոններէն, այլ և սխալ և քմահաճոյ, մուտ գտած չեն Մխիթարեանց աշխարհաբարի մէջ, կամ խիստ քիչ անգամ։

Ռուսահայ լուսոգոյն հրապարակախօսն և վիպագիրը՝ գեռ այսօր իսկ կը շարունակեն հետեւիլ ժողովրդական լեզուի անճշդութիւններուն՝ ինչպէս ասկէ յետոյ տարի յառաջ։ Եւ կը գրեն՝ ըստ հին սովորութեան՝ բայեն խնդիրը արտասն հոլովով (օր. մարդուն առաքացնելով, ինչի՞ ես ծեծում ընկերիդ, ցածացնեմ երան). — Եզակի բացյոքնականակերպ (օր. մանկութենից, կարդից դուրս). — Փոխանակ բացառականի՝ դրծիականով (օր. գետնի տակով տանում է). — Կրկնակերպ սեռականով (օր. իւրեանց հօրերի)։ Կը մոցնեն վոխ. ոչ ի — անյարմար տեղեր իսկ — չ և վ. բայց ասկէ աւելի բառերու անթիւ սխալագրութիւններ (օր. վայր գցել, գրները, բեւեռագրներ, գործից, տարինը մի անգամ, շտապեցաք, մթնի մէջ մնալ, հոգը մի մարդու վրայ է գրուած, շատերը գարմացին, կը թուայ, սովորութիւն դառաւ, և այլն)։ Աւելորդ կը համարինք մէջ բերել քերականական և ուղղագրական օրինաց դէմ եղած բոլոր գարտուղութիւնները և սպասաղութիւնները, զի վաճառողները կը գտնեն գանոնք գլխաւորաբար բերականութեան 194–217 էջերուն։ Իսկ մենք այսչափը կ'ըսենք՝ որ գեռ շատ քիչ բաներ փոխած են և ուղղած արդի հրապարակագիրները կովկասեան գաւառաբարբառէն։

Տաճկահայոց արդի գրոցց շատերն ևս՝ ինչ ինչ կէտերով՝ վար չեն մնար ռուսահայերէն, մանաւանդ անոնք՝ որ երկայն տարիներ «Մշակին» մէջ իրենց թղթակից գրեցին և գործեցին. Ա. բաց ի բիւր վերջացող գոյականներէն՝ բոլոր մեռ անուններու սեռականն ևս անխտիր ի կը վերջացնեն, նոյն իսկ անոնց՝ որոց ուղղականն արդէն ինի է (օր. ապաւենի, գրացի, իրենց բարեկամին համբոյրին կը խորհին, մինչեւ հոգիս խորը, անհամբերութեամբ, նոր այրի մը, գինի վրայ, կապուեցան իրենց եկեղեցիին հետ, փոքրիկ խռամբի մը)։ Բ. Կրկին յոգնակիով կը գրեն և կը հոլովեն նոյն իսկ այն բառերը, որոնք եզակի ևս ունին յուղղականն, (օր. պահանջքները, խրախուսանքները չէին գտնար, պատկերքները, ձեռքերը, և այլն)։ Գ. Տգեղ կերպով չինուած բառերով (օր. կապիկով, խնծիրով (բառն անեզական է խնձիր), բերկրանքի անուշ պարզեւաբաշխիր (ածականը՝ գոյական ընելով), կը պրպտայի, կանթեղացոյցը, շողազօծ քթթուածնեով, ինքնագիտակ, եկեղեցիին մէջ կը յուսագարթի հոգիներու ձուլում մը, արշալոյսի մը անջատուած շառաչներուն առջեւ, կեղծապարիշտ շպարով մը ծեփուած, չմտռելով կը հետանայ, կիսքապատ (անուշտ կնքահայր), այբ-բենեաի, մխիկ-մխիկ կ'ընէր յոյն ապաստիին, շնիդրնցայ (կառչիլ), և այլն։ Դ. օտար բառերու գործածութիւնը՝ առանց հայերէնը դիտցը գնելու (օր. կարենան բրադիթա առնել, հարիւրի գաղափարները, արօրասիր արտասանութեան, նիմ քիչ մը քաղցրեն եղած ըլլար, սիկառի մը սեր քաշելուն հետեւողացաւ, կիբրիզ երիտասարդներ, սեռբանիկնիները, քոնֆիդրիներ, սիքրաներ հանդէսին հոգին կազմողներն են, բիւրոկրաս, քազինօ, պիւռօ, բիւրօ բերանները, քիֆը կը նայի, հիւիւպիա), և այլն։ Ե. Էր, ևս վերջացող անուններըը հոլոված առեն իսկ՝ ուղղական ձեւը անխտիր պահելով (օր. խնամատարի, հանդէսին, Բազմավէպի, Յովհաննէսին), և այլն։ Զ. կը գործածեն նաեւ այսօր «Գենական քերականութեան» 327–336 էջերուն նշանակուած առիկատարութիւններէն և հայտպատուոտ Թրքատարութեանց շատերը։

Ահա այս բաներով է՝ որ Մխիթարեան աշխարհաբար գրականութիւնը — իր մէջին շրջանէն սկսեալ — չէ հետեւած ռուսահայոց և տաճկահայոց հոսանքներուն. զի Ազգապահպանիչն վերջ Մխիթարեան մէջին գրողներն ընդհանրապէս[1] հակայական ջանքեր բրած են՝ ոչ միայն ազատ մնալ այդպիսի խանգարումներէն ու տգիտական հետզնեներէն, այլ և ըստ կարելւոյն իրենց յառաջ և կանոնաւոր լեզուով թարգմանած և երկասիրած հրատարակութիւններովին՝ իրրեւ մեքուր գետեր քալցնելով՝ ապագային նոր գրականութեան անգաստաններուն մէջ, անոնց Թոզուցած սիկն ու աւազն ևս մաքրել և գտել ջանացեր են։ Մխիթարեանց հիմնական սկզբունքն այն չէ՝ որ գրողն առաքանալով՝ միշտ հաւատար ընթանայ անգէտ ամբոխին, այլ ամբոխը հասու ընէ գրչին. որ՝ գրականութեան լեզուն — բլայ գրաբար, բլայ աշխարհաբար — պէտք է՝ որ ժողովրդական խոսուած լեզուէն թէ՛ աւելի յառաջ բլայ և թէ՛ աւելի կոկիկ, կանո-

---

1. Ընդհանրապէս կ'ըսենք, վասն զի ասոնց մէջ իսկ բացառութիւններ եղած են անպակաս, ինչ ինչ կէտերով։

նաւար, կորովի, ազնիւ և բարձր։ Դիտելով նախ՝ որ ինչպէս ժողովուրդը ազիսաւ-Թեան հարկէն մղուած է ազատուիլ միշտ իր մուտիսպարներուն հետ՝ նոյնպէս և լեզուն, այսպէս և գրագիտին պարտքն է՝ վերանորոգել այդ խանգարումները։ Երկրորդ՝ ժողովրդեան յօգտաւոր բարբառը՝ օդոյ պէս անկայուն է և փոխոխական, այսօր այս-պէս կը չնչէ և սուէ, վաղը այնպէս. է միշտ անորոշ։ Իսկ գրաւորն՝ ոչ միայն պարտի լինել, այլ և աւանդել գինքը ապագային այնպէս՝ ինչպէս որ էր իր ժամա-նակին, ըստ առածին՝ թէ խօսքը կ'անցնի, բայց գիրը կը մնայ։

Եւ առ այս՝ գրի և խօսքի զանազանութիւնն այնքան բնական է նաեւ ամէն ուրիշ ազգերու քով և այնքան պահանջող, որ ոչ միայն գրագիտին, այլ և ամէնքին՝ երբ հարկը կը բերէ՝ որ խօսածը գրի առնու, նա կը տագնապի կը զանգատի, այո, պահ մի. բայց և ամէն չանք ի գործ կը դնէ, որպէս զի ըստ կարելւոյն խօսածէն աւելի մաքուր և կոկիկ գրէ, եթէ գրիչ բռնել գիտէ։ Վասն զի ինքն իսկ համոզուած է՝ թէ գիրն աւելի յարմար է միտքը արտայայտելու՝ քան թէ խօսքը։ Գիտէ թէ գիրն աւելի կը համապատասխանէ իր խորհրդոցը՝ քան թէ լեզուն, և խօսքը, այնու մանաւանդ՝ որ մարդ յաճախ կը խօսի, բայց առանց իր խօսքը կշռելու կամ կար-գաւորապէս ձեւակերպելու գայն. մինչդեռ գիրն՝ ոչ միայն խօսքը արձանագրելու, այլ և ապագրելու և հասարակութեան ներկայացնելու ժամանակ՝ կրկին և կրկին կը յղկէ և կը կոկէ գայն, ինչպէս արձանագործն՝ իր չինած անդրին և նկարիչն՝ իր ձգագրած նկարը, մինչեւ որ համաձայն գտնուի այն իր մուտիսպարին կամ հրեա-կայութեանը մէջ Թաքնուած աննիւթ գեղեցկին։ Այսր համար է՝ որ առակը կամ ազեսը գրելէ կը խուսէ, կը դժկամակի միշտ. իսկ գրագէտն՝ որ տէր է իր գրչին, կը ձկտի յաւէտ գրել՝ քան թէ խօսիլ. վասն զի առակները կը ճանչնայ իր լեզուի և խօսքի սկզբունքին և ազեցութիւնն, խառնակութիւնն և խոչորութիւնը. և կը խի-թայ՝ որ անով կամ ինքը պիտի չկարողի հաղորդել այլոց իր միտքը, և կամ ուրիշ-ներն՝ անկոպար և անկատար գտնելով գայն, ծաղրեն և անգոհանան։ Իսկ վերջինը՝ կա-տարեալ գիտակցութիւն ունի գրի մէջ ծածկուած գեղեցկութեանն և կատարելու-թեան, և անով է՝ որ կ'ուզէ միշտ գրագիր և գրագեցնել, գուարճանալ և գուարճացընել։ Այսպէս է՝ որ փոխադարձարար կ'ազնուացնէ ու կը վեհացնէ ամէն ինչ։

Եւ առ այս՝ մի և նոյն ճշմարտութիւնը ցոլացնող մարդկային այս կրկին ձկտումնե-րու գեղեցիկ արտայայտութիւնը կամ լաւ եւս մտքիմացումը կը գտնենք մենք Խ. Աբովեանի [1] քով։ Սա՝ յետ նկարագրելու մէկ կողմէն իր բարձր Հանճարի մուտ-սիպարը, իր սրտին վրայ բռնացող ամենազեղեցիկ և ամենաանհնալի անուրջը, այս-ինքն է՝ հայ հայրենիքն և Հայոց յիշատակները. և միւս կողմէն ալ գրաբար լեզուին մէջ ունեցած իր ազգութիւնը, և գրով բան արժանւոյն գանելիս արտայայտելու բուռն ախնդանքը, կը գոչէր՝ երկունքէ մը բռնուած պէս. «Բայց ա՜խ, լեզուս փակ էր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կաթ... անուն ինձ չէր, որ տամ տեղը Հասնի. մեր գրքերն էլ գրարան, մեր նոր լեզուն էլ անգա-տիս, որ արտի հասարքը խօսքով յայտնի... ազգէն էլ՝ լեզուս մարդ չէր իմանալ չուխլի ես էլ ի՞ ուզուս՝ որ ինձ վրայ չծիծաղին, չասեն՝ կոպիտ ա, ցիմար ա՝ որ բերականութիւն, Հարցաբանութիւն, արտասանութիւն չէ գիտէ։ Ես էլ ի՞ ուզուս՝ որ ասեն. Օ՜ի Հնդիս խորը, խրթին շարադրել գիտէ, որ առանձին էլ միջիցը մէկ բան չի կարող իմանալ։ Ես էլ ի՞ ուզուս՝ որ իմ գրչես ցոյց տաս, որ ինձ վրայ գարմա-նան ոչ ինձ գոհեն, թէ Հայերէն շատ խորը անգնակ ես»։

Արդ, առանց բուռ ուշ դնելու ազգին և գրագիտին Հասարակ եղող այս Ձկտումնը՝ դէպ ի լեզուական մաքրութիւնն և գեղեցկագիտութիւնը, առանց խորը Թափանցելու այս բնազդին և բացայայտ ճշմարտութեան. մէկ խօսքով՝ անտեղի Հանդերձ Աբո-վեանի չնաշխարհիկ վիպասանութեան՝ ժողովրդական անկոպար և գծուծ լեզուին պատ-ճառով անյագող ելքն և հետեւողներ չունենալը, տակաւին կը շարունակեն նոր գրող-ներէն շատեր՝ իրրեւ սիրահարներ՝ հետեւիլ ժողովրդական լեզուի նոյն իսկ ազատա-գութիւններուն. տակաւին թարգմիչներ կը Հանդիսանան անոր տարտմանը, իրրեւ

---

1. Տես «Վէրք Հայաստանի» անգրանիկ վիպասանութեան Յառաջաբանը։

այն թէ գրականութիւնը գաղափարաւոր ըլլայ յաւիտեան ժողովրդեան առաջին հարիւրամեայ վրայ մնալու։ Բայց առաւօտյան աւելի՝ գարմանալի է յայտ՝ արդի առաջադէմ գրողներու ոմանց վարմունքը։ Չի նոքա ժողովրդականով սկսան, բայց այժմ կը ձկտին դեպ ի գեղեցկագիտականը, դէպ ի բարձրն ու միջազգայինը։ Իսկ ոչքա՝ որ գաղափարով, միջազգայնով և բարձրագոյնով սկսան իրենց գրականութիւնը, այժմ կը դիմեն դէպ ի ժողովրդականը, դէպ ի առօրը, փոխանակ ժողովուրդը առաջնորդելէն վեր բարձրացնելու։ Ինչէ՞ն յառաջ կու գայ այս. — Կամ առաւօտեան գրականութեան գերակշիռ ազդեցութենէն, և կամ առանձնատական սկզբան և դպացման գաղափարէն։

Այս ուղղութեան պաշտպաններն՝ իրրեւ օրինակ փաստ՝ Գոթի ժողովուրդը կը բերեն օրինակ, որ իրր թէ իրենց գրածին պէս կը խօսի։ Սակայն այդ փաստերէ վահանը փշրելու համար՝ բաւական է դիտել, որ Գոթի ժողովրդեան ժեծամտութիւնը ոչ ինձմէանի, ոչ Ալթաղամակեայ ժամանակ և ոչ ալ այսօր այնպէս կը խօսէր։ Իսկ փոքրամասնութիւնը կամ լաւ եւս գրել կարդալ գիտցողքն եթէ առակիւ այդպէս կը խօսին, պատճառն այն է՝ որ այդ ուղղութեան պատկանող օրագրութենէն և առաջնորդներէն ստիպեցան այդպէս խօսիլ, և ոչ եթէ իրենց պապերէն և մամերէն, որոնք բոլորովին ասոր հակառակը գիտէնք՝ թէ կը խօսէին։ Աբեղեան և Աբեղեանեան խմբագիրներու քով որոնելի է այդ նորութիւնը, և ոչ թէ Գոթի կամ գաւառներու ժողովրդեան։

Սակայն Մխիթարեանք՝ ինչպէս երբեմն ինկած և այլանդակուած վիճակի մէջ գտնելով գաղափարի լեզուն՝ հետ գհետէ մաքրեցին և վերականգնեցին, այսպէս ալ Ալիշանի հետ երդուած էին նոյն քիրտը թափել նաեւ աշխարհաբարի կանոնաւոր զարգացման, արդուցման և բարձրացման համար։ Առաջին գործը կազմեցին հին գաղափարի կատարեալ ուսումնասիրութեամբը և լաւին և հնլէն հրաշակերտներու աքանչելարուեստ թարգմանութիւններով. իսկ երկրորդը՝ եւրոպական նոր գաղափարութեան (classicisme) և իրենց նախկին առեղծագործութիւններու ձեռքով։

Մխիթարեան աշխարհաբար գրականութեան հիմը թէպէտեւ ժողովրդական լեզուն եղած է — ինչպէս ցոյց կու տան Մխիթար Աբրահոր Քերականութիւնն և Բրիսոնեականը — բայց չէնքին քարերը, այսինքն՝ լեզուական տարերքն՝ աւելի գաղափարական և նոր լեզուի քերականութեան կարկինով չափուած և ուրագով տաշուած ու իրարու ազուցուած են՝ քան թէ ժողովրդեան անուշ և անհամաչափ կերպով։ Հետեւաբար՝ ինչպէս ասոնց վերաստեղծած գրաբար գրականութիւնը կը տարբերէր ժամանակակից ընդհանուր տափակ և ազատ գրաբարէն, այսպէս և՝ աշխարհաբարը՝ նման պատճառներով տարբերելու բնաւորութիւն ունէր. այսինքն՝ բլլալ գաղափարի մէջ։

Թերեւս առարկուի, թէ ինչպէս կրնայ լեզու մ'բլլալ աշխարհաբար՝ և միանգամայն գաղափարական։ — Գաղափարն ըսելով այս տեղ՝ մենք չենք հասկնար հինը, այլ նորը, որ կը ձկտի — նմանութեամբ հին գաղափարին — լինել բան կարելւոյն կանոնաւոր և կոկիկ, բան որում կը պահանջէ գրութեան արուեստը։ Լինել ազատ և առանց նեոլոգիաների և նորաբանութեանց (néologisme) չափազանցութիւններէն։ Եւրոպիոյ նոր գրական դպրոցին վրայ խոկ մենք մեր ժամանակներս կերպով կը յորդորէին գաղափարանոցի և միջակաւորդաց (romantisme), հնաոճանոցի (archaïsme) և նորաբանոցի (néologisme) վերաբերեալ կուսակցական թեր ու դէմ վէճերը։ Սակայն այդ ժամանակի գաղափարները հասնելով մեզի՝ մենք չենք կրցած ոչ ոք իր ժամանակէն և միջավայրէն բոլորովին դուրս երկասիրութիւններ կը հրատարակէր, նման Վեհոթենի կամ Կիկերոնի, Հոմերոսի կամ Վիրգիլիոսի և Որատիոսի. այլ մէկ կողմէն հին գաղափարաց ոգին, գեղեցիկը, կանոնաւորն և վսեմը՝ նոր լեզուին հետ ձուլելու, գեղեցկացնելու և կանոնաւորելու նպատակին կը ձկտէր. խոկ միւս կողմէն ալ թատերը բարձրացնելու խանգարիչ նորաբանութեանց դէմ, զոր կարելի իրաւամբ Բէչըռէլի հետ՝ ժամանակիս հիւանդութիւնը անուանել. վասն զի այնքան անբնական է՝ որքան խեղաւսակական. այնքան մթագնիչ է մտաց, որքան երկդիմի է նշանակութեամբ բառնից։ Աւոր կատարեալ օրինակ են Ինտրայի՝ Անուշեանի տեսիլները (տես «Շիրակ» 1905)։

Ահա այս ուղղութիւնն և յատկութիւնը չանցած են ունենալ ընդհանրապէս նաեւ Մխիթարեան գրողները՝ Զամչեանէն սկսեալ։ Սոքա գրաբարէն՝ իրաւ է՝ որ պատշաճ փոխառութիւններ կ'ընեն, և գոյէ ուրիշներէն աւելի, սակայն առանց աշ-

խարհաբարի կազմութեանը վերաբերու և անհասկանալի ըլլալու։ Ասոնք ալ ընտրանք բառեր կ'առնուն կը գործածեն, բայց առանց ասոնց ասկարանելու։ Վասն զի ասկարանութիւնը բառերու մէջ չի կայանար, այլ գաղափարաց տղայական և գռեհիկ արտայայտութեանը։

Մխիթարեանց աշխարհաբարին մէջ իրրեւ թերութիւններ նկատուած են նախդիրներու և գրաբար ինչ ինչ ոճերու պատշաճ գործածութիւնքը։ Սակայն այսպիսի կէրպաւութիւններ, որ մեր նախնեաց ասկարանի և նոյն իսկ արդի գրագէտներու մէջ եւս պակաս չեն, ոչ միայն աշխարհաբարին չեն վերաբերիր, այլ նոյն իսկ անոր անորոշութիւնները որոշելու, տգիտութիւնը հարստացնելու ու միակերպութիւնը կորսելու կը ծառայեն։ Օրինակի տպագիր, այս նախադասութիւններէն մին աւելի ճիշդ է և հասկնալի, ուսումնական՝ «Պետրոսը Պօղոսին ձեռնց», կամ տառասիրական՝ «Պետրոսը Պօղոսը ձեռնց», թէ Մխիթարեանի ոճով ըսել՝ «Պետրոսը ձեռնց զՊօղոս»։ Տարակոյս չկայ թէ քերականօրէն՝ վերջինը, զի Աշխէնն եւս այսօր կ'ըսէ. «Պետուն զիս ձեռնց», «Գիրզոր ձեռնց զիմ տղէն», և այլն։ Հասարինք որ մէկը բոյս մը յիշելէն վերջ՝ միջանկեալ նախադասութեամբ ըսէր բան տասերորական աշխարհաբարին՝ թէ «կը գտնուի Ասիա», կամ մի ուրիշ բանի համար ըսէր թէ՝ «էր այն ժամանակ Աղեքսանդրիա»։ Արդ՝ այս անորոշ և երկդիմի բացատրութիւններէն ասոր մէկը կարող է առնուլ Ասիա, Աղեքսանդրիա նաեւ իրրեւ տէր բայի։ Ասոր այսպիսի երկդիմութիւններ վերցնելու և կանոնաւոր ընելու համար բարբառն՝ իրաւամբ կը պահանջէ Մխիթարեանն — և այն առանց աշխարհաբարի դէմ մեղանչելու — որ գրուի՝ «կը գտնուի յԱսիա», «էր այն ժամանակ յԱղեքսանդրիա», և այլն։ Այսպէս փոխանակ գրելու անորոշաբար՝ «տպուած է Պօլիս», «օրէ օր», «մինչեւ այժմ», «որ ինձ վրայ զարմանան, ու ինձ գովեն», «դպրոցը կտրեց իր կապերը եկեղեցւոյ հետ», «հարկաւորապէս», «իրեանց հօրերի (առկհ. իրենց հօրերնուն)», և այլն, պիտ'որ գրուի՝ «տպուած է ի Պոլիս», «օրէ յօր», «մինչեւ ցայժմ», «որ իմ վրաս զարմանան, որ ինձ գովեն», «դպրոցը կտրեց եկեղեցւոյ հետ ուժնգած իր կապերը», «ի հարկէ» (և ոչ թէ՝ ի հարկ է, ինչպէս կը գրեն ուսումնահայերէն ամանք), «իրենց հարց կամ հօրը», և այլն։

Շնորհիւ այս ուղղութեան է, կրնանք ըսել, որ այսօր թէ՛ ուսումնասէր և թէ՛ տասկահասէր էն տասարկ աշխարհաբարեաններու գրուածոց մէջ խիստ գտած և սովորական դարձած են նախդիրներով, նախադրութիւններով և գրաբարի վրայ հիմնուած ոճերով բազմաթիւ կէրպաւութիւններ [1], որոնց թիւը Պօլսի և արեւելեան գաւառաբարբառներու մէջ խիստ ցանցառ էր երբեմն։ Այսպիսի կէրպաւութիւններ, որ լեզուի միակերպութիւնը կը կտրեն և տղայական ասկաւարան՝ բայց չարաշնակ լայնանութիւնը՝ ներդաշնակութեան կը փոխեն, և լեզուն կոկիկ և կտրուկ կ'ընեն։ Եւ որովհետեւ ամենէն աւելի Մխիթարեան աշխարհաբարին մէջ կը տեսնուին այնպիսիք՝ բիւրաւոր ձեւերով և գունոց խառնուրդով, հետեւաբար՝ ըստ այնմ լեզուն եւս բազմազան կը նկարեն և կ'ընեն դիւրաթեք և ճոխ։ Այս ալ ըսենք՝ որ արձակէն աւելի չափական գրութեանց մէջ հարկաւոր են այդպիսի կէրպաւութիւնք. զի անոմ են և մեծ դիւրութիւններ կ'ընծայեն՝ տողերու ճիշդ յօրինման և ներդաշնակութեան համար։ Այսպէս ըրած է Ռոխլովի Ազատաց ճարտար թարգմանիչը։

Իսկ նորաբանութեանց (néologisme) և գրաւոռական բառից և պէտքէս առութեանց կողմանէ — պէտք է խոստովանիլ — որ իր գրաւոր տասկահայ տղայքին աշ-

---

1. Օրինակի տպագիր, դէպի գործ, դէպ ի յառաջ, ըստ այսմ, ըստ խս, ըստ որում, ի դէպ, ի նկատի առնելով կամ առած, յամենայն դէպս, առ խս, առ այս, առ ի՞նչ, յայսմ, յայնմ, գայս, գայն, գինք, գիս, գանի, զաւկինք, մինչեւ անգամ, ցայսօր, ցայժմ, առհասարակ, փոքր առ փոքր, առ ի չգոյէ, օր ըստ օրէ, ի հեռաստանէ, ի ստորեւ, ի ներքոյ, յայլ եւ յայնկակ, հետ գնետ, յետ որոյ, յետ այնորիկ, յոմանց, վերեւն ի վայր, ի գոչ, խիտ առ խիտ, բառ առ բառ, վեր կամ վայր ի վերոյ, մի ըստ միոջէ, միկեն ի միկ, հոգւոյ ընդ հոգւոյ, դէմ ընդ դէմ, ընդհակառակն, ի շուր հանդիսականաց, մուբն ի լոյս, մերկ ի մօրէ, և այլ հազարաւորներ, զորս աւելորդ կը համարիմ մէջ բերել։ Տխմարութիւն է կամաւոր արգելք դնել այսպիսի գործածութեանց առջեւ, որոնք եւրոպական նոր լեզուներուն մէջ առհասարակ անհրաժեշտ համարուած են. զի լաւին մայր լեզուի անհնազանդ նախադասութիւններն իսկ, որքա նախդրիւ կը գրեն՝ բացայայտ ընելու համար գրութիւնը. իսկ մերոնք զանոնք ջնջելով ընդհակառակն՝ կ'ուզեն անորոշութեան դասապարտել զայն։

թարհարարին չափ հարուստ չէ։ Եւ այս բանիս պատճառն են հետեւեալները։ Նախ՝ որ Մխիթարեանք իրենց ազգային գրողներուն պէս մեկուկիսով և մի միայն աշխարհաբարը մշակելու առիթ ունեցած չեն, այլ միաժամանակ ստիպուած էին նաեւ գրաբար լեզուն մշակել. չուզելով մէկ կողմանէ իրենց այդ ժեռնաշնորհը կորանցնել, և միւս կողմէն ալ ուզելով ժամանակ վատ պահել մեր նախնեաց մեծագործ լեզուի այդ վաստրոնը՝ ազգայնոց և օտարաց ուսուցչութեան և ուսումնասիրութեան համար։ Ք. Խիթարով անոնցմէ՝ որպէս եւրոպական լեզուներուն յառաջ և Հայերէնի ոգւոյն հակառակ բաներէ։ Այս պատճառաւ է՝ որ Մխիթարեան միջին գրողներէն ոմանց — մանաւանդ պէս անոնց՝ որ մերթ աշխարհիկ և մերթ գրաբար լեզուով երկասիրել ուզած են — աշխարհաբարի մէջ ոչ միայն գրալի յառաջադիմութիւն չի տեսնուիր, այլ նոյն իսկ տեսակ մը յետադիմութիւն, զոր, եթէ կը նկատուի ինձ, պիտի կոչեմ գրաբանութիւն [1]։ Մինչդեռ անոնք՝ որ շարունակեցին միշտ աշխարհաբար երկասիրել, աւելի կը համապատասխանեն՝ մէկ հրատարակութենէ ցմիւսն՝ եղած ժամանակի պահանջին։

Դարձեալ՝ Մխիթարեան քոյրերէն ճեմարանները թէպետեւ ունեցած են նոյնպէս հոյոց այլ և այլ գաւառացիներէ անդամակիցներ, բայց նոքա մեծաւ մասամբ համակերպելու համար իրենց ճեմարաններուն՝ աւելի Կ. Պոլսոյ սիրող աշխարհաբարով կը առիպուէին գրել։ Բայց և այնպէս՝ զանց ըրած չեն իրենց բնագաւառներու կենդանի բարբառներէն իսկ բառեր [2] և նորանոր առութիւններ ի գործ ածել մեծ կամ փոքր գրուածոց մէջ։

Սակայն 1885 Թուականէն ի վեր, երբ աշխարհաբար լեզուով գրելն ալ կ'ընդհանրանայր Մխիթարեանց մէջ, կամ դէթ կը ձգտէր դէպ ի ընդհանրացումը, այնուհետեւ — ի բաց առեալ Հ. Ալիշանի Միսռաւլը, Այրարատ ու Միսակաւլը, Բազմավէպ «Պատեհոյ և պիտութեանց բառարանն» [3] և նախնեաց հին գործերը — այլք առհասարակ աշխարհիկ լեզուով կը հրատարակէին։ Իսկ 1890 Թուականէն ասդին նորաբանութիւնն եւս մուտ կը գտնէր — ի հարկէ իր պատշաճ չափին մէջ — գրեթէ բոլոր արդի գրողներուն քով. որոնցմէ գոգցես առկուսով կը գգուչանային՝ մինչեւ վերջը՝ Մխիթարեան միջին գրողները։ Ըստի չնորհիւ այդ կրկին ուղղութեանց՝ Մխիթարեան արդի գրողներու լեզուն ոչ միայն նոր և անակնկալ քայլեր կ'առնէր, միշտ յառաջախաղաց ընթացքով մի, այլ նոյն իսկ կը կռճկուէր իր տաճկահայ քոյր աշխարհաբարին հետ. մանաւանդ թէ չանգեր կ'ընէր կռճկել զայս նաեւ ռուսահայ գրականութեան հետ՝ եթէ ոչ քերականութեամբ, այլ գէթ հանրամատչելի լեզու մը գործածելով։ Եւ այս եղանակիս հասու չլինելով ոմանք՝ այլ ընդ այլոյ խորհրդածութիւններ եւս ըրին։ Թէպէտ և վիպասանական և հրապարակախօսական նիւթերու մէջ՝ անոնց հետ անբաղդատ, սակայն իր քննադատական, գիտնական, լեզուաքննական, բանասիրական և գեղարուեստական ասպարէզի հրատարակութիւններով կրնայ ըսուիլ՝ որ երկուքէն իսկ աւելի ուշագրաւ եղաւ. վերջին երկոտասաներեակին մէջ ազգային մամուլը — սիրող ամայութեան ժամանակ իսկ — անոնցմով՝ իրրեւ ովասիսներով՝ կ'անցընէր իր պասուքը, և կը գուարթացնէր գրական տխուր կացութիւնը։ Մեր աշխարհաբար նոր գրականութեան բամնին մէջ՝ անշուշտ գեղեցիկ նորութիւն մը պիտի համարուի՝ բաց

---

1. Իրաւցընէ այս պատկերը կը ներկայացընեն մեզ Հ. Ղեւոնդ Ալիշանի վերջին հրատարակութիւնները — մանաւանդ Հայապատումը — բաղդատմամբ Յուշիկներուն և Նահապետի երգերուն, Հ. Ալբանեանի՝ իր հանդիսական աշխարհի Թարգմանութեան լեզուն՝ համեմատութեամբ "Բազմավէպ,,ի մէջ հրատարակած ուսումնական յօդուածներուն։ Այսպէս է և Նորայր Բիւզանդացւոյ Կրկեսն ուսումնասիրութեան և Սուքիաս վարդապետ Պարոնեանի վերջին հրատարակութեանց լեզուն՝ բաղդատմամբ 1876 Թուականէն յառաջ գործածածին։

2. Այս կարգէս են Ս. Պազարու վանքի երբեմնի աշակերտ Դաւիթ Ադնջեցւոյ "Բազմավէպ,, մէջ (տես 1867 տարի, եր. 307, և 1868, եր. 129) հրատարակած երկու գեղեցիկ յօդուածները. որոնց միոյն վերնագիրն է Հանդէս հնախանձաց՝ Մուշ գաւառին մէջ, և միւսին՝ Համբարձման տօնին հանդէսը Մուշ գաւառին մէջ։ Երկուքին մէջ եւս կան բազմաթիւ գաւառական ընտիր բառեր և բացատրութիւններ։

3. Այս գրուածքս՝ գրաբար ըլլալով հանդերձ՝ հազարաւոր նորակերտ, և քաջայարմար բառերու կազմութեամբը մեծապէս նպաստեցին աշխարհաբարի հարստանալուն։ Միայն Ախտռանի վերջը գրուած բառամութեամբը մեծագոյն մասը 660ի չափ նոր բառեր, մեծաւնուն հեղինակի հասկացողութեան կաղապարովը յուցակը կը ներկայացնէ մեզ ձուլուած և թափուած։

յայլոց նաեւ Գանձէի Աստուածային կառավարչական ամբողջական Թարգմանութիւնը՝ նոյն իսկ իրրեւ գժուարամեռնարկելի նախագործ՝ աշխարհաբար լեզուով. կը յուսանք թէ քիչ առենէն պիտի յաջորդէ առաջ — ուրիշ Թարգմանչի մը ձեռքով — նաեւ Տաղտկի Երուսաղէմ ազատեալ դիւցազներգութիւնը՝ սպասուած յաջողութիւններով:

Մխիթարեան աշխարհաբար գրականութեան յառաջադիմութեան գործօններէն և մին չեւ այսօր կրած պղեւայլ կերպարանափոխութիւնքը յաւ կերպով գուշա ցուցակեցնելու համար՝ տարակոյս չկայ՝ որ հարկաւոր էին նախ իրենց նշանաւոր գրողներու և գրուածոց քննական և բանասիրական ուսումնասիրութիւնքը: Ը. Գնել 1843 թուականէն սկսեալ մինչեւ այսօր հրատարակուած գործերէն իսկ մի մի նմոյշ, ինչպէս գրինք նախկին շրջանին մէջ եղածներէն: Գ. Հաղորդակ ժամանակ ժամանակ թէ մերոնց և թէ ազգայնոց ձեռքով կատարուած մի և նոյն եւրոպական բնագրոց — օրինակի գործոյ Քոխլովի առակաց, Մագդալինէի, Պօղ և Վիրգինէի, Եղեմպսի, և այլն, կատարուած Թարգմանութիւնները — . առկայն այս բանիս համար առանձին գրուած մի հարկաւոր էր:

Իսկ ասկէց վերջ յոյս ունինք՝ թէ աւելի հակայ, աւելի երագ և յաղթական քայլեր պիտի առնէ այն: Եւ մեր յոյսը հաստատուած է հետեւեալ իրականութեանց վրայ. նախ՝ որ այժմ Մխիթարեանք եւս ժամանակի և հանգրութեան պահանջին համեմատ՝ աշխարհաբարի վրայ կեդրոնացուցած են իրենց ուշադրութիւնը. Ը. Միաբանութիւնը կը տեսանէ թէ՛ իր կեդրոնին մէջ և թէ՛ դուրսը լեզուագիտական և գրական ճաշակով յառաջադիմած Թարմ այժեր. որոնց մի մասն արդէն ծանօթ են ոչ միայն հայ հասարակութեան, այլ և Եւրոպացւոց՝ իրենց հրատարակած գործերով: Իսկ միւս մասը թէեւ առանձնական մեծ գործեր դեռ հրատարակած չեն, բայց յաւ սեղեակ են պզտիկ հրատարակութիւններուն և անոնց ընթացիկ լեզուին հետ. այլ և մերձաւոր ապագայում յորինելի գործոց՝ մտաւորական առաջձներ եւս հայթհայթած, ուսումնական և գեղեցկագիտական նոր ոճով:

Լեզուական միութիւնն՝ այսօր աւելի քան երբէք՝ ակնհարեւ կը տեսնուի Թրքահայ գրականութեան հետ. գի ժամանակաւ գործածուած նախդիրներն և հոդիւներն իսկ ընդհանրապէս դուրս Թողուած են, և երբեմն ըստ տեղւոյն և պատշաճի միայն գործածուած: Ուրեմն մինչեւ հիմայ ըսածներէս կը տեսնուի, որ Մխիթարեանք ոչ միայն գուգընթացաբար ակնկալներ ու յառաջացներ են աշխարհաբար գրականութեան մէջ Արեւմտեանին և Արեւելեանին, այլ և առանց համար օրինակելի և կանոնաւոր գարի մ՚եւս տուեր են: Եւ թէ Արեւմտեան գրականութիւնը՝ Մխիթարեան երկու ճիւղերն ի միասին առած՝ բաղմօք կը գերազանցէ Արեւելեանը:

Աւշադիր բաւական կը համարինք կնքել այն գլուխը, յուսալով որ յաջորդն՝ ուրիշ տեսակէտերով լուսագոյն եւս պիտի ամբողջացնէ և որակէ Մխիթարեան աշխարհաբար գրականութիւնը:

ԳԼՈՒԽ ԺԱ

Թատերական ներկայացումն ու անոր վեհագոյն նպատակը. — Մխիթարեանք հիմնադիրն ու տարածող ազգային ժամանակակից թատերաբեմին. — Թատերախաղեր յօրինող, գծողք ներկայացնող և խթանող Մխիթարեան վարդապետները. — Մխիթարեան թատրոնական ներկայացումներու սկզբնաւորութիւնը՝ Մ. Պէշիքթաշլեանէն 70–80 տարի յառաջ. — Մխիթարեան ներկայացումներու նախկին վիճակը, տեղին ու պատրաստութիւնները. — Մխիթարեան ներկայացումներու եղանակը, ներկայացուղներն ու հանդիսականք. — Կարգադիր վարիչն ու Մեկնեաները. — Մխիթարեան ներկայացումներու տեսակները. — Ներկայացումներու անուանքը կամ նիւթերն՝ իրենց ներկայացման և յօրինման տարբերութիւն և բովանդակութեամբը. — Անոնց նմոյշներ. — Վերապատութիւնք և եզրակացութիւն:

ԱՏԵՐԱԿԱՆ ներկայացումն՝ եթէ հանուպարտ համարինք զէպ ի գեղեցիկ դպրութիւնն և գաղափարակութիւնը, և եթէ նկարագիր ազնուին և վսեմին, առաքինութեան կամ մեղութեան, ի սկզբան է վեր դիւթական ազդեցութիւն ունեցեր է, բայց անկեալ ազգերէն ունի՝ քաղաքակրթուած ժողովուրդներու վրայ: Մեր նպատակէն դուրս է՝ կանգ առնուլ անոր ծագման և այլ և այլ ժամանակներ կրած կերպարանափոխութիւններու պատմութեան վրայ: Թէպէտ և բատրոնը կամ թէատրոն անուններ միշտ նոյնութեամբ պահուած է մինչեւ այսօր, սակայն թատեր վրայ ներկայացուած խաղերուն հետ՝ անոնց նպատակն ու գործած արդիւնքն իսկ բոլորովին տարբեր եղած են այլ և այլ ժամանակաց մէջ: Պերիկլեան գարու նշանաւոր Աթէնքը կը համեմատէր՝ իր Սոփոկլէսին հետ՝ Միջնադարեայ՝ — Աթենասյ կամ իմաստութեան հովանոյն ներքեւ — հանճարոյ և յառաջադիմութեան հրաշալեօքը բերկրելու և բարձրանալու համար. մինչդեռ ասդին Նեռններու, Կալիգուլաներու և Մարկոս Աւրելիանոսներու դիւռաւորական և գեղխ Հռոմը՝ խեղճ գերիներն և անմեղ քրիստոնեաները կոտորելի մէջ զազանամարտի բռնելով՝ անգութ Հերայի պէս անոնց տանջանքներուն ու արիւնհեղութեամբը կը զուարճանար: Գ. և Ե դարու քրիստոնեայ Բիւզանդիան, Անտիոք և ասիական ուրիշ քաղաքներ նոյն թատերախաղերով և գուսաններով կը զուարճանային. սակայն այդ թատերախաղերն իսկ ոչ այլ ինչ էին՝ բայց եթէ լկտի և խնդիչ խեղկատակութիւններ, և կամ առանց, բերան և թշնամանալից երգիծանքներ — բան որում կը նկատրդին մեզ Յովհ. Ոսկեբերան, Օգոստինոս և Յովհ. Մանդակունի՝ անոնց դէմ գրած չքնաղ ճառերով և հոգեշահութեամբ: Հետեւաբար՝ գուրկ էին այն կրթիչ բարեշինող ճառերով և հոգեշահութեամբ: Հետեւաբար՝ գուրկ էին այն կրթիչ բարեմասնութիւններէն, որոնք վերապահուած էին եւրոպական նոր քաղաքակրթութեան, այսինքն՝ ընել զայն բան կարելոյն դեղեցկապատուական, ազնիւ, բարի և բիւր տեսակետերով օգտակար:

Յերաւի՝ հատարակութիւնն՝ որ կանգնած է — իրրեւ գլուխ գործոց արուեստից — անցելոյն և ապագային մէջ, ունի Կանդիլեակի և Սապէլի երազած զգայարանքան կան իմաստասիրութեան Մարպարձանին չատ աւելի բնաժին և գերազանց բաներ: Ժամանակի մէն մի ալիք՝ որ կը մղէ կը հեռացնէ գինքն՝ իր անցեալէն, և կը վարէ ան նի բանութեամբ դէպ յանձանօթ ապագան, չի կրնար արգիլել գինքը՝ որ անցեալն ալ ապագան ալ իր ներկայ կեանքի պիտոյքներուն և պահանջին յարմարցնէ: Նա՝ իր

հոգեբանական մանրաչխարհն ուելի ճեծցնելու և ընդարձակելու, իր գեղեցիկ գործ-
Թիւններէ ուելի գործացնելու, և զուարճալին՝ վսանգաւոր և օգտակար և հրահան-
գիչ ընելու համար, գիտցաւ հետզհետէ հոգեբանական նոր ուսումնասիրութեամբ
ու բանաստեղծութեան առեղծագործութիւններով բեմին վրայ կոչել անցեալ ժամանակի
հակայ առուներները. մարմին, հոգի և կեանք տալ անոնց, և՛ խօսիլ և գործել: Ու այս
ամենայն այնքան բնական գոյներով, այնպիսի ազդեցիկ բարբառով և շարժուածքներով,
որ կարծէք թէ առուգիւ բուն հին դիւցազուններն ըլլային, որ նորած կը խօսին և կը
շնչեն ներկայ սերունդին՝ անցեալ ժամանակաց արուեստներն և առաքինութիւնները. և
առելութիւն կ՚ազդեն դէպ ի վատութիւնը, դէպ ի մեծութիւնները: Այս այսպիսի
ներկայացումներու գօրեղ ազդեցութեան ներքեւ է՝ որ կը յուզուի ու կը գոլոփի հան-
դիսատես հասարակութիւնը, որ կ՚ապնուանան անոր զգացումները, կը զօրանան
գեղեցկագիտական ճաշակն և կրից կարեկցութիւնները: Ու անցեալին հրահանգիչ օրի-
նակներու նմանութեամբ է՝ որ կը պատրաստին հասարակութեան համար ազգայ
գործիչներ՝ ի անձնուիրութեամբ. մանաւանդ թէ առաջ է՝ որ հետաքր ազգան ան-
գամ կը կարկառէ ներկային իր անծանօթ ապը, կ՚առնու և կու տայ քաղաքական
գեղեցիկ յոյսեր, մտաքր ու բարոյական սերմաններ: Մէկ խօսքով՝ հետաքր արա-
բուածներն՝ իրր մերձաւոր ներկայացնելու, և ներկային ալ՝ ազգային համար հրահան-
գիչ ընելու այս գիտաքր միջոցին մէջն է՝ որ կ՚արուսեղծի մարդկային հանճարի և
գիտութեան ամենօգտակար հակադրեցութիւնը՝ նոյն խակ անցեալին և ազգային
համար:

Ազգ՝ Մխիթարեանք որ կը գանուէին եւրոպական քաղաքակրթութեան գեղեց-
կագիտութեան կենդրոնին՝ Վսալիոյ մէջ. որ մշակած էին երկիւղ, այսինքն է՝ գրա-
բար և աշխարհաբար լեզուն ու գրականութիւնը. որ կը պատրաստէին հայ մանկտւոյն
դաստիարակութեամբ, և այնքան սիրոյ էին գեղեցիկ գրութեանց և քարոզուսու-
թեան. մէկ խօսքով՝ որ տեսած էին Եւրոպայում Թատերական ներկայացումներ և
խորասէս կրած անոնց Թոյած լաւ ազդեցութիւնները, չէին կրնար գանց ընել գրա-
կան և կրթական այդ ճիւղը: Վսան գի Թատերական ներկայացումներէն գատաշատրար
յատուկ գասիք միտքներէն ուելի՝ ճիշդ գիտակցութիւն ունէին անոնց խոհական
օգտակարութեանցը: Դարձեալ՝ անոնք որ երիտասարդական խանդավառ հասակին
Թոյած լրած էին իրենց հայրենիքը, ընտանիքը, բայց անոնց բոլոր յիշատակներով
կը ճնճղէին միշտ սուրբ ապին մէջ. անոնք՝ որ Վսլոյ աշխարհի հին գատմական
անցից հետ՝ միջտիս Տիգրաններու, Արտաւազդներու, Արտաչէսներու, Տրդատ-
ներու, Լուսաւորիչներու, Արշակներու, Ներսէսներու, Վարդաններու և Վահաննե-
ներու և ուրիշ նախնական անձնուիրութիւններու կենդանի յիշատակօքը կը ներչըն-
չուէին. վերջապէս այն փորձառու և ակնարկ քարոզիչներն՝ որ աշխարհի բիւր տե-
սակ վիշտերէն և արկածներէն անցած՝ կու գային կ՚ամփոփուէին վանական անդոր-
բութեան մէջ մէկ կողմէն, և միւս կողմէն ալ երիտասարդներն՝ որ կը պատրաս-
տուէին նեռուելու այդ վսակրութեան բովերու մէջ. որ կ՚ուզէին վարքին հետ՝
միացնել վարդապետութիւնը, և վարդապետութեան ձայնը ընտիր արուեստութեամբ
և շարժուածքով ևս գան գիտ ուելի ազդու ընել, կարեւոր և յոյժ կարեւոր կը
տեսնէին Թատերական ներկայացումները: Արդէհետ ասոնք բուսակրութիւն կու տային
իրենց՝ յիշուած ամէն կէտերով, և թէ այդ կէտերն էին՝ իրր մէկ մէկ բանաւոր
պատճառներ, որ կը մղէին նոյն խակ ասուեսարուեստութեան և խնամասիրութեամբ
վարդապետները՝ նախիրնու իրենց գրչէն ու ատենէն՝ երբեմն գրատար և երբեմն աշ-
խարհիկ լեզուով ազերգութիւններ և կատակերգութիւններ շարադրելու, նոյն խակ
իրենց բատմական գրուածներուն մէջ, նոյն խակ իրենց գատախտակած տեսիլներու
համար:

Նշանաւոր են և մանաւոր յիշատակութեան արժանի այսպիսի խոհեր երիտա-
սարդաց և Թարգմանարար յօրինուածոց մէջ Հ. Եղիա Ալամդալեան, Հ. Գ. Ինճիճեան,
Հ. Գաբրիել Ալեմիքեան, Հ. Մանուէլ Զամջամեան, Հ. Խդնատիոս Փափազեան,
Հ. Ամեն Բագրատունի, Հ. Մխ. Չէմկէրկճեան, Հ. Եփրեմ Ակթեան, Հ. Կա-
րապետ Եսայեան, Հ. Եղիա Թոմաճանեան, Հ. Սահակ Պրտեան, Հ. Անանիա Ձէ-
յտեան, Հ. Ազեքսանդր Պէշիքթաշլեան, Հ. Գէորգ Հիւրմիւզեան, Հ. Մինաս Բժըշ-
կեան և Հ. Պետրոս Մինասեան, և այլք:

Սոքա ոչ միայն կ'ներկայանային, այլ և Թատերասիրեմին վրայ իսկ տեսարաններով ներկայացնել կու տային գանոնք՝ իրենց աշակերտներուն, պարտ ու պատշաճ տարազովն ու արդուզարդով։ Եւ ներկայացնել կու տային այնպիսի ժամանակաց մէջ, երբ դեռ ապրը Թատրոնի զգեստեղ չունէր, և ներկեցականները հետ՝ աշխարհականներն իսկ այսօրուան բոլորովին տարբեր աչքով կը նայէին Թատրոնի վրայ և կը խնդային, առանց գիտակցութիւն ունենալու անոր մասնագիտական օգտակարութեանց վրայ. մանաւանդ թէ խնդ Արեւելքն ինքնին Թատր մի կը ներկայանար իր քաղաքական և կրօնական բարքովով կեանքովն ու արիւնոտիկ սովորութիւններով։

Այդպիսի Թատրոնի պատմութեան մասին խօսք պրիտ բոլոր հրապարակախօսներն և տաղանդի պրոֆէսներ՝ անոր ակզբնաւորութիւնը Մ. Պէշիքթաշլեանին և Ար. Շէքխեանին կը վերագրեն. սակայն այս սխալ ենթադրութիւն մ'է, և մենք կարող ենք հաստատել՝ որ Պէշիքթաշլեան դեռ չի ծնած — այսինքն է՝ անկէ 70–80 տարի յառաջ — Ս. Պատար փանքամ գոյութիւն ունէին Թատերական ներկայացումները։ Եւ ունէին պրիտ ձիշդ այնպես, և գոյ թէ ինչ ինչ կէտերով աւելի կատարեալ կերպով՝ քան ինչ որ 50ական Թատերանին միջ կը տեսնէին է Ս. Պոլիս և է Զմիւռնիա, Պէշիքթաշլեանի և Արտ. Շէքխեանի ձեռքով։ Եւ բառնուտ տարագ են այն հայերէն, տաճկերէն և խառներէն հարիւրաւոր անուանք Ներկութիւնների և կատակերգութիւններու, զորս այս տաղիս աչքէ անցուցինք։ Եւ այդ խաղերը պրիտ ամէնքն ևս կրկին և կրկին ներկայացուած են ժամանակին, է հարկէ միշտ նորանոր բարեփոխութիւններով։

Ներկայացումները սկսած են նախ և յառաջ հոգեւորական նիւթերով, այսինքն՝ Ծննդեան և Յայտնութեան, Ս. Աստիսանոսի և ուրիշ սրոց տաղիս։ Եւ կը կատարէին չէնցով, զոր է սկզբան Վարդապետացը կը նկարէին և կը պատրաստէին։ Ներկայացման նիւթերն է սկզբան կ'առնուէին Ս. Գրքէն և սրոց Վարքերէն. և ապա հետ գնետ կը զարգանային ազգային և միջազգային պատմութեան վերաբերեալ նշանաւոր դէպքերով ու վէպերով։ Ներկայացումներէն փոքրագոյնը կատարուած է երեք Հանդիսականի կամ Վարուժանքի, և 7–10 Տետրանոցների կամ փորագրութեանց. իսկ մեծագոյնը՝ չորսէն հինգ Վարուժանքի և 12–40 Տետրանոցների։ Ներկայացողը կամ Դերասանները էին ընդհանրապէս ժանաց Ներքնակները և Վարժապետը։ Առաջիններն էին 14–18 տարեկան պատանիներ. իսկ վերջիններն՝ 18–25, և մինչեւ անգամ 30 տարեկ ասեղ և զարգացած երիտասարդներ, որոնք այն ժամանակի տարազութեան համեմատ՝ քաղաքավարի ձեռնադրուելէն վերջ իսկ բարձրագոյն ուսմանց ընթացքն աւարտելու համար՝ դեռ Ներքնաձայնարանի մէջ կը բնակէին, բայց երբեմն յառաջ վերակացուին կամ ազգի ներքեւ։

Ներկայացման տեղին կամ Թատերասիրեմն էր երբեմն տեզանաւորը, և սովորաբար Ներքնաձայնարանի տարին ընդարձակ դասարանը՝ իր կից մեծ սենեակով. ուր դերասանք կը զգեստաւորուէին՝ բեմին վրայ երեւելու, և խաղին ժամանակ երբեմն հետաքրքրական ծռտակաց նուագները լսելու։ Իսկ դասարանի մեծ կէսն — ինչպէս և անոր հանդիսական սրահը — կը ծառայէր իբր հանդիսատես հանդիսականաց։ Հարուստ տրեւանան կտրէին վեներական գեղեցիկ ծաղիկներ՝ երբեմն իրեն ծիծիտուած ոսկիներով կը թեւատարէր հանդիսատեսին հետ, երբեմն ալ լուսեղ արծաթափայլ լուսով չորսուած՝ հիանալի տեսարան մը կը պարզէր անոր հանդէպ, նման մի ուրիշ աստեղապարդ երկնի։ Ուր և՝ ծաղկած քաղցր տարբ վանդիներն ու ձիներուն երգը մէկ կտրէին, ու միւս կողմէն ալ Վենետկոյ գանգտուածոյ բարձրէն խոր լռութեան մէջ հնչող ու զօրանդոյ ժամացոյցներու ձայնն ուելի խորհրդաւոր կ'ընէին երգոյ քաղցր պէչերները։

Ներկայացման պատրաստութիւնքը տեսնելէն վերջ՝ որ յառաջ կը տպուէր հրաւիրագիրն, և կը բաժնուէր հրաւիրելոց. ուր նշանակուած էր ընդհանրապէս ներացման օրը, ժամը, խաղին տեւքն և ներկայացուելու տասնեակած կեզծ անուանքը։ Խաղաժամն ալ կը տեւէր $1\frac{1}{2}-2$ ժամ։

---

1. Պատահանդ թէ Վանեցոց տեսակ ժամանակագրութեան մէկ ակնարկութիւնէն կը տեսնուի, թէ 1760 թուականէն յառաջ իսկ սկսած էր. պի այդ տարին կը գրէ այսպէս. «Ի բարեկենդանի տարուայ՝ Ներքնաձայք ոչ խաղացին ինչ խաղ առաջի Հասարակութեան, ոչ մեծ և ոչ փոքր». վասն զի ձախորդ դէպք մը հանդիպած էր ազգին։

Իբր նմոյշ կը դնենք հոս 1816*ին խազացուած ազբերգութեան մը տպագրուած յայտարարութիւնը.*

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆ

Նորընծայից վանաց Աբգոյն Պատարու ի Վենետիկ, ի Բարեկենդանի 1816 *տարւոյս.*

ի 15 *փետր. ժամ երեկոյեան* 6.

Մ· ԱՏՏԻՊԻՈՍ ՀՈՒԵԳՈՒՂՈՍ·

Ազբերգութիւն.

Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն .

Փառաւորեալն անուանց՝ որովք հռովմէականն երբեմն պանծացաւ պետութիւն, հնութեանն առ հասարակ զուգաձայնութեամբ նախամեծարն է միշտ վիճակեալ գահու ի պարս անդ՝ անուն Աստիղիոսի Հուեգուղոսի: Այն՝ որ ոչ զարիւն իւր միայն յօգուտ հայրենեացն ծախեաց և զբրտունս և զամենայն ջան, այլ և զիւրն չարադիպութիւն ի շահ նմին գիտաց վերաբերել:

Լի աւուրըք և արդեամբք վարեցաւ անբասխութեամբ գերի ի Կարքեդոն: Այս քաղաք իրրեւ զարհուրեալ ի բախտէ նախանձաւորին Հռովմայ հարկեցաւ խոնել հրեշտակութեամբ ընդ նմա ի խազապութիւն, և կամ գոնէ ի փոխանակութիւն գերութեանն, կամաց իւրեանց գործի աջողակ համարեցան Կարքեդոնացիք զՀուեգուղոս, որում ազատութիւն առաջի կայր ի հաստատել զաշխանցն: Ուստ որոյ ընդ լիբեացի պատգամաւորին առեալ արձակեն և գնա ի Հռովմ, պահանջեալ նախ երդուաւն ի նմանէ՝ զարձ առնել անդրէն ի կապանս իւր, եթէ ոչինչ յաջողացի:

Ընդ անակնկալ գալուստ Հուեգուղոսի՝ այնպէս ցնծութեամբ խայտաց Հռովմ, որպէս էր սխրութիւն ամացն հնգից՝ յորմէհետէ զկերութեան նորա առեալ էր զրօթ: Յապաւութիւն այսքանցդ դիւցազին ապաքէն թեթեւ էր յաչս նորա ամենայն պայման ծանր. սակայն Հուեգուղոս փոխանակ զանձին հայթհայթելոյ փրկութիւն, սիրով քաղաքակցացն և մեծ համբաւովն՝ զարձոյց զամենայն ի խորչեցուցանել գնոսա յընդունելութենէ խորամանգ զաշանցն թշնամանաց: Եւ համոզեալ գնոսա, առաջի ունելով զարտաւոյս որդւոց, զոհմակց ացապաչանս, զխախանձանս բարեկամաց, զձերակուսին և զհամօրէն ժողովրդեան, որ շուրջ խըռ-նեալ գնոսա՝ դուն գործէին խափանել գնա, զարձաւ՝ երկիւղած մնաց զուարթագին՝ յանչուշան մահ, ո ձեալը նմա ի Լիբիա՝ զուխտապահութեան հրաշատիպ օրինակ և գարհուրեան չեռնոցն Թոդեալ:

Ա ր գ ի ա ն . Զ ո ն ա ր ա ս , Կ ի կ ե ր ո ն , Ո վ ր ա տ իւ ս (*ազբերք*)

Դ ե ր ա ս ա ն ք

Հուեգուղոս:
Մանլիոս, Բղեալի:
Պոպղիոս;
Աստիղիոս. } *Որդիք Հուեգուղոսի:*

Լիկինիոս, Հազարապետ ժողովրդեան:
Ամիլկար, Հրէշտակ կարքեդոնացի:
Մագոն, Սպառնի կարքեդոնացի, ատրուկ Պոպղեայ

Տեսարանն է արուարձին Հռովմայ, շուրջ գուռաբաւն Պիլլոնայ:

Հանդիսաւոքեալ էին ընդհանրապէս վանքի վերանութիւնն և ազատուորք. բայց դարձեալ եւս անպակաս կը գտնուէին Վենետիկ գտնուող հայոցդի եկեղեցականներ, վանականներ, և արեւելքէն եկող նշանաւոր դիրք և անուն ունեցող ազգայիններ: Պատուելոյ, Բոլոնիա և Պիսա՝ Մխիթարեանց խնամակալութեան ներքեւ բժշկութեան պարապող հայ ուսանողներն, և Տրեսդեն, Լիվոռնոյի և Տրանսիլվանիոյ հայոցդի բարեկամներէն ամենք սովորութիւն ունէին Բարեկենդանի հանգստեան օրերը Վենետիկ կամ Ս· Ղազարոս վանքը գալ անցընել, զուարճանալու և խրախուսելու համար ներկայացումները:

Մխիթարեան ընդհանրական Աբբահայրը, կը պատէր առաջին կարգին մէջ-տեղ պատրաստած բազմութեան, իր շուրջը ունենալով պատուաւոր հիւրերն և Վեհին ակզարդ վարդապետները, իրենց գոտական կարգին կամ բաւ եւս յառաջ և յետ ուխտապրութեան և անդամակցութեան հաւասար: Ասոնք — որոնց մի մասին համար կրնանք ըսել՝ բուն առաջի Յայտնութեան հեղինակին՝ թէ « Եկած էին ի վշտաց մեծաց », և միւսն՝ որ վանքին մէջ պրաւ և գործով վաստակած և ազատնապէս ծերացած էին — կու տային հանդիսին պատկառանք մի և շուք: Իսկ առնցմէ վերջ կը բազմէին՝ նոյն կարգով՝ միջին և երիտասարդ վարդապետները. որոնք ոչ միայն առուցիչ և վարժապետ եղած էին, այլ և շունչ, հոգի և վաստակութիւն կը ներշնչէին գերակատարներուն: Ամենքն եւս ուշի կամ պակաս սերտ էին գեղեցիկ գպրութեանց.

ամէնքն իսկ իրարմէ առնլի կամ պակաս ճաշակն առած էին ճարտասանութեան, և կառաթնալ վիճակագրութիւն ունէին կառարուելիք դերի օգտակարութեանն և պահանջին։ Տխմարութիւն և ժլատութիւն տեղի չունէին հոն, այլ մանաւանդ թէ պետութեան, գեղարուեստից ու գաղափարի կառարնալ համերաշխութիւնը կը տիրէր առհասարակ։ Ամէնքը վարագուրի բացուելուն կը սպասէին, ուրախ և զուարթ։

Կարգագիր վարիչ մը կար, որուն հրամանին և ուղղութեան համաձայն՝ ամէն բան կը յարդարուէր և անչփոթ կ'ընթանար. վերակացուորք առհասարակ անոր պիտի հպատակէին անպայման։ Ան՝ կամ խաղացող դառս վերակացուն էր, կամ խաղին հեղինակն, և կամ ճաշակաւոր և ճարտար մէկը։ Հանդերձապետն ալ, յուշարարն (souffleur) ալ, երգչապետն ալ, վարագուրաձիգն և տեսարանադարձներն ալ իրենց առանձին բաժինն ունէին, և բան պայմանեալ ժամուն և վայրկենին՝ ամէն բան անվրէպ ճշդութեամբ պիտի կառարէին. այսինքն է՝ հագուեցնելն ու հանուիլը, վիճելն ու վիճաբան ընելը, երգել տալն ու լռեցնելը, տեսարաններ յարդարելն և փոխելը երբ պահէս. որպէս վի բան այնմ եւս՝ գոհութեան և գովութեան պատկը կարենային կարգել։ Ասոնց վի հեղինակաւոր վարդապետներուն մէջ կային նաեւ անաչառ քննիչներ և քննադատներ։

Վարագոյրը դեռ չբացուած՝ վերատեսիչներէն չնորհատարդ չնորհաբան մէկը — որ առաջաբար փոքրիկէն կ'ըլլար — կը կանգներ յանկարծ վարագուրին առջեւը և Թատերական վարչութեան կողմէն կ'արտասանէր ներկայացուելիք խաղին Յառաջաբանութիւնը, առանց անոր վերաբերեալ կարեւոր տեղեկութիւնները, մանաւանդ երբ նիւթը գլխովին նոր էր և չտեսուն անձանօթ։ Ան՝ յուշկապարիկի պէս կը տարէր հանդիսատեսաց ուշադրութիւնը՝ հետեւելու իրենց ընթացքին։ Այսպէս անոնց բուռն ծափահարութեանց մէջ կ'անհետանար գործեալ վարագուրին հետեւ, որ կը սկսէր չարժիլ և ծածանիլ՝ լեցուած մինոտաւրի մը կամ Թռչնանոսի մի պէս՝ նորութիւն մը և զուարթ կամ արտասվիլի տեսարան մը բանալու, և կամ ծափահարութեանց ճայթիւն մը յառաջ բերելու պատրաստ։

Ներկայացումներն ընդհանրապէս յոյժ յաջող կ'անցնէին. իսկ երբեմն երբեմն ահագին կ'ըլլար հանդիսականաց վրայ Թողած անոնց ազդեցութիւնը, բայց մանաւանդ արտասէս արցունքներնին։ Այնպէս՝ որ ծերունիները չկարենալով զսպել իրենց արտասուքը, յորդ արտասուօք կը Թանային իրենց այտերը. և ասանց տեսութենէն երիտասարդներն իսկ խորապէս կը յուզուէին։ Պահ մը կը տիրէր լռութիւն ու անուշ տիրութիւն մը ամէնուն դիմաց վրայ, քան որում կը հազորդէ վանաց օրագրութիւնը։ Իսկ այդ տիրութեան ընդհատ ազդեցութիւնը փարատելու կամ չափաւորելու համար՝ Կառավի անվիջապէս վերջ կը խոստացուէր մի մի կատակերգութիւն կամ զաւեշտ եւս, յար և նման այժմեան առօրութեան։ Ազգս զուարճացուցիչ ըլլալէն զատ՝ յոյժ հաճոյ եւս կ'անցնէին. վասն զի կամ Հայոց գաւառական բարբառով մի, կամ կ. Պոլսի առվակօրէնով համեմատած էին. որ բուն հայրենի ժողովուրդը, Արեւելքը կը յիշեցնէր մեծին և պզտիկին. հետաքր ու հմայիչ Արեւելքը։

Կատակերգութեանց և զաւեշտներու նիւթերն ընդհանրապէս արեւելեան կեանքէն առնուած էին, և ժամանակակից դէպքերէն. բայց երբեմն երբեմն ալ միջազգային էին՝ եւրոպականէն հայացուած։ Եւ նպատակ ունէին՝ անոնցմով պժգալի ընել հանդիսականաց, և մանաւանդ ազգայոց, ասիական և արեւմտեայ վարքի և բարքի ապէս և ապեղ կողմերը, և ազգին մէջ տիրող թերութիւնները, որոնք այլազգեաց հետ ունեցած յարաբերութեանց և անկրթութեան արդիւնք էին։ Եւ այս պատճառաւ է՝ որ անոնց մէջ գիտմամբ ներմուծուած են և՛ Յոյներ, Եւրոպացիք, Հրեաներ և Տաճիկներ։ Իսկ միւս կողմէն ալ կը ջանացուէր ուսուցանել հանճար, ճարտարութիւն, նա մանաւանդ մարդավայելուչ ու քրիստոնէական առաքինութիւններ։ Սակայն Գրքէն և արդի վարքերէն ձեւացուցած խաղերով՝ նպատակ ունէին արծարծել և տարածանել հաւատքն և առաւետպաշտութիւնը, գովալի և ազգու օրինակներով։ Իսկ թէ արդիւնք կը յաջողէին այս բանիս մէջ դերակատարք՝ անկէ իսկ յայտնի է, զի հոգևոր ատենն և ճարտար քարոզիչներէն մին՝ Հ. Կարապետ Մարտիրոսեան՝ այդ տեսակ ներկայացումներէն միոյն — զոր կեսոյ պիտի տեսնենք — ներկայ գտնուած ժամանակ, գոչած էր ի լուր ամենեցուն, թէ ասան պերճախօս քարոզներ՝ չեն կարող այսպիսի անոյշ և ազգու ազդեցութիւններ ներգործել մարդուս հոգւոյն մէջ։ Եւ ուրիշ

Հարցասիրտ մ'ոչ կը կ'ուելցնէր, թէ Հռոմի չուտ ներկայացուիներ անուած էր, բայց անոնցմէ ոչ մին կրնար հաւատարիմ մարդ։ Եւ ոգորելու մեծ գէմքերով ներկայացուած խորհրդովք՝ նպատակ ունէին սիրելի և փափկի բնել նախ անոնց հետ՝ նոյնպէս հոգ տարող և գործ յուսալի բարեմասնութիւններ մտնելիներուն. երկրորդ՝ ուսանիլ բարերկիր ազգասիրութեան և հայրենասիրութեան նախրատուն Հարին՝ անոնց մուտքը գործերուն։

Ար և է ներկայացում կ'ուզուրէր քոմ հրաշտեղիչ և ազգու վերջաբանով, և քամ յորինուին երգով մի. զոր բոլոր գերասանները և մեծին բարերաւած կը հնչեցնելին Բանաստեղծին փոյթն։ Եւ ամենէն մեծ նպատակն այն էր՝ որ հանդիսականոց մէջն բանաստեղծ վարդապետներէն երկու քամ երեք, որոնց գործ մեկնելու Ազգասիրական բնորդ ոչ ոչ ոգորելու էին ներկայացման ազգասիրութեան, ազգի կողմէն յատուկ յանձնարարուած կ'գտնուէին, որ ամէն ներկայացման ատենը կարգ մը նկատողութիւններ ընեն, որ ետքէն ազգին հասկցնեն։ Այս գործերուն մէջ ոչ մեծ դժուարութիւն կրնար գտնուիլ մեծ. մի միայն հոգ, թէ ոյց գոց մեծոց գերազանցութիւնց։ Ոչ միայն մտածէ քոմ, ոչ մեծոց մտածէ քոմ. մեծ քոմ խնդրոցնոց՝ կրնար մեծ ոգի. կրնար քոմ մեծոցնոց՝ փոքրուն մեծոց գործոցնոց։ Շնչոցը և կրնար՝ և սիրոց գործարարոց մեծոց գործոց. Քոյ միայն չնչոցը և կրնար նորոգուիլ՝ մեծոց գործոց։ Այնչափ քոմ՝ որչափ գործոցնոց, որ ոչ նոց կերակուր յանկերգ գերազանց՝ քոյ որչափ մեծոց նախնի գերազանց։ Գործ բոլոր և բարձր խնդրոցնոց, և բոյս գործոցնոց մեծոց կրնար։ Բոյլ գործ չնչոցնոց մեծոց Հոգոյն, որ ոգորելոյ մեծոցնոց գործոցնոց մեծոց գործոցնոց։

Գործոցնոց մը ազգ Հոգոյ ներկայացնելոյ Բառագարանիներու և Վերջաբանիներու գործոցնոց մեծոց, կը գնենք այս տող երկու ներկայ տողով Հոգոյ։

Բառագարան Վերածնութեան և Կատարածութեան մեծոցնոց
(Գերմանութիւն)

« *Ձայն բարեգործութեան, բարբառ փոքրիկ՝ հայրենասիրութեան գործ ազգային, ո՞ քոմ հայրենիք, քոմ գիրկ գործոց հոգոյ։ Ինչ և խոնարհ ոչ ոչ հայրենասիրոց. ոչ ոչ և կարի ոչ ոչ գործոցնոց հայրենասիրոց։ Ո՞ կիցի մտած քոմ. ոչ մեծոց մտած քոմ. մեծ քոմ խնդրոցնոց՝ կրնար մեծ ազգ. կրնար քոմ մեծոցնոց՝ փոքրուն մեծ հայրենասիրոց։ Շնչոցը և կրնար՝ և սիրոց գործարարոց մեծոց գործոցնոց. Քոյ միայն չնչոցը և կրնար նորոգուիլ՝ մեծոց գործոցնոց։ Ոչ միայն մտածէ քոմ, ոչ մեծոց մտածէ քոմ. մեծ քոմ խնդրոցնոց՝ կրնար մեծ ոգի

տեսաք՝ պատկերք դիցազանց, երկրաւոր առաքինութեամբ դնոցք ի կշիռ դանձին ի սէր հայրենեաց. ոչ Ովրատեսք վհատուէք՝ նաւերական արեամբ ի մահ դիմողք՝ ի կեանս խրեանց սիրելեաց: Վեղեցիկ կեցին, գեղեցիկ և մեռան. ոչ մեկնեալ ի կեանս, ի մահս չմեկնեցան: Այլ ով արուսեակի ցաւոց. յաստեաց մերկացեալ ի կենաց, պանծալեաւ յաշխարհի ծածկեցան մահու, և յանմահն կարապետեցան մահ. որոց և ոչ առակս մի վերին հայրենեացն յուշի կապեցաւ սիրոյ յիշատակ: Վասն որոյ՝ որք միանգամ երկնաւորին պիտանացեալ անգամեն ի խանձարրոց՝ կորզոց առաքինութեան, վերկրաւոր առաքինեացն ի սիզ առաւերագին բերեալ պտուղք, խանդագոտեցաւ գնոքօք՝ որ ի մեզ արժանաւորք գտցեն մնան. և մատեալ յորդեցաւ բոց անձասիրական՝ բանականին կամք՝ ի սէր լուսաճեմ հայրենեացն մերոց երկնաւոր առաքինութեամբ: Ո՛վ զմեզ այնմ գիւցազնական մահու առաջի առնէր բաժակն. զոր արբեալք մեռանելոյ մոլութեամբ՝ ի կեանս վերին քաղաքին, երբեք պանդխտեալք զմեռեալք առակ առաքինոյ կելիք՝ ի հայրենին մեր ճեմէաք գաւառ: Չի եթէ արք՝ որոց ոչ յոյս էր և ոչ առաւած՝ գոյնեալեն գեղեցիկ գիւցազնութիւն մահու քաջապէս մատեալք ընդ Քշնամիս, նոյն մարթ խնդրեալ՝ վհատիցն յաղթանակաւ Քշնամեաց մերոց՝ երկնից գաւառաց. զոր և սերմն մարքարեան՝ արբանեակք մարդեղեալ երկնաւորին Ովտեան ժողովոյ ի մեզ արդիւնացուցէ յաստուածամարձ Հարցդ՝ խնդարհատցն եղեալ արդիս. քանզի ի հնուստս սեանեալ գաւեթեան՝ ցնծամբ, խոստովան եղեալք՝ եթէ առաքք եմք յերկրէ: Վասն որոյ և գաւառ իմն խնդրեմք՝ ոչ անկեան, այլ ապեւակեսն իմն ցանկացեալ եմք, յորում երկնաւորն մեզ պատրաստեցաւ քաղաք »:

Այս վերջաբանիս կը յաջորդէին երկու յաղթական նուագներ, զոր կը հնչեցնէին երգից պաշտօնեայ կարգեալներն՝ մին Հ. Կարապետ Եղայեան, իսկ միւսը Հ. Մանուէլ Ալեքսանեան: Վերջնոյս բնագրական նուագը — որ թէ չունայ գրաւոր ձեւով մէկ հայրենեաց վրայ երգեր գիտցողներուն, և թէ գոնէ պերճաշնորհական խմբին — արդէն ամբողջական հրատարակուած է Տարի Միխիթարեան Հայց Ե հատորին մէջ, էջ 156: Մենք կ'արտագրենք վերջին կէսին վերաբերեալ տողերը միայն.

« *Բայց ահա ի տուներ մերոյ Թատրոնեան,*
Չայլ օք[1] Պոպիոս հոյիմ բազմութեան.
Ոչ գերիս ծնող, այլ ըղձեալ տուան,
Վարժիչ ի հրաշեղ ի սիզ պատեան.
Լինել հայրենեաց անվրիպեղ պաշտպան,
Ոչ ի տայր սրբոյ, այլ ի սէր ու ի Ջան:
Որում անձկացեալ յուսով գուարճանումք,
Տեսանել ի ձեզ ըղձերս նըմանակ.
Ճըշմարտակ յանձին ըղձին օրինակ,
Առ սէր հայրենեաց գիմել ի վըտանգ.
Չի ոչ վատն անձանց միայն հատանցուք,
Եւ որ կեաց անձին, կեաց արենատուակ: — (1804)

Եւ կը փափաքէի գնել այս սեղ ժամանակագրական կարգով ներկայացուած բոլոր խաղերը, նշանակելով անոնց ստուգիւթը, հեղինակներն և խաղացող Վասները. սակայն կը տեսնեմ, որ 1774 Թուականէն յառաջ՝ ներկայացումներ կարելի չեղաւ ինձ գտնել վանցս պիւանին մէջ, 1883 Թուականին Ս. Ղազար պատմուճած հրդեհի ժամանակ թղթերը խառնակուած լինելուն պատճառաւ: Իսկ 1774 Թուականէն վերջ եղածներն ալ ամբողջ չեն գտնուիր. մի քանիսին ալ յիշատակութիւնը միայն գտանք վանցս Ժամանակագրութեան և Օրագրութեան մէջ: Յամենայն դէպս՝ ահա մեզի ծանօթ եղածներն՝ երկնց ներկայացման տարեթիւերու համաձայն, որոնցմով պիտի հատուստուի վերը բացուած :

---

1. Հ. Յովսէփ Վ. Պալատեանցը կ'ակնարկէ, որ 1804ին Վերակացութեան պաշտօնը կը վարէր Ներսէսեանց, և գանազան խաղեր ձեւացնել կու տար անոնց:

* * *

Ա. — 1774ին կը ներկայացնէին — Նորընծայք Ի. Դասուն — Յ. Բարդուղիմէոսի և Յ. Մոսիսեանի խաղերը՝ չեմայով կամ տեսարաններով, որոնց ճաքատաք նկարիչն էր Հ. Յակոբ վարժարանցի՝ գործակցութեամբ երկու Նորընծայներու. այսինքն Եղբ. Նիւտպեանի և Եղբ. Վարդանայ Միանձի Սահակեանի։ Ներկայացմանէն յառաջ և նոյնչափ հետաքրքրական դէպք մ'ալ կը հանդիպէր փետր. 2ին, այսինքն է՝ լուսահայ Տէր Մարկոս Նշխոռվիչը, որ վենետիկ եկած էր հայերէն գրաւոր լեզուն հասկնալու համար, չափով մի վարժուելէն վերջ՝ ձայնաւոր պատարագ կը մատուցանէր՝ իր խեցգետ լեզուովը՝ մայրավանիցս տանջարին մէջ։

Բ. — 1776ին երեք խաղեր ներկայացուցած են — Նորընծայք Թ. Դասուն — այսինքն են՝ երանելի Դաւիթեան Նահատակութիւնը. որոնց մէջ — կը գրէ վանական ժամանակագիրը — քէ տեսնուեցաւ Թադէոս Աէֆֆանեանի և Պետրոսի Ալիքսանեանի անյարմարութիւնը վանական կենաց։ Յն Ակօժդ երրուանգեանն Տիգրանայ՝ երեք գործողութիւնք, որոց իւրաքանչիւրն երկու վարագուրով կ'աւարտէր։ Անձինքն են՝ Երուանդ Թագաւոր Հայկազունեաց, Աստիւագէս՝ երէց որդի Երուանդայ, Տիգրան՝ կրսեր որդին, Դանի՝ Թագաւորին տեսնադպիրը, Օնիպոնի՝ քրմապետ, Աստիւան՝ զօրաց սպարապետը։ Ա. Տեսարանը՝ կը ներկայացնէ արքունական սպարանի սրահը, ուր կը չրջի Օնիպոնն մոգպետն, և ներս կը մտնէ Աստիւան սպարապետ։ Բ. Տեսարանը՝ կը ներկայացնէ արքունի մեհեան, իբր խորհրդատեղի նախնեաց, ուր կ'աւանդէնախաձէ Աստիւագէսի խորհրդականը՝ Արտաւն, և ներս կը մտնէ Աբրահամ հազարապետը։ Գ. Տեսարանն է պարտէզ և արքունի հովանոց, ուր կը չրջի Երուանդ իր հազարապետին Աստիւանի հետ։ Առջին երկու Գործողութիւնքը յօրինած է Հ. Ղուկաս Ինճիճեան։ Ներկայացման գլխաւոր նիւթն այն է, որ Օնիպոնն և Աստիւան՝ իրենց գործած զեղծումները ծածկելու համար կախարդութեամբ արքայազրդին Տիգրանը կը յափշտակեն, և կապանքով կաչկանդած դինքը կը ձգեն անյայտ և անել անտառի մը մէջ. ուակէ ապա սպառնալով՝ արքունիքը կը վերադառնայ և հօրը կը յայտնեն։ Այս խաղիս ներկայ եղած կ'աւանդուի նոյնպէս Նալբանդեան Ստեփան աղայի փեսան՝ Մինաս Ամիրայ։

1779 տարւոյ Բարեկենդանի համար պատրաստուած էր Յոր երանելին, բայց ազգային հալածանքի տխուր լուրը վենետիկ հասնելով՝ կը խափանէր անոր ներկայացումը. վասն զի հասարակաց այդ ալէտին՝ Մխիթարեան միաբանութիւնն եւս կ'ուզէր ազատիլ ըսալ։

Գ. — Յունվ. 28ին, 1780 կը ներկայացնէին — Նորընծայք Թ. Դասուն — Յ. Պետրոսի մատուռորի խաղը, այնչափ փառաւոր և վայելուչ կերպով, մինչեւ անգամ չարժել զամէնքը յորդ և յարտասուս։ Վանացս Օրագրին հետ՝ Հ. Մկրտ. Ալտերեանն խակ կը գրէ, իր ժամանակագրութեան մէջ [1], քէ « Լուսաք գտաին Հ. Կարապետ. Աստպիսի խաղ ուելի օգտէ՝ քան զրազում քարոզս. և Հ. Ստեփան (Ալիքեան) կ'ըսէր. « Բազում ինչ տեսի ի Հռոմի, այլ ոչ այսպիսի վիակերպութիւն վայելուչ՝ ընդ առաջնոցդ թեամբ մերոյ ուղղի» ։ Այնուհետեւ եպիսկոպոսն խակ՝ որ ներկայ էր այդ ժամանակ վենետիկ եկած էր, ներկայ կը լինէր՝ Ակէրեան Բարութիւն աղայի հետ՝ այդ խաղին, և Յաղութենէն՝ այնուհետեւ Պօղոս կը զառնար։ Խաչիս Հեղինակին անունը նշանակուած չէ, բայց հաւանօրէն կամ Հ. Գաբր. Ալետիքեանն լլալու է, և կամ Հ. Սահակ Պետեանն. զի երկուքն եւս վարժապետ կարգուած էին այդ դասին։

Յաջորդ տարւոյ Բարեկենդանին՝ ներկայացումներ եղած են, բայց անոնց տեսուածքը նշանակուած չեն։ Խակ 1782ին ալ ազգայնոց հաչածանքին համար սուգ պահուած է և տանոնց խաղի անցուած։

---

1. Տես հա. Բ. էջ 660 ածխ։

Բ. — 1783ին ներկայացուած է Մ. Քէտաքէտոր խոյլը, զոր յօրինած էր Հ. Ման. Չախչախեան, չորս Գործողութեամբ։ Դերակատարքն էին ի և իվ Դասի Նորընծաները։ Վերջնոյ համար կը գրէ ժամանակագիրը, թէ «Աւր յայտնի լինէին՝ առաւելական յինքնախօսութիւնս՝ բուռք նորնկոյց»։ Տէր Կիրիգոր — երբեմնի Պատրիարքն — նա վերնաւոր գանուելով այդ օրերը, կը թուի՝ թէ ներկայ եղած ըլլայ այդ խաղին։

Ե. — 1784ին, այն է 12 փետր. ներկայացուած է Յայտնութիւն Յովհ. Ղազարոսի ասդ հղացութ իր, զոր թարգմանաբար յօրինած է Հ. Սահակ Պօղոսեան՝ երեք Գործողութեամբ։ Դերակատարներն էին իվ և իվ։ դասուս աշակերտք։

Զ. — 1785ին, փետր. 4. ներկայացուցած են — իվ։ դասու Նորընծաները — Մ. Գէորգեայ զօրավարի նահատակութիւնը, զոր յօրինած էր Հ. Գաբր. Ալեմիքեան՝ հինգ տեսարաններով։ Իւր անձինքն են Դիոկղետիանոս՝ հալածիչ կայսր, կոստանդիանոս, Ալեսանդրիոս, Գէորգ, Խորհրդականներ և Պահակ զինուորք։

Է. — 1787ին ներկայացուցած են — իվ դասու Նորընծաները — իրենց վերակացուին՝ Հ. Գաբ. Ալեմիքեանի յօրինած և կարգագրած երկու գնդեցիկ խաղերը, այսինքն Մ. Ագաթեանոս, որուն մէջ զոր կը խաղան Ագաթեանոս, Գեաձաձայն, Դրատայն, Ջհնուորք, Դատապետ, Զաքէն և Հրեշտակք։

Ապա Յովնան Մակինեան, տասը Համառօտ՝ բայց գեղատուր տեսարանօք։ Անձինք են՝ Քաճիկեան, Մեսրոպ, Ալկիդես, Ագաթոնոս, Միմնկիոնոս, Փլաբեանոս, Ղուկաս, Յուսեփեան, Թէոդորոս, Թէոփիլոս, Յաակիոս, Ալեքսիոս, Յովնան, Եւտիքոս, Ակակիոս, Կիւրեղ, Պրոկղ, Լոյիան, Զօրականք, Պետրոս, Գնդեսար, Միկոլաիդոս, Նիկոդեայս, Ֆպատրոս, Ագրիպպոս, Հերակլեոս, և Պաւլ։ Կարելի է մակաբերել թէ ուրգան ազգաս և հնատոքրքրական եղած ըլլայ խաղիս տպաւորութիւնը հանդիսականաց վրայ, երբ այդչափ և այդպիսի բարձր անձնաւորութիւններ, զորոնք Հ. Ալեմիքեան գիտցած է հանճարեղ կերպով հանդէ բեմին վրայ, իրենց քնարոշ դէմքերով և լեզուովը կը չարժին և կը խօսին։

Ը. — 1789ի Յարեկենդանին խաղցուցած է Տրդատայ յաղթութիւնը Հալէի վրայ, և Գիոկղետիանոսէն Հայոց Քաղաստր պատկուխլը, զոր չինած էր Հ. Մանուէլ Չախչախեան՝ երեք գործողութեամբ։ Խաղիս արժանաւորութեան հաւատարքն այն է՝ որ Հ. Մկր. Ալգերեանին բուռնին նայելով՝ վերահին ներկայացուցած է նաև 1790ի Յարեկենդանին։ Եւ ապա ինչ ինչ բարեփոխութեամբ տպագրութեան իսկ արժանի կը դատուէր 1879ի «Բազմավէպին» մէջ (տես տարի Լ. եր. 102, 105, 327)։ Շատերուն յայտնի լինելով, աւելորդ կը համարիմ խօսել անոր մասին։ Այս ներկայացումէս վերջն է՝ որ կը հնչեցնէին Հ. Գաբ. Ալեմիքեանէն յօրինուած յաղթական երգը. «Նկայք ի հանդէս յաղթանակի քաջայաղթակ Տրդատայ», որ և ամբողջովին տպուած է Մխիթ. Հարց Տազարանի Լ. հատորին մէջ։

Թ. — Նոյն բարեկենդանին (12 Յունվ.) կը ներկայացուէր ուրիշ ազգային ողբերգութիւն մ'եւս, այն է՝ Դատապարտ մեռնիլ խոյլով, զոր երկասրած է Հ. Մ. Չախչախեան, երեք գործողութեամբ։ Իսկ դերակատարներն էին իվ Դասի Նորընծայք, Հ. Յովհ. Վասապրեանի վերակացութեան ներքեւ։ Առաջին տեսարանը՝ կը ներկայացնէ Հանդիսականները՝ Պարսից խորհրդարանը, ուր նախագահը կը խորհրդակցին։ Ի տեսարանն է Հայոց թագաւորի արքունիքը. խոյրով բազմած է իր գահուն վրայ, և աջ ու ձախ կեցած են երկու մեծ նախարարներ, որք կը խօսին Պատնակալ և այլոր զօրաց վրայ։ Գ տեսարանը կը ձեւացնէ անտառ, ուր կ'երեւին Հայոց զօրքերը. սպա խոյրով, Կոռնակ, և Անակ՝ իր եղբայրներով որսի եկած։ Անձինք են Ա գործողութեան մէջ՝ Արտաչիր Քաղաստր Պարսից, Աւրմիզ, Շապուհ և վաստ՝ Նախարարք Պարսից, Անակ՝ զաւակք, Ապուսուորդ երկու, Զուռան՝ մօգպետ, Արտաւան՝ քրմապետ, և Գուժական։ Ի Գործողութեան մէջ՝ խոյրով արքայ Հայոց, Աստղ և Աւրեան՝ Նախարարք Հայոց, Աւետաւորք, Կռռնակ՝ սպարապետ Հայոց, Դսխուրարք, Զօրք, Պարսիկ ոմն ձերբակալուած, Հոգևոնական, Հրեշտակ, Անակ և Լիդուցիք։ Իսկ Գ գործողութեան մէջ՝ խոյրով կարեւէր. Կռռնակ, Անակ, Լիդուցիք Անակայ, Դահապարք, Զօրք, Բժիշկ, Գիակիրեւք։ Այդ խաղը ներկայացուած է նաև 1793 թուականին, որ յայտնի նշան է գտած ընդունելութեանը։ Այս ողբերգութեան կը վերա-

Digitized by Google

բերի այն հիանալի եղերգը [1] «Մահիք ապաշնորհան դասք ոչրականաց — Յօղեցէք կականաւ ըզգեստս արտասուաց»:

Ժ. 1792ին, Փետր. 7 և 9, երկիցս ներկայացուցած է — ԺԴ. դասը — Վահան Մամիկոնեանի Մարզպանութիւնը, չորս Գլարուածովք և վեց վարագուրով: Ա. Տեսարանը կը ձեւացնէ վաղարշի ապարանքը, ուր յերեւան կու գայ Յառաչաբանը՝ պարակական տարազով, և կը չրջի երիցս՝ ձեռքը մէջքին վրայ դրած: Բ. Տեսարանն է վաղարշ, որ փառաւորութեամբ բազմած է ոսկի գահուն վրայ, ունելով իր երկու կողմը Չարմիհր Հազարաւուխտ ապարապետը, Միհրանեան Շապուհ՝ Հայոց մարզպանը, Նիխոր Վչնասպդատ և Միհրվշնասպ խորհրդականները, ու երկու ապասաւորները՝ Վահեւոգ և Աորոմիզդ: Գ. տեսարանը կը ներկայացնէ Վահանայ ապարանքը, ուր բազմած է նա աթոռի վրայ՝ զինուորական տարազով, և երկու ապասաւորներ առընթեր. յանկարծ պատգամաւոր մը ներս մտնելով կ'ողջունէ զինքը: Դ. Տեսարանն է անտառ, ուր կը տեսնուին գազաններ, և երկու զինուորք կը խաղեն գայն: Ե տեսարանը կը ձեւացնէ վաղարշու առեւանը, ուր կը մտնէ Թագաւորն երկու ապասաւորներով, և կը բազմի իր գահը: Զ. տեսարանը կը ներկայացնէ Հայոց կաթողիկոսարանը, ուր բազմած է մեծ կաթողիկոսը Յոհ. Մանդակունի, ունելով առընթեր երկու եկեղեցականներ, և երկու ալ ապասաւոր:

Քառանչն ասելի անձինք կը մտնեն խաղիս մէջ: Յոհան Մանդակունի՝ իր սքանչելի Աստեղաբանութիւնն ուսարտելէն վերջ, ամէնքը կու լան ուրախութենէն. և երբ նա արտասանելով հետեւեալ խօսքերը. «Այդ՝ տարցուք յաղթական հանդիսիս զնորոգ Մարզպանս յիւր ապարան» և ոտքի կ'ելնէ, անդէն կը հնչեցնէ երաժշտական խումբը այս գեղեցիկ նուագս:

«Յաւերժահարսունք որմզդական որմզդական, արիւոյն հանգոյն լուսափայլք, — Ի հիւսիսոյ ճառագայթեալք՝ վայելուչ զարդք աշխարհի: — Չհանդէս նոր յաղթանակաց առէք վեհ դիւցազունք», և այլն:

Ներկայացմանս հեղինակն է Հ. Գաբ. Ալեռիքեան: Ներկայ էին յաղագնոց նաեւ Տէր Պօղոս վարդապետ Սիվրիհիսարցի և Թոմազոյ Թոմաճանեան, որուն փոքր եղբայրն [2] ալ դերակատարներէն մին էր: Նա ինքն չատ ապշեր է, կ'ըսուի, որ զինքն եւս ընդունին վանքը, սակայն անտեսի միացած է, կը գրէ ժամանակագիրն Հ. Մկր. Ալգերեան: Այս ներկայացման առթիւ չինուած է և երգուած նաեւ այն սքանչելի երգը, որ կը սկսի «Ո՞վ է որպէս տէր Աստուած մեր — երգեցէք ի վեր — հնչեցէք եթեր [3]», և այլն. որով յաղթական կ'ընթանան Վահանեանք առ Նիխոր, և որ կը լեցնէր անպատում ոգեւորութեամբ ամենուն սիրտը: Դերակատարքն էին Նորընծայք ԺԴ. դասուն: Հեղինակին ինչպէս ուրիշ խաղերն, այսպէս և այս՝ արժանի է նաեւ այսօր կրկին և կրկին ձեւացուելու. վերջին երկու Գլարուածոց գործած ազդեցութիւնն՝ ամենամեծ եղած է:

ԺԱ. — 1795ի Բարեկենդանին կը ներկայացնէին — ԺԴ. դասու Նորընծայները — Արքոց Դեւոնդեանց Նահատակութիւնը, որուն ներկայ կը գտնուէին բժիշկ Մանուէլ՝ որդի հնքիմ Պօղոսի Շաչեան, որ Նէապօլիս երկու տարի ուսանելէն ետքը՝ եկած էր Վենետիկ՝ կատարելագործելու իր ուսումը, Զանթացի Մերքաթեան եղբարքն և վիտանուեցեանս ուրիշ բարեկամները՝ Յոհ. Ագա Սեդրաեան և Մարինովիչ: Չենոբ Մանասեան եւս, որ Վենետիկ կ'ուսանէր Հ. Ղուկ. Ինճիճեանի խնամակալութեան ներքեւ, կը մասնակցէր ներկայացմանս, իբրեւ դերասան: Անդրագոյն տեղեկութիւններ կը պակսին մեզ այս խաղիս մասին, այսինքն՝ չենք գիտեր թէ ով յօրինած էր զայն, և թէ քանի գործողութեամբ:

ԺԲ. — 1796 և 1797 Թուականին երկու ներկայացումներ տրուած են, զորս վանցս ժամանակիրը «Մեծ և փոքր խաղեր» կ'անուանէ: Առաջինը՝ ներկայացուցած են Վարժարանցիք. իսկ վերջինը Նորընծայից ԺԴ. դասը. Չենոբ Մանասեանն եւս կը մասնակցէր ասոնց, արտասանելով Յառաչաբանը: Ներկայացումներէս մին

---

1. Տես Տաղ. Մխիթ. Հարց. հա. Բ. եր. 158:
2. Այս է Յովսէփ. որ յետոյ անունը փոխելով եղաւ Հ. Եղիա Թոմաճանեան:
3. Տես Տաղք Մխիթ. Հարց, տպ. Վենետիկ 1853, հա. Բ. եր. 14:

որոշակի յիշուած է, այսինքն է՝ Պաձառուկն Յովսեփայ յեղբարց, որ կրկին անգամ ներկայացուցեր են նաեւ յաջորդ տարուայ Բարեկենդանին[1]։ Գերպ. Սուքիաս Սամսոնեան կը գրէ իր Օրագրութեան մէջ, թէ «Ինձ վճռակից լինել Յակոբ Նահապետ», զի ինքը թէպէտ և նորեկ էր, բայց տարեց լինելով՝ Վարժարանիցս հետ կ'ուսանէր։

ԺԹ. — Նոյն դասը ներկայացուցեր է, 1798ի Բարեկենդանին, Յովսէփ Եւսեբացին պատմութիւն։ Անձինք դերակատարք խաղին՝ էին Թուով 15։

Ի. — 1799ի Բարեկենդանին երեք ներկայացումներ տուած է — Նորընծայից ԺԴ դասը — ։ Առաջինն է Մեծն Վարդանայ Մամիկոնէի փախուստը դէպ ի յոտարութիւն, զեղեցիկ տրիբրգութիւն մը՝ այլ և այլ տեսարանօք և գործողութեամբք։ Խաղիս — որ կատարուեր է Յունվ. 30ին — ներկայ գտնուած է նաեւ Գր. Յակոբ Սեղբոսեան, որ եկած էր Բարեկենդանի օրերը վանքը անցնելու։ Ներկայացումս, որուն հեղինակն է Հ. Գաւիթ. Ինճիճեան, մեծ պատճառ եղաւ ոչ միայն ներկայից, այլ որ գործնական է՝ մինչեւ անգամ Հնդկաստանի հեռաւոր հայ գաղթականութեան վրայ։ զի Գր. Յովհաննէս Ավգալեան — 20 Դեկտ. 1828 — առ Գերպ. Սուքիաս Սամսոեան գրած նամակին մէջ կ'ըսէ. «տարտանեան տրիբրգութիւնն յօրինեալ մեծի բանաստեղծին մերոյ՝ Հայր Գաւիթ Վարդապետի Ինճիճեան՝ գործուցեալ է առ գնուր իմն ջերմեռանդութեան և հայրենասիրութեան ի սիրտս հայկազուն ընթերցողաց։ Արժան է երկնաձիր բանաստեղծին մերոյ պարտապել յօրինուածս այնպիսի Աղբերգութեանց, որոց գործն կամ առարկայքն գոնեին յիշատակել յաղեսալի անցս պատմութեան մերոյ [2]»։

ԺԱ. — Երկրորդը՝ Բագրատունեաց Աբաս թագաւորի առեղծիւնն, և նորակառոյց եկեղեցին։ Ներկայացմանս ոչ յօրինողն յայտնի է մեզ, և ոչ ալ անդրադարձ առեղծութիւններ արուած են վանուցս Օրագրութեան մէջ անոր մասին։

ԺԲ. — Երրորդը՝ Թագրատիրութիւն Մեհեւոս Զեհնպիւի կատակերգութիւնը։

ԺԳ. — 1802ին — Նորընծայից ԺԴ դասը — ներկայացուցած են Ս. Աբգարեանի նահատակութիւնը, զոր յօրինած էր Հ. Եղիա Թոմասեանեան, երեք Արարուածով։ Անձինքն են Գլխի՝ Հայր Աբգարեհի, Անոր (Աբգարեհ), Խաթաթ՝ եղբայր Աբգարեհի, Սարկաւագներ՝ Արտիբոս, Ներսեհ, Գեորգ, Գաբրիէլ, Խորէն, Սարգիս, Թադէոս, Աբանէ, Սարտոն, Զեհնպուն, Բեհ, Միհրսե, Տամ։ Սոյն խաղը 1803ին դարձեալ ներկայացուած է։

Նոյնը տարբեր կերպով չարադրած է նաեւ Հ. Պետրոս Միհրսեան՝ Անոր ողբերգութիւն խորագրով, որ և տարիներ վերջ ներկայացուած է — ինչպէս գոնեք այն տպուած տպի մը մէջ —։ Սակայն Հ. Թոմասեանինը չատ աւելի բանաստեղծական է և բնորոշ, մանաւանդ վերջին պատկերին մէջ՝ նորագարձ որդւոյն և նահանձայոյզ հօր հակառակամարտ կիրքերն այնքան ճարտարութեամբ նկարագրելովը։

Ներկայացմանս վերջաբանէն յետոյ երկու բնտիր ներբողեաններ արտասանուած են, մին Հ. Կարապետ Եղայեանի բերնով, իսկ միւսը Հ. Թոմաս Մաքսէթեանի, որ պուեսի անուն ունէր վանքիս մէջ, մանաւանդ թէ համբաւ եւս պիտի վայելէր, եթէ տպիչ ունենար չարունակել գրական այդ ճիւղը։ Դնենք այս տեղ՝ իբրեւ նմոյշ՝ Հ. Մաքսէթեանի այդ գեղեցիկ քերթուածը ամբողջութեամբ, որ թէ իմաստից ներքուստեամբ և թէ բառերու քնքշութեամբը առուգիւ չքնաղ գոհար մ'է.

---

1. Այս ներկայացումէս վերջ նորօրինակ բնեռւոյթի մի տեսանելի կ'ըլլար ի Ս. Ղազար, զոր ժամանակագիրն Հ. Մկր. Աւգերեան այսպէս արձանագրած է. «Յետ վճարելոյ խաղոյ Յովսեփայ Նահապետի, երեւի զկնի առաջին ժամու գիշերոյ իբր քառորդ մի՝ ի խառնակութեան հոգմային և անձրեւային պահու՝ յոյս ինքնավառ պղտոտեսիլ, որպես մոլի հուր, ի ծագ զանգակատան մերոյ՝ չուրջ զիաչիւն երեւեցաւ. զոր վասն ձայն ոտլով միմեանց՝ բազումք լինէին ականատես»։

1. Մեզ յայտնի չէ, թէ Խնճիճեանի այդ Աղբերգութիւնն ինչ կերպով ծանօթացած էր Հնդկահայոց։ Ասոր կամ այն է՝ թէ Խնճիճեան ընդօրինակութիւն մի յղած էր Ավդալեանին, հոն եւս ներկայացնելու համար. և կամ ուրիշ անգամ Ս. Ղազար ներկայացուցած ժամանակ՝ Հնդկահայոցմէ մին խնդրած և տարած էր գայն։

« Գունեան դու ընտիր՝ գեղ բաստրաբուդիս,
Նորափթիթ ծաղիկ՝ ի յընձիւղ կակուխ
Ի դրախտ յաղինայ վառեցար կանուխ.
Ի ծագել բարձանց բոց ճաճանչաւուխ,
Նուրբ գեթերս օդոց գոթեցեր առնգուղ.
Ի բաց թօթափեալ ըմնութ մառախուղ,
Ելեր բարձրացար առ վարկեան ինչ աւուղ,
Յառաջեալ կամար արիւնացրնցուղ:
Ա՛ա Ապղբիմբանէ ծառայ Քրիստոսի,
Առեալ կըրկին հաց պարտուսցի.
Մըտաւարժ մանկան գիպեցաւ Հոգի,
Եկեալ ի մարմին անարատ բարի.
Ի խառնել լուսոյ ընդ գանգուած երկրի,
Ծնանիլ յայտնեցաւ նոր ապրատհմի.
Առաջք Քրուցիկք ի գաչատվայրի,
Երկնեցին ծրնան յաղօտ նըշուլի:
Զարթեաւ աւր մահու հին նախանձարկուին,
Բառնալ ըզծնունդ անպատում առհվին.
Ջինուորեաց ըզհայր ընդդէմ գաւակին,
Որ երբեմն գեղբայր՝ ի գոհ անմեղին.
Այլ նոքա անդուռ խօսին տակաւին,
Բազոքեն յայնբա յաթոռ հզօրին,
Նա խնդրէ վըրէժ բարձրացեալ ձեռին,
Ա՛ա ի գութ չարժէ առ իր Քըշնամին:
Ո՛վ գութ գառք հովուաց՝ առաջոց արւարաց,
Հըսկող գուարթունք ձօնեալ անասուց.
Բաղցրալուր ռաւիղ ձերոց նուագաց,
Նիրհեցոյց գազանըն գիչերագնաց.
Ջորըն արտացոլք յանդորիմ ժանեաց,
Ա՛ծիք ի փարախ գառըն մոլորած.
Հանել ի սեզան բոցով եթերաց,
Յաւերժացելոյն ի տոհմ մայրեաց »:

* * *

ԺԲ. — Հայկ դիւցազն [1] (մենամարտութիւնը) — Ներկայացուցած է, 15 փետր. 1805, Նորընծայից ժե դասը: Յօրինած է Հ. Եղիա Վ. Թումանեանն, չորս գործողութեամբք և տեսարաններով: Առաջին գործողութեամբը՝ կը յուզուի երիք հակակ դիւցազանց, այսինքն են՝ Յարեթեան Հայկ, Ցիտանեան Ներոմիթ և Ջրուանեան Երերի կարծիքն և պայքարը: Բ. գործողութեան մէջ՝ Բիւրատ քաղդէի դիւթութեամբը՝ Ներոմիթայ կամ Բելի կը տրուի արքայութիւնն և տառուժութիւնը: Հայկ՝ պատգամաւորի ձեռքով բացատրութիւն կը խնդրէ Բելէն. իսկ սա՝ խրախուսուած Վանիտան կիւսահմայի դուշակութենէն՝ գոռոզաբար մենամարտի կը հրաւիրէ Հայկը, սպառնալիքով յետ դարձնելով անոր պատգամաւորը: Գ. Գործողութեամբ կը նկարագրուին Հայկի զայրոյթը՝ Բելոյ պատգամին վրայ, և պատերազմի պատրաստութիւնքը: Դ. Գործողութեամբ կը ներկայանան Բելոյ պատերազմն և մենամարտութիւնը: Ոյժ բանաստեղծական են և կենդանի տեսարանները: Առաջինն է անուտո ոսկոց, ուր ճեմելով կը խորհրդակցի երեր՝ Փարեկին հետ: Երկրորդն է թաւ անուտո՝ գիշերամուտ առաջզարթող երկնից

---

1. Այս տիտղոսի ներքեւ կայ հետեւեալ վերտառութիւնը չափաւ, որ հաւանօրէն վարագուրին վրայ եւս փակցուած ըլլալու էր. Արի՛ առջ, արի՛ ճիգակ գեղապանծ, — Հա՛յ ի սիրտ, դիտակիւսացի՛ Բելն առտուած:

ներքեւ. ուր կը շրջի Բէլ մէն միայնակ, և կ'առանձնախօսէ ամբարտաւանութեամբ։ Երրորդն է պատմել Հայկայ, ուր կը մտնէ Արմայիս, և կանգնելով անոր առջեւ՝ մոխիկ կ'ընէ։ Չորրորդն է անուանք և գաշտ մեհեանատեղեան Հայկին և Բէլայ. կը մտնեն Թորգամեանք թմբկօք և նուագարաններով, և շրջան մ'ընելով՝ կը շարուին գեղեցիկ կարգով։ Ապա Արմենակ՝ մէջ անոր կանգնած, կը գոչէ. «Կամա՞ իցէք քաջք, փառել ի գալուստ մերոյ պիւռակին», և այլն։ Ապա կը սեանուին Հանդէսք զօրաց Հայկեանց և Բէլեանց՝ դէմ բնդ դէմ. կը խաղան երկու կազմէն կրակոտ առնարանութիւնք և խրոխտաբար զօրավարաց, և գոչիւն զօրաց և փողերու հնչմունք։ Ապա կ'երթայ առաջ Հայկ իր վրանէն, փառել ի գէն և ի զարդ, և անոր հակայն Բէլ. ապա մեհենատուր։ Անձինք խոպիս են քառն, երեք Չրուանեան՝ կուսակից Բէլայ, փաղեկ և Ռաքաւ՝ Չրուանեանք, Հայկ պիւռակի՝ Հարթիառեան, Արմենակ՝ որդի Հայկայ, կարմոս, Արմայիս, Բաբ, Մանուագ, և խոռ՝ Թոռունք Հայկայ, Բիւրասպի՝ առեղամեայ քաւգեայ, Բաբ, Քաշայ, Անկիսեմ՝ սեռանեանք, Մանիտոմ՝ կախարդ և գուսան Բէլայ, Պարք՝ սեռանեանց, Չինուոբք, Դասակալք՝ հայկեան նուագաց, Չօրակալք Հայկայ, Հրեշտակք՝ պատգամաւորք երկուստեք։

Հետեալ է վերջին գործողութիւնք՝ սեռարանաց և նուագաց զանազանութեամբք։ Հայկեանք՝ մեհենատուէն վերջ ի միտեն ժողովուած՝ կը գոչեն ուրախութեամբ. «Կեցցէ հայր մեր պիւռակն Հայկ յաղթական, վհէ Հարթիառեան». իսկ Արմենակ կը հրամայէ. «Ազգեն նուագք յաղթականք՝ վհէիս պիւռակին»։ Դասակալք կը ժողովին Հայկին շուրջը, որ իւր նեղակով կանգնած է Բէլայ պիակին վրայ։ Արմայիս թիւ կ'արտասանէ Վահագն երգի առաջին տունը, որուն ապա կը կցորդէ նուագս.

Երկնէր երկին, երկնէր երկիր — Երկնէր և ծով ծիրանի (կրկ).
Մանուկ Քանան, յատակս փոխէր — Չերկիր առէր, նա սառեցաւ հիւր ոչ էր։
Բնդ անդնդոց փոշ՝ ծուխ ելանէր — Բոց ելանէր, հուր գնա ունէր.
Բնդ անդնդոց փոշ՝ գետ ելանէր — Չրեղ պաշարէր, առեալ տանէր։

Յորդորակ. — Ալլ մեք վհէիդ պիւռականց — Չննեմք քեզ ձօն նուագաց.
Քեզ մեր պիւռակին փառաց՝ — Չօն ասկի նուագաց.
Գառ ես ակր Տիտանեանց — Ներրովթ կայ գիտապատառ։
Հայկ շգարէ սառեցաւ — Չրեղ շգարէ մահագղեաց,
Մեր հօրն նիզակ գեղապանծ — Քեզ գօրացաւ Վառուած։

Նուագ. — Ցնծայր երկին, ցնծայր երկիր, ծիծաղէր ծով ծիրանի (կրկ).
Բէլն անիծեալ՝ յերկնից հատէր, աւար անկանէր,
Բիւրասպի ծագրէր, նա արտասուէր։
Հայրն յաղթեցաւ բոց ելանէր՝
ՉՏիտան մաշէր, գաշխարհ մոգքէր.
Հայրն յաղթեցաւ նէա հարկանէր,
Բէլ թաւալէր, Վառուած բերկրէր։

Յորդ. — Ալլ մեք քեզ անմահ Վառուած — Պարեմք ի ձայն բերկրանաց.
Մերա հօր նիզակ գեղապանծ — Ի քեզ էր խրախուսած.
Քեզ օրհնութիւն Վառուած — Ներրովթ կայ մահագղեաց,
Նա չեզ ի բոլս սառեցաւ — Նա վիշապէն էր թաւնած.
Նա մարդ էր հոգեպանգուած — Գառ ես միայն Վառուած»։

Ներկայացման վերջաբանը կ'ընէ Հայկ ինքնին, ուր զոհ գոհարանութեամբ մը։ Իսկ յաւարտ ներկայացման՝ նախ Հ. Կարապետ Եպայեան կ'արտասանէր հետեւեալ հոգեներգութիւնն ի մեծարանս Հայոց նահապետին.

« Ջվիճաց կարծրութիւն ալիք առաւնեն,
Եւ հառանք հեղեղաց՝ ի բարձանց գլուխն.
Այլ լզութիւս անյոզդոզդ ընկճել ոչ կարեն։
Ո՛չ առեղք ի բարձանց թէ բազդ գուշակեն,
Ըզվիսս խնառուն յափշտութիւն կրթեն.
Ո՛չ հրմայք բիւրապղի ի հաւաս ձրգեն,
Կամ ակերք մեռելոց՝ թէ անմահ առնեն։
Խնառուն՝ որ իչխէ առեղաց բարձանց,
Նրկարեալն ի պառակեաս՝ հայր մերոց նախնեաց.
Ան՝ բնդդէմ նիպակաւ կնքէ առեղաց,
Է՛ նոցին անխորհուրդ խափանիչ հառանց.
Ըզկնոց ի բարձուն անառմիսի ձեռին,
Ի վրէժ թշնամւոյն՝ չանթք ի գէն փոխին,
Հրդեհին չառաչմամբ զսխնիք անառոին,
Եւ հրմայք հրաչագէսք՝ յառիւն լուծանին։
Երգարան նուագաց ի ծագ հանդիսին՝
Հաղնեցգաւ բանահիւսք ձայնակից լինին,
Ի գէն նուագեալ և ի սիրս քաջին,
Թօրգոմեան պանծանաց՝ գյաղթանակ մարտին »։

Ապա Հ, Յարութիւն Ալպերեան՝ բարձրագոյն տեսութեամբ մը կ'ոգեր հետեւեալը, որով կը դրուատէր Հայկին հետ՝ նաեւ գերակատարները, իրենց Մեհենաս վերակացուն և ներկայացնող բանաստեղծ հեղինակը ազատ չափաւ.

« Կեցցեն հանդիսապիրք՝ ընդ հանդիսականաց,
Թնդացէ Հայաստան՝ ընդ արդիս պարծանաց.
Հանճարեղ խելամուտք կարգի Հազմաստեղաց,
Բացեալ ըզպատրուակ Հայկին ազգանոզեանց։
Ահա նահատակաւ Ողիմպոս հըզօրաց,
Եւ պատնառեան հանդէս չքնաղ պուեսիկոսաց.
Ընդ նորատաքանչ տեսիլ նախնոյն մեր մրցանաց,
Հըաչակեալ ի նախնեաց՝ խոնարհեալ ի բարձանց։
Արիւն մըշտափայլ ի պարս լուսաւորաց,
Գան ազգեա յիս հոգի՝ յորդոր բանահիւսաց.
Ի ներբող պանծալի գիւցազնիդ յաղթութեանց,
Նոյն և կենդանատիպ փոյթդ գրծագրաց։
Պետ ես դու Մազդեզանց՝ Հայր մերոց հըզօրաց.
Մարտագիր յաղթական գլխոյն բանաւորաց,
Գիմակալ սեռեան անհրաւ բըռնութեան
Ի՛արի վրէժխնդիր՝ առաւածայնոյն փառաց։
Մըշտաւոր կառուցեալ յերդս մահկանացուաց,
Հայր մեր նախանձելի համօրէն աշխարհաց։
Արդեամբք պարախառնեալ ընդ գառս Համառաեղութեանց,
Եւ քառ լուսաբանիչ՝ երկնաբրնակ գօրաց։
Վայրաբերք եղեն քեզ յերկնից բնակութեանց,
Կրկին նախանձարկուք՝ Աերտաեան պանծանաց.
Յոմեսի վերակացու՝ հրմայօղ խորագիտ,
Հեղխաս երկնաձեռ՝ ի կառըս հրեղինաց։
Գիտող խորհրդածուք ի կէս ներպատակաց,
Երկակի գիտութեանց լըցուցիչ պաշտամանց.
Խրախուսեալ ըզտեսօղս հայկական մըրցանաց,
Ի բարձրագոյն հանճար՝ առաւածապաշտ կորզաց։

Եւեր յոր Արտրպին բանական կենդանեաց,
Ըզգեանեալ լոյսերագն ի հարաւած նիպակաց.
Գերահրաշ յաղթութեամբք նահապետ Հայկազանց,
Անբասիր և արդեամբք մեզ պրսակ պարծանաց։
Կեցցե՛ն Հանդխասպիրք ի յերկս աշխատութեանց,
Կեցցե՛ն հանդխասականք՝ պիտակաց Ներսիսեանց.
Գերասահիճանեալ Տէր՝ ըզքեզ նրկրպագիցեմ,
Ախոյեան և զլուխ այս տեսիլ պատկերաց »։

Զե՞նք կրնար ըսել արդեօք՝ թէ հատուածքէն Հ. Եղիայի 46 միջակ էջերէ բաղկացած այս գեղեցիկ գրուածս՝ եղած է նախապատրաստ և որպէս հիմնաքար ապագային Հայկ դիւցազներգութեան, զոր Հ. Արս. Բագրատունին գիտցած է ընդարձակել մէկ մէկէ — ունելի հրաշարուեստ 20 Գրուագներով։ Թոմասեանեանի ներկայացման անձինքն՝ ինչպէս և Տեսարանները պահուած են նաեւ Դիւցազներգութեան մէջ։ Բագրատունին՝ Ապահ և ուրիշ անուանց հետ՝ կանացի էութիւններ եւս ներմուծած է — ինչպէս կը վայելէր վիպասանութեան մը —։ Խնդրոյ նիւթ կրնայ ըլլալ, թէ արդեօք Բագրատունին եւս այդ խաղին մէջ մտան ունեցած էր երբեմն. և թէ վարժապետն ևթէ այդ խաղը յօրինած չըլլար, աշակերտը գարձեալ պիտի ունենար այն երջանիկ գաղափարը՝ գրելու իր գլուխ գործոցը։ Այս՝ մեզ ամենեւին յայտնի չէ՝ ժամանակակից վկայութեամբ մը։ Սակայն բան մը՝ որ լաւ իս առանց տարակուսի է, վերջինս՝ առաջնոյն ներշնչման տակ գրուած և բարգաւաճուած ըլլալու է, թեպէտ և գրուելուն ու բարգաւաճելուն պարագաներն ու պահանջը Հ. Եղիայէն բոլորովին անկախ իսկ կրնան եղած լինել —։ Անաւասիկ լաւ Թատերախաղի մը՝ հանճարեղ և խանդավառ մտանկութեան վրայ Թողած խոր ազդեցութեան արդիւնքը։

Ժթ. — Հ. Եղիա Թոմասեանեանի լաւագոյն խաղերէն մին է և՝ Ովրատխոսեանց և կռապատխոսեանց մեծամարտութիւն, զոր Արտրուածով, զոր ներկայացուցած են 1804ի Բարեկենդանին (Փետր. 7) Հ. Յովհ. Գասպարեանի աշակերտները, կամ ժե դասի Նորընծայք։ Ա. տեսարանն է մեր ամուսնութեան մը՝ գիւղերուն մէջ, ուր աղօսամամանոյ կանթեղի լուսով կը տեսնուի Հերոս գիւցուհոյ նուիրական առեւի. իսկ Ովրատխոսեանք անուանէն գուրս վրանի տակ քուն կ'ըլլան։ Մինչեւ եղբայրն ահեղ առնուիլն գարհուրած՝ յանկարծ կ'արթննայ, և կը սկսի խօսիլ. որուն ձայնէն կ'արթննան միւս եղբարքն եւս։ Եւ իր երազը պատմելու համար՝ կ'երթան անուանը, դէպ ի սօսին, ուր կը լուին գազաններու մնջիւնները։ Երկրորդ տեսարանով՝ կը ձեւանայ Տուղդա Թագաւորի արքունիքը, ուր կը խորհրդակցի նա, իր չորս խորհրդականներուն հետ, Ազբայեցւոց վրայ, և կը մտնեն երկու ծառաները։ Երրորդ տեսարանը՝ կը ձեւացընէ մենամարտութեան դաշտը՝ անուանով ի միասին ուր կը տեսնուին մէկ կողմէն Ովրատխոսեանք, իսկ միւս կողմէն ալ կ'երեւին Ազբայեցւոց լեգէոնները. որոնք արնգով և թմրկահարութեամբ շրջան մ'ընելէն ետքը՝ կը շարուին մէկ գծի վրայ, և կ'ազդարակեն։ Չորրորդ տեսարանն է Հռոմեայ հրապարակը, ուր Ովրատխոսի յաղթանակը կը տօնուի։ Կը յուսայնն ցնծութեամբ մնջեսիկները, Պատուիրա և Տարկուինա և մանաւանդ Ովրատխոսի հայրը՝ Պորփիս, իր կրտսերագոյն որդւոյն Ագրիպինոսի հետ։ Հանսալի է վերջին գործողութիւնս, աննկարագրելի են և՝ Ագրիպինոսի ցաւը՝ Կուրատիոսեան բարեկամ եղբարց մահուան վրայ, և Տուղդիսի, Ովրատխոսի և Պորփիսոսի ուրախական ցոյցերն և խօսակցութիւնքը։ Հետուէն կը լուին պահ մի քնարի և թմբուկի ձայներ. ապա կը մտնեն բազմութիւնք զառամեանց, ամէնքն եւս ապխտակ հագած և պատկառոտ. որոնք կը բերեն զՈրատիոս պինուորական հանդերձանօք, և գետեղուած մեծ հրապարակը՝ կը հնչեցնեն նուագարանօք ազի յաղթական երգը.

« *Ցընծա Հռոմ մայր քաղաք, յաղթական ազանց Ազբիայ, (կրկ)*
ՂԶ. — *Արուեստ երկայնաձեռն ողբերգութիւնք՝ հինգ Գործողութեամբ, որուն ներկայացման տարեթիւը նշանակուած չէ՝ մեզ ծանօթ ընդօրինակութեան մէջ։ Հ. Աբ. Բազրատունի՝ Մեսռոպեան Թարգմանած է՝ արձակ շարադրութեամբ։ Տեսարանն է Քաղքրեան արքունիքը, Շօշ քաղաքին մէջ։ Անիթը պարսկական պատմութենէն առնուած է. այնինքն է՝ Արտաւան նախապար, որ ուզելով յափշտակել Թագաւորութիւնը՝ կը սպանէ զաւով Քաղքեդոնը, և յանցանքը Գարնէի վրայ ձգելով՝ կը զրգռէ արքայորդին Արտաշէսը, որ իր եղբայրը սպանէ։ Բայց երբ հետամուտ էր գտանելու նաեւ Արտաշէսը, յայտնի կ'ըլլար նենգութիւնն, որով և սպառնալով Արտաւան՝ կ'ընդունէր իր չարութեան արժանի վարձատրութիւնը։*

Խոպոխ սկիզբը զրուած Յառաչաբանը՝ զոր կ'ընէ Քաղքեդոնի առուերը կամ ուրուն, և որ կը պակսի «Բազմավէպում» հրատարակուածին մէջ՝ Թարգմանչին պիտառն է, և յոյժ պեղեցիկ։

ՂԷ. — *Որդւոց զաւակութեան անմոռութեան վիճակներ կատակերգութիւնք, երեք Գործողութեամբ։ Անձինքն են խեղնուկ Թորոս, Զար կիրակոսիկը՝ Թորոսի որդին, Մարքոզ Մարգոնիկա, Պրաքիս՝ արհեստքամ վաշխառու, Սարգիս՝ ծառայ Կիրակոսի, Գաղուամ՝ եղբայր Կիրակոսի, կառավարիչ, Եսաւաքի և փերրաքի՝ յոյն շոհադէաններ, Հաճեթաթոռ, Նուագածուներ, Տիմիթրաքի։*

Խոպոխ Պոլսոյ առվկօրէն լեզուով զրուած է։ Ինչպէս հեղինակի անունն՝ այնպէս և ներկայացման տարեթիւը նշանակուած չեն։

ՂԸ. — *Յամին 1853 ներկայացուած է Կալանոս ազգի կատակերգութիւնք՝ հինգ Գործողութեամբ։ Անիթը պարսկական կեանքէն է, և անձինքն են Կալանոս՝ գիւղացին խոպոխ և արդէն սխալար հին բարքերու, Մալխազ՝ վաճառական և արդի Կալանոսի, Ձղմիմ՝ Մալխազի վատնող եղբայրը, Խամ Մօշ, Մանիսասար և Փոստոս՝ միջտէրներ, Վասաք՝ Մալխազի միւս եղբայրը, Օսման՝ Քարք նաւավար, Ծատուր, Հիւսի, Միհրդիմ և Հիւսիսի՝ պարտատէրներ Ձղմիմի, Գևրիմ, Սասրք, Մղանի և Գասպար՝ Կալանականներու խառնիճաղանջ ժանչերը, Տիմիթրաքի՝ յոյն։*

Խոպոխ Պոլսոյ Բրքախառն աշխարհաբար լեզուով զրուած է. յօրինողն է Հ. Պետր. Մինասեան։

ՂԹ. — *Ամիսս տրեսերբերի կատակերգութիւնք՝ հինգ Գործողութեամբ, զրուած է աշխարհիկ բարբառով։ Տեսարանն է ի Կ. Պոլիս, բայց նիթը ունի զուտ ազգային կեանքի պատկերը կը ներկայացնէ։ Անձինքն են Ազատի՝ առեւտրական, Բարդաժան՝ անսերնդի և անեղեամ. Թոզուած որդի Ազատեայ, Յուսուֆիկ՝ Ազատեայ շոյուած որդին, Վասաք՝ Ազատիին եղբայրը, Աբրիճ և Տիմիթրի՝ Ազատեի հայ և յոյն ծառաները, Կիկո՝ Ազատեայ որդւոց վարժապետը, Խանութայ՝ հրեայ բժիշկ, Կիւրեղ օղոռ և Թորոս՝ Ազատեի բարեկամները, Լօմեր և Խրդայիմ՝ խուլատեր, Ալի և Հիւսեին՝ պրիկաններ, Բեքօ՝ խոպոպցի հիւան։*

---

1. *Տես ամբողջապէս 1879 ամի Բազմավիպին մէջ, եր. 23, 125։*

ձ. — Աբանիզեցագրի բժշիկներ գաւեչա մ'ալ ունինք, որուն հետեւակի է Աբրիկ գաղթօղին, և Բարգմ. Հ. Գ. Զ։ Ներկայացած է 1853ին։

ձԱ. — 29 Յունվ. 1853, ներկայացնելու համար գրած է Նոռաիտար ազգերգաբիները, տես Հանդիսաբ, որ Լատինի նախկին էշխոլին Պրակաճ և Նոռաիտարի և Հանինաճ և Հանինուրճաճ արկածները կը ձեռացնէ՝ այլ և այլ տեսարաններով։ Անձինքն են Նոռաիտար Բազրատար Լատինին, Հանինա և Հանինուրա՝ Նոռաիտարի քոյրերը, փառաւորու և Լուսինա և Տիրերիոս՝ հօրեղբայրներ, կրօնիկոս՝ քրմապետ։ Տեղացին է Լատինի շրջակայքը։ Բարգմանուած յօրինած է Հ. Վարդան Հերմանեան։

Նոյն աշխարհաբար լեզուով է։ Հետեւակը կամ Բարգմանիչն ալ անձնաւոր է։

ձԲ. — Նոյն որը ներկայացած կը յիշուածոյին նաեւ Աղբատ Անորիկ գաւեչան, որուն յիշեցուցած է Հ. Վարդան Հերմանեան։

ձԳ. — 1857ին, Փետր. 12, ներկայացած է Հին և նոր Ուխտերուն քազաքական կառավարութիւնը, հինգ Գործողութեամբ։ Տեղացին է Կ. Պոլսոյ մէջ. հետեւաբար նոյնս հետեւակին Հ. Գաբ. Մխիթարեան գիտուն նպատակն է՝ պարտական կինաց պատիւները նկարագրել, իրեն հին և նոր ձեւակերպութիւններով։ Անձինքն են Մարդար ազգ՝ հին գաղափարի տիպար, կիրակոս՝ Մարգոյ եղբայրը, Հանդարձակ, Բարեկ, Զօնրաց և Աչիակոզ՝ Մարդարի նոր գաղափարներով ապրուած արդիք, Բոնաս և Մանիասար՝ Մարդարի ծառաները, Յուսոյ, Էրանոս և Նեղեսի՝ պրոցիք, Սանեսան և Զևնոր՝ Մարդարի բարեկամները, Խամ Էսիս, Նիկոլ՝ Նուագած, Նուագուհիներ։ Նոյնս գրուած է աշխարհաբար լեզուով։

ձԴ. — Մեծաձախ խնդրոյ գաւեչայ, որ ներկայացած է Փետր. 11ին 1859, յօրինած է Հ. Գեղ. Մխիթարեան՝ 20 տեսարաններով։ Գրուած է աշխարհիկ լեզուով։ Տեղացին է Կ. Պոլիս։ Նիւթը գործ գործակից հայկական կեանքին է, այսինքն՝ հայոց Աշխարհին՝ բարեկենդանին օրերը և Պոլսո Նշխարհին ծանօթով, բայց անոր կացոյց հանուած մեծաձախ խնդրոյ մը կը կազմուին, անոր պատմին մէջ։ Անձինքն են Ակոզի, Տեխան, Նիկո, Բոնաս և Մաս՝ այլազգիներ, Պոլսո Նշխարհի՝ կծծի անձեր, Նիկոլ՝ ծեծ անձեր, Ասկոզեանի՝ Նիկոլ՝ Նուագուհիներ, Ծառայ և Մխոյ՝ Նիկոլ Նուագուհիներ։

ձԵ. — Նորերգ ազգերգիներ կառավարութիւնը, որ յօրինած է Հ. Գեղ. Մխիթարեան՝ հինգ Գործողութեամբ, ներկայացած է ի 23 Փետր. 1859։ Տեղացին է ի Կ. Պոլիս. նիւթն առնուած է պարտական հայ կիներէն, այսինքն է՝ նորկրօն արդեաւ՝ իրենց Հանդիսաբ հօրը դէմ բռնած ոգրութիւնը։ Անձինքն են Մանիասար՝ ամենաման ախտաբոյ և ամբարտաւան հայր մը, Ջանի, Ջօզեֆ և Էրիկ Մանիասարի չեք արդիները, Պրոնի՝ վաճառական, Շանոյ, Օրատիոս, Կրաց, Ջոան, Շուայր, Լատին՝ հինգ բարեկամներ։ Գեղեցկատեսիլ, կիրակոս՝ հինգ քարտուղար, Մարկոս և Յորդան՝ սուտ վկաներ, Հրամիր և բնակիչներ, Զօրականներ։

Նոյնս հետեւակին նպատակն է — ազատամարտութեամբ և գործի անարգանքով — պատկերել ու պժգալի բնել հնոյ անարգի կոպտութեան և գժտութեան հետ՝ նոյնպէս նորերու ֆանէնական բնութիւնները։

ձԶ. — Հայ գաղթականի մը արկածները կառավարութիւնը՝ հինգ Գործողութեամբ, չինած է Հ. Գեղ. Մխիթարեան՝ կարճով և գաւչպարոլի խառն գաւառարարքառներով։ Տեղացին է Կարին՝ Պատկերիչի բանակին մէջ. իսկ նիւթն է՝ կարճելի Կիկոզ անուամբ մէկը, որ հայրենի աստէն վտանգի պէս՝ Պատկերիչի ժանտախտ պիտանարութենէ գաղափար նոյն իր ծառային հետ Տրապիզոնեան կը գաղթէ. և յետոյ վերադարձած իր հայրենիքը, անոր անարգութեամբը կը հրճուի։ Եւ մինչդեռ Պաշտպանողաց լեզուով հոն իր գիտէն անցուդարձերը կը պատմէ, յանկարծ կը ձերբակալուի. և այն ինչ ինքը կը գոռայ գիտնական պատճէն հանդէպ, Բազրատեան հայրապէտ գործակին և նոր քաղաքական մինչդարութեանն ազատ կ'արձակուի։

Անձինքն են Տեխան՝ ամենատէր, կիկոզ՝ Տեխանի որդին, Պատկերիչ՝ առաջնորդ գերապատիւ, Բազրատեան՝ հայ գերագոյն, Գաղտար՝ Կիկոզի ծառան, Թաթոյ՝ եղբայր Գաղտարի, Էրեզ՝ անցագրի, կրաց և Տիրոց՝ պահանջորդներ, Զօրականներ։

Կառավարութիւնս նորատեսակ լեզուի և գործարանութեան համար՝ ունի նաեւ այսօր իր արժանիքը։ Հաւանօրէն Հ. Գրիգոր Ալիշանի Յուշարարութիւնէն յիշեցուած է։

ձէ. — *Արշակ Բ ողբերգութիւն, զոր յօրինած է 1860 Բուսականերն Հ. Պետրոս Վինսեանն՝ հինգ Հանգիսաւ, և որ այլ և այլ անգամ ներկայացուած է Տեսարանն է Ակնոյ բերդին մէջ։ Նիւթն է իբր 378 Բուսականերն կռուարտաւ Հայոց պատմութեան ժամանակ արքայնալին մին, այսինքն է՝ Հայոց քաջ Թագաւորին դաւով մատնութեան և եղերական անձնասպանութիւնը իր հաւատարիմ ծառային Գրիգորի հետ։ Անձինքն են Արշակ Բ՝ Թագաւոր Հայոց, Գրիգոր՝ վերակացու արքունի տան, Զրուան՝ անձնապահպան Գրիգորի, Սիքար՝ Աղախնաց Թագուհուն, Մոլեկ՝ խորհրդական Սիրուոյ, Մարի՝ տարի երէց Տեսրնի, Գոչարս՝ իշխանապետ Անդոյ բերդին, Մերուժան՝ պատգամաւոր Շապհոյ և ուրացող, Քաչոլեաց Սիրուոյ (երեսուն), Մերուժանի ոգեկիցներն (երկու), Պահապանիկներ՝ Անդոյ բերդին։*

ձը. — *1860ին ներկայացուած է La Trufferia կատակերգութիւնը, զոր յօրինած է Բարսեղեանցեան Հ. Պետր. Վինսեան՝ հինգ Գործողութեամբ, ուղեմ կենդանի իր հերիաթութիւնը և խոյն ու գնահատելի ընել։ Սակայն կ'ըսուի թէ իր անբ մտածած ըլլայ գինքը նաեւ խայտերէնի մէջ. զոր խայտն ունի այս պատճառս գտարձութեան ամէն առած է եղեր հանդիսականաց, Հ. Արս. Բարսեղեանց զրած ատր գիտցութեամբը։*

ձթ. — *Երուանդ ողբերգութիւնը, որձակ չարագործութիւն՝ հինգ Գործողութեամբ, զոր յօրինած է 1857ին Հ. Պետ. Վինսեան։ Այս խաղս նիւթն արչաւ ար ալ նոյն է 1815ին ներկայացուածին հետ, որ հրատարակուած է 1869 ամի «Բազմավէպին» մէջ, սակայն անձանց և իրաց նկատմամբ՝ վերջինն չատ տարբերութիւններ ունի։ Տեսարանն է անտառ և բոլին Անահիտ դիցուհոյ, զոր ժողովուրդը քար առաջով և երգերով կը պատկէ։ Իսկ անձինքն են Արտաչէս՝ որ և Վաղինակ, Երուանդ՝ Մար և յաջորդակ Արշակունեաց գահուն, Տուր՝ խորհրդական, Հրանտ՝ հայր Վիտակայ, Ճուարճ՝ պատգամ, Սիքար՝ պարտպան, Արտաշագ՝ զօրագլուխ, Բագրատ՝ անտառապետ, Առաջ՝ Բագրատի որդին, Վիտակ՝ Հրանտի որդին, Պար, Զինուորներ։*

* * *

Դիտողութիւններ և եզրակացութիւն. — Մենք ուզեցող կը համարինք մէջ բերել նաեւ 1860ական Բուսականերն մինչեւ այսօր երկասերուած կամ Բարգմանուած անհատ ողբերգութիւնները և կատակերգութիւնները, զոր ներկայացուցած են Մխիթարեանք իրենց վանքերուն և արտաքին դպրոցներուն մէջ՝ այլ և այլ լեզուներով. սակայն կրնանք ըսել՝ որ անչէշտակ Բարեւս խաղերու թիւը չէշտակագծներնուս կրկինն ըլլալու է։ Երկրորդ՝ պէտք է դիտնալ, որ այս վերջիններս իսկ մեզ ծանօթ եղածներն են միայն, և ոչ թէ բոլորը. այնպէս՝ որ ամէնքն ի միասին առած՝ կրնան 250–300ի հասնիլ։ Այդ Բուսերասխաղերէն 22ի չափ «Բազմավէպի» միջոցով, և 20ի չափ ալ առանձին տպագրութեամբ ի վայելս տպղին ընծայուած են. իսկ մնացածներն անտիպ մնացած։

Այդ ներկայացումներով Մխիթարեանք ոչ միայն գործերական հայ հայրենիք մ'ալ խաղիդ մէջ առեղծած են, իրեն հին և նոր, առաքինութեան և մտքի մատաղպարներով, այլ և գիտցած են ընդհանուր պատմութենէն՝ նոյն իսկ հետաքր Վինսեանի — համամարդկային այնքան և այնպիսի վսեմ դէմքեր բեմի վրայ հանել և ներկել, որոնք հաւատարմութիւն, անձնազոհութիւն, վեհանձնութիւն և ազնիւ հպարտ և մի առաքինութիւններ կը ներշնչեն հայ մանկտւոյն և մտքի կը պատրաստեն։ Պարտնանները դեռ չգիտած՝ Մխիթարեաններն այդ հարիւրաւոր ներկայացումներով է՝ որ Բուսերասիրի վրայ կը հանէին, կ'երգիծարանէին ամէնուն վարք եւ բարքն ու գծծութիւնները. իսկ միւս կողմէն ալ կը տաշէին և կ'ուղղէին ազգայնոյ՝ գաւառական և քաղաքացիական կենցաղի վերաբերեալ հին խոչորութիւնն ու նորամուտ թերութիւնները։

Պարտէնալ գիտելու էական կէտ մ'է և այս, որ առանք միայն Ս. Ղազար կղզեկին մէջ չէ՝ որ կը տեղծէին և կը բարգաւաճեցնէին Բուսերն և Բուսերական

պրակտիքները, այլ նոյն իսկ իրենց հետաքրքրութեան, նոյն իսկ ապրելու և առաջդիմելու ձգտումների, այնինչ Պարիսը, Տրանսիլվանիան, Պոլսի, Վիեննայի, Պետերբուրգի և Կրեմի մէջ, ուր կը հետապնդէր հոյ մանկտին։

Իսկ այն հարիւրաւոր և հազարաւոր աշակերտները, որոնք թէ Վիեննայում և թէ միւս տեղերու Մխիթարեան դպրոցներուն մէջ մեկ գործն ունէին այդպիսի խոպան ձեռագիրներ կը մանուկցնէին — կամ գործն ձեր կատարելով և կամ հանդիսաւոր վիճակով — կարելի չէ, որ մեծապէս չազդուէին անոնց Բազմ ապատրաստութենէն և չներշնչուէին Բանասիրական գաղափարներով։

Իրաւունք, ոչ ծանօթ է հայկական Բառարանի պատմութեան, պէտք է գիտնայ, որ Կ. Պոլսոյ մէջ առաջին ակնակներն եղան Մխիթարեան դպրոցներու աշակերտները։ Այո՛, Պէշիքթաշլեանները և Չէրքիսեանները 1860ական Բառարանին մօտերը Բառարան մը ունէր Մխիթարեանն ալ, այն է՝ Հ. Գրիգոր Գազանճեանց ձեռագիրը՝ որ կը գտնուի նոյն Միջոցին, և որու Բերայի մէջ փոքրիկ ներկայացուցիչներ ունէր, կռանակ անդրանիկ սրբերգութիւնը դեռ չէր տեսած. և այնպէս հետզհետէ խումբեր կազմել և Բառարանի գործն ընդարձակել։ Մխիթարեան Բառերգութեանց և կառակերգութիւններու ընթերցանութեանց և հետաքրքրութեան՝ է՝ որ Ա. Պէշիքթաշլեան կը յորինէր ապա իր կռանակ, Վահան և այլ սրբերգութիւնները. Հէրիմեանն իր ժիւլիսը, Գրառաչեր, Սանիէլի ու Սիրատը. և Հ. Յարէն Տարկէ՝ իր Գրչակ Բ, Վարդան, փառաւոր, Լուսին սրբերգութիւնը և Գաթրանիկոյ կառակերգութիւնը. Գաբրիէն իր Տիգրան Բ, Գրչակազունց հարսանեկան անիկոնի և Սէր օրերը. Թոմէ. Թերգիանն՝ իր Սանդուխտ, Խոսրով և Գրչակ Բ սրբերգութիւնը. Ա. Ետայեանն՝ իր Գրչակ — Գիւղ Օրիորդ երեքգութիւնը. Մեսրոպեանն՝ իր Հայկ, և Վեհ Լուսինեան գործերը. Ա. Գազրէկեանն՝ իր Գաբրիէլը, Վահագնագին՝ իր Ներսես և Վրթանէսին, Սեպուհ Պետրոսեանն՝ երիտասարդական մեծ սրբերգութիւններ և կառակերգութիւնները, որոնք են Մարի և Խոսրով, Հերիկ, Գրիգոր–Մարի, Սուրբ փրկութիւնը, փարթամ Գէորգ, Գրիգոր, Տօնիա Լուսնոտ, Զարեհ, Տիգրին Օծութեան, Գրագի Գեղեցիկ, Գրչակ երկրորդ, Յեփրագինին աղջիկը, Սերիմ Գ., և այլն[2]։ Այն նոր գործերուն վրայ է՝ որ արդէն շատեր նոյն կը գրէին ապա նոյնութեամբ սրբերգութիւններ և կառակերգութիւններ։ Գարձեալ մեծապէս չէ խօսիլ, որ ամենքն ներշնչուած՝ նոյն ապա Ռուսաստանի Բանասէրներ գրողները, Կարինեանց, Բարխուդարեանց, Բուզինեանց, Սեղրակեանց, Պերճ Պռշեանց, Գրագեանց և այլք։ Վերջին ժամանակուս ապրողներ գերազանց և հերոսական գերասաններ նոյն Պ. Գրամեան, որ հանապազորդ հոչակաւոր առաջնորդ և ամէնուրեք Բառարանի վրայ, որ բերանն Մխիթարեանց գրական ուսման եղած էր, և գերազանցապէս Մխիթարեանի մը, այն է Գերեզ. Հ. Մոսէս Գէ պերդեանէն գոած խնամոց և խրախուսանաց չնորհիւ է՝ որ կը մտորէր՝ որ մի օրեան փոյթ և փառք ունենար։ Եւ ասանձին Բազմավէպի մէջ հրատարակուած գրական և չափաւոր խոսքերը, գրաւ անդադար կը կարդար, կը գրէին իր հանճարն և ճաշակը, կը պատրաստէին օրեան յօդուածներ։ Ան ինքն ամերիկան ունէր բազմից յայտարարել՝ թէ այդ ամենուն կը պարտէր Մխիթարեանց և իրենց գործիք «Բազմավէպին»։

Առանձին ուրախութեամբ մենք այս տող կը հետապնդենք արդիւնքը՝ կարող ենք եզրակացնել, թէ ինչպէս առաջդիմող և ամենահաւատ Բառարան՝ Մխիթարեանց աշակերտներուն, այնպէս և ազգ՝ իրենց մտքի ծաղկանկարներուն պատրաստ են. որոնք 86 տարիներ յառաջ կանխակին գաղափարը, և ամէն կերպ Բառարանական խոսքով կրկին ջանացին նոր ակնարկը։ Հետևաբար՝ ինչպէս պրակներն ամէն հրատարակուած՝ ամենայն Բառարանական ուսումնասիրութեան վրայ, որ բերանն Մխիթարեանց գրական ուսման եղած էր, և գերազանցապէս Մխիթարեանի մը, այն է Գերեզ. Հ. Մոսէս Գէ պերդեանէն գոած խնամոց և խրախուսանաց չնորհիւ է՝ որ կը մտորէր՝ որ մի օրեան փոյթ և փառք ունենար։ Եւ ասանձին Բազմավէպի մէջ հրատարակուած գրական և չափաւոր խոսքերը, գրաւ անդադար կը կարդար, կը գրէին իր հանճարն և ճաշակը, կը պատրաստէին օրեան յօդուածներ։ Ան ինքն ամերիկան ունէր բազմից յայտարարել՝ թէ այդ ամենուն կը պարտէր Մխիթարեանց և իրենց գործիք «Բազմավէպին»։

---

1. Առաջին այս բանիս համագրելու համար բառարան է բազդատել Պէշիքթաշլեանի Գրչակ Բ և Վահան սրբերգութիւնները Բազրատունիէն և Հ. Գաբ. Մինասեանէն յորինած Գրչակ Բ խաղին և Հ. Գաբ. Ալեքսեանի Վահան սրբերգութեան հետ։ Գրչակս նաև մեր ազգային թատերախաղերը։ Պէշիքթաշլեանի թատերախաղերուն մէջ իսկ իրական տեսք գեռ մաս չունի, ի բաց առեալ Աղազակին կառակերգութիւնը, ուր առաջին անգամ նկարուած է պառաւ Հերիկին։

2. Որոնց մասին պէտք եղած տեղեկութիւնները — հնդկական կնատպրութեամբ հանդերձ — տեսա մեր 1904ին հրատարակած Գրչակին մէջ, և նոյն տարի Բազմավէպին։

այսպէս նաեւ Բառերական ներկայացուցիչներու սկիզբ առաջներն, կրնայ բաւիլ իրաւամբ, թէ Մխիթարեանք եղած են։ Եւ թէ այդ խոպերէն չառերը թէպէտեւ հրատարակելու դիտմամբ յօրինուած չեն, այլ իրրեւ ընտանեկան անձնիկ դրուածքի համար պատրաստուած նախախոհներ, սակայն և այնպէս թէ բանասիրականն առհասարակ եւ թէ գեղեցկագրական տեսարաններու կողմէն մեծի վիպ են՝ քան անկէց վերջ Պատոյ մէջ կամ այլուր տրուած ներկայացուցիչներէն չառերը։

Այդ խոպերն, որոնք իրենց տեսակին մէջ ուրոյն մասնաւորութիւն մը կը կազմեն, եթէ ամբողջապէս հրատարակուած լինէին մանաւանդ անոնց մեծ ծառայութիւն պիտի մատուցանէին ապագային նոր Բառերգուաց. այնու մանաւանդ՝ որ անոնցմէ չառերն աշխարհաբար լեզուով գրուած են և ամենուն մատչելի։

Սակայն տարաբաղդաբար և սակ մեծի ուշադրութիւն ունի Մխիթարեան Բանասիրեալներ, որոն ի գէպ կը նախընդրենք յաջորդ պրակիս։

ԳԼՈՒԽ ԺԲ

Բանաստեղծութիւնն ու իր իսկական դաղտնիքը. — Մխիթարեան քնարն ու անոր նախկին երգիչը. — Մխիթարյոյ բանաստեղծութեան արտաքին ձեւի պարզութիւնն ու ներքին մտածութեան խորութիւնն ու առատութիւնը. — Մխիթարեան բանաստեղծութեան երեք շրջաններըժողովրդական, կլասիկական և ռոմանտիկ. — Նշանաւոր բանաստեղծներն և անոնց վրայ քննական տեսութիւնք. — Բռնայանդ քերթութեան վեհագոյն վարդապետն ու երգիծարան քերթողը. — Ազգային անգերազանցելի տաղաչափն ու քերթողը. — Փնաբերդութեան քերոյն պատճառն և անոր քնարի դաղտնիքը. — Մեծ հատառացեալն և Հայոց առաջին բանաստեղծն ու անոր ընդհանուր հմայքը. — Մխիթարեան քնարի գեղեցկագիտական կատարելութիւնները և անոր երգերու ընդհանուր արձագանգը:

ԱԽԹԱՐԵԱՆ դրականութեան կրկին հիւսուածքութեանց վրայ խօսելէն վերջ, դաղափար մը տալ եղանք՝ ի հարկէ՝ նոյն իսկ բանաստեղծական հրատարակութիւններու մասին: Բայց այլ ինչ է յիշատակութիւն բանաստեղծական գործոց, և այլ արտկել ու քննադատել անոնց ձեւերով ներկայացուած բանաստեղծութեան արժանիքը կամ թերութիւնները: — Մենք պակաս մի թողած պիտի ըլլայինք մեր ծրագրին մէջ, եթէ դամէնքը հետաքրքրող և հրապուրող այսպիսի նիւթի մը վրայէն լռութեամբ անցնէինք: Վասն զի Մխիթարեան դրականութեան երկու առաջքը, այսինքն՝ դրաբար և աշխարհաբար մատենագրութիւնքն՝ իրարու հետ կապող կամուրջն է բանաստեղծութիւնը:

Տարակոյս չկայ՝ որ դրականութիւն մի այնչափ ուելի գեղեցիկ է, այնքա, փաթ և հրապուրիչ, որչափ ուելի իր պերճախօսականութեամբը կը խօսի ընթերցողներու սրտին հետ, և կը դիպէ անոնց զգայնութիւնը. որչափ ուելի իր խորհրդաւոր երաժշտութեամբը կը լեցնէ հոգիները՝ զինչկցուցիչ ուխտով: Եւ առաջին՝ եթէ բանաստեղծութիւնն է հոգւոյ, մանաւանդ թէ ճաշակաւոր և պայծառ հոգիներու երաժշտութիւնը, եթէ է դաշնակաւոր պերճախօսութիւն, կրնանք ըսել թէ՝ յատուկ է Մխիթարեան դրականութեան, և նոյն իսկ ասոր բնորոշ և ընդհանուր յատկութիւնը կը կազմէ, որպէս Յատկոյ կազմուածոյ երկինքն և հայրենեաց սէրն ալ իրենց գեղեցիկ ներշնչութիւններու սպրեակը:

Ինչպէս սէրը, այնպէս ալ սիրոյ լեզուն, սիրոյ երգը՝ բանաստեղծութիւն յատուկ է — ուելի կամ պակաս — ամէն մարդու ինչ վիճակէ ալ ըլլայ նա. այսպէս եւս մարդկային ո և է գիտելիք (scibile) թէպէտ և ունի իր սեպհական աստիճանն, էութիւնն և լեզուն, սակայն համաբնական արտայայտութեան ձեւի ներքեւ կ'ըլլան յաճախ նաեւ բանաստեղծական, նաեւ պերճախօսական: Այո, նոյն իսկ բնութիւնն ինչ մի արտաքին, ներքին անեղծ գեղեցկութեանց արտայայտութիւնն առ՝ ունի նոյնպէս բազմապատիկ կամ բարդ երեւոյթներ, որոնցմով Բազուն գործերն՝ այլ ապդ կը յիշատակեն ու կ'արտայայտուին, և մենք անոնց գիտնոց հետաքրքրած և զարմացած՝ կը դոչինք երբեմն. Ինչ գեղեցիկ, ինչ բանաստեղծական բան է: Հոմերոս, Պղատոն, Վիրգիլիոս, Դանտէ, Բիւֆֆոն և Լապլանդացի, Թալմուտ Ազգինացի, Շնորհալի, Նարեկացի, Դանտէ, Բիւֆֆոն և Լապլանդացի, Թալմուտ Ազգինացի, Շնորհալի, Նարեկացի, Դանտէ, Բիւֆֆոն և այլք՝ էին այնչափ գերազանց բանաստեղծներ, որչափ մեծ աստուածաբաններ, խնամոյք՝ էին այնչափ գերազանց բանաստեղծներ, որչափ մեծ աստուածաբաններ, խնամոյք՝ մաքրներ, մաթեմատիկոսներ և բնախօսներ: Ու ինչ որ բուն առարկային կը կազմէին այդ մարդոց գործ գրական գիտութիւնները, նոյնները գործածել սանոց անհատական ձիրքեց և գերազանց արտայայտութեան համաձայն՝ յօրինած են հոգւոյն և սրտի ամենայն

նագիցիկ և ամենատարբեր դրացումներով՝ բանաստեղծութիւնը։ Որոնց որ ծանօթ են փիլ յառաջ յիշուած հանճարներու դրական գործերը, բաւական պիտի համարին։ Իսկ անոնց — որ ծանօթ չեն — մեր միտքը բացատրելու համար, բաւական կը համարինք ըսել, որ Իլիականը արչաւն որ իր արուեստութեան ձեւովին է բանաստեղծութեանց վերապանցը, նոյնն՝ ըստ իրին՝ կը կազմէր և հեթանոս Հելլադայի ամենախոր սուրբ գրութիւնը. որուն վրայ և յոյներուն և հիացան Պորփիւր և նոր պղատոնական խնամասէրը։ Այսպէս նաեւ իտալական բանաստեղծութեան գլուխ գործոցը, La Divina Commedia, բան իրին և վարպետութեան ուրիշ բան չէ, բայց եթէ միջին դարու Դպրոցական սուրբ գրութիւնը։ Նոյն իսկ արեւմտեան եկեղեցւոյ վերապանց բանաստեղծական նուագներն ուրիշ բան չեն, բայց եթէ սրուագրութիւնք Ակուինացի վերադոյն սուրբ գրութեան ընդարձակուած արուն ու ոսկրին։

Ամենք արդի ազգային դրականէն առիթ առնելով գրել Միխիթարեան բանաստեղծութեան մասին, կարծէք թէ բոլորովին ձգած էին վերը արուագրած սկզբնական իրողութիւնները, մանաւանդ թէ անխոհեմ ոգեւով — սխալմամբ կամ վիճակումնի ձկտումով — բանաստեղծութեան ամբոխ շարժիչներուն հետ՝ նաեւ անոր բազմապիսի գեղեցկութիւնները և չնորհքը, գրին սուր էութիւնը մի միայն աշխարհական սիրոյ և զգայական անկանքը չոյող և զօչասող զրացումներ ու անոր արուագրութեան մէջ։ Իսկ ամենք ալ դնել ոգեւով կարծես իրենց միայն գիւրամուտչելի աշխարհիկ լեզուին մէջ, հետեւաբար բոլորովին սորերը կերպով քննադատեցին Միխիթարեան դասական բանաստեղծութիւնը՝ բան մը նշ որ է իրօք։ Այսպիսի դատաստաններ սակայն այնքան միայն կը գօրեն, որչափ չղչերան մը կամ խորդի անուութիւնք՝ արեգակեան ճառագայթները կամ բնութեան գեղեցկութիւնները չափելուն մէջ։

Առաջ մենք ընդհակառակն Միխիթարեան բանաստեղծութեան առյդ արժանիքը վերագտնելու համար՝ կարեւոր կը համարինք հետեւեալ հիմունքը վրայ հաստատել մեր քննադատութեան խորհուրդը։ Այսինքն՝ նախ յուշելով, թէ բանաստեղծութեան էութիւնն ինչ բանի մէջ կը կայանայ. և երկրորդ՝ թէ սրբոյն ընդարձակութեան գեղեցկագիտութիւնն գործադրուած են գոյն Միխիթարեանք՝ նոյն իսկ կատարելութեան պատկառելի և խնդամալիներուն մէջ։

Մեծ բանաստեղծ մ'ուզելով քերթողութիւն սրակել բանաստեղծութեան խորհուրդը, այսպէս կը գոչէր հիացած. «Եթէ գիտ ի յերկինքը առառնալ այս ծառը վրայ, ուրուն առաքեալները Յաչուներու բնակութիւնը, ծաղիկներէ՝ բարեան կը գործեն օդը, և ծիծաղուն սիրտերը՝ կը պրոնցնեն գեղեցկութիւնը. իսկ անոր խոր խորութեան՝ կը պնդէ իր արմատը սեղեցկութեան հետ։ Այս այսպէս է բանաստեղծութիւնը»։ Սակայն բանաստեղծութեան գեղեցկութիւնը կը բերէր մեզ՝ սեղի ճշդութեամբ և գրականապէս, քան թէ համակութեամբ գծել անոր բնութիւնը։ Այսինքն՝ բանաստեղծութեան և մարդկութեան և անոր խոնարհ ծագումը։ Եւ իրօք, եթէ հարկ է կշռել մարդը — և իր հետ նաեւ բարբառը — խոհեմով գրութիւն հոգւոյ և մարմնոյ. ապա սրեսին պէտք է՝ որ անոր յատկացուի այն նախնական և բնական լեզուն, որով այս գրութիւնս կատարելապէս կ'իրականանայ, կը բացատրէ և կը վաւերացնէ՝ բոլոր իր զգայական և գաղափարական ներշնչութիւններն ու բնածին և սրանաւական գործադրութիւններով. այսինքն է՝ բոլոր բանաստեղծութեան։ Մարդկային բնութեան ամհասարակ, և ոչ թէ սահմանի անհատներուն գրութեան, բնորոշ հարկ մ'է գրոյ կայ, զի ինչ որ ներքսապէս զինքը կը յուզէ և կը շարժէ, նոյնը նոյնպէս ազէ ու երգէ։ Եւ այն բերանը, որուն կը յաջողի սր և է վիճակի վերաբերեալ անձնական ներգործութիւնն և կամ բնութեան ներգործութեանց անհատական ձայնը և ձայնիկը խոսքի մէջ մարմնացնել, նա է՝ որ ճշմարտապէս կը բանաստեղծէ. զի մարդկային ազգի համեմատ խոսքը՝ որ կը պատկայ իր էութեան և բնական ճիգերու հիմնական պարտականութեան չարքը, է անոր բանաստեղծութիւնը, այսինքն է՝ դասական և աշխարհապատում բանաստեղծութիւն։ Այսր մէջ սրեսին կ'սրուագրուի մարդկային կեանքը, սրուն սրեսան ամրողջ մ'է, կեպրան մ'է իր գերաւոր ձրկառումներուն և ձեւարարումներուն։

Պատմութիւնն և իմաստասիրութիւնն նոյն են, այն, զի մի սրուագրիչ մարդկային կեանքին. միան զի առաջինը կ'ընդայլ մեզ դիպաց և պատահարութեանց

մարմինը, որուն մէջ կը բնակի անոտրակոյս և հոգին։ Հոգին կ'ըսեմ՝ որ ամբոյն չերեւիր բոլոր իր խնամոխութեամբը, որովհետեւ կամ շատ մը պիտուանդակաս, ան-բաղդատ և անկենդան առարկաներ քաղաքակիրթ գանի՝ մեզմէ կը դաժնին, և կամ նա ինքն կ'արտայայտուի մեզի անդամ՝ այն չափն և առարկան յատկութիւններուն ու չարժմամբը, որոնք նախնական կեանքը դանդաղաբար մեզի կ'երեւցնեն, և նոյն իսկ յաճախ խաղարկուած և անուանուած։ Իսկ մեզի՝ այսինքն՝ խնամատարութիւնը կարենար ինձեա՝ հոգին պարզապէս իր էութեանը մէջ ներկայացնելու համար՝ պատ-ան գինքը քաղաքակիրթ իրենց և պիտոյ պատանքին, և առանձին երեւոյթներու հետա-պրքրուելն յետ կեցնելով՝ ձգել զայն գէպի գէպ ան ինքն. այլ առ այդ կենաց չար ու ցաւոտ մտապատկերներ մեզի առեղծած կամ ձեւացուցած կ'ըլլայ. որոնք առարկան — իրրեւ իրեն հասնելու բաներ — իրական կեանքին իսկ անդամօք կը մեռած յաճախ։ Իսկ բանասաեղծութիւնը կ'ուզէ ապատ ընել այդ քէ հոգին և հոգեկան վայելչութիւնները մարմնէն, այլ մեզի անոր պատահական և ատելութ ներքեւ դնելէն. ասոր համար կ'ապրի, քէ մարդկային հոգին ևս կենակցութ մարմնոյն մեզ ասոր ինչ ինչ ատելի գեղեցիկ, ատելի վսեմ ու զօրաւոր. և քէ մարմինն ալ՝ այդ քէ իրեն՝ այլ անոր համար առեղծուած է, որպէս զի ըլլայ հոգւոյն կատարեալ գործիք և արտայայտիչ։ Հետեւաբար՝ բանասաեղծութիւնը կը ջանայ և կը ներքէ՝ որպէս զի պատճառն իրարանցման մարմինն ու հոգին՝ գրուին իրարու վրայ ներդործոյ և կենսական այն վիճակին մէջ, որ կերպով մը կը մարմնացնէ հոգին, և կ'ազատ մարմինը. և այդ անդրադարձ մարմնացումէն և հոգեցումէն է՝ որ կը ծնանին նորատեսիլ պատկերներ և բերդատական երգեր։ Այսպէս ուրեմն բանասաեղծութիւնը վերջն կը ներկայացնէ մեզ՝ իր ամբողջութեամբը՝ մարդկութեան կեանքն ու կենցաղի կրկնակի ձգտումները՝ իրենց էն հրապարակ ասիճանը։

Ու յիրաւի, այս ինչ կամ այն մարդու և գործ բանասաեղծութիւնը մանակի կերպով միայն կրնայ ցոլացնել մարդկային բնութեան ծաղուկ խորերն և խաՀերը, աշխատանքն ու կռիւները։ Ու նոյն իսկ կրօնական համոզումներ կամ հաւատոյիք՝ երբ առյդ կամ խանդավառ կերպով միայն յերեւան կը բերեն ժողովրդի մ'անդրեկրային կեանքի խորհրդաւոր կողմերը, նա չի կրնար անով միայն բաւականանալ արտաքոյ բարեպաշտութեամբ մը. զի ինչպէս հոգին՝ կը չարժէ մարմինը, այնպէս նա ալ բնականապէս կը ձգտի արտաքին կեանքի և ընթացքի բոլոր բնախօսութիւնը (physiognomie). և ամէն բան յառաջ՝ պիտի ջանայ ներկայացնել նաեւ բանասաեղծութեան մէջ իր ակրը, անձնաւորը, երկիրն ու յոյսերը. զոնե զի սա է ամենաբնական պարագան հոգւոյն և նոյն իսկ համամարդկային կեանքի և կենցաղի հայելին։

Գաղափարականութիւնը, գերբնականացումն ու խորհրդապատում գեղեցկութիւնն եղած է և պիտի լինի ամէն ժամանակ և ամէն ժողովրդոց անջնջելի ղգացումը, որ հաստատուած է քէ՛ կրօնքին քէ՛ բարոյականին և քէ՛ բանասաեղծութեան։ Այնպէս որ առանց առաջիններուն՝ վերջինս չկրնայ պահել իր յատուկ գոյութիւնն ու ինքնուրոյնութիւնը, մանաւանդ իր յատակետ անջատումները և կղզիացմանը մէջ։ Բանասաեղծութիւնը քէ՛ որպէս գաղափարական՝ նուաստ երկնից բարձունքը արժանացնէ աստանում ժամանակ, և քէ՛ արմենական քրիստոնեի մը պէս բնութեան մը և է առարկայի վրայ հանդչած առեն՝ գեղեցկէն է որ կ'առնու իր չունչն ու շնորհքը, գեղեցկին ձեռքով է՛ որ երեն կը պրաէ նաեւ մտահանգամանքներու սերտն ու վիճքը։ Այնպէս որ եթէ չիներ գեղեցիկը՝ կամ բոլորովին անհնարանելի պիտի մնար բանասաեղծութիւնը, և կամ պատրող առարկայ մը պէս շատով պիտի կորսնէր մտացութեան խաւարին մէջ։ Մէկ խօսքով, եթէ բարութիւնը՝ ճշմարտութեան, և գեղեցիկը՝ բարութեան մէջ կայացած է, բան բանասաեղծութեան համար ալ կրնանք ըսել, քէ և ճշմարտութեան և բարութեան և գեղեցկութեան մէջ ունի իր խորհրդաւոր կեանքը և հրապոյրներու համրոյրը։ Ու ինչ որ այդպէս չէ, այն բանդագուշանք է, և ոչ թէ առյդ բանասաեղծութիւն, այսօր կ'ապրի, բայց վաղը մեռնելու դատապարտուած է։ Բանասաեղծութիւնն՝ հարկ է որ բնութենէ և արուեստէ գաշնակաւորուած ըլլայ. որպէս զի մէկով մարդկային բնութիւնը յուզէ, իսկ միւսովը՝ զարմացնէ ու յափշտակէ։

Այդ հանգոյցն՝ ինչպէս յօրինելու, այդպէս ալ լուծելու, և անոր բոլոր գեղեցկապատական գաղտնիքն իմանալու և գործ հարկաւ՝ կը պահանջուի, որ թէ բանասաեղծն և թէ գանիկայ ընթերցողն ունենան ոչ միայն բնածին գիշերութիւն, այլ և գաղափարական և գեղարուեստական հաշակ։ Պէտք է՝ որ իրարու հետ գաշնակաւորին՝

երկաբին մէջ եւս՝ սիրտ և մտաք, զգացումն և խնդութիւն։ Երբ առնեմք մին պակսի, պակասաւոր պիտի համարուի նաեւ բանաստեղծութիւնը։

Երկրորդ՝ պետեր կէտ մ'է և այս, և ըստ ին ամենակարեւոր կէտը. այսինքն՝ ինչպէս բանաստեղծութեան տեսակներն՝ այսպէս ալ անոնց գեղեցկութիւնները մասնաւոր տեսակէտներով կը զանազանին իրարմէ. ասկայն ամէնքն իմիասին առած՝ կը յօրինեն մարդկութեան ընդհանուր երգը և բնութեան երաժշտութիւնը։ Վասն զի ամէնք առանձին նկատուած՝ իրարմէ տարբեր մի մի առեղներ են անոր մարքի և սրտի մէջ երգեհոնին։ Աչուեսականն բառերով պրպտուի, բարոյական, աչխարհական, տարփական, մտառոտուի, երգիծական, հոմոռական, դիւցազնական, ողբերգական, կոմերգական, վերատուական, արձանագրական, ժողովրդական, և այլն, անոնցմէ բանաստեղծութիւնն իսկ պրպտելէ ետքն անգամ չեն իմանար գրպտել այդ երգեհոնի այլ և այլ հնչիւնները, մերթ բնութեան և մերթ գերբնական տարրերու հպատակը ըլլուած և իրմէ ստեղծուած։ Շատ բնական է՝ որ ինչպէս բանաստեղծները կերպով մտածմանէ, այսպէս ալ մեզմէ իւրաքանչիւրն՝ իր բնութեան և ախորժելի ձեւուն նկատմամբ նախընտրէ բանաստեղծութեան այս ինչ կամ այն տեսակը։ Սակայն շատ անբնական պիտի լինէր, եթէ մէկը չուզէր գնահատել միւս տեսակները, և կամ արհամարհէր միայն այն պատճառաւ, որովհետեւ կամ կրօնական են, կամ սիրական, և այլն։ Չի նիւթերնիս և նպատակներս սիրական ձոյներ՝ որ կը յատկանան միայնութիւններն, աչխոյժ բնիկ բանաստեղծական է և հմայիչ՝ բան աչխարհական պատճառն, որ ժողովրդեան ծոցը կ'ապրի և կ'երգէ յրմէսած։ Նիհիլականն խորհրդաւոր նպատակները՝ որ Արլոյն սրոյ գործիքն կը հնչեցնեն առաջնային սիրոյն և մեծութեան օրհներգը, մարմնաւոր սիրերգներն ալ մեզի վսեմ են և սիրելի։ Հին չերիլներու միայ արձանագրուած հատատուկներն մի միայն խօսքն իսկ՝ յաճախ կը շարժէ զմեզ յոյզ և յորտոռում։ Արեւմն ամէն բանաստեղծութիւն ունի իր յատուկ հնչյքը, որ զգայն և խանդաղատ սրտերէ ըխած է, որ իրեն յատուկ լեզուով ու արտահայտիչ յօրինուած է, եթէ Աստուած և կրօնք ըլլան անոր երգի առարկայն, եթէ մարդ և համամարդկային կարիքները, եթէ ազգը և հայրենիքը, եթէ բնութիւնը։ Ահա այս տեսակէտով պէտք ենք գնահատել տարբեր դրօշի ներքեւ գինուորուած բանաստեղծներն և բանաստեղծութիւնքը։

Գալով ազգակից Մխիթարեան բանաստեղծութեանը՝ կը տեսնենք որ առ՝ ազգնային խորհրդաւոր ծառին պէս իր մէջը կը պարունակէ ոչ միայն կենաց, այլ և անպղծելի գաղափարաց գերազանց ներչնչութիւններու գանազան տեսակները, զի երկու դարերէ ի վեր սկսած է հնչել այդ քնարը, և չդադրեցած։ Արդարև գանազան են այդ երգերը՝ նիւթերու առատութեամբ, այնչափ եւս գեղարուեստ են իրենց լեզուական և չափական արտահայտիչ։ Եւ այս անկէց խակ յայտնի կ'ըլլայ, եթէ գոհ մի խորհինք, որ Քէպէտեւ հայ ժողովուրդը, կամ անոր գաւակներէն ոչ առաքաւ՝ չդադրեցած են երգել նոյն խակ մինչեւ անգամ իրենց հայրենեաց վերջին Թշուառ օրերը, և Թողած են երգարաններ, բայց այդ երգերը գրեթէ — ինչ ինչ բացառութիւններով — ամէնքն եւս հայութեան չափաչափուած քնարի արտահատներ են. մանաւանդ Թէ խանդագնաց ու խառնակ յոգեաչխներով յօրինուած։ Հետեւաբար՝ անոնց մեծ մասը զուրկ է քերթողական արուեստի կատարելութիւնէն, և մեզ մ'ալ կերթ զգացման ու ազատ մտքի առնական ներչնչութիւններէն։ Խակ կատարեալները՝ խիստ քիչ են և հազագ գտնելի։

Նախընթաց պրպտութեամբ մենք ըսինք, Թէ ինչպէս հայկական լեզուին հետ՝ հայութեան քնարն եւս վերակազմեցին Մխիթարեանք, մանաւանդ Թէ երեք գոյն ոչ միայն առնական, այլ և ազգայնոյն։ Երկրորդ՝ ինչպէս ազգային բանաստեղծութեան չիմանալս վերջալուսէն եռքը՝ ծագեցաւ Մխիթարեան բանաստեղծութեան նոր արշալոյսն. այսպէս ալ վերածնութեան համար բնական էր, որ վերջինս ըլլար նախապատրաստ և օրինակ յետագային։

Թող չափազանցութիւն չհամարուի, եթէ ըսեմ՝ որ ազգային և Մխիթարեան բանաստեղծութեանց երգարու յարգարդ այդ երեկոյն և վաղորդայնը՝ մեզ անդամուած համար չէր, այլ շարունակութեամբ նոյն խակ վերածնութիւնն շատ վերջ. այսինքն է՝ մինչեւ Մխիթարեան գերազանց բանաստեղծին՝ Հ. Գ. Ալիշանի մայրամուտը։ Այս ալ ըսենք, որ այդ մշտատեւ առուտն, որուն լուսոյն այսօր խակ կը բերկրին հայ ազգն և գրականութիւնը, միայն Մխիթարեան վարդապետներու գործը չէ, այլ և

ասնց հանճարեղ աշակերտներուն, որոնցմէ ամենք՝ իրրեւ արբանեակներ կը վայլեն նաեւ այսօր բանաստեղծութեան գաւարթ հորիզոնին վրայ, և վայել կու տան ուրիշնե-
րուն: Երրորդ՝ Մխիթարեան բանաստեղծութիւնը թէպէտ եւ կրօնականով սկսած է և քնարականով, բայց ազգային դիւցազներգութիւնն և ողբերգութիւնը հասուցած է իր
համեստ կատարելութեանը, անցնելով հին և նոր մեսրոպեան գանձարաններէն: Չորրորդ՝ Մխիթարեան բազմաճղի բանաստեղծութիւնը թէեւ Ս. Ղազարու սկզբնա-
կան և վանական շրջանակին մէջ ասկի՝ քան ազգին կեդրոնին գործած և ներգոր-
ծած է, սակայն նա միայն այդ հոգեբանական միջոցնակ կեանքը չէ՝ որ կը ներկա-
յացնէ մեզ, այլ և ազգայինը, այլ նոյն իսկ համամարդկայինը՝ իրեն սեռական և սեռական երեւոյթներով (phases): Եւ կը ներկայացնէ մեզ այդ մեծ և մար-
ճաւոր սենեկիքը՝ ոչ միայն գաղափարական ձեւի և գաղափարի լեզուի յատուկ վայել-
չութիւններուն ու վեհութեամբ, այլ և որ զարմանալին է՝ ժողովրդական գոգաւորի և
բնական զգացումներու մարմնացումով: Ահա այս ամենայն ակնարկս պիտի տեսնուին յաջորդաբար ըսելիքներուս:

* * *

Մխիթարեան ինչպէս երկիւղ գրականութեանն՝ այպէս ալ բանաստեղծութեան նախկին հեղինակն եղած է Մեծ Աներեւոյթին: 1732 Թուականին հրատարակուած՝ Տաղարանը կը ներկայացնէ մեզ անոր երիտասարդական, բայց փշոտից կենաց բա-
նաստեղծը. ուր գեղեցիկ հանճարին հետ կ'արտափայլին նոյնպէս մեծահասուն սրտի ներշնչութիւնքը. և աստուածարանութեան ամենաբարձր և խոր վարդապետութիւնքը գիտցած է նա բանաստեղծական ծաղկեփունջներով զարդարել: Եւ այս այնքան պարզ լեզուով, նր նաբերը հիների նման ունի թափանցիկ բնելու կը ձգտէր անոր իմացականութեան ցոլքը և զգացնել: Վրիպ յատկութիւնն կ'իմանանք, որ այդ երգերէն շատերը՝ հրատարակութենէն շատ տարիներ յառաջ ընդօրինակութեամբ ամէն կողմ տարածուած և բազմացած էին. բայց որովհետեւ անհմատներու ձեռքով սխալագրութենկ ենթարկուած էին, ուստի գանոնք ազգելու համար՝ կը վերթար Քրիստոնեականին հետ եւս հրատարակել գանոնք:

Տաղարին մէջ երգերու յօրինման ինչպէս Թուականներն, այպէս ալ չարժա-
նիքներն որոշակի նշանակուած չեն. բայց տարակոյս չկայ, որ այլ և այլ ժամանակ-
ներու և նշանաւոր դիպաց մէջ երգուած են, որոնք կամ ազգակի իր անձին և կամ իր նորատունկ այգւոյն՝ Միսթարեանը կը վերաբերին, ազգին և օտարին հետ ունեցած առնչութիւններով: Մխիթարայ երգերու հոգին լաւ ըմբռնելու համար, պէտք է նախ իմանալ անոր գլխէն անցած արկածները. վասն զի ինչպէս չունչն ու չիւմը նիրհեալ կայծը կը բորբոքեն, այպէս ալ բնութեան արկածներն և բնական երեւոյթներն ալ՝ բանաստեղծական խանդը:

Այդ՝ 1697 Թուականին, երբ Մխիթար իր մեծ գաղափարականէն առաջնորդուած — որ գժուարութեան անանցանելի լեռներն իսկ հարթել կը խոստանար իր ոտից առջեւ — կը մեկնէր Կ. Պոլսէն նաւով դէպ ի Տրապիզոն, Օլթի գաւառն երթալու և հոն Միսթարեութիւն մը հաստատելու նպատակով, Սեւ ծովուն մէջը մրրիկներէն վերջ
մէկ կողմէն չարաճճիօրէն Եւրոպա չնչելով ուժգին՝ կը գրգռէր և կը գայրացնէր Պոսֆորը, որ ահագին հսկայի մը պէս կը բախէր Մխիթարայ նաւը, և վայրկենէ վայրկեան կը սպառնար խորտակել և իր անդնդապատոյտ ոլորանին մէջ կլլել զայն. իսկ միւս կողմէն ալ սեւ ժանտախտն՝ իր չարաճճի Թոյնովը մահաւան սառերն և նախճիրը կը տարածէր նաւորդաց վրայ: Ահագին էր Մխիթարայ տագնապը, մինչեւ որ վերնական աչքը կը ձգէր նաւը Էրեկլի նաւահանգիստը: Այս տեղ քանի մ'օր ազի առնելէն վերջ ճանապարհորդներն ծովափունքը քերող մեծ նաւակ մի մտած — զոր սեւլի ապահով կը կարծէին — կը շարունակեն նաւագնացութիւնը. և յաջող հովէն և հանդարտ ծովէն հրապուրուած նաւապետն և նաւորդները՝ հետ գհետէ կը հեռա-
նան ցամաքէն: Երեկոյեան գէմ՝ այն ինչ խաւարի սառներնները կ'երկրնային հորիզո-

նին վրայ, և սեւ գիշերն արեւելքէն կը յառաջէր, յանկարծ վրայ կը հասնէր և աքուիլոնեան Հիւսիսը, բոլոր իր կատաղութեամբը։ Ալիքները լերան պէս կը բարձրանային ասոր, և անոր խոր անդունդներ կը բացուէին և կը գոչուէին՝ ահաւոր մռնչիւնով։ Նաւն և նաւորդք անսովոր ցնցումով կը մղուին դէպ ի ցամաք, դէպ ի վտանգաւոր պարեխնները, որոնք ծովափրիսւ չարժուն լեռներէն աւելի ահարկու են, մանաւանդ խաւարակուռ գիշերին մէջ, որ ամէն բանէ աւելի կը ծանրանայ անոնց վրայ, որ կը պղտոր երկինքը, կը պատէ նաւաստիներուն աչքերը, և կը ծածկէ բոլոր հանդիպակաց առարկաները։ Ձի նշոյլ ոչ մի ատղ, ոչ մի լոյս, ոչ մի օգնութիւն. լոյն խակ՝ որ վերջին նշոյլն է մահկանացուաց՝ կ'երերի կը տատանի օդային և ծովային փշրող ու փշրուող ալիքներուն հետ։ Վերը ամպերը իրարու հետ կը բախին և կը կռուին, և վարը լեռնակուտակ ու վիշապաձեւ կոհակները. խակ մարդ արարածն երկուքին հարուածոց տակ կը հնձէ և կը կոծի ահարեկ։ Ահա այս տակաւին ալեկոծութիւնն է, ահա կենաց դէմ մղուած բնութեան այս ամենի մեծամարտն է, զոր գեղեցիկ այլաբանութեամբ նմանեցուցած է մեզաց ծովուն, և այնքան կենդանի գոյներով նկարագրած և ընծայած գինքը ապաստղին Յիսուսի. և որ կը սկսի «Վ իրաւորեցայ մեղօք» բառերով։ Որչափ որ փոքր է և պարզ այդ երգի շրջանակը, սակայն այնչափ եւս մեծ է և ազգու անոր մէջ նկարուած պատկերը, որ է միանգամայն ներքաւոցի բանաստեղծի մտապատկերը, յղորդուած մեղօք ալեկոծեալ ծովու պատկերին հետ, զոր ուրուագծած էր զարեր յառաջ Ս. Ափեռոպոյ մաքրափայլ հոգին՝ Ապաշխարութեան ակ. երեք տուն չարականովը. Ծով կենցաղոյս, և այլն։ Իրրեւ նմոյշ բառական ըլլան հետեւեալ տողերը.

« Ալեկոծեցաւ նաւն իմ հոգմովըն չարին,
Ի մէջ ալեաց մըրրկեալ կայ յերերմանէ.
Պատեաց խաւար գիշերոյն, լոյս ոչ տեսանէ.
Ագաեա՛ զիս Տէր իմ Տէր, մի թողուր զերբ։
Փայլակըն փայլատակէր հնչմամբ ահակալի,
Իրրեւ ըզլոյս երեւէր, բայց էր հըրով լի.
Մեծագոյն ձայնիւ գոչէր՝ յոյժ զարհուրելի. (Ագաա)։
Հնչէր հոգմըն սաստկագին, վարէր զամպն երկնէ.
Մառախուղ ամպոյն ծածկեալ էր զերեսս երկրի.
Եւ ես փոքրիկ նաւ նաւեալ կամ ի մէջ ծովի. (Ագաա)։
Իրրեւ լուայ թէ վէմ գոյ ներ ճանապարհին,
Ձմլեցաւ սիրտ իմ յուժգին յերկիւղէ վիժին.
Քանզի առագաստք նաւին հոգմով պարպաւին. (Ագաա)։
Հեռացաւ նաւահանգիստն, և ոչ տեսանէ.
Ճանապարհ մեր է՛ խաւար, սիրտս ահաբեկի.
Ոչ միաց ինձ յոյս արդէն, թէ անձն իմ ապրի ». (Ագաա)։
Նաւավարքն ազաղակեն ձայնիւ ողբալի,
Գուցէ լուիցեն մարդիկ նաւահանգըստին,
Զոր և լուեալ՝ գոյս լուցին անդ վաղվաղակի ». (Ագաա)։

Նման արկածի մ'ալ հանդիպած է Մխիթար 1702ին, երբ մղեւանդ հալածիչներու և վերահաս մահուան ձեռքէն փախչելով՝ Զմիւռնիայէն դէպ ի Մոռէա նաւարկել և ապրիլ կը փնտռէր։ Ընտրող եւ գեղեցիկ երգ մ'ալ այդ առթիւ յօրինած է և ընծայած իրեն միակ յոյս և միշտ կոյս Սրբուհւոյն [1], որ կը սկսի «Ընտրեալ ի մէջ հո-

---

1. Որուն խորագիրն է երգ առ նոյն առթիւ կոյսն Մարիամ, առ որ եղեւ դիմառոմն ի նաւակոծութեանց ծովու (տես Տաղ. եր. 73)։

դեղինաց » բառերով։ Երգիս՝ այսպէս և երգչին՝ մտաց ու սրտի ոտրտին վրայ վիակ պայծառ ցոլացող և բեւեռային առաջն է Պետրարկեայի, Նարեկացիներու և Բեռնարդոններու սրտի քնարը շարժող հրաշագեղ կոյսը. որ աշխարհ արկածներու յարմարելու նկարագրին մէջ ամբողջ՝ այնպէս կը ճառագայթէ Աբեռառացւոյ հոգւոյն, ինչպէս դիմապատկերը՝ հայելւոյն մէջ։ Դէմքիդ երգիս խմաստը։ Քարաժայռերով լեցուն ծովին վրայ առաջառաստաւոր հոմնուողյ նաւ մ'է, որ մոլորած իր ուղղութենէն կը թափառի ծփծփուն և անծայր ծովուն մէջ, և իր ուր ըլլալն և ուր երթալը չի գիտեր։ Յանկարծ առաւերայ մէջէն կղզի մը կը ցցուի անոր դիմաց, և նաւավարներէն ոչ ոք գիտէ անոր անունը։ Մին կը ձայնէ. Ահա Ալեռայի, միւսը թէ Սկոլիաճի է, և ուրիշ մը՝ թէ Թրինաց է։ Իսկ Մխիթար՝ այսպիսի վարանման պահուն կը ձիչէ մէն մի սան վերջ.

« Միայն յոյս մեր, Սրբուհի Կոյս, ի քեզ միայ »։

Նաւապետին և նաւասաններուն մէջ ոգեւորութեան հոգին կը ձգէ երկպառակութիւն, վէճն և անհամաձայնութիւնք առաւակապէս կը բարձրանան. ամէնքն իսկ մի մի պետեր գարձեր են և պահանջող աչերը. բայց ոչ մի առաքակարգեալ կամ հնազանդող. ամէնքը կը թուին հրամայել, բայց դէպ ի ո՞ւր. — ոչ ոք գիտէ, ոչ ոք կ'անասյ։ Անաէրուն և բազմատէր նաւը միայով անառաջնորդ, կը յածի և կոծի, մերթ ջրային անդնդոցը մէջ գահավէժ, և մերթ պարեխառնեւ կոհակաց վրայ ծփալով և հեւալով. և կը լսուի անդիէն վշտակիր բանաստեղծին ձայնը.

« Միայն յոյս մեր, Սրբուհի Կոյս, ի քեզ միայ »։

Կիկլոպայց նման Պլուտոնի փորէն ժայթքած և դուրս ցցուած հարիւրաւոր կղզիներ առոի և անոի կ'ընդնշմարուին, որոնց վրայ կ'արշաւեն օձաձեւ ալիքները. բայց անոնցմէ ոչ մին է հիւրընկալ և հանգուցիչ նաւուց, այլ խրոխտանչիւրն բեկող է մանաւանդ թէ կորուսիչ, Սկիւղեայց և Քարիւպտեայց պէս։ Ամէնքն ահարեկ կու լան և կ'ողբան, կը գոչէ և Մխիթար.

« Միայն յոյս մեր Սրբուհի Կոյս, ի քեզ միայ »։

Նաւավարներն առհասարակ յուսահատած են, խեղճ նաւորդներուն ոչ ոք կու տայ քաջալեր. երեկոյեան մութն ալ արդէն վրայ հասած. աչքենաւոր և աւինաձեւ երեւցող լեռներն՝ անթիւ են և անհամար, որոնք մայրաւուտ արեգական վերջալոյսն ևս կը խափանեն՝ իրենց հսկայաձեւ առուերներովը։ Նաւասաններ ծովը կ'իջեցընեն մանկոյկը՝ առագաստով հանդերձ, որպէս զի ժայռին զարնուած պահուն՝ չուտով կտրեն պարանը, կրցողներ փախչին, իսկ անկարողներն ընկղմին՝ ի կուր վիշապաց։ Սրտերը — դայլ տեսնելով — մոմի պէս կը հալին ու կը մաշին, և մահուան կը պատրաստուին. իսկ Աբեռառացին յիշելով իր հոգեծին որդւոց և Կուսին որդեգրածներու յուսահատ ողբերը, կը գոչէ զարձեալ սրտագին.

« Միայն յոյս մեր Սրբուհի Կոյս, ի քեզ միայ »։

Վիշերային ժամը եօթնին՝ ամենուկ և ազատակ մ'է, որ կը բարձրացուի. դա ուրիշ բան չէ, բայց եթէ մէկ պետ և առաջնորդ մը չունեցողներու վերջին հեծեծանքն ու հառաչանքը. վասն զի յանկարծ բնութեան անծանօթ հսկայի մը, ահարեկող լերան

մ'առջեւ կը գտնուին. չեն կրնար աւերացող նաւը յետ դարձնել, վասն զի հոլն իսկ իրենց դէմ է. աժդին կը մղէ զիրենք դէպ ի ահարկու Կիկրոպը, որմէ ահաւնկ՝ կը գոչէ Մխիթար առ խորամկիչն ամպոց և ամպրոպաց.

« Միայն յոյս մեր, Արբուհի Կոյս, ի քեզ միայ »։

Եւ ահա յանկարծ հոլը կը գաղրի՝ օդնութեամբ Կուսամօրը, և առաւօտեան արշալոյսին չեռ՝ յուսոյ և կենաց արշալոյսն եւս կու գայ ուրախութիւն աւետել լքեալ սրտերուն։ Կը տեսնեն կղզին, բայց դարձեալ կը տարակուսին անոր վրայ նաւավարք։ Մին ցնորիկս է — կը գոչէ —. միւսն թէ ծխայի է, և ուրիշ մը կ'ապազակէ. կրեակ կրեակ։ Դարձեալ վէճ, դարձեալ երկպառակութիւն։ Կը ցաւնուն երկինք, և ահա յանկարծ ահաբեկիչ առնաձայնով և դղրդումով վրայ կը հասնի հոլը. կը շնչէ և բուռն բախիւնով մը կը կոտրէ կը տապալէ առագաստին մեծ փայտը կամ խարիսխը։ Ահեկծութիւնն՝ առաջուանէն ուելի սաստիկ է. յափշտակելով նաւը բռնութեամբ, կը վարէ կը տանի դէպ ի խորը, դէպ ի լեռնացեալ ալիքներն ու բերանբաց անդունդները։ Նաւապետն անզգայ դարձած է. իսկ նաւավարներէն ոմանք կ'ուզեն նաւը դէպ ի հիւսիս, ոմանք՝ դէպ ի հարաւ, և ոմանք ալ դէպ յարեւմուտս։ Երկու աչխարհացոյցներ կատաղաբար թերթուելով կը քայքայուին. ոակայն և այնպէս չաւիղ մը չեն կրնար գտնել՝ յառաջելու լեռնացած կոհակներուն մէջ. ընելիքնին չեն գիտեր։ Ասոնի այս ահաւոր տագնապի և տարակուսի մէջ Մխիթար՝ դարձեալ կը նայի իր լուսատու աստղին, կը դիմէ իր երկնանման Կուսին և կը յեղյեղէ իր սրտաուչ ապերաը.

« Միայն յոյս մեր, արբուհի Կոյս, ի քեզ միայ »։

Վերջապէս հասած են Ջանթայի նաւահանգիստը, և մեր ուղեւոր բանաստեղծը կը կնքէ տառնեւեօթնօրեայ իր երկրորդ Ոդիսականի նկարագիրը ուրախութեան և գոհութեան չեչտով մը.

« Շնորհիւ արդոյ անթիծ Կուսին գերծաք ի նմին »։

Այսպիսի նկարագիրներ երած ժամանակ մեծ Վերատացին՝ անտարակոյս գեռ ոչ Համերատը կարդացած էր, և ոչ Ֆէնելոնի Տելեմաքը. սակայն մէկէն աւելի կէտեր կան, որոնք առնոց հետ կը զուգընթանան, ի հարկէ ոչ լեզուով և ոչ ալ բանաստեղծական արուեստի ձոխ նկարագրութիւն, այլ գեղեցիկ գաղափարներով ու իրաց և կրից պարզ պատկերազրութեամբ, զոր ընդ առաջ գծեցինք։ Եւ այդ պատկերին մէջ առ Տիրամայրն ուղղած ու կրկնուած կոչը՝ բոլոր առատապետ առաքինութիւններու կոչէն աւելի վսեմ է և արտայատ։ Անցնինք մի ուրիշ երգի։

1715 Թուականին Մխիթարայ և իր նորաշէն վանատանին գլուխն եկած փորձութիւնը — զոր նա ինքն իր կենացը մէջ կրած բոլոր վշտերէն աւելի մեծը և կսկծեցուցիչը կը համարի — ահագին կերպով կը ցնցէր անոր բնութիւնը։ Անոգոք հարկը կը սպիտէր զինքը՝ օր յառաջ թողու իր այնքան քրտանց և նեղութեանց պատուղը, և մեկնելու ձեռնունայն դէպ ի Վենետիկ, ինչպէս երբեմն Ենեաս՝ Տրոյաէն դէպ ի Լատիոն։ Նա իր իննսաթիւ աշակերտներուն — զորս գեռ նոր քահանայ ձեռնադրել տուած էր — և բոլոր միաբանից իր վերջին հրաժեշտը տալու և իր սրտաբուղխ խօսքերովը զանոնք սփոփելու ուզած ժամանակ՝ նոյնպէս լացեր և լացուցեր էր զամենքը։ Ասոնի լքեալ սրտերուն հետ՝ փշրուելու մօտ իր ազամանդեայ զօրութիւնն եւս ամրապնդելու համար, նկեղեցին կը վազէր իրեններովն, և ծնրադիր Տիրամօր պատկերին առջեւը՝ կ'ոգէր իր հոգեառւխ սրտին գորովիկ և գեղեցիկ մրմունջները։ Հետեւաբար՝ եթէ ոչ այդ սրտայոյզ պահուն, այլ հաւանօրէն այդ կամ այդպիսի մի առթիւ յօրինած է « Ազաչեմ զքեզ Աստուածածին » չքնաղ երգը,

որ իր արեւելեան քնարերգակ բանաստեղծութեամբն և գեղեցկութեամբը կը գերա-
զանցէ Աստուածածնայ վրայ շինած բոլոր մեծ երգերը։

Երգիս բանաստեղծական բարձրութիւնն ու խորութիւնը յայնմ կայացեր է, զի հոգերգուն Մխիթար կը ներկայացնէ աստր Կոյսը բոլոր այն առաւելութիւններովն և առանձնաշնորհումներով, որք իրեն վիճակեալ են, և զորոնք պատեհ ժեծա-
հաւատ սիրան ու արդիական աչրը դէմ յանդիման կը պատկերէին։ Վերահրաշ արա-
բածին մէջ կը նկատէ Սերաստացին՝ անեղ Բանին բառնդէն առաքեալը, արեգակէն
բարձր ու պայծառ. ուր կը տեսնուին երկինից հրեշտակներուն և երկրաւորաց բոլոր
փառաւորութիւնքը, աչրն ու սիրտները։ Աստուածայինն սէրտ մը՝ հրեշտակներուն ան-
գամ պաշտելի. անարատ և անխախտելի կատարեալ Աստուած ծնած և մարդկային
հոգիներն Աստուծոյ արդեպրած։ Հոգեղէն ապրիս յաւիտենից ի թագուհութիւն եր-
կնաւորաց և երկրաւորաց առհասարակ բնութեանցն ու նախատահմանուածը, և քրիս-
տոնէից յաւերժական պարծանքն ու բարեխօսը։ Երկնային անուշահոտութեամբ լե-
ցուած և կենցաղոյս գառնութիւնները անուշացնող և աննման վարդը։ Երկնից անհու-
նին և երկրիս հովիտին ընդ մէջ բացուած լուսացնցուղ շուշանն ու սիրտ հեանց
փարատիչն և գուարթացուցիչը. որուն շնորհաշուք թևերուն վրայ դրոշմած է Յաւի-
տենականին անքր՝ խորհրդաւոր անունս Մարիամ, այն է՝ Մայր և Կոյս միանգամայն,
և չքնաղ օրինակ սուրբ կուսութեան։ Յաւուց սրտերն ամօթոյ փոխիր ու պայծառ լու-
սինը, որուն առից ներքեւ կը թաւալի առաւերառեակ մահիկնգիւրն, և կ'անցնին
գարերը կիթգաձայն։ Քաղցութեան ոեսինը, չնորհաց ցողով լեցուած Գէդէոնեան խոր-
հրդագգած սարը, երկնային մանանայիս պատարան՝ խորհրդաւոր սափորն ու
Սրբութեան խորանը, որ երկնքէն ուելի վեհ կ'երեւի երկրիս վրայ, վասն զի կու-
սածին մայր եղած էր Աստուծոյ, և սիրելեաց առեղծուն իր գրկացը մէջ ողջագու-
բած։ Բոլոր մարդկութեան ամենաքնքոյշ զգայարանքը, որ սրամիտ Թեւերով
երկինքը վեր սմբարձած՝ և ամենուն սիրան ու միտքը իրեն ձգած էր. զոր հրեշտակ-
ները գովել չեն դադրիր, և քերովբէները ու սերովբէները զարմանալէ, և այլն։

Ահա այսպիսի վսեմ գաղափարներով է՝ որ կը գիմէ Մխիթար այդ սիրատէս
մի և ամենալի Կուսին, և կը հեզու ու կը գեղու իր և իւրայնոց ցաւած սրտի ծա-
ղիկները՝ անոր խնկելի առից ներքեւ. այդ ամենազուարթ և հզօր Կուսի միջնորդութիւնն
է՝ որ կը հայցէ այրած սրտով, կրկնելով ամէն առն վերջը.

« Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Աստուածածնին բարեխօսեա »։

Այս նուիրական երգս երգած է և կ'երգէ միշտ նաեւ Մխիթարայ տունը — Աստուածածնի ծննդեան ու իր նեղութեան օրերուն մէջ. կ'երգեն նոյնպէս — տեղ տեղ — ազգայինք։ Օր մը եթէ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ եւս մտնէ և երգըցուի, անմեղ մանկանց համերգութիւն, անառարկելի չատ մեծ և չատ հոգեշահ պիտի ըլլայ ժո-
ղովրդեան վրայ Թողիք անոր ապստամբութիւնը։

Իր և նորակերտ Մխիթարեանց վրայ ծանրացող և վշտացուցիչ ուրիշ դէպքի[1] մ'ասին ալ յօրինած է Մխիթար տա Ս. Աստու ուղղած գովաստնական ու ապերաս-

---

1. Այսինքն է յամին 1717 Հ. Գէորգ Անթէպցիի և Հ. Յովսէփ Բուրսացւոյ դէմ եղած չարամիտ ամբաստանութիւնը, որուն համար Մխիթար Հռոմ կը կանչուէր, և 1718ին իր գատին մէջ յաղթա-
կան դուրս կու գար։ Ես այս յաղթութենանս հետ ուրիշներ եւս Ս. Աթոռի վերապրելով ապա-
գրողք, արձանացուցեր են անոր պատկերի ներքեւ հետեւեալ վերտառութիւնը.

« Ո՛վ սուրբ Աթոռն՝ հայր մեր լարի,
Ընդդէմ դիւաց ըմբիշ արի.
Թնակարմի դիւին մինչ մեզ լարի,
Կալ զայն խակոյն, հար ըզքարի »։

կան երգը, որ իր տեսակին մէջ նոյնչափ յաջող է։ Որովհետեւ հակառակորդք երբեմն իրր տգէտ ամբաստանած էին Մխիթարն ու իր աշակերտները, անոր համար՝ որ Հռոմի ուսած չէին. ուստի նա իր Կարգի նախահօր ձեռքով — որ յաստուածուստ ուսեալ և ըմբերանիչ իմաստակաց ճանչցուած էր — կ'ըմբերանէր ամբաստանողները, կրկնելով մէն մի տան վերջը յանապատի ժենամարտիկ զօրապետին օգնութիւնը, այսպէս.

Օգնեա մեզ սուրբ Անտոնիէ,
Օրհնեա գմեզ սուրբ Անտոնիէ.
Պահեա գմեզ սուրբ Անտոնիէ,
Ի թշնամեաց պատերազմէ։

Բանաստեղծական գեղեցկութեան իրրեւ նմոյշ բաւական ըլլայ հետեւեալ տունը.

Չերկինս աստեղք զարդարեցին,
Չերկիր ծաղկունք պճնեցուցին.
Բայց հետեւողք վարուց քոյին՝
Չլերինս յոգունս պերճացուցին։

Ինչպէս այս երգս, այսպէս և « Անճառին Խորան [1] », « Երանելի մայր անարատ Մարիամ լոյս », և « Երանուհի մարիամ Կոյս գրուատելի » երեք գովասանական երգերն — որոնց առաջին երկուքը յօրինած է Մխիթար իր ծանր աշացաւին [2] ժամանակ, իսկ միւսն անկէց վերջ — մինչեւ ցայսօր կ'երգեն յուզուած սրտով մեր ժենիները՝ Ս. Անտոնի տօնին օր՝ իրեն ի պատիւ տրուած խնճոյքին և խրախութեան ատենը։ Երգերէս երկրորդն հիանալի է մանաւանդ իր քնարերգակ բանաստեղծութեան ձեւին, կրից առատութեան և մտածութեան նորութեան համար։ Ուստի ընթերցողաց հետաքրքրութեան համար աւելորդ չեմ համարիր արտագրել այն տուները միայն.

« Երանելի մայր անարատ, Մարիամ լոյս,
Ձանձն իմ խաւար պայծառացո՛, ոմ սուրբ անբիծ Կոյս,
Ամենօրհնեալ Կոյս։
Տարակուսանաց և տարտամեալ հոգւոյս իմ յոյս,
Աղաեա զիս միջնորդութեամբ քով, սուրբ անբիծ Կոյս,
Ամենօրհնեալ Կոյս։
Ո՛վ բարեատան մըշտասպառիչ՝ երկնային գարդ,
Տանն Աստուծոյ տընկեալ ես դու պերապայծառ վարդ,
Անուշահոտ վարդ։

---

1. Դիտել կու տանք՝ որ այբուբենի կարգով « Ամենօրհնեալ սուրբ Կոյս գըթած, մատց Կուրիս իմաստ չնորհես » 62 էջերէ բաղկացած երգն եւս — ուր նա հանճարեղ կերպով ամփոփած է սուրբ Գրոց և վարդապետներու ծաղիկներն և գոհարները — նոյնպէս կուրութեան միջոցին չինած է. որուն մէջ կը փայլին սակայն մտքի երիտասարդ լուսաւորութիւն և գաղափարաց գեղեցկութիւնքը.

2. Այս հիւանդութեանս երկու անգամ ենթարկուած է Մխիթար, նախ յամին 1691, իր կենաց 17 ամեայ պատանեկան հասակին մէջ, երբ կը դեգերէր Իջմիածին, ուսանելով առ ոտս Մխայէլ եպիսկոպոսին. և երկրորդ անգամ 1693ին, Աբբաստիոյ Ս. Նշան վանքում, կուրացնելու չափ վտանգաւոր. այնպէս որ Մխիթար ստիպուած էր շարունակ փակ պահել գայն, և Միլտոնի պէս երգերով գրագիլ և հոգեւոր խոհմունքով։

Յոգնագնդան գիտութիւն քո յուսացեալ արդ,
Խընդրեմ ի քէն՝ զի բուրեացես զհոտ սիրոյդ յիս վարդ
Անուշահոտ վարդ։
Երկիւղալից կեղակարծիւք միտս եղիւ ժանդ,
Մաղթանօք քովք պայծառացո՝ և մաքրիչ լեր ցանդ,
Ցոյս և լոյս իմ ցանդ։
Լուսաւորեա հոգւոյն իմոյ զվիճակեալն ակ,
Չի բաց ի քէն զոչ ոք ունիմ զեղ, Կոյս սիրաւնակ,
Ո՛վ լուսատու ակ։
Համեստասիրդ ըղհայցուածն իմ արդ՝ ի միւ ակ,
Տուր միշտ գրնալ ինձ քոս կամաց որդւոյդ սիրաւնակ,
Ո՛վ լուսատու ակ »։

Ի լուր այս գողտրիկ երգիս Մխիթարայ վշտացը կարեկցող սրտերն եւս կը գտանեն սրտապատում լիճ մը, մանաւանդ երբ խորհին, թէ աշագուրկ մեծ գործիչն անով պրկուած կը կարծէ զինքը նաեւ իր մեծագոյն ձեռնարկներէն։ Անդրագոյն խորհրդածութիւններու ալ պէտք չկայ։ Ընթերցողն ինքնին թող բաղդատէ Սերաստացի անշուք և անարուեստ, բայց ծաղկահատակ կուրին այս սրտառուչ մաղթանքը՝ Ալպիոնի ծերունի կուրին և խրոխտ բանաստեղծի Գրահատ կորուսեալ հակայ գիւցազներգութեան Գ. Երգի նախերգանքին հետ, և լսէ թէ որո՞ւն մէջ աւելի սիրտ և նոր գաղափարներ կը պարունակուին։ Ես այսչափը կ'ըսեմ, որ առաջնոյն մի ակի մէջ համատօտուած ազաչանքի գիւտը՝ ամէն բանաստեղծութենէ վեր է, զի շատ և շատ բաներ գուշակել կու տայ մեզ լռելեայն և խօսիլ։

Սակայն մեզ հետ ուրիշներու ուշադրութիւնն խակ կը հրաւիրենք Մխիթարայ ուրիշ երգի մը վրայ, որ թերեւս ամենէն աւելի բնորոշ, և իր տեսին մէջ եզականն ըլլայ. այսինքն է՝ «Ներկեա որդեակ» օրօրը, զոր գրած է Կուսամօր բերանը՝ ուղղեալ առ մանկացեալ Աստուածորդին։ Արեւելքին յատուկ է, և մանաւանդ հայ մայրիկներ ամէն տեղ իրենց մեղամաղձոտ և անուշիկ մանիւներովն ու նանիներովը կը ննջեցընեն մանուկները. որոնց կենաց գաղտնին ուրիշ բան չէ՝ բայց եթէ կեր ու քուն։ Ամենքնիս ալ մօր ձայնովը լացած ու խնդացած ենք։ «Հայկական քնարը» ուրիշ ութ օրօրոցի երգեր եւս կը ներկայացնէ մեզ, որոնք ամենքն ալ Սերաստացիէն շատ վերջը յօրինուած են, ազգային նշանաւոր պուէտներէն. իսկ Մխիթարէն յառաջ ծանօթ չէ ինձ և ոչ մէկ հատ։ Սակայն սորա եզականութիւնը՝ միայն առաջնութեան մէջ կայացած չէ, այլ նոյն իսկ մեծութեան. զի միւսներն ամենքն եւս սոսկական մայրերու և մանուկներու կողմէն երգուած են, սա միայն — գեղեցիկ դիմառնութեամբ — Կուսամօր բերանը դրուած է։ Ես չեմ յիշեր, որ եկեղեցական քնարերգակ պուէտներէն կամ Հայրերէն մին այսպիսի մի մտածութիւն երկնած ըլլայ, թող թէ այս կերպով ձեւակերպած։

Թէ ե՞րբ արդեօք և ի՞նչ չարժառիթներէ մղուած՝ յօրիներ է Մխիթար այս երգս, ինձ յայտնի չէ. թէեւ հաւանականօրէն կամ երկրորդ երթին ի Կարին, և կամ Սեբաստիա եղած միջոցին ըլլալու է։ Հաւանական է դարձեալ կարծել՝ որ կամ հայկաբաստիս եղած միջոցին, չարժելու առ մանկացեալն Յիսուս, և կամ իր անոյշ մայրերու բարեպաշտութիւնը չարժելու առ մանկացեալն Յիսուս, և կամ իր ժամանակ բերանացի երգուած սուրբախորհ և անպատշաճ օրօրները խափանելու նպատակաւ գրած ըլլայ դայն։ Յամենայն դէպս՝ Կուսամօրն և Կուսորդւոյն սակէց ալ գեղեցիկ գրած ըլլայ դայն։ Յամենայն դէպս՝ Կուսամօրն և Կուսորդւոյն սակէց ալ աւելի արժանավայել և գորովական օրօր չէր կրնար մտածել. զի խորախորհուրդ մտածութեան հետ՝ բանաստեղծութեան հմայք մ'ալ ունի իր մէջ։ Երկինքն եւ երկիրը ստեղծող Աստուածն է, որ մանկան պէս բուռ մը օրօրոցի մէջ կը հանգչի, և աստուածային Կոյսն է՝ որ անհուն գիրով կը հակէ անոր վրայ։ Կարապետեան Յովհաննէս իր ծածին Կոյսն է՝ որ անհուն գիրով կը հակէ անոր վրայ։ Կարապետեան Յովհաննէս իր և աշխարհի մանկացեալ Տիրոջը ոտից առջեւ ծնրադիր կ'օրօրէ. սերոբէներն ու քերովբէները վերէն իրենց սիրաշարժ և հոգեզմայլ գործիները կը հնչեցնեն. Հրեշտակներն ալ երկնքէն անմահութեան անուշահոտ ծաղիկները դէպ ի վար կը սփռեն՝ մահկանացու հովտին մէջ, ու երկիրս՝ ալ երկինք եղած կը նկատուի։

Մխիթար հասած էր իր նպատակին. վանն դի այդ չքնող երդն ալ — միանեւ-բուն պէս — չուտով մուտ գտաւ հայ ժողովրդեան մէջ, և ունեցաւ իր պարտիզի ապ-դեցութիւնը։ Ոչ միայն մայրերն իրենց մանուկները օրօրած ժամանակ, այլ և ուրիշ դասակարգի անձեր գանազան պարագաներու մէջ կը գնայէին և կը գնային այդ նուիրական քնարի ձայնովը։ Տէր Գաբրիէլ Պատկանեան՝ Ներսէս Աշտարակեցւոյ Կենսագրութեանը [1] մէջ հետաքրքրական մանրամասն (anecdote) մի կը պատմէ, որ լիովին կը հաստատէ մեր բռնած, դոր ևս կ'ուզեմ նոյնութեամբ մէջ բերել այս տեղ։

«Ներսէս վարդապետն տեսանելով Սերոբէի (Պատկանեան) անխնամ վիճակն, և նորա կնոջ միայնութիւնն, որ եթէ զաւակաց խնամք տանէր, անտեսութիւնը կը մնար անխնամ. թէ տնտեսութեան միտ դնէր՝ զաւակունքն կը մնային անսպրդել, այն նորա-ձին Գաբրիէլ մանկան [2] դառաւ առաջիկ. կը պրկէր, պրկով կը շրջեցուցանէր, օրօրո-ցէն կը հանէր, օրօրոց կը դնէր, և իր խռպոտ ձայնով օրօր կ'երգէր. և երբ մայրն Մարիամն կ'սկսէր քոյր տեղոյն սովորութեանն վրացերէն օրօր ասել, «Խաւ նանս, վարդս նանս, նանս», Ներսէս առաջիկ կը բարկանար. առ զայրոյթ որոյն ծաղր կա-նէր, և անզգաստ մեզապրանք կը խօսէր առ Սերոբէ Պատկանեանն, որ նա կը նեղէ և Թոյլ կու տայ՝ որ իր զաւակաց ականջն վրացերէնին ընտելանայ՝ ի վնաս հայե-րէնին։ Այս պատճառաւ Սերոբէ վարժապետն՝ Մխիթար Աբբայի երգարանէն մէկ երգ որ գիտէր ի բերան՝ այնքան երգեց ի հաճոյս Ներսէսի, որ ոչ միայն Ներսէսն անդիր սերտեց, այլ և Սերոբէի անդրագէտ կինն սովորեցաւ, և աշակերտներէն բազումք, որոց մէջ կային Միրաքոս Յովհփի որդին՝ Բարսեղ (Վասիլ Օսիփիչ Բէհբուդեան), և Միրիշի քէաբրաշի Յովսէփի որդին Յօհաննէսն (Իւան Օսիփիչ Պ_որպանեանն) եւս ու-սան, որ միշտ Ներսէսին ձայնակից կը լինէին։ Երգն այս էր. «Ներնջնա որդեակ, քաղցր և անոյշ»...։ Մինչդեռ Ներսէս չգիտէր թէ այս որո՞յ շարադրութիւնն է, և կը կարծէր թէ Սերոբէինն է՝ շատ կ'ախորժէր, և միշտ այն կը մրմնջայր. բայց երբ իմացաւ՝ որ այն Մխիթարայ Սերաստացւոյն է, Աստուած հետ արտայէ, այնպէս բարկացաւ, ինչպէս որ եթէ Հրէից ռաբբին խարէութեամբ խոզի միս կերցուցած լինին. այնքան զայրացաւ, այնքան արտնջաց, մինչեւ Սերոբէ վարժապետն բռնադա-տեցաւ մէկ նոր օրօրոցի երգ յօրինել, նոյնպէս ի գիմաց Աստուածածնի, նոր և այլ եղանակաւ. որովհետեւ Ներնջնա որդեակն վրաց եղանակաւ էր [3]»։

Մենք ուրիշներուն կը թողունք խորհրդածել, թէ Բերթու կրօնամոլութիւնը՝ Ներ-սէս Աշտարակեցւոյ պէս մեծ անձնուիրութեանց մէջ իսկ ինչ ատելի անելիքի ծագ-բատականութեան կը հասնի. այլ կ'ուզենք միայն մի քանի տուն գիմաց դնել Մխիթարայ հեղինակաւոր յօրինած երգէն՝ Սերոբէ վարժապետի կատակաբար յերիւրա-ծին բով, ցուցնելու համար թէ արքան բնական է և բանաստեղծական առաջինը, և արշալոյս ցուրկ է բանաստեղծութենէ և զգացման կողմանէ՝ ցուրտ և անալի վերջինս։

Մխիթարայն

«Ներնջնա որդեակ քաղցր և անոյշ,
Հանգիր քընով, և սուս քեզ այժ.
Օր օր օր օր օր, օր օր.
Աստուածորդւոյս իմ օր օր։
Գու որ յերկինս ահիւ պատուիս,
Զեռամբ իմով ասուդն պատիս։ (Օր օր)

---

1. Որ նախ տպուած է մաս առ մաս Ջմիւռնիոյ «Արշալոյս արեւելեան» օրաթերթին մէջ, և ապա 1876ին նոյն տպարանում առանձին հրատարակուած։

2. Որ է պատմութեանս հեղինակը։

3. Պէտք է հասկանալ որ Թիֆլիսում այդպէս կ'երգուէր.

Երկինք չէին քեզ բաւական,
Բայց ես եղէ քեզ կայսրուհի։ (Որ օր)
Զքեզ որ ձեռքն իմ արդ չոշափեն,
Գասք հրեշտակաց ահիւ պատուեն. (Որ օր)
Դու որ ձեռամբ գաշխարհս ունիս,
Կամուս պրսպիս իմ և դիես. (Որ օր)
Աշխարհս բոլոր ի քում ձեռին,
Եւ դու բոլոր յիմում ձեռին։ (Որ օր)
Երկինք սիրտ են քեզ և կան,
Երկիրս ոտից քոց պատուանդան. (Որ օր)
Բայց արդ բազուկն իմ սիրտ քո,
Բարձք իմ պատուանդան ոտից քո։ (Որ օր)
Մինչ համբուրեմ գատաւածդրիս,
Բազմօք չնորհօք լնանի հոգիս. (Որ օր)
Մինչ համբուրիմ յատաւածդրութդ,
Բղխին ի յիս պարգեւք և լոյս»։ (Որ օր)

Սիրոյն Պատկանելիքին

Անհամեմատ և անատհման
Երանելոյ յոյսդ, որ որ որ որ որ.
Աքանչելի օրինակաւ
Ի կոյս մօրէս ծնեալդ, (Որ օր)
Ի յետայեաց գուշակելոյդ,
Լմնանուէլ մանկացելոյդ։ (Որ օր)
Ի ննջեցեալ յանչուք այրի՝
Իշխան հովիւ մեզ յայտնելոյդ. (Որ օր)
Ի սամփսան գառաց հովուաց՝
Ընդ գօրս երկնից փառաբելոյդ. (Որ օր)
Նախատպաւոր անառնոտաց՝
Բանից այսօր կառաբելոյդ. (Որ օր)
Ծագմամբ լուսոյ սաստիկ նորոյ՝
Մոգ արքայից յայտնեցելոյդ։ (Որ օր)
Մինչեւ ծնեալ քո ի կուսէս՝
Յոլորտս յերկրի հռչակելոյդ. (Որ օր)
Ոսկի կընդրուկ պատարագօք՝
Երկրպագեալ պաշտեցելոյդ։ (Որ օր)

Տէր Կարրիէլին չնորհակալ ըլլանք՝ որ մեզ ձեռնտոյթ չպատճառելու համար այդքանը միայն արտագրած է Սիրոյ պատկանեանի երգէն. իսկ մենք անոնց թողած ցուրտ ազատութիւնը մեզմելու համար՝ կնքենք մեր համեմատութիւնը Սիրատուոյ հետեւեալ տողերով.

Մանուկ փոքրիկ՝ Աստուած անհուն,
Քաղցրիկ արդեակ իմ կաթնատուն։ Որ որ որ որ որ
Գասք երկնայնոց յատակ մատիք,
Երգել գքնարեր երգ անուշիկ. Որ որ որ որ որ
Հրեշտակապետք յատակ մատիք,
Հաւաքեցէք արդուոյս ծաղիկ։ Որ որ որ որ որ

Հրեշտակաց դասք զծաղկունս բերէք,
Շուրջ զօրոցիս այս սրփռեցէք. Օր օր օր օր օր
Սուրբ Յոհաննէս, մանկիկ քաղցրիկ,
Շարժեա զօրոցդ այդ հանդարտիկ. Օր օր օր օր օր
Յորժամ զարթնու՝ յայնժամ սիրեա,
Զոտս և ըզձեռս իւր համբուրեա. Օր օր օր օր օր »։

Ահա այս և այսպիսի երգերով է՝ որ հիմը կը դնէր մեծ Սերաստացին Մխիթարեան բանաստեղծութեան։ Իր պարզունակ լեզուին մէջ գաղափարական գոհարներն այնպէս գեղեցիկ կը փայլին, ինչպէս նաւերը չզարչի ներքեւ ոսկին և ադամանդը։ Նա եթէ ժամանակ ունենար չարունակ այդ մանուճիւղով պարապելու՝ անշուշտ նշանաւոր քնարերգակ բանաստեղծը պիտի լինէր ազգիս մէջ, ինչպէս եղաւ հիմնադիր իր Ազգին և գրականութեանը. սակայն այս ալ իր ապագայ հոգեծնունդ գաւակներուն վերապահուած էր։

* * *

Մխիթարեան բանաստեղծութեան Ա. շրջանն ու բնորոշ յատկութիւնը։ — Մխիթարեան բանաստեղծութիւնն եւս՝ գրականական չարժման համաձայն՝ կարելի է երեք գլխաւոր շրջաններու բաժնել։ Առաջինը կը սկսի Հ. Մկրտիչ Ագանեանով և կ'աւարտի Հ. Գաբրիէլ Ալեմիքեանով։ Երկրորդը՝ կ'առնու իր չարժումը Հ. Մանուէլ Զախչախեանի տուած նոր ուղղութեամբն, և Հ. Ղեւոնդ Ոսմանեանի և Բագրատունեաց և Հիւրմիւզեանի ձեռքով կը գիմէ դէպ ի իր զարգացման գագաթնակէտը։ Երրորդը՝ կը սկսի Հ. Մկր. Չէմպէրկճեանի տուած չարժմամբն, և ամենէն աւելի նշանաւոր կը հանդիսանայ Հ. Ղեւոնդ Ալիշանի և Հ. Թորէն Նարպէյի բանաստեղծութիւններով։

Այս երեք շրջաններս իրենց ժամանակին, միջավայրին և բնորոշ յատկութիւններուն համաձայն լաւ ուսումնասիրելու համար՝ պէտք էր ընդ երկար կանգ առնուլ իւրաքանչիւր բանաստեղծի վրայ, և ընդարձակօրէն խօսիլ. սակայն այս բանիս չի ներեր գրուածիս ծրագիրը, որ ընդհանուրն և համառօտը իրեն նպատակ ունի։

Իրաւ որ Մխիթարեայ ձեռնասուն աշակերտներէն շատերը բանաստեղծական խանդի և ճաշակի տէր մարդիկ էին, բայց ասոնք աւելի քարոզութիւններով և գրական գիտութիւններով զբաղուելով, հետեւաբար՝ ոչ ատիթ և ոչ ալ ժամանակ ունեցած են առանց ընդհատման և քան պատշաճի մշակել այդ գեղեցիկ և վիանգամայն գեղեցկաբեր մանուճիւղը։ Այդ օրինակը տուած էր արդէն մեծ Հիմնադրիս հանճարին արժանաժառանգ աշակերտն՝ Հ. Մկրտիչ Ագանեան — որուն համար կը շեշտէ Երեւելի արանց վարուց կամ Բառգրքի հեղինակն Հ. Մատթէոս Մաղաքեան, թէ «Յօժարեալ էր վարդապետս և յաջողակիտ յոտանաւորս» — գրած է անշուշտ գանազան նիւթոց վերաբերեալ ոտանաւորներ, որոնք գժբախտաբար, ինչպէս և՛ գանազան ուրիշ գրուածները, կորսուած կ'ատենդուին՝ ի Սալոնիկ՝ իր պատուական կենաց հետ։ Այդ ոտանաւորներէն երեքը ասկայն, այսինքն են՝ «Բոյս է բարուց բնութեան հասուչին», «Ժամահամբոյր յայամ աշխարհի[1]» և Մխիթար Աբբայի վրայ յօրինած Տապանագիրն — որոնք ձեռքերնիս հասած են բարեբախտաբար — լիովին կը հաստատեն վերոյիշեալ վկայութիւնը։ Գներեցուածներէս վերջինը՝ թէպէտեւ դիտմամբ խրթին ոճով չինուած է, ժամանակին ոգւոյն համաձայն, սակայն մեզ պէս ուսումնասիրող նորութեամբը, բառից գործութեամբ,

---

1. *Այս երկու ոտանաւորներս տպուած են Հայկազեան լեզուի երկհատոր Բառարանի Յառաջաբաններուն վերջը։ Առաջնոյն վերնագիրն է՝ Յորդորակ առ բարեաց գործածութիւն բառարանի, իսկ երկրորդին՝ Յորդորակ առ ի կարգ իւրաստից ուսմանս։*

իմաստներու հաճութեամբ, գաղափարներու և գիտից բարձրութեամբն ու ճարտար կազմութեամբը կ'արտացոլացնէ քերթողի նուրբ հանճարի առեղծագործող զօրութիւնն և ճկունութիւնը։ 1773ին Հ. Մատթէոս Եւդոկիացւոյն վրայ յօրինուած Տապանագիրն ևս անառարակելոյս Հ. Անանեանի գրչին արդիւնք ըլլալու է, ուր 13 տող ութառեան առանուագրի մէջ գիտցած է ցոլացնել անոր եզականութիւնները։ Առաջին երկու ընդարձակ առանուագրներն և վերջինս ընդհակառակն — իրենց գաղափարական բարձրութեամբն և սեղմ ոճովին հանդերձ — այնքան պարզ և յստակ են, որ զրոց համրակն իսկ կրնայ անուշխուս հասկնալ զանոնք. միայն երրորդը քիչերուն հասկնալի է։ Յամենայն դէպս՝ քերթողիս տաղանդն և մտածութեան գոհարները գեղեցիկ են և ակառուագիտուս։ Սա ուզած ժամանակը կը ճաճանչեցընէ զանոնք՝ բոլոր իրենց առատութեամբը. իսկ չուզած ժամանակը՝ կը ծածկէ բանից և բառերու շղարշի ներքեւ — ինչպէս մայրամուտ արեւը՝ թափանցիկ ամպերուն տակ. և այսպէս կ'ընէ՝ ուրիշ հմայք մը յստակ բերելու նպատակաւ։ Մէկ խօսքով՝ այդ չորս առանուագրներն իսկ՝ իրենց թերութիւններով հանդերձ՝ կարեն ըսուիլ այն ժամանակի արձանական բանաստեղծութեան յստակ գոհարներ համարուիլ։ Հ. Մկրտիչ Անանեան վերջին առաքեանի ճարտար և ճկուն էր այդ տեսակ քերթողութեան մէջ. մանաւանդ թէ իր ժամանակակիցներուն մէջ պատկառելի բացառութիւն մի կը կազմէր։ Նա անշուշտ ուրիշ շատ տաղանդաւորներ և արձանական առանուագրներ ևս յօրինած ըլլալու էր, համեստութեամբ ծածկելով տակաւին իր անունը լռութեան քօղի ներքեւ։

Բանաստեղծիս թէ պարզ և թէ խրթին ոճին վրայ գաղափար մը տալու համար կը դնենք անոր երկու քերթուածներն ևս նմոյշներ։

« Քանզի ի ճաշ ծագիւ մատին
Ծանեաւ ազգ մեր մեղր իմաստին.
Որոյ փեթակ մատեան բառին,
Ոսան այն տապիւր առնչմամբ արտին։
Զի թէ բառգիրք գինդ գին ունին,
Գիտեն գրպիրք լեզուպրնին.
Ասանց տրա տառ, ձեռք կապին
Որոց յիմաստս պարապին։
Քերթող [1] լինիս դու գիւրագին,
Թէ քաջ հասու ես բառգրքին։
Զի քերթութիւնք ճարտար ներբին,
Ասու գործեաւ առչեալ յղկին։
Հռետորաց բանք պաճուճին
Գործեաւ ճարտար բառարանին.
Զի ցոյց է նա բառից գանձին.
Զօրմէ նոքա ցանգ կըղկաթին։
Ուղի է նա բանասիրին,
Կանոն ուղիչ հայնիրգոյին.
Լոյս նըչուխց պռէտիկոսին.
Ցուց ապառատն հէգ համրակին [2] »։

Այս քերթուածովս բառգրքի մատուցանելի ծառայութիւններն և ներբողը կ'ընէ։ Իսկ երկրորդովը նպատակ ունի՝ կրթել համրակն՝ ուսանող կարգին, և փոքրացունէն և առրնագունէն դէպ ի մեծագոյն և բարձրագոյն մակածութիւններուն առաջնորդել։

---

1. Քերթող բառով հեղինակն անշուշտ չարագրող կը հասկնայ՝ ըստ նախնեաց, քան բանաստեղծ՝ որ բնութեամբ միայն կրնայ ըլլալ։

2. Տես Բառգիրք, Հայկ. լեզուի, տպ. Վենետիկ 1763, եր. 22 Յառաջաբանին։

Ա. այս գեղեցիկ նմանաբանութիւններով կը բացատրէ բանաւոր բնութիւնը՝ նախեւ զակ աչխարհի խառնակ վիճակին հետ, զոր իմաստուն արարչապետը վեց օրուան մէջ հրաշալի կարգի և արդուզարդի կը վերածէր։ Եւ կը գոչէ քերթողն՝ առ համբակը.

« Ապա գակաւոդ իմաստութեան
Մի գընկենուր գայլերը պայման.
Յանկատարից ել բառ առհման,
Փոքրէն սրա գրակիպրն ուսման.
Չի որք չափով յառաջ խոզան,
Գեր քան ըզչափըն վերանան։
Ապա յառաջ քան գամենայն՝
Ասեր գիմաստըս բառական.
Յետոյ կարգաւ լեր բընաբան,
Հասակ ըզկընի առաւածարան »։

Յոյժ ճարտար և գեղեցիկ են հետեւեալ երգիծաբանական առակըն, որով կ'ելեւէջ բնութեան հակառակ ուսմանց մէջ ընդոստ ընթացողները։

« Եւ գի լինիր մարախ ծըմրեալ,
Անդ ի յանդէ ընդոստուցեալ.
Եւ գի յոտով առ անդ նըստեալ,
Ալ իրըր մայր ըզթուխս սերեալ։
Յոգունք այսօր են կոշկակար,
Վաղիւ խօսին առհեասարար.
Յետոյ քերթող պիտակարար,
Ասեն ի բանս առաւածարար։
Ի հարցանել գինչ է հոգով,
Շատակրաւեն բազմայոգով.
Որպէս որդոյ որկէս գոլով,
Խօսին գրառից չազիտողի յոլով։
Ըզթան, գօշինդր, ըզձէթ, մեղու
Խառնեալ ձըկամբ ընդ հացուձու.
Ի յայս բանից գինչ ապրացու
Գըրացես ուսեալ, այլ համբակ դու։
Այնպէս ծանակ է գիտութիւն
Որց անկարգ է բընութիւն »։

Իսկ խրթնութեան օրինակ է Մխիթարայ Տապանագիրը, որ արդէն հրատարակուած է[1] ամբողջապէս, բայց առանց հեղինակի անունն յիշելու։ Ասոր առաջին և վերջին տողերը բաւական կը համարինք մէջ բերել հոս։

« Գնար քերուբ հոգեառաւիղ
Ներկուս մատին առաւածաճիւղ.
Աղեալ Աբրաա մարգէն խաւիղ՝
Բահեբա Աբրայ լուսաշաւիղ։

---

1. Տես վարք Մխիթարայ Աբբայի, վենետիկ 1901, եր. 417։

Բառակ մարմնոյ՝ կայտառ, ուրախ,
Աչեաւո, անհաս խորոց բաւիղ.
Ձամբար չնորհաց գերշռաւաւիղ,
Յայտիչ լուսոյ, շլացոյց չաւիղ։
Բախճան գիտնոց, խնառա անճնինչ,
Աչգու ուսաւ ինքնին անչինչ.
Խմբիչ ուսոյց բիւրուց առինչ,
Օճառ ոգւոց, մրառաց չրաինչ.
Առիւծս պրկաց յոխառէ աչինչ.
Աչքանագեան առհիս առաքինչ։...
Գաւհար մտաց խառնարհ սիգնան,
Խոժեալ ոգւոց գերիւրանան.
Պրծ յոգոին գոպիէր պաչառան,
Յառպիան Հայոց՝ արժանն ի ռան »։

Հ. Պօղոս Մէհէրեան եւս Թէպէեան Աճառեանի կիրճ և կոկիկ գրիչը չունի, առկայն քերթուԹեան մեծ յարմարուԹիւն և գիւտուԹիւններ ցոյց կու տայ։ Նա չափով Թողած է մեզ նախ — 1778 Թուականին — Սիմոն կաԹողիկոսի գրգռմամբ կարնոյ գաւառին մէջ հանուած հալածանքին պատմուԹիւնը. Բ. երկու պատառական երգեր՝ ուղղեալ առ Տէրտէրսն, մին յամին 1788 Հնդկական ովկիանոսին մէջ նաւարկած ժամանակ զէպ ի Մադրաս, և միւսը՝ 1790 Թուականին այն տեղ կրած մահամերձ հիւանդուԹեան և նեղուԹեանց առԹիւ։ Գ. րդ առանձնաւոր մ'ալ — 44 տողերէ բաղկացեալ — նոյն տարւոյ Մեպտ. 29ին Ամստերդամէն ուղղած է Մելգոնեան Արբահօր, որ կը սկսի « Զհանդուրժեալ նահապետին » բառերով։ Այս առանձնաւորով կը նմանցնէ գինքը նոյեան տապանին, որ չգանելով առից դադար, վերստին կը դառնար իր տապանը՝ Ս. Ղազար, ուսկէ 1775ին հեռացեր էր։ Դ. Զափով այլ և այլ ներբողեանններ գրած է — 1803 Թուականին — Տիգեան ապգառհմին [1] վրայ, որմէ գրան երէց և հայերէն լեզուի վարժապետ եղած էր. բայց այդ տարին ծերուԹեան պատճառ կը հրաժարէր։ Շատ գեղեցիկ են և բնորոշ իւրաքանչիւրին տրուած յատուկ դրուատիքը, մանաւանդ այն մասն, ուր առնոց առաքինասէր մայր սիկինը՝ նկարագրուած է իբր երկրաւոր առագնելէ պահուած արեգակ մի։

Մէհէրեանի առանձնաւորներէն այսքանը միայն մեզ ծանօԹ են։ Աղատրակոյս նա Թէ իրեն վարժապետ, և Թէ որպէս բարեկամ Պօղոս նշանաւոր գերդաստաններուն — բան որում ցոյց կու տան ԹղԹակցուԹիւնները — պէտք է որ հարստանար, անուանագրուԹեան, ծննդեան, մահուանց և ուրիշ առիԹներու մէջ եւս այլ և այլ առանձնաւորներ գրած ըլլայ։ Յամենայն դէպս՝ Հ. Մէհէրեանի առանձնաւորները լեզուական և բանասիրական արժէքէն աւելի՝ պատմական կարեւորուԹիւն ունին. վասն զի կը չօշափեն Թէ իր արկածալից և առուգիս վիպասանական կեանքը՝ և Թէ մանր նշանաւոր ազգայիններուններուն։ Մէհէրեանի ինքնագիր ու անտիպ կենսագրուԹիւնն ալ պիտի կրնայ մեզի իր գաղտնի բնուԹիւնն ու գիւտաւոր միտքը. բայց դժբաղդաբար նա ծեծահատակ եղած ըլլալով վէնետիկ, և կենաց մեծ մասն առաքելուԹեանց մէջ անցուցած ըլլալով, չէր կրցած մարզուիլ ու մշակել իր բնատուր տպաւորը։ Յամենայն դէպս՝ ծանր իր պատուէրն կը ճանչցուի, ըլլայ այն հատուն, ըլլայ խակ։

Ժ. դարու ՄխիԹարեան գրականուԹեան մէջ ամենէն նշանաւոր դէմքն է Հ. Միքայէլ Չամչեան։ Այս մեծ մարդուս պատմագրական և լեզուական արդիւնագործուԹիւնները տեղանք արդէն, մեր գրուԹեան Գ. և Դ. գլուխներուն մէջ. այստեղ պիտի խօսինք՝ — բան կարելոյն համառօտ — անոր բանասիրական տպաւորի մասին միայն։

---

1. Որպիսիք էին — յիշեալ Թուականին — Յովհաննէս չէլէպին և իր որդիքը Միքայէլ, Յակոբ և Պօղոս չէլէպիները, գաղերքը՝ Թագուհի, Երանուհի, Խանդուհի և Գայիանէ, Անտոն չէլէպին և իր որդիքը Մկրտիչ և ՅարուԹիւն չէլէպիները, և Հռիփսիմէ և Սոփիա օրիորդներն։

* * *

Այն մարդիկ՝ որ բնութեամբ բանաստեղծ ծնած են, պէտք չունին մուսանե-րուն դիմելու. վասն զի ներքնապէս կը տեսնեն և կը զգան գեղեցիկը — իրենց վճիռ գաղափարականին մէջ — և կը բանաստեղծեն գուցէ աւելի վսեմ և աւելի գեղեցիկ՝ քան նիւթական բնութեան գեղեցիկը: Եւ բանաստեղծ կամ քերթող ըլլալու յայտա-բար նշանն անոր մէջը կայացած չէ՝ որ միշտ չափով պրէ մէկն և քերթէ. զի ճշմա-րիտ բանաստեղծի խորհածն ալ, խօսածն ալ, գործածն ալ ար և է կերպով՝ բանաստեղծութեան բնագրոշմը կը կրէ իր վրայ, ինչպէս սիրասարփ սոխակն ուռուցիկ լանջովը գեղած և գեղգեղած ժամանակ միշտ նոյն է, թէպէտեւ արձակ գաշտի կամ անտառի մէջ եղեր է, թէպէտեւ իր թռիչքը կապող և կաշկանդող վանդակին մէջ: Վ. Հիւգոյի և Վալդեր Սքոտի պէս ուրիշ մեծ բանաստեղծներ եւս սխորժած են յաճախ արձակաբար հնչեցնել իրենց զգացման և խանդի մեծագործ երգերը, քան չափով և կշռով. վասն զի առաջնոյն մէջ կը համարէին աւելի յագեցնել իրենց հանճարի անյագ ենչանքը: Այսպէս ահա պէտք ենք խորհիլ Զամչեանի մասին, որ մինչեւ իր ուղեւոյեալը բանաստեղծութեան մէջ մկրտուած էր, նա մանաւանդ բնութեամբ բանաս-տեղծ ծնած: Թէպէտեւ սաղ ատանաւոր կամ չափաւ գրուածներէն քիչ բան ծանօթ է[1] մեզ, սակայն անտեղեակ չէ որ պիտի չսիրենք Զամչեանի բանաստեղծական մեծ տաղանդը, այլ անոր արձակ գրութիւններէն՝ որոնք թէ թուով և թէ նիւթոց զանա-զանութեամբն անհամեմատ կերպով վեր են: Ասոնք իր պատմագրութեան — ինչպէս և Նուագարանի Սաղմ. Մեկնութեան և Հրահանգ հօրենկի ապօթագրքին — մէջ չօշափելի ապացոյցները տուած էր արդէն իր վիպասան անտեսոր բանաստեղծութեանը: Աւասի մենք որ անոր պէսպէս նամականներն եւս ուրիշ անտիպ գրուածքն եւս աչքէ անցուցինք, առանց երկբայութեան կրնանք անուանել զինքը վիպագիր բանաստեղծ. վասն զի ոչ միայն առա-ջին անգամ է՝ որ կը տեսնէր այնպիսի մի հսկայ գործ, այլ և այնպիսի աւիւնով և խանդով կը մարմնացնէ և կ'ոգեւորէ բազմադարեան հայ պատմութեան խուռներով առուերները, որոնք ներկայից սրտին հետ իսկ այնչափ ազդու կերպով կը խօսին: Եւ ար ազգասէր հայը կարդալով զայն՝ յափշտակուած չէ անոր աւիւնով: Իսկ եթէ առուգիս յափշտակիչ է, այդ իսկ ակն յայտնի նշան է անոր մէջ սիրոյ բանաստեղ-ծութեան բարձր ոգւոյն և երեւակերպութեանցը:

Սակայն Հ. Միքայէլի բանաստեղծութեան բուն ներկայացուցիչներն են անոր հայրարար անտիպ նամականներն, որոնք գրուած են ամէն վիճակի անձանց և կենաց ամէն պարագաներու մէջ: Նիւթոց զանազանութեան համաձայն՝ զանազան տեսակ բանաստեղծութիւններ եւս ի գործ դրած է տաղանդաւոր գրիչն. այսինքն է՝ սիրթ երգիծական և սիրթ մաղթողական, երբեմն խրատական և երբեմն սխրանքի: Այնու-ամենայնիւ անկեղծ բարեկամութեան հրովը վառուած՝ միեւնոյն ոգեղէն սիրտն է և բոցոտն հանճարն, որ բոլոր իր տաղանդութեամբը կը սիրէ, իր անտեսոր ցայտովը կը բորբոքի և կը բորբոքէ. իր երազութեամբը կը չանթէ և կ'ելեքտրականացնէ դիմացինները: Նշանաւոր են այդ գրութիւնները մինչեւ վերջին պատառիկը, ոչ անոր համար միայն՝ որ կը հնչեցնեն Հ. Միքայէլի կենաց և բարուց վանդիւնը, այլ և կը ներկայացնեն մեզ սիրթ կենդանի գոյներով ԺԸ դարու ազգային այլ և այլ դիպաց ու վիպաց և անձնաւորութիւններու համապատկերը, և սիրթ կը քանդակագործեն հրաշալի խմբար-ձաններ՝ ամենաճարտար և նուրբ գրչով:

Այս տեսակէս են 1772ին, Յունիս 8 և 23, Բաղրատի նշանաւոր վաճառական Մեհրան ազգ. Պապիկեանին գրած կրկին նամականներն, անոր նպատակի դառնալ մահուան առթիւ: Թշուառ հայրը չկարենալով բժշկել իր սրտին վրայ խոր բացուած վէրքը, նա-

---

1. Այսինքն են երկու հատ, որոց մին տպուած է Նուագարան օրհնութեան բազմագանձ հրատարակու-թեան Յառաջաբանէն վերջ. իսկ միւսն ալ Սաղմոսաց մեկնութեան:

թապէս դիմած էր Ջամչեանին։ Ա՛ս պատճառած իր բարեկամին ունեցած անդիւտ կորուստն էն և կրած վշտերէն, կը լարէր իր սրտի քնարն, և պերճախօսի մը ազդու յաւակնութեան հետ՝ կը թափէր նաեւ իր քնքոյշ զգացումներու ջերմ արտասուքը՝ հօր վիրաւոր սրտին և անոր դառն կոչս շիրմին վրայ։ Եւ երբ կարեկցութեան ալիքներու առատութենէն լեզուն հեղձամղձուկ կը թուի ալեկոծիլ, կը գոչէ ճարտասան բանաստեղծը. «Բայց ձեռք իմ մի գործեսցին յաշխատելոյ՝ ի կազմել և ի բառնալ ի վերայ անձինդ գայն գործի, զոր երարձ յուս իւր որդին Աստուծոյ». և կը լեցընէ մեծագիր խաչի ձեւով թուղթը՝ քրիստոնէական օծութեամբ պատարան մխիթարութիւններով։ Հոս կը տեսնուին մանաւանդ խանդոտ բանաստեղծութեան հրամայո ծաղիկներն ամէն խօսքի մէջ։ Ա՛յ, նոյն իսկ այդ խաչաձեւ գրութեան գիւտը բանաստեղծութիւն մը չէ՞։

Շատ հետու պիտի տանէր զիս Հ. Միքայէլ, եթէ ուզէի մի առ մի մատնանիշ ընել — բոլոր միւս նամակներուն մէջ — անոր բնդնաւոր մտքին և սրտի բուռացուցած բանաստեղծական ծաղիկները։ Սակայն ամիսի գաղափար մը տալու համար իր բանաստեղծութեան վրայ, հարկաւոր կը համարիմ արտագրել այս տեղ երկու էջ միայն 20 մեծագիր երեսներէ բազկացած անոր տխրական քնարի արտագրութենէն, զոր յ8 Օգոստ. 1772, Բասրայէն ուղղած է Հ. Սուքիաս Այամալեանին։ Ա՛ս Ջամչեանի եռանդուն հառակի այն ողբանուագն է, զոր ներշնչած է 1771ին ամենէն սեւին ցաւալի դէպքն, այսինքն է՝ Հ. Մանուէլ Վ. Լմիրզեանին՝ հնդկային ովկիանոսին մէջ նաւաբեկութեամբ ընկղմիլը։ Սակայն բանաստեղծի ողբաձայն նուագի խորագրած թրթռումները լաւ ըմբռնելու համար՝ պէտք է գիտնալ, որ մի և նոյն բոյնին մէջ երկայն տարիներ անած և մի և նոյն ուխտից ակռանին վրայ նաւերուած երեք հոգեհարազատներ են, որ յանկարծ — նոյնան ազատնոյն պէս — իրենց տապանէն Թուած՝ հնազանդութեան ձայնովը՝ կ'երթան արեւելքի հեռաւոր հորիզոնները հայոզդի գաղթականութեան փրկական աւետիսը տալու, այն ժամադրութեամբն՝ որ տարիէ մը ի միասին վերադառնան Ս. Ղազար։ Եւ տակայն քիչ առենէն կը բաժնուին իրարմէ. երկայն ժամանակ լուր չառներ Հ. Միքայէլ. և ահա օր մ'ալ կը հասնի իր սիրելւոյն տխուր մահուան բօթն։ Ահա այս պարագային մէջ է՝ որ կը հնչեցնէ Ջամչեան իր ողբական քնարը, և տեսէք թէ ինչպիսի տառապութեամբ.

«Բազմապատիկ փափաքանօք փափաքէի ընդունել Թուղթ յեղբայրութենէդ, և սրտիս փափաքանաց անվհատաք հասի. քանզի ըստ բազում տենչանացս և ըստ անձկութեան կարօտանացս ուրախութեամբ ընկալայ զայն. այլ ողբալով ընթերցայ զողբալին զայն նամակ՝ ողբակից Հօրդ. Թաղձագին հայեցայ ի Թաղձագին ազէտս առաքուսի։ Յապուշ կրթեցայ՝ յափշելի լուր անակնկալիդ դիպուածոյ։ Ի գորով սրտիս մաշեցայ ի վերայ պատմութեան գորովալիր Հօրս մերոյ։ Յանհնարին դառնութեան ըմբռնեցայ՝ ի վերայ դառնագին կորուսեան։ Յանուանելի սիրութիւն թմրեցայ ի համբաւ սիրալի ձայնիդ։ Ի չուարումն մտայ յափշտակեցայ ի հոյն բօթարեր լրոյ։ Ո՛վ ազէտից դառնութեան. ո՛վ մխիթարեցէ զիս ի վերայ մահու սիրելւոյ իմոյ։ Ո՛վ հեռացուցէ յաչաց իմոց զգլեսատեսիլ նաւարկութիւն տարփալւոյն իմոյ։ Ո՛վ բարձցէ ի մտաց իմոց զյիշատակ կորուսեան սիրալւոյն իմոյ։

Ո՛ւր ես, Հայր Մանուէլ. զի՛ եղեւ քեզ, անձկալիդ հոգւոյ իմոյ։ Զի՛նչ գործ գործեցեր ընդ իս՝ ցաւագին եղբօր քոյ. զիա՞րդ վաղվաղակի երկաւոր կացուցեր՝ զերեքկուղեանն զառասան. զի՛նչ առացից վասն քոյ առաջի Գերյարդոյ Հօր իմոյ։ Ո՛վ էառ զքեզ. ո՛վ տարաւ զքեզ. ո՛վ եկուլ զքեզ։ Ո՛ր ալիք ծովու բարձեալ տանի զքեզ. ո՛ր տեղի եղեւ քեզ Հանգստարան. ո՛ր վայր երեւեցուցէ զմարմինդ՝ առաքինասուն հոգւոյդ կայարան։

Տեսանե՛մ զլայնատարած ովկիանոս, և զքեզ ի նմին ո՛չ նշմարեմ։ Տեսանեմ զկիրս քո և զգառակ ի վերայ ալեաց ծովու տատանեալ, և զմարմինդ ո՛չ գտանեմ։ Ընթեռնում և լսեմ զկորուստ սիրելւոյդ իմոյ, և հոգիք իմ ապառին յոգւոց եղանելոյ։ Մորմոքիմ յանուանելի ազէտս սիրոյ, և ո՛չ ունիմ յոյս ասա զքեզ տեսանելոյ։ Ընծայեցէք ինձ անուանելի նիւթ սգալոյ, և ո՛չ ցուցանես հնարս մխիթարելոյ։ Կորուսի զդանձարանդ հոգեւոր՝ առանց գառնալոյ. և բարձաւ յինէն ակնկալութիւն զքեզ ժառանգելոյ։ Բա՛րէ սրտիս կսկծանաց. ասա՛ զոյդս մորմոքանաց. եղո՛ւկ անձինս տագնապ

Ազաչեմ զձեզ, եղբարք իմ, ապէսս կարդացէք և ցաւագինս ողբացէք յիմ վերայ, յիմ վերայ։ Ողբա՛ ողբա՛ ընդ իս, Հայր իմ սիրելի, պատուական Հ. Աւբիա. ողբա՛ ընդ իս, ողորմեա՛ չուարելոյս և ամբոխելոյս։ Յաւակից լեր խորհելոյս և այբիացելոյս. լսելի արա ինձ զձայն ողբոյդ ապաշակի։ Լեր ինձ ողբակից՝ ի վերայ ողբոյի կորսեան եղբօր մերոյ Հ. Մանուէլի։ Ո՛ տայր ինձ այժմ գառանել գքեզ, Հ. Աւբիա, և գրկախառն ողբերգութեամբ լալ զլալագին կորուստ եղբօր մերոյ։

Ագիեալ եմ, թմրեալ եմ, ըմբռնեալ եմ, հիանամ։ Չի՞նչ եղեւ այդ իմանամ, և դիա՞րդ եղեւ՝ զարմանամ։ Ո՛ տայր ինձ ժամ մի միայն տեսանել գքեզ, Հա՛յր Մանուէլ, և ի բերանոյ քումմէ լսել, զինչ պատահեցաւ քեզ, և դիարդ։ Չի՞նչ խորհէիր, Հայր սուրբ, յընկղմիլ նաւուն ի խորս։ Չի՞նչ խորհէիր՝ յորժամ գնաւն ի վերջին վտանգի տեսանէիր. զիա՞րդ ազատակէիր՝ յորժամ նչան ինչ ազատութեան այլ նշմարէիր. զի՞նչ ի ձեռին ունէիր՝ յորժամ միջոց ի պարանոց ի ջուրս տուգանէիր։

Վա՛յ ինձ, վա՛յ ինձ. ընդէ՞ր ես յայնժամ այլ գտայ առ քեզ. ընդէ՞ր ես ոչ եղէ փոխանակ քո. ընդէ՞ր անպիտան ծառայս ոչ կորեայ՝ ընդ պղնուտական մշակիդ. ընդէ՞ր դու նախ ոչ լուար զլուր մահուն իմոյ. ընդէ՞ր եղեւ այս՝ զի ապերախտ և մոլի ծառայս կենդանի ձեռացէ, և զմահ բազմերախտ և աչխատաւոր անձինդ լացցէ։

Յանկարծ երեւեցուցանէր ինձ պատկեր իմն նմանութեան յոնանեան վիպասացոյ, և մի՛ ինչ կասկածիր վասն վտանգաւորութեան անձինս. զի եթէ ի դառնութենէ որոմութեանս ոչ ժեռայ, և ոչ յուրախութենէս մեռանիմ։ Բայց արդ էանց պայման ժամանակի, և անդի ես յոյս ակնկալութեան քոյ ամենայնի։ Չարմացուցի՛ր զիս, եղբա՛յր իմ սիրելի, զարմացուցեր զիս։ Յանհամար վտանգից զերծար, յանդիպանելի փորձանաց ազատեցար, ի ժեժամեծ ահից անվթար պահեցար. ընդ այնչափ ընդ երկայն ճանապարհորդութիւնս զուարթագին չահատակեցար. ի հրամանաց սրբոյ հնազանդութեան վտահացեալ զօրացար։ Եւ զիա՞րդ եղեւ, զի այժմ ի նաւահանգրաստի բեկար և ընկղմեցար. եւ անզգաստելի և անծանօթ հոչակեցար, որով և սիրելեաց քոց անտանելի ազգաց՝ անմոռանալի յիշատակ կարգեցար։ Հայրդ կոծի. Ո՞ւր է որդի իմ. — եղբայրդ ողբայ. Ո՞ւր է հարազատն իմ. — և քոյրդ ազապակէ. Ո՞ւր է եղբայրն իմ։

Իսկ ես զչեմ զառնագին. Զազանն ահիկանաս եկաւ գնա, և յափշտակեաց ի ձեռաց մերոց, և եթող զմեզ ցաւագին և ժողմնքեալ զկնի իւր։ Բարեկամք քոյ ի սուգ ընդունեցան. և սիրելիք քո անզգաստ ազգան։ Մայրդ հոգեւոր՝ կրծող նախանձելի ի սուգ կայ. և մանկունք նորա յապշութիւն ընդունեցան. զի լուան նոքա թէ՝ «ի պտղոյ արդարութեան բազանիւ ծառ կենաց», և աչս տեսին ի ծառոյ հնազանդութեան՝ պլատուղ մահու կորսեան։

Ահիկանա՛ս, ահիկանա՛ս, եթէ ժառանգեալ էր քոյ զօրութիւն զգայութեան՝ զչէի առ քեզ սաստիկ զառնութեան. եթէ պատահեալ էր քոյ բանաւոր զգաստութեան, վանէի ընդ քեզ բանիւք խնամոյ թեան։

Տարե՛ր զմեզ տխրականք, զմա՛ս արարէք ընդ իս և ընդ ահիկանաս, որ եկաւ զգերեզմանին իմ անազօրմարտ, և ծածկեաց զնա ի ծոց իւր անեղերութեարար։ Գաչեցէ՛ք առ իս ի բարբառ զօրութեան ձերոյ. և վանեցէ՛ք ընդ իմ և ընդ նմա. զի այլ եւս ձեաց չիս զօրութիւն բարբառելոյ, և ոչ բնաւին կար ազդելոյ, և ոչ չարչարութիւն ձեռաց գրելոյ։ Չի չուզաց ելանելոյ՝ բարբառ ձայնիս նուազեցաւ. և ի ցաւագին ազդալոյ՝ կար զօրութեանս վերացաւ. և ի սրտիս ամբոխեալ խռովութենէ ընդհատ գրչիս լինաքեցաւ։ Այլ արդ՝ թէ և ի սուին ոչ տկարանայի, զի՞նչ պատուղ չահու ընծայէի, եթէ զգերեզմանիս իմ երկարէի, ընդ սրտամբ սիրելւոյդ, ի վերայ սիրելւոյն մերոյ. մի՛թէ ի գրութիւնս գառնագէտ ազդոց ունի՞մ մխիթարիլ.— Ո՛չ երբէք, ո՛չ երբէք. յիրաւի, ո՛չ երբէք բառնալի այս սուգ ի սրտէս, բայց եթէ ի բառնել թշուառ կենացս յերկրէ »։

Անտարակոյս տխուր է մահն, և յոյժ տխուր այսպիսի մահ սիրելւոյ՝ անկեղծ սիրողին հասեալ. սակայն երջանի՛կ է Հ. Մանուէլ և երանելի, որ այսպիսի ազգակից-ներ ունեցաւ իր մահուան վրայ, զոգես անեմհաղթելու զմահ։ Ներքին ցաւն եթէ կարելի է յօդաւոր բարբառով արտայայտել, կարծեմ թէ Հ. Միքայէլի բարբառէն աւելի զօրեղ և ազդու բարբառ գրոնելն աւելորդ է։ Հ. Արսէն Բագրատունեայն իսկ՝ Տիզեան Յակոբ չէլէպւոյ՝ իբրու կաթոգին բարեկամի՝ մահուան առթիւ յօրինած ող-

բերդն թէեւ չափական արուեստի և լեզուի կոմէն պերազանց, սակայն զգացման սաստկութեամբն և բանաստեղծական մտածութեանց և ճարտասանական ձեւոց փոխաբերութիւններով բազմերանգ և անզուգական կ'երեւի Ղամչեան։ Նմանզի նման ազբերգակ և անեման բանաստեղծն իսկ՝ որ սասը սարիներ շարունակ իր սիրելիներու շիրմացը մէջ թախանձով, այն սխատ մտածութեանցը մէջ կը գտնէր իր սխսխանքն, իր գիշերը քերթուածին Գ. գրքի մէջ՝ վազամեռիկ Նարգիսի մահը կարծէք թէ լուսնի մեղանչ քաղցրութեամբ ուելի սծած է՝ քան թէ ճարտասանութեան բուռն խանդոմն ու կրից սաստկութեամբ. իսկ Ղամչեանի իր հոգեկից եղբօրը վրայ ձօնած ազրանուագին համար կրնայ ըսուիլ, թէ յայտմ իսկ նշանաւոր է։ Մեր վիրաւոր քերթողը կարծէք թէ սլացեր ու թախանցեր է զաւթեան նմանամիշտ սրտի խորը. և անոր ցաւին հետ՝ բանաստեղծական զազանիքն իսկ զոդցես իրեն սեպհսկանած, և անդէն վերայայտնած է զոյն՝ անհուն զգացումներով։

Ովկիանոսի ծայրածիր ալիքներն, որոնք յաիշատակեցին զերելին՝ ոչինչ են անչափապէս սիրոյին, այսինքն է՝ Ղամչեանի ցաւոց և անկոծ վշաց անծայր ալիքներուն քով. և այդ կրկին ալեաց և ալուց միջէն է՝ որ կը հնչեցնէ տարաբաղդ բանաստեղծն՝ իր հեզամտձեռակ ձայնի ազրանուագները։ Ա՛րթան յորդ են և զօրաւոր անոր կարծքէն՝ իրրեւ Պլուտոնի խորերէն ժայթքող հրացայտ հոսանքներն. սրչափ բնական են և՛ վանի և՛ անվերջ գազափարական սանդուտածներն։ Ազբերգուհս չուարած ու ապշած մոքին հետ զրիչն և լեզուն եւս մերթ կը յիմարին, կը նուազին և կ'իննկնան նորահնար սպշութեան և ընդարմացման մէջ. և մերթ ուշաբերուած՝ կ'արտնին Հ. Մանուէլը — իր կենդանի պիմագերովին — որ կը մենամարտի անզութ Պսսիդոնի հետ. մերթ ալ կը սեսնեն անոր զրքերն և գաղկը, որոնք կը յածին և կոծին անսէրտնչ՝ անոր անծայր թագաւորութեանը՝ Ովկիանոսի մէջ։ Ա՛կ մը անհուն ըղձակերտութեամբ կ'երազէ ազբերգուն այն սեղ՝ հանդիպիլ Յունանու բազդին, և մէկ մ'ալ յանկարծ խարուած անսի և կզզիացած բոլորովին իր միայնութեանը մէջ՝ անհրաժեշտ պէտք կը զգայ բացասկան Հ. Սուքիասին կոչումն ընելու, անոր սառներին հետ զրկախառնուելու և անկէց Հ. Մանուէլի կարօտն առնելու։ Սակայն ի զուր. զի այդ անյաւորութեան և ցաւոց ծովն ուելի և ուելի կը զայրանայ, բայց առանց կրանելու զինքը, որուն կը ցանկայ։ Կը զառնայ սպա իր չուրջը պատող Պլուտոնի թագաւորութեան սխրասկան տարերքը կոչելու իրեն ձեռնտու և փառասրան՝ իր սիրելին յաիշատակող ովկիանոսի դէմ։ Սակայն ի զուր և այս. զի սա անբան է, խօսք չի հասկնար. զի ոչ մի բան կրնայ զինքը մխիթարել, վասն զի ինքն իսկ չուզեր մխիթարիլ, չուզեր բնաւ մոռնալ իր սիրելին։

Ակէց ուելի վսեմ և զոզարիկ բան ո՞ր ցաւած սիրան զգացեր է, կամ ո՞ր գրիչը քարտիսի վրայ արձանացուցեր։ Մեծ է և անհամեմատ Պսսիւէ իր պերճախոսական աբուեսին մէջ. սակայն անոր նուագած ձայնին հետ՝ եռանդն եւս կը չիջանի՝ Բուրբոնեան Կոնդէի զազարին վրայ։ Մեծ է և անեման Դանթէ, զի Յովհաթանու և Աբիսողմի մահուանքն իր վրայ կը հրաւիրէ՝ անոնց կեանք սալու յուսով։ Իսկ մեր բանաստեղծն և պերճախօսն իր համեստ և սրտառուչ ազբին մէջ իսկ նուազիլ չգիտեր, զի ցաւն անհամեստ է. չուզեր մեռնիլ, զի իր կորուածը գտնելը՝ թող թէ կեցնելն անկարող է։ Եւ որպէս զի իր սարիսլոյն յիշատակովը գէթ ձենճերի, որպէս զի եթէ կարելի է՝ նոյն իսկ ազգատար կենաց ովկիանոսին հայելւոյն մէջը միշտ անմահացած սեսնէ իրմէն անջատուած Հօր և հարազատի յիշատակն և ազբայ զոյն յաւէտ.աւտիկ Հ. Միքայելի զգացման սաստկութեան հետ՝ նոյնպէս և բանաստեղծութեան գազանիքն և գերազանցութիւնը։ Բանաստեղծութիւն՝ որ ազդեցիկ է ճարտասանութեամբ, և ճարտասանութիւն մի՝ որ նորանոր գեղեցկութիւններ զգեցած է բանաստեղծութեամբ։ Բացազանչութեանց և համանիշ բառերու զործածութիւնն եթէ նուազ ըլլար, նկատեան եւս անչուշտ ուելի բնական և գեղեցիկ պիսի հնչէր լսելեաց։

Յամենայն դէպս՝ Հ. Միքայել իր էութեամբը թէեւ վիպասան և արձակ բանաստեղծ է, իր ոտիները սակայն սաստնաւորի չեշտ մ'ունին իսկապէս։ Նա՝ եթէ գրականեան նեթեան այդ մտանաճիւղով միայն պարսպելու ըլլար, գիւրին է զուշակել թէ ո՛րքան և որպիսի ազգային չքնաղ վիպասանութիւններ վայելելու բազդը պիսի ունենայինք. և անչուշտ պարսպած կ'ըլլար, եթէ Բազրասունիներու ժամանակ, կամ 50–60ական թուականին սապարէզ եղած ըլլար։ Մէկ խօսքով՝ ժամանակն և պարագայք չատ բան զացան իրեն, բայց ինքը չզացաւ երբէք բոլոր իր զբուածոց մէջ բաշխելու մեզ ուղիղ օրէն իր բանաստեղծական հանճարի տուրքը։

* * *

Երբ մեւնոյն լեռան բարձրութենէն և մեւնոյն ժամանակ երկու յորդաչուր գետերու հոսիլը կը տեսնէ մէկը, կը վարանի որոչել՝ թէ անոնցմէ ո՞րն արդեօք աւելի երագ է կամ խոր, և ո՞ւր պիտի երթայ, կամ ինչ արդիւնքներ յառաջ պիտի բերէ։ Այսպէս ալ մենք տեսնելով մի և նոյն ժամանակ ծագող Զամչեանի հակայ հանճարին առընթեր՝ Հ. Ղուկաս Ինճիճեանի նոյնատիպ հանճարը, պահ մը կը չուա֊րինք ընտրելու, թէ անոնցմէ ո՞րն է արդեօք ուժգոյնը, յորդագոյնն և արդիւնաւո֊րագոյնը։ Վասն զի երկուքն ալ զարմանալի նմանութեամբ կամ զուգադիպութեամբ թէ գործնական կենաց և թէ գրական արտադրութիւններով իրարու հետ կը թուին մրցիլ։ Երկուքն ալ բնութեամբ կրակ ու բոց են, գիւտաւոր և ձեռներէց. երկուքն ալ հմուտ, գեղեցկաճաշակ և առեղծագործող։ Սակայն մենք հոս նպատակ չունինք զուգակշռել իրարու հետ երկու մեծ մարդիկը՝ մարդկային գիտելեաց ընդարձակ մա֊կարդակին վրայ — ուր Զամչեան աւելի խոր է, գիտուն և ինքնատիպ — այլ ցուցը֊նել մասնակի, թէ ինչպէս Հ. Միքայել նշանաւոր հանդիսացաւ որպէս վիպագիր բանաստեղծ, այսպէս ալ Ինճիճեան նշանաւոր է իբրեւ տեղագրող կամ նկարագիծ բանաստեղծ։

Ինճիճեանի այդ բանաստեղծութիւնը մենք չպիտի արտնենք Հայոց եռահատոր Հնախօսութեան և Մատենագրութեան արձակ չարադրութեանց մէջ, որոնցմով այնպէս անմահացոյց սա մեր բնաշխարհի օդը, ջուրն և հողը՝ իրենց վերաբերեալ բնական մասնաւորներուն մէջ, ինչպէս Զամչեան ալ անմահացուցեր էր անոր քաղաքական, բա֊րոյական և կրօնական պատմութիւնը։ Այլ պիտի արտնենք անոր առանձնաւոր գլուխ գործոցին մէջ, զոր բանաստեղծը մակագրած է Ամարանոց բիւզանդեան, և ժա֊մանակին բանասէրներն զմայլած անոր գեղեցկութեան և կարեւորութեանը վրայ՝ թարգմանած են չուտով նաեւ իտալերէն և գաղղիարէն լեզուներով։

Պոնտոսի և Մարմարայի մէջ տեղ ճոխապաճոյճ պճնութեամբ բազմած ասիական և եւրոպական բնութեան երկուորեակ այս գեղանիներս, որոնք Վոսփորի կապոյտ երիզովը կապուած են իրարու հետ, և որոնց վրայ չուայլօրէն թափած է արարչա֊պետն իր ամենահնար խնամատութեան և բարութեան գեղն ու վայելչութիւնները, հին ժամանակներէն ի վեր գրաւած են արդէն ազգերու և իշխողներու ուշադրութիւնը։ Սակայն նոքա առհասարակ վայելելու միայն հետամուտ եղած էին այդ գեղեցկութիւն֊ները, ոչ ոք փորձած էր քաա արժանւոյն նկարագրել զանոնք. դի քերթողաց գերա֊գոյնն անգամ Հոմերոս՝ ամպածրար Ողիմպոսէն և «ապիտակ ծովէն» անդին անցած չէր։ Այս՝ Ինճիճեանին պահուած էր, որ ոչ միայն բնութեան, այլ և՛ աշխարհագրա֊կան ու ազգագրական նորութեանց սերտահար մ՚էր։ Եւ կու գար նկարագրել այնպիսի ժամանակի մէջ և բանաստեղծական այնպիսի գիւթիչ փնարով մի և ձեռնհասու֊թեամբ, որուն նմանը դեռ հայ ականջները լսած չէին։ Ինճիճեանի երգերէն արբնեցող և օրօրուող Պոլսեցի զանազան գուէտներ ևս իրենց կենաց գարուն ներգաշնակել ուզելով Վոսփորոնի հրաշագեղ ափանցը վրայ թեւատարող գարնանային Զեփիւռին և կա֊պուտին հետ, շատ արձակ և առանձնաւոր երգեր գրեցին և մրմնջեցին մինչեւ այսօր. բայց անոնցմէ ոչ մէկը չունեցաւ Բիւզանդիոնի նախկին քերթողի բարձր գաղափա֊րականը, ընդարձակ նշանակութիւնն ու գիտական և գեղեցկագիտական օգտակարու֊թիւնն և արժէքը։ Գօմիսանեի և Սալը պագարը, Ֆենդըգլը և Գաղաղաչ, Խայրաւոտին և Պէշիքթաչ, Օրթաքեօյ (Մէյազիւղ), Տէֆթէրտար պուռնի, Գուրուչէշմէ, Աքնաւուռա բլուր, Ազլնար պուռնի, Գայաղար պուռնի և Ռումելի հիսար, Պալթա լիմանի, Լա֊միրկիհնի, Թօգլաղ պուռնի և Իսթինէ, Քեօյ պաշը և Էմինի Քեօյ, Գաղլըճաք, Թաբա֊պիա, Քիրկա պուռնի, Քեֆելի քեօյի, Պիշիրը ադըմ, Սարըեար և Էմինի մահդպէ, Իս֊քիւտար, Լօրիզ լիմանի և Գուզգունճուզ, Իսբաւրօզ և Պէյլերպէյի, Չինկէլ քեօյ, Գուչի պաղչէսի և Նարլը պաղչէ, Չիյրուն պուռնի և Վանի քեօյի, Գանլըճայ, Կեօքսուզու, Աքնաօղու հիսարը և Քեօրֆէզ պաղչէսի, Գանլիճա և Զրպուզղու մեծ և փոքր, Ինձիր քեօյի և Սուղրմանիէ, Պէյգօզ և Էալը քեօյի, Սկիւտի պուռնի և Հիւսիսեար Իսթինէսի, Մաճառ պուռնի և Եուշա ադըի և Եօղուզ գաղեսի, և այլն, ատ Հասարակ կենդանացած են

Ինճիճեանի քնարով, և կանգնած կը խօսին իրենց վարձի արարուածներով, բնախօսական դիմագծերովն և հին ու նոր բնակիչներովը։ Վասիորի վրայ սիրուած ամէն բարձրութիւն և բլուր, ամէն հովիտ և բարտառան ամէն ծոց և ծառաստան, հոգմանավար Թագուհիներու երամներն և երկծովեան ձկներու վտառք անգամ երգուած են և անմահացած, որոնց հրաշագեղ անուններուն հետ գաշնակաւորելով հայրենիքն իր ձայնը՝ կը գոչէ այսպէս.

« Քոյր քաղցրիկ տեսիլ, վա՜յր գըւարթագին,
Վառէ լզդեցուած արբուն հայրենիքդ։
Իսկ քաղցրաշարժեալ ձայն հայրենիդդին
Ըզքոյդ նորոգէ գըտանեզուած կըրկին։
Չի քո բազմելով յայս գահ բընաձին՝
Քոյդ երեւիս իբր յառագաստին.
Բայց քընար երգոց նըկարք իմ գըրչին
Վերստեալ տանին ի ցոյց աշխարհին։
Չայն ցօղ լուսարծուղս ցօղեա՛ յիս, երկին,
Դա՛ւ երկինք չընչեա՛ գայն չունչ, գայն հոգին,
Որ յարարածոց հանէ արարչին՝
Եւ յեզակատաց ի փառս Անեղին »։

Հինգ տուն նախերգանքէ մը վերջ՝ բանաստեղծը կ'անցնի իր քերթուածին, որ հոյակապ դիւցազներգութեան մ'երեւոյթը կ'ընծայէ մեզ, մանաւանդ առաջին երգին մէջ, իր գազափարականի բարձրութեամբն ու վեհութեամբ։ Ի սկզբան ընթերցողը կարծէ՝ թէ Միլտոնի «Դրախտ կորուսեալի» նման սիւնգերական և մարդկութեան նչանաւոր դարագլուխը կազմող վէպի մը հանդէպ կը գտնուի։ Եւ պատճառ կայ այսպէս կարծելու — թէ և վերջինս բազդատութեան չի դար Ազգիոնի մեծ բանաստեղծին հետ որպէս քերթող —, զի մէկէն աւելի գազափարի նմանութիւն ունի Ինճիճեան՝ Միլտոնի Գ երգին հետ։ Հոս հոգեզէն Ազուեսին է, որ մարդակերպ բարձրացած երկրի ամենաբարձր ասրտհարթին վրայ՝ կը դիտէ Եդեմի վայելչութիւնները, զժոխային նախանձով. իսկ հոն, այսինքն է՝ « Բիւզանդեան ամարանոցին » մէջ, Ինճիճեանի երկրաթոյղ հանճարն է, որ բանաստեղծութեան հրեղէն թեւերուն վրայ յեցած՝ կը բարձրանայ Գանտիլլի դրախտանման բարձրութեան վրայ — ուսկէ կը տեսնուին նոյն իսկ Պոնտոս և Մարմարայի — և կը դիտէ ու կը զննէ Վասիորի աննըմանելի գեղեցկութիւնները՝ անյագ տենչանքով։ Դիտմամբ արդեօք եղած է երբէ դիպուածի արդիւնք համարելի այս նմանութիւնս, դժուար է որոշել։ Այսքանս յայտնի է միայն՝ որ Ինճիճեան երկրաթուղի և բանաստեղծի ինչպէս նպատակն՝ այսպէս ալ նկարագրի ընթացքն և ելքը մեծապէս կը տարբերին։ Թողունք որ պահ մը ինքը խօսի։

« Չայն առ իս եհաս, ձայն բընականին,
Ինձ բանականիս՝ որ ահա եմ նորին,
Երթալ զոտորեւք իւր հոտապընդին,
Ընտրել ինձ տեղի ամարանոցին։
Չիմ բանականիս բընութիւն մարմին՝
Այ ի չաչխատիլ՝ գիւտ հընարեցին.
Չիս մեծարելով ի ապյ ինչ բարձին,
Որ ձիտաբերեալ յառաջէր ինքնին։
Այ թէ իմ չարժմամբ նորա չարժէին,
Այլ անչարժ կալով վերստին եւէին.
Բայց գանձն իմ անչարժ այնպէս ձըգէին,
Մինչ գիս կարծէի թըռչուն երկրային։

Նախ առ ի ցամաք զիս չըրջեցուցին
Ընդ քառեակ կազմած նըմին բընաժին.
Ի գաչա, ի հովիտ, յանառատ, ի լերին,
Չի անձաւք և ձորք չեն ինչ յայս կարգին։...
Ապա լատեու ինչ զիս չըրջեցուցին,
Որոյ գիւտ մեծ էր քան զամլ ցամաքին.
Երկայն երիցիւք խոտորոյս նիւթին,
Ո՛չ գիտեմ արդեօ վարէր զիս հնչուին։
Ո՛չ միայն չըզգաս գչարժուձն ինչ նորին,
Այլ և ոչ ըմնոյն ըզչարժուածդ անձին.
Եւ մինչ դու անչարժ կարծես ի նըմին,
Նա ըզքեզ վարէ, հանէ ի տեղին։
Խաղացի նոյա յանդունդ նահանգին՝
Լուծականին այն տարեր անչափին.
Եւի ըզերամբք, ըզձորովք նորին,
Բայց առհասարակ փոփոխականին։
Ունի ըզկերինս իրրեւ ցամաքին,
Գաչա լայն կապուտակ՝ մեծ քան ըզնորին.
Բայց իրրեւ զիջեալ գաչատանայր գիւրին,
Անդ կորուսանէր զիւր հաստուած լերին։
Եւ իրրեւ լինէր լեառն ինչ ահագին,
Անդէն եղծանէր ըզծաւալ գաչին.
Ո՛չ ըզմայլեցաւ սիրտ իմ ի նըմին,
Այլ միայն պակնոյր յահեղ անդրնդին »։

Յամաքի և ծովու ընդարձակ թագաւորութիւններն այսպէս կարելով անցնելով մեր երկրախոյզ բանաստեղծը, չի գտներ իր սրտին և ճաշակին յարմար վայր մը, հաստատելու իր մտհկանացու կենաց ամսրանոցը, ուստի կը գոչէ.

« Ասծին զիս ապա յայս նեղուց ծովին,
Ընդ ել Պոնտոսին և Պրոպոնտոսին.
Նորոգէր յայնժամ զիծք իմ եղերաին
Աստարիզաճեմք տեսողականին։
Չի չըքեզ տեսիլ յիմ ձախակողմին,
Շըքեզ և տեսիլ իմ յաջակողմին.
Եւ ես ինքնաչարժ վարեալ ի նաւին,
Տեսանեմ հընդեակ տեսիլս ի նըմին։
Ըզգաչա, ըզհովիտ, ըզտեսիլ լերին,
Ձանատա ծառախիտ, ըզծով ընդ նոսին.
Ունէք իմ ի ցամաք, ոտք իմ ի ծովին,
Կէս իմ ի ցամաք, կէս իմ ի ծովին։
Իակ թէ վերբերիմ ի գլուխ լերին,
Գիտեմ զամենայն ի միտս կիտին.
Փոխեալ միայն վիճակ կայանին,
Ձոտս իմ ի ցամաք, գաչս իմ ի ծովին։
Այն գեղեցիկ կէտ Գանտիլեան լերին,
Բընակ ի նախնեաց մեծի արքային,
Տեսի ի բարձանց ծայր իւր գերեզմին,
Մարմարականին և Պոնտոս ծովին։
Երկնաճեմելով յայն բարձանց լերին,
Իմ ներքուն աչաց իրրեւ գանձարանին,
Խաղայր յառապարէզ տարակաց կիտին,
Ի մօտակայս անդ ի մի վայրկենին։

Երկայնեալ պիտակ արուին հատակին,
Մըղոնիս չափեալ՝ ութհարիւրականիկին.
Բոլորեալ հեղոյր յիմ անարգանին,
Որ չէ երկայնեալ ի կէս մըղոնին։
Յայնժամ ծանուցեալ վկայմամբ աշխարհին՝
Ձըշդիւս արուչաց գառապետանն իմ,
Թէ ամարանոց ազոյ մարդկային
Չիք քան ըղնեզուց ընտիր աշխարհին »։

Այս նեզուց է ահա, զոր Ինճիճեան իր հինգ անարգանքով նման կը գտնէ նախնեաց պրախային.

« Բայց ի կալ իմում ընդ մէջ նեզուին՝
Ողջոյն երիւն անսիկք հընդկին.
Յիչել ոսն գանձուկ՝ նախնոյն պրոխային.
Որ համոյն անսիկք գուգապարկին։
Երկուց տարեցոյ՝ ծոխս ցամաքին,
Նեզուցք են առհման, մխիանց ոզջունին.
Անդ ցամաք գառին, չորք գուգաւորին,
Յամոք ըզկըռով խառնին, համբուրին »։

Բանաստեղծս ինքնին՝ չնչահոլով Ազին պրոխային հետ տեղւոյս ունեցած նմանութիւնը, միանգամ եւս կը հառաչակ նախընթացարար բառնիս, այսինքն է այս երգիս՝ Մխոանի Գ. Երգի հետ ունեցած առընչութիւնը։ Եւ այս առընչութիւնս դեռ աւելի կ'առնի հարուածին Մակէդոնի, Դեղեցիկ կղզւոյն, Պապիւմանդէպի, Հիւրմիւզի, Ազապի, Աէպտէի, Պէրինի կամ Պէհրինակայ նեզուցներուն և այլ տեղեաց յիշատակութեամբը։ Սակայն այսպիսի հետաւոր նմանողութեանց մէջ իսկ՝ Ինճիճեան ունի բազմաթիւ ինքնագիտ նկարագիրներ։ Մէջ բերած հատուածին վերջին տունը, ուր ջուրն և ցամաք՝ Վոսփորի կապոյտ երիցուին՝ իրր նախատեղծից անմեղ առարհանքով կ'ամուսնանան և կ'ոգեխառնին, ի ծնունդ գարնանային բարուց, կրնանք ըսել թէ այդ գիւտերու ամենէն ինքնատիպն ու գեղեցիկն է, և կ'արժէ ամբողջական քերթուած մը։

Սակայն մեր բանաստեղծը Վոսփորին այդ փնթոյր ամոլքը բազդատելով Քաթթարոյի յաղթանարիին ծոցին հետ՝ բանաստեղծութեան ուրիշ գիւտեր և գեղեցկութիւններ եւս կը պարզէ մեր առջեւ. այսինքն է՝ նախ կը նկարագրէ անոր հիւրընկալու կամ վառուառ աենեակները, ուսկից գարի է վերջինն, ըսելով.

« Արդ՝ գոն Քաթթարօ, ծոց յաղթանարիին,
Մի պարծիր առ իս, մի դրներ վերին.
Մի բարձրամբարձ քան զիմ սրահին,
Թէ հատուարիս ի չոփ հատակին։
Չի եթէ յատնական առանեակ մըղոնին՝
Ընդ երկայն ճախրիս հատ ընդ սիս առին,
Բայց փոպարատար գէմք իրրթնագանին՝
Սիրելոյն իմոյ ոչ համեմատին։
Ո՛չ բանաս ինչ անցք գուսմ անցաւորին,
Յերկոցունց ծայրից ելից և մըտին.
Եւ ոչ սենեակ ինչ ըզկնի արահին,
Մնծարել ըզհիւրդ՝ ի պառուել գտնին։

Այլ խնայ առ քեզ պարծանք բարձրացին,
Որ հըրահանգօք վարի առ հիւրին.
Պատուէ զնիրելիս քան իւրեանց կարգին,
Զայն որ օտարին՝ ի բառնր տեղին։
Նախ բանայ գաւիթ Արամատականին,
Ապա զիւր սրբաց՝ նեղուց Բիւզանդին.
Սենեակ լայնագիր ըզկնի նորին,
Եւ այլ ներքնատուն յանկիւն ահագին։
Միառ վերադայնեալ անուն սենեկին,
Բայց ծով յանկալի՝ քան զըսպիտակին.
Արտաքնոց լիով անտես քան կատին,
Ըզհետաւորաց ձըգէ սէր անձին »։

Ապա այդ արքայաշուք կառապետի մանրանկար սենեակներէն և արտհներէն է՝ որ կը բացուին և կը գոցուին Արամատայի և Պանտատի արծաթեայ դռները. կը ձգուին Եւրոպա և Ասիա առնող և բերող ուղիներ։ Անոր երկրացիկ դռներէն է՝ որ հիւսիսային և հարաւային հովերէ վարեալ նաւերը՝ կը բերեն և կը տանին ծովուց և ցամաքի ամենակերպ արդիւնարերութիւնքը։ Անոր անձնատարած չատրուաններու մէջն է՝ որ կը կայտառն երկու ծովերու բազմատեսակ ձուկերն և զանոնք վաճող պրտհասատ ղլիիններն՝ քան քերթողին.

« Ի սմա պատէ տասմատար ղըլփին,
Ակումբ բոլորեալ զերեսաք ծովին.
Օդով ուռուցեալ ի սուղիլ խորին,
Անթեւ ճախրելով ձըգէ պիս զընին։
Գազան կատարիչ, անխոնջ յիւր մարտին
Վանէ ըզձըկուն մինչեւ ի տուն իմ,
Պայքար հեշտալի՝ քան բանատեղծին՝
Յաւերժահարսին ապրատաճեմին »։

Նշանաւոր է այդ յաւերժահարսին ծագաւորման այլաբանական նկարագիրը, զոր կու տայ Ենճիճեան՝ հովերանման զեղեցիկ կրկնաբանութեամբ.

« Եօթնաձիգ բազկաւոր Աստօղին՝
Եօթնեակ բանաս ծոց յԱւտամէլին.
Իսկ վեցեակ բազկաւոր Աւտամէլին՝
Վեցեակ լընաս ծոց զԱստօղին։
Այսպէս բազկելով զաւէջ հատակին,
Զուլս զԵւրոպա ընդ Ասիային.
Ի մի խառնելով ձեռաց ի ձեռին՝
Եօթնեակի պընդես յանդսակ պրտակին »։

Այսքան զեղեցկութեան և արգաստութեան համար է՝ որ յաբմատապէս կու տայ քերթողն մէկ կողմէն արեւմտեան աշխարհակալին Կոստանդիանոսի.

« Այն ինչ գիտէր նա ըզնեզուց սորին՝
Ըզլայն զանգոյթ ծոց նաւահանգըստին,
Անտի առաս փոխէր ի գլուխս սորին՝
Զայս գեղեցկագոյր քաղաք աշխարհին »։

Եւ միւս կողմէն ալ հիւսիսային Արծիւին, ըսելով.

« Ցորդ ակր հնձեալ ազգ հիւսիսային՝
Չիւրքն մոռացաւ ըղծով Պալղիկին.
Այ ի նաւարկել յայս իւր տարփալին՝
Փոթորկեալ չարժեաց զհուր տարտարոսին »:

Այս հատուածները — զորոնք մէջ բերինք Ա. Երգէն — կը կազմեն կոթիղը քերթողի ընդհանուր աշխարհայեցողութիւններուն՝ նկատմամբ վերը յիշուած տեղեաց, զոր մի առ մի կ'երթէ ապա 127 էջերու մէջ, միշտ մի և նոյն բանաստեղծական խանդովն և հմայիչ ոճիւով։ Ընչուշտ Վատերի բնական հրաշալիքներու արժանաւոր նկարագիրը լսելէն վերջ, ամէն ոք պիտի ցանկար լսել նոյնպէս և անոր բնակչաց նիւթական և մտաւորական կացութեանցի և կամ բարուց նկարագիրը։ Մեր քերթողն այդ ալ ետև կատարեր է — երկրորդ երգ մ'ալ անոր նուիրելով — որ կը սկսի.

« Դուն Ինգանդացիդ՝ ծընունդ երկմաին,
Որ միշտ պարբերիս ընդ արտս կերկին,
Մի բերիր չերջիր յանտանոյ սակին,
Մարմնով՝ ոչ մըտօք՝ յաչխարհ չերջոցին »:

Այդ երգն — իրաւցնէ — այն չէ՝ որուն Ինգանդացին կը սպասէր. զի անոր ինչ ինչ թերութիւնները միայն կը չօշափեն, այսինքն՝ արձանագրութիւնը, անձնասիրութիւնն և փափկասիրութիւնը։ Բայց պիտելու է՝ որ այդ թերութիւններն ընդհանրութեան ընծայուած են, և ոչ թէ Չայլին միայն յատկացուած։ Նախերգանքի մէջ եպերելով անոնց անուանութիւնները, կը բազդատէ նմանող կապկին, որ

« Չամենայն առնու զպատկեր մարդկային,
Ըզբարս, ըզչարժուձս ըզպայականին,
Այլ զոչինչ առնու ըզբանականին.
Կըշռով զատիրեարս համեմատողին։
Յածի, հոլովի զոլորտիւք երկրին,
Այլ անգէտ անհաս որոշմանց նորին »:

Ոտաի կը յորդորէ զանոնք ուսանիլ երկու տեսակին.

« Հին անցից տեղւոյ՝ ըստ հընագիտին,
Բընական փորձոյ՝ ըստ բընագիտին։
Ի լուծիլ երկինից յողբ իւր զարնային՝
Ոսկեցան հիւթով արտօսրտականին.
Հակառակ դիմօք զեզածխատին
Աղարթագեղիւք սեռք բուսականին։
Յայնժամ ել արտաքս չերջնոց ի լերին,
Ուսցուս ընդ ծընունդ մօր հոգագընդին.
Ըզքեզ հրաւիրեն հոյլք օդականին,
Այն բարբառք թռչնոց, ծաղկունք զարնային »:

Վերթող՝ Բիւզանդացւոց անձնասիրութեան և ամբարտաւան բարուց նկարագիրը տալէն յառաջ՝ զինքն ևս այն քարոզին կրաւոր ծնունդ կը յայտարարէ նախ, և թէ ինչպէս օտարութեան ժէջ ուսած էր ապա հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնն և եղբայրասիրութիւնը, և թէ այդ պատ է որ կը խօսի.

« Ես կըրակատպոյն ծընունդ Բիւզանդին
Հայմամեայ նըշդիհ յօտար աշխարհին...
Ի Քոզոլ խնամ դարձն իմ, զհայրենին՝
Վառեցայ ոգով հայրենասիրին.
Ի հեռանալս իմ՝ ուսայ զսէր ազգին,
Զոր ոչ ուսայց ինձ ընծունդ իմ ազգին։
Ազգն իմ ընծայց զիս յօրօտ կիրակրին,
Այն օտար աշխարհ՝ յօրօտ խնամոցին.
Գըրեայց քանզակեայց յօրձան իմ արտին,
Զընկերասիրութիւն զրնել հին անձին »։

Ապա կը յառաջէ — իրրեւ բժիշկ բարուց — ցուցնել իր քաղաքացիներու պըժգալի եսասիրութեան ախտանիշերը, զոր ինքը քաջ գիտած է, և կ'օրակէ այսպէս.

« Մըտի չըրջեցայ մի մի բան կարգին,
Գնընեայ ըզկայս ներքին վիճակին.
Մըտի անարտուժ, առանց ինչ վշտին,
Եւի գառնացեալ, ոչխար վշտապին։
Չի գոչէաս լուայ ինձ կրակըծապին,
Յիւրաքանչիւրոց գհեծումն յաւտպին.
Կարծէի գրօսնալ ի խօսից նոցին,
Լըցայ թախծութեամբ և ես ընդ նոսին։
Ամըն վըշտանայր յոխակից ընկերին,
Այլ ամն ի հարից հակառակորդին.
Ամըն ի չարեաց իւր պարտապանին,
Այլ ամն ի վարձուց իւր առն վարձկանին։
Գործն գանեաւթիւն իւրեանց պարտիզին,
Մաուչին գանգատել առ անձուկ սրտին.
Ազգական բանայ գոխս ապրականին,
Բարեկամ ըզդաւ իւր բարեկամին։
Այրըն գհեղգութիւն գանգործ կոզակցին,
Կինն ըզխնբաւթիւն զրժնեայ լծակցին.
Եղբայր ըզդրկումն եղբօր մըտերմին,
Մեծըն ըզխոքան, փոքրըն ըզմեծին։
Այն նըկարք ծագկանց յառաստոյ յարկին,
Այն շըքեղ տեսիլ ծոլս ցամաքին,
Աչինչ համարին, աչինչ երեւին
Ա՛ս այսչափ հոգոյ՝ որով յար մաշին։
Այն մեռաքաղցրոյծ բարձր բաղմաիանին
Բոլորապատեալք ի նեռա սենեկին՝
Իրրեւ ըզխոչի մատագեալ զրնին,
Ա՛ս մըրըրկելոյ գհոգով աշխարհին։
Աղքատք և փարթամք միապէս տանջին,
Յատիթ տանջանաց միայն տարբերին.
Աղքատըն տանջի առ կարեաց անձին,
Փարթամըն տանջի առ հոգոց վըշտին։

Ըզվիշտ փարթամին քան զվիշտ ազքատին
Դառնագոյն գլուխ կըշռեալ ըմնկրքին.
Չի կարօտութիւն տանջէ ըզմարմին,
Այլ հոգ խորհրդոց զմտքին, ըզհոգին։
Յայցուած ի յուզմունս վարանաց նոցին՝
Չոր յիս պատմէին ըզհոգս ապէտին,
Ո՛չ տեսի ես հոգ՝ առ հոգւոց բարին,
Ո՛չ առ ազքատին, ո՛չ առ փարթամին։
Այսպէս ո՛չ միայն առ իմում ազգին,
Այլ և առ ազգին մեզ ոխերակացին.
Յառապնեալ տեսի ըզդարձեալսն,
Ա՛ռ գանեալ վըշտաց՝ որք չըսպառէին »։

Իրաւ է՝ որ ամէն հասարակութեան մէջ աւելի կամ պակաս կան եաւակաւութեան ապէտներ, բայց մի ապրած է Կ. Պոլսոյ — որ է արդեան բազմացեալ ժողովրդոց — ուր իւրաքանչիւրն ինքզինքը միայն կը մտածէ, ճիշդ և ամենամիջոց պիտի գանէ մեր քերթողի այդ մանրամասները։ Չի հոն կ'եաան ու գեան եաւակաւութեան տեսակ տեսիլքը, նոյն իսկ առհասարակ մէջ։ Ու եթէ այսօր իսկ այնքան զօրացած է եաւակրութիւնը գանազան դասակարգերու մէջ, կարելի է դուշակել, թէ ինչ աստիճանի եղած ըլլալու էր անկէ յառաջ նկատ աստանութիւնը 1790–1794 թուականներուն, երբ գեա կրթութիւնն և ազգասիրութիւնը հակադրուած չէին այդ աստանութիւնը, և ազգայնոց սէրն ու փոխադարձ համակրութիւնը իրարու հետ արձագանգած։ Այս բանիս շատ պատճառներ աձեռնպատրաստ կային արդէն. բայց մենք երախտապարտ ենք Ինճիճեանի, որ բանաստեղծական այնպիսի մի նուրբ նկարագիր ևս Թողուց ազգիս մեզ։ Ակն կրնանք դառնալ, որ նա այնքան խորագրած և ճարտար նկարիչ[1] է մարդկային հոգւոյն և ներքին բարուց, որքան արտաքին բնութեան և գեղեցկին։ Մենք նկատելով գինքն իրրեւ ճշմարիտ բիւզանդացի և մերոց Բիւզանդիանէ, չենք տարակուսեր՝ որ անոր կարեկցութեան ձայնն ևս որ և է բիւզանդացւոյ համար աւելի հաճելի՝ քան թէ մեզ գայրութի նիթ ըլլայ. վերաբոյժը նախ կը ցաւեցնէ և ապա կ'առողջացնէ։

Ինճիճեան միայն նկարագիծ բանաստեղծ չէր, այլ — ինչպէս տեսանք — Թատերական խոզեր[2] ևս գրած էր, թէ ազգերգութեան և թէ կատակերգութեան տեսակէն. որոնց մէջ կը տեսնուի հասարաբարձ իր առեղծագործող միտքը։ Նա արձանագրական ոտանաւորներ ևս յօրինած է խնամասիրից և կարուկ ոճով։ Այս տեսակ քերթուածոց մէջ նշանաւոր է 1824 Թուականին Հ. Միքայէլ Չամչեանի պատմանին վրայ քերթած 14 տող արձանագրանն, որուն մէջ իրր ի հայելւոջ ցոլացուցած է իր գործակցին ոչ միայն պարմանալի կեանքն և կրածները, այլ և առաքելական և գրականական գործերը։ Արժանաւոր նուէր մեզ մարդէն՝ առ մեծանուն հանգուցեալը։ Արձա՞ն յիշատակի՝

---

1. Ի դէպ դիտել կու տանք, որ կիսակատար երկասիրութիւն մ'ալ Թողած է, որուն վերնագիրն է Մարդապատում։ Այս անտիպ գրուածին մէջ իրր բնագատում լաւ կերպով ատորագրած է մարդն՝ ըստ իր բնական կազմութեանն և ըստ բարոյական յօժարութիւններուն։ Տես Հնախ. Հայատառ. հտ. Ա. Յառաջաբան, էջ 7։

2. Որոնց մէջ նշանաւոր է Վարպանայ վրայ յօրինածն, Յագկերտի արքունեքում. յորում կը կարդանք հետեւեալ կրակոտ և խնամասիրից խօսակցութիւնը.

« Սուր քո և կեանք իմ, գունդք քո և զօրք իմ.
Ըսպառնալիք քո, և պարանոց իմ։
Ես ոչ նահանջիմ, և ո՛չ նըւաճիմ,
Առանձեան սըրով ես ո՛չ ընկճիմ...
Սիրտ իմ վառեալ է առ աէրն երկնային,
Ոչ կարէ ոանձանել ահ մարմնաւորին.
Այլ վառն հաւատոյ, վառն խոյ ազգին,

որուն համար կրնանք ըսել, թէ Ինճիճեանի արժէն բուռած բուրեան և գունեան ծաղկեփունջ մ'է, իր հոգեհարազատին տխուր մահը՝ անմահացնելու բուսական։

Ինճիճեան ոչ միայն բանաստեղծ էր՝ բառին բուն նշանակութեամբ, այլ և իր եռանդուն գործունէութեամբ՝ յարմար առիթին՝ բանաստեղծներու եւս նիւթ կու տար, հայ ազգին վրայ գրելու։ Յամին 1817, երբ դեռ կը տեւէր խաւարասէրներու պատերազմն ազգային լուսաւորութեան առիվիրաներուն դէմ, և այդ պատճառով Ս. Ղազարու տպարանը փակուած՝ չէր կրնար տարածել իր կենսատու լոյսը, Ինճիճեան իր նամակներով առիթ առիթ կը յորդորէր իրենները՝ ձեռք բերել Եւրոպիոյ ժեծաննուն մատենագիրներու և պուէտներու աշխատութիւնն և համակրութիւնը, ճանչցնելով անոնց՝ Մխիթարեան ազգօգուտ վաստակներն և հրատարակութիւնները։ Այս առիթը ընելով նա Լօրդ Բայրընի՝ Անգղիացւոց քով վայելած մեծ համբաւն և ազդեցութիւնն, ի 24 Մարտի 1817 առ Ա.բրահայրն ուղղած նամակով մը՝ կու տար մեծ բանաստեղծին մտայ իրրեւ լուսկի՝ հետեւեալ այլաբանական նիւթը, զոր հետաքրքրութեան համար կ'արտագրենք այս տեղ։

« Ես ահա յինէն կոզմանէ առաջարկեցից նիւթ՝ ի զարթուցանել զերեւակայութիւն նորա։ Միներվաի կամեցաւ հանապարհորդել անցանել յԵւրոպիոյ յԱֆրս, նախ զոտս իւր ամբարձեալ կոխել ի Հայաստան, ընտրեաց գհանապարհն ծովու՝ քան զցամաքի. բայց իմացեալ՝ թէ Նէփտունեան հակառակ է իւրոյ հանապարհորդութեան, քանզի ազիւութեամբ Աֆոյ՝ առաւել ծագկէր իւր ծովն՝ նաւարկութեամբ, եկն եմուտ յԱդրիական խորչ ծովու՝ ի կղզեակ ինչ փոքրիկ՝ (այսինքն է՝ Ս. Ղազար) ծպտեալ կերպարանօք, ի կերպարանս արեւելեան մօրուսաւոր ծերունեաց, որպէս զայլ ոմն Մենտոր՝ յաւուրս Տելեմաքայ։ Նէփտունեան իմացեալ՝ ել ընդդէմ՝ ի հակառամարտել իւրով եռաժանեօք, որ են Տգիտութիւն, Նախապաշարումն և Ֆանատիզմն (Մոլեռանդութիւն)։ Միներվան բազում առաջնեալ ի ձեռն այսոցիկ մօրուսաւորաց, զամս հարիւր անընդհատ պատերազմելով, յոյժ սակաւ յառաջ խաղաց. զի այն եռաժանին նորա բազում վէրս և պարտաւէր զնա։ Հուսկ յետոյ յայսոսիկ վերջին աւուրս անկարացեալ՝ զաչս իւր դարձոյց յԱնգղիա. ծանեաւ՝ զի սիրով և բարեկամ Նէփտունոսի է կղզին անգղիական. խնդրեաց օգնութիւն յԱնգղիոյ։ Անգղիա ունի հեծանել տալ զՄիներվան ի վերայ առիւծան և մխիթարեալն իւրոյ, և նոցա գօրութեամբն ունի համարձակ խաղալ Միներվան ի Հայաստան, և այլն։ Հրաւիրելով հուսկ յետոյ զԱկադեմիայս Անգղիոյ՝ ծանօթանալ ընդ այսր կղզեկի. և զիւր Օքսֆըրտեանն՝ ընդ հելլենականին ուսանել և՛ զհայկականն, ուր գոցէ զիւր խնդրելին », և այլն։

Ինճիճեանի քաղաքական հայեացքն, իրրեւ առանձին բանաստեղծի և գործիչի, կարող էր չհամաձայնիլ իր Ալեսի համեստ ուղղութեանը. սակայն բանաստեղծական այդ գաղափարը — հատանօրէն ոչ միայն Բայրընի ուշադրութեանը պիտի արժանանար, այլ նոյն իսկ միացած Ազիոնի բանաստեղծի բնդհանուր մտաց հետ՝ աւելագեղեցիկ քերթուած մ'եւս պիտի ծնանէր, եթէ մերոնք պատշաճ դատած ըլլային հաղորդել իրեն. սակայն կ'երեւի թէ ինչ ինչ փոխուկ նկատումներով չհաղորդուեցաւ այն։ Եւ սոր

Վասն հայրենեացս և վասն իմ ուխտին՝
Տալ գիս և զանձն իմ ոչ հրաժարիմ.
Եւ ոչ ի մահուդ խուսափեալ փախչիմ։
Դու հա'ր խորտակեա զիմ նըզկուն մարմին,
Տանջեա չարչարեա զայս եղծանելին.
Զայս բաժակ ըմպել ոչ չար համարիմ.
Օ՜ն, ես կամակար ի կըրել մատչիմ։
Գիտեմ կտաւրել, վանել զիշնամին,
Գիտեմ սակաւուք յաղթել հազարին.
Այլ գիտեմ յաղթիլ և՛ վասն իմ փըրկչին,
Գիտեմ մահանալ վասըն անմահին։...
Փրխտոնէից աւըրն է սիրելին,
Գնելանք ցանկալին, վէրք փափաքելին »։

1. Մխիթարեանց յետագէմ ասոնները կ'ակնարկէ։

ապացոյցն այն է՝ որ — մեր գիտցածին համեմատ — Բայրն այսպիսի մի նիւթի վրայ քերթուած չորինած չէ։ Իսկ անպիտան պիտանականներուն և Օքսֆըրտեանց Ս. Պատրու հետ ունեցած ուսումնական յարաբերութիւններն ու հայկական լեզուին և մատենագրութեան ուսումնասիրութեամբ պարապիլն — այն օրէն ի վեր — կարելի է արդիւնք համարիլ Ինճիճեանի յիշեալ առաջարկութեան վերջին մասին, զոր թերեւս Հ. Յարութիւն Ալիշեան բերանացի հաղորդել պատշաճ և պատեհ գտած էր։ Այս բանս կը հաստատուի նոյն իսկ Բայրընի, յ2 Յունուար 1817, առ Մ. Մըրէյ գրած և ուրիշ նամակներով[1], և անկէց եաքը հայերէնը ուսանելու համար Վենետիկ յաճախող Անպիտոյիներէն, զորոնք այլուր առիթ պիտ՝ ունենանք յիշելու։

Ինճիճեանի բանաստեղծութեան գով՝ ասիկա որ լեզուն խեղճ է և անշուք։ Բայց — ինչպէս կանխաւ տեսանք — իր գլխաւոր ակզբունքն ու նպատակն է՝ քիչ բառերով շատ բան հաղորդել իր ընթերցողներուն։ Այս պատճառաւ է թերեւս, որ քերականութեան հակառակ երբեմն բառեր և բայեր գանց կ'ըլլուին, և երբեմն ալ ի, յ, գ նախդիրներն՝ աշխարհաբարի ձեով։ Տաղաչափութեան մէջ եւս կը տեսնուին աչքի զարնող թերութիւններ. այսինքն է՝ յերեւան կու գան մերթ վանկերու չափազանց ահեցումներ, և մերթ ալ կանոնի հակառակ — այն է՝ ձայնաւորով յաջորդող անգամին առջեւ — վերջաւանկի անզամհատութիւն կամ վանկակազմութիւն, որով տողերը մերթ կը սայթաքին, և մերթ ալ կը կաւշին ու կը կռանին՝ թէ իրարու և թէ մեր ընելոց հետ։ Այս կրկին կէտերս — այսինքն ընտիր հայկաբանութեան և տաղաչափութեան թերութիւնքն — ի նկատի առած՝ կրնանք ըսել, որ Ինճիճեան՝ ըստ բաւականի հանճարեղ բանաստեղծ է, բայց ոչ լաւ քերթող։ Բանաստեղծութեան և արուեստագիտութեան մէջ գերազոյն է։ Կրկնաբանութիւնք խիստ մեծ ճարտարութեամբ և վայելչութեամբ կ'ըլլան, որոնք առատութենէն գոհ գեղեցկութիւն մ'եւս կու տան արուեստանութեան, և իրաց պատկերոզութիւնն ալ ուժգու և կենդանի կը գտնեն։ Բանաստեղծութեան յատուկ՝ ածանցուտ և ծաղկաւէտ բառերը — կրնայ ըսուիլ — թէ նախ իրմով կը սկսին։

Այս իսկ պէտք է ըսել, թէ Ինճիճեանով մխիթարեան բանաստեղծութեան գնացքը կը սկսէր այնպիսի եղանակ մը հնչեցնել, որ անոր կոչէն բազմահոյլք մեւսայից վազ ընդ վոյթ պիտի յառնէին։ Մէկ խօսքով՝ Ինճիճեան — իր «Բիւզանդեան ամպրոպին» մէջ — թէպէտ և հանրագիտային է ըստ նիւթին, բայց միշտ ազգային է ըստ ներշնչութեան և նպատակին։

* * *

Մխիթարեան բանաստեղծութեան Ա. շրջանի հորիզոնին վրայ բարձրէն սուսանող հանճարներէն մին է Հ. Գաբր. Ալեմիքեան, զոր նկատեցինք նախընթացաբար — իրրեւ թեւամիսի արծիւ մը ընդարձակ չարտղրութեան գաշտին վրայ կանգնած — իր վեհ և վսեմ դիրքին մէջ։ Բայց ինչպէս ասրբեր է օդոց և այերց թագաւորին դիրքը գաշտին վրայ, գան երբ իր թագաւորութեան վերնագաւառներուն մէջ թեւատարած կը սաւառնի, աչքերը յառելով դէպ ի գինքը լուսաւորող և ջեռուցանող արփին, այսպէս եւս Ալեմիքեան՝ թէպէտեւ միշտ իմացականութեան արծիւ մ'է, սակայն աւելի սիրալի են անոր թռչանքն, երբ բանաստեղծութեան խանդովը պատսրուն՝ անոր ջինջ հորիզոններուն վրայ կը սաւառնի, և խորաթափանց մտաց աչքերովը կը դիտէ մերթ մտկանացու բնութեան հոլիտները, և մերթ ալ անմահաշունակ գաղափարաց վերնագաւառները։ Ահա այս սահմանին մէջ միայն պիտի գնենք այժմ Ալեմիքեանը, այսինքն է՝ որպէս բանաստեղծ։

---

1. Տես Հ. Գ. Զ. Հայ. Որսումն յարեւմտեան, Վենետիկ 1895, եր. 342–43, և Պայրընի Հատընտիր քերթուածները (Armenian exercices and poetry) Վենետիկ, 1852։

Աւ զանգատ Պաւղոսեայ և դառնասուն Այդոնի քերթուածը — զոր ոտա-դրոյն անյարմար կերպով բարեյաղթաց կարգը դասած է, մինչդեռ երգիծախառնաց կամ կենցաղախառնաց մէջ դասելի էր. — յետ բազմից կարդալու և ուշի ուշով քննելու, կրնանք ըսել՝ թէ անոր քերթուածոց (ի հարկէ բացառութեամբ Հայկ պիւցաղներգու-թիւնը) ամենէն հոյակապն ու հանճարեղն է, թէ բանաստեղծական խանդի և թէ երգիծարուեստական ճարտար դիտաւորն համար։ Տպագրութեան[1] ի տարբ. գրուած ծանօթութեանց համառօտ՝ 1824 Յունուարին կրկին աւելուած չափով գրուած նա-մակներ ընդունելով ապացոյն գրաբեր պատեհութեանէ՝ չարժած է Բազրատունին յօրինել այդ քերթուածն, իբրեւ պատասխանի Մխիթարեան քերթողաց մէջ Այդոնի համբաւ վայելող Հ. Ման. Ջախջախեանին։

Տարակոյս չկայ, որ Բազրատունին ինչպէս իր ուրիշ քերթուածներուն՝ այսպէս և սոր մէջ սահմնորդ ունեցած է իրեն դասական մեծ քերթողներ, զոր ի վեր անդր յիշեցինք։ Թէպէտ և տասնց տարակուսի, բայց գժուար է ըսել՝ թէ մինչեւ ո՛ր աս-տիճան ներշնչած են Պրատոս, Վէրգիլ և Տիրուպոս մեր քերթողին։ Սակայն սոր այս քերթուածն արժանաւոր պատասխանի մ՚է և՛ իր գեղեցկագէտ դասաւորին և անձնանշան դասախեոսներուն։ Քերթողաբանական արուեստով զարդարած երգիծա-բանական բարերու տարափը, զոր կը տեղայ բանաստեղծութեան գանազան պարու-նակներէն, ձերբազն Աստուծոյ հոմաւարան անուշիկ կենցաղի նկարագիրն, արեւելքին յանկարծ փոթորկանման չառաչով երկաթի կրկին կատքերու և ուխտանաւ նետաձերուն՝ անոր հիւղին վրայ իջնելն, առյդ պարծանիներու վերերեւումը և հինաւուրց Պինդոսի և Պառնասոսի բարձունքը բնակող Այդոնի և իւնսթիւս քոյր Մուսաներու լուսնկն կամաւոր տեսարանը մէկ կողմէն, իսկ միւս կողմէն ալ նոր Պինդոսի, այն է՝ Վասիլի քաղաքամօր վերկը գգուելով, պատասխան և կկզային խառնիճաղանճին, կազ գրասեին և իր Պեգասոսի մասին գծած գեղեցիկ նկարագիրներն — այլոք համղերձ — ամե-նէին ցոյց կու տան մեզ Բազրատունեաց յատկութիւնն ու առաւելութիւնները եր-գիծական բանաստեղծութեան մէջ։

Այս տեղ ցոյց առած բանաստեղծութեան ձախողանոյն պճնութեամբն ու հոծ գաղափարներու տարափովն իսկ՝ Բազրատունին կը թուի ոչ միայն հաւատարիմ Ջախ-ջախեանին, այլ գուցէ և գեր ի վերոյ անցնիլ։ Սակայն լաւ իմ վերջին որքան հա-մառօտ է, հաւնչափ և իրեն համաձայն, այնչափ ալ առաջինը ճապաղ է և անհամա-ձայն՝ թէ ինքերեն և թէ գրած նպատակին։ Մէկ խօսքով՝ եթէ չկանխէր Ջախջա-խեանի նախկին առեղծագործութիւնը՝ թերեւս չունենայինք անոր վրայ յարատած ու զարդարուած Բազրատունեաց այդ քերթողական գեղեցիկ տիեզերքը։

Սակայն պէտք է ունկընդիր և այս, այսինքն է՝ այդ տիեզերքի մէջ շարժող Բա-զրատունեաց բանաստեղծական ակնարկութիւններն յաճախ այնքան անորոշ են, մթին, և այնպիսի իրաց և անուանց հետ կապուած, որոնք ոչ միայն ընթերցողի մտքէն, այլ նոյն իսկ քերթողի բուն նիւթէն զուրս կը չրջին, ինչպէս սաւոնները՝ մթնոլորտէն։ Մինչդեռ Ջախջախեանի Պաւղոսեայ քերթուածի մտածութեան հորիզոնն այնքան բաւական է՝ ընդհակառակն և թափանցիկ, ուր ամէն մի խնամս ստղի պէս պայծառ կը չողչողէ մտքիդ, և ամէն ընթերցող մի անգամ կարդալէն վերջ գայն՝ կարէ բմբռնել ամէն բան, ինչպէս աչքերն՝ երկնից ստեղգաստղծ պարունակը։ Յա-ժմնայն դէպ՝ ապացոյն ժամանակակից պրատիրոց և Մխիթարեան կաճառի բանաստեղ-ծութեան պատմական զարգացման և մրցման վերաբերութեամբ յոյժ թանկագին յու-շ-

---

1. Տես Տաղք. Մխիթ. Հարց, 1852, էջ 96–97։

արձան մ'եւս համարելի է Բագրատունոց այդ քերթուած, բայց ի բանաստեղծական արժէքէն։

Առանց պիտոյքեան կարելի չէ՝ որ անցնի Երասխայ ափերակուռքը բնակող Առան ազնիւ հովուի և անոր գեղչկական միջավայրի գեղեցիկ նկարագրութիւնը, զոր մեր քերթողն ուզած է իրեն սեփականել։ Հովիւ բառն՝ ևթէ փոխառեալ պրպտելի եւս առնուած համարինք, սակայն և այպէս անոր վիճակն և ընծայուած կեանցը զժուարաւ կրնան միտքերնիս վերականգնել ժամանակներու վրայ միայնացած կրօնաւորին և գառական քերթողին հետ։ Հետեւաբար՝ Բագրատունին իր բնական կացութիւնը չէ՝ զոր ընծայած է մեզ, այլ գոյափարականը։ Եւ այս այպէս ըլլած է՝ գործեալ գառականութեան ձեռոց ապրելագրութեան ներքեւ, խաւեալով միշտ իրապաշտ բանաստեղծութեան ճշգաձեր պահանջէն։ Տարակոյս չկայ թէ անով աւելի հին, աւելի վաճառ և գեղեցիկ ըլլած է այս քերթուածը, սակայն ոչ իրական և բնական, ինչպէս Վէրգիլ։

Բագրատունոց երգիծաբանական գործերէն բանաստեղծութեանը յայտնի և յաչող փորձեր են նաեւ Ի ձերիսաչի՝ բանալանդ և բանակարգ, Վճիռք ի հանձն, և Ի յօրինուռած ափսէի և սիամանակաց սրձոյ՝ երեք քերթուածներն։ Առանց մէջ այնչափ աւելի կ'արտափայլի Բագրատունոց գործերէն բնաւորութիւնն՝ որչափ որ անկախ են և անբռնադատ անոր գրչի խոյանքէն։ Երեքն ալ իրենց տեսակին մէջ կատարեալ են, մանաւանդ եթէ թարգմանուին և ընթերցուին իրենց յատակից անիկպտութեամբ, որոնք գժբաղդաբար երկտողով միայն ծանօթագրուած են։

Ոչ ոք, կարծեմ, Բագրատունոյ պէս գոպրելի ածականներով օրակած և նկարագրած է աւետարանին առաքեալ Յովհաննէսը, և մարդկային գործին համայն անէծքով գանի գժոխքը իջեցուցած։ Աստ մէջ թերեւս կարենայ մակարերել մէկը նմանութեան հետքեր, սակայն առաջինն և վերջինը մեր քերթողի հարազատ ծնունդ են անշուշտ։

Կենցաղականներուն մէջ — որոնք յատուկ կարեւորութիւն ունին նաեւ ժամանակակից պատմութեան վերաբերեալ նշանաւոր անձնաւորութեանց և գիտուց կենագրական տեղեկութիւններով — մանաւանդ ուշադրութեան արժանի են Տիգնան փառապանծ ընտանիքի հարաներգքը, ծննդեան երգերն ու մահերգքը։ Ի հարսանիս Տեառն Յակոբայ Տիգնաւոյ խորագրուած երգը — որուն մէջ կու տայ մեզի անգուգական Իշխանապետիս և անոր ամուսին Լուսիկա սիրելի հոգեկան և մարմնաւոր ձիրց պատկերն — յոյժ ուժգնալոյս է և վառ։ Գուք կարծէք, որ նկատելի փառք ու պարծանք Պիներան է, որ իր ոսկի փնարովը կը բանայ պատկարեր Հիմներէն գուարթագին հանդէսը։ Մէկ կողմէն կը հնչեցնէն հարսնաւոր երաժիշտներն իրենց արուեստաւոր կիներուցները, որով կը պարեն և կը զուին պարանոցիկ գուսաններըը, ծափահարութեամբ օդն՝ և ամէն՝ երկիրը թնդացնելով. իսկ միւս կողմէն ալ հարսնեւոր մանուկները՝ անթիւ ջահերով, և շուշանափայլ օրիորդներն՝ ի գլուխ ի գարդ վառուած՝ կը ապահան անձկագին փեսային և հարսի գալստեանը։ Ո՛երեւին անոնք շրջաւոտ երկնագոյն բեհեզի և ծիրանիներու ծրարի մէջէն, և կը յառաջեն՝ որպէս թէ երկրէս երկինքը աստղաներով արեգական և լուսնի պէս։ Գասկաւորեալ են բոլորիւք եղեմեան սիրուհւոյ վարդերով. ականջներն ծամերը կը փայլին ու կը փարիին ծափոնցիկ քօղի տակէն, որպէս թէ կապուտակ եթերի մէջէն։ Անուշութեան բուրումը կ'ոգեկ հարսնեւորներու միջավայրը, և գիշերային մթութիւնը՝ աստղնեան կը փոխուի, պայծառ ջահերու լուսով։ Լուսածղի, զարմանագան ծաղիկներ կ'երեւին անոնք հանդիսականաց աչքին, և կը ծածանին սիրոյ թեւերու և բերաւոր գլուխներէ ձեւացած մարդկային գաշտին վրայ, որոնց այդ ուրախաւէտ անութիւնէն կը ատրոգրուին ապէս մրրկայոյզ հիւսիսը ու հարաւունքը։ Կը գառնայ գարուն՝ Նաւասարդի երջանիկ փթթումով. ամէն կողմէն և ամէն արատորի արուեստ կը թօթափին համապարտ ծաղիկներ և վարդեր, անթառամ թագեր յօրինելու Լուսիկա սիրելոյ և անոր փեսայի գլխոց։ Այս և ասրիչ հարսր և մի բանաստեղծական խանդերով կը մոգնէ մեր քերթողը Հայոց գեղեցիկ Առաքիկը՝ նոր Վահագնի սիրոյ անեւակը, որուն — անպատում հրճուանքով — կը բանան Ուղիղք (Տիգնանք) արդարութեան և երջանիկ վայելքի դռները։ Այս ամենայն աքանչելի է, և Կատուլլոսէն՝ Յուլեայ և Մալեոսի վրայ յօրինուած հարսներգին հետ կրնայ մրցիլ, եթէ գանիկա իր առջեւ ունեցած չէ։

Ասրիչ բանաստեղծ մի անշուշտ այդչափով պիտի աւարտէր իր հարսներգը, կամ առաւելն բարեմաղթութեանց հակիրճ փաւնջ մ'ալ իր կողմէն նուիրելով նորապսակ

ակ փեսային և հարսին. բայց Բագրատունին ընդհակառակն կը չարունակէ քերթել 118 տողեր եւս, հնչեցնելով իր փեսայի թևերը դէպ ի ներկայն ու ապագայն Տիգրան գալմին և սերունդին՝ ինչպէս և տղին բարօրութիւնը, կրկնելով յաճախ մի և նոյն տուներն ու տողերը։ Եթէ երգըցուելու համար յօրինուած ըլլար այդ երգը, ներելի պիտի ըլլային կրկնութիւնը. իսկ տարապայման երկայնութիւնը ոչ մի պարագայի մէջ կրնայ արդարացուիլ, մանաւանդ երբ նիւթն դուրս և նեղին ու անոր պահանջածին դէմ է։ Գտնենք՝ մեր քերթողն այդ ժամանակ — այն է 1835 թուականին — Թևրիզ Տիգրանեց հետ ուղղակի վերաբերութիւն ունէր, երբեւ զրանելէց և քերթող, ասկայն տակաւ հանդիպած անոնց չարչարանքներու զեղումներն ու զեղծումը՝ ունէի քերթողական արուեստի և միանգամայն դէպ ի այդ բարերար ընտանիքն ունեցած գրաւանքի արդիւնք համարուելու են, քան բանաստեղծութեան պահանջի կամ տողը հանուչման։ Այս բանիս ապացոյց են քերթողի վերջի տողերն ուղղակի առ հարսն, որով կ'ուզէ արդարացնել ինքզինքը, իբր թէ դեռ բաւական պատճառներ չունի՝ քերթուածի առաջին մասին կամ նկարագրականին մէջ, բսելով.

« Երեսաներս Նզուռնելի զինչ և քեզ, ա հարսն բնարական,
Քեզ մեզ՝ թէ չնարհ չեզիս մըրմունջս երգս ի ծաւին բոմ ախան.
Օն և օն անմահանոյշ Վառոյս թէ զգեզ զս տեսանէր,
Չի տացես արիաւոր, զայդ յինէն հաներ »։

Այս տողերէս յայտնի կը տեսնուի, որ արեւելքի այն տաճնուան սովորութեան համաձայն Բագրատունին իր հարսներդը յօրինած պահած խակ, այսինքն է՝ Լուսիկա սիրեալ Տիգրանեց տուներ տար կոխելէն յառաջ՝ տեսած չէր զինքը։ Հետեւաբար՝ քերթողին անար ձօնած « չուչաներիներան, սիրտ վարդափթիթ, ակնվարս, ծաւիլ, նազելի » և այլ դրուատները գաղափարական ըլլալու են՝ քան թէ իրական։ Յամենայն դէպս՝ Բագրատունեաց գաւառական քերթողութեան փայլն այնքան չտայլ է և չտացուցիչ՝ որ կը պարտաւորէ նոյն խակ այսպիսի թերութիւններդը, ինչպէս արեւ խաւարչրջանին վէրքը. մանաւանդ թէ անոր ուերդին խակ անցագործէն կարգացած ժամանակ՝ կարձէք թէ դեռ առաւելագունին կարօտ կը գտնէք։

Խակ յամին 1839 Ա. ազատ ասպետն Մխիթար Տիգ ձօնած երգը, և Ա. հարսնիս (Մարիամիա Եղոլբեանց) յորդորակն, այսպէս նաեւ յամին 1838 Թագուհի օրիորդի ծննդեան և յամին 1842 Տիրուհի գառնէ ծննդեան վրայ յօրինած քերթուածներն՝ եթէ ոչ տաղաչափական ճեմավայելուչ յօրինուածութեամբ, այլ անառարկելի գաղափիկ և քնքոյշ բանաստեղծութեամբ ուշագրաւ են. մանաւանդ թէ կարող եմ ըսել՝ որ իրենց ամփոփութեան և բնականութեանը մէջ ամենէն գեղեցիկներն են։ Կուսակրօն քերթողի սիրտն ու միտքը, լեզուն ու գրիչն տառնցմէ ասկի բանաստեղծական և նազելի ծաղիկներ չէին կրնար փթթեցնել մանկահասակ կենաց և սխալած բնութեան չուրջը։ Նա զգացած է և արտայայտած բնութեան սուրբ սիրոյն հետ՝ նաեւ զանի յաւերժացնող և բաղդրացնող սրտի խորհրդանշանները։ Հատուածիկ նմոյշներ այդ երգերէն։

« Ի չուչանին բաբասան
Ընդ վարդենւոյն հովանի՝
Փախուկ քան զվարդ և չուչան
Նրնջէր Մարիամ գեղանի.
Հերքն ասկեթել ծածանէր
Ի ձիւնափայլ ծոց ծղեաց,
Գոհար այտից չոզ կաթէր,
Բերանքն չոզ յուսարփեաց։
Մառաւօտեալ Աէր՝ հին մանուկ,
Յունկըն մրնչէ. Զարթիր օն,
Կոյս գեղեցիկ վիայնուկ,
Տանիմ ըզքեզ յիմն ի ոճն։

Խօսէ՛ ատ նա կոյն անմեղ.
Բայց ես այլ ապ ատմ յառնել,
Ասէ, ձըգէ Աէր գազեղն,
Այլ արդել դուք անընտել:
Երկնից Աստղիկ՝ կուսին մայր,
Առեալ գՀիմէն բերէք մօտ,
Արի գբատրիկ, ատ ձայն ատյր,
Տիւգն է Միհրան քեզ կարօտ:...
Ըմոյծ Հիմէն յառաջատա.
Ըզկապարճեալ Աէրն բմբռատա
Եզ ի նեատից մերկ, բզգատա
Բատրուկ ատ ատան անընդատա »:...

Ինչպէս ատյ՝ այսպէս և երկրորդ երգն՝ Երկերդոցը կը յիշեցնեն մեզ, վատ գի մեր քերթողն ալ արբատանին պէս սիրոյ գարուն հարսանիքը՝ բնութեան գարնան համ վերկենդանութեան հետ կապած է, ուզելով կարծես հերքել գերազ նիւթական բնութեան վայելչութիւններն ու վայելքը բանականին ծոցը, այսպէս.

« Ի աւգ մութ գիշերի
Ջերթ Աստղիկ արուսեակ,
Նըշուլիցն արփենի
Աչեռս իւր հիւսեակ.
Հարանուհիդ կոյս մանուկ,
Տան Տիւգեան լոյս պայծառ
Ծագեցեր գեզ փոխուկ
Նոր ցոլից յոյս ի վառ.
Ներկրէ գէմս հայրենիք
Ի ձեր աւրը հարսանիս,
Իւր գարուն ջեր լինիք
Վառէ գիւր վարդենիս...
Աղաւնեակք ի վա վա,
Գարամեալ համբուրիկ
Տան տատրակք սիրարկու,
Թըռչնիկք բիւր գայլայլիկ:
Ծաղկեալ արթ գիւր ճաշակ,
Նըռնենի գիւրըն միրգ
Ընծայեն անուշակ
Ի մէն մի ամին գերկ:
Քո նման մանըր Վանուա [1],
Բերել նոր նոր Միհրան
Ի ծոյիդ կաթնարբուա
Մեզ ամէն տարեկան:
Արուսեակն յիւր բոլոր
Մինչ պարէ լուսնթեա,
Փարեցիս մէշտ յոլոր
Ի Միհրան քոյդ արեւ »:

Երրորդ երգէն — ատ Թագուհի օրիորդ — որ երգուած է անոր հոգեւոր ծնունդեան՝ մկրտութեան օրը, հանճարեղ գիւտով մխացուցած նիւթապէս ծննդեան հետ՝ կ'ոգէ սրտագին.

---

1. Վարիանքա օրիորդի վաղաքչական յորջորջուն էր ատյ՝ մանկութեան օրերում:

« Հոգի ոգեաբ մեծ և սիրուն,
Գեղարուեստիկ ի մարմնի
Գեղեցիկ մօր, հօր վեհապուն
Տեղ յօրինեալ կենդանի.
Թեև ի թևիս բեզ սիրեմեն
Իմեալ բուռդ նուբր անեա՝
Ի մրմնջից մոդ երկեմեն
Բարի եկիր ի մեր տես...
Օն գա խրնդա, մոդը երանիկ,
Փառիկիկ արոչդ ի ծոցիդ.
Անոդչ կենաց իր գեղեցիկ
Ծորան բանչաց քամ հոսիդ.
Քնչեն շրթունք իր երկնէրթիկք,
Ծաթիկք բզեզ մինչ գրգուեն,
Յուսիերդ ոգի մեծ ուեսիք
Երկունք և միշտ անց ի քէն...
Վայելչագոյն քո մորդ մանկիկ
Ետչանոտիայլ ի հոսի
Ի բանչըս քո ի շող հեդիկ՝
Յոդեալ աչացդ ան խրնդի,
Պես մարգարիտ արտակիսեալ
Ի խոնաւուտ մրգանաց,
Ընդ յակընթիք յոսկի յեռեալ
Չարդ ցանկալի գեղեցկաց.
Գեղեցկագոյն այդ արուեսիկ
Յոսկեծոլի գերկդ այդոյ,
Որ ի գիչեր մրթնատեսիկ
Աչեսդ մեդ գեր արեւոյ »:...

Գնեիք նմոյդ մ'ալ չորրորդ երգէն, ձօնուած ան օրիորդ Տիրուհի.

« Յարձաթատիպ փրփրոց պես ոչ Ասպիկ
Ոսկեծոլի գեղն ել ի լոյս գեղեցիկ,
Որպիսի դու, գլուարիկ կայտառ, գիրդ և հեզ,
Ծրնաբ յանոյշ մօրէդ ժիզ.
Եւ ոչ նա ինքըն գեղոյ մոդը գերուհին
Աչնպէս սիրուն էր, Որ մանկիկն ի գրկին,
Որպէս քո մոդը աչեզ քրնքուշ նազելի՝
Բարձեալ բզեզ ի ծոցի:...
Ո՞ր այն նգեամ մտոդդ գոյդ վարդ և շուշան,
Չոյդ մանուչակ և գոյդ յոսմիկ հոսուտն,
Յորոց մարմին փունջ է կապեալ քեզ չքնաղ
Ծրնօտք, բազուկք, բանչք մտոդ:
Ո՞ր երկիր, ո՞ր ծորան հիւթէ գշտիերոյն
Յորմէ աչկունքդ յեռան կապոյտ միջօրեայն.
Ո՞ր ատող, ո՞ր ծով, ո՞ր գարնանդ ծիծաղի
Չերդ ճակատ բիբդ բնդ գիմի:
Թէ արդարեւ՝ գեղիւս է այն մեղմ ի ծով,
Սէր բնդ ծագիուն գարնանդին ի վերդով,
Թեթեւ ամպիկ Յուսկեալ յերկնից ի նըշդյր
Յոյս նոս ածել գարնից բոլոր:
Երբ ծիրանի բանաս շրթունս ի ժպիտ,
Գեղափերիդ վարդին բոլոր կայ յերկիտ,
Մինչ մրմրնջես Քրիստոսակ բարբառ և գոդորիկ՝
Լրանն ոսկոսկ, գեղձանիկ »:...

Բազդաւոր էին այն անձինքը, զորոնք այսպիսի երջերով կը պանծացնէր մեր քերթողն։ Անոնց մահկանացուն թէպէտ և ծառի մը պէս ծնաւ, անաւ, պտղաբերեց ու գօսացաւ, բայց իրենք պիտի մնան յաւէտ անմահ՝ Բագրատունեաց երջերուն մէջ։ Ո՞վ կը կարծէր, որ Հայի դիւցազնի չեփորաձայն քերթողի պղնձակուռ կարծքէն հընչէին ու մնչէին նաեւ այսպիսի անուշիկ և փոփկիկ տրմունջներ։ Եթէ չանթաձիգ Աբամեղքի ցասումէն ասելի՝ հիանալի են իր վրիժառիթն Աստղիկին վրայ հեգած ու պեզած չնորհքն և քաղցրութիւնը, որչափ եւս ալեւմն մեր արտասպակերպ քերթողն, որ երկնաճեմ հանճարի բարձրութեան հետ զգացման խորութեամբ եւս օժտուած էր ի բնէ։ Այդ զգացումով է՝ որ սիրեց ու երգեց նա բնութիւնն և բնութեան յարակից գեղագոյն էութիւնները. երգեց քրիստոսապար նահատակներն ու սրբուհի դիւցազուհիները. երգեց աշխարհի վեհապանծներն ու հովիւները։ Եւ որ ասելի զարմանալին է՝ երգեց նոյն իսկ այնքան սիրելիներու և փոքրիկներու մուշն ու ատամները, որոնց յառաջագոյն երգած էր ծնունդը, հարսանիքը, բազդի ու բարձի յաջողութիւնքը։ Այսպիսի են այն 12ի չափ կարճ ու երկայն գեղեցկանկարներն, որոնցմով զարդարած է Յակոբ Զէլէպոյ, Հռիփսիմէ օրիորդին և Վաստակէի, Տիգրան Յովհաննէսի՝ Կարապետ Բէյլի որդւոյն և Յովհաննէսի՝ Յակոբայ Տիգրանի, Թագուհի օրիորդին, Սրբուհի Գիլէզիկճանի, Յարութիւն Թընկրեանի, Սամուէլ Մարտաւանի, երկանց մէջ վախճանած Վարդուհի տիկնոջ, Թընկրեան Չխպս Օրիորդի, Եղոկիայի Գեորս Փիլիպոսեանի, Հ. Աւետիք Աւետիքեանի և Հ. Փիլիպոս Թէրզիեան Ալանեանի առաջիններն։ Այո՛, Բագրատունեաց քերթողական հանճարն այսօր իսկ կը թեւտարէ այդ դամբաններու վրայ, և մեռելներու երասաւ այցելութիւններուն ցոյց կու տայ իր զգացման հետ՝ նոյնպէս գնացողաց խնկելի բարեմասնութիւնները, ինչպէս առանց ալ առած է՝ Թողուլ իրենց սիրտը մեռցողներուն։

Բագրատունեաց անհամեմատ առաքինութիւնն ու պիտութիւնք լեզուն բնազնակ ըրած էին գինքը ամէն տեսակ քերթուածներու. և կը քերթէր նա գանոնք ամենայն գիւրութեամբ։ Գալով իրմէ ասելի բանասանկծական առաջնդի տէր մարդիկ չունենալով այդ կրկին ձիրքերը՝ կամ չկարողացան այնչափ քերթողարանել, և կամ իրենց քերթածները չունեցան այն փայլն ու գեղեցկութիւնը։ Մեր գրութիւնը չի ներեր խօսել Բագրատունեաց մէն մի քերթուածոց մասին. բայց կը յուսանք, թէ մինչեւ հետայ ըրած թեր ու դէմ խորհրդածութիւններով իսկ՝ որոց գաղափար մը տուած ենք անոր բնդհանուր առաւելութիւններուն և մասնական թերութիւններուն վրայ, որով միայն լաւ կրնայ ճշդիւ պիտի ճանչցուի մեծ քերթողն։

Ջախջախեան՝ իր Պատմութեան գանգատի և ապրումներուն վճռին մէջ ըսած էր՝ 1824ին՝ մեր քերթողին՝ Առան Միսակեանի համար.

« Մի այլ եղեցի կարապ երգեցիկ յոլիս իբ գառամ »։...

Այս պատգամն իսոր ապաւորութիւն թողած էր Բագրատունեաց վրայ, և 1842ին արդէն սկսած էր ձիւնել մեր քերթողի գլխուզը. նա կը զգար իր երակաց մէջ ամանային սեաց խանդի պակասութիւնն և աչնանային եղեամի սպասուր։ Յաջին 1847 քերթողիս պաշտելի Մկրտումին՝ Յակոբ Զէլէպոյ անակնկալ մահը կու գար ցնցելու անոր բնութիւնը։ Այո՛ կարծէք թէ վերջին վայրկեանն էր Բագրատունեաց բանասանեծութեանը։ Մեր երգեցիկ կարապն այդ կրկին ապաւորութեանց ներքեւ է, որ կ'ուռնայր և կ'երգէր սիրելի Մկրտումին և իր բանասանեծութեան աքանչելի ոգրանուագը՝

« Երգարան լեզու յորդոր ի ձեռանց գլխոյս մաձեալ ի պաղ »...

Ակնէց վերջ բեկուած էր Բագրատունեաց սրտին հետ՝ նաեւ բանասանեծական գնարը։ Անով միայն բազդաւոր եղաւ քերթողի լռութիւնը, զի անկէց ետքը անձնասուր կ'ըլլար քերթողական թարգմանութեանց, որով ունեցանք նաեւ Միլտոնի, Շաքերսի, Սոփոկլէսի, Յասոնի, Ալֆիերեան, Վրաէսի և Հուգոյ Փոակոյզի անմահ քերթուածոց հայերէն փոխադրութիւնքը, որոնք բաց ի լեզուէն՝ ի մի հրաշագեղ են նոյն իսկ քերթողական արուեստի ու ազգաչափութեան։ Յոյսի պիտի մնայ Բագրատունի իրրեւ անզերազանցելի Ալեմպոս մը հայկական Պատմոսին համեմատ։

* * *

Մխիթարեան հիւսուածքէն մասնակիցն մին, որ իր մրցակից Բազրատունեաց՝ անոր տակէն շատ և շատ տարիներ վերջ և մինչեւ մեր օրերը հնչեցուց իր արիւնաքան քնարի արտորդու երգերն, է նա ինքն Գերպ. Հ. Եղուարդ Հիւրմիւզեան : Բազդատութեան և զատբիծութեան այդ խնդասիրական անձնաւորութիւնը — զոր անանձիւ և վայելելու բաղդն խնդացած է ազգերուս պրոյը — կարելի չէր՝ որ իր անձին կամ արիշին հետ անցեալ կենցաղավարութեանը մէջ միայն ամփոփէր այդ և առանց յարակից ձիրքերը. ուստի մի բնութեան արտարիչն ինչպէս լուսինը պրած է մեր միջնորտական վեր՝ պիշերի միութիւնը փարատելու և զատարձացնելու խանջեալ բնութիւնը, այնպէս ալ այս ազնիւ և զգայուն սիրտն ու հոգին՝ քնքոյշ բանաստեղծութեան խանդով և աւիւնով լեցուցած էր, զատարձացնելու և ազնուացնելու համազգեաց արտերն՝ այն երկնային քաղցրութիւններով, որոց ի բնէ կը կարօտինք. և երգելու բնութեան այն անմոռաց վայելչութիւններն, որոնց ինքն է ակնաղբիւր :

Արիշները ինչ կ'ուզեն Թող բանն, ասկայն մեզ հետ քերթողն ինքնին իր պատակից այդ գաղտնիքին՝ յիրաւի կը գոչէր.

« Քերթող և պիս Պիերեանք կացուցին զորք իմաստուհիք.
Ասկայն իւր միշտակութեան եղեւ և է ի յիս յաւէրժ,
Ընդ ակր իմաստից գեղապարոյր ի ճառ ճեմեալ » :

Մինչեւ 1854 Թուականը՝ Հիւրմիւզեանի երգած քերթուածներու թիւն իննսունէ[1] կը հասնի, որոնք կը պատկանին բանաստեղծութեան գանազան տեսակներուն : Ասկայն մտածելով՝ որ նա — մինչեւ 1876 Թուականը — ապրի և հանգէս չէր փափաքներ՝ որ տասնապատիկ չդրէր, կրնանք ըսել՝ որ նոյնպէս ալ անոնց քերթուածներ Թողուցած ըլլայ՝ այլ և այլ անձանց քով, մաս մ'ալ տպագրուած են տասանձին Բազմաւէպի մէջ :

Հիւրմիւզեանն իր տպագրած քերթուածներէն միայն գաւելով — որոնք բուն անոր կենաց գարուն ու ամառը կը ներկայացընեն մեզ — ոչ միայն իր ծաղկաւէտ Բարեբաստութիւնովն ու հոգեւարան գեղեցկութիւնովը, այլ նոյն իսկ կենցաղականներովը, կրօնականներովն ու Մխիթարեան նշանաւոր պատերու հետ ունեցած մրցութիւններովն և սիրասարսռ Թղթակցութիւններովը, պէտք է ըսեմ, Թէ ոչ միայն տապատի էր կամ քերթող, ինչպէս կարծեն ոմանք, այլ նաեւ սիրասէր բանաստեղծ : Իսկ Թէ այդ բանաստեղծին Մխիթարեան մատաղներու կաճառին մէջ պրաւած տեղին և բարձր տիրն է և ուր, դժուար է ցուցնել. անով մանաւանդ՝ որ առ այլ մէկ կողմէն տաղերգութեան մեր Պողմնիկի պէս ոչ միայն հմուտ է դիցաբանութեան և առասպելական բոլոր պատմութեան, այլ և յաւէտ կը ջանայ մրցիլ Աղրիականի առիւծները առյղնեներով պատկեալ կղզեկեին մէջ առաւոտ պատանեաց հետ, Իտալիկ այնքան գանազան նիւթերու մէջ. և միւս կողմէն ալ ընդունակ է՝ իր ինքնուրոյն գնացքին Եզանակիլ և յեղանակաւորել ուրիշ մատոյցի և քերթողաց երգերը : Այդ, ի նկատի առնելով Հիւրմիւզեան իր քերթուածներու ընդհանրութեանը մէջ — որոնց չատերն ափտիոյ երգած է, կամ լաւ եւս՝ իրեն ծանօթ բանաստեղծութեանց պարունակէն դուրս — կրնանք ըսել, որ նա Ջախջախեանէն ալ, Բազրատունիէն ալ

---

1. Տես Տաղք Մխիթարեան Հարց, հա. Գ. Վենետիկ 1854 :

առարաս է. դի չունի միշտ ասոնց ոչ խանդը և ոչ ալ մտածութեան ձեւի բարձրութիւնը, խորութիւնն, ընդարձակութիւնն ու աչքի զարնող նորութիւնը։ Իսկ մասնաւոր տեսակէտով, այսինքն էՙ իր հոգեւոր Գեղեցիկովն ու ժողովրդական Բուբասաւոնիներովՙ պէտք եմ ըսել, թէ մեր նորագոյն Վրայն՝ այդ երկուքէն իսկ վեր և առանձին բարձի մը վրայ դասելու արժանի է։ Ինչպէս Չախչախեանն՝ իր բանալանգ և բանակարգ երգիծապատումներուն և Բաղրատունին՝ դիւցազներգութեան, այնպէս ալ Հիւսիսեանը բանաստեղծութեան այդ կրկին ճիւղերուն մէջ կարծէք թէ անհամեմատելի է, ու անգերազանցելի ապացոյցն կը թողու ընթերցողին վրայ։

Այո՛, անոր Բուբասաւոնիները միայն — եթէ չունենար ուրիշ գեղարուեստական էին անմահացնել զինքը, ինչպէս Միլտոնիները՝ զԱյրզիլ։ Եթէ կարելի ըլլար օրենել, գանել և գնել Մանուսագի մեծ քերթողի այդ հոյակապ ծնունդին քով՝ համազգի զուգակից մը, իբր ծաղկազեղ կոյս մը՝ ազնիւ արժանաւոր փեսայի, ես պիտի մատանիէ ընէի մեր Վրաց Արմզրամայ՝ հայկուհւոյ Բուբասաւոնիը։ Իրաւ՝ արչաի որ հասմէական կրթովի բանաստեղծութեան սեմ և ամենազեղ վայելչութիւններովը վեհ է ու վսեմ առաջինն, այն էՙ «Միսիականն», և արդէս թէ անզուգելի. սակայն հայկականն ալ ոչ ինչ նուազ նազելի է և նախանձելի, Հիւսիսեանի ներշնչած գոլորիկ ու գգայուն հոգւոյն եւ քնքոյշ մասամբ մոլիմացուցած գեղեցկութեամբն ու փափկութեամբը։ Ինչպէս Ֆաուներՙ Վէրթիւխոսի, այնպէս ալ Փերօս Հիւսիսեանին կը պարտի իր և իր խնամարկած ծաղիկներու առաւաժացումը։ Մեծն Պլինիոս և մեծանուն Գըլիէն իսկ կրնան պարծիլ առ այս, մին անոր գիտական գաղափարով, և միւսըՙ բանաստեղծական առեղծագրութեան առաջնութեան համար. սակայն Հիւսիսեանը, չգիտեմ ինչպիսի գաղանի գօրութեամբ մը, և՛ սիրելի և՛ միանգամայն պաշտելի ըրած է դանոնք։ Եթէ Փայլաժան՝ իր լուսագեղ խմբովն երկնից կապուտակին, այնպէս ալ ԵՒիերառեմ գառներքըՙ ծաղկունքՙ ամէն և ամէն հրապուրիչ և գեղաթացուցիչ գարձած են մարդկան՝ երկրիս կանուչ գաշտին և մանկանացոյս հովիտներուն վրայ, մեր քերթողի հմայիչ գրչովն։ Այս գեղեցիկ բազդ մ'է ազգիս համար և անկին գոհար մը ազգային նոր գրականութեանը։

Ամէն ծաղիկ, ամէն կոճղէզ, ամէն ծաղկաբեր ծառ կամ գոնէ թուփ, որոնք կը գարդարեն այսօր մեր պարտէզներն ու Ղեմոնացիները, և կամ բնական գաշտերն ու գարեւանդները, արժանաւոր տեղեր գրաւած են մանաւանդ «Վրաց Բուբասաւոնիներուն» մէջ։ Բուբասաւոններՙ որոնց նկարագրական կամ նիւթական չըլլափակը թէեւ իտալական երկնքի ծաղկաւէտ վայրացը մէջ գեաեղուած է, բայց գաղափարականը կը ձգտի ծագաց ի ծագս երկրի։ Այո՛, հոս, այս բուբասաւոնիս մէջ կը փայլին և կը փարփին ամէնքը, ոչ միայն իրենց գաղթականութեան պատմութիւններովն ու անեկդոտներով, իրենց խնամատիպ գեղոյն և հոտոյն բարձրագոյն և գեղեցկագոյն նկարագրութիւն ու յատուկ անուամբք, իրենց բնական կեանքովն ու կենցաղով, իրենց ամպրպեան ծաժուկ գօրութիւններովն ու առասպելային ասխիներով, այլ նոյն իսկ իրենց արուած վերագոյն գաղափարականովը, խորհրդաւոր ծննդականութեամբ, բնաւորական կազմութեամբն ու չքնաղ օրինակներովը։ Մէկ խօսքով՝ ինչ որ բնութեան ամենէնաստ արարիչը պարգեւած է և իր խորհրդաւոր մատովը գրած այդ անմեղուկ և ամենասիրուն արարածներու լուսացեղուկ թերթերուն վրայ, նոյնը ամենահաւատարիմ կերպով կարդացեր և պարզեր է մեր գիմաց Հիւսիսեան՝ բանաստեղծ օրէնն։

Ձեմ վիճեր բնաւ, որ մեր բանաստեղծէն աւելի ազդանշաւոր բանաստեղծներ և բանաստեղծութիւններ գտնուին նաեւ այս ճիւղիս մէջ. բայց կը տարակուսիմ, որ անկէ աւելի փափուկ ճաշակ, գոլոր գգացումներ արտայայտած ըլլան, և գոմ այնպիսի անուշիկ ու ազդեցիկ լեզուով խօսիլ և խօսեցնել տուած ըլլան այդ անհաս էակներուն։ Կոյս ծաղիկներ և կոյս բանաստեղծնՙ այնպէս գիրար սիրած ու իրարու յարմարուած են, որ կրնանք ըսել իրաւամբՙ թէ փոխադարձարար ու գերազանցօրէն մէկզմէկ կ'արտայայտեն։ Գաղափարնէն անզամ երգած մանուկՙ կարծէք թէ գաղափար քերթողի մտքէն և արտէն ծաղկած յաւիտենական ներգաշնակութիւնը կ'երթայ ու կը գաշնակաւորի և՛ բացուած ու բուրեան վարդին, և՛ շուշանին և համապատասխանութեան հետ. իսկ ընթերցողըՙ կը զգայ ինք գինքը երկրաւոր գրախտին ու բուրումներու մէջ յաւիտենացած։

Տարակոյս չկայ, որ բուսաբան աշխարհի այդ հրաշակերտներն ի սկզբան ի մանկութենէ մեծապէս ազդած ըլլան քերթողի սրտին և ճաշակին վրայ. բայց անոնց Բուրաստաները քերթելու դէմառար — և գուցէ թէ միակ — չարժառիթն եղած կը տեսնուի միայն բանաւոր չուշանի մը, միայն չնաչխարհիկ վարդի մը, այսինքն է՝ Աղանուրեան Աբրահամ Աղայի և Մանիի սիրնոջ երկու ծաղկահասակ աղջիկներուն՝ մահուան մանգաղով յանկարծ կտրուիլը ու խամրիլը։ Հիւրմիւզեան անոնց յիշատակը կենդանացնելու և մօր տխրութիւնը ուրախութեան փոխելու ազնիւ մտածութեամբ՝ ընտրած է առիթել այդ Բուրաստաններն՝ ի տես Վիրգինեայ և Վարդուհոյ։ Աւելի ալ գեղեցիկ գիւտ չէր կրնար ըլլալ։ Վիրգիլ իր Աշակերանքը անմահացընելու համար՝ կը նուիրէր և կը կապէր զայն օգոստեան առհմի վաղամեռիկ հէք մանկան յիշատակին հետ. իսկ մեր նոր Վիրգիլը՝ ծաղիկներու Բուրաստանն է՝ որ կը հիւսէ վայելչապէս՝ կուսապեղ օրիորդներու կենաց և մահուան հետ։

Քերթողիս կաթոգին ներշնչման և զգացմանց համաձայն՝ այդ քերթուածի մէջ արուայայուած բանաստեղծութիւնն իսկ և բանահիւսութիւնքն այնքան վեհ են և մեր միւս քերթուածներէն, որ կարծէք թէ Վրոյրը՝ Հիւրմիւզեանէն տարբեր բանաստեղծ մ'ըլլար, կամ Բազրատունին իր լեզուն՝ անոր զգացումին հետ ներդաշնակած։ Մրքան գեղեցիկ, սրչափ գողարիկ է համառօտ ուղերձն, որով կը հրաւիրէ մեր քերթողն՝ ազգդեաց մայրը, գալ ճեմել իր Բուրաստանները։ Ազնիւ զգացմանը մրցակից՝ կը փայլի հոս նման բանաստեղծութիւն մը, զոր վաղամեռ զաւեր մայր մ'աւելի կը զգայ անշուշտ քան մենք։ Այդ հրաշագեղ նախադուռը արժան է՝ որ բանանք այս տեղ, Բուրաստաններու ներքին գաղտնեացը ծանօթացնելու համար մեր ընթերցողները։

« Էվ ըզբօսիր, Մանիի Տիկին, ի Բուրաստան իմ յայս ի ճեմ,
Ըզմայրենիդ ըմբռնափելով ի սմա ըզսուգ ծաննրաթախիծ.
Աստ Վիրգինեակ զբաստրիկ քոյին, աստ Վարդուհի վաղամեռիկ
Վերկենցաղեալք չքնաղ ի տիպ՝ քեզ ընդ առաջ գան ի տեսիլ,
Ոչ նըկարէնք ի տաստակի, ոչ ի պաբեան չընչեալ ի վէմ,
Այլ բուսականք յառնեն տիպարք՝ այլակերպեալք գ'զաճպղիկք։
Ակն ի չուչան սրկ սըրբափայլ, ակն ի համեստըն մանիշակ,
Ըզհոգեղէն իակ ըզնոցին կենդանագրեն քեզ ասյք ըզգեղ.
Նըշին՝ գուշակ տիոց նոցին, ծիրանագեղ դիմացըն՝ վարդ,
Բոլորնցունց քեզ բուսականց աստ ըսիոփումն ընծայելով։
Սուգ աստ բաղեղն առնու տըժգոյն՝ գիրկս ըզչիրմաւ նոցին արկեալ,
Սուգ ուռենիք առեալ ընդ քեզ՝ լան ըզնոսա արտասուաթորք.
Ո՛չ եւս հիւրոց եւեթ նոճեարն ազդէ ըզսուգ քո ատտանօր,
Այլ և ի տար աշխարհ գնայուն ածէ գղըսաերց քոց յիշատակ »։

Եթէ Վիրգիլիոսի՝ Օգոստեան տանը վաղամեռիկ մանկան մահը յիշատակող մի միայն տողը՝ լացուց արիական կայսրն անգամ, կրնաք գուշակել՝ թէ սրբան արտասուք քամած ըլլան ազնուագգի ու գորովագութ մօր մը՝ Մանիի սիրնոջ աչքերէն Վրոյրի այս գողարիկ ու գիւտաւոր տողերն, սրչափ քնքոյշ յիշատակներ գարթուցած ըլլան ամբողջ Աղանուրեան գերդաստանին մէջ։

Իակ Բուրաստանին մէջ իջած և չրջած պահուն՝ ես կը չուարիմ, թէ սրը ցոյց տամ իմ ընթերցողին՝ իրրեւ նմոյշ գեղեցկի, գողարիկի, բնականի և վսեմի. վասն զի ամէն դրուագ և ամէն տող կը թուին հաւասարապէս գեղեցիկ, գողարիկ, բնական և հրապուրիչ։ Երբ քառահոլով եղանակաց թեւերուն վրայ կը գարձընէ մեր երգիչը բիւրաւոր և միլիոնաւոր բոյս և կոյս արմիններու անմեղ կենաց ու կենցաղի հրապոյր անիւները։ Արեւելքին հետ բոլոր Արեւմուտք, և Հայոց Ծաղկեոյ, Բզնունեաց, բիւրակնեան, երասխական ու եփրատական հովիտներուն հետ՝ Ձաբան, Հնդիկ և ուրիշ բազմական ու անծանօթ երկիրներ իակ՝ կու գան ու կը սփռեն զանոնք մեր առջեւ. և քերթողն իր քնարական բանաստեղծութեամբն ու երկնային ոգեշնորհութեամբն կու տայ անոնց նազել և պարել, երգել ու յաւիտեանել։ Զկայ հոն նեղացուցիչ նոտը կու տայ անոնց նազել և պարել, երգել ու յաւիտեանել։ Զկայ հոն նեղացուցիչ կամ ձանձրանալի և աւելորդ բան մը. այլ մանաւանդ թէ բոլորը բովանդակ հրա-

հանգիչ է և զբօսեցնող։ Երկրորդ երգին մէջ զուարթ Գարունը՝ ծաղիկներուն ու ծաղկաբեր գեղանիներուն վրայ, ինչպէս և՝ ջերմանոցներու բանտարգեալ ծաղիկները՝ եթերին մէջ հրաւիրած ժամանակ, համեստութեամբ կը գոչէ մեր ազնիւ քերթողը դէպ ի անոնք.

« Ո՜հ, ընդէ՞ր ըզձեզ վ.իրգիլ ոչ ժամանեաց առնուլ ի նուագ...
Երգս ըզձէնջ արժանաւոր նըմա եւեթ գոյր յօրինել »։

Սակայն մենք ալ իրաւամբ կրնանք գոչել առ Վ.իրգ, թէ լատին քերթողի լուսաթիւնը գէթ անով եղաւ մեզ համար բաղդաւոր, զի ոչ միայն ունեցանք մեր բնիկ քերթողն, այլ և բնաչխարհիկ ծաղիկներու յատուկ նկարագիրն ու ազգաբանութիւնը։ Աւով հանդերձ՝ մեզ հետ ուրիշներ եւս գուցէ գտնեն Հիւրմիւզեանի « Բուրաստանն» մէջ վիրգիլեան, միլտոնեան և գրլիլեան ծանօթ քերթուածներու նմանողութիւնները։ Սակայն այս երեւոյթս երբէք պիտի չնուազեցնէ մեր քերթողին և իր անզուգական քերթուածի ինքնուրոյնութիւնը, կարեւորութիւնն ու մեծագոյն արժանիքը։ Դիտելով մանաւանդ որ նախ կարծուած նմանութիւնքն իսկ գլխովին աննման են հանգամանքով ու պարագաներով. երկրորդ՝ նոյն իսկ այն դրուագներն, որոնք զուտ ազգային են և անկախ արտաքին հետեւողութենէ, հաւատարապէս գեղեցիկ են ու արտագրաւ։ Եթէ հակայ հանճարներէն մին տիեզերքը չարժելու համար՝ լծակի մը միայն պէտք կը գտար, զարմանք չէ՝ որ մեր քերթողն ալ բանաստեղծական դրուագներ յօրինելու համար օրինակներու դիմէր։

Եւ առուգիւ այսպիսի են Ա. Երգին մէջ (տող 200) Ադրիական ծոցին մէջ բնակող գեղազուարթ կղզեկի նկարագիրն, որուն համար կ'երգէ քերթողը.

« Անդր հալածականք Հայոց մեծաց բնակեն Մուսայք,
Մանրանըկար ինքն ըզպատկեր քոյին բերէ, ո՛ Հայաստան ».

և Վարդավառի և վարդեւեցաց նկարագիրը 290–320 տողերու մէջ։ Գեղեցիկ է և՝ Մեծին Ներսէսի մահուան դրուագը՝ մոլախինդի նկարագրին մէջ։ Այսպիսի է եփրատական հովտի նկարագիրն (Բ. Երգ. 1–30), ուր ըստ քերթողին.

« Հոգին այրարատեան, որ բոցեղէն ճօճեալ առեաւ՝
Գեղերի տակաւին՝ ճեմ ըզվայրօքն առեալ ի պահ »։...

Այսպիսի են նոյն երգին մէջ (310–400 տողերում) այրարատեան աշխարհի չքնաղ նկարագիրն՝ հայկազն դիւցազուններու վէպերով և եղեմաբուղխ բոյսերովն յեռալ, և Դ. Երգին մէջ (227–360) նախկին Դրախտի արարուածոց հետ գեղեցիկ կապով միացուցած։ Նմոյշ մը տալու համար՝ կը դնենք վերջընթեր դրուագէն մի քանի տողեր.

« Ի՞ր այրարատեանդ ըզքէն աշխարհ, լըռեցիկ առա,
Նախամայրըդ ծաղկոցաց և նախէից բուսոց դայեակ.
Ո՛չ առանեան յուռթի պարտէզք և այգեստանք ողկուզաւէտք,
Եւ ոչ Երեկորնեայքն ոսկեխընձոր փայտից բերրիք,
Ոչ քեզ դրախտք Բաբելոնի կախաղանեայք հաւասարեն.
Բամբիշն ասորնական առ սէր քոյին լիք գայնոսիկ,
Գերաբնակ ի հովիտըս քո ընտրեալ ամարանոց։
Եղեմաբուղխք ըզբուրաստանըս քո աղբերք արբուցանեն.
Եւ վարդամատն արշալոյս ցօղէ զանոյշ ի քեզ գազպէն,
Ի վարսից արփենից մարգըրտայեւ չողեալ ի փայլ,

Եւ նորահրաշ երին ի գունակ յեռեալ ծաղկանցըդ չքնաղից։
Դրախտին սատուածատունկ գոն գոռ յաւէրժ վայր և վըկայ,
Ըզնորին ընդ ազօտ վերբերելով ի քեզ պատկեր։
Ջանդէոց քոց զատամունս ոսկեզօծեն արօտք քոյին,
Ոսկեգիսակ պըճնին ի բլուրըս քո խաչինք ճարակաւորք։
Շարժեալ Մատեաց քոց ըզյօնս ըսպառնալից սատանն հիւսոյ,
Եւ ի մարգըս քո գեփիւռք յաւետազուարճ գեղապարեն։
Երջանիկ մանկտի հայկազն, ըզհայրենիդ սիրեա գերկիր.
Ի կոյր ընդերըս լերանց խորասուզեալ հեղձամըղձուկ,
Պեղեացեն այլք հետազօտ զոսկին ի յատս անդ գարանեալ.
Ի բոսոր վըտակս արեան այլուր զարօտըս ներկեացեն
Նիզակախուռըն վաշտք ընդ դաշտըս ծածանեալ տըխրատեսիլ.
Իսկ դու զհովիտըս քոյին զըւարճալիցըս ծաղկեցո.
Աբծաթաղբերք ի դրախտըս քո գնասցեն վէտ վէտ գեղաճեմեալ։
Երջանիկ մանկտի հայկազն, ըզհայրենիդ մըշակեա հող.
Անտի նախատատեղծին հատատեալ իրան արարչակերտ,
Ընկալաւ զանմահութեան դրոշմ ի փըչումն սատուածաշունչ.
Եւ նախամօրն համայնից այն ինչ փայլեալ անդ կերպարան,
Զամօթի հարան ծաղկունք՝ յանձն ըզկորանս յայնժամ առեալ »։

Մեր չնորհալից քերթողը լռվին վատահ իր երգերու կարեւորութեան և ունենալիք ընդունելութեանը վրայ, այսպէս կը վերջացնէ իր մեծավայելուչ քերթուածը.

« Տարայք ըզտաղս իմ զայսոսիկ, տարայք հողմունք յունկն հայկազանց,
Յեփրատայ վինչ ի Գանգէս՝ ուր արամեան հընչէ բարբառ.
Եւ թէ Մուսայն իմ ոչ սըտէ, ոչ խոտեացին սայք ի նոցունց »։

Վրուրի Արմղդանայ Բուրատտաներն՝ ուրիշ տեսակէտով մ'եւս նշանաւոր են, այսինքն է՝ այս չքնաղ գործովս — իրր երկուատեք կատարուած հատատար քոյրութեամբ — կը վերջանար Հիւրմիւզեանի և Բագրատունեաց մէջ ի վաղուց հետէ բացուած ազնիւ մրցանքը. վասն զի վերջինս կը պատրաստէր վերջապէս ատաջինը՝ ընդունել հայկական մեծաչափը կամ դիւցազնականն, իրր միակ հարատատ, վայելուչ և ընդունակ մեծագործ քերթուածոց։ Իսկ ատաջինը՝ նոյն իսկ այդ կարծեցեալ պարտութեամբը կը լուծէր իր ազնիւ վրէժը. այսինքն է՝ կանգնելով այդ գրական կոթողն իր մրցակցի հակայ գործին, այն է « Մշակաբանաց » թարգմանութեան հանդէպ։ Իրաւ է՝ որ Հիւրմիւզեանի քերթուածը փոքր է քանակութեամբ, բայց իր նիւթոց չահեկանութեամբն յոյժ մեծ, և լեզուին պարզութեամբն՝ ամենուն մատչելի է և օգտամատոյց։ Այժմս բաւական ըլլայ «Բուրատտաններու» մասին. տեսնենք ատկէց վերջ Հիւրմիւզեանի ընդհանուր բանաստեղծութեան ներքին հմայքը։

Իտալական առածը կ'ըսէ. I gegni s'intendono, այսինքն թէ՝ Հանճարները զիրար կը հասկնան։ Արդ, քերթողական մեծ հանճար մը, այն է՝ Հ. Գ. Ալիշան, որ լաւ հասկըցած էր Հիւրմիւզեանի կեանքն ու քերթողական բարեմասնութիւնները, յամին 1876 անոր ազազեաց մահազդն ու դամբանականը [1] գրած պահուն՝ բան և բաւ չէր գտներ արտայայտելու զանոնք։ Հատատիկ իր իսկ խօսքերը.

« Ջանզի որպէս անմահ է արբութիւն յերկինս, անմահանայ և յերկրի իմաստութիւն, մանաւանդ՝ որ անմահավայիլն բարբառով աւանդիցի, այսինքն է՝ ներդաշնակութեամբ, որպէս վկայեցին խորհրդաչք բանաստերք հինք և նորք։ Զինք ինձ առձեռն պատրաստ բաւ կամ բան յանկագոյն՝ առ միահաղոյն բովանդակել ըզսեփական տիպս

---

1. Տես Բազմ. 1876. էջ 345։

կամ դյաուկս բնութեան այսր Անձին՝ քան զայս ներգաշնակութիւն. գուգաւորութիւն ասեմ բազմազան չնորհաց անուչից՝ ըստ երկնաւոր և երկրաւոր հանգամանաց. քանզի իրրու անզատին յընծայութենէն ի լոյս կենաց, պէս գունակ հելլենացի գեղացանին՝ ի վեհից սմանց քաղցրագործակ մեղուաց՝ օծեալ և բուծեալ, ամենայն տարազս բերէր և բուրէր զքաղցրութիւն. ի կերպարանս և ի ձայն, ի կենակցութեան, ի շարամանութեան հայկական լեզուիս՝ յարձակն բան և ի չափական, ի սիրտ գորովական և մարգասէր, և ի հոգի եռանդուն և ասուածասէր. վերագոյն քան զհասարակն կամ զմիջակ ունելով հանճար ծննդական և քաջառուս գեղեցկին, ոչ միայն ի պարզութիւնս կամ ի բանաստեղծութեան, որպէս բազմաց է յայտ, այլ և ի ծանօթութեան և յընտրութեան այլոց եւս նրբից գեղարուեստից, որպէս պատկերհանութիւն, ձարտարապետութիւն, ծաղկագործմանութիւն, և որ սոցին նման գեղանի ծնունդք բնութեան, հանճարոյ և չնորհաց:... Իսկ յինքնաստեղծ երկասիրութենէ գեղարանէ՝ նախագասական են Բոբրատաւիքն անուանեալք Վրուրի Արկդաւայ (զի զայս ընտրեալ էր իւր բանաստեղծական անուն՝ ըստ ակադեմեացին ասրասի), ընդ որ և մեծ քերթողն Բագրատունի՝ վարժապետ նորին, հաճէր և գովէր: Պաղրաւիքն չափաւ, Առակք, Յարատութիւնք ի Յոբ, ի Սաղմոս և յՕրհնութիւնս մարգարէականս, և բազում փքերրուածք մանուանք, որպէս գոհարք նկուանք քանակաւ՝ այլ յորգոյք որակաւ, յորս է նշմարել զնչոյլս նորահայծ հանճարոյն և զանթարշամ ծաղկաբերութիւն առեղծարանականին, զի և ի ծայրագեալ ծերութեանն չափարանէր ինքնօրէն և թարգմանարար »:...

Ամիչանի ծովացեալ արաէն բղխած այս և ուրիշ գովեստներն՝ իրաւ է՝ որ Հիւրմիւզեանի բանաստեղծական երկերէն աւելի՝ անձնական բարեմասնութիւնները կը չօշափեն. սակայն և այնպէս քալ կը յարմարին նոյնպէս առաջիններուն, դիտելով որ ինչ է ծառը՝ այն ըլլալու է և պտուղը: Ըստ Ամիչանի՝ Հիւրմիւզեանը սովորականէն կամ միջակէն վերագոյն և ծննդական հանճար մ'էր: Արդ, ինչպէս քերթողական հանճարին՝ այսպէս և անոր երկասիրութիւններու գլխաւոր յատկացուցիչքն էին ներդաշնակութիւն և քաղցրութիւն. իսկ այդ ներդաշնակութիւնն և քաղցրութիւնը կը կայանային երկրաչոր և երկնաձիր հանգամանքով պատարուն՝ բազմապատիկ չնորհաց զուգաւորութեանը մէջ:

Արդ, ներդաշնակութիւն և քաղցրութիւն բառերն՝ եթէ պարզաբար տպաչափական և երաժշտական մտքով առնուինք, անով ոչ Ամիչանը հասկցած կ'ըլլանք, և ոչ ալ Հիւրմիւզեանն ու իր քերթութիւնը որակած: Բագրատունին իսկ՝ զոր Ամիչան մեծ քերթող կ'անուանէ, ունի այդ կրկին յատկութիւններն՝ և ունի առաւելապէս հանգերձ, եթէ ոչ իր կրակոտ բնութեան՝ այլ անտարակոյս իր տպերուն մէջ: Ամիչան իր անմիջապէս յարած բացատրութեամբը — զոր դիտմամբ նօտրագրեցինք — տուաւ արդէն իր մտքի և Հիւրմիւզեանին յատուկ գաղտնեաց բանալին. և մենք կը տեսնենք, որ երկուքին մէջ եղած զանազանութիւնը խիստ մեծ է և էական: Բագրատունին — ինչպէս տեսանք — իր տպերն ու տպերը ներգաշնակ և քաղցր ընելու համար՝ կը մտքատի յաճախ ոչ միայն իրաց բնական վիճակին և մտքի դէմ, այլ և կը տանջէ բառերն ու բացատրութիւնները, կը փոխէ շարահանութեան կարգն ու տարքը, նոյն իսկ փոխադրութեան Թոյլատրած օրինաց չափէն անդին. կը կնճռէ երբեմն գաղափարաց պարզութիւնը, և գժուարահասկնալի կ'ընէ ինքզինքը: Իսկ Հիւրմիւզեանի միտքն ու սիրտը, լեզուն և գրիչն, բառերն ալ, բանաստեղծութիւնն ալ՝ կրնանք ըսել՝ որ միշտ իրաց և բնութեան հետ գեղեցկայարմար կը զուգընթանան և կը հոլովին:

Բագրատունեաց լեզուին պէս՝ բանաստեղծութիւնն ալ բարձրէն հոսող ջրվէժի նման ցայտելով ու խորտակուելով, պտուտկելով ու մեծաշառաչ խոխոջիւնով կ'ընթանայ, և կը հնչեցնէ իր ուժգին արձագանգը հովտաց և այերց շուրջը. ահա ասոնց մէջ աւելի կը կայանայ անոր տպերու ներդաշնակութիւնը: Իսկ Հիւրմիւզեանի սիրտն ու հոգին՝ ընդհակառակն՝ լերան սառոյտը տարածուող և անզորը՝ բայց կենդանաւէտ լճի մը կրնանք նմանցնել, ուսկից վճիտ վտակներ կը բղխեն միշտ՝ անոյշ կարկաչով. և ընթանալով՝ կը զաշնակաւորին հովիտներու և մարգոց, պեպիւռին, ծաղկանց թրթռուն թերթերուն ու մարդկային կենաց և կենցաղին հետ. ուսկից ապա կը վերանան ուղխօրէն, կը գեղուն ու կը խառնուին երկրիս ու երկնքի խորհրդաւոր բարձրութիւններուն, նիւթական և հոգեղէն գեղեցկութեանց հետ, ինչպէս սէրը՝ համագոյից:

Սա ալ Բագրատունեաց պէս գաւառական գեղեցկին ու վսեմին սիրահար է, բայց իր գեղեցկին ալ, վսեմն ալ բնական պարզութեան մէջը կը գտնէ, յօգելով և զօգելով զանոնք իր առեղծաբանականին և կամ քնքոյշ դպացումներէն փթթած անթառամ ծաղկաբերութեանց հետ։ Իսկ Բագրատունին ընդհակառակն իր խիզախ վսեմութեամբը՝ բնութիւնն ու բնականն է՝ որ կը բռնադատէ ըլլալ վսեմ ու գեղեցիկ, ինչպէս որ իր հանճարը, ճաշակն ու երեւակայութիւնը կ'ուզեն ու կը վերաառեղծեն։

Բաւծնուս համոզուելու համար՝ ալ կարծեմ թէ պէտք չկայ երկայն ապացոյցի. բաւական է բաղդատել Հիւրմիւզեանի հովուական Գեղօլքը՝ Բագրատունեաց երկու բաւագոյն էղերերգներուն հետ։ Հոս — ինչպէս տեսանք — «Հովիւն» ու «Մշակն» անուամբ միայն են այնպէս, իսկ իրօք աւելի պուեսի և երգահանի տիպար ունին և կենցաղ, քան հովուական և անդէորդական։ Այդ, այդ կրկին վիճակները քերթողն ինքնին առեղծած է, և իր անձին վրայ։ Իսկ Գեղօլներուն մէջ ընդհակառակն՝ «Մայրն ու Դաստիկը», «Հովիւն ու Հովուհին», «Վրոյրն ու Կիւրոսը», «Օրհասական ծերն ու ընտանիքն» իսկապէս հովուական ու գեղջկական կենցաղ ունին և նկարագիր, մանաւանդ թէ քերթողն ինքնին — այդ անձանց և պարագայից մէջ — անոնց փոխակերպուած ու անոնց հետ կարծէք թէ նոյնացած է, քան որում կը պահանջէին բնական իրաց վիճակքը։ Այս այսպէս ըլլալով հանդերձ՝ ով կրնար մակաբերել, թող թէ յորմարցնել անոնց ուրիշ բարձրագոյն այլաբանութիւններ եւս. և ասկայն մեր քերթողն յանձին «Հովուի» ներկայացուցած է Բարի Հովիւը՝ Քրիստոս, և «Հովուհոյն» անոր Հարսը՝ սուրբ Եկեղեցին. որոնք անհուն գթով ու գորովով կը հոգան և կ'որոնեն մոլորուած ոչխարակները։ Այսպէս ալ յանձին Կիւրոսի՝ պարսիկ մեծ թագաւորին՝ նախակին գարուց արիական արարուածներն ու Աքեմենեան արքայից անդէորդասէր վիճակը։

Խորհրդաւոր կամ կրօնական այլաբանութիւնները գեղեցիկ և նշանակալից դեր կը խաղան Հիւրմիւզեանի ուրիշ քերթուածներու մէջ իսկ. որոնք ասկայն անոնց աշխարհական և բնական նկարագրին չվնասելէն զատ, գերազանցօրէն վեր իսկ կը բարձրացնեն զանոնք. մինչդեռ մեծն Բագրատունի հնթանոսական այլաբանութիւններով իր այսպիսի տաղերու բարձրագոյն նշանակութեանց հետ՝ գործելիք ազդեցութիւնն եւս կը թուի նուազեցնել երբեմն։ Օրինակ իմն, բաղդատեցէք Հիւրմիւզեանի Օժռմն (Ուքիտա Սոմնլեանի) ի դիտապետուիւն Միհենաց երգը, նոյն տաքիս յօրինած Բագրատունեաց երգին հետ, և ըրած դիտողութիւնս ձիշդ պիտի գտնէք։ Բագրատունին կամ Աւան Միտակեան, չնայելով որ իր քերթութեան յօրինուածութեամբն աւելի հոյակապ է, և իր կրակոտ խանդովն ու օդապարիկ Պիգասոսով՝ Միհենաց աշխարհի հին ու նոր անցից հետ՝ սարերն ու ձորերն եւս կը զրգռեցնէ, ասկայն և այնպէս՝ չի կենար իր նիւթին մէջ. չունի նաեւ Հիւրմիւզեանի սրբազան և սիրագեղ օծումը, քաղցրութիւնն ու բնականութիւնը։ Վասն զի նա զրաղուած է Կամենայց, կոյս Մուսաներու, սիտական անձաւներու և Ներսեսեայ մրմունջներով։ Մերթ երկնից երագաթռիչ թռչուններու թեւերով սիրոյ ան ու հուր կը թագնէ լոյծ կոհակներէն, և մերթ Կապիտոլիանէն նոր Հերմէս կ'իջեցնէ Աղրիականի ծոցը, և յանկարծ մանաւանդ Միհինքի համար նոր արքայ կը յայտարարէ զինքը։ Իսկ Սուքիասայ նուիրական Սուկաւէտին՝ չնմորագային բարբառ մը միայն յատկացուցած է՝ Միհաքեանց կողմէն, այսպէս.

« Զաւետաւոր բարբառոյդ ի Սուկաւէտ հար չնմոքայ »։

Իսկ Հիւրմիւզեան աւելի մօտէն, աւելի ամիսի և սիրուն կերպով քերթելով Միհենաց թեմի՝ արուարձ և այրիացեալ հարսին և անոր նորատպակ փեսայի հոգեւոր պատկերը, հետեւեալ գեղեցիկ տողերով կ'իջեցնէ անոնց վրայ Սուքիասայ նորօրեայ արիւնն ու օրհնութիւնը.

« Ի Սուկաւ լերին արդ
Հընգեքին Այանքըն աւրը
Խայտան Քօչքն ալեզարդ,
Երկնայնով վառեալքըն հուրբ։
Աղօթից նոցին ամպ
Յոլացեալ յարեւելից,
Ջընարելոյն գագաթամբ
Էջ, ցօղովն ըմնա ելից։...
Մերկեա հարան ողջախոհ,
Թաղծութեանդ ըզհանդերձ լուրթ.
Պարիկք Հայք ի մի գրոհ
Ըզվըսեմն երգեն խորհուրդ »։...

Արդ, այս համեմատութեամբս ես միտք չունիմ Հիւրմիւզեանը վերադասել քան զՔաղրատունին, այլ երկաքանչիւրի բանաստեղծութիւնը միայն բնորոշել ըստ կարելւոյն ճշդիւ՝ տարբեր՝ տեսակէտերով։

Թղթակցութեան ձեւով առ Ալեքսիա, Մենալքսա և կրօնակից ուրիշ Հարց և առնեղուն Նուիրած Հիւրմիւզեանի քերթուածները լի են և պատարուն զղացումներով։ Անոնց մէջ եղրայրական և ընտանեկան սիրով վառուած անչինջանելի մարենի մը կը ներկայանայ մեր քերթողն ընթերցողին մտաց առջեւ, ուսկից կը ճառագայթեն ու կը ծաւալին երփներփեան ծիածանի պէս չնորհք և քաղցրութիւն։ Անոր կուսական սրտէն քարտիսի վրայ փթթեցուցած բանաստեղծական ծաղիկները՝ կարծէք թէ իր հոգւոյն պէս յաւիտեանս անթառամ մնալու սահմանուած են, բուրելով երկնային առաքինութեանց և մարդկային փափկազգածութեան բոլոր անուշահոտութիւնն ու գեղը։ Կարելի չէ կարդալ զասունք՝ ու չերանել գինքն և զանունք, որոնց գրած է, և զորոնք գգուած՝ այնպիսի խանդակաթ ու սերտ սիրով։

Հիւրմիւզեան — անմեղութեան և երանութեան մէջը ստեղծուած զուարթուննեբուն պէս — բնութեամբ ըլլալով անմեղ և զուարթ, չիրմիներն ու տխուր նոճիներն իսկ երգած ժամանակ՝ սրտահեշտ արշալուսի մը պէս կը փարատէ անոնց տխրութիւնը, ողողելով ու արբեցընելով — երկնային մխիթարութեամբ — անոնց չիրմիներու ստուերին մէջ յածող ու կոծող սգաւորներն իսկ։ Ապացոյց ըլլայ բառածիս ի վաղամեռիկն Լմմա Աղանուր փոքրիկ գերեզմանականը, ուղղած առ ծնողս իր, ուսկից կ'արտագրեմ հետեւեալ տողերը միայն.

« Յորժամ զուարթունըն պահապան
Առեալ գԼմմայ զհոգին ամբիծ
Եօթնաստեղեայն աձ ի խորան,
Ցերանաւէտ ի ցընծութիւն.
Օրիորդիկըն խորասոյզ
Լուսափայլեալ ի տիպ արփւոյն,
Ի սիրելիս իւր ի յերկիր
Անդուստ ի հայր իւր և ի մայր
Դարձոյց զաչիկունըն կարեկիր.
Եւ ընդ նախկին մըրմունջս ընդ իւր
Աղիողորմ և սըրտառուչ
Զայս առ Յիսուս աղերս հեղոյր.
Ո՛վ որ բնաւինդ ես սէր և գութ,
Եւ յարտասուաց զիս ի հովտէ
Աժեր առ քեզ այսր ի յանքոյթ,
Հայեաց ի ծնողս իմ՝ որ գինեւ
Խանդապատեալ զառն ի մորմոք
Հեծեն ընդ մահ իմ ի սառեւ։...
Շուրջ պար առեալ ի հրեղինաց,
Ժըպիտ ի դէմս իւր Տէրն յայնժամ՝
Զայս առ դըստրիկն Լմմա ասաց.

Լ֊ի այդպէս. և ընդ եթեր
Երթին առ իս դու ծիածան,
Կացցես քոյոյդ աւետարեր »։

Մեր քերթողն որովհետեւ Մելպոմենէէն և Կամենայցմէ աւելի՝ գերաբուն Աէրէն ըմպած էր սիրոյ և չնորհաց հոսանքը, հետեւաբար՝ այդպիսի սիրով ու չնորհօք է՝ որ աննախանձ և անխտիր կը չքեղազարդէր ամէն բնութիւն, ամէն հասակ, և ամենուն սիրելի և ցանկալի կը դառնար։ Ցղայ հասակը չզրկելու համար այդ վայելչութիւննե֊րէն՝ նա կը քերթէր իր պարզ և գեղեցիկ Աքակները, շրջեցնելով զիրենք կենդանա֊բանական և բուսաբանական պարտէզներուն մէջ՝ իբրեւ աստուածպետական դպրո֊ցում, ուր ունէին ուսանիլ բնականը, բարին, ազնիւն ու գեղեցիկը։ Իսկ զարգացած մտքերը յափշտակելու և յաղեցնելու համար՝ կը բանար — Յօբայ և մարգարէահրաչ Օրհնութիւններու վրայ քերթած իր չքնաղ Յարուցութիւններովը — իմաստութեան տաճարի, յաւիտենական խորհրդոց և վսեմական բարձրութեանց դռները. որով զինքն եւս աւելի բարձրացած և հոգիացած կը տեսնենք՝ բնութեան անգունդներուն և նուրբ եթերի մէջ սաւառնող հոգւոյ մը պէս։

Ա֊հաւասիկ՝ այս ամենայն ի միասին համախմբուած՝ կը յօրինեն Հիւրմիւզեանի անձին և բանաստեղծութեան ներդաշնակութիւնը, երկրաւոր կենաց ու գործունէու֊թեան ծիածանը, որուն միջնադարեան գրականութեան կիսագունդին վրայ ձգուած կամարը բռնած է Շնորհալին, իսկ նորինը՝ Ֆեներլոն։ Այո՛, չենք սխալիր, կարծեմ, եթէ Հիւրմիւզեանը անուանենք և՛ Շնորհալի և՛ Ֆեներլոն. վասն զի երկուքին հոգին, վարքը, բանաստեղծական ճաշակն ու չնորհքը տիրապէս գիտցած է անձնաւորել իր և քերթուածներուն վրայ. հետեւաբար անոնց պէս ալ միշտ սիրելի ու սխրալի եղաւ և պիտի մնայ։

* * *

Երրորդ շրջանը. — Իննեւտասաներորդ դարու առաջին կէսին — ինչպէս տեսանք — հայկական Պառնասոսն արդէն ձեւացած էր Վենետկեան լճակումը գեղապարող կղզեկին մէջ, զոր կը պսակեն մշտադալար սարդենիներ ու ոլէանդրները։ Եւ սակէ՝ եկպղական ինը Մուսաներու պէս՝ իննաթիւ կոյս պուէտներ կը հնչեցընէին իրենց բազմանուագ երգերը. որոնք թէեւ ունեցան աւելի կամ պակաս ազդեցութիւն Գաբրիէլ ու Սերոբէ Պատկանեաններու, Պէշիքթաշլեաններու, Չէքիմեաններու և նմանեաց վրայ, սակայն այդ ազդեցութիւնը չէր կրնար ըլլալ ընդհանուր և տիրող։ Պատճառը. — որովհետեւ նախընթաց երկու շրջաններու մէջ գրուած քերթուածներն ամէնքն ալ զուտ ազգային նիւթեր չէին չօշափեր, այլ ըստ մեծի մասին հանրազ֊գային։ Երկրորդ՝ ամէնքն եւս դասական լեզուով չինուած էին, որ քիչերուն միայն մատչելի էր։ Ասոր յետադարձ, ընդհանուր և տիրող ազդեցութեան դերը՝ սոյն եր֊րորդ շրջանի պուեաններուն վերապահուած էր կատարել։ Եւ կատարեցին եթէ ոչ բո֊լորովին, այլ յոյժ սարբեր ուղղութեամբ և պարագաներով. այսինքն է՝ նախ հին կլասիկականին տեղը՝ կը փոխանակէր նոր ռոմանտիկ բանաստեղծութիւնը. Բ. դասա֊կան լեզուի տեղը՝ աշխարհաբարը կամ հասարակաց բարբառը. Գ. հանրազգայիննե֊րուն ալ՝ զուտ ազգային գոյն և որակութիւն ունեցող չափազրգիռ նիւթեր։ Ա֊հաւասիկ այն գլխաւոր յատկութիւնները, որոնք կ'որակեն Մխիթարեան բանաստեղծութեան երրորդ շրջանը, զոր պիտի գծենք մօտէն։

Հ. Միքայէլ Չամչեանց. — Թէպէտ և իր կրօնակից միւս քերթողներուն պէս՝ իր ամբողջական քերթուածներու հրատարակութեամբն ազգին ծանօթանալու պէս՝ իր ամբողջական քերթուածներու հրատարակութեամբն ազգին ծանօթանալու բաղդը ունեցած չէ; սակայն իր անտիպ գործերէն դատելով՝ բաւական խանդոտ բա֊նաստեղծ մ'եղած կը տեսնուի։ Ասոր ինքնագիր քերթուածներուն մէջ ամենէն ընդար֊ձակը, գեղեցիկն և նշանաւորն է Գիշերական կենցաղ մակագրածը, զոր 1830 թուա֊կանին քերթած է և ընծայած իր պահապան Մխիթարեան։ հետեւեալ տողերով.

« Զինեւ Մուսայք ձրչաւի սըխեն վարդից խանդ,
Օ՞ն, գիմ ըզքոյ ըզցանկալին հիւանդ քեզ.
Անչէջ բորբոք քո նագելոյդ մեծ հրաւի՝
Շիջեալ խանդից ըզքոց վառեաց գիմ սըրտի։
Զուարթուն հոգի, որ քան գիմ ճիչ ըզնախկին,
Ցաւեաներից ինձ խնամակալ ընտրեցար.
Որ գաղափարն այս կենցաղոյս յօր վերջին՝
Հրաբուն վհէից խառնես ի գունդ անվրթար,
Չոակի թեւոյդ հովանացո՛ ինձ գըտաւեր՝
Չայս իմ քընար կերթ ի մատունս հարկանել »։...

Գերթողս վեց երգերու բաժնած է իր այդ բանաստեղծութիւնը, զոր գրած է գարնանային գիւղագնացութեան ժամանակ, և բնութեան և գիւղական կենաց՝ իր վրայ գործած մեծագոյն և քաղցրագոյն տպաւորութեանց ներքեւ։ Թէպէտեւ Վէրգիլիոսի, Կրտսեր Պասինի, Ցօբայ գրոց և ուրիշ նոր գերթողներու նմանողութենէ ազատ չէ, բայց ունի նաեւ բոլորովին ինքնատիպ նկարագրութիւններ, բնութեան խորաթափանց գննողութիւն և գեղեցկի ճաշակը։

Օրինակ ըլլայ բաժնուած Սիրամարգի նկարագիրը, զոր կու տայ այսպէս.

« Եւ սիգաճիմ ընտել հաւուց ոստիկան
Պերճ ընթացեալ ոսկեբըբուկ և չըքնաղ,
Ի գիտակին պաչապանօրէն թեւաբախ՝
Ա՛ռ իւրս խօսիւն գանգ արձակէ անդ յաճախ։
Անդ յեղակարծ թէ գիպեացիս երիվնագեղ
Եւ սըխրալի թըռչնոյն տեսլեան անտիպար,
Կապոյտ վարսիւք պարանոցին չողայ գեղ
Ճառագայթից յարեգական փայլակեալ.
Ոսկեճամուկ տուտ խըրճացեալ ծաղկալից՝
Եւ կարակնեալ կայ ըզգըլխովն բըբացից։
Իրրեւ չըքեղ ծիրանածին թագաւոր՝
Յոսկի գահոյս անցեալ բազմի վեհաբար.
Աստղենըկար և գոյնագոյն ի բոսոր,
Ըզգահոյիւքն չուրջ զառաւոտեան ոսկեվառ՝
Եւ լուսակիզն ականց փայլէ գումարտակ
Հովանացեալ ըզգագաթամբն ոսկեթագ.
Ա՛հ, յայս տեսիլ միինչ յարփենուոյն գըլիլ ծով
Ա՛չ մեղիցես, թէ յառեացիս անընդհատ »։...

Զէմպէրլէկճեանի այս 44 էջերէ բաղկացած գերթուածը՝ կ'երեւի՝ թէ չատ կարգացեր և ախորժեր էր անոր աշակերտն Ալիշան, գի իր ձեռքովը գրուխած է անոր կողքին վրայ սոյն վերտառութիւնը. « Որ գիւղական — գերթուած Հ. Միքայէլի Զէմպէրլէկճեան, 1830 »։

Այն բազմաթիւ թատերախաղերէն զատ, զորոնք մերթ արձակ և մերթ չափով յօրինած է կամ թարգմանած Հ. Միք. Զէմպէրլէկճեան, և որոնց հետ ծանօթացուցինք արդէն ընթերցողը, թողած է առանձնաւոր Հաւաքոյմ մ'ալ յոյն, լատին և եւրոպացի բանաստեղծութիւններէն [1], բաւական յաջող թարգմանութեամբ և տաղաչափու-

---

1. Արպենիք են Ովիդիոսի Նկարագրութիւն փառատեան Տեառադոսի ի Կրետէ, — Սոխակն Թագերդի — հաւուած մը Թագաւոր Երուսաղեմ ազատեալ դիւցազներգութենէն, 2 հաւուած Վէրգիլիոսի Ենէականէն, — 2 հաւուած Միլտոնի Դրախտ կորուսեալին — Վէրգիլիոսի Մշակականաց սկիզբը, և Ե. Հովուերգը, — Պինդարեան ոճով հաւուած մ'ի Ներսն ? — Կեանքի՝ ԺԴ և ԺԸ Գեղերգութիւնքն ու Դ. Հովուերգութիւնը՝ Գիշերային երգ, — Տաղ Պինդարեայ Աստղիկ Որգոմեանայ, — Տեւեանի՝ Կոչուիք Աղեքսանդրի կամ զօրութիւն երաժշտութեան, — Աղեքսանդր Մահքեթեայ՝ Առ մեծն Լուդովիկոս, — Միլտոնի սկիզբը, — Քապրերայի՝ Ցաղագս ատտեղոյ և ի Սրբուհին Ագնես, և Վենետկեցի քերթող Փրանկիսկոս Ծամբանելլիի՝ ի Մանն Հուկոնի Փոսկոլեայ։

թեամբ։ Չէմպէրէկճեանի գրաբար չարադրութեան մասին մեր ծերունիներէն ամենը բերնէն խիստ գնահատութիւններ չսած եմ, և այս ըստ իմիք կարելի է ասոյդ համարիլ, եթէ մեր ձեռքը ունեցած գրչագրերն իր իսկ ձեռքովը գրուած համարինք. վասն զի ասոնց մէջ յաճախ ուղղագրութեան հակառակ տառասխալներու կը հանդիպինք։ Սակայն զժուար է կարծել, որ մէջ բերուած տողերու գրողն, որոնք պարզ և հեռուակ չարադրութենէ վեր են, կարծուածին չափ ակար եղած ըլլայ դասական լեզուին մէջ։ Հետեւաբար՝ անոր ուղղագրական սխալները կամ գրչի անուշադրութենէ ապրած են, որ քալ հայկաբաններուն իսկ կը հանդիպի յաճախ՝ միտքը խնամանեալ գրադած ժամանակ, և կամ — որ աւելի հաւանական կ'երեւի մեզ — այդ ընդօրինակութիւններն անոր աշակերտներու ձեռքով եղած ըլլան. և այս բանիս կը նպաստէ գրչութեան գանազանութիւնն։

Չէմպէրէկճեան Պոլիս եղած ժամանակ իսկ քերթողութեամբ կը պարապէր, և իր բանաստեղծ ծանօթ էր ազգային ուսումնասէրներ բանահիւաններուն։ Կը պատմուի, թէ Աւետիս Պէրպէրեան անոր յօրինած մէկ քերթուածին խիստ գնահատած էր, և ուզելով ինքն ևս բանաստեղծի անուն հանել, գողունի կերպով կը հրատարակէր զայն, ներմուծելով ինչ ինչ և՛ իր կողմէն։ Սակայն այս բանս իմանալով Չէմպէրէկճեան՝ այդ գրական գողութիւնը կը յայտնէր ուրիշներուն, հրատարակելով — 1850ի Բազմ. մէջ, եր. 330 — «Բողոք առ գողն բողոքոյս» գանգատը։

Հ. Մկր. Չէմպէրէկճեանի քերթուածները — թէպէտեւ բաւ մեծի մասին հանրագային — դասականէն աւելի վիպասանականի (romantique) տիպ ունին։ Ասոր ուղղութեամբ և ոճով է՝ որ նախակարապետ կ'ըլլար առ Այիշանին, և կը ներշընչէր անոր՝ պատռել դասականի նեղ ու հնացած սահմաններն, և բանալ վիպական բանաստեղծութեան նոր և ընդարձակ հորիզոն մը, և առեղծել ազգային քերթուածներու նոր տիպեր մը։

* * *

Մեծ հռչատացեալն ու ազգային առաջին բանաստեղծը. — Եթէ ամպածրար լերան մը գլուխը բարձրանալը զժուար է, զժուարագոյն եւս է մեծ մարդկանց վրայ խօսելն ու գրելը. վասն զի ինչպէս առաջինը՝ ակար մարմնոյն, այսպէս ալ վերջինս՝ մտոց առջեւ անանցանելի բարձրութիւններ ու վիհեր կը հանէ։ Վխտեք արդէն, որ այս մեծ մարդուս բեղնաւոր կեանքին համառօտ պատմութիւն եւս յոյժ բազմաթիւ են և ընդարձակ. հետեւաբար՝ անկարելի է առ այդ էջերու մէջ ամփոփել զանոնք։ Ասոնք ես ստիպուած եմ այս տեղ խօսիլ միայն Հ. Այիշանի բանաստեղծութեանը վրայ՝ յորում է մեծ հռչատացեալն, և հռչատացեալին վրայ, որուն գրութիւններն ալ, գործերն ալ — և ներուի ինձ ըսել՝ նոյն իսկ առաքինութիւնները — կը կրէին իրենց վրայ անոր բանաստեղծութեան ամենագեղեցիկ ու անպահական կնիքը։

Այիշանը՝ մխիթարեան բանաստեղծութեան Գ. շրջանին կը վերաբերի. մանաւանդ թէ նա ինքն կը բերէր այդ շրջանը, որուն եռանաեռակ տարրերութիւնքը նախորդներէն՝ քիչ յառաջ ըսինք արդէն։ Բազրատունի և Հիւրմիւզեան իրենց գենիթէն խոնարհած՝ բայց դեռ մայրը չմտած ժամանակ, ուրիշ ատղեր կը բարձրանային ազգային նոր գրականութեան հորիզոններու վրայ, որոնց ինչպէս միջամտողն՝ այսպէս ալ գծելիք շրջանը սպառուածէն աւելի մեծ ու փառահեղ պիտի ըլլար։ Այդ բանաստեղծական երկնքի ատղերուն մէջ՝ ամենէն գերազանց փայլ ու փառք տուողը պիտի ըլլար Այիշան. որ — նոյն իսկ 1852–1854 թուականներուն — Մխիթարեան Հարց եռահատոր Տաղերն հրատարակուած պահուն կը ձեար դեռ համեստութեան քօղին տակը ծածկուած։ Այս նորօրինակ երեւութիս բուն պատճառն ինձ յայտնի չէ, և չեմ ալ ուզեր պրպտել, բայց — բերանացի աւանդութեան համաձայն — նա ինքն չէր ուզած յիշեալ հրատարակութեան մեծագիր ու չքեղ ձեւով ներկայանալ հայ հասարակութեան, և կամ լաւ եւս բազմիլ իր կրօնակից հնգաթիւ Մուսայից կամարին մէջ։ Սակայն կրնամ ըսել՝ որ մեր բանաստեղծի մինչեւ այդ ժամանակ յօրինած քերթուածները գէթ՝ թէ թուով և թէ իսկատիպ բանաստեղծութեան տեսակէտով ար-

ժանի էին անոնց մէջը գտնելու։ Յամենայն դէպս՝ մեծ բանաստեղծ՝ կեսոյ ուրեմն Նուագներուն փոքրիկ ձեւով եւ առանձինն կերեւան գալն՝ ոչ միայն ամենուն դիւրամատչելի ըլլալու բաղդ մ'էր, այլ եւ՝ աւելի պատուաւոր դիրք մը պիտի առեղծէր իր համար։ Բայց մենք — առանց ուզելու մտքիս չափ նուազեցնել յառաջիններու արժանիքը — կրնանք ըսել և ապացուցնել, որ Հ. Ալիշանն ազգային բանաստեղծութեան ու քերթողաց արեգակն է։ Յետագայք՝ գրեթէ առհասարակ՝ անկէ լուսաւորութեան ու ներշնչուեցան. և թէ ընդհանուր տեսակէտով ոչ ոք կրցաւ գերազանցել զինքը, իբրեւ ինքնատիպ և տպաւորաւոր բանաստեղծ։

Ալիշան, այսպէս և իր քերթուածներն, հրատարակութեան օրէն ի վեր նիւթ եղած էին միայն համակրութեան և հիացումի. իսկ վերջերս՝ ուսումնասիրութեան և քննադատութեան եւս սկսան ենթարկուիլ։ Երկու հանճարեղ բանասէրներ — մին իբրեւ ներկայացուցիչ Ռուսահայոց արդի լաւ գրողաց, և միւսը տաճկահայ երիտասարդութեան — այնպիսի մեծ համակրութեամբ խօսեցան ու գրեցին[1] մեր քերթողին ու երկասիրութիւններու մասին, ինչպէս որ կը պահանջէին իրենց առանձին համոզումներն և հայ հասարակութեան զգացումները։ Բայց — եթէ չեմ սխալիր — այդ երկու ուսումնասիրութիւնները իսկ, իրենց լրջութեամբ հանդերձ, կենսագրական և ուրիշ ինչ ինչ տեսակէտերով պակաս մը կը թողուն Ալիշանը մօտէն ճանչցողներու մտքին մէջ։ Լէօ մասնաւորելով իր խօսքը Ալիշանի բանաստեղծութեան՝ անոր բնորոշ յատկութիւնը կը դնէ մեկնաղձիկ ու տխրատեսակ ըլլալուն մէջ, ըսելով։ «Իբրեւ երգիչ՝ Հ. Ալիշանը սիրում է մելամաղձիկ տեսակ տրամադրութիւն արտայայտող տողեր»։ իսկ գերազանց արտայայտութիւնը կը գտնէ աչխարհիկ լեզուով գրուած Նահապետի երգերուն մէջ։ Եւ որովհետեւ գրաբարը Լէօյի համար նշանակութիւնը կորսուած, խրթին, խճողուած ու արհեստական լեզու է, ուրեմն այդ լեզուով գրուած Ալիշանի երգերն իսկ՝ չունին առաջիններուն պէս մտքի ու սրտի արտայայտութեան ընդարձակութիւնն ու գեղեցկութիւնը, այլ աւելի բառերու կուտակութիւն։

Լէօյի այդ նախադասութիւնները — պէտք է ըսել — մասնական առմամբ միայն ճշմարիտ կ'երեւին մեզ, և ոչ թէ ընդհանուրին վերաբերելով. դիտելով՝ որ ոչ Ալիշանի բոլոր քերթուածները մելամաղձիկ են, և ոչ ալ գրաբար լեզուով գրուածներն առհասարակ խճողուած ու խրթին,— ի հարկէ գրաբարին տեղեակ եղողաց համար։ Ինչպէս ամէն խորհող ու զգայուն սիրտ, այսպէս նաեւ մեր բանաստեղծը բնութեամբ մենաւէր էր, այո՛, և քիչ մ'ալ մելամաղձոտ, կամ աւելի ճիշդը՝ տխուր. բայց Ալիշանի օծեալ տխրութիւնն՝ յոյժ հեռի էր այն յոռետես և յուսահատ մաղձոտութենէն, որ մղած է Գաւրեաններն և ուրիշ քերթողները կեանքատեցութեան, և երբած վիրենք — գոգցես չատերուն — անհանդուրժելի։ Դեռ աւելի ճիշդը՝ նա առեցող չէր անցաւոբիս, այլ ցանկացող անոնց կենաց։ Եւ ունէր նա բանաւոր պատճառներ ալ՝ տխուր տողեր յօրինելու. և այդ պատճառներն իր բնութենէն ու բարքէն աւելի՝ արտաքին պատահարաց ու անոնց թողած ծանր տպաւորութիւններու մէջ որոնելի են։ Քիչեալ բանաստերը մինը միայն գիտէ. իսկ միւսերը ծածկուած են մեծ բանաստեղծին ու հաւատացեալի խնկելի կենաց ծրարին մէջ։

Գիտի մը աչխարհագրական դիրքն և որպիսութիւնն իմանալու համար՝ պէտք է ճանչնալ անոր ծագումը. այսպէս ալ Ալիշանի բանաստեղծութեան որպիսութիւնը լաւ հասու ըլլալու համար՝ հարկաւոր է նախ ճանչնալ բանաստեղծի ներքին տրամադրութիւնները. երկրորդ՝ միջավայրն և պարագաները։ Ներում ինձ ուրիշին համառօտիս գծել զանոնք։

Մեծ բանաստեղծի կենաց գարունն ու ամառն տեսած չեմ, այլ աշունն ու ձմեռը։ Սակայն ասոնք իսկ ենթադրուածին պէս տխուր չէին։ Անոր՝ հայրենեաց և Հասարակութենան հոգածութենէն տխրած դէմքին վրայ իսկ յաճախ ծագած կը տեսնէր ամէն ոք՝ անմեղ ու համակամ արտի գուարթութիւնն ու ժիտը, մանաւանդ երբ հասարակաց խրախճանք մը, կամ եկաւոր մ'ըլլար։ Այդ անմեղ ու անուշակ ժիտը

---

1. Տես «Մշակ 1901, թիւ 266. — «Անահիտ», Ապրիլ 1902. թիւ 4։

միայն՝ կ'երեւցնէր գինքը աշխարհիս ամենէն գեւարթ մարդը, և իրեն կը գրաւէր ամէն սիրա, սիրտանք մը կ'ազդէր։ Ալիշանի բնաբանական ու հոգեբանական արտադրիչներն իսկ — լուսանկարք ու մանրամէպք — տիրութեան և ուրախութեան խառնուրդ մ'են, և երբեմն ալ կարծէք թէ անոր անցած մանկութիւնը կը պատկերեն. սակայն ես կը փափագիմ հետեւեալ միջադէպին մէջը ներկայացընել զայն։ 1889 թուականին — Պոլիս երթալուս առթիւ — Հ. Ալիշանի կողմէն նամակ մ'առնէի յանձնելիք իր ծերագոյն եղբօրն ու ազգիս նշանաւոր հնագէտ՝ Սերովբէ Ալիշանին. որ և ընդունեցաւ զայն՝ իբր հետաւոր աւրբէ մը եկած նչխարքը։ Չեմ գիտեր, թէ ինչ գողարիկ բան գրած ու գրած էր մեծ բանաստեղծն այդ թերթին մէջ, — որ իր արտէն փրթած էր, — զի խակոյն ուրախութեան արտասուք վազցուց ծերոյն աչքերէն, ու յիշեցուց անոր իր մանկութիւնը։ Երբ ես երանի կու տայի ծերոյն այնպիսի եղբայր մ'ունենալուն համար, նա խորին հառաչով մը բացաւ խակոյն Ալիշանի կեանքի գեղեցիկ առասօտը. Ա՜խ, վարդապետ, եղբայրս ինձի պէս չէր. անիկա անմեղուկ ու սիրուն հրեշտակ մ'էր։ Բոլոր իր մանկութեան օրերուն մէջ՝ մէկ անգամ մը միայն յանցանք գործեց, բայց ան ալ իր համեստութեան արդար վրէժխնդրութենէն մղուած. այսինքն՝ օր մը մեզի խաղակից տղայոցմէ մէկն՝ անհամեստ խօսք մը գուրցեց, որուն եղբայրս ապտակով պատասխանեց, ստրատիեցնելով այն փոքրիկ արիկան։ Բայց, կը յիշեմ, վերջէն այնքան ցաւեցաւ ու տխրեցաւ, որ քիչ մնաց կը հիւանդանար, եթէ ըրածդ ապէկ էր ըսելով՝ մոռցնել չտայինք իրեն։

Իսկ մեր ունեցած տեղեկութեան համեմատ նոյն անմեղութեան տիպար հրեշտակն էր և մնաց Ալիշան՝ բոլոր իր կենացը մէջ, թէպետեւ չորս եղանակներ անցան անոր վրայէն. վասն զի մարդկային կիրքերն ու արիւնը չէին կարող փոխել այն մաքրափայլ հոգին ու հայելանման սիրտը, ուր ի միասին կը բնակէին ու կը հրճուէին Աստուծոյ և մեծ հետաքրքրական հոգին, երկնային հետաքրքիրը՝ կամքի համոզման, ու պայծառ Յոյսը՝ ջերմ Սիրոյ հետ։ Նա մանաւանդ — նեղուի ինձ ըսել — թէ առնչմամբ է՝ որ կը մաքրուէին Ալիշանի մէջ նոյն իսկ բնութեան արարչագիր խղճերն ու կիրքերը. զի գանոնք աչնչացնելու համար ժառանգած չէր բնութիւնն ու բանաստեղծութիւնը, այլ ազնուացնելու ու բարձրացնելու։ Հ. Անդրէաս Ծովիկեանի պէս հոգեկիր վերակացու մ'էր, որ կ'առոգէր և կը զարգարէր այս չքնաղ պատանւոյ հոգեւոր պարտէզը։ Հայագիտութիւնը կ'արծարծէր ու կը բորբոքէր ուսմանց հետ՝ նոյնպէս հայրենասիրութեան սուրբ հուրը. իսկ Հ. Միքայէլ Չէմպէրլիկեան՝ հին ու նոր լեզուներն և գեղեցիկ գպրութիւններն, իր բազմապիսի թարգմանութիւններովն ու թատերախաղերովը։

Ալիշան բաց ի բարեպաշտութենէն՝ նաեւ բնութեան ամենագեղեցիկ ու ամենաքնքոյշ ձիրքերով օժտուած մարդն էր։ Բնականապէս ինքն իսկ — ուրիշ մանկանացուներու պէս — ունէր իր յատուկ զգացումները, մանաւանդ թէ ամէն մարդէ աւելի ջղային էր ու դիւրազգած։ Կեանքի հմայքին հետ՝ արիւնն իսկ կ'եռար ու կը գեռար իր կրակոտ ու ջղոտ երակներուն մէջ։ Ունէր առանձին ըմբռնումներ ու նախապաշարումներ, որոնց հակառակող խօսք մը կամ արգելք մը՝ դիւրաւ կը չիկնէր ու շառագունէր զինքը։ Սակայն այդ զգայուն ու կրակոտ մարդը՝ կարծէք թէ կրօնաւորական վիճակին հետ՝ իր այդ բնութիւնն ու կիրքերը նուաճող ու ազնուացնող չնորհքն ևս երկնքէն ընդունած էր, յատկանական անլուծանելի գաշինքով մը և մինչեւ կենաց վերջին վայրկեանը հաստատուն պահելու. բան մը՝ որ քիչերուն տրուած է։ Այդ չնորհաց չարժումովն՝ անոր մարմինը աւելի զգեցած կը տեսնուէր զհոգին, քան թէ հոգին՝ զմարմինը։ Այդ չարժումով է՝ որ կ'ախորժէր նա խ'ղճ պկենալ, խեղճ ուրիշ ու խեղճ ապրիլ, կարօտելոց նպաստելու համար։ Շատ գժուար էր, պաշտօնէից համար, անոր ձեռքէն հին գրգռեակները կամ կօշիկներն առնուլ ու նորը տալ։ Այդ չնորհքով է՝ որ ոչ միայն կը քակէր կրից ու եսասիրութեան խոր պարիսպները, և գանոնք անձնուիրութեան ու եղբայրասիրութեան կը վերածէր. այլ և կը խեխտէր նախանձի, ատելութեան, սխալալութեան ու անարդ վրէժխնդրութեան հիդրաներն ու իժերը, որոնք այլոց սրտերու հետ՝ գործերն ևս կ'ուտեն ու կ'ապականեն յաճախ։ Վերջին ատիճան ատող էր ցուցամոլութեան, փառասիրութեան ու նենգութեան. վասն զի այս ամենայն հակառակ կը տեսնէր տեառնահրաման «Այո»ին և «Ոչ»ին։ Այնչանի սիրան այնքան պարզ և մաքուր էր՝ այդ և նման ուրիշ հրէշներէ, որ փոքրիկ գովեստէ մ'իսկ այնպէս կը խրոչէր և կը խուսէր, ինչպէս թռչունը՝ հաւահալածէն։

Խոնարհութիւնն ու հրեշտակային մաքրութիւնը՝ անոր ամենէն ազնիւ ու պաշտելի առաքինութիւններն էին։ Շատ կ՚ախորժէր մեծ մարդը՝ մանկական պարզութիւնն ու անկեղծութիւնը. անոր համար մեծի ու փոքրի հետ խօսած ժամանակ՝ անմեղ ու ամչկոտ տղու կերպարանք կ՚առնոյր։ Ի դէպ՝ կը յիշեմ, որ եղած են իրեն այցելող ազգային կոկոզաբաններ, այք այդ կերպը տեսնելով՝ յաւակնօրէն կը վարգապետէին իրեն՝ գիտցածնին, որոնց նա — իրր չգիտցող — համբերութեամբ կը մտադրէր։ Իսկ օտարներէն ոմկն երբ օր մը իր հետ վանքը չրջած ժամանակ՝ մեծ գովեստով և հետաքրքրութեամբ կը հարցնէր, թէ Հ. Ալիշան ինչպէս է, նա վրայ կը բերէր, թէ ողջ է, բայց ցնդած։

Ինքը թէպէտ և նախանձայուզի մը չափ վրէժխնդիր հասարակաց կարգապահութեան և պատուին, և կ՚ուզէր՝ որ խանգարիչները խրատուին. սակայն մեծագոյն կը զգուշանար մահացնելու չափ և է մեկը։ Չինքը չճանչցող ու պարտաւորներուն ոչ միայն հակակրութիւն չէր ցուցըներ, այլ երբեմն երբեմն ձեռքը հասած պարտաւորներն իսկ ուրախութեամբ ուրիշներուն կը հաղորդէր, ինչպէս ատենց հակառակ իրեն չտպլուած գովեստներն ալ գգուշութեամբ կը ծածկէր։ Չինքը սիրող ազգային երիտասարդներէն մին՝ անգամ մը ատանաւոր նամակ մը յղած էր իրեն, ուր իր անչափ սիրոյ ցոյցին հետ՝ խանդոտ ներբողեաններ ևս չտպլած էր։ Այս բանս նախապէս իմացած ըլլալով երիտասարդ վարդապետներն, երեկոյին ձեմարանը հաւաքուած պահուն՝ խնդրեցինք, որ այդ նամակն Հ. Ալիշանէն ուզուի և կարդացուի ի լուր ներկայից. և կարդացուած ժամանակ — լաւ կը յիշեմ — մեծ մարդն այնքան չատագովեցաւ ու մեղացաւ, որ ամենքնիս կարեկից եղանք. և անկէց վերջ կը զգուշանայինք օր և իցէ գովաստական բառ կամ բացատրութիւն հանելու բերանէն։

Ցոյժ գիտած էր և կարեկցող զրկեալներուն. ինչպէս անձնաները նոպատատակաց՝ այսպէս և Ալիշանի սիրտը բաց էր այսպիսեաց. և մերձաւորներու պէս հետաւորներ ևս անպակաս կը գիտէին հոն։ Եւ գինքը ամէն բանէ աւելի հաչող ու մաչող ցաւն ան կ՚ըլլար, երբ չէր կրնար զարման տանել անոնց ու սիտել գառնք։ Որչափ որ իր անձնական չահուն կամ պատուին պահանջող չէր, այնչափ ալ ուշագիր էր ուրիշներուն։ Մէկ խօսքով՝ անընդհատ ցանկացող էր ամենուն յաջողութեանն և յառաջադիմութեանը. ուստի երբ անոր հասած կը տեսնէր իր կրօնակից եղբայրները և կամ ծանօթները, չէր գանգաղեր միշտ գրաւոր և գիւտաւոր կերպով յայտնել իր սրտի ուրախութիւնն ու խնդակցութիւնները։ Ծերուկները կը յարգէր ու կը գուրգուրար վրանին, իրրեւ իրեն կենաց ընկեր և երկնաչու ճանապարհին ուղեկիցներ, մանաւանդ հետուէն եկողները, զորոնք տեսած պէս՝ սրտի անպատմելի ընդարձակութեամբ մը կը ձայնէր, ու տաքի կանգնած կ՚ողջագուրէր։ Իսկ երիտասարդները կը սիրէր՝ սրպէս իր կեանքին ու գործունէութեան յաւիտենական յաջորդները։ Անոնց տարաժամ մահն՝ Ալիշանի վրայ այն տպաւորութիւնը կը թողուր, ինչպէս արեգական բոլորական խաւարումը՝ կենաւնակ բնութեան վրայ։ Թէ Մատթ. Վարժարաններուն և թէ վանքը եղած ժամանակ երկուասանեակներ — մարդկային կենաց այդ ծաղիկներէն — Ալիշանի ջերմ բազուկներուն և շնչին մէջ տուած են իրենց վերջին շունչը, և թառամած։ Սակայն անոնց մեռնելէն յառաջ՝ ինքը քանի մ՚անգամ կը մահանար սրտով, և մեծ անձանօթին մէջը կ՚երթեւեկէր. վերջապէս իրրեւ մխիթարիչ հրեշտակ՝ անոնց հոգին Աբրահին կ՚առնդէր։ Ա՛ր և է պատաշարժ վիպասանութենէ վեր էին Ալիշանի այդ վայրկեանները. անկարելի է նկարագրել այն տաքիւ անոր կրած յուզմունքը, զորս տեսեր և լսեր եմ։ Վերջին տասիճան դիտող էր, և բնութիւնը բազմակ անոր դիտողութեան առարկայ։ Տեսնելու բան էր — պարտիզի մէջ — նոճիներու և դափնեվարդներու տակ անոր խորհրդաւոր կերպով շրջիլն ու խորհիլը։ Բայց ամենէն աւելի բոյսերն ու ծաղիկները կը հրապուրէին գինքը, մանաւանդ իր կենաց ձմրան մէջ. որոնցմէ գիշեր ցորեկ, ամառ ու ձմեռ կը պահէր իր սենեկին մէջ։ Երկու տարի յառաջ՝ ինձ մագնոլիայի թերթ մը տուած էր, որուն վրայ 1850 թուականը նշանակուած էր. այս՝ Խոտիա երած ճանապարհորդութեան այնքան յիշատակներէն մին էր։ Այս իսկ պահս կը յիշեմ միշտ, գի մեռնելու նախընթաց օրը՝ ոչխարի կոկոն մը գտած էր՝ խոտրած ծաղիկին տարբեր, զոր յաղթանակով մը ուրիշին ցուցնելով՝ կ՚անցնէր ուրախ։ Ա՛վ գիտէ՝ ինչ կը մտածէր...Նոյեմբերի 21 էր։ Նորեկ մանուկներու կենդանա-

գէր պատկերներն երկայն տարիներ քովը պահելէն վերջ, չէր մտնար՝ գանել և յարմար առիթին անոնցմով իրենց անտկնկալներ պատճառել։ Կան հազար ու մէկ մանրավէպեր, որք եթէ պրի առնուին, առատ էջեր պիտի պրաւեն։ Աֆտաթիկ Ալիշանի — իբրեւ հատատացեալի — ներքին տրամադրութիւնները։ Տեսնենք բանաստեղծը։

* * *

Բնութեամբ մեր բանաստեղծն այնքան խօսուն չէր որքան խոհուն և դգայուն։ Թէ բնական և թէ գաղափարական կարգի մէջ ամէն բան մեծ և հրաշալի կը տեսնէր, կը գոյր կ'ըմբռնէր։ Սովորական մտհկանացուներուն չնչին երեւցած բանն՝ իրեն համար անսովոր տպաւորութիւններու և խոհումներու առիթ էր և ազբիւր։ Ան դիտած է հայելանման լճին վրայ հեզանոզ առհող կարապն ու ծառաստաններու մէջ թեւածող ու թռչնուող սոխակը, անշուշտ պիտի չվարանի ըսել՝ թէ բնութեամբ տարբեր ձիրքերով օժտուած արարածներ են. սակայն երկուքին եւս զգացման դեղեցիկ աշխարհը՝ սէր՝ նոյն է, թէպետեւ մէկն իր կարտկնաձեւ պարանոցի չնորհալից նազանքովը, խորայոյզ ու անուշ նայուածքովն ու խորհրդաւոր լռութեամբը կ'արտայայտէ իր այդ ներքին աշխարհը. իսկ միւսն՝ իր կրակոտ բնութեամբը, երազաշարժութեամբն ու օդը և անտառը հնչեցնող դայլայլիկներովը։ Ահա այսպէս ալ կրնանք ըսել Ալիշանի համար՝ որ — թէ իբրեւ հատատացեալ և թէ որպէս բանաստեղծ — սէր կ'արտայայտէր գեղագանգրէն, ըլլայ այն առաւտածայրին, ըլլայ համամարդկային կամ բնական. և կ'արտայայտէր թէ իր երիտասարդ խանդոտ հասակին և թէ ծերութեանը մէջ։

Ալիշան իր արտաքինովն իսկ բանաստեղծութեան արտայայտութիւն էր. անոր նոճիի նման ուղղաբերձ ու նուրբ հասակը, հերապանծ գլուխն ու ապզոնեան ճակատը, խոշորագեղ ու անուշահայեաց աչքերը՝ մէլամենեան անուշ տխրութեամբ մէկ կողմէն, և միւս կողմէն ալ անմեղութեան ժպիտովն — իրեւ լուսատուներով — օծուած դէմքը, ինչպէս նաեւ խոհումնալից և դգացումներու մէջ ընկղմուած լռութիւնն, այլոլք հանդերձ, կը յօրինէին բուն բանաստեղծի դիմագծութիւնքը, ներքին ու արտաքին արտայատութիւնները։

Ժամանակը, միջավայրն ու պարագաներն եւս ի նկատի առնելու ենք, որոնք կը նպաստէին Ալիշանին՝ նաւիրելու ինք զինքը քերթողութեան։ Նախ և յառաջ մեր բանաստեղծը կը սկսէր Մխիթարեան գրականութեան ասկեդարուն մէջ, երբ ճաշակաւոր պուեաններու գործերն ու դէպ ի գեղեցիկ դպրութիւնները ձկտող ակադեմական մրցութիւնները խիստ վառ էին ու տենդոտ։ Իսկ Մուրատ ու Ասխայէլեան դպրոցներու բացումին, և Հայոց բանասէր ծաղիկներուն — չորս հողմերու վրայ — Եւրոպա գալն և ժողովիլը մէկ կողմէն, և միւս կողմէն ալ «Բազմավէպի» և ուրիշ աշխատասէր թերթերու վերելեւումն ու գրական և քաղաքական շարժումները, «Համազգեաց», «Արարատեան» և «Արշարունեաց» դպրոցասէր ընկերութիւններու հաստատումն ու նոր պուեաններու յայտնուիլը, բնաշխարհէն վերագարձող ազգային ու եւրոպացի ուղեւորներու բերած լուրերն և տեղեկութիւնները, իտալական ժողովրդեան՝ իր քաղաքական անկախութեան համար ըրած շարժումներն, և Պայրընի հետ եւրոպական ռոմանտիկ բանաստեղծներուն ու վիպասաններուն յաճախելը՝ մէկ մէկ զօրեղ ապդակներ էին Ալիշանի դիւրազգաց սրտին ու բազմաչեայ հոգւոյն։ Ո՞ր թողունք բանաստեղծին Եւրոպայի զանազան կողմերն ըրած ուղեւորութիւններն [1] ու անոնցմէ

---

1. Ախրինքն են՝ 1850ին Ջատագովական դատի մը համար Հռոմ կը դրկուէր, ուր յաւիտենական քաղաքի հնութեանոսական ու քրիստոնէական հին յիշատակներովը կը ներշնչուէր։ 1851ին Վիրգիլիոսի հայրենիք՝ Մանտուա կը ճանապարհորդէր, և իտալական կապուտին ու անոր դրախտանման վայրերու անմոռանալի տեսարանները կը նկարագրէր, և իտալական կապուտին ու անոր դրախտանման վայրերու անմոռանալի տեսարանները կը նկարագրէր։ Յամին 1852 — Անգլիական ընկերութեան հրաւիրով և մեծահանճար գեղարուեստներով կը յափշտակու

կրած տպաւորութիւնները։ Ո՞ր թողունք Ս. Ղազարու մէջ այնչափ չքեղութեամբ կատարուած ծէսերը, մանկական, տխրական ու հայրենական յիշատակներն, իր կեանքի վրայէն անցնող քառասնոլով հասակի ու վիճակներու բերած ալիքներն ու զբօսանքը։ Այս ամենայն այնպէս կը ծանրանային Ալիշանի հոգւոյն ու սրտին՝ ինչպէս Թծնուտ ամպերը՝ մեր հորիզոնին վրայ։ Թող բնաւ ուելորդ չհամարուին մինչեւ այստեղ բաածներս, վասն զի ասոնք կը կազմեն մեծ հաւատացեալին ու մեծ բանաստեղծի բոլոր ստեղծուածներու ծննդաբանութիւնը. մանաւանդ թէ ասոնցմով՝ իրեւ նախաստեղծ լուսով՝ պիտի մեկնուի անոր բանաստեղծութեան թոխրոխը։

Ստուգիւ՝ այսպիսի միջավայրի ու պարագայից մէջ, և այնքան տրամադրութիւններով ներշնչուած, կը բանար բանաստեղծական մեր հսկայն՝ իր պարթեւական սրտի լայնալիճ ապեղն, ուակից կը թռչէին — նմանը չի տեսնուած խանդով ու ոճով — սիրոյ նետերը, և կը պատռէին ծանրաբեռնուած մթնոլորտը՝ նոր երկինք մը պարգելու համար համհարզից և համամարդկային բանաստեղծութեան։ Եւ անոր բեղնաւոր ու երկնաթռիչ հանճարի որոտացող շանթերը տարրալուծելով երկինից ու երկրի հետ՝ կ'արտադրէին այն անթիւ քերթուածներու տարափը, որուն 5 հատոր «Նուագներն» ու երկհատոր «Յուշիկները» մեծագոյն մասը կը կազմեն, այո՛, բայց ոչ թէ բոլորը բովանդակ։ Ինչպէս գիտէք, կան ալ՝ որ «Բազմավէպի» էջերը կը զարդարեն։ Կային դարձեալ շատեր, որ կը ծնան առանձնականաց քով, և բանաստեղծը սիրողներու յուռութուլունքն ու բժժանքը կը կազմեն։ Ազգային բանաստեղծ մը չկայ՝ որ Ալիշանի չափ նիւթեր երգած ըլլայ։ Միայն առաջին անգամ տպագրուած «Նուագները» կը պարունակեն 365 քերթուածներ, առանց հաշուելու գերեզմանական հատուտ արձանագրութիւնները։ Վերջէն եղած տպագրութեանց մէջ իսկ՝ շատ նոր արբագրութիւններ ու յաւելուածներ եղած են. և որ ցաւալին է — լուծիս համառձան — շատ բաներ ալ ինկը չհաւնելով՝ պատռած նետած է, որոնց մէջն է եղեր գժբաղդաբար «Տրդատայ կամ Հայոց գարձին» վրայ յօրինած ու կիսատառ թողուցած Դիւցազներգութիւնը։ Ա՛ս ալ ըսենք՝ որ Ալիշան օտարազգի նոր բանաստեղծներուն մէջ իսկ՝ ոչ միայն նիւթոց քանակութեամբ առաջնակարգ տեղի մը պիտի գրաւէր, այլ եւ արժանիքով, եթէ այդ ճիւղովը միայն գրազած ըլլար։

Ալիշանի բացորոշ վկայութեանը համաձայն, (տես «Նուագ», Ա. հա. Ազգ) այդ 365 քերթուածները միայն առանձնահինգ տարիներու քերթողական ժամանցքներու ծնունդ են — դիտելով որ՝ նա միաժամանակ կը վաստակէր նաեւ ամենաւերջ երկասիրութեան մը, այն է՝ Բնիկ հաւուր աշխարհագրութեան վրայ, որ պիտի լինէր իր երիտասարդութեան աշխատութիւններու գլուխ գործոցը։ Նախ անոր համար՝ որ այդ քերթուածները կը ներկայացնեն մեզ մեծ բանաստեղծին ու հաւատացեալ առոյգ կենաց պատկերը, բոլոր իր ներքին և արտաքին ներշնչութիւններովն ու տիեզերական տպաւորութիւններովը։ Երկրորդ՝ անոնք պիտի ըլլային որպէս անսպառ աղբիւր և ներշնչող բոլոր իրեն յաջորդող և նոյն իսկ ժամանակակից ազգային քերթողներուն ու հայրենական բանաստեղծութեանց։

Մեր հսկայ բանաստեղծի այդ ամենապատիկ ու նուիրական հատաքածոն, այսինքն են՝ «Նուագները» եթէ ժամանակագրական կարգաւ դասաւորուած ու հրատարակուած ըլլային, կամ գէթ ի տարեւ մէնմիոյն եթէ յօրինման տարեթիւը նշանակուած լինէր, այն ժամանակ շատ աւելի դիւրին պիտի ըլլար ասոնցմէ — իրր առդրամատերէ — մեր բարձրանալ Ալիշանի քառյատաջ կեանքին, բանաստեղծութիւններն արտայայտող գաղտնի զօրութեան և անոնց ներքին իմաստից։ Բայց գժբաղդօրէն անոնց մի մասն անթուական են. իսկ որոշ թուական ունեցողներն՝ ըստ նիւթոց բաժնուած լինելով, դուք կը տեսնէք նօթն հատորներու մէջ եւա՝ մի և նոյն

վերջին թագաւորին Լեւոն Զ-դի դամբանէն ներշնչուած՝ անոր յիշատակը կ'անմահացնէր, իր տաղերգութեամբը։ Սակայն այս պատգամաւորութեանն՝ իրմէ անկախ և անլսելոց ուշքն ու Հ. Գաբ. Ալիշատակոյ — զոր շատ կը սիրէր և կը յարգէր Ալիշան — Մխիթ. Մխիթարեան Թենէն հատուելը՝ կու տային անոր զգալուն սրտին, կրնամ ըսել, ամենէն մեծ և խորագոյն հարուածը, զոր ունեցած էր նա իր կեանքին մէջ։ Այդ անակնկալ հարուածն՝ այնպէս կը ցնցէր ու կը խանգարէր բանաստեղծի առոյգութեան հետ՝ նոյնպէս և բնութիւնն ու բարոյքը, և գինքը մարդիկներէն քաշուող կ'ընէր, զոր յետոյ, այն է՝ 1858–1861, Մուրատեան վարժարանի Տեսչութեան ու Ֆրանսայի բազմադղօրդ ոստանին մէջ անցուցած փառահեղ ու յաջող օրերն հազիւ կարող կ'ըլլային բուժել իր սրտաբեկ տխրութիւնը։

տարիներու և տիրոջը վէմ յօրինուած քերթուածներ։ Սակայն մեր խուզարկութեան դէմ ելած այն դժուարութիւնը՝ դէթ մասամբ մը կը դիւրացնեն որոշ թուական ունեցող այն բազմաթիւ քերթուածները, զորոնք յօրինած է նա իր կենաց զանազան հասակի և պարագաներու մէջ։

Կարծուած է՝ որ Ալիշանի բանաստեղծական գործունէը չատ կանուխէն բացուած ըլլայ, այնքան թէ՝ նա 19 տարեկան հասակէն, այն է 1839 թուականին սկսած ըլլայ երգել, և 1954ին ուտատել զանոնք, այնքան է կենաց 34 ամաց հասակին մէջ, — դիտելով՝ որ «Նուագներուն» մէջ հաւաքուած քերթուածներէն վերջինները այդ թուականէն ասդին չեն անցներ —։ Եւ իրօք անոր յիշեալ 15 տարիները յաւելցնելով 1839 թուականին վրայ, կը հասնինք ճիշդ 1854 թուականին։ Սակայն եթէ խորհինք — և կայ բանաւոր պատճառ այդպէս խորհելու — որ բանաստեղծն համեմատօրէն արժան դատած չըլլայ՝ իր ուսանողական ընթացքին մէջ յօրինած ոտանաւորներն այդ հաւաքածոյին մէջ մտցնել, այն ժամանակ կարելի է եզրակացնել՝ որ նա՝ նոյն իսկ իր կենաց 16–17 տարիներու մէջ զանազան երգեր քերթած ըլլայ. այնու ամենայնիվ՝ որ անոր բանաստեղծական գործունէը՝ կենաց գարուն մանկութենէն անբաժան էր։ Իսկ եթէ «Նուագներու» վրայ միայն հիմնուած՝ ըստ այնմ ուզենք դատել, այն ժամանակ հարկ կ'ըլլայ ըսել՝ որ նա ոչ թէ 19, այլ 20–21 տարիներուն մէջ սկսած ըլլայ իսկապէս քերթել. որովհետեւ այդ հաւաքածոյին մէջ երկու քերթուածներ միայն կը գըտնուին, որոնք 1839 թուականին գրուած են. իսկ մնացածները 1840ին, 1841ին, և այլն, կը յաճախեն։

Մեր բանաստեղծին հետ՝ իր գործերու վրայ իսկ նախագաղափար մը կազմելու համար՝ մակարերեցէք տեւտոնեան ընդարձակ ու դիտող միտք մը, որ անյագ տենչով ու հակայ թեւերովը կ'ուզէ նետուիլ անհունութեան մէջ. և կը ձկտի միշտ դէպ ի տիեզերական ամբողջը՝ ամէն բան իմանալու և իր ծարաւը լեցընելու համար։ Մակաբերեցէք դարձեալ, հեղէն կամ իտալական գերզգայուն ու խանդակաթ սիրտ մը, որ կը զգածուի ամէն բանի առջեւ, և կ'ուզէ զգալի ընել զայն ամենուն։ Եւ ահա այն մեծ ու անզուգական հայն, որ մտքի և սրտի այդ լաւագոյն ներկայացուցիչները գեղանց կերպով իր անձին վրայ կը միացնէր ու կ'անձնաւորէր, է՝ նա ինքն Ալիշանն ու Հայոց առաջին բանաստեղծը։ Այս բանս ուրիշ ապացոյցի կարօտ չէ, քանի որ անոր ապրած ու անտիպ գործերն՝ ոչ միայն թուով ու քանակութեամբ, այլ նոյն իսկ նիւթոց զանազանութեամբը, բարձր ծանօթութիւններու և ամենազնիւ զգացումներու տիեզերք մը ներկայացուցած են արդէն. բայց տիեզերք մը, ուր բնական ու բնազանցական իսոր ճշմարտութեանց հետ՝ կը վսեմն ու կը փայլկատան բանաստեղծական, գեղեցկակրական առարկաներ ու չուչաններ։ Եւ այս վերջին յատկութիւնները միայն «Նուագներուն» և «Յուշիկներու» սեպհականութիւնը չէ՝ որ կը կազմեն, այլ նաեւ միւսբուն՝ մինչեւ «Արշալոյս քրիստոնէութեան ի Հայս»։

Բայց ես ուրիշ բան մ'եւս պիտ՝ ըսեմ, որ գուցէ նոր թուի լսելեաց. և սակայն այդ նորութիւնը մեր բանաստեղծն ինքնին իր համբուրելի մատամբը դրոշմած է արդէն իր յաւիտենական էջերուն[1] մէջ։ Այս ինքն է՝ հաւատացեալ Ալիշանի այդ բարձրաթռիչ հանճարն՝ որ — նմանութեամբ զինքը առեղծող Հոգւոյն — կը սաւառնէր զիտ, ու կը դրդար նորահայած բնութեան ու սրտին վրայ, այդ կը ներկայացընէին այն անպատում իղձերու և երազներու թոհրոհը, որպիսիք էին բնութիւնն ու բներեւոյթները, կրօնքն և կրօնականները, հայրենիք ու հայրենականք, Աստուած ու աստուածները, ծայինք։ Կ'ուզէր նա ստեղծել, կ'ուզէր յագթել զժուարութեանց. բայց այդ իղձերն ու երազներն իսկզբան աննկարագրելի եռուզեռով կը մրցէին իրարու հետ՝ բանաստեղծին մէջ. վասն զի անանցմէ իւրաքանչիւրը՝ կը ձկտէր օր մ'առաջ իրականանալ ու արտաքս զեղանիլ։ Ահա՝ այս պատճառաւ մրցման մէջ էր նոյնպէս անոր Քրիստոսն սիրտը՝ մտքին ու հանճարի հետ։ Նա կ'ուզէր թիթեռնիկի նման ամէն ծաղկի վրայ հանգչիլ, ու արբենալ սիրալիր բնութեան նեկտարովն. իսկ ան՝ իր լուսաւոր ու ամենափափուկ գիտակցութեան պրպմամբը՝ չէր կրնար ու չէր ուզեր զգալի բնութեան անձուկ սահմանին մէջ պարտանգիլ. ուստի միշտ կը տագնապեցընէր զինքը՝ նոյն իսկ իր ամենանուեղ ու

---

1. Տես Նուագք, էջ 918–919։

պարզապէս գեղեցկագիտական երազներուն մէջ, և կը մղէր դէպ ի գերերկրայինն ու աներեւոյթը։ Եւ այդ մրցումն ու մենամարտութիւնն այնչափ ուժգնի կը սաստկանային բանաստեղծին ու կրօնաւորի, Թունդ հաւատացեալին ու մեծ դիտողին և սիրողին մէջ, որչափ կը փոխուէին ու կ'ընդարձակուէին Աստուծոյ կեանքի պայմանքն ու պարագաները։ Միտքս աւել չհատկցուելու համար՝ միանգամ եւս ըսած ըլլամ, որ մեր հրեշտականման բանաստեղծին մէջ մղուած այդ մենամարտը՝ բոլորովին անկախ է այն գործերէն ու աննման այն մենամարտութիւններուն, որոնք կը մղուին մեղսասէր ու մեղսամած հոգիներուն մէջ։ Մէկ խօսքով՝ երկիւղած խղճի և խորշումի պայքար մ'էր։

Բանանք «Տխրութեան» էջերը, հարցնենք Նժդեհ ատոմն. և նա ինքն այսպէս կը նկարագրէ իր այդ պայքարը.

«Աստենայն կիրք կըրկնավըտակ
Խաղան ընդ դուրըս սըրտափակ.
Մին երկնապող ցայտէ ի վեր,
Միւս խորտոյզ յատակս եւ յերդ.
Երկաւոր քընար, սըրտին խմոյ,
Մի լար սըգոյ, մի լար սիրոյ.
Երկու ձայն յար ընդ սիրտ բախին
Ու ի մի բարբառ զուգահառնին»[1]։

Յէջ 12 կը հարցնէ մանաւանդ նա ինքն իրեն, թէ «Ընդէ՞ր տրտում ես անձն իմ». — Եւ կու տայ վիրաւոր սրտի անդրադարձ պատասխանը.

«Զումարեալ ինքնդ ի յինքեան
Հրաժեշտ ի բնաւ կենցաղոյս,
Չատեալ աշխարհ քեզ ունայն՝
Մըխիս եւ դու յալս անգոյս.
Կապեալ են ոտք կըրից քոց,
Դադարեալ Թունդք եռանդեան.
Աստենայն կիրք յանքոյթ ծոց,
Աստէն հառաչք ի լռութեան»։

Իսկ առ Հոգւիկն մեղմիկ ուղղած երգին մէջ կը գոչէ.

«Քանդի պանդուխտ եմ ես, ո՜հ,
Ոգի տըկար և տըժգոհ.
Միայն հիքոյս մըխիթար
Ինքն է հոգմոյս ճանապարհ,
Ընդ որ հառաչ առ հառաչ
Մըղեմ ըզսիրտս իմ յառաջ»։

Վերջապէս, յէջ 168 «Պաղթանքի»ի, Պարսիկն և հոգի խորտրուած երգին մէջ երկաքանչիւրին հակառակ ձկտումները մէկ կողմէն, և միւս կողմէն ալ մերթ մօտէն ու մերթ հեռուէն հնչուած սիրական ձայնը նկարագրելէն վերջ, որոշ կերպով կը գոչէ.

---

1. Տես. «Տխրանք» էջ 17։

« Իսկ իմ ափշեալ ընդ ձայնն այն
Եւ ընդ երկրիս ամբոխ լայն,
Մինչ աչս յերկուս յածեմ կոյս՝
Ընդ ո՞ր առնել զհետս հոգւոյս,
Հանապազագնացն ամանակ
Անդուլ առնէ չըկօթակ.
Գամ քան ըզգամ մերձի մահ,
Սասանի սիրտ ահ ընդ ահ.
Եւ երեւին յաւխտեանց
Ափունք ու անդունդք անթափանց »։

Այս ահաւոր մենամարտութեան, այս անորոշութեան ճգնաժամին մէջ Ամիշան ալ ուրիշ կռուան չի գտներ իր ոտից՝ բայց եթէ հաւատքի անսասանելի ժայռը. ուրիշ ապաւէն ու օգնական չի տեսներ, բայց ի ամենակարող Աստուծմէն, որ ստեղծեց, կը ճանչնայ և ունի իր ձեռքին մէջ մարդկանց սիրտն ու կամքը։ Վեհագիտակ արարածը՝ բոլորովին անձնասուր կ'ըլլայ իր Արարչին գիրկը՝ որդիական ու անկեղծ վստահութեամբ, և մենք կը լսենք անոր նուագեալ ձայնը.

« Ահա ծածկին ոլորք յետուստ, ներկայս կէտ
Է՛ անկայուն ինձ պատուանդան ոտընթէք։
Ահա գայթեալ ի կենաց... ո՞ւր անկանիմ...
Ի քեզ, հանուրց ժամանակաց Աստուած իմ։...
Այլ դու Հաստիչ, և յայս ծուփ՝
Կարես, ծագեա՛ զլոյս մեռուղիս.
Կարկառ զյուսոյդ զառաստան
Զկապն իմ միակ անսասան.
Կառո՛ զսիրոյդ աստղ անշէջ,
Որ յորձանաց յածեալ մէջ՝
Հանից ըզկեանս ըզգուչեաւ
Ընդ մահուն լայն հովանեաւ.
Թռուցից զհոգիս ի քո ծոց,
Ո՛վ Տէր, հանգիստ ծըփելոց,
Զոր ընդ արտօսր արդ դիտեմ.
Յուղուլ կենաց ծովաճեմ.
Ա՛հ, ո՞րբ անցից ընդ կոհակս
Պատահամբար ի նաւակս »։

Այսպէս ահա կը վերջանար Ամիշանի ներքին մենամարտն ու մրցութիւնը. մեծ հաւատացեալը՝ յաղթական կը հանդիստանար — միանգամ ընդ միշտ — մեծ բանաստեղծին վրայ։ Իսկ բանաստեղծը՝ կը լուսաւորէր հաւատքին անճառահրաշ լուսովը, որ միայն կարող է բարձրացնել իմացական հանճարին հետ՝ նաեւ դիւրագած ու դիւրագոյթ սիրտը։ Ասով է՝ որ բանաստեղծի հաւատքին պէս՝ կամքն ու համոզումները իսկ կ'ըլլային այնուհետեւ կրանիտեայ ժայռէ մ'աւելի կարծր ու անտեղիտալի, Վեթանեանների աստուածային Տաղնապեալէն ընդունած այն գաղտնի զօրութեամբը, զոր կը տածէր մինչեւ իր յետին շունչը։ Յոյսն ու ակնկալիքը՝ արեւէն աւելի պայծառ, որով կը տեսնէր ինչպէս երկրիս վրայ՝ այսպէս և երկինքը անհուն և անպատում գեղեցկութիւններ։ Իսկ սիրան ու սէրը անմահութեան շնչովը արծարծուած ու բորբոքուած՝ անչիջանելի պիտի մնային մինչեւ ծերութեան ցուրտ ձմեռն ու մահը։ Ասով է՝ որ Ամիշանի երեւակայութիւնը նորանոր թռիչներ կ'առնոյր՝ գալու և պատկերելու. գաղափարներն անսովոր ցայտեր կը ցոլացնէին. բարբառը կ'ըլլար այնքան կենդանի և ազդու. իսկ տաղերն ու տողերը՝ կ'ունենային այնպիսի համոզիչ ու հմայիչ շեշտ մը։

Արեգակնային դրութիւնը կազմող դանդաւածին համար բաւած է, թէ իր կապային լոյծ վիճակէն, իր նախկին տագնապէն ելնելէն վերջ՝ ալ նոյնը չէր. բիւրաւոր բևեռներու և պարէններու կը վերածուէր։ Իսկ մեր բանաստեղծն՝ իր ներքին աշխարհի տագնապն ու տարակուսանքը լուծելէն վերջ իսկ՝ կը մնար պնդակապտ ու անբաժան իր ամբողջութեանը մէջ. դի անոր սիրան ալ, միտքն ալ ամբողջապէս կը ձգտէին ու կը շարժէին այնուհետեւ՝ սիրել և երգել զԱստուած ու աստուածային կրօնքը հրաշալի ներդաշնակութեամբ։ Սիրել ու երգել հայրենիքն ու հայրենական-ները, բոլոր բնութիւնն ու բանականները։ Այիշանի համար չկայ կէս. նա ամէն բան իր ամբողջ հոգւոյն ու սրտովը կ'ոգէ, կ'երգէ ու կ'ողբերգէ։ Ինչպէս անոր մտքի ճառագայթներն՝ այնպէս ալ սրտի բոլոր հրայրքն ու խանդաղատանքը կը սփռին հաւասարապէս, Վերտառն Լսակէն սկսեալ, որ է հաստիչ և հաստատութիւն, մինչեւ այն չնչին արարածը, որ կը կազմէ արարչութեան շղթային վերջին օղակը։ Նա չքաշուեր բնաւ երգել բնաժին սէրն ու զեղը՝ բնութեան յաւուրք լեզուալն ու թելադրութեամբ։ Նա մահկանացու բնութեան ցաւերուն և ունայնութեան թելը հիւսած կամ քանած ժամանակ՝ ախորժին կ'ողբայ և կը մնչէ. բայց ուր որ պէտք կայ ազգի կամ գաղափարի յաղթանակը կանգնեցնելու՝ յաճախ կը լանցնէ — գուռ պատերազմողի մ'արութեամբ — իր պղնձակուռ շեփորի ձայնը, զրդռեցնելով, կարծէք, մեր արեան-ները հետ՝ նոյնպէս հին գարուց յիշատակներն։

Սակայն որպէս արարչութեան՝ այպէս և մեր բանաստեղծի այդ ազնիւ զեղմանց միակ նպատակն ու կեդրոնն է Աստուած, զոր կը յեղյեղէ գրեթէ ամէն երգի մէջ կամ վերջը։ Երկիրս պատուանդան մ'է այդ անպարագիր էութեանն ու գործութեան. իսկ բնութիւնը, կեանքն ու վայելչութիւնները թէպէտ և իրական՝ բայց անցաւոր խաղեր են, որ կը ներկայացուին այդ բեմին վրայ ու կը վերջանան։ Ահա ասով և ասոր մէջն է, որ այնքան զեղեցիկ կերպով կ'արտահայտի Հ. Այիշանին և իր առեղծարանութեանց կատարելութիւնն ու կոպարը։ Ասոր համար է՝ որ այնքան յափշտակիչ են և հրապանգիչ անոր երգերն. և այս տեսակէտով է՝ որ մենք պիտի գնահատենք զանոնք։

* * *

Նիւթական բնութեան պէս՝ բանականն իսկ ունի իր կենաց գարունը. և այդ ժամանակն է՝ որ կեանքը կը վերընձիւղի բոլոր իր փափուկ արտայայտութիւններովն ու բուրումներով։ Ինչպէս քիչեր ունեցած են Այիշանի բեղնաւոր կեանքը, այպէս ալ անոր կենաց զեղեցիկ արտայայտութիւնները, որոնց առաջին երախայրիքն են բանաստեղծութիւնները։ Ճշմարիտ է՝ որ Այիշան իր կենաց գարունին, այն է 19ամեայ հասակին մէջ սկսած է հնչեցնել իր քնարի ձայնը. սակայն երեքէն չորս քերթուածներ միայն կը գտնենք «Նուագներուն» մէջ, որոնք ճիշդ այդ ժամանակին կը համապատասխանեն, դի կը կրեն 1839 Թուականը։ Բայց դիտելով՝ որ 1840–1841 Թուականներուն մէջ յօրինուած քերթուածները թէ Թուով և թէ որակով գերակշիռ կը հանդիսանան, հետեւաբար՝ պէտք է եզրակացնել, որ Այիշանի բանաստեղծութեան գարունը բացուած և ծաղկած է իսկապէս իր կենաց 20–21 ամեայ հասակին մէջ. այսինքն՝ երբ կ'անցնէր նա իր վանական նեղ ու անդորր շրջանակէն՝ դպրոցի և գործակատարութեան լայն և գործօն պարուրակին մէջ։

Մեր բանաստեղծն այդ ժամանակ կը զգար ինչպէս իր՝ այպէս և գինքը շրջապատող հոյ պատանեկութեան մէջ գօրաւոր ձգտում մը դէպ ի հանուրց մայր բնութիւնն ու բնական երեւոյթները։ Նա իր սրտին ներտպող այդ գօրութիւններն երգելու համար՝ ուրիշներու պէս պէտք զգացած չէ բնաւ՝ կոչ ընելու այս ինչ կամ այն Muսայիին. նա լուռ է յայտ։ Այս բանս յայտնի նշան է, թէ նա ինքն էր և՛ Muսայ և՛ գերազանց քերթող։ Ասոնք խառնելով իր առաւածային շունչը՝ չորս հոգիներուն, գետոց և աղբերաց կարկաչին, ներդաշնակելով իր լուսաժպտող հանճարը՝ արփւոյն ու ստղերուն, կ'երգէր և կ'երկնէր ամենէն յառաջ իր Բնութիւն։ Այիկայ բնութեան և բանաստեղծութեան այն մտերմացած ու հոգիացած հասարն է, ուր երբեմն

վճիտ ու բիւրեղեայ լճի մը մէջ կը պարեն և իրարու հետ կը մրցին երկինք, երկիր ու հանճար։ Ջով Ջեխիւսը կ'ընթանայ մերթ որպէս աւերհանդեակ լուսոյ, իբր կարապետ այգուն, և մերթ կը զովացնէ ամենէն արեգակեան կիզիչ ջերմութիւնը, և ցօղատարափ թեւերովը կը փարի մարգերու և մարմանդներու պարանոցին վրայ։ Չոն կը փայլի ոչ կապուտակ, ոչ սեաւ և ոչ ալ ալիւտակ, այլ լուսաբեր մի անուշակ, որով երկինք կը զառնան մանուշակ, ան ինքն է Աժիշանի Աղաւնակը։ Անոր անպէնէն կը նաւագին առագները, կը նաւագի լուսին, և սիրը կը պատրաստակ անոր գարգը երփնագգեստ։

« Եւ Աղաւնակն ի գետ կուգին
Գոգանոյ գրիւս յառնել համեստ »։

Կը ծագի Արեգակը, կը ձգուին ագեւիններան ամենամուկ գորգերը սիամանեան սիներուն վրայ, ու արեւելեան ճօճուն կամարները փողփողելէ կը տատանին։ Կը տարածուի գուարթաբար Աչառօտը, և մեր քերթողը ձեռքը ծնօտին վրայ ու յետած յողթ կամարին — որուն տակէն կը գեռան արտաքին կիզիչ ջերմութիւնը, և ցօղատարափ թեւերովը կը փարի մարգերու և մարմանդներու պարանոցին վրայ։ Չոն կը փայլի ոչ կապուտակ, ոչ սեաւ և ոչ ալ ալիւտակ, այլ լուսաբեր մի անուշակ, որով երկինք կը զառնան մանուշակ, ան ինքն է Աժիշանի Աղաւնակը։ Անոր անպէնէն կը նաւագին առագները, կը նաւագի լուսին, և սիրը կը պատրաստակ անոր գարգը երփնագգեստ։

« Ծաղկունք՝ գլուխերք առուտու
Մըչտապըսարճք՝ յայգուն պահու
Խընդապատառ չըրխչըրխչեն բիր,
Յաւերժհարսանց պըճնեալք ի տիպ.
Լայնեն ըզգոգ յերփնեներանգ ծիր,
Ալգեալ բաժակ հիւբեխանց ժիր.
Ըզնեկտարին ձուխեալ ծըրար՝
Գաղցրիկ բեռամբն յուղիլ ի չար,
Ի վեցարդեան ամբարանոց
Տանին կուտեն գերկին խմոտանոց »։

Իսկ Միջօրեն — իրրեւ հսկայ աուբնջեան — իր ոգոտ առագարիգի կէս ընթացքին մէջ՝ մէկ մը կը չորացնէ իր ոսկեկուռ վահանն, ու մէկ մ'ալ կ'ընծայէ ուղեւորին, ինչպէս և անատառաց երաժշտին, իր աուեւրական բազմոցն ու բացուելիքը, առաջնելով գայն քնքոյշ պուրակներուն ու ջերանց ծմակներուն վրայ։ Աւսոի Աղեւնուտ — « իրրեւ հնացեալ լեռներու ուրուական տիպեր — առաջապահեմ գաշտերուն վրայ են ինկեր »։ որոնց մէջ արշաւասոյր առուները կը փայլին՝ փաղփլունալ թխաթոյր, իսկ երկինքը կը չափէ նա մերթ իր հսկայ պայծառ, և մերթ իրեն կ'ամփոփէ ոսկի չափին ծայրը, և անոնք կը յառաջէ՝ զոլալով՝ սեւռան ու յամրաքայլ Գիշերը։ Ամերոց մէջ ծաւալող աստղերը « կը բանան իրենց երկնամիեզկ պատուհաններն, և կը յօրինեն լուռ և գուարթ երախաններ »։ Կը նաւեն լուսնաժիր լոյս առագաստով նաեւ Բոլորատեղը՝ ինչպէս գմրուխտ ու գոհար՝ գիշերի գարգեր։ Կը թեւատարեն մեղմօրօր բլուրներ, ու ամպածրար գագաթներ, գալարի սիներ և անմահին ու գեղջկական առուներ, առուերամած հովիտներն ու խոխոջաձայն առուներ, հայելանման լճերն ու ոսկեակ երգասէր. ենթալուանեալք իսկ — համերամ ու անհամբեր — կը գոչեն և կը խնդրեն իրենց անհման լուսինն ու գիշերի ցագաները։ Կ'երեկ նա իր ոսկեկան լոգարանէն, և իր արտահեչտ քաղցր ժպիտովը կը հմայէ գամէնքը։ Ամէնքը կ'օրհնեն գլուխն՝ իրրեւ հմայիչ գոհար գիշերին։ Իսկ անոնց ամենուն բերանն ու բարբառ եղող բանաստեղծն՝ այդ կաթնաբուխ լուսնի լուսապատումներով լուսաւորուած ու պայծառացած, կ'ոգէ յափշտակութեամբ.

« Պըտակ մըթոյն, ըզքեզ արփի ուղիտաճեմ,
Ըզքեզ սիրեմ և ես գըշխոյ եռապէմ.
Որ յատեզց բոյս՝ ըսպայազունդ զօրապետ
Եւ յօրիորդս՝ ես թագուհի լուսապեսս։...
Պայծառըդ լուսին
Ուղեակ գիշերին...
Աննըման լուսին,
Հոգի՛ գիշերին...
Եւ անդր երթ լուսին,
Փարա՛ դամբանին »։

Չոն կը տարածուի Մարգագետինը՝ որպէս կանաչագեղ ովկիան, որուն գալար դէմքին վրայ կը պչնուն աստղակամարէն գուարթ աչքերը խնդակիր. աստեղաց ապրները կը ցօղեն ի վերուստ, արեւն ու լուսնեակը կը շողան հարուստ։ Չոն գաբուները գգուող ու գարունով զրգեալ Հովասուն ժաղկուհիք՝ կը խնդան ու կը չիկնին գերդ դաշտերու փարազուհիք. իրենց բազմազան ու անուշ բուրումովը կը խնկեն օդը, կը խնկեն երկիրը, և են թիթեռնիկներու մառանն ու հեշտական անկողինը։ Չոն երկու աղբերէ կամ « կրճից Նեմ» կ'իջնէ Ցորժոր՝ ջրերով գաշնակաւոր. և ուր կ'օրմեն Թուխ ժայռեր կամ հակայ բոյսեր, կը ննջէ՝ իբր ի քուն անուշակ

« Ջորակ ատուերամած՝
Պուրակօք պըճնած.
Յերթ գահավէժ արկանեն ուխք գիրկ դողդոջ,
Մատրուակեալ նեկտար ժաղկան՝ որ յուղտոջ,
Ժըմտի կարմրորակ
Սորոց ի սենեակ »։

Չոն կ'ը Թաւալի Գետն ոլորտապտոյտ, որուն գլուխն՝ ամպածրար լերան մէջ ղօղած կը հանգչի, և ոտքերն ովկիանոսի խորը կը Թաթչին. իսկ ինքը — նման վիշապ օձի — ֆշշալով կը շարժի ու կը գալարի։ Կը սիրեն Այտորայք՝ մերթ սեւորակ, ու եզող ձեռին՝ իբր անկինդ գրուակք, և մերթ վարսագեղ ոսկեփունջ գլուխներն վեր առած՝ կը ծածանին հողմոց չունչէն ալէձեւ. կու տան հնձողին՝ որոյն կենսաբեր, ու երկրի՝ յոյս անսուեր, և իրենք կը Ձնան կենաց խորհրդաւոր պատկեր։ Չոն կը ճեմին — դէպ ի վեր — յաղթահասակ Լեռներ՝ իրրեւ բնութեան հսկաներ ու յաւէրժ բուրգեր. ուր ունին տուն ու դաղար երկնընթաց հաւեր. ուր կը ծնանի արծիւն՝ օդոց բարձանցը սիրահար, և դաշտերէն յափշտակելով կ'ամբարէ պաշար։ Չոն կը ծառանայ չինից Ցուխը՝

« Բազմեալ ի բարձրս նաժըշտաց օդաճեմ
Չեզիկ հողմոյն ու ճաճանչից արեգդէմ,
Ընդառաջել առաւօտուն գեղապէշ
Ընդ ագարակ և ընդ անտառ բարձրուղէշ.
Ամբառնայ ծայր չինին ի կերպ ի սպիտակ՝
Իբր հողմուռոյց կտաւ ի դաշտ կապուտակ.
Կամ իբր յեռեալ հատատուութեանն ի մոյգ գոյն՝
Իբրեւ անտառ՝ զայլ անտառով լինչ կանգուն »։

Աւելցուցէք ասոնց վրայ Տաղտաղարը, Էկեղեցեակը, Զանգակատուռնը, կաւնուրչը, Մշակն ու Եզողը, Այտուռնձքը, Աչգեկուրքը, Մրգատահն ու Անտառապահը, Որսորդը, Գեղչերկցն և Ողեւորը, բայց ամենէն աւելի Պատկեր բնութեան խորագրուած Հոյակապ քերթուածը, և պիտի ունենաք Բնուռնոյ շքեղ շրջանակի մանրանկարը։ Վերջին քեր-

թուածը՝ զոր յօրինած է մեր բանաստեղծն ընկուզենիի մը ներքեւ, է ճարտար բանահիւսութիւն մը բոլոր նախընթաց երգերուն, զորոնք անուանած է երգք հանգրուանաց։ Բուն բանաստեղծի և Ալիշանի նման բանաստեղծի մը միայն կարելի էր նկարել այդպիսի մէկ համապատկեր՝ այնքան վսեմութեամբ, վայելչութեամբ ու երեւակայութեան յափշտակող թռիչով։ Եթէ չըլլային ասոր նման ուրիշ քերթուածներ, սա միայն բաւական ապացոյց էր մեր բանաստեղծի համապրական գաղափարներուն և համապրող մտքին։ Իսկ ամէնքն ի միասին՝ կը յօրինեն «Ընծուղ» գաղափարաց ներդաշնակութիւնը։

Ալիշանի գարունը՝ միայն բնութեան հրաշալիքներովը պճնուած չէր — ինչպէս մեր այժմու երիտասարդ պուետներուն — այլ նաեւ գերբնականին. վասն զի նա միայն բանաստեղծ չէր, այլ և ջերմ հաւատացեալ. վասն զի բնականներն անոր տեղ ու տարիներուն հետ կը թառամէին, և կամ առուերի նման կը խաւխէին ի բաց։ Ասոնց նա այդ առուներուն եռեւէն հառաչած ժամանակ՝ կը բանար միաժամանակ իր «Մանկունդ» — անառուեր լուսով զրոյմուած — էջերը։ Այս հատորս կը ներկայացընէ մեզ Ալիշանի հաւատացեալ հոգւոյն պարտէզ՝ մշտամանուկ սիրտը, բոլոր իր անթառամ ծաղիկներովին ու անմահունկ բուրումներովը։ Ձոն հրատիրուած են հայ ազգի պարմանիներն ու կուսանքը՝ Երգերգոցի փեսային ու հարսի պէս՝ վայելելու երկնաւոր սիրոյ խորհրդաւոր խնջոյքն ու խրախութիւնները։ Ձոն է մանաւանդ բանաստեղծն ու երգահանը, որ առաւօտեան քնարովը կ'երգէ մահկանացու բնութեան առնչանքը՝ դէպ ի անմահութիւն, և անմահութեան եթերէն կ'իջեցնէ — ամայացեալ ու ապիկար արտերու խորը — այնքան և այնպիսի զօրացուցիչ ու մխիթարիչ քրքջուններ, զորոնք հաւատացեալներն աւելի կը զգան և կ'իմանան։ Զեմ գիտեր՝ թէ ամանք ինչ ըմբռնումով իրր առօրեական բաներ յայտարարած են Ալիշանի այդ երգերը. ազգային պուետներէն ո՞րն արդեօք այսպիսի բնական պարզութեամբ, գեղեցիկ խանդով ու խորութեամբ ոգեր է քրիստոնէի հաւատալիքը, յուսալիքն ու սիրելիքը։ Ինչ է՝ որ մեր բանաստեղծը մանուկներու համար ու անոնց մտքին և արտին յարմար յօրինած է այդ երգերը՝ քան թէ չափահասներու. սակայն և այնպէս մեր երիտասարդ քերթողի այդ մանկական պարտէզն իսկ՝ իր տեսակին մէջ՝ Հիւգոյի բանաստեղծական գարունէն նուազ գեղեցիկ չէ և իսկաչնորհ։

Հայց մեծ հաւատացեալն ու բանաստեղծն, որ էր միանգամայն մեծ խորհող, այդչափով չէր կրնար գոհ ըլլալ. նա չէր ուզեր Հիւգոյի պէս կեանքի ամառն ու աշունը գարունէն անկախ և անկապ ընել, և ոչ ալ հասուն հասակին մէջ վերելակած պահուն՝ յեղափոխել իր ընթացքն, և գերարփւոյն դէմ մռայլ աչքերը փակած՝ բանին ազօտ կանթեղովը միայն յառաջել դէպ ի մեծ անծանօթը, այլ ընդհակառակն իր գարունին մէջ սփռած ու ծաղկեցուցած գաղափարական ու անթարշամ ծաղիկները՝ ամառուան լուսովն ու ջերմութեամբը հասունցնել ու պտղաւէտ գործել։ Մեր բանաստեղծը թէպէտեւ միօրինակ կեանքի վիճակուած էր, սակայն իր մտաւոր կեանքին հետ՝ կրօնական համոզումներն եւս անդադար կը զարգանային ու կ'ընդարձակուէին, նման խաղաղ լճի մը — որ միշտ վտակներ կ'ընդունի — մէջ նետուած քարէն յառաջ եկած շարժումին ու բոլորակաձեւ շրջաապիւռին. Այո՛, Ալիշանի «Խոհուներն» ու «Տէրունին» կրնանք համարիլ իրրեւ անոր ընդարձակուած մտքին ու հաւատքի կրկին շրջաապիւռները, որոնք կը ներկայացնեն մեզ բարձրագոյն և խորագոյն գաղափարներ։ Առաջնոյն մէջ ալիքն է՝ որ կը մերձի կը խորասուզի ժամանակէն իրրեւ մթնոլորտով պարփակուած կեանքին մէջ, որուն վրայէն կ'անցնին կ'երթան մրրկի արագութեամբ Անցեալը, Ներկայն ու Ապագայն, և կը յուզեն այդ աշխարհածովը։ Բաղդ և ժառանգակ, կրօնք և ժառանգակ, խաչաձեւ, Եզրարձակ, անձկութեան հովտին մէջ թիթեռնիկի պէս թարթափող ու խարխափող մարդկային շունչը, Անկայուն աշխարհը, Յոյսն ու Հանդերձեալքը, Աշխարհավարը, Ծաղր թէ Աստօսքը, Տարեգլուխն ու Տարեկապը, Անհնորաբեր ողջոյնները, Հեգն և հանգուցիչը, Ջուզուրիւնը, Խաղաղութեան հնչող ձայնը, Սուրբ սիրոն ու խնամարհ հոգին, Արի արուեցն ու խնամարհութիւնը, Երիտասարդի ձանուցարհը, Անօթի որսորդը, Յետոյ եւ Արեւը, Նորոգեալ մանկութիւնն ու Շուչուլը վայրենի, Աստղիկն ու Յարսիկն իմ վրիպեալ, Աստղրաիտիկ սէրն և Մարմինն ու հոգին, այլովք հանդերձ, են կենաց աշխարհածովին եզերքը կանգնուած մի մի արձաններ և իրարու հակապատկերներ. որոնց սակայն Ալիշան իր բանաստեղծական հոգւովն ու հաւատքովը խօսել կու տայ և որոնց հետ կը խօսակցի։ Կը շարժէ ու կը շրջեցնէ զանոնք կենդանագոյս լուծական

ալեաց խորը, և անկէ կը հանէ կը բարձրացնէ անդր քան զարմին և զերկինս։ Կը վերայայտնէ կայունին էութիւնն ու երջանկութիւնը, իսկ անկայունին երազներն ու ոչնչութիւնը։ Այս առակերուս համար կրնայ ըսուիլ թէ իւրաքանչիւրն՝ է մի մի նոր Հորիզոն, ուր — առակերու նման — տարբեր երանգով կը փայլին ճաճանչագեղ մտածութիւններ. առկայն անոնց ամենէն ուժգին ախտից յօրինած քերթուածն «Յորմէն իմ վրիպեալ», վեր կը ցոլացնէ Ալիշանի ինքնաբուխ բանաստեղծութեան հետ՝ նոյնպէս անոր յատուկ և հիանալի բնականութիւնը։ Ի՞նչ ահագին դանդաղանութիւն ատոր և Բագրատունեաց սխտակի մեծագործ եղերերգին մէջ. ա՛ն՝ քերթողութեան բարձր արուեստի սիրոյն համար՝ կարծէք թէ անտեսած է բնականութիւնը. իսկ Ալիշան իր պաշտած բնականութեանը կը թուի զոհել ամէն բան, ըսելով.

« Այլ խորհըրդոց զինչ ինձ պէտ,
Հասարս եղէ, չեմ պատէտ »։

Եւ առկայն Կամենայց պարն ողջոյն ասկէ աւելի լաւ և լուրջ խորհուրդ չէր կրնար ազդել։

*Իսկ « Տէրունի »ով գինուորեալ ու վշտակիր եկեղեցիներու՝ մահկանացու բնութեան կրից և վշտակրութիւններու ձայնի արձագանգն է՝ որ կը հնչեցնէ դէպ ի յաղթական եկեղեցին, դէպ ի Յարիտենականը։ Տէրունականները ու Կոչնականները, Տնօրհնականները ու Տօնականները առհասարակ ծնունդ են ոչ միայն Ալիշանի հաւատացեալ հոգւոյն, այլ և զգայուն սրտին։ Նա ամէն տօնի օր՝ անոր տօնելույն յիշատակներով յուզուեր և յուզեր է, ըլլար այն ազգային, ըլլար հանրազգային։ Տարին ամբողջ զանոնք կ'որճար գիշերամժամին, իր առանձնոցին ու ներանձնութեանը մէջ. և ինչպէս իր՝ այսպէս ալ հաւատացեալ հաստատութեան կրած վշտերն՝ այն խորհերով կը մեղմէր։ Այս հաստատ ամենէն աւելի առատ ու նուիրական նիւթեր կը պարունակէ, քրիստոնէական ու կրօնական տեսակէտով։ Եւ այդ նիւթերը թէպէտ և առօրեական զարձած էին Ալիշանին, սակայն ինքը բանաստեղծութեան անսովոր ուժգնով կարծէք թէ նորացուցեր է զանոնք, և իր հոգւոյն պէս սիրելի և ազդեցիկ ըրած հաւատացեալոց։ Ամանք — չգիտեմ ինչպէս — երէք չորս քերթուած հապէ կը գտնեն այդ հաստատին մէջ, որոնք իսկական գոյն մ'ունենան ու այն մեծազի շունչը, որ բանաստեղծի միւս գեղեցկագոյն էջերը կ'անմահացնէ։ Սակայն մեզ համար երկոտասանեակներ եւս կաըելի է հաշուել այդպիսիներ. մանաւանդ թէ կը համարձակիմ ըսել որ՝ եթէ Ալիշան միայն՝ և առաջին անգամ երգած ըլլար զանոնք, մենք պիտի չդանդաղէինք գէթ անոնց մեծագոյն մասը բանաստեղծութեան չքնաղ գոհարներ անուանել։ Իրաւ է՝ որ շատեր գրած կամ երգած են Գեթսեմանէի պարտիզի առտուժայեղ Օծեալին վրայ, շատեր նկարագրած են քաջազանց վէնամարտութիւնները. սակայն երգել Աստուածային վէնամարտուհիը, որ ամենազօտարն է, միայն Ալիշանի պահուած էր։ Զնայելով այն նմանութեանը՝ որ կը տեսնուի ատոր և Պիտէէի մէկ ճառին մէջ, կրնանք ըսել՝ որ հայ բանաստեղծն ու հաւատացեալն՝ իր բարձրաթռիչ երեւակերպութիւններով գերազանցեր է նոյն իսկ փրանց պերճախօսը. վասն զի անոր խօրին աստուածարանութեան ու ճարտասանութեան վրայ՝ բարձրացուցած է բանաստեղծականն այնպիսի մի հոյակապ և անեղան չէնք, որուն եզականութեանը վրայ մարդ կը հիանայ ու կ'ապշի։ Կը յիշեմ, որ Հիւնքեարպէյենեան, 1876 թուականէն վերջ էր, Ս. Գ. ազգերը այցելած և մեր բանաստեղծը ողջագուրած ժամանակ, կը բացականչէր. « Հայր Ալիշան, քուկին Աստուածային վէնամարտուհւոյդ մինչեւ Երրորդութեան աթոռը բարձրացեր հասեր ես. ուստի մենք ակարքս ինչպէս կրնանք քու արժանւոյն գնահատել զքեզ »։ Այս խօսքին առջեւ համեստ Ալիշանը կը շատագունէր, կը շիկնէր ու կը խոնարհէր մինչեւ խաչելոյն պատուանդանը։ Սակայն Հիւնքեարպէյենեանէն աւելի գեղեցկագիտական ճաշակ ունեցողներ իսկ — եթէ լաւ քննած են այդ քերթուածը — պիտի աքանչանանան յաւէտ անոր խորութեան ու բարձրութեան վրայ։ Աստուածեբ պահ մը՝ աչխարհի, մեղաց, մահուան ու դժոխոց յաղթող Փրկիչն, որ — որպէս գիշերի սրտահար երաժիշտ — քաշուած անւ բնութիւններու վարագուրին ներքեւ, կը հնչեցնէ պարհուրած բնութեան տխուր հեկեկանքը. բայց ոչ երկինք և ոչ երկիր կը

լան զանոնք և կը կարեկցին անոր վրայ։ Համանգամ մարդկութեան անցեալ, ներկայ ու ապագայ զարհուրելի ոճիրներն ու մեղքերը մէկ եղած գժոխքի կատաղիներուն հետ՝ կը յարձակին ամենեւին անմեղին վրայ, ու կը տագնապեցնեն։ Աստուծոյ և երկնաւոր հօր արդարութիւնն ու գթութիւնն իսկ Թողած լքած են գինքը. և նա միայնակ կը մնամարտի անոնց դէմ։ Վերջապէս իր անհուն սիրով սիրած սիրելի ու գեղեցիկ արարածի փրկագործութիւնը կատարելու համար՝ կը քամէ այն ամէն երեւակայութենէ վեր ու դարերէն բաժակը, գոչելով փրկագործութեան «Եղիցին»։

Այժմեան այդ քերթուածն ամենայն իրօք կենդանի է և կատարեալ. Դանտէն անգամ ասկէց աւելի վսեմ նկարագիր չէր կրնար տալ, բայց հայ բանաստեղծը՝ արտի փխխտայ եւս է։ Սակայն աս ալ պէտք է ըսել՝ որ Այժման լաւ երած կ'ըլլար, եթէ աշխարհի մեզայ գարշելի մրուրը՝ վատող ու համառարած կոյանոցի մը նմանեցուցած չըլլար, և անոր կազմած Սրբոյն սրբոց գառն բաժակը։ Այս օրինակ թէեւ յինքեան գիւտաւոր, բայց գեղեցկագիտութեան դէմ է, ըստ իս, վերջին ատենն պիտի, և չարաչար կը ցնցէ մեր զգայնութիւնը։

Ո՛չ ինչ նուազ գարմանալի է նաեւ Յիշատակի աւետեան սրբոց խորագրուած քերթուածն, ուր մեր բանաստեղծը — միգամած կենցաղոյս մէջ աչազուրկ և գոնէ դուռ խարխափող ու մուրացիկ ծերու մը պէս — լսելով հայելից ու փափկալից տաճարին մէջ երջանիկ բազմահանոց ձայները, հառաչելով կը կարկաւէ իր ձեռքը դէպ ի փնարը՝ ըսելով. «Եկ. երթիցուք, ընկեր կուրիս իմ Թշուառ, — Զայն արկանել առ առաքեալն այն ամենր»։ Կը վազէ արտասարսի դէպ ի մայր Սիոնը, ուր կը հնչէ երկնագումար քաղաքացիներու ձգնութեան և յաղթութեան ձօնը. կը բաղխէ անոր դուռը, կը մտնէ երանութեանց յաւէտազարմ կայանը. կ'ողջունէ Ադամէն սկսեալ մինչեւ իր վերջին հոգւոյ հաստրնները, իրենց յոռետես և արքայութեան արժանաւայել նկարագրովը։ Եւ հոսակ ապցաւորիս մէջ անոնց կրածներուն յիշատակութեամբը կը հայցէ անոնցմէ անախտական կենաց պարգեւները. բայց ինչպիսի հոգենորոգ ներշնչութիւններ ու հրայրներ կը ցայտեն անոր սրտէն։ Իսկ ի Յիսուս պատանին՝ կրելով զգործիս չարչարանաց, որ կը սկսի վշտաբեր քերթողը՝ խորհրդաւոր այլաբանութեամբ լայնարձակ դաշտի մը, որուն վրայ հոլիզոնները կը ապառին, և բայ ի մենաւոր մէկ բլուրէն՝ ալ ուրիշ բան չտեսնուիր այդ անծայր աւազոյ անապատին մէջ, կը յառաջէ ինքն և կը հասնի յաւերժութեան մէկու մը, որ է

« Աստղազարդ և գեղանի
Յաւերժակեաց մի պատանի.
Եւ երթայր նա լըռիկ մենիկ,
Կոխեր ըղիուշ և ըզծաղիկ »։

Իր պարզունակ ու ամենագոգորիկ նկարագրութեան և մտածութեան ձեւի նորութեամբը՝ բոլորովին ինքնուրոյն է այս քերթուածն։ Հոս կ'արտասխայէ Այժմեան սիրուն սիրան ու մտապատկերը, զոր կազմած է հեզոյն Յիսուսի խաչազարձ պատանեկութեանը վրայ, որուն սիրովը կը տաչարէր միշտ, փուչերովը կը մահացնէր ինք գինքը և վարդերովը կրկին կ'անմահանար։ Ո՞ւր կը մնայ այս կենդանի նկարագրին քով Սեւանայ պատկերը։ Գեղեցիկ են և գիւտաւոր նաեւ Հառաչք ի հաղորդութիւն սրբոց, — Ի Նինէ Կռոսին, — Հայեացքն ի նա յոր խոցեցին, — Օրհնութիւն տխեղծական սիրոյն Աստուծոյ, — Առ օրակիցն իմ Յիսուս, — Ո՞ւր ես, — և Երկու վաշտն երկնախառնը։ Վերջապէս այդ հատորը կ'ընդարձակէ ու կը բարձրացընէ Այժմեան գերերկրային երկինքը, ուր կը ծառանան — խնկելի անուշահոտութեամբ — անոր սիրասատ սրտի խղճերն ու հրայրքը, և կը լնուն զայն։ Հաւատացեալներուն համար տակէց աւելի պատուական ու հոգեշահ գանձ չէր կրնար թողուլ նա, եթէ չըլլային ուրիշներ։ Անցնինք «Մաղթանուէրն» ու «Տխրանուէրն»։

Որքան որ տարբեր ունեցեր են կարդալ գանոնք (և կարծեմ թէ չկայ գրասէր ու գեղեցկագէտ մէկն՝ որ կարդացած չըլլայ), պիտի չվարանին անշուշտ անոր բանաստեղծական երկանց իրր երկուարեակ և արժանաւոր ծնունդներ հաչակել զանոնք։ Ա-

կայն յոյժ կարեւոր է ըստ իս — առանց ծննդեան գաղտնիքն ու արժանաւորութիւնը լաւ գնահատելու համար — պիտել վայրկեան մը զանոնք երկնող հոգւոյ տրամադրութիւնները։

Մենք ըսինք կանխաւ, որ թէ Մ. Ոսկ. վարժարաններուն և թէ վանքիս մէջ երկուսակներ մարդկային կեանքի ծաղիկներէն՝ անոր ձեռքին և սիրոյ համբոյրնեբուն մէջ խամրած են։ Դարձեալ՝ կ'ըսենք որ ամէն արուեստով վիպասանութիւններէ վեր էին Ալիշանի համար այսպիսի վայրկեաններն։ Անկարելի է նկարագրել անոր կրած յուզմունքը։ Կը յիշեմ, 1889ին, Ազոյ ծաղկահասակ վարդապետ մը հոգին տալէն վերջ, երբ Ֆիէսոյ կը դառնար, այնպէս թուեցաւ մեզ, որպէս թէ անդիի աշխարհքէն ինջած ըլլար։ Նա իր խորհրդաւոր ու գլխակոր՝ կարծէք թէ գեռ կորուսածը կը փնտռէր հովիւներու ներքեւ։ Ջուարթ բնութիւնն ու զով գիշերուն՝ անկարող էին և կը պատկառէին զովացնել անոր ազապեալ սիրտը։ Եւ երբ տեղեկութիւն կը հարցնէինք ու կ'առնուինք, նա անմիջապէս իր սրտի խորերէն այսպիսի հառաչներ կ'արձակէր. Ո՛վ Աստուած իմ, մինչեւ ե՞րբ ապրիմ անպիտան ծերս, ինչո՞ւ երիտասարդին տեղը գիս չառիր...։ Սակայն երջանիկ էին անոնք, որոնք Ալիշանի ձեռքերուն մէջ կը կնքէին իրենց մահկանացուն. վասն զի սա — նման իր մեծ անուանակցին — ոչ միայն կը սպասապինէր կիրենք՝ իր սիրալիր խրատներուն, այլ և յետոյ իր սիրալի արձանագանութիւններուն՝ անոնց կեանքին հետ՝ մահն եւս կ'անմահացնէր միշտ։ Եւ ըսածնուս մի մի պերճախօս վկաներ են Նուագներուն և Մահապողնեբու վրայ տպուած կենսագրականները։ Հաւասիկ ասոր նման դէպքերու և տրամադրութիւններու ազդեցութեան ներքեւ ծնունդ առած են մեր բանաստեղծի յիշեալ հատորներն, և այդ հատորներու մէջն է՝ որ փոխադարձաբար կ'արտափայլին անոր «Տխրութիները»։ Պիտենք — որպէս իրարու հակապատկեր — այս երկու մեծ քերթուածներն, այսինքն են «Մաղթութիւն» եւ «Տխրութիւն», որոնք թէպէտ և սեռով իրարմէ բոլորովին տարբեր, սակայն քերթողի մեծ հանճարը՝ գաղափարականի — այն է ծանօթին և անծանօթի կամրջով — իրարու հետ գեղեցկապէս միացուցած է։

«Մաղթութիւն» ուրիշ բան չէ՝ բայց եթէ Ալիշանի ընդարձակուած սրտի չուչափայլ թերթը, որուն վրայ դրոշմուած են մեծ բանաստեղծի ուրախ ու զուարթ ժամերու թրթռումները։ Հոս կը հնչեն Ս. Ղազարի և անկէ դուրս կատարուած ուրախ զէպքերուն և հանդէսներու արձագանգները. հոս է՝ որ կը խնդայ ու կը բերկրի — Ալիշանի թրթռուն քնարի ձայնէն — մարդկային կեանքն՝ իր եղանակաւորումներովը, վայելքներովն ու ոսկեղէն երազներովը։ Հոս կը զուգապարեն ծերը՝ տղուն, երիտասարդը՝ կուսին, կուսանք՝ երկնաւոր փեսային, բանաստեղծը՝ բանաստիրին հետ, այլովք հանդերձ։ Նոր հարսն ու նուէնուֆարը այնքան գեղեցիկ չեն փայլիր երկնից կապուտին ու երկրիս կանաչին՝ ինչպէս Ալիշանի բանաստեղծութիւնն՝ այդ երգերուն մէջ։ Եթէ ոչ ամէնքն, այլ անտարակոյս նոր են, իրենց տեսակին մէջ, հետեւեալները՝ Աբ Ներքնծայ մանկունս սքեմառուս, — Յոհան կոչնաւի, — Յանուակնկալ վերադարձ եղբօր յոչդարկելոյ ի նուագ, — Աբ հարազատս իմ՝ ծովաչուելով յԱմերիկա՝ կրկին քերթուածներն, և Աբ բանասէրն՝ որ ըղձիւք ձեռացս խնդրեր զքերթուածս ի հաւաքոյր, զորոնք ուղղած է իր Սերոբիկ եղբօրը, — Աբ Յովհ. Ամիրա Տատեան, զի տայր զաւետիս Մար Խրատայ, — Աբ Աղանուոր Մեսրոպ՝ և այլն, ուղղեալ փափուկ Գեղօնքը, ի հարսանիս վիրգինեայ Աղանուոր-Պհանքիի, — Աբ քաչաքնաւր մանուկ խոտագի՝ Յովսէփ Կոստի, — ի մանկունս՝ գբօսնլով ի դաշտի։ Ալիշանի կենսագրական ուսուցնասիրութեան տեսակէտով՝ յոյժ բնորոշ է և Պատատեանի առ քերթողն խորագրուած քերթուածն, «Որորոց» կեղծանունով մէկուն ուղղուած։ Այս՝ միակ երգիծարանական քերթուածն է մեր բանաստեղծի քնարական երգերուն մէջ, որ սերտ յարաբերութիւն ունի «Հայրունեաց» առաջին քերթուածին հետ։ Անոնց որ ծածկանուն քերթողին հետ — զոր Ալիշան հուրհատան ասպարիզի մէջ ճեմող յանդուգն պարմանի կը կոչէ — թղթակցութիւնն եւս չկայ մէջ տեղ։ Հաւանօրէն նա 1849ին ծաղկող պուեհաներէն մին կամ լաւ եւս Պէշիկթաշլեան ըլլալու է, որ ունի գեղեցիկ քերթուած մը Աբ Հ. Ղեւոնդ Ալիշան, թէեւ այս՝ վերջը գրուած կ'երեւի։

Իսկ «Տխրութիւն» է՝ ըստ իս՝ այն խորհրդաւոր գիշերաժաղիկն, որուն թերթեբուն վրայ իր վարդամատն ձեռքով գրած է և երգած Ալիշան՝ իր սիրելիներու կենաց ու մահուան ամէնէն գողտրիկ ու գեղեցիկ եղերերգը։ Բանաստեղծի այս էջերս — որ

քարացած Նիոբէներու խակ կու տան արտասուել — պահ մը կը թուին համոզել ընթերցողը, թէ Ամիշան առաքինութեան այդ ճիւղին համար ծնած էր։ Սակայն ոչ. առանց այդ կոչման խակ բնական էր՝ որ կեանքի ճարտար նկարիչն՝ անոր բնական ընթացքին հետեւէր։ Եւ արդարեւ գեղեցիկ է, արդարեւ բնական է այդ քայլը։ Մեր բանաստեղծն ինչպէս խոյտաց ու խնդաց անանց կեանքի յաջողութիւններուն վրայ, այնպէս ալ հարկ է՝ որ ոսկեբեր ու ոսկեթոր անանց թանկագին կեանքը խղճմտանքի վրայ։ Ցոյժ բնական էր զարձնել՝ որ զգայուն բանաստեղծի ախորժութիւնն ու նզովներգներն անհամեմատ կերպով առատիկ ըլլային և արտաշարժ՝ քան ուրախականները. վասն զի բաղդ և յաջողութիւն՝ կեանքի խակ պատահարներ են, խակ անյաջողութիւն՝ կուրատա է, և մահը՝ կենաց աչնչացում։ Ահա այդ ահաւոր ազէտն էր՝ որ կը զրկէր Ամիշանը՝ իր սիրելիներէն, որ խոր ակօսներ կը բանար անոր փափուկ սրտին վրայ ու կը ստակոյներ անոր ցաւերը։ Ահա այդ ցաւերու արտագին արձագանգն ու երգերն է՝ որ ընկերկոտոյս Արիէսի պէս կը հնչեցնէր մեր բանաստեղծը՝ կեանքին ու մահուան գեհենկերտոյ վրայ։

« Տխրութեան » մէջ կը գտնուին բազմաթիւ քերթուածներ, որոնք թէ՛ իրենց համամարդկային լայն բանաստեղծութեան շեշտովն և թէ՛ քրիստոնէական վսեմ ներշնչութիւններով՝ կրնան իրաւամբ բարձրացընել Ամիշանը եղերերգակ մեծագոյն բանաստեղծներու կարգաց։ Չեմ գիտեր՝ որ նոյն իսկ այս ճիւղին մէջ՝ չըլլան իրմէ աւելի արիւնակոծ արտասուին հմուտ ու ինքնատիպ քերթողներ. սակայն դժուար է գտնել հին և նոր եղերերգութեանց մէջ էջեր, որոնք զգացման յորդութեամբ, խանդից ու զառիթափ առատութեամբ հաւասարին՝ թող թէ գերազանցեն Ամիշանի այն եղերերգը, որուն խորագիրն է Մխիթար — ցայգախառն ի տապալ մանկան միանձին։ Մեր բանաստեղծն՝ եթէ ուրիշ եղերերգ ալ չունենար, այս միայն բաւական էր անմահացնել իր չունչը, ակն ու հնչառ։

Ո՞վ էր այդ երջանիկ ու մանուկ միանձն, և ինչպիսի՞ ձիրքերու տէր, որուն մերթ գերեզմանի հոգերուն հետ կը խոնարհեցնէ ու կը խառնէ ջերմջերմ արտասուքով՝ մեր բանաստեղծն՝ իր պատկառելի ճակատն ու հերքը, և մերթ հիրմին անարի վերեւը կանգնած կը կենայ՝ իբրեւ գերառնակ ոգի մը, որ կը ժոխ երկնքէն հուր ու բոց, խակ իր կուրծքէն՝ նոր կենաց չունչ և կայծ ապրելու այն մարմնոյն, որ հոն կը նետէ ի քուն անարթուն։ Հ. Ամիշանի դասընկերն էր ան, Մխիթար Մխիթարեան, որ Ուխտիս նշանապիտառ հոգուելու ժամանակ՝ կոչուած էր Ամբրոսիոս։ Նա փոքր ըլլալով հասակաւ՝ առիթուած էր բաժնուիլ Ամիշանէն և յաջորդ դասին անցնիլ։ Կ'ըսուի՝ թէ անմեղութեան և սիրոյ մարմնացած հրեշտակ մ'էր, և ամէնուն սիրելի։ Ունէր անուշիկ, քաղցր և զգայուն ձայն, որով կը յուզէր և կը յափշտակէր զամէնքը։ Անբաժելի հիւանդութեամբ մը հիւծած՝ երբ երկինքը պիտի թոչէր, կը խնդրէր երեք ուխտիւք անգամակից Մխիթ. Միսթարութեան։ Եւ իր այս փափաքին հասնելէն վերջ, ուրախութեամբ կու տար իր դասընկերներուն վերջին հրաժեշտն, և կը լացընէր զամէնքը. խակ իր հին ընկերին՝ Ամիշանի, որ բարձրագոյն Վարժարանն անցած էր, բան մ'ըսած չէր։ Ահա այս է՝ որ խոր ակօս մը կը բանար բանաստեղծի սրտին վրայ։ Իրաւ է՝ որ նա բաց ի հոգիւոր եղբայրակցութենէ ուրիշ ազգակցութիւն չունէր Ամիշանին հետ. և սակայն այդ եղբայրակցութիւնն, այդ հրեշտակական անմեղութեան անջառումն՝ ամէն ազգակցութենէ աւելի զրաւած էր մեր բանաստեղծի սէրը։ Եւ ահա այդ սէրն է՝ որ անչինանելի կերպով կը բորբոքէր Ամիշանի սիրտը։ Մէկ կողմէն անհնարին ազով ծանրացած դիւերաժամու լռութիւնը՝ կարծէք թէ կը ճնշէ ու կ'իջցնէ բանաստեղծը մինչեւ անբարբառ Միհրանին յաւիտենական քնարանը. սակայն միւս կողմէն ծովափնեայ Թաղուններու բորբոսն, ալիքներու խորերէն հնձող սահանքի ձայնը, բարձր աշտարակէն հնչող զանգակի զօզոյն ու անծանօթ աշխարհէն իր հոգւոյն հասած Միհրանի սիրային ձայնը՝ առէպ առէպ կ'ընդոստուցանեն զինքը, և մինք կը լսենք Ամիշանի վշտահան եղերերգը.

« Կիսով սրտիս այո ըզքընար քո պըխուր
Դարձ, մանկութիւն, յաւիտնակին անել կուր.
Աստուծոյ զըսարթ այլ զինչ պէտք անձին՝
Որոյ սահեալ զրօսանք կենացն և անցին...
Մահ՝ որ յայգուն կենաց յանկարծ ճեպ՝ ի մայր
Տարաւ զՄիհրան ի խաւարին իւր ի վայր։...
Տարայք և զիս, ուր վէրք սրտին իմ խամրած՝
Ի յանդամմունս խաղաղական գիշերաց...։
Ո՛հ, ցողեցէք ցողեցէք դառն արտասուք,
Յականոզեացս ի ծոց՝ շաւիղ սրտմաշուկ.
Նըման ցողոյն՝ զոր հեզաչունչ յօդ թևթև
Յոտոցն ի վայր կաթէ նոճի անտերև...
Արիւն եռայ չերմ յերակունս ապըստամբ,
Մելամաղձին ծաւալացեալ ի նուրբ ամպ...
Վահք և եղուկք կոծոյ շընչոյս սրբատակէզ՝
Յառաջեցին Թըռեան, Միհրա՜ն իմ, առ քեզ.
Յաւոց զըմռան անոյշ առ քեզ բազմահոծ՝
Կենդանական ծըխէ սրտիս խընկանոց.
Եւ աստեղաց ու արեգական անկարօտ՝
Լապտեր սիրոյ առնէ զչիրմաւդ առաւօտ »։...

Այս՝ առաջին պատկերն է և պահը Այիշանի եղերերգին. երկրտասաներեակներ եւս կը յաջորդեն սոր, որոնք ովկիանոսի խորէն հեւացող ու հեծող ալիքներու նման երթալով կ'ընդարձակուին ու կը սաստկանան, միշտ նորանոր բաներ մրմնջելով։ Վսեմ ու անապատ մրմունջներով՝ կարծէք թէ կը ձայնակցին բանաստեղծին՝ նոյնպէս երկինք ու երկիր։ Ակէ առելի վեհանձն ու վսեմ հատուցումն չէր կրնար ապատել վաղամեռիկն Միհրան՝ իր երիցագոյն դասընկերի ազնիւ սրտէն։ Թող բարձրացըննեն Պինդեմոնտ և Խտալիա՝ Հուգոյ Փոսկոլոյի Գերեզմաններըը, Թող զմայլի Այբոնն՝ իր Իւնգի Գիշերներովը. սակայն Այիշան՝ իր Յայգախոհներուն մէջ՝ պիտի չդադրի բնաւ բռնելու իր բարձրագոյն ու յատուկ տեղը։ Հայ բանաստեղծի այս անմահական էջերա՝ հայ ազգին ու մտքին եւս յաւիտենական պարծանքը պիտի լինին, եթէ կարելի ըլլար մանաւանդ եւրոպական լեզուներով եւս թարգմանել զանոնք, ինչպէս որ են։

Սակայն մենք կրնանք ցոյց տալ անոնց Այիշանի ուրիշ եղերերգներ եւս, որպիսիք են Հարրեն՝ ի քաւարանակն իմ, — ի Սոռնացին. — Յիշատակ մանուշ և մեռելոց, — Զանգակն գիշերային, — ի Պատկերն Եւնայ՝ վաղամեռիկ դստերն Աբրահամ Աղաւուրայ, — ի Բուժիկն վաղամեռիկ ու Պանդուխտի երգերը։ Անցնինք քիչ մ'ալ « Հայրունեաց »։

*
* *

Հ. Այիշան ունէր ուրիշ երազ մ'ալ, որ քաղցրագոյն էր ու սիրելագոյն քան զամէն երազ. որ իրեն հետ ծնած ու անած էր, և որուն վրայ սիրող կուռքը դարձած։ Այդ երազն էր՝ իր հետաւոր Հայրենիքը, որուն կարօտովը կը տառապէր. ու այդ կարօտը լեցնելու համար՝ պէտք է որ նա երգէր ու իրականացըներ իր երազը։ Առանց սոսր՝ բանաստեղծիս կեանքը կարծէք թէ ապերջանիկ պիտի ըլլար. վասն զի նա երիտասարդ հասակէն կը փափագէր՝ անձամբ երթալ ու տեսնել իր մայր Հայաստանը, բայց չէր հաներ այդ փափագին, ինչպէս ինքն իսկ կը վկայէ — « Մաղթունեաց » 58 էջում —.

« Այլ ինձ աւաղ, ինձ ընդէր ճակատագիր չետ հրաման
Յեգեալ ի թեւս իմ աչխոյժ՝ իսկոյն քեզ կալ յանդիման...
Բայց զիս երկնից սուրբ պատգամ բեւեռապինդ պըրկէ զիս
Ի կէտ կղզւոյս մենական՝ յանդորրական ի Հանդրիս.
Ուր ծուխ ի ծուխ կըցելով ծըխանոց ի ծով ծիրանի՝
Բոցաշընչեմ բիւր փարատ առ իմ հոգիկն հայրենի »։

Հայրենասիրութեան այդ աւուրը բոցն ուելի կը բորբոքէին Ալիշանի մէջ՝ 1847-1849թուի պատահարներն, որք անդի կ'առնէնային Իտալիոյ մէջ՝ քաղաքային անկախութեան համար: Այդ դեղեցիկ երկիրը, զոր երգած ու ոգեւորած էր Պայրն, վերջապէս ոտքի կը կանգնէր: Կարոնի հոգեշունչ մարտերգները կը հնչէին — իրենց խիզախ վանդիւնով — բոլոր դաշտերու և քաղաքներու մէջ: Վենետիկոյ դոնդոլավար մանուկն ալեակ՝ մինչեւ նապոլի կոյն ու ալեզարդ Ծերունին այդ երգերու արձագանգը տալով՝ կը պատասխանէին իրենց անմահ ապստամբներու վրայ մեծ որոտով պայթող հրացայտ ռումբներուն: Ալիշան, որ այդ ժամանակ կը գտնուէր Պադուայէնան վարժարանը, որ կը լսէր ու կը տեսնէր ամբողջ ժողովրդեան մը անաւոր չարժումը, որ ճամբայ կը դնէր — դէպ ի Արեւելք — եռանդուն ու հանճարեղ աւարտավարժներու խումբ մը, այլ եւս չէր կրնար անտարբեր մնալ այնքան և այնպիսի վսեմ ապստամբութիւններու ներքեւ. վասն զի դեղեցիկ Իտալիան՝ իր ազնիւ ու խրոխտ ձկտումներով կը յիշեցնէր մեր հայրենասէր բանաստեղծին՝ իր դրախտավայր հայրենիքն ու անոր քաղցր յիշատակները: Ուստի նա որ — «Պաղթունեայ» 53 իջեամ — կոչումն կ'ընէր անոր մանուկ քերթողներուն՝

« Ազդմննեան կապարճ ի յուս, մանկունք քերթողք ազեզանց,
Ազիներիք ձեզ նըպատակք, ելէք կայտառք դուք ի յոյս.
Մերթ ի Պասեաց գարնանդ, աս առորոտով մերթ նորին,
Երգեցէք երգ գիւցազնեայ, երգ հայրենի, երգ գորով,
Տատանեսցին հայկեան բամբռունք ի սոյլ հոգմոյ հայրենոյ »:...

Ալժմ ինքն էր՝ որ իր բոցաշունչ բանաստեղծութեան թեւերովը կը թռչէր ու կը սաւառնէր դէպ ի հեռաւոր բնաչխարհը, դէպ իր փայփայած երազը: Ինքն իսկ էր Ոգին հայասատանեայց, որ Պասեաց բարձունքէն կը հնչեցնէր՝ ահագին որոտով՝ Հայոց Բառիթռը, յաւիտենական հոգեներու փառազոչ երգը: Կը չարժէր կը զարդեցնէր ազատ լեռներու արտեւանունքն ու լուսթեան մէջ նստող խոր և խուլ անդունդները: Դաւրս կը կանչէր — ժամանակի ու մոռացութեան խորերէն — Հայոց մեծաց փառքն և հայրենեաց ակրը, բոլոր իր անպարտելի քաջերովն ու անմոռանալի յիշատակներովն:

Մեր խիզախ բանաստեղծի այս խրոխտ երգս — որուն նմանը դեռ երգած չէր ուրիչ հայ բերան մը, և ուր վերատին երեւան կու գայ ու կը ծածանի Հայոց վաղեմի ազատութեան եռափայլ եռախորհուրդ, այսինքն է՝ կարմիր–կանաչ–կապոյտ դրօշը, « Հայրունեայ » վեհագոյն էջը կը կազմէ: Ով չիմանար ու չզգար այդ երգի բարձր նշանակութիւնը, նա հայ չէ, վեհի գաղափար չունի: Մեզ համար տեսակ մը գիւցազներգութեան հակայ Նախերգանքն է այս:

Իսկ Հարանիերգն՝ յեղեղեան գրգռական որ ի Հայս, — Հարք, — ի Հայկն և ի բառս հայկազանց, — ի մահ Տրդատայ անեղազօր արքային, — ձակատամարտս Զիբաւայ և քաչակորովն Մուշեղ, — երգ ոչ նուազ գօրացն Հայոց քնդ Վահանայ, այլովք հանդերձ, կը կազմեն անոր բազմատեսակ ու հրաշակերտ դրուագները: Այս մասին մէջ Ալիշան գիւցազներգակ բանաստեղծ է[1] ուրեմն: Նա չորբար այլ եւս, չարտասուեր, այլ ոգեներու ձայնը կ'ընդհատէ: Նա Տիրէոանեերուն պէս կը վառէ ու կը պնդէ թուլացած սրտերը. կը մղէ զանոնք դէպ ի նոր կեանքը, դէպ ի հինաւուրց մեծութիւնը:

Ալիշան իր հրաշունչ բանաստեղծութեամբն — իբր ազեւնասայլն հրով ու հեղուկով — Հայոց օդն ու հորիզոնը լուսաւորելէն և եկեղեցականացնելէն վերջ, նոր կերպարանափոխութիւն մ'ալ կ'առնոյր, բայց ոչ Մենուոբի, այլ Հայոց Նահապետին. վասն

---

1. Ի դէպ ես ինքս լսած եմ Ալիշանի բերնէն, թէ ինքը ժամանակաւ ձեռք զարկած էր գրելու իսկապէս դիւցազներգութիւն մը, այն է՝ Հայոց դարձն ի քրիստոնէութիւն, բայց յետոյ թողուցած էր, այն պատճառաւ՝ որ դժուար եղած էր իրեն՝ Տրդատի վրայ տալ իրաբընդդէմ, այն է՝ հեթանոսական և միանդամայն քրիստոնէական նկարագիրներ:

զի ինքը կաթողիկեայ Հայաստան էր՝ մինչեւ իր ծուծը, և այնպէս ալ կ'ուզէր ապրիլ ու մեռնիլ։ Կ'ուզէր լինել Հայոց առաքելական եկեղեցւոյ զաւակը՝ ժողովրդեանը մէջ. կ'ուզէր մօտէն բարբառել անոր սրտին, այսինքն՝ անոր աչուըներու միջնաշխարհիկ, պարզ ու գողարիկ լեզուովն երգել Հայոց աշխարհիկը, օդն ու ջուրը. վասն զի՝ մէկ խօսքով՝ կ'ուզէր ներշնչել Հայոց նոր սերունդին հայրենասիրութիւն, և առաջնորդել ամենուն՝ դէպ իր նաւերական վայրերը, դէպ իր անշքացած արուեստներն ու քանդուած օջախը։ Ո՛րքան գեղեցիկ ու գիտաւոր է մեր Նահապետի այս մտածութիւնը։ Նա ունի իր կերպարանափոխութեանն ալ, լեզուին ալ, բանաստեղծութեանն ալ իւր իմաստասիրութիւնը, զոր մեզ հետ՝ ամէն հասկցողք եւս պիտի գնահատեն անշուշտ, որչափ խորապէս ուսումնասիրեն զանոնք։

Իրաւունէ, հետեւելով մեր արուեստ բանաստեղծին ու ակզարդ Նահապետին՝ կը գտնենք գինքն՝ իր պաշտելի «Հայոց աշխարհիկին», այսինքն է՝ հնացած աւերակներու անհուն տարածութեանը, Մասիսի տարերուն, Գեղամայ ծովին, Եւսաբչանայ ու Ալարայրեան գաշտերուն վրայ։ Կը տեսնենք գինքը մերթ հովիւին ու հօտային և մերթ Հայոց քաղցրախօսիկ Պլպուլին հետ. կը տեսնենք գիշերային լռութեան, լուսնի լուսոյն ու խորհրդաւոր առուներուն մէջ, հերոսանձ ու վերամբարձ։ Այո՛, ինչպէս տխուր է հայրենիքն՝ այսպէս և անոր անհման երգիչն համակուած է տխրանոյշ խորհրդաւորութիւններով։ Անոնց մէջը կը շրջի ու կ'որոնէ Ալտազու քաջերը, կը գտնէ ու կ'երգէ այրած սրտով։ Մերթ կը հեղու իր կրկնավտակ արտասուքը Հայոց գերեզմաններուն ու խաչարձաններուն վրայ, և մերթ անոնց վրայ տարածած ոսկեհատ հերօքն ու համբոյրներովը կը սրբէ ամէն արտասուք։ Իրաւ է՝ որ Նահապետի երգերէն ամանց մէջ տխրութեան չեզան ասելի գգալի է, բայց ւթուցիչ ըլլալէն յոյժ հեռի։ Ալեւելեան բանաստեղծութեան և հոգւոյն գաղտնի գործութիւններէն մէկն է տխրութիւնը. և անով է՝ որ յաճախ կը շարժեն մերձաւորներուն աչքը՝ դէպ ի սիրելին, ու կը տածեն փոխադարձ ասելութիւն՝ դէպ ի անոր վշտահար թշնամին։ Ես իրաւունէ, ո՞վ կրնար անտարբեր մնալ Նահապետի չնչովը ներգործած երգերուն առջեւ. այսինքն է՝ չիարիլ սիրով անոր ոգեցած ու սիրած աշխարհին և ուրուներուն, և վրէժ չխընդրել ասելիչներէն։ «Ազատ երկաթը» առած էր մեզ սրտէն մեր բանաստեղծն՝ իբրեւ չքնաղ օրինակ, և հայ երիտասարդութիւնն ալ ամենէն յառաջ իր Նահապետէն ուսաւ գայն որ կը կանչէր.

« Հայոց հողուս դու կեանք տուր,
Երկինք քեզ տայ հրաշալի թուր,
Նահապետին՝ սիրտ քանդ հուր »։

Հետեւաբար՝ Նահապետի երգերն — իրենց աշխարհիկ բարբառովը և զուտ ազգային ու ժողովրդական մեծ ոգեւորումովը — ամենէն նշանաւոր էջերը կը գրաւեն Մխիթարեան բանաստեղծութեան մէջ։ Մրջոյ տարբերութիւն Նահապետի երգերուն ու «Տէրունեայ» և «Տխրունեայ» մէջ։ Անոնց մէջ բանաստեղծը կը ձգտի միշտ դէպ ի անձանօթն ու անհասանելին, ինչպէս արծուին՝ դէպ ի արեւը. բայց չհասնելով՝ կ'ամփոփէ իր թեւոց առագաստներն ու կը վայրաթռիչ։ Իսկ անոնց — այսինքն՝ Նահապետի երգերուն — և՛ հասած է և՛ համբուրած հայրենի հողն ու չիրխիները, իր ազգակից ու արիւնակից հոգիները։ Իրաւ՝ մեր հայ հայրենիքն անհասած է նաեւ ուրիշ քաջերու ու խիզախ երգիչներ, բայց ոչ երբէք Այեւանի պէս մեծ բանաստեղծ ու մեծ հայրենասէր։ Շատեր երգած են Հայոց աշխարհին ու գարունը, բայց այդ երգերն յոյժ անհման են Հայոց աշխարհին և գարնան։ Նահապետի երգածին համար միայն կրնայ ըսուիլ՝ թէ է իսկապէս մեր բնաշխարհն՝ իր գարունով, իր զարդարուած նաչխուն ծաղիկներովն, իր հասերովն ու հովիւներովն, իր հօտերովն ու արօրովը, երամ երամ թռչուններովն ու կարկաչաստակ վտակներովը, իր ճերմակ ճերմակ ամպերովն ու կախուած սեւ սեւ ամպերովն, գետնէն ծխուած գունդ գունդ գոլոշիներովը, որոնք խուճապուռ կը փախչին ու կը բռնուն երկինքէ կապուտին առագաստները։ Այդ հոն ծնած և սնած են այդ ամէնը, անոնք ասելի կը զգան ու կը գտնեն Նահապետին հետեւէն կազմած և հիանալի մտապատկերին ու երգերուն վրայ։ Շատեր երգած են Ալարայրի անմահ քաջերը, սակայն իր տեսակին մէջ միակն է Նահապետի

«Պզտուկն» ու լուանեակն՝ իր գեղեցիկ ու կենդանի մտապատկերներովը։ Շատեր երգած ու վիպած են Հայոց առաջին կոյս վկային, սակայն միակն է Նահապետի Շուշանիկ Շուշանն և Հայոց արքունական դարպասէն Քառաժ աստրակը, որ մանրիկ տառիկներովը ժուռ կու գայ երանելեաց դաշտին մէջ, և իր անուշիկ ու գողտրիկ վուվուններովը աս ինքն կը ձգէ ողջախոհ կուսանաց ու երիտասարդաց սրտերը։ Այնքարդ ու այրած Նահապետի երգերուն պէս՝ սիրան ևս այնչափ անկեղծ է, որ ոչ ոք կրնայ անոր վրայ ատրակուսիլ։ Այդ անկեղծ սրտի ու ձայնի արձագանգն է ահա՝ որ կը ատրաժուէր մեր հայրենեաց մէկ ծայրէն միւսը, և դիւթական ազդեցութիւններով կը լեցընէր ու կը գինովցընէր հայ ժողովուրդը, հայ աշուղը։

Այնչան՝ իր Նահապետի երգերովը Հայոց խրթնացեալ աչխարհը արթնցնելէն ու հայութեան սիրտը՝ հայրենիքին հետ կապելէն ետքը, կը դառնայ — պէտպէս յիշատակներով ծանրաբեռնուած ու ծերունի ատենի մը պէս — ոչ թէ իր գինքերուն ու գրահին, այլ իր հայրենի կրակարանին ու Հայկակ Քառնիկին քով։

Սակայն մեր հերոսանձ ու հինաւուրց ծերունին հոն կծկուած պահուն խակ՝ կը տեսնէ յանկարծ իր առջևը մէկ ուրիշ ընդարձակ դաշտ մը բացուած։ Կը մղուի աներեւոյթ զօրութենէ մը դէպ ի այդ դաշտը, իր սիրտնին Հայկակն ալ հետը առած, երթալու խառնուելու իր ազգին ու եկեղեցւոյ քաջերուն հետ. մանաւանդ թէ կատարելու մի նոր, այսինքն է՝ պատմական վիպագրողի դեր։ Այո՛, Նա հայրենեաց «Յուշիկներուն» մէջ այլ երգիչ չէ, այլ վիպագիր։ Նա իր «Ընդ Լռեւնեաւ» — քանակու փոքրիկ՝ բայց պարունակութեամբը մեծգի — երկասիրութեան մէջ երգը չէ՝ որ կը հընչեցնէ, այլ երգերու նիւթ տուող բնութեան ու մարդուս վրայ խորին և գեղեցիկ խորհրդածութիւններ և համադրական աչխարհայեցողութիւններ, զորոնք կը հիւսէ արձակ շարադրութեամբ։ Բայց պէտք է ըսել՝ որ Այնչան ինչպէս իր «Նուագներուն», այսպէս ալ արձակին մէջ եղած է միշտ բանաստեղծ, պահած է միշտ մի և նոյն սիրտը՝ վառարան խանդից։

Թերևս հարցուի, թէ ինչ էր պատճառը մեր բանաստեղծին այս նոր փոխակերպութեանը։ Անտարակոյս՝ վիպասան երևնալու սին փառքը չէր. վասն զի Նա իրօք այդպէս էր։ Նա իր հասուն հասակին ու հմտութիւնն առնելէն վերջ, չէր կրնար գոհ ըլլալ ու գոհացնել ուրիշներն՝ իր «Նուագներովը». նա կ՚ուզէր՝ որ նախ անոնց մէջ երգուած ազգային նիւթերուն վրայ աւելնան ուրիշ նոր նիւթեր ևս։ Երկրորդ, որ այդ ամէնքը բանաստեղծականէն դուրս՝ ունենան — հայ պատանեկութեան սրտերու մէջ — նոյնպէս իրենց պատմական ու վիպասանական ճիշդ ու ճոխ նկարագիրքն ևս։ Եւ ատոր՝ «Յուշիկները» — զորոնք կրնանք իրաւամբ Այնչանի, մանաւանդ թէ համայն Հայութեան Պանտէոնն անուանել, — գերազանցօրէն կը ներկայացնեն մեզ «Կարմիր Վարդանէն» սկսեալ՝ երկայն շարք մը աւանէն վեհացած հայ դէմքերու, ինչպէս և հայ հողին վրայ կատարուած նշանաւոր դէպքերուն, թուով երեսուն և երեք։ Այդ պաշտելի գիրքը կարդացած ժամանակ՝ մարդ չգիտեր թէ որո՞ւն վրայ աւելի հիանայ, այդ դէմքերո՞ւն, թէ ընդհակառակն զանոնք կենդանացնող ու սիրցնող վիպասանին վրայ։ Այնչանի այդ պատմական վէպերն ամէնքն ալ, իրաւ է, որ աշխարհական վիպասանութեան մը նկարագիրն, արուեստն ու հրապոյրը չունին — բան որուն համար այսօր կը պահանջուի — դի ինքն իսկ չէր ուզեր՝ որ այնպէս ըլլան. սակայն և այնպէս՝ Վահան Գաղթնեցւոյ, Թէոդոր Սալհունւոյ, Զապէլի, Շուշանի և Պոլիկառոսի ու Նէարխոսի վրայ գրածներէն իւրաքանչիւրը լուսոյն վիպասանութեան մը ապաւորութիւնները կը Թողու մեր վրայ, քրիստոնեայ Հայաստանի արբանեան յիշատակներով։ «Յուշիկները» — թէ իբրեւ վիպագրութիւն, թէ հնագիտութիւն և թէ մատենագրութիւն և լեզու — ունին իրենց ամենամեծ արժանիքը։ Այնչան՝ նկատէէն վերջ ազգային առաջին հետինակն է, որ խառնելով բանաստեղծութիւնը պատմական խոր հմտութեան, ու հայրենասիրութիւնը՝ քրիստոնէական վեհ խնամատարութեան հետ՝ կ՚արտադրէր այդպիսի մէկ գործ, որ սակայն կրնանք անուանել 33 իրարմէ անկախ ու ամբողջական գործեր կամ վիպասանութիւններ։ Այնչանի այդ գործն այնքան ճոխ է և հմայիչ, որ եթէ չկարենանք անուանել «Հազար ու մէկ գիշերներ», սակայն կրնան յօրինուիլ անոնց նիւթերով դեռ ուրիշ հազար և մէկ գիշերներ։

Եւ իրօք, շատեր ներշնչուեցան «Յուշիկներէն», ու շատեր ևս դեռ պիտի ներշնչուին ու գրեն. բայց գրել Այնչանի ամրիծ ու խանդակաթ արտովը, մանաւանդ

թէ օձումին, այս ուրիշին տրուած չէ կարծեմ։ Ձեմ տարակուսիր՝ որ ժամանակն և դիտութիւնը արթպրեն ու կատարելագործեն Ալիշանի գծած վէպերն ու դէպքերը, բայց ոչ բնաւ նկարագրած անոր պաշտելի դէմքերը։ Յամենայն դէպս՝ առանք ոչ պիտի հնանան և ոչ ալ մոռացուին երբէք, քանի որ Ղեւոնդեան սիրան ու չունչը կենդանի կը ճնան հոն և կը բարբառին հայ սերունդներու հետ. քանի որ կրօնք ու հայրենիք՝ ինչպէս մեծ դրոշին ու հայրենասիրին, այսպէս և՛ անոր այդ չքնաղ գրութեան նշանաբանն ու վերջաբանը կը կազմեն։ Այս ալ բանիք՝ որ կրօնքով արբացուած Ալիշանի հայրենասիրութիւնը՝ չունի բնաւ թուլացնող բան մ'իր մէջ, այլ է քաջալերիչ և յորդորիչ ամենուն՝ դէպ յանձնառութիւն ու աշխատասիրութիւն։

Մեր բանաստեղծն — հասակին յառաջելովը — վիպագրութենէն կ'անցնէր հնագիտական լուրջ ուսումնասիրութիւններուն և աշխարհագրութեան, որոնցմով առաջնակարգ գիտնականի համբաւ կը հանէր, և որոնց համար Եւրոպայի այլ և այլ ուսումնական ընկերութիւններ և Ակադեմիաներ դինքը կաճառակցութեան կը հրաւիրէին։ Երբ կը կարծուէր՝ թէ Ալիշանի մէջ բանաստեղծութիւնն ալ բոլորովին մարած էր, և մէկ մ'ալ պիտի չարծարծէր, ահաւասիկ 1881 Թուականին՝ «Անդորրանք Անոյ» խորագրուած քերթուածովը՝ նորէն գետաւ մեր ալեզարդ Նահապետի վառվռուն և զգայուն կուրծքէն բանաստեղծական այնպիսի հրայրք մը, որ հինաւուրց Մասիսի յորդահոս հրաբուխը կը յիշեցնէր մեզ։ Շնորհալին, Ասողիկ, Ղ. Ալիշանով և ուրիշներ խակ այրած արտով ու չափով ողբացին, այո՛, Բագրատունեաց առաջը. ահաւասիկ առանց քերթուածները — բաղդատութեամբ Ալիշանի վեհ և վսեմ քերթուածին — կարծէք թէ լալկան մանուկներու ողբեր ըլլան։ Մեր բանաստեղծը միայն ըմբռնած է և պատկերած — ինչպէս որ էր և պէտք էր ըլլալ — Անոյ անցեալ ու ապագայ նշանակութիւնը։ Ասկէց աւելի այրական, կորովի, ու ներազդող պատկեր չէր կրնար ընծայել Ալիշան ինքնատիպ բանաստեղծութեան։ Այո՛, այս ուրիշ կերպ կարելի չէ որակել, բայց եթէ ըսել՝ որ համազրական ու եզական պատկեր մ'է՝ ոչ միայն Անոյ վրայ բոլոր գրուածներուն և գգացուածներուն, այլ և բանաստեղծի մեծահաւատ սրտի ապագայ հրաշներուն ու խոձերուն։ Հետեւաբար, ինչպէս հրաբուխներն՝ այսպէս ալ բուն բանաստեղծները պահ մը կը դադրին, այո՛, բայց յաւիտեան չեն չեզանիր իրենց խանդէն։ Եւ Ալիշան այդ խանդն է՝ որ կ'արտայայտէ «Անդորրանք Անոյ» քերթուածին մէջ, հասունացած համոզման՝ յամառ ու համոզիչ չեչտով։ Կ'արժէ՝ որ ամէն հայ անհատ բերնուց սերտէ և իր հետ կրէ միշտ այդ գեղեցիկ հմայքը։ Ցոյժ գեղեցիկ է և՛ 1877ի Օրացուցի «Օրօրն»։

Ալիշանի վերջին ոտանաւորն է 1890 Թուականին, այսինքն է՝ իր քահանայութեան և գրական գործունէութեան յիսնամեայ յոբելինի առթիւ գրածն ու արտասանածը[1]. որ կը սկսի։

« Հոլովելով ընդ գառիվայր կենցաղոյս՝
Ի խառն կառաց խորտակելոց դիր և տար,
Ցորոց վերայ յարեաւ աշխարհ նոր, նոր լոյս,
Յերբ, ի գաղփագի անիւ, գլխոյս անդադար։
Քանի՞ ամբոխ ազազակի այս կէս դար
Որոտացին վըրդովեցին գկայս և կոյս.
Եւ դու գանխտուլ վարեալ յԱչխն անվրթար՝
Անցեր ընդ հին հասակս, ընդ սխս գեռաբոյս.
Որք բոլորեալ ըզքեզ ի մօտ և հեռատ,
Անհնայապէս սրփռեն օրհներգս արդ հարուստ
Չ'Եկեղեցւոյ և զՀայրենեաց Յաւէրժամարդ։
Զի՞նչ այսքանեաց երախտեաց տաց ես արիաւոր »...

---

1. Տես « Արեւելք » Ի Տարի, Մայիս 21։

Այս 13 տող փոքրիկ քերթուածովս — իրրեւ իր կեանքի ծանրաբեռնուած նաւակովը — կէս դար աշխարհս վրդովող ամբոխին ու ազմուկին՝ ինչպէս և՛ հին ու նոր հասակներու մէջէն անցնելով, և ներկայիս և հայրենիքին իր ջերմաջերմ շնորհակալութիւններն ընդունելէն վերջ, կը նետուի դարձեալ Սիրոյ սկզբնաղբիւրին մէջը, գոչելով.

« Ո՛վ որ գնաս ինձ, եւ նոցա պիս եառներ,
Աղբիւր սիրոյ, ըզքեզ տամ քեզ, տո՛ւրք անդարձ »։

Այս տողերս ոտքի վրայ արտասանած ժամանակ՝ տեսնելու էր մեր ալեզարդ բանաստեղծին և Նահապետի կեցուածքն. անկէց ալ վեհ, համակրելի և յուզիչ բան չէր կրնար ըլլալ։ Իրաւացի կերպով պիտի կու տար ապա՝ տաճկահայոց կոտմէն եկած նեղբարեկներէն մին՝ թէ Ազիշանը այդ սրտայոյզ պահուն և դիրքի մէջ տեսնելու համար միայն՝ կ'արժէր վեհանձն գալ։

Ազիշան կարող էր արձակ չարտաքութեամբ կամ բերանացի եւս յայտնել իր շնորհակալութիւնը. սակայն այդ քերթուածովը՝ մի անգամ եւս ցոյց տուաւ, թէ սիրոյ մէջ մկրտուած բանաստեղծութիւնն՝ անոր պէս ալ մշտամանուկ էր ու մշտաջարթ, նոյն իսկ 72ամեայ հասակում։ Եւ այդ սիրոմէն է՝ որ ճչելով և մրմնջելով՝ 11 տարի եւս կը հոլովէր իր ջախջախուած կեանքի անիւը. կը կատարէր Միսթարեանց 200ամեայ Յոբելեանը, նուիրելով չորս իրարմէ օգտակար ու գեղեցիկ երկասիրութիւններ։ Աւազ մեծ բանաստեղծին ու հասատացեալի փափաքները կատարուած էին, ինչպէս նաեւ իր երգած տարաբաղդ հայրենիքի համար կրած ցաւերն։ Աւազ — մանկացեալ Աստուածը ողջագուրող սուրբ ծերունւոյն պէս — կը խնդրէր, կ'ընդունէր ու կը փոխուէր նոր ու անժխտանալի կենաց մէջ։ Եւ բանաստեղծի անցաւոր կեանքին պէս՝ մահն եւս կ'ըլլար բանաստեղծութեան հրաշալի դրուագ մը, զոր պատմութիւնը դրոշմեց իր յաւերժական էջերուն մէջ, եւ մենք ուզողը կը համարինք կրկնօրինակել այս տեղ։

*
* *

Միսթարեան և ազգային նշանաւոր բանաստեղծներէն իւրաքանչիւրն ունի ինչպէս իր բանաստեղծութեան՝ այսպէս և քերթողութեան արտաքին կազմութեանը, լեզուին ու ոճի որոշ տեսակն և սահմանը, ուրկէ դուրս չէ ելած և կամ ելած ժամանակ՝ կաղացեր է անոնց Պիգասոն, և զարձեր են խեղճ հետեւակներ։ Իսկ Ազիշանի համար ընդհակառակն՝ չկայ միակերպութիւն, չկայ սահման։ Իր երգն՝ ամենէն ընդարձակն է ու բազմազանը, ամենէն վեհն է և զօրեղը, ամենէն եզականն է ու անբաղդատելի՝ իր չքնաղ խառնուրդին մէջ։ Հոս՝ կ'ընթանան ու կը դաշնակաւորին պիտութիւնը՝ քերթողական արուեստին, հետաքրքրականը՝ յուզիչին, իրականը՝ գաղափարականին, ճշմարիտը՝ փափուկին, դիտողութիւնը՝ թեւաւոր երեւակայութեան, դասականը՝ վիպասանականին և արեւելեան ճաշակն՝ եւրոպականին հետ։ Այսպիսի բազմազանութիւն և դաշնակաւորութիւն մը արտադրելու համար՝ հարկաւոր է քերթողի մ'ունենալ հսկայ և թափանցող հանճար մը, ըլլալ միանգամայն վերլուծող և համադրող։ Իսկ թէ Ազիշան այդպիսի հանճար մ'էր՝ անկէց իսկ կ'իմացուի, զի բոլոր այդ քերթուածները ալ, վիպասանութիւնները ալ, ուսումնասիրութիւնները ալ այնքան բնորոշ կերպով կը կրեն անոր մտքին ու սրտի կնիքը, որ եթէ առանց անուան իսկ մէջ բեռնին — այս ինչ կամ այն բանաստեղծի և բանասիրի գործոց մէջ — փոխառութիւնն իսկոյն կ'իմացուի։ Աւոր հակառակ բան մ'ալ, որ չիմացուիր բնաւ — և սակայն ճշմարիտ է — այն է՝ զի Եղիշէի, Մովսէս քերթողի, Շնորհալւոյ, Լամարտինի, Հիւգոյի, Պայրընի և ուրիշ քերթողներու լարերէն թրթռացած լայնասիրտ հնչիւններն իսկ՝ այնպէս միացած ու դաշնակաւորուած են անոր մէջ, ուր մի միայն Ազիշանի խորունկ, խանդակաթ ու ներազդող ձայնը կը լսուի, ուր անոր հոգւոյ յորձնեռանդն բիւրեմբ միայն կը տեսնուի։ Ահա երկու մեծ յատկութիւններ, որոնք նոյնպէս մեծ ստեղծագործողի մը միայն յատուկ են։ Մէկ խօսքով, ինչ որ է Լէոնարդոյ Դա Վինչի նկարչութեան՝ նոյն է և՛ Ազիշանը բանաստեղծութեան մէջ, և ով լաւ ծանօթութիւն ունի առաջնոյն վրձինին՝ կրնայ դատել վերջնոյս գրիչն ալ։

Այիշաճի քերթուածոց բերի կողմերը. — Մեծ քերթողիս բանաստեղծութիւնն՝ ինչպէս իր մտածութեան ձեւին, այսպէս ալ անոնց արտայայտութիւններուն մէջ՝ ունի և՛ ինչ ինչ թերութիւններ, զորս պէտք չէ ծածկել. քանի որ մանուանդ նպատակ չունինք ներբողեան գրելու, այլ միայն նպատը ճշդիւ ուսումնասիրելու: Բայց կանխենք ըսել, որ եթէ մեծ բանաստեղծի բոլոր կատարելութիւններն՝ արդասիք են իր բնաշնորհ հանճարին, թերութիւններուն իսկ գէթ մէկ մասին համար նոյնը կրնայ բսուիլ: Եւ այս կարգի թերութիւններէն՝ յիշենք երկու միայն, այսինքն է՝ Ա. խոկումն կամ խտութիւն գաղափարաց, որով մտքի կապուտակ պարզութիւնն իրրեւ դէզդզէզ ամպերով կը մթագնի յաճախ. Բ. միջանկեալ խնամաներու և օրինակներու գործածութիւնք, որոնք Օգոստոսի գիշերներու աստղներուն պէս՝ իրենց յանկարծակի լուսովն ընթերցողին միտքը գրաւել կը գրաւեն, այո, բայց և արգելք կ'ըլլան՝ չուտով հասնելու գլխաւոր և էական խնամային և ըմբռնելու զայն: Եւ այս աւելի զգալի է գրաբարով գրած քերթուածոց մէջ, որուն ամենակերպ մանուածոյը աւելի ինքն: Այիշանի ինչպէս Թոչող երեւակայութիւնն՝ այսպէս և նմանզուն սիրտը՝ բնաւորեալ էին կայծակի երագութեամբ իրերը պատկերելու, չարունակ րղխելու: Եւ որչափ Բագրատունիներուն և Հիւրմիւզեաններուն՝ այսպէս և Այիշանի համար հնչուն էր՝ դաստակերութեան մշտօրօր արհեստին ու միակերպութեամբը մեղմել այդ բորբոքն և նուագեցնել այդ րղխումը, սակայն սակ պիտի բանարտուէին նաեւ մեր քերթողի աչխոյժն ու բնածին բերումը, և բնականն ալ փոխուէր արուեստակութեան. հետեւաբար՝ այնուհետեւ Այիշանը՝ պիտի չլինէր այլեւս Այիշան: Ահա սոր համար է՝ որ նա չի ճանչնար որոշ բանից ու բացատրութիւններու անձուկ սահմանը. զի իր Թարմ մտքերն ու գաղափարները, իր անսահման իղձերն ու կիրքերը՝ նոյնպէս նոր բառեր ու բացատրութիւններ կը պահանջէին: Մեր նախնեաց ոսկեդարեան լեզուին և ամէն բառերն տեղեակ էր Այիշան. բայց այդ լեզուն ու այդ բառերը գոցկես ամբաւական Թուած են իրեն՝ գինքն և իր ժամանակեայքը ամբողջապէս և խնդապէս արտայայտելու, մանաւանդ թէ իր բանաստեղծութեան պատմուճանն հիւսելու այնպէս՝ ինչպէս որ կը ձեւէին իր երեւակայութիւնն ու ժամանակը: Ուստի այս բնական պահանջէս մղուած՝ ոչ միայն կը գործածէ նա այն ամէն բառերու և բացատրութիւններու հարուստ աղբիւրը, զոր — Թարգմանիչներէն սկսեալ՝ մինչեւ Բագրատունի և Հիւրմիւզեան — տաննեւհինգ դարեր անընդհատ դարբնած ու գործածած էին, բոլոր իրենց յառաջխաղաց և յետադէմ փոփոխութիւններովն, և գիտութեան և ժողովրդական կեանքի պահանջներովն, այլ ինքն իսկ՝ այդ ամենահարուստ աղբիւրն վրայ յաւելցնելով իր կռմէն ուրիշ նոր նիւթեր՝ այնպէս կը հիւսէր իր բանաստեղծութեան նորաձեւ պատմուճանը՝ լեզուն [1]:

Այիշանի այդ ինքնուրոյն լեզուն ուրեմն՝ ոչ սակեդարու պզրկ, միշտ վայելուչ ու գոյն լեզուն է, և ոչ ալ միջնադարեան մանեղարոյց պղտոգ, տափակ ու պարզական Թոթովանքը, և կամ — ինչպէս կարծեն ոմանք — բարբարիկ լեզուն. այլ երկուքէն մարրեր՝ խիզախ, անհանգարտ, փրփրուտ, ճկուն ու կորովի հայերէն մը: Մէկ խօսքով, հին և նոր իրերը ճշդօրէն պատկերու և արտայայտելու բաւական, և ռամանտիկ բանաստեղծութեան ամենայարմար և պերճախօս լեզու մը:

Ըսուած է՝ թէ Այիշանը «կը պաշտէ հարուստ ու վեհաչուին բառերու կուռքումը, ալիքներու նման չառաչաձայն վրայէ վրայ Թաւալող տողեր և չողշողուն՝ բայց խառնամիղոր կերպով գիրար մղող ու իրարու վրայ գիպուող պատկերներու շեղչեղջումը»: Սակայն գիտել կու տանք՝ որ այս Թերութիւնս ընդհանուր չէ. վասն զի Նահապետի աչխարհարար քերթուածներու մէջ բնաւ տեղի չունին, և կամ խիստ սակաւագիւտ: Իսկ գրաբար քերթուածներէն այդ յատկութիւնն ունեցողներն ալ՝ փոքրամասնութիւն միայն կը կազմեն, կամ լաւ եւս հաղիւ Թէ երկաստասանեակ մը:

Նմանաձայն՝ բառերու քովէքով գործածութիւնն և տատակրկնութիւնք իսկ՝ յոյժ ախորժելի եղած կը տեսնուին [2] մեր քերթողին, և Թերութիւններ կը համարուին:

---

1. Այսպիսի կազմութեան լաւագոյն ներկայացուցիչն է՝ ըստ իս «Անդորրանք Անոյ» քերթուածն, ուր տեղերու կը տեսնուին հիներուն վրայ պատուաստուած նոր ածանցներ յաճախ: Օրինակ իմն, Մ. կաղանկատուացիէն գործածուած բառը «նարմաշարժ», Այիշանն ըրած է նարմանազուկ:

2. Տես մանաւորապէս Հայոց զօրաց ու Վահանայ չուերգը «Համ փորոտան»:

Կ՚աներէս առաջինի նկատմամբ՝ համակարծիք ենք. ուան դի կը գտնուին Աչիշանի ոչ միայն գրեթէ բոլոր երգերուն, այլ նոյն իսկ արձակ շարադրութեանց մէջ։ Սակայն պէտք է ըսել, թէ այդ բաներն՝ իրաւ է՝ որ արձակին մէջ անյարմար են և եպերելի, բայց ոչ նոյնպէս չափական քերթուածներուն մէջ, ուր այդպիսիք՝ կրնայ կամ նկարագրի առատութենէն գան՝ առղերուն ներդաշնակութիւն և երանգ իսկ կ՚աւելցնեն։ Այս տեսակ թերութիւններ ոչ միայն Բագրատունիի, այլ և Վէրգիլիոս կամաւ գործած են «Աչակերտաց» մէջ։ Հասկրա խորհր չատ կը սիրէ Աչիշան, բայց այս բանս՝ որ հետեւակ հեղինակներու մէջ խնամատարութենէ կը յառաջադայի յաճախ, և տափակ արուեստակութեան յանգած է, մեր քերթողին գոլ՝ ընդհակառակն՝ գաղափարական գեղեցիկ գիւտերու կը ծառայէ միայն։ Օրինակ համ.

« Որ հանց բերու բոյս կուգան
Ուսկից հոգար կոյս բուգան »։

Աչիշան տարաշխարհութեան մէջ Բագրատունիին և Հիւրմիւզեանին վար է։ Անոր իրարու հետ տողած բաղաձայնով բառերն — անկիւնաւոր քարերու պէս — ոչ միայն յաճախ կ՚ընդհատացնեն տողերու ընթացող անիւն, այլ և դժուարընթեռնելի և քիչ մ՚ալ խժալար կ՚ընեն գանոնք։ Սակայն և այնպէս՝ իրմէ վերջ եկող բանաստեղծներէն քիչեր կը հաւատարին իրեն՝ քերթողական արուեստին և գաղնակարութեան մէջ։ Ինչ ինչ բառերու մէջ ալ ընդհակառակն (օր. համ, «փրթրթիլ»)ը տառը տարտպատմանօրէն՝ նեղմտածելով՝ անոյշ հնչիւններ յառաջ կը բերէ. որով եթէ չի ալ խանգարեր, այլ դէթ կը գանդաղի ներդաշնակութիւնն։ Օրինակներու և համեմատութեանց մէջ երբեմն կը կոտպայ, երբեմն չափազանց խիստ է, երբեմն ալ արուարդ, բայց ընդհանրապէս նոր։ Այս բանիս ասելի մեծ են դիւրքը, կարծեմ, նախ առանաւորի գանազան տեսակներն ու չափերը — և մանաւորապէս յանգուարը — զոր նա մինչեւ վերջը ձեռքէ չձգուց, այլ նախընտրեցաւ մշակել։ Եւ եթէ յանգաւոր չգրեր, համարձակ Աչիշանի երգերու անհերքելութիւնն ասելի զգալի պիտ՝ ըլլար։

Ինչպէս Շնորհալին՝ այսպէս և մեր քերթողը կը խառնէ առեղ տղայաբանութիւնները՝ վանականներուն հետ։ Սակայն այսպիսիք՝ որ մեզ տարօրինակ կ՚երեւին, Աչիշանի խառնարհ հոգին ինկած են ուղղակի, և գեռ անոր քնքոյշ իդէալը ցոյց կուտան՝ զեղ ի անմեղ մանկութիւնը։ Ամենք ծայրայեղ ճառտութիւն գտած են Աչիշանի գրի, սակայն այս թերիմացութիւն մ՚ըլլալու է ըստ ես, գինքն ի մտոյ չճանչցողներու կորչին. գի մեր քերթողը բնութեամբ չատ կը խորչէր ճառտաբանութենէ, մանաւանդ խօսակցութեան ժամանակ։ Իսկ գրութեան մէջ՝ այն տաեն միայն կը ճոխանար, և կը վանմաբանէր իսկ՝ մեծ հիացումով, երբ խօսքը կամ բոլորովին նոր բան մ՚արտայայտելու, և կամ իրեն պաշտելի անձնաւորութեան մը և գաղափարի վրայ էր։ Այս բանս՝ եթէ կարելի է ճառտութիւն եւս անուանել, սակայն այնպիսի պատրաստներու մէջ դէթ կատարելութիւն է՝ քան թէ թերութիւն. գի մեծարուեստ խորհողներուն և խօսողներուն միայն արտատ է այդ։ Մէկ խօսքով՝ ինչպէս երգասէր սոխակէն կարելի չէ երաժշտական ճշդութիւն և չափ պահանջել, գի անոր արտատոլոր ճառտղիւնն իսկ սիրելի է և միայն իրեն յատուկ, այսպէս և մեր բանաստեղծի նոյն իսկ քերթողական արուեստին և ճաշակի դէմ ըրած ինչ ինչ գարտուղութիւններուն — զորոնք մենք թերութիւններ կ՚անուանենք — եթէ խորը քննենք՝ կը ներկայացնեն մեզ անոր այն բնորոշ արտատրութիւնները և տարօրինակութիւնները, որոնք են բանաստեղծական թաքուն երակներ։ Եւ իրաւցնէ, արդեայց բանաստեղծութիւնն ալ, գեղարուեստներն ալ ոչ ապրէն — կլասիկական ճաշակի հակառակ — տարօրինակութիւններով է՝ որ յաճախ կը տարբերին հիններէն, և որոնցմով կը պարծին հեղինակք՝ իրենց օրուան նորութիւններով։ Բաղդատեցէք Գանտէն՝ Հոմերոսի հետ, Շէքսպիրը,

---

1. Օրինակի աղագաւ, « Աչուն ու ամառն ի քոց վրթրթին պէրճ ծաղկանց, — Եւ ըզգալուկըն ձրմեռայնդն գու մաչես »։

կէթէն, Հիւգոն, Հայնէն ու Կարաուչլի՝ Սոֆոկլէսին, և նոր նկարչութիւնը հնոյն հետ, և բառին իրաւունք պիտի տաք։ Այո՛, ճաշակն ալ, գեղեցկագիտութիւնն ալ առնչական բաներ են, և թէ ժամանակն ու մարդիկ են՝ որ կու տան անոնց նոր ձեւեր։ Հինէրն՝ համաչափութիւնը (symétrie) կը պաշտէին և կը մշակէին. և ինչ որ անոնց համար անհամաչափ և անսովոր համարուած էր, նոյնները կը կազմեն արդեայց համար արդէս չքնաղ նորութիւններ, այնու՝ գի միակերպութիւնը կը կտրեն, և կը զուարճացնեն։ Ուստի մեր մէջ ալ այն մեծ մարդն, այն խիզախ ու խրոխտապանծ բանաստեղծն, որ անցեալ ժամանակներուն հետ յարգեց և՛ նորը, և գտտակարոց գեղեցկագիտական ճաշակին վրան յաւելցուց — առաջին անգամ — առանձնակ ու իրապաշտական նորութիւններն, է Ամիշանը։ Ձկայ հայ բանաստեղծ մը, որ ունեցած ըլլայ իրեն չափ խանդ, ուժգին ու բարձր թռիչ, և գունագեղ ու հարուստ ձեւեր։ Իրաւամբ Ամիշանի վրայ հիացող բանասէր մը՝ կը տեսնէ անոր մէջ համերգական շողեր, առասպաչնչական փայլակներ, հիւգոյական հրաբխութիւններ, ինչպէս նաեւ արտասական քերթութեան արշաւասոյր ալացքներու, հայկական չարականներու և նարեկեան գոյար մեղեդիներու կամ գանձերու զարմանալի խառնուրդ մը։ Մեր բանաստեղծի հանճարն որչափ ալ զօրեղ ըլլար ի բնէ, իրացնող, ինքնատիպ և միանգամայն ստեղծող, սակայն այս ամենայն ի մի ձուլած և համադրած ժամանակ՝ գարմանք չէ՝ որ անոնց թերութիւններուն ու սարօրինակութիւններուն նա արձագանգ տուած ըլլար։ Այո՛, Ամիշանի կարծեցեալ թերութիւններու մեծ մասը կրնայ վերագրուիլ նաբեկացւոյն, զոր կը պաշտէր և որմէ կը պատկառէր, և մաս մ՚ալ հայկական եկեղեցւոյ նաբերական քնարին, որով իր մանկութենէն ի վեր կ՚օրօրուէր և կ՚ապրուէր հզօրեցեալ։ Սակայն անոնցմէն հնչող ու միշտ երկու սեւագնաց ու կնգղաւոր երգիչներուն մէջ եղած զանազանութիւնն իսկ՝ խիստ մեծ է ըստ իս։ Նախ որ Ամիշանը — նոյն իսկ իր գրաբար երգերուն մէջ — անհամեմատ կերպով աւելի պարզ է, կարգաւոր և գիւրահասկանալի։ Երկրորդ, Նարեկացի երգիչն՝ եկեղեցական քնարը միայն գարնել գիտէ, սարական և սրտաբուխ արհեստով. մինչդեռ Ս. Գ. պարոյր երգիչն՝ աշխարհականն ալ, հեթանոսականն ալ, ասիականն ալ, եւրոպականն ալ հաւասար կը հնչեցնէ, մանաւանդ թէ համարեաւտ ճարտարութեամբ կը նկարէ և կ՚երգէ համապոյքը։ Մէկ խօսքով՝ Ամիշան ինչպէս իր ամբոխ առասպելութիւններուն՝ այսպէս և փոքրիկ թերութեանցը մէջ եզական եղած է և պաշտուած յաւէտ և պիտի պաշտուի։

* * *

Ամիշանի ազգեցութիւնը. — Այն մեծ հարցս՝ որ այսօրկ կը յարուցանէ, ըստ իս բնական հետեւութիւն մ՚է մեծապոյն բանաստեղծին և գրագիտի ազգօգուտ ու անմահ գործերուն. ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ կամ մտածուիլ։ Ազգեցութիւն մ՚ուղղակի եղեր է և կամ անուղղակի — ինչպէս կը համարին ամանք — մեզ համար նոյն է։ Իակ երբ մտածենք զայն գրականական կամ քաղաքային տեսակէտներով, այն ատեն հարկ կ՚ըլլայ աւելի լրջօրէն զանազանել և ըստ այնմ դատել։ Նախ պէտք է նկատել՝ որ Ամիշանն ազգային բանաստեղծ է, գրիչ է, բայց ոչ գործիչ՝ անոր դէպ ի քաղաքային անկախութեանը ձգտող չարժմանն։ Այս վերջին կէտս՝ անով իակ կը ձեռնտւի՝ որ Ամիշանը վէնետիկ երթալէն ետքը՝ բնաւ առիթ ունեցած չէ Արեւելք դառնալու, ժողովրդեան հետ շփուելու, անոր վիճակը մօտէն ուսումնասիրելու և քաղաքային խնդիրներուն մասնակցելու ուղղակի։ Հետեւաբար՝ հայրենիքին բացական ու վանական անդորրութեան մէջ ապրող և գրող մեծ վարդապետին ինչպէս քաղաքային հայեցողութիւններն՝ այսպէս ալ գործունէութիւնքը չէին կրնար ըլլալ յեղափոխական, այլ խաղաղական։ Այսինքն է՝ անոր նշանաբանն էր՝ թէ հայրենիքն ու ազգը՝ միայն գրականութեամբ և կենցաղօգուտ գիտութիւններով կարելի էր արթընցնել ու իր վաղեմի մեծութեանը հասցնել։ Ամիշան պատճառ ունէր այսպէս խորհելու. վասն զի նա իր «Նուագներն» ու «Յուշիկները» գրած ժամանակ՝ ազգն ու հայրենիքն՝ ոչ միայն այսօրուանէն աւելի քաղաքային պատուհասներ կը վայելէին

և հանգիստ էին, այլ և անհրաժեշտ պէտք ունէին ինքնագիտակցութեան և մտաւոր յառաջադիմութեան. ուստի ժամանակէն յառաջ անոր մէջ անկախութեան չարժումներ արթնցնելն ուրիշ բան չէր, բայց եթէ մղել գինքը — առանց գիտակցութեան — իր կորստեանը: Հետեւաբար՝ այս տեսակէտով մեր բանաստեղծի և գրական գործիչի ապրեցութիւնը՝ Պէշիքթաշլեանի, Նատիրեանի, Գ. Օտեանի, Մոմուրեանի, Գամօ Քաթիպայի, Բաֆֆիի, Կալպակեանի և ուրիշներուն պէս ուղղակի չէր կրնար ըլլալ:

Իսկ իրրեւ բանաստեղծ և մտաւորական՝ քիչեր եղած են ազգիս մէջ, այդ աստիճան Աչիշանի չափ ապրեցութիւն: Գուցէ ինձ հետ՝ ուրիշներուն խոկ չափազանց երեւի ամանց բառը, թէ Աչիշան ոչ մէկ ժամանակակից հայ գրագէտ կամ բանաստեղծ ապրեցութիւն կրած է, ըլլայ ան Պէնիքեանն, ըլլայ ատոր: Սակայն առանց չափազանցութեան կարելի է ըսել՝ որ ամէն առաւօտ և երեկոյ բանաստեղծ — այդ Աչիշանի օրերը կամ անկէ վերջը գրեցին ու հրատարակուեցան — առհասարակ անոր գործեղ ապրեցութիւնը կրած են կամ ունի գրական անկէ ներշնչուած: Ուրիշ կերպ ալ չէր կրնար ըլլալ, քանի որ նա հրապարակուած էր իրրեւ ժամանակակից առաջին բանաստեղծն, և իր գերթուածները կ'ընծայէին նոր կեանքի և բանաստեղծութեան գանազան տեսակները. քանի որ անոնք ապրիլ էին հայրենասիրութեան, գթայնութեան, խանդի, զգայնութեան, լեզուի, գիտութեան և ամէն կերպ նկարագրեալ արժանաւորութիւններու:

Մ. Պէշիքթաշլեան — որ իր սերտհայ գրական լեզուին — նախապէս Բազրատունեաց մինչեւ Պիզոտը բարձրացուցած էր, իրեն հետեւած ու իր գաղջ գաչնակցութենէն մշտախօսիկ արձագանգովն գմայլած, Աչիշանի գերթուածները հրատարակելէն վերջ՝ ուրիշ բանաստեղծական տիեզերք մը շռայլուած կը տեսնէր իր առջեւ, որ գինքը կը յափշտակէր: Ուստի այնուհետեւ կարծէք թէ անձնատուր կ'ըլլար Աչիշանին, որուն բանաստեղծութեանցը մէջ կը գտնէր իր սրտին ու հանճարի անունդը: Կը փոխէր խոկ իր բանաստեղծութեան լեզուն և ոճը, երկնասլացիկ Մասեաց կատարէն՝ գէպ ի բացակէզ սրտին սլացող գերաթռիչ արծիւին՝ Աչիշանի Թռչանացը կը հետեւէր. գինքը կ'ընէր իրեն Մուսա, և անոր ծոցէն ժայթքած բանաստեղծական շանթերուն ու բացաչունչ լեզուովը կը սկսէր մարդուիլ, թռչիլ և երգել: Այս բանին համոզուելու համար՝ բաւական է կարդալ նախ անոր «Ա՛ղ Հ. Պ. Լեւոնդ Աչիշան[1]» ընծայած չքնաղ գերթուածն, որով կ'ողջ նա Աչիշանն ու իր գերթուածներուն հմայքը: Յարձակ՝ Պէշիքթաշլեանի գանազան գերթուածներն՝ Աչիշանիններէն ներչնչուած կը տեսնուին — որոնցմէ կը բաւէ յիշել հետեւեալները միայն. «Սիրէ՛ ի մահ» գրուածը՝ ներչնչութիւն է բան իս Աչիշանի Բան առ Որիի նուագաց գերթուածին, թէպէտ և պարագաները տարբեր, — «Գիւցազունք Հայոց»ը՝ Որի հայրասանեացցին, — «Ձեմք ի լեառն հսկային» երգը՝ Աչիշանի Հարսնեցքին, — «Գիշեր»ը՝ Աչիշանի Գիշեր գերթուածին և «Ի վաղամեռիկ մահ Որկեան Պետրոսի պատանւոյ» եղերերգութիւնն՝ Աչիշանի Ի Բռժիկի վաղամեռիկ և Հարսեկի եղերերգներուն:

Պ. Դուրեան՝ իր մեծամտիկ բանաստեղծութեան գնարն Աչիշանի «Տիրուհւոյ» մէջը մկրտած է, և այնպէս երգած իր կարճօրեայ կեանքի վրայ իշխող անչքնաղելի սէրն ու սիրային երազները: Մ. Ալէմեանի[2] ու Թ. Թէրզեանի — իրրեւ աչակերտ — այնքան խոր կերպով կրած են Աչիշանի ապրեցութիւնը, որ իրենց գերթուածոց (մանաւանդ պարարտ լեզուով գրածներուն) բոլոր էջերուն մէջ կը յեղյեղեն՝ ոչ միայն անոր գաղափարներն, այլ և բառերն ու բացատրութիւնները: Թէրզեանի առաջնակարգ ու արձակ բանաստեղծութիւններն՝ բան մեծ մասին՝ «Բազմավէպի» մէջ հրատարակուած լինելով, անչուշտ չատերուն ծանօթ են արդէն. իսկ Ալէմեանէն ցոյց կու տանք հետեւեալները. «Երազ՝ ի յիշատակ մանկու Երանիկ տիկնոջ Երամեան» ներչնչութիւն է Աչիշանի Ի պատկերի Լենինայ՝ գաղափարի դասէր Ա. Աղաւնուրեան մահերգին, — «Հրաժեշտը»՝ Գարձ յարեւելս անչքնաւորութեամբ ի սիրելեաց ու Անչքնաւորի ի նուաչոչ սիրելեաց՝ գերթուածներուն, — «Ի մարտ Հայկայ» խորագրուածն՝ Աչիշանի Ի Հայկն եւ ի բազմ հայկազանց գերթուածին, — «Պատերազմ Նպատ լերին» ներչնչուած է Աչիշանի Ճակատամարտս Զիրաւոյ եւ քաչի Մուշեղ գերթուածին:

---

1. Տես Մատենագրութիւնք Մ. Պէշիքթաշլեանի, կ. Պոլիս 1870, եր. 22–23:
2. Տես Ժպիտք և Արտասուք, կ. Պոլիս, տպագր. Արամեանի 1871:

Մկրտիչ Ա. Թուրեան [1] խանդալից ու նրբազգած բանաստեղծն, որ իր մէկ երգին մէջ կը բաղձէ ինքիրմէ՝ առ ինքն, թէ

« Ո՛չ վայլեցաւ անուն յայն մեծ ասպարէս
Ուր Ալիշան, Պուրեան մարտեան առնապէս »,

Եւ ինչ ինչ քերթուածներու մէջ, որով կը թուի մրցիլ նոյն իսկ ապրացեալ Պուրեանին հետ, կարծէք թէ Ալիշանի և Պէշիքթաշլեանի բուրային մէջ ձուլած է իր սիրտն ալ, միտքն ալ, դիւրաթեք ու ձախաճեմ լեզուն ալ, ինչպէս ինքն իսկ կը խոստովանի անկեղծօրէն՝ հետեւեալ տողերով.

« Ո՛վ սրտեռանդն իզձք իմ, փոխագ անուանման,
Զոր անուղի առ Պէշիքթաշլեան ւ Ալիշան »։

Եւ առաջիւ բաւական է բաղդատել ասոր « Տրտունջք »ը՝ Ալիշանի ըմպէ՞ր սրբատուռմ ևս անձնի իմ քերթուածին, « Յիշատակ կամ մնհ Մարզպետաց »ին՝ ի պատկերի Լմենոյ խորագրուածին, և « Աղտատուքը՝ ի շրիմ Մարմնոյ սիրելեաց գառեր իմոյ » գոլորիկ եղերերգն՝ Ալիշանի ի ձեռագրին՝ որք ոչ ևս են, և ի տագնապ մանկան միանձին երկու մահերգներուն կամ ցայգախոհերուն հետ, խնամատու համար՝ թէ առաջիւ Պուրեան սրբգան բանաստեղծական գոհարներ առած է Ալիշանէն, և անոնցմով զպխիկ Բանկագին դրուագներ յօրինած։

Միհրան Ֆէլիկեան — որ վերջերս նշանաւոր հանդիսացաւ իր ապագային երգերովն, և կրնանք կոչել զինքը հայ աչուղներու լուսագոյն ներկայացուցիչը՝ կամ Հայոց գիւղական Տրուաղուրը՝ իր ձերուկ քնարովն — յամին 1900 Գահիրէ հրատարակած իր Սասուն և Զէյթունի տաղաչափեալ Ազգերգութեան ինքնագիւտ ընծայականին մէջ, որով կը ձօնէր [2] իր երկասիրութիւնն ու յորդանքը Ալիշանին, անկեղծօրէն կը յայտարարէ՝ թէ ինքը Նահապետի ձայնով երած էր երգեցիկ։ Ահաւասիկ այդ տողերն, որ երգչին իսկ պատիւ կը բերեն.

« Գնա՛ ծնրադրէ, իմ ձերուկ քնար,
Հայր Ալիշանի քնարին առջեւ,
Որ երգեց ամբողջ զՀայոց աշխարհ՝
Բանաստեղծութեան սրտեռով արեւ։
Գնա՛, ծնրադրէ, այս քիչ են պարտիք,
Չի անոր ձայնով երգեցիկ մ'եղար.
Ցըցուր քու անկեղծ սրտիդ երախտիք,
Թէ այն եղաւ քեզ առաջորդ և Հայր »։

---

1. Տես Երգեր, Տաղեր, Եղերերգներ, և այլն, Կ. Պոլիս, տպգր. Ն. Կ. Պէրպէրեանի 1892։

2. Ձօնքն է յ12/28 Մարտի, 1901, առն խորագրի ներքեւ. « Առ Գերապարգն և Հայրենասէր Հայր Ղեւոնդ Ալիշան »։

Սակայն արեւմտահայն փոխադրուելով մեր ազգային նոր պրակտիկաի արեւելեան կիսագնտին վրայ, կը տեսնենք ակնարեւ՝ որ այդ հորիզոնին վրայ փայլող բանաստեղծներն եւս՝ Աժիշանի պիտոյ բանաստեղծական լուսով լուսաւորուած են և անոր խանդովը ջերմացած։ Ով կարդացեր է «Կռունկ»ի բանաստեղծական էջերն, ով թերթած է Մ. Մխիթարեանի «Ինոր Հայկական» ժողովածուն և «Գամառ քաթիպայի բանաստեղծութիւնք»ը, անշուշտ պիտի յիշէ, թէ Նալպանդեանի «Գարնանամուտ» քերթուածը, Յովհաննէս Ամիրխանեանի «Գարունք Հայոց»ը, Յովհ. Քուչակեցեանցի «Նաւէր Կռունկ Հայոց աշխարհին»ը, Յակ. Մելիք Յակոբեանցի «Պատմութիւնք Ազթամարայ ծովակի եղերք»ը, որքան խոր կերպով կրած են Աժիշանի «Հայոց աշխարհիկ» և «Ոգին Հայաստանի» քերթուածներու կենքը։ Աւելցուցած կրնայ լսուիլ նաեւ Ազգայեանցի սահմանաւոր և արձակ քերթուածներուն ու Գամառ-Քաթիպայի բանաստեղծութեանց համար։ Եւ սակայն, վերջնոյս «Քանչ Վարդան Մամիկոնեանի մահը» հետեւութիւն է խոկալու Աժիշանի «Պետրոս Աւտրոյրի» քերթուածին, «Աստուածածնի պատկերը»ն Աժիշանի «Յարութեան Կուսին», և «Բանակ փրկութեանը»ն Աժիշանի «Սահմանաց Պահպանութեան»։ Օրինակները բազմացընելու պէտք չկայ, մանաւանդ երբ Ե. Պատկանեան ինքնին, 13 Մայիս 1884, Աժիշանին ընծայած իր քերթուածոց օրինակի մը հակառակ պրոշուած է՝ անոնց ծանօթ ձօներ. «Պատկանեի Միսկ ազգային բանաստեղծին՝ Հ. Գ. Հեռու Աժիշանին խորին ակնածութեամբ կ'ընծայէ»։ Կարծեմ թէ Աւետիսեան խիտակ քերթողն այն վկայութիւնն ամէն մեկնութենէ վեր է։ Շահպիզեանն ու Ազ. Ծատուրեան իսկ — իրենց ինքնայատկութիւններով հանդերձ — պարտնէք չէ՝ որ այդ Միսկ ազգային բանաստեղծէն ազդուած ըլլան։

Աժիշան՝ ինչպէս իր «Նաւապներով» վերյարոյց ազգային նոր բանաստեղծներ, այնպէս ալ իր Հայրենեաց «Յուշիկներով»ը պատրաստեց վիպասաններու համար պատրաստ հողը, մանաւանդ թէ շինեց ու հաննց վիպասանները։ Ինչպէս, մտածելով որ այդ հրատարակութիւնէն յառաջ պիտի չերեւնար մեր ազգին համար արձակ վիպասան եղած չէր, նոյն իսկ «Նաւապներու» հրատարակութենէն 12 տարի վերջ, ալ չենք տարակուսիր եզրակացնելու՝ որ Ծերենց, Մամուրեան, Րաֆֆի՝ Աժիշանի «Յուշիկներուն» հետ ներչնչութեամբ է՝ որ պիտեցած կը յղանային Հայոց հինաւուրց կեանքը կենդանացնող վիպասանութիւնները։ Անոր հոգով ու ոճովն է՝ որ Պրուսանձեանց կը մղուէր՝ հաւատալու հայ ժողովրդական կեանքն ու բարքը արտայայտող ստեղծութիւնները, ժողովրդական հէքեաթները կամ պրոյցներն և աչուղներու երգերը։

Եւ եթէ նկատենք Աժիշան իր ամբողջ մտաւորականութեամբը, այն ժամանակ անոր գրական հոգեյ գործերուն պէս՝ իր ազդեցութիւնն իսկ ունի կ'ընդարձակուի և տահասարակ տիրապետող կը դառնայ։ Սակայն պէտք է ըսել՝ որ անոր տեղագրական, հնախօսական ու աշխարհագրական հոգիներն՝ ունի ազգայնոյ զարգացած և ուսումնական դասին՝ քան թէ ամենուն մատչելի և ծանօթ եղած են։ Նոյն իսկ «Նաւապներու» համար կրնայ ըսուիլ, որ արեւմտեան հայոց վրայ ունի ազդեցիկ եղան՝ քան թէ արեւելեայց. վասն զի առաջիններն — չնորհիւ գրաբառագիտութեան — ամբողջին հետ ծանօթացան, իսկ վերջիններն՝ մանաւանդ «Հայրենեաց» և «Նահապետի երգերուն»։ «Յուշիկներն» համօրէն հայութեան համար համառօտած նշանակութիւն ունեցած են։ Յամենայն դէպս՝ մոցած նկատելով — յանձին Աժիշանի — մեծ բանաստեղծը՝ հայրենասիրութեամբ, ու մեծանուն մտաւորները՝ հայ հատառագետին հետ, կրնանք ըսել՝ որ Նահապետն այնպիսի բացառիկ դիրք մը գրաւած է ընդհանուր հայութեան և Եւրոպայի մէջ, զոր ոչ ոք ունեցած է մինչեւ այսօր։ Կարծէք թէ Վանանդեցի տարբր Երեցու անուան հետ՝ պատմական եւս միճակուած էր Ե. Գեւոնդ Աժիշան ըլլալ զուգակից։ Նա եթէ իր անմոռաց գործով բարձրացուց Եկեղեցւոյ խնդիրներուն վրայ, ան ալ գրչով ու գրաւոր երկերով ամէն հայ պատերու և մտքերու առարկայ դարձաւ, 57 տարիներէ ի վեր։ Որոնց ծանօթ չեն Աժիշանի ընդարձակ յարաբերութիւններն՝ պզտիկներուն և օտարաց հետ, բնական էր՝ որ անոր ազդեցութիւնն ալ նոյնպէս համարէին — ինչ ինչ տեսակէտերով — հայրենասիրութեամբ և հանճարով իրմէ վար եղող ազգային ուրիշ գործիչներու ունեցած ժամանակաւոր ու մտաւորական ազդեցութիւնէն. սակայն ան միայն վերջին 30 տարիներու մէջ տեսածներէս ու լսածներէս դատելով, կրնամ վկայել՝ որ Աժիշանի ինչպէս արտաքին վերաբերութիւններն՝ այնպէս ալ ազդեցութիւնը չատ ունի տեւողական, օգտակար ու մեծ եղան ու են։

Իրաւունք՝ մէկ կողմէն իրեն եկած և իրմէն ալ անոնց փոխանակուած հարաբաւոր թղթակցութիւններն — ըլլայ դրականական, ըլլայ հայրապետական և քաղաքական հարցերու նկատմամբ, — և միւս կողմէն ալ իրեն տեսութեան եկող և խորհուրդ հարցնող այցելուներու անընդհատ ընթացքը՝ մեր բաժը լիովին կը հատուցանեն։ Գուցէ անոր ներշնչած խոհական խորհուրդներն ամենուն հաւասարապէս համոզիչ չըլլային, սակայն ամէնքն ալ լուրջ ուշադրութիւն պէտք էր որ դարձնէին անոր վրայ՝ որպէս անկեղծ հայրենասիրի, բարեխիղճ մտրդու և պաշտելի Կաթողիկոսի։ Եւ ասոր համար է՝ որ ինչպէս անոր ամենամտերիմ ախտաճանչի մը դարձած էր վէրնէուիլ եկող ապրումներուն, այնպէս և հաւատարիմ սիրտը՝ կը մնար իրրեւ պահպանողական խորհրդարան մը՝ բազմապիսի դաղանիքաց, որոնցմէ ամէնը եթէ իրեն ուրախութիւն կը պատճառէին, ամէնք ալ մեծ ցաւ և արտասուք էին։ Այիշանի — տեսակցութեան առթիւ տեղի ունեցած — մանրամասնները խիստ շատ էին և արտասովոր, բայց ես անոնցմէ մէկը կ'ուզեմ մէջ բերել այստեղ, որուն ես ինքս ականատես եղած եմ և մեծապէս յուզուած։ Թուրք և ռուս պատերազմէն երկու տարի վերջ՝ Վրաստանի մը Վէրնէուիլ հասնելուն պէս, ուղղակի Ս. Գայար կու գար. և վանքի սեմին վրայ առքը դրած պահուն՝ անհամբեր կերպով Հ. Այիշանը կը հարցնէր։ Սա անդրպետ վիճաբանական մ'էր, որ Այիշեան պատերազմին մէջ երեք գնդակ ընդունած էր թշնամիէն, ու երեքն ալ մարմնոյն մէջը դեռ կը պահէր, ըսելով՝ որ «Տաճկի գնդակը՝ հայի ոսկորին չհասներ»։ Նա դէպ ի Վիեննա ուղղուած էր, դանդաղ հասնել տալու համար։ Եւ երբ ծերունի Կաթողիկոսը տեսաւ, ծնրադրած անոր առջեւը՝ առէպ առէպ ծունկերն ու ձեռքերը համբուրելէ չէր դադրեր։ Կը յուզուէր փոխադարձաբար նաեւ ալեփարդ Կաթողիկոսն՝ այդ քաջարի ու չերմ գօրականին անսովոր ցոյցէն, և չուտով ձեռքերէն բռնած՝ կը բազմեցնէր իր քովը։ Սակայն նա չէր դադրեր կրկնել ու երեքնել նոյնը, տեղւոյն սիրահարի մը դորովով, և կ'ըսէր. «Հ. Այիշան, այս ժամս, այս վարկեանս ինձ համար անմոռանալի պիտի մնայ. վասն զի չմեռած քեզ տեսայ, և իմ ուխտը կատարուեցաւ»։ Կը յիշեմ, երբ Կաթողիկոսն՝ այդ նոր ժամանակաց Հայկակին ձեռքէն բռնած կը յիշեցնէր Սիսեցիներու դարեւոր ու ժառանգական քաջարութիւնն և մատուցած ծառայութիւնները, նա կը գոչէր խոկոյն. «Հ. Այիշան, ձեր ազամանդեայ գրիչը՝ մեր պատմանեայ Թուրէն աւելի կարող և ազգօգուտ գործեր տեսել է»։ Ահա այս մանրամասնութիւնն յայտնի կը տեսնուի՝ որ եթէ Այիշանի գրական գործերը չի ուսումնասիրող մէկն իսկ այսչափ ազդուած էր անկէ, ապա ուրեմն՝ որչափ աւելի մեծ և խոր եղած պիտի ըլլայ անոր ազդեցութիւնն՝ այն բիւրաւոր ընթերցողներու և գնահատողներուն վրայ, նա մանաւանդ հայ ժողովրդեան մեծամասնութեան վրայ։

Այո՛, այդ մեծ ազդեցութեան արձագանգն էր՝ որ նախ յամին 1890՝ անոր յիսնամեայ գրական գործունէութեան Յոբելեանին առիթով կը հնչէր անխառն բոլոր հայ հասարակութեան սրտի խորերէն՝ դէպ ի Այիշան, ինչպէս 1901 Թուականին ալ դէպ ի անոր դամբանը։ Պայթ չէ՝ որ մէկը ուրախութեան, իսկ միւսը՝ խորին ցաւոց էր արտայայտութիւն. դի երկուքին առարկայն եւս Այիշան էր, որ ոչրացեալ ըլլալէն յառաջ՝ հայութեան մխիթարիչն եղաւ, — նոյն իսկ անոր վերջին աշխարհաւեր լռման ու տարակուսի ժամանակը։ Բիչեր եղած են Այիշանի պէս բազդաւոր. դի Հռոմէոս, Գանոէ եւ Միլոան իսկ՝ իրենց մահուանէն շատ և շատ վերջը ճանչցուեցան եւ յարգուեցան. իսկ մեր Կաթողիկոսը՝ նոյն իսկ իր կենդանութեան ժամանակ։ Այս բանս ինչպէս կ'ուզեն Թող մեկնեն կրիտիկոսք, մեր կարծիքով հաւատարտէս պատասխանը է թէ իրեն և թէ գինքը մեծարել գիտցող ազգին։ Հաւատիկ մեծ բանասաեղծին, հայրենասիրին ու հաւատացեալ նկարագիրն, որ ինչպէս արեգակ եղաւ 60 տարի երկրորդ կիսում ծագող բանասաեղծներուն, նոյնպէս պիտի ըլլայ, կը յուսանք, նաեւ ի դարու հայ սերնդեան։

* * *

Հ. Խորէն Գալֆայեան. — Այժմանէն նաքը թէև կայեն և կան բանասաեղծա-կան ասպաներով օժտուած ուրիշ Մխիթարեաններ եւս, որոնց գերթուածներովը լի են 70ամեայ «Բազմավէպի» էջերը, բայց մէկն՝ որ ինքնագիր գերթուածներով և հրատարա-կութիւններով եւս բանասաեղծի համբաւ հանեց ազգիս և օտարաց մէջ՝ է նա ինքն Հ. Խորէն Գալֆայեան, որ և յետոյ կոչուեցաւ Խորէն եպիսկոպոս Նարպէյ կամ Լուսինեան: Այս և նման սխալանքներ մեզ համար նշանակութիւն չունին, և ոչ ալ անոր կենսագրութեամբը կ'ուզենք զբաղիլ. մի մեր կէտ նպատակին է ուղղակի բանասաեղծու-թիւնները:

Գիտելով՝ որ Գալֆայեանի գերթուածներն 1855ամի «Բազմավէպի» մէջ առաջին անգամ սկսած են երեւնալ, կրնանք եզրակացնել՝ որ նա այդ թուականին կամ քիչ յառաջ սկսած ըլլայ բանասաեղծութիւններ գրել:

Գալֆայեանի առանձին գրքոյկներով լոյս տեսած ինքնագիր և ծանօթ բանաս-տեղծութիւնները են՝ Քնար պաճուճանաց [1], Վարդենիք [2], և Առաջաւք հայկազանք [3]. Ա-ջակ Բ տպերգութիւնն և Ազաթրանկա կատակերգուհին մը: Առնցմէ զատ իր անու-նը (Հ. Խ. Գ.) կը կրեն 16 ուրիշ գերթուածներ եւս, որոնք հրատարակուած են «Բազմավէպի» 1855, 1856 և 1857 տարիներու պրակներուն մէջ, և են հետեւեալ-ները. «Ազագայք» (տես Բազմ. 1855, եր. 6), — «Ի սգալի մահ ազնուագարմ Սիպհոյ Ազրահամու Ազանուրեան» (Բազմ. 1855. եր. 35), — «Քնութիւնք կամ ձեռութիւն մարդոյ» (Բազմ. 1855, եր. 211), — «Ա նախահարան» (Բազմ. 1855, եր. 241), — «Յամբառնան ի Պէութիւն Պաւղոսի, Միհրանոյ և Տիրանոյ Տիւ-զեանց» (Բազմ. 1855, եր. 279), — «Ա առակս» (Բազմ. 1855, եր. 292), — «Ա կանթեղն իմ» (Բազմ. 1855, եր. 327), — «Բանասաեղծութիւն Յ Ամէին» (Բազմ. 1856, եր. 39), — «Ի փոխումն Առաւաւծամօրն» (Բազմ. 1856, եր. 245), — «Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր» (Բազմ. 1856, եր. 313), — «Տէր ե՞րբ տեսցես» (Բազմ. 1856, եր, 344), — «Յիշատակ սիրելեաց» (Բազմ. 1857, եր. 6), — «Առաջին մանուչակն» (Բազմ. 1857, եր. 88), — «Զղջութիւն Պետրոս»ի (Բազմ. 1857, եր. 108), — «Անզղջութիւն Յուդայ»ի (Բազմ. 1857, եր. 120), — «Գարուն» (Բազմ. 1857, եր. 138):

Կան «Բազմավէպի» մէջ առանց ստորագրութեան անուան նաեւ այս հինգ քեր-թուածներս, որոնք ճանչն և գործածուած բառերէն դասելով՝ Գալֆայեանի գրչէն ե-լած կը տեսնուին, այսինքն են՝ «Թագուհին» (Բազմ. 1856, եր. 184), — «Ո՛վ ցաւք, ով ցաւք» (Բազմ. 1856, եր. 200). — «Ամայութիւն՝ առ Վ. Հ. Ա. Կ. Բ» (Բազմ. 1856, եր. 216), — «Ա չիրմու աչխարհասիրին» (Բազմ. 1857, եր. 40), — «Ողջ լեր թագուհի», առ Կուսամայրն Առաւաւծածին (Բազմ. 1856, եր. 149):

Կան գարձեալ ուրիշ երկու երգեր եւս, Մայրավանայս անտիպ «Տաղարանին» մէջ, և երկուքն եւս իրենց տեսակին մէջ յոյժ գեղեցիկ, որուն համար ալ առեպ կ'երգեցուին: Առնցմէ առաջինն է «Անապատ էր Թեբայիս», Ս. Անտոն Աբբային նուիրուած. իսկ երկրորդն է՝ «Ահաւասիկ է արշալոյս» խրախուսական երգն, Վարդանանց զօրավարաց ասնախմբութեան առթիւ յօրինուած: Զօրաց բերանը դրուած է երգս, և զոգեաս բոլորովին նմանողութիւն է Հ. Արսէն Բագրատունեայ՝ Տիգեան Յակոբ չէլէպիի վրայ գրած եղերերգութեան:

Քերթողն իր «Առաւերք հայկազանք» ի յառաջարանին մէջ կը յայտարարէ առ ընթերցողս, թէ 1870ին Բերայի հրդեհը՝ յաճիւն դարձուցեր էր իր տառնամեայ երկասի-

---

1. Տպուած ի կ. Պոլիս, Արամեան տպարանը 1868:

2. Տպուած ի Թէոդոսիա 1862ին, Խալխեան ազգային տպարանին մէջ, և կը բաղկանայ 349 փոքրա-դիր երեսներէ, մաքուր և գեղեցիկ տպագրութեամբ:

3. Տպուած ի կ. Պոլիս, յամին 1874, Գալֆեանի տպարանը, և կը բաղկանայ ութաճալ 164 էջերէ, երկու գրքերու բաժնուած է, Ա. Վէպք, և Բ. Եղերերգք:

բանիւններն, որոնք կը բաղկանային՝ ըստ մեծի մասին՝ հայ գիւղացոյն վրայ յօրինուած կենսագրական վէպերէ և քանի մը հատորի չափ քերթողական աշխատութիւններէ։ Սակայն կան[1] ապրակուսելու պատճառներ այսպիսոյ երեւոյթի պատճառ մասին, յիշելով ազգային երդիծապատին Պարոնեանի՝ անոնց նկատմամբ ըրած այս սրամտաբանութիւնը. «Ինչպէս որ ճարակ կ'ըլլան գժբաղդաբար այն ամէն երկասիրութիւններն, որք ապրած չեն... գրված չեն»։ Առաջ Գալֆայեանի չգրած և չտպած քերթուածոց գաղափարն էրեն Թողով, և գրածներուն և հրատարակածներուն վրայ միայն ուշադրութիւն դարձնելով, կ'ըսենք որ ասոնք իսկ բաւական պիտի ըլլային բանաստեղծ մը անուանի ընելու, եթէ կրկին էրենց վրայ ասոյդ բանաստեղծութեան բնապրչմը։ Ահա առաջին և կարեւոր հարցը, որ կը յարուցուի Գալֆայեանի քերթուածներու մասին։

Թէ «Բազմավէպի» մէջ տպուածներն և թէ «Արծուիներ» խորագրուած քերթուածները գրաբար լեզուով գրուած են. բայց ասոնց իրարմէ ունեցած զանազանութիւնն իսկ աչքի զարնող է։ Առաջիններն — ինչպէս մտածութեան խորութեամբ, այնպէս և լեզուական բանահիւսութեան կողմէն — կրնան Գալֆայեանի քերթուածներուն մէջ լաւագոյնները ու վեհագոյնները համարուիլ։ Նկատելով՝ որ ասոնք բանաստեղծի կենաց գարնանին երեսփոխիքն են, մարդ կը զարմանայ անոնց մէջ արտայայտուած հասուն գաղափարներուն ու նկարագրի լրջութեան և ինքնուրոյնութեանը վրայ։ Եւ իրօք, կարդացէք «Զղօսքիւն՝ Պետրա», «Անպղտութիւն՝ Յուզա», «Մեծութիւն մարդոյ» և «Ի փոխումն Առաւտածոմբ» քերթուածները, մանաւանդ թէ բաղդատեցէք զասոնք՝ անոր «Արծուիներ» և «Սուրբք Հայկազանք» տարիներ վերջ գրուած քերթուածներուն հետ, և պիտի ըսէք անշուշտ՝ թէ երիտասարդ Հ. Խորէն Գալֆայեանն՝ ասկի խորհուրդ մտածող և հասունցող եղած է, քան Խորէն եպիսկոպոս Նարպէյը կամ պերճախօսն Լուսինեանն։ Այո, անոր հայկաբանութիւնն ալ, ան ալ յառաջ ասկի կուգ եղած է և կրթվի՝ քան թէ վերջը։ Իրաւ է՝ որ այդ տարիներն ոչ մին չունի Բագրատունեաց և Շիրմիւղեանի քնարական ներդաշնակութիւնն ու զգայնոյն մեղմութիւնը. բայց ասոնի պերճութեք լեզու, խանդոտ և կարուկ բացատրութիւններ, այնպէս որ՝ կարծէք թէ յոյն կամ լատին բանաստեղծութեան արհեստով ձեւուած են անոր մեղմութիւնները և բանիկ փոխաղրութիւնքը։ Նորաստեղծութեան կողմնակ ալ Աստիճան աշակերտած կ'երեւի, առանց տակտին հատատրելու ատոր վեհ և վսեմ խոյանքներուն, բարդ գաղափարներուն, բնական և յարդ պատկերներուն, վսեմ պատկերազարդութեանն ու յափշտակող հոգւոյն։

Գալֆայեանի այդ քերթուածներուն և բանահիւսական ոճին գաղափար մը տալու համար՝ դնենք այս տեղ իրր նմոյշ երկուքէն եւս մի քանի տողեր.

« Հնձէր Պետրա հարեալ ի ցաւս տրտմէի,
Վասն պետութեան ապրայր և լայր դառնապէս.
Լայր և մեզայն ոչ մի հնարեալ չըքմեղանք
Ոչ պարտաքին տակ կեղծելն, ոչ գայն վրատանք։
Չերդ մարդկութեանս խարդաւանեալ նախահայր՝
Եւ հատասյս նորոյ ըսկիզբն այս և ծայր,
Նըմին հանգոյն գըթեալ և ինքն ի կնոջէ,
Այլ սա ըզմեզան՝ յանձն և ոչ յայլ ոք հանէ։
Քան զառաջին՝ նորան գընալ ըսկիսի,
Ինք վազէ յառան և զմեզանաց կոտրտի. —
Ըզյանցաւոյն մարդկաց յարհատ յարտօսրըր լուայիկ
Տնա Տէրն՝ և հար գիւր թողութեանն անդ կընիք »։

---

1. Եւ առաջին դիտելու է՝ որ քերթողն ինքնին — յիշեալ Յառաջաբանին մէջ — թէ իր վէպերն և թէ եղերերգներն անկատար կը համարի. և այդ անկատարութեան կամ երդոց տակաւութեանն իրրեւ գլխաւոր պատճառ կը դնէ իր «տկարութիւնը՝ նիւթոց անբաւ առատութեան հանդէպ»։ Արդ՝ այդ կարծեցեալ քերթողական հատորները՝ կամ ի Պարիս և կամ ի Թէոդոսիա եղած պահուն երկասիրած կրնար ըլլալ, 1850–1864 թուականներուն. վասն զի ան ակէց վերջ՝ մերթ Բերայի, մերթ Պէշիքթաշի քարոզչութեամբ զբաղած էր, ինչպէս 1867ին ալ Նուիրակութեամբ Այնժմիածին, և եպիսկոպոսութեան և առաջնորդութեան խնդիրներուն։ Իսկ արդ՝ եթէ գրած էր, ինչո՞ւ չտպեց զանոնք կամ Աբամեան և կամ Խալիպեան տպարաններուն, երբ յարմար առիթ ունէր և դիւրութիւններ։

Բայց հնձուքիւնք ցաւագին
Ոչ պատարեն յոյն չըրթանց՝
Որ պիտացին կալ յուրաա
Ըզվարդապետն եւ Աստուած։
Բայց արտասուք պառնագէս
Ոչ յոյն աչաց ցամաքին՝
Որ յերաշխէպան Յիսուսէ
Եւ զիւր ըզմեզըն տեսին։
Ըզկերկլոյն բազմաատա
Յիչեալ ատ ինք չնորհս և սէր՝
Եւ զիր զարձուածս սխերիմ
Կըշռեալ նըմին՝ արտասուէր։
Այր յայդս այգուն նա գհատուն
Բարբառ խօսից միչ լսէր,
Այլ ծագմանն ատեսիս
Նըմին յարտօսր էր հրատէր։
Այր միչ քարոզ յառաջին
Կայր Յիսուսի քաղցր անուան,
Մեզանաց յոյս և խրախոյս,
Ու առհատաչեայ Թողութեան։
Թողութեան... վաղ նըմա սըրեալ էր գայդ երկին,
Այլ սիրան ըզգայր յոր թերացեալ ինչ էր սըրտին.
Եւ ըզպըղծեալն յուրացութիւն անդ ըզչըրթուն,
Թէպէտ սըրբեալ իբրեւ ասկի՝ 'Հայր հնձուքիւնս,
Բայց հառաչմամբ ի զղջմէ ոչ զարտաքս՝
Միչ ի խաչին նա յաթոռոյ ոչ գառանեաց.
Եւ արտասուք աչացն ի զեղջ ոչ կաանգին
Մինչեւ զարիւն ոչ լացին »։

Որչափ գողտրիկ է և սիրաչարժ Պետրոսի զղջութեան այն նկարագիրը, նոյնչափ նա և սեպի ահաւոր է Յուդայի անզղջութեան նկարագիրն՝ ի հետեւեալն.

« Ձակատ կընձռեալ, դէմք գալհատար, յօնքն ի կախ,
Ականոցիք պըղտոր յարեան ի մըթար,
Չերեսական չարժելով քայլըն դանդաղ
Ի տաճարէ դրանց ամն արտաքս ելեալ գայր։
Հազիւ թէ խուն մի հեռացեալ էր անտի՝
Իբր ոք յերկար ինչ ի հատեալ ճանապարհ,
Ի բարձրաւանդ իմն որ դիպեալ առակի՝
Ծանչ բազմեցաւ, սեւեռեալ գաչսն ի տաճար։
. . . . . .
Ժամն եկաց ձիգս այնպէս, 'ւ ոչ նոր խորհըրդոց
Տիպք յայտորդեալ յայն ճակատ ատեն անցանեն,
Թըւին հրաժեշտ արեալ նկատքն այն յուսոյ,
Եւ ինչ ուչ այլ տեսանել՝ բայց ի խըղճէն։
Խընդրեաց արտօսր, այլ նըմա բիրք ժըխտեցին.
Չի եւ ոչ այնմ էր ըսխոխման արժանի.
Ըզձեռան ի գլուխ յայնժամ եհար նա ուժգին,
Գատն իմն հառաչ խորոց սըրտին արձակի։
« Անէ՛ծք աւուրն յորում ծընայ, անէ՛ծք յայն,
« Անէ՛ծք որ գիս յայս անիծից լոյս եհան.
« Անէ՛ծք երկրի, անէ՛ծք երկնից 'ւոր ի նմա.
« Անէ՛ծք քեզ, Յուդա »...

Եւ կըրկնեցին երկիր, կամարն ատեղեայ.
« Անէ՛ծք քեզ, Յուդա »։
Եկաց յայն ձայն, յանկարծ ի վեր նա վազեաց,
« Ո՛չ. ո՛չ Յուդայ են լոկ անէ՛ծք » մըրընչէր,
Եւ ի տաճար զդէմն հառաւատեալ մըթագղեաց
Թուէր յոսին յայտարն ծաղու ինչ ըսուելու։
« Եւ զուք ընդ իս, վա՛ռք, որ մերժէքդ անագան.
Ձձեր եւս այս ձեռք զընեաց յարծաթդ զատակնիք.
Ոչ, Յուդա, ոչ ի էնկղ զատչի յաւխտեան.
Ի զժոխս յաւէժ զնա ձեզ ատտան վարձեցիք։
« Արիւնն անվեղ ի պիղծ հարեալ ձեր ճակատ՝
Նըշան անջինջ կացցէ ի սուր Սատակչին,
Եւ զայդ յանչէկ բոցոյն տեսանել խորխորատ՝
Տաց ատեաս՝ թէ աւանի՛կ են, հասին։
« Անէ՛ծք ի գլուխըդ ձեր, անէ՛ծք տեառ յոգին.
Անէ՛ծք յեփուտ անդ ձեր, անէ՛ծք տաճարին.
Անէ՛ծք յօրէնաղ եւ ում էիք պաշտօնեայք,
Անէ՛ծք ձեզ Յուդայք »։
Եւ կըրկնեցին զժոխք և վիհքն հինօրեայք.
Անէ՛ծք ձեզ Յուդայք։

. . . . . .

Անդ ի յաւէժ մահուն սուգեալ յիչատակ,
Եւ յառաչեալ մըտօք՝ յոր հուպն էր գնալոց,
Կարծեաց յերկրէ թէ երբ խուսէ ինքարձակ՝
Ան ի զըժոխս՝ ոչ ծանրի նման վրիժագործ։

. . . . . .

Բայց սոսկալին յայն անըրջիկ թանձրամած՝
Անյուսութիւն, զոր ընծայէր ցանկալի՝
Չարթեաւ յանկարծ գինուց ի չող ճօճընթաց,
Չայն յունկն հարաւ որոտընդոստ « խաչեցի՛ »։
Սարսափեցաւ. ամբոխ եռես ի ատրեւ.
Ծանեաւ ըզգունդ, զբպիրս և ծերս նենգաժէտ.
Եւ ընդ բեռամբ սեաւ գերանի քառաթեւ՝
Ծանեաւ ո՛ այն էր, որ հեծէր մահուն յերթ։
Ծանեաւ... ահե՛զ ծանօթութիւն, զոսկրն արիւն՝
Հոսեալ, կոխեալ, զոր ինք եհանն ի վաճառ.
Որ աչխարհի մեզաց ըզՀօր գըթութիւն,
Եւ մատնըչին՝ զարդարութիւնըն կարդայր։

Իբր ըզվարագ անհեթեթ
Ի գիպաձիգ հարեալ նետ,
Յահ և զայրոյթ ոխաթափ
Ընդ ձոր, ընդ վախ գընայ թափ։

. . . . . .

Որչափ և յո գիմէր նա՝
Ի ձայն պակչէր ցանգ նորա,
Եւ նոր ի նոր ցանգ հարուած,
Եւ չարաթոյն էր խայթուած։
Անց նա ընդ գրունս Սաղիմայ,
Սա զձայնն արկ յուշ Ովսաննայ.
Ընդ Զիթենեաց անց բըլուր՝
Չահեզն ած յուշ սա համբոյր։

. . . . . .

Ըզկայ էառ ի նահմասուեր ինչ հովիտ,
Եառես զերբուկս, եւ կոյտս ոսկերց թանձրախիտ.
Թըշուառութեան անուն ի ձորն այն կոչէր,
Չարագործացն յոսկերաց մըթեր։

Ինչ սեւասուեր նրատաւ ծառոյ մի 'նդ բընով,
Վեր հայեցաւ, երկին պատի նման միտով.
Եւ հայհոյանք՝ զոր պատրաստի էր ժայթքել՝
Մեռան՝ չըրթանց իւր ի կտիկատիլ։
Չդառապարտեալ լրաւ զիւրիւ ծաղր ըստուերց,
Եւ ի հոգոյն եառնս կայտառել զգարչն ահերց։
Գլժոխք զոտիւք փեռնկէին բոցակէզ՝
Ախոյեանին իւր անձկալով ի տես։
« Չի՞ կաս Յուզա ». ձայն իմն յականջս իւր հարաւ,
Եւ իրր ի ձայն ինչ քաջալեր նայեցաւ.
« Չի՞ նս կայ քո ուերկրի, ոյր ես զու ատակումն.
« Գլժոխոց ծնունդդ էր և կոչումն »։
« Գլժո՛խք »... զոչեաց, և ատրեցին արձագանգք,
« Առ՛ք զաւարդ, եթէ և զուք ոչ սակայք »...
Վազեաց լընուլ զվրճիւ զոր ետ անուաւ խիղճ,
Ինքն ոճրագործ, զառող և զահիճ։
Չգօտին կախեաց անուր ընդ ատ մի ծառոյն
Եւ 'նդ պարանոցն արկ խեղդ, ճօճէր մէջ օդոյն։...
Եւ մինչ կենաց բանայր խաչիւ զմուան Յիսուս,
Ատեն ընդ մահո՛ն Թաւալէր ընդ գրունս »։

Խորենեան այս տողերուս մէջ՝ որչափ որ ալ ակնարիւ կը տեսնուին խճողուած բառաձայներու կռուանքը, սակայն և այնպէս բանաստեղծութեան պէս լեզուն և նկարագիրն եւս յոյժ կենդանի է և կատարեալ։ Բանաստեղծութեան՝ Գալֆայեանին յառուկ կամ ուրիշէն նկրչնչուած ըլլալու մասին որոշ բան մը չենք կրնար ըսել։

Ա. ատենոց քերթուածէն մէջ իր սիրելիներու կորուստն և արտ ցաւը արտայայտելէն վերջ՝ կը նկարագրէ իր երերուն վիճակին այսպէս.

« Յօտար դրախտի ծաղիկ բերեալ է ատա սիրտ,
Ուր երբէք ո՛չ ատցէ զարհատս իւր ի խոր.
Ուր չուրք գառինք, արդն և հողմունք խիտ առ խիտ,
Մինչեւ ընդ խոի ցաւոց անկցի գլխակոր
Ա. ի նոր փըթիթ »։

Տէր Ներ տեսցես քերթուածէն մէջ՝ կ'ակնարկէ իր արտ անձուկը դէպ ի նոր կեանքը, զոր սակայն կը տեսնէ իրմէ միշտ հեռի, գոչելով.

« Ալ ի թօթափել և մեր սիրելեաց,
Որոց մեք սըրտին, մերոյս նոքա զարդ,
Յորոց առնուաք ըզչուր կամ զըստուեր,
Եւ ի մէնչ ի բաց անկան ատրապարտ...
Երբ կապոյտ յոգւոցըս խինդ և սիրտնք,
Թեւք՝ յորոց թեթեւ սլացեալ տանէին,
Հայիմք չուրչ սիրոյն յաշնքան աւերակս,
Եւ չիք որ խոստանայ զարձ, կեանք վերըստին »։

Իսկ Գաբուռն խորագրած քերթուածէն մէջ այսպէս կը ձեչէ դէպ ի այդ նոր կեանքի խնդուժերես երազները.

« Եւ ոչ զայս նոր որ գյետս մահու տեսեալ կեանս՝
Եւ ոչ սըրտիս ի թախծագին ախոյեալ ժամս,
Թէ՝ վերդ զարուն ի ձմեռանէ՝ և հոգւոյ
Ձխինդ ընձուես ի սըգոյ »։

Թախծոտբիւն քերթուածի մէջ կը հառաչէ իր պատրանքը.

« Յաչխարհի չիք պատասխանի սըրտիս ձայն.
Լի են սիրտք, չիք ինձ ի նոսա խորշ ունայն...
Խաւար է ինձ, չիկ՞ քեզ, ակըն լուսոյ,
Ինձ ճառագայթ մի յուսոյ։
Ախ՛ւոյդ թէ ոչ մըթարք աչաց հանդարտին՝
Ո՛հ, գէթ զափսամբ ցաւոցըս չոզ մի գեղին,
Որ պարուրեալ զոսոխաց սըխուր ապարէդ,
Ալս յայտնիցէ ինձ եղերս »։

Իսկ Աչխարհբիւն քերթուածով կը ներկայացնէ իր սրտի ամայութիւնն, և ուրիշ ուղի մը կը փնտռէ, այսպէս.

« Ո՛վ անապատք ամայի, յոյց վերստնոյ սիրտ իմ զանուն,
Բայց գի յարգիւնս անդ նուագ զուք յիմս իցէք նմանութիւն.
Տա՛յր ոք սըրտիս՝ յամայեն իւր թէ կըզգեակք էին զարար.
Թէ և անդորր, թէ հեռաւոտ՝ բայց գայր և իւր եղր ի նըչմար »։
Եւ թէ ասել ինձ մարթիւր. Ըզսոխ և անդորր վերելեակ՝
Ամայութեան իւր աւարտին սահմանք »։

1858 *թուականին Գալֆայեանի երազած ու ապերգած « եղրը » վերջապէս յե-
րեան կու գար, այսինքն է՝ նա կը գտաւէր Միսիթ. Միսրանութենէն։ Իրեն համար
վանական կեանքն և ինքն ալ վանական կեանքին մեռած էր. ուստի անոր նոր
կամ ազատ կեանքին համաձայն — զոր սկսաւ Ֆրանսայի աչխարհամուտ քաղաքումը,
պանդխտեցոյց գինքը Ղրիմի Թերակղզւոյն մէջ և ապահոց Կ. Պոլսում — պիտի
ըլլար այնուհետեւ նաեւ բանաստեղծութիւնը։ Ես միտք չունիմ պրպըտել Գալֆայեանի
այդ կեանքը, զի Միսիթարեանէն դուրս է, հետեւաբար՝ նաեւ մեր գրած նպատակէն.
այլ վերլուծել միայն անոր մէջ գրուած ինչ ինչ քերթուածներն, որոնք գէթ ըստ լե-
զուին և ըստ նմանողութեան պիտի ունին Միսիթարեան բանաստեղծութեան, և իր
նախնական կեանքին մէջ գրածներուն հետ ալ խոստոր համեմատութիւն ցոյց կու տան։*

*«Վարդենիք» որոնք աւելի նիւթ եղած են Թրքահայ երիտասարդութեան ընթեր-
ցանութեան՝ քան թէ ուսումնասիրութեան, ոչ միայն գգացումներու փափկութեամբ և
սիրային արտայայտութիւններով կրնան մրցիլ Հայոց սիրերգու հին աչուղներու երգերուն
հետ, այլ լեզուով ու չափական արհեստով իսկ կը գերազանցեն զանոնք։ Սակայն այդ
52 երգերուն մէջ՝ երկտասանեակ մը հազիւ կը գտնուին, որոնց համար կարենանք
ըսել՝ թէ իրենց մտածութեան ձեւի խորութեամբ և վեհ պատկերազութեամբ բանաս-
տեղծական ինքնուրոյն նորութիւններ կարենան կազմեն։ Այդ երգերն՝ ազգային կամ
հանրազգային պատմութեան և ազգագրութեան* (ethnographic) *վերաբերութեամբ իսկ
չունին առաջնոց նշանակութիւնը, որ կը պահանջուի նոյն իսկ այժմու բանաստեղծներէն.
վասն զի ամէնքն ալ՝ փոքր ինչ բացառութեամբ՝ ի միայն բանաստեղծի սիրային տենչանքը
կ'արտայայտեն — յաճախ առանց առարկայականութեան, — որոնք սակայն հատա-
րակ են նաեւ այն սիրերգու բանաստեղծներուն, ոյք կանխած են գինքը։ « Պան-
դուխտ »ը, « Ջեմիւռ »ն, « Արտեւանակ »ն, « Աղպիկ »ն ու « Քնար պանդխտի »ն
անդամ՝ որոնց արժան էր ունենալ իրենց յատուկ առարկայականութիւնն ու բնորոշ
ըսել՝ թէ իրենց մտածութեան ձեւի խորութեամբ և վեհ պատկերազութեամբ բանաս-
տեղծական ինքնուրոյն նորութիւններ կարենան կազմեն։ Այդ երգերն՝ ազգային կամ
հանրազգային պատմութեան և ազգագրութեան* (ethnographic) *վերաբերութեամբ իսկ
չունին առաջնոց նշանակութիւնը, որ կը պահանջուի նոյն իսկ այժմու բանաստեղծներէն.
վասն զի ամէնքն ալ՝ փոքր ինչ բացառութեամբ՝ ի միայն բանաստեղծի սիրային տենչանքը
կ'արտայայտեն — յաճախ առանց առարկայականութեան, — որոնք սակայն հատա-
րակ են նաեւ այն սիրերգու բանաստեղծներուն, ոյք կանխած են գինքը։ « Պան-
դուխտ »ը, « Ջեմիւռ »ն, « Արտեւանակ »ն, « Աղպիկ »ն ու « Քնար պանդխտի »ն
անդամ՝ որոնց արժան էր ունենալ իրենց յատուկ առարկայականութիւնն ու բնորոշ*

նկարագիրքը, բանաստեղծս ծառայեցուցած է զանոնք իր այդ խորհրդաւոր ան-
չանքին, և բանի իւրացնել ձկտած է իր անձին հետ։

Նա կը յայտարարէ՝ իր այդ վերերգներու Յառաջաբանին մէջ նախ՝ թէ «Յայլ
և այլ դէպս ծնան և ի ժամանակս, ամաց ոչ սակաւուց ընդ մէջ անցանելով. որ զի
առ հասարակ առ քոյրն մատոյց ընծայեալք ի մօտոյ և կամ ի հեռուստ, ի պանդուխտ
եղբօրէն, վասն որոյ և ի ծաղկափթիթ անուն կուսին կնքեցան առանձնօր»։ Սակայն յետոյ
— գրքուկին հրատարակութեան նկատմամբ բրած չատ տող ծանուցումէ մը եաքը՝ —
նորէն կու տայ ընթերցողին ուրիշ յայտարարութիւն մ'ալ. «Յայլ զարձեալ և առ
քոյրն իւր նուիրէ զառ եղբայրն, իբր փունջ ծաղկաքաղ յիշատակի բուրաստանէ, կա-
պել ի ճակատն կուսական՝ զոր պատկեն Հարսանիք»։ Իսկ յաջորդ տողերուն մէջ
բրած կրկին յայտարարութիւններէն մէկովը՝ ընթերցողին եւս կը նուիրէ իր տաղերը,
կոչելով զինքը իրեն «հաճելուման և բարեբաստիկ եղբայր», պայմանաւ՝ որ եթէ անոր
սիրան եւս իրենին պէս «առիր իցէ ի վայրաթաթրճն կրից». իսկ միւսովը՝ կ'արտիւէ
իր տաղերու ընթերցումն անոր, «զոյ առաջի ծագու Թուխյն անուն՝ առիր և անահան
սիրոյ, և որ՝ զոր ոչն գոյ արբութեամբ՝ համարիցի թէ և այլոց սիրաք անճման
իցեն յերկնատրոփ բարեխմանց անտի եղբայրական սիրոյ»։ Մենք եւս անտարակոյս
կը փափաքէինք՝ որ այդպէս եղած ըլլար։...

Գալֆայեանի բանաստեղծութեան չարժիչ զաղափարականն է ակրը, զոր մար-
մնացնել ուզած է քոյր անուշիկ և զոլորիկ անուան մէջ. բայց բանաստեղծի քոյրերն
կարծէք թէ այնչափ են՝ որչափ են անոր երգերը։...

Սոյն զաղափարականին՝ իրրեւ կուռքի մը՝ երկրպագու բանաստեղծի ներքին
արամադրութեանց պէս՝ արտայայտութիւնքն եւս են տարապայման։ Երբեմն առաս-
պելեալ Պրոմեթէի պէս՝ կը ճգնի զանազան նիւթերով և գոյներով նոր նոր փոխա-
կերպութիւններ տալ իր բանաստեղծութեան, և երբեմն ալ գիտակցաբար ազատելու
համար զինքը տանջող զգացումներու ծանր և ճնշող շղթաներէն, կը հնարի տեղծել
գերագոյն երկինք մ'ալ, ձկտիլ դէպ ի ամենամաքուր Կոյսն և կուսական մաքրու-
թեան նախատիպը. սակայն այսպիսի պարագայից մէջ իսկ՝ չուտով անոր բանաստեղ-
ծական խանդի թռիչները՝ կարծէք թէ մոռնալէն թեւերու կը փախուին, և ինքն իսկ
Գեղարտի պէս կը ծանրանայ և կը վայրաբերի։ Մանաւանդ թէ յաճախ հէգ և ապի-
կար մանկան մը կամ ընկճուած մարդու մը պէս՝ այն զաղափարականին առջեւն
ինկած, կը ծխէ իր սրտի խաւնին ու առաչեր, կը հնչեցնէ իր անզգայրում ազին ու
արտասուքը. ասանց մէջ միայն կը կարծէ գտնել իր սրտի հրչէջն ու անզորրանքը.
հետեւաբար՝ յոյժ միակերպ կը թուի ինձ։

Զափազանցութիւնն այն աստիճան է՝ որ պահ մը կարծել կու տայ ընթերցողին՝
թէ բանաստեղծի սրտին մէջ ոչ հայրն ու մայրը, — և նեղուի ինձ ըսել — և ոչ իսկ
երկնային Կոյսն ունին իրենց զառ, գերագոյն և արժանաւոր տեղին. վասն զի
բովանդակապէս զրաւուած է իր կոյս քրոջ սիրերգութեամբը։ Նա ինքն բոլորովին
անոր անձնատուր եղած կ'երեւի թէ պանդուխտի կերպարանք առած ժամանակ և թէ
բնութիւնն երգած պահուն՝ որպէս բանաստեղծ ու սիրերգու. այնպէս որ երկնքի աստ-
ղերն ալ, «Աստղիկն» ալ, «Գաչնակն» ալ, «Այգ ու ցայգն» ալ անոր քոյրը կը յիշեցը-
նեն, և քրոջը կ'արբանեկեն։ Բայց աւելի խորապէս զգածուած կ'երգէ կենդանի քան
թէ մեռած կոյս քոյրերու սէրը։

Իրաւ որ զարմանալի է Գալֆայեանի հոգեբանութիւնը՝ բոլոր այս և նման երե-
ւոյթներով, և զուցէ եզական։ Թուլկուրանցի և Ազթամարցի կաթոլիկանները եւս
սիրերգուներ հանդիսացած են, բայց երիտասարդութեան պատրանքները մեղմելու
նպատակաւ. և կրօնական նիւթերն երգած ժամանակ՝ անոնց սիրոյն հետ՝ խանդն և
բարբառն իսկ աւելի կ'արծարծի։ Այս ընդհակառակն հրահանգիչ նպատակէ զուրկ կ'երեւի,
և ծնողականին հետ՝ կրօնական զգացումներն եւս չունին զգածութիւնն ու
օժուժը։ Կարդացէք — օրինակի զազաթ — անոր «Հայրն» խորագրուած զրքերը,
որ սակայն ամբողջովին իր և քրոջ վրայ կը դառնայ, հօրը մասին մի միայն տող
յիշատակութիւն կայ և ոչ ինչ աւելի։ Կարդացէք «Վերնման հօր» զրքերը, և
պիտի տեսնէք, որ քանի մը տեղ և բնաղդատ բացատկանչութիւնէ զատ՝ ուրիշ ոչ
ինչ չկայ, այնպէս որ հեղած արտասուքն իսկ՝ ծնողական չիրմին վրայ՝ օդոյ մէջէն
ինկող պտղ չիթէրու աւելի կը նմանին։ Կարդացէք անոր «Մայրն և քոյր» հրաժեշտի
սիրերգը, չնայելով՝ որ երկուքն եւս համագոյդ սիրով և ոգով կը նային իրեն պատըր-

դամէն, ասկոյն և այնպէս՝ քրոջ անուշակ խօսքերու յիշատակներն են՝ որ « իրիւ զմեղր » կ'իջնեն բանաստեղծի վիրաւոր ու դառնացեալ սրտին վրայ. վերջն ալ « այգաբիւրեա ցօղն և լոյսը » այդ միշտ կուսի ճակատին վրայ է՝ որ կ'իջեցնէ բանաստեղծ եղբայրը: Ահը — քրոջ սրտի ծաղիկն է՝ որ միշտ անանց բոյրեր կը հասցնէ իրեն. իսկ մայրը Բարձրեալի գութին միայն կը յանձնուի՝ միջանկեալ գծով մը, իրրու այն՝ թէ անոր ալիքէն չըլլար ինքը, կամ նուազ գողարիկ ըլլար մօր գաղափարը: Կարդացէք դարձեալ « Ա՛ռ քեզ » և « Ո՛հ » խորագրուած կրկին սիրերգներն, որոնց գէթ առաջնոյն առարկայն եղած կ'երեւի Ս. Կոյան, իսկ վերջնոյն՝ քոյր կոյս մը. պիտի որոնէք՝ և ասկոյն զարմանօք չգտնէք տարբերութիւն երկնաւորին և երկրաւոր սիրերգներու նկարագրին մէջ. մանաւանդ թէ վերջինն աւելի առատիկ է, ու բարդ և արտահեչտ ընծայուած: « Փառք եւ Ահր » երգին մէջ՝ կը գոչէ նա դէպ ի իր սիրային անուրջը, մոգացած պէս իրեն կեանքն ալ, փառաւէնչիկ ձկտումներն ալ.

« Ո՛հ, մի փառաց ինձ մի խօսիր,
Ո՛վ քաղցր իմ ոգեակ,
Չի փառաց ձայն խըրոխտալիր՝
Ինձ չունի գաշնակ:
Յորժամ փառաց գանուն լըսեմ՝
Եւ ծանր կեղծաւիտ,
Ըզգլուխ չարժեալ եւ անցանեմ,
Ի գառըն ժըպիտ »:

Այո՛, սիրերգու բանաստեղծն է՝ որ « Հառաչանք » խորագրած ոտանաւորին մէջ արդէն իսկ այս կեղծիքներէն մին կը մատնէ, ասկոյն առանց յայտնելու ուզելու պայն որոշակի.

« Ընդէ՞ր դիս հէդ երիտասարդ՝
Ջնջեալ յանմահ բերկրանաց,
Բարձեր յայտից՝ ըզժըպիտս գուարթ,
Լըցեր զակն յո՜ւխս արտասուաց...
Չի՞ ձմեռն յաւէժ գառնապարտեր
Չիս կորընչեր անժամիկ »:

Ահա Գալֆայեանի երգերու սիրային գաղտնիքն, որ միշտ անհանգիստ կ'ընէր դինքը, բայց նաեւ գողարիկ տաղեր յօրինել կու տար: Ասկոյն այս ալ բաւած ըլլանք, որ ծայրէ ծայր հառաչներով և երիտասարդական արտասուանքներով լեցուն այդ սիրերգներն ու ողբերգքը — ինչ նպատակ ալ ունեցած ըլլան — վարդապետի մ'անդէպ են ու անյարմար, ըլլան սիրեկիներն անուանակիր քոյրեր, ըլլան անանուն կոյսեր: Ուրիշ քոյր ունեցող քերթողներ ալ՝ սիրերգներ գրած են, բայց ոչ երբէք այս կերպով: Սա՝ մտածութեան ամենանյաղող ձեւն է: Իսկ քոյր չունեցող մարդկանց համար՝ չունին և պիտի չունենան այն նշանակութիւնն ու կարեւորութիւնը, զոր քերթողն ուզած է տալ, հնչեցնելով վիճակերգութեամբ իր հիւանդոտ սրտի տխուժանքը, որոնք ոչ մի առնչութիւն չունին ազգային անցեալ կամ ներկայ կեանքին հետ, ոչ մի նշանաւոր ազգային անձնաւորութիւն կամ վէպ չեն ներկայացներ: Ուշադիր ալ՝ բուռ ոմանց՝ գողարիկ ըլլան իրենց տեսակին մէջ, ասկոյն և այնպէս Գալֆայեանի միջատար երկինքը միայն կը ներկայացնէն ընթերցողին, ուր ամառնային գիշերուան պէս կամ անոր իւրաքանչիւր, ելեկտրացած և ամուլ փայլակներէն՝ միայն ուշիմ ընթերցողի մտաց աչքերը կը խաղրտեն և կ'անցնին, առանց խոր և ճեպազուն ազդեցու-

թիւնը մը Թոլու սրտին վրայ, և կամ օտար մթնոլորտներէն հան — չգիտցուիր ինչպէս — անդադար հրաժարելով աստղները կը ցոլան յաճախ, և անոր Թոլած տխուր ապաւորութեան պիշերը կը մեղմեն։

Այս վերջին կէտս — ուզելով անաչառ կերպով քննադատել — թէեւ ըստ ինքեան է դրական գողութիւն, և կը կազմէ Վալֆայեանի երգերու բանաստեղծական գաղափարը. բայց նա իր եկամուտ փառքէն ու փայլէն դիւրաւ չկտպատելու համար՝ ամենահնար ձարտարութեամբ ամրափակած է զայն։ «Վարդենիք» եթէ ազգային զանազան բնորոշ նիւթեր եղած ըլլային՝ շատ աւելի դիւրին պիտի ըլլար այնուհետեւ մերկացնել այդ գողնքը։ Բայց ատոնք՝ մուրացիկ բանաստեղծն՝ իր երգերէն չատերուն նախադրունքի վրայ արձանագրած է յոյն, լատին, հայ և եւրոպացի քերթողներուն՝ իր նիւթոց յարմար տողերը, բայց առանց նշանակելու անոնց արուչ տեղերն, որպէս պի հիւրընկալած տէրերը դիւրաւ չօրօնուին և չգանուին, և ինքն ալ աղքատ՝ բայց պճնասէր ճայլին պէս օր մը չըլլայ տեսպերծ։ Սակայն և այնպէս՝ հատանելական է որ ինքն անոնցմէ թէ՛ ներշնչուած է և թէ՛ ւեծապէս օժտուած։ Եթէ այս այսպէս չըլլար, այն ժամանակ կամ զանոնք կոչելու բանաւոր պատճառ չկար, և կամ երածը կապկութիւն, ուզելով Բագրատունեաց նմանիլ։ Վերջապէս առանձին դրքով եթէ առիթ ըլլար պորտալիլ Վալֆայեանի այդ երգերու ուսումնասիրութեամբն՝ ես պիտի չծուլանայի որոնել և գտնել յիշեալ երգերու բնագրերը. սակայն ներկայս Թոյլ չի տար ինձ անով ծանրաբեռնել։

Քնար պանդխտի խորագրուած տաղերգները՝ զէթ ըստ խորագրին կարծէք թէ ազգային տեսակետով ւեծի նպատակայարմար և օգտակար ըլլան։ Այս քերթուածները չունենալով ձեռքուստ, չկարողացայ գաղափար մը կազմել անոնց մասին, և հետեւաբար՝ չունեցածս ալ չեմ կրնար ուրիշներուն հաղորդել։ Սակայն եթէ հայ պանդուխտներու իրական կեանքէն առնուած ըլլային այդ քերթուածի նիւթերն՝ իրենց յատուկ և գանազան նկարագրութիւններով՝ աստիճ ժամանակակից օգտակար նորութիւններ պիտի կազմէին. բայց լատին համաձայն այդպէս չեն, այլ պարզապէս վերացական և ազգասիրական իղձերու հրայրներ՝ կապուած հայրենիքի հետ եւ յանձին պանդուխտին, որ նոյնը կը Թուի լինել բանաստեղծին հետ։

Առջիք հայկականք քերթուածներն երկու դրքերէ բազկացած են. այսինքն՝ վիպական դիւցազներգութիւններ և եղերերգութիւններ։ Առաջինով Հայոց անցեալ քաջերու ատուերները կը կոչէ բանաստեղծն՝ իրենց մոռացութենէն, և կ'երգէ գանոնք իր խանդավառ քնարովն. իսկ երկրորդը՝ նոր կեանքին կամ Ներկային նուիրած է։ 1874ի հրատարակութեան Յառաջաբանին համաձայն — որուն երրորդ դէմքով տեղեկատու հեղինակն՝ է նոյն ինքն Խրէն Նար-պէյ — իբր թէ այդ երգերը ներշնչուած ու գրած ըլլայ «Մերթ հոյակապ քաղաքի մը շռինդներու, եւ մերթ գիւղական տաղաւարի մը մէջ. երբեմն անտառաց խորհրդաւոր հովանեացը ներքեւ, երբեմն ալ լերանց խրոխտ ապառաժներու վրայ նստած, և այլ երբեմն կանաչագեղ հովտաց գեփիւռներու մէջ երազելով. մերթ մրմռացող փրփրազեղ կոհակաց առջեւ, և մերթ՝ գերեզմանաց մահաստրուռ ստուերներու մէջ թափառելով, Հայրենեաց խանդավառ յիշատակը սրտին մէջ բորբոքելով, եւ գրեթէ միշտ իւր քնարին թելերը աղեկէզ արտասուօքն ոռոգելով»։ Բարի է. բայց բուական է՝ որ երգերու նիւթերէն ընդհակառակն այդ պարագաները մակաբերուած չըլլան։

Այս կ'ըլլար՝ որ քերթողը փոխանակ մանրամասնաւոր մը այսպիսի դիտումնաւոր ծանուցումներուն՝ հոգ տարած ըլլար նշանակելու իր մէն մի քերթուածի ներքեւ՝ անոր յօրինման Թուականը միայն — ինչպէս ըրած են ընդհանրապէս Հ. Ալիշան և այլք — որով պիտի կարենայինք իմանալ անշուշտ, թէ նա իր կենաց ո՛ր պարագաներուն մէջ գրած է այդ քերթուածները, և ինչպիսի ազդեցութիւններու տակ։ Բ-Գրքին մէջ՝ մէկ երգ մը միայն կը գտնենք որոշ Թուականով [1], այն է՝ «Ա տաճան. Հայոց» խորագրուածն, զոր գրած է Ա.էն Պանդուխտի բերանը։ Իսկ «Աշխատանար գրական տօն» քերթուածը, որ անյարմար կերպով եղերերգներու մէջ դասուած է — զի ցնծութիւն կ'ուտեակ — 1866 Թուականին և Կ. Պոլսոյ մէջ գրուած կը տեսնուի։

---

1. *Այսինքն է՝ 1859ին գրուած ի Պարիս։*

« Սաւերք հայկականք »ի Ա. Գրքին մէջ պարունակուած վիպական երգերն, որոնք ժամանակագրական կարգով իսկ յառաջ գրուած կ'երեւին, հաւանօրէն ի սկզբան գրաբար լեզուով չարադրուած են եւ գոյէ ի Փարիզ, բայց վերջէն աշխարհաբարի փոխադրուած, այսինքն՝ երբ Գալֆայեան իր հին անուան պէս՝ լեզուական դրօշակն եւս ի նպաստ աշխարհաբարեան կուսակցութեան կը փոխէր. բայց չէ թէ վերջինը նախադաս ճանչնալու համար քան առաջինը, այլ աւելի ընդունելութիւն և ընթերցողներ գտնելու նպատակաւ: Այս երգերս թէ բանաստեղծական խանդով, թէ քերթողական արհեստի և լեզուի կողմանէ, և թէ նիւթոց և նկարագրի տեսակէտով աւելի բարձր են, քան Ա. Գրքին մէջ պարունակուած եղերերգներէն: Այս տեղ, այսինքն՝ Ա. Գրքին մէջ, « Պանդուխտ առ ամպն », « Հովիկ հայրենի », « Արշալոյս »ը, « Հառաչք հայ պանդխտին », և « Ի գերեզմանս պանդուխտ Հայոց » խորագրուածները միայն կը նկատուին մեզ իբր բանաստեղծական ոճասիներ՝ ամբողջութեան մէջ. իսկ միւսներն — անտեսա գտնելով — աւելի հայրենասիրական ու քիչ մ'ալ պատմական արժէ կայծեր են և ամուլ բանաստեղծական խանդեր և առեղծուածութիւններ, այնպէս՝ որ կարծէք թէ երգչին շրթունքներէն աւելի յառաջ կու գան՝ քան թէ սրտի խորերէն: Հայրենիքի և ազգի, և այլն, նուիրական անուններն եթէ պանծք չզգեստէին, աւելի շրջմոլիկ հոգւոյ վազանցուկ տպաւորութիւնը Թողու բնաւորեալ էին անոնք՝ քան թէ ներշնչելու: Իսկ այն տեղ՝ ընդհակառակն « Հրեշտակն Հայոց »էն սկսեալ, որ բազմաճոխ քերթողութեան վիճակուն հմայք մ'է՝ հայ պանդուխտին, աւերեալ հայրենեաց և հրեշտակին նուիրեալ, գրեթէ ամէնքն ալ ունին իրարմէ աւելի կամ պակաս վիպասանական, գաղափարական և նկարագրական գեղեցկութիւններ և նուրբ զգացում: Այս երգերու նորութիւնը նիւթերուն մէջը չկայանար, վասն զի Ջախջախեանէն ու Թումանեանէն սկսեալ՝ մինչեւ Ալիշան՝ Մխիթ. բանաստեղծներն երգած էին գրեթէ բոլոր այդ նիւթերը. այլ մտածութեան ձեւին և արտայայտութեան բարդութեանը մէջ, զոր գիտցած է տալ՝ իրեն յատուկ կամ նմանողական ճաշակով մը:

Իրաւունէ՝ Նուարդի քնքոյշ նկարագիրն՝ որ զուգած է ճարտարութեամբ Այս գեղեցիկի առնական վէպին, — Շուշանը՝ Զարմայրի վէպին և Երանեակը՝ Արտաւազդ երկրորդի վէպին հետ, կուտան այդ քերթուածներուն եթէ ոչ այնքան բանաստեղծական՝ այլ անշուշտ վիպասանական նորութիւն և գեղեցկագիտական առաւելութիւններ: Քերթուածներէս երկրորդը՝ ներշնչութիւն է Հոմերոսի, զի Զարմայրի՝ Շուշանին տուած վերջին հրաժեշտը՝ նմանութիւն է Հեկտորի իր հարսին մատուցած վերջին ճեռս բարովին: Այս ալ ըսելու է սակայն՝ որ այսպիսի առանձնակ և փոքրիկ երգերու վիպասանական երեւոյթ տալն ըստ ինքեան յարմար չէր, և Գալֆայեան տուած է գուցէ ոչ այնքան գեղեցկագիտութեան՝ որչափ գեղեցիկ սեռի միջամտութեամբն աւելի դողդոջ, հետաքրքրական և ընթեռնելի ընելու դիտումով:

« Արամայ » ձօնած երգին մէջ՝ բանաստեղծն իր բնութենէն վեր կորով ցոյց տուած է. և « Սոքա որդիք են Արամայ » խօսքերը՝ զոր գրած է Մեզացւոյն, Աստուց, Միջերկրեայց և Բէլորզւոյն բերանը՝ գիտաւոր ընդլայնում մ'է, որ կու տայ երգին և' ուժգնութիւն և' վեհութիւն: Այս՝ թատերական ներկայացումի մը յաղթականն նուագաց արձագանգն ըլլալ կ'երեւի, զոր Գալֆայեան թերեւս լսած էր երբեմն ի Ս. Ղազար, կամ արտասանած իսկ: Վահէի երգի Բ գրուագը՝ վաղաժաման եւ աւելորդ միջարկութիւն մ'է, զի պատերազմէն յառաջ Հայկազունեաց ինկած քաջերու մահն ու զէնքերը կը նկարագրուին. իսկ գիւցազին բերանը գրուած Գ. գրուագն ալ՝ այն անցքին վերաբերեալ խորհրդաւածութիւն մ'է, որ առաջնոյն պէս՝ ազգային վերապահելի էր ըստ ինքեան, և չդատիչ է երգիս միութեան: Սակայն և այնպէս՝ երկու պարագաներն եւս քերթողական և գեղեցկագիտական նորութիւն մը կու տան անոր:

« Արտաւազդ Ա. բանաստեղծ Թագաւոր » խորագրուած մահերգը թէպէտ և սխալ՝ սակայն Հայոց աննկուն գիւցազին բնորոշ դիմագծութիւնը կը ներկայացնէ մեզ, և իր տեսակին մէջ կրնայ կատարեալ համարուիլ: Արեւելեան այդ սխալ քնարոլ ազգային արտերու մէջ զարթուցուած ազատութեան և վրէժխնդրութեան ոգին՝ գիւցազներգութիւնէ մը աչքնչ նուազ ազդեցիկ է. վասն զի անուանի Թագաւորիս եղերգական մահուանէն աւելի անոր անմահ հոգին է՝ որ կը սաւառնի և բանաստեղծին և' հայրենեաց հորիզոններուն վրայ:

«Աբաւադդ Ը Հայոց վրիժահան» երգին մէջ աւանդական վարսամի կամ գիսաւորին երեւման, եւ Մոզպաշտէի գուշակութեան մասին բարգաւաճած Գ-րորդ պրուպդն, որ պատմութեան հակառակ՝ Թագաւորի մահուան իրրեւ միակ պատճառ նկարագրուած է՝ յոյժ գիւտաւոր է, և խարխափը կը կապէ բոլոր եղերերգին: Այս երգս՝ իրր բանաստեղծական ինքնուրոյն մտածութիւն՝ գեղեցիկ նորութիւն մ'է, և գոյէ իր տեսակին մէջ լաւագոյնը: Բայց թէ աստուածաշունչ Գալֆայեան ինքն իրմէ՞ առեղծած է այդ, թէ իր նախորդ Մխիթարեան պուէտներէն առած, այս բանս կրնայ բանասէր ստրակուսի ենթարկուիլ, ի նկատի առնելով նախապէս յիշատակուած Մխիթարեան ներկայացուցիները: Յամենայն դէպս՝ ասով քերթողն ոչ միայն պարզած է Հայոց պատմութեան աւանդական պրոյց մը, այլ և անոր մասին Գողթան երգիչներու պակասը կարծես կիսովին լեցուցած:

«Աբաւչէս մեծն Տիեզերակալ» երգին Գ. պրուպդն, ուր քերթողը կը նկարագրէ մեր մեծազօր Պարթեւին՝ յաղթանակով Ասիէնք մտնելը, Քաներքսէներու և Գարեհներու վրէժը լուծելն, փիղհասակով Ալմպեան Աբամազդայ բազկին և անդրիին առընթեր՝ ակնկուռ գահու վրայ բազմիլն, ու գոռոզ Եւղտայէն աստուածական պաշտօն և երկրպագութիւն ընդունիլն եթէ ոչ պատմական, այլ անչուշտ բանաստեղծական գեղեցիկ նորութիւններ են, որ ոչ միայն յատուկ շուք մը կու տան երգին, այլ նոյն իսկ ազգասէր սրտերը խրոխտ պարծանքով մը վեր կը բարձրացնեն: Սակայն այդ պահուն — յանկարծ և առանց հանգոյցի — աստուածացեալ Աբաւչէսին՝ իր պերճ գահոյքէն թաւալգոր իննալ ու արեան մէջ թաւալիլ տալովն՝ ընթերցողին վրայ իրր պղպջուր մը նետելով՝ նախկին դրուագի ազդեցութիւնը կը կորսէ բանաստեղծն: Այս թերութիւն մ'է, զոր պիտի չգործէր նա անտարակոյս՝ եթէ ուրիշի ազդեցութենէն ազատ և ինքնատիպ բանաստեղծ մ'եղած ըլլար արդարեւ:

Այս դիտողութիւններէս իսկ ակներեւ կը տեսնուի՝ թէ Խորէն Գալֆայեան ունի աստուածքերթողական գիտեր, ունի և աչողակութիւն՝ նկարագրելու և տեսարանի վրայ հանելու գանոնք, սակայն կը պակսի իրեն ինքնուրոյնութիւնն, համադրութիւն մտածոյ և պատշաճաւոր կազմակերպութիւն ամբողջին. վասն զի կ'ուզէ նա գուգել վիպասանականը՝ քնարականն բանաստեղծութեան հետ, և փոխանակել դրոյցը պատմականին. մէկ խօսքով՝ կը սիրէ նա յաճախ՝ չպարկիլ ուրիշներու քերթողական արգուդարդովը՝ քան թէ ոգնիլ և վաստակիլ իւրուրոյն արտադրութիւններով: Այո՛, Գալֆայեանին տակի հետը է նոյն իսկ ուրիշներու մտածութիւնը — նոր ձեւակերպութիւններ տալով և եղանակաւորելով — մէջտեղ նետել, քան թէ բոլորովին նորը մտածել և առեղծել. վասն զի այն մասին տակի յարմարութիւն և հակումն ունի՝ քան ասոր:

Իրաւունք՝ մտաքերութենէն իրականին անցնելով, մենք կը տեսնենք՝ որ անոր լաւագոյն ու փայլուն քերթուածներու կորիզը, մանաւանդ թէ իսկականն՝ ստարին է, սրտաքնոյտրդար մանրամասնութիւնքը միայն, և երբեմն ալ անոնց կատարութիւնն իրեն յատուկ են: Նա՝ իր քերթուածներու մէջ ներմուծած նորութիւններով հանդերձ՝ ոչ միայն Աբէշեանի ինքնուրոյնութենէն յոյժ հեռի է, այլ ամենէն տակի իրմէն ներշնչուած է: Ու այս բանիս վրայ այնչափ տակի համոզումով կարող ենք չեշտել, որչափ որ երած քննութիւններս մտաւորին մեզ հաստատուն հիմնաքարեր: Աստուածաշունչ Գողթան երգիչներէն

կը սկսի. «Գիշերուան առել էր գերկին խաւար», և այլն, այս Այիշանի «Գլոտն Ասպայրի Ա. դրուագի կառուցում հետեւողութեամբը չինուած է [1]:

«Հայկ» քերթուածը՝ ներշնչութիւն է Այիշանի Հարք քերթուածին: Այսպիսով ալ՝ խօրէն Նար-պէյին յառուկ են ուղղափրական տափակ բացագանչութիւնները՝ քան բանաստեղծական գեղեցկութիւնքը: Այսր հետեւեալ տողերը. «Ասու ըզնեան, ըզփրկութեանըն գործի, — Զոր ինքն իսկ ատր ցըցուց իրեն յերապի», անտարակոյս Այիշանի այս վանի տողերուն «Երկիր՝ զոր եցոյց ցուցոյն յանուրջս ապերանն... — Եղեալ նեռաձիգ ակընկալուացն առաջի» այլակերպութիւններ են և ոչ այլ ինչ: Ի զուր կը ծանօթագրէ բանագողը՝ թէ «Աղպային առանդութիւն է՝ որ ցարդ կը պատմուի ի բերանս բնակչաց Հայոց Զորոյ», զի ինքն Այիշանէն գիտէր ուղղակի այդ առանդութիւնը: «Ի գերեզմանս պանդուխտ Հայոց» երգն՝ Այիշանի «Լուանկային գերեզմանաց Հայոց» քերթուածի հետեւողութեամբ չինուած է, և մանաւորապէս վերջին երեք էջերուն նմանութիւնն ոչ միայն խմաստի, այլ նոյն իսկ առերու ուելի զգալի է:

«Հրեշտակն Հայոց» առաջին երգը, զոր երիկեան բանաստիրին մէկը չէր խընար Բագրատունեաց Հայկ դիւցազնին վեր դասել, ոչ միայն ներշնչութիւն է, այլ տեղտեղ նոյն իսկ ծառայական նմանողութիւն և յառաջիերութիւն Այիշանի Ոգին հայաստանեայց պանծալի քերթուածին: Նար-պէյի Հրեշտակը թեպետ և երկնքէն իջած՝ երկրէս կ'առնու իր քնարը, և ուրիշ բանի համար չէ՝ բայց եթէ պանդխտին, այսինքն է քերթողին պէս՝ Հայոց մեծաց ուխտակիները միայն պրպտու: Եւ կ'ողբայ պանդիք յոտի շրջանով մը, այսինքն է՝ նոյն իսկ մեր աշխարհի փրկութիւնն ուետելէն վերջ: Երկինքը վերադարձ առնն իսկ՝ անոր ձեռքէն պրծած ու երկրիս վրայ կործանած քնարը՝ պարձեալ «արդարոգին կը հնձէ»: Այ՛, հնձ ու ողբէն զուրս չկայ ուրիշ բան. նպատակադի՛րկ բան, որ ասկայն Այիշանի բնագրին չկրնար վերագրուիլ [2], այլ Նար-պէյի յոտի հետեւողութեանը. — զի Թոզած է իր նախորդի առաջին և վերջի մասունքը, որ պիտի լինէր միակ նպատակ «Հրեշտակին Հայոց», ինչպէս եղած է «Ոգւոյն Հայաստանեայց». և Թոզած է դայն՝ իր մի քանի դիտաւորեալ աւելցանքն ազգայիններուն խնկելու համար: Այսր դէմ Բագրատունեաց «Հրեշտակն Հայոց» իսկ բողոքելու իրաւունք ունի, զի Նար-պէյ դայն ևս ճանչցած և իր երգին ծառայեցուցած է քան հաճոյս:

«Հովիկ հայրենի» ներշնչութիւն է Այիշանի Հայոց աշխարհիկ և Գարուեք հայոց երկու քերթուածներուն, և «Ա՛ս տաճարն Հայոց» — Անէն պանդուխտի բերանը դրուած երգն — Հայ հայրենիք քերթուածին. և ուր Այիշանը Հայաստանեայց արեւ ելնելուն կոչումն կ'ընէ, Նար-պէյ հայ պանդխտին վրայ դարձուցեր է դայն:

«Վարդենիք» սիրերգներուն մէջ իսկ եօթ ութ հատը Այիշանի քերթուածներու նմանողութեամբ յօրինած է Գալֆայեան, ի հարկէ իրեն յառուկ փոփոխումներով: Բաւական կը համարինք նշանակել ասոնցմէ երեք չորս հատը միայն: Օրինակի ազատ, «Ո՛հ, այս ժամ է» և «Հանդիստ» խորագրուած երկու սիրերգքը՝ Այիշանի Հոգւոյ բան առ Ոգին նուագաց հոյակապ քերթուածի նմանութեամբ չինուած են. բայց ինչ անհուն խորոց վերջնոյս յաւիտենախաղաց ժամերուն և հոգւոյ մտածութեանց, և խորէն Նար-պէյի Թուղթէ ժամանակներու մէջ: Այիշան իր առեղծած բանաստեղծական սիեղերքի համապրական աշխարհայեցողութեամբը կը զուրգէ իր վերջին խօսքն՝ առ Ոգին նուագաց, որով եւ կրնար հանդչիլ իրաւամբ. իսկ Նար-պէյ՝ իր ներքին յուզումներով ալեծուփ զուարն է՝ զոր մեծ «Ունայնէն» քեցելով և Փրկչին ծոցը դնելով՝ կը գոչէ. «Ա՛յս է հանգիստ իմ». բայց այդ ունայնն ալ՝ կարծէք թէ կը մնար իրմէն միշտ անբաժան: Բաղդատեցէք Նար-պէյի «Հառաչանք» և «Աչեր ցիս» սիրային ոգերգները՝ Այիշանի Ա՛ս պատա-

---

1. Այսպէս է նաեւ Զարմայրի նկարագիրը Գալֆայեանի քով, որ ինչ ինչ տարբերութեամբ հանդերձ՝ կը յիշեցնէ Այիշանի Վարդանը:

2. Վասն զի Հայաստանեայց Ոգին զգեցող մեծ բանաստեղծը՝ նախ մեր աշխարհի անցեալ վառքն ու վայելչութիւնները կ'ոգէ, յետոյ անոր ախուր օրերն, և հուսկ ուրեմն ապագայ երջանկութիւնը:

ևիս ևորբնծայս յաշխարհն անզուգական քերթուածին հետ, և պիտի տեսնէք՝ որ առաջինները վերջինիս բանաքաղութիւն են՝ փոխակերպեալ. դի ուր Ալիշան կը գոչէ ի դիմաց երկրաբարշին. « Ակր, ակր, այծ, աա մեռյն, աաւ է բաժին մեր մեռյն », նար-պէյ զարձնելով զայն իր անձին վրայ կը հառաչէ յետահաս « Ակր, ակր... մեռյն զա՞յս սիրա ծարաւ Թագուս անմահն և անակր»։... Մեծ բանաստեղծին ապրեցուցածքիւնը կարծէք թէ այս գրուագիս մէջ ապետալի արմատ ձգած է բանաստղ քերթողին մէջ՝ թերեմնացութեան ատագաւ. սակայն Ալիշան նոյն քերթուածին մէջ (յէջ 210) է՝ որ կը բարձրացնէ առյդ ակրը՝ վերատին բացատրանչելով։

« *Ակր, ակր մեռյն՝ գու առուգիս որ գնարդ փախես ի յԱռաւուտ,*
Եւ գհամօրէն ներգործես ի մի բնաւթիւն սիրատուած »։

Այդ՝ բոլոր այս և ուրիշ նմանութեանց մէջ՝ զոր աւելորդ կը համարինք նշանակել, խորէն Նար-պէյ՝ Ալիշանի մեռյն բանաստեղծական գոհարներուն չէ՝ որ բանագող եղած է, այլ նաեւ բառերուն և բացատրութեանցը։ Անոր « Առաւերք հայկականք » և ուրիշ աշխարհաբար քերթուածներուն մանաւանդ ամէն իջի մէջ՝ կը հանդիպինք Ալիշանին յառակ այնպիսի բառերու և առացուածներու. հետեւաբար՝ նա ոչ մեռյն իր քերթութեանց, այլ նոյն իսկ բանասիրութիւններուն մէջ մեծագոյն կրած է Ալիշանի ազդեցութիւնը, մանաւանդ « Հայրենեաց » և « Նահապետի » երգերուն. և քա այժմ՝ կրնանք իրաւամբ անուանել զինքը Ալիշանի հետեւող և յետդիտող, և թէ իր հետազոտական բանաստեղծութիւնն՝ անհամեմատելի մեծ բանաստեղծի գործին հետ՝ ամէն կերպով։ Նար-պէյ՝ ինչպէս իր աշխարհաբար երգերուն մէջ անով կը տարբերի Ալիշանէն, դի և. Պոլսի ներկայ գրողներու քերականական կարծութեանը կը հետեւի, մինչդեռ Ալիշան Հայաստանի գաւառաբարբառովը է՝ որ կը մեղրամանէ. և ահա այս պատճառաւ է՝ որ Նահապետէն եղած բանաքաղութիւններն աւելի գգալի կ'ըլլան առանձնայն քով. այսպէս ալ իր գրարար սիրերգներուն մէջ անով կը տարբերի Ալիշանէն՝ որ սէրը մանանականացուցած է, որով և կտրած է իր բարձր նչանակութենէն։ Այդ սիրերգներու ազդեցութիւնն իսկ Թերեւս բնազարձակ ըլլար ժողովրդեան գանազան խաւերու մէջ, եթէ նա աշխարհիկ բարբառով գրած ըլլար գանոնք։ Եւ սոր համար է՝ որ կարծեմ թէ սիրերգու նոր աշուղի ազդեցութիւնը կ. Պոլսի և Զմիւռնիոյ ընթերցող երիտասարդութեան շրջանակին մէջ աւելի ամփոփուած էր և է՝ քան թէ ամբողջ հայ գրաբեա դասուն և գպրոցներուն։ Ինչ և իցէ՝ Գալֆայեան սրպէս սիրերգու աշուղ՝ կը վերաբերի այն միջավայրին, ուր ապրեցաւ և երգեց։ Այս իսկ ճշմարիտ է՝ որ Գալֆայեան իր բանաստեղծական գնարն եթէ Ս. Պատարաւ մեռանելէն առած չըլլար, ինչ միջավայրի մէջ ալ գանուելու ըլլար, գժուար է՝ որ կարենար արտադրել այնքան և այնպիսի երգեր, որոնք իրաւ է՝ որ ազգային առանձնակարգ մեռանելու մէջ գինքը գասելու բաւական չեն, սակայն կը գրաւեն ուրոյն տեղ մը երկրորդական բանաստեղծութեան մէջ։

* * *

Գիտողութիւն մ'եւ եզրակացութիւն. — Մխիթարեան քնարը Հ. խորէն Գալֆայեանէն վերջը՝ տակաւին լռած չէ — ինչպէս կարծել տուին ոմանք. — և սոր յայտնի ապացոյց են նախ առնց 1870 թուականէն մինչեւ այսօր Բազմավիպի էջերը զրաւող գրարար ու աշխարհիկ լեզուներով և առանց ընդհատութեան հրատարակուած ինքնագիր քերթուածներն, ազգային և հանրազգայինն գանազան նիւթերու վրայ։ Ց. Տօներու, յոբելեաններու, ուխտագրութեանց, քահանայական և եպիսկոպոսական ձեռնադրութեանց, ազգային նշանաւոր վախճանեալներու և դէպքերու առթիւ յօրինուած և

առանձին տեարներով տպուած առանուար Ձօներն ու Տաղերգութիւնքը։ Գ. Աժէն տարի նոր լոյս տեսնող Օրացոյցները զարդարող բազմազան նուագներն ու նշմարները, որոնցմով երգուած են ժամանակն և ժամանակին հետ եկող ու գացող, հնացող և նորոգուող հասակներն ու պատահարները։

Ես չեմ ուզեր կանգ առնուլ այստեղ՝ առանձինն յիշատակելու բոլոր այս քերթուածոց հեղինակներն և նոր շրջանի պուէտներն, և քննադատել անոնց գործերը, ասկից կրնամ բսել՝ որ ոչ միայն Մխիթարեան քնարը լուռ չէ և պիտի չլռէ երբէք, քանի որ Իտալիա և իր կապոյտ երկինքը կը ժպտին անոր և կը շարժեն զանի, այլ թէ Նարպէյեանէն նուազ տաղանդաւոր եղած չեն այդ անանուն պուետներէն ոմանք, թէպէտ և անոր չափ երգած կամ երգելու առիթ ունեցած չեն. իսկ նորոց մէջ կան՝ որ աւելի գիւտաւոր են, և՛ խանդոտ և՛ բնական։

Ասոնք ընթերցողն՝ որ ըսից — Մխիթարէն սկսեալ մինչեւ վերջինը — կուսակրօն Մուսայից երգերն, որ իրրեւ աչօք բացօք տեսաւ անոնց բազմազան յօրինուածուքիւնքն և յօրինողները. որ տեսաւ անոնց բանաստեղծութեան բազմաւորութիւնը՝ մինուքեան մէջ, և այդ զարմանալի միայնութենէն հնչուած ու տարածուած գոյն — բազմապիսի եղանակօք — մինչ ի մեծն հեռաստան հայ ազգիս և աշխարհիս. մէկ խօսքով՝ որ տեսաւ Մխիթարեան քնարին ամենուրեք գործած ազդեցութիւնն ու առաջ բերած գեղեցկագիտական արդիւնքները՝ նոր գրականութեան այգւոյն մէջ, կարող է այժմ մեզ հետ եզրակացնել այն՝ ինչ որ ըսինք սոյն գլխոյս սկիզբը. այսինքն թէ՝ Մխիթարեան բանաստեղծութիւնը՝ մի է և ամենազան սոյն գլխոյս սկիզբը մեր գծած սահմանին համաձայն, որով և չափով մը կատարեալ յամենայն տեսակի, կատարեալ մանաւանդ իր տաղաչափական արուեստին և գաչնակաւորութեանը մէջ։ Վերջին տեսակէտով՝ աննման եղած է այն և օրինակելի, և պիտի մնայ նոյնն իրր տեսչականութիւն մը Մխիթարոյ տան, մանաւանդ գրաբարին մէջ։

ԳԼՈՒԽ ԺԳ

Մխիթարեան վաղեմի նշանաւոր մանուկներն և Ձեմարանի նախապատրաստութիւնները. — Մեծին Նապոլէոնի վճիռն և անոր յառաջ բերած արդիւնքն. — Մխիթարեան կաճառորդքն եւրոպական Ձեմարաններուն մէջ և անոնց Դիպլոմները. — Ս. Ղազարու Հայկական Ձեմարանի սկզբնաւորութիւնն, անոր շարժառիթներն և կանոնները. — Համառօտ տեսութիւն մը Մխիթարեան Ձեմարանի մէջ ծանօթ ինչ ինչ գործերուն և անոնց յառաջ բերած ուսումնական ու բանասիրական արդեանց վրայ։

ՄԽԻԹԱՐԵԱՆ Միաբանութիւնն — ինչպէս տեսանք — իր ուսումնական, կրթական ու գրականական գործունէութեամբը ոչ միայն Արեւելքի՝ այլ և Եւրոպայի մէջ արդէն ի վաղուց հռչակուած էր, իբրեւ գիտութեանց և գեղեցիկ գպրութեանց ձեռնհաս կաճառ մը։ Բայց ի այս ընդհանուր հռչակէն՝ այդ Միաբանութիւնն ունէր իր մէջ այնպիսի հանճարներ, որոնք իրենց ժամանակին համար Արեւելքի նշանաւորագոյն մանուկները կը հանդիսանային. ԺԹ դարու առաջին քառորդին մէջ՝ ոչ ոք այնպէս նշանաւոր եղած էր Հայոց պատմագրութեան մէջ և հանրական համբաւ առացած՝ ինչպէս Զամչեանը։ 1819 Թուականին կատարուած ազգային մեր գիտութեան նախափորձն, որ մեր պատմութեան մէջ դարագլուխ կը կազմէ, Զամչեանի գործած ամենամեծ ազդեցութեանն արդիւնք էր։ Հայոց Հերոդոտոսի անունն անցած էր — իր եզական գործին հետ — և արձանագրուած ոչ միայն ազգային, այլ և եւրոպական մամուլի և բառագրոց մէջ։ Նա իր ժամանակի պատգամաւորն էր՝ այդ մասնագիտութեան մէջ. ամէն հայ պատմագրող ստիպուած էր իրեն դիմել, իրմով լուսաւորուիլ և իրմէ կոչումներ ընել։

Հ. Պողոս Ինճիճեան՝ իր ժամանակակից արեւելեան գիտնոց նկատմամբ՝ Հնախօսութեան, Աշխարհագրութեան մէջ առաջինն էր, ոչ ոք իրեն չափ գիտութիւն և գրաւոր արդիւնքներ և նորութիւններ յառաջ բերած էր՝ այդ մասնագիտութեանց մէջ, և ոչ այլ իրեն չափ համբաւուած։ Նա Moniteur և Revue Encyclopédique խմբագրութեանց և ուրիշ գրական գործիներու և ընկերութեանց հետ սերտ յարաբերութեան մէջ էր։ Բայց ի Հայոց՝ յոյն աչխարհագիրք իսկ — ինչպէս տեսանք Քարխոանեաքի եղբարց նամակէն — կը խոնարհէին Ինճիճեանի մեծագոյն հմտութեան առջեւ, և անկէց գրուատեաք տեղեկութիւններ կ'ուզէին։

Գերպ. Մանի. Ազոնց հռչակուած էր Եւրոպայում՝ ոչ միայն իրեւ ԺԹ դարու մեծ վարչագէտներէն մին, այլ և որպէս աչխարհագիր, գիտութեանց Մեկենաս և հրատարակիչ վիենական հակայ գործերուն։

Հ. Գաբրիել Ալիշանի չափ ներհուն ատենաբան, փիլիսոփայ և մատենագիր գեռ առած չէր Հայ նոր սերունդը։ Ժամանակակիցները՝ Բաւական վերապահութիւն ունեցած են գինքը, որ իբր թէ կարող էր իմաստասիրական նոր գրութիւն մ'իսկ հնարելու, եթէ անով միայն գրազած ըլլար։ Ս. Ղազարու մէջ վարդապետ անունը պարզապէս արտասանելով՝ ամէն ոք Ալիշանը կը հասկնար։ Եւ յիրաւի, Պօղոսի թղթոց Մեկնութեան՝ ամենակնճռոտ խնդրոց — այսպէս և Նարեկացւոյ մէջ — ոչ միայն գերա-

զանց վարդապետ, այլ և մեկնիչ գրոց հանդիսացած էր։ Այնպէս՝ որ կարելի է ըսել՝ թէ այսօր խակ ազգայնոց մէջ իրեն պէս կուռ և կրթուած Աստուածարան և հայրաբան չգտնուիր։ Մանաւանդ թէ պէտք եմ ըսել՝ թէ նա 1807 թուականին Հռոմայի Sapienza-ին խակ կաճառակից էր և հոն խօսած ճառերով համբաւուած։

Հ. Վրդ. Ակներեան, Հ. Մկրտիչ Աջեռնեան՝ և Հ. Գէորգ Հիւրմիւզեան՝ ազգային եկեղեցական գիտութեանց մէջ առաջին տեղին ունէին։ Յամին 1830 կատարուած ծխական և արարողական բարեկարգութիւններն՝ Աջեռնեանին պարտական են կաթողիկեայ Հայք։ Սա՝ իրրեւ ջատագով խակ՝ անպարեկի հռչակուած էր բազմիցս, նոյն խակ Հռոմայ դիւանագէտ Միրանուրներէն ու աստուածարաններէն։

Հ. Յովհ. Զօհրապեան՝ մեծ բանասիրի և քննադատի համբաւ առացած էր՝ ասիր Վրքին և ասիչ իր ուսումնասիրական հրատարակութիւններով։ Նա Ան Մարակնի հետ Journal Asiatique գիտնական հանդիսին խմբագրակից էր և գործակից։

Հ. Մեսրոպ Աղաչրապեանի պէս նշանաւոր և գիտուր Քիմիկոս և Հանքաբան դեռ եւս չէր մինչեւ այն օր մեր ազգին մէջ. Նա իր ժամանակին եւրոպացիներէն խակ մասով կը յուսուէր։ Միխիթարեան այդ մասնագիտի ծածկեալ արդիւնքը վերայայտնելու համար՝ կարեւոր կը համարիմ քաղել ժամանակակից անտիպ թղթակցութիւններէն հետեւեալ տեղեկութիւնքը։

Նախ գիտել կու տանք՝ որ Աղաչրապեանը 1795 թուականէն ի վեր արդէն խակ բարձրագոյն ուսմանց ուսուցիչ կարգուած էր Տիգեան ընտանեաց, ուր կը յաճախէին նոյն խակ ասիչ ազնուատոհմ ծնողաց արդիքը։ Նա — չնորհիւ իր ուսումնասէր հանճարին և իր Մեկենասներու տեղացող ոսկւոյն ու խրախուսանքին — Քիմիական եւ Հանքաբանական այնպիսի Թանգարաններ և գործարաններ (laboratoires) յօրինած էր, ժամանակին կատարելագործուած ճոխ գործիներով և բոլերով, որուն վրայ եւրոպացիք խակ կը զարմանային։ Եւ այդ յարմար պարագաներուն մէջ է՝ որ կ'ընէր գիտնական փորձեր և գիւտեր։ Տիգեան Յովհաննէս չէլէպին ի 25 Փետր. 1805 իրենց տան նախկին դաստիարակ Հ. Պօղոս Մէհէրեանին գրած նամակին մէջ՝ յետ յիշելու լատին Վիկար Ապոստոլիքոր Ֆոնտանի՝ հայ կաթող. Հաստատութեան Աղբատախնամ բնիկներուն գրամարկիղ գործածութեան համար յարուցած խնդրի մասին գումարած ժողովն, (ուր էին և Միխիթ. չորս Հայրեր, լատին ազգաւորներ և ուխտարկիծ կղերը) ապա Տիգեանց նորաչէն տունն երթալն ու երկու օր հոն մնալնոյ խնդրով կատարեալը, այսպէս կը նկարագրէ Հ. Մեսրոպ Աղաչրապեանի՝ անոնց ներկայութեանը կատարած հարցաքննութիւններն, ուսուցչապետես բրած փորձերն, և ներկայից վրայ թողուցած զարմանալի տպաւորութիւնները. «Եւ ի վաղիւ անդր գնացին ի տունեան Հ. Մեսրոպ վարդապետին, և կոչեալ զմանկունս առաջի իւր (Տոնտոն), և տեսեալ թէ ամանք ընթեռնուն զԲերականերութիւն, ամանք զԾարասատութիւն, և ամանք զԵրկրաչափութիւն, զարմացաւ յոյժ. և զորձառ առ վարդապետն մեր և ասէ. Փօլիխսիմօ, պօլիխսիմօ, պռաւի. և զարմացեալք ընդ միմեանս ասէին. Ոչ գիտեաք՝ թէ այսչափ գիտութիւն գոյ ի մէջ տղին Հայոց։... Եւ առեալ գնացեալ ի Քապրիետն (Cabinet) և տեսեալ զդոյնզդոյն մինէրան, գրոխս, և զիորձս ֆիզիկականս, գրս արարիչ առաջի իւր, օրհնեաց գնառս. և յետ օրհնելոյն ասէ առ վարդապետն. Գառմօ գիմիզոս, պօնուս, էքսէրիմինթս... պռաւօ, Փաթէռ Մայէսթռօ, զի գայցափսի բարեկիրթս առնես աշակերտս »։...

Հ. Մկր. Զամչեան — ի 25 Մարտ. 1802 նամակին մէջ — կը գրէ. «Հ. Մեսրոպ, գոր կարգեցաք վարդապետ Տիգեանց, հաստատութեամբ իւրով եգիտ զդիւտ յաչին միմիեի »։ Իսկ Հ. Մեսրոպ — նոյն տարւոյ Ապրիլ 10ին գրած նամակին մէջ — մանրամասն կը նկարագրէ այդ և ասիչ գոյնագոյն մինէրներու գիւտերուն յայտութիւնը, գոր նոյնհետայն Տիգեանք ուրախութեամբ կը փութացնէին ներկայացնել Սուլթանին։ Հ. Գաբրիէլեան Ինճիճեան — Յունիս 10ին Կ. Պոլսէն գրած նամակին մէջ — բաց ի այդ գիւտէն՝ կը նկարագրէ Հ. Մեսրոպի գործառնութեան եւս այսպէս. «Զանգի գիւտ և գործարան նորա ոչ է լոկ միմիեի, այլ գրեթէ ամենայն հանքոց. զոր պարտ է կոչել chimico-fisico։ Յառաջնումն յարկի՝ են նեւթք գանազան հանքոց. միներալոգումն՝ են բոլք վասն լրացեալ գործոց. յերրորդումն՝ բոլք վասն առաջին նեւթոց, վասն լամպի... ցանելոյ, և այլն։ Այս ամենայն բազում արուեստիւ են չինեալ, ոչ միայն գործածութիւն փքոյ, այլ հրոյն գօրութեամբ և արուեստին օգոյ չարժմամբ միշտ առ գհուրն առաւելագոյն քան գիւրս Առաջնոյն վենեակոյ։ Զմայլեցայ գիս իւրով փորձիւք, առնելով առաջի իմ փորձս կապից, և այլն, և այլն »։

Զամչեան, 10 Մայ. 1805 գրած նամակին մէջ, կը պատմէ Ազաչրագեանի յաջող Ուսուցչապետութիւնն, և ուրիշ գուշակութիւններ ևս կ'ընէ այսպէս. «Հ. Մխոպան յետ բազում աշխատութեանց՝ բոլոռեզակեաց գրիչէ զամենայն ուսմունս յորդիան Տիգրանայ. և իրով ճարտարամիտ հնարագիտութեամբ յորդոյ ընծայեցաւ յաչս ամբոխին տեղւոյս և յաչս եպիսկոպոսին. որոյ ապագայ առաւել հաչակելի և յորդելի եղիւ անուն Հաստատութեան վերոյ առաջի սոցա, վինչեւ արքայի իսկ խնդրել գայր ի ծաժուկ: Կարծեմ թէ (որպէս խնդրոյ ի վեցէն Տիգրանայ) ծառայութիւն ևս յանձնեսցի Հ. Մխոպային ի ամբոխին. ի ներկայութեան արքայի՝ գուցէ հրամայեսցի նմա՝ առնել առնել զի յորդոյ Տիգրանայ ի Վաղիս, վասն ուսանելոյ անդէն քանի մի հարկաւոր գիտելիս քրիստոնէութեան, ի գիւս գանազան գաղանեաց (մի կարծէք գազուց, այլ գայլոց գիւտից)· զի ընդարձակեալ է ընդունակութիւն ասա յոյժ՝ յամենայն գիտելիս, եթէ ի յոյժս և եթէ ի գաղանիս, մանաւանդ ֆիզիքական գիտութեանց և մաթեմատիկական մանաժութեանց, առանց գնալոյ ընդ ճանապարհ նորոց: Աստղ բարձր է գրա, և ինքն ևս բարձրանայ. որում և մեզ արժան է նպաստել աղօթիւք, զի միասցէ ընդ հովանաւորութեամբ բարերանեալ աւուրս Աստուածածնին »:

Հ. Մխոպայ — 10 Յունիսի Աբրահօրէ գրած նամակին մէջ — Զամչեանի գրած գուշակութիւններն իրագործուած կը յայտարարէ՝ այսպէս. «Եկանեմ ի ճանապարհ հանդերձ երկու ծառայիւք և Յակոբիկ (որդի Յովհաննէս չէլէպիի) մանկամբ, և գանազան ծանր հրամարտակօք... Ոչ դանդաղիմ ծանուցանել յուրախութիւն Հոգեւոր Տեառնդ և ամենայն Միաբանութեան, քանզի այսու առթիւ իրագիկ եղեալ զօրպիսութենէ անձինս արքային և ամենայն ուազգանոյ դրան, որպէս զի ընդ Յակոբիկ չէլէպոյն Գաւազիկս Օսմանեան Տէրութեան՝ կրկին մեզ գնչան սէրութեան իւրոյ և գանուն »:

Ի 25 Օգոստ. 1805 — Վիեննայէն առ Հ. Մկը. Զամչեան գրած նամակով — կը ծանուցանէ Ազաչրագեան՝ թէ կայսեր առջեւ եղած էր այդ ժամանակ, և թէ կայսրն « Պատուհաս գիս, կ'ըսէ, և զՅակոբ չէլէպին՝ իր կայսերական նշանաւ. զՅակոբ չէլէպին արար Excellentissimus, և զիս Meritissimus (այսինքն է՝ Աչխարհական »: Իսկ Գաղղիս եղած միջոցին՝ ուրիշ բարձր պատուի և պաշտամանց մ'ևս կ'արժանանար Հ. Մխոպայ, այսինքն է՝ Անդամ կայսերական խորհրդոյ՝ համօրէն հանրութեց գաղղիական տիրութեան », զի այսպէս առորագրած է ի 22 Նոյ. 1810 գրած նամակին ներքեւ: Ազաչրագեանի 27 Դեկտ. 1809 Բուքրէշէն գրած նամակին համաձայն՝ նա իրեւ առաջնորդ ձերբակալուած էր հրամանաւ մեծաչուք Բռոզովակեայ Գենէռալ Լնդկլհատին, և առաջարկուած էր իրեն՝ կամ այնտեղ մնալ, և կամ երթալ ի Պուսիա՝ իրեւ Ուսուցիչ մաթեմատիկայի: Ազաչրագեանը կ'ընտրէր հոն մնալն, և կ'ուսուցանէր Սերաստեան եղբարց՝ ՊՊ. Մխոպայի և Գաբրիէլի որդիքը: Յետոյ ալ Ազնքսանդր Ա. Կայսեր օրով՝ սէրութեան և Լազարեան Յովակիմ Ազայի կոմսէն գրուած նամակներով կը հրաւիրուէր — իրեւ Ուսուցիչ վերոյիշեալ պետութեանց — Լազարեան բարձրագոյն ձեռնարանը վարելու. բայց պարագաները կ'արգիլէին գինքն հոն երթալու:

Յիշենք գարձեալ մի ուրիշ Մխիթ. վարդապետ, որուն հաւատար գեռ հայագիտ մէկ մ'այնչափ հաչակուած չէ Աստեղաբաչխութեան և մաթեմատիկական ուսմանց մէջ՝ Անանիա Շիրակացիէն վերջ: Սա է Հ. Վարդան Յովհաննէս՝ Վանեցի, որ իր ուսումը կատարելագործած է Պադուայի Համալսարանին մէջ, առ աստ երեւելի աստեղագիտին Սանտինիի: Նա Լինտաուէն Թանկագին գործիներ ձեռք բերելով — չափման բարձրութեան և Ագիմուտի աւուեղաց, — նչանաւոր գիւտեր կ'ընէր Հալէյեան գիտաւորին վրայ, և կը բազդատէր անոր տեղին՝ Հալլա քազաքի համբաւոր աստեղաբաչխին՝ Ուզէնբէրգի յոյս ընծայած նախահաչուին հետ, ու կը ճչդէր: Նա — Հ. Քերոբէ Ագնաւորեանի 6 Սեպ. 1827 գրած նամակին համաձայն — համարձակ կը խօսէր լատիներէն, իտալերէն, գերմաներէն ու անգլիարէն լեզուները, երբայականն ալ անաչխատ կը հասկնար: Ընորհիւ այդ լեզուախօսութեանց և իր մասնագիտութիւններուն՝ նա շատունակ կը թղթակցէր Սանտինիի, Ուզէնբէրգի և ուրիշ աստեղագէտներուն հետ. անգլիացի հռչակաւոր մաթեմատիկոս ու աստղաբաչխ սիկինն իսկ Սոմէրվիլ անոր հետ թղթակցած է: « Օրացուցի », « Բիւզանդեան Դիտակին » և « Բազմավէպին » մէջ գրուած — յիչեալ գիտութեանց վերաբերեալ — բազմահմուտ յօդուածներն իսկ ըստ մեծի մասին Հ. Վարդանի գրչին և իսր գիտութեանն արդիւնք համարելի են:

Լեզուագիտութեան մէջ ալ Հ. Յարութիւն Աղթենեան կրնայ Հայոց Մխ.–ին համարուիլ։ Նա ոչ միայն գիտէր և կը խօսէր կատարելապէս եւրոպական ազգաց լեզուներն, այլ եւ արեւելեաններէն իսկ ոչ սակաւ։ Ես աւելորդ կը համարիմ յիշել հոս ուրիշ ձեռնհաս մտաւորականներն, ըլլայ մանկավարժութեան, ըլլայ գեղեցիկ գրականութեան և գեղարուեստից մէջ. բայց կրնամ ըսել՝ թէ նոյն իսկ Ֆ.Թ. դարու առաջին քառորդին Ս. Ղազարեմ կը մշակուէին և կ'ուսուցանէին — բաց ի բժշկականութենէ — այն ամենայն գիտութիւնք, որոնք կը մտաւակարտարուէին յայնժամու եւրոպական ճեմարաններուն մէջ։ Նշանաւոր եղած են և Հ. Եղիա Ֆինտոգեան՝ որպէս փորոգրող, և Հ. Իգնատիոս Փափազեան՝ իբր գծագրող և գեղեցկագիր։

Այդ՝ այս այսպէս ըլլալով հանդերձ՝ Մխիթարեան Միաբանութիւնը համեստութեամբ կը դիտէր Համալսարան և Ակադեմիա ուեծաճնչեան անուններէն, իր անմահ Հիմնադրի անունն ամէն բանէ վեր համարելով։

Սակայն այն օրէն ի վեր (1810), երբ ուեծ կոթոլիկացին Նար. Բոնապարտ տիրելով Իտալիոյ, Վիեննական Հասարակապետութեան հետ՝ վանական հաստատութիւններն եւս վերցնել կը վճռէր, Մխիթ. Միաբանութիւնն այդ ընդհանուրին ապառնացող ապտակէն կամ ջնջուելէն ազատելու և իր գոյութիւնը պահպանելու համար՝ այն խիստ միջոցներուն կը դիմէր, որոնք չատ հիմնաւոր էին և պաշտօնական և օրինական յիշատակարաններու վրայ հաստատուած. այսինքն՝ ճանչցնել ինքը նախ բոլոր արեւելքն ու արեւմուտքը ղրկեցնող յաղթականին և իր կայսերական նոր կառավարութեանը՝ որպէս մէկ զոր յառաջ Արեւելքէն Արեւմուտք եկած ու վիեննեիկ հաստատուած օտարահպատակ, ուսումնական ու բարեգործական հաստատութիւն մը, որ ամբողջ զոր մը ոչ միայն այնպէս ճանչցուած, յարգուած ու պաշտպանութիւն գտած էր վիեննական Հասարակապետութենէն և անոր յաջորդող ազգային Պետութենէն, այլ և իրեւ բացառիկ Արժին մը ազատ Թողուած մնա Կարգերուն և կրօնաւորաց վրայ դրուած պետական օրէնքներէն։ Ը. թէ ոչ միայն ազգային քարոզութեան և հոգ մանկտւոյն դաստիարակութեանն, այլ և բազմապիսի գիտական ու գրական գործերուն համար — զորոնք անընդհատ ի լոյս ընծայած էր իր անցեալ Տպարանէն — ճանչցուած էր թէ ամբողջ հոգ ազգէն, և թէ Եւրոպայի մէջ՝ աւետակերպ մտաւնագիտութիւններով և լեզուներով օժտուած Ակադեմիա մը։ Գ. թէ այդ հոյակապ Հաստատութիւնն՝ իր գոյութիւնն ու եռանեակ գործունէութեան բարիքը Արեւելքին և Արեւմուտքին յատուկ հաղորդելու համար՝ պէտք եղած բոլոր նիւթական միջոցներն ուղղակի Արեւելքէն ձեռք բերած էր, այսինքն՝ իր անդամակիցներուն ինկած ժառանգութիւններէն, իր հոյակապ բարեկամ բարերարներէն տրուած ձրի ողորմութիւններէն, և իր տպագրեալ գրոց վաճառմանէն, առանց երբէք ծանրանալու վիեննեիկի վրայ։ Գ. թէ Վիեննայի Ծիկիկաւ գետեղած չարժական առագուածոյ առաքելքն՝ ամ յամէ միշտ և անխափան առացած էր ինչպէս վիեննական Հասարակապետութենէն՝ այսպէս եւս ազգային Պետութենէն, առանց ամենեւին տուրքի ենթարկուելու. և թէ այժմ գաղրած ըլլալով այդ միակ պղիւրն, անկարելի կ'ըլլար Միաբանութեան՝ ապրիլ ու գործել։ Հուսկ ապա կը յանձնարարէր Ներին կայսերական վեհափառութեան իմաստութեանն և գթութեան՝ արժանը տնօրինելու։

Այս ամենայն — 25 Ապրիլի հանուած վճիռը փոխել տալու համար — անպրագոյն տեղեկութիւններով՝ յեղյեղուած են Միաբանութեանս ընդհ. Աբբահօր Գերպ. Ա. Գանոյին ի 22 Յուլ. 1806 ազ Ներին կայս. Բարձրութիւնն և Փոխարքային Իտալիոյ՝ Եւգենիոս Նապոլէան գրած Գերթագրին, — ի 16 Յունիս 1806 մեր պետարնակ Հարց՝ ազ խորհրդական Գեսպանն Գաղղիոյ Ruttin ի Կ. Պոլիս գրած Գերթագրին, — ի 6 Հոկտ. 1806 ազ ներքին գործոց նախարարն Marchese Brene ուղղուած Գեր. Ա. Գանոյի Գերթագրին, — ի 22 Ապրիլ 1806 ազ կայսրն Նապոլէան Բոնապարտէ գրած Գերթագրին, — և ի 6 Դեկտ. 1807 նոյն Աբբահօր անձամբ Նապոլէոնին ի Վիեննիկ մտաուցած Գերթագրին, — ի 22 Մայիս 1810 կայս. նոր կառավարութեան Նախարարին, և 14 Յունիս 1810 ազ (Barone) Prefetto dell'Adriaticoին ազուած Գերթագիրներուն մէջ։

Մխիթարեան Միաբանութեան և ակադեմական ընկերութեան ի վաղ ժամանակաց վայելած արտօնութեանց և Նապոլէոնի տուած վճռագրի բուն չարժառիթն և նշանակութիւնն ակնարկ ընելու համար՝ հարկաւոր կը համարիմ արտագրել այստեղ Գերպ. Ա. Գանոյ Աբբահօր ազ նա ուղղած Գերթագիրը ի նայն.

Sacra Imperiale e Reale Maestà !

Sire ,

La Congregazione particolare di Religiosi Sacerdoti chiamati communemente Monaci Armeni dell' Ordine di S. Antonio Abbate, passata dall' Oriente nello Stato Veneto sin dal principio del decorso secolo, si è stabilita in Venezia, nell' Isola di S. Lazzaro tenuta da essa in affitto, dove ha fabbricato di pianta col proprio suo danaro un Monastero formale, che è il solo che possede sulla terra.

In questo Monastero risiede il suo capo col titolo di Abbate Generale, in oggi Arcivescovo di Siunia; e quivi è compreso quasi tutto il Corpo della Congregazione composta esclusivamente di soli Nazionali Armeni, la quale per la propria e regolata sua forma è unica nella Nazione Armena.

L'oggetto principale di questa Religiosa Compagnia è di applicarsi continuamente alla coltura dello spirito e dei costumi de' suoi Connazionali, e d'instruirli con la voce, e coi Libri in tutte le scienze sacre e profane nel proprio idioma, per renderli utili alle Società Civili. E a tal fine instituì l'impiego delle Missioni Orientali ; ha fondato nel suddetto suo Monastero un Collegio per l' educazione della Gioventù Armena raccolta dall'Oriente ; ed ivi pure ha eretto una Stamperia corredata per l'edizione dei Libri.

In conseguenza l'occupazione quotidiana di questi Religiosi tende all'acquisto di tutte le facoltà scientifiche, e delle lingue necessarie al conseguimento dell' indicato loro scopo ; come altresì nella Edizione e pubblicazione dei Libri da loro composti, o tradotti, che vengono successivamente prodotti dalla loro Stamperia, e spediti in Levante e per dovunque si trovano gli Armeni.

Questa Congregazione si è sempre mantenuta ed avanzata con l' ajuto e con la beneficenza dei Suoi Parenti e dei Benefattori Connazionali, *i quali con viva riconoscenza considerandola come l'unica Riformatrice* (illegible) *della Nazione Armena*, l' hanno dotata e sostenuta con dei Capitali, i quali furono investiti nella Pubblica Zecca di Venezia ; di modochè per tutto quel tempo, in cui lo Stato Veneto rimase libero dalle politiche vicende, la Congregazione si procacciava il religioso moderato suo bisogno col Proderivante dai Capitali suddetti, e con qualche poco frutto, che ritraeva dalla sua Stamperia, e da un piccolo Podere ; e con tali mezzi poteva eseguire felicemente il disegno del suo *Istituto*.

Dopo però, li seguiti cambiamenti Politici, sono diminuiti di molto questi mezzi di sussistenza, e sopratutto il primo, per la sospensione delli Pro della Zecca, di cui la terza parte incirca le veniva somministrata a titolo di suffragio del cessato Governo Austriaco. Nondimeno la Congregazione non lasciò di seguitar avanti, ancorchè con grande stento e con debiti, sperando di ricuperare col tempo il suo necessario e sufficiente sostentamento.

Ed ecco per Divina Provvidenza giunto il sospirato giorno, in cui la Congregazione si augura di vedere verificata la sua speranza ; mentre con pienissima sicurezza confida, che sarà sostenuta, protetta, ed animata a proseguire la sua impresa dall'Alta e Potente Mano di Vostra Maestà Imperiale e Reale, siccome con umilissime e fervorose preghiere Lo implora, assicurandoLa, che tale di Lei Sovrana Grazia e pietosa Beneficenza sarà

eternamente commemorata e celebrata da tutta la Nazione Armena sparsa per l' Universo, a nuovo vanto, e a maggior gloria della sempre Augusta e Gloriosa di Lei Imperiale e Reale Famiglia, che Iddio Signore voglia conservare, felicitare e perpetuare per più e più secoli; siccome con pieni ed ardenti voti Lo supplica e non cesserà giammai di supplicarLo la Congregazione stessa unita al suo Capo, il quale prostrato al Trono di Vostra Maestà Imperiale e Reale con profondo rispetto, e con umilissima riverenza ha l' onore di essere e di protestarsi sempre

Sire,

Di Vostra Sacra Imperiale e Reale Maestà

Umilissimo, Ossequiosissimo, Obbedientissimo

STEFANO ACONZIO KIUVER

Arcivescovo di Siunia e Abbate Generale

STEFANO ASTELICH

Assistente e Segretario.

Venezia, li 22 Aprile 1806.

Իակ միւս կողմէն ալ վեհմախառ կարդինալը՝ Ֆէշ, որ լսած էր Եւսեբիոսի Բրոնիկոնին և փիլոնի ճառերու մերձաւոր հրատարակութեան պատրաստութիւնն ի Ս. Ղազար, և կը ցանկար անխափան տեսնել անոր կատարումը, Հռովմէն յանձնարարական թուղթ մը կը գրէր ի Միլան առ Կրօնից Նախարարը (Ministro del Culto), ծանուցանելով Մխիթարեան Միաբանութեան օգտակարութիւնն բոլ աշխարհի. այսպէս նաեւ Վենետոյի և Պադուայի և Միլանի գիտնական կաճառներէն և բարեկամ ազդեցիկ անձերէ նոյն վկայութիւնը կը տրուէր: Յետոյ Կաստէլի ձէնէռալը, Միոլիս, Ֆռօրիոն, մեծ Կոմիսարը Դիւչէն ու մեծանուն իշխանը՝ Ալբրիտ գալով Ս. Ղազար կղզին՝ անձամբ իակ կը հարցնէին ամէն բան, և մանրամասն տեսնելով և տեղեկանալով անոր գիտական և կրթական գործունէութիւնը, կը գրէին առ Փոխարքային: Իակ Աւգիտորն Կոնսիլիոյ դի Ստատոյին Պր. Himbert de Zlegny այնչափ կը համակրէր այդ Միաբանութեան ազգօգուտ և քաղաքակրթիչ գործին, որ ոչ միայն կանուխէն կ'ապահովցնէր անոր յայնժամու կացութիւնը, այլ և կը վստահացնէր, թէ դատարկուած կղզիներէն մեծագոյնն իակ՝ կրնաք ընդունել անկասկած, եթէ ուզէք: Հ. Յովհ. Զօհրապեան և Հ. Մեսրոպ Զրաղեան իակ՝ որոնց մին Միլանու և միւսը Պարիսու գիտական շրջանակներուն մէջ գիտնականի համբաւ հանած էին, պէտք եղած տեղեկութիւնները կը հաղորդէին Միլանի Փոխարքայի մերձաւոր ազգականին Մօնս. Լուիճի Բրէմէի և հայազգի և հաւատարիմ թիկնապահին՝ Պր. Պետրոսի Աբրհամ Չարեմ [1]. որոնք նոյնպէս իրենց ազդեցութիւնը կը բանեցնէին Փոխարքային և Կայսեր վրայ, այսպէս նաեւ Կայսեր սիւնեցի թիկնապահը Պր. Յովհէփ Յասոմեանը:

---

1. Ա՛ Շուշոյ Վրակը գիւղէն էր. և Հ. Ղևիա Թովմաճանեան այսպէս կը նկարագրէ զինքը, 7 Նոյեմբեր առ Հ. Մկր. Աւգերեան գրած նամակին մէջ. «Պատանի է 22 ամաց, հասակակից տեառն իւրոյ փոխարքայի (Եւգենիոսի). առոյգանձն, թիկնաւէտ, կորովի, պարթեւահասակ՝ քառիւք մատամբք և առաւել բարձր քան զՀոգեւոր Տէրս (Գերպ. Ագոնց): Աչխոյժ և աչալուրջ, վայելչադէմ և քաղցրաբարոյ. զանձն սիրելի ընծայէ ամենեցուն, սիրեցեալ յոյժ յաշս Տեառն իւրոյ, և մեծապէս շնորհս գտեալ առաջի նորա, մինչեւ և տակ մի զգեստու զգեցուցանել նմա ի 6,000 միլանեան լիրայից»:

Ահա այս հիման վրայ կառարուած յ8 Սեպտ. 1810 կը հաներէր [1] Պարիսէն ամենայաղթ կայսեր անզառնալի վճիռը՝ իր իսկ առարգրութեամբն, որով ոչ միայն կը հաստատէր և կ'ապահովցնէր Մխիթ. Միաբանութիւնն, այլ և կը պատուէր և կը հռչակէր Եւրոպայի չորս կողմը։ Իր ամենամեծ կարեւորութեան համար կ'արտագրենք հոս այդ յուէտ յիշատակի արժանի վճռին պատճէնը, որուն տպագրուած բնագրի օրինակներն իսկ կը գտնուին ոչ միայն Ս. Ղազարու Մայրավանքին, այլ և Վենետիկի և շրջակայ ամառնոցաց քաղաքային պետնատուներուն մէջ, համաձայն Գերպ. Ագոնցի մէկ նամակին։

NAPOLEONE,

Per la grazia di Dio e per le Costituzioni
Imperatore de' Francesi, Re d' Italia,
Protettore della Confederazione del Reno
e Mediatore della Confederazione Svizzera,

Abbiamo decretato e decretiamo quanto segue:

ART. I.

I Monaci Armeni dell' Isola di S. Lazzaro di Venezia sono conservati nell' attuale loro stato, finchè sia da Noi altrimenti disposto.

ART. II.

I Ministri delle Finanze e del Culto sono incaricati dell' esecuzione del presente Decreto, che sarà pubblicato ed inserito nel Bollettino delle Leggi.

Dato dal Nostro Palazzo Imperiale di S. Cloud questo dì 17 agosto 1810.

NAPOLEONE

Per l' Imperatore e Re
Il Ministro Segretario di Stato
A. ALDINI

---

1. *Այս մասին եղած հետաքրքրական մանրամասնութիւնքը կ'արտագրենք Գերպ. Ագոնցի մէկ նամակէն, զոր ուղղած է յ7 Սեպտ. Հ. Մխ. Զամչեանին ի Կ. Պոլիս.*

« Ահա եհաս ժամ՝ բարեհառաչ պաղատանօք և արտասուօք խնդրեալ. ահա դարձեալ աքանչելիք Օգոստոսափրուհւոյս՝ ի վերայ Մխիթ. Միաբանութեան Սրբոյն Ղազարու. քանզի ի հրահեղձոյց լինել համօրէն վանորէից Իտալիոյ, այս վանք եւս եթէ զեկավարեալ ի մեծէ Տիրուհւոյն՝ ապրեցաւ ի փոքրիկ կղզին Ս. Ղազարու, ի աքանչացուածն աշխարհի։ Քանզի ի բարեբաստիկ ամենանս Սեպտեմբերի — բարեբաս-

Կայսերական այս անակնկալ վճիռս, որով ոչ միայն ազատ կը թողուէր Մխիթ. Միսթանութիւնն՝ այլ և նպաստամատոյց կ'ըլլար անոր, կ'ապշեցնէր բոլոր աշխարհը: Իրաւ է՝ որ Ակադեմիայի խօսք չկայ այսուհետ, այլ « Monaci Armeni » պարզապէս. բայց լռելեայն կը հաստատի այն Նապոլէոնին նախընթացարար հաղորդուած տեղեկագրերէն: Դարձեալ դիտելու է՝ որ կրօնաւորութիւնը չէր, որ այդ որոշման կը մղէր զՆապոլէոն, այլ հայ կրօնաւորներու կառարած գործը:

Ակնէց վերջ փոխանակուած թղթակցութիւններէն իսկ ակներեւ կը տեսնուի՝ որ ինչպէս կայսերական պետութիւնը Մխիթարեանները պաշտպանելու, այսպէս ալ ոչքա կերպով մը պարտաւորուած էին՝ որ Ս. Ղազարու Հիմարանին և իրենց նախնեաց պատմական և մատենագրական գործերէն ինչ ինչ գողղիական լեզուով եւս թարգմանեն երբեմն երբեմն, և ետրատիոյ ծանօթացնեն:

Այս մանաւանդ ուշադրութեան արժանի կէտ մ'է՝ որ այդ նշանաւոր դէպքով — այսինքն՝ Մխիթ. Միսթանութիւնն իրրեւ գիտնական ընկերութիւն մը կամ Ակադեմիա ճանչցուելէն ետքը — երկու ընդարձակ և չքնդ տպարկղներ կը բացուէին՝ մին եւրոպացւոց, իսկ միւսը նոյն իսկ Միսթանութեանն համար: Նկատմամբ առաջնոյն դիտելու է՝ որ մէկ տարի վերջ Նապոլէոնի հրամանով Պարիսում հայերէն լեզուի ուսուցման բաժան (faculté) մը կը հաստատուէր, ուր կը ժողովէին 26 ուսանողք: Դարձեալ՝ այդ ժամանակէն ի վեր կը սկսէին եւրոպացիք ունալ բազմութեամբ յաճախել Վենետիկ՝ կամ Ս. Ղազար կղզին, հայերէնին հետ՝ ուրիշ արեւելեան լեզուներն եւս ուսանելու, և մատենագրութիւնք ուսումնասիրելու համար: Եւ զարմանքն այն է՝ որ հայերուն հատատար՝ և գուցէ անոնցմէ ունալի հետեւար Այպիոնի որդիքն եւ Գերմանոսիք կը փութային Աղրիատիկի ափունքը: Միայն Հ. Յարութիւն Ալգիբեանի ուսանողաց թիւը 15ի կը հասնէր, և այն ալ 15 տարուայ բնթացքին մէջ: Հետաքրքրութեան համար կը յիշենք գոնէք՝ իրենց ուսանողութեան տարեթիւերովն եւ ուսած լեզուներովը: Լորդ Պայրն՝ որ յամին 1816 կ'ուսանէր հայերէն լեզու. Բրիջմէ՝ 1818ին և Լոնկ անգղիացին՝ 1819ին. յամին 1821 Պր. Մրնտըն (անգղիացի). յամին 1820 գերմանոցին Պր. Դիտրիխ, յամին 1821 Սկնդ-Լաէֆ լորդը կ'ուսանէր տաճկերէն լեզու, իսկ Պր. Ճօն Ռիչարտսըն՝ հայերէն լեզու. յամին 1821 Զապոյսկի՝ քարտուղարն Պատրիարքին Վենետկոյ՝ կ'ուսանէր անգղիարէն լեզու. յամին 1822 Լորդ Պրիճմ Ռըսէլ կ'ուսանէր հայերէն. նոյն տարին Պր. Սոհնդիչ անգղիացին կ'ուսանէր տաճկերէն լեզու. յամին 1823 Պր. փրօբերով անգղիացին կ'ուսանէր հայերէն և արաբական լեզուներու հնչականութիւնը. յամին 1825 Պր. Գուտ՝ անգղիացի կ'ուսանէր հայերէն. յամին 1828 Պր. Պիլ՝ անգղիացին կ'ուսանէր նոյնպէս հայերէն լեզու, և վայեան զը Ֆլորիվալ հայերէն նոյնպէս: Ապա Յոհ. Կապելէտտի և Գերմանոսին Պետրման, և ուրիշ շատերը:

Իսկ նկատմամբ երկրորդին՝ կը տեսնենք ակներեւ, որ Մխիթ. Միսթանութիւնը — չնայելով իր զրամական անձուկ դրութեանն — այդ ժամանակէն սկսած՝ նոր

միկ ասեմ վասն Միսթանութեանս — զի ի սմա արկաւ հիմն նորա. ի սմա գոան Հարքն մեր ամենեքեան միախուռն հաւաքեալ ի Մօտս, զերծեալ յերկաթի հնոցէն. և ի սմա մտին ի ժառանգութիւն Կղզւոյս, որպէս լիագոյն տեսցի ի վարս Հօր մերոյ: Նմանապէս ի սմա ի մօտ աւուրս շնորհաբաշխ ծանի Ծննդեան Մօրն Աստուծոյ, եհաս ի փարիզու աւետաւոր վճիռն մեծի Նաբոլէոնին՝ վասն հաստատութեան մերոյ, ի ձեռս Փոխարքային, որ ի նոյն աւուրս առաւ ի վենետիկ գոաւ:

Իսկ նա ընդ առնուլն զայն՝ յառաջ քան զհաղորդել Քաղաքապետին, որպէս կարգն պահանջէր, նոյն-ժամայն առ սրտին խնդութեան առաքեաց մեզ երկու օտպագրեալ օրինակս՝ ձեռամբ հաւատարիմ Ջինակրի իւրոյ Պետրոսի մերազնեայ, զոր յառնուլ մեր՝ ոչ կարեմ բանիւ վճարել պինդութիւնն, որ յորդեալ ծովացաւ ի սիրտս մեր ամենեցուն: Ջոր և տէրութիւնն տեղւոյս ետ մատուցանել յամենայն նշանաւոր տեղիս քաղաքին, որպէս և ի վանս մեր մատուցին ի բազում դրունս: Ահա զտպագրեալ օրինակն առաքեմք, ուր յաւելուածն Ա. հատուածոյն մի ինչ ապացէ կասկածել. զի է մանաւանդ ձեւ վճռոյ, և յայտ առնէ՝ թէ ոչ ոք բաց յինէն իշխեսցէ այլ կարգաւորութիւն ինչ առնել ի վերայ նոցա:

Զայս վճիռ՝ այն մատուցաք գրեցին, որք երկտող գրով ընդ ունելին զամենայն վանորայս Խոտալիոյ, և ընդ մենոզոնական զգեստուց՝ բարձին և զանունն Մենոզոնի. և ասկայն ի գլուխ վճռոյդ զՄենոզոնի անուն արձանագրեն, յայտ է թէ շարժեալ և ուղղեալ յամենակալ ձեռաց վերնոյն՝ հզօր բարեխօսութեամբ օրհնաբանեալ Կուսին ամենագութ Մօր մերում: Այս շնորհ Կուսին մեծ է և անզուգական՝ ըստ մեծութեան փորձութեանն, որոյ հաւատար՝ հայեցեալ ի պարագայս ժամանակիս՝ համարձակիմ ասել, թէ ոչ երբէք եհաս ի վերայ Միսթանութեանս: Ապա արժան է ինձ առնուլ ի բերան զՄովսիսեանն յորդոր առ Խոսրով. «Եւ արդ

հաւնզով կը բազմապատկէր իր ուսումնասէր ջանից և աշխատասիրութ՛ան հետ՝ նոյնպէս և հերոպական լեզուներով կատարած հրատարակութիւններու թիւը, մինչդեռ յառաջագոյն հրատարակած գրքերը գրեթէ բացառապէս հայերէն լեզուով մեկն էին։ Եւ իրաք՝ եթէ աչք մը ածէ Ս. Ղազարու տպուած գրացուցակին վրայ, պիտի տեսնէ որ 1810–1829 թուականներուն մէջ քառասնից աւելի պատմական, լեզուական և բանասիրական գանազան նիւթերու վերաբերեալ գրքեր տպուած են մեկն այդ լեզուներով։ Մենք կանուխէն արգէն տեղի ունեցանք յիշելու այդ հրատարակութիւններէն երեքը, որոնք են՝ Եւսեբիոսի Ժամանակագրութիւնը (Chronicon), Քրոնի Sermones tres, որոնց բնագիրքն ամբողջապէս կորսուած են, և Paralipomena armena, որոնց բնագրերը պակսաւոր էին՝ յոյց հրատարակիչն՝ հայերէնով լրացուցած է, և Գնեպ. Սոմալեանի Quadro della Letteratura dell'Armenia, ինչպէս և Catalogo delle Opere classiche dei SS. Padri e di altri scrittori, tradotte anticamente in armeno։ Ն. Գնարհատոյ Հաւատովն՝ որ 1810ին առաջին անգամ լոյս կը տեսնէր՝ մեկ լեզուներով (որ յետոյ 36 լեզուներու կը հասնէր), ոչ մեկն կ՛ըլլար արժանաւոր նուէր և գարգ գրեթէ բոլոր Եւրոպիոյ վիճակներու և արքայազուններու գրասենքին, և անոնց պարգեւներովն և գրաւոր գրուածներով կը պատկառէր, այլ նոյն իսկ բանասիրաց աշխարհներն ալ կը գրաւէր իրեն, մանաւանդ թէ դէպ ի Ս. Ղազարու բազմալեզուեան Տպարանն ու Գեղարուեստը։ Բոլոնիացի հանրածանօթ ու անուանի լեզուագէտ՝ Մեզզո-Ֆանտի՝ օրինակ մ՛ընդունելով անկէ, կը գրէր Գնեպ. Աբբահօրը թէ անոր մէջ պարունակուած լեզուներով իսկ անկարող էր բան արժանապէս յայտնել իր ուրախութեան համար՝ նաեւ այն մեծ համակրութիւնը, զոր այնքան դիպաց մէջ ունեցած էր դէպ ի լեզուագիտութեան և գեղեցիկ գրականութեան այդ ձեռնհաս և անխոնջ մշակներն։ Յամ. Խմբագրութեան ինդիրի Եկեղեցականաց առաջ բառնելէն հրատարակութիւնն — Հ. Մկ. Ալգերեանի Թարգմանութեամբ — յամին 1816 առաջադրանական կանոնները աշխատութեան և հիացման նիւթ կ՛ըլլար։ Ն. Լաբրանացոյ Ակնարկութեան բառերէն հրատարակութեամբն, յամին 1812, կ՛իմանար արեւմտեան եկեղեցականները՝ թէ հայ ազգը Մեծին դարուն իսկ ունեցեր է իր Վանեբերանը։ Յամին 1816 Հ. Յ. Ալգերեանի Grammar Armenian and English և Grammar English and Armenian քերականութիւններով, և յամին 1817 Dictionaire Français–Arménien և Arménien–Français, ինչպէս և 1821–1824 Dictionery English–Armenian և Armenian–English հրատարակութիւններովն Հայերուն՝ անգղիերէնի և գաղղիարէնի, և ասոնց ալ հայերէն լեզուի ուսումը կը դիւրացուէր և կը խրախուսէին։ Եփրեմի Համաբարբառ Աւետարանին (Evangelii Concordantis expositio) նոյն արդէն ի վաղուց պատրաստուած էր Հ. Մկ. Ալգերեանի Թարգմանութեամբ, թէպետեւ ապագրութիւնը կը յետաձգուէր 1876ին։ Յամին 1819 լոյս կը տեսնէր — առաջին անգամ — Հ. Յ. Ալգերեանի խոսք. Notizie sulla Congregazione dei PP. Mechitaristi di Venezia հետաքրքրաշարժ Տեղագրութիւնը։ Յամի 1824 կը հրատա-

---

խօսէլ, պինդ խնդրէ ի քէն աէր Աստուած քո, այլ երկնչել ի սեառնէ Աստուծոյ քումմէ և գնալ յամենայն ճանապարհս նորա. և սիրել զնա, և պաշտել զաէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ. և պահել զպատուիրանս նորա և զրնխոս, զոր խոստացար սեառն Աստուծոյ քո». և գրաբերթարութիւնս զայս մեծ՝ անմոռաց յիշատակութեամբ պատուել։ Մեք վաղուն և ի հեռուեալ աւուր հրաշափառ անուան Կուսին Մարիամու ի վերայ սովորական պաշտամանց՝ յաւելցուք և այլ ինչ ինչ՝ երգելով մխաքանական ձայնիւ և գերգն Գոնաբանութեան։ Իսկ գուք մատուցէք մի մի ուխտական պատարագս ի փառս սրբոյ Երրորդութեան և ի պատիւ Աստուածամօր Կուսին՝ ի նպատս հոգւոց Քաւարանին. ի նոյն յորդորելովք և զբաղնկամս մեր՝ լինել մեզ գոհաբանակից վասն անգուգական շնորհացս»։...

Ասկա կը գրէ Գնեպ. Ագանց՝ թէ կայսերական կառավարութիւնը կը հրամայէր, որ բոլոր վենետկեան (Գնպարտամենտոյի) Գաւառապետներն մէջ օրինակներ սփռուին, և փակցուին նշանաւոր տեղերու. օրինակի աղագաւ, Մալամոկի, Պելեստրինայի, Փիռռֆիայի, Որիագոյի, Ալամիրայի, Դոլոյի, Մեստրէի և ուրիշ ասանցներու մէջ։ Եւ թէ — որ զարմանալին է — նոյն հրովարտակը կ՛արձանագրուէր նոյն իսկ Օրինաց մատենին (Bollettino di Legge) մէջ։

Դժբախտաբար այս մատենիս 1810էն վերջ եղած հրատարակութիւնը ձեռքերնիս չունենալով՝ չկարողացանք իմանալ՝ թէ նոյնութեամբ տպուած էր արդեօք, եթէ ընդարձակ պարագաներով։ Ջի 3 Յուլ. 1819, Գաղղիական Հասարակապետութեան վենետկոյ Գեսպանին J. Babt. Lallementի մէկ պաշտօնական արտօնագիրն՝ առ Գնեպ. Սա. Ագանց՝ ոչ միայն պաշտպանութիւն, այլ և ամենայն նպաստներ կը խոստանար և կը յայտարարէր Մխաքանութեանս։

բակուէր Հ. Գաբ. Ալեմիքեանի Dissertazione sulla processione dello Spirito Santo dal Padre e dal Figlio *հմտական ճառն, իսկ* 1827*ին ալ իտալ. լեզուով* La Liturgia Armena: *Նոյն տարին կը հրատարակուէին հայերէն և լատին լեզուներով Սերբիանոսի անյայտացած ճառերն՝* (Homeliæ) *Հ. Մկ. Ալգերեանի աշխատասիրութեամբ. այս իսկ գեղեցիկ և յոյժ կարեւոր նորութիւն մ'էր գիտնական Եւրոպայի համար: Յաւելին* 1825 *Հ. Եփրեմ Ակթեանի լատին Բարգմանութեամբը կը հրատարակուէր Ստեփ Ակոնց Ակրտհօր ընտիր կենսագրութիւնը* (Vita Stephani Akonzii Köver, *որուն համար ըսած էր՝ Կարդ. Գալլէտսի, թէ « Յառաջ գիտէի զինքն իբրեւ առաքինի և արժանայարգ մարդ, բայց այժմ (այսինքն է՝ անոր կենսագրութիւնը կարդալէս վերջ) ճանչցայ զինքը այն նշանաւոր մարդիկներէն մին, որոնք երեւցան մեր դարուն մէջ »: Ջախջախեանի Իտալ. հայ. տուա. Բառգիրքն եւս՝ որ* 1829 *թուականին լոյս կը տեսնէր, ոչ միայն կը հանրացնէր* 1804*ին մեծդի տպագրութեան գործածութիւնն, այլ և կը կարապետէր* 1831*ին երեւցող հայ–իտալ. Բառգրքի հրատարակութիւնը: Բազրատունեաց* Grammaire française *և* Supplément sur la versification francaise, etc., *հրատարակութիւով* 1821*ին՝ մեծապէս կը հետաքրքրէր Գաղղիոյ գրագէտներն ու ճեմարանականները, վասն զի չհատգրգիռ տեղեկութիւններ կու տար նաեւ հայկական հին տաղաչափութեան վրայ, մանաւանդ երբ Գրապետը* Langlès *ընդունելով Վենետիկէն օրինակներ՝ կը ներկայացնէր զանոնք Պարիսի արքունական գրատան ժողովարանին մէջ հաւաքուած բանասէրներուն՝ իբրեւ օրեւան գրական նորութիւններ: Ջրպետեան,* 1823 *Սեպտ. 24ին, Հ. Յարութիւն Ալգերեանին գրած նամակին մէջ այս բանս իմացնելէն վերջ՝ կ'ըսէ. « Գրեցի պյատուկ տեղեկութիւնս ի վերոյ երկաքանչիւրոցն, և եառ* Moniteur *անուանեալ լրագրութեան՝ առ ի հաչակել անդ տպագրութեամբ »: Մեզ յայտնի չէ թէ ինչ գրած է Ջրպետեան այդ թերթին մէջ, ինչ արձագանգներ տուին ուրիշ թերթերն՝ այդ հրատարակութեան մասին, և թէ ինչով վարձատրեց Գաղղիոյ Ակադեմիան՝ անոր տաղանդաւոր հեղինակը. սակայն կրնանք ըսել՝ որ այսպիսի հրատարակութիւններով հետ զհետէ աւելի կը տարածուէր Ս. Ղազարու Հայկական ճեմարանի ազդեցութիւնն յԱրեւմուտս: Ասոր՝ մէկ կողմէն եւրոպական ճեմարանները կը հրաւիրէին զՄխիթարեանս՝ իրենց ի կառաւարկութիւն, և միւս կողմէն ալ իրենք կը խնդրէին Ս. Ղազարու Հայկական ճեմարանին կառաւարկիչ ըլլալ:*

Շնորհիւ այս հանգամանքին՝ յամին 1825 — *Մարտ 20 թուակիր Գիպլոմովը — կը յօդանար Հ. Մկրտիչ Ալգերեանը իբրեւ* Membro Corrispondente (*գրոց կամ գործոց Անդամ*) *Հնախօսական Ակադեմիայիի* (Accademia Archeologica). *և Գիպլոմին պարունակութիւնն է հետեւեալն.*

Al Sig. *Giovanni Battista Aucher Padre Ancirano,*

Vicario Generale de' Mechitaristi.

L'Accademia Romana di Archeologia, la cui fondazione ha per iscopo l' avanzamento dello studio antiquario, massime ov' abbia rapporto ai monumenti superstiti dell' antica nostra magnificenza, nel riunire gl' ingegni più versati su questo ramo di Letteratura in Roma, nell' Italia, e al di là delle Alpi, *ha creduto espediente prevalersi de' vostri conosciuti e non ordinarj talenti, con aggregarVi al numero de' suoi membri Corrispondenti.*

---

1. *Այսպէս կը տեղեկագրէր Հ. Իգն. Փափազեան* 11 *Սեպտ.* 1825 *առ Գերպ. Աստիճան Ամալեան, Հռոմէն գրած իր նամակին մէջ:*

Sul documento ricevuto della vostr' accettazione, ve ne trasmette la presente, nella lusinga, che sarete per contribuire alla gloria di questa interessante e nobile istituzione.

Registrato in Archivio N. 241,

Roma, 20 Marzo 1825,

Il Protettore
L. F. Card. ALESSI CAMERLENGO

Il Presidente
MIC. M. NICOLAI

Il Segr. perp.
P. A. PUATTANI

Նոյնը յամին 1827 *Յուլ.* 1 *Վիպտոմով ալ կը հրաւիրուէր՝ ըլլալ կառաւակից Ազնւական Հնտպանիին Վենետկեան* (Istituto dell'Ateneo Veneto): *Այս կառաւախս Վիպտոին է հետեւեալն, ուր Ս. Մարկոսի առիւծը նաւած կը նայի անոր յաղակոդմը գետեղուած երկրագունեան ու վրան նաւող բուխճակին.*

ATENEO DI VENEZIA

Il Padre GIANBATTISTA AUCHER,

Vicario Generale della Congregazione dei Mechitaristi,
Membro Corrispondente dell'Ateneo Veneto.

Nell'adunanza ordinaria del giorno ventesimo ottavo dello scorso mese di Giugno l'Ateneo di Venezia *ha eletto Vostra Signoria Virtuosissima a Suo Membro Corrispondente, e con questa elezione ha mirato ad onorare i meriti di Lei singolarissimi in ogni maniera di scientifiche e letterarie discipline.* E siccome devesi far uso delle ottime cose, quando si voglia che il possederle torni vantaggioso, così la Presidenza richiede la *Sapientissima Signoria Vostra a porre in opera le applaudite cognizioni che l'adornano, acciocchè l'Ateneo conseguisca produzioni non iscarse dal nobilissimo di Lei ingegno.*

Dalle Sale dell'Ateneo di Venezia, 1 Luglio 1827.

Il Presidente P. BIAGI
Il Vicepres. GAETANO R. RUGGERI

Յամին 1825 Հ. Եղիա Թոմեանեան և Հ. Գերմէկ Ագնաւրեան՝ Գարտուղար Գաւառաին գրած նամակին համաձայն — կ'ընտրուէին գործօն անդամներ վերոյիշեալ «Հնագիտական Ակադեմիային» Հռոմայ։ Վերջինն — որ առականեր լեզուին մէջ կատարելագործուելու համար տարիներ անցուցած էր ի Հռոմ — այն կռճաաին մէջ բրած հիանալի առենաբանութիւններով կ'ըսուի՝ թէ ամենուն գարմանքը կը շարժէ եղեր, մանաւանդ լեզուի ընտրութեամբ և վսեմ արտասանութեամբը։

31 Մայ. 1827 Միաբանութեանս գլուխն եւս՝ Գերպ. Սուքիաս Սոմալեան Ազբահայրը կ'ընտրուէր Պատուաւոր անդամ (Membro Onorario) Վենետկոյ Ազնուական Ճեմարանին, իր համաշխարհական համբաւին և արդեանց համար, ինչպէս որ շեշտուած են Յունիս 1ին տրուած Դիպլոմին մէջ։ Կարեւոր կը համարիմ դնել հոս անոր պատճէնի ներքին մասը գէթ, յապաւելով ընծայականը.

« Nell' adunanza ordinaria del giorno trentesimo primo dello scorso Maggio l'Ateneo di Venezia ha eletto Vostra Signoria *Virtuosissima a Suo Membro Onorario.* E siccome suolsi *conferire questo grado accademico a que' soli personaggi che, per virtù esercitate o per diffuse dottrine conseguirono la corona della lode, e l'estimazione universale*, così la Presidenza, nel partecipare cui *fa la nuova elezione alla Signoria Vostra Sapientissima, prova un'esultazione infinita, poichè accaduto in Lei conosce l'acquisto d'un amatore della nostra Società*, il quale vorrà mai sempre operare il nobilissimo suo ingegno, acciocchè l'Ateneo sia portato a maggiore incremento e nominanza ».

Dalle Sale dell'Ateneo di Venezia, 1 Giugno 1827

Il Presidente P. BIAGI

Il Vicepres. R. RUGGERI

Զանց կ'ընեմ եւ այստեղ յիշելու յաջորդ տարիներուն Միխիթարեան դեռ ուրիշ դիպուածներն, այլ այսչափս միայն դիտել կուտամ՝ որ այս չորս անձնաւորութեանց, մանաւանդ Գերպ. Գլխոյն գրեթէ միաժամանակ անդամակցիլն տրտաքին Ճեմարաններուն՝ յայտնի նշան մ'է Ս. Ղազարեմ մշակուած գիտութիւններու դպրի գարգացմանն և Եւրոպայի մէջ վայելած մեծ հռչակին։ Գարձեալ՝ այդ յաջողութիւնները կուգային յամին 1827 գարթուցանելու մեծի և փոքրի մէջ նոր եռանդ մը՝ ոչ միայն ուելի եւս ընդարձակելու գիտութեանց տպարէզն — ինչպէս կը գրէր Գերպ. Սոմալեան նոյն տարին Օգոստ. 24 առ Հ. Մին. Բժշկեան ուղղած նամակին մէջ, — այլ և վերահաստատել կերպարէս ի Ս. Ղազար գիտութեանց, լեզուաց և գեղեցիկ դպրութեանց կարգաւորեալ Ակադեմիա կամ Ճեմարանը, որուն բաց ի ներքնոց՝ օտար գիտնականներ եւս կարենային անդամակցիլ, և հայագիտութիւնն ալ ուելի ծաւալէր։ Ուստի այդ ժամանակն է՝ որ կը յօրինէր թուումիա Ազբահայրը բարձրագոյն ուսմանց և գիտութիւններու նոր ծրագիրը, պանազանելով Միաբանութիւնն ի կրօնականս և յուսումնականս, որով ոչ միայն Ս. Ղազար, այլ և Մուրատեան Վարժարանն եւս պիտի առանցին բարձրագոյն Լատալի կամ Լիկեոնի համարժէք իրաւունքը, հերոպական գիտութեանց առջեւ։ Եւ շնորհիւ այդ նախկին բարեփոխութեանն է՝ որ տեղի կ'ունենար ապա ուրիշ մը. և ինչպէս յամին 1867 Ֆրանսայի կայսերական գիտութիւնն, այսպէս ալ 1896ին Իտալիոյ տէրութիւնը պաշտօնապէս կը ճանչնար զանոնք որպէս Լիկէան, և կ'արտօնէին, որ Միխիթարեան և Մ. Ասիա. աշակերտք կարենան — առանց վերաքննութեան — անցնիլ իրենց Համալսարաններէն։ Գառնալով ուղղակի յամին 1833 Գերպ. Սոմալեանի յօրինած ծրագրին՝ կը գտնենք՝ որ չկարողացանք գանել եւ հոս գնահատել — 1883 Թուականին պատահած հրդեհին պատճառաւ

— Վանայս Վիւանին ցիրուցան եղած թղթերուն մէջ, բայց հաւանօրէն նոյնը կամ նմանն ըլլալու էր 1834ի ծրագրին հետ [1]։ Կաճառօրդներ կ'ընտրուէին ոչ միայն Ս. Ղազար գանուող, այլ և բացակայ եղող գիտութեանց և գրականութեան լաւ ձեռնհաս և գործունեայ անձինքը։ Ահա այսպէս կը վերակաչէր Մխիթարեանց «Հայ-

---

1. Ջոր կը դնենք ի տառիս, յորում գլխատառքն Ա, Բ, Գ և այլն, կը ցուցնեն տարեշրջանները։

ՁԱՓ ԵԻ ԿԱՐԳ ՈՒՄԱՆՑ Ի Ս. ՂԱԶԱՐ

Ա.

Քերականութիւն հայ. Ա մասն. — Նախակրթութիւն իտալական լեզուի. — Թուաբանութիւն, — Աշխարհագրութիւն. — Ուսումն քրիստոն. Վարդապետութեան. — Քաղաքավարութիւն. — Գեղեցկագրութիւն հայերէն և իտալերէն։

Բ.

Քերականութիւն հայերէն՝ Բ մասն (Շարադրութիւն). — Քերականութիւն իտալերէն. — Ժամանակագրութիւն. — Պատմութիւն Ս. Գրոց և չորից ինքնակալութեանց. — Աշխարհագրութիւն Հայաստանի. — Ընթերցուածք հայկական Մատենագրութենանց. — Գեղեցկագրութիւն։

Գ.

Ճարտասանութիւն. — Ուսումն լատիներէն լեզուի. — Պատմութիւն ընդհանուր. — Պատմութիւն գրականութենան. — Ընթերցանութիւնք հարտասանականք. — Պատմութիւն ազգային։

Դ.

Ճարտասանութիւն. — Լատին լեզուի Շարադրութիւն. — Դիցաբանութիւն. — Բանաստեղծութիւն. — Անէկդոտ. — Ընթերցանութիւն հարտասանականի։

Ե.

Երկրաչափութիւն տարրին. — Նշին վերին. — Եռանկիւնաչափութիւն՝ մակարդակ. — Նշին գնդական. — Բնական պատմութիւն. — Տրամաբանութիւն. — Պատմութիւն իմաստասիրաց։

Զ.

Բնականցութիւն. — Բարոյախօսութիւն. — Բնաբանութիւն ուսումնական. — Բնաբանութիւն փորձառական. — Տոմարագիտութիւն. — Ընդհայեցողութիւն. — Սկզբունք այլոց ուսումնականութենանց։

Է.

Եկեղ. Պատմութիւն. — Հմտութիւն սուրբ Գրոց՝ ըստ այլեւայլ թարգմանութենանց. — Պատմութիւն ժողովոց. — Յունարէն լեզու. — Պատմ. սուրբ Հարց և աստուածաբանից. — Հմտութիւն եկեղեցական աւանդութենանց. — Տեսական Աստուածաբանութիւն՝ Յաղագս Աստուծոյ։

Ը.

Տեսական Աստուածաբանութիւն՝ Յաղագս երրորդութենան. — Նշին, յաղագս Մարդեղութենան. — Ընթերցուածք այլեւայլ աստուածաբանից. — Յունարէն լեզու. — Առաջարկութիւնք աստուածաբանականք. — Հմտութիւն սուրբ Հարց և վարդապետաց Հայոց. — Առաջարկութիւնք ազգային խնդրոց։

Թ.

Բարոյական Աստուածաբանութիւն. — Ընթերցուածք այլ և այլ բարոյականաց. — Գաղղիերէն լեզու. — Հմտութիւն վճռոց Քահանայապետաց. — Հմտութիւնք ազգային ծիսից և սովորութենանց. — Առաջարկութիւնք բարոյական դիպաց։

Ժ.

Մեկնութիւն Ս. Գրոց. — Իրաւաբանութիւն. — կանոնագիրք ընդհանուր և ազգային. — Գաղղիերէն լեզու. — Ուսումն քաղաքականութենան. — Թարգմանութիւնք լեզուաց. — Հրահանգք խոստովանահայրութենան։

Ծանօթութիւն. — Ի կատարած իւրաքանչիւր ամի լիցին քննութիւնք ուսելոցն յայնմ ամի՝ յանդիման Մխիթարեից։

կական ձեմարանն» ի Ս. Պատար, որ 1815 թուականին պատուհարաց պատճառաւ կ'երեւի թէ ընդհատուած էր առժամանակեայ կերպով։

Գերպ. Սամսեան, 19 Նոյ. 1829 առ Հ. Կարապետ Եպայեան գրած նամակին մէջ, հետեւեալները կը յիշէ իրրեւ գլխաւոր չարժառիթներ՝ ուսանող ծրագրի բարձրացումին ու բարւոքմանը. նախ և առաջ — կը գրէ նա — որովհետեւ Միաբանութիւնս դեռ յաւ ծանօթ չէր օտարաց, ուստի գաղղիացի հայագէտներէն ամենք ամբաստանած էին զինքը Անգղիւհնդկական Կառավարութեան առջեւ՝ իրր անբաւական յուսմունս, և «Որպէս թէ զանպատկառեալ անուն (Անպատիխա) մեզ սեպհականեմք ի ճակատս գրոցս. յոյն ասկս փոյթ եղեւ մեզ ցուցանել՝ թէ է արդարեւ Միաբանութիւնս ուսումնական ընկերութիւն կամ Անպատիխա։ Վասն որոյ հարկ եղեւ և զկարգ ուսանող Նորընծայարանիս (սեորին ուսումնարան) և Վարժարանիս (բարձրագոյն ուսումնարան) առարգրել... զի զնոյն պահանջէին և՛ դեպք ժամանակիս, յորում հանդերձեալ եմք կանգնել զպրոց» (բարձրագոյն)։

Այբահօր յիշած պարագաներէն իսկ կարող են գուշակել ընթերցողք, թէ ո՞յք էին այդ ամբաստանողներն և ինչպիսի նախանձէ մղուած. մենք աւելորդ կը համարինք նշանակել հոս։ Սակայն Միսիթ. ձեմարանի վերահաստատութիւնն՝ այնպիսի լոյն ծրագրով, և անոր յառաջ բերելիք արդիւնքն իսկ՝ բաւական էին ամբերան ընել հակառակախօսները։

ԿԱՆՈՆՔ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ

«Չի ուշ նպատակի կաճառոյս է անխափան յառաջ վարել զձեմարանս և ի գլուխ հանել զօգտամատոյց առաջարկութիւնս, պատշաճ դատեցաւ կարգել կանոնս ինչ. բայց մի ոք զանկաւութեամբ նոցին արհամարհեցէ, զի չկամեցաւ Ժողովս բազում և անոտի կանոնօք տաղտկացուցանել զկաճառորդս։ Բայց և այս ուշ լեալ՝ զի ըստ ժամուն պիտոյից — որպէս յայլ ամենայն առհմնաղրութիւնս — մարթ է և Ժողովս յաւելուլ կամ դեղչել զկանոնս ձեմարանիս։

Ա.— Գումարուելն Ժողովոց լեալ ի Կիւրակէ՝ յետ երեկոյեան ժամուն, կամ զկնի մատաճականին։ Իսկ եթէ անակնկալ ինչ դէպ խափանեսցէ զայն՝ ձգեսցի Ժողովն յօր ինչ պարապոյ կամ ի տօնի ի մէջ եօթնեկին, կամ ի յաջորդ կիւրակէին։

Բ.— Եթէ ի կաճառորդաց ոք խափանեսցի յառաջիկայ լինելոյ Ժողովոյն, և խնդիրն իցէ ի յոյժ կարեւորաց, Ժողովն որոշեսցէ առնել քուէարկութիւն առ օրին, և կամ ոչ։ Եւ քուէարկութիւնն լինի օրինաւոր՝ եթէ մի միայն ի ճեմականաց պակասիցի։

Գ.— Ըստ ազատ յանձնառութեան ճեմականաց՝ իւրաքանչիւրն պարտական լեալ ըստ կարգին չպակասել՝ ի գրելոյ գիւրն հատուած բանի. իսկ եթէ ըստ դիպաց ինչ խափանեսցի, առենաբանեսցէ յաջորդ նորա, և ինքն զկարգ յաջորդին առցէ։

Դ.— Ի տարաձայնել կարծեաց ճեմականաց ի խնդիրս ինչ, քուէիւք որոշեսցի խնդիրն։

Ե.— Հաստատութիւն կամ մերժումն խնդրոյ իրիք՝ եղիցի երկոքումբք քուէիւք աւելի յայնն կամ յոչն։

Զ.— Ամ ի գլուխ հանել գգործ ինչ օգտակար՝ ընտրեսցին անձինք ի նոյն, և ազատ յօժարութեամբ իւրեանց հատուսեսցին ի Ժողովոյս, և յամառ յամխ քննեսցի յառաջատութիւն գործոյն։

Ի. — Օրէն լեցի իւրաքանչիւր ումեք ի կաճառորդաց՝ եթէ ունիցի բանաւոր պատճառս՝ հրաժարել ի պաշտամանէ կամ ի գործոյ առաջարկելոյ ի ժողովոյս:

Ր. — Մինչչեւ ի գլուխ ասրիալ գառաջարկեալ ինչ գործ կարեւոր, մի միւանց կնի խառնել առաջարկութիւնս գործադրելիս, դի մի գուցէ ամենայնն խափանեսցի. բայց եթէ օք ըստ առաջարկութեանն և դիւրութիւնն ի գլուխ հանելոյն ցուցցէ:

Ծ. — Ի լինել հարկի՝ ժողով գումարել արտաքոյ սովորական աւուրց:

Ժ. — Ամենագլխին ընտրութեամբ ժողովոյս հաստատեցաւ և ժամանակ պաշտամանն ընդ ամէս չորս:

ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

ԺԱ. — Յաւուր ածնի արքոյ Թարգմանչաց՝ Մեսրովպայ վարդապետի, Եղիշէյի և Մովսէսի քերթողահօր, և այլն, միցի ձեմարանական հանդէս բանախօսութեամբ, և համարեսցի այս հանդէս իբր առաջին Մխիթարեան Ձեմարանիս:

ԺԲ. — Յաւուր հանդիսիս ոգուս է այր իւրաքանչիւր յօրձակ կամ յոտնաւոր բան, ըստ սխորժակաց իւրոց յօրինել գրանախօսութիւն իւր:

ԺԳ. — Ոչ սակայն կոճառորդք ի բանախօսել ի հանդիսական աւուրս, այլ յօժարութեան և կամաց իւրաքանչիւրոց թողեալ է այն:

ԺԴ. — Եթէ ի սահմանեալ աւուրս խափանեսցի հանդէսն, կարէ ժողովս յայլ օր փոխադրել զայն:

ԺԵ. — Ի հանդիսական աւուրս՝ մի միայն միցի ճառն գլխաւոր, և այլ բանախօսութիւնք ըստ կամս ձեմարանաց միցին:

ԺԶ. — Որ ի հանդիսական աւուր ճառախօսէ (այսինքն՝ գառաջնախօսութիւնն գլխաւոր) ոգուս միցի ի պարտուց ճառախօսելոյ ի նմին կարգի ի սովորական ձեմարանս:

(Եւ ի 15 Յուլ. 1849 եղած է հետեւեալ բացատրութիւնը).

ԺԷ. — Ընտրելագոյնքն ի ճառից Ձեմարանիս՝ հաւանութեամբ ժողովոյն և Ադենապետին՝ տպագրեսցին ի «Բազմավէպին» յանուն Մխիթարեան Ձեմարանիս»:

Ադյպիսի հաստատ կարգաւորութեամբ և կանոններով հանդերձ՝ գարձեալ ժամանակ ժամանակ ընդհատուած կը գտնենք — Մխիթ. Ձեմարանի Օրագրութիւնն համձայն — ձեմարանական գումարումներն ու ատենապետութիւններն, ի հարկէ անձանց ակտուութեան և տեղափոխութեան պատճառաւ: Սակայն և այնպէս չէին պակսեր եռանդուն և գործունեայ անձեր, որոնք գլուխ կ'անցնէին չուառով ուսումնասիրաց՝ յառաջադիմական նախանձով, կը համախմբէին նորագոյն ուժերն, և կը չարունակէին գումարումներն ու ատենապետութիւնները՝ ժամանակին պահանջած օգտակարագոյն խնդիրներու վրայ: Յամին 1830 երբ կաթողիկոսէ Հայոց եկեղեցական բարեկարգութեան առթիւ Հ. Մկր. Ադեբեանի և Հ. Կարապետի հետ ուրիշ անձինք եւս կը հրաւիրուէին — Գերպ. Նուրիճանի կողմէն — Կ. Պոլիս, և Ձեմարանը գադարելու կը գատապարտուէր առժամապէս, կու գայր Հ. Ղուկաս Ինճիճեան՝ Ադթոռակալ վարդապետն և յառաջ կը մղէր զայն, և կը կարգաւորէր այնպէս՝ որ Ա. Կանոնի համաձայն՝ երիտասարդ վարդապետներէն երկու կամ երեք պարտական ըլլան իւրաքանչիւր ևօթնեկին մէջ պատրաստել կարեւոր խնդիրներ՝ հմուտից տեղեկութիւններով ու խուզարկութեամբ, և կարդան գանոնք կաճառի ներկայութեամբը:

Երկրորդ կարգաւորութիւն մ'ալ 1840 թուականին Հ. Մկրտիչ Ադեբեանի — որ Ադթոռակալութեան պաշտօն կը վարէր այդ ժամանակ — ջանքովը եղած կը յի-

չուի՝ վերոյիշեալ Օրագրութեան մէջ. որուն համաձայն կը հաստատուէր՝ որ վարդապետներէն իւրաքանչիւրը գրաւոր կերպով ստենադրանէ մի անգամ ամէն եօթնեկի մէջ։ Այդ տարւոյ մէջ նշանաւոր են — հայագիտութեան վերաբերութեամբ — Դեկտ. 10ին գումարման մէջ խօսուած Հ. Մատթէոս Վ. Մաղաքեանի բանասիրական ճառը Ս. Գագարու Մատենադարանի հնագոյն երկաթագիր մագաղաթեայ Մաշտոցին վրայ, յորում նա սուր դիտողութիւններով և անոր մէջ գտնուած չարտականներու վկայութեամբ կ'եզրակացնէր, թէ թ. կամ ժա. նուագն ժ. դարում գրուած ըլլալու է այն, և թէ յիշեալ դարէն ապին չէ կարելի ձգել անոր գրութեան ժամանակը։ Յ'8 Յունվ. 1841 գումարման մէջ՝ Հ. Ներսէս Վ. Սարգսեանի ըրած ստենադրութիւնը՝ «Տեղեկութիւն ի վերայ հին Պատմութեան վարուց Աղեքսանդրի Մակեդոնացւոյ», ուր ցոյց կու տայ այդ պատմագրի բանասիրական հմտութիւնքը, գրութեան ոճն, լեզուական յատկութիւններն ու գործիս հայերի թարգմանութեան պարագաներն, այսինքն թէ որուն ձեռքով թարգմանուած կրնայ ըլլալ, և թէ որպիսի արժէք ունի այն։ Յունվ. 14ին գումարման մէջ Հ. Գաբր. Այվազովսկւոյ կարդացած ստենադրութիւնը՝ «Տեղեկութիւն յաղագս Միհրայ և պաշտամանց և պատկերաց նորա՝ ստ Պարսից, ստ Հայս, ստ Յոյնս և ստ Հռովմայեցիս», որով կը նկարագրէր Միհրայ երկու բարձրաքանդակ պատկերներն, որ գտնուած էին Տրանսիլվանիա և ստորագրուած գաղղիացի Պր. Փելիքս Լաժարի ձեռքով՝ տուանձին գրքոյկի մը մէջ, զոր օրեր յառաջ յղած էր ընծայ Մխիթարեան Ձեմարանին։ Նոյն ամսոյ 21ի գումարման մէջ Հ. Ստեփանոս Վ. Եպրճեանի ըրած ստենադրութիւնը «Յաղագս բեւեռաձեւ նշանագրաց՝ թէ գիրք իցեն, և ոչ ուրեք գտանիցին, յիրիչ լեզու իցեն գրեալ, և յորից ազգաց ի պէտս առեալ», ուր յետ պէս պէս փաստից կ'եզրակացնէր, թէ Հայք եւս համաձայն Պարսիկներուն, Մարաց, Ասորեստանցւոց և Աղուանից՝ մի և նոյն նշանագիրները կը գործածէին ի հնումն։ Այսպէս նաեւ Փետր. 4ին Հ. Մատթէոս Վ. Մաղաքեանի գրաւոր ստենախօսութիւնն. «Յաղագս Երկաթագիր մագաղաթեայ հին գրչագրի ճառից Ս. Բարսղի», ուր կը խօսէր քննարանօրէն նաեւ անոր գրողին ու թարգմանչի մասին։

Երեք տարին չլրացած՝ կը կտրէր կամաւոս իր օգտակար գումարումներէն։ Հ. Գաբր. Այվազովսկի՝ փորձառութեամբ իմանալով քանի՞ որ այդ ընդհատութեանց բուն պատճառն է անձերու ակտւութիւնն ու յանախ տեղափոխութիւնք գործոց ազատաւ, և ուզելով մանաւանդ՝ որ չարունակուին ակադեմական գումարումները նաեւ յօգուտ բարձրագոյն ուսանողաց կամ Վարժարանեայց ի գաւառն, որոնց վերակացութիւնն ու կրթութիւնն իսկ իրեն յանձնուած էր, իմաստութեամբ կը խորհէր յամին 1843՝ կարգել առանձին ժողով ինչ ձեմարանական՝ վարժարանին մէջ, տալով անոր Ներսիսեան Ձեմարան անուանակոչութիւնը՝ յանուն մեծին Ներսիսի։ Այվազովսկի՝ այդ ժողովին հեղինակութիւնն ու վարկը աւելցնելու համար՝ գաւթին եւս կը հրաւիրէր գոմանս և կը գրէր զանոնք կաճառորդ ժողովին, ուր կը սկսէին յուզուիլ և լուծուիլ բազմապիսի և կարեւոր խնդիրներ։ Այդ գաւն՝ երկու տարի չարունակելով այն գործը, լաւ պատրաստուած և վարժ անձեր կը ներկայացնէր Մխիթարեան Ձեմարանին։ Սոքա 1845 Յուլիսին աւարտելով իրենց ընթացքն՝ երբ ապարէգ կ'ելնէին, ամէնքն եւս վառուած էին ուսումնասիրելու գաղափարներով. այսինքն է՝ աւելի հաստատուն ընել այն ձեմարանական ժողովը և նպաստել անոր այնպիսի պարագաներով, որ ոչ միայն առջինէն աւելի բազմարդիւն ըլլայ, այլ և անկասելի։ Ահա այս պարագային մէջ է՝ որ գարձեալ յառաջ կը մատչէր Հ. Գաբրիէլ վարդապետը, ժողով կը գումարէր նա, ի 15 Մարտի 1845, երիտասարդ ուժերն և երիցագոյն վարդապետներէն ալ ցանկացողները՝ գործակից և կաճառակից ընելով նորոգուած Ակադեմիային։ Նա ինքն իր գրած յորդորական և համոզող ստենադրութեամբը՝ ցոյց կու տար բոլոր այն լաւագոյն հնարքներն, որոնք կարէին առուգիւ եւս քան զեւս յառաջացնել «Մխիթարեան Ձեմարանն», և գարդացնել աւենագիտ գիտութիւններով։ Պերճաբան ստենախօսի գործած ազդեցութիւնը կաճառին վրայ ակնկալուածին պէս մեծ կ'ըլլար. վասն զի ամէնքն եւս ուրախութեան կեցցէներով և ծափահարութիւններով կ'ընդունէին անոր առաջարկութիւնը, գովելով իր բարեսէր կամքն ու դիտաւորութիւնը։ Այսպէս ուրեմն ամէնքն միասին և միայոյս ձեռք եւս կը գարնէին անոր գործադրութեանը, և Մայիս 16 կը հաստատուէր՝ ընտրել Աւենագիրը, որուն կը յանձնուէր գործին յառաջացումը. այսինքն է՝ ապգելով ի դէպ ժամանակի կաճառին գու-

մարտիվ, և առաջարկիվ խորհիլու և խօսելու կարեւոր խնդիրները: Մայիս 16ին կ'բնարաւէր — եռամեայ ժամանակի համար — Ա. Պետրոս Վ. Մինասեան: Ա. Պետրոսի ընտրութեան պէտք չկար, ուան զի բուռ նախկին ազգութեան՝ Մխիթարեանց Վիեննի կամ ընդհանրական Ազգասէր անդամ էր այն:

Առաջին գումարման մէջ, որ տեղի կ'ունենար ի 23 Մայիսի, «Մխիթարեան ձեմարանի» ներքին գրոց և գործոց կառավարչաց թիւն էր մեռաւան [1] — ի հարկէ առանց հաշուելու նախընթաց տարիներուն մէջ անոր յօդուածել առաքելի Անդամներն: Այդ նիստին մէջ կը յայտարարուէր ձեմարանիս ուսումնական ժողովն՝ իրրեւ Միաբանութեան ամենակարեւոր գործերէն մին: Կառուցիս ինձ ծանօթ արձանագրութիւններէն գուտիով — որ կը հասնին մինչեւ ի 25 Նոյ. 1852 — ամենէն աւելի այդ ժամանակամիջոցը գործունեայ եղած է և ուսումնական սրդիւնքներ արտադրած, որդեգրելի գիտելեաց գրեթէ ամէն ճիւղին վերաբերեալ: Այդ ժամանակի ձեմարանական գործունէութեան մասին մեր հասած տեղեկութիւնները գրական և գիտական առնեսութիւններ, ինչպէս և լուծած ժամանակնան բարդ հարցերն, բան մեծի մասին կը կրեն իրենց վրայ ընտրութեան ու լուրջ քննութեան բնագրոշիմը: 1845–1852 Թուականներուն մէջ միայն 117–125 գումարումներ ունեցած է «Մխիթարեան ձեմարանը», որոնց մէջ 200ի չափ գրաւոր առաջարկութիւններ եղած են, և ուրիչ բազմաթիւ առաջարկութիւններ և որոշումներ՝ գիտութեան գանազան ճիւղերուն վերաբերեալ: Ակռէ կրնան գուշակել ընթերցողք, թէ որքան և որպիսիք եղած լլլալու են ամենքն ի միասին, այսինքն՝ 1827 Թուականէն սկսեալ մինչեւ մեր օրերը:

«Մխիթարեան ձեմարանն» իրեն անուամբ իրաւ է՝ որ առանձին գործի (organ) մ'ունեցած չէ, որպէս զի եւրոպական ուրիչ Ակադեմիաներու պէս գրաւած բոլոր առնետարանութիւնները անխտիր տպուելով հրատարակուէին, որով աւելի գործի կերպով պիտի տեսնուէին անոր կատարած գործերը, բայց անոնք փոքր ի շատէ մեռցեր են: Թէեւ 1851 Թուականէն ի վեր կ'որոշէր այդ կառուան, որ «Բազմավէպ» մէջ եւս կարենան տպուիլ ընտրանօք այդ գործերէն յատկորագոյնները, որուն գարգացման համար ալ մեծապէս փոյթ կը տարուէր, սակայն պէտք է ըսել՝ որ կառավարչաց այն հարիւրաւոր ու չհնկան բանախօսութիւններէն և առաջարկութիւններէն մաս մը հազիւ լոյս տեսած են տար էջերուն մէջ, և բան մեծի մասին մեռցած են անտիպ. իսկ այնքան օգտակար առաջարկութիւններէն՝ քիչ բաներ միայն իրագործուած են:

Ի Թիւս այսպիսի առաջարկութեանց և որոշութեանց ձեմարանիս՝ ուշադրութեան և յիշատակութեան արժանի են հետեւեալները. Ա. յօրինել ազգայնոց տարին գասի և գպրոցաց համար փոքր մատեան մը՝ յորում բովանդակուէին ազգային ամէն գիտելիք և տեղեկութիւններ: Այս գրուածքս բաժնուած էր չորս հատորներու՝ բան ծրագրի ձեմարանին, այսինքն է՝ առաջինը պիտի շլլար Պատմութիւն ազգային, երկրորդն՝ Հնախօսութիւն և Աշխարհագրութիւն Հայաստանի, երրորդը՝ Մատենագրութիւն Հայոց, իսկ չորրորդը՝ Կրօնք և եկեղեցական պատմութիւն ազգային: Բ. Բառարան [2] մատենայն ուսումնական կամ արուեստական բառերու, որոնք պիտի հատուցուէին Պատգ. Բառարանէն և Թոմասէանի մեծ Բառգրքէն. իսկ առանց մէջ պակասած.

1· Անոնք են Հ. Պետրոս Վ. Մինասեան, Հ. Ներսէս Վ. Արգանեան, Հ. Գաբրիէլ Վ. Ալվազեան-Գերայ Եղուարդ Հիւրմիզեան, Հ. Յակոբոս Վ. Թրեանց, Հ. Սահակ Վ. Եպզմեան, Հ. Համազասպ Վ. Թէր-Հմանեան, Հ. Աբրահամ Վ. Ձարեան, Հ. Գևոնդ Վ. Մ. Ալիշան, Հ. Տիմոթէոս Վ. Թրենկրեան, Հ. Ներսէս Վ. Գուրգենեան: Եւ Գ. Գումարման մէջ՝ որ ի 27 Յուլիսի կ'աւելնային նաեւ Վ. Հ. Բարսեղ, և Հ. Գրիգոր վարդապետք:

2· Այս գործիս երկասիրութիւնը թէպէտեւ Հ. Գաբր. Ալվազովսկւոյ և Հ. Ամբր. Գալֆայեանին յանձնուած էր, բայց ձեմարանն — յամին 1851 Դեկտ. 21 Առնազդպրի գրած նամակին համաձայն — կ'ուզէր որ «բազմաց ի նոյն վաստակելով, և ըստ բանաւոր կարծեաց ամենեցուն աշխերի գործն ի գլուխ առնելով, յերեւել նորին՝ կանոն և օրինակ առաջի դիտի գէթ մերայոցն ի գրուածս իւրեանց, և մի այլ եւս իցէ նոցա իշխանութիւն ըստ մտի յիւրիրել գրառս, և ըստ անձնիւր կարծեաց գոլով ի բանս և ի գիր՝ չփոթի և խռով յարուցանել ի լեզուս, և ամենեւին անխմանալի գործել իրեարաց գրանս գրելոցն»:

ներն ալ պիտի աւելցուէին նորահնար և նորակերտ բառերով Մխիթ. Ձեմարանի կաճառորդաց աշխատասիրութեամբ։ Գ. Հոմանուռւոց բառգիրք [1] մը կամ Համեմատական բառարան։ Վերջին երկու գործերու համար՝ այլ և այլ գումարումներու մէջ ոչ միայն լուրջ խորհրդակցութիւններ փոխանակուած են, այլ և գործնական փորձեր եւս եղած, բայց դժբախտաբար կիսակատար մնացած են։

Մխիթարեան Ձեմարանն — 1845 Յուլիսէն ի վեր — կարեւոր հարցեր կը յարուցանէր ազգային հին մատենագրութեանց, աշխարհագրութեան և պատմագրութեան խնդրական և կնճռոտ կէտերուն վրայ, և լուրջ քննութիւններով երթալն կը լուծէր զանոնք խոպոռ, և երթալն ալ պէտք եղած լուսաբանութիւններով՝ անոնց վերաբերեալ ապագայ լուծումները կը դիւրացնէր։

Այս գործունէութեան և գործոց մասին գաղափար մը տալու համար՝ հարկաւոր կը համարինք մի քանիսը միայն յիշել այս տեղ։ Ի 28 Սեպտ. 1848 գումարման մէջ՝ Հ. Գևոնդ Ալիշան՝ իր հմտալից ատենաբանութեամբը ցոյց կու տար կաճառակապնոց, որ Փաւստոս բուզանդացին ազգաւ հայ էր, և հայերէն լեզուով գրուած է անոր Պատմագրութիւնն. և թէ մեր Թարգմանիչները Բիւզանդիոնի և Ագէնքի մէջ իրենց ուսմունքն ըրած ըլլալուն պատճառաւ է՝ որ Բիւզանդացի և Ագէնացի յորջորջուած են երբեմն։

Յաջորդ տարւոյն, Յունվ. 8ի նիստին մէջ, Հ. Գաբիգին Զարբհանալեան մի ուրիշ ատենաբանութեամբ տարակոյսներ կը յայտնէր Ալիշանի կարծեաց մասին, և կ'ուզէր նոյն իսկ Փաւստոսի ներքին փաստերով ապացուցանել՝ որ նա հայ չէր, այլ ազգաւ հոռոմ։ Իսկ կաճառը չուզելով առ ժամս լուծումն տալ ի նպաստ մէկ կամ միւս կողման, կը յանձնէր Հարց՝ Թրեանին, Եպրճեանին, Ալիշանին, Գաւրգենեանին և Զարբհանալեանին, որ երկուստեք գեռ ատելի լրջօրէն քննեն զայն։

Յ'8 Հոկտ. 1848 նիստին մէջ լրած իր եռամսեան և կորովի ատենախօսութեամբն ու լուրջ ուսումնասիրութեամբը դուրս կը ցատկեցնէր Հ. Օգոստինոս Վ. Գաւրգենեան՝ եղնկայ « Եղծ ազանդոց » չքնաղ երկասիրութեան արժանիքը, ցուցնելով անոր հմտութիւնը նախ իմաստասիրական մտկածութեանց, Ք. հնախօսութեան, և հուսկ մատենագրական ոճի և ատացուածոց դեղեցկութեան մէջ։ Իսկ իմաստասիրականը կը ատորաբաժանէր երբօրէն ի բնականս, յատուկանս և ի բնազանցականս։ Եւ մեծ մատենագրէն մէջ բերած ծաղկաքաղ օրինակներով իսկ կ'ապացուցանէր, թէ եղնիկ այդ երեք ճիւղերու մէջ իսկ — մանաւանդ բնական գիտելեաց — գերազանցած էր իւր դասընկերները։

Ի 28 Ապրիլ 1849 նիստին մէջ՝ Հ. Գիոնեսիոս իր բանախօսութեան նիւթ առնելով Եղիշէի պատմագրութիւնն՝ ընդհանուր կերպով կը գրաւատէր անոր ոճը, լեզուն ու կենդանաշունչ նկարագրութիւնքը։ Իսկ երանելի կանանց նախատրաց գրուածքին վրայ կանգ առնելով՝ կը բաղդատէր զայն Հռոմերոսի Աղդրոմաքէին և Անակրէոնի փափուկ տաղերուն հետ։

Իսկ 29 Յուլիսի գումարման մէջ՝ ատենաբանելով Հ. Գևոնդ Վ. Ալիշան՝ Մով. Խորենացւոյ Պատմութեան կարծեցեալ Գ. գրքին վրայ, կ'ապացուցանէր անոր երբեմն գոյութիւնը՝ նախ վկայութեամբք նախնեաց. Ք. Խորենացւոյ և ուրիշ մատենագրաց տեղերով. և Գ. Նորագիւտ Հատուածովք Պատմութեան, որոց մէջ նշանաւոր է Տրդատայ յաղարկաւորութեան նկարագիրը։ Այդ բանախօսութեան համառօտութիւնը — կաճառի արձման համաձայն — տպուած է « Բազմավէպի մէջ (տես Բազմ. 1847, եր. 150 և 1851, եր. 69)։

---

1. Այս իմաստուն և նոր առաջարկս առաջին անգամ ընողն էր Հ. Համազասպ Վ. Թէրճիմանեան, ցուցընելով ի Գ. գումարման անդ, 27 Յուլ. 1845, անոր մեծ օգտակարութիւնն և յօրինման եղանակը։ Նա մէջ կը բերէր հետեւեալ երեք կարծիքներն՝ ընտրելով անոնցմէ երրորդը. Առաջինը, որ կ'ըսէր՝ բաժանումն ընել ըստ բառից և ըստ քերականական հիւսուածին. երկրորդն՝ որ կը թելադրէր՝ իմաստից համեմատ բաժանել բառերը, և ըստ զանազան նշանակութեանց դասաւորել զանոնք. և երրորդը՝ զոր ինքը կը նախընտրէր՝ էր, առանց ո՛ր և է բաժանման հաստատութեան ձայրէն սկսիլ և այբուբենի կարգաւ յառաջ երթալ, միայն անոր յուսանցքին վրայ նշանակելով քննուած բառերը։ Յետոյ Հ. Եղուարդ և Հ. Եփրեմ եւս կ'առաջարկէին իրենքզիրենք և կ'ընդունուէին ըլլալ գործակից Հ. Թէրճիմանեանին։

Նշանաւոր է դարձեալ — ի 10 Ապրիլի 1851 նիստին մէջ — Առեփանոս Ռուիկայ Բառգրքի վրայ ըրած Հ. Այիշանի ճառախօսութիւնն, որով կը ցուցնէր՝ ետքէ քննութեամբ՝ անոր ապրիւրներն, և ապա այդ բառարանին մէջ յիշատակուած հին մատենագիրները, զորոնք մեր նախնիք երբեմն յառնարինէ և լատիներէնէ թարգմանած էին, բայց մեզ հասած չեն։

Նոյեմբեր 5ի գումարման մէջ, կը կարդար Հ. Յովհաննէս Ալէպեան իր ուսումնասիրութիւնը Դաւիթ անյաղթ Փիլիսոփայի խոյի ձառին վրայ։ Երկուքի բաժնած է առենաբանն իր տետրիկները, այսինքն՝ արտաքին և ներքին, կամ լաւ եւս բառից չարադասութեան ու ճարտասանական ամենազգի ձեւերու մէջ՝ մէկ կողմէն, և միւս կողմէն ալ ի նկատի առնելով մատենագրին նպատակը, գերամբարձ միտքն ու ճոխ վսեմական իմաստները։ Առաջին մասին մէջ՝ ամէն չանքով, մանաւանդ թէ գեղեցիկ դրուատիւք ներքինացի հռետորի այդ գրուածի չարադասութեան և ոճի անկատար փառքը հիւսած ժամանակ, կը ցուցնէ միանգամայն՝ թէ ինչ գեղեցիկ եղանակով մէկմէկու նաեւէ կ'ընթանան բառերն, և թէ այդ բառերէն իւրաքանչիւրն՝ ամբողջ իմաստներ կը պարունակէ իր մէջ։ Իսկ երկրորդ մասին մէջ՝ կը նկարագրէ հոգեկից առենախօսն՝ հեղինակի բարձրամիտ իմաստներն ու աստուածազգեաց ոգին, դիմառնաբար որոտալ տալով անոր սրբազան բերին վրայ. և ապա կ'եզրակացնէ թէ կը խարսխի՝ ով միտքը գրած է, թէ հասած ըլլայ անոր մտքի իմաստներուն խորը, և կամ գիներն քան արժանւոյն գնահատած։

Ի 25 Յունվ. 1847 նիստին մէջ Հ. Գևոնդ Այիշանի հետաքնին և յոյժ կարեւոր տեղեկութիւններով գրած ճառովը, զոր կը կարդար Հ. Գաբ. Ալվազովսկի, կը պարզուէին Հաննեան Բերոսոսի մասին եղած կարծիքները։ Ապրիլ 10 յաւին 1846 գումարման մէջ նշանաւոր է Հ. Տիմոթէոս Թնկրեանի առենախօսութիւնը [1] Սուրբ Գրոց եբրայական բնագրի և զանազան թարգմանութիւններու վրայ։

28 Յունվ. 1849 գումարման մէջ՝ Հ. Վարդան Շիշմանեանի համառօտ բանախօսութենէն վերջ, կ'որոշէր կաճառն՝ որ ազգիս մէջ հայրենեաց սէրը բորբոքելու և արագ արագ զարգացնելու համար, բաց ի բարեկարգ դպրոցներէ՝ հարկաւոր է նախ ի լոյս ընծայել քաջ և առաքինի մարդկանց կենդանագիր պատկերներն, և անոնց հետ տալ նաեւ իրենց կենսագրութիւնքը. երկրորդ՝ նկարել հայկական տեսարանները. երրորդ՝ ներմուծել ազգին մէջ ազգային թատերգութիւններ կամ ներկայացումներ։ Եւ առաջիւ՝ այս երեք որոշմունքս իսկ իրագործուած են «Բագմավէպի» «Նշմարք և նշխարքներու» և «Ընտիր հայկազունքի» մէջ։ Նոյն տարւոյ Մարտ 11ի նիստին մէջ՝ Հ. Եփրեմ ազգային արտրողութեան վրայ ըրած առենախօսութեամբն՝ — որ կը պարունակէր 26 առաջարկութիւններ — կը ցանկար՝ որ գարման տարւոյ աստուածային պաշտամունց մէջ ապրուած զեղծումներուն դէմ. եւ Վերպ. Նախագահի և կաճառակցաց միտքն որոշողութեամբը՝ մեծաւ մասամբ ընդունելի կը գտնուէին այդ առաջարկութիւնները։

Աշխարհաբար լեզուի մասին՝ կաճառս թէ եւ միտաձայն և վճռական կարծիք չէ յայտնած, սակայն Դեկտ. 19ի գումարման մէջ կաճառականաց մեծագոյն մասն այս կէտս կը պնդէր՝ թէ բաց ի արտաքսմանէ այլազգի կամ օտար բառից և ածանցներու՝ պէտք չէ ուրիշ փոփոխութիւններ ընել աշխարհաբար լեզուին մէջ, այսինքն՝ ոչ հոլովներու և ոչ ալ բայերու լծորդութեանց. վասն զի այդ և նման տարօրինակութիւնները՝ բնական ու կանոնաւոր ընթացքով եղած են, և անոր համար ալ իրր սեպհական կանոններ կը նկատուին։ Մէկ խօսքով՝ անկարելի է մէկ սովորեալ գաւառաբարբառ մը փոխել միւսին տեղ, այլ թողու է ժամանակին՝ որ գործէ և կատարելագործէ

---

1. Առենախօսը նախ եբրայական բնագրի վրայ խօսած ժամանակ, ցոյց կու տար անոր հնագոյն ձեռագրերն և վաղեմի հրատարակութիւնն եւս։ Իսկ թարգմանութեանց վերաբերեալ մասին մէջ՝ առանձինն կը ճոխանար Եօթանասնից թարգմանութեան վրայ, այսինքն՝ թէ ինչպէս քրիստոնէութիւնը ծաղկելէն վերջ՝ աւելցաւ անոր յարգը, և բոլոր քրիստոնեայ ազգերն անկէ թարգմանեցին Սուրբ Գիրքը՝ իրենց լեզուներով։ Երրորդ՝ խօսելով յունական ուրիշ թարգմանութիւններու վրայ, կը ջանար ցոյց տալ՝ թէ որոնք են անոնց մէջ ընտրելագոյնները, և ո՛րչ են յունական թարգմանութեան հնագոյն տպագրութիւնքը։ Ապա խօսելով լատին թարգմանութեանց և այլեւայլ տպագրութեանց մասին, կը խոստանար առանձին խօսիլ ապա արեւելեան թարգմանութիւններու վրայ առհասարակ։

աշխարհիկ բարբառը։ Ասոր եւ «Բազմավէպի» կարգաւորութեան համար — կ'արձանագրէ Ալենեցպիրը — թէ « Հատատուեցաւ զարձեալ՝ զի Մխիթարեան Ձեմարանս միայն քննիչ « Բազմավէպի ». և զի ամենայն գլխաւոր հատուածք (իմա յօդուածք) գրեալք վասն օրագրիս՝ քննեսցին նախ ի ժողովիս — առաջարկութեամբ փոքր վերատեսչացն — եւ ապա յանձնեսցին առ ընդհանուր Վերատեսուչն » (այսինքն է Խմբագրապետն)։

Աշխարհագրական ուսումը տարածելու համար ազգիս մէջ, և մեր բնիկ հայրենիքը տիրապէս ճանաչելու գեղեցիկ նպատակաւ՝ կը խօսէր — ի 1 Մարտի 1846 — Հ. Բառնաբաս Կոսեան իր առենաբանութիւնը « Զորզոր վասն ճանապարհորդելոյ ազգայնոց ի Հայս և նկարուք պայծառացուցանելոյ զյիշատակս հայրենեաց »։ Իսկ Հ. Գրիգորիս՝ կը բանախօսէր — ի 1 Հոկտ. 1848 — եթէ « Աշխարհագրութեան ուսումն ուսոյ սկիզբն ունիցի ի Հայս, և զինչ ընթացք յառաջադիմութեան »։ Յունիս 10 և 24 (յամին 1849) գումարման մէջ՝ Հ. Գրիգորիս կարդալով իր երկամեան ուսումնասիրութիւնը « Յորգոր աշխարհին Գոմագենոց », կը հատատէր — Ա. մասին մէջ — թէ նոյնն ըլլալու էր Եփրատացւոց հետ. իսկ Բ. մասին մէջ՝ կ'ընէր Գոմագենոց Թագաւորութեան պատմութիւնն, և ցոյց կու տար անոնց Թագաւորներուն գրաճները՝ հին մատենագրաց և նոր հնախոյզներու վկայութեանց համաձայն։ Իսկ յ13 Նոյ. 1851 նիստին մէջ՝ Հ. Համազասպ Թէրճիմանեանի միջոցով կը լուծէր Կաճառս՝ Հայոց-Ջորի գրից [1] վերաբերեալ առաջարկը, որով կը պրպտուէր Տառեան աշխարհացուցի մէկ սխալն, և կը հատատուէր Հ. Ներսէս Արքեանի առպրութեան ուղղութիւնը։

Կաճառս ոչ միայն ապարէշ կու տար լեզուական և բանասիրական վիճաբանութեանց, այլ և իր լուրջ հեղինակութեամբը կը քննէր և կը գնահատէր ուղիղն ու հիմնաւորը՝ սխալէն և անհիմէն։ Նշանաւոր են առ այս՝ նախ յամին 1847 Փետր. 28, և ապա յամին 1850 Նոյեմբ. 28 և Դեկտ. 5 նիստերու մէջ կարդացուած Բառգրատունեայ և Այվազովսկւոյ ուսումնասիրութիւնները՝ ղ և յ տառերու հնչման մասին։ Փետր. 28 Արձանագրութեան համաձայն՝ Վ. Հ. Արսէն Բառգրատունի նախ տարիներ յառաջ այդ խնդիրը յուզած էր, և իր խելամտութեան համեմատ իմանալով նախնի քերականներուն — և մանաւորապէս Ի. դարու — այդ տառերու արտասանութեան վրայ ըրած բացատրութիւնքը, կը դնէր իրր օրէնք հատարակաց մտաց՝ դատ տառը մակաբերել (՝ղ) կարգալ՝ իբրեւ լերկ կամ կէս յիւն. և ինքն անկէց վերջ՝ օտար անուանց մէջ իսկ ՝ղիւնը յիւնի փոխելով՝ կը գրէր Գ՝լատոն, Գի՝լատոս, Նի՝լոս, և այլն։ Սակայն Մխիթ. Ձեմարանը — յիշեալ արձանագրութեան վկայածին համաձայն — չէր ուզեր վաւերացնել Բառգրատունեայ կարծիքը, ձեռամբ Այվազովսկւոյ առենախօսութեանը։ Սա՝ թէ Փետ. 28ի և թէ Դեկտ. 5ի նիստին մէջ՝ չօշափելի փաստերով, մանաւանդ Բառգրատունիով բառգրատունեան այդ վարկածը կը ջանար հերքանել, առարկելով իրեն հետեւեալ նախադասութիւնը. «Ընդէր հին նախնիքն առ լերկ լիւն՝ ընտրեցին գնչանագիրն ղ, և ոչ մանաւանդ յ, որոյ ձայնն նմանագոյն պարտ էր լինել »։ Բառգրատունի չկարենալով լուծումն տալ այս առարկութեան, կ'ըսէր. « Եթէ ձայնն զատ էր, ապա ընդէր յետին գրիչք ընտիրք փոխեցին զայն և եղեն ՝յ »։ Սակայն Այվազովսկի ցոյց կու տար՝ թէ ոչ ամենայն գրիչք ընտիրք՝ փոխած են ՝ղիւնը ՝լիւնի, և ոչ ալ ընդհանուր է այդ կարծեցեալ փոփոխութիւնն, այլ քանի մը բառերու մէջ միայն փոխած են, որոնք որ փոխած են, և կը լուծէր կնճիռը։ Ապա նոր փաստեր կ'ուզէր Բառգրատունիէն՝ ի հերքումն իր բերած փաստերուն. և այդ փաստերը կը պակսէին Հ. Արսենին։ Այլ՝ որչափ որ ալ Մխիթարեան Ձեմարանի գործոց մէջ այս վիճին վերաբերեալ որոշ վճիռ մը արուած չէ, սակայն — Փետր. 28 Արձանագրութեան մէջ — Աստենապետին այս խօսքերէն կը տեսնուի՝ որ Այվազովսկւոյ պաշտպանածն ունի՝ իրր հատարակաց կարծիք՝ ընդունուած ըլլայ Կա-

---

1. Զոր Հ. Թէրճիմանեան կը դնէր « յարեւելս հարաւոյ ծովուն Բզնունեաց, սկսեալ ի հիւսիսոյ լերանց Վարագայ՝ ցծագս լերանց Արտոսի. ըստ այմ և ի տեղեկագիծն Արքեան տակաւ ինչ ի վերոյ նշանակեալ է », ըսելով։

ձաւէն, զի այսպէս կը գրէ. « Այս ձառախօսն (Հ. Գաբրիէլ) բազում հմտութեամբ գնէ զկարծիս իւր, որ և կարժեմ գնատարակաց, գՆնչմանէ 'զնն տառին »:...

Ի 21 Օգոստ. 1851 Հ. Աբր. Բազրատունեայ. « Յաղագս քերթութեան որ ի հայկական չափս » խնդրի քննութեան համար գումարուած կառաւն՝ հետեւեալ յայտարարութիւնը կ'ընէր առ ընդհանուրս, զոր որում կ'արձանագրէ Ալենադպիրն. « Յետ երկար բանից և քննութեանց զկանոնաց չափուցն քերթողութեան, անորոշ իմն միայր խնդիրն, յայս բան հասանելով գրեթէ ժողովականացն ամենեցուն՝ վայելուչ և գեղեցիկ յոյժ գոլ քերթեալքն ի նմանէ ի հայկական չափս, այլ մեծի զգուշութեան և հմուտ անգիտութեան պէտք են, ասէին, որոց զհետ նորին չուզայ գնալ հաճեցին »:

Ընտրեալ Մխիթարեան Ձեմարանի այդ գործունէութեանն է՝ որ յամին 1844 Հ. Ներսէս Սարգսեան, Հ. Մա. Եպզճեան և Հ. Աբր. Բազրատունի, յամին 1850 Հ. Պետդ Ալիշան, և ուրիշներ կ'ուղարկուէին ուսումնական ուղեւորութեամբ դէպ յԱրեւելս և յԱրեւմուտս, հաւաքելու և ուսումնասիրելու Հայոց անցեալին վերաբերեալ, մանաւանդ ցիրուցան եղած և մոռցուած յիշատակները: Զևոք բերուած արդիւնքները չէին միայ այլ եւս իրր գանձ ծածկեալ յանապատի, այլ ազգայինք և օտարներ իսկ՝ ուշ կամ շուտ պիտի վայելէին զանոնք:

Ի 21 Նոյ. 1851 գումարման մէջ Հ. Ալիշանի առած նոր և հետաքրքրական տեղեկութիւններն՝ որպէս օգտաւէտ պտուղք Իտալիոյ գանազան կողմերն ըրած Հայկական հետազօտութեանց, այսինքն է՝ Բարդեան կրօնաւորաց ձեռքով Գենուայի Ս. Բարդուղիմէոս եկեղեցւոյն ընծայուած Քրիստոսի անձեռագործ Դատապատկին, Հայազգի սուրբերուն փիլիպպոսի՝ որ ի Պադուա, Լիբերիոսի՝ որ յԱնկոնա, Գաբրի՝ որ ի Լուկկա, Միհրդատ՝ որ ի Փլորենտիա, Լուսաւորչին՝ որ ի Նէապոլիս, և մանաւանդ Սիմէոնի Հայկազնի՝ որ ի Մանտուա, և անոր կենսագրութեան վերաբերեալ լատիներէն ժ. գրէ բազկացած դիւցազնական քերթուածին «Armeniadis »ի (տպ. ի Կրէմոնա 1515 թուականին) վրայ, ապատուածէն աւելի ուրախութիւն կը պատճառէր Կաճառին. զի Ալենադպրի արձանագրածին համաձայն « խնդալից հրճուանօք ընկալաւ Կաճառն զրանախօսութիւնն. և թէ բազում բանք ի մէջ անկան զոյլ և այլ յիշատակաց ազգիս՝ որ ի բազում քաղաքս Եւրոպայ, և թէ քանի կարեւոր է նոցին հետազօտութիւն »:

Այո՛ այս և այսպիսի ուսումնական համախմբութիւններով և լուրջ առենաբանութիւններով է՝ որ Մխիթ. Ձեմարանը հեղինակութիւն կը ստանար ազգայիններուն և օտարաց դիմաց, և յարաբերութիւններն երկուստեք կ'աճէին ու կը բազմանային: Գիտական, պատմական և բանասիրական գժուարակնճիռ խնդիրներու մէջ՝ շատերը կը դիմէին այդ Ձեմարանին՝ իրրեւ ազգային նիւթոց կամ Հայկական գիտութեանց ձեռնհաս Կաճառի, և կը դիմէին յաճախ՝ կամ անոր կարծիքն ու դատաստանն իմանալու, և կամ պէտք եղած նպաստները ձեռք բերելու համար: Իսկ Ձեմարանը փոխադարձաբար՝ մերթ իր գրչէը բարձր բռնելու, և մերթ Հայկական գիտելիքն ըստ կարելոյն անսխալ եւրոպացիներուն ծանօթացնելու նպատակաւ՝ ձեռքէն եկածին չափ գրաւոր օգնութիւններ և նոյն իսկ ծանր և տաժանելի աշխատութիւններ չէր խնայեր: Այս մասին Ձեմարանիս առած գործնական օրինակները բազմաթիւ եղած են, բայց ես այստեղ կարեւոր կը համարիմ անոնցմէ մի քանին միայն յիշել:

Յամին 1851 Բրիւսէլի Աշխարհագրական Կաճառին Նախագահը՝ փիլիպ. Վանդեր–Մեյէ՝ ուզելով համագրական պատկեր մը տալ բոլոր աշխարհի կրօնքներուն և պաշտամանց — իր 26 Մայիսի գրած մէկ նամակովը — կը դիմէր Մխիթարեան Կաճառի Գերագ. Նախագահին, և կը խնդրէր՝ որ որուն իրեն պէտք եղած բոլոր գրաւոր տեղեկութիւններն Հայոց աշխարհի կաթողիկոսներուն, եպիսկոպոսներուն և անոնց աթոռներուն վրայ, նշանակելով որոշակի անոնց իշխանութեան ներքեւ եղած թեմերը, քաղաքներն ու վանորայքը: Ահա իր իսկ նամակը.

Le Fondateur de l'Etablissement Geografique,

A Monsieur le Supérieur du Couvent des Arméniens Mechitaristes

à St. Lazare — Venise.

Monsieur le Supérieur!

La présente vous sera remise par les soins de Monsieur le Conte de Sturmer qui veut bien s'en charger.

Etant occupé à rassembler les matériaux nécessaires pour faire une carte des cultes, il me serait indispensable de connaître le siège de tous les archevêchés, évêchés arméniens, aussi que des principales villes qui dépendent de chaque évêché, afin d'indiquer les limites; des renseignements sur les couvents me seraient aussi fort utiles; et c'est dans le but de les obtenir que je prends la liberté de m'adresser à vous, espérant que ma demande sera affablement accueillie.

Dans l'espoir d'une bonne réponse je vous prie d'agréer l'assurance de ma haute considération.

Ph. VANDER MAELER

Bruxelles, le 26 Maï 1851.

Դիտելով որ այսպիսի առաջարկութիւն մը՝ երկայն ժամանակ և մեծ աշխատութիւն կը պահանջէր, այնու մանաւանդ՝ որ խնդիրն եպիսկոպոսական նոր թեմերու մասին չէր միայն, այլ և հիներուն՝ չորրորդ դասէն սկսեալ, որոնց վրայ քիչ յիշատակութիւններ տուած են նախնիք, և շատ բան ալ անորոշութեան մէջ թաղուած, սակայն և այնպէս Մխիթ. Կառուցը սիրով կ'ընդունէր Բելգիայի պետնականի առաջարկութիւնը, և 11 Դեկտեմբերի նիստին մէջ աշխատութիւնն ալ կը յանձնէր Հ. Բառնաբաս Եսայեանին և Հ. Գրիգորիս Մէրճանճեանին: Ի 24 Յունվ. 1852, ժամարման մէջ Հ. Մէրճանճեան պատրաստած ըլլալով աշխատութեան մի մասը, այսինքն է՝ «Յաղագս եպիսկոպոսարանաց աշխարհիս ի հնումն», կը կարդար ի լուր կաճառականաց: Մնացած մասն ալ Հ. Եսայեանը կը պատրաստէր, որուած խոստման համաձայն. բայց չեմ գիտեր՝ թէ խնդրարկու գիտնականն յայդոցա՞ւ արդեօք ի լոյս ընծայել իրեն մտադրած գործը, թէ ոչ. զի գէթ Ս. Պատրաւ մատենադարանին մէջ կարելի չեղաւ ինձ գտնել անդրադարձ տեղեկութիւն մը:

Մի և նոյն տարին՝ ուրիշ կարեւոր առաջարկութիւն մ'եւս Տատեան պատասխաւ՝ Յար. Վարիգին՝ կը ներկայացնէր Մխիթարեան Ձեմարանին, այսինքն է՝ բնաւուժական Անուանակոչութեանց (Nomenclature) խնդիրը, զոր Օգոստոսին Կ. Պոլսէն գրած չորս մեծադիր երեսներէ բաղկացած գրուածով մը կը բացատրէր, և ապա կ'ենթարկէր Մխիթ. Ձեմարանի ձեռնհաս քննութեանը, խնդրելով — եթէ կարելի էր — անոր հաստատութիւնը, որպէս զի ըստ այնմ օգտուէր երկասիրութիւններով ծագկեցնէ բնաւուժական մասնագիտութիւնը մեր ազգին մէջ: Տատեանի առաջարկութիւնն՝ հեռեւեալ կէտերուն մէջ կը կայանար. «Մենք ալ արդեօք չե՞նք կրնար հայերէն քիմիականութեան մէջ՝ Ա. արմատական բառը միայն թարգմանել. Բ. գաղափարէն գրուած վերջաւորութիւնը չփոխել»:

Մխիթ. Ձեմարանն — Հոկտեմբերի ժամարման մէջ — քննութեան առնելով Տատեանի առաջարկութիւնն, այսպէս կը կազմակերպէր իր տեսութիւնը, զոր և 30ին Պատրիարքը կը հաղորդէր իրեն: Նախ և յառաջ մեծապէս կը գովէր ազնիւ պայազատին դիտաւորութիւնը, ցուցնելով թէ արդի հարկաւոր գիտութիւն է բնաւուժութիւնը. թէ մեր ազգը՝ մինչեւ այդ օրը՝ դուրկ մնացած էր այնպիսի գրքէ մը, և թէ այսպիսի գործի մը ձեռք զարնողն՝ արդի գովեստի և քաջալերութեան արժանի է: Գալով ազգային գիտնականի առաջարկութեան Ա. մասին՝ Ձեմարանը կը համարէր որ առարկուն միայն ծանօթ բառերու արմատականները կ'ուզէ հայերէն թարգմանել, և ոչ թէ անծանօթ կամ սակաւածանօթ ու նորագիւտ տարերաց անուններն ևս.

ման դի բնալուծական չատ մը նորագիւտ բառերուն արմատականները Թարգմանելն՝ գրեթէ անկարելի է, և մեծապէս զժուարացուցիչ նոյն պիտուքեան ուրիշ լեզուով գրուածն հասկնալու։ Անկարելի է այնու մանաւանդ, որովհետեւ նոր տարերաց չատը՝ կամ յունական բառէ մը առնուած է, որ նոյն մարմնոյն մէկ մասնաւոր յատկութիւնը միայն կը ցուցնէ, օր. ազագաւ, քլոր (չէկ), քլոմ (գոյն), կամ գանուած տեղոյ անունէն, օրինակ իմն, Թրոնհեան (Սկոտիոյ մէջ), և կամ գտնողին անուամբ, ինչպէս՝ Նիքել։ Աւտնցմէ դատ՝ կան չատեր իսկ, որոնք բոլորովին աննշան անուններ են, կան ալ՝ որ ուրիշ լեզուի մէջ բոլորովին տարբեր նիւթ մը կամ ուրիշ մարմին մը կը ցուցնեն. ուստի եթէ առջի արմատները Թարգմանենք՝ բոլորովին վերացեալ բառեր կ'ըլլան. իսկ եթէ վերջինները՝ բոլորովին խառնաշփոթ։ Այս այսպէս ըլլալով՝ ուրեմն դէթ բնալուծական տարերաց անփոփոխ պահուին՝ ամենահարկաւոր կը տեսնէր Ճեմարանս, բայց անոնցմէն՝ զորոնք նոյն իսկ մեր լեզուին մէջ ունինք, և կամ լաւ եւս՝ բնալուծութենէն յառաջ Ճանչցուած անուններ են, (ինչպէս՝ ոսկի, արծաթ, կապար, և այլն)։ Գալով Բ. կէտին, այսինքն՝ գաղղիարէն վերջաւորութիւնները՝ մեր լեզուին մէջ անփոփոխ պահելին՝ աւելի Ճանր խնդիր կը համարէր, և հետեւաբար համօրէն կաճառին համաձայնութեամբ հերքուած կը յայտարարուէր, նոյն իսկ առաջին քննութեամբ։ Վասն դի Մխիթ. Ճեմարանի կարծիքով՝ նախ որ ատ վերջաւորութիւններս՝ որով արմատականներէն ածանցներ կը շինուին, ամէն լեզուաց մէջ իսկ տարբեր են, և ամէն ազգ իր ածանցից յատուկ հնչմունքն ու ձեւն ունի, որ լեզուին կազմութեան մէկ մասն է. և չէր կարծեր՝ որ այսպիսի վերջաւորութիւնք՝ միայն բնալուծական լեզուի համար հնարուած ըլլան ու միաձայնութեան (convention) նշան, այլ ամէն ազգ՝ իր լեզուին անհրաժեշտ կանոնքէն առած է զանոնք։ Ուստի կարելի չէ ըսել՝ որ այս յանգերս բառգրքէ ու քերականէ դուրս ըլլան. դի ակներեւ կը տեսնուի՝ որ նոյն յանգերով անթիւ բառեր կան գաղղ. լեզուին մէջ, որ ամենեւին վերաբերութիւն չունին բնալուծական լեզուին հետ, և չի ալ կրնար ըսուիլ՝ որ ատոնք միաձայնութեան ձայներ ըլլալով, ամէն ազգ ալ զանոնք — գոնէ առանց հնչման տարբերութեան — ընդունած ըլլայ. օր. իմն, իտալացին՝ գաղղիացւոյն eux *ն* oso *երած է, և անգղիացին՝* iquer ical *դարձուցած է, այսպէս նաեւ ուրիշները գաղղիացւոյն։ Իսկ արմատական բառերն ալ չատ անգամ պահելու որ ստիպուինք, այն ատեն բոլորովին եւրոպական բառեր կ'ըլլան բնալուծութեան բառերն, և լեզուն ալ բարբարոսական ժարկոն մը։ Սակայն այս՝ լեզուի կազմութեան դէմ եղնելուն խնդիրս այն ատեիճան զօրաւոր է, որ չատ աւելի լաւ է՝ որ օտար արմատականներն՝ առանց Թարգմանութեան գործածուին, քան թէ եւրոպական այսպիսի ածանցներու հնչմունքը. վասն դի առաջինը կրնայ ինքիրմէն ալ ճանչցուիլ՝ թէ օտար բառ է, և թէ հոմանիշը չունենալնուս համար՝ ստիպուեր ենք գործածել. իսկ երկրորդին՝ նոյն արդարացումը չենք կարող գտնել։*

Մխիթ. Ճեմարանն՝ որչափ որ ալ — այս սկզբունքներուս և դիտողութեանց հաճայն — գտնագան անգամներ խորհրդակցելով՝ անփոփոխ անուանակոչութիւն մ'ալ ծրագրած էր իր համար, որուն կը հետեւէր նոյն իսկ «Բազմավիպի» և ուրիշ ուսուցչական գրուածներուն մէջ, բայց իրեն նորահաստատ գրութիւնը գեռ լուրջ քննութիւններու կարօտ ըլլալուն, և միանգամայն ինքն ալ ուրիշներուն առջեւ պատգամաւոր մը չերեւնալու մտքով՝ կը յապաղէր որոշ կերպով ձեւակերպելու և հրատարակելու զայն։ Բայց Տաճեանի թախանձանքները մէկ կողմէն, և միւս կողմէն ալ Գ. Ազաթոնեանի[1] ապերանքը կը յորդորէին Մխիթ. Ճեմարանը՝ որ գրով չուտ յայտնէ իր որոշութիւնը։ Ուստի Դեկտ. 18 գումարման մէջ՝ կրկին խորհրդակցելով Ճեմարանս՝ գտաձեալ կու գար այն եզրակացութեան, այսինքն թէ՝ «Եւրոպական ածանցները՝ մեր արմատական բառից և նաեւ օտարազգի բառից հետ լծորդին անհնար է»։ Կաճառիս Աստնագրիրը՝ Հ. Աբգարեան վ. Գուրգենեան, որ լաւ հմուտ էր բնալուծութեան և մեր բնիկ լեզուին, ի 22 Դեկտ. գրած չահագրգիռ նամակովը[2] հաղորդելով յիշեալ

---

1. Որ կը գրէր՝ թէ երկրագործական գրութեան մը ձեռք զարկած էր, բայց ատ ի չգոյէ առաձեռն Բառարանի մը՝ թողած էր զայն։

2. Որ առաջինէն աւելի նոր կէտեր կը շօշափէ։ Օրինակի աղագաւ, գաղղիարէն արուեստական բառերու արմատները Թարգմանելու և ածանցները կամ վերջաւորութիւնները անփոփոխ պահելու առաջարկութեան համար՝ յետ ըսելու թէ ածանցական մասնիկները՝ լեզուի մը էական մասն ըլլալով, պէտք է որ

որոշումը Տատեանին, կը յաւելու. «Բայց այսու ամենայնիւ ամենուն ալ հաւանական կ'երեւնայ, որ հայկական ածանցներէն ալ՝ որչափ կարելի է՝ անոնք ընտրուին, որոնք որ հնչմամբ և նշանակութեամբ ալ եւրոպական վերջաւորութեանց աւելի մօտ են. օրինակի ազագաւ, ate=ուտ, ure=ուռ, ique=ական, և այլն: Այսպէս հիմիկու հիմա հրամանքիդ ծանուցանելով, անուանակոչութեան լիակատար դրութիւնն ալ՝ յուսանք քիչ առնէն հրամանքիդ հաղորդելու »:

Սակայն յաջորդ նիստերու արձանագրութիւնները ցիրուցան եղած լինելով՝ չկարացինք իմանալ, թէ ինչպէս ձեւակերպեց զայն Մխիթ. Ձեմարանը, և ո՛րքան նպաստեց անով հայկական բնագուժութեան միօրինակ զարգացմանը: Սակայն՝ ինձ այնպէս կ'երեւի՝ թէ Քաջունեաց «Տարրաբանութեան» մէջ յառմարցուցած Բէրզելեան անուանակոչութենէն շատ տարբեր ըլլալու չէր այն:

1850 Թուականին, 21 Դեկտեմբերի, գումարուած է Մխիթ. Ձեմարանը՝ Մկտ. Էմինեանի «Վէպք հնոյն Հայաստանի» երկասիրութեան համար, որուն վրայ առենախօսած են հայագիտութեան երկու ձեռնհաս անձեր, այսինքն են՝ Հ. Գաբր. Այվազովսկի, և Հ. Պետրոս Ալիշան: Առաջինն՝ հայոց պետնականի կարծիքները մի առ մի լուծելով՝ կը ձկտէր հաւաստել անոնց անստուգութիւնը. բայց այնու հանդերձ՝ գովելով անոր ջանքն այս տեսակ ուսումնասիրութեան մէջ, և ուրիշ համազգի քննասէրներն ևս քաջալերելով առ այն՝ կը վերջացնէր իր խօսքը: Իսկ երկրորդն՝ Էմինեանի կողմը կը ջատագովէր, և ինքզինքը անոր համակարծիք ցոյց կու տար: Այս այսպէս ըլլալով՝ յայտնի չէ սակայն՝ թէ Էմինեան արդեօք Մխիթարեան Ձեմարանի կարծիքն իմանալո՞ւ համար յղած էր իրեն նախապէս այդ երկասիրութիւնը, թէ ընդհակառակն պարզապէս իբրեւ նուէր մը Գրատանս. վասն զի յիշեալ ժողովի արձանագրութեան մէջ այդ նկատմամբ որոշ յիշատակութիւն մը չկայ: Ինձ առաջին կէտն աւելի հաւանական կ'երեւի:

Յաջորդ տարին ալ հայագէտն Եդ. Դիւլորիէ — 22 Յունուար գրած սիրուն նամակով — կը ներկայացնէր Ձեմարանիս քննութեան՝ Մատթէոս Ուռհայեցւոյ պատմութեան գաղիերէն Թարգմանութիւնը, զոր կատարած էր Ս. Պատարաւ գրատան օրինակին վրայէն, և կը խնդրէր՝ անոր վերաբերեալ գրաւոր դատաստանը:

Այդ նամակին մէջ կը յայտարարէր արդիւնաչատ հայագէտը, թէ «Ի ձերոց կաճառորդաց ուսայ զոր ինչ գիտեմ զգեղեցիկ բարբառդ և զճոխ մատենագրութիւնդ: Յուսամ այսու ցուցանել և՛ իմաստնոյն Եւրոպայ, թէ քանի՛ կարեւոր իցէ հայկական դպրութիւնն, քանի՛ արժանեաց ազգն, և որչափ օգտամատոյց դպրութեանց Ուխտդ ձեր, և քանի՛ խոհական է խորհուրդն՝ հաստատելոյ ի Փարիզ քաղաքիս զհայկական վարժարանդ »:

Մխիթարեան Հայկական Ձեմարանին՝ Եւրոպայում վայելած ընդհանուր վարկէն և գրաւոր գուժունէութեան հռչակէն յառաջ կու գայինք — ինչպէս ըսինք — ուրիշ երկու նշանակելի արգասիք ևս, այսինքն է՝ մէկ կողմէն Եւրոպայի ուրիշ Ակադեմիաներն ևս պատիւ կը համարէին անդամակցութեան կոչել Մխիթարեաններն և օգտուիլ. իսկ միւս կողմէն ալ Եւրոպացի ականաւոր արեւելագէտներ՝ ինքնաբերաբար կը փութային խնդրել և յօդանալ Ս. Պատարաւ Հայկական Ձեմարանին: Մենք առաջին կէտին վերաբերեալ եղելութիւնները միայն կը բաւականանանք գծել այստեղ համառօտիւ, մեր

ամէն լեզու իր յատուկ ածանցները գործածէ, զի առ որ հակառակը լեզուի ներքին կազմութեանն անմիջապէս կը հնազանդ, կը յարէ հետեւեալ փաստը. « Այս բանիս կանոնն և օրինակը կը տեսանենք նոյն իսկ մեր նախնեաց մէջ, որք թէ և անհամար բառեր առած են յունականէն, և ոմանք ինչուան լեզուին ոճն ալ բոլորովին հռոմերէնի նմանեցուցած են, բայց ոչ երբեք հայկական կամ յունական բառ մը՝ յունաց նախադաս և վերջադաս մասնիկներովը կամ ածանցներովը միացուցած են. այլ ընդհակառակն յուն. բառերն ալ հարկաւոր թէ եղեր է՝ հայկ. մասնիկներով միացուցեր ու բարդեր են, կամ ածանցներ չիներ: Իսկ քանի մը բոլորովին յոյն կամ յատկացեալ անուան պէս գործածուած բառերը, ինչպէս՝ տետրաակեղն, եւպոդիակոն, եպարքոս, եպիսկոպոս, և այլն, մեզ օրինակ ըլլալ չեն կրնար, և ոչ ազատութիւն տալ՝ այսպիսի բառեր յօրինելու, ու ևս առաւել նոր լեզուի ածանցները՝ մեր լեզուին հնութեան հետ խառնելու:... Երրորդ՝ ածանց մասնկանց կողմանէ այնչափ ճոխ է լեզուներս, որ ամենևին կարօտութիւն չունինք մեր հարստութիւնը թողլու և ուրիշներէն մուրալու: Ես և կրնանք պարծել՝ թէ մեր ածանցներով կամ մասնիկներով աւելի լաւ կրնանք որոշել բնագուժական բառից նշանակութիւնը, քան թէ եւրոպացիք յոյնէն, կամ ան ալ չի բաւեր՝ լատինէն մուրալով »:

նախընթացարար բաժն ամրոզջացնելու համար. իսկ երկրորդն յաջորդ գլխուն կը վերապահենք։

Յամին 1839 *Գեբր. Իգն. Փափազեան իր գեղեցկագիտական արդեանց համար՝ ընտրուած է Ընդամ Հռոմի Պանթեոնեայց Ազնարանին* (Artistica Congregazione dei Virtuosi al Panteon)։

Նոյն տարին Գեբր. Սուքիաս Սամալեան ընտրուած է կաճառորդ Լ՚ընդոնի Ազիական բնիկերուխեան (որուն խորհրդանշանն է՝ Լոյսը Արեւելքէն, արձանագրուած Ex Oriente Lux), *նախնեաց Ջեռագրերն իրր Մխիթար Խնամքով հաւաքել և հրատարակել տալուն մեծ արդեանցը համար, ինչպէս որ ցոյց կու տայ ընկերաբեխան Քարտուղարի* James Requold *գրուածական նամակը, զոր կը դնենք այս տեղ՝ բառին բնագրովն.*

VIRO REVERENDISSIMO

SOUKIAS SOMAL

ARMENIORUM ARCHIEPISCOPO

ET

COENOBITII APUD VENETIAS

ABBATI

SOCIETAS AD TRANSLATIONEM

MSS. ORIENTALIUM

SUMMAM EXOPTAT SALUTEM

Procul dubio minus ignoras, Vir Reverendissime, quod supradicta Societas, Clementissimæ Majestatis, imprimis Regio Georgii Quarti, deinde Regio Gulielmi Quarti, nunc denum Reginæ Victoriæ, et multorum nobilium patrocinio insigni ducta, multas Versiones ex Mss. orientalibus, Anglice, Gallice et Latine, in lucem proferre curavit. Et quia operis non sit minime, Orientis istius venerabilis, ex quo primus Lux alma Fidei et scientiæ nobis orta est, fontes exhaurire reconditos, eadem Societas, doctos comites et commilitones, inter harum literarum studiosos, et quœrit, et excipere gaudet,

Alexander autem Raphael, *Armiger*, Socius noster, cum conventui solito nuperrime adesset, Tuam erga Rempublicam Literarum benevolentiam, et in hisce studiis eruditionem summa efferebat laude. Quo prœconio et hortatu, Viri optime de hac Societate meriti, permota, Societas Te Præsul Reverendissime, in suam Sodalitatem libenter cooptavit, et in catalogo Sociorum Socium conscribi voluit.

Gratum equidem mihi munus contigit, Vir Reverendissime, Te de hoc certior facere, nec dubito quin in thesauro Tuo instructissimo Mss. *Armeniorum*, gemmas nonnullas seligere poteris, ex quibus, idiomate quodam Europæ redditis, et Historia Gentis Tuæ eximiæ illustretur, atque Tuimet, et Societatis jamque Tuæ, honor accrescat.

Vale Præsul Reverendissime, et me Tui observantissimum pro humanitate Tua semper credas.

JAMES REQUOLDS

Soc. Praedict. a Secretis

Scripsi Londini, Pridie Non. Septemb. *Anno* Salutis 1839.

Յամին 1840 *Հ. Մկր. Ալգերեան, և յամին* 1837 *Հոկտ.* 15 *Հ. Եպուարդ Հիւրմիւզեան կաճառակից ընտրուած են Հռոմմոյ Հռղղափառական կրօնից Ճեմարանին* (Academia Religionis Catholicæ)։ *Վերջինս գարձեալ յամին* 1849 *էր գործօն անդամ Հռոմի Արկադիական Ճեմարանին* (Collegio d'Arcadia)· *յամին* 1854 *Նոյ.* 27 *Ա. Կարգի Գրոց Անդամ* (Membre Correspondant de la Première Classe) *Ֆրանսայի Պատմական Ճեմարանին* (Institut Historique)։ *Յամին* 1855 *Սեպտ.* 24 *էր անդամ Հռոմայ Տիբերտինեան Ճեմարանին* (Accademia Tibertina), *իր գրականական և դիտական արդեանց համար, և յամին* 1856՝ *Յունվ.* 20 *կաճառակից էր Պանթէոնի Ազգինեաց Գեղարուեստական Ճաճանչին։*

Հիւրմիւզեան Գէորգ Գերպ. Արբայն յամին 1846 *Պատուաւոր Նախարգամ ընտրուած է Գազղիոյ Ափրիկեան Ճեմարանին, ասոր ընդհանուր Քարտուղարի Իպպոլիտ Տէ Ժիւնիս Անտուանի հետեւեալ նամակովը.*

Monseigneur,

Le Conseil extrêmement touché des expressions nobles et sympatiques de votre lettre, me charge de vous en remercier et de vous adresser le Diplôme de *Président d'Honneur* de l'Institut d'Afrique.

Qu'il me soit permis de vous assurer que nous tiendrons toujours à grand honneur à vous compter au nombre des Princes les plus éclairés de l'Eglise, associés à notre œuvre humanitaire fondée dans le seul but de servir les int rêts de la civilisation et de la morale. C'est dans ce sentiment que j'ai l'honneur d'être avec un profond respect, Monseigneur, de Votre Grandeur le très humble et très obéissant serviteur

au nom du Conseil
Le Secrétaire Général
HIP. DE JUNIS ANTOIN

Իսկ յամին 1863 *նոյն Արհիապ. Արբայն էր նոյնպէս պատուաւոր անդամ Հռոմայ Հղ. կրօնից Ճեմարանին։*

Իսկ Հ. Պ. Եւոնդ Ալիշանն՝ իր համայնագիտական տագանդին և հանրածանօթ համբաւին համար՝ ամենէն աւելի բազմաթիւ ճեմարաններու և ուսումնական կաճառներու անդամակից էր. այսինքն՝ Իտալիոյ Աչխարհագրական Ընկերութեան, Վենետկոյ Ճեմարանին (Istituto Veneto), *Պետերբուրգի Կայսերական Ճեմարանին, և* 1896*էն ի վեր էր պատկառոր Ասոցիացիոնե Ընայի Համալսարանին. պատիւ մը՝ որ ամենամեծ և արդիւնական դիտնականներու միայն կը տրուի։*

ԳԼՈՒԽ ԺԴ

Մխիթ. Հայկական Ճեմարանի վկայագիրն և իր գեղեցկագիտական արժէքն ու ընդհանուր բանաձեւը. — Մխիթարեան Հայկական Ճեմարանին արտաքին կաճառորդքն, և անոնց թղթակցութիւնները ու արուած վկայագրերը կամ Դիպլոմներն. — Մխիթ. Հայկական Ճեմարանի վարկն ազգայնոց մէջ, և ձեռնհաս ազգային երեւելիներու գրաւոր վկայութիւնները:

ՄԽԻԹԱՐԵԱՆ միաբանութիւնն՝ իր Հիմնադրի օրերէն ի վեր արդէն իր ազգօգուտ գործերովը գրաւած էր ազգայնոց ուշադրութիւնը, անոր համար ալ հաւատարիմ և հազարաւոր բանաձեր և պատուաւոր ազգայիններ ամէն կողմէ պատիւ ու պարծանք կը համարէին իրենց՝ խնդրամասոյց լինել և գրուիլ Հերձայրակցութեան[1] Մխիթարեան Ուխտիս: Բայց այն օրէն ի վեր՝ երբ պաշտօնապէս իսկ հրատարակուեցաւ և ճանչցուեցաւ այդ ընկերութիւնը կամ Ս. Պատարը որպէս Հայկական Ճեմարան կամ Ակադեմիա, եւրոպացի նշանաւոր մտաւորականներ և գիտնականք եւս կը սկսէին խնդրել և անդամակցիլ անոր. իսկ ընդունելութիւնը կ'ըլլար առաքմամբ Ճեմարանիս պաշտօնական Վկայագրովը (Diplôme), որ պիտի կրէր միշտ Գերդ. Նախագահին և Առենադպրի ստորագրութիւնն ու կնիքը:

Վկայագրիս վիմատպութեան վրայ — որ գեղագրութեան և գծագրութեան մեծագոյժ գոհար մ'է — տարեթիւը նշանակուած չէ, բայց հաւանօրէն 1848–1850ին մտաերն եղած ըլլալու է ի Պարիս (Imp. Kæppelin, 17 Quai Voltaire), Հ. Յովհաննէս Վ. Սարկաւագեանի ջանքով: Գծագրողն է նշանաւոր գեղարուեստագէտն Բուզատտոյ (Busatto), իսկ փորագրիչն է Մուրատեան Վարժարանի քաջարուեստ աշակերտն՝ Ջիւսեպպէ Գաէթանեան: Մեզ հետ անշուշտ ուրիշներուն եւս պատրաստի էր՝ նոյնութեամբ վերատպուած տեսնել հոս այդ Վկայագիրը, սակայն դժբախտաբար ժամանակիս քաղաքական պարագաները չեն ներեր զայն. ուստի գաղափար մը տալու համար այդ գեղարուեստական գործին վրայ՝ կը բաւականանանք համառօտագիծ նկարագիր մ'ընել միայն: Երկայնութիւնն է 63×45 հրմեար, և լայն. 46×23: Իր ամբակազմեան խորքախին վերի ծայրին վրայ կեցած է թեւաւոր վիշապ մը՝ երբաւոներեւ զարդերու և ցօղուններու մէջ պատատուած, և գլուխը վեր առած՝ բերանբաց կը նայի խորամուխ դէպ յարեւելս: Քիչ մը վար սիւնազարդ կամարի ներքեւ — զոր կը զարդարեն այգիք և ծաղկունք — բազմած է Մ. Խորենացի, որ մագաղաթի վրայ կը գրէ Հայոց պատմութիւնը. և այդ կամարին վրայ գետեղուած են — գանգուր ամպերու մէջ — Հայոց Թագաւորական ու Նախարարական Թագերն և զինանշանները, և արեգակը ծագելով հեռուէն՝ կը լուսաւորէ զանոնք լուսաճիւռով: Ապա մարդակերպ խոյակմբը, որուն հղկերաձեւ երիզներն կը պատատուին երկուստեք կանգնած սիւնաձեւ ու տերեւազարդ ձողերու վրայ, որոնց մէջ գետեղուած են ճաշակով՝ մատեան, դասինեպատակ և

---

1. Աշխարհականաց համար թղթատուած այս Եղբայրակցութիւնս (Confraternita) պէտք չէ շփոթել բնաւ կրօնաւորական կարգին կամ Ուխտին հետ, զի հոգեւորական անդամակցութիւն մ'էր այն, որ բարեպաշտ և պատուաւոր բարեկամներուն և բարերարներուն միայն կը շնորհուէր, ըստ իրենց ջերմ փափագանաց և Մխիթարեանց հոգեւոր նպաստից զիրենք մասնակից ընելու համար: Այսպիսիք հարիւրներու կը հասնին, և ազգին մէջ կրթեալ և ձեռնհաս անձնաւորութիւններ հանչցուած են: Սակայն մենք աստղց վրայ խօսելու միտք չունինք հոս:

փետրագրիչներ՝ ժապաւէնով հանդրիճեալ կապտաթղթի մը վրչ: Իսկ խարխոխ սաղրատը փորագծուած է Կառն Աստուծոյ՝ մարգարեանի վրայ նստած և խաչընդուռս վառազարդ: Ձախակողմեան խարխոխին վերի ծայրը կեցած է արծիւ մը — օդոյ մէջ թեւատարած — և գլուխը դէպ ի յետս դարձուցած՝ կը դիտէ արեւուն ելքը: Ամէն քիչ վար լուսամասուերնեբու և ամպերու մէջ գետնուած են միախառնմբ — ճարտար արուեստով — Հայրապետական Թագն ու գաւազանները, սաղաւարտն ու բոլոր եկեղեցական սուրբ ապառներն և Աւետարանը. իսկ անմիջապէս վարը կը ներկայանայ Մխիթար Աբբայն ամպաձեւ մոթ պարուրակ մը պատելով իր տարածուն բազուկներով, և այն պատառաժէն լուսաչող ցայտեցնելով իր շուրջ ամենապայծառ ու երկնանման հորիզոն մը դէպ յԱրեւելս, և սահ և անոի վերընձիւղած կը տեսնուին չուշաններ և սունկեր: Իսկ իր ոտքը ներքեւ կեցող մարգակերպ խոյակին երկու կողմէն կը ձգուին — նման ակակոմեանին — գալարաձեւ երիզներ և տերեւազարդ ձոլեր, որոնց ներսը՝ իրրեւ խարխոխ վրայ փորագրուած են բանաստեղծութեան քնարը, գալարուած մագաղաթ և մատեան՝ միջնաւանի մը վրայ յեցած. հուսկ ապա խարխոխին սաղրատը նստած կը նայի Ս. Մարկոսի առիւծը: Այս կրկին խարխոխներս իրարու հետ միացնող և ներդաշնակող վերնակողման կամ յարկին վրայ՝ փորագրուած է Մխիթարեան Միաբանութեան Զինանշանը՝ գունդագունդ ամպերու և լուսաւոր երկնից մէջ ծրարուած, որուն վրայ կը հանգչի գլխակոն Թագը: Զինանշանիս ակակոմ բազմած և ակ արմուկովն անոր յեցած կը տեսնուի հոգեւոր իշխանութիւնն՝ (յանձին Ս. Սահակայ կամ Ներս. Շնորհալւոյ), իսկ ձախակողմը ասքի վրայ կանգնած է — գինուորական սարազով — Հայրն ամենայն Հայոց Հայկ, ձեռքը դրած գինանշանին վրայ՝ նշանակ պաշտպանութեան: Իսկ վերը յատակին՝ կեդրոնում փորագրուած է — նաւաձեւ զարդաշրջանակի մը մէջ — Մխիթարոյ գաւառճագեղ զարտասանը Ս. Դազար Կղզին, շրջապատուած հայելանման լճակէն, ուր կը վարդին առագաստաձեւ նաւակ մը և վենետկեան գոնդոլ մը, իտալական պայծառ երկնից ներքեւ: Երջանակիս վերնակողմանը մէջտեղ կեցած է իմաստութեան նշանակ բուն՝ երկու խորհրդաւոր ուղէշներու մէջ, և կը նայի Կղզւոյն վրայ: Ասոր ալ կողմը փորագրուած են բնագիտական և մեքենական գործիքներ. իսկ ձախակողմը՝ երկնագունդն, հնադիտակ, աստեղագիտութեան պատկանող ուրիշ գործիքներ, գիրք, գրիչ և փետրագրիչ. և այս ամենայն գեղեցկաճաշակ զարդերով իրարու հետ միացուած՝ գեղեցիկ ամբողջ մը կը յօրինեն, որուն միջնաւակը պարսպ թողուած երեսին վրայ գրուած է Վկայագրին ընդհանուր բանաձեւն՝ այսպէս.

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՄԱՐԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

*Ձպատուական եւ գնահատելիագոյն օժանդակ յառաջադիմ գործագրման հայրենի դպրութեան մերոյ գ*_____

_____

*յայտ առնելիք յօրագրեալ մերոյս **ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՄԱՐԱՆԻ** պատուոյ կնաւակիս, զոր առանձնագոյն հմտի ի գործի Վանից Սրբոյն Ղազարու որ ի Վենետիկ, ի թուականութեան Հայոց Ռ.*_____

_____ *առոյր ամսեանի*_____

Ստանալոյ.

Արձանագրեալ ի Մատենին էջ...

ՆԱԽԱԳԱՀ ՁԵՄԱՐԱՆԻՍ

Դիտել կու տանք՝ որ սպառած ըլլալով վկայագրիս հին փորագրութիւնն, յամին 1903 նոր մը գծագրուեցաւ ըստ N. Girottoի, և այլ և այլ փոխոխութիւններով, որ սակայն առաջինէն ոչինչ նուազ խորհրդաւոր է և գեղեցիկ։ Իսկ բանաձեւը նոյնը պահուած է։

Անդամակիցներու Ս. և անդրանիկը կրնայ համարուիլ Վ. Իլլբֆրուայի արժանաւոր յաջորդն ու արեւելեան լեզուաց ուսուցիչը՝ գաղղիացի քահանայն Միխոլ Լուդի, որ 1785 Թուականին տէրութեան յանձնարարութեամբը Ս. Ղազար գալով՝ հոն ոչ միայն կ'ուսանէր և կը կատարելագործէր իր սկսած հայերէն լեզուն և գրականութիւնը մինչեւ 4 Յունիսի 1787, այլ և Մխիթ. Աբեղաի Եղբայրակցութեան ևս կը գրուէր [1]։ Իրաւ է՝ որ այդ ժամանակ Ս. Ղազարու Հայկազեան ձեմարանը դեռ կերպարէս յայտարարուած չէր, սակայն գաղղիացի վիճակականին այնտեղ անցուցած կեանքն՝ ամուգիս ճեմարանական էր. դի աշխատակցութեամբ ու առաջնորդութեամբ Հ. Առեփ. Ալիկեանի և Հ. Առեփ. Ագոնցի կը սկսէր թարգմանել Մոլոխի Հնգամատեանը՝ հայերենէ լատիներէնի, և կը կատարելագործէր իր Հայ-լատին Բառգիրքը։

Բ. Կաճառորդն է Եղեսիոյ ազգային հանճարեղ Յակ. Շահին Ջրպետեանը, որ 1806 Թուականէն յառաջ Պարիզ հաստատուելով՝ քիչ ատենէն այնքան կը յառաջադիմէր Ֆրանսերէնի մէջ, որ Լանգլէսի միջնորդութեամբը՝ հայերէնի ուսուցիչ կը կարգուէր Արեւելեան լեզուաց դպրոցին մէջ, և իր գաղղիարէն և հայերէն հրատարակութիւններովն՝ ոչ միայն մեծապէս կը նպաստէր հայագիտութեան ծաւալելուն, այլ և գիտնական շրջանակներու մէջ իսկ կը յարգուէր։ Ջրպետեանի կաճառակցութեան բուն տարեթիւն ինձ յայտնի չէ, բայց հաւանօրէն 1817–1822 Թուականներուն մէջ եղած ըլլալու է. վասն զի այդ Թուականներուն, այսինքն է՝ Յուլիս 23 և Սեպտ. 14ին առ Հ. Յարութիւն գրած նամակներուն մէջ ինքզինքը «Ընդամ» կ'անուանէ և «Անդամակից» Մխիթարեան ձեմարանին, որ և՝ «Համալսարան» կը կոչէ։ Ընդհիւ այդ կաճառակցութեան՝ անոր յարաբերութիւններն ևս միշտ սերտ էին և բարեկամական։ Նա ոչ միայն մեծ ուրախութեամբ և համակրանօք կ'ողջունէր Մխիթարեան նոր հրատարակութիւններն, այլ և առիթ չէր փախցներ Moniteurի և Revue Encyclopédiqueի մէջ գրուատեօք գրախօսականներ ևս գրելու և հռչակելու ի սիրուս Եւրոպիոյ։

Գ. Միւնխէնի Համալսարանի մէջ իմաստասիրութեան և պատմութեան Ուսուցիչը Կարոլոս Փրեդ. Նէյմանն, որ բուսական ժամանակ վէնեաիկ կենալով՝ կը յաճախէր Ս. Ղազար՝ հայերէն լեզուն կատարելագործելու համար, 1828 Թուականին առանձին վկայագրով արժանի կը դատուէր յօդանալ Հայկական ձեմարանին։ Կաճառորդիս արժանիքը վերոյայտնեալ վկայագիրն է հետեւեալը.

« Ի համբաւոյ և ի տեսութենէ ծանուցեալ գրաբիանուն գիտնասէրն Կարոլ. Փրեդ. Նէյման՝ վարժապետ իմաստասիրութեան և պատմութեան ի Համալսարանին Մընաքիանի, և զիտրն առնալ գրագուժ հնութեանց նորա և ջանից ի սոյդ գիտութիւն արեւելեան և ասիականս հնութեան, յորմէ չարժեալ բուռն եհար առաւնօր և՝ յուսումն հայ լեզուիս, և ոչ սակաւ զարգացմամբ յոյս ետ և եւս յառաջանալոյ, ըստ բնաւոր յաջողակութեան իւրոյ և յօժարութեան. այժմ սովին յայտարար գրովս ծանօթ առնեմք զամենեսեան [2], զի ըստ ըղձից իւրոց ընկալեալ եղեւ ի գրաւոր ընկերութիւն (Membre Correspondent) մերոյ Ուսումնարանիս։

Ի հաստատութիւն այսմ ձեռնագրեմք, և այլն,

Տեղի կնքոյ

Ի Վենետիկ ի Ս. Ղազար,
յամի Տեառն 1828 Յունվ. 17

Սուքիաս Վարդ. Սուրմելեան Աբբ. Միւնխեցի,
Ընդհ. Աբբայ և Նախագահ ձեմարանին Հայոց Ս. Ղազարու

Հ. Յարութիւն Վ. Աջիպեան, Առենադպիր

(Զայս Թուղթ վկայական՝ հաւանութեամբ Առաջնակից տուաք Նէյմանի գերմանացւոյ ըստ խնդրոյ նորա)»։

---

1. Որուն համար կը գրէ Մայրավանացս ժամանակագիրն. « Ի 4 Յունիսի ետ վերջին ողջոյնն հրաժարական Ապաթէ Լուտէ գաղղիացին՝ բնակեալն զամ մի և կէս ի վանս, և գրեալ չեղբայրուբիւն կրօնիս, և արտասուօք մեկնեցաւ... միշտ ձեալով ի սերտ բարեկամութեան »։

2. Ըստ լատին բնագրին His litteris Dominus Carolus Fridericus Neuman Proff., declaratur Socius Academiæ S. Lazzari Venetiarum.

Գ. Կաճառորդն եղած է Գաղղիոյ Արեւելեան կենդանի լեզուաց Վարժարանի ուսուցիչը Պետրոս Լմիլ Լըվայեան Դը Ֆլորիվալ։ Սա իսկ — Նայմանի և Լուդէի պէս Ս. Ղազարու Ճեմարանին մէջ կատարելագործած էր հայ լեզուի ուսումը, և 1828ին անոր անդամակից եղած։ Այդ Թուականէն յառաջ կ'երեւի թէ գաղ. Պետութիւնը՝ դինքը Ուսուցչութեան կամ ուրիշ բարձր պաշտօնի մը կոչելու պատմադրութիւն ունէր, այդ պատճառաւ իսկ Baron Silvestre de Sacyի ձեռքով տեղեկութիւններ խընդրած էր Մխիթ. Ճեմարանի Նախագահէն՝ անոր ձեռնհասութեան վրայ։ Գերպ. Սուքիաս Սոմալեան — ի 13 Նոյ. 1828 սոր գրած պատասխանին մէջ — մեծապէս կը դրուատէր Լըվայեանը, ըսելով՝ որ Վիլլատէն և Լուդէէն վերջ՝ ասոնց մէջ առաջինն էր նա, որ լաւ խորամուխ եղած էր հայկական լեզուին, և թէ այնպիսի յառաջադիմութիւն ըրած էր՝ որ իրաւամբ դինքը հասուցած էր այն դիրքին, զոր Ձեր բարեացքը կը պարտի։ Կը գովէ Լըվայեանի կրօնական ազնիւ սկզբունքն և վարք ու բարքը. և կը յայտնէ՝ թէ նա այնպէս գրաւած էր Մխիթարեան Կաճառի համակրութիւնը, մինչեւ ընտրել դինքը անդամ իր Ճեմարանին, որով և՝ լիայոյս է՝ թէ յոյժ օգտակար պիտի ըլլայ՝ դէպ ի հայ լեզուն և գրականութիւնը տածած սիրոյն ու յարաբերութիւններով, որք մանաւանդ անթաժան պիտի կապեն դինքը Ս. Ղազարու հետ։

Լըվայեան Դը Ֆլորիվալին գրուած պաշտօնական վկայագիրն [1] իսկ կը հաստատէ Սոմալեանի գրածները։ Լըվայեան չատ թղթակցութիւններ փոխանակած է Մխիթ. Ճեմարանին հետ, որոց մի քանին Մ. Խոր. Պատմագրութեան գաղ. Թարգմանութեան կը վերաբերին, մէկ մ'ալ Եղնկայ Թարգմանութեան առթիւ գրուած ի 14 Յունվ. 1853, որով նա համեստաբար կը յանձնէ իր Թարգմանութիւնը Մխիթ. Ճեմարանի բարեացակամ քննադատութեանը։

Ե. Կաճառորդն է՝ Բէյրութի Հայոց Ազգային Ժողովարանի ասողական գիտութեանց Ուսուցիչը՝ Յոհ. Հներ. Պետրոսեան. որ դեռ այդ բարձր պաշտօնին չհասած՝ կը զբաղուէր — յամին 1832 — գերմանական աէրութեան կողմէն ի Վիեննայիկ, Ս. Ղազարու Ճեմարանին մէջ հայերէն լեզուն ուսանելու համար, և իշխան Մէտեռնիկի և Վիեննայի Քաղաքապետ Կոմս Սպաւրի յանձնարարականներովն ընդունելի կ'ըլլար։ Պետրոսեան՝ յայնժդ տարւոյ Մարտ ամսոյն յայտութեամբ պատկերով իր սիրած լեզուի ուսումը՝ կը գտանար իր գործին, որուն համար 21 Հոկտ. հայերէն գրած նամակովը [2] կը յայտներ Սոմալեան Գերպ. Աբրահամ իւր յատուկ շնորհակալութիւնը։

Սակայն Պետրոսեան մինչեւ 1846 Թուականը գեռ անդամ ընտրուած չէր Հայկական Ճեմարանին. վասն զի կամ ինքը համարձակած չէր խնդրել զայն, և կամ Ճեմարանը՝ հայագիտութեան վերաբերեալ գրական գործեր եւս կը սպասէր անկէ։ Վեր-

---

1. Ահաւասիկ անոր հայերէն պատճէնը.

« Ձվարժապետն յարքունական յատուկ դպրոցի Արեւելեան կենդանի լեզուաց՝ մերձ ի Մատենադարան Թագաւորին ի Փարիզ, Պր. Պետրոս Եդ. Լըվայեան սը Ֆլորիվալ, պյառաջադանօթին մեր և պարեկամ, որ ի վարժուն հայ լեզուի՝ եկն և աշակերտեցաւ « Հայկազնեան Ճեմարանիս », և գարդացաւ ի լիութիւն բանականի իւրոյ պաշտամանն, և վասն բարի համբաւոյն և բարուցն և բանիբուն հմտութեան, և վասն փութոյ և ջանիցն ի նպաստ բարգաւաճութեան մերոյ Ճեմարանիս գիտութեան, յայտ առնեմք սովին գրով, զոր ձեռնագրեալ կնքեմք։

ՍՈՒՔԻԱՍ Վ. ՍՈՄԱԼԵԱՆ
Արքեպիսկոպոս, Ընդհ. Աբբայ և Նախագահ Ճեմարանին Հայոց Ս. Ղազարու

Ի Վենետիկ, ի Ս. Ղազար 1828, Նոյ. 1։

2. Որ է հետեւեալը.

« Գերպատիւ Տեառն Եպիսկոպոսի Ողջոյն համբոյր եւ երկրպագութիւն.

Պարտ էր ինձ յառաջագոյն գրել առ Պատուականութիւնդ՝ առ ի չնորհակալ լինել զքէն անդրէն սրտի մտոք վասն ամենայն բարութեան, զոր եցոյց ինձ Տէրութիւնդ. և մանաւանդ այժմ, զի առի ի Պատուականութենէդ անտի զվկայականն (ուսանողութեան), որ զրգռեացէ զիս, եթէ գործիցեմ զա-

ջապէս առն Թաւականնին, Յունվ. 9, հայերէն լեզուով գրած նամակովը ոչ միայն կը յայտնէր նա իր հրաժարագիտական խորին շնորհակալութիւնը, այլ և կը խնդրէր Հայկ. Ճեմարանի անդամակցութիւնը։ Կը դնենք հոս այդ չհաղորդիս նամակը, որով կը հաստատուին թէ քիչ յառաջ բառնիս և թէ պերմանեացի հայագիտի ընդունակութիւնները և ուսանողութեան պարագաները։

« *Գերապայծառ և Վեհագոյ Տէառն Ոսքիտասայ Արքիեպիսկոպոսի Ամենայնի, ընդհանրապետի Աթոռոյն Մխիթարեան Միաբանից Մեծաւորի ողջոյն Մեծարանաց խնդրալ.*

Երեքտասան ամ են՝ յորմէ հետէ սկայ գրաղիլ ի գեղեցիկ և յոյժ օգտական լեզուդ Հայոց. և տեսանելով դի առանց իմաստնոյ օգնութեան ոչ կարացի յառաջ գնալ, յուզի գնացի ի Վէնետիկ՝ յուսալով թէ ի հաչակաւոր վանդ երանելոյն Մխիթար Աբրահօր գցանկալի օգնութիւն գտանիցեմ։ Խոստովանիմ Գերապայծառ Պատուականութեանդ Ձերում, դի ոչ առանց երկիւղի ի վանդ մտի, զանգիտելով՝ թէ գուցէ դիս անծանօթ և հերետիկոս՝ ոչ ընկալիք, և յամենայն ուսանիլ հրաժարեսիք։ Բայց փոխանակ մերժելոյ դիս՝ Գերապայծառութիւն Ձեր Թոյլ եաք՝ դի զօր ամենայն ի վանդ Ձեր գայցեմ և զրոլոր օր անդ Ճեայցեմ, և կարգեաց եաս ինձ երկու իմաստն և սիրելի վարժապետս [1], որ փոխհակի յօժարութեամբ և բազում վաստակով դիս ուսուցանէին։ Յայս սակս եմ՝ ցորչափ եմ ի կենցաղս՝ Վեհագոյ Պատուականութեանդ Ձերում և պատուական և սիրելի վարժապետացս իմոց յամենայնի սրտէ չնորհակալս եղէց։ Քանզի զոր իմն ուսացեալ (ուսեալ) եմ ի լեզուիդ Հայոց՝ զայս ամենայնի պարտիմ այդմ բողոքութեանդ և ուսուցման վարժապետացս։ Խակ թէպէտեւ ոչ անգիտանայցեմ, դի այս իմ գիտութիւն լեզուիդ՝ փոքր է և ոչ արժանի այնպիսի վարժապետացն, սակայն բան կարի իմում և սրչափ վասն այլ իմ վաստակոց կարացի՝ աչխատեցայ, դի օր բան օրէ յառաջ գնայցեմ, և յուսամ թէ Գերապայծառ Տէրութիւնդ ներողամտութեամբ դիս դասեսցէ։ Յայդ ներողամտութիւն և բարութիւն Ձեր ապաւինելով զայս և յաղօթս առ վեհագունութիւնդ համարձակիմ, դի ոչ ակն առնուլ պակասութեանս իմ՝ արժանաւորս դասեսցէ դիս յօդանալոյ Հայկական Ճեմարանիդ, որ Ձերով նախագահութեամբ գոհարձանալ և ծաղկէ։ Կարի քաջ գիտեմ՝ դի գեր ի վերոյ արժանեացս իմ է՝ զոր ապաչեմ զվեհագունութիւնդ Ձեր, սակայն գիտեմ եաս զմեծ բարութիւնդ և զներողամտութիւնդ, զորոյ գնչանս բազում փորձեցի. և խոստանամ սրտի մտօք գուն գործել ըստ իմում կարի ի բարգաւաճանս հայ գպրութեան և ձեմարանիդ, և ոչինչ գրել ընդդէմ խոստովանութեան հաւատոյդ հռովմէական ուղղափառաց։

Զայս խոստանալով և ապաւինելով ի բարութիւն և քաղցրութիւն Սրբազանութեանդ և ամենայն պատուական վարդապետաց Աւետիդ, յուսամ թէ զայս համարձակութիւնս ինձ ներեսջիք, և Ճեամ ամենայն մեծարանօք արչափ ի կեանս եմ

Գերապայծառութեանդ Ձերում

ամենանուաստ և չնորհակալու ծառայ

ի Պեռլին 9 Յունվ. 1846. H. Petermann

Ինձայն ինչ ըստ իմում ակարութեան՝ առ յառնել դիս արժանի Դորա։ Քանզի գիտելով եթէ անարժան իցեմ այդր գովութեան, ինձ հարկ է հոգալ ուժգին՝ զի յառաջագէմ լիցիմ ի գեղեցիկ և կատարեալ լեզուի ազգիդ. զի մի՛ անարժանութեամբ իմով պատճառս տայցեմ Տէրութեանդ՝ արհամարել սակս իմ և ղղջալ, եթէ ընկալար դիս մեծաւ մարդասիրութեամբ, և արարեր ինձ այնչափ բարիս անմոռանալիս. վասն որոց չնորհս մատուցանեմ քեզ, Տէր վեհարգոյ և Գերապայծառ, յամենայն սրտէ այժմ և միշտ մինչդեռ կեամ և եմ և եղէց

Պատուականութեանդ Փո

ամենախոնարհ և չնորհակալու ծառայ

Գզաւխաւ ի Սաքսոնիայ, 21 Հոկտ. 1833։ Յուլ. Հենր. Բեդերման

1. Որոց մին էր Հ. Եդուարդ Հիւմիւզեան։

Այդ խնդրագրով է՝ որ յաջորդ ամին գերմանացի հայագէտը կը գրուէր կաճառորդ [1]։ Անոր արուած վկայագիրն ինձ յայտնի չէ, սակայն նա ճեպց Հաւատարիմ, և չորք մը հրատարակութիւններով նպաստեց անընդհատ հայագիտութեան մինչեւ 1876 թուականը։

Չ. Կաճառորդն է Ֆրիդինգացին՝ Յակիբոյ Բիխաէր, 1847 թուականին։ Աւար վրայ մանրամասն տեղեկութիւններ կը պակսին, չենք ալ գիտեր՝ թէ ո՞ւր ուսած էր հայերէնը և ինչ աստիճանի. միայն այդ տարուց Յունվ. 9 խտալերէն գրած նամակը ծանօթ է ինձ, որով չնորհակալութիւն կը յայտնէ Գերպ. Աբրահօր, որ հաճած էր կարգել զինքը Մխիթ. Ձեմարանի գրող կամ թղթակցող անդամոց (Membri Corrispondenti) մէջ. և կը խնդրէ՝ որ իրեն խոստացուած Վիպլոմը չուտով յուզարկուի, խոստանալով՝ որ հայկական գրականութեան նկատմամբ՝ Ձեմարանիս կարծիքը պիտի յարգէ միշտ, և վարդապետական գրութեանց մէջ ալ ուղղափառութեան դէմ չմեքատուի գրով։

Լ. Կաճառորդն է Վենետկեցի բազմահմուտ և կորովի գրիչը՝ Գերպ. Յովսէփ Վ. կապկիետոի, որուն հայերէնի նախկին ուսուցիչն եղած էր յամին 1837 Զախչախեանի Հայ–իտալ. Բառարանի սկիզբը գրուած համառօտ Քերականութիւնը։ Այս կերպով հայերէնի նախկին տարերքն ուսանելէն վերջ, կը սկսէր ապա յաճախել Ս. Ղազարը՝ գանիկայ կատարելագործելու համար։ Վենետկեցիներու մէջ առաջինը կրնանք համարիլ զինքը, որ անձնասուր եղած ըլլայ հայագիտութեան։ Նա 1838–1839 այնքան յառաջադիմած էր՝ որ Ինճիճեանի նոր Շնախօսութիւնն ու Եղիշէն իսկ՝ իտալերէնի կը թարգմանէր — ի հարկէ ոչ առանց օթասանաց կամ թերութեան։ Այս թուականէս քանի մը տարի վերջ հաւանօրէն խնդրած ըլլալու էր Հայկ. Ձեմարանի անդամակցութիւնն, և ընդունուած՝ իրրեւ գրող և գործօն անդամ, դիտելով մանաւանդ՝ որ առանց հայագիտութեան նպաստող հրատարակութեանց՝ մէկը չէր կրնար անոր յօգտնալ։ Թէպէտ և իր գրած խնդրագրին և իրեն չնորհուած Վիպլոմին հանդիպած չենք, սակայն թէ՛ Գերպ. Սուքիաս Սոմալեանի ի 26 Նոյ. 1828 առ Պատրիարքն Մոնիկոյ գրած վկայութիւնը, և թէ՛ Ձեմարանիս Արձանագրութիւններուն վերաբերեալ պատառիկի մը համաձայն՝ նա 1840–1851 թուականին եղած անդամոց չարքին մէջ յիշատակուած է։ «Հայկ. Ձեմարանը» վրիպած չէր իր ընտրութեանը մէջ՝ յանձին Կապելէտտեայ, վասն զի ան խոստացուց մէջ ամենէն յառաջ և ուժգին համակրութեամբ խօսողն և գրողն եղաւ Հայոց վրայ, և խոստացուց ծանօթացուց հայկական պատմութիւնն ու հնախօսութիւնը։

Ը. Լօժէն (Եւգինիոս) Բոռէ՝ Արեւելեան կենդանի լեզուներու Հիմնարկութեան մէջ հայերէնի ուսուցիչն ու գաղիացի հայասէրը, որ 1835 թուականին կը գտնուէր ի Ս. Ղազար, և Հ. Յարութիւն Ալգերեանի առաջնորդութեամբ կը հմտանար հայերէն լեզուին, որուն նախատարերքն արդէն ուսած էր Լըվայեանէն։ Ա՛ 30 Սեպտ. յիշեալ

---

1. Որուն առթիւ գրած է երրորդ նամակն, այսպէս.

« Գերապայծառ և Գերապատիւ Տեառն Տեառն Արհիեպիսկոպոսի և Աբբահօր Գէորգ վարդապետի Հիւրմիւզեան՝ ողջունիս մեծարանաց խնդալ.

Զոր ի բազմաց հետէ առաւել քան զամենայն ինչ ըղձացի՝ զյօդանալս իմ հոչակաւոր Ձեմարանիդ, որ Գերապայծառութեանդ Ձերոյ անտեսութեամբ կառավարի և ծաղկի, այժմ մեծագոյն խնդութեամբ ընկալայ։ Իսկ ո՛ւմ արդեւք նախ զառաջին շնորհակալու իցեմ, և կամ ո՛ւմ մանաւանդ երախտապարտ իցեմ, եթէ ոչ Գերապայծառութեանդ Ձերում, որոյ հաւանութեամբ և հաճութեամբ հաւանեցան այսմ և անդամք յոյժ պատուական Ձեմարանիդ, ամբք բանիբուն գիտութեամբ և լի ամենայն հմտութեամբ, ընդունել զիս անարժանս ի համար անդամոց, զոր ի սկզբանէ հետէ որպէս զմեծագոյն երախտիս և պատիւ իմ համարէի։ Որոյ վասն յամենայն սրտէ իմմէ մեծամեծ շնորհս մատուցանեմ Գերապայծառութեանդ Ձերում և բոլորի ևս մեծաշուք Ձեմարանիդ, և վերստին խոստանամ սրտի մտօք՝ ըստ կարի իմում գոն գործել, զի մի երբէք զղջանայցէ Գերապայծառութիւնդ և հոչակաւոր Ձեմարանդ Ձեր՝ զընծայելն ինձ պատիւ ընկերակցութեանն։

Ձայս խոստանալով և յանձնելով զիս ներոդամութեանդ Ձերում՝ եթէ պակաս գտանիցիմ այսմ խոստութեանս (խոստմանս), ողջունիս խորին մեծարանաց կամ և ձեռամ

Գերապայծառութեանդ Ձերում

միշտ երախտագէտ և անձնանուէր ծառայ

Ի Պէռլին, 9 փետր. 1846։

Հն. ՊԵՏՐՈՍԵԱՆ

թուականով Այրահօր գրած նամակին մէջ՝ կ'ըսէ թէ «M. Boré յառաջադէմ ընթանայ ի թարգմանութեան Յովհան. Կաթողիկոսի»։ Ի նմին ժամանակի կը գրէր Բոռէ նաեւ Մխիթ. Այրարատեանց պատմութիւնը՝ գաղղիարէն լեզուով։ Այս միջոցիս և այդ հրատարակութեանց առթիւ է՝ որ նա իր ջերմ փափագանաց և կիզոյի յանձնարարութեան համաձայն՝ կ'ընդունուէր ի թիւս կառաւորդաց Ճեմարանիս։ Բոռէի այս յաջողութեան լուրն առնելով անոր բարեկամը Լամբնէ՝ կը խնդակցէր այսպէս. «Գեղեցիկ հրաշալիք տեսար, և քաջացար այն աշխարհի լեզուին մէջ, ուր կ'ըսուի թէ Նոյի տապանը կանգ առած ըլլայ, նա մանաւանդ Ակադեմական ալ եղար... Հաճութեամբ պիտի կարդամ տեղեկութեանցդ այն գիրքը, որուն լուրը տաս ինձ»։...

Թ. Կառաւորդն է գաղղիացի Հայագէտն ու վրացագէտը՝ Լորաի Բրոսէ, որ յամին 1836 էր արդէն անդամակից Պետերբուրգի գիտութեանց Ակադեմիային և յամին 1838 Մոսկուայի Լազարեան Ճեմարանին։ Բրոսէ՝ Ան Մարգէնէն ուսած էր հայերէն լեզուն, բայց յարաբերութեան մէջ էր նաեւ Մխիթարեանց հետ։ Նա հաւանօրէն կամ 1845 Յուլիսին խնդրած և ընդունած էր Ս. Ղազարու Հայկական Ճեմարանի անդամակցութիւնը, (երբ Հարաւային Եւրոպայ ըրած ուղեւորութենէն դառնալով՝ բնակակից կ'ըլլար Մխիթարեան Հարց ի Վենետիկ, և մտերմական ծանօթութիւն կը հաստատէր Հ. Ղեւոնդ Ալիշանի և Հ. Գաբր. Ալվազովսկւոյ հետ). և կամ լաւ եւս՝ յամին 1867, երբ Հայաստանի և Վրաստանի ուղեւորութենէն եաքը՝ կը դառնար ի Գաղղիա, հնագիտական ճոխ գանձերու հաւաքումով։

Ժ. Կոմսն Որբի, որ 1851ին նշանակուած է ի թիւս կառաւորդաց. ասոր մասին չունինք աւելի տեղեկութիւն։

ԺԱ. Պօղ. Պառոլ Բէօրիխէր (De Lagarde) նախ Հալէվիի և ապա Գէօտինգենի Համալսարանին մէջ արեւելեան լեզուներու ժեծանուն ուսուցիչը։ Սա՝ որ հայերէն լեզուի նախասկզբունքը Պետրմանէն առած էր, բայց իր անսովոր հանճարովը օր մը պիտի նպաստէր որոշելու և՛ անոր արժանաւոր տեղին հնդարիական քոյր լեզուաց մէջ, 1850ական Յուլիսէն ի վեր Մխիթ. Ճեմարանին հետ յարաբերութեան մէջ էր. մանաւանդ նամակներէն միոյն մէջ՝ Թղթատուութիւն իսկ կը խնդրէր Հիւրմիւզեան Այրահօրէն՝ Ս. Ղազարը գալու և իր գիտցածը կատարելագործելու համար։ Ճեմարանիս Ազգանպատութեանց համաձայն՝ գերմանացի գիտնական յամին 1851, ի 6 Նոյ. գրած նամակով կը խնդրէր [1] մեծափափաք՝ գրել գինքն ի թիւս կառաւորդաց, և եթէ կարելի է ձրի յղել իրեն վկայագիրը։ Նոյ. 13ին գումարուած Մխիթ. Կաճառն՝ ի նկատի առնելով տագանդաւոր գիտնականի հայերէն լեզուին մատուցանելիք ամենամեծ ծառայութիւնն, և աւելի եւս խթանուելու առ այն՝ միաձայնութեամբ կ'ընդունէր գինքը յանդամակցութիւն։ Ահա անոր արուած վկայագրի հայերէն պատճէնը, որ կ'որակէ միանգամայն հայագէտի արժանիքը.

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

Զպատուական և գնահանձաւոր օժանդակ յառաջադէմ զարգացման հայրենի դպրութեանս մերոյ զՊր. Պէօթիխէր գերմանացի, վարժապետ ի Համալսարանին Հալլ քաղաքին Բրուսացւոց, յայտ առնեմք յօդացեալ մերումս Հայկական Ճեմարանիս այսու պատճէնաւ նամակիս, զոր աւանդեցաք նմին ի դուռն վանից Սրբոյն Ղազարու՝ որ ի Վենետիկ, ի թուականութեանս Հայոց ՌՑԱ, յերեքտասաներորդ աւուր ամսեան Սահմի, այս է՝ 13 Նոյ. 1851.

Նախագահ Ճեմարանին

Գեորգ Վ. Հիւրմիւզեան, Այրեպիսկոպոս Միջնեաց և քննդանրապետական Այբաց։

Հ. Ղեւոնդ վարդապետ Մ. Ալիշանեան
Քարտուղար

Արձանագրեալ ի Մատենին յէջ 516.

---

1. Որ գրուած է «Պ. Բէօթիխէր գերմ. վարժապետ ի Համալսարանի Հալը քաղաքին Բրուսիոյ բազում թախանձանօք խնդրէ յօդանալ Ճեմարանիս, և զվկայագիրն՝ եթէ հնար է՝ առանց ծախուց ընդունել։ Գրեթէ ամենեցուն լսելեաց և յայտնաբարբառ վկայութեամբ արժանի ընդունելութեան գտեալ խնդիրն, զհաստատութեանն վճիռ ի հանդերձեալ գումարումն աւանդեալ»։

Ժ.Բ. Ի Լըվայեան Դը Ֆլորիվալի արժանաւոր յաջորդն — Ա.բեւելեան լեզուաց դպրոցին մէջ — Եդ. Դիւլորիէ։ Սա ոչ միայն հայերէնը լաւ ուսած էր, այլ և հայագիտութեան վերաբերեալ օգտակար գործեր եւս արդէն հրատարակած, որոնք կը համարձակեցնէին զինքը խնդրելու Մխիթ. Ձեմարանի կառաւարչութիւնը, կամ ուղղակի և կամ միջնորդութեամբ Հարց Մուրատեան վարժարանին, որոնց քով կը յաճախէր Դիւլորիէ, և լաւագոյն օժանդակութիւններ կը գտնէր։ Հաւանօրէն 1853 տարուայ սկիզբն ընդունած էր հայագէտս՝ հայկական Կաճառէն չնորհուած Դիպլոմը, զի 18 Յունվ. 1853 գրած հետեւեալ նամակովը՝ կու գար յայտնել իր չնորհակալութիւնը.

Monseigneur et Honorable Président !

C' est avec un sentiment bien profond de reconnaissance que j' ai reçu le *Diplôme de Membre de l' Académie Arménienne de St. Lazare*, à la tête de laquelle Vous êtes placé. Je voudrais avoir du titre réel à mériter cet honneur, mais à defaut de titre j' ai du moins un zèle ardent pour tous ce qui se rattache à la litterature arménienne, et je ferai tous mes efforts pour en propager la connaissance parmis les Européens. Rien n' egale l' admiration que m' inspirent les travaux savants de Votre Congregation, et je me ferai toujours gloire d' être le disciple de quelques uns des hommes éminents qu' Elle compte dans son sein. Je serais heureux d' entrer en communication fréquemment avec l'Académie, et je lui demanderai la permission de lui soummetre mes recherches sur la litterature qu' Elle a mission de cultiver et pour laquelle Elle a déjà tant fait.

Veuillez offrir pour moi à mes nouveaux Confrères l' expression de la haute et affectueuse estime que j' ai pour eux, et agréer celle du respect avec lequel j' ai l' honneur d' être,

Monseigneur et honorable Président,

de Votre Grandeur

Le très humble et obéissant serviteur

Ed. Dulaurier

Prof. à l' Ecole Imperiale des Langues Orientales vivantes.

Ժ.Գ. Կաճառորդն եղած է հայկական Դրամագիտութեան ռահվիրան և Հայոց պատմիչները գաղղիական թարգմանութեամբ եւրոպացւոց ծանօթացնողն ու ամենուն ծանօթ հայագէտը՝ Վ.Լանգլուայ։ Սա բազմաթիւ գրուածներ հրատարակելէն ու Պարիզի գիտութեանց Ակադեմիային և Ազգաբեան Ձեմարանի անդամակցութիւնը ձեռք բերելէն ետքը՝ կը ցանկար մանաւանդ յօդանալ Մխիթարեան Ձեմարանին, ուստի պի որոշ գիտէր թէ բաց ի պատիւէն՝ ասոր մէջ պիտի գտնէր իր մտադրած երկասիրութիւններու համար ձեռնհաս օժանդակութիւններ եւս։ Ասոր յամին 1861 անկեղծ Ֆրանսացւոյ մը բնորոշ պարզութեամբ՝ անձամբ կ'ուղղէր այդ կաճառի Գերպ. Նախագահին՝ հետեւեալ խնդրագիրը, որով պիտի հաներ իր փափաքին.

